Հայ գրականություն, Արձակ, վեպ

13+

Րաֆֆի

Կայծեր

Պատմական վեպ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

«Առանց փայտի կրակը կհանգչի և թե որ բանսարկու չլինի, կռիվը կդադարի: Ինչպես ածուխը զորություն է տալիս ԿԱՅԾԵՐԻՆ ու փայտը կրակին, այնպես է կռվասեր մարդը վեճ բորբոքելու համար»:

Առակ Սողոմոնի ԻԶ գլ. 20-21 համ.

ՀԱՐԳԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Գուցե մենք չէինք ունենա Խորենացու թանկագին պատմությունը, եթե Սահակ Բագրատունին չհորդորեր, չխրախուսեր ծերունի հեղինակին: Գուցե մենք զրկված կլինեինք Եղիշեի գեղեցիկ գրքից, եթե Մամիկոնյան Դավիթ երեցից նպաստ և քաջալերություն չգտներ նա: Գուցե, իր ժամանակի մոլեռանդ կղերից հալածված, սովի և աղքատության մատնված Ղազար Փարպեցին չէր կարող գրել իր հիանալի աշխատությունները, եթե Մամիկոնյան Վահան իշխանը չօժանդակեր նրան: Նույնպես և Ագաթանգեղոսը, շատ կարելի է, չթողներ մեզ իր փառավոր պատմությունը, եթե Տրդատ թագավորը չհովանավորեր նրան:

Մեկենասները, որպես մեզ մոտ, նույնպես և ամեն ազգերի մեջ, եղել են միշտ գրականության ծաղկման զորավիգը և աղքատ հեղինակների բարերարները: Տարակույս չկա, որ շատ տաղանդներ, և մինչև անգամ շատ հանճարներ կարող էին անպտուղ մնալ, կարող էին կենսական հոգսերի ներքո ճնշվել, ոչնչանալ, եթե մեկենասներից օժանդակություն չգտնեին: Մեկենասները տվեցին հեղինակներին հաց, իսկ հեղինակները տվեցին աշխարհին մտավոր և հոգեկան սնունդ: Իմ անմխիթար գրական ասպարեզում Դուք առաջինը եղաք, հարգելի բարեկամ, որ ազնիվ հայրենասերի անկեղծ զգացմունքով հանձն առիք Ձեր ծախքով ի լույս ընծայել **«Կայծերը»**: Ուստի խորին երախտագիտությամբ պարտք համարեցի պսակել այդ գործի ճակատը Ձեր պայծառ անունով:

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

«Բայց այն Սերովբեներից մեկը թռավ դեպի ինձ, և ձեռքումը կրակի կայծեր կային, որ սեղանի վրայից ունելիքով վեր էր առած, և իմ բերանին դեպցնելով, ասաց. ահա այդ քո շրթունքներիդ դիպավ, և քո անօրենություններդ կվերացնե, և քո մեղքերը կսրբե քեզանից»:

Եսայի Զ. գլ. 6—7 համ.

Ա

ԸՆՏԱՆԻՔ

Իմ մանկությունից շատ փոքր բան կարող եմ գրել, որովհետև նա անցավ այնքան շուտ և այնքան դատարկ կերպով, որ շատը ես ինքս չեմ հիշում:

Բայց երբ մտաբերում եմ անցյալը, իմ տխուր և հիմարություններով լի անցյալը, կրկին զարթնում են վաղեմի հիշողությունները, և որպես մթին խավարի միջից, նկարվում է իմ առջև մանկությունը իր անմեղ-երեխայական կերպարանքով:

Ահա մինը մյուսի ետևից երևան են գալիս ծանոթ պատկերները.—

Ես տեսնում եմ հայրենի տնակը իր հին, ժամանակի ավերմունքից մաշված պարիսպներով: Դեռ նույն տերևախիտ ծառերը հովանավորում են նրան իրանց հսկայական ճյուղերով, դեռ նույն ճնճղիկները երգում են ոստերի վրա, ինձ թվում է, որպես թե ծանոթ լինեին նրանց խորամանկ երեսիկները:

Կարծես, շատ ժամանակ չէ անցել, կարծես, հենց երեկ լիներ այդ,— ես տեսնում եմ իմ պառավ տատին, նստած իր սովորական տեղում, մեր խրճիթի դռան հանդեպ: Դարձյալ նույն ընկուզենին պատսպարում է ալևոր գլուխը ամառային արեգակի կրակոտ ճառագայթներից: Նա նստած է, որպես միշտ, լուռ և մտախոհ կերպով: Նրա ծնկների վրա մրափում է իր մտերիմը՝ ահագին մազոտ կատուն, երևի, քաղցր երազներ է տեսնում:

Սիրելի տատ, և այս րոպեիս քո երեսի մուգ-դեղնագույն խորշոմներիմեջ ես տեսնում եմ նույն բարությունը, որպես առաջ, և այժմ քո լի գթով աչքերը նայում են իմ վրա վաղեմի սիրով: Ինձ թվում է, որպես թե դեռ լսում եմ քո իմաստալից խրատները.— «Ֆարիսատ, որդի, բաց գլխով մութի մեջ ման չգաս, չարքերը կզարկեն գլխիդ... հորանջելու ժամանակ երեսիդ խաչ հա՛ն, որ սատանան չմտնե փորդ... գիշերը մաստաք չծամես, մեռելները կնեղանան»... Այսպիսի շատ խրատներ տալիս էիր դու ինձ, զգուշացնում էիր, որ ավերակների մեջ չմտնեմ... զգուշացնում էիր, որ գերեզմանատան մոտից մենակ չանցնեմ... ու սև կատվի հետ չխաղամ...

Տատս կոչվում էր Շուշան: Նա ժառանգել էր իր մոր անունը: Թե քանի՞ տարեկան էր,— ես հիմա էլ չգիտեմ: Բայց նա ականատես էր եղած այնպիսի անցքերի, որոնց վրայից դարեր էին սահել: Այսուամենայնիվ, նա բոլորովին չէր կորցրել իր ժրությունը: Կտեսնեիր, մի անվաստակելի մեքենայի պես, առավոտից մինչև երեկո, անդադար շարժման մեջ է: Նրա ամենատես աչքերը ամեն բանի վրա կնայեին և ամեն բան կդիտեին. նրա անհանգիստ լեզուն ամեն բանի մասին հարցմունքներ կաներ և անվերջ հաշիվ ու համարներ կպահանջեր: Մինչև մահ նա չթողեց ձեռքից իր կառավարության գավազանը — ահագին փայտյա շերեփը, որով նա ընթրիքի և

ճաշի ժամանակ կերակուր էր բաժանում: Մինչև նրա մահը մեր տան թե մեծը և թե փոքրը ամենայն խոնարհությամբ հպատակում էին նրա հեղինակությանը:

Տատս շատ աշխատասեր կին էր: Ես դեռ հիշում եմ, թե որպես գիշերի մեծ մասը, նստած այծի մորթի վրա, դնում էր իր առջև մանելու մեքենան, և ոսկրացած ձեռքով, պտույտ տալով ճախարակի թևքը, բամբակից թել էր պատրաստում: Ինձ թվում է, թե դեռ զարկում է իմ ականջներին պառավի դողդոջուն մեղեդին իր տխուր, մելամաղձական հնչյուններով. ինձ թվում է, թե դեռ լսում եմ նրա նահապետական մեքենայի խուլ ճռճռոցը:

Մեր գյուղում տատս համարվում էր խելացի պառավներից մեկը, իսկ իր տան մեջ նրա իմաստությունը հասնում էր անսխալականության: Ճշմարիտն ասած, ես էլ փոքր ժամանակս հիացած էի նրա իմաստությունով: Նա ամեն բան գիտեր: Նա գիտեր, թե ի՛նչ նշանակություն ունեն այս և այն երազները: Նա գիտեր, թե ի՛նչ խորհուրդ ունեն, երբ մարդու մարմնի այս ու այն մասերը «խաղում են»: Նա հասկանում էր կաչաղակի լեզուն, և բացատրում էր, թե ի՛նչ լավ խաբարներ է բերում նա, երբ մեր պատի վրա նստած կչկչում է: Նա լսել չէր կարող բուի չարագուշակ ձայնը, և պատվիրում էր ինձ՝ քարով սպանել նրան, երբ կնստեր մեր պատի վրա: Նա գիտեր, թե ինչո՞ւ Սողոմոն իմաստունը անիծեց ճնճղիկին, կամ ո՞վ դրեց հոպոպի գլխի վրա այն գեղեցիկ փետուրե սանդրը:

Այո՛, տատս շատ բան էր իմանում: Նա պատմում էր ինձ, թե ինչպես կհասնի աշխարհի վերջը, կամ երբ կհայտնվի Նեռը: Նա ասում էր, թե անիծյալ Նեռը կգա, մի ահագին էշի վրա նստած, թե նրա ավանակի ականջները այնքան երկար կլինեն, որ մի ականջի ծայրը կհասնի մինչև արևմուտք, իսկ մյուսինը մինչև արևելք: Նա ասում էր, թե այն ժամանակ կհայտնվին «աջուջ-մաջուջները», թե դրանք այնքան փոքրիկ թզուկներ են, որ իմ կոշիկները կարող էին նրանց համար բնակարաններ լինել:

Բայց ես ավելի սիրում էի տատիս հեքիաթները:

Ես դեռ հիշում եմ մի քանի հեքիաթներ, որ գիշերները պատմում էր նա: Երբեմն, մի անգամ սկսած հեքիաթը վերջացնում էր մի ամբողջ շաբաթվա ընթացքում: Ա՛խ, ինչպես լավ պատմում էր նա: Ես բոլորը, բոլորը հասկանում էի և միշտ ուրախությամբ էի լսում: Բայց երբ պատմում էր դևերի, սատանաների, գրողների և դժոխքի մասին,— ես սարսափում էի, և ավելի շատ էի վախենում, երբ խոսում էր մեռելների մասին:

Իսկ երբ տատս մեռավ, նրանից չէի վախենում: Նա խիստ հանգիստ կերպով պառկած էր դագաղի մեջ, կարծես քնած լիներ: Նրա դեմքը էլի այնպես բարի էր, որպես առաջ: Ես մտածում էի, թե նա հրեշտակների մոտ կգնա, նրա համար, որ ինձ երբեք չէր ծեծում: Երբ նրան թաղեցին, ես շատ լաց եղա: Մայրս ասում էր, թե նա մի օր գերեզմանից կվերկենա. ես ուրախանում էի:

Իմ մորը կոչում էին Նիգյար: Դուք տեսե՞լ եք դեռ նոր բացված մի ծաղիկ, որ թառամել էր իր կոկոնի մեջ,— այդ իմ մայրն էր: Խե՛ղճ կնիկ, ես երբեք չեմ կարող մոռանալ քո միշտ տխուր և գունաթափ դեմքը: Ինչո՞ւ դու ուրախ լինել կարող չէիր… Ինչո՞ւ այնպես սպանված էին քո գեղեցիկ աչքերը, որոնցից արտասուքը շատ քիչ էր պակասում…

Մայրս մի բարձրահասակ կին էր, նիհար և թույլ կազմվածքով: Ոտքի վրա նա միշտ հիվանդ էր, բայց երբեք չէր պառկում: «Ո՞վ պիտի պահե իմ երեխաներին» — պատասխանում էր նա, երբ Նրան ասում էին, թե պետք է փոքր-ինչ հանգստանալ, թե պետք է փոքր-ինչ կազդուրել սպառված ուժերը: Ամբողջ օրը դադարում չուներ:

Նա էր թխում մեր տան հացը, նա էր եփում կերակուրները, նա էր լվանում մեր շորերը, նա էր կարում և կարկատնում մեր հագուստը: Բայց տնային հոգսերը չէին, որ մաշում էին նրան,— նրա ցավը սրտիցն էր... Ես այն ժամանակ չէի հասկանում, բայց հիմա հասկանում եմ...

Մեր գյուղում գովասանված էր մորս վարպետությունը կարելու և ձևելու մեջ, բայց շատ քիչ էին վճարում նրա աշխատությունների համար: Շաբաթական մի քանի շահի հազիվ էր վաստակում. և նրանցով ապրում էինք: Տատիս մեռնելեն հետո տան հոգսը բոլորովին մնաց մորս վրա: Քույրերս՝ Մարիամը և Մագթաղը, դեռ փոքրիկներ էին. դրանք ավելի խանգարում էին մորս, քան թե օգնում էին:

Մարիամը և Մագթաղը երկվորյակներ էին, այնքան նման միմյանց, որ ես շատ անգամ սխալվում էի մինը մյուսից որոշել: Մայրս նրանց ճանաչելու համար կարել էր զանազան գույներով գդակներ,— Մարիամինը կանաչ գույնով, իսկ Մագթաղինը կարմիր: Ես դեռ հիշում եմ այն անմեղ կռիվները, որ ծագում էին այդ երկու հրեշտակների մեջ իրանց գդակների մասին: Պատճառները շատ ծիծաղելի էին, օրինակ, երբ Մարիամին սիրում էին, Մագթաղը խլում էր նրա գդակը, դնում էր իր գլխին, որ ինքն էլ Մարիամ դառնա և նրան էլ սիրեն:

Ես շատ անհանգիստ երեխա էի, բայց դարձյալ մայրս ինձ չէր ծեծում, որովհետև նրա մի հատիկ տղան էի: Մորս սերը հասնում էր մինչև այն թողությանը, որ շատ անգամ ներում էր իմ անկարգություններին: Կպատահեր վաղ առավոտյան, ամենևին երես չլվացած ու մազերս չսանդրած, տանից դուրս կգայի, և ամբողջ օրը կխաղայի, կթափառեի դատարկաշրջիկ երեխաների հետ: Մայրս մասամբ գոհ էր լինում, երբ ես տանը չէի գտնվում, նրա համար որ, եթե տանը մնայի, անպատճառ կամ մի բան կկոտրեի, կամ մի բան կվիթեի, և եթե ոչինչ չլիներ, կսկսեի քույրերիս ծեծել: Խե՜ղճ երեխաներ, ի՜նչպես համբերում էին չար եղբոր կոպտություններին: Կարծես նրանք զգում էին, թե իրանք աղջիկներ էին, իսկ ես — տղա, կարծես, մտածում էին, թե ես շատ բարձր էի նրանցից, ուրեմն, իրավունք ունեի տանջելու: Եվ այսպես, մանկությունից պատրաստվում էին լինել տղամարդի ստրուկներ... Ո՞վ մտցրեց նրանց մեջ այդ զգացմունքը:

Մեր դրացիները հանգստություն չունեին ինձանից: Նրանց մեջ կազմվել էր մի այսպիսի համոզմունք, թե մայրս ինձ ծնելու միջոցին, ոգիները գողացել էին նրա տղան և փոխարենը մի դև էին դրել: Բայց իմ և դևի մեջ ոչինչ նմանություն չկար. ես բավական գեղեցիկ երեխա էի, ի՞նչ անենք, որ չար էի: Բայց դարձյալ մայրս չէր հավատում այդ զրույցներին, նա ասում էր, եթե մի այսպիսի բան լիներ, տատս կգիտենար: Նա դևերի հանգամանքները լավ էր հասկանում:

Իմ հորս հիշում եմ որպես մի երազ: Այսքանը միտքս է գալիս, որ նա մի չոր ու ցամաք մարդ էր, մորս նման բարձր հասակով և դեպի ցած կռացած մեջքով: Նրա գլուխը պատած էր տարաժամ ալևորած, սպիտակ մազերով: Նրան կոչում էին Հայրապետի տղա Սհակ: Երեսուն և վեց տարեկան տղամարդ էր նա, բայց վաղահաս ծերությունը բոլորովին փոխել էր նրա երիտասարդական դեմքը: Ինչո՞ւ այնպես շուտ ծերացավ նա, ինչո՞ւ մորս նման նա էլ միշտ տխուր էր, և երբեք ուրախ լինել կարող չէր:

Մեր տանը խիստ սակավ էի տեսնում հորս: Նա, որպես սովորաբար ասում են, դաշտի մարդ էր: Տարվա երեք եղանակներում՝ գարուն, ամառ և աշուն — նա մշակում էր իր հողերը և փոքրիկ այգին, ձմեռը իր ջուլհակի խորի մեջ կտավ էր գործում: Բայց դարձյալ մնում էր միշտ աղքատ: Հայրս շռայլ մարդ չէր, ոչ արաղ էր խմում, ոչ ծխում էր և ոչ էլ լավ ուտում կամ հագնվում էր: Ես դեռ չեմ մոռացել նրա բազմամյա հողաթափները, որոնք ստեպ կարկատվելուց այնքան ծանրացել էին, որ

հազիվ կարելի էր շարժել: նրա մորթե գդակը բոլորովին կորցրել էր իր մազերը: Էլ ինչո՞վ պետք էր բացատրել այդ խնայող և աշխատավոր մարդու դառն աղքատության պատճառները:

Լինում էր, շատ անգամ տանը հաց չունեինք ուտելու, քույրերս լաց էին լինում սովից: Եվ ահա, գիշերային տարաժամ պահուն հայտնվում էին հարկապահանջները: Սկսում էին դուռը զարկել: Կկոտրեին, եթե իսկույն չբաց անեինք: Ներս էին թափվում մի խումբ կատաղի **ֆերրաշներ**: Բոլորովին դժոխք էր դառնում այն Ժամանակ մեր տունը: Ամենքս սարսափում էինք: Հայրս մեռելի գույն էր ստանում, իսկ մայրս երկյուղից սկսում էր դողալ: Ես և քույրերս փախչում էինք ու մտնում մեր քնաշորերի մեջ, թեև երբեք քնել կարող չէինք, բայց սուս էինք կենում:

Ֆերրաշները հորս բռնում էին ու կապում մեր խրճիթի սան վրա, այնքան պինդ, որ շարժվել կարող չէր, կարծես ամբողջ մարմնով մեխած լիներ սան հետ: Նրա մոտ դիզվում էր մի ահագին խուրձ դալար ճիպոտների՝ սկսում էին ծեծել հորս: նա մորմոքում էր, աղաղակում էր, աղաչանք էր անում — բայց ո՞վ էր նրա ձայնը լսողը…

Ֆերրաշները հարկ էին պահանջում: Եվ եթե մի փոքր ուշանում էր, սկսում էին հորս մերկ ոտների տակ կրակ լցնել, այդ բավական չէր, նրա մարմինը այրում էին տաքացրած շամփուրներով: Այդ սոսկալի տանջանքների ժամանակ ինչ որ իմ մոր դրությունն էր, աստվա՛ծ ազատե, ես անկարող եմ նկարագրել: Նա բոլորովին գժվում էր, նա կտրում էր իր գլխի և պարանոցի զարդերից ամենաթանկագինը և տալիս ֆերրաշներին: Նա աղաչում էր, պաղատում էր, որ չծեծեն հորս, որ չսպանեն նրան, որ սպասեն մինչև առավոտ, մինչև լույսը ծագի, որ հայրս կարողանա մի տեղից պարտք անել և պահանջած հարկը վճարել:

Այս րոպեիս էլ իմ մարմնի վրա դող է ընկնում, երբ մտաբերում եմ այն սարսափելի գիշերները… Ֆերրաշները գալիս էին միշտ գիշերով, ինչպես չար երեխաները միշտ գիշերային մթության ժամանակն են քանդում խեղճ ծտի բույնը, և գիշերով են բռնում նրան, որովհետև գիտեն, որ ողորմելի թռչունը այն ժամանակ մի ուրիշ պատսպարան չունի, բացի իր օթևանը:

Ձարհուրելի գիշերներ… Որքա՜ն արտասուքի և որքա՜ն տանջանքների պատճառ էին դառնում նրանք մորս… Նա գիշերային այն մթին խավարի մեջ, մենակ դուրս էր գալիս տունից, առնում էր իր հետ մի պղինձ կամ մի ուրիշ բան, և տանում էր գինետուն, որ գրավ դնե և նրանց համար ըմպելիքներ բերե: Նա մորթում էր մեր հավերը և նրանց համար կերակուրներ էր պատրաստում, բայց անողորմ հյուրերի ուտելուն և խմելուն չափ չկար:

Այսպիսի դեպքերը պատահում էին համարյա միշտ, որովհետև հարկերը վերջ ու սահման չունեին: Ամեն բանի համար պահանջվում էր, թե ցանքի համար, թե անասունների համար և թե մեր ընտանիքը կազմող հոգիների համար: Հաշիվ չկար, հաշիվը կախված էր պահանջողի կամքից միայն: Վերջապես հարկերը կարող էին ծագել հազար ու մեկ հանգամանքներից, և այնքան զանազան միմյանցից, որ շատերի անունները մոռացել եմ: Ո՞րտեղից պետք էր վճարել: — Պետք էր տունից մի բան ծախել, մի բան գրավ դնել: Բայց մեր տանը ոչինչ չէր մնացել, մեր տունը նմանում էր մերկ գերեզմանի: Այդ կարո՞ղ էր հասկանալ ֆերրաշը: Նա ինքն էր ծախել տալիս մեր կովը, մեր եզը և մեր գոմեշը, ամենևին չմտածելով, թե վաղը մեր արորը կդադարե գործելուց և մի ամբողջ ընտանիք կզրկվի ապրուստի միջոցներից:

Հայրս վերջին ժամանակներում բոլորովին թողեց իր հողերի մշակությունը, որովհետև ստացած արդյունքը մինչև անգամ չէր լրացնում հարկերի վճարը: Բայց

այսպիսով նա դարձյալ չազատվեցավ ֆերրաշներից, նրանց այցելությունները դարձյալ շարունակվում էին:

Ի՞նչով պետք էր ապրել: — Մնում էր մի բան, որ սոված չմեռնենք՝ միշտ պա՛րտք և պա՛րտք անել… Բայց որքան ծա՛նր էին տոկոսները… Ես այն ժամանակ երեխա էի, իհարկե, հաշիվներ չէի կարող հասկանալ, բայց դեռ չեմ մոռացել մեր անիրավ վաշխառուի վայրենի դեմքը: Նրան կոչում էին Հաջի-Բաբա, դա մի հարուստ մահմեդական էր, բայց հոգեառ հրեշտակը ձեզ օրինակ, երբ հայտնվում էր տոկոսները հավաքելու: Նա գրել-կարդալ չէր իմանում և ոչ տված փողերի համար պարտամուրհակ էր պահանջում: Նրա պարտամուրհակը իր խղճմտանքն էր, իսկ ամսաթիվը կամ տարեթիվը հաշվում էր եղանակների փոփոխության վրա: Նա մի տոպրակի մեջ իր հետ ման էր ածում փայտի զանազան կտորներ, երկայն և կարճ, բարակ ձողերի նման, որոնց վրա նշաններ էին արած գույնզգույն դերձաններով, — դրանք նրա հաշվամատյաններն էին: Ձողերի վրա կային շատ և փոքր թվով խազեր, որ նշանակում էին գումարների որքանությունը, իսկ գույնզգույն դերձանները պարտականների անուններն էին որոշում:

Հաջի-Բաբան գանգատ անելու սովորություն չուներ, երբ նրա պարտականներից մեկը իր ժամանակին փող չէր վճարում կամ ուշացնում էր. — նա իր դատաստանը իր ձեռքովն էր անում: Ամենին հայտնի էր Հաջի-Բաբայի ահագին մահակը, որով նա ջարդում էր իր պարտականների ոսկորները: Նա մինչև անգամ իր հրամանով բանտարկում էր շատերին և ծախել էր տալիս նրա տան կայքը:

Ես դեռ հիշում եմ անգութ վաշխառի խոսքերը, երբ նա տոկոսները առնելու համար մեր տունն էր գալիս: — «Սհակ, ասում էր նա իմ հորը,— գիտե՞ս ո՛րքան է անցել, տե՛ս, այս ծառը դեռ նոր էր տերև բացել (նա ցույց էր տալիս մեր բակի ընկուզենին), հիմա կրկին կանաչել է նա, ուրեմն, անցել է մի բոլորակ տարի: Թե գլուխքը չես կարող տալ, գոնե կաթը (տոկոս) տուր, թե չէ, այդ ջուխտ աղջիկներիդ կտանեմ, կթուրքացնեմ»…

Մարիամը և Մագթաղը, երբ այդ խոսքերը լսում էին, կուչ էին գալիս, և միմյանց գրկելով, սկսում էին լաց լինել: Անմե՛ղ արարածներ, կարծես, նրանք հասկանում էին, թե ինչ սարսափելի բան է թուրքի հարեմը…

Ահա այսպես էին անցնում մեր սև օրերը:

Հայրս, չկարողանալով հայրենի երկրում իր ընտանիքը պահել, ստիպվեցավ դիմել դեպի պանդուխտություն, օտար աշխարհներում բախտ որոնելու: Մենք տարանք նրան մինչև գյուղից դուրս ճանապարհ գցելու: Ես և քույրերս շատ ուրախ էինք, երբ նա գնում էր, կարծում էինք, թե բազարն է գնում, որ մեզ համար չամիչ կամ խուրմա բերե: Բայց մայրս լաց էր լինում: Տխուր էր և հայրս. մահվան չափ տխուր էր նա: Ես մինչև այսօր չեմ մոռացել այն խոսքերը, որ բաժանման րոպեում ասաց նա մորս.— «Ամանաթ քեզ որդիքս, Նիգյար, եթե կենդանի կմնամ, թող չեմ տա, որ նրանք սոված մնան»… «Շուտ ե՛կ, շո՛ւտ, հայրիկ,— կանչում էինք ես և քույրերս նրա ետևից,— մեզ համար չամիչ և փշատ բե՛ր»:

Բայց նա գնաց, էլ չվերադարձավ:

Տարի չանցավ, հորս մահվան լուրը մեզ հասավ: Այդ ցավալի մահը, որի մանրամասնությունները ես կպատմեմ հետո, ամենասաստիկ ներգործություն ունեցավ մեր դժբախտության վրա: Այն ժամանակ հայտնվեցավ Հաջի-Բաբան, տիրեց մեր բոլոր կայքերին և մեզ մերկ ու ոտաբոբիկ դուրս արեց հայրենական տնակից: Մայրս բռնելով իմ և քույրերիս ձեռքից, գնաց քեռուս տունը, այնտեղ

ապրելու: Միակ ժառանգությունը, որ մնաց մեր հոր հարստությունից, էին՝ Մըրոն — մեր ահագին շունը և Նազլուն — տատիս մտերիմ կատուն, դրանք չբաժանվեցան մեզանից:

Բ

ՀԱՅՐԵՆԻՔ

Պարսկաստանի Ատրպատական կոչված նահանգի ամենահարուստ գավառներից մեկն է Սալմաստը: Նա բռնում է Ուրմիո ծովակի արևմտյան ափերը, և շրջապատված լեռների ալիքավոր բարձրությամբ, կազմում է մի գեղեցիկ, բոլորակ հովիտ, որ ոռոգվում է Սոլա գետով: Այդ գետը Սալմաստա Նեղոսն է, որի բազմաթիվ ճյուղերի վրա, մինը մյուսի մոտ, շարված են մեծ և փոքրիկ գյուղեր, որոնց գեղեցիկ երևույթը ամենևին չէ համապատասխանում աղքատ բնակիչների անմխիթար վիճակին:

Սալմաստը որպես հին ժամանակներում եղել է Հայաստանի բազմամարդ գավառներից մեկը, և այժմ նրա բնակիչների մեծ մասն բաղկացած էին հայերից: Մնացյալ ազգականություններին պատկանում էին թուրքերը, հրեաները, ասորիները և քրդերը,— այդ բոլորը միասին վեր առած, հազիվ թե հայերի կես մասին էին հավասարվում:

Ամեն դար, սկսյալ խորին հեթանոսական ժամանակներից, թողել էր այդ գավառում իր տիրապետության հետքերը: Այստեղ դեռ տեսնվում էին հին Զարեհավանի հետքերը: Այստեղ ահագին մոխրաբլուրներ դեռ հիշեցնում էին մոգական ատրուշանները և **սրբազան կրակի** հազարավոր տարիներով լափած նյութերը: Այստեղ բարձր մինարեթներ իրանց գեղեցիկ մոզայիկներով ցույց էին տալիս արաբացոց տիրապետությունը և հիշատակը այն ազգի, որը ուր և իշխում էր, տարածում էր արհեստ, գիտություն և արյուն: Այստեղ դեռ մնացել էին բեկորները այն ամրոցի, ուր մեծ Հուլավունը պահում էր իր գանձերը: Այստեղ զանազան լեռների և բլուրների բարձրավանդակի վրա դեռ մնում էին փլատակները մեծամեծ բերդերի, որպես փշրանք ավատական իշխանների խորտակված փառքի, որոնք իրանց բռնակալության ներքո ճնշում և խեղդում էին ամեն կենդանի զորություն:— Իսկ այդ բոլոր հնությունների մեջ իմ ուշադրությունը գրավում էր մեկը. դա Փիրչավուշ լեռան ժայռերից մեկի վրա քանդակած, պատմական մի անցքի տխուր նկարագիրն էր: Պարսպաձև ժայռի հարթած մակերևույթի վրա դուրս էին բերված մի քանի ձիավորներ հնադարյան հագուստով և նույնպես նախնական զենքերով: Մեկին գերի էին տանում: Նա թագավոր էր: Ոչ մի արձանագրություն չէր ցույց տալիս դրանց ո՛վ և ի՛նչ ժամանակի մարդիկ լինելը: Միայն հայ ժողովրդի մեջ պահված էր մի ցավալի ավանդություն. գերին Արշակունյանց վերջին թագավոր Արտաշեսն էր, որից հետո Հայաստանը ընկավ պարսիկների իշխանության ներքո և կորցրեց իր թագավորներին: Կարծես, այդ պատկերը, որպես մշտական նախատինք, իր քարաժայռի բարձրությունից հանդիմանում լիներ հայերին, ասելով. «Ահա, ինձ նման միշտ գերի և ստրուկ կմնաք դուք, որովհետև ձեր թագավորին գերության մատնեցիք»…

Եվ իրավ, հայ մարդու գերությունը և ստրկությունը իսկույն նկատվում է այդ երկրում, երբ մարդ փոքր-ինչ խորին կերպով ծանոթանում է ժողովրդի կենցաղավարության հետ: Երկրի արտաքին կերպարանքը խաբուսիկ է, կարող է մինչև անգամ սխալանքի մեջ ձգել անփորձ հետազոտողին: Երբ ջերմ ամառային օրերում մարդ հեռվից նայում է Սալմաստա պայծառ արեգակի ճառագայթներով

լուսավորված հովտին, տեսնում է դաշտերը, մշակված աշխատասեր ձեռքով, խոստանում են առատ հունձք.— տեսնում է՝ ցորյանը, գարին, բրինձը, բամբակը և ընդեղենների ամեն տեսակները, իրանց բեղմնավորությամբ ներկայացնում են խիստ գոհացուցիչ առատություն. տեսնում է՝ մրգաբեր այգիները լիացած են պտուղների ամենաազնիվ տեսակներով.— տեսնում է խոտավետ արոտամարգերի վրա արածում են տավարների նախիրներ և ոչխարների հոտեր,— մի խոսքով, նա տեսնում է, որ բնությունը անխնա առատությամբ թափել է այստեղ իր հարստությունները: Նա սկսում է մտածել. «ո՛րքան բախտավոր ապրում են այստեղ մարդիկ»… Իսկ այդ ճոխությունները, բնության այդ պարգևները չեն պատկանում այն բյուրավոր աշխատող ձեռքերին, որոնք դաշտերի վրա, արևի կրակոտ բոցերի մեջ քրտինք են թափում:

Ահա գյուղերում, այստեղ և այնտեղ բարձրանում են ամրոցներ, որոնք իրանց հպարտ աշտարակներով և ատամնավոր պարիսպներով իշխում են շրջակայքի վրա, նրանց մեջ բնակվում են «աղաները» իրանց ախտերով և մոլություններով,— ահա նրանց է պատկանում երկրի բոլոր բեղմնավորությունը, նրանք են շռայլում մշակ մարդու աշխատավոր ձեռքի վաստակը:

Երեխայությանս ժամանակ, երբ ես որևիցե անկարգություն էի անում, տատս և մայրս ամեն մեկը իր առանձին եղանակն ուներ ինձ սաստելու, որ վախենամ և հանգիստ կենամ: Տատս ասում էր. «Սո՛ւս, սո՛ւս, մարդագելը եկավ, քեզ կտամ կուտի»:— Մայրս ասում էր «Ձենդ կտրի՛, թե չէ, ֆերրաշին կկանչեմ»… Թե առաջին և թե վերջին սպառնալիքը իմ վրա միօրինակ ազդեցություն էին գործում. ես ֆերրաշից նույնքան էի վախենում, որքան գայլից: Բայց երբ փոքր-ինչ մեծացա, «մարդագայլից» այլևս չէի վախենում, որովհետև հասկանում էի, թե մարդը գայլ չի դառնա, բայց ֆերրաշի երկյուղը երբեք դուրս չեկավ իմ սրտից… Ինձ թվում է, որ այս րոպեիս էլ լսում եմ նրա մտրակի ձայնը, ինձ թվում է, թե իմ ականջին զարկում են գյուղացու ցավալի հառաչանքները, և ես տեսնում եմ նրան թուլացած, ուշաթափ եղած հարկապահանջի անգութ գանահարությունից…

Քեռուս տունը, ուր տեղափոխվեցանք մենք, մեզ հասած դժբախտությունից հետո, գտնվում էր Քոհնա-Շահարում: Քոհնա-Շահար նշանակում է հին քաղաք, այսպես կոչում էին նրան Սալմաստա նոր քաղաքից որոշելու համար, որի անունը Դիլիման էր՝ հին քաղաքը կորցրել էր իր անունը: Շատ հավանական է, որ դա լիներ մեր Զարեհավանը կամ Զարեվանդը, որի անունով մի ժամանակ կոչվում էր ամբողջ գավառը:

Այս քաղաքում բնակվում էին չորս ազգություններ՝ հայ, թուրք, ասորի և հրեա. յուրաքանչյուր ազգություն զետեղված էր առանձին թաղերում: Հայերը ունեին երկու եկեղեցի, իսկ ասորիները՝ մեկ: Հին քաղաքը արժանի էր իր կոչմանը, այստեղ, կարծես, մի քանի քաղաքներ շինված էին մինը մյուսի վրա: Նոր շենք կառուցանելու համար նյութեր պետք չէին. քանդում էին գետինը և հողի տակից դուրս էին բերում ահագին քանակությամբ աղյուս, կոփածո քարեր, և շատ անգամ բացվում էր մի ընդարձակ, ստորերկրյա բնակարան: Ո՛րքան փորձանքներ, ո՛րքան հեղափոխություններ պետք է կրած լիներ այդ քաղաքը. ո՛րքան ազգեր այնտեղ բնակվել և անհետացել էին. իսկ հայը, նրա նախկին բնակիչը, դեռ մնում էր: Արաբներից մնացել էր մի լայնատարած գերեզմանատուն միայն, գեղեցիկ զարդարած տապանաքարերով:

Քաղաքի բոլորովին սպառված մի անկյունումն էր գտնվում քեռուս տունը, մեծ հեղեղատի ափի մոտ: Այդ հեղեղատը գարնան անձրևների ժամանակ հորդանում էր, և քանդելով ավերակները, բերում էր իր հետ զանազան հնություններ: Ես շատ ուրախ էի լինում, երբ հեղեղը փոքրանում էր, որովհետև մեր դրացի երեխաների

հետ գնում էինք գետի ափերի մոտ և ավազների միջից գտնում էինք հին դրամներ, կանանց զարդեր, և վաճառելով հրեա ոսկերիչներին, փող էինք ստանում:

Հայերի տները թեև փոքրիկներ էին, բայց հովանավորված պարտեզներով և ծառերով, գեղեցիկ տեսք ունեին: Բնակարանը, ասում են, խիստ խորին կապ ունի մարդու կյանքի ու բնավորության հետ: Այս մտքով, հայերի տների ձևը և նրանց ներքին ու արտաքին դիրքը, ոչ միայն մեծ նշանակություն ունեին բնակիչների ճաշակի մասին, այլ առավելապես արտահայտում էին նրանց վիճակը և հասարակական դրությունը: Տները շատ սերտ և անմիջական կերպով կցած էին մինը մյուսի հետ, այնպես, որ տանիքների վրայով կարելի էր հայոց թաղի մի ծայրից մինչև մյուսը գնալ: Բոլոր տները ունեին գաղտնի հաղորդակցություն: Այդ հաղորդակցությունը պահպանվում էր զանազան ծակերի միջոցով, որ բացված էին մի տանից մյուսի մեջ: Ծակերը բացված էին աննկատելի տեղերում: Նրանցից շատերը այնքան նեղ էին, որ մի ձեռք միայն կարելի էր անցկացնել, և ծառայում էին ավելի բանավոր հաղորդակցության համար: Երբ պատահում էր մի անսովոր դեպք, մի քանի րոպեի մեջ թաղի մյուս ծայրում արդեն գիտեին: Ամեն մի լուր, ամեն մի խոսք, ծակերի միջոցով, կայծակի արագությամբ տարածվում էր ամբողջ թաղի մեջ, առանց մի մարդ իր տանից դուրս գալու: Ծակերից շատերն այնքան մեծ էին, որ կարելի էր, մանավանդ վտանգի ժամանակ, մի տան կայքը թաքցնել կամ տեղափոխել մյուսի մեջ, և կամ հարևանի մոտ ապաստան գտնել: Թաքստի համար յուրաքանչյուր տան մեջ կային ստորերկրյա մառաններ, որոնց գաղտնի մուտքը միայն տան տիրոջն էր հայտնի:

Ասեցի, հայոց թաղի բոլորովին սպառված ծայրումն էր քեռուս տունը, ուր մենք պատսպարան գտանք մեզ հասած դժբախտությունից հետո, այսինքն այն օրից, հետո, երբ հորս պարտատերերը մեզ արտաքսեցին հայրենական տնակից: Ամենօրյա երկյուղը, գողերի և ավազակների հարձակումների հաճախ կրկնությունը ստիպել էին կանգնել տան շրջապարիսպը, որքան կարելի է, բարձր և հաստ պատերով, որոնք անձրևից և խոնավությունից ստացել էին մուգ-կանաչ գույն: Ժամանակի ավերող ձեռքը կիսով չափով մաշել էր շրջապարիսպի վերին մասը, բայց նա տակավին այնքան բարձրություն ուներ, որ կարող էր ընդդիմադրել ամենահանդուգն հարձակման: Պատերի քայքայված ճեղքերից բուսել էին մացառներ փշոտ ոստերով և մանրիկ տերևներով, որոնց միջից կանաչ մողեսները շատ անգամ դուրս էին նայում իրանց նենգավոր աչիկներով: Բայց ես մողեսներից չէի վախենում, երբեմն ձեռքով բռնում էի նրանց, ես վախենում էի միայն օձերից, թեև նրանք այնքան ընտելացած էին մեզ հետ, որ երբեք չէին կծում: Քեռուս տան մեջ այդ օձերի մասին պահված էին խիստ հետաքրքիր ավանդություններ, պատմում էին, թե նրանք թագավոր և թագուհի ունեն, թե երկուսի գլուխներն էլ զարդարած են ոսկի պսակներով, որոնք կրում են իրանց վրա աշխարհի ամենաթանկագին գոհարները: Ասում էին, թե իմ մեծ քեռին շատ անգամ տեսել էր նրանց, բայց չէր կամեցել խլել նրանց պսակները, որովհետև այդ օձերի հետ մի դյութական կապով կապված էր նրա տան բախտավորությունը:

Գլխավոր դուռը ներս էր տանում դեպի բավական ընդարձակ բակը, որ հովանավորված էր դարևոր թթենիներով և կեռասենիներով: Բակի մեկ ճակատում արևելյան ճաշակով շինված էին մի քանի մեծ և փոքրիկ սենյակներ, հնացած, քայքայված, և միայն իրանց ծերության մեջ պահպանած հնության պատկառանքը: Այս տունը շինված էր այն ժամանակ, երբ քեռուս պապը քաղաքի նշանավոր և հարուստ բնակիչներից մեկն էր. հարյուրավոր տարիներից հետո նա տակավին պահպանել էր վաղեմի վայելչությունը: Ծառերի հետ փաթաթած խաղողի որթերը համարյա թե գրկում էին իրանց ծոցի մեջ այդ կիսանահապետական բնակարանը, որի նմանը անտառներում կամ լեռների խուլ ձորերի մեջ միայն կարելի է տեսնել: Փողոցից հոսող վտակից բաժանված էր մի առվակ, որ անցնում էր բակի միջով և

ոռոգում էր ոչ միայն պարտեզը, այլ պահպանում էր մի մշտական զովություն, որ ազատում էր բնակիչներին ամառային տոթերից:

Առհասարակ այդ հնացած և մաշված տունը իր ընդարձակությամբ դարձյալ մեծ հարմարություն ուներ քեռուս հոյակապ ընտանիքի համար, որ կազմված էր բազմաթիվ անդամներից: Մեծ քեռիս, այսինքն մորս հայրը, դեռ կենդանի էր. նրան բոլորը *դա–դա* (հայր) էին կոչում: Նա հինգ որդի ուներ, բոլորը ամուսնացած, բոլորը բազմաթիվ չափահաս և անչափահաս զավակների տեր էին: Մայրս իր եղբայրների միակ քույրն էր: Առհասարակ մի հատիկ քույրը միշտ սիրելի է լինում իր եղբայրներին, բայց մորս վերաբերությամբ ընդհակառակն էր պատահել: Մայրս այն հազվագյուտ բնավորություններից էր, որին անկարելի էր չսիրել: Բայց ի՞նչ էր պատճառը, որ նրա և իր ազգատոհմի մեջ տիրում էր մի տեսակ խուլ սառնասրտություն, մի տեսակ ծածուկ անհամակրություն, որը իսկույն աչքի էր զարկում: Այստեղ մի գաղտնիք կար, որ ինձ համար այն ժամանակ անհասկանալի էր, թեև ես չէի կարող չնկատել, որ քեռիներս խիստ անտարբերությամբ ընդունեցին իրանց քրոջ ամուսնու մահվան ցավալի բոթը, և կարծես ուրախ լինեին, որ աստծու արդար դատաստանը վերջապես պատժեց նրան: Այդ էր պատճառը, որ մեզ պատահած դժբախտությունից հետո մայրս խիստ դժվարությամբ հանձն առեց իր եղբայրների մոտ բնակվիլ, և եթե անճարությունն ու աղքատությունը չստիպեր նրան, գուցե այդ ծանր զիջողությունը չէր անի:

Քեռուս տան այն մասը, ուր տեղավորեցին մեզ, բոլորովին զուրկ էր ծառերից: Այստեղ գտնվում էր ախոռատունը, որի բակի մեջ կար փոքրիկ խրճիթ բաղկացած մի սենյակից և նախասենյակից որ շինված էր ծառաների համար: Եվ որովհետև այժմ քեռիս ծառաներ չուներ, խրճիթը մնացել էր բոլորովին անբնակ. այնտեղ պահում էին տան կոտրատված և անպիտանացած կարասիքը: Այդ մթերքներին փոխարինեցինք մենք, որ մեր վիճակով շատ չէինք տարբերվում նրանցից: Այնուամենայնիվ, մենք գոհ մնացինք մեր բախտից, մաքրեցինք խրճիթը իր հին ապականությունից շինեցինք և սարքեցինք նրան, թեև քայքայված առաստաղը և խարխուլ պատերը բոլորովին անզոր էին անձրևի հոսանքի առաջը առնելու, կամ պահպանելու մեզ վատ եղանակից:

Գ

ՀԻՆ ՄԵՂՔԸ

Աշունը մոտենում էր իր վախճանին:

Այդ առաջին աշունն էր, որին հանդիպում էինք մենք, քեռուս տունը տեղափոխվելուց հետո: Դաշտերը ստանում էին տխուր և գունաթափ կերպարանք. կանաչ մարգագետինները, օրըստօրե դեղնելով, մեռելային դեմք էին կրում: Անխղճաբար փչում էր սառը քամին և թափում էր մերկ ծառերի մնացած տերևները: Երկնքի խոժոռ և մոխրագույն դեմքի վրա գլորվում էին մթին ամպերի ահագին բեկորներ և արգելում էին արևի թույլ ճառագայթները: Խիստ տխուր եղանակով լսելի էր լինում կռունկների խուլ կռնչյունը, որոնք բարձր եթերքի միջով, եռանկյունի շարքերով, դիմում էին դեպի օտար աշխարհ: Ծիծեռնակներ ամենևին չէին երևում. նրանք վաղուց էին գաղթել: Միայն մրջյունները խիստ եռանդով կրում էին դեպի իրանց ամբարները ընդեղենների զանազան տեսակներ: Ամեն արարած պատրաստվում է ընդունել ձմեռը — իր անախորժ հյուրը:

Այս օրերը սակավ հոգսեր չպատճառեցին մորս: Ձմեռը, աղքատների թշնամին, մեզ պատժելու համար էր գալիս:

Մայրս իր հոր տունը տեղափոխվելուց մի քանի օրից հետո հրաժարվեցավ կերակուրներ ընդունել նրանց սեղանից և ապրում էր իր անկախ աշխատանքով: Նա շուտով հաշտվեցավ իր նոր վիճակի հետ, չկամենալով ծանրություն պատճառել իր եղբայրներին, որոնց շատ հաճելի չէր իրանց գերդաստանի վրա ընդունած նոր բեռը: Մայրս աղքատություն շատ էր կրած, բայց երբեք իր տան չքավորությունը օտարներին հայտնած չէր, թե ինչպես է ապրում,կամ ինչ միջոցներով է պահում իր երեխաներին: Նա բավական հպարտ կին էր: Նա ամեն հույս դրած էր իր աշխատող ձեռքերի և աստծո վրա: Բայց աստված շատ անգամ թույլ է տալիս, որ դժբախտությունը մինչև վերջին ծայր տանջե մարդուն: Այդ անում է նա, որպես ասում են, արարածների համբերությունը փորձելու համար: Մորս համբերությունը երկաթի ամրություն ուներ: Բայց երկաթն էլ փշրվում է, երկաթն էլ խորտակվում է…

Ես երբեք չեմ կարող մոռանալ մորս արտասվալի աչքերը, երբ առաջին անգամ, ինձ և երկու քույրերիս իր հետ առնելով, գնացինք դաշտը, հնձած արտերից թափված հասկերը հավաքելու: Դա մուրացկանության առաջին քայլն է, որին ենթարկվում է պատվավոր աղքատը: Մենք մի ժամանակ արտեր ունեինք, հունձք ունեինք, և մեր հունձքը հավաքելուց հետո խուրձերից ընկած հասկերը թողնում էինք աստուծու աղքատներին և երկնքի թռչուններին: Բոլո՛րը կորցրինք, և այժմ ստիպված էինք ուրիշի արտերից *հասկաքաղ*[1] անել… Արտերի կարճ խուզած տափարակի վրա, մխաթների նման վեր ցցված ձողերի սուր ծայրերը ծակծկում էին իմ և քույրերիս բոլորովին մերկ ոտները: Բայց մենք ցավ չէինք զգում: Մենք շատ ուրախ էինք և խիստ եռանդով կպանք գործին: Մարիամը և Մագթաղը իրանց մանրիկ ձեռներով հավաքում էին ընկած հասկերը և ինձ վրա ծիծաղում էին, որովհետև ես ծույլ էի: Նրանք փունջեր էին կապում հասկերից, և երկու քույրեր մրցություն էին անում, թե որը շատ կհավաքե: Խե՛ղճ երեխաներ, կարծես զգում էին, թե ձմեռը քաղցած կմնան, եթե այժմ պաշար չպատրաստեն: Մայրս նայում էր նրանց վրա և լաց էր լինում…

Երեկոյան ժամուն մեզանից ամեն մեկը իր հավաքածը կապեց շալակին, դարձանք տուն: Մարիամը և Մագթաղը իրանց բեռներով մի առանձին հպարտությամբ հանդիպեցին քեռուս երեխաներին, որպես անխոնջ մշակներ, որ դառնում էին դաշտից:

Այսպես ամեն օր, վաղ-առավոտյան գնում էինք դաշտ *հասկաքաղ* անելու և երեկոյան վերադառնում էինք: Մեր խրճթի դռան առջև կազմվեցավ մի փոքրիկ դեզ հավաքած հասկերից: Այնուհետև սկսեցինք մեր կալը կալսել: Բայց նա այնքան մեծ չէր, որ հարկավոր լիներ կալսել *ջարջառով*: Մայրս սկսեց իր ձեռքով մանրել հասկերը մի հաստ փայտով, որը այնքան ծանր էր որ ես դժվարությամբ կարողանում էի բարձրացնել: Երբ հարդը քամուն տվեցինք, մաքուր ցորենը հավաքեցինք թաղարների մեջ: Ձմեռվա մեր հացի պաշարը արդեն պատրաստ էր:

Դեռ մնում էր ամենահարկավորը — վառելիքը: Մեր խարխուլ բնակարանի համար պետք էր բավական տաքություն, մանավանդ որ ձմեռը այս կողմերում խիստ սաստիկ է լինում: Մայրս այնքան զբաղված էր, որ ամենևին ժամանակ չուներ հոգ տանելու վառելիքի մասին. այդ պատճառով, այդ հոգսը մնաց իմ և քույրերիս վրա: Մայրս իր ձեռքով հյուսեց երեք փոքրիկ կթոցներ, մեկը ինձ համար, երկուսը Մարիամի և Մագթաղի համար: Տեսնելու էր, թե ո՛րպիսի ուրախությամբ մենք այդ

[1] Մովսեսի օրենքով հրամայած էր արտերի եզերքը չհնձել և թողնել աղքատներին: Հայերի մեջ այդ սովորությունը նվիրագործված է ժողովրդական ավանդությամբ: Դա կոչվում է հասկաքաղ: Իսկ ճռաքաղը, այսինքն այգիների ճիռերի հավաքում, նույնպես աղքատներին է պատկանում:

կթոցները առնում էինք մեր ուսերի վրա և ամեն օր գնում էինք դաշտը, այնտեղ հավաքում էինք քակորներ, ծառերից թափված տերևներ, փուշ և մացառներ, և բերում էինք ձմեռը մեր խրճիթը տաքացնելու համար: Ա՛խ, ո՛րքան լավ բան է եղել աշխատությունը: Ես այնուհետև միշտ հարգանքով էի նայում այն քակորների կույտի վրա, որ ինքս էի հավաքել, և բարկանում էի, թե ինչո՞ւ խնայողությամբ չէին գործածում, թեև մորս խնայողությունը հասնում էր ժլատության:

Ձմեռվա մեր ապրուստը բավական ապահովված կլիներ, եթե մի մեծ դժվարություն դեռ մնացած չլիներ: Մայրս պետք է վճարեր հարկերի վերջին վեցամսյակը: Թեև մենք այժմ ոչ տուն ունեինք և ոչ տեղ, ոչ հող ունեինք և ոչ ցանք, բայց հարկը դարձյալ պահանջում էին: Պահանջում էին գլխավորապես հորս գլխահարկը: Մայրս ցույց էր տալիս այն նամակը, որ ստացել էր հորս մահվան մասին, և ասում էր, որ մեռելի համար հարկ չեն վճարում: Բայց նրան չէին լսում, պատասխանում էին, թե դուք խորամանկությամբ հնարել եք այդ նամակը, որ հարկ չտաք, թե նա դեռ կենդանի է: Մայրս աղաչում էր, որ փոքր-ինչ ժամանակ տան, մինչև կարողանա փող վաստակել և նրանց պահանջը լրացնել: Թեև ընդունվեցավ խնդիրքը, բայց շատ թանկ նստեց այն մի ամիս ժամանակը, որ շնորհեցին մեզ, որովհետև առանց կաշառքի չէր կարելի գրավել հարկապահանջների բարեսրտությունը: Այնուհետև մայրս գիշեր ու ցերեկ հանգստություն չուներ. ասեղը, ջահրեն և թեշին անդադար գործում էին:

Բայց ի՞նչ կարող էր լինել մորս աշխատանքը, մանավանդ մի այնպիսի երկրում, ուր տիրում էր ընդհանուր աղքատություն, ուր ամեն մարդ ինքն էր կատարում իր տան գործերը: Նա ընդունում էր երբեմն ապսպրանքներ հրեա մանրավաճառներից, որոնք մի շապիկ կամ մի արխալուղ կարելու համար վճարում էին խիստ չնչին վարձատրություն: Այդ նրա ցերեկվա պարապմունքն էր: Իսկ գիշերների մեծ մասը անց էր կացնում նա իր շահերով, կամ բամբակից թել էր պատրաստում և մանածը վաճառում էր ջուլհակներին և կամ թեշիով բուրդ էր մանում շալ գործողների համար: Ճրագալույցի ծախսը դուրս գալուց հետո մնում էր այնքան վաստակ, որ հազիվ բավական էր լինում շաբաթը մի անգամ, այսինքն տոն օրերում, միս գնելու և տաք կերակուր ուտելու: Մնացած օրերը ապրում էինք համարյա ցամաք հացով:

Մեզ շնորհված մի ամիս ժամանակը անցավ ստվերի պես: Մայրս չկարողացավ մի ամսում պատրաստել պահանջված գումարը: Հարկահանները ծախեցին մեր կայքից ամեն բան, որ կարող էր փոքր ի շատե գին բերել, և նրանց թվում վաճառվեցավ ցորենի մթերքը, որ հավաքված էր իմ, Մարիամի և Մագթաղի ձեռքով: Երևակայեցեք մեր արտասուքը և մեր դրությունը այնուհետև: Աղքատությունը հասցրեց իր վերջին հարվածը, և շատ զգալի էր…

Այդ բոլորը կատարվեցավ իմ մեծ քեռու և իմ մոր հինգ եղբայրների աչքի առջև: Բայց նրանք այնքան աղքատ չէին, որ չկարողանային օգնել մեզ, որ չկարողանային ազատել մեզ մեր անտանելի թշվառությունից:

Ես հետո, շատ հետո, հասկացա այն սառնասրտության պատճառը, որ տիրում էր իմ մոր և նրա ազգատոհմի մեջ և որը արդեն ատելության կերպարանք էր ստացել: Մայրս, որպես վերևում հիշեցի, իր եղբայրների միակ քույրն էր, նա իր աղջիկ ժամանակը շատ սիրված էր թե եղբայրներից և թե հորից: Ամեն կողմից խնդրում էին մորս ձեռքը, ոչ այն պատճառով միայն, որ նա շատ գեղեցիկ էր, այլ ամեն երիտասարդ մի առանձին բախտավորություն էր համարում լինել փեսա այն ընտանիքի, որ ամբողջ գավառի մեջ վայելում էր մեծ հարգանք: Փեսաների թիվը այնքան շատ էր, որ չգիտեին, թև որին պետք էր ընտրել, կամ որին պետք էր մերժել: Վերջապես ընտրեցին Մահլամ գյուղի մելիքի որդուն, իհարկե, առանց հարցնելու իմ մոր կամքը և առանց ստանալու նրա հաճությունը: Երբ կատարվում էր հարսանիքի

հանդեսը, հենց այն գիշերը, երբ նորահարսին և փեսային պետք է եկեղեցի տանեին, հանկարծ գտան նորահարսին անհայտացած հոր տնից: Խայտառակությունը չափ և սահման չուներ: Չար լեզուները սկսեցին զանազան կերպով բացատրել նրա պատճառը. ոմանք ասում էին՝ թուրքերը գողացել են նորահարսին, ոմանք ասում էին իրան սպանել է, ոմանք ասում էին՝ որ նա ծածուկ սիրում էր մի ուրիշին և նրա հետ փախել է: Այդ կարծիքներից արդյոք ո՞րն էր ուղիղ,— այն ժամանակ դժվար էր ստուգել, իսկ ինչ որ ճշմարիտ էր, այն էր, որ իմ մայրը կորավ և կորավ:

Անցան տարիներ, իմ մոր մասին տեղեկություն չկար: Նրա մայրը կսկիծից մեռավ, նա չկարողացավ տանել իր աղջկա ցավը: Մյուսները բոլորովին մոռացան նրան:

Հանկարծ հայտնվեցավ նա իր ամուսնի և երեք զավակների հետ: Այն ժամանակ միայն ստուգվեցավ, որ վերջին ենթադրությունը ուղիղ էր. արդարև, մայրս փախել էր իր սիրած տղամարդի հետ: Հասարակական կարծիքը սկսեց դատապարտել նրան: Նրան չներեցին հարազատ եղբայրները և մինչև անգամ հայրը, չնայելով, որ նա արդեն ամուսին էր և երեք զավակների մայր: Բայց ինչո՞վ էր մեղավոր հին հանցավորը, ինչով էին մեղավոր նրա զավակները. մի՞թե ծնողների հանցանքը տարածվում է որդիների վրա…

Իմ քեռիները զայրացան ավելի այն պատճառով, երբ տեսան, որ իրանց քույրը ամուսնացել է մի տղամարդի հետ, որին ատում էին, որի ազգատոհմի հետ ժառանգական թշնամություն ունեին, և, որ ավելի գլխավորն է՝ աղքատ էր: Այսպիսի ամուսնությունները մոռանալ են տալիս հին ոխակալությունը և բառնում են հին վրեժխնդրությունը երկու տոհմերի միջից: Բայց մայրս չկարողացավ քավել այդ մեղքը, նրա ամուսնությունը չկարողացավ կապել թշնամի տոհմերին միմյանց հետ: Մորս հայրը անիծեց նրան, և նա այնուհետև չհամարձակվեցավ ոտք կոխել ծնողական տան շեմքի վրա, մինչև այն օրը, որ հորս մահը մի փոքր մեղմացրուց նրանց խստասրտությունը:

Այժմ պիտի խոսեմ այդ ցավալի մահվան մասին: Հայրս դիմելով դեպի պանդխտություն, նպատակ ուներ Կ. Պոլիս գնար, ուր այն ժամանակ լինում էին հայ գաղթականները: Նա պետք է անցկենար Էրզրումից: Այստեղ, մի օր, փողոցից անցկենալու ժամանակ, հանկարծ մի թուրք հարձակվում է նրա վրա, և իր դաշույնի մի հարվածով կտրում է նրա պարանոցը, և գլուխը մի կողմ գլորելով, ուրախությամբ գոչում է.— «Ես տա՛րա… ես տա՛րա»… Թուրքերի բազմությունը հավաքվում է նրա շուրջը, հետաքրքրությամբ հարցնում են, թե ի՞նչը տարավ.— «Ընկերիս հետ վիճում էինք,— պատասխանում է եղեռնագործը,— նա ասում էր. թե իմ դաշույնը ավելի սուր է. իսկ ես ասում էի, թե իմն է ավելի սուր: Վճռեցինք փորձել այդ գավուրի պարանոցի վրա, գրազ գալով, թե մեզանից ով որ մի հարվածով կկտրե պարանոցը, մյուսը պետք է պարտավորվի իր հաշվով հյուրասիրել նրան մի ֆինջան քաղցր ղահվեով և մի նարգիլեով: Այժմ ես տարա»: Բազմությունը գովաբանում է սրիկայի քաջությունը, ասելով՝ «մաշալլա… մաշալլա»… և հեռանում է: Իսկ սրիկան, իր ընկերի ձեռքից բռնելով, քարշ է տալիս դեպի ղահվետուն, որ ստանա խոստացած մրցանակը: Մի ամբողջ օր հորս դիակը մնում է հրապարակի վրա: Մուսուլմանները ծաղրելով են անցնում նրա մոտից, թե ո՛րքան թույլ է եղել «գավուրի» պարանոցը, որ մի հարվածից կտրվել է. իսկ ոմանք զարմանում էին սրիկայի բազկի զորության և նրա դաշույնի սրության վրա: Բայց տեղային հայերը, երկյուղից չէին համարձակվել ցերեկով մոտենալ նրան, և միայն գիշերով վեր էին առել դիակը ու թաղել:

Այդ սարսափելի եղեռնագործության լուրը խիստ սառնասրտությամբ ընդունվեցավ մեր կողմերում, որպես թե, սովորական անցքերի կարգից դուրս մի բան չլիներ: Մեր թշնամիները ուրախացան, իսկ մեր բարեկամները ավելորդ համարեցին տրտմել: Ավելի հասկացող մարդիկ այսպես էին բացատրում, թե աստված նրա ճակատին

այնպես էր գրած, պետք է այս տեսակ մահով վախճանվեր: Իսկ իմ քեռիները ասում էին, թե աստված պատժեց նրան, որովհետև նա գողացել էր նրանց քրոջը հոր տանից, և մի այսպիսի մարդ չէր կարող բախտավոր լինել: Մի սիրող սիրտ միայն խորին կերպով խոցված էր,— դա իմ մոր սիրտն էր: Այդ ողորմելին մինչև մահ չկարողացավ մոռանալ թշվառ ամուսնի կսկիծը: Ես և իմ քույրերս ոչինչ չէինք հասկանում. մենք միայն անգիտակցաբար լաց էինք լինում, երբ տեսնում էինք, որ մեր մայրը լաց էր լինում: Բայց երբ ես մեծացա, այն ժամանակ միայն հասկացա բոլորը, և դառն վրեժխնդրությունը, իմ հասակի հետ, սկսեց փոքր առ փոքր աճել…

Դրանից ավելի այլևս ի՞նչ կարող էր լինել, որ ազդեր որդու սրտի վրա, որ զուրկ չէր զգացմունքից, որ սկսել էր հասկանալ, թե ի՞նչ բան է բարբարոսությունը: Իմ հոր պարանոցի վրա կատարվել էր մի սոսկալի փորձ, որը եթե գործ դրված լիներ մի հավի, մի այծի և մինչև անգամ մի շան պարանոցի վրա, անտարակույս անպատիժ չէր մնալու չարագործը: Բայց հայ մարդը — գավուրը — ավելի ստոր էր այդ անասուններից: Նա տեր չուներ, նա գին չուներ. նրա հետ կարելի էր անել ամեն բան և անպատիժ մնալ…

Իմ քեռիները արհեստով զինագործ էին. այդ արհեստը ժառանգաբար անցել էր նրանց տոհմի մեջ, և հարյուրավոր տարիների ընթացքում զարգացել և բավական կատարելագործվել էր: Պարսկաստանում, ինչպես և Տաճկաստանում, առհասարակ բոլոր զինագործները հայեր էին. նրանք զենք էին պատրաստում իրանց թշնամիների համար, որոնք թեև շինելը չէին իմանում, բայց գործածելու մեջ շատ հմուտ էին: Ես միշտ մի առանձին բարկությամբ էի մտածում այն աղետալի անցքի մասին, թե անպատճառ մի հայ արհեստավորի ձեռքով պետք է շինված լինեին այն դաշույնները, որոնցմով փորձ փորձեցին իմ հոր պարանոցի վրա:

Իմ քեռիները մեր գավառի նշանավոր զինագործներն էին, այդ պատճառով նրանց արհեստանոցը ամբողջ տարի միշտ գործ և աշխատություն ուներ: Արհեստանոցը զետեղված էր տան գլխավոր մուտքի գավիթում և բաժանվում էր կանանոցից առանձին բակով: Այստեղ միշտ կարելի էր տեսնել մի խառնիճաղանջ բազմություն, բաղկացած պարսիկներից, թուրքերից և քրդերից, որոնք բերել էին իրենց զենքերը շինել տալու: Հեռու կամ օտար երկրներից եկողները այնտեղ մնում էին օրերով և շաբաթներով մինչև կպատրաստվեին նրանց զենքերը: Այս վերջիններից շատերը կերակրվում էին քեռիներիս սեղանից և մինչև անգամ փող չէին վճարում նրանց աշխատության համար: Ես փոքր ժամանակս չէի կարողանում հասկանալ, թե ի՞նչ նշանակություն ուներ այդ նահապետական հյուրասիրությունը՝ համ ձրի աշխատել, համ կերակրել, համ փող չստանալ: Հետո հասկացա, որ այդ հյուրասիրությունը ցույց էին տալիս ոչ բոլորին, այլ նշանավոր անձնավորություններին միայն: Խաների, բեկերի, սեիդների, շեյխերի և զանազան քուրդ ցեղապետների համար աշխատում էին ձրի: Դրանք մահմեդական ժողովրդի առաջնորդներն էին, դրանց պետք էր քաղաքավարի կերպով կաշառել, դրանց բարեսրտությունը պետք էր գրավել, որպեսզի կարելի լիներ դրանց շնորհիվ հասարակ մահկանացուներից վարձատրություն ստանալ: Հակառակ դեպքում անհնար էր գործել, առաջնորդները կարող էին հրամայել, որ բոլորովին ձրի աշխատեցնեն արհեստավորներին կամ զանազան շառեր կսարքեին: Իսկ այժմ ոչ մի թուրք, ոչ մի պարսիկ, և ոչ մի քուրդ չէր համարձակվում իր վճարը չհատուցանել, որովհետև գիտեր, որ պետերը հարգում են, պաշտպանում են վարպետ Բաբային. այսպես էր իմ մեծ քեռու անունը:

Կար և մի ուրիշ բան: Մեր գավառում բնակվող զանազան մահմեդական ցեղերը, մանավանդ քրդերը, անհաստատաբնակ ժողովուրդ էին. գարնան սկզբից սկսած մինչև աշնան վերջը իրանց հոտերով և վրաններով թափառում էին լեռնային ամարանոցներում, և ձմեռը միայն վերադառնում էին իրանց տները թափառումների ժամանակ ամեն մի խումբ պետք է իր հետ զինագործ ունենար, որովհետև զենքը

նրանց ամենահարկավոր գործիքն էր: Եվ այս մտքով ման էին ածում իրանց հետ զինագործի շարժական արհեստանոցներ: Իմ մեծ քեռու հինգ որդիներից չորսը մի-մի քուրդ ցեղի վարպետներն էին և իրանց աշակերտներով շրջում էին նրանց հետ: Նրանք վերադառնում էին տուն ձմեռը, բերելով իրանց հետ բեռներով յուղ, պանիր, բուրդ և մեծ քանակությամբ ոչխարներ, կովեր, եզներ և այլն: Քրդերը վճարում էին այն մթերքներով, որ ստանում էին իրանց անասուններից:

Մյուս որդիների բացակայության ժամանակ մեծ քեռուս մոտ մնում էր միայն կրտսեր որդին: Ես, կարծես, հենց այս րոպեիս տեսնում եմ իմ աչքի առջև ծերունի արհեստավորին, նստած զնդանի առջև, կաշյա գոգնոցով, անդադար ուղղում էր քթի վրա դրած ահագին ակնոցները, և երկաթի կտորը ունելիքով բռնած, կամ խառտում է, կամ հղկում է և կամ փոքրիկ մուրճով ծեծում է: Նրա շուրջը լսելի են լինում ահագին կռանների դաշնակավոր ձայները, փուքսերը գոռում են, շեկացրած երկաթը դուրս են բերում քուրայի միջից, դնում են զնդանի վրա և մեծ-մեծ կռաններով կռում են — յուրաքանչյուր հարվածի հետ դուրս է ցայտում կայծերի մի ամբողջ հեղեղ: Չգիտեմ թե ինչո՞ւ այդ կայծերը իմ ամենափոքր հասակից միշտ մի առանձին կախարդական ազդեցություն ունեին իմ վրա. ես տեսնում էի նրանց մեջ մի անբացատրելի խորհուրդ, մի գաղտնիք, որը հասկանալ չէի կարող: Երկաթի մեջ թաքնված կայծերը դուրս էին ցայտում այն ժամանակ միայն, երբ սառն երկաթը սաստիկ ջերմացնում էին, և երբ սկսում էին ծեծել, հարվածել նրան: Երկաթի հանգիստ և խաղաղ դրության ժամանակ կայծերը, կարծես, քնած էին լինում, հենց որ տաքացնում էին երկաթը, հենց որ զարկում էր առաջին կռանը, իսկույն շանթերի կոտորակների նման նրանք դուրս էին ցայտում և սփռվում էին դեպի ամեն կողմեր… Ուրիշ երեխաներ կարող էին վախենալ, բայց ես միշտ մի առանձին զվարճությամբ էի նայում այդ հրեղեն տարափի վրա: Ես մինչև անգամ սիրում էի մրրիկը, երբ երկինքը սարսափելի կերպով որոտում էր, երբ օդի մեջ տիրում էր մի սոսկալի ալեկոծություն և երբ կայծակը դուրս էր շողում մթին ամպերի միջից: Ինձ երևում էր, թե այնտեղ, երկնքի բարձրության մեջ, կատարվում է մի սաստիկ պատերազմ. հսկաները ահագին կռաններով փշրում էին ամպերը, ես լսում էի նրանց հարվածների ձայնը և տեսնում էի, թե որպես կայծերը հրեղեն օձերի նման դուրս էին ցայտում ամպերի միջից: Ինչո՞ւ օդի խաղաղ ժամանակը չէին հայտնվում նրանք, բայց երբ սկսվում էր փոթորիկը, երբ սկսվում էր տարերքի միմյանց հետ ընդհարումը, միմյանց հետ զարկվելը,— այն ժամանակ միայն հայտնվում էին երկնքի կայծերը: Ինձ թվում էր, թե այնտեղ կատարվում էր միևնույնը, ինչ որ կատարվում էր իմ քեռու դարբնոցի մեջ…

Դ

ՈՐՍՈՐԴԸ

Անցան մի քանի ամիսներ այն օրից, երբ հարկապահանջները ծախեցին մեր տան կայքը,— անցան մի քանի դա՛ռն և մահաբե՛ր ամիսներ…

Մեր շուրջը տիրում էր արդեն ձմեռ, որ սառն ձեռքով խլեց դաշտերի և լեռների բոլոր գեղեցկությունները: Ցուրտը օրըստօրե սաստկանում էր և մուգ-մոխրագույն երկնքի երեսը ավելի և ավելի խոժոռ կերպարանք էր ստանում: Արեգակը, կարծես, խռովել էր երկրից և չէր ուզում իր դեմքը ցույց տալ: Վերջապես եկավ ձյունը և թանձր պատանը տարածեց երկրի վրա:

Մութ փոթորկային գիշեր էր: Դրսում քամին կատաղի կերպով մռնչում էր և նորեկ ձյունի փխրուն տարափը ահագին քանակությամբ տարուբերում էր մի տեղից մյուս

տեղ: Մեր խրճիթը դողդողում էր սարսափելի մրրիկից: Մտածում էինք, ահա *ոուֆանը* հիմքից կխլե նրան և խառնելով ձնային լեռների հետ, կտանե հեռու և հեռու և կփշրե դաշտերի մեջ:

Մայրս նստած էր յուղային ճրագի մոտ, կարում էր մի բան: Նա այնքան խորին կերպով ընկղմված էր իր մտածությունների մեջ, որ ամենևին չէր զգում, թե ինչ էր կատարվում դրսումը: Մարիամը և Մագթաղը երկար լաց եղան, որ մի բան ուտեն, և երբ ոչինչ չգտան, այնպես քաղցած քնեցին: Ես նստած էի վառարանիմոտ և շուտ-շուտ դնում էի նրա մեջ ցամաք տերևներ և չոր մացառներ, որ քույրերիս հետ հավաքել էինք այգիներից: Նրանք հանկարծ բռնկում էին, բոցավառվում էին և քանի րոպեից հետո կրկին հանգչում, մոխիր էին դառնում: Այդ խաղը պատճառում էր ինձ ավելի զվարճություն, քան խրճիթի մեջ որևիցե տաքություն:

Դուռը սաստիկ զարկեցին: Մայրս չլսեց. ես գնացի բաց արի: Ներս վազեց սպիտակ գնդակի նման մի բան, երբ անցավ շեմքից, կատվի պես թափ տվեց իր մարմինը և ձյունը բամբակի գլուջների նման թափվեց ցած:

— Տո, Մարո, գետի՛նը մտնես, ո՞րտեղից եկար,— հարցրի ես:

Փոքրիկ աղջիկը ոչինչ չպատասխանեց և իմ վրա ուշադրություն անգամ չդարձրեց, միայն գցելով մորս մոտ թաշկինակի մեջ կապած մի բան, վազեց դեպի վառարանը և սկսեց իր լրջացած ձեռքերը տաքացնել արդեն մարած կրակով: Երբ նկատեց, որ ջերմություն չկա, գնաց մորս մոտ, և գրկելով նրա պարանոցը, կպավ կուրծքին:

— Հայրս ուղարկեց,— ասաց նա, ցույց տալով կապոցը:

Հետո դարձավ դեպի ինձ, կարծես նա չէր կարող համբերել, որ իմ կոշտ հարցմունքը թողեց առանց պատասխանի:

— Ես քեզ նման պառավ տատիկ չեմ, որ կրակի մոտը նստեմ, ու տնից դուրս չգամ:

Մորս տխուր դեմքի վրա երևաց մի անսովոր ժպիտ, նա դրեց Մարոյի սառած ձեռքերը իր ծոցի մեջ, և գրկելով նրան, սկսեց տաքացնել: Նրա լեզուն բացվեցավ:

— Հարսի՛,— ասաց նա մորս մի առանձին ուրախությամբ,— ա՛յնքան ձյուն է եկել, ա՛յնքան ձյուն է եկել, ուղիղ մի արշին,— տես այսքան (նա ձեռքով չափեց իր ոտքից մինչև գլուխը):— Ֆարհատ,— դարձավ նա դեպի ինձ,— առավոտյան ձնագնդի կխաղանք, այնպես չէ՞: Ո՞ւր է Մարիամը,— խոսքը փոխեց նա,— թո՛ղ լուսանա, ես նրա աչքը կհանեմ… Մագթաղին ձյունով չեմ խփի, նա լավ աղջիկ է: Բայց այդ սատկած Մարիամը, բերնումը ինչ որ գալիս է, դուրս է տալիս… Թո՛ղ լուսանա…

— Ես ինքս կծեծեմ Մարիամին, կպատվիրեմ, որ քեզ վատ բան չասե,— հանգստացնում էր նրան մայրս:

— Լեզուն կտրե՛, որ սուս կենա:

— Կկտրեմ…— պատասխանեց մայրս ժպտալով:

Մարոն տեսնելով, որ պատիժը ավելի սաստիկ պետք է լիներ, քան այն վիրավորանքը, որ Մարիամը հասցրել էր նրան, ետ առեց իր խոսքը:

— Չէ, մի՛ կտրե, ասա, որ ինձ վատ բան չասի, թե չէ ծամերը մեկ-մեկ կփետրեմ…

Մայրս սեղմեց նրան իր կուրծքին և համբուրեց:

— Հարսի,— առաջ տարավ շատախոս Մարոն,— ի՛նչ լավ է ձյունը… վազում ես, վազում, չես կշտանում… ընկնում ես, այնքան փափուկ է, որ կողքդ չէ ցավում…— Հարսի, ե՞րբ կսառչի մեր լիճը:

Մարոյի վերջին հարցմունքը մեր տան մոտ գտնված փոքրիկ լճակի մասին էր, որը ձմեռը սառչելով, մեծ զվարճություն էր պատճառում խաղասեր երեխաներին: Մայրս այդ մասին ոչինչ չպատասխանեց, միայն հարցրեց, արդյոք վախեցա՞վ նա, որ այնպիսի մթին և վատ եղանակում մեր տունը եկավ:

— Ինչի՞ց պիտի վախենամ,— ասաց նա մի առանձին հպարտությամբ,— գայլ չկա, սատանա չկա, բոլորը ցրտից փախել, մտել են իրանց ծակերը: Ես խո Մարիամը չեմ, որ վախենամ: Ո՛ւհ, սատկած, հիմա կքնե՞ն: Տես, ի՞նչպես քնել է, մտիկ տո՛ւր, Ֆարհատ, մտիկ տուր, հարսի…

Վերջին խոսքերի միջոցին Մարոն այնպիսի մի հեգնական ծամածռություն գործեց իր սևուկ դեմքի վրա, որ չէր կարելի առանց ծիծաղելու նրա երեսին նայել: Բայց հանկարծ նրա մեծ և գեղեցիկ աչքերը վառվեցան, նա դուրս թռավ մորս գրկից և վազեց մահճի մոտ, ուր քնած էին քույրերս: Նա խոնարհվեցավ, համբուրեց Մագթաղի երեսը, բայց Մարիամի մազերից այնպես սաստիկ ձիգ տվավ, որ խեղճ աղջիկը ծվաց, սարսափելով քնած տեղից վեր թռավ, և տեսնելով իր ոխերիմը կշտին նստած, գոչեց վրդովված ձայնով:

— Տո, սև սատանա, այստեղ ի՞նչ ես շինում:

Դեռ քնաթաթախ Մարիամը ջանք արեց, որ նրան բռնե, վրեժը առնե, բայց վայրենի Մարոյի ճարպիկ մատները պինդ սեղմվեցան նրա կոկորդին և շնչասպառ աղջիկը գլորվեցավ բարձի վրա: Ես մոտ վազեցի, որ ազատեմ քրոջս: Նույն միջոցին Մարոն կատվի արագությամբ դուրս թռավ, և աներևութացավ գիշերային խավարի մեջ: Մայրս չգիտեր՝ ծիծաղել թե բարկանալ, նա ասաց ինձ, որ գնամ և այն «դևի ծնունդին» հասցնեմ իրանց տունը, չիցե թե ճանապարհին փորձանքի հանդիպի: Ես դուրս վազեցի, նա արդեն անհետացել էր, միայն փողոցում տեսա մի ահագին կերպարանք, որին մոտեցավ Մարոն: Դա նրա հայրն էր:

— Մի՞թե կարելի է թողնել փոքրիկ աղջկան այս խավարում, այս ձների մեջ, տնից դուրս գալ,— հարցրի նրանից:

— Թո՛ղ սովորե՛…— պատասխանեց հայրը և հեռացավ:

Այդ սառն և խստասիրտ պատասխանը ինձ խիստ օտարոտի երևաց: Ի՞նչ պիտի սովորեր փոքրիկ աղջիկը:— Գիշերային փոթորիկի ժամանակ, ձյունի և սառնամանիքի մեջ միայնակ ման գալ: Ես չէի հասկանում դրանում ինչ միտք կամ նպատակ կարող էր լինել: Այդ ինչ տարապայման կրթություն էր, որ խստասիրտ հայրը ցանկանում էր տալ մանկահասակ աղջկան: Մարոն առանց դրան ևս վայրենի բնավորություն ուներ: Ամեն անգամ, երբ մեր տունն էր գալիս, առանց մեկին կծելու, առանց մյուսին ճանկռելու չէր հեռանա: Նա անպատճառ մեկ *ղալմաղալ* պետք է սարքեր: Այս պատճառով վերջին անկարգությունը մեզ երևաց բոլորովին սովորական: Նա խիստ չար աղջիկ էր, բայց մենք ամենքս սիրում էինք այդ կյանքով լի և միշտ ուրախ փոքրիկին: Իսկ Մարիամի հետ նրա ոխակալությունը ուներ իր պատմական պատճառները. չգիտեմ մի տարի առաջ, թե երբ, մի անգամ Մարիամը նրան կոչել էր «բոշա». այդ վիրավորանքը Մարոն երբեք չէր կարող մոռանալ, թեև քրոջս խոսքը բոլորովին հեռու չէր ճշմարտությունից, որովհետև Մարոյի մեջ կար շատ ինչ բոշայական: Մարոն չէր կարող համբերել, երբ նրան հիշեցնում էին, թե նրա երեսը սևուկ գույն ունի, թե նրա մեծ, կրակոտ աչքերը «ֆալ բացողի» (կախարդի) աչքեր էին, նրա մանր գանգուրներով թուխ ծամերը միայն արաբները կարող էին

ունենալ: Հարկավոր չէր ուղղակի նկատողությունը, բավական էր ասել, թե Մարիամի երեսը ճերմակ է կամ նրա մազերը շեկ ոսկու գույն ունեին,— այն ժամանակ Մարոն իրանը հասկանում էր: Նա մինչև անգամ նախանձվում էր, որ Մարիամը միևնույն անունն է կրում, ինչ որ ինքն ուներ, և այս պատճառով ամենևին չէր բարկանում, երբ նրան կրճատած կերպով Մարո էին կոչում. դրանով գոնե իր անունը զանազանվում էր:

Ինձ հետ Մարոյի հարաբերությունները նույնպես բարեկամական չէին. երբ ես բարկացնում էի, նա պատրաստ էր պատառոտել ինձ, բայց զգալով իր ուժի անհավասարությունը, միշտ սպառնում էր, թե «գիշերը, իմ քնած ժամանակը, նա կգա և կխեղդե ինձ»: Մարոն հաշտ էր միայն Մագթաղի հետ, որովհետև չափազանց փափուկ բնավորություն ունեցող Մագթաղը թեքվում էր նրա առջև և համարյա բոլորովին ենթարկված էր նրա ազդեցությանը: Այդ պատճառով Մագթաղի նույնպես ճերմակ երեսը և շեկ մազերը չէին բարկացնում նրան և չէին հիշեցնում, թե ինքը բոշայի դեմք ունի:

Մարոյի այն գիշեր բերած կապոցը այնպիսի սովորական բան էր, որ մենք առանց բաց անելու, գիտեինք նրա միջում ինչ կար: Դա որսի խորոված միս էր հացի հետ, որ երբեմն ուղարկում էր նրա հայրը, չնայելով, որ ինքն էլ ոչ սակավ աղքատության մեջ էր ապրում: Երբ Մարիամին հրավիրեցին ուտելու, նա հրաժարվեցավ, ասելով, թե ինքը քաղցած կմեռնի և այն «սև սատանայի» բերած ողորմությանը չի մոտենա: Բայց մայրս միշտ գոհությամբ էր ընդունում բարերար ձեռքի օժանդակությունը այն մարդից, որի հետ ամենևին ծանոթություն չուներ, որը մի անգամ և›ս ոտքը ներս դրած չէր մեր շեմքից, թեև մեր ամենամոտ դրացին էր: Միայն Մարոն, որ հաճախ գտնվում էր մեր խրճիթում, պատմել էր իր հորը մեր թշվառ դրությունը, և նա համարյա ամեն գիշեր չէր դադարում ուղարկել իր տնում գտնվածից մեր բաժինը, և այնպես ծածուկ, որ ոչ ոք չէր հասկանում:

Մարոյի հորը կոչում էին Ավո — նրա իսկական անունը ես չգիտեի: Նա ահագին բարձրությամբ, մի վիթխարի տղամարդ էր, որ պարապում էր որսորդությունով: Ավոն մեր քաղաքի բնիկներից չէր, բայց մի քանի տարի առաջ, մի սաստիկ ձմեռնային եղանակում նա հայտնվեցավ մեր քաղաքում, բոլորովին միայնակ, որպես մի փախստական: Հետո փոքր առ փոքր կազմվեցավ նրա ընտանիքը: Այդ ընտանիքը շատ մեծ չէր,— ինքը՝ որսորդը, իր միակ զավակի՝ Մարոյի հետ — ահա բոլորը: Դրանց թվում գտնվում էին՝ մի մշտական ծառա Մըհե անունով, մի տնակալուչ կին, որին կոչում էին Խաթուն, և մի պատանի, որին կոչում էին Հասո: Այս վերջինը որսորդի որդեգիրն էր: Ո՞վքեր էին դրանք և ո՞րտեղից եկան — հայտնի չէր: Միայն մեր քաղաքում որսորդի մասին խոսվում էին շատ զարմանալի պատմություններ, իբր թե նա տաճկական Հայաստանի արևելյան կողմերիցն էր, թե նա իր հայրենիքում մի նշանավոր մարդ է եղել, թե նա շատ կռիվներ է ունեցել քրդերի հետ և իր գլխի մազերի համբարքով մարդիկ է սպանել և այլն: Ո՞րքան ստույգ էին այդ զրույցները, մենք չգիտեինք, մեզ այսքանը միայն հայտնի էր, որ Ավոն մի բարի մարդ էր և մեր ամենալավ դրացին, թեև ամենքն ատում էին նրան և խորշում էին նրանից, որպես մի սարսափելի եղեռնագործից:

Ճշմարիտ է, որ Ավոն իր միշտ լուռ, միշտ տխուր և ծածկամիտ բնավորությամբ մնաց ամենի համար որպես մի մթին հանելուկ: Նրա ճակատի վրա դրած խոր սպին իր ահավորությամբ մի առանձին արտահայտություն էր տալիս դեմքի խոշոր, միևնույն ժամանակ ավազակային գծագրությանը, որ հարուցանում էր նայողի մեջ ակամա երկյուղ և կասկած: Այսուամենայնիվ, նա շատ բարեսիրտ մարդ էր. ես, Մարիամը և Մագթաղը ամենևին չէինք վախենում նրանից: Երբ գնում էինք նրա տունը, նա առնում էր մեզ իր երկայն և ահագին ծնկների վրա, օրորում էր, և «պոչը կտրած մկան», «քոսոտ այծի» հեքիաթներն էր պատմում, մենք թուլանում էինք ծիծաղելուց:

Մարոն չէր կարողանում համբերել, երբ տեսնում էր, որ իր հայրը Մարիամին նույնքան սիրում էր, որքան Մագթաղին և ինձ:— «Նա էլ քո քույրն է», ասում էր հայրը և խրատում էր նրան նախանձոտ չլինել: Ամեն անգամ, երբ մենք գնում էինք որսորդի տունը, նա անսահման զվարճություն էր պարգևում մեզ: Ավոն տալիս էր մեզ իր որսած թռչուններից, որը դեռ կենդանի էր մնացած, մենք կապում էինք նրա ոտը թելով և օրերով խաղ էինք անում նրա հետ:

— Ֆարհատ,— ասաց ինձ մի անգամ որսորդը,— դու շատ ես չարչարում թռչուններին, եթե այսպես կվարվես, ես մյուս անգամ քեզ ոչինչ չեմ տա:

Ես, սկսյալ փոքր հասակիցս, խոսքի ետևից ման եկողներից չէի. իսկույն պատասխանեցի.

— Ես խո չեմ սպանում, բայց դու սպանում ես թռչուններին ու ինձ ասում, թե ի՞նչու ես չարչարում:

— Սպանելու և տանջելու մեջ մեծ զանազանություն կա,— ասաց նա ժպտելով,— վերջինը ավելի վատ է:

Ամեն անգամ, երբ մեր թաղի մեջ ձայն էր տարածվում, թե Ավոյի ծուղակի մեջ գայլ, արջ կամ մի ուրիշ գազան է ընկել, ամբողջ թաղը թափվում էր այնտեղ տեսնելու: Նա իր ծուղակը կազմել էր քաղաքից դուրս, որ շատ հեռու չէր մեր բնակարանից: Դա մի բոլորակ վիրապ էր, բավական ճարտարությամբ գետնի մեջ փորած, և քսան արշինի չափ խորություն, հինգ արշինի չափ լայնություն ուներ: Երևակայեցեք ձեզ մի սամովար, որի ջուր լցնելու տեղը դատարկ է, իսկ կրակ լցնելու տեղը ամբողջ է.— վիրապը մի այսպիսի ձև ուներ: Վիրապի մեջտեղում, ուր մի հաստ սյունի նման պինդ գետին էր բարձրանում, նրա վրա ամեն գիշեր դրվում էր մի գեշ, իսկ սյունի չորս կողմի դատարկությունը ծածկվում էր եղեգներով, այնքան թույլ կերպով, որ եթե մի հավ անցնելու լիներ ծածկոցի վրա, իր ծանրությամբ կարող էր իսկույն ցած գլորվել: Գազանները գեշի հոտը առնելով, մոտենում էին նրան, բայց դեռ գեշին չհասած, ընկնում էին վիրապի մեջ:

Վաղ—առավոտյան հայտնվում էր որսորդը Մըհեի հետ: Բազմությունը հետաքրքրությամբ սպասում էր, թե ինչպես պետք է դուրս բերեն գազանին, որը կատաղած, զայրացած և անհանգիստ կերպով պտտվում էր վիրապի մեջ, մռնչում էր, զարհուրելի ձայներ էր արձակում և փորձեր էր փորձում դուրս գալ, բայց չէր կարողանում: Այդ միջոցին վիթխարի Մըհեն, աջ ձեռքում մի ահագին երկաթե մահակ բռնած, իսկ ձախ ձեռքում բռնելով շղթաներով ամրացրած քալափչեն[2], իջնում էր վիրապի մեջ: Բազմությունը սարսափում էր կիսախելագար որսորդի աներկյուղության վրա: Լիներ այնտեղ գայլ, արջ, վագր, ինձ, մի երկչոտ աղվես,— միևնույն էր Մըհեի համար. նա բոլոր գազանների վրա նայում էր, որպես ոչխարների վրա:

Վիրապի մեջ սկսվում էր գազանի և Մըհեի ստորերկրյա կռիվը: Մենք ոչինչ չէինք տեսնում, միայն լսում էինք գազանի բարկացկոտ մռնչյունը, շղթայի ձայնը և երբեմն երկաթե մահակի ծանր հարվածները: Երբ գազանը հաղթված էր, Մըհեն մի առանձին փաղաքշական եղանակով ասում էր նրան. «հանգստացի՛ր գառնուկս, ես քեզ երկար այստեղ չեմ թողնի»: Եվ իրավ, մի քանի րոպեից հետո հայտնվում էր Մըհեն, իր հետ դուրս քաշելով գազանին, որի գլուխը և բերանը կաշկանդված էին լինում քալափչեի մեջ, և այնքան ամուր կերպով, որ ոչ ոքին վնասել չէր կարող:

---

[2] **Քալափչե** մի տեսակ երկաթից շինած գործիք է, որ անց են կացնում գազանների բերանը, նրանց զսպելու համար, այդ գործիքը մեր լեզվով կոչվում է «գայլ»:

Խիստ սակավ անգամ էր պատահում, որ Մըհեն դուրս գար վիրապից երեսը արյունաթաթախ, ծվատված կամ մարմնի մի այլ մասը վիրավորված: Բայց երբեք չէր պատահում, որ նա չկարողանար զսպել գազանին: Ես մինչև այսօր հիշում եմ, թե որպիսի անհոգությամբ այդ երկաթե մարդը ձեռքով սրբում էր իր երեսից արյունը, կարծես թե քրտինք էր սրբում:

Ավոյի պարապմունքի մեջ Մըհեն օգնում էր նրան ավելի, քան նրա բոլոր որսորդական շները և բարակները: Նա զարմանալի ճարպկություններ և հասկացողություն ուներ որսորդության մեջ: Անասունների բնավորությունը և նրանց սովորությունները նա այն աստիճան ուսումնասիրած էր, որ բավական էր տեսնել նրանց թաթերի ձյունի վրա տպավորված հետքերը, այնուհետև նա գիտեր, թե ի՛նչ անասուն էր անցել, ո՛րտեղ կարելի է գտնել նրան կամ ի՛նչ հնարքով պետք էր որսար:

Ավոն ուրիշ պարապմունք չուներ. նա ապրում էր որսորդությունով միայն: Մազոտ գազանների մորթերի գործածությունը մահմեդականների համար պիղծ համարվելով, թուրքերը, պարսիկները և քրդերը նրանց որսորդությունով չէին պարապում, և այս պատճառով ասպարեզը մնացել էր միայն Ավոյին: Նրա տունը մի կատարյալ գազանանոց էր: Ամեն անգամ, ես այնտեղ գնալիս, գտնում էի նրան զբաղված կամ գազանները կերակրելով և կամ աղվեսի, կուզի, գայլի, արջի, վագրի և այլ այս տեսակ անասունների մորթերը չորացնելով: Հրեա և հայ վաճառականները իրանք գալիս էին, և գնելով մորթերը, տանում էին հեռու երկրներ վաճառելու:

Մարոն այն աստիճան ընտելացած էր գազանների հետ, որ ամենևին նրանցից չէր վախենում: Մի անգամ նա ցույց տվեց ինձ մի ամեհի վագր, ասելով.

— Տես, Ֆարհատ, ի՛նչ գեղեցիկ բծեր ունի:

Ես սարսափեցա, երբ փոքրիկ աղջիկը մոտեցավ և սկսեց փայփայել գազանի ահագին գլուխը:

— Ի՞նչու ես վախենում,— ասաց նա ծիծաղելով,— դա մի մեծ կատու է, և ավելի ոչինչ:

Այդ վագրին մանուկ հասակից որսացել էր նրա հայրը, որովհետև Մարոն շատ սիրում էր նրան, այս պատճառով պահել, մեծացրել էին: Ինձ թվում էր, որ Մարոն էլ այն գազանների ձագերից մեկը պետք է լիներ, որովհետև նրանցից չէր վախենում և նրանց շատ սիրում էր:

Ե
ՄԱՆԿԱՎԱՐԺ ԵՎ ՔԱՀԱՆԱ

Մայրս իմ փոքր հասակից հոգս էր տանում, որ գիր կարդալ սովորեմ և «լավ մարդ» դառնամ: Տասն տարեկան էի, երբ նա ինձ մեր թաղի քահանայի մոտ տարավ: Այն օրը հոգեգալստյան տոնն էր:— «Հոգեգալուստը լավ օր է,— ասում էր մայրս,— եթե երեխանայս օրը վարժատուն մտնե, շատ բան կսովորի, նրա համար որ, հոգին սուրբ այսօր առաքյալներին լեզու տվեց»:

Ես մինչև այսօր չեմ մոռացել այն խոսքերը, որ մայրս ինձ վարժապետին հանձնելու ժամանակ ասաց.— «Տեր հայր, ծառա լինեմ սուրբ աջիդ, որդիս քեզ համար ղուլ (ճորտ) եմ բերել, միսը քեզ, ոսկորը ինձ. ինչ ուզում ես արա: Միայն թե երեխաս մի բան սովորի»…

Ես բոլորովին չհասկացա, թե ինչ էին նշանակում մորս խոսքերը, միայն լսեցի, որ տերտերը խոստացավ ինձ լավ ուսում տալ, բոլոր գրքերը կարդացնել, ավելացնելով, թե «հանգուցյալ հայրս» իր լավ բարեկամն է եղել, և «նրա խաթրու» ինձ վրա առանձին ուշադրություն կդարձնե և այլն:

Տեր Թոդիկը — այսպես էր վարժապետիս անունը — իր ուսումը ստացել էր Աղթամարա անապատումը: Թե ինչո՞ւ համար նա թողեց վանքը,— այդ ես չգիտեմ, միայն ասում էին, որ նա բերեց իր հետ գիտության խիստ ահագին պաշար: Տեր Թոդիկը մեծ համարում ուներ ոչ միայն մեր քաղաքի մեջ, այլ մեր ամբողջ գավառում հռչակված էր նրա իմաստությունը: Ով որ մի երազ էր տեսել, նրա մոտն էր վազում և նրանից բացատրություն խնդրում: Ում երեխան հիվանդ էր, նրան Նարեկ կամ Ավետարան էր կարդալ տալիս, որ առողջանա: Ով որ մի գործ էր կամենում սկսել, նրա «տերողորմեայի» վրա էր փորձում իր բախտը: Մի խոսքով, նա մեր գավառի մարգարեն էր. ամեն մարդ նրա խորհրդին էր դիմում, ամեն մարդ նրանից խրատ էր ընդունում…

Աստված իմ, ինչե՜ր չէին պատմում նրա մասին… Ասում էին, տեր հայրը իր եղունգի վրա մի բան է գրում, և այն գրի զորությամբ կնիկները իրանց առջև ծով են տեսնում և իսկույն տկլորվում են… Ասում էին, թե նա մի աղոթք է կարդում, և գարու հատիկների մրջեմի նման բարձրանում են դեպի տան սյունը, և ընդհակառակն, նրա խոսքով արագաշարժ կարիճը քարացած կանգնում է և բնավ չէ շարժվում: Ասում էին, ծտերի բերանը աղոթքով կապում է, և նրանք չեն կարողանում արտերի ցորյանը ուտել: Ասում էին, դևերին, սատանաներին բռնում է, լցնում է ապակյա սրվակների մեջ և այնպես պահում է, որ մարգերին վնաս չտան:— Այսպիսի շատ բաներ խոսում էին նրա մասին, ես բոլորին, բոլորին հավատում էի: Սկզբում իմ վրա սարսափ էին բերում այս խոսքերը, բայց հետո այնքան ընտելացա, որ մտածում էի.— «Տեր աստված, ե՞րբ կլինի, որ ես էլ այդ ամենը սովորեմ և իմաստուն մարդ դառնամ»…

Ի՞նչպես չհավատայի, երբ ամեն օր տեսնում էի նրա տունը լիքն էր հայի, թուրքի, ջհուդի և զանազան ազգերի կնիկներով, որը տեր հոր համար ընծա էր բերել մի քանի հատ ձու, որը մի աքաղաղ, որը մի շիշ արաղ, որը մի զույգ գուլպա,— վերջապես ոչ մի մարդ դատարկաձեռն ոտք չէր կոխում նրա շեմքի վրա: Ի՞նչ էր նրանց դարդը: Մեկը չբերք էր. տեր հայրը նրա համար մի բան էր գրում, որ երեխա ունենա: Մյուսի տղամարդը ուրիշին էր սիրում. տեր հայրը իր «վեցհազարյակի» շնորհիվ նրա սերը սառեցնում էր օտար կնկանից և իր կնոջն էր սիրել տալիս: Մեկ ուրիշը ուզում էր մարդի գնալ, տեր հայրը իր «թիլիսմանների» զորությամբ նրա բախտը բաց էր անում:— Այսպիսի շատ բաներ անում էր նա, և ասում էին, որ բոլորը կատարվում է…

Իր եկեղեցական պաշտոնի մեջ տեր Թոդիկը նույնպես իր ժողովրդի թե հոգևոր, թե բարոյական մխիթարությունն էր: Ամեն մարդ նայում էր նրան, որպես մի սրբության վրա: Երբ սկսվում էր մեծ պասը, մեր թաղեցիքը սովորություն ունեին կեսավուր ժամից առաջ հավաքվել եկեղեցու բակում մի խուցի մեջ: Վարժապետս գնում էր այնտեղ, նրանց համար կարդում էր և մեկնում էր մի գիրք: Ես մինչև այսօր չեմ մոռացել այն ահագին մեծ գիրքը. նրան կոչում էին «Այսմավուրք»: Նա այնքան ծանր էր, որ հոգիս դուրս էր գալիս, մինչև տանում էի եկեղեցու խուցը: Թե ի՞նչ էր դրած նրա մեջ, ես չգիտեի, բայց շատ անգամ գիրքը տանելու ժամանակ մտածում էի.— «Ա՛խ, աստված ջան, ի՜նչ կլինի, որ այդ գրքի բոլոր գրվածները իմ գլխումը լցնես»: Հետո ինձ ու ինձ ծիծաղում էի — «լավ, ասում էի. իմ պստիկ գլուխը ո՞նց կարող է այս ամեն բաները իր մեջ տանել»: Հետո էլի մտածում էի.— «վարժապետիս գլուխը հո իմից մեծ չէ, բա՛ ինչո՞ւ նա ամենը իմանում է»:

Թաղի ծերունիները հավաքված էին լինում եկեղեցու խուցի մեջ, սպասում էին տեր հոր գալստյանը: Ես տանում էի գիրքը, դնում էի փոքրիկ գրակալի վրա, և ձեռքերս կուրծքիս վրա դրած, կանգնում էի այնտեղ: Նա գալիս էր: Ա՛խ, ի՛նչպես պատվով ընդունում էին նրան, մարդ չէր մնում, որ սուրբ աջը չհամբուրե և նրա օրհնությունը չառնե: Նա նստում էր գրակալի մոտ, բաց էր անում գիրքը, կարդում էր և պատմում էր նրա միտքը: Ես մինչև այսօր չեմ մոռացել մի քանի բաներ, որ այն ժամանակ սովորեցա սուրբերի, ճգնավորների, աբեղաների հրաշագործությունների մասին, թե ի՛նչպես նրանք խորոված աղավնիներ էին թռցնում, ի՛նչպես հրեշտակների հետ էին խոսում, ի՛նչպես դևերին բռնում էին և իրանց սպասավորություն էին անել տալիս, կամ ի՛նչպես շաբաթներով ոչինչ չէին ուտում, բայց աստված նրանց համար երկնքից մանանա էր ուղարկում:— Ո՞վ է իմանում, հազար ու մեկ այսպիսի բաներ էի լսում, որոնք լցնում էին իմ սիրտը մի սրբազան ջերմեռանդությամբ, և ես մտածում էի.— «Թող տամ այս փուչ աշխարհը, գնամ սարերը, մտնեմ քարերի մեջ, ճգնավոր դառնում, որ ես էլ հրեշտակների հետ խոսեմ. որ ես էլ երկնքի մանանայով կերակրվեմ»…

Երբեմն ծերունիներից ոմանք առաջարկում էին վարժապետիս խորին աստվածաբանական հարցեր: Նա բոլորի պատասխանը խիստ խելացի կերպով տալիս էր…

Չ

ԴՊՐՈՑ

Մեր դպրոցը տեր Թոդիկի ավելորդ սենյակներից մեկն էր, անասունների ախոռին շատ մոտ և համարյա կպած նրա հետ: Այն նեղ և խեղդված խուցի մեջ լցված էին թվով մինչև քառասուն աշակերտներ. բացի աշակերտներից, այնտեղ կապած էին տեր հոր նորածին հորթերից երեքը: Ձմեռը շատ լավ էր այնտեղ, թեև վառելիք չունեինք, բայց ախոռից դասատան մեջ ծակված պատուհանները բաց էին անում և ջերմ գոլը մառախուղի պես ներս էր թափվում, մեր դասատունը դառնում էր տաք, որպես բաղնիք: Ո՞րքան ուրախանում էինք մենք… Թեև անասունների շնչառությունից գոլորշիացած ջերմությունը խեղդելու չափ ծանր էր: Ամառը շատ վատ էր այնտեղ, որովհետև ախոռի մեջ գտնված անմաքրությունների խմորվելուց՝ մի կողմից փչում էր անախորժ գարշահոտություն, մյուս կողմից, գոյանում էին զանազան տեսակ զեռուններ, որոնք լվերի հետ խումբեր կազմելով, ահագին բազմությամբ արշավանք էին գործում դեպի մեր դասատունը: Նրանք այնքան մանր էին, որ աչքը հազիվ էր տեսնում, բայց ո՛րպես սարսափելի կերպով խայթում էին,— այդ միայն աստված գիտե:

Ամբողջ դպրոցը բաղկացած էր մեկ դասատնից. նրա միջումն էին ավանդվում թե բարձր և թե տարրական գիտությունները, սկսյալ այբբենարանից, մինչև այն ահագին գիրքը, որ եսհազիվ էի կարողանում մինչև ժամատան խուցը տանել: Մեր դասատունը, թուրքի մեչիդի նման, բոլորովին մերկ էր. նստարան, աթոռ, սեղան կոչված բաները այնտեղ չկային: Աշակերտները ծալապատիկ նստում էին խոնավ հատակի վրա, առանց տախտակամածի, որ միայն պատած էր ճահճային բույսերից հյուսած հասիրներով: Վարժապետը միայն իր տակին փռած ուներ այծի մորթի, և մի քանի հարուստների որդիները նույնպես ունեին փոքրիկ օթոցներ, որ բերել էին իրենց տներից: Միակ առարկաները, որոնք հիշեցնում էին, թե այն մթին և գերեզմանի պես խոնավ սենյակը դպրոց էր,— էին՝ *ֆալախկան* և մի խուրձ դալար ճիպոտներ նրա մոտ դրած…

Ա՛խ, քանի՛, քանի՛ անգամ մենք գողացանք, քանի անգամ կոտրեցինք այն անիծված ֆալախկան, դարձյալ չկարողացանք ազատվել նրանից: նա միշտ կար և կար… Նա միշտ անպակաս մնաց մեր դպրոցից… Երբ ես շատ ուշ, վերջին ժամանակներում, կարդացի ինկվիզիցիայի հնարած գործիքների նկարագրությունը և նրանց տեսակները, զարմացա, թե ի՞նչպես էր պատահել, որ կաթոլիկ եկեղեցու հանճարը, որ այնքան զորավոր էր տանջանքի մեքենաներ ստեղծելու մեջ, բոլորովին ի նկատի չէր առել ֆալախկան — այդ, աշակերտի հոգին մարմինը մաշող գործիքը… Աշակերտի մերկ ոտները դնել այդ պատժական մեքենայի մեջ, պտտեցնելով վեր բարձրացնել, հետո դալար ճիպոտներով այնքան հարվածել, մինչև ողորմելի զոհը բոլորովին թուլանա, ուշաթափ լինի,— ահա այդ էր ֆալախկայի նշանակությունը: Ամենաանտանելին այն էր, որ պատժվող աշակերտին ծեծել էին տալիս նրա բարեկամի կամ ամենասիրելի ընկերի ձեռքով: Եթե այդ վերջինը հարվածները թուլացնում էր, կամ հրաժարվում էր ծեծելուց, նրան ևս ենթարկում էին միևնույն գանահարությանը:

Վաղ առավոտյան սկսվում էր դասատվությունը: Վարժապետը մի անկյունում նստած էր լինում, որպես քուրմը իր խորին սրբազնության մեջ: Նրա առջև դրած էր փոքրիկ գրակալը,— այդ նրա ամբիոնն էր: Աշակերտները հերթով մոտենում էին, վարժապետի աջը համբուրում էին, չոքում էին նրա առջև և դասագրքերը դնելով գրակալի վրա, սկսում էին «համար տալ» (դասը ասել): Սովորաբար ամեն մի սխալի համար յուրաքանչյուրն ընդունում էր «խրատի» մի-մի սաստիկ զարկ իր ափի մեջ: Իսկ եթե դասը բոլորովին սերտած չէր, նրա համար պատրաստ էր անիծված ֆալախկան…

Այդ «*խրատ*» կոչվածը աստծո մի առանձին պատիժն էր. նա շինված էր ամենաամուր փայտից և փոքրիկ թիակի ձև ուներ: Հին գրքերի մեջ գտնված բոլոր ասացվածքները որոնք վերաբերում էին ծեծելու, գանահարության, փորագրված էին նրա վրա: Օրինակ, այսպիսի խոսքեր. «Որ ոչ լուիցէ ունկամբ, լուիցէ թիկամբ»,— «Ծառա, որ ոչ գիտիցէ զկամս տեառն եւ արժան ինչ գանի գործիցէ, արբցէ գան սակավ, իսկ որ գիտիցէ եւ մեղիցէ արբցէ գան բազում»,— «Դառն է ծառ խրատու, իսկ պտուղ նորա քաղցր»… Խրատելու այդ գործիքն առանձնապես պատրաստվում էր վարժապետների համար. և տեր Թոդիկը իր ունեցածը, որպես պատմում էր, ընծա էր ստացել իր վարժապետից, որպես հիշատակ և որպես նշան իր մեծաքայլ հառաջադիմության:

Պատիժների մեջ մինչև այսօր չեմ մոռացել մեկը, որը որքան ծիծաղելի, այնքան էլ սարսափելի էր: Աշակերտին կանգնեցնում էին ոտքի վրա և երկու ձեռքով բռնել էին տալիս մի աղյուս կամ ահագին Այսմավուրքը: Նա ժամերով, հնդկական ֆակիրի նման, այդ ծանր գիրքը պետք է պահեր գլխից բարձր, երկու ափերի մեջ: Թևքերը հոգնում էին, ջղերը թուլանում էին, բայց այդ ոչինչ: Գլխավոր տանջանքը նրանումն էր, որ հանցավորը պետք է կանգներ մեկ ոտքի վրա. մյուս ոտքը գետին դնելու համարձակություն չուներ: Սովորաբար ընտրում էին ձախ ոտքը, իսկ աջը պետք է վեր բարձրացած պահեր: Մի աշակերտ մտրակը ձեռին կանգնած էր նրա մոտ, հսկում էր այդ անտանելի մարմնամարզության վրա: Երբ պատահում էր հանցավորին ոտքը գետին դնել, նա իսկույն մտրակով զարկում էր ոտին: Այդ սատանայական պատժին ես այն աստիճան սովորած էի, որ երկար կարողանում էի սագի նման մեկ ոտքի վրա կանգնած մնալ:

Մեր դպրոցն ուներ իր ուրիշ խստությունները:

Վաղ-առավոտյան պետք է դասատուն գայինք բոլորովին անոթի, առանց մի պատառ հաց անգամ բերան դնելու: Թեյի կամ սուրճի գործածությունը այն ժամանակ դեռ մեր երկրում մտած չէր: Իսկ եթե մեր տներում գտնված թանից կամ մածունից

նախաճաշիկ անեինք, դրա համար սաստիկ պատիժներ էին նշանակված: Վարժապետն ասում էր. «Կուշտ փորով չէ կարելի դաս սովորել, երբ մարդ մի բան ուտում է, խելքը պակասում է»: Եվ նա օրինակ էր բերում ճգնավորներին, վարդապետներին, որոնք ոչինչ չէին ուտում, բայց իրանցից գրքեր էին շարադրում:

Հիշյալ պատվերը մենք կատարում էինք ամենայն ճշտությամբ. զեղծումներ անել նրա դեմ անկարելի էր, որովհետև վարժապետը սատանայի պես իմանում էր, երբ աշակերտը մի բան կերած էր լինում: Ահա ինչպես էր իմանում. նախ քան ուսման սկսվիլը, վարդապետը ո՛ր աշակերտի վրա կասկած ուներ՝ սկսում էր նրա լեզուն քննել, որ տեսնե, արդյոք նա իր ծոմը լուծել էր, թե ոչ: Հայտնի բան է, անսվաղ մարդու լեզուն ավելի սպիտակ գույն է ունենում, նրա մակերևույթի վրա ճերմակ փառ է նստած լինում, իսկ երբ մի բան ուտում կամ խմում է, լեզուն մաքրվում է և ավելի կարմիր գույն է ստանում: Այդ պատճառով մենք ամեն առավոտ ոչ միայն ոչինչ չէինք ուտում, բայց մինչև անգամ վախենում էինք երեսներս լվանալու ժամանակ բերաններս մաքրել ջրով, որ չիցե թե մեր լեզվի ճերմակությունը սրբվի, և վարժապետը ասե, թե ծոմը լուծել ենք… Եվ այսպես, մինչև կեսօր մենք պարապում էինք բոլորովին սոված փորով, գլուխներս պտտվում էր, աչքներիս առջևը սևանում էր քաղցածությունից, դարձյալ ոչինչ չէինք կարողանում սովորել:

Մեր ժամացույցը պատի ստվերն էր, որը գետնի վրա մինչև մի նշանակյալ խազ հասներ, գիտեինք թե արդեն կեսօր է: Այն ժամանակ միայն թույլտվություն էինք ստանում ճաշելու: Բայց ո՛րքան անհամբերությամբ սպասում էինք, մինչև ստվերը հասնում էր խազին… Կարծես, արևն էլ մեր վարժապետի նման սիրտ չուներ, նա միշտ դանդաղ և դանդաղ էր գնում, և ստվերը խիստ թույլ կերպով էր տարածվում…

Ճաշը ուտում էինք դասատան մեջ: Աշակերտները իրենց հետ էին բերում բոլոր պաշարը և անուշ պատառներից բաժին էին հանում տեր հոր համար, այնպես որ, նրա մասը ավելի ճոխ էր լինում և բազմատեսակ, մինչև անգամ երեցկինն ու նրա որդիքն էլ կերակրվում էին տեր հոր սեղանից:

Ճաշից հետո, թեև մենք ունեինք մի քանի հանգստության ժամեր, բայց սաստիկ արգելված էին խաղերը: Խաղը համարվում էր մեզ համար մի տեսակ չարություն, որ ընդդեմ էր համեստության և հանդարտության կանոններին: Աշակերտը պետք է լիներ լուռ, անշարժ, ամոթխած և խոնարհ: Այդ պատճառով սաստիկ պատժվում էր աշակերտը, երբ նրան նկատում էին խաղալիս, ավելի վատթար, երբ նրա մոտ գտնում էին խաղալիքներ: Այդ մասին երբեմն դպրոցում անակնկալ խուզարկություններ էին լինում, աշակերտների գրպանները որոնում էին:

Հարուստների որդիքը բացառություն էին կազմում դպրոցի խիստ կարգապահության մեջ. նրանց շատ բան ներվում էր. դասատան մեջ առաջին տեղումն էին նստացնում, իսկ դրսում նրանք անպատիժ էին մնում, երբ ծեծում էին իրանց աղքատ ընկերներին: Այսպիսիներից մեկն էր Ալո անունով մի տղա, որ մեր քաղաքի առաջին հարստի որդին էր: Նրա հայրը արքունի փողերանոցի կապալառու էր: Այն ժամանակ Պարսկաստանի գլխավոր քաղաքներում դրամներ էին կտրում և կտրելու իրավունքը կառավարությունը կապալով տալիս էր մասնավոր անձինքներին: Ալոյի հայրը Խոյ քաղաքի փողերանոցի պետն էր, և այդ արտոնությունը սերունդից սերունդ, որպես մի առանձնաշնորհություն, տված էր նրանց տոհմին: Այս պատճառով այդ տոհմը կոչում էին «զառաբիներ»:

Ալոն մեր ամենաանպիտան աշակերտներից մեկն էր, ոչ ոք չէր սիրում նրան, բացի վարժապետից: Երբ պատահում էր աշակերտներից մեկին պատժել, Ալոն առաջինն էր լինում, որ խնդրում էր վարժապետին իրան թույլ տալ կատարելու դահճի պաշտոնը: Ծեծել իր ընկերներին, նահատակել նրանց,— դա զվարճություն էր

պատճառում անսիրտ Ալոյին, և մեր վարժապետը երբեք չէր զրկում նրան այդ ուրախությունից… Ամեն օր կգար նա դպրոց, մի նոր գիրք իր հետ բերելով, ցույց կտար վարժապետին ու կասեր. «Հա՛յրս ասաց, որ այս գրքից դաս տաք»։— «Լավ»— կպատասխաներ վարժապետը,— «դրա վրա կարդա»։

Մի անգամ ես չկարողացա համբերել, ասեցի Ալոյին.

— Դու մի կանոն Սաղմոսը դեռ հեգելով ես կարդում, այդ մեծ գիրքը ո՞նց պիտի կարդաս։

— Իմ հայրն էլ մեծ մարդ է,— պատասխանեց նա մի առանձին հպարտությամբ։

— Քո հայրը մեծ մարդ է, այդ ես իմանում եմ, բայց որդին մեծ գիրք կարդալու համար պետք է դեռևս մի քանի տարի սովորե։

— Ի՞նչ պիտի սովորեմ… հայրս ասաց, տար այդ գիրքը կարդա, որ դպրոցի մեջ առաջին աշակերտը լինես։

— Որպես ինքը քաղաքի մեջ առաջին մարդն է,— պատասխանեցի ես ծիծաղելով։

Այդ միջոցին զգացի ապտակի մի սաստիկ հարված երեսիս վրա։ Ես էլ պատասխանեցի նրան իմ զորեղ մուշտիով։ Անպիտանը իսկույն վազեց վարժապետի մոտ և ինձ վրա գանգատվեց։ Ձեզ եմ թողնում երևակայել այն անտանելի պատիժը, որ ես ստացա իմ հանդգնության համար, ես համարձակվել էի իմ մուշտիով պատասխանել արքունի փողերանոցի գլխավորի որդուն… այդ անկարելի բան էր։ Բայց այն օրից իմ մեջ ծագեց մի սաստիկ ատելություն դեպի ամեն ինչ, որ արքունական էր և դեպի ամեն մարդ, որ հարստացել էր արքունիքի շնորհիվ…

Հարուստների որդիների նախապատվությունը դպրոցի մեջ առանց պատճառի չէր. նրանք տոն օրերում վարժապետի համար ընծաներ էին բերում գինի, արաղ, յուղ, պանիր և դրանց նման բաներ։ Նրանց հայրերը վարժապետին «խալաթ» էին տալիս, երբ որդիները մի գրքի կարդալը վերջացնում էին և սկսում էին մյուսը։ Բայց ես աղքատ էի. մայրս դժվարությամբ կարողանում էր վճարել իմ ամսականը, իսկ ընծաների փոխարեն ես կատարում էի վարժապետիս տնային գործերը։ Առավոտից մինչև երեկո հանգստություն չունեի, աղբյուրից խմելու ջուր էի բերում, կովերի համար ուտելու խոտ էի քաղում դաշտից, հորթերը բռնում էի, մինչև երեցկինը կովերը կթում էր, և եթե ուրիշ գործ չէր լինում, ճաշից հետո նստում էի վարժապետիս կողքին, ճանճեր էի քշում, որ նրա անուշ քունը տանի…

Պատահում էր, մեր թաղում մկրտություն էր լինում կամ թաղում. այն օրը վարժապետիս համար հարսանիք էր, իսկ մեզ համար մահ։ Աշակերտներից մի քանիսը, որոնք մեծ էին հասակով և տիրացություն անել գիտեին, վեր էին առնում տեր հոր փիլոնը, մաշտոցը, բուրվառը, և քահանայական այլ սպասները։ Նրանք գնում էին խորհրդի տեղը։ Այսպիսի դեպքերում, երբ կարող էինք մի փոքր ազատ շունչ քաշել, ավելի դառն էր լինում մեր վիճակը։ Վարժապետը մտածելով, որ իր բացակայության ժամանակ մենք անկարգություններ կանենք, հնարել էր մի սատանայական միջոց մեզ հանգիստ պահելու համար։ Նա մեզ նստացնում էր միմյանցից հեռու, մեր հագուստի լայն փեշերը տարածում էր գետնի վրա, նրանց վրա ածում էր մանր ավազ, հետո ավազը դրոշմում էր փայտյա կնիքով, որ հատկապես դրա համար պատրաստված էր։ Երևակայեցե՛ք մեր դրությունը, ամբողջ ժամերով պետք է մեխած մնաս գետնի վրա, մի շարժում անգամ անել կարող չես,

որովհետև իսկույն ավազը կխառնվի, կնիքը կլուծվի, և վարժապետը այդ տեսնելով, հոգիդ կառնե…

Այսպիսի պատիժներին խիստ հաճախ ենթարկվում էի ես: Բարերար աստվա՛ծ, ի՞նչ պետք է անեի, խո մեռել չէ՞ի, որ անզարմ մնայի: Պատահում էր, կամ լուն էր կծում, կամ ճանճն էր նեղացնում, կամ վերջապես մի ուրիշ հարկավորություն ունեի… Վարժապետը դառնում էր տուն մի փոքր տաքացած գլխով, նա գտնում էր կնիքը լուծված, այն ժամանակ պատրաստ էր ինձ համար կամ անիծված **ֆալախկան**, կամ մերկ ծնկներով չոքել աղյուսի մանրած կտորների և կամ սիմինդրի հատիկների վրա: Դարձյալ պետք է անշարժ մնայի…

Լինում էին օրեր, որ պատիժը ընդհանուր էր դառնում. աշակերտները բոլորը միասին պատժվում էին: Տարվա մեջ մի քանի անգամ մենք ունենում էինք արձակուրդներ: Մեծ արձակուրդները լինում էին զատկի և ծննդյան տոների ժամանակ, յուրաքանչյուր տոնին մի-մի շաբաթ: Երբ տոներից հետո աշակերտները կրկին հավաքվում էին դպրոցը, մեր վարժապետը առանց խտրության աշակերտների ոտները դնում էր ֆալախկայի մեջ և բոլորին հավասարապես ծեծում էր: Ինչո՞ւ համար:— Այդ նրա համար էր, գուցե աշակերտները արձակուրդի ժամանակ իրանց տներում կամ դրսում որևիցե անկարգություն արած լինեին, իհարկե, այդ կարծեցյալ անկարգությունը ստուգել անհնարին էր, ուրեմն պետք էր թե մեղավորին և թե անմեղին հավասարապես պատժել… Այս բարբարոսության մեջ մի ուրիշ միտք ևս կար: Ինչպես լավ ձիավորները ձիու վրա նստածին պես տալիս են նրան մի քանի մտրակի զարկ, որ թմրած անասունը զգաստանա, գրգռվի,— այնպես էլ մեր վարժապետը հանգստի օրերից հետո լարում էր մեր մտավոր ուժերը ճիպոտներով, որ սթափվինք, որ վայրենացած կյանքից կրկին ընտելանանք դպրոցական տաժանակիր կյանքին…

Մեր վարժապետը չարասիրտ մարդ չէր, ընդհակառակն, նա շատ բարի էր: Այս բոլոր խստությունները, այս բոլոր անգթությունները առաջ էին գալիս նրա մանկավարժական հասկացողությունից: Նա համոզված էր, որ առանց ծեծի, առանց տանջանքի աշակերտը ոչինչ չի սովորի: Նա այնքան հավատում էր իր **ֆալախկային**, որքան հավատում էր իր թիլիսմաններին և կախարդական արարողություններին, որոնցմով հրաշքներ էր գործում…

Երբ պատմում էի մորս դպրոցում կրած իմ տանջանքները, նա էլ միևնույնն էր հաստատում և սովորաբար պատասխանում էր.— «Որդի, մինչև ծեծ չուտես, մինչև նեղություն չքաշես, բան չես սովորի»: Ապա ի՞նչու այնքան ծեծ էի ուտում, այնքան տանջվում էի, դարձյալ ոչինչ չէի կարողանում սովորել: Ես հիմար տղա չէի ես շատ սրամիտ էի, երբ տատս մի հեքիաթ էր պատմում, ես միանգամից բոլորը սովորում էի. երբ մեր քաղաքում աշուղ էր գալիս, երգ էր երգում, վեպ էր պատմում, ես իսկույն սովորում էի: Իսկ դպրոցում ի՞նչու այնքան բթամտացա, ո՞րտեղ կորավ իմ սրամտությունը…

Տատիս հեքիաթը, աշուղի երգը ես հասկանում էի, դրա համար շուտ էի սովորում, բայց վարժապետիս դաս տված բաներից ոչինչ չէի հասկանում, ինձ երևում էր, որպես թե նրանք հայերեն չլինեին: Գիշեր ու ցերեկ դասս սերտում էի ու սերտում, գլխումս մի բան չէր մտնում. հենց որ վարժապետիս աչքը ընկնում էր աչքիս, ես սարսափում էի, միտքս շփոթվում էր, գիտցածս մոռանում էի…

Ես մինչև այն աստիճան ընկած էի թե մտքով և թե հոգով, մինչև այն աստիճան սպանված էին իմ մեջ մանկական ուժերը, որ բոլորովին հավատում էի, երբ վարժապետս բարկանալով ասում էր.— «Սատանայի լակոտ, քեզանից մի օրինավոր բան չի դուրս գա»…

Առաջին անգամ վարժապետս ինձ տվեց սովորել այբբենարանը: Կարծես, այս րոպեիս էլ իմ աչքի առջևն է այն փոքրիկ տետրակը, տպած խոշոր տառերով: Նրա ճակատին նկարած էր մի մեծ խաչ, որի ներքև կային այս խոսքերը—**«Խաչ, օգնյա՛ ինձ»**: Մի քանի ամբողջ ամիսներ, երեսս խաչակնքելով կրկնում էի այդ երեք բառերը: Վարժապետս ասում էր, եթե ամեն դասի սկզբում խաչից օգնություն չխնդրես, ոչինչ չես կարող սովորել: Բայց երևում էր, որ խաչն էլ խռովել էր իմ գլխին, նա ինձ խելք ու միտք տալու նպատակ չուներ…

Ես մինչև այսօր չեմ կարող հեռացնել այն ծանր և անախորժ տպավորությունը, որ թողել է իմ վրա այբ-բենը… նրա ամեն մի տառը, կարծես թե, ուզում էր վիշապի նման ինձ կուլ տալ…գիշերներն անգամ հանգիստ քուն չունեի… երազների մեջ նույնքան տանջվում էի, որքան դպրոցում… Ինձ երևում էր, որպես թե **նոն**, մեյմունի նման առջևս պըպըզած, իր զզվելի ռեխը ծըռմռելով, ուզում էր վախեցնել ինձ… **ռան**, մի մեծ մողես դարձած, վազում էր, որ ծոցս մտնի… Ամենից ավելի ես ատում էի **ճեն**, նա միշտ երևում էր ինձ վիզը ծռած ուղտի պես… ես շատ էի վախենում ուղտից: Բայց մի տառ, որին ես շատ սիրում էի, էր **օն**. ես նրան խիստ շուտ ճանաչեցի, որովհետև նա նման էր գեղեցիկ Սոնայի բոլորակ աչքերին…

Նազելի՛ Սոնա, քո անունը հիշելու ժամանակ ես բոլո՛րը, բոլո՛րը մոռանում եմ, ինչ որ կրեցի այն դժոխքի մեջ… դու էիր իմ մխիթարությունը… դու էիր քաղցրացնում իմ տխուր ժամերի դառնությունը…

Սոնան վարժապետիս աղջիկն էր: Ես իմ կյանքում չեմ տեսել մի այնպիսի բարի և անմեղ բնավորություն: Պատահում էր, երբ վարժապետս ծեծում էր ինձ, Սոնան մի թաքուն տեղ նստած, լաց էր լինում: Խե՛ղճ աղջիկ, ի՞նչու էր լաց լինում նա:

Է

ՍԻՐՈ ԱՌԱՋԻՆ ԶԳԱՑՄՈՒՆՔԸ

Վարժապետիս ընտանիքը կազմում էին երեք հոգի՝ կինը, որդին և փոքրիկ Սոնան: Նրա կնոջը կոչում էին Գյուլ-Ջհան: Չնայելով իր գեղեցիկ անվանը, որ նշանակում է աշխարհի վարդը, երեցկինը աշխարհի ամենաայլանդակ արարածներից մեկն էր: Այսուամենայնիվ տեր հայրը, եթե չասենք սիրում էր, բայց բավականին հարգում էր նրան: Թեև պատահած ժամանակ մանր հայհոյանքներ տալիս էր, բայց շատ սակավ էր պատահում, որ ծեծեր նրան: Դա ուներ իր առանձին պատճառները, որպես մարգարեի առաջին երկրպագուն լինում է իր կինը, այսպես էլ «աշխարհի վարդը» տեր հոր ամենամոլեռանդ պաշտողներիցն էր: Նա էր հռչակում կանանց հասարակության մեջ, թե որպիսի հրաշալի ներգործություններ էին անում իր ամուսնի կախարդական թղթերը: Նա էր տարածում լուրեր, թե այսինչ և այնինչ տիկինը որպիսի բախտի հասավ տեր հոր կախարդությունների շնորհիվ: Այսպիսով ավելանում էր վարժապետիս հաճախորդների թիվը:

Որդին — Ստեփանը — վարժապետիս երեխաների անդրանիկն էր. դա մի սիրուն տղա էր, որ ամենևին նման չէր մորը: Միշտ լուռ, միշտ մունջ, գունաթափ դեմքով և մարած աչքերով Ստեփանը մի ապուշ երեխա էր: Չէր կարելի առանց խղճալու նայել նրա երկչոտ երեսին: Նրա հետ խոսելու ժամանակ ես միշտ նկատում էի, որ առանց պատճառի ժպտում էր, ծիծաղում էր, արձակում էր մի քանի անմիտ, անկապ խոսքեր և իսկույն գժի նման փախչում էր, վախենալով, չիցե թե իրան ծեծեն: Խեղճը ցնորված էր: Երբեմն ամբողջ գիշերներ անցուցանում էր նա անհանգիստ զառանցության մեջ, շատ անգամ քնած տեղից վեր էր թռչում և անգիտակցաբար

գնում էր, ուր որ հանդիպում էր: Այսպատճառով նրան կապում էին: Հոր բոլոր կախարդական հնարները, որոնք ուրիշների վրա հրաշալի կերպով ազդում էին, բոլորովին անզոր մնացին գեղեցիկ Ստեփանի առողջությունը վերականգնելու, խեղճը մնաց միշտ խելագար: Որքան ճիշտ էր, ես չգիտեմ, միայն պատմում էին, թե նրա խելագարության պատճառը եղել էր նույնիսկ հայրը: Ստեփանը ինձ նման չար և անհանգիստ տղա էր. մի օր, հայրը բարկանալով նրա վրա, կամեցել էր «խրատել» և այս պատճառով կախ էր տվել ջրհորի մեջ,— ասում էին, այն օրից խեղճ Ստեփանին պատահել էր այդ դժբախտությունը: Պատմում էին, որ դևերը այնտեղ զարկել էին Ստեփանին, որովհետև ջրհորը միշտ լիքն է լինում դևերով: Բայց լինում էին օրեր, որ Ստեփանի խելքը գլխին էր գալիս, նա խիստ քաղցր և բարի երեխա էր դառնում. մենք ամենքս ուրախանում էինք և սիրում էինք նրան:

Աղջիկը — Սոնան — նույնպես լուռ երեխա էր, և չնայելով իր փոքրիկ հասակին, կատարում էր տնային շատ գործեր: Սոնան կրում էր եղբոր հեզ, հանդարտ և մուգ-երկնագույն աչքերը, այն զանազանությամբ միայն, որ քրոջ աչքերը ավելի պայծառ և կենդանի էին, մինչդեռ եղբորը՝ բոլորովին կորցրել էին իրանց կենդանի փայլը: Սոնայի ծամերը նույնպես ավելի մուգ գույն ունեին, քան եղբոր շեկ, մետաքսանման մազերը, և ավելի խիտ էին, քան թե նրանը: Զարմանալին այն էր, որ այդ երկու երեխաներից ոչ մեկը նմանություն չուներ ոչ հոր հետ, որի կերպարանքի մեջ կային մի քանի որոշ մոնղոլական գծեր, և ոչ նման էին մորը, որի դեմքը վախեցնելու չափ տգեղ էր:

Չնայելով, որ տեր Թոդիկը 700 ընտանիքից բաղկացած մի ամբողջ թաղի ավագ քահանան էր, չնայելով, որ բացի դրանից, նա վիճակավոր առաջնորդի գործակալի պաշտոն էր կատարում, և այդ բոլորից առատ արդյունք էր ստանում (էլ չեմ խոսում դպրոցի մասին)— այնուամենայնիվ, նրա ապրուստը, նրա կեցությունը խիստ չքավոր էր: Մի քանի մթին սենյակներ, ծեփած սպիտակ կավով, նեղ փակ ցածրիկ շրջապարիսպով,— այդ բոլորը կացուցանում էին նրա անշուք բնակարանը, ուր տիրում էր մշտական փոշի, աղտ, խորին տխրության հետ: Դրացիները տեր հոր այսպիսի չքավոր կեցությունը վերաբերում էին նրա անփառասիրությանը և նրա աշխարհի վայելչություններին չցանկացող բնավորությանը: Դա մասամբ իրավացի կլիներ, եթե ագահներն էլ այսպիսի հատկություններ չունենային: Ժլատները նույնպես անապատի մեջ են ապրում, որպես տեր Թոդիկը իր մերկ ճգնարանում: Դերվիշությունը առհասարակ գրավիչ է լինում և հրապուրում է ռամկի սնահավատությունը, թեև դերվիշի քրքրված վերարկուի տակ շատ անգամ ծածկվում է մի շահասեր և հարստահարիչ ոգի…

Վերջին տարիներում, մայրս չկարողանալով վարժապետի ամսականը վճարել, ինձ բոլորովին ծանրաբեռնեցին տնային գործերով, այնպես որ ժամանակ չէի գտնում դասերս պատրաստելու: Ամբողջ ցերեկը հոգիս դուրս էր գալիս կամ երեցկնոջ, կամ տեր հոր պատվերները կատարելով: Մնում էր պարապվել միայն գիշերով, իսկ այդ ևս շատ անգամ չէր հաջողվում, որովհետև ճրագ և լույս չունենալու համար միշտ ստիպված էինք քնել շատ վաղ: Քեռուս տան հետ ավելի հարաբերություններ չունեինք. մայրս իր եղբայրներից ոչինչ օժանդակություն չէր ստանում, և եթե հնար լիներ, նա կթողներ այն խեղդված խրճիթը, որ քեռիներս շնորհել էին մեզ բնակության համար: Մեր հույսը մնացել էր մեր բարերարի՝ որսորդ Ավոյի վրա: Նա էլ դպրոցի վերաբերությամբ ինձ չէր օգնում, և մինչև անգամ խիստ անախորժ էր թվում նրան, որ ես այնտեղ ուսում էի առնում: Ես դեռ չեմ մոռացել այն խոսքը, որ մի օր հայրական բարեսրտությամբ որսորդը ասաց ինձ.

— Ֆարհատ, դուրս եկ այդ դժոխքից, դու բոլորովին կբթանաս այնտեղ:

— Դուրս գամ ի՞նչ անեմ, ի՞նչ սովորեմ,— հարցրի ես:

— Մտի՛ր քեռիներիդ արհեստանոցը, զենք շինել սովորի՛ր,— պատասխանեց նա:

— Մի՞թե ուսումը վատ է:

— Այդ ուսում չէ, որ դու սովորում ես:

Հետո նա սկսում էր երկար ու երկար բացատրել ինձ, թե ի՛նչ բան է ճշմարիտ ուսումը, բայց ես այն ժամանակ չէի հասկանում, միայն զարմանում էի, թե ի՛նչպես այդ կոշտ, կոպիտ մարդը, որ անդադար գազանների հետ պատերազմելով, գազանի բնավորություն էր ստացել,— այնքան լավ, այնքան հիմնավոր կերպով խոսում էր ուսման վրա…

Որսորդը շատ մոտ բարեկամ էր իմ քեռիներից մեկի հետ, որին կոչում էին Մինաս. դա բոլորովին ձրի շինում էր, նորոգում էր որսորդի զենքերը, երբ նրանց որևիցե մասը խանգարված էր լինում: Այդ Մինասի հետ խոսել էր որսորդը, համոզել էր նրան, որ ինձ վեր առնեն իրանց արհեստանոցը որպես աշակերտ: Ես սիրում էի այդ արհեստը, իմ սիրտը դողդողում էր ուրախությունից, երբ քեռիներիս արհեստանոցն էի մտնում, և ամբողջ ժամեր նստած այնտեղ, խորին հոգեզմայլությամբ նայում էի գեղեցիկ, փայլուն զենքերին, որ դուրս էին գալիս քեռիներիս ճարտար ձեռքից: Բայց մայրս սատանայի նման հակառակ եղավ և չթողեց, որ ես այդ արհեստը սովորեի: Նա ատելով քեռիներիս, ատում էր և նրանց արհեստը: Նա կրկնում էր միևնույն խոսքերը, որ ես շատ անգամ լսել էի վարժապետիցս, թե բոլոր զինագործները մեղավոր մարդիկ են, բոլորն էլ դժոխքը կգնան:

— Ի՞նչու,— մի անգամ հարցրի ես:

— Նրա համար որ, թուր, սուր, հրացաններ են պատրաստում, և այդ զենքերով մարդիկ միմյանց կոտորում են,— պատասխանեց նա:

Թե այսպես, թե այնպես, քեռիներիս արհեստանոցը մտնելը ինձ չհաջողվեցավ. ես դարձյալ մնացի այն «դժոխքի» մեջ, որպես կոչում էր նրան որսորդը:

Բայց նույն «դժոխքի» մեջ ես ունեի մի մխիթարիչ հրեշտակ, որ թեթևացնում էր իմ կրած վշտերի դառնությունը: Դա Սոնան էր — վարժապետիս աղջիկը: Թե ի՞նչ զգացմունք էր այն, որ կապել էր իմ սիրտը այդ նազելի արարածի հետ,— ճշմարիտ, ես էլ չգիտեի և մինչև այսօր չեմ կարողացել հասկանալ:

Սոնան ինձ շատ էր օգնում, առավել այն աշխատությունների մեջ, որ ես պետք է կատարեի վարժապետիս տնտեսության մեջ: Երբ միասին գնում էինք այգին կովերի համար խոտ քաղելու, նա ասում էր ինձ.

— Ֆարհատ, դու նստիր, դասդ սերտիր, ես կքաղեմ խոտը:

— Դու մենակ չես կարող բոլորը քաղել, դու կհոգնես,— ասում էի նրան: Նա ժպտում էր և իր հրեշտակային անմեղ բարեսրտությամբ ասում էր ինձ.

— Չէ, կարող եմ, ես չեմ հոգնի: Դու սովորիր, որ հայրս չծեծե քեզ:

Թեև Սոնան շատ էր ցանկանում միշտ օգնել ինձ, որ ես ժամանակ գտնեի դասերս պատրաստելու, բայց չէր կարողանում, որովհետև վերջին օրերում նրան արգելեցին մոտենալ ինձ, և ես այնուհետև միայնակ էի գնում այգուց խոտ քաղելու, և միշտ տխուր էի լինում, երբ նա ինձ հետ չէր:

Այսպես անցուցի ես յոթն բոլորակ տարիներ.— մի խորհրդավոր թիվ, որի մեջ թաքնված են իմ մանկության սկզբնական տանջանքները… Այս յոթն տարվա ընթացքում, ես անցա գիտության բոլոր աստիճանները, այսինքն, սովորեցա այնքան, որքան կարող էր սովորել այն ժամանակ մի բարձր ուսում ստացող աշակերտ: Ես կարդացել էի բոլոր գրքերը, որ հայտնի էին մեր երկրում,— Սաղմոս, Ժամագիրք, Ավետարան, Հին կտակարան, Նարեկ և մինչև անգամ այն ահագին գիրքը, որ ես փոքր հասակումս դժվարությամբ կարողանում էի վեր առնել: Ես կարողանում էի գրել և գրածս կարդալ, ես գիտեի և մի քանի կանոններ հայոց հին լեզվի քերականությունից: Բայց մի բան, որ չկարողացա ձեռք բերել ես — դա էր վարդապետիս խորին գիտությունը ոգիների և կախարդությունների մասին. այդ գիտությունը վարժապետս պահում էր իր մոտ որպես մի գաղտնիք, որին մասնակից լինելու համար պետք էր տասն-քսան տարի ծառայել նրան:

Նրա դպրոցում աշակերտները երկար տարիներով անշարժ մնում և ծերանում էին: Մորուքավոր, անմորուք, չափահաս, անչափահաս, երեխա և երիտասարդ, բոլորը խառնված էին միմյանց: Տասն տարեկան էի ես, երբ մտա այդ դպրոցը, այն օրից անցել էր ավելի քան տասն և երկու տարի, դա փոքր ժամանակ չէ. այժմ ես բոլորովին հասուն պատանի էի: Բայց, չնայելով իմ հասակին, վարժապետս վարվում էր ինձ հետ, որպես մի երեխայի հետ.— դարձյալ նույն ֆալախկան, դարձյալ նույն «խրատի» հարվածները ափերիս մեջ, դարձյալ նույն մերկ ոտներով չոքելը աղյուսի կտորտանքի վրա… մի խոսքով, պատիժների թվից ոչինչ չէր պակասել: Բայց զարմանալին այն էր, որ ես այն աստիճան սովորած էի այդ պատիժներին, այն աստիճան մեռած էր իմ մեջ պատվի, հպարտության և անձնասիրության զգացմունքը, որ ես անտրտունջ կերպով համբերում էի բոլորին, որպես էշը, եզը, ձին համբերում են իրանց տիրոջ անգութ հարվածներին: Բայց մի անգամ ընդհակառակը պատահեց:

Մեծ զատկի տոնն էր. աշակերտներից ոչ մեկը չկարողացավ պատրաստել «Դանիելի գիրքը» եկեղեցում կարդալու համար: Այդ գիրքը կարդում էին սովորաբար հարուստների որդիքը և նրանց ծնողները մի նշանակյալ նվեր էին տալիս եկեղեցուն: Իսկ այն տոնին վարժապետը իր աշակերտների հառաջադիմությունը ժողովրդին ցույց տալու համար, պահանջում էր, որ այդ գիրքը կարդային անգիր: Բայց հարուստների որդիների մեջ ո՞րտեղից էր այնքան ընդունակություն, որ կարողանային ամբողջ «Դանիելին» անգիր պատրաստել: Մեծ պասի սկզբից նրանք ամեն օր սերտում էին ու սերտում, բայց հենց որ մոտեցավ զատիկը, վարժապետը որից որ հարցրեց, չկարողացավ կարդալ: Էլ ուրիշ ճար չկար, վարժապետը ստիպված, ինձ հանձնեց պատրաստել «Դանիելին»: Այն օրը մեծ պասի վերջին ավագ ուրբաթ օրն էր — Հիսուս Քրիստոսի խաչելության և չարչարանքի օրը… մի այնքան չարչարանք պետք էր՝ մի օրվա մեջ «Դանիելին» պատրաստելու համար: Ավագ շաբթի կեսօրին վարդապետը հարցրեց, ես կարողացա կարդալ երեք քառորդ մասը միայն: Գուցե մինչև երեկոյան պատարագի սկսվելը ես կարող կլինեի մնացածն էլ սերտել, բայց նա համբերել չկարողացավ, սաստիկ բարկացավ և նախատեց ինձ ամենակեղտոտ հայհոյանքներով: Ես էլ համբերել չկարողացա, պատասխանեցի նրան մի քանի կոպտություններով:— «Սատանայի լակոտ, ես քո հերը կանիծեմ»… գոռաց նա կատաղելով, և որովհետև ավելի ժամանակ չուներ, բանտարկեց ինձ ախոռատան մեջ և հրամայեց այնտեղ փակված պահել, մինչև ինքը ճրագալույցի երեկոյան պատարագը կվերջացներ և եկեղեցուց վերադառնալով, իմ հոգին կառներ…

Ոչինչ ինձ այնքան չէր տանջում, որքան այն զգացմունքը, որ ամբողջ քառասուն օր ծոմ ու պաս էի պահել, առավոտյան, կեսօրին և երեկոյան ժամ էի գնացել, աղոթք էի արել, իսկ այս գիշեր, որ զատկի ճրագալույցի գիշերն էր, նույնպես պիտի եկեղեցի գնայի, պատարագ տեսնեի և «Սուրբ-սուրբը» երգելու ժամանակ՝ պետք է մորս

տված կարմիր ձուն տաճարին ցույց տայի ու այնուհետև պասս բաց անեի.— այս բոլոր ջերմեռանդ ցանկություններս անկատար մնացին, բոլորից զրկվեցա… Կրոնական զգացմունքը վառ էր իմ մեջ, իմ հոգին լի էր ջերմ հավատքով: Եկեղեցու ամեն մի ծեսը, ամեն մի արարողությունը, ամեն մի պաշտամունքը ինձ համար սրբազան նշանակություն ուներ, և այս պատճառով մեծ ցավ էի զգում, որ այն օր զուրկ մնացի եկեղեցուց: Մյուս կողմից, ինձ տանջում էր մի սարսափելի նախանձ. ես մեր դպրոցի առաջին աշակերտն էի, իսկ ինձանից հարյուր անգամ ստոր ընկերներս այն գիշեր պետք է եկեղեցում «փոխ» ասեին, «գիրք» կարդային, շարականներ երգեին և իրանց ծնողներին ուրախացնեին,— իսկ իմ խեղճ մայրը պետք է իր որդու ձայնը չլսեր… Այս բոլոր մտածություններն այն աստիճան պաշարել էին ինձ, որ ես բոլորովին մոռացել էի վարժապետիս սպառնալի պատիժը, որ սպասում էր ինձ մի քանի ժամից հետո: Զարմանալի՛ հակասություն: Նա պիտի պատժեր ինձ, նա պիտի բարբարոսի նման նահատակեր ինձ, այն խոսքերից հետո, որ այսօր աստծո սուրբ սեղանից, իբրև քահանա, պիտի ավետեր աշխարհին — «Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց»:

Իսկ իմ բա՞նտը… ես իմ անձնամոռացության մեջ դեռ նրան ուշադրության չէի առել: Չնայելով, որ ապրիլ ամիսն էր, բայց շոգերը սկսվել էին արդեն: Գոմը, ուր բանտարկված էի ես, լիքն էր զանազան միջատներով, որոնք իրանց սուր խայթոցները խրում ու խրում էին մարմնիս մեջ: Մի կողմից անասունների հոտած աղբի արտաշնչությունը խեղդում էր ինձ, մյուս կողմից սիրտս թուլանում էր քաղցածությունից: Ողորմա՛ծ աստված, ի՞նչ անեի, փախչել չէի կարող. դուռը ամուր կերպով փակած էր. իսկ համբերել այն տարտարոսի մեջ,— մահվան չափ սպանիչ էր…

Արևը վաղուց արդեն մտել էր, խավարը ավելի և ավելի թանձրանում էր գոմի մեջ: Ես բոլորովին կատաղեցա, ինձ տիրեց մի տեսակ խելագարություն: Երկաթե վանդակի մեջ նոր բռնված գազանի նման, ես այս կողմ և այն կողմ էի թռչում, աշխատում էի մատներով քանդել պատերը, խորտակել սյուները, ծակել առաստաղը, կոտրել դուռը, լայնացնել նեղ լուսամուտները, որ մի հնար գտնեմ ազատվելու: Այդ կռիվը տևեց մի քանի ժամ, մինչև ես բոլորովին հոգնեցա, թուլացա և վեր ընկա հատակի վրա: Այդ միջոցին ինձ տիրեց երևակայության բորբոքումը և հրեշավոր ցնորքների խառնափնթորությունը: Տատիս հեքիաթների մեջ լսած յոթ գլխանի վիշապները, եղջյուրավոր դևերը, պոչավոր սատանաները, ահագին խումբերով գալիս ու գնում էին աչքիս առջև: Մտածում էի ահա խավարը բոլորովին կպատե, և դրանք կխեղդեն ինձ…

Թե քանի՞ ժամ ես մնացի այդ տենդային դրության մեջ,— չգիտեմ. միայն լսեցի, հանկարծ դուռը ճռաց: Ես ամբողջ մարմնով սարսափեցա: Բայց սոսկումն անցավ շուտով: Տեսնում եմ, ներս է մտնում Սոնան, մի այցելու հրեշտակի նման, ձեռքում բռնած յուղային ճրագը: Նա վեր բարձրացրեց ինձ ընկած տեղիցս, և նրա քնքուշ ձայնը բոլորովին սթափեց ինձ:

— Փախի՛ր, Ֆարհատ,— ասաց նա,— փախի՛ր, քանի հայրս տանը չէ…

Ես կամեցա գրկել, համբուրել իմ ազատչին, բայց նա ոգիների նման աներևույթ եղավ:

Ը

ՀԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ

Ազատվելով իմ բանտից, ես վճռեցի մյուս անգամ չվերադառնալ այստեղ, և ոչ մեր տունը գնացի, որովհետև գիտեի, որ մայրս առավոտյան կրկին ինձ կտաներ տերտերի մոտ, և հանձնելով նրան, կասեր.— «Միսը քեզ, ոսկորը ինձ»… Բայց ես այժմ հասկացել էի այդ սարսափելի խոսքի նշանակությունը, որ մայրս առաջին անգամ ինձ դպրոց տալու ժամանակ ասաց վարժապետիս:

Գիշեր էր, երբ ես դուրս եկա բանտից, չգիտեի, թե ուր գնամ: Հուսահատությունը մինչ այն աստիճան տիրել էր ինձ, որ մտածում էի. «Էլ ուրիշ ճար չկա, գնամ գետն ընկնեմ, գուցե ազատվեմ»…

Խորին վրդովմունքի մեջ ես անցա մեր ամբողջ թաղը, փողոցների մեջ ոչ ոք չէր երևում, դեպի ամեն կողմ տիրում էր խուլ լռություն: Ամեն ընտանիք, եկեղեցուց տուն դառնալով, ուրախ, զվարթ, բոլորել էր զատկական սեղանի շուրջը և ընթրիք էր վայելում: Բայց ես, որպես փախստական, որպես մի թշվառ դատապարտյալ, տեղ և օթևան չունեի այս գիշեր: Տներից բուրում էր խնկի և կնդրակի անուշահոտությունը. ամբողջ օդը լցված էր այդ սրբազան բուրմունքով: Երբեմն իմ ականջին զարկում էին ուրախ բացականչություններ. «Քրիստոս հարեավ ի մեռելոց»… այո՛, հարյա՛վ սիրո և խաղաղության աստվածը… Բայց ո՞րտեղ էր սերը, ո՞րտեղ էր խաղաղությունը, ո՞րտեղ էր եղբայրությունը,— ես իմ կյանքի մեջ այդ բաները ոչ մի տեղ չէի տեսել…

Իմ խռովությունը այժմ հասնում էր մինչև խելագարության. ես այժմ ոչինչ չէի լսում, ոչինչ չէի զգում: Ինձ մինչև անգամ անհասկանալի էին քաղցրաձայն տաղերգությունները, որ հնչվում էին այս և այն տան լուսամուտներից: Կարծես ամբողջ աշխարհը խլացել էր ինձ համար: Թե ի՞նչպես հայտնվեցա գետի ափի մոտ,— մինչև այսօր չգիտեմ, միայն հիշում եմ, երբ ես պատրաստվում էի ընկնել գետի գարնան հեղեղներից հորդացած ալիքների մեջ, ինձ կանգնեցրեց մի ձայն.

— Է՛յ, ի՞նչ ես անում:

Մի կողմից գիշերային մթությունը, մյուս կողմից իմ խռովությունը, թույլ չտվին իսկույն ճանաչել նրան, բայց ինձ երևաց, որ ձայնը բոլորովին ծանոթ էր:

— Ֆարհատ, չե՞ս ճանաչում ինձ…

— Ա՛խ, Կարո, սիրելի՛ ընկեր, մի՞թե դու ես… Չէ՛, չէ՛, դու Կարոն չես… Որտեղի՞ց եկար… ո՞ւր էիր… քեզ համար ասում էին…

Այսպես, իմ շփոթության մեջ, սկսեցի հարցնել հին բարեկամիս, որ գրկելով ինձ, խուլ ձայնով պատասխանեց

— Ես եմ, ես Կարոն եմ…

Իմ ուրախությանը չափ չկար ես երեխայի նման քարշ ընկա նրա պարանոցից, համբուրում էի կարոտալի աչքերը, համբուրում էի երեսը, ձեռքերը և երկար չէի բաժանվում նրանից: Ես պատմեցի այն ավուր անցքը, իմ բանտարկությունը, իմ փախուստը և հայտնեցի, թե ո՛րպիսի դիտավորություն բերեց ինձ գետի ափի մոտ: Նա սկսեց ծիծաղել իմ միամտության վրա, ասելով.

— Խելքդ կորցրե՞լ ես, ինչ է:

— Ապա ի՞նչ անեմ,— հարցրի ես:

— Գցի՛ր գետը այդ սատանայի կծիկը:— Պրծավ գնաց…

Նա ցույց տվեց Դանիելի գրքի վրա, որը, չգիտեմ ինչպես էր պատահել, առել էի ինձ հետ: Ես առանց մտածելու, գիրքը նետեցի գետի մեջ, ինձ այնպես երևաց, թե նրա հետ սրտիս բոլոր տանջանքները խորասուզվեցան սառն ալիքների մեջ…

— Դե՛, շատ լավ,— ասաց նա:— Հիմա գնանք:

Ես հետևեցի նրան, ամենևին չհարցնելով, թե ուր է տանում ինձ:

Լուսնի եղջյուրը երևեցավ հորիզոնի ծայրից, և գիշերի թանձր խավարը փոքր-ինչ պարզվեցավ: Օդը իր հովասուն սառնությամբ բավականին կազդուրեց իմ բորբոքված գլուխը: Ես սկսեցի ազատ շունչ քաշել: Այժմ ինձ այնքան լավ էի զգում, կարծես, ոչինչ չէր պատահել ինձ հետ:

Կարոն տասն և երկու տարի առաջ թողեց մեր դպրոցը և այնուհետև անհայտացավ: Նա դուրս եկավ մեր դպրոցից, առանց մի այբի կտոր անգամ իր հետ տանելու: Իսկ այդ տասն և երկու տարվա ընթացքում ո՛րքան փոխվել էր նա: Լղարիկ, փոքրիկ, վատառողջ Կարոն այժմ աճել, հասունացել, հսկայական ձև էր ստացել: Նրա համարձակ ընթացքը, հանդուգն կերպարանքն արտահայտում էին վեհություն, ուժ և անձնավստահություն: Կարոն չորս տարով միայն մեծ էր ինձանից, բայց ես, թեև բավական բարձր հասակով, դարձյալ իմ գլուխը հազիվ հասնում էր նրա ուսերին: Իմ երեսի վրա մազերի հետքեր անգամ չկային, իսկ նրա վերևի շրթունքը դեռ նոր սկսել էր սևին տալ թուխ ընչացքով: Արևից այրված երեսը ստացել էր մուգ-դեղնապղնձի գույն, բայց սև աչքերը դեռ վառվում էին նույն բոցով, որպես տեսել էի առաջ: Ինձ երևում էր, թե այն գեղեցիկ աչքերը ավելի խոշորացել էին և կարծես մի կիսավայրենի բնավորություն էին ստացել:

Ճանապարհին նա խիստ սակավ խոսեց ինձ հետ. մի անգամ միայն հարցրեց. «Մի՞թե դեռ, կենդանի է այն հրեշը»… Այդ հարցմունքը մեր վարժապետի, տեր Թոդիկի մասին էր: Երբ ես սկսեցի նկարագրել դպրոցի դրությունը, նա ինձ չէր լսում, իմ պատմությունը նրան չէր հետաքրքրում, կարծես նա բոլորը գիտեր: Եվ իրավ, ի՞նչ էր փոխվել տասն և երկու տարվա ընթացքում, որ նրան հետաքրքիր լիներ,— բոլորը նույնն էր…

Ինձ հանդիպելը, որ սկզբում այնքան ուրախություն ազդեց Կարոյի մեջ, երևում էր, հետո պատճառ տվեց խորին տխրության: Նրա մտահույզ լռությունն ինձ առիթ էր տալիս այսպես կարծել: Բայց ո՛չ, ես սխալվում էի, Կարոն նույն ժամուն բոլորովին ուրիշ բանի վրա էր մտածում և իմ ներկայությունը կարծես թե նրան նկատելի չէր: Նա մոռացավ ինձ… Ինձ խիստ անախորժ թվեց այդ սառնասրտությունը նրա կողմից, և ես չկարողանալով համբերել, հարցրի.

— Ո՞ւր ենք գնում:

— Ա՛խ, մոռացա ասել… քեզ հիմա կտանեմ մի տեղ, ուր կտեսնես քո երկու հին ընկերներին: Դու խո չե՞ս մոռացել Ասլանին և Սագոյին:

— Ասլանին և Սագոյի՛ն…— բացականչեցի ես, չկարողանալով զսպել իմ ուրախությունը, որ այնքան օտարոտի էր երևում, համեմատելով իմ ուղեկցի սառնասրտության հետ:— Ո՞րտեղ են նրանք, շուտո՞վ կտեսնեմ:

— Շուտով,— պատասխանեց նա, շարունակելով իր ընթացքը:

Գիշերը լուսնկա էր: Ես պարզ որոշում էի շրջապատող առարկաները. քաղաքը բավական հեռու մնացել էր մեր ետևից: Խոսրովիո այգիները, գիշերային մառախուղի մեջ, երևում էին ծածկված արծաթի քողով, որպես թե մրափում էին

խորին անշարժությամբ: Խիստ ախորժ կերպով լսելի էր լինում առվակների խոխոջմունքը, որոնք հոսում էին կանաչ արտերի մոտով: Օդը, տոգորված բուսականների անուշահոտությամբ, ծավալվում էր իր թարմ, խոնավ արտաշնչության մեջ:

Մենք շարունակում էինք ճանապարհը միևնույն ուղղությամբ: Ինձ տակավին հայտնի չէր, թե ուր էինք գնում: Հանկարծ Կարոն ընդհատեց մեր մեջ տիրող լռությունը և դարձավ դեպ ինձ այդ խոսքերով.

— Ֆարհատ, գիտե՞ս ինչ կա, ես չէի ցանկանա, որ իմ ծանոթներից մեկը տեսներ ինձ, բայց դեպքը այնպես բերեց, որ մենք հանդիպեցինք մեկմեկու. ես հուսով եմ, որ մեր հանդիպումը կմնա որպես գաղտնիք:

— Ես չի՞ պիտի գիտենամ պատճառը:

— Այժմ ոչ. հետո ինքդ կհասկանաս… քանի օրից հետո…

— Ես Զաքարիայի նման մունջ կմնամ, երբ այդ ցանկանում ես դու:

— Հա, այդպես, ինձ հարկավոր է առժամանակ ծածուկ մնալ…

Նա կրկին խորասուզվեցավ իր մտածությունների մեջ:

Կարոյի գգուշացուցիչ պատվերը չափազանց զարմացրեց ինձ: Մի մարդ, որ ամբողջ տասն և երկու տարի հեռացել էր հայրենի երկրից, որին ամենքը կորած էին համարում, որը այժմ մի հրաշքով կրկին հայտնվել էր, ցանկանում էր դարձյալ ծածուկ մնաք, ցանկանում էր իր ծանոթներին, բարեկամներին չհանդիպել: Ի՞նչ էր գաղտնիքը — այս հարցը սկսեց տանջել իմ միտքը:

Անցնելով ավելի քան կես մղոն ճանապարհ, անապատի միջով, մենք հասանք այն տեղը, ուր անհիշելի ժամանակներից մնացել էին հին ավերակներ, որոնց մասին տատս պատմել էր ինձ այնքան շատ զարմանալի զրույցներ: Փլատակների մեջ մի մինարեթ միայն մնացել էր ամբողջ և լուսնյակի լուսով նա ավելի գեղեցիկ էր, քան թե ցերեկով: Նրա կապտագույն մոզայիկները այժմ փայլում էին կախարդիչ հրապույրներով: Ինձ երևում էր, որ այդ մինարեթը, որպես մի վիթխարի հսկա, փառավոր կերպով վեր բարձրացած փլատակների միջից, լի ոխակալությամբ, սպառնում էր ժամանակներին — «դուք ոչնչացրիք իմ շրջակայքում բոլորը, ինչ որ ստեղծել էր արհեստը և ճարտարությունը, բայց ես կմնամ, դեռ երկար կմնամ և կպատերազմեմ ձեզ հետ»…

Բայց ոչ, այսպիսի մտածություններ չէին զբաղեցնում իմ միտքը… այլ այն րոպեում, երբ հասանք ավերակների մոտ, ինձ տիրեց մի սարսափելի խռովություն: Երեխայությունից լսածներս այն հին, խորհրդավոր ավերակների մասին, մինչ այն աստիճան գրգռել էին իմ սնահավատությունը, որ ես լույս-ցերեկով երբեք չէի համարձակվում մոտենալ նրանց. իսկ ա՛յժմ, գիշերո՛վ,— դա զարհուրելի հանդգնություն էր: Այդ պատճառով ես իմ մտքում խիստ դժգոհ մնացի Կարոյից, երբ նկատեցի, որ ինձ այնտեղ է տանում:

Մոտենալով մինարեթին, Կարոն շվացրեց: Մինարեթի միջից պատասխանեցին նույն զիլ և ձգական ձայնով: Ես խորին անվստահությամբ ոտք կոխեցի նրա շեմքի վրա, երբ Կարոն հրավիրեց ներս մտնել:

Մինարեթի ներսը լուսավորված էր փայտակույտ խարույկով, որ վառվում էր հատակի մեջտեղում, տարածելով իր կարմիր-ծիրանի լույսը խուլ գմբեթների մեջ: Կրակի մոտ

երկու հոգի միս էին խորովում, որ շարած էր հրացանի սումբաների վրա, նրանցից ոչ այնքան հեռու դրած էր հաց և գինի: Երեք հոգի ևս մի կողմ քաշված, պառկած էին մերկ գետնի վրա: Տեսնելով Կարոյին, նրանք մոտեցան, և հեռանալով դեպի մինարեթի մթին կողմը, սկսեցին անլսելի ձայնով խոսել: Այդ տևեց ավելի քան տասն րոպե: Ես մնացի աննկատելի, ոչ ոք ինձ վրա ուշադրություն չէր դարձնում: Այդ բավական վիրավորեց իմ անձնասիրությունը: Ես ոչինչ չհասկացա նրանց խոսակցությունից, միայն ինձ երևաց, որ Կարոյի հաղորդածը շատ ուրախալի պետք է չլիներ իր ընկերներին, որովհետև իսկույն նկատեցի նրանց դեմքի վրա մի խորհրդավոր տխրություն: Ես կարծում էի, թե խոսակցությունը իմ մասին էր:

Երբ վերջացրին, նրանցից գլորիկ հասակով, արագաշարժ մեկը դարձավ դեպի ինձ և շիլ-վառվռուն աչքերը ուղղելով իմ երեսին, ասաց.

— Օհո՛… դու ո՞րտեղից դուրս ընկար:

Ինձ խիստ անախորժ երևաց այդ կոպիտ հարցմունքը, և ես վրդովմունքից այնքան շփոթվեցա, որ ոչինչ չգտա պատասխանելու: Կարոն, կարծես, այժմ մտաբերեց ինձ և իմ փոխարեն պատասխանեց.

— Չե՞ս ճանաչում, Սագո:— Հետ դառնալով դեպի մյուսները, ասաց.

— Ա՛խ, ես մոռացա ներկայացնել տեսե՛ք, ի՛նչ լավ հյուր եմ բերել ձեզ համար:

Նա ցույց տվեց իմ վրա և նրա խոսքերից երևաց, որ գաղտնի խոսակցությունը իմ մասին չէր:

— Ես չեմ ասի թե ով է,— շարունակեց Կարոն:— Տեսնեմ կճանաչե՞ք:

— Ես նրան ձվի միջում կճանաչեի,— խոսեց դարձյալ շիլ աչքերով պատանին, մոտենալով ինձ,— Ֆարհատը չէ՞: Քո տունը չքանդվի, Ֆարհատ, ի՛նչքան փոխվել ես դու, ի՛նչ լավ տղա ես դարձել:

Այս լսելով, մյուս ընկերը, որ հետաքրքրությամբ նայում էր իմ վրա, գրկեց ինձ և ուրախանալով ասաց.

— Ա՛խ, Ֆարհատն է, ի՛նչպես չճանաչեցի ես:

Կարոն ինձ ճանապարհին հայտնել էր, թե ես կտեսնեմ իմ երկու ընկերներին՝ Ասլանին և Սագոյին. այդ պատճառով, դժվար չէր ճանաչել, որ ինձ այնքան սիրով գրկող պատանին Ասլանն էր, իսկ մյուս շիլ աչքերովը — Սագոն: Երկուսն էլ իմ հին աշակերտակիցներն էին, որոնք փախան մեր դպրոցից ճիշտ այն ժամանակ, երբ Կարոն անհայտացավ: Բայց մի բան, որ դժվարացրեց սկզբից ճանաչել նրանց, այն էր, որ թե Կարոն և թե մյուս ընկերներս, բոլորն էլ հագուստները փոխած էին. նրանք չէին հագնված այն ձևով, որպես առհասարակ հագնվում են Պարսկաստանի հայերը, այլ կրում էին մի տեսակ զգեստ, որ հատուկ է Մշու կամ Բաղեշի կողմերի լեռնաբնակ հայերին, որը շատ չէ զանազանվում քուրդ էշիրաթների հագուստից:

Սագոյի իսկական անունը Սարգիս էր, բացի դրանից, մեր դպրոցում նրան կոչում էին «սատանայի եղունգ». այդ անունը ստացել էր նա իր չափազանց խորամանկության, ճարպկությունների և անհանգիստ բնավորության պատճառով:

Ինձ երևաց, թե այժմ նա ավելի փոքրացել էր և համարյա գունդի ձև էր ստացել, թեև առաջ նույնպես բավական կարճահասակ տղա էր: Նրա դեմքը բոլորովին կատվի կերպարանք էր կրում. անփոփոխ էին մնացել միայն շիլ աչքերը, այն վաղեմի

դիվական աչքերը, որ միշտ արտահայտում էին եռանդ և մի առանձին կենդանություն:

Ասլանը շատ չէր փոխվել. նույն խաղաղ դեմքը իր բոլոր քնքշությամբ, նույն երկնագույն հեզ աչքերը, հովանավորված խիտ թերթերունքներով, նույն անմեղ ժպիտը,— բոլորը նույնն էր, Միայն նրա շեկ մազերը այժմ ավելի մուգ գույն էին ստացել և երեսի ճերմակ կաշին կորցրել էր իր վաղեմի սպիտակությունը: Մարմնի կազմվածքը մնացել էր նույնպես նուրբ, որպես առաջ, միայն այժմ փոքր-ինչ կոլոլվել էր նա և հասակը ավելի գեղեցիկ և վայելուչ ձև էր ստացել:

Ասլանը միակ աշակերտն էր, որին ես շատ էի սիրում. նա միշտ բարի էր դեպի ինձ, և քիչ չէր պատահում, որ ամբողջ ժամերով պարապվում էր ինձ հետ. նա մեր դպրոցի ընդունակ և հառաջադեմ աշակերտներից մեկն էր: Ի՞նչ պատճառով նա թողեց մեր դպրոցը,— ես հիմա էլ չգիտեմ, միայն նա թողեց մեծ ափսոսանքով, կարծես մի բան կապած լիներ նրա սիրտը այն «դժոխքի» հետ…

Մեր դպրոցում ես, Կարոն, Ասլանը և Սագոն այնպես սերտ կերպով կապված էինք միմյանց հետ, որ համարյա կազմում էինք մի անբաժան չորրորդություն: Բայց երբ նրանք միասին անհայտացան մեր քաղաքից, ամենևին չհայտնեցին ինձ իրանց նպատակը, երևի նրա համար, որ ինձ անհարմար գտան իրանց ընկերությանը, որովհետև ես նրանցից հասակով շատ փոքր էի և բոլորովին անփորձ: Այնուհետև նրանց մասին ամենևին ստույգ տեղեկություններ չկային, միայն երբեմն խոսվում էին զանազան օտարոտի տեղեկություններ, լսվում էին զանազան սարսափելի համբավներ, որոնց ես երբեք չէի հավատում: Իսկ այժմ ի՞նչ բախտ էր, որ մեզ կրկին հանդիպեցրեց միմյանց տասն և երկու տարվա անջատումից հետո…

Երկու մյուս անծանոթները, որոնք խարույկի մոտ խորոված էին պատրաստում, ամենևին չշարժվեցան իրանց տեղից, միայն երբեմն կասկածավոր աչքերով նայում էին ինձ վրա: Եվ Կարոն չասեց, թե նրանք ովքեր են:

— Երևի, ուղիղ դպրոցի՞ց այստեղ,— հարցրեց Ասլանը ժպտալով:

Մինչև իմ պատասխանը, Սագոն մեջ մտավ.

— Չե՞ս տեսնում, Ասլան, չե՞ս տեսնում, որ բոլորովին քացախել է այբուբենի մեջ:— Խե՛ղճ տղա, հենց որ նայում ես երեսին, այնտեղ կարդում ես այբ-ժե, ճե-ռա, խա՛… խա՛… խա՛… Այսպես չէ՞, Ֆարհատ: Ա՛խ, ինչպես ազատվեցա ես… տասն և երկու տարի է, ինչ որ մեր թոնրում այրեցի այն անիծած գիրքը… թող սատանային փայ լինի… խա՛… խա՛… խա՛…

Սագոյի կծու և դառն կատակները ամենևին չվիրավորեցին ինձ, միայն հիշեցրին մեր աննախանձելի դպրոցական կյանքը, երբ այբ-ժե-ճե-ռան մեր հոգին հանում էր, այնքան արտասուքի և տանջանքի պատճառ էր դառնում մեզ…

Այդ միջոցին լսելի եղավ Կարոյի ձայնը.

— Տղերք, ով քաղցած է, թող մոտ գա:

Շատախոս Սագոն վազեց դեպի ընթրիքի սեղանը. ես և Ասլանը մնացինք մենակ:

— Ի՞նչպես է «նա»…— հարցրեց Ասլանը դողդոջուն ձայնով:

Իսկույն հասկացա, որ Սոնայի մասին էր հարցնում:

— Այնպես, որպես էր առաջ. ժպտում է, կարմրում է հետը խոսելիս… փախչում է, երբ ուզում ես գրկել… լաց է լինում, երբ իր հայրը սիրած աշակերտին ծեծում է… Ամենը էլի այնպես է որպես տեսել ես: Գլխավոր փոփոխությունը, որ եղել է քո ժամանակից հետո, այն է, որ հիմա ավելի գեղեցկացել է և ավելի հասունացել է…

Ասլանը ոչինչ չպատասխանեց, բայց ես նկատեցի, որ նրա մթին դեմքը ավելի մռայլվեցավ:

— Գնանք մի բան ուտենք, դու երևի քաղցած ես,— ասաց նա րոպեական խռովությունից հետո:

Խարույկից ոչ այնքան հեռու պատրաստված էր ընթրիքի սեղանը. ի՞նչ սեղան, մերկ գետնի վրա տարածել էին սփռոցի փոխարեն մի փալասի կտոր և նրա վրա դրած էր հաց, պանիր, սոխ և ավելի ոչինչ: Տղերքը բոլորել էին այդ նահապետական սեղանի շուրջը, ամեն մեկը իր վերարկուն օթոցի փոխարեն իր տակը ձգած ունենալով: Խորովածը հրացանի սումբաներից,— որ շամփուրի տեղ էին գործածում,— տաք-տաք քաշում էին լավաշների վրա և այնպես արյունաթաթախ ուտում էին: Մի կողմում թավալված էր մի ահագին եղջերու, որից հոշոտում էին խորովածացու միսը: Նրա մոտ պառկած էր գինով լիքը տկճորը: Գավաթի տեղ գործ էին ածում մի մեծ դդումի կտրած կեսը, որի ներսույքը դուրս էին տված: Նույն գավաթից ամենքը խմում էին հերթով:

— Ինձ մոտ, Ֆարհատ,— ասաց Կարոն:

Ես նստեցի նրա մոտ: Այն օրվա բոլոր անցքերը, սկսյալ հայր Թոդիկի բանտից մինչև խորհրդավոր միևարեթը, իրանց ուրախ և տխուր տպավորություններով մինչ այն աստիճան գրգռել էին իմ ջղերը, որ ես ամենևին ախորժակ չունեի մի բան ուտելու, թեև ամբողջ օրը քաղցած էի մնացել: Տասն և երկու բոլորակ տարիներից հետո, սիրելի ընկերներիս հետ կրկին հանդիպելը թեև շատ ուրախալի է ինձ,— բայց այն օրից երբ նրանք անհայտացան, այնքան անհավատալի զրույցներ լսած էի նրանց մասին, որ բոլորովին չէի կարողանում ցրվել հին նախապաշարմունքը: Այդ մանկահասակ, ծպտյալ, կերպարանափոխ եղած փախստականները երևում էին ինձ կասկածավոր մարդիկ, մանավանդ երբ նկատում էի, որ նրանք ևս ոչ բոլորովին հավատարմությամբ վերաբերվում էին դեպի ինձ: Ես տեսնում էի նրանց մեջ մի առանձին ծածկամտություն, խիստ զգուշավոր խորհրդապահություն, որպես թե մի բանից քաշվում էին կամ վախենում էին: Ինչո՞ւ չէին կարող անկեղծ լինել ինձ հետ: Ի՞նչն էր ստիպում նրանց, որ վերադառնալով հեռավոր երկրներից, փոխանակ իրանց բարեկամների և ազգականների մոտ գնալու, նրանք ընտրել էին այդ անմարդաբնակ ավերակները: Չէ՞ որ քաղաքը շատ հեռու չէր այնտեղից, այն քաղաքը, ուր նրանք ծնվել էին, ուր մի քանիսի ծնողները դեռ կենդանի էին: Ինչո՞ւ չուրախացնել կարոտալի ծնողներին, մանավանդ զատկական մեծ տոնի ժամանակ, երբ հայրը, մայրը, գրկելով նրանց. «Քրիստոս հարեավ ի մեռելոց»-ի փոխարեն պիտի ասեին.— «Մեր որդին կորած էր, գտնվեցավ. մեր որդին մեռած էր, կենդանացավ»…

Իմ մտատանջությունը, իմ նույն ժամուն տխրամած դեմքը չէր կարող աննշմարելի մնալ ընկերներիցս, մանավանդ Սագոյի արծվի տեսությունից, որ դարձավ դեպ ինձ այս խոսքերով.

— Կե՛ր, սիրտդ բաց արա՛, ի՞նչ ես ռեխդ թթվացրել ձմեռվա երկնքի պես: Չլինի՞ թե մտածում ես, հիմա մայրս սպասում կլինի ինձ, հիմա նա ասում կլինի.— «ա՛խ, ի՞նչ եղավ, չեկավ որդիս, փլավը սառեց, ա՛խ չեկավ, որ ուտե»… Իմ խեղճ մայրն էլ այս

խոսքերը ասելով մեռավ, բայց սիրելի որդու երեսը չտեսավ… խա՛… խա՛… խա՛…– Դու էլ, Ֆարիատ, մյուս անգամ մորդ եփած փլավը չե՛ս ուտի…

Նա սկսեց դարձյալ ծիծաղել: Զատկական փլավը աղքատ ընտանիքի աղքատ զավակի համար մի այնպիսի բարիք էր, որ նա երբեք մոռանալ չէր կարող: Արևելյան կերակուրների այդ թագուհին, որ հարուստները վայելում են համարյա ամեն գիշեր, աղքատի տանը մուտք է գործում տարեն մի անգամ միայն, այս է զատկական տոնի օրը: Բայց իմ ցավը փլավը չէր, ես գիտեի, որ մեր տանը այն գիշեր փլավ չէր լինի և ոչ որևիցե զատիկվա կերակուր, որով մայրս և քույրերս կարողանային իրանց քառասուն օրվա պասը բաց անել: Ինձ միայն դուր չեկավ Սագոյի վայրենի զգացմունքը դեպի մայրական գութը, ես երեսս շուռ տվի նրանից և դարձա դեպի Կարոն, որ գինով լիքը ահագին գավաթը մեկնեց ինձ, ասելով.

— Խմի՛ր:

— Այսքանը չեմ կարող խմել,— պատասխանեցի ես հրաժարվելով:

— Խմի՛ր, կսովորես…— ասաց նա ժպտելով:

Ես դարձյալ հրաժարվեցա:

— Ես էլ առաջ գինու հոտը առնելիս հարբում էի,— մեջ մտավ Սագոն,— բայց հիմա՞…

— Հիմա ուրիշները քո հոտը առնելիս հարբում են…— վրա բերեց երկու անծանոթ երիտասարդներից մեկը, որ բոլոր ժամանակ լուռ էր:

Ես ընդունեցի Կարոյի ձեռքից գինու գավաթը և դատարկեցի մինչև կեսը, այդ առաջինն էր մինչև այնօր, որ միանգամից այնքան խմեցի:

Խոսակցությունը գնալով ավելի կենդանանում էր. գինու գավաթը արագությամբ պտտվում էր. լուռ էր միայն Ասլանը, թեև նա ևս ընդունած բաժակը մինչև վերջին կաթիլը ցամաքեցնում էր:

Ինձ բոլորովին անծանոթ մնացին երկու երիտասարդները, որոնց մեկին կոչում էին Մուրադ, իսկ մյուսին Ջալլադ: Ովքե՞ր էին նրանք կամ ո՞րտեղացի,— ես չկարողացա գիտենալ, միայն ինձ երևում էր, որ Զեյթունի կողմերից պետք է լինեին, և նրանց թե հագուստի ձևերը և թե բարբառը հաստատում էին իմ կարծիքը: Չգիտեմ, թե ինչո՞ւ ես այնպես հակակրությամբ էի վերաբերվում դեպի այդ երկու վիթխարի տղամարդիկը, որոնց թե խոսակցությունը, թե վարմունքը և թե դեմքերը արտահայտում էին կատաղի վայրենություն:

Ընթրիքը վերջացավ, երբ տկճորից գինին սպառվեցավ: Խարույկի վրա ավելացրին փայտ և կրկին մինարեթի մթին կամարները սկսեցին փայլել ծիրանի լուսով: Այդ միջոցին նրանք սկսեցին խոսել ինձ բոլորովին անհասկանալի մի լեզվով: Խոսակցությունը, որ սկզբում մեղմ էր, հետզհետե սաստկանալով, հասավ տաք վիճաբանության: Ասլանը նույնպես սառն և հանդարտ կերպով վիճում էր, որպես ընթրիքի ժամանակ խմում էր: Սագոն չէր դադարում անընդհատ շատախոսելուց. նրա կատվի դեմքը բարկությունից բոլորովին լրջացել և ճակնդեղի գույն էր ստացել: Կարոն հանդարտ էր, որպես միշտ, բայց նրա ճակատի երակները հաստացել և դեմքը ավելի խոշոր գծագրություն էր ստացել, ոչ այնքան շատ խմելուց, որքան ներքին վրդովմունքից: Երկու երիտասարդները, կարծես, չէին խոսում, այլ արձակում էին մի տեսակ վայրենի հնչյուններ, որ ավելի նման էին գազանների մռնչյունին: Ես սարսափում էի և միշտ սպասում էի, թե ահա վեր կկենան և միմյանց կկոտորեն:

Ես ոչինչ հասկանալ չկարողացա, թե ի՞նչ առարկայի վրա էր վիճաբանությունը, միայն նկատեցի, որ Կարոյի հեղինակությունը հաղթեց բոլորին: Այժմ խոսակցությունը սկսեց մեղմանալ և կրկին բոլորը հանգստացան: Ճշմարիտ ասած, այդ աղմկալի տեսարանը, այդ տաք, կրակոտ վիճմունքները ոչինչ բավականություն չպատճառեցին իմ մեջ, և ես երկար նրանց լսել չկարողացա: Մի տեսակ տխուր ձանձրույթ տիրեց իմ սրտին, անսովոր խմելուց գլուխս սկսեց պտույտվիլ, և շուտով իմ աչքերը ծանրացան քնով…

Թ

ԿԱՐՈՅԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Այստեղ ես ստիպված եմ մի փոքր կանգ առնել, թողնել ընկերներիս խորհրդավոր միևարեթի մեջ և դառնալ դեպի Կարոն: Այդ անձնավորությունը, որ գլխավոր դերերից մեկը պիտի խաղա իմ պատմության մեջ, արժանի է առանձին ուշադրության:

Կարոյի իսկական անունը ես չգիտեմ, գուցե նա ինքն էլ չգիտեր, միայն հայտնի էր, որ դա մի մականուն է նրա ծագումը և ազգատոհմը թաքցնելու համար: Նա մեր քաղաքի բնիկներից չէր, ո՞րտեղացի էր,— ոչ ոք չգիտեր, միայն ասում էին, մի անգամ հայտնվեցավ մեր քաղաքում մի անծանոթ կին և բերեց իր հետ փոքրիկ Կարոյին, որին կոչում էր իրա թոռը: Զումրուդը — այսպես էր կնոջ անունը — հմուտ էր ժողովրդական բժշկության, այդ արհեստով փող էր վաստակում, ապրում էր ինքը և սնուցանում էր իր որբ թոռնիկին:

Կարոյի հետ ես ծանոթացա մեր դպրոցում. այնտեղ բոլորը, բացի վարժապետից, սիրում էին նրան, թեև նա խիստ չար և անհանգիստ երեխա էր: Չգիտեմ, ո՞րպիսի զգացմունք կապեց իմ սիրտը այդ վայրենի վագրի ձագի հետ, որից ամեն օր մի փորձանք պակաս չէր լինում: Եվ ճշմարիտ, միշտ մի վերք կարելի էր տեսնել նրա մարմնի վրա. կամ ձեռքը վիրավորված էր լինում, կամ գլուխը կոտրած, կամ երեսը ճանկռած, վերջապես միշտ անդամներից մեկը փաթաթված էր լինում:

Թեև նա խիստ բարի սիրտ ուներ, բայց անկարելի էր բոլորովին մտերիմ լինել նրա հետ: Կարոն այն գազաններից էր, որին դժվար էր ընտելացնել: Այդ պատճառով, աշակերտների ակնածությունը դեպի նա ծագում էր ավելի երկյուղից, որ ունենում են տկարները դեպի իրանցից հզորները: Եվ արդարև, Կարոն համարվում էր մեր դպրոցի մեջ խիստ սրտոտ, համարձակ և աներկյուղ աշակերտ:

Նա խիստ վատ էր սովորում, թեև ընդունակ և բնական ձիրքերով հարուստ տղա էր: Նրա անհամբեր, անհնազանդ բնավորությունը շատ անգամ առիթ էր տալիս զեղծումներ գործել դպրոցի խիստ կարգապահությունների դեմ. շատ անգամ ևս նա պատճառ էր դառնում աղմկալի խռովությունների: Գրգռելով աշակերտներին, հարուցանում էր նա ընդհանուր ապստամբություն վարժապետի դեմ: Այսպիսի դեպքերում նրան շատ օգնում էին Ասլանը և Սագոն. առաջինը իր խելքով և խոհեմությամբ, իսկ երկրորդը՝ իր խորամանկությամբ, որ սատանայի պես մտնում էր աշակերտների դամարը և նրանց շուռ էր տալիս, որպես և ցանկանում էր:

Ես մինչև այսօր չեմ կարող երևակայել Կարոյի բնավորության զորությունը, թե ի՞նչպես նրան հաջողվում էր ազդել այն ապուշ, վարժապետի ճնշումներից հոգով և սրտով սպանված աշակերտների վրա, որոնց երեսից երկյուղը երբեք պակաս չէր լինում, որոնց վախկոտ աչքերի մեջ միշտ կարելի էր նշմարել կույր հնազանդություն

և ստրկություն: Բայց մարդկային ուժը իր մեջ աստվածային զորություն ունի, որ ստիպում է տկարներին խոնարհվել իր առջև, որ իր անձը պաշտելի է կացուցանում: Կարոն ուներ այդ հատկությունները:

Կարծես երեխաների հասակում կատարվում է նույնը, ինչ որ կատարվել էր ընդհանուր մարդկության տղայական հասակում: Ազգերի դյուցազունները, որոնց պաշտել է ամբոխը, որոնց անմահների կարգումն է դասել, եղել են նույն ազգի քաջ և հզոր տղամարդիկը, որոնք պատերազմում էին վիշապների և ամեհի գազանների հետ: Կարոն թեև այսպիսի քաջագործություններ չէր կատարում, բայց նա անում էր այն, որ մեր, երեխաներիս աչքերում ավելի մեծ նշանակություն ուներ: Պատահում էին այսպիսի դեպքեր և այդ դեպքերը կրկնվում էին խիստ հաճախ: Ամեն երեկո, երբ աշակերտները դպրոցից վերադառնում էին իրանց տները, մահմեդականների փողոցներից անց կենալու ժամանակ, հավաքվում էին թուրքերի, պարսիկների երեխաները և ծեծում էին հայ երեխաներին: Ես մինչև այսօր չեմ մոռացել մի երգ, որ հնարել էին նրանք և մեզ տեսնելու ժամանակ երգում էին: Նրա բովանդակությունը մոտավորապես այս էր. «Հայը աղբի ջրաղաց է, պետք է գցել նրան տոպրակի մեջ և խփել պատին, որ երկու աչքերն էլ միասին կուրանան»… Մենք ուրախ էինք լինում, երբ մեր վիրավորանքը վերջանում էր այդ նախատական խոսքերով: Բայց նրանք ծեծում էին մեզ: Աշակերտները գանգատվում էին իրանց ծնողներին, բայց ի՞նչ կարող էին անել ծնողները: Մեծերը ծեծվում էին մեծերից, իսկ փոքրերը՝ փոքրերից…

Մի անգամ Կարոն ասաց մեզ.

— Գիտե՞ք ինչ կա, տղերք, այդ թուրքի լակոտները մեզ միշտ կծեծեն, քանի որ մենք նրանց առջևից կփախչենք: Պետք է մենք էլ ցույց տանք նրանց մեր ձեռքի զորությունը:

Աշակերտներից շատերը հակառակեցին, թե դա անկարելի բան է, թե ի՞նչպես կարելի է թուրքի, պարսկի երեխայի վրա ձեռք բարձրացնել:

— Ես չեմ ասում, որ մենք հարձակվենք նրանց վրա, բայց երբ որ մեզ վրա հարձակվելու լինեն, պետք է պաշտպանվենք:

— Ինչո՞վ,— հարցրեց մեկը:

— Առաջ մեր մուշտիներով,— ասաց Կարոն,— իսկ երբ այդ չի օգնի, սկսեցեք քարերով:

Դարձյալ աշակերտներից շատերը չհամաձայնվեցան. տասն հոգի միայն ընդունեցին Կարոյի առաջարկությունը, որոնց թվում գտնվում էինք՝ ես, Ասլանը և Սագոն:

Կարոն կազմակերպեց իր փոքրիկ գունդը, ինքն առաջ ընկավ, Ասլանին և Սագոյին կարգեց վերջապահ, իսկ ինձ կանգնեցրեց մեջտեղում, որովհետև ամենից փոքրն էի: Մեր գրպանները լիքն էին քարերի գնդակներով: Այսպես սկսեցինք առաջ գնալ: Մեր ընկերներից մի քանիսը, որ չմիացան մեզ հետ, հեռվից հետևում էին մեզ, որ տեսնեն, թե ինչով կվերջանա այդ «հիմարությունը»…

Թուրքերի փողոցի մեջտեղումն էինք, երբ մի խումբ մահմեդական երեխաներ, մեզ տեսնելով, սկսեցին իրանց սովորական երգը:— Դա կռվի հրավերքն էր:

— Տղերք,— ասաց Կարոն,— չվախենաք, հենց որ նշան կտամ, սկսեցեք…

Մահմեդական երեխաների խումբը մոտեցավ, մեր ճանապարհը կտրեց:

— Թողեք, որ անցնենք,- ասաց Կարոն:

— Չենք թողնի մինչև ձեզ մոտ գտնված սպիտակ թղթերը մեզ չտաք,- ասաց նրանցից մեկը:

— Ոչինչ չեք ստանա,- պատասխանեց Կարոն:

Մահմեդական երեխաները սովորություն ունեին մեր ձեռքից խլել մեր գրելու թղթերը և երբեմն հափշտակում էին մեր գրքերը. թեև այս վերջինները նրանց պետք չէին, բայց քանի օրից հետո դարձնում էին, փոխարենը ստանալով փող, կամ մի ուրիշ բան: Մի անգամ իմ Նոր կտակարանը, որ գերի էր ընկած մի թուրք երեխայի ձեռքում, ես կարողացա ազատել, նրան տալով իմ զմելին: Ո՞վ էր սովորեցրել նրանց, թե նրանք իրավունք ունեին հափշտակելու հայ երեխաների իրեղենները…

Իսկ այս անգամ նրանց պահանջը հանդիպեց սաստիկ ընդդիմադրության: Երբ Կարոն պատասխանեց, թե «ոչինչ չեք ստանա», այդ միջոցին մահմեդականներից մեկը վրա պրծավ և խլեց նրա գդակը: Կարոն մի հարվածով ցած գլորեց անզգամին և խլեց գդակը: Առաջին անգամն էր, որ մահմեդական երեխաները տեսան «գավուրի» հարվածը և այդ հանդգնությունը սաստիկ բարկացրեց նրանց:

— Սպանեցե՛ք… - ձայն տվեցին միմյանց:

— Սկսեցե՛ք…- ասաց մեզ Կարոն:

Ես երբեք չեմ մոռանա այն փոքրիկ, երեխայական կռիվը, որ սկսվեցավ մեր և նրանց մեջ: Սկզբում մահմեդականները փոքր էին թվով, բայց մի այնպիսի վայրենի ճիչ և աղաղակ բարձրացրին, որ նրանց ձայնից մի քանի րոպեի մեջ հավաքվեցավ այնքան բազմություն, որի թիվը մեր կրկնապատիկը եղավ: Բայց ես չգիտեմ, ի՛նչ էր պատճառը, որ կռվի մեջ մեզ տիրեց մի այնպիսի կատաղություն, որ բոլորովին մոռացանք, թե մենք հայի զավակներ ենք, թե մեր բազուկները կապված են, թե մենք համարձակություն չի պիտի ունենանք մահմեդականի վրա բարձրացնելու մեր «պիղծ» և միշտ անգործության դատապարտված ձեռքը: Կարոն մի սարսափելի փոթորիկի նման, դեպի որ կողմը և դառնում էր, իր առջևից ցած էր գլորում թուրքի երեխաներին: Նրա օրինակը մեզ սիրտ և խրախույս տվեց: Ասլանը, ասլանի[3] ձագի նման, իր զորեղ ճանկերով բռնում էր նրանց, և ձեռքը կոկորդներին դնելով, կիսախեղդ էր անում: Փոքրիկ Սագոն իմ աչքում ավելի աճել և ավելի մեծացած էր երևում: Նա դևի նման կռվում էր իր մարմնի բոլոր անդամներով. ձեռքով մուշտի էր խփում, ոտքով քացի էր տալիս, գլխով նաղդա էր գալիս[4], ատամներով կծում էր, եղունգներով ճանկռում էր: Ոչ սակավ քաջությամբ հանդիսացան և մեր մյուս ընկերները, որոնց ճարպկությունները առ մի նկարագրելը շատ երկար կլիներ: Միայն այսքանը կասեմ, որ բոլորից թույլը, բոլորից անվարժը կռվի մեջ էի ես… Ես այս րոպեիս էլ առանց ծիծաղի չեմ կարող գրել այս տողերը, թե ինչով էի օգնում ընկերներիս.— ես միայն գետնից ափերով հող էի վեր առնում, ցրում էի թուրք երեխաների երեսի վրա, որ նրանց աչքերը լցնեմ հողով, որ նրանց կուրացնեմ, որ ոչինչ չտեսնեն, և այսպիսով հեշտացնեմ ընկերներիս ջարդել նրանց:

Չնայելով, որ մահմեդական երեխաները մեզանից կրկնապատիկ թվով ավելի էին, այսուամենայնիվ, նրանք խույս տվեցին կռվի դաշտից և սկսեցին հեռվից մեզ վրա քարեր արձակել:

---

[3] Ասլան — թուրքերեն նշ. առյուծ:

[4] Նադդա գալ — նշ. խոյի, գոմեշի, եզան և այլ եղջյուրավոր անասունների գլխով զարկելը:

— Դուք էլ քարերով…— ձայն տվեց Կարոն:

Մենք կատարեցինք նրա հրամանը: Այդ միջոցին վրա հասան մի քանի չափահաս մահմեդական պատանիներ, և մենք ստիպված էինք փախչել:

Մեր ընկերներից մի քանիսը վնասվեցան. մի տղա թևքի վրա դանակի վերք ստացավ, մի ուրիշի ատամները ջարդվեցան քարի հարվածքից, իսկ իմ գլխի փոքրիկ սպին, որի նշանը մնացել է մինչև այսօր, այն օրվանից ստացված է:

Վերադառնալով տուն, մայրս սաստիկ բարկացավ, երբ լսեց մեր «հիմարությունը»: Նա պատրաստվում էր ինձ ծեծել, որ խրատվեմ, որ թուրք երեխաների հետ գործ չունենամ, բայց գլխիցս հոսող արյունը մի փոքր մեղմացրեց նրա բարկությունը: Նա չէր մեղադրում նրանց, որ իմ գլուխը պատառել էին, այլ մեղադրում էր ինձ թե ինչու ես մասնակցեցի կռվի մեջ: Այդ պատճառով սկսեց սաստիկ անիծել ինձ.

«Գետինը մտնես»… գրողը տանե քեզ… չար սատանա… պատանդ կարեմ… անիծված… նաշդ տեսնեմ»… և այլ այսպիսի խոսքեր:

Մյուս օրը ես դպրոց գնալ չկարողացա, որովհետև մի ամբողջ շաբաթ տանը հիվանդ պառկած էի: Այդ հիվանդությունը ազատեց ինձ մեր վարժապետի պատժից: Ինձ պատմեցին, թե բոլոր աշակերտները, որոնք մասնակցել էին կռվին, սաստիկ ծեծ կերան: Նրանք ծեծ կերան նրա համար միայն, որ թույլ չտվեցին մահմեդական երեխաներին իրանց ծեծել… Մի՞թե ինքը, դպրոցը, չէր պատրաստում մեզ ծեծվելու համար… մի՞թե նա չէր մտցնում մեր մեջ ստրկությունը…

Թեև խիստ թանկ նստեց մեր կատարած անկարգությունը, բայց նրա հետևանքը բավական օգտավետ եղավ մեզ համար: Այնուհետև մահմեդական երեխաները սկսեցին վախենալ մեզանից և ավելի հարգանքով վարվել: Եվ շատ սակավ էր պատահում, որ նրանց փողոցներից անց կենալու ժամանակ մեր ընկերները ծեծվեին, մանավանդ երբ խումբերով էին անց կենում և պատրաստ էին ընդդիմադրել:

Այդ անցքից հետո Կարոն նշանակություն ստացավ իր ընկերների մեջ, և համարյա բոլորին պաշտելի դարձավ: Ամեն մեկը խոնարհվում էր նրա հեղինակության առջև:

— Տեսա՞ք,— ասաց մեզ Կարոն մի քանի օրից հետո.- «շանը մինչև չծեծես, չի բարեկամանա»…

Այդ բոլոր «անկարգությունների խմորը» (տեր Թոդիկի լեզվով) Կարոն էր: Վարժապետը վաղուց արտաքսած կլիներ այդ խռովարարին իր հիմնարկությունից, եթե մի քանի պատճառներ արգել չլինեին: Որպես վերևում ասեցի, Կարոյի տատը հմուտ էր ժողովրդական բժշկության մեջ. իր արհեստով նա վայելում էր քաղաքի ոչ միայն հայ հասարակության հարգանքը, այլև մահմեդականների մեջ մեծ պատիվ ուներ: Նրա պատվի համար Կարոյին ներում էին: Բացի դրանից, Զումրուդը իր բժշկական հնարներով ոչ սակավ օգնում էր միշտ հիվանդ տերտերակնոջը և ամենևին վարձատրություն չէր պահանջում:

Մի դեպքի պատճառով ինքը Կարոն հեռացավ տեր Թոդիկի դպրոցից:

Մեր դպրոցը ուներ մի վերակացու, որին կոչում էին Խալֆա-Թաթոս: Այդ Գոլիաթը կլիներ երեսուն տարեկան, այսինքն՝ հասակովը տասն և հինգ տարի մեծ Կարոյից: Նա վախենում էր կարիճից, վախենում էր ամեն տեսակ պողոճներից և մինչև անգամ ճանճերից: Միակ արարածները, որոնցից չէր վախենում Խալֆա-Թաթոսը, էին աշակերտները: Երեխայությունից այդ տիտանը ձրի ծառայում էր,

սպասավորություն էր անում տեր Թոդիկի մոտ, որպեսզի նրա շնորքից, նրա գիտությունից մի մասն ստանա, որ ինքն էլ կարողանա քահանայական փիլոնը գցել ուսին և վարժապետական աստիճանին արժանանալ: Բայց խղճալին իր կյանքում մի անգամ միայն կարողացել էր եկեղեցում «Լույս զվարթ» երգել և այն օրից միշտ պարծանքով էր հիշում այդ փառքը: Աշակերտները նրան կոչում էին «դպրոցի շուն», այն պատճառով, որ ամեն օր, ճաշից հետո, յուրաքանչյուր աշակերտի սեղանից ավելցած փշրանքը Խալֆա-Թաթոսի կերակուրն էր: Բայց այնքան բազմաթիվ աշակերտներից ավելացած պաշարը դարձյալ չէր բավականանում կշտացնելու շատակեր Խալֆայի անհագ որկորը, որ պատմական Շարայի հետ կարող էր ազատ մրցություն անել: Նա, բացի դրանից, ստանում էր կաշառքներ խեղճ աշակերտներից, որոնք ծածուկ տալիս էին նրան մի ամբողջ լավաշ, որ չծեծեր, կամ իզուր չպատժեր նրանց:

Խալֆա-Թաթոսը կոչվում էր «դպրոցի շուն» առավել այն պատճառով, որ ամենքին կծում էր, ամենի վրա հաչում էր, աշակերտները հանգստություն չունեին այդ բարբարոսի ձեռքից: Կարոն սաստիկ ատում էր նրան, օր չէր անցնում, որ մի խայտառակություն չսարքեր նրա գլխին: Տեսնում ես, հանգստի ժամանակ նա ման է գալիս դպրոցի բակումը կարգ պահպանելու համար. աշակերտները երկյուղածությամբ նայում էին նրա վրա. Կարոն դևի նման ծածուկ մոտենում է, քարշ է տալիս Խալֆայի ետևից մի աղվեսի պոչ: Նա ոչինչ չէ նկատում, շարունակում է ման գալ և աշակերտներին սպառնալ, որ հանգիստ լինեն, մինչդեռ աշակերտների մեջ տիրում է ընդհանուր ծիծաղ և հռհռոց…

Մի անգամ կեսօրից հետո վարժապետը գնացել էր քնելու. այդ ժամանակ, ամենավուր սովորության համեմատ, մեզ հավաքում էին և ածում դասատան մեջ, որ լուռ մնանք, շարժում չգործենք, որպեսզի վարժապետի քունը չխանգարվի. որովհետև նրա սենյակը կից էր մեր դասատանը: Մենք քարե արձանների նման նստած էինք: Խալֆան երկար ճիպոտը ձեռին, փառավոր կերպով անցուդարձ էր անում դասատան մեջ, որպես սուլթանն իր պալատում: Տիրում էր գերեզմանական լռություն, ճանճի թռչելն անգամ լսելի էր լինում: Կարոն նայեց նրա վրա, և իմ կողքին խթելով, ասաց.

— Տես Ֆարհատ, այդ ավանակի ականջները եթե կտրես մի ջուխտ լավ տրեխ դուրս կգա:

Վերակացուն, իհարկե, ոչինչ չլսեց, միայն Կարոյի սրախոսությունը Խալֆա-Թաթոսի ահագին ականջների մասին այնքան ճիշտ էր, որ ես չկարողացա իմ ծիծաղը զսպել, որով դարձրի իմ վրա ամբողջ դասատան ուշադրությունը:

— Չոքի՛ր,— գոռաց Խալֆան, ցույց տալով անկյունը:

Ես պատրաստվեցա կատարել հրամանը:

— Դու չե՛ս չոքի, Ֆարհատ,— ասաց Կարոն:

— Ինչո՞ւ,— հարցրեց վերակացուն, ավելի բարկանալով:

— Նրա համար, որ ես ծիծաղեցրի նրան, նա մեղ չունի,— պատասխանեց Կարոն:

— Ուրեմն, երկուսդ չոքեցեք,— ասաց վերակացուն, կրկին անկյունը ցույց տալով:

— Ոչ ես կչոքեմ, ոչ նա,— պատասխանեց Կարոն վրդովված ձայնով:

Ես նկատեցի, Կարոն գունաթափվեցավ, նրա ձեռքերը սկսեցին դողդողալ և աչքերը լցվեցան արյունով.— դրանք նրա կատաղության նշաններն էին: Չգիտեմ, վերակացուն այլևս ինչ խոսեց, միայն այն տեսա, որպես վագրը թռչում է փղի պարանոցի վրա և իր սուր ճանկերով բռնում է նրա կոկորդից, նույնպես և Կարոն բռնեց վերակացուի վզից, և մի քանի պտույտներից հետո, ահագին Գոլիաթը գլորվեցավ գետին… Կարոյի երկաթե մատները սեղմվեցան նրա կոկորդի վրա և ողորմելին սկսեց խռխռալ… Հետո թռչելով շնչասպառ Խալֆայի կուրծքի վրա Կարոն Ասաց.

— Տե՛ս, ես այստեղ կչոքեմ…

Ամբողջ դասատունը հավաքվելով, հազիվ կարողացան ազատել թշվառ Խալֆային Կարոյի ճանկերից, որը այնուհետև մինչև կես ժամ ուշաթափ մնաց:

Կարոն առանց մի խոսք խոսելու, նույն րոպեում թողեց դպրոցը և կրկին չվերադարձավ այնտեղ…

Ժ

ՁԵՆՔԵՐ

Թողնելով դպրոցը, այնուհետև Կարոն վարում էր լի փորձանքներով թափառական կյանք: Շատերը նրան համարում էին ցնորված: Լինում էր, շատ անգամ Կարոյի տատը, բոլորովին հուսահատ, բոլորովին շվարած, մութ գիշերային պահուն, գալիս էրինձ մոտ.— «Ֆարհատ, էլի չէ երևում նա»… ասում էր խեղճ պառավը ու թափում էր աչքերից ջերմ արտասուքը:

Ես գնում էի որոնելու նրան: Ո՞րտեղ ասես չէի պտռում, և գտնում էի շատ անգամ պառկած բարձր, սարսափելի քարաժայռի վրա, և կամ լուռ մտախոհության մեջ, նստած հեղեղատի ափի մոտ, հափշտակված էր լինում, աստված գիտե, որպիսի ցնորքներով…

Ի՞նչ էր նրա դարդը, ի՞նչ էր, որ դուրս էր հալածում անբախտ պատանուն մարդկային բնակությունից:— Ես չգիտեի, միայն նկատում էի, որ նա տանջվում էր ներքին, հոգեկան անհանգստությամբ, և կարծես, իր վշտերը մոռացության տալու համար փախչում էր դեպի սարերը, դաշտերը, անտառները,— առանձնություն և ամայություն էր որոնում:

Ես նրանից չէի հարցնում պատճառը, որովհետև գիտեի նրա բնավորությունը, մի բան որ նա ինքը հայտնել չէր ուզում, եթե հարցնեիր, իսկույն կսկսեր բարկանալ: Ես հարցրի Ասլանից, նա Ասլանին ինձանից ավելի խելացի էր համարում և շատ բաների մեջ նրա հետ խորհուրդ էր անում: Բայց Ասլանի հաղորդած տեղեկությունները այնքան մթին էին, որ կարոտ էին առանձին բացատրության:

— Ես էլ չգիտեմ,— ասաց Ասլանը,— թե ինչ սատանա է մտել նրա սրտի մեջ. սիրահարված լինել նա չէր կարող, որովհետև այդ հասակում սերը ջահիլ տղին չէ գժվացնում:

Հետո նա պատմեց, թե սուրբ Հովհաննու մատուռի տոնախմբության օրը (մի ամիս անցել էր այն օրից) Կարոն էլ ուխտավորների թվումն էր: Այնտեղ հավաքվել էին

Սալմաստա ամբողջ գավառից ոչ միայն հայեր, այլ բազմաթիվ օտարազգիներ ևս: Տոների սովորական հանդեսների համեմատ կատարվեցան զանազան խաղեր: Բոլոր մրցությունների մեջ, որ տղամարդիկ իրանց շնորհքը ցույց տալու համար կատարում են այս տեսակ հանդեսներում, Կարոն նշանավոր գտնվեցավ: Ձիարշավների մեջ նա բոլորին հաղթեց, ըմբիշների մեջ իր հասակակիցներից մեկը չգտնվեցավ, որ նրա կողքը գետնին խփեր. մուշտեկռիվի մեջ բոլորը փախչում էին նրա առջևից, վազ տալու մեջ նա եղջերուից ավելի արագավազ էր, մի խոսքով, բոլոր խաղերի մեջ նա ցույց տվեց զարմանալի ճարպկություններ: Կարոյի այդ արիությունները նրա վրա դարձրին հանդիսականներից մեկի, որսորդ Ավոյի ուշադրությունը, որ համբուրեց նրա ճակատը և հրավիրեց իր մոտ ճաշ ուտելու: Այնտեղ հավաքված էին մի քանի անծանոթ, կասկածավոր մարդիկ: Կարոն նրանց մեջ չափազանց ուրախ էր, անդադար երգում էր, մինչև անգամ պար էր գալիս: Նա մնաց որսորդի մոտ ամբողջ գիշերը, բոլորովին մոռանալով Ասլանին, որի հետ միասին սուրբ Հովհաննես ուխտ էին գնացած:- Ահա բոլորը, ինչ որ կարողացավ հաղորդել ինձ Ասլանը և ավելացրեց.

— Այն օրից, երբ Կարոն հարաբերություններ սկսեց որսորդի հետ, նրա մեջ նկատվում են շատ փոփոխություններ:

— Երկա՞ր ժամանակ է, որ նա ծանոթություն ունի որսորդի հետ,— հարցրի ես:

— Դպրոցը թողնելուց հետո,- պատասխանեց Ասլանը,— և այդ ծանոթությունը բոլորովին խելքից հանեց Կարոյին:

Ես այն ժամանակ չէի կարողանում հասկանալ, թե ի՞նչով որսորդը կարող էր Կարոյին խելքից հանել: Որսորդը մեր դրացին էր և ամենալավ դրացին, ես երեխայությունից ճանաչում էի նրան. նա մի այնպիսի մթին, լուռ, խորամիտ մարդ էր, որ հազիվ թե կբացվեր մեկի հետ, ուր մնաց Կարոյի նման անփորձ պատանու հետ: Նրանից անկարելի էր մի բան հասկանալ: Ես այսքանը միայն գիտեի, որ նա շատ բարի մարդ էր, թեև ուրիշները նրան վատ էին համարում, և մի այսպիսի բարի մարդը ոչ ոքին խելքից չէր հանի, ոչ ոքին չար ճանապարհի վրա չէր տանի:

Ինքս էլ էի նկատում, որ Կարոն խիստ հաճախ անգամ գնում էր որսորդի խրճիթը, երբեմն ես էլ նրա հետ էի լինում, երբ օրը կիրակի էր և դպրոցից ազատ էի: Որսորդը տալիս էր մեզ վառոդ, որպես երեխաներ, խաղ անելու համար. մենք նրանից շինում էինք ֆշանքներ և թռցնում էինք օդի մեջ. այդ մեծ զվարճություն էր պատճառում մեզ: Երբեմն իր հրացանն էր տալիս, մեզ վարժեցնում էր, թե որպես պետք էր լցնել, որպես պետք էր արձակել, կամ որպես պետք էր նպատակին դիպցնել:- «Սովորեցեք, ասում էր նա, մի օր ձեզ հարկավոր կլինի հրացանը»… Շատ անգամ Կարոյին տանում էր իր հետ որսի, երբ մոտ տեղ էր գնում, բայց ինձ ամենևին չէր տանում, որովհետև ես շուտով հոգնում էի:

Ես սաստիկ սեր ունեի դեպի հրացան գործիքները. վառոդի խեղդող ծուխն անգամ ախորժ էր թվում ինձ: Բայց մենք այնքան աղքատ էինք, որ ես չէի կարող գնել երկաթից շինված հրացան զենքեր, ես այսպիսի զենքերը ինքս էի պատրաստում եզան կամ ոչխարի ոտքերի ոսկորներից: Կտրելով ոսկորի մի ծայրը, և մյուս ծայրում մի ծակ բաց անելով, իմ թվանքի խողովակն արդեն պատրաստ էր. հետո խիստ ճարտարությամբ հագցնում էի նրան մի կտոր փայտի մեջ, որը ծառայում էր կոթի տեղ, և պինդ կապում էի թելով: Մինչև այսօր իմ աջ հոնքի ծայրին մնացել է փոքրիկ սպի, տեսնողը կմտածե, թե խենջալով ծակած են, բայց ոչ, իմ ոսկրյա հրացանը երբ պայթեց, նա թողեց երեսիս վրա այդ նշանը: Մայրս սաստիկ բարկացավ, երբ պատահեց ինձ այդ վերքը:— «Գրո՛ղը տանե քեզ,— ասաց նա,— դու վերջը վառոդով պիտի մեռնես»… և արգելեց զենքերի հետ խաղալ: Այդ պատճառով, երբ իմ քեռի

Մինասը ընծայեց ինձ մի փոքրիկ հրացան, ես մորս երկյուղից մեր տունը չբերեցի, այլ ծածուկ պահում էի Կարոյենց տանը, և գնում էի այնտեղ, միասին բանեցնում էինք:

Ես չեմ կարող ճշտությամբ բացատրել, արդյոք ինչի՞ց էր, որ ես սիրում էի զենքեր. արդյոք նրա համար, որ քեռիներիս արհեստանոցում միշտ զենքեր էի տեսնում. արդյոք նրա համար, որ որսորդը միշտ հրապուրում էր ինձ իր վառոդով և հրացանով, թե նրա համար, որ իմ ընկեր Կարոն նույնպես սիրում էր զենքեր:— Ոչ այս և ոչ մյուսը, այլ ես կարծում եմ, որ ամեն երեխայի բնության մեջ կա այդ սերը, նախքան մարդ լինելը նա ձգտում է զինվոր լինել. և եթե վերջը հանգչում է նրա մեջ այդ զգացմունքը, դրա պատճառն է կյանքը և տարապայման կրթությունը…

Երբ վարժապետս առաջին անգամ տվեց իմ ձեռքը փետուրե գրիչը, իմ մեջ ծագեց մի ծիծաղելի միտք.— «Ի՞նչ լավ կլիներ, որ այդ գրիչը փոքր-ինչ հաստ ու պինդ լիներ, ես նրանից հրացան կշինեի, կոթ էլ չէր ուզենա»… Իմ մտածությունը թեև երեխայական էր, բայց համեմատությունը սխալ չէր, որովհետև փետուրե գրիչն էլ հրացանի խողովակի ձև ունի: Իսկ փայտից խենջար, թուր, սուր, աղեղն, նետ, նիզակ և այլ զենքեր շինելու մեջ ես կատարյալ վարպետ էի. այդ էր պատճառը, որ որսորդն աշխատում էր համոզել մորս, որ նա հանձներ ինձ քեռիներիս արհեստանոցը, զենք շինել սովորեի: Բայց մայրս չէր համաձայնվում. նա մինչև անգամ մեղք էր համարում սովորելը այն արհեստի, որ պատրաստում է մարդիկ կոտորելու գործիքներ: Տեր Թոդիկն էլ միևնույնն էր կրկնում:

Բայց Կարոն ինձանից ավելի ազատ և ավելի բախտավոր էր, նա ոչ մայր ուներ, ոչ հայր և ոչ էլ վարժապետ. ոչ ոք նրան չէր արգելում հետևել բնության ձայնին. տատը չէր ճնշում նրան, և որսորդի ազդեցության ներքո նա դարձավ բոլորովին ուրիշ տղա, քան էին նրա բոլոր ընկերները: Այն օրից, որ թողեց դպրոցը, ես ինքս մեծ փոփոխություն էի տեսնում նրա մեջ: Ես լսում էի նրանից ինձ համար շատ անհասկանալի խոսքեր. մի անգամ ասաց նա.

— Ֆարհատ, մեր գյուղացիները շատ աղքատ են, կան ընտանիքներ, որ հաց չունեն ուտելու:

— Դու ի՞նչ գիտես,— հարցրի ես:

— Որսորդի հետ երեկ ման եկանք մի քանի գյուղեր. նա ինձ ներս տարավ գյուղացիների խրճիթները. ես տեսա սարսափելի չքավորություն:

— Ի՞նչ է պատճառը:

— Այդ մահմեդականները մեր գյուղացիների արյունը ծծում են: Այդ խաները, բեգերը նրանց կյանքը բոլորովին մաշում են: Որսորդը ինձ բացատրում էր, թե ինչ պետք է արած, որ գյուղացիները ավելի հանգիստ և ավելի կուշտ լինեն:

Ես ոչինչ չպատասխանեցի, նա շարունակեց.

— Ֆարհատ, քանի օր առաջ տեսա, մի գյուղացու կապած, ծեծում էին նրա համար, որ չէր գնացել խանի համար ձրի բանելու: Խեղճը իր ընտանիքի միակ աշխատող մարդն է, եթե նա միշտ խանի համար ձրի բանե, էլ ո՞վ կկերակրե նրա երեխաները Ֆարհատ, հենց որ տեսա, սիրտս այրվեց, էլ չկարողացա արտասուքս պահել…

Ահա այսպես, միշտ գյուղացիներ, միշտ գյուղացիների մասին էր խոսում նա: Ես մտածում էի, թե խեղճ տղան ցնորվել է. նրան ի՞նչ փույթ, որ գյուղացիները ուտելու հաց չունեն կամ նրանց տանջում են: Լավ չէ՞, ասում էի, որ իր փորի համար մտածե. ինքը ավելի բախտավոր չէ այն թշվառներից, որոնք գիշերները սոված են պառկում:

Իհարկե, այդ մեծ փոփոխություն էր Կարոյի բնավորության մեջ: Նա առաջ սովորություն ուներ խոսել Քորօղլիի, Ռուստամի, Զալի և դրանց նման հերոսների մասին, որոնց պատմությունը լսել էր աշուղների վեպերի մեջ,— կամ խոսում էր գեղեցիկ աղջիկների վրա և ծաղրում էր նրանց այս և այն թուլությունները: Հանկարծ բոլորը մոռացավ նա, սկսեց գյուղացիների մասին խոսել, նրանց վրա մտածել: Ո՞վ մտցրեց նրա մեջ այդ ցնորքը:— Ես չգիտեի, միայն Ասլանը վերաբերում էր որսորդ Ավոյին:

ԺԱ

ՂԱՐԱ-ՄԵԼԻՔՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Մի անգամ Կարոն ինձ ասաց.— Ֆարհատ, տատս շատ հիվանդ է, ես մենակ եմ, գնանք մեր տուն, այս գիշեր մեզ մոտ կացիր:

Ես գնացի: Կարոյենց բնակարանը շատ հեռու չէր մեր տնից:

Ես գտա Զումրուդին, արդարև, ծանր հիվանդության մեջ. խեղճ կնոջ միայն մորթն ու ոսկորն էր մնացել. շունչը հազիվ ելումուտ էր անում: Երբ մեզ տեսավ նա, փոքր-ինչ հոգի առավ, խնդրեց գլուխը վեր բարձրացնել և բարձերը նեցուկ տալ մեջքին, որ կարողանա նստել: Կարոն կատարեց նրա ցանկությունը: Հնոցի մեջ վառվում էին մի քանի կտոր փայտեր, և կարմիր լույսը ծավալվելով փոքրիկ խրճիթի մեջ, լուսավորում էր հիվանդի մաշված, դալկացած դեմքը:

Հիվանդը կանչեց Կարոյին, նստեցրեց իր մոտ, և նրա ձեռքը առնելով իր ոսկրացած ափի մեջ, ասաց թույլ և դողդոջուն ձայնով.

— Ես մեռնում եմ, Կարո, քանի որ բերանս փակված չէ, թող լեզուս բաց անե քեզ այն գաղտնիքը, որ այսքան տարի ծածուկ էր պահված:

Նա պատմեց, թե ինքը Կարոյի ոչ տատն է, ոչ նրա ազգականը, այլ սկզբում Կարոյի հոր տան աղախինն է եղել, իսկ հետո դարձավ նրա դայակը: Նա պատմեց, թե Կարոյի հայրը կոչվում էր Միր-Մարտո, նա պատկանում էր Ղարա-մելիքների ընտանիքին, որ սերված էր Հայոց մի հին իշխանական տոհմից: Դարերի ընթացքում այդ տոհմի բախտը նույնքան փոփոխության է ենթարկվել, որքան փոփոխական, հեղհեղուկ է եղել Հայաստանի դրությունը: Նա բարձրացել և խոնարհվել է իշխանության, աստիճանի բոլոր ելևէջների մեջ, երբեմն տիրող իշխան, երբեմն հասարակ տանուտեր, երբեմն տաժանակիր հողագործ,— բայց երբեք չէ կորցրել իր ազնվապետական ոգին: Պարսից մարզպանների ժամանակ այդ տոհմը դեռ պահպանել էր հզոր նախարարի արտոնությունները, բայց արաբացոց արշավանքների ժամանակ նա բավական ընկավ, երբ այդ ցեղի նշանավոր իշխանները բռնվելով, տարվեցան Դամասկոս և այնտեղ գլխատվեցան: Նրա մի ճյուղը բոլորովին ոչնչացավ հունաց Կյուրապաղատների օրերում: Մոնղոլական արշավանքների ժամանակ այդ ցեղերից մի տղամարդ, որ իր թուխ դեմքի պատճառով ստացել էր թաթարների խանից «Ղարա-մելիք» կոչումը, կրկին զորացավ: Նրա անունով այդ տոհմի ներկայացուցիչները սկսվեցան կոչվիլ Ղարա-մելիքներ:

Հայաստանի հեղաշրջումների փոթորիկների մեջ այդ տոհմը անդադար արմատախիլ լինելով հայրենի երկրից, տարուբերվել է երբեմն Արարատ, երբեմն Վասպուրական, երբեմն Ատրպատական և երբեմն Փոքր-Հայքի կողմերը: Իսկ վերջին դարերում, երբ Վասպուրականի մեջ զորացան քրդերը, Ղարա-մելիքներից

մեկը, Մարաշի կողմերից փախստական գալով, հաստատվեցավ Վանա ծովակի հարավային ափերի մոտ: Քուրդ ցեղապետների հետ դաշնակցելով, նա հետզհետե ընդարձակեց իր իշխանությունը և տիրում էր ամբողջ Ռշտունյաց գավառի վրա:— Դա էր Կարոյի հայրը՝ Միր-Մարտոն: «Միր» տիտղոսը ստացավ նա քրդերից, որ նշանակում է տեր, իշխան, պետ: Նրա հզոր ամրոցը գտնվում էր Ոստանի մոտ, մի լեռան անմատչելի բարձրավանդակի վրա, մի կողմից ծփում էր ծովակը, մյուս կողմից, շրջապատած էր սարերի պարսպաձև շղթաներով:

Միր-Մարտոն, որպես տեղային հայերի պետը, էր միևնույն ժամանակ ամենահարուստ մարդը ամբողջ գավառի մեջ: նա ուներ մի առանձին սնահավատություն դեպի յոթնյակ թիվը և այդ պատճառով իր բոլոր հարստությունը բաժանած էր յոթն մասների վրա: Նա ուներ յոթն ջրաղաց, յոթն ձիթհան, յոթն այգի, յոթն անտառ: Նրա տնից դուրս էր գալիս յոթն գութան, որ մշակում էին յոթն անգամ յոթանասուն օրավար հող: Նրա սեփական արոտատեղերում արածում էին յոթն հոտ ոչխարներ, յուրաքանչյուր հոտը միագույն, մեկը ճերմակ, մյուսը սև, երրորդը շիկագույն, չորրորդը խայտաճամուկ, հինգերորդը մոխրագույն և այլն: Նույն խորհրդավոր թիվն ունեին նրա ձիերի, կովերի, գոմեշների երամակները: Այդ բոլորը պիտի մնար որպես ժառանգություն նրա յոթն որդիներին, որոնցից ամենակրտսերն էր Կարոն:

Միր-Մարտոյի օրըստօրե զորանալը, նրա հաջողությունները մշտական կռիվների մեջ, գրգռեց մի հարևան քուրդ ցեղապետի նախանձը: Նա չկարողանալով բացարձակ կերպով վնասել նրան, սկսեց դիմել խորամանկության. բարեկամություն հաստատեց Միրի հետ, ձևացրեց իրան նրա ամենամտերիմ դաշնակից: Եվ մի անգամ, խաբեությամբ Միրին իր մոտ հյուր կանչելով, ընթրիքի ժամանակ հրամայեց նրան ցած գլորել իր բերդի բարձրությունից:

Կարոյի հայրը այսպես նենգությամբ սպանվելեն հետո, նրա ամբողջ ընտանիքը զոհ եղավ քուրդ բռնակալի բարբարոսությանը, բոլորը սրից անցան, ողջ մնաց միայն փոքրիկ Կարոն, որին իր դայակը — Զումրուդը — փախցնելով, թաքցրեց մի ասորու տան մեջ:

Հիվանդը վերջացրեց իր պատմությունը այս խոսքերով.

— Այն սարսափելի կոտորածի միջոցին, քո մայրը, Կարո, կուրծքից խենջարով խոցված, մի ձեռքով բռնել էր վերքը, մյուս ձեռքով քեզ հանձնեց ինձ, ասելով. «Ա՛ռ, Զումրուդ, եթե աստված կհաջողե ազատել երեխայիս, սովորեցո՛ւր նրան վրեժխնդիր լինել»… Այդ խոսքերի հետ նազելի տիկինս ավանդեց հոգին:

Բոլոր պատմության ժամանակ Կարոն հանգիստ էր. նրա դեմքի վրա ես նկատում էի մի տեսակ զարմացում, մի տեսակ ապշություն, որ առաջ էին գալիս անագան ինքնաճանաչության զգացմունքից: Անտեր, անտուն, թափառաշրջիկ պատանին հանկարծ զգում էր իր երակների մեջ իշխանական արյան հոսումը: Բայց երբ նա լսեց պառավի վերջին խոսքերը, նրա դեմքի արտահայտությունը իսկույն փոխվեցավ. շրթունքը սկսեց դողդողալ, աչքերի մեջ փայլեց կատաղի բարկություն: Կարծես այն լուռ, զայրացած դեմքի վրա ես կարդում լինեի — «Երդվում եմ իմ մոր սուրբ հիշատակով, որ ես անպատճառ վրեժխնդիր կլինեմ»…

— Ես չկարողացա ավելի վաղ հայտնել քեզ, Կարո, մորդ կտակը,— շարունակեց պառավը,— որովհետև դու շատ փոքր էիր: Սպասում էի, մինչև մեծանաս, մինչև ավելի հասունանաս: Ես ոչինչ չկարողացա սովորեցնել քեզ: Բայց քո հոր պատմությունը բավական է վրեժխնդրության դաս լինելու համար: Ես մեռնում եմ հանգիստ սրտով, որովհետև գիտեմ, ինձանից հետո մի ավելի հմուտ, ավելի փորձված ձեռք քեզ պիտի առնե իր պաշտպանության ներքո: Լսի՛ր նրա խրատները

և ոգևորությամբ ընդունիր, ինչ որ կներշնչե նա քո մեջ: Այդ ազնիվ մարդը քո հոր բարեկամն է և նրա գավառի հինգ տանուտերներից մեկը: Նա ևս ենթարկվեցավ միևնույն բարբարոսություններին, քո հոր տունը բնաջինջ լինելուց հետո: Այդ պատմությունը գուցե նա ինքը կհաղորդե քեզ:

Պառավի վերջին խոսքերը որսորդ Ավոյի մասին էին: Ուրեմն նա հասարակ մարդ չէր. որսորդի ծպտյալ դիմակի տակ ծածկված էր մի խորհրդավոր անձնավորություն: Այդ րոպեից ես հասկացա նրա առանձին ուշադրության գաղտնիքը, որ ուներ դեպի Կարոն:

— Այժմ փակի՛ր իմ աչքերը,— շարունակեց հիվանդը, գլուխը ցած թողնելով բարձի վրա:— Եթե կուզես կրկին ձեռք բերել քո հոր իշխանությունը, դու կգտնես այն փոքրիկ սնդուկի մեջ բոլորը, ինչ որ քեզ հարկավոր է…

Նա աշխատեց ձեռքը մեկնել դեպի պատուհանը, ուր դրած էր փոքրիկ սնդուկը, բայց ձեռքը թուլացավ, ընկավ վերմակի վրա: Նրա աչքերը կրկին բացվեցան և անշարժ նայում էին դեպի երկինքը: Կարծես այնտեղ, վերին երկնակամարի այն կողմը, նրա առջև բացված լիներ հավիտենական աթոռը, և նա շնորհ, զորություն, հաջողություն էր մաղթում այն էակի համար, որին իր ձեռքով էր սնուցել, իր բազուկների վրա էր մեծացրել:

Նրա ալևոր գլուխը թեքվեցավ, երեսի վրա երևացին մի քանի ցնցումներ, աչքերը դարձյալ փակվեցան…

— Նա մեռա՛վ…— բացականչեց Կարոն, առանց մի կաթիլ արտասուք անգամ աչքից թափելու:

Ես զարմանում էի նրա քարասրտության վրա: Որպես սառնությամբ լսեց այդ բոլորը: Կարծես, նա ամենը գիտեր, կարծես դայակի պատմածները նրա համար նոր բաներ չլինեին: Բայց նա ոչինչ չգիտեր իր ծագումի մասին, նա իրան համարում էր պառավ Զումրուդի թոռը:

Ես սխալվում էի: Կարոն բոլորովին հանգիստ չէր: Նրա կերպարանքի գունաթափ, միևնույն ժամանակ խաղաղ կեղևի տակ բորբոքվում էր մի սարսափելի կրակ, որ նմանում էր ծածկված հրաբուխի: Նրա սիրտը փոթորկվում էր կատաղի խռովության մեջ: Ես այն ժամանակ չէի կարող հասկանալ նրա բնավորության բոլոր զորությունը, թե որքան զգացմունք, որքան կամքի ուժ կար այն անչափահաս պատանու մեջ, իսկ այժմ բոլորը հասկանում են, նա ծածկեց մեռնող կնոջ երեսը, և մի քանի րոպե լուռ ու անշարժ նստած էր նրա մոտ:

Ես բաց արի այն փոքրիկ արկղիկը, որը հիվանդը ցույց տվեց իր հոգեվարքի միջոցին: Նա լիքն էր զանազան հին, ցեց կերած թերթերով, որոնք գրված էին պարսից, արաբացոց, հունաց, թուրքաց և հայոց լեզուներով: Նրանց վրա դրոշմված էին մեծ և փոքր կնիքներ: Մագաղաթի գրվածքը դարերի ընթացքում բոլորովին գունատվել և մուգ-դեղին գույն էր ստացել: Կարոն խլեց իմ ձեռքից հրովարտակները և բոլորը միասին նետեց հնոցի մեջ: Կրակը բորբոքվեց, և Ղարա-մելիքների ավելի քան հազար տարվա տոհմային վկայականները մոխիր դարձան:

— Ինձ պետք չէ արտոնական իշխանությունը, որ իբրև ողորմություն շնորհված է եղել իմ պապերին,— ասաց Կարոն խորին վրդովմունքով:— Ես պիտի աշխատեմ չսովորել մուրացկանություն: Եթե կհաջողվի ինձ կրկին ձեռք բերել այն, ինչ որ կորցրել են իմ նախնիքը պետք է լինի իմ սեփական ջանքով: Սրով, բռնի ուժով խլածը պետք է սրով վերադարձնել: Բայց ինչ որ ամենաթանկագինն է ինձ համար,—

դա է իմ ծնողների արյունը։— Ահա՛ ամենագլխավոր պահանջը, որ պիտի տուժել տամ մեր թշնամիներին…

Այդ խոսքերը զարթեցրին իմ հիմար գլխում մի միտք, որ մինչև այն րոպեն մնացել էր խուլ, անշարժ, անկերպարան։ Մի՞թե իմ հոր արյունը նույնպես չէր բողոքում արդարության ատյանի առջև, մի՞թե նա գերեզմանից չէր կոչում որդուն վրեժխնդիր լինել։ Թուրքը թուրքի հետ գրազ եկավ և իր սրի զորությունը փորձելու համար, մի հարվածով կտրեց իմ հոր պարանոցը և ստացավ մի ֆինջան ղահվե… Ո՛րքան նախատինք, ո՛րքան ցածություն էր այդ, իր կյանքով լինել առարկա մի այդպիսի բարբարոսական կատակի…

Հնոցի մեջ մագաղաթը դեռ այրվում էր, կապտագույն բոցերը դեռ պլպլում էին։

— Տե՛ս, այլևս ի՞նչ կա այնտեղ,— հարցրեց Կարոն, ցույց տալով սնդուկը։

Հատակի վրա մնացել էր փղոսկրյա մի տուփ. ես բաց արի տուփը. նրա մեջ դրած էր մի փոքրիկ մեդալիոն, ոսկուց շինած և ադամանդներով զարդարած, որի վրա հմուտ ճարտարությամբ նկարված էր մի գեղեցիկ կանացի գլուխ։ Այդ Կարոյի մոր պատկերն էր, նա առեց իմ ձեռքից մեդալիոնը, մի քանի վայրկյան նայեց նրա վրա, հետո թաքցրեց իր ծոցում։ Այն ժամանակ միայն նկատեցի՝ նրա աչքերից գլորվեցան մի քանի կաթիլ արտասուք գունաթափ, տխուր դեմքի վրա։

Նա իսկույն սրբեց արտասուքը, որ ես չտեսնեմ, դարձավ դեպ ինձ, ասելով.

— Երդվիր, Ֆարհատ, որ այդ բոլորը, ինչ որ լսեցիր, ինչ որ տեսար այստեղ, կմնան քեզ մոտ որպես գաղտնիք։

Ես երդվեցա։

Այդ անցքից երեք օր հետո Զումրուդին թաղեցին։ Ամբողջ քաղաքը ցավեց նրա համար։ Նա իբրև բժիշկ այնքան բարի էր, որ չկար մի աղքատ, որ նրա օգնությունը վայելած չլիներ։

Նրա թաղումից հետո Կարոն այլևս չերևաց։ Կարոյի հետ անհայտացան մեր քաղաքից երեք հոգի — որսորդ Ավոն, Ասլանը և Սագոն։ Ո՛ւր գնացին,— ոչ ոք չգիտեր…

ԺԲ

ՄԹԻՆ ԳԱՂՏՆԻՔ

Դառնանք դեպի մեր պատմությունը։

Վաղ առավոտյան, դեռ արևը չծագած, ես զարթեցա։ Ես ինձ գտա խորհրդավոր մինարեթում, պառկած ցամաք տերևներից կազմված անկողնի վրա։ Գլխիս տակին, բարձի փոխարեն, դրած էր մի խուրձ խոտ։ Կարոյի վերարկուն ծածկում էր ինձ վերմակի տեղ։ Երևում էր, ընկերներս խնամք էին տարել իմ հանգստության համար, որովհետև դեռ չէի սովորած բացօթյա կյանքի խստություններին։

Երկու զեյթունցիները չկային։ Մյուսները՝ Կարոն, Ասլանը, Սագոն — դեռ քնած էին մերկ գետնի վրա, առանց ծածկոցների։ Նրանց քունը ծանր էր և խորին։ Ինձ երևում էր, թե ամբողջ գիշերը արթուն էին մնացած. երևում էր, հենց նոր դարձել էին մի հեռու տեղից… որովհետև նրանց տրեխների ցեխը դեռ թաց էր։ Նրանք պառկել էին

առանց հանվելու, իրանց հագուստով, մինչև անգամ ոտնամաններով: Նրանք կրած ունեին և զենքեր, բայց գիշերը, թե ընթրիքի ժամանակ, թե վիճաբանության միջոցին, նրանց վրա զենքեր չտեսա, բացի մի-մի դաշույնից: Ուրեմն նրանք գիշերը այստեղ չէին մնացած, մտածում էի ես, ուրեմն ինձ հարբեցրին, քնացրին, որ չիմանամ, թե դեպի ո՛ր կողմն են արշավանք գործում…

Բայց ո՞րտեղ կորան այն երկու ծածկամիտ զեյթունցիները, ինչո՞ւ չմնացին այստեղ, ինչո՞ւ Կարոն չծանոթացրեց ինձ նրանց հետ և ոչ ասաց, թե նրանք ովքեր են… Մի՞թե նա չի հավատում ինձ: Ահա այդ հարցերը զբաղեցրին իմ միտքը, երբ առավոտյան զարթեցա խորհրդավոր մինարեթի մեջ:

Ինձ թվում էր, թե ես ընկած եմ մի կախարդված ամրոցի ավերակների մեջ, թե մի դյութական ձեռք ինձ բերեց այդ դիվաբնակ ավերակներում, թե Կարոն, Ասլանը, Սագոն,— այդ բոլորը առաչոք և խաբեական պատկերներ էին:— «Չէ՛, մտածում էի ես, թողնեմ, փախչեմ և հեռանամ այստեղից, գնամ մորս մոտ, հնազանդ գլուխս խոնարհեցնեմ նրա առջև և ասեմ. «ես քեզանից չեմ հեռանա, միշտ կաշխատեմ քեզ համար և քույրերիս համար, միայն ինձ վարժատուն մի՛ ուղարկիր»:

Իսկ երբ վարժապետիս սարսափելի պատկերը աչքիս առջևն էր գալիս, իսկույն սթափվում էի, կրկին լուծվում էր դյութական թիլիսմանը, և ես զգում էի, թե իրականության մեջ եմ գտնվում, թե այս բոլորը, ինչ որ տեսնում էի, երևակայության ցնորքներ չէին: Իսկույն փոխում էի միտքս.— «Չէ՛, ասում էի, երազ չէ իմ տեսածը և ոչ կախարդություն, դրանք իմ լավ ընկերներն են՝ Ասլանը հրեշտակի սիրտ ունի, Կարոն հենց վարժարանում եղած ժամանակ սիրում էր ինձ, Սագոն նույնպես բարի տղա է, նրա սիրտը այն չէ, ինչ որ լեզուն է: Չէ՛, կմնամ այստեղ, դրանցից չեմ բաժանվի»…

Մինչև ես այսպիսի խորհրդածությունների մեջ էի, աչքս ընկավ պառկած ընկերներիս վրա. չգիտեմ ինչո՞ւ ես հիշեցի մի զրույց, որ շատ անգամ լսել էի տատիս հեքիաթների մեջ: Ինձ երևաց, որպես թե, այդ երեք երիտասարդները երեք հսկաների ձագեր լինեին, որոնց մայրը կաթի փոխարեն կերակրում էր ադամորդու արյունով… Ո՞րտեղից ծագեց իմ մտքում մի այդպիսի օտարոտի համեմատություն…

Կարոյի քունը անհանգիստ էր. երևում էր, նա գտնվում է երազների սարսափելի խռովության մեջ.— «Կսպանեմ, թե չտաս» — «ո՞ւր ես փախչում» — «իմ գնդակը ավելի սրընթաց է, քան քո ոտները» — «Ասլա՛ն, սատկացրու նրան» — «Սագո, զգույշ, մարդ չտեսնե» — «նրանք այս կողմից փախան»… Ահա այսպիսի անկապ խոսքեր էին լսվում նրա բերանից: Նա խոսում էր խառն, զանազան արևելյան լեզուներով:

Ասլանի քունը հանգիստ էր, որպես երեխայի քուն: Երբեմն նրա գեղեցիկ շրթունքը ցնցվում էր թեթև ժպիտով: Նա լուռ էր: Մի անգամ միայն նա արտասանեց անունը «Սոնա»:— Խե՛ղճ տղա, մտածում էի ես, նա ինձանից առաջ սիրում էր նրան… գուցե այժմ տակավին սիրում է…

Սագոն իր երազների մեջ նույնպես ծիծաղելի էր, որպես արթուն ժամանակը. մեկին ջիգրացնում է նա: Նրա դեմքի վրա նկատվում էին հեգնական ծամածռություններ:

Արշալույսը սկսել էր շառագունել: Ամեն կողմից լսելի էին լինում թռչունների ուրախ, ծլվլուն երգերը: Մինարեթի վերի հարկերում բուն դրած վայրենի աղավնիները այս կողմ և այն կողմ էին թռչկոտում և նրանց թևքերի թափ տալուց աշտարակի կամարները թնդում էին խուլ որոտմունքով:

Ես ձանձրացա երկար պառկելուց, վեր կացա, մոտեցա Կարոյին և, նրա վերարկուն իր վրան ծածկելով, կանգնեցա նրա մոտ: Նա տարածված էր գետնի վրա, որպես մի ահագին պղնձե արձան, մթին, հսկայատիպ կերպարանքով: Նրա լայն կուրծքը անհանգիստ կերպով բարձրանում և ցածրանում էր: Երկար ես խորին պատկառանքով նայում էի այդ վեհափառ պատկերի վրա, մինչև իմ սիրտը լցվեցավ մի ջերմ, եղբայրական զգացմունքով. ես խոնարհվեցա և մի համբույր քաղեցի այն շրթունքներից, որոնցից շատ անգամ լսել էի այդ խոսքերը. «Ֆարհատ, ես քեզ շատ եմ սիրում»: Նա մի թեթև շարժում գործեց և կրկին խորասուզվեցավ ծանր քնի մեջ: Ես հեռացա:

Դեռ երեխայության ժամանակից, այն ավերակները, որոնցով շրջապատված էի, այն միևարեթը, որի մեջ այժմ գտնվում էի, միշտ մի առանձին դյութական տպավորություն էին գործում ինձ վրա: Ես լսել էի նրանց մասին շատ առասպելական զրույցներ: Բայց առաջին անգամն էր, որ գտնվում էի այնտեղ, թեև այդ ավերակներն ունեին մեր քաղաքից հազիվ քառորդ մղոն հեռավորություն: Մարդիկ, մի առանձին սնահավատությամբ, վախենում էին մոտենալ նրանց: Բայց նույն ժամուն ինձ ևս անհասկանալի մի հետաքրքրություն քարշում էր իմ սիրտը դեպի վեր, դեպի այն հսկայական շինվածքի գագաթը. այնտեղից ես ցանկանում էի նայել դեպի աստուծո գեղեցիկ աշխարհը:

Խորին երկյուղածությամբ ես ոտք կոխեցի առաջին սանդուղքի վրա, սկսեցի բարձրանալ: Ամեն տեղ տիրում էր դատարկություն. ամեն տեղ ոչ այնքան ժամանակը, որքան կույր խառնիճաղանջի մոլեռանդությունը ավերակ էր դարձրել ճարտարության այն հրաշալի գործը, համարելով նրան մի կախարդված մնացորդ «ջինների» թագուհու ամրոցից: Ես բոլորովին հոգնեցա, մինչև հասա միևարեթի գագաթը: Ա՛խ, որքան բարձր էր նա: Ամբողջ Սալմաստը, լուսավորված արեգակի առաջին ճառագայթներով, դրած էր իմ առջև, որպես մի գեղեցիկ պատկեր, նկարած զանազան գույներով: Գյուղերը, այգիները, ձեռնատունկ անտառները, լավ մշակված դաշտերը, բոլորը միախառնվելով հանդիսանում էին ամբողջ հովիտը իր կանաչազարդ, գեղագրական տարածության մեջ: Ես ջոկում էի բոլոր ինձ ծանոթ տեսարանները:

Հեռու, բարձր ապառաժի վրա, տեսնում էի ես Ղարնի-Յարուղի ավերակները, ավերակները այն առասպելական ամրոցի, ուր թափվել էր այնքան արյուն, այնքան արտասուք և սեր… ուր անօրեն թուրք իշխանի ձեռքը խլում էր ամուսնի գրկից կնիկների ամենագեղեցիկը… ուր տարվում էին ամենաընտիր աղջիկները ամբողջ գավառից, և անբախտ զոհերի արտասուքը, ընտանիքի սրբությունը, ծնողների աղաչանքը չէին կարողանում ամոքել բռնակալի կրքերը…: Դեպի աջ նայելով, ես տեսնում էի սուրբ Հովհաննու մատուռը, միայնակ կանգնած բլուրի գագաթին, որը մի ահագին շաքարի գլխի նման վեր էր բարձրացել ընդարձակ դաշտի միջից: Ո՛րքան քաղցր զգացմունքներով կապված էր այդ սրբարանը իմ հիշողության հետ: Այնտեղ, տոնական հանդեսների ժամանակ, ուխտավորների աշխարհային զվարճությունները, ախտերը և կրքերը եփ էին գալիս, բորբոքվում էին, միախառնվելով կրոնական ջերմեռանդության հետ…

Վերջապես իմ աչքին ընկավ քաղաքը. նա թաքնված էր ծառազարդ այգիների մեջ, որոնք ձևացնում էին մթին բոլորակ տարածություն: Ես որոշեցի մեր թաղը, այնտեղ ես երկար և երկար որոնում էի «մեկին»… կարծում էի, թե կտեսնեմ նրան…: Չգիտեմ ինչո՞ւ նույն րոպեում իմ աչքերը լցվեցան արտասուքով, ես այլևս չկարողացա նայել…

Ես սկսեցի իջնել ցած, կրկին նույն ոլոր-մոլոր սանդուղքներով: Այն ժամանակ միայն նկատեցի, որ աշտարակն ուներ մի քանի գաղտնի պահեստներ և խորին

մթերանոցներ: Հետաքրքրությունը հրապուրեց ինձ մտնել նրանցից մեկի մեջ: Նեղ պատուհանից ներս ցոլացած լուսով հազիվ կարողացա որոշել հետևյալ իրեղենները.— զենքերի զանազան տեսակներ, ձիաների թամքեր իրանց պարագաներով, խուրջիններ լիքը զանազան բաներով, որոնք այնքան ծանր էին, կարծես, ամբողջապես լցված լինեին մետաղներով: Ես ձեռքս տարա մեկի մեջ, տեսա, ուրիշ ոչինչ չկար, բայց միայն հրացանի փամփուշտներ, գնդակների կապոցներ և վառոդ: Այս մթերքը, անտարակույս, պատկանում էր այն երեք հոգուն, որ պառկած էին աշտարակի ներքին հարկում: Բայց ի՞նչ նպատակի համար էր այդ բոլոր պատրաստությունը:— Այդ միտքը սկսեց տանջել ինձ: Այնտեղ կար պատրաստություն ավելի քան հիսուն հոգու համար: Բայց ո՞րտեղ էին այդ մարդիկը: Ես ոչինչ հասկանալ չէի կարողանում: Երկյուղը և կասկածը տիրեցին իմ սրտին: Այստեղ երևում էր ինչ-որ խորհրդավոր ծածկապահություն…

Ես չուզեցի կասկածանքի պատճառ տալ ընկերներիս, և առանց մյուս բաներին նայելու, իջա ցած: Տղերքը տակավին քնած էին նույն դրության մեջ, որպես թողել էի: Ես չկամեցա խանգարել նրանց հանգստությունը, դուրս եկա միևարեթից մի փոքր թարմ օդ ծծելու համար:

ԺԳ

ՎՀՈՒԿԸ

Արեգակը բավական բարձրացել էր հորիզոնից: Վաղորդյան ցողը գույնզգույն գոհարների նման շողշողում էր նորաբույս խոտերի, թփերի տերևների վրա: Օդի մեջ տիրում էր գարնանային առավոտի մեղմ զովությունը, թեև դեռ գարուն չէր:

Իմ սիրտը զգաց անսահման բերկրություն: Ինչո՞ւ:— Ինքս էլ չգիտեի: Գուցե նրա համար, որ այստեղ ազատ էի, ոչ ոք չէր նեղացնում ինձ, ոչ մորից, ոչ վարժապետից երկյուղ չունեի:

Փոքր-ինչ հեռանալով աշտարակից ես սկսեցի դիմել դեպի ավերակները: Կիսակործան պարիսպների, խորտակած սյուների, մամռապատ կամարների բեկորները մեծ մասամբ կորած էին վայրենի բույսերի մեջ, որ ճոխությամբ աճել էին այնտեղ: Ոզնին, ահագին կրիաները, երկչոտ չախկալները համարձակ կերպով վազվզում էին փլատակների մեջ:

Իմ ականջին զարկեց բուի ձայնը: Ավերակների այդ թագուհին իմ մանկության հասակից գրգռել էր իմ սնահավատությունը: Ես համոզված էի, թե նա էր այդ բոլոր կործանումների պատճառը: Կռացա, գետնից մի քար վեր առի, նայում էի չորս կողմս, որ գտնեմ, որ սպանեմ նրան: Բուն չէր երևում: Ես քարը նետեցի ուղիղ այն կողմը, որտեղից լսելի եղավ նրա ձայնը: Բարձրացավ մի ճիչ, որ նման էր ադամորդու հառաչանքի: Ես սոսկացի: Փլատակների մեջ կծկվել էր մի պառավ կին, փաթաթված հին, մուգ-կապտագույնսփածանելիքի մեջ: Ինձ երևաց, որպես թե, ավերակների մեջ բնակվող ոգիներից մեկը լիներ նա, կամ այն կախարդը, որ հսկում էր այդ անմարդաբնակ անապատի վրա:

Նրա երկար, կիսով չափ կռացած հասակը բոլորովին նման էր մի այլանդակ կմախքի, որի ցամաք կազմվածքի մեջ մնացել էին ոսկորները միայն: Միակ կենդանության նշույլը, որ նկատվում էր թուխ դեմքի վրա, էին զույգ կրակոտ աչքերը, որոնք վառվում էին դիվական խորամանկությամբ:

Նա խիստ մտերմապես մոտեցավ ինձ:

— Ո՞վ ես դու,— հարցրի ես.

— Դու Կարոն չե՞ս…— ասաց նա, առանց իմ հարցին պատասխանելու: Նա խոսեց աղավաղված թուրքերեն լեզվով, բայց արտասանությունից իսկույն երևաց, որ ինքը բոշա է, թեև նա չէր պատկանում բոշաների այն ցեղերին, որ ես հաճախ տեսել էի մեր կողմերում:

Երևում էր, որ պառավը գործով եկած էր Կարոյի մոտ և սխալմամբ ինձ նրա տեղ էր ընդունում, որովհետև աչքերի տեսությունը սաստիկ թուլացած էր: Ես կամեցա Կարոյին զարթեցնել. հետո մտածեցի, ի՞նչ վնաս, առժամանակ ձևանալ, որպես թե ես Կարոն եմ: Իմ վարմունքը երեխայական անմիտ հետաքրքրություն էր և ավելի ոչինչ:

— Հա՛, իմ անունս Կարո է,— պատասխանեցի ես:— Բայց ի՞նչպես են կոչում քեզ:

Բոշան զարմանալով նայեց իմ վրա, կարծես, չէր հավատում իր աչքերին և պատասխանեց պարսկերեն լեզվով.

— Կարոն ինչո՞ւ է հարցնում իր աղախնի անունը: Կարոն գիտե, որ մարդիկ Սուսան են կոչում նրան: Կարոն բոլորը գիտե…:— Երբ Դինբուլի խանը կողոպտեց, կոտորեց մեր ցեղը, Սուսանը կապեց իր քամակին Կարոյի երեխան և մենակ անցավ Հերաթի անապատներից…: Ա՛խ, Սուսանի աչքերի լույսը… Այն անցքից հետո Սուսանը վատ է տեսնում…

Այդ անկապ խոսքերը այն աստիճան մթին երևացին ինձ, որ ես ոչինչ չհասկացա, մանավանդ որ բոշան խոսում էր երրորդ դեմքով:– «Կարոյի երեխա՞ն»… Մի՞թե Կարոն երեխա ունի, որտեղ է նա:— Հերաթի անապատներից ազատել է նրան բոշան…

Այս բոլորը ինձ համար հանելուկներ էին: Միայն այսքանը հասկացա, որ Կարոն և խորհրդավոր պառավը նախածանոթներ են եղել: Միջին Ասիայի խորքերում, Ավղանիստանում, նրանք ունեցել են հարաբերություններ: Բայց ի՞նչ դեպքով, ի՞նչ առիթով:— Այդ մասին հարցրի պառավից, զգուշանալով, բոլորովին չմերկացնել ինձ, թե ես Կարոն չեմ:

Ես աշխատեցի ուղղել իմ անտեղի հարցմունքի սխալը, ասելով.

— Ես բոլորը գիտեմ, Սուսան, դու այն ասա՛, թե ինչ լուր ունես:

Պառավը որպես թե ինքն իր հետ խոսելով, ասաց.

— Սուսանը կասե, Սուսանը նրա համար եկավ, որ ասե: Սուսանը չկարողացավ իր արտասուքը պահել, երբ տեսավ, խեղճ աղջկան…: Նա աղաչում էր.— «Ասա՛ Կարոյին, որ ինձ այստեղ չթողնե. ես կմեռնեմ ցավից»…:— Խեղճ երեխա, ո՛րքան մաշվել էր նա…: Կմեռնի՛, անպատճառ կմեռնի՛ նա, եթե երկար այնտեղ կմնա…: Երեսին գույն չես տեսնի, օրինակ քեզ՝ կտավ… Ախ, Սուսանը էլ շատ չի ապրի, թե «նրա» գլխին փորձանք կգա…

Պառավը այլևս չկարողացավ խոսքը շարունակել, սկսեց դառն կերպով լաց լինել: Արտասուքը ավելի նսեմացրեց նրա աչքերի լույսը: Ես աշխատեցի մխիթարել նրան: Երբ մի փոքր հանգստացավ, հարցրի, ինձ բավական մոտեցած համարելով գաղտնիքի իսկությանը.

— Ի՞նչպես դու մտար «նրա» մոտ:

— Ի՞նչպես մտար…— կրկնեց պառավը հեգնական կերպով և նրա ցամաք դեմքի վրա վազեց մի վայրենի ծիծաղ:— Սուսանի ճանապարհը ո՞վ կարող է կտրել: Սուսանը ամեն տեղ մուտք ունի: Թե խանի ամրոցի, թե աղքատի խրճիթի դռները նրա առջև բաց են: Սուսանը կարդում է մարդերի ճակատագիրը. Սուսանը գուշակում է նրանց չարն ու բարին:— Տո՛ւր ինձ ձեռքդ, գուշակեմ քեզ համար…

Կարծես նա մոռացավ առաջին տխուր զգացմունքը «խեղճ աղջկա» մասին. կարծես, նա մոռացավ, որ Կարոյի հետ էր խոսում: Այժմ տիրեց նրան այն, ինչ որ բոշայական էր, ինչ որ վայրենի էր: Նրա առաջին արտասուքը և վերջին ծիծաղը մի րոպեում այնպես փոփոխակի կերպով հաջորդեցին միմյանց, որ պարզ երևաց, թե ողորմելի կինը ցնորված էր:

— Լավ, այդ հետո, թող մնա գուշակելը,— պատասխանեցի ես:— Դու այն ասա, թե ե՞րբ տեսար «նրան»:

— Սուսանը մտավ ամրոցը, երբ առավոտյան ցողը դեռ չէր բարձրացել խոտերից, աղախինները վազեցին նրա առջևը, «եկ, մեզ համար գուշակի՛ր, Սուսան», ասեցին, հետո տարան…

Պառավը չավարտեց իր խոսքը: Սույն միջոցին միևարեթի դռնից երևաց Կարոյի գիշերային անքնությունից գունաթափված դեմքը: Պառավը մի խոժոռ հայացք գցելով իմ վրա, իսկույն թողեց ինձ, ասելով.

— Դու Կարոն չես. դու խաբեցիր Սուսանին…

Նրա խռովյալ ձայնի մեջ կար և՛ սպառնալիք, և՛ բարկություն:

— Միևնույն է, նա իմ եղբայրն է, Սուսան,— հանգստացրեց Կարոն, մոտենալով պառավին:

Նրանք առանձնացան մի կիսավեր պատի ետևի կողմը, և երկար կանգնած խոսում էին ինձ անլսելի ձայնով: Պատի վրա բուսած մացառների խտությունը դեռ չէր արգելում նրանց իմ տեսությունից: Կարոն գլուխը քարշ գցած, լսում էր: Պառավը ինչ որ պատմում էր նրան: Ես այժմ մասամբ հասկանում էի, թե ինչ առարկայի վրա էր խոսակցությունը: Սուսանի մի րոպե առաջ ինձ հաղորդած տեղեկությունները, որքան և մթին, որքան և կցկտուր լինեին, այսուամենայնիվ, ես նրանցից դուրս բերեցի հետևյալ եզրակացությունները.— մի աղջկա, կամ մի կնոջ կյանքը վտանգի մեջ էր, նրա և Կարոյի մեջ կային գաղտնի կապեր. Կարոն աշխատում էր ազատել նրան, խորամանկ պառավը ծառայում էր այս ձեռնարկության մեջ որպես գործիք, աղջիկը կամ կինը գտնվում էր «ամրոցի» մեջ: Ո՞ր ամրոցում, ո՞ւմն էր պատկանում ամրոցը:— Ահա այստեղ էր գլխավոր գաղտնիքը:

Ես երկար նայում էի կիսախելագար Սուսանի վրա: Երբ նա իր պատմությունը վերջացրեց, հանկարծ մի տեսակ ձայն արձակեց, որ ճիշտ նման էր միևնույն բուի ձայնին, որ լսել էի քանի րոպե առաջ: Սնահավատությունը կրկին տիրեց ինձ: Ես նկատեցի, մի փոքրիկ աղջիկ, խայտաճամուկ և ֆանտաստիկական հագուստներով, դուրս վազեց ավերակների միջից, մոտեցավ երկու խոսակիցներին: Կարոն գրկեց և համբուրեց նրան: Հետո պառավը փոքրիկ աղջկա հետ անհայտացան: Այս երևույթը այնքան հանկարծակի կերպով կատարվեցավ, որ ես բոլորովին ապշած մնացի: Ինձ թվում էր, թե փոքրիկ աղջիկը այն ոգիներից մեկը պետք է լինի, որ պառավ կախարդը պահում էր իր հրամանի ներքո, ման էր ածում իր հետ և ծառայեցնում էր իր հմայքների մեջ: Բայց ո՛րքան գեղեցիկ էր այդ նազելի արարածը: Ես նրա դեմքը

տեսա մի սրընթաց փայլակի նման, որ իսկույն չքացավ, բայց թողեց իմ սրտում անջնջելի տպավորություն…: Բայց Կարոն ինչո՞ւ համբուրեց նրան. ո՞վ էր նա…

Ես կարծում էի, թե Կարոն չի թաքցնի, կասե ինձ բոլորը, թե ով էր այդ անծանոթ պառավը, թե ով էր այն փոքրիկ աղջիկը, որ հայտնվեցավ փլատակների միջից: Ես վճռեցի մինչև անգամ հարցնել նրանից, բայց չհամարձակվեցա, երբ նկատեցի նրա սարսափելի կերպով վրդովված դեմքը: Երևում էր, պառավի հաղորդած տեղեկությունները խռովության մեջ էին գցել նրան:

— Այն պառավը ցնորվա՞ծ էր,— հարցրի ես, երբ նա մոտեցավ ինձ:

— Ոչ… միայն եթե մյուս անգամ կպատահի քեզ հանդիպել նրան, խնդրեմ, չհիշեցնել իր անցյալը…

Հետո խոսքը փոխելով, ասաց նա.

— Մենք պետք է հեռանանք այստեղից, Ֆարհատ:

— Ո՞ւր,— հարցրի ես:

— Ինքս էլ չգիտեմ: Մենք այն թռչուններից ենք, որ միշտ միևնույն ճյուղի վրա չեն նստում:

Ես ոչինչ չպատասխանեցի:

— Դու երեկվանից միտքդ չե՞ս փոխել,— հարցրեց նա, իմ ձեռքից բռնելով և մի կողմ տանելով, որպեսզի խոսակցությունը իմ և նրա մեջ առանձին լիներ:

Ես դժվարացա պատասխանելու:

— Ինչո՞ւ չես խոսում:

— Ի՞նչ խոսեմ:

— Մենք պետք է հեռանանք այստեղից: Դու չե՞ս ցանկանում դառնալ քո մոր մոտ:

— Ես ցանկանում եմ ձեզ մոտ մնալ:

— Թո՛ղ տուր մեզ, Ֆարհատ, գնա՛, մորդ մոտ, մխիթարե նրա անբախտությունը: Հեռացի՛ր մեզանից: Մենք գլխից ձեռ վեր առած մարդիկ ենք…: Մեր նավը դեռ մրրիկների մեջ է գնում, ո՛վ է իմանում, ինչ կլինի նրա վերջը…: Քեզ վիճակված է բախտի ավելի խաղաղ բաժինը, Ֆարհատ, գնա պսակվիր Սոնայի հետ, նա քեզ սիրում է, նրա հետ ուրախ կերթա ձեր կյանքը: Սոնան լավ աղջիկ է:

Վերջին խոսքերը շարժեցին իմ սիրտը և ակամա արտասուքը թափվեցավ իմ աչքերից: Կարոն այնպես ձևացրեց, թե չէ տեսնում և շարունակեց իր խրատները:

— Հիշում ե՞ս, Ֆարհատ, երբ մենք դեռ վարժատան մեջն էինք, շատ անգամ ասում էինք միմյանց. «մենք եղբայրներ ենք, մենք պետք է միասին աշխատենք և միասին վայելենք մեր վաստակը»: Ես ունեմ այժմ մի փոքրիկ գումար, ահա այս քսակի մեջն է, ա՛ռ, քեզ եմ տալիս. նա ինձ պետք չէ: Այս գումարով դու կգնես քեզ համար մի կտոր հող, կսարքես մի արոտ, քո ձեռքով կմշակես քո հողը: Քաղցր է վաստակը, երբ մարդ ստանում է իր սեփական հողից:

Ես ետ մղեցի քսակը, պատասխանելով.

— Հիշում եմ բոլորը, ինչ որ ուխտեցինք դեռ դպրոցում եղած ժամանակ: Բայց դու, երևի, մոռացել ես մի բան. մենք երդվեցինք և օգնել միմյանց ամեն փորձանքների մեջ մեր կյանքում: Այժմ ես ի՞նչպես կարող եմ հեռանալ քեզանից, երբ դու ինքդ ասում ես թե «ձեր նավը մրրիկների մեջ է գնում»…

— Այդ ուղիղ է: Բայց ես ի՞նչ իրավունքով կարող եմ քեզ քարշ տալ այն փորձանքների մեջ, որոնց ես ինքս պատրաստել եմ ինձ համար…

— Ինձ համար միևնույն է, թե ով է պատրաստել:

— Բայց դու գիտե՞ս, որ ես այս աշխարհում կորցնելու ոչինչ չունեմ, իսկ քեզ կարոտ են մայրդ, քույրերդ և, վերջապես, Սոնան: Դու չե՞ս մտածում ազատել նրան, չէ՞ որ գերի է իր հոր, այն վայրենի հոր ձեռքում:

— Ես մտածում եմ… ես մինչև անգամ խոստացել եմ ազատել նրան…: Բայց ես նրան կազատեմ, քեզանից չբաժանվելով:

— Լավ,— ասաց նա խռովյալ ձայնով:— Այսուամենայնիվ, դու պետք է ընդունես այս քսակը, ուղարկիր մորդ, թող նա քաղցած չմնա, գուցե դու երկար բաժանված կմնաս նրանից…

Ես հրաժարվեցա, խնդրելով, որ նա ինքը կարգադրե որպես ցանկանում է:

Կարոն համաձայնեցավ: Բայց ես նկատեցի, թե որպե՛ս վառվում էին նրա լի վրդովմունքով աչքերը և ինչպես անհանգիստ կերպով բաբախում էր նրա կուրծքը: Երևում էր, խիստ ծա՛նր էր նրա այն համաձայնությունը, որ տվեց ինձ իր մոտ պահելու համար…

— Դու պիտի ընդունես մի քանի պայմաններ, Ֆարհատ:

— Ամեն բանի հոժար եմ ես:

— Լսի՛ր.— քո աչքերը իբր թե ոչինչ չեն տեսնում, թեև շատ բաներ պիտի տեսնես:

— Ես ինձ կույր կձևացնեմ:

— Քո ականջները իբր թե ոչինչ չեն լսում, թեև շատ բաներ պիտի լսես:

— Ես ինձ խուլ կձևացնեմ:

— Քո լեզուն ոչինչ չպիտի խոսե, թեև շատ բաներ պիտի գիտենաս:

— Ես ինձ մունջ կձևացնեմ:

— Դու սեփական կամքի տեր չպիտի լինես:

— Ես ամեն բանում կհնազանդվեմ քո կամքին:

— Եվ իմ ընկերների կամքին:

— Եվ քո ընկերների կամքին:

— Բավական է, տուր ինձ ձեռքդ:

Ես ձեռք տվեցի, նա սեղմեց ինձ իր կուրծքի վրա և համբուրեց: Այդ եղբայրական համբույրը կնքեց մեր ուխտը…

Ես խոստացա խուլ լինել, մունջ լինել, խոստացա կույր գործիք լինել…: Ես խոստացա անսիրտ, առանց կամքի մեքենա լինել…

Ես կատարեցի իմ խոստմունքը:

Պարսկաստանում այն ժամանակ դեռ նոր էր կազմվել մի գաղտնի հիմնարկություն, որ կոչվում էր «ֆարամուշխանա», այսինքն մոռացության տուն: Այս տան մեջ ընդունվելու գլխավոր պայմանը այն էր, որ յուրաքանչյուր անդամ այնտեղից դուրս գալուց հետո պետք է մոռացության տար բոլորը, ինչ որ տեսել, ինչ որ լսել էր այնտեղ: Այսինքն՝ պետք է պահպաներ սաստիկ ծածկամտություն: Թե ի՞նչ նպատակ ուներ այդ գաղտնի հիմնարկությունը,— ես չգիտեմ, որպես չգիտեին նրա յուրաքանչյուր անդամները, թե ինչ է գործում իրանից բարձր աստիճանի վրա գտնվող անդամը: Կրտսեր անդամը ավագի հլու գործքին էր, պետք է անպայման կերպով հնազանդվեր նրան, պետք է կատարեր ամեն բան, ինչ որ կհրամայեր նա, առանց գիտենալու, թե ինչ նպատակով էր գործում: Հիմնարկության բուն խորհուրդը պահվում էր նրա գլխավորների մոտ: Մյուսները անգիտակցական մեքենաներ էին միայն: Անդամների յուրաքանչյուրը առանձին նշաններից կարող էր ճանաչել մյուսին, առանց գիտենալու նրա անունը, նրա ո՛վ կամ ինչտեղացի լինելը: Միայն որոշ խմբեր իրանց մեջ գաղտնիք չունեին, իսկ ամեն մի խումբ առանձին վեր առած, միմյանց գործունեությունից տեղեկություն չունեին:

Կարծես, մի այսպիսի հասարակության մեջ էի ընկել ես: Ինձանից էլ խոստում առին, որ ամեն բան, ինչ որ կտեսնեմ, ինչ որ կլսեմ, մոռացության տամ: Ես կատարեցի իմ խոստմունքը: Իսկ այս տողերը, որ գրում եմ այժմ,— գրում եմ ուղիղ հիսուն տարուց հետո, երբ այն անձինքը այլևս աշխարհի երեսին չեն մնացած, երբ նրանց գործունեությունը հայտնվեցավ և անհետացավ մի կարճատև փոթորիկի նման…

ԺԴ

ՁԻ

Դեռ երեխայությունից ես ձի նստելու սաստիկ սեր ունեի. այն ժամանակ այս ցանկությունը լցուցանում էի, հեծնելով փայտյա երկայն ձողի վրա, և ամբողջ ժամերով վազեցնում էի մեր բակում: Հետո, երբ փոքր-ինչ մեծացա, իմ փայտյա նժույգին փոխարինեցին կենդանի արարածներ: Մեր հորթերը հանգստություն չունեին ինձանից, և մինչև անգամ ահագին գայլանման Մըրոն — մեր շունը — երբեմն ստիպված էր ծառայել իմ զվարճություններին: Ես բռնում էի նրա երկայն ականջներից, թռչում էի մեջքի վրա, և խեղճ շունը բարեսրտությամբ ներում էր իմ հիմարություններին, գնում էր դեպի այն կողմը, ուր որ ես շուռ էի տալիս:

Երբ տասն տարեկան էի, ամեն երեկո անհամբերությամբ սպասում էի տավարների նախիրի արոտից վերադառնալուն: Հենց որ հեռվից նկատում էի մեծ ճանապարհի վրա փոշու ամպերի բարձրանալը, վազում էի նախիրի առջև, բռնում էի ավանակներից մեկին, նստում էի նրա մեջքի վրա: Ա՛խ, ո՛րքան ուրախանում էի ես, երբ իմ Պեգասը վազում էր հեռու և հեռու դաշտերի մեջ…: Իսկ հետո ավանակներին փոխարինեցին մատակ ձիաները: Առանց սարսափելու չէր կարելի նայել ինձ վրա, երբ ես դևի նման բռնած վայրենի մատակի բաշից, մրրիկի պես պտտեցնում էի մերկ

և առանց սանձի ձիուն: Հովիվները բարկանում էին, զգուշացնում էին ինձ, բայց ինչ ուշադրություն կդարձներ նրանց խոսքերին հանդուգն և զվարճասեր մանուկը…

Բայց ո՛րքան անգամ վեր ընկա ես… ո՛րքան անգամ ձեռքս, ոտքս կոտրեցի… ո՛րքան անգամ երեսս ջարդված, արյունաթաթախ տուն են բերել ինձ…: Մայրս լաց էր լինում, ասում էր՝ «որ ես աղամորդու զարմ չեմ», թե ես «սատանայի ծնունդ եմ», թե ես «մի փորձանքով պիտի մեռնեմ», կամ գետի մեջ կխեղդվեմ, կամ ծառից, կամ ժայռից վեր կընկնեմ և կամ դաշտի գազանները կուտեն ինձ… Մայրս գնում էր, վարժապետիս պատմում էր իմ անկարգությունները, բայց ոչ նրա «ֆալախկան», ոչ նրա «խրատը» և ոչ «աղյուսի կտորտանքը» — ոչ մեկը չկարողացան զսպել ինձ մանկական խաղերից, որոնք այնպես սաստիկ կերպով արգելված էին աշակերտներին:

Նույնպիսի սեր ունեի ես դեպի հրացան գործիքները: Երևակայեցեք այն ուրախությունը, երբ իմ մանկական երկու ամենագլխավոր բաղձանքները իրագործվեցան.— ես այժմ ունեի ձի և զենքեր:

Նույն ավուր երեկոյան պահուն, որի առավոտյան ժամանակ ես ավերակների մեջ հանդիպեցի բոշա կնոջ հետ, կրկին հայտնվեցան երկու զեյթունցիները, որոնց մեկին կոչում էին Մուրադ, մյուսին Ջալլադ: Նրանք բերեցին իրանց հետ չորս գեղեցիկ ձիաներ: Երևում էր, այդ ձիաները մեզանից փոքր-ինչ հեռու գտնված լեռների մեջ պահում էին, որովհետև ավերակների մոտ արոտ չկար: Կարոն ինձ իր մոտ կանչեց, և հանձնելով ձիերից մեկի սանձը, ասաց.

— Ահա քո ձին, ես գիտեմ, որ դու անվարժ չես լինի դրան զսպելու մեջ:

Հետո, տալով ինձ մի հրացան, մի զույգ ատրճանակ և մի թուր, ավելացրեց.

— Ահա քո զենքերը, դրանց բանեցնելու մեջ դու նույնպես անվարժ չես մնա:

Ես ուրախությունից այն աստիճան շփոթվեցա, որ մի խոսք անգամ չգտա շնորհակալությունս հայտնելու, միայն երեխայի նման փաթաթվեցա նրա վզովը և սկսեցի համբուրել: Ես երևակայում էի, թե աշխարհի բոլոր թագավորությունները ինձ են տված:

Կարոն տվեց ինձ և մի ձեռք շոր, պատվիրեց հագուստս փոխել: Իմ նոր հագուստի մեջ ոչ թե մայրս, ոչ թե տեր Թոդիկը, այլ սատանան ևս չէր կարող ճանաչել ինձ: Ես այժմ իմ հագուստով բոլորովին նման էի ընկերներիս:

— Դե՛, նստիր,— ասաց Կարոն, ինքն նույնպես իր ձին հեծնելով:

Ասլանը և Սագոն արդեն ձիավորված էին: Մենք ճանապարհ ընկանք: Երկու զեյթունցիները մնացին մինարեթի մեջ, երևի, այն պատերազմական մթերքը պահելու համար, որը ես ցերեկով տեսել էի աշտարակի վերին հարկում:

Արեգակի վերջին շառավիղները դեռ խաղ էին անում մինարեթի կապույտ մոզայիկների հետ, երբ մենք բաժանվեցանք այդ հսկա շինվածքից: Ես իմ ստացած նոր ընծաներով այնքան գրավված էի, մինչև անգամ ընկերներիցս չհարցրի, թե ո՞ւր ենք գնում: Իմ գեղեցիկ նժույգը ընթանում էր արագ, որպես մարդու միտքը, իմ զենքերը շողշողում էին փառավոր, սպառնական լուսով:

Կարոն չսխալվեցավ իր կարծիքի մեջ, այո՛, ես այնքան հմուտ էի զենքերի գործածության մեջ, որքան ձի հեծնելում: Շատ քիչ էր պատահում, որ իմ գնդակը շեղվեր նպատակից, որովհետև ես որսորդ Ավոյի թեև փոքրիկ, բայց լավ աշակերտն

էի,— աշակերտը այն մարդու, որի անվան հետ կապված էին այնքան սարսափելի պատմություններ…: Բայց նա մնաց միշտ բարի դեպի ինձ և դեպի մեր ընտանիքը: Նրա տնում միշտ գտնվում էր իմ համար մի ավելորդ հրացան, որով ես փորձեր էի անում: Առաջին փորձը արեցի մեր հավերի վրա. մայրս ինձ շատ անիծեց, երբ տեսավ, որ իր սիրելի վառեկներից մեկը թավալվում էր մեր բակի մեջ: Նա իսկույն վազեց վարժապետի մոտ բողոքելու…

Իսկ երբ որսորդը իր ընտանիքով թողեց մեր քաղաքը, մայրս մասամբ ուրախ էր, որ ազատվեցավ մի այսպիսի դրացուց, որը նրա կարծիքով, իր որդուն փչացնում էր, խելքից հանում էր: Բայց ես երկար չէի կարող մոռանալ բարեսիրտ Ավոյին, որի պատմություններն իր որսորդական կյանքից այնքան հետաքրքրում էին, այնքան ոգևորում էին ինձ…

Բայց ո՛րքան մեծ եղավ իմ ուրախությունը, երբ ճանապարհին Սագոն դարձավ ինձ այս խոսքերով.

— Գիտե՞ս, ուր ենք գնում, Ֆարհատ:

— Ինձ ոչինչ չէ ասել Կարոն,— պատասխանեցի ես:

— Դու հիշո՞ւմ ես որսորդ Ավոյին, այն լուռ, միշտ խոժոռ մարդուն, որ մի ժամանակ ձեր դրացին էր. մենք գնում ենք նրա տունը: Տե՛ս, այն սարերի մեջն է բնակվում նա:

Սագոն ձեռքը մեկնեց դեպի արևմուտք, կարծես, ես գիշերային խավարի մեջ կարող էի տեսնել նրա ցույց տված տեղը:

— Հիշում եմ,— պատասխանեցի ես մի առանձին բավականությամբ:— Հիմա բոլորովին ծերացած կլինի Ավոն, տասներկու տարի է, որ չեմ տեսել նրան:

— Հին վիշապները շուտ չեն պառավում: Դու կտեսնես նրան շատ քիչ փոխված,— ասաց Սագոն իր սովորական հեգնական եղանակով:— Բայց մի՞տդ է, Ֆարհատ, Ավոյի որդեգիրը՝ Հասոն, որին մենք դպրոցում կոչում էինք «էշի փալան»:

— Որին մեր վարժապետը կոչում էր «սատկած»,— ավելացրի ես,— որը ոչինչ չէր սովորում և շուտ հոգնում էր, երբ ման գալու էինք գնում. աշակերտները շատ անգամ ստիպված էին շալակել նրան և ետ բերել դաշտից:

— Հենց նա, գտար. բայց հիմա որ տեսնես, չես ճանաչի, այնքան հաստացել է, սարի արջ է դարձել. երևի, վրա եկավ լեռնային օդը:

— Ի՞նչ է շինում:

— Գրողը տանի նրան, հիմա տուն ու տեղի տեր է դարձել, վար է վարում, ցանք է անում. կնիկ ունի. ամեն տարի երկու հատ ծնվում են. տունը լիքն է երեխաներով, ճանճերի նման վժվժում են:

— Էլի այնպես մաղձո՞տ է, որպես առաջ:

— Հիմա օրինավոր մարդ է դարձել. իստակ հոգի է տալիս, երբ նրա տունն ես մտնում. ուզում է՝ ինչ որ ունե, ինչ որ չունե, քեզ ուտացնել ու այնպես ճանապարհ դնե:

— Ուրեմն հարո՞ւստ է:

— Գութան ունի, անասուններ ունի, հենց ես ու դուն մնացինք առանց ոչնչի, Ֆարհատ:

Ինձ ամենից ավելի հետաքրքրում էր Մարոն, որսորդի աղջիկը, ցանկանում էի նախքան տեսնելս նրա մասին որևիցե տեղեկություն ստանալ:

— Բայց Մարո՞ն,— հարցրի ես:

— Մարո՜ն…— կրկնեց Սագոն մի առանձին ոգևորությամբ,— այժմ այդ սև դևիկը իր թուխ աչքերով բոլորովին խելքից հանում է մարդուն…: Սատանա՜ն տանի նրան, էլի այնպես կծում է… էլի այնպես ճանկռտում է, որպես առաջ…

— Նա միշտ կատվի բնավորություն ուներ:

— Չգիտեմ ինչո՞ւ Սագոն ընկավ խորին տրտմության մեջ, երբ Մարոյի անունը մեջ մտավ: Նա վառեց իր ծխաքարշը, սկսեց ծխել: Հետո, երևի, առաջին խոսակցությունը մոռացության տալու համար, առաջարկեց ինձ ծխաքարշը ասելով.

— Առ, ծխի՛ր այդ «սատանայի բուրվառը»:

Ես հայտնեցի, թե ծխելու սովորություն չունեմ:

— «Ղարաչիների օբաներում ճգնավորություն չեն անում»…— պատասխանեց նա ծիծաղելով:

Ես չհասկացա, թե ինչ էր ուզում ասել:

— Շատ հասկանալի է,— ասաց նա,— սոֆիները, որ սկզբում չեն ծխում, հետո սկսում են ծխախոտ ծամել. ավելացնում են դրա վրա և աֆիոն ուտելը: Այսպես է լինում ամեն պահեցողների վերջը:

Ես ընդունեցի նրա ձեռքից ծխաքարշը, ճշմարիտ, նա դուր եկավ ինձ, թեև առաջին անգամն էր, որ ծխում էի:

— Հա՛, այդպես,— ասաց նա մի առանձին հաճությամբ,— օրինավոր բան տեսար, մարդուն էլ է դուր գալիս, նրա ստեղծողին էլ:

Սագոն իր ծխաքարշը ընծայեց ինձ, ասելով թե ինքը երկու հատ ունի, և խնդրեց, իջևան հասնելու ժամանակ նրան հիշեցնեմ, որ ինձ ծխախոտ տա: Նա հավատացնում էր, որ առանց ծխախոտի, առանց արաղի ճանապարհորդությունը կյանք չունի: Այդ պատճառով, ես չդժվարացա ընդունել նրա ձեռքից արաղի շիշը, որ մի փոքրիկ խուրջինի մեջ դրած, քարշ էր տվել իր ձիու թամքի ղաշից: Թեև իմ կյանքում ամենևին արաղ խմած չէի, բայց մի քանի կաթիլ կուլ տալով, շիշը ետ տվեցի, ինձ երևաց, թե բերանս կրակով այրեցին: Սագոն բավական խմեց:

— Տաքացնում է,— ասաց նա,— այնտեղ, այն սարերի բարձրավանդակների վրա ցուրտ կլինի:

Եվ իրավ, քանի վեր էինք բարձրանում դեպի լեռան զառիվերը, գիշերային հովությունը այնքան զգալի էր դառնում: Մեր փոքրիկ քարավանը առաջ էր գնում ամենայն եռանդով: Ձիերը այն աստիճան սովորած էին լեռնային անցքերին, որոնց միջով վայրենի այծերը դժվարությամբ կարող էին անց կենալ: Մեր ճանապարհին ընկած էր նեղ կիրճերի միջով, ուր անհավասար, ալիքավոր դարուփոսերի և սարսափելի ելևէջների պատճառով, երբեմն ստիպված էինք ցած իջնել ձիերից: Այդ

սաստիկ հոգնեցրեց ինձ: Բայց Սագոն հոգնություն չէր զգում, կարծես, ժայռերը, ապառաժներն իրանց սոսկալի պտույտներով ավելի ոգևորում էին նրան: Կարոն և Ասլանը գնում էին մեզանից մի քանի քայլ առաջ: Նրանք ինչ-որ բանի մասին տաք-տաք խոսում էին: Քամին, որ սկսեց փչել բարձրավանդակների վրա, չէր թողնում, որ նրանց ձայնը լսելի լիներ: Սագոն խոսում էր ինձ հետ, առանց լռելու, զանազան խառն և անկապ առարկաների վրա: Բայց որքան ես աշխատեցի նրանից որևիցե տեղեկություն դուրս քաշել իրանց անցյալ կյանքի մասին, օտար երկրներում,— նա մնաց միշտ զգույշ և ոչինչ չհաղորդեց ինձ:

Բայց ո՛րքան դյութական ազդեցություն ունի լեռը, այն ևս հայկական ահավոր, սքանչելի լեռը: Այդ ազդեցության ոգևորությունը ես իսկույն նկատեցի Սագոյի մեջ, երբ նա սկսեց իր գեղեցիկ ձայնով եղանակել մի փոքրիկ երգ:

ԺԵ

ՈՐՍՈՐԴԻ ՏՆԱԿԸ

Գիշերը մոտենում էր իր վախճանին, երբ հասանք Կ… գյուղը, որ գտնվում էր Դուշմանա լեռների մեջ: Անդադար հարձակումները այդ լեռներից Սալմաստ գավառի վրա՝ առիթ էր տվել տեղացիներին այսպես կոչել նրանց: Դուշմանա լեռներ նշանակում է թշնամու լեռներ:

Գյուղից դուրս, բլուրի վրա, միայնակ կանգնած էր փոքրիկ տնակ, որի պատուհաններից մեկը այն ուշ գիշերային պահուն լուսավորված էր մռայլ լուսով: Աղոտ լույսը քաշեց մեր քարավանը դեպի իր կողմը: Մենք կանգնեցանք մի քանի քայլ հեռու, միայն Կարոն մոտեցավ տնակին: Չգիտեմ նա ինչ խոսեց, ի՞նչ ասաց, միայն այն տեսա, քանի րոպեից հետո բակի դռները բացվեցան, շեմքի վրա հայտնվեցավ մի ահագին կերպարանք ճրագը ձեռին: Որքան և նսեմացած լիներ իմ հիշողությունը, դարձյալ ես այն կերպարանքի մեջ ճանաչեցի որսորդ Ավոյին:

Կարոն նշան արեց իր ընկերներին, բոլորը մոտեցան: Մեր առաջին հոգսը եղավ հանգստացնել ձիաները: Ախոռատան քնաթաթախ սպասավորին, երևի, շատ հաճելի չեղավ տարաժամ հյուրերի այցելությունը. նա մրթմրթալով դուրս եկավ իր դարանից,— «Ո՞ր սատանան էս վախտը դուրս կգա իր բանից»— խոսեց քնթի տակից և սկսեց ձիաները ներս քաշել դեպի փարախը: Դա իմ նախաճանոթ Մըհեն էր, որ առաջ աջակցում էր Ավոյիննրա որսորդությունների մեջ, իսկ այժմ մի աստիճան ևս բարձրացել էր իր պաշտոնի մեջ, դառնալով անասունների վերակացու: Տղերքը այն աստիճան սովորած էին նրան, որ ամենևին ուշադրություն չդարձրին նրա դժգոհությանը և պատվիրեցին շատ գարի և դարման տա ձիաներին:

— Մըհեն գիտե, ասել պետք չէ, քսան տարի է, Մըհեն ձիաների հետ գործ ունի,— պատասխանեց նա խռպոտ ձայնով և դիմեց դեպի մարագը:

Որսորդի տնակը, բացի ախոռատնից, բաղկանում էր մի քանի փոքրիկ սենյակներից, որոնցից մեկը պատրաստված էր հյուրերի համար, երբ ճրագ վառեցին, ամենքը հավաքվեցան այնտեղ: Շուտով հայտնվեցավ և տանուտերը, որ բակում Կարոյի հետ մեզ անլսելի ձայնով խոսում էր:

— Դե՛, շուտ, Ավո, տղերքը ուտել են ուզում,— դարձավ դեպի նա Կարոն:

— Գայլի նման,— վրա բերեց Սագոն,— ինչ «հոգու բաժին» ունես, ամենը, ամենը բե՛ր:

— «Տարաժամ հյուրը իր բախտից պետք է գանգատվի»,— պատասխանեց որսորդը թուրքերեն առածով։— Աստուծո տվածից ինչ ունեմ, կբերեմ։

— Ո՞ւր են, ոչ մեկը չէ երևում,— հարցրեց Ասլանը։

— Հասոն դաշտումն է, նա իր անասուններն է պահում. անիծված քրդերը իստակ կատաղել են, հենց որ աչքդ հեռացնում ես, էլ ապրանքիդ տերը չես։ Մարոն քնած է, ես նրան կզարթեցնեմ։

նա դուրս գնաց ընթրիք պատրաստել տալու։

Ես մնացի աննկատելի։ Ընկերներիցս ոչ ոք չխոսեց որսորդի հետ իմ մասին, իսկ ես ամաչում էի, որ մոտենամ, նրա ձեռքը համբուրեմ ու ասեմ՝ ես քո Ֆարհատն եմ, դու միշտ սիրել ես ինձ։

Բայց ինչո՞ւ ես այնքան ուրախացա, երբ նա խոստացավ զարթեցնել Մարոյին, ինչո՞ւ իմ աչքերն այնպես անհամբերությամբ նայում էին դեպի դուռը, որտեղից նա պետք է ներս մտներ։ Ա՛խ, ո՛րքան սիրելի է լինում մանկության ընկերը, մանկության անմեղ բարեկամը։

Տղերքը մի կողմ դրեցին իրանց զենքերը, նստեցին բուրդից գործած թանձր օթոցների վրա, որոնցմով ծածկված էր սենյակի հատակը։ Շատ չանցավ, ներս մտավ մի աղջիկ, որ ձեռքով երկու կողմից բռնած, բերում էր մի մեծ պղնձե սինի, որի վրա դրած էին՝ լավաշ, պանիր, եղջերուի սառը միս, մածուն, կարագ և լեռնային զանազան բանջարներ։ Նա լուռ մոտեցավ, դրեց սինին հյուրերի առջև և նույնպես լռությամբ հեռացավ, առանց աչքերը այս կողմ կամ այն կողմ դարձնելու։ Տղերքը բարևեցին նրան մի քանի սրախոսություններով, բայց նա ոչ մեկին չպատասխանեց։

Նա Մարոն էր։

Ամբողջ տասներկու տարի էր, որ չէի տեսել նրան։ Ո՛րքան մեծացել էր նա, ո՛րպիսի ծանր կերպարանք էր ստացել այն մշտազվարթ, պայծառ դեմքը, որից մանկական ժպիտը երբեք պակաս չէր լինում։ Տարիները փոխել էին նրան, փոխել էին դեպի ավելի գեղեցիկը և ավելի սքանչելին։

Մարոն կրկին վերադարձավ. այս անգամ բերեց մի ահագին խեցեղեն ամանով գինի։ Նրա աչքերը հանդիպեցան իմ աչքերին և խաղաղ դեմքի վրա երևաց խռովության նման մի բան։ Նա իսկույն դուրս վազեց, երևի, հորը իմացում տալու իմ մասին։

Իմ ընկերները դեռ ինձ «մարդի» տեղ չէին դնում և այս պատճառով նրանցից ոչ մեկը չմտածեց ներկայացնել ինձ։ Իսկ որսորդը այն աստիճան զբաղված էր իր հյուրերով, որ կամ չնկատեց ինձ, կամ տեսավ և չճանաչեց։ Վերջինը ավելի հավանական էր։

— Ո՞ւր է,— ձայն տվեց նա, շփոթված ներս մտնելով։- Ո՞ւր է Ֆարհատը։

Ես մոտեցա նրան։

— Ֆարհատ ջան, դո՞ւն ես, քո հոգուն մատաղ,— բացականչեց նա ինձ գրկելով, և ուրախության արտասուքը ցողվեցավ ալեխառն մորուքի վրա։— Տղա՛ս, աստծու աչքը վրադ լինի, ո՛րքան մեծացել ես դու… ի՞նչ շնորհալի տղա ես դարձել Կարո, որտեղի՞ց գտար դրան։ Ես չէի ճանաչելու, եթե Մարոն չասեր։

Կարոն կարճ կերպով պատմեց, թե որտեղ և ինչ դրության մեջ գտավ ինձ։ Որսորդը սկսեց ծիծաղել։

— Ես այդ սպասում էի, որ դու կփախչես այն անպիտանի մոտից,— ասաց նա,— բայց ափսո՛ս, որ երկար մնացիր այն «դժոխքի» մեջ:

Դժոխք կոչում էր որսորդը տեր Թոդիկի դպրոցին: Այդ խոսքը կրկին հիշեցրեց ինձ վաղեմի տանջանքները, որ առժամանակ մոռացության էի տվել:

Գեղեցիկ Մարոն հեռվից նայում էր հոր գգվանքին, կարծես, նա էլ ուզում էր մոտենալ ինձ, կարծես նրա փակված շրթունքի մեջ պահված էին ինձ համար մի քանի քաղցրիկ խոսքեր — «ես էլ ուրախ եմ, Ֆարհատ, շա՛տ ուրախ, քեզ տեսնելու համար»…: Բայց ոչ, հայ աղջկա ամոթխածությունը երկաթի փականք էր դրել նրա լեզվին, ես այս խոսքերը կարդում էի նրա ուրախությունից պայծառացած երեսի վրա:

Որսորդը սկսեց այնուհետև հարցնել մորս մասին, քույրերիս մասին, թե որպես ապրում են նրանք, ինչ վիճակի մեջ են գտնվում, ով է հոգ տանում նրանց անբախտությանը: Քաջալերեց ինձ, թե ես կարող էի օգնել նրանց, մխիթարել մորս և մտածել քույրերիս բախտավորության մասին: Նա ավելացրեց, թե շատ ուրախ է, տեսնելով, որ ես ընկել եմ Կարոյի հասարակության մեջ և թե այդ ընկերությունը կարող էր օգտավետ վախճանի հասցնել ինձ: Հետո նա դարձավ դեպի Մարոն.

— Դու ինչո՞ւ մոտ չես գալիս, չես հարցնում Մարիամի, Մագթաղի մասին: Չէ՞ որ նրանք քո հին քույրիկներն էին. ամեն օր մեկմեկու ծամեր էիք փետտում, մեկ-մեկու երես էիք ծվատում էլի բարիշում էիք: Այդպես չէ՞, իմ կատվիկ, մոռացե՞լ ես, հա՛:

Ես հիշեցի այն գիշերը, այն ձմեռային սարսափելի գիշերը, երբ մրրիկը դրսում կատաղաբար մռնչում էր և ձյունը առատորեն մաղվում էր երկնքից: Մենք նստած էինք գերեզմանի պես ցուրտ խրճիթի մեջ: Մայրս կարում էր, ես վառարանի մոտ քրքրում էի հանգած կրակը: Մարիամը և Մագթաղը քնած էին: Աշտանակի վրա յուղը սպառված ճրագը պլպլում էր, որպես մի շնչավոր, որ հոգեվարքի մեջ է գտնվում: Հանկարծ դևի նման ներս վազեց Մարոն, ճարպիկ, աշխուժով լի մի երեխա, որի անմեղ չարություններն անգամ սիրելի էին մեզ: Ես հիշեցի, թե որպես քարշ ընկած մորս պարանոցին, հիմար-հիմար շատախոսում էր նա և տաք-տաք համբուրում էր մորս երեսը: Նա ուրախանում էր, որ ձյուն է գալիս, և մի առանձին երեխայական ոգևորությամբ ասում էր, վաղ առավոտյան կվազվզե նրա մեջ: Ես հիշեցի, թե որպես նա հարձակվեցավ քնած Մարիամի վրա, իր փոքրիկ ճանկերով բռնեց նրա կոկորդից, և կրկին կայծակի արագությամբ դուրս փախավ մեր խրճիթից:

Կրկին տեսնում էի այն կյանքով լի, վայրենի երեխային, այժմ հասուն, վայելուչ կազմվածքով, կանգնած էր իմ առջև որպես մի լեռնային հրեշտակ: Նույն հրեղեն աչքերը և այժմ վառվում էին լի գեղեցիկ վրդովմունքով, նույն սևուկ երեսը իր դիվական ժպիտով և այժմ կախարդիչ էր:

Չնայելով հոր խոսքերին, Մարոն չմոտեցավ ինձ. միայն ծիծաղեց և սենյակից դուրս գնաց, հյուրերի համար մի նոր բան բերելու: Ամոթխածությունը ավելի իմ կողմի՞ց էր, թե նրա կողմից,— չեմ հիշում, միայն երկուսիս լեզուն էլ պապանձված էր: Ես չգիտեի, ինչ խոսել նրա հետ, դրա համար շատ ուրախացա, երբ Մարոն իր հեռանալով դուրս բերեց ինձ իմ նեղ դրությունից: Ես այն ժամանակ միայն զգացի իմ անշնորհքությունը, թե ո՛ր աստիճան անկիրթ էի, թե որքան կոշտ և կոպիտ պատրաստել էր ինձ դպրոցը:

Տղերքը հավաքվեցան ընթրիքի սեղանի շուրջը: Ավոն նույնպես նստեց մեզ մոտ: Մարոն սպասավորություն էր անում, անդադար ուտելիքներ և ըմպելիքներ ներս բերելով և դուրս տանելով: Երևում էր, որ տանուտերը առաջուց գիտեր իր հյուրերի

գալուստը և կանխապես պատրաստություններ էր տեսել նրան համար: Գյուղական ամեն տեսակ բարիքներից, ինչ որ կարող է մատակարարել երկրագործի և խաշնարածի տնտեսությունը, գտնվում էր սեղանի վրա:

Ընթրիքի ժամանակ ես դեռ նոր զննեցի ծերունի որսորդի խորշոմներով պատած դեմքը, նրա գլխի և մորուքի ալևորած մազերը, որոնք առաջ, իմ տեսած ժամանակը, բոլորովին թուխ էին, իսկ այժմ այն երկաթի մարդը ծերացել, շատ և շատ փոխվել էր: Նա պահպանել էր միայն իր վաղեմի աշխույժը, եռանդի կենդանությունը և հոգու ազնվությունը, որպես մի բույս, որ թառամած, ցամաքած դրության մեջ ևս պահպանում է իր անուշահոտությունը:

— Ֆարհատ,— ասաց նա ինձ,— երբ առավոտյան լույսը կծագի, կասեմ Մարոյին քեզ տանե մեր լեռների վրա ման ածե, և դու կտեսնես, թե ո՛րքան գեղեցիկ են մեր լեռները:

Իմ սիրտը թնդաց ուրախությունից, ես շատ էի սիրում լեռը. որպես դաշտային երկրի բնակիչ, լեռը միշտ ինձ վրա մի առանձին դյութական տպավորություն էր գործում: Բայց իմ ուրախությունը կրկնապատիկ եղավ, երբ մտածում էի, թե Մարոն պիտի առաջնորդե ինձ իմ լեռնային զբոսանքի ժամանակ: Ա՛խ, ե՛րբ պիտի լուսանար այդ գեղեցիկ առավոտը: Համոզված էի, որ Մարոն երկար պիտի խոսեր ինձ հետ, շատ բաներ պիտի հարցներ քույրերիս մասին, մորս մասին, իր բոլոր հին ծանոթների մասին: Բայց դեռ բավական ժամանակ կար մինչև առավոտը. աքաղաղները դեռ նոր էին սկսել երկրորդ անգամ կանչել:

Կ. գյուղը, ուր բնակվում էր ծերունի որսորդը, գտնվում էր Դուշմանա լեռների վրա, որոնք կազմում էին մի շղթա, որ բաժանում էր Սալմաստը Հաղբակից: Վասպուրականի սարոտ գավառներից մեկն է Հաղբակը, որ իր երկարատև ձմեռով և հովասուն ամառով, թեև ավելի հարմարություն չունի երկրագործության, բայց իր խոտավետ արոտներով խիստ նպաստավոր է անասնապահության, որը ժողովրդի գլխավոր պարապմունքն է: Ամենաջերմ ամառները միայն կարող են հալել մշտական ձյունը սարերի գագաթից. օդը տոգորված է կազդուրիչ խոնավությամբ, և ձորերի միջով վազող վտակները և աղբյուրները երբեք չեն ցամաքում:

Հաղբակա սարերի վրա և ձորերի մեջ ցրված են հայոց բազմաթիվ գյուղեր, որոնք ներկայացնում են մարդու կեցության խորին-նախնական դրությունը: Գետնափոր տները զանազան ոլոր-մոլոր ուղղությամբ՝ տարված են հողի տակով և ձևացնում են կատարյալ լաբիրինթոս. նրանց մեջ իրանց անասունների հետ բնակվում են մարդիկ պարզ, խաղաղական կյանքով: Ամենափորձյալ աչքն անգամ չէ կարող որոշել գետնափոր խրճիթները հողի տափարակ մակերևույթից, միայն վաղորդյան ծուխը, երթիկների ծակերից դուրս հոսվող ծուխը հիշեցնում է՝ թե այն ստորերկրյա խորշերի մեջ ապրում են մարդիկ…

Գարնան սկզբից բնակիչները իրանց հոտերի հետ գաղթում են դեպի հեռավոր սարերի արոտները, այնտեղ ապրում են վրանների տակ մինչև աշնան վերջը: Գյուղերը համարյա թե դատարակվում են տղամարդերից, գերդաստանի ծերունիքը միայն մնում են հսկելու տներին, որ ազատ պահեն նրանց չար ձեռքերի հրդեհելուց:

Բացի հայերից, Հաղբակա սարերի վրա թափառում են քրդերի զանազան խաշնարած ցեղեր, որոնք չունեն հաստատ բնակություն, այլ տարվա տաք ամիսները անցուցանում են բաց օդի տակ, իսկ ձմեռը զետեղվում են հայերի գյուղերում, և ամեն հայ ընտանիք պարտավորված է պահել մի քանի քուրդ գերդաստան նրանց անասունների հետ: Ծանրությունը և նեղությունը, որ կրում են հայերը այդ ինքնակոչ հյուրերից, հասնում է վերին աստիճանի անախորժության:

Թողնենք այն, որ տանտիրոջ կացարանն իր համար ևս նեղ և անբավական է, ուր մնաց որ նա ավելորդ մարդիկ ընդուներ յուր խրճիթի մեջ: Բայց անտանելին այն է, որ շատ անգամ ձմեռը տևում է ավելի երկար քան թե սովորականը, քուրդը սպառնում է իր պաշարը, այն ժամանակ հյուրընկալը պարտավոր է խնամել նորան և նրա անասուններին, մինչև սարերից ձյունը բարձրանա, խոտերը բուսնեն, և նա կարողանա այնուհետև ապրել աստուծո սեղանից: Տանուտիրոջ մի փոքր ընդդիմադրությունը կարող է նրա կյանքը վտանգի մեջ գցել հյուրի կողմից, որի զենքերը մարմնի անբաժան մասն են կազմում, և նրանց իր կրքերին համաձայն գործածելը՝ չէ արգելում ոչ մի օրենք և ոչ մի իրավունք:

Այս կիսավայրենի ազգը, որ կառավարվում է իր բեկերով և շեյխերով, պահպանել է բոլոր բարբարոսական հատկությունները մի ժողովրդի, որ չէ խոնարհվում ոչ մի իշխանության, և իր ազատությունը գտնում է իր սրի և իր կոպիտ բռնակալական ուժի մեջ: Իսկ նույն բռնության անբախտ զոհը է մի ազգ, որ վաղուց կորցրել է իր սուրը, որի մեջ վաղուց սպանվել է ազատության և ինքնապաշտպանության ոգին, որ իր գլուխը ամենայն հնազանդությամբ խոնարհեցնում է ամեն մի անիրավ ձեռքի ներքո…

ԺՉ

ՍԻՐԱՀԱՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Մյուս օրը ես զարթեցա խիստ ուշ: ճանապարհի հոգնածությունը, որ առաջին անգամն էր իմ կյանքում, բաշխել էր ինձ հանգիստ և երկարատև քուն: Ընկերներիցս ոչ մեկը չկար այնտեղ, ես մենակ էի մնացել քնարանում: Իսկույն հագնվեցա և դուրս եկա, որ տեսնեմ ո՞ւր են գնացել նրանք:

Գեղեցի՜կ էր լեռնային առավոտը. ճնճղուկները տակավին չընկչնկում էին վարսագեղ ուռիների վրա, որոնցմով հովանավորված էր որսորդի տնակը, և արևի առաջին ճառագայթներով լուսավորված բակում հավերն ախորժանոք քաղում էին գետնից հունդերի հատիկները, որ ցրվում էր Մարոն:

Դուրս գալով իմ սենեկից, ես առաջին անգամ նկատեցի, որ Ավոյի տնակը թե իր շինվածքով և թե մաքրությամբ համարյա մի պալատ էր, գյուղի մյուս խրճիթներն հետ համեմատելով: Նականգնած էր գետնի մակերևույթից բավականին բարձր, պարունակում էր իր մեջ մի քանի փոքրիկ սենյակներ, նեղ պատուհաններով, ուր ապակու փոխարեն լուսամուտները պատած էին թղթով: Պատերը թե ներսից և թե դրսից ծեփած էին սպիտակ կավով, որոնք շատ կոկելուց մի առանձին փայլ էին ստացել: Խրճթի մեկ մասը բաժանած էր անասունների համար, այնտեղ զետեղված էին՝ ախոռը, մարագը և ոչխարների գոմը:

Մարոն ինձ տեսնելով, մոտ վազեց և հեզնական ժպիտը երեսին, ասաց.

— Տե՜ս, նրանք գնացին, քեզ այստեղ թողեցին, ի՜նչ տղա ես, այսքան էլ կքնե՞ն. կասես թե, շատ ճանապարհ է եկել,— մի օր և կես, այն էլ ձիով,— դրա համար հոգնել է… Ծո՜ւյլ:— Ես ոտով մինչև Բարդողիմեոս գնացի, ինչքան հայրիկն ասաց, ձին չնստեցի, ուխտ էի արած: Երբ այնտեղ հասանք, չես հավատա Ֆարհատ, ողջ գիշերը չքնեցի, հենց պար էի գալիս և թռչկոտում…: Ա՜խ, ի՜նչ լավ էր այն գիշերը, ափսոս այնտեղ չէիր, Ֆարհատ: Ուխտավորները հենց ածում էին, ածում, «ջան գյուլում» ասում, ու խաղում էին մինչև լույս…:

Որքան ինձ ախորժելի էր լսել Մարոյից նրա ուխտագնացության ուրախալի, միևնույն ժամանակ անկապ պատմությունը, այսուամենայնիվ ես անհամբերությամբ նրա խոսքը կտրեցի, հարցնելով, թե ո՞ւր գնացին տղերքը և ինչո՞ւ ինձ թողեցին:

Նա ասաց, թե տղերքը տեսնելով, ես քնած եմ, թողեցին հանգստանալ, իրանք գնացին որսորդության, թե նրանք պատվիրեցին Մարոյին հայտնել ինձ՝ եթե ես ցանկություն կունենայի մասնակցել որսորդությանը, կարող էի գտնել նրանց Խանա-Սորի ձորի մեջ:

— Կուզե՞ս ասեմ, որ Մըհեն քո ձին թամքե,— հարցրեց Մարոն:— Դու մի բան չե՞ս ուտի, ճանապարհը հեռու է, մինչև Խանա-Սորի ձորը, շատ հեռու է, կքաղցես: Ես հիմա կաթը տաքացրի, սերը քեզ համար պահեցի: Կուտե՞ս բերեմ:

«Քեզ համար պահեցի»…— այս խոսքերը հնչեցին իմ ականջին, որպես քրոջ խոսքեր իրանց բոլոր անուշահոտությամբ: Նա դեռ մտերիմ էր ինձ հետ, որպես առաջ, երբ դեռ երեխա էր, երբ իրանց տանից կերակուր էր բերում մեզ, որը բարի որսորդը բաժանում է իր աղքատ դրացու հետ:

— Բե՛ր, կուտեմ,— պատասխանեցի ես:— Ինչո՞ւ հենց «ինձ համար» սերը,— հարցրի հետո:

— «Լավ է նոր սատանան, քան հին քահանան»,— ասաց նա ծիծաղելով:— Կարոն և Ասլանը էլ այնքան երեսի տեղ չունեն, Սագոն խո զահլա է տանում. ես նրան համբերել չեմ կարող: Բայց մենք վաղվա ընկերներ ենք, այդպես չէ՞, Ֆարհատ:

— Ես այդպես չէի մտածում, ես մտածում էի, երբ Մարոն ինձ տեսնե, կասե, դու իմ ընկերը չես, դու ինձ ծեծում էիր, երբ երեխա էի:

— Ի՞նչ անենք, ես էլ Մարիամին ծեծում էի, մի օր երեսը ճանկռտեցի, արյուն դուրս եկավ. հիմա այնքան ուզում եմ, այնքան ուզում եմ, որ նրան տեսնեմ: Նա հիմա ինձ չի կանչի «բոշա», նա հիմա խելոքացել է, չէ՞, Ֆարհատ:

— Ավելի, քան Մագթաղը: Բայց դու Մագթաղին շատ էիր սիրում:

— Մագթաղը խեղճ երեխա էր, Մարիամը գազան էր. ա՛խ, աստված, մեկ օր չէր անցնի, որ մենք մեկ մեկու պատահելիս՝ չկռվենք: Ի՜նչքան հիմարներ էինք մենք…:

Վաղեմի հիշողությունները զարթնեցրին նրա մեջ տխուր զգացմունքներ, և ուրախ աղջկա պայծառ երեսը մռայլվեցավ սև թախիծներով:

— Ա՛խ, ի՜նչ լավ էր Սալմաստը, Ֆարհատ, այն այգիները, այն պարտեզները… Այստեղ, այս սարերի մեջ մանր թուփերից ավելի ոչինչ չես տեսնի: Ա՛խ, ի՜նչ լավ էր այնտեղ:

— Օ՛հ, ես իստակ մոռացա քո նախաճաշիկը…— ասաց նա և վազեց դեպի մերձակա սենյակը:

Ես մտա քնարանը, որ միևնույն ժամանակ տանուտիրոջ հյուրանոցն էր: Խաթունը, ծերունի որսորդի տնակալուչ պառավը, արդեն հավաքել էր իմ քնաշորերը և սենյակը սարքել էր: Պառավի հնացած աչքերը չկարողացան ճանաչել ինձ. նա խիստ կարճատես կերպով նայեց իմ երեսին, ինչ-որ փնթփնթաց քթի տակից, և դողդոջուն քայլերով դուրս գնաց:

Քանի րոպեից հետո, փոքրիկ փայտյա մատուցարանի վրա դրած, Մարոն ներս բերավ իմ նախաճաշիկը, որ բաղկանում էր սերից խառն մեղրի հետ. ես սկսեցի

ուտել սպիտակ լավաշներով: Մարոն կանգնած էր իմ մոտ և պտտեցնում էր յուր «թեշին»: Կարծես, այն գեղեցիկ մատները չէին սովորել անգործ մնալ:

— Ֆարհատ, դու շուտով չես գնա մեր տանից. այդպես չէ՞,— հարցրեց նա շարունակելով «թեշին» պտտեցնելը:— Ի՜նչ վատ բուրդ է, սատանան տանե, որքան աշխատում ես բարակ մանել, գլուխ չէ գալիս:

— Դու ուզո՞ւմ ես, ձեզ մոտ մնամ:

— Ինչո՞ւ չեմ ուզում: Բայց այստեղ լավ չէ գյուղումը. ես հայրիկին կասեմ մեզ տանե «օբան», այնտեղ լավ է, շա՜տ լավ է չադրների մեջ: Առավոտյան վեր ես կենում, մտիկ ես տալիս չորս կողմդ, ամեն տեղ կանաչ է, ծաղիկները վառվում են ուլունքների նման, գառները, ոչխարները թրթռում են դեպի արոտները…:

Սույն միջոցին հայտնվեցավ Մըհեի վիթխարի կերպարանքը, նա կիսով չափ կռանալով, անցավ դռնից և կանգնելով շեմքի մոտ, ասաց.

— Ձին հազիր է,— և ծուռը կերպով նայելով Մարոյի երեսին, դուրս գնաց:

Ես հրացանս քաշ տալով ուսիցս, պատրաստվեցա ճանապարհ ընկնել:

— Դու ճանապարհն իմանում ե՞ս,— հարցրեց Մարոն:

— Չեմ իմանում, բայց կգտնեմ:

— Դժվար է: Ես քեզ կհասցնեմ մինչև «Ծակ-քարը», այնտեղից ուղիղ ճանապարհ կա մինչև Խանա-Սորի ձորը:

— Հետո դու կարո՞ղ ես մենակ ետ դառնալ:

— Ես գիշերն էլ չեմ վախենում, երբ սարերի վերա մենակ ման եմ գալիս,— պատասխանեց նա ժպտալով:

— Բայց ինձ այն ասա՛, նրանք ձիո՞վ գնացին:

— Չէ՛, ոտով:

— Ես ինչո՞ւ չեմ գնում ոտով: Մըհե, ինձ պետք չէ:

— Ձի՜ն պետք չէ՜…— կրկնեց վիթխարին, դժգոհությամբ իմ երեսին նայելով:— Էդ պետք էր առաջ փիքր անել և սատանայի տանջանք չտալ մարդուն…:

— Նա գի՞ժ է, ի՞նչ է,— հարցրի Մարոյից, երբ ծառան հեռացավ:

— Նա շատ լավ մարդ է, բայց կտրաքվի, թե մի բանի վրա չխոսա, երբ նրան դուր չէ գալիս:

Մի նեղ շավիղ, որ տանում էր դեպի Ծակ-քարը, ոլոր-մոլոր պտույտներով անցնում էր բլուրների միջով, անդադար դեպի վեր բարձրանալով և դեպի վայր իջնելով: Մարոն հագած ուներ մի պարզ, խայտաճամուկ զգեստ, որը կարելի էր տեսնել քուրդ հովվուհիների հագին: Նրա սև գանգուրները գեղեցիկ կերպով ծածանվում էին բարակ քամուց, որ փչում էր ծովակից: Ամենահամարձակ այծյամն այնպես թեթև, այնպես հանդուգն չէր կարող թռչել այն քարաժայռերի միջով, որպես Մարոն: Լեռնային օդը և շտապ ճանապարհորդությունը ազդեցին մանուկ օրիորդի երեսի

վրա, և նրա արևից այրված թուխ-թավիշյա քաշերը ստացան մուգ-վարդագույն պայծառություն:

Ես բոլորովին հիացած էի այն կիսավայրենի լեռնաբնակի սիրուն և վայելուչ կազմվածքով, որ այնքան առաձգական էր և թեքուն: Ես երբեք երևակայել չեմ կարող այնպիսի գեղեցիկ աչքեր, մե՛ծ սևորակ աչքեր, հովանավորված խիտ թերթերունքով, այնպիսի գեղագրական հոնքեր, որոնք միանում էին խոտորնակի գծերով: Ո՛րքան ինքնավստահություն կար նրա համարձակ շարժվածքների մեջ. ո՛րքան կյանք կար այն բնության ազատ և հավատարիմ զավակի մեջ…: Ես իմ մտքում նրան համեմատում էի գեղեցիկ Սոնայի հետ, որի ամեն մի գծերից արտահայտվում էր ընտանեկան բռնությունից ճնշված և տանջված աղջկա երկչոտ-ամոթխածությունը…: Մե՛ծ տարբերություն…:

Մի տեղ, ճանապարհի կողքին, կուտակված էր փոքրիկ բլուր, որ բաղկանում էր քարերի մանր կտորներից. հասնելով այնտեղ, Մարոն առեց գետնից մի քար և նետեց նույն բլուրի վրա: Ես հարցրի այս խորհրդական գործողության պատճառը: Նա պատասխանեց, թե այս բլուրին ասում են «սիրահարի գերեզման» և պատմեց մի հին ավանդություն, որպես թե, մի տղա և մի աղջիկ միմյանց շատ սիրելիս են եղել, հայրը չէ ուզեցել յուր աղջկան տղային տալ. նրանք միաբանվում են, և տղան մի գիշեր փախցնում է իր սիրուհին: Հայրն իմանում է, աղջկա ետնեն է ընկնում, և այս ձորի մեջ բռնելով առանց մի խոսք ասելու իր խենջարը խրում է նրա սիրտը և սպանում է: Տղան այս տեսնելով, չէ կարողանում համբերել իր կսկիծին, և մի ժայռի գլխից իրան վայր է գցում և մեռնում է:— Մարոն ցույց տվեց բարձր ժայռը, որի մոտ նույնպես կուտակված էին մանր քարերի կտորտանք:— Աղջկան թաղում են այնտեղ, ուր թափվել էր նրա արյունը, իսկ տղային այնտեղ, ուր ընկած էր նա ժայռից: Այն օրից նզովք էր դրվել, որ ամեն մի ճանապարհորդ, այնտեղից անցնելով, մի քար գցում է նրանց գերեզմանի վրա, ի նշան այն նախատինքին, որով այն աղջիկը մրոտեց իր հոր և մոր անունը:

— Դու էլ այն աղջկան վա՞տ ես համարում, որ քարկոծում ես խեղճի գերեզմանը,— հարցրի ես:

— Մեկ աղջիկ, որ ուրիշ տղայի ետնեն է ընկնում, այդ վատ չէ՞ — հարցրեց նա պինդ ձայնով:

— Ապա ի՞նչ պետք է անե, երբ սիրում է տղային: Սիրելն ինչով է վատ:

Նա սկսեց ծիծաղել, որպես թե լսում էր ինձանից մի հիմար խոսք:

— Աղջիկն ի՞նչպես կարող է սիրել տղային, երբ հերն ու մերը ատում են: Հա՛ թող սիրե, այդ ոչինչ, նրա կամքով խո չէ՞, որ օտարի տղայի ետևից թրև է գալիս: Ամոթ չէ՞:

Ես ուզեցի հերքել նրա ասածը, բայց նա իմ խոսքը կտրեց, և մի կծու խոժոռմունք գործելով յուր գեղեցիկ երեսի վրա, ասաց.

— Է՛հ, դատարկ բաներ մի՛ խոսի, գլուխս տանում ես…:

Նա վազեց առաջ:

Ճանապարհը Մարոյի համար սովորական լինելով, չէր զգում նրա երկարությունը: Ես համարյա թե հոգնեցա: Բարձրանալով բլուրի գագաթին, նա կանչեց.

— Դիբո՛, Դիբո՛:

Նրա զիլ և ձգական ձայնը արծաթե հնչյուններով տարածվեցավ հեռու սարերի մեջ:

Հանդիպակած բլուրի ետևից հայտնվեցան մի քանի փոքրիկ կերպարանքներ, որոնք թռչկոտելով և ճիչ բարձրացնելով, վազեցին Մարոյի առաջ: Դրանք երեք կիսամերկ աղջիկներ էին, այնտեղ արածացնում էին Կ. գյուղի ուլերը և գառները: Մարոն բաժանեց նրանց հաց և պանիր, որ բերել էր իր հետ: Փոքրիկ հովվուհիքն ուրախությամբ ընդունեցին առատ նվերը բարերար ձեռքից և իսկույն սկսեցին ուտել:

Ես խոսեցրի մեկին, որին Մարոն կոչում էր Դիբո:

— Ի՞նչ կանես, եթե գայլը քո գառներից մեկը գողանա:

— Սորոն չի թողնի,— պատասխանեց փոքրիկ հովվուհին, խոժոռած աչքերով նայելով իմ երեսին:

— Ո՞վ է Սորոն:

Նա փոխանակ պատասխանելու, երեսը շուռ տվեց, և մատները բերնին դնելով, շվացրուց: Ժայռերի ետևից հայտնվեցավ կապտագույն շուն, որ մազոտ պոչը թափ տալով, վազեց Դիբոյի մոտ և խորին մտերմությամբ սպասում էր նրա հրամանին:

Տեսնելով գազանին, ես ետ քաշվեցա:

— Մի՛ վախիր,— քաջալերեց ինձ Դիբոն:— Սորոյին կասեմ՝ քեզ չկծե:

Ես ծիծաղեցա: Մարոն գրկեց Դիբոյին, համբուրեց նրա այրված թշերը:

— Այստեղից մենք կբաժանվենք,— դարձա ես դեպի Մարոն:

— Կուզե՞ս, քեզ կտանեմ մինչև Խանա-Սորի ձորը,— ասաց նա ուրախ դեմքով:— Վախենում եմ ճանապարհը կորցնես:

Ես պատասխանեցի, թե այդ խիստ դժվար կլիներ նրա համար, որովհետև արեգակն արդեն սկսել էր այրել, և խնդրեցի միայն ցույց տալ, թե ո՞ր կողմից պետք է գնալ: Նա այնպիսի ճշտությամբ նկարագրեց ճանապարհի ընթացքը, մինչ ես մտածում էի, թե աչքերս խփած կարող եմ գնալ: Երևում էր, այն լեռների բոլոր շավիղները, իրանց պտույտներով, իրանց ելևէջներով նրան ծանոթ էին: նա գիտեր յուրաքանչյուր ժայռերը, աղբյուրները, առվակները: Նա ճանաչում էր մինչև անգամ նշանավոր թուփերը:

Ես հեռացա: Մարոն երկար կանգնած «Ծակ-քարի» գլխին. հետազոտում էր իմ գնացքը, մինչև բլուրները թաքցրին իմ տեսությունից նազելի դեմքը:

ԺԷ

ԵՐԿՈՒ ՈՐՍ ՄԻԱՍԻՆ

Արեգակն արդեն բարձրացել էր յուր կեսօրյա տեղը, նրա այրող ճառագայթները, հանդիպելով սարերի հովությանը, թուլանում էին, կորցնում էին իրանց կրակոտ զորությունը: Քա՛ղցր էր շնչել լեռնային օդը, տոգորված ծաղիկների անուշահոտությամբ: Անցնելով ամեն մի բլուրից, ամեն մի հովիտից, իմ առջև բացվում էր մի նոր տեսարան, այնքան հիանալի, այնքան հափշտակիչ, որպես մի

գեղեցիկ պատկեր իր հրաշալի արհեստագործությամբ: Ուր և նայում ես, լեռնային երկրի կանաչ մակերևույթը ծածկված է բարձր և դալար խոտերով, նրանց միջից վառվում են ծաղիկների հազարավոր տեսակներն իրանց հրապուրիչ պայծառությամբ: Տեղ-տեղ խուլ մրմունջով վազում են վտակներ, ամոթխածաբար թաքնված խոտերի մեջ, երբեմն նրանք նազելով ցույց են տալիս իրանց արծաթափայլ երեսիկները, և կրկին ժպտելով ծածկվում են խիտ եղեգնաբույսերի մեջ: Փոքրիկ ջրային ծտերըմիայն ուրախ-ուրախ սավառնում են նույն վտակների վրա, և անդադար վերուվայր թռչկոտելով, դիպցնում են իրանց կուրծքը բյուրեղային մակերևույթին, խլելով ալիքների միջից մի անբախտ միջատ, որ տարվում էր անխնա հոսանքի հետ…:

Աչքս ես դարձնում եմ դեպի Դուշմանա ձորը, և ահա՛ մերկ քարաժայռի գագաթին դեռ կանգնած են կիսակործան աշտարակները մի հին ամրոցի: Աշտարակներից մեկի ատամնավոր վերնապարիսպի գլխին միայնակ նստած է ահագին սև արծիվը և լուռ մտախոհությամբ նայում է դեպի խորին անդունդը, որ բացված է նրա առջև: նա նստած է անշարժ և վեհափառ կերպով, և նրա սրատես աչքերը որոնում են ձորի մթին խորության մեջ ցանկալի որսը…

Եվ ակամա հիշում ես հին ավանդությունը՝ արդյոք նա չէ՞ր մի ժամանակ այդ ավերակների տիրապետող հսկան, որ չար կախարդի դյութելով արծվի կերպարանք ստացավ, որ ճնշում էր իր բռնության ներքո ամեն կենդանություն, որ ուր և գնում էր, իր ետևից թողնում էր անապատ և ամայություն…: Նույն աշտարակի բարձրությունից, ուր այժմ նստած էր արծիվը, ամեն առավոտ մի զոհ գլորվում էր դեպի խորին անդունդը… մի զո՛հ, որից նույն գիշեր խլել էր ամրոցի իշխանը նրա կուսական անմեղությունը…

Այսպես, հափշտակված երբեմն բնության գեղեցկություններով և երբեմն հին ավանդությունների հիշողությամբ, շարունակում էի իմ գնացքը: Իսկ բոլոր տպավորությունները հետզհետե անհայտանում էին, ես ընկնում էի իմ կախարդական ինքնամոռացության մեջ: Բայց մի բան մոռանալ կարող չէի, մի տպավորություն մնում էր իմ մտքում անջնջելի,— այն էր Մարոյի գեղեցիկ պատկերը:

Բայց մի՞թե նրա մեջ սիրտ կար, ջե՛րմ և սիրող սիրտ, մի՞թե նա զգում էր, թե ինչ բան է սերը…: Ոչ, նա այդ չէր զգում, նրա հոգու սրբարանի մեջ երբեք չէր վառվել այդ կրակը, եթե ոչ, նա այնպես անգութ կերպով չէր քարկոծի «սիրահարի գերեզմանը»…

Մարոն մի տեսակ ստրուկ էր, որպես Սոնան, նա ճնշված էր ծնողաց բռնակալության ներքո, իսկ Մարոն վաղեմի նախապաշարմունքների, բայց վերջինն ավելի սարսափելի կերպով խեղդում է ամեն մի հոգեկան թարմ և ընդաբույս զգացմունք…

«Հա՛, թող սիրե, ասում էր նա, այդ ոչինչ… աղջկա կամքով խո չէ»:

Եվ իրավ, մի՞թե հայ աղջիկը կամք ունի. մի՞թե նա իր զգացմունքների տերն է:

Տարուբերվելով այսպիսի մտախոհությանը մեջ, ես բոլորովին մոռացել էի Մարոյի պատվերը ճանապարհի ուղղության մասին: Ես հասկացա, որ մոլորված եմ միայն այն ժամանակ, երբ իմ առջև բացվեցավ մի ահագին կիրճ, որից անցնել անհնարին էր: Ետ դառնալ եկած ճանապարհով չէի կարող, որովհետև ամենևին չէի հիշում, թե ո՞րպես հայտնվեցա այնտեղ, իսկ հառաջ գնալ անկարելի էր:

Ես բոլորովին շփոթվեցա:

Արևն արդեն սկսել էր թեքվել դեպի գիշերային մուտքը, երեկոյան ցուրտը հետզհետե դառնում էր անտանելի: Մի կողմից ես զգում էի հոգնածություն, մյուս կողմից, քաղցը նեղում էր ինձ: Ո՛րքան երկար պետք է թափառած լինեի ես, որ անցուցել էի այնքան ժամանակ. իսկ Մարոս ասում էր, թե կհասնեմ որսորդության տեղը ո՛չ հետո, քան կեսօրից երկու ժամ անցած: Իսկ այժմ երեկո էր: Արևի թեքված ճառագայթները լուսավորում էին սարերի գագաթները միայն, որոնց ստվերը գնալով՝ ընդարձակ և հսկայական տարածություն էր ստանում:

Ես հիշեցի, Մարոն ինձ ճանապարհ գցելու ժամանակ դրեց իմ որսորդական մաղախի մեջ մի շիշ, դուրս բերեցի, նա լիքն էր գինով: Մաղախիս մեջ գտա և լավաշում փաթաթած սառն միս: Իմ ճաշն արդեն պատրաստ էր: Նստելով փափուկ խոտերի վրա, ես հագեցրի իմ քաղցը, սպառված ուժերս կրկին վերադարձան, ես բոլորովին հանգստացա: Այժմ ի՞նչ պետք է անել, դեպի ո՞ր կողմ գնալ — կրկին զարթեցավ իմ մեջ անհանգստությունը:

Աչք ածելով իմ չորեք կողմը, ես հարմար համարեցի վեր ելնել մերձավոր սարի բարձրությունը և այնտեղից դիտել, թե դեպի ո՞ր կողմը կարելի էր գնալ: Այդ տևեց քառորդ ժամ: Բարձրավանդակից ես տեսա սարի մյուս կողմում դեպի աջ տարածվում էր մի նեղ տափարակ, որի վրա տեղ-տեղ նկատելի էին լինում սև և շարժուն կետեր, որոնց ամբողջ հավաքածուն նմանություն էր բերում արածող անասունների նախիրեն: Այդ տեսարանը խիստ ուրախություն պատճառեց ինձ, ես մտածում էի՝ եթե նրանք հոտեր են, ուրեմն, կունենան իրանց մոտ և հովիվներ, որոնք ցույց կտան ինձ ճանապարհը գոնյա ետ դառնալ Կ. գյուղը: Այս նպատակով ես սկսեցի վայր իջնել դեպի տափարակը, և բավականին հառաջ գնալով, նկատեցի, որ իմ երևակայությունը խաբել էր ինձ, շարժուն կետերն անասուններ չէին, այլ թուփեր, որոնք տեղ-տեղ ծածկում էին անապատի անհարթ երեսը, որը հեռվից երևում էր որպես տափարակ:

Այժմ ի՞նչ պետք էր անել: Ես բոլորովին ընկա հուսահատության մեջ: Ես երկյուղ չունեի, որ գիշերը բացօթյա կմնամ լեռների մեջ, ես երկյուղ չունեի ոչ ցրտից և ոչ գազաններից: Ես միայն ամոթ էի կրում, իմ հպարտությունը տանջում էր ինձ: Ես ամոթ էի կրում Մարոյից, որ այնպես հիմարաբար վարվեցա նրա ուղեցուցության հետ: Ես ամոթ էի կրում ընկերներիցս, որոնք առաջին քայլից կնկատեին իմ թուլությունները և իմ անընդունակությունը…:

Հանկարծ լսելի եղավ մի խուլ որոտմունք, որի արձագանքը կրկնվեցավ հեռավոր լեռների մեջ, նրան հետևեց երկրորդը և երրորդը: Այժմ պարզ որոշեցի, թե հրացանի ձայներ էին: Բայց ո՞վքեր էին նետողները: Ընկերներս չէին կարող լինել, որովհետև իմ գտնված տեղը շատ հեռու էր Խանա-Սորի ձորից: Ուրեմն, մտածում էի ես, կամ ուրիշ որսորդներ պետք է լինեն, կամ ավազակներ, որոնք թալանում էին ոչխարների հոտեր: Բայց ինձ համար միևնույն էր, ովքեր լինեին, ես միայն ուրախ էի, որ կհանդիպեմ մարդիկների:

Ես սկսեցի դիմել դեպի այն կողմը, ուսկից լսելի եղան ձայները, որքան մոտենում էի, այնքան պարզ լսելի էր լինում շների խառնաձայն աղաղակը: Այժմ անտարակույս էի, որ կհանդիպեմ որսորդների: Բայց մինչև նրանց մոտ հասնելը, պետք էր անցնել մեկ բլուրի վրայով: Դեռ նրա բարձրության կեսին չհասած, որոտաց մի կռնչյուն, և ես տեսա՝ ինձանից քսան քայլ հեռու վազում էր ահագին ղաբան (վարազ): Հրացանս ուսիցս վեր բերելը և նրան արձակելը երկու վայրկյանի գործ եղավ: Գնդակը թեև դիպավ յուր նպատակին, բայց հարվածը մահաբեր չեղավ, նա անցավ ղաբանի աջ ոտքի ազդրից: Հրեշավոր կենդանին, ամենևին չզգալով յուր վերքի ցավը, դարձավ դեպի ինձ: Հարձակմունքը այնքան շուտափույթ եղավ, որ նա ամենևին միջոց չտվեց կրկին լցնել հրացանը: Ճգնաժամը վճռական էր: Կատաղի գազանը, բարկացած,

հրաբորբոք աչքերով արդեն մոտեցել էր ինձ…: Ես մի կողմ ձգեցի հրացանը և պատրոնը, որ ձեռքիս ունեի, իմ պաշտպանության միակ զենքը մնաց խենջարս, որ նույն ակնթարթում խրվեցավ ղաբանի կողքում: Նա արձակեց մի սարսափելի հառաչանք, բայց դարձյալ չկորցրուց իր զորությունը: Նա փորձ փորձեց գործ դնել իր դուրս ցցված ժանիքները, բայց հարվածն անցավ անհաջող, որովհետև ես կայծակի արագությամբ սաստիկ թռիչք գործեցի դեպի գազանի գավակը, և նույն րոպեում խենջարիս երկրորդ զարկը խիստ խորին կերպով անցավ նորա փորի մեջ: Նա դեռ սարսափելի ընդդիմադրության պատերազմում էր: Այդ մահու և կյանքի զարհուրելի տագնապի միջոցին, ինձանից ոչ այնքան հեռու, որոտաց մի հրացան. գնդակն անցավ ուղղակի որսի գլխի մեջ. վիթխարին մի քանի անզոր շարժումներ գործեց և գլորվեցավ գետին…

Ես ետ նայեցա, տեսնում եմ՝ Մարոն, հրացանը ձեռին, հեռու կանգնած, ժպտում էր…

Ո՛վ կարող էր պատմել իմ ուրախությունը: Ես բոլորովին թաթախված արյան մեջ, վազեցի նրա մոտ, և գրկելով իմ ազատիչը, պի՛նդ ճնշեցի քաջազնական կուրծքը իմ սրտի վրա…

Մարոն պատմեց, թե բաժանվելով ինձանից, նա իսկույն չդարձավ դեպի գյուղը, այլ բարձրանալով «Ծակ-քարի» գլխին, այնտեղից հետազոտում էր իմ ուղևորությունը: Նա տեսավ, դեռ ճանապարհի կեսը չհասած, ես խոտորվեցա ուղիղ շավիղից, որ տանում էր դեպի Խանա-Սորի ձորը: Նա իսկույն վազեց իմ ետևից, միգուցե ես բոլորովին մոլորվեի լեռների մեջ: Մի քանի ժամ նա կորցրեց ինձ իր տեսությունից, և երկար որոնելով, կարողացավ գտնել այնտեղ, ուր հայտնվեցավ ղաբանը: Նա շատ անգամ կանչեց ինձ, զգուշացրեց, բայց ես տաքացած լինելով պատերազմի խռովության մեջ, չկարողացա լսել նրա ձայնը: Եվ իմ առաջին անհաջող նետումից հետո, երբ ես մի կողմ ձգեցի հրացանը և պատրոնը, նա օգուտ քաղեց այդ դեպքից, իսկույն լեցրուց հրացանը նույն պատրոնով, իսկ հետևանքը՝ արդեն հայտնի էր:

Այս խոսակցության միջոցին մենք չէինք նկատում, որ չորս հոգի կանգնած բլուրի գագաթին, դիտում էին այն տեսարանը, որ հանդիսացավ քանի րոպե առաջ: Նրանք մոտեցան մեզ. մեկը որսորդ Ավոն էր, մյուս երեքը՝ իմ ընկերներն էին: Ծերունին առեց յուր գրկի մեջ ինձ և իր դուստրը, համբուրելով ասաց.

— Դուք երկուսդ էլ արժանի եք որսորդ Ավոյի որդիք կոչվելու…

ԺԸ

ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹՅԱՆ ԽՆՁՈՐԸ

Լեռների մերկ գագաթները պատեց երեկոյան ստվերը, իսկ ձորերի մեջ լույսը հետզհետե աղոտ գույն էր ստանում, միայն ոսկեգույն ամպերը, որոնք ահագին բեկորներով գլորվում էին օդի բարձրության մեջ, դեռ արտափայլում էին հանգչող արեգակի վերջին ճառագայթների ծիրանի շառավիղներով:

Գեղեցի՛կ երեկո էր, լեռնային երեկոների այն ժամը, երբ քա՛ղցր հնչում են հովիվների երգերը, երբ ախո՛րժ է լսել արոտից դարձող ոչխարների խառնաձայն բառաչմունքը և ձիերի երամակների ուրախ խրխինջը, որոնք կայտռելով վազում են դեպի իրանց գիշերային օթևանը: Նույն ժամուն թեթև քամին նազելով քսքսվում է քո երեսին և բարակ մելոդական հնչումներով մրմնջում է՝ «շնչի՛ր լի կուրծքով անուշահոտությունը, որ ես խլել եմ հազարավոր ծաղիկներից»:

Բայց ինձ զգալի չէին այս ձայները, ես չէի լսում ոչ զեփյուռի մեղեդին և ոչ հովվի երգը, ինձ գրավել էր միայն Մարոն, միշտ նրան էի տեսնում և նրա ձայնը լսում, թեև նա ամենևին չէր խոսում:

Մեր վերադարձը դեպի Կ. գյուղը տևեց բավականին երկար, որովհետև այժմ բոլորովին այլ ճանապարհով էինք գնում: Մութը վաղուց պատել էր, և ամառային գիշերի աստղերը վառվում էին հիանալի փայլողությամբ:

Խոսակցության առարկան նույն ավուր որսորդությունն էր. ծերունի Ավոն հանաքներով ծաղրում էր Ասլանի և Սագոյի անճշտությունը, որոնց երկուսի նետումները ղաբանը սպանելու համար անցել էին իզուր: Սագոն աշխատում էր յուրյան արդարացնել զանազան պատճառներով. իսկ Ասլանը ոչինչ չէր պատասխանում, նա ընկած էր, որպես երևում էր, խիստ տխուր մտատանջության մեջ: Սովորականից ուրախ էր Կարոն. նա խորին եղբայրական բարեսրտությամբ ձեռքը դրեց իմ ուսին, ասելով.

– Դու առանց սրտի չես, Ֆարհատ, քեզանից մի բան կդուրս գա…

Մարոն գնում էր մեզանից առաջ յուր հոր հետ: Նա բոլորովին լուռ էր. կարծես, նրա հպարտությանը ընդդեմ էր լսել այն գովեստները, որոնք թափում էին նրա վրա. և կամ նա չէր ուզում հիշեցնել, թե որպիսի դժվար դրությունից ազատեց ինձ. նա աշխատում էր, որ այդ դեպքի վրա խոսացվի որքան կարելի է սակավ:

Ես բավականին ետ մնացի իմ ուղեկիցներից, խոսում էի Կարոյի հետ: Սագոն մոտեցավ մեզ, և առանց որևիցե առիթի մեր կողմից, որպես ինքն իրան խոսելով ասաց.

– Զարմանալի՛ է այդ բախտ ասած բանը, ասում են, նա մի հրեշավոր կնիկ է, երկու երես ունի, մինը առջևից, մյուսը ետևից: Առջևի երեսը թարմ և գեղեցիկ է՝ միշտ ժպտող աչքերով, նրանցով նայում է իր սիրելիներին միայն: Ետևի երեսը հնացած է, լի խորշոմներով, որպես մի զզվելի պառավի դեմք. մի հատիկ աչք միայն ունի մռայլոտ ճակատի վրա, այն ևս կույր…: Նա մի՛շտ դարձնում է դեպի ինձ այդ չարանենգ դեմքը իր սարսափելի խորշոմներով, և ես միշտ լսում եմ նրա ցամաք և գունաթափ շրթունքների միջից այդ խոսքերը՝ «Դու ինձանից ոչ մի բարիք մի՛ սպասիր»…

Նա րոպեական լռությունից հետո շարունակեց, իսկ այժմ ավելի խռովյալ ձայնով.

– Ասում են՝ մեր ժամանակներում հրաշքներ չեն լինում, հրաշք չէ՛, բա ի՞նչ զահրումար է, միանգամից – երկու որս…

Այժմ հասկացա, որ կիսախելագար Սագոյի խոսքերը կծու ակնարկություններ էին դեպի ինձ և դեպի Մարոն:

– Ի՞նչ ես ուզում ասել,– հարցրի ես:

Նա պատասխանեց ավելի վրդովված կերպով.

– Հա՛, երկու որս, մինը ղաբանը, մյուսը՝ Մարոյի սիրտը…

Նա արտասանեց այս խոսքերը այնպիսի մի հանգով, որ իսկույն գրգռեց իմ բարկությունը: Նա առանց ուշադրություն դարձնելու, շարունակեց.

– Ախար Մարոն էլ փոքր ղաբան չէ… նրան որսալը՝ ահա այդ է քաջությունը:

– Եթե դու կշարունակես այսպիսի հիմարություններ դուրս տալ, դու կդառնաս երրորդ որսը…– ասեցի ես և արդեն մերկացուցած խենջարը իմ ձեռքումն էր:

– Մի՞թե արժե կռվել այն վայրենի կատվի համար,– մեջ մտավ Ասլանը, որ նույն րոպեին մոտեցավ մեզ:

– Ա՛, երևի քե՞զ էլ է ճանկռոտել…– դարձա ես դեպի Ասլանը ավելի բարկությամբ:

Նա ոչինչ չպատասխանեց:

— Պետք է կատվի հետ կատու լինել և նրա ճանկերից ազատ մնալ…— պատասխանեց Սագոն բոլորովին վրդովված կերպով:

— Եթե ոչ, շան հետ մնում է նա միշտ անհաշտ…:

— Ամո՛թ է, տղերք,— ձայն տվեց Կարոն և կայծակի արագությամբ խլեց իմ ձեռքից խենջարը: Ասլանը ամենևին չշարժվեցավ յուր տեղից և ոչ ձեռքը տարավ դեպի իր սուրը, նրա մի այսպիսի արհամարհանքը ավելի վիրավորեց ինձ: Իսկ Սագոն, հեռու կանգնած, ծիծաղում էր: Նա բռնեց Ասլանի ձեռքից, և մի կողմ քաշելով, ասաց.

— Գնանք, չարժե երեխայի հետ գործ ունենալ…:

Ես և Կարոն մնացինք մենակ: Ծերունի որսորդը, յուր դստեր հետ, մեզանից շատ առաջ լինելով, չհասկացավ, թե ի՛նչ անցավ մեր մեջ: Կարոն սկսեց խոսել, թե իմ վրդովմունքը բոլորովին անտեղի էր, ես իզուր վիրավորեցի իմ ամենալավ ընկերներին, որոնք այնքան սիրում էին ինձ, որքան ինքը Կարոն: Նա ասաց, որ ես ոչ միայն Ասլանին հաղթել կարող չէի, այլ նույնիսկ փոքրիկ Սագոն այնպես ճարպիկ էր կռվի մեջ, որ անպատճառ ինձ կսպաներ, միայն նրանք խնայեցին ինձ: Եվ երկար խրատներ կարդալուց հետո, նա ավելացրուց, թե Սագոն մեղք չուներ, որովհետև մի քանի տարի է, որ նա սիրահարված է Մարոյի վրա, թեև օրիորդը չէ համակրում նրան:

Ահա՛, այսքանը հասկացա ես Կարոյի խոսքերից, որոնց մեծ մասն իմ նույն րոպեի խռովության մեջ բոլորովին անըմբռնելի էին: Ես ամբողջ մարմնով դեռ դողում էի, իմ լեզուն, կարծես, կապված էր, ես ոչինչ պատասխանել չկարողացա:

— Դու դեռ ջահել ես, Ֆարհատ, քեզ ես չեմ մեղադրում,— ավելացրեց նա:— Քո ընկերները լավ մարդիկ են, նրանք դարձյալ կսիրեն քեզ և կներեն:

Դառնալով դեպի Կ. գյուղը, մեր ճանապարհն ընկավ այն կողմից, ուր գտնվում էր ծերունի որսորդի որդեգրի՝ Հասոյի ագարակը: Գիշերից բավական անցել էր, երբ հասանք այնտեղ: Տղերքը վճռեցին գիշերել Հասոյի ագարակում: Այնտեղ ծերունի որսորդի որդին շինել էր ճյուղերից հյուսած մի տաղավար, որ խիստ հարմար օթևան էր գարնան գիշերների համար:

— Մնացեք այստեղ ու քեփ արեք,— ասաց ծերունին: Հետո ավելացրեց.

– Իմ հին ոսկորներն էլ չեն դիմանում գիշերվա ցրտին, ես կերթամ տուն ձեզ համար գինի ու հաց կուղարկեմ, խորովածի համար միս ունեք. իմ կենացն էլ կխմեք, խոսք չկա: Հասո, լավ պատվիր հյուրերիդ: Գնանք, Մարո:

Նրանք դեռ չէին բաժանվել մեզանից, երբ Մարոն մոտեցավ ինձ և հազիվ լսելի ձայնով շշնջաց իմ ականջին:

– Դու կմրսես, Ֆարհատ, այստեղ ցուրտ է լինում. ես տանից քեզ համար քնելու շորեր կուղարկեմ:

Գիշերային մթության մեջ ոչ ոք չնկատեց մեր խոսակցությունը, ես շնորհակալություն արեցի օրիորդին նրա բարեսրտության համար, և հայտնեցի՝ թե ես փոքր-ինչ սովորած եմ առանց ծածկոցի ևս քնել, որովհետև մեր տանում երբեք անկողին չեմ ունեցել, իմ վերմակը եղել է հորս մաշված վերարկուն, իսկ դոշակս՝ սառն հասիրը:

– Դու ղոչաղ տղա ես, Ֆարհատ, դու չես մրսի,– ասաց նա ուրախ ձայնով, և իր ձեռքով մի թեթև զարկ տալով իմ ուսին, փախավ ինձանից, երբ երկրորդ անգամ խավարի միջից լսելի եղավ ծերունի որսորդի ձայնը.

– Ո՞ւր ես, Մարո, գնա՛նք, բալաս:

Հասոն իսկույն վառեց ահագին խարույկ տաղավարի առջև, չոր փայտերը բորբոքվեցան, և լույսը տարածվեցավ հեռու մեր շրջակայքում: Այն ժամանակ միայն կարողացա լավ տեսնել վաղեմի ընկերիս — Հասոյի — վերանորոգված կերպարանքը, որը վարժատան կյանքից հետո այնքան շատ փոփոխությունների էր ենթարկվել: Մաշված և ուժից ընկած «Էշի փալանը»,— որպես կոչում էին նրան — այժմ առողջ և խիստ ժիր տղա էր դարձել: Ահա՛ ի՞նչ է նշանակում տերտերի այբ-բենը և երկրագործությունը… առաջինը մաշեց տրորեց նրա մանկությունը, առանց որևիցե մտավոր սնունդ տալու նրա գլխին… իսկ վերջինը վերանորոգեց նրա սպառված ուժերը և լեցրուց ծերունի հոր տունը հացով…:

Իսկ այս կոշտ-կոպիտ մշակի մեջ չէին երևում ոչ հոր բարեսրտությունը և ոչ քրոջ աշխուժությունը: Հասոն, եթե կարելի է այսպես կոչել, խստասիրտ և մռայլոտ արարածներից մեկն էր: Բոլոր ժամանակը նա մի քանի անգամ միայն խոսեց ինձ հետ, և նրա խոսքերը խիստ կարճ և անգույն էին: Սագոն խիստ ճշտությամբ նկատեց՝ թե «Հասոն քաղցրախոս է միայն իր եզների հետ, որոնք նրա արորը քաշում են»: Այսուամենայնիվ, ես միշտ համակրությամբ էի վարվում նրա հետ, որովհետև նա Մարոյի եղբայրն էր…

Գյուղը շատ հեռու չէր ագարակից, մենք շուտով ստացանք ծերունի որսորդի խոստացած պաշարը՝ առատ գինի և հաց: Ղաբանի մսից պատրաստված խորովածները արդեն եփված էին, իսկույն կազմվեցավ ընթրիքի սեղանը: Տղերքը չափազանց սոված լինելով, նստեցին ուտելու, ես հրաժարվեցա սեղանից, հայտնելով, թե ախորժակ չունիմ և ինձ ոչ այնքան առողջ եմ զգում: Եվ իրավ, գլուխս սաստիկ ցավում էր, և ճանապարհի անախորժ անցքից հետո ես գտնվում էի մի տենդային գրգռման մեջ, որ գնալով, ավելի և ավելի վրդովում էր ինձ, քանի մտաբերում էի իմ անպատշաճ վարմունքը Ասլանի և Սագոյի հետ: Իսկ նրանք, կարծես թե, մոռացել էին բոլորը, և ոչ մի կերպով, և ոչ մի թեթև ակնարկությամբ անգամ չէին հիշեցնում անցածը, այլ ընդհակառակն, պատմում էին Հասոյին՝ իմ և Մարոյի կռիվը ղաբանի հետ, և գովասանում էին մեր քաջասրտությունը: Իսկ նրանց մի այսպիսի ներողամտությունը ավելի ծանր էր ինձ համար. ինձ բոլորովին վիրավորական էր թվում վշտացնել մեկին, և առանց փոխադարձ բավականություն տալու, վայելել նրա ներողամտությունը: Այդ մի տեսակ ողորմություն էր, իսկ ողորմություն խնդրել ես չէի ուզում:

Ընթրիքի սեղանը կազմվել էր տաղավարի մեջ, տղերքը հավաքվել էին այնտեղ, ես պառկել էի տաղավարից դուրս խոտերի վրա, մի քանի քայլով միայն հեռու նրանցից, այնպես որ, նրանց խոսակցությունը լսելի էր ինձ:

— Ճշմարի՞տ, հիվանդ է նա,— հարցրուց Հասոն:

— Չէ՛, նա ուրիշ փորացավ ունի…— պատասխանեց Սագոն և մոտեցավ ինձ, գինով լիքը երկու բաժակներ ձեռին, և երգելով մի գեղեցիկ երգ: Տաղավարի միջից միաձայն հնչեցին ամբողջ խորով նրա շարունակությունը:

Գիշերային լռության պահուն, երկրագործի մենավոր տաղավարի մեջ, մանկահասակ պատանիների ջերմ և անկեղծ սրտերից դուրս բխած հնչյունները այնքան հոգեշարժ և ոգևորիչ էին, որ ներգործեցին իմ վրա ընկերասիրության բոլոր սուրբ և կենսագործող զորությամբ: Իմ սիրտը լցվեց մի սրբազան խաղաղությամբ, և դադարեց մրրիկը, որ այնպես սաստիկ կերպով խռովում էր ինձ: Ես չկարողացա պահել իմ արտասուքը, և ընդունելով Սագոյի ձեռքից բաժակը, միասին մոտեցանք խմբին: Նրանք նույնպես պես մի-մի բաժակ ձեռքերին, կանգնած, բոլորել էին սեղանի շուրջը: Կարոն խիստ հանդարտ և ծանր եղանակով կարդաց մի փոքրիկ ճառ: Բայց նրա խոսքերը, որոնք այնպես ազդու և զորեղ կերպով դուրս էին հոսում, մինչ այն աստիճան ներգործեցին իմ վրա, որ ես մինչև այսօր չեմ մոռացել, թեև այն օրից անցել է հիսուն տարի, այո՛, հիսուն տարի, դա քիչ չէ…

«Սիրելի՛ ընկերներ, մենք այն ազգի որդիքն ենք, որ զրկվելով հայրենական հողից, ցրված է աշխարհի զանազան անկյուններում: Մենք մի այնպիսի ժողովրդի ծնունդ ենք, որ ապրում է մի երկրում, ուր նրա խրճիթի օջախը շատ քիչ անգամ տաքանում է կրակով, որովհետև նա վառելիք չունի, որի տան մեջ լույս չկա արևը մտնելեն հետո, որովհետև նրա ճրագի յուղը վաղուց սպառվել է, որի որդիքը գիշերը քաղցած են քնում, որովհետև նա տանը հաց չունի: Արևն այրում է նրա զավակների մարմինը, ցուրտը սառեցնում է, անձրևը թրջում է, որովհետև նրանց հագուստներն այնքան քրքրված են, որ չեն կարողանում պահպանել անբախտներին եղանակների խստությունից:

Իսկ այդ ժողովուրդը ծույլ չէ. նա անդադար աշխատում է, նա աշխատում է ավելի, քան թե կներեր մարդի ուժը: Նրա կինը, նրա աղջիկը, նրա փոքրիկ երեխաներն անգամ գործակից են լինում գերդաստանի հոր աշխատությանը: Դուք տեսել եք կանայք, որոնք հնձում են արտերը, և իրանց հունձը, իրանք շալակած, բերում են կալը ծեծելու համար: Դուք տեսել եք աղջիկներ, որոնք մեծ եռանդով մաքրում են մշակության ցանքերը ավելորդ խոտաբույսերից: Դուք տեսել եք երեխաներ, որոնք արորի լծերի վրա նստած, քշում են եզները և օգնում են հոր գործին:

Այո՛, այդ ժողովուրդը ծույլ չէ, նա աշխատում է, նա ամբողջ տարին հանգստություն չունի, բայց դարձյալ ապրում է աղքատության մեջ, դա՛ռն, ցավալի աղքատության մեջ…

Ի՞նչ է պատճառը:

Հողը, որի վրա նա ապրում է, թեև մի ժամանակ իր նախնիքներին էր պատկանում, բայց այժմ դարձել է **օտար աղաների** սեփականությունը: Նա մշակում է **օտարի** հողը: Իսկ աղայի պայմանները մշակի հետ այնքան ծանր են և անշահավետ, որ նրա երկրագործության բերքը և նրա վաստակը մեծ մասամբ վայելում է կալվածատերը. մշակի համար մնում է այնքան, որով չէ կարողանում յուր կենսական ամենաանհրաժեշտ պիտույքներին անգամ բավականություն տալ:

Գյուղացու կեցության մյուս պայմաններն ևս դրա նման են: Նրա խրճիթը դրվում է աղայի հողի վրա, նրա համար հարկ է վճարում: Նրա անասուններն արածում են աղայի արոտներում, նրանց համար հարկ է վճարում: Ինքը գյուղացին, նրա ընտանիքը ապրում են աղայի հողի վրա, այնտեղ ման են գալիս, նրա ջուրն են

խմում, և իրանց գլուխներն պահպանելու համար հարկ են վճարում: Մի խոսքով, գյուղացին, բացի իր աշխատող ձեռքերից, ուրիշ ոչինչ չունի, նրան շրջապատող ամբողջ բնությունը պատկանում է աղային, և նրա մեջ գործելու համար նա պետք է զոհե իր աշխատության ամենամեծ մասը:

Ահա՛, այդ է պատճառը, սիրելի ընկերներ, որ մեր ժողովուրդը, հայրենի հողի վրա սնունդ չգտնելով, գաղթում է, անդադար գաղթում է և օտար երկրներում բախտ է որոնում: Բայց դառնո՞ւմ են գաղթականները:— Ո՛չ: Դուք գիտեք, քանի՛ հազարավոր ընտանիքներ մնացել են առանց տղամարդերի, քանի հազարավոր օջախների կրակը հանգել է, որովհետև տղամարդիկը մեռել են պանդխտության մեջ…

Մենք, որ բոլորել ենք այս սեղանի շուրջը, դուրս ենք եկել նույնպիսի ընտանիքներից, մեր մեծ մասը հայր, մայր, տուն, ազգականներ չունի,— բոլո՛րը կորած են անհայտության մեջ: Ուրեմն, մեզ ավելի հասկանալի է, թե ի՛նչ է կրում այս երկրում մշակ մարդը, որովհետև մենք երեխայությունից փորձել ենք այն ամեն դառնությունները, որովհետև մեր ամեն մեկի սրտում դեռ մնացել են անբժշկելի այն վերքերը, որ ստացել ենք բռնության կոպիտ ձեռքից:

Ընտանիքը չկարողացավ մեզ, յուր որդիներին, այնպես դաստիարակել, այնպիսի մի ուղղություն տալ, որ ձգեինք մեր վզից աղայի լուծը, և ազատ մնայինք նրա հարստահարություններից: Նա չկարողացավ մեզ սովորեցնել կյանքի և ապրուստի հաստատ պայմանները, որ մեզ համար աշխատեինք, մեզ համար գործեինք, և մեր վաստակը *օտարը* չխլեր մեր ձեռքից: Ընտանիքը չկարողացավ այդ անել, որովհետև ինքը ստրկացած էր, և ավելի ցավալին այն է, որ ստրկությունը դարձել էր նրա մեջ բնավորություն: Նա չէ՛ր բողոքում բռնության դեմ: Նա մտածում էր՝ թե աստված հենց այսպես ստեղծել էր նրան, թե նա գոհ պետք է լինի իր վիճակից, որովհետև ճակատագրից մի տառ անգամ փոխել կարող չէ…

Դպրոցը, որի աշակերտներն ենք այստեղ կանգնածներս, ավելի հաստատեց մեր մեջ ստրկությունը. դպրոցը սպանեց մեր մեջ ինքնագործունեության ուժերը: Քահանա վարժապետը մտցրուց մեր մեջ կույր հնազանդություն,— խոնարհվել և հպատակել ամեն իշխանությունների, որքան ծանր և անտանելի լիներ նրանց մեզ վրա դրած լուծը: Որովհետև ինքը վարժապետը նույնպես էր վարվում մեզ հետ: Նա ասում էր մեզ՝ թե այս աշխարհի կյանքն ունայն և անցավոր է. որքան ցավալի լինի նա, որքան ճոխ լինի նա տանջանքներով, այնքան ավելի վարձատրություն կգտնե մարդ մյուս կյանքում, որ սպասում է մեզ գերեզմանը մտնելուց հետո…

Բայց գտնվեցավ *մի ձեռք*, որ խլեց և դուրս բերեց մեզ դպրոցի բարոյապես և մտավորապես փտեցնող մթնոլորտից: Նա կանգնեցրուց մեզ ուղիղ ճանապարհի վրա: Նա սովորեցրուց մեզ կյանքի այն պայմանները, որոնցմով կարող է մարդ հանգիստ և ապահով ապրել: Նա սովորեցրուց մեզ օգնել և մեզ նման անբախտներին, որ նրանց կյանքն էլ հանգիստ լիներ, որ նրանց ապրուստն էլ ապահոված լիներ:— Եվ մենք նվիրեցինք մեզ ժողովրդի բարօրության գործին…

Խմենք, եղբայրներ, *այն մարդու* կենացը, որ մտցրուց մեր մեջ այդ ոգին, խմենք *այն գործի* հաջողության համար, որը մեր սուրբ ուխտն է»:

Բաժակները զարկվեցան մեկ մեկու և խմեցին որսորդ Ավոյի կենացը, բոլորը միաձայն գոչելով՝ «կեցցե՛ բարի գործը»…

ԵՐԱՉ

Դարձյալ նույն հին երգը, մտածում էի ես Կարոյի ճառը լսելու միջոցին— նույն երգը, որ նա երազում էր տասն և երկու տարի առաջ գյուղացիների և նրանց աղքատության մասին:

Կարոյի և նրա կուսակիցների նպատակը թվում էր ինձ ոչ միայն անգործադրելի, այլ որպես ցնորք, որպես հիվանդոտ երևակայության զառանցություն: Միթե կարելի՞ է գյուղացուն հանգստություն տալ, ազատել նրան աղայի ճանկերից, որի մեջ կա այնքան ուժ, որը վայելում է այնքան արտոնություններ: Եվ ինչո՞վ, ո՞րպես ապահովել մշակի ապրուստը, երբ ոչ մի օրենք չէր սահմանափակում աղայի կամայականությունը. երբ կառավարության ֆիրմաներն ևս մնում էին անզոր և չէին կարողանում աղաներիբռնության առաջն առնել: Ես գիտեի հարյուրավոր օրինակներ, որ ժողովրդի բարօրության մասին շնորհած արքունի ֆիրմաները մնում էին անգործադրելի. խաները և բեկերը Բարձրագույն Դռան հրովարտակը ստիպեցնում էին բերողին ծամել և կուլ տալ, կամ պատռելով և ծեծելով բերողին, այնպես ճանապարհ էին դնում նրան, ասելով՝ «գնա՛, թագավորիդ խաբար տա՛ր»: Եվ այսպիսի գազանները, որոնք ժողովրդի արյունն էին ծծում, առանց խոնարհվելու որևիցե իշխանության, մնում էին միշտ անպատիժ:

Այժմ Կարոն, ոգևորված մի մոլի եռանդով, յուր անձնազոհ ընկերների հետ, աշխատում էին հեղափոխել հին դրությունը, աշխատում էին փշրել ստրկության շղթաները, որոնք դարբնվել էին այնքան շատ դարերով: Եվ ինչո՞վ, ո՞րպես…

Ինքը Կարոն խիստ ճիշտ նկատեց իր ճառի մեջ՝ թե «ստրկությունը դարձել է ժողովրդի մեջ բնավորություն»: Մի՞թե հեշտ է փոխել բնավորությունը, դարերով ամբոխի հոգու մեջ արմատացած բնավորությունը: Ի՞նչ օգուտ, երբ մի քանի եռանդոտ անձինք զարթել էին, հասկանում էին ժողովրդի չարն ու բարին, աշխատում էին դարման տանել նրա խղճություններին,— երբ այդ *մի քանի անձանց* բոլոր ջանքերը կորչելու, ոչնչացնելու էր ընդհանուր անտարբերության մեջ: Նրանց բարբառը լինելու էր անապատում հնչող ձայն, և նրանց գործակցությունը, որպես մի համերաշխություն գերեզմանատան բնակիչների հետ, չէր հասնելու որևիցե օգտավետ վախճանի: Կարոն ինքը շատ լավ գիտեր այդ, որ ամբոխը գտնվում էր այն վիճակում, ինչ վիճակում լինում են խելագարները կամ հարբածները. նրանք ընկնում են ցեխերի մեջ ամենևին չեն նկատում իրանց կեղտոտությունը. նրանք իրանց գլուխը պատերին են զարկում և ամենևին ցավ չեն զգում, թեև ճակատից արյուն էր հոսում. նրանք փողոցներում թավալված ժամանակ՝ ամեն անցնող երեխան ոտքով խփում է, թքում է նրանց վրա, բայց նրանք հանգիստ պառկած են և վիրավորանք չեն զգում: Կարոն գիտե՛ր այդ բոլորը: Նա գիտեր, որ ժողովուրդը տանջվում էր նյութապես, ուտելու հաց չուներ և հագնելու հագուստ, բայց համբերում էր: Նա գիտեր, որ ժողովուրդը տանջվում էր բարոյապես. շատ անգամ նրա կինը, աղջիկը, տղան զոհվում էին աղայի կրքերին, բայց նա համբերում էր… Համբերում էր, որովհետև իր թշվառությունը, իր անպատվությունը չէր համարում կարգից դուրս բաներ, այլ մտածում էր՝ թե այլ կերպ լինել կարող չէր, թե ինքը հպատակ է, թե աղան ինչ որ ուզե, այն պետք է անե…:

Ե՛կ, դու փոխի՛ր դարևոր նախապաշարմունքը: Ի՞նչ կարող ես անել, երբ ամբոխը ինքը չէ բողոքում իր թշվառությունների համար, երբ ամեն անբախտություններ տանում է նա համբերությամբ, և,— որպես Կարոն հիշեց իր ճառի մեջ,— տալիս է նրանց մի վերին և աստուծո նախասահմանությամբ կարգադրած օրենքի նշանակություն: Ի՞նչ պետք է անես…:

Միթե այսպե՞ս էին իմ դատողություններն այն ժամանակ, միթե այսպե՞ս էի մտածում ես…: Ո՛չ: Ես ինքս շատ հեռու չէի նույն նախապաշարմունքներից, որոնք տիրել էին ժողովրդին, որովհետև նրա հավատարիմ զավակն էի: Ես միայն ծիծաղում էի Կարոյի ցնորքների վրա, որպես տասն և երկու տարի առաջ, երբ նա դեռ նոր էր փախել հայր Թոդիկի ուսումնարանից և աշակերտում էր մի նոր դպրոցի— որսորդ Ավոյի— վարդապետությանը, վարդապետությանը այն խորհրդավոր մարդու, որի ծագումը, հայրենիքը հայտնի չէր, որ ծածկված էր հասարակ որսորդի դիմակով, որը ներշնչեց կրակոտ պատանիների մեջ նոր հոգի և նոր միտք…:

Ընթրիքը թեև վերջացավ խիստ զվարճալի կերպով, բայց ես ամենևին ուրախ լինել չկարողացա, այդ պատճառով շատ գոհ եղա, երբ տղերքը շուտով պառկեցին քնելու: Բայց ես քնել չկարողացա, և դուրս գալով տաղավարից, երկար թափառում էի գիշերային մթության մեջ: Կարծես, հազար ու մեկ սատանաներ պտույտ էին գալիս իմ գլխում, երբեմն մտածում էի՝ գնամ Ասլանին ու Սագոյին խեղդեմ իրանց քնած տեղում: Հետո ինձ ու ինձ փոշմանում էի, ասելով՝ «չէ՞ որ նրանք մոռացան բոլորը, նրանք ներեցին ինձ»: Բայց ես կարո՞ղ էի ներել նրանց, որ այնպես անվայելուչ կերպով խոսում էին Մարոյի մասին…: Այսպիսի խառն մտածմունքներով լցված էր իմ հիմար գլուխը, երբ ես կրկին դարձա տաղավարի մոտ և պառկեցի նրանցից փոքր-ինչ հեռու խոտերի վրա:

Ետ ընկած լուսինը կամաց-կամաց վեր բարձրացավ սարի ետևից և լեռները լցվեցան արծաթի լուսով: Գեղեցիկ տեսարանը ամենևին չազդեց իմ վրա: Իմ գլուխը դեռ լիքն էր սև մտածմունքներով. իմ սիրտը դեռ անհանգիստ խռովության մեջ էր: Չգիտեմ, ինչո՞ւ այնպես վրդովված էի ես. չգիտեմ ի՞նչ էր, որ այնպես տանջում էր ինձ: Միայն այսքան եմ հիշում, որ շուտով իմ աչքերը լցվեցան ջերմ արտասուքով, ես սկսեցի լաց լինել, երկա՛ր լաց լինել…

Գիշերն ես անցուցի տենդային ջերմության մեջ: Առավոտյան լուսաբացի պահուն ինձ տիրեց մի թմրություն, այն ժամանակ ևս խառն երազները սկսեցին անհանգիստ անել: Ողորմա՛ծ աստված, ի՞նչեր չէին գնում և գալիս իմ աչքերի առջև,— սատանաներ, հրեշտակներ, դժոխք, արքայություն,— մի խոսքով, հարյուրավոր տխուր կամ ուրախալի պատկերներ, մինը մյուսից հետո կամ զվարճացնում էին ինձ և կամ սարսափեցնում…: Բայց երբ զարթեցա, բոլորը մոռացա, մի երազ միայն մնացել էր իմ մտքում, նրան հիշում եմ և այսօր:

Ինձ երևում էր, թե Սոլայի հեղեղատը հորդացել էր, որպես ամեն տարի գարնան ժամանակ բարձրանում էին նրա ջրերը: Իսկ այժմ շատ էր բազմացել ջուրը, խիստ շատ: Կատաղած գետը գոռում էր, փրփրում էր, և հսկայական վիշապի նման սարսափելի պտույտներ էր գործում: Նրա պղտոր հորձանքները տանում էին իրանց հետ ամենը, ինչ որ հանդիպում էր: Ես տեսնում էի՝ թե ի՛նչպես ալիքների մեջ լող էին տալիս տնային կարասիք, տեսնում էի խեղդված մարդերի դիակներ, այլև երեխաները, կապած օրորոցների մեջ… Մտածում էի՝ ո՞րքան տներ պետք է քանդած լինի, ո՞րքան ընտանիքներ պետք է ոչնչացած լինի սարսափելի հեղեղատը…Անբախտ զոհերն երբեմն բարձրանում էին ալիքների հետ, երբեմն կորչում էին նրա պտույտների մեջ. երբեմն մոտենում էին գետի եզերքին.— ձեռքդ մեկնեի՛ր և ահա՝ կազատես, մտածում էի ես:

Ես տեսնում էի՝ Կարոյին, Ասլանին և Սագոյին, նրանք այնպես փոքրիկներ էին, որպես առաջ, երբ դեռ երեխա էին, երբ հեղեղատի ջուրը նստելու ժամանակը գնում էինք միասին նրա ափերից հավաքում էինք զանազան հնություններ, որոնց նա բերել էր իր հետ, քանդելով Քոհնա-շհարի ավերակները: Իսկ այն երազ չէր:

Իսկ այժմ տեսնում էի ընկերներիս նույն հասակում, որոնք ցույց էին տալիս խեղդվող մարդիկներին և ասում էին ինձ՝ «տե՛ս, Ֆարհատ, ի՛նչպես տարվում են այդ անբախտները հոսանքի հետ, գնանք, ազատենք նրանց»:

Երբ աչքս կրկին դարձրի դեպի գետը, ալիքների մեջ տեսա մի քանի ինձ ծանոթ երեսներ— Մարիամին, Մագթաղին, իմ հորը, իմ մորը,— իմ աչքերի առջև մթնեցավ, վազեցի դեպի ափը, որ օգնություն հասցնեմ: Հանկարծ գետի խարխուլ եզրը փուլ եկավ, ես գլորվեցա ցած…: Ինչպես մի թեթև փետուր ես տարվում էի պղտոր հոսանքի հետ… կատաղի ալիքները շատ անգամ խորասույզ էին անում ինձ դեպի հատակը, շատ անգամ դուրս հանում, կրկին տեսնում էի սիրելի պատկերները սարսափած և գունաթափ երեսներով…: Աշխատում էի ափին մոտենալ, հնարք չէր լինում, իմ թևքերի ուժը հետզհետե թուլանում էր, և ես խեղդվելու մոտ էի… Ես կանչում էի Կարոյին, Ասլանին և Սագոյին, որ նրանք ազատեն ինձ. բայց երբ աչքս դարձրի դեպի հոսանքի ընթացքը, տեսա, նրանք էլ տարուբերվում են ալիքների մեջ…:

Հանկարծ հայտնվեցան երկու կերպարանքներ, որոնք ձեռքները մեկնած, աշխատում էին ազատել ինձ, նրանցից մեկը տխուր էր դեմքով և աչքերումը արտասուք կար, մյուսը ուրախ և պայծառ էր երեսով և հրեղեն աչքեր ուներ: Ինձ երևաց, թե նրանք երկար հրեշտակներ էին, որոնք իջան երկնքից. իսկ հետո ճանաչեցի՝ մեկը Սոնան էր, մյուսը՝ Մարոն, հետո՛, երբ ես թաղվեցա ջրի տակ մյուս անգամ դուրս չեկա…:

Երբ ես զարթեցա, Կարոն կանգնած էր իմ մոտ:

— Դու հիվանդ ես, Ֆարհատ,— ասաց նա խռոված կերպով:— Քո երեսը մեռելի գույն է ստացել, դու այնպես սարսափելի բաներ էիր խոսում քնիդ մեջ…:

Ես պատասխանեցի, թե քունս անհանգիստ էր, և ես ոչ բոլորովին առողջ եմ զգում ինձ. գլուխս սաստիկ ցավում է, անդամներս ջարդվում են, որպես թե ամբողջ մարմինս սանդի մեջ ծեծած լինեին:

Կարոն հայտնեց ինձ, թե իրանք պետք է գնան Բարդուղիմեոս առաքելո վանքը «մի գործի» համար և կվերադառնան մյուս օրը երեկոյան, և խորհուրդ տվեց ինձ մնալ ծերունի որսորդի տանը ավելացնելով, թե գիշերը տաղավարից դուրս բացօթյա քնելով մրսած կլինեմ, պատվիրեց տաք բան խմել և քրտնել, որով շուտով կանցներ տկարությունը:

Երբ նրանք նստեցին ձիաները, կամենում էին հեռանալ, Սագոն մոտեցավ ինձ և խուլ ձայնով ասաց.

— Գնա՛ տուն, բախտավոր, գեղեցիկ Մարոն կըժշկե քեզ…

Ի

ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՀՈՂ

Արևը նոր սկսեց ծագել:

Հասոն տաղավարում չէր. տղերքը գնալուց հետո ես մենակ մնացի այնտեղ: Ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ: Գնամ տուն, հին բարեկամիս տունը, այնտեղ «Մարոն կըժշկե ինձ»: Չէ՛, չեմ գնա, Մարոն թող չտեսնե, որ իմ առողջությունը վատ է, նա փափուկ

սիրտ ունի, նա լաց կլինի… ՉԷ՛, գնամ մի փոքր ման գալու, գուցե վաղորդյան օդը կկազդուրեր ինձ:

Առավոտյան ցողը դեռ չէր բարձրացել խոտերից, և արեգակի առաջին ճառագայթները խաղալով մարգարտյա կաթիլների հետ, արտափայլում էին ծիածանի գույներով: Օդը տոգորված փափուկ խոնավությամբ, հովացնում էր իմ բորբոքված երեսը: Հեռավոր լեռները դեռ պատած էին ճերմակ ու թափանցիկ մշուշով:

Իմ թուլացած անդամները բավականին զվարթացան վաղորդյան հովությունից, բայց տակավին սիրտս խռովության մեջ էր: Ես գնում էի լուռ և մտախոհ կերպով. ո՞ւր էի գնում, ինքս չէի իմանում, միայն մի բան ինձ քաշում էր հեռու մարդկային բնակությունից: Գիշերվա երազն ամենևին դուրս չէր գալիս իմ մտքից. նույն զարհուրելի տեսարանները ներկայանում էին իմ երևակայության մեջ: Ի՞նչ էր նշանակում այն սարսափելի հեղեղատը: Ի՞նչ էր նշանակում պղտոր ալիքների այնպես փրփրելով, գոռալով կատաղի հոսանքը, որ տանում էր իր հետ այնքան անբախտ զոհեր, որոնց թվում գտնվում էին և այն անձինքը, որոնք այնքան մոտ և սիրելի էին իմ սրտին…: Վերջապես ի՞նչ էր նշանակում Սոնայի և Մարոյի իմ օգնությանը հասնելը. մի՞թե նրանց ձեռքումն էր իմ փրկությունը, մի՞թե նրանք կարողացան ազատել ինձ:— Ոչ, մինչև նրանց հասնելը ես արդեն ջրի խորքումն էի, այն սառը և թաց գերեզմանի մեջ թաղված…

Մի՞թե մեր կյանքը մի այսպիսի երազ չէր… մի՞թե մեզ ևս իր հետ չէր տանում աշխարհային հոսանքը իր կատաղի ալեկոծության մեջ…

Ես գնում էի մի հովտի միջով, ուր մշակված դաշտերը խոստանում էին առատ հունձք. մի տեղ դեռ նոր էին վարում հողը, մի տեղ ցանում էին, մյուս տեղ արածացնում էին ոչխարների հոտերը, մի խոսքով, որ կողմ և նայում էի, եփ էր գալիս աշխատություն, ամեն ինչ շարժողության մեջ էր, ամեն տեղ երևում էր կյանք և գործունեություն: Այո՛, «ծույլ չէ այդ ժողովուրդը…», հիշեցի Կարոյի խոսքերը, և մի այդպիսի ժողովուրդը անբա՛խտ է…

Հանկարծ իմ ականջին զարկեց մի երգի ձայն, նա խիստ քաղցր եղանակով հնչվում էր առավոտյան հովության մեջ, ես պարզ որոշում էի հետևյալ խոսքերը.

Ահա ծագեց կարմիր արև,
Տաք և պայծառ է օրը,
Դե՛, քաշեցե՛ք, սիրուն եզներ,
Հառա՛ջ տարե՛ք արորը:

Վարը վարենք, ակոս փորենք,
Խո՛ր ակոսներ հողի մեջ,
Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,
Ցորյան դիզենք կալի մեջ:

Կգա ձմեռ — մենք վախ չունենք.—
Ուրա՛խ կանցնի մեր օրը,

Ուտելու միշտ պաշար ունենք,
Լի և կուշտ է մեր փորը:

Դե՛, քաշեցեք, սիրուն եզներ,
Շուտով վարենք արտերը,
Թող չասեն մեր դրացիքը՝
Ծույլ են Հասոյի եզները:

Երգողը Հասոն էր, որ ինչ-որ հեռու վարում էր իր արտը: Ես մոտեցա նրան և տեղային սովորության հարմար ասեցի.

— Բարի հաջողություն:

Նա ընդունեց իմ ողջույնը և շարունակեց իր գործը: Ես հարցրի՝ արդյոք նրա երգի պարունակությունը համապատասխանո՞ւմ էր իր դրությանը, նա ձմեռը հաց կունենա՞ր ուտելու, և իր անասունները կարո՞ղ էին կուշտ ապրել: Նա պատասխանեց, թե մենք միշտ երգում ենք այն, ինչ որ իսկապես չունենք կամ բնավ չենք ունեցել… և ավելացրեց՝ թե լավ է աշխատել առանց վաստակի, քան թե անգործ մնալ. անգործությունը մեռելներին է պատկանում:

— Այս արտը աղայի մուլք չէ,— ասաց նա:

— Բա՛ ո՞ւմն է:

Նա ասաց, թե իր հայրը գնել էր այդ հողը մի քուրդ բեկի այրի կնոջից, որը փողի սաստիկ կարոտության մեջ լինելով, ստիպվեցավ վաճառել իր կալվածքը, և իբրև իրանց սեփականություն, նա ազատ էր աղայական տուրքերից: Իմ կարծիքին, թե լավ կլիներ, որ ամեն գյուղացի իր սեփական հողն ունենար, Հասոն պատասխանեց— լավ կլիներ, եթե թողնեին… և ավելացրուց,— թե գյուղացիք փող չունեն հող գնելու համար, և եթե գնեին էլ, աղաները նրանց հետ թշնամանում են, սկսում են նեղացնել, կամ ջուր չեն տալիս, կամ սովորացնում են իրանց մարդիկներին նրանց ցանքերը փչացնում են, կալը կամ հունձի դեզերը հրդեհում են, վերջապես, ամեն միջոցներ գործ են դնում, որ գյուղացին չվստահանա կալվածատեր լինելու, այլ միշտ մնա այն կարծիքի մեջ, թե ինքը առանց աղայի օգնության, առանց նորա հովանավորության, որևիցե միջոցով ապրուստ ճարել կարող չէ:

— Քո բարի աչքերով տեսնում ես,— շարունակեց նա,— հրես գոտկումս խրած եմ մի ջուխտ թափանչա. այնտեղ լծան վրա կապած է թվանքը. ինչո՞ւ համար են դրանք. ես այստեղ վար եմ վարում. ո՞ւմ հետ կռիվ ունեմ, բայց էլի հարկավոր են. թշնամին ամեն ժամ մեր վզի ետևեն կանգնած է: Մեկ էլ տեսար, երկու քրդի ձիավոր մզրախները ձեռներին, լո՛-լո՛ կանչելով, ձորի մեջեն դուրս եկան, եզները կարձակեն և կտանեն. աչքերդ բաց-բաց պետք է կանգնես և մտիկ տաս. շատ-շատ կսկսես քո գլուխը թակել, որ տարան սիրուն եզներդ, էգուց արորը վարող չես ունենա…: Բայց քանի սրանք իմ մոտ են,— նա ձեռքը դրեց ատրճանակների վրա,— ինքը սատանան չի կարա մոտենալ Հասոյի եզներին…

— Միևնույնը կարող է պատահել և այն մշակների հետ, որոնք վարում են աղայի արտերը:

— Չէ, աղաներն իրանք են թալանում իրանց բանվորներին, բայց թող չեն տալիս ուրիշները մոտենան իրանց խոնարհ ծառաներին: Ամեն գազան իր որսը պահպանում է մեկել գազաններից:

— Այդ միևնույն է, թե իրանք և թե օտարները, երկու դեպքում ևս մշակը կողոպտվում է:

— Միևնույնը չէ: Դու խո գիտես այն հավի առակը, որ ամեն օր մի-մի ոսկի հավկիթ էր ածում իր տիրոջ համար: Մշակը մի այնպիսի հավ է աղայի համար, աղան մեկ անգամից չէ սպանում հավին (մշակին), որ նրա փորից խազինա (գանձ) դուրս բերե. նա թողնում է, որ նա ապրե, որ ոսկի հավկիթը շարունակ ստանա: Բայց ավազակները նրա կյանքին չեն ափսոսում, ուզում են մեկ անգամից հարստանալ և սպանում են…

— Քանի՞ օրումը կվերջացնես այս արտի վարելը,— հարցրի ես, կամենալով փոխել խոսակցությունը, որ խիստ տխուր տպավորություն գործեց իմ վրա, երբ մտածում էի, թե ինչով է ապահոված երկրագործը, որ միշտ իր զենքով պետք է պահպանե իր անասունները և իր մշակության բերքը ավազակների հարձակմունքներից: Բայց մի՞թե յուրաքանչյուր մշակ կարող է որսորդ Ավոյի որդին լինել և զենք բանեցնել… ի՞նչ կարող է լինել այն խեղճերի դրությունը, որոնք մի հասարակ դանակ ևս չունեն իրանց գրպանում:

Հասոն չլսեց իմ հարցմունքը, և ես մյուս անգամ կրկնեցի, թե քանի օրում նա կարող էր վարել իր արտը:

— Եթե տերը հաջողություն կտա, ինչ մեծ բան է նրա վարելը:— Դեպի ա՛ջ Մարալ, դու այսօր հենց թե խելքումդ չես,— այս ասելով նա բզեց կարմիր եզան կողքը:— Տե՛ս, «Գութանը» այնտեղ էր կանգնած,— նա իր վարոցով ցույց տվեց երկինքը,— իստակ այնտեղ, երբ ես լծեցի արորը. հիմա աստուծո օգնությունով, տեսնո՞ւմ ես որքան վարել եմ: Վաղվա գործը օրհնած է, թե չէ, երբ արևը բարձրացավ, այն ժամանակ ոչ թե մեղավոր մարդուն, այլ անբան անասուններին էլ մեղք է բանեցնելը, իստակ էրում է արևը, չես կարող շունչ քաշել:— Դեպի կորդ, Ջեյրան, ի՛նչ ես հոգիդ տալիս,— այս անգամին նա բզեց մոխրագույն եզան կողքը:

Կարծես նրա եզները— Մարալը և Ջեյրանը— հասկանում էին իրանց տիրոջ նկատողությունները և այնպես խելացի կերպով տանում էին գործը: Բայց Հասոն տեսնելով՝ ես երկար զբաղեցնում եմ նրան իմ հարցուփորձով, ուզեց ինձ որպես ասում են՝ «իր գլխիցը ռադ անել» և այս մտքով ասաց.

— Դու սիրո՞ւմ ես, Ֆարհատ, առավոտյան խիար (վարունգ) ուտելը, դա սրտի համար լավ է, գնա՛, այն խոտերի մեջ մի քանի հատ թաքցրել եմ, որ սառն մնան, կտրե ու կե՛ր, թե դանակ չունես, ես կտամ:

Ես շնորհակալություն արեցի, հայտնելով, թե սովորություն չունեմ անոթի որևիցե միրգ ուտել, և մնաք բարյավ ասելով, հեռացա աշխատասեր մշակից:

Կրկին զարթեցան իմ մեջ նոր և նոր մտածմունքներ, երբ ես հիշեցի Հասոյի խոսքը՝ «լավ է աշխատել առանց վաստակի, քան թե անգործ մնալ, անգործությունը մեռելներին է պատկանում»: Ես այն ժամանակ չկարողացա հասկանալ, իսկ այժմ հասկանում եմ այս խոսքերի իմաստը: Աշխատությունը, որքան և անշահավետ լիներ գործողի համար, վաղ թե ուշ կարող էր վարձատրություն գտնել, օգուտ բերել, նա ուներ իր փառավոր ապագան: Իսկ անգործունեությունը, իրավ որ, մեռելություն է, նրա սկիզբը և վախճանը մահ է: Որքան և իզուր թափված լիներ մշակի քրտինքը, որքան և հուսահատական լիներ նրա դրությունը, դարձյալ նա կենդանի մարդ է, նա

գործում է, նա պատերազմում է իր գոյությունը ոչնչացնող դժվարությունների հետ. նրա մեջ մեռած չէ ինքնապահպանության զորությունը: Եվ այս՝ կյանքի և մահու կռվի մեջ՝ նա իրան պատրաստում է մի օրվա համար, երբ կտիրեն իրավունքը և արդարությունը, երբ կազատվի **աղաների** հարստահարությունից: Այն ժամանակ կգա մշակ մարդու արքայությունը, այն մարդու, որ գործ ունի արդար և հավատարիմ բնության հետ, որ չէ մտածում իր նման մարդերի քրտինքից իր համար ապրուստ քամել…

Այո՛, այս ճշմարտությունն անհասկանալի էր ինձ այն ժամանակ, ե՛ս, ե՛ս միայն էի անգործ արարածը այն ընդարձակ տարածության մեջ, ուր ամեն մարդ զբաղված էր իր աշխատանքով: Ո՞վ գցեց ինձ այն մոլորության մեջ, ո՞վ սպանեց իմ մեջ աշխատասիրության եռանդը: Ես մտաբերեցի հայր Թոդիկի վարդապետությունը, որ նա մեկնում էր իր աշակերտներին իր բուն բառացի իմաստով. «մարդը պետք է երկնքի թռչունների նման ապրե, որոնք ոչ վարում են, ոչ ցանում են և ոչ հնձում են, բայց միշտ կուշտ են, և աստված հասցնում է նրանց կերակուրը»: Այդ խոսքերը նա իր գլխից չէր դուրս տալիս, դրանք գրքից առած խոսքեր էին: Հիմնվելով հիշյալ բնաբանի վրա, տեր-հայրը ընդարձակում էր այն միտքը, «թե պետք չէ հոգ տանել այս աշխարհի կյանքի համար, նա ունայն և անցավոր է, թե յուրաքանչյուր մարդու համար աստված նշանակել է նրա օրական պարենը (ապրուստը), մեկին շատ, մեկին քիչ, նույնը կհասցնե նա անընդհատ կերպով և չի թողնի իր արարածը քաղցած մնա: Մարդից, իրանից, ոչինչ կախված չէ, որքան և ջանք գործ դներ, դարձյալ նա չէ կարող մի մազաչափ ավելացնել, կամ պակասացնել ապրուստի այն չափից, որ նշանակել է նրա համար աստված»:

Քահանայի վարդապետությունը և Հասոյի խոսքը ծնուցին իմ մեջ երկու միմյանց հակառակ գաղափարներ. մեկը անհոգություն և հույս դնել աստուծո նախախնամության վրա. մյուսը՝ գործունեություն և հույս դնել իր աշխատող ձեռքերի վրա: Ո՞րն էր դրանցից ճշմարիտը, ես որոշել կարող չէի, միայն մտածում էի՝ թե քահանայի ասածը պետք է որ ուղիղ լինի, որովհետև տեսնում էի՝ մարդիկ այնքան աշխատում էին, կաշուց դուրս էին գալիս, դարձյալ մնում էին աղքատ: Երևի, ասում էի ես, նրանց ապրուստը այնպես քիչ է նշանակած, որ նրանք երբեք չեն կարող լինել ապահոված: Իսկ աղան կմնա միշտ աղա, որովհետև նա ոչ վարում է, ոչ ցանում է, ոչ հնձում է, և նրա սեղանը միշտ լի է և ճոխ…

Հիմնվելով վերոհիշյալ մտախոհությունների վրա, Կարոյի և իր ընկերների նպատակը ինձ երևում էր բոլորովին երևակայական, և ես խիստ ափսոսում էի, որ նրանք ընկած էին այնպիսի անելանելի մոլորության մեջ…

Ես միայն չէի, որ այսպես էի մտածում, բոլոր ժողովուրդը այսպես էր մտածում, որովհետև նրանք նույնպիսի տեր թոդիկների աշակերտներ էին, որպես ես:

Եվ Կարոն աշխատում էր մի այսպիսի նախապաշարված ժողովրդի բարօրության համար…

ԻԱ

ՆԱԽԱԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Արեգակն սկսել էր արդեն այրել. կեսօրվա տոթից դժվարանում էր մարդի շնչառությունը: Բաժանվելով Հասոյից, ես գնում էի մի նեղ շավիղով, որ տանում էր դեպի փոքրիկ վտակը ձորի մեջ. այնտեղ արծաթափայլ ջրի կանաչ ափերը հովանավորում էին մի խումբ ծառեր, որոնք տարածել էին իրանց ստվերը մետաքսի

պես փափուկ խոտերի վրա: Ես շտապեցի այնտեղ փոքր-ինչ ազատ շունչ քաշել: Ծառերը նվիրական էին մի փոքրիկ մատուռի, որի կիսավեր փլատակները դեռ վայելում էին իրանց սրբազնական հարգանքը բարեպաշտ ժողովրդից: Մատուռի մի քանի ողջ մնացած կամարները, որոնք ազատվել էին ժամանակի մաշող ձեռքից, թաքնվել էին, միմյանց հետ խիտ փաթաթված թուփերի և մացառների մեջ, իսկ նվիրական ծառերը բարձր տարածելով իրանց ազատ ճյուղերը, գրկել էին իրանց ծոցում այն հինավուրց սրբարանը:

Ծառերից մի քանիսի ճյուղերի վրա փաթաթված էին գույնզգույն թելեր և շորերի կտորտանքներ: Տատս վաղուց մեկնել էր ինձ այսպիսի ծառերի նշանակությունը. նա ասում էր՝ «երբ սուրբ ծառի ճյուղին մարդ կապում է իր հագուստից մի կտոր, իր բոլոր ցավերը անցնում են այն ծառի վրա»: Իմ սիրտն էլ լի էր ցավերով… ես էլ տանջվում էի տխուր և հոգեմաշ զգացմունքներով… չթեթևացնե՞լ արդյոք այս անախորժ բեռը…: Ես դուրս քաշեցի իմ արխալուղի կարվածքից մի թել և դողդոջուն ձեռքերով կապեցի նվիրական ծառի ճյուղին:

— Այս բավական չէ՛,— լսելի եղավ մի ձայն:

Ես սոսկացի. տեսնում եմ՝ նույն ծառի բունի ետև կծկվել է մի կին:

Սատանան իր բոլոր հրեշավոր այլանդակությամբ չէր կարող այնքան զարհուրելի լինել, որպես այն մռայլոտ կերպարանքը:

— Թե ուզում ես լավը, Սուսանը կտա քեզ մի թիլիսման, այն ժամանակ ամենը կերթա՝ ինչպես եղն ու մեղր…

— Ա՛խ, Սուսան, դո՞ւն ես,— կրկնեցի ես ուրախանալով:— Այստեղ ի՞նչ ես շինում, ո՛րքան վախեցա ես, Սուսան, ասա՛, տեսա՞ր «նրան» թե չէ՛…:

— Դուն Կարոն չես,— պատասխանեց բոշան, ամենևին չշարժվելով իր տեղից:— Դուն Սուսանին էլ չես կարող խաբել… Բոշան դեռ չէր մոռացել իմ խորամանկությունը, որ գործ դրի նրա հետ արաբական մինարեթի մոտ. բայց ես կամենալով փոքր-ինչ մեղմել իմ նրա վրա թողած վատ տպավորությունը, պատասխանեցի.

— Դու խո գիտես, որ ես Կարոյի ընկերն եմ, նրա լավ ընկերը, Կարոն ինքն ասաց քեզ: Մոռացել ես, Սուսան:

— Սուսանը չէ մոռացել, նա այդ գիտե:

Ես խիստ մերձ նստեցի խորհրդական կնոջ մոտ, որ այն նվիրական ծառերի հովանու տակ ինձ երևում էր որպես գերբնական արարածներից մեկը, որոնք միշտ կերպարանափոխ են լինում: Եվ իրավ, Սուսանը այսօր այն չէր, որ տեսել էի առաջին անգամ արաբական ավերակներում. նա ինձ այժմ չէր երևում այն չոր ու ցամաք, այլանդակված պառավը, որի վրա չէր կարելի նայել առանց զարհուրանքի: Այլ ընդհակառակն, այսօր նրա աղոտ կերպարանքի մեջ ես նշմարում էի հետքերը վաղօրոք թառամած գեղեցկության: Նրա մաշված երեսը դեռ պահպանել էր իր ազդու, համակրական արտահայտությունը, և սևորակ աչքերը նայում էին խորին տխրությամբ, որպես հայելիներ, որոնց մեջ արտափայլում էին կոտրած և վշտահար սրտի բոլոր տանջանքները:

— Դու այն օրից հետո տեսե՞լ ես Կարոյին, Սուսան,— հարցրի ես, մտերմաբար նրա երեսին նայելով:

— Այսօր դեռ մարդիկը ճաշ չէին կերած, Սուսանը տեսավ Կարոյին:

— Բայց «նրա», այն աղջկա մասին, որ ամրոցումն է… ի՞նչ խաբար տվիր Կարոյին:

— Այդ մի՛ հարցրու. Սուսանը չի ասի քեզ:

— Դու գիտես, որ Կարոն ինձանից ծածուկ ոչինչ չունի:

— Թո՛ղ նա ասե քեզ:

Ես տեսա, անկարելի էր այդ գաղտնիքը դուրս քաշել ծածկամիտ կնոջից, թողեցի հարցուփորձը: Նույն ժամուն Սուսանը իր նուրբ, շագանակի կեղևի գույն ունեցող շրթունքներից դուրս հնչեց մի օտարոտի ձայն, որ ավելի նման էր թռչունների ճլվլոցին, և իսկույն ոչ այնքան հեռու գտնված թուփերի միջից լսելի եղավ նույնպիսի ձայն: Րոպե չէր անցել, երբ այնտեղից դուրս վազեց փոքրիկ երեխա, որ գալով Սուսանի մոտ, կպավ նրա կուրծքին, և իր արևից այրված մերկ թևքերով գրկելով նրա պարանոցը, սկսավ համբուրել նրան:

Այս տեսարանը խիստ հոգեշարժ էր և իմ սնահավատության վրա ազդեց մի դյութական զորությամբ. ես մտածում էի՝ փոքրիկ երեխան չէ՞ արդյոք այն ոգիներից մինը, որի միջնորդությամբ Սուսանը կատարում է իր կախարդական արարողությունները: Իմ կարծիքին ավելի ուժ էր տալիս այն դյութական հագուստը, որ խիստ սազ էր գալիս նրա վայելուչ կազմվածքին, որի յուրաքանչյուր գծերից երևում էր վայրենի գեղեցկությունը իր պարզ և անկեղծ հրապուրանքով: Դա նույն երեխան էր, որ մի անգամ ևս երևցել էր ինձ արաբական ավերակներում, երբ առաջին անգամ տեսա Սուսանին:

Երբ նա տեսավ ինձ, թողեց Սուսանին և ժպտալով վազեց իմ մոտ, կարծես, ես նրա վաղեմի ծանոթը լինեի:

— Գնի՛ր, պարոն, այս թիլիսմանը, Հյուբբին իր ձեռքովն է շինել,— ասաց ինձ:

Նա կրկին ժպտեց և սև փայլուն աչքերով սկսեց նայել իմ երեսին, տալով ինձ սաթից շինած մի տափակ-քառանկյունի բան: Այն մի հմաեակ էր նախշած զանազան նշանագրերով, որի նմանը շատ անգամ տեսել էի կանանց պարանոցեն քաշ ընկած: Ես տվեցի իմ մոտ գտնված միակ արծաթի դրամը և գնեցի փոքրիկ կախարդից թիլիսմանը: Նա գլուխ տվեց և կրկին վազեց Սուսանի մոտ:

— Հյուբբի, երգի՛ր մի բան պարոնի համար, նա քեզ ավելի փող տվեց, քան թե կարժեր քո թիլիսմանը,— ասաց նրան պառավը:

Փոքրիկ աղջիկը, առանց քաշվելու, խիստ համարձակ կերպով եղանակեց մի թեթև երգ ինձ բոլորովին անհասկանալի լեզվով. միայն նրա ձայնը իր թարմ և քաղցր հնչյուններով բավականին ախորժ տպավորություն գործեց իմ վրա: Վերջացնելով իր երգը, նա կրկին վազեց իմ մոտ:

— Տո՛ւր ձեռքդ, թող Հյուբբին գուշակե քեզ համար,— ասաց նա իմ աջը բռնելով իր փոքրիկ ձեռքերով:

Ես թույլ տվեցի: Նա նստեց ինձ մոտ: Ես մինչև այսօր չեմ կարող մոռանալ, թե որպիսի խորհրդական ծանրությամբ փոքրիկ մարգարեուհին սկսեց իր գուշակությունները, իմ աջ ափի գծերի մեջ կարդալով իմ ճակատագիրը: Նրա խոսքերը թեև անկապ էին, որպես քրմուհու առեղծվածներ, բայց զուրկ չէին իմաստից. ես կարող եմ կազմակերպել այսպես.

«Քո կյանքի ճանապարհը փուշերով է ծածկված. ամեն մի քայլում դրած են քո առջև որոգայթներ. դու կընկնես նրանց մեջ, դարձյալ դուրս կգաս, միշտ քաջությամբ հաղթելով բոլոր դժվարություններին: Այդ կռիվը քո կյանքի մեջ կտևե երկար, մինչև քո գլխի սև մազերը ճերմակ գույն կստանան, այն ժամանակ կզարկե քեզ համար խաղաղության ժամը, և քո բախտի արևը, որ այժմ ծածկված է սև ամպերով, կրկին կծագե իր բոլոր պայծառությամբ»:

Նա կանգ առեց և րոպեական լռությունից հետո շարունակեց. «դու սիրում ես երկուսին, երկուսն էլ գեղեցիկ են, որպես դրախտի անմահ աղջիկներ. նրանք խիստ տաք սրտով կապված են քեզ հետ, բայց նրանցից և ոչ մեկը»…

— Բավակա՛ն է,— կտրեցի ես նրա խոսքը.— գիտեմ ինչ պետք է ասես…

Նա տխուր կերպով նայեց իմ երեսին և թողեց ձեռքս, երևի վիրավորվեցավ, որ ես արհամարհեցի նրա արհեստը, ասելով.

— Հյուբբի, դու խո ամենի համար այսպես ես գուշակում:

Նա բավականին հպարտ անձնասիրությամբ պատասխանեց.

Հյուրբին սուտ չի ասի. Հյուբբին խոսում է այն, ինչ որ հայտնում է նրան «գերագույն ոգին»:

Մեր խոսակցությունը բոլոր ժամանակ, թե Սուսանի և թե մանուկ գուշակողի հետ պարսկերեն էր: Բայց նրանց կանոնավոր արտասանությունից երևում էր, որ նրանք չէին պատկանում բոշաների այն ցեղերին, որոնց շատ անգամ հանդիպել էի ես Պարսկաստանում: Նրանց երեսների թե գծագրության նրբությունը, թե կաշու գույնը, որ ավելի սև չէր, թե բնավորության մեղմությունը, որ զուրկ չէր նույն ցեղին հատուկ կրքոտ աշխուժությունից,— բոլորը ցույց էին տալիս նրանց բոշաների մի ավելի ազնիվ և առանձին ցեղին պատկանելը: Բայց ինձ զարմացնում էր փոքրիկ աղջիկը: Սուսանը նրա մայրը լինելու համար բավականին հասակավոր էր, ուրեմն ո՞վ պետք է լիներ նա: Ես հարցրի պառավից, մինչև նա իր բերանը բացելը, Հյուբբին պատասխանեց զարմանալի արագախոսությամբ.

— Հյուբբին Սուսանի թոռն է, Հյուբբին անբախտ աղջիկ է, նրա մայրը կորած է, Հյուբբին պտռում է իր մորը, և նրա հայրը…

Պառավը չթողեց նրան վերջացնել իր խոսքը և ինձ անծանոթ մի լեզվով սաստիկ բարկացավ նրա վրա. խեղճ աղջիկը իսկույն սուս կացավ: Ես չհասկացա, թե ինչ ասաց Սուսանը, միայն նրա խոսքերից որոշեցի պարսկերենին շատ մոտ բառը «լռե՛»:

Երևում էր, Հյուբբիի անզգուշությունը սաստիկ խռովություն պատճառեց պառավի մեջ. նա վեր կացավ, և նույն լեզվով մրթմրթաց աղջկան մի քանի խոսքեր. երկուսը միասին ճանապարհ ընկան: Սուսանը ամենևին չնայեց ինձ և ոչինչ չասաց, միայն Հյուբբին մի քանի քայլ հեռանալով կրկին դարձավ, և փայլուն աչքերը իմ երեսին ձգելով, ժպտեց և գլուխը թափ տալով, շարունակեց իր թեթև քայլերը խորհրդական պառավի հետ: Քանի րոպեից հետո նրանք աներևութացան մերձակա լեռների մեջ:

«Հյուբբին անբախտ աղջիկ է… նրա մայրը կորած է… Հյուբբին պտռում է իր մորը, և նրա հայրը»…: Ո՞վ էր նրա հայրը,— այդ խոսքը խորամանկ պառավը չթողեց գեղեցիկ երեխային վերջացնել: Երևի, մի աղոտ գաղտնիքով վարագուրված էր փոքրիկ գուշակողի ծագումը, որը նա անզգուշությամբ պետք է երևան հաներ. եթե ոչ, ի՞նչու պետք է Սուսանը այնպես վրդովվեր, ի՞նչու իսկույն պետք է հեռանար

ինձանից: Նա վախեցավ՝ չիցե թե երեխան մի նոր անզգույշ խոսք դուրս թռցնե իր բերնից և հեռացրեց նրան: Անպատճառ այստեղ մի գաղտնիք կար, որ պետք էր գիտենալ, բայց ո՞րպես գիտենալ: Խորամանկ պառավը գնաց, կորավ անհայտ ուրվականի պես: Ո՞րտեղ կարելի էր տեսնել նրան մյուս անգամ: Բայց ի՞նչ է նշանակում նրա ստեպ տեսակցությունները Կարոյի հետ: Կարոն ի՞նչ գործ ունի այն մոլաշրջիկ թափառականի հետ. և նրանց հարաբերությունների հետ կապ ունի մի երրորդ անձնավորություն — «ամրոցի աղջիկը»,— ահա գաղտնիքի գլխավոր մասը, որ ծածկված էր խավարի մեջ…

Բայց իմ մտքից չէր դուրս գալիս փոքրիկ գուշակողի պատկերը, ես առաջին անգամ տեսնում էի այնպիսի սիրուն երեխա, որի մեջ կար այնքան համարձակ անմեղություն, որի սիրտը այնքան տաք և զգայուն էր: Ես հավատում էի նրա խոսքերին, որոնցմով նա կարդաց իմ անբախտ ապագան. ես հավատում էի, որովհետև «գերագույն ոգին» այնպիսի անկեղծ արարածներին միայն կհայտնե մարդկանց ճակատագրի գաղտնիքները: Ահա՛, ասում էի ես, հավատարիմ դստերք բնության, որոնք ապրում են երկնքի թռչունների նման, «ո՛չ վարում են, ո՛չ ցանում են և ո՛չ հնձում են», բայց նրանք էլ աղքատ են և ապրում են ողորմությունով…

Կրկին տիրեցին ինձ սև մտածությունները, կրկին իմ սիրտը ընկավ անհանգիստ խռովության մեջ: Ես պառկած էի սրբազան ծառերի հովանու ներքո, բայց չուշացավ քունը, նա վերջ տվեց իմ անհանգստությանը:

ԻԲ

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹՅՈՒՆ

Երբ զարթեցա, գիշեր էր: Ո՞րքան ժամանակ անցել էր օրից, քանի՞ ժամ քնել էի, ես չկարողացա գիտենալ: Փափուկ և տաք գիշեր էր: Ո՛րքան գեղեցիկ վառվում էր ամառային երկինքը իր փայլուն գոհարներով. ո՛րքան մեղմ և մտախոհ կերպով սահում էր կիսալուսինը պարզ եթերքի միջով:

Ես պառկած էի դալար խոտերի վրա, և խիստ ախորժ ծուլությամբ թավալվում էի մի կողքից դեպի մյուսը: Ականջ էի դնում: Ամեն տեղ տիրում էր խորին լռություն, բոլո՛րը հանգստանում էին: Արթուն էր միայն վտակը, որի ափի մոտ պառկած էի. ես լսում էի նրա խուլ-մելամաղձական խոխոջմունքը, նա անդադար վազում էր և վազում, նա քուն և հանգստություն չուներ: Ահա, հովասուն զեփյուռը փափուկ թևքը քսեց իմ երեսին և շվացնելով անցավ, կարծես, ուզում էր ասել՝ «տե՛ս, ես էլ արթուն եմ»:

Աչքս դարձրի դեպի աստղազարդ երկինքը: Նայում եմ: Այո՛, գեղեցի՛կ են աստուծո լուսավորները: Որոնում եմ նրանց մեջ իմ աստղը, երկա՛ր որոնում եմ, բայց չեմ գտնում: Ահա երկու աստղեր. նրանք ծանոթ են ինձ, ես շատ անգամ տեսել եմ նրանց, համբուրել եմ… շատ անգամ նրանք նայել են ինձ վրա ջերմ քնքշությամբ…: Ես ճանաչում եմ ձեզ, սիրուն աստղեր, դուք նմանում եք Սոնայի տխուր և արտասվալի աչքերին, որպես այն վերջին գիշերը, երբ նա բաց արավ իմ բանտի դուռը և ասաց՝ «փախիր, Ֆարհատ»: Ահա երկու աստղեր ևս, ինչպես հպարտ և ինքնահավան կերպով փայլում են նրանք. նմանում են նրանք Մարոյի լի կրակով աչքերին, երբ նա հրացանը ձեռքին կանգնած, ժպտում էր այն սարսափելի րոպեում, երբ ես շաղախված էի ղաբանի արյունով:

Սիրո՛ւմ եմ ձեզ, գեղեցիկ աստղեր: Ահա՛ անցավ մի սև ամպ և ծածկեց իմ տեսությունից նազելի աչիկները…

— Ա՛խ, Սոնա… ա՛խ, Մարո…

— Ի՞նչ է,— լսելի եղավ մի ձայն և իմ առջև նկատվեցավ մի պատկեր, որպես կերպարանքը գիշերային ուրվականի:

Մի սարսուռ վազեց բոլոր մարմնիս մեջ:

— Ես եմ, Ֆարհատ:

— Ա՛խ, Մարո…

Երևակայեցեք իմ ուրախությունը, ուրախությունը լի վառված կրքերով մի պատանիի, որ գիշերային լռության մեջ, հեռու մարդկային բնակությունից, գտնում է նրան, որին սիրում է:

Մարոն նստեց իմ մոտ, իմ ձեռքը առեց իր երկու ափերի մեջ, և գրեց իր ծնկի վրա: Նա ուրախ, որպես միշտ, սկսեց պատմել՝ թե առավոտյան իր հորից իմացավ, որ իմ առողջությունը վատ էր. նա վազեց դեպի եղբոր ագարակը, տեսավ, ես այնտեղ չկայի: Այնտեղից շտապեց դեպի արտը, Հասոյի մոտ. եղբորից այսքանը իմացավ, թե նա տեսել էր ինձ կեսօրից առաջ, բայց չգիտեր, ո՛ւր կամ ո՛ր կողմը գնացի: Նա երկար որոնեց ինձ, մինչև արևը մտավ և օրը մթնեց. հետո նրան հանդիպեց մի բոշա կին, որ ասաց, թե տեսել էր ինձ «քանդված մատուռի» մոտ:

— Դու ճանաչում ե՞ս այն կնկան,— հարցրի ես:

— Երկրորդ անգամն է, որ տեսնում եմ նրան,— պատասխանեց Մարոն:

— Առաջին անգամն ե՞րբ էր:

— Երկու տարի առաջ: Ես տեսա նրան միևնույն հագուստով, որպես այսօր, էլի այն փոքրիկ երեխան իր հետն էր, որին այսօր տեսա: Ի՜նչ լավ երեխա է, Ֆարհատ, այնքան սիրտս սիրեց նրան, որ բռնեցի երեսը պաչ արի: Ախար մե՛ղք է անօրենի երեսը պաչ անելը. նրա ճակատին մեռոն չէ քսած. բայց ես նրան պաչ արի. նա այնպես լավ երեխա էր:

— Ո՞րտեղ դու տեսար նրան երկու տարի առաջ:

Մարոն նկատելով, իր պատմությունը հետաքրքրում էր ինձ, շարունակեց.

— Ես տեսա նրան այս ձորի մեջ, այս մատուռի մոտ. նա խոսում էր Կարոյի հետ: Ի՞նչ էր խոսում, ես չիմացա, նրա համար, որ նրանց լեզուն չէի հասկանում: Քանի օրից հետո Կարոն անհայտացավ մեր տանից, մենք չիմացանք թե ուր գնաց: Քանի տարի էր նրանից ոչինչ լուր չունեինք: Կարոյի գնալուց հետո, այն կինն էլ չերևաց: Այս անգամին, երբ Կարոն կրկին լուս ընկավ, բոշան էլի ման է գալիս մեր կողմերում:

— Այն ժամանակ Ասլանը և Սագոն Կարոյի հե՞տ էին:

— Չէ՛, նրանք չկային: Այս անգամ ետ դարձան միասին: Երկու շաբաթ է, ինչ որ եկել են:

— Դու այսօր Կարոյին չե՞ս տեսել:

— Ես քեզ ասացի, որ տանից դուրս եմ եկել առավոտյան, մինչև հիմա էլ սար, ձոր չեմ թողել, քո ետնեն ման եմ եկել: Հիմա ի՞նչպես է քեփդ, դու ողջ օրը հաց չես կերել. ի՜նչ գիժ տղա ես Ֆարհատ:

— Կարոն լավ տղա է, այնպես չէ՞:

— Լավ տղա է, բայց…

Նա կտրեց իր խոսքը, և րոպեական լռությունից հետո շարունակեց:

— Գիտե՞ս, Ֆարհատ, քանի օրից հետո Կարոն իր ընկերների հետ գնալու են **մի տեղ**, դու նրանց հետ չգնաս:

— Ինչո՞ւ չպետք է գնամ:

— Այնպես… մի՛ գնա… ես չեմ կարա ասել… հայրս ինձ կսպանե, թե ասեմ…: Աղաչում եմ, Ֆարհատ, մի՛ գնա նրանց հետ:

Այդ խոսքերի միջոցին բարեսիրտ օրիորդի աչքերը լցվեցան արտասուքով, նա պինդ կպած իմ կուրծքին, գրկել էր ինձ, երկար և երկար աղաչում էր, որ ես չմասնակցեմ Կարոյի և նրա ընկերների արշավանքին:

Բայց ի՞նչ արշավանք էր այդ, դեպի ո՞ր կողմը և ի՞նչ նպատակով,— դրանց մասին ծածկամիտ Մարոն ոչինչ չհայտնեց:

— Ա՛խ, Կարոն… նա սիրտ չունի… նա գազա՛ն է, մարդ չէ… նրա համար մի ադամորդուն սպանելը այնպես է, ինչպես խեղճ հավի վիզը կտրելը… Ես սուտ չեմ ասում, Ֆարհատ, ես իմ աչքով եմ տեսել…: Ա՛խ, հեռու կա՛ց այս մարդից, Ֆարհատ, չբարկացնես նրան… նա աստված չունի…: Նա բարեկամ, ընկեր,— այս բաները չէ իմանում:

Այսպես խոսում էր Մարոն արտասվախառն հեկեկանքով, բայց ինձ բոլորովին անհավատալի էր երևում, մտածել Կարոյի մեջ մի այնպիսի վայրենություն, որպես նկարագրեց նրան Մարոն: Մի այնպիսի տղամարդ, որ բոլոր սրտով նվիրել էր իրան մարդասիրության գործին, չէր կարող գազան շինել: Ես Կարոյին լավ էի ճանաչում, ճանաչում էի նրան երեխայությունից, բայց մի՞թե փոխվել էր նա:

— Ես չեմ հավատում, Մարո: Կարոն այդպես չէ,— կտրեցի ես օրիորդի խոսքը:— Ես նրանից չեմ բաժանվի, ուր որ գնա, ես էլ կգնամ նրա հետ:

Մարոն հայտնեց, թե ո՛րպես նա մի գիշեր սպանեց իր ամենալավ ընկերներից մեկին, մի հնդկացի հայ երիտասարդի, որի վրա փոքր-ինչ կասկած ուներ, թե կհայտնե իր գաղտնիքը. և ավելացրուց, թե կարող էր մինչև անգամ նրա դիակը ցույց տալ ինձ, որովհետև այս անցքը պատահել էր մի քանի օր առաջ: Միայն ինքը, Մարոն, չէր կարող ամեն ինչ բացարձակ ասել ինձ, որովհետև վախենում էր իր հորից:

— Ես միշտ հավատարիմ կմնամ Կարոյին, ես դավաճանություն չեմ գործի նրա դեմ,— ասեցի ես:

— Հա՛, սիրելիս, նրա հետ պետք է այսպես լինել,— պատասխանեց Մարոն փոքր-ինչ հանգստանալով:— Ես չեմ ասում նա վատ տղա է. նա վատ է միայն վատերի հետ, ով որ նրան հակառակ է: Բայց նրա քարե սիրտը հանկարծ փափկանում է, երբ մի խեղճ մարդ է տեսնում. քանի՛ անգամ ես տեսել եմ նրան, որ մտել է աղքատ գյուղացիների խրճիթը և նրանց փող է բախշել, նա իր բերանի պատառը ուրիշին է տալիս, երբ տեսնում է, որ նա քաղցած է:

— Բայց Ասլանը և Սագոն ի՞նչպես են:

— Ասլանը լավ տղա է, բայց Սագոյին չեմ սիրում, նա լավ տղա չէ՛: Գիտե՞ս, Ֆարհատ, մի օր նա ի՞նչ ասաց ինձ. մեր բակումը նրա հետ մենակ կանգնած էինք, խոսում էինք մեր գյուղի աղջիկների վրա. մեկ էլ տեսնեմ, այն աղվեսը.— ախար նրա երեսը աղվեսի նման է,— հա՛, Սագոն ձեռքը գցեց իմ վզովը ու ասաց. «Թո՛ղ Մարո, պաչ անեմ քեզ»: Ես հետ քաշվեցա, մի լավ ապտակ՝ շըրըխկ նրա երեսին. քիչ էր մնացել խեղճի շիլ աչքերը քոռանային:

— Իսկ եթե ես ասեմ՝ ինձ մի պաչ տո՛ւր, ի՞նձ էլ ապտակ կտաս:

Նա սկսեց ծիծաղել և ոչինչ չպատասխանեց:

Ես գլուխս խոնարհեցրի նրա կուրծքի վրա, երկար մեր շրթունքները չէին հեռանում միմյանցից: Մենք ոչինչ չուխտեցինք մեկ-մեկու հետ, մենք չխոստացանք միմյանց մշտական սեր, հավատարմություն.— այսպիսի բացատրություններ չեղան մեր մեջ: Միայն սրտի խուլ լեզուն խոստացավ շատ և շատ, այն, որ ամենասրբազանն է և աստվածային, այն, որ միայն սիրտը կարող է հասկանալ:

— Գնանք,— ձայն տվեց օրիորդը, որպես թե զարթնելով խորին հոգեզմայլությունից:

— Գիշերի ո՞ր ժամանակն է,— հարցրի ես:

Նա նայեց դեպի երկինքը և պատասխանեց,

— Տե՛ս, «բազումքը» երբ այն աստղի մոտ է հասնում, գիշերը կես է լինում: Ուղիղ կեսգիշեր է:— Մենք վեր կացանք:

Մենք գնում էինք զանազան ոլոր-մոլոր ճանապարհներով. թե ի՞նչպես էի անցել ես այդ լաբիրինթոսը, ամենևին չէի հիշում: Ի՞նչ կլիներ իմ վախճանը, մտածում էի ես, եթե Մարոն ինձ չգտներ, ես ոչ միայն գիշերով, այլ լույս ցերեկով ևս չէի կարող գտնել Հասոյի ագարակը:

Մարոն կպած էր իմ կողքին, և մանկահասակ աղջկա դալար և թեքուն հասակի ամեն մի շարժմունքը էլեկտրապես ազդում էր իմ վրա: Բոլոր ժամանակը նա առանց լռելու խոսում էր, թռչելով մեկ մտքից դեպի մյուսը. երբեմն նա ասում էր՝ թե որքան լաց կլիներ, եթե ինձ չգտներ, թե նա բոլոր գիշերը կպտռեր ինձ, մի՛շտ կպտռեր: Հայտնում էր՝ թե իմ պառկած տեղը շատ վատ տեղ է, և նա ուրախ է, որ վտանգ չէ պատահել ինձ. ասում էր՝ թե այն ձորը կոչվում է Ղանլի-դարա (արյունոտ ձոր), որովհետև քիչ չէ պատահում, այնտեղ գտնում են սպանված մարդերի դիակներ: Բացի դրանից, ավելացնում էր նա, այնտեղ գազանները շատ անգամ պատառոտում են մարդկանց, երբ նրանք պաշտպանվելու զենք չունեին իրանց հետ: Հանդիմանում էր իմ անհոգությունը, թե ինչո՞ւ ես զենք չէի կրում, թե գոնյա պետք էր ունենալ իր մոտ մի ջուխտ ատրճանակ և խենջար:

— Ապա դու ի՞նչպես առանց զենքի չվախեցար այն ձորը մտնել,— հարցրի ես:

— Միթե գիշերն առանց զենքի մա՞ն են գալիս,— պատասխանեց նա ծիծաղելով իմ պարզամտության վրա, և ցույց տվեց մի ջուխտ ատրճանակներ, որ թաքցրած ուներ իր գոտիի մեջ:

Եթե ցերեկ լիներ, Մարոն կնկատեր, թե ո՛րպես կարմրեցա ես ամոթից…

ԻԳ

ՆԵՐՔԻՆ ԿՈՒԻՎ

Հասնելով ծերունի որսորդի տունը, մենք գտանք բոլորին քնած: Մըհեն, որ բաց արեց դուռը, հայտնեց՝ թե իր աղան տանը չէր և ոչ նրա հյուրերը դարձել էին իրանց «գնացած տեղից»: Ես մտածեցի, անպատճառ մեկ արգելք պետք է պատահած լինի, որովհետև Կարոն և նրա ընկերները խոստացան, թե մինչև երեկո կվերադառնան: Հասոն իր ագարակումն էր: Նա տան երես չէր տեսնում, քանի իր մշակության գործերը վերջացած չէին դաշտերից. ձմեռվա ձյուները միայն մի քանի ամիս նրան քշում էին դեպի տուն:

Մարոյի առաջին հոգսը եղավ պատրաստել ինձ համար մի բան ուտելու: Ընթրիքից հետո նա գցեց իմ քնելու շորերը, և ցանկանալով ինձ բարի գիշեր, ինքն ևս գնաց հանգստանալու:

Առավոտյան ես զարթեցա խիստ ուշ. երկար քունը բավականին կազդուրել էր իմ առողջությունը, ես զգում էի ինձ զվարթ և նորոգված ուժերով: Սիրտս էլ սովորականից ավելի ուրախ և հանգիստ էր, որպես թե, ես գտնվում էի մի անսահման բավականության

մեջ, լույս աշխարհում ոչինչ պակաս չէր մնացել ինձ, բոլո՛րը, բոլո՛րը, լրացրել էր այն արարածը, որին սիրում էի ես, որը սիրում էր ինձ:

«Գեղեցիկ Մարոն կբժշկե քեզ»… ասաց Սագոն. նրա խոսքը ճշմարիտ էր, թեև նա արտասանեց այնպիսի դառն, հեգնական ժպիտով:

Ես կրկին գլուխս դրեցի բարձի վրա և նայում էի պատուհանից ներս ծագած շողին, որի մեջ խաղում էին միլիոնավոր մանրիկ փոշիներ գույնզգույն փայլուններով: Ահա՛ ինչ է նշանակում լույսը, մտածում էի ես, չէ՞ որ այս սենյակի ամբողջ բովանդակությունը պարունակում է իր մեջ այսպիսի փոշիների մի ծովակ, բայց նրանք չեն երևում օդի աղոտության մեջ, իսկ լույսի այս նեղ ժապավենի մեջ բոլորը երևում են: Բայց եթե խավար լիներ,— ես ոչինչ չէի տեսնելու, մինչև անգամ ամենախոշոր առարկաները: Ա՛խ, ի՞նչ լավ բան է լույսը, որպես բաց է անում նա մարդի աչքերը և զորություն է տալիս նրա տեսությանը: Չէ՞ որ միևնույնն է լինում և կյանքի մեջ,— մի ժողովրդի, մի ազգի և ամբողջ աշխարհի կյանքի մեջ: Երբ որ տիրում է մտավոր խավարը, մարդիկ չեն տեսնում իրանց ամենախոշոր թերությունները. նրանք չեն նշմարում այն ճանապարհի ուղղությունը կամ ծռությունը որով գնում են. նրանք չեն նկատում այն խոչընդոտները, որ ամեն անգամ նրանց ոտքին է դիպչում և ճակատի վրա վայր է գցում.— նրանք ոչինչ չեն տեսնում, միայն խարխափում են մոլորության մեջ…

Հիշյալ մտախոհությունները ինձ հասցնում էին այն եզրակացությանը, թե բոլորովին անհաջող կանցներ Կարոյի ձեռնարկությունը. նա չէր կարող մի ժողովուրդ, որ ապրում էր խավար մթնոլորտի մեջ, կանգնեցնել շիտակ ճանապարհի վրա և նրա ընթացքին անմոլոր ուղղություն տալ: Պետք էր նախ և առաջ փարատել խավարը, և ժողովուրդն ինքն իրան կգտներ իր ճանապարհը…

Արդյոք այսպե՞ս էի մտածում ես. մի՞թե այս ճշմարտություններն էի կարդում արևի այն լուսավոր ժապավենի մեջ, որ ներս էր շողացել իմ քնարանի պատուհանից:— Ո՛չ, ես ոչինչ չէի տեսնում նրա մեջ, բացի փոքրիկ փոշիներից. նրանք ևս շուտով ձանձրացրին ինձ: Երեսս շուռ տվի, իմ ուշադրությունը գրավեց ախտաբորբոք ճնճղուկը, որ իր զույգի հետ պատուհանից ներս թռան սենյակի մեջ:— Նրանք մի քանի շրջաններ գծեցին իմ դատարկ քնարանում, հետո նստեցին միմյանց մոտ,

սկսեցին քաղցր սիրախոսություններ անել: Մինչ այս զվարճության մեջ էին, ներս թռավ մի այլ ճնճղուկ— արու, նա մոտեցավ նախկին հերոսի սիրուհուն. նորեկի կողմից մի այսպիսի լրբությունը շարժեց սիրահարի նախանձը: Կռիվը սկսվեց: Մի փոքր խեղդեցին մեկ-մեկու, մի փոքր քաշեցին միմյանց փետուրները: Մինչ նրանք այս պատերազմի մեջ էին, էգը օգուտ քաղեց խռովությունից և դուրս փախավ: Կռվողները թողեցին մենամարտությունը, վազեցին իրանց երկպառակության առարկայի ետևից:

Մի՞թե միևնույնը չպատահեց իմ և Սագոյի մեջ: Չէ՛, մտածում էի ես, նրա փոքրիկ գլուխը կջարդեմ, եթե մյուս անգամ նա կհամարձակվի Մարոյի անունը հիշել. ես ավելի թույլ չպետք է լինեմ, քան այն ճնճղուկը, որ իր կյանքով պաշտպանում էր սիրո գաղափարը:

Նույն րոպեին, կարծես, ես լսում էի մի հեկեկանք, կարծես, մի դառն լացելու ձայն զարկում էր իմ ականջներին: Ինձ թվում էր, թե ես դպրոցումն էի, տեր Թոդիկը չոքեցրել էր ինձ մանրած աղյուսի կտորտանքի վրա. ես տեսնում էի Սոնային (դասատան պատուհանից երևում էր նա) միևնույն ծառի ստվերի ներքո, ուր միշտ նստում էր, և այժմ նստած էր: Նա գլուխը քարշ էր գցել իր ծնկների վրա և ձեռքով բռնել էր իր աչքերը. լաց էր լինում, և ես լսում էի նրա ցավալի հեկեկանքը: Ինչո՞ւ էր լաց լինում նա, ո՞ւմ համար էր լաց լինում, ինչո՞ւ միշտ լաց էր լինում նա այն ժամանակ, երբ նրա հայրն ինձ ծեծում էր կամ գետնի վրա չոքեցնում էր, իսկ մյուս ժամանակներում միշտ ուրախ էր: Խե՛ղճ աղջիկ, ո՛րքան լաց կլինես դու, եթե հիմա՛, հիմա՝ տեսնես ինձ…

Այս կիսաքուն, կիսաարթուն երազների մեջ էի ես, հանկարծ լսելի եղավ մի սաստիկ դղրդոց. որպես թե մի ծանր բան վայր ընկավ գետին: Աչքս բաց արի, տեսնեմ՝ իմ մահճի մոտ կանգնած էր վիթխարի Մըհեն և ինքն իրան մրթմրթում էր.

— Հազար անգամ ասել եմ, էսպիսի հիմար բաներ մի տվեք իմ ձեռքը. ինքը սատանան կմոլորի, էնքան թեթև է, հենց շունչ ես քաշում, թռչում է ձեռքիցդ:

Վայր ընկած բանը փոքրիկ փայտյա մատուցարանն էր, որի վրա Մըհեն ինձ համար նախաճաշիկ էր բերում. նրա կարծիքով, յուր կոպիտ ձեռքերի համար անպատճառ մեկ ծանր բան պետք է լիներ, որ կարողանար տանել: Նա թողեց թափված ամաններն առանց հավաքելու և ուզում էր դուրս գնալ, երբ Մարոն ներս մտավ:

— Ո՛ւֆ, քոռանամ ես, այդ ի՞նչ արեցիր, սարսաղ,— դարձավ նա դեպի ապշած սպասավորը և սկսեց հավաքել թափված ամանները:— Ե՞րբ պետք է դու մի բան սովորես:

— Ես ոչ մի ժամանակ չեմ սորվի այսպիսի սատանայական բաները, թո՛ղ կնիկներն անեն,— պատասխանեց նա կոշտ կերպով.— Դի՛ր իմ շալակին մեկ եզան բեռը ցորեն, ասա՛, Մըհե՛, տար ջաղացը, կտանեմ, մի հատ էլ չի թափվի: Երբ սայլը թաղվում է ցեխի մեջ, գոմեշները կաշուց դուրս են գալիս, չեն կարացի տեղից շարժել, ասա՛, Մըհե՛, դուրս քաշե սայլը ցեխից,— Մըհեն կանե այդ, բայց սատանայական բաների նա գլուխ չունի…

— Լավ, լավ, Մըհե՛, քո հոգուն մատաղ, ես այս գիտեմ, ես չէի ուզում քեզ բարկացնել,— ասաց Մարոն, յուղելով կատաղած ծառայի գլուխը:— Դու գիտես, որ Խաթունը տանը չէր, դրա համար քեզ նեղություն տվի:

— Էդ ուրիշ բան է…— ասաց նա և դուրս գնաց:

Մարոն երկար ծիծաղում էր նրա գնալուց հետո. նա պատմեց ինձ մի քանի հատկություններ Մըհեի բնավորությունից:

— Զարմանալի բնավորություն ունի այդ անասունը, նրան ասա «Մըհե, դու գիտես, որ այնինչ մարդուն պետք է սպանել», նա իսկույն կսպանե. նրան ասա՛ «Մըհե, դու գիտես, որ այնինչ մարդու երեսին մի ապտակ պետք է տալ». նա իսկույն կկատարե քո կամքը. մի խոսքով, ամեն գործ պատրաստ է նա կատարել, երբ ասես «դու գիտես»: Միայն գործը պետք է բավականին ծանր լինի և խոշոր, թեթև բանի համար գլուխ չունի Մըհեն:

Մարոն ավելցրուց, թե Մըհեն յուր ամսականը ստանալու միջոցին երբեք չէ կարող ընդունել արծաթի կամ ոսկի դրամներ, ասելով, թե նրանք շատ մանր են, և նա չէ սիրում թեթև դրամներ, այլ միշտ պահանջում է պղնձե մեծ դրամներ, թեև յուրաքանչյուր ոսկու փոխարեն կտային նրան մի-մի հատ պղինձ: Այսուամենայնիվ, կիսախելագար Մըհեն շատ հավատարիմ էր և ուներ օտարոտի բարեսրտություններ: Նա ծեծում էր իր կնոջը, երբ նա իր երեխային զարկել կամ լացացրել էր. ծեծում էր և երեխային, երբ մորը բարկացնում էր: Բայց նա միակ մարդն էր, որ սիրում էր Հասոյի եզները այնպես, որպես նրանց տերը: Այդ պատճառով Հասոն միշտ գոհ էր նրանից և փարախի լիակատար իշխանությունը տվել էր նրան, ուր նա, անասունների հետ միասին, բնակվում էր իր ընտանիքով:

Բացի Մըհեից ծերունի որսորդի տան սպասավորների թվում էր պառավ Խաթունը. դեռ նա մանկության ժամանակ, երբ նա տասն և հինգ տարեկան էր, Ավոն գնեց նրան ղաջարի սարվազներից, երբ շատ հայ կանանց հետ Խաթունին գերի էր բերում Վասպուրականի կողմերից: Այնուհետև թեև որսորդը ազատություն շնորհեց նրան և շատ անգամ առաջարկեց դառնալ իր հայրենիքը, բայց Խաթունը չուզեց հեռանալ այն տնից, ուր այնքան սիրում և պատվում էին նրան: Բացի դրանից, վերջին ժամանակները նա իմացավ, որ հայրենիքում իր ազգականներից և ոչ մեկը չէր մնացել. մեծ մասը նույն գերության դարում սպանվել էին պարսիկներից, մնացածները ոչնչացրել էր խոլերան:

Մարոն դեռ երեխայության ժամանակ որբ մնալով մորից, փոխարինեց նրան բարեսիրտ Խաթունը, որ խնամք էր տանում փոքրիկ աղջկան մայրական բոլոր գթասրտությամբ: Բայց գտնվելով ավելի հոր ազդեցության տակ, Խաթունի աշակերտուհին չընդունեց նրա դաստիարակության այն հոգին, որ ուներ ավելի ջերմեռանդ և կրոնական բնավորություն: «Ես որսորդ եմ, ասում էր Ավոն, իմ աղջիկը եթե որսորդ ևս չլինի, գոնյա պետք է սիրե արյուն և հրացան»: Այդ պատճառով Մարոյի խիստ վաղ մանկությունից սկսվեցավ նրա և Խաթունի մեջ մի խուլ հակառակություն: Մարոն շատ անգամ ծիծաղում էր, երբ մոլեռանդ Խաթունը իր ձեռքն ընկած բոլոր փողերը հավաքում էր և տերտերներին էր տալիս, և բացի պարտադիր պասերը, ավելորդ պասեր էր պահում, և սուրբ Սարգսի շաբաթում երեք օր ոչ ուտում էր և ոչ խմում: Իր գերությունից հետո, կարծես, մի ծանր ապաշավանք էր նստած նրա խղճմտանքի վրա, որը միշտ աշխատում էր քավել կրոնքի և քահանայի միջնորդությամբ…

Հասոյի կնոջը ես մի քանի անգամ միայն տեսա, այն ևս ծածկված երեսով, իր երկրի սովորությանը հետևելով, նա չխոսեց ինձ հետ և ոչ մի բառ. առհասարակ նա խիստ հազիվ էր երևում, ավելի զբաղված էր իր երեխաներով, որոնց թիվը ընտանիքի մյուս անդամների համեմատությամբ, բազմություն էր կազմում: Մի բարի բախտով, աղջիկները, դեռ հարս չդարձած, վայելում էին այն արտոնությունը, որ կարող էին երեսները առանց ծածկոցի ման գալ և տղամարդերի հետ խոսել, եթե ոչ, միևնույնը կպատահեր իր և Մարոյի հետ, ինչ որ պատահեց Հասոյի կնոջ վերաբերությամբ:

Ինչ որ ավելի աչքի էր ընկնում ծերունի որսորդի դրության մեջ, այն էր, որ նա այժմ չէր երևում այնպես աղքատ, որպես էր Սալմաստում բնակված ժամանակ: Արոտների մեջ արածում էին ավելի քան հարյուր ոչխար, տասը հատ ընտիր կովեր ամեն օր քշում էին դեպի նախիրը, արորը իր ամբողջ պարագայքով գործում էր սեփական արտերի մեջ, տունը լի էր աստուծո ամեն բարությունով: Հասոյի խորշոմած ձեռքերը վաստակեցին այս բոլորը: «Այն ժամանակ միայն մշակը կարող է կուշտ փորով հաց ուտել, երբ նրա քրտինքը թափվում է իր սեփական հողի վրա», այսպես էր խոսում ծերունի որսորդը:

Որսորդ Ավոն, որպես նկատեցի ես, Հաղբակա ժողովրդի կողմից վայելում էր մեծ հարգանք. նա էր միանգամայն այն երկրի խաղաղության ոգին. նրա մի խոսքը փարատում էր շատ վիճելի երկպառակություններ գյուղացիների մեջ: Նրա վրա նայում էին գյուղացիները, որպես իրանց նահապետի կամ պատրիարքի վրա: Թեև Ավոն այժմ պաշտոնապես ստացել էր «միր» տիտղոսը և համարվում էր տեղային հայերի գլուխ կամ ներկայացուցիչ, և շեյխերի մեջլիսում ծնկի տեղ ուներ, այսուամենայնիվ, նա չէր թողել իր պարզ, անփառասեր հարաբերության ձևը հասարակ ժողովրդի հետ: Նա իր վարվեցողության մեջ ոչ մի բանով չէր ցույց տալիս, թե ինքը պաշտոնական մարդ է, թե նա մի բանով բարձր է, քան հասարակ ամբոխը, այլ նայում էր ժողովրդին որպես գերդաստանի հայրը իր ընտանիքին: Նա մինչև անգամ չէր թողել իր հին սովորությունները, իր հին պարապմունքը. շաբաթը մի քանի անգամ, հրացանը ուսից քարշ գցած, նա կերթար որսորդության. և այդ անում էր նա ոչ թե զվարճության համար, այլ իր սիրելի արհեստը պատվելու համար:

Ավոն այս երկրում ևս գաղթական էր, որպես Սալմաստում. ի՞նչու էր թողել իր բնիկ հայրենիքը, կամ ո՞ր տեղացի էր նա,— այդ մի գաղտնիք էր, որ սաստիկ կերպով պահվում էր նրա ընտանիքի մեջ: Բայց շատ անգամ ծերունի որսորդի թավամազ հոնքերը խոժոռվում էին, շատ անգամ նրա բարի դեմքը պատում էր տխրության մռայլը, երբ հարցնում էին նրա անցյալից, երբ խոսք էր բացվում նրա հայրենիքի մասին: Երևում էր, նրա անցյալը թողել էր խիստ տխուր հիշողություններ, որոնց մտաբերելը ոչ միայն անախորժ էր թվում, այլ մինչև անգամ սարսափ էր ազդում այդ անբախտ մարդու վշտահար սրտին…

ԻԴ

ՄԻ ՓՈՔՐԻԿ ՑՈՒՅՑ

Ծերունի որսորդը դարձավ տուն մյուս ավուր երեկոյան պահուն: Կարոն և իր ընկերները չհայտնվեցան: Նա ասաց, թե մի անակնկալ դեպք առիթ տվեց տղերքին մի օրով ետ ընկնել այն *գործից*, որի պատճառով պետք է գնային մի տեղ: Ի՞նչ գործ, ո՞րտեղ,— այդ մասին նա ոչինչ չխոսեց: Ես խնդրեցի նրանից պատմել դեպքը: Նա ասաց, որ շատ հոգնած է, պահանջեց մի բան ուտելու և խոստացավ ընթրիքից հետո պատմել բոլորը: Մարոն մի քանի րոպեում կատարեց հոր պատվերը. ես չմոտեցա սեղանին, որովհետև ամենևին ախորժակ չունեի: Ես միայն նայում էի Մարոյին, որ նստած հոր մոտ, մատների աննշմարելի արագությամբ գործում էր գուլպաներ, և առանց լռելու խոսում էր, թե ինչ դրության մեջ նա գտավ ինձ «քանդված մատուռի» մոտ, թե մտածում էր նա «իմ գլխին մի օյին խաղալ», ամենևին չցույց տալ, թե ինքը Մարոն է, և կողոպտել ինձ, որովհետև ես քնած էի, շատ անզգա կերպով քնած էի. այս դրության մեջ նա կարող էր իմ ձեռքերը, ոտքերը կապել և միանգամայն «պլոկել» ինձ: Հետո նա իր ճարպկությունը կհայտներ Կարոյին և ինձ կամաչացներ նրա ընկերների մոտ և այլն: Ինձ թեև շատ ախորժ չէր լսել այս բոլորը, որով վիրավորում էր նա իմ հպարտությունը, բայց դարձյալ ես չէի

կարողանում զսպել իմ ծիծաղը, երբ նա խիստ հեգնական սրախոսություններ էր անում իր պատմության մեջ: Հայրը նույնպես ժպտում էր, և շոյելով դստեր մազերը, ասում էր՝ «փոքրիկ ավազակս»: Բայց Մարոն ծռվեց դեպի իմ ականջը, կամաց ասաց.

— Դու խո չե՞ս բարկանա իմ հանաքներով, Ֆարհատ:

Ընթրիքից հետո որսորդը գտնվում էր հոգու լավ տրամադրության մեջ. նա սովորականից ավելի ուրախ էր, և ծխելով իր չիբուխը, անդադար խոսում էր այն անցքի վրա, որ այն օր պատահել էր: Ահա նրա պարունակությունը:

Կարոյի խումբը ծերունի որսորդի առաջնորդությամբ գնում էին Բարդուղիմեոս առաքելո վանքը, ուր վանահոր հետ պետք էր մի քանի *կարևոր իրերի* մասին խորհրդակցել: Նրանք անցնում են Հասբստանու սարերով, ուր արածում էին հոտերը մի հայաբնակ գյուղի, որ շատ հեռու չէր արոտատեղից: Հանկարծ լսում են աղմուկ, աղաղակ, և հովիվները կոտրած գլուխներով, արյունաշաղախ, վազում են նրանց մոտ, հայտնում են՝ թե քրդերը թալանեցին հոտերը, և խնդրում են օգնության հասնել: Կարոն իր ընկերների հետ շտապում են դեպի այն կողմը, որ ցույց են տալիս հովիվները: Բայց դեռ հոտերին չհասած, տեսնում են՝ գյուղացիք ետ են դառնում, բոլորովին հուսահատած և իրանց կայքը կորցրած: Նրանք հայտնում են՝ թե ամենայն ջանք իզուր էր, որովհետև ավազակներն իրանց ավարով արդեն անցել էին այս և այն սարը, որոնցից մյուս կողմը հետամուտ լինել անկարելի էր, որովհետև նրանք արդեն գտնվում էին իրանց սահմանի մեջ, որ բոլորովին անմատչելի էր: Կարոն հովիվներից տեղեկացած լինելով, թե որ ժամին սկսվեց թալանը, հայտնում է ոչխարների տերերին, թե դեռևս հույս կա ավարը ետ դարձնելու, որովհետև ավազակները ոչխարների դանդաղ քայլերով չէին կարող անցնել այնքան ճանապարհ, մի այնպիսի կարճ միջոցում: Եվ ավելացնում է, թե իրան Կարոյին, լավ ծանոթ էր այն սարերի դիրքը, նա գիտեր մինչև անգամ ամենաանշան շավիղները, և խոստանում էր տանել նրանց կարճ ու կտրուկ ճանապարհով, համոզում էր գյուղացիներին իր հետ գնալ: Իսկ այդպիսի դեպքեր խեղճ գյուղացիների կյանքում առաջին անգամը չլինելով, նրանք չեն համոզվում և արտասվալի աչքերով դիմում են դեպի իրանց տները:

— Ես չեմ մեղադրում ավազակներին, որոնք կողոպտել են ձեզ, նրանք հավատարիմ են մնում իրանց արհեստին,— ասում է Կարոն վրդովվելով:— Ես մեղադրում եմ ձեզ, որ դուք չգիտեք պահպանել ձեր կայքը: Շատ ուղիղ է ասում քուրդը, թե «հայը մի կույր հավի սիրտ չունի»…

— Տղերք,— դառնում է նա դեպի իր ընկերները,— գնանք մենք և ցույց տանք քրդերին, թե ամեն հայ այնպես չէ, որպես նրանք կարծում են:

Կարոն հայտնում է իր ընկերներին, թե ավազակները մինչև իրանց տեղը հասնելը, անպատճառ պետք է անցնեին այնինչ կիրճը. թե նրանք ոչխարների համրաշարժ ընթացքով հազիվ թե մինչև կեսօր կհասնեին այնտեղ, ուրեմն ժամանակ դեռ շատ կար: Իրանք կարող էին մի ուրիշ, ավելի կարճ ճանապարհով, կեսօրից կես ժամ առաջ հասնել հիշյալ կիրճի մոտ և փակել անցքը. այդ կլիներ միևնույնը, որպես փակել որսը որոգայթի մեջ:

Եվ իրավ, Կարոյի տարած ճանապարհը լինում է ավելի կտրուկ, թեև նա անցնում էր ամենավտանգավոր սարավանդների և դժվարին քարաժայռերի միջով: Այն ճանապարհով անհնար է ձիավոր մարդուն անցնել, ուր մնաց ավազակներին իրանց ավարով, այդ պատճառով նրանք զանց էին արել մոտավոր ուղին:

Ճիշտ Կարոյի նշանակած ժամին տղերքը հասնում են հիշյալ կիրճի մոտ. նա լինում է մի նեղ փապար, որի միջով հազիվ կարող էր անցկենալ մի ձիավոր: Փապարի մի կողմում բարձրանում էր ապառաժյա ահագին պատ, մյուս կողմում ընկած էր խորին անդունդ, մի սխալ քայլ բավական էր գլորվելու ճանապարհորդին դեպի այն վիհը: Ավազակները թվով ավելի քան հիսուն ձիավոր, հասնում են այնտեղ: Կարոն իր խումբը բաժանում է երկու մասի, ինքը Ասլանի հետ կտրում են կիրճի մուտքը, իսկ ծերունի որսորդը Սագոյի հետ բռնում են նրա ելքը: Կարոն պատվիրում է իր ընկերներին սպանություն չգործել, միայն երկյուղ տալ ավազակներին, որ նրանք թողնեն ավարը: Որովհետև սպանությունը կարող էր ենթարկել խեղճ գյուղացիներին ավազակների վրեժխնդրությանը:

Եվ այսպես էլ լինում է:

Կարոն իր դարանից ձայն է տալիս ավազակների գլխավորին, որ թողնեն ավարը, եթե ցանկանում էին կենդանի անցկենալ կիրճից: Նա պատասխանում է արհամարհանքով և հրամայում է քշել հոտերը:

Կարոն կրկին ձայն է տալիս՝ թե նա դեռևս խնայում է պարոն ավազակապետի գոռոզ գլխին և փորձում է իր գնդակի զորությունը նրա գդակի վրա: Այդ խոսքերի հետ Կարոյի հրացանը որոտում է, և ավազակապետի գդակը թռչում է գլխից:

Նա դարձյալ մնում է իր համառության մեջ:

Կարոն մյուս անգամ ձայն է տալիս՝ երևի պարոն ավազակապետի գդակը մեծ կորուստ չէր իր համար, բայց նա դարձյալ խնայում է նրա անձին, և այս անգամին իր գնդակը դիպցնում է նրա ձիու աջ ականջին: Հրացանը երկրորդ անգամ որոտում է և ավազակապետի ձին գլորվում է գետին, իր տիրոջն ևս իր տակովն առնելով:

Կարոյի օրինակին հետևում են նրա և մյուս ընկերները. Ասլանը իր հրացանի գնդակին նպատակ է ընտրում մեկի մտրակը, որ վայր էր գցում առանց տիրոջ ձեռքը վնասելու: Սագոն խփում է մեկի ձիու թամքի ղաշին: Ծերունի որսորդը խիստ ճարպիկ կերպով թռցնում է մեկի նիզակի ծայրը:

Ավազակների կողմից ամենայն ջանք անցնում է իզուր, որովհետև Կարոն իր ընկերների հետ պատսպարված են լինում ժայռերի ետևում, որոնք բարձր կանգնած էին կիրճի վրա: Կռիվը տևում է կես ժամ: Ավազակները դեռ չեն կամենում անձնատուր լինել:

— Տղերք,— ասում է Կարոն,— պետք է մի փոքր ճանկռտել դրանց:

Եվ սկսում են այնուհետև իրանց գնդակները դիպցնել մեկի ձեռքին, մյուսի ոտին, երրորդի ականջին, մի խոսքով, մարմնի այն մասերին, որոնց վերքը մահացուցիչ չէր կարող լիներ:

Ավազակները ստիպվում են թողնել ավարը:

Կարոն հայտնում է՝ թե նրանք պետք է թողնեն իրանց ձիերից չորսը, որովհետև ինքն իր ընկերների հետ ոտով եկած են և բավականին հոգնած են, և թե, ոչխարներն իրանց տերերին հասցնելեն հետո, ինքը Կարոն խոստանում է ետ դարձնել նրանց ձիերը, որոնց կգտնեն այնինչ տեղում, որ նշանակում է Կարոն: Ավազակները հոժարվում են և այդ առաջարկությանը:

Այնուհետև Կարոն հայտնում է՝ թե ավազակները պետք է այնքան ժամանակ մնան կիրճի մեջ, մինչև իր ընկերները հոտերը կդարձնեին և բավականին կհեռացնեին այնտեղից: Ավազակներն ընդունում են և վերջին պայմանը:

Կարոն ծերունի որսորդի հետ մնում են պահելու կիրճի ելքը, իսկ Ասլանը Սագոյի հետ հեծնում են ավազակների թողած ձիաները և դարձնում են հոտերը: Երբ նրանք բավականին հեռացած են լինում, Կարոն բաց է թողնում ավազակներին:

Հոտերը հասցնում են գյուղը այն ժամանակ, երբ բոլորովին մթնած է լինում: Գյուղացիք անպատմելի ուրախությամբ վազում են նրանց առաջ և զանազան օրհնություններով հայտնում են իրանց շնորհակալությունը: Կնիկները համբուրում են նրանց զենքերը, ասելով.

— Ձեր ոտերի հողը թո՛ղ մեր տղամարդերի գլխի՛ն լինի…

Որքան խնդրում են, որ տղերքը այն գիշերը մնան գյուղում, հյուր լինեն, նրանք չեն ընդունում, միայն Կարոն պատվիրում է, որ առավոտյան իրանց նստած ձիերը տանեն և կապեն այնինչ տեղում, որովհետև ձիերը պատկանում են ավազակներին:

Ավարտելով իր պատմությունը, ծերունի որսորդը ավելացրուց.

— Տեսնո՞ւմ ես, որդի, «մարդ կա, որ հազար մարդու արժե. հազար մարդ կա, որ մի մարդ չարժե»: Կարոն, Ասլանը և Սագոն էլ մարդիկ են, այն գյուղացիքն էլ մարդիկ են: Բայց ի՞նչպես: Երկուսի մեջ այնքան զանազանություն կա, որքան առյուծի և կատվի մեջ: Հայ գյուղացին մի քուրդ տեսնելիս փախչում է, իր տունն է մտնում, դռները փակում է, որ գոնյա իր գլուխն ազատե. ապրանքը թողնում է դրսում, թշնամին թալանում ու տանում է: Իսկ Կարոն իր երկու ընկերների հետ ապրանքը ետ են խլում: Այդ ինչի՞ց է: Չէ՞ որ երկուսն էլ մի հոր զավակներ են. չէ՞ որ երկուսի դամարներումը միևնույն արյունն է վազում:

— Ասում են, այստեղ մեղավոր է ստրկությունը,— առաջ տարավ որսորդը:— Ո՞վ կարող է մարդից խլել նրա ազատությունը, ո՞վ կարող է ստրկացնել նրան, եթե ինքը, մարդը, ցանկություն չունի, եթե նա չէ պատրաստել իրան մի այսպիսի անբախտ վիճակի համար: Մարդն ինքն է թույլ տալիս ուրիշներին նստել իր շլինքի վրա: Եվ այդ շատ ձեռնտու է բռնավորի համար. նա էլ այդ է ցանկանում: Այո՛, մարդն ինքն է պատրաստում իր համար ստրկությունը, և նրա արմատը դրած է ընտանիքի մեջ: Այն օրից, երբ երեխան աչք է բացում, նրա ձեռքը, ոտքը կապում են և դնում օրորոցի մեջ,— այդ ստրկության սկիզբն է: Առաջին խոսքերը, որ մայրը խառնում է օրորոցի երգերի մեջ, լինում են հոգին թուլացնող, եռանդը մաշող, կամքը և միտքը սպանող, և նախապաշարմունքներով լի խոսքեր,— դա ստրկության առաջին դասն է: Հետո մեծանում է մանուկը, նա միշտ ընդունում է ծնողների ապտակը, միշտ զգում է նրանց կոպիտ վարմունքը, միշտ լսում է նրանցից սպառնալիք, սարսափեցնող, բթամտացնող և մանուկի ուժը, զորությունը խլող խոսքեր: Դպրոցի մասին ես չեմ խոսում, որովհետև այդ դու ինքդ փորձել ես, սիրելի որդի: Բայց ավելի քան դպրոցը, մեծ չարիք է գործում քահանան, այն ևս աստուծո անունով: Ի՞նչ մեղ ունի խեղճ գյուղացին, նրան սովորեցնում են լինել ստրուկ: Նա ամեն օր տերտերից այդ խոսքերն է լսում՝ «ով որ քեզ կծեծե, դու նրան խոնարհություն արա, ով որ քո վերարկուն կխլե, դուն շապիկդ էլ տուր. եթե ձախ երեսիդ զարկեն, աջն էլ դարձրու, ամենևին սուր չբանեցնես, որովհետև սուր բարձրացնողը սրով կմեռնի, դրա համար էլ մեր տերը Պետրոսի ձեռքից սուրը խլեց»: Ո՞վ է իմանում, հազար ու մեկ այսպիսի հիմարություններով լցնում են խեղճ մարդու գլուխը, և նա դառնում է ոչ թե մարդ, այլ «կույր հավ», որպես քուրդն է ասում:

— Իսկ մեր կարդացվորներն այդ հիմարությունները կոչում ես կրթություն, դաստիարակություն…

— Բայց քուրդը, պարսիկը, թուրքը, որոնք մեր հացը մեր ձեռքից խլում են, որոնք մեր արյունը ծծում են, նրանք բոլորովին ուրիշ եղանակով են դաստիարակվում: Ընտանիքի մեջ աճում, զարգանում են նրանք, ինչպես վայրենի ծառը մայր հողի վրա արմատ է գցում, ազատ, արձակ ճյուղեր է բարձրացնում, և ոչինչ չէ ճնշում, ոչինչ չէ նվազեցնում նրա աճելությունը: Դպրոցի մեջ նրանց կարդացած գրքերը մեր Այսմավուրքը և Նարեկը չեն. նրանք սովորում են իրանց ազգի հերոսների պատմությունը, ոգևորվում են իրանց բանաստեղծություններով, որը մեծ մասամբ նվիրված է զանազան հսկաների, փեհլևանների քաջագործություններին: Նրանց կրոնքը և կրոնական գրքերը մինչև անգամ բանաստեղծություն են, որոնց մեջ շնչում է պատերազմական ոգին: Որովհետև սկսյալ Մուհամմեդից մինչև խալիֆաները, իմամները և այլն,— բոլորը պատերազմող մարդիկ էին: Լսի՛ր, ի՞նչ է քարոզում մահմեդականի մոլլան՝ «ով որ քեզ կծեծե, դու էլ նրան ծեծիր. նա, որ քեզանից չէ, նրա ապրանքը քեզ հալալ է, կռիվ տո՛ւր թշնամուդ հետ, այն կռվի մեջ թե սպանես, դրախտը կերթաս, թե սպանվես, դարձյալ դրախտը կերթաս»:— Բոլորովին հակառակն է խոսում նա, ինչ որ ասում է հայի տերտերը մեզ:

— Մուհամմեդը տվեց իր ժողովրդին սուր, բայց Քրիստո՛ս — խաչը. ահա զանազանությունը մեր և մահմեդականների մեջ:

— Արյուն թափելը, ուրիշի ապրանք խլելը՝ վատ բաներ են. բայց շատ հաճելի էլ չէ, որ մարդ թույլ տա իր արյունը թափեն, իր ապրանքը խլեն, իր զավակները հացից զրկեն: Ամբողջ աշխարհը մեկ կռվի դաշտ է, ուր զորեղն անզորին կլանում է, ոչնչացնում է. թե ուզում ես ուրիշի կերակուր չդառնաս, պետք է քո գլուխը պահելու ճարը գիտենաս: Մի՞թե գայլի հետ կարելի է գառն դառնալ.— գազանի հետ պետք է գազան լինել, որ կարողանաս գլուխդ պահել: Ծունը, որ շուն է, երբ նրան փոքր-ինչ նեղացնում ես, կծում է: Կատուն, որ կատու է, թե նեղացնես, կճանկռտե, նրա համար, որ նրանց հայրն ու մայրը, նրանց վարժապետները չեն սովորեցրել *համբերել*: Բայց մեր գյուղացիներին այսքան նեղացնում են, կաշին մաշում են, հոգին հանում են, նրանք դարձյալ համբերում են, որովհետև երեխայությունից սովորել են *համբերել*…

— Բայց Կարոն և իր ընկերներն ուրիշ տեսակ մարդիկ են, իստակ այնպիսի մարդիկ, որպես պետք է լինի մարդը: Նրանք հորից և մորից որբ են մնացել, այդ պատճառով ընտանիքը չէ փչացրել նրանց: Քահանա-վարժապետից շուտ հեռացան, և դպրոցը չկարողացավ բոլորովին մեռցնել նրանց մեջ մանկության կենդանությունը: Ընկնելով այլ շրջանի մեջ, օրինավոր մարդկանց ազդեցության տակ, տարուբերվելով աշխարհի փոթորիկների մեջ, նրանք ստացան բոլորովին այլ բնավորություն: Եթե հայոց զավակների գոնյա մի փոքր մասը այնպես լիներ, որպես Կարոն և նրա ընկերները, այդ ազգը շատ բախտավոր կլիներ…

— Հայերը այս երկրի ազգաբնակչության մեջ բազմություն են կազմում. բայց քուրդը, որ ավելի սակավ է թվով, տուն-տեղ չունեցող, թափառական քուրդը տիրում է հային, նրա վրա *աղայություն* է անում: Ի՞նչ է պատճառը,— այն, որ քուրդը կենդանի մարդ է, իսկ հայը մեռած: Բանը շատության ու քչության մեջը չէ, գլխավոր բանը սրտի մեջն է. ի՞նչ կարող է շինել մի մարդ, երբ որ սիրտ չունի: Այսօր ես իմ աչքով տեսա, թե որպես երեք հոգի հայ տղերք կռվեցան ավելի քան հիսուն ձիավորի հետ. բայց ես այն ավազակներին ճանաչում եմ, նրանց գլխավորը Մուրադ բեկն էր, որ իր խումբով մի ամբողջ երկիր կարող է թալանել:

— Հիմա լսիր, որդի,— ծերունի որսորդը խոսքը դարձրուց դեպի ինձ.— թե ուզում ես այս աշխարհում ապրել, պետք է գայլի հետ գայլ դառնաս. գառան հետ՝ գառն. գլուխդ մի՛ խոնարհեցրու, թե չէ, ծեծողներ շատ կգտնվեն, ողորմած եղիր դեպի քեզանից տկարները, բայց թշնամուդ մի՛ խնայիր. սրբիր անբախտի արտասուքը, մխիթարե նրան, եթե այդ կպահանջեր մինչև անգամ քո կյանքը, քո արյունը:

Ծերունի որսորդի այս երկար քարոզի միջոցին ես ոչ այնքան լսում էի նրա խոսքերը, որքան նայում էի Մարոյի վրա. իմ բոլոր ուշադրությունը գրավել էր նրա երեսը իր շարժուն և զգայուն բացատրություններով: Հոր խոսքերը, երևում էր, թափանցում էին նրա սրտի խորքի մեջ, որպես բարեբեր սերմը պատրաստված հողի մեջ: Նրա աչքերն ավելի և ավելի վառվում էին. բարակ շրթունքները դողում էին. թշերի կարմրությունը բոլորովին թռավ, մնաց միայն մուգ-դեղնությունը, որ տալիս էր նրա դեմքին պղնձի գույն: Ի՞նչ էր, որ այնպես վրդովեց կիսավայրենի աղջկա սիրտը: Մի՞թե նրան ևս տանջում էր հայի թշվառությունը…

ԻԵ

Ի՞ՆՉ Է ՔՈՒՐԴԸ ԵՎ Ի՞ՆՉ Է ԹՈՒՐՔԸ

Ծերունի որսորդի վարդապետությունը որքան և անմարդասիրական լիներ, որքան և ունենար վայրենի, անխաղաղասեր բնավորություն, դարձյալ նա մի բողոք էր իր ժամանակի բարբարոսության և հարստահարության դեմ: Մի մարդ, որպես էր ծերունի որսորդը, բռնության կոպիտ ձեռքից այնքան դառն հարվածներ կրած մարդ, չէր կարող այլապես մտածել: Ինքը կյանքը, իրան շրջապատող հանգամանքները մտցրել էին նրա մեջ այն սարսափելի վրեժխնդրությունը դեպի ամեն անարդարություն, որ խլում է խաղաղասեր երկրագործի բարին, որ զրկում է նրան օրական ապրուստից, և մինչև անգամ սրբապղծում է նրա ընտանեկան պատիվը:

Ծերունի որսորդի տնակը կանգնած էր այն լեռնագոտիի վրա, որ կազմում էր բնական սահման, բաժանելով Տաճկաստանը Պարսկաստանից: Յուրաքանչյուր բաժինը պարունակում էր իր մեջ երկրի ընդարձակ տարածություն, բնակեցրած մեծ մասամբ հայերով: Պարսկաստանի մասնում գտնվում էր Ատրպատական նահանգը իր զանազան գավառներով. իսկ Տաճկաստանի մասնում՝ Վասպուրականի, Տարոնի և Արզրումի նահանգներն իրանց գավառներով: Ես կգրեմ յուրաքանչյուրի մասին որքան հիշում եմ, որքան վերաբերում է իմ պատմությանը:

Սարսափելի՛ էին այն ժամանակները…

Այդ այն ժամանակն էր, երբ Տարոնը և Վասպուրականը թեև Տաճկաստանի մի մասն էին կազմում, բայց քրդերի զանազան ցեղերը, օգուտ քաղելով սուլթանի պետության թուլությունից, տիրում էին Հայաստանի այդ երկու ամենամեծ նահանգներին, սկսյալ Սև ծովի հարավա-արևելյան եզերքից, Եփրատ գետից, մինչև Միջագետքի և Պարսկաստանի սահմանները:

Հիշյալ նահանգները պարունակում էին նրանց մեջ հետևյալ գավառները՝ Հաքարի, Բայազեդ, Հաղբակ, Վան, Բաղեշ (Բիթլիս), Մուշ, Շատախ, Սասուն, Խիզան, Մոգաց երկիր, Չարսանջակ, Քեղու և այլն — այդ գավառներին տիրում էին քրդերը:

Մնացյալ ազգաբնակչությունները, բացի քրդերից, էին՝ հայեր, ասորիներ, հրեաներ, թուրքեր, եզիդիներ, և զանազան թափառաշրջիկ ցեղեր: Հայերն իրանց թվով

բազմություն էին կազմում և, համարյա, բաղկացնում էին ամբողջ ազգաբնակչության կեսից ավելի մասը:

Որպեսզի գիտենալ, թե ինչ դրության մեջ էին այն ժամանակ հայերը, պետք է նախ ծանոթանալ տիրող ազգի՝ քրդերի բնավորության և նրանց քաղաքական կազմակերպության հետ:

Քրդերը բաժանված էին զանազան ցեղերի, որոնց գլուխներն էին՝ Մուքուրի, Թակուրի, Միլանցի, Հայտարանլի, Շավի, Ջալալի, Ռավանդ, Բիլբաստ, Մամըքանի, Հարթոշի, Շիկակ, Լարքի, Եզիդի: Դրանք շատ քիչ էին զանազանվում հատկություններով և սովորությունով. խոսում էին մեդական լեզվով, որ յուրաքանչյուր ցեղի մեջ որոշվում էր բարբառների առանձնահատկությամբ: Կրոնով մահմեդական էին՝ սուննի աղանդից: Եզիդիները միայն բաժանված էին կրոնով, որոնք պաշտում էին չար և բարի ոգիները, երկրպագություն էին տալիս տնային օջախին: Դրանք գուցե մնացորդներ էին Արամազդի և Արիմնի հին երկրպագուներից, որոնց մեջ մինչև այսօր երևում են մոգական ծեսեր:

Քրդերը չունեին գիր և գրականություն, շեյխերը (դենպետները) միայն գիտեին արաբերեն կարդալ, որով ավանդում էին ժողովրդին իրանց կրոնի հրահանգները, որոնք բովանդակվում էին մի քանի պարզ և թեթև, արտաքին ծիսակատարությունների մեջ: Միակ բանը, որ գիտեր ամեն քուրդ իր հավատքի հանգանակից, էր նամազը, որը նա մեքենաբար և ճիշտ կերպով կատարում էր նշանակյալ ժամերում, առանց հասկանալու, թե ինչ էին նշանակում իր այնքան ջերմեռանդությամբ արտասանած արաբական բառերը: Բացի դրանից, քուրդը գիտեր մեծ մարգարեի — Մուհամմեդի անունը, և նրա նախկին խալիֆաների՝ Օմարի, Օսմանի, Աբու-Բաքիրի անունները և ավելի ոչինչ:

Բայց ժողովրդական անգիր բանաստեղծությունը կենդանի էր քրդերի մեջ. նա ծագելով ամբոխի իսկական կյանքից, ուներ նույն բնավորությունը և ոգին, որով ապրում էր ինքը ամբոխը: Հովվերգությունը և քաջազնական հանգերգությունը գլխավոր տեղն էին բռնում նրանց բանաստեղծության մեջ, առաջինը, որպես մի խաշնարած ցեղի կյանքի առնչություն, երկրորդը, որպես նրա պատերազմական ոգու արտահայտություն: Հովվական երգերը տխուր էին և մելամաղձոտ, նրանք խիստ մեղմ կերպով ներդաշնակվում էին հովիվի սրինգի խուլ և ձգական հնչյունների հետ: Իսկ պատերազմական երգերը կրակոտ, վառվռուն և խրոխտ էին, նրանք լիահնչյուն համարձակությամբ որոտում էին թմբուկների ձայնի հետ:

Ոչ մի նշանավոր երևույթ չէր կորցնում իր հետքը քուրդի կյանքի մեջ. ժողովրդական ոգին իր տաղերով կամ փառաբանում էր մեկի քաջագործությունը, կամ պարսավում էր մյուսի թուլասրտությունը: Ծածկվեցավ մեկը թշնամուց կամ խույս տվեց նա կռվի դաշտից, մյուս օր կանայքը և աղջիկները հորինում էին նրա մասին զանազան կծու պարսավներ, և երգը արագ թռչում էր ամեն երեխայի, ամեն չափահասի բերանից:

Թուրը, մի ջուխտ ատրճանակ, վահանը և նիզակը քրդի մարմնի անդամներն են, որոնք միշտ մնում են նրանից անբաժան, հրացանը նա գործ է ածում մեծ կռիվների մեջ: Թամքած ձին, որ միշտ պատրաստ է նրա չադրի առջև, քրդի հավատարիմ ընկերն է. նրան սիրում է տերը ավելի, քան իր կնոջից, ավելի, քան իր որդիներից: Քուրդը իր չադրի մեջ հյուրասեր էր որպես Աբրահամ, բայց նա չի խնայելու կողոպտել նույն հյուրին, եթե նա կհանդիպեր մեկ մղոն հեռու իր չադրից: Արյան վրեժխնդրությունը, որպես ամեն կիսավայրենի ցեղերի մեջ, նույնպես քրդի մեջ, անցնում է սերունդից սերունդ: Սպանվածը հանգիստ չէ իր գերեզմանի մեջ, քանի որ նրա արյան փոխարենը չէր առնվել սպանողից կամ նրա մոտ ազգականներից: Սպանողը այն ժամանակ միայն ազատ է մնում վրեժխնդրությունից, երբ գնում էր իր

ոսոխի տունը, իր սուրը գցում է նրա ոտքի տակ և ներողություն է խնդրում: Բայց հազիվ կգտնվեր մի քուրդ, որ խոնարհվեր մինչ այն աստիճան ստորության: Քուրդը քինախնդիր է և ոխերիմ. նա մինչև մահ չէ մոռանում վիրավորանքը կամ անպատվությունը, քանի որ դեռ լիակատար բավականություն չէր ստացել: Նա միևնույն ժամանակ շատ հանգամանքներում — հպարտ է և ազնիվ: Քուրդը դադարեցնում է իր կռիվը, երբ հակառակ կողմից միջամտություն են գործում կանայք: նա իրան չէ ստորացնում, պատերազմելով իրանից թույլ արարածների հետ. թեև քրդի կինը կռվի ասպարեզում նույնքան կատաղի է և քաջասիրտ, որքան իր ամուսինը:

Կրկին անգամ ամուսնանալը, մեռած կամ սպանված տղամարդից հետո, քուրդ կնոջ համար համարվում է նախատինք: Նա մնում է միշտ այրի, մխիթարում է իրան այն քաղցր հիշողություններով, թե իր այրը մի «լավ ավազակ» էր, թե նա մնաց միշտ մաքուր երկչոտության արատից, թե նա երբեք իր թիկունքը չդարձրուց թշնամու դեմ, թե նա սիրում էր իր ամուսնին, որքան սիրում էր իր արաբական նժույգին, և երբեք նրա սիրտը չգրավեց ամենագեղեցիկը իր ցեղի աղջիկներից: Եվ մայրն երեխայությունից պատմում էր իր զավակներին հոր գործքերը, խրատում էր հետևող լինել նրան և կրկին բարձրացնել հանգուցյալի հիշատակը խոր գերեզմանից:

Մանկությունից քուրդը կրթվում է ձիան սանձ կառավարելու, զենք գործածելու, մարմնամարզության և այլ ճարպկությունների մեջ: Նա քաջագործություն է համարում գողանալ, հափշտակել ամեն ինչ, որ պետք էր իր ապրուստի համար: Նա մինչև անգամ գողանում էր իր հարսնացվին: Բախտավոր է համարվում ամուսնությունը, երբ տղամարդ-հերոսը առևանգել էր իր սիրուհին հոր ընտանիքից: Կինը այսպիսի դեպքերում մի առանձին հպարտությամբ է նայում իր ընկերուհիների վրա:

Քրդի ամենամեծ երդումը *թալախի* վրա է լինում, նա առնում է մի քար և նետում է, ասելով՝ «թող իմ թալախին այս քարի պես գցած լինի, եթե այսպես, կամ այնպես անեմ»: Թալախը նրա ամուսնական կապն է, նա լուծված է համարվում, երբ նրանով երդում ուտողը երդմնազանց է լինում: Այսպիսի երդումները պահանջվում են, երբ պետք էր որևիցե գործի մեջ ամենահաստատ գրավական մի մարդու հավատարմության մասին: Եվ այդ լինում է այն ժամանակ, երբ գործը վերաբերում էր ընդհանրության ամենակարևոր մեկ հարցին:

Որպես բնության ազատ որդի, նվիրելով իրան անհոգ և պարզ կյանքի, քուրդը բավականանում է իր անասուններով: Նա հովիվ է: Նա չունի տուն և հաստատ բնակություն. նրա օթևանը իր չադրն է, որը կազմում է այնտեղ, ուր կարող է իր անասունների համար ճարակ գտնել: Ձմեռային ձյուները միայն քշում են քուրդին իր սիրելի սարերից, այն ժամանակ ևս մի հայի տուն միշտ պատրաստ է ընդունել ինքնակոչ հյուրին: Այնտեղ քուրդն իր անասունների հետ անցուցանում է ձմեռը, մինչև գարունը կրկին կոչում է նրան դեպի լեռների գիրկը:

Քրդի կերակուրն է՝ իր անասունների կաթը, մածունը, պանիրը, սերը, կարագը և յուղը. նա չէ դիպչում նրանց մսին: Քրդի հագուստն, ոտքից մինչև գլուխ, կազմված է իր անասունների բուրդից և կաշուց, իսկ այդ բոլորը պատրաստում է նրա կինը: Տղամարդը տնտեսության մեջ ավելի չէ խառնվում. նա պատերազմական մարդ է: Երկրագործությունը, արհեստը քրդի համար ստոր պարապմունքներ են, որոնց նա արհամարհում է, համարելով ռայայի գործ: Վաճառականությունը նրա մեջ դեռ պահպանել է իր հին նահապետական ձևը: Նա տալիս է, օրինակ, քսան ոչխար և դնում է մի ձի. նա փոխում է իր յուղը, պանիրը, բուրդը երկրագործի ալյուրի հետ կամ արհեստավորի շինած այս և այն գործիքի հետ: Եվ այս բոլորը կատարում է նա չափազանց միամտությամբ, ամեն առևտուրի մեջ խաբվում է նա. ամեն

փոխարինության մեջ որսում է նրանից հայ կամ հրեա մանրավաճառ իր շահերը: Որովհետև այսպիսի հարաբերությունների մեջ քուրդը գործ չէ դնում իր սուրը և մարմնական ուժը, որ նրա մեջ շատ զարգացած են, այլ նա բանեցնում է իր հմտությունը և խելքը, որոնք նրա մեջ խիստ թույլ են:

Քուրդը խաբեբա չէ. նա հավատարիմ է իր խոստմունքը կատարելու մեջ: նա մնում է միշտ ճիշտ իր պարտքը վճարելու մեջ: Վճարել այն, ինչ որ պարտքով էր առած, և կողոպտել ուրիշի սեփականությունը — երկուսն էլ միօրինակ սուրբ են նրա համար: Առաջինի մեջ նա պահպանում է իր պատիվը և խոսքը, իսկ երկրորդի մեջ՝ իրավունքը և արդարությունը: Որովհետև քրդի համար ոչինչ ընդդեմ չէ իրավունքի և արդարության, երբ նա սեփականացուցած էր սրի և հաղթության ուժով: Սուրը և հաղթությունը արդարության կշիռն է նրա և իր հակառակորդի մեջ:

Այսպես է վարվում ամեն մի ավազակ. այսպես է վարվում ամեն մի հասարակություն, որ նույն բնավորությունն ունի. այսպես է վարվում մի ամբողջ պետություն, որ ավազակի դեր է խաղում…

Այսքանը բավական համարելով քրդի բնավորության և ընտանեկան կենցաղավարության մասին, դառնանք այժմ դեպի նրա քաղաքական կյանքի կազմակերպությունը:

Քրդերի ցեղերը կառավարվում էին իրանց էլ-աղասիների (ցեղապետների) և շեյխերի (դենպետների) գլխավորությամբ:

Ցեղապետը, որ կոչվում է «միր» (տեր), չէ նշանակվում ընտրողական սկիզբներով. նա, որպես ցեղի նահապետը, սերունդից սերունդ, տիրում է ժառանգաբար: Ամբողջ ցեղը հպատակվում է նրա իշխանությանը խոնարհ, որդիական հնազանդությամբ. նրա սուրը, նրա ձեռքը, նրա կյանքը միշտ պատրաստ են ծառայելու պետի կամքին և հաճույքին, որքան և չար կամ բարբարոսական լինեին նրանք: Ցեղապետն է վճռում իր ժողովրդի վեճերը, նա է բաժանում ավարը հափշտակողների մեջ, նա է առաջնորդում իր ցեղին կռվի ժամանակ, նա է ուղարկում խումբերը ավարառության համար: Ցեղապետը ամեն առավոտ իր չադրի մեջ նստած, ընդունում է ցեղի նշանավոր տղամարդերին, որոնք իրանց զինվորական ամբողջ կազմվածքով, ներկայանում են նրան, լսելու պետի պատվերները: Այնտեղ ծխում են հյուրասիրության չիբուխը, խմում են մի-մի ֆինջան դառն ղահվե: Մի այսպիսի «սալամը» կատարվում է ամեն առավոտ իր բոլոր ճշտությամբ:

Իսկ շեյխերը նշանակվում են գլխավոր դենպետից. նրանք ունեն իրանց մուֆթիները և ղազիները: Շեյխերը կատարում են ցեղի կրոնական պահանջները, որպիսի են՝ ամուսնություն, թլպատություն և հրապարակական նամազ: Իսկ կռիվների մեջ նրանք մասնակցում են որպես զինվոր, բայց ավարառությանց մեջ՝ որպես ավազակապետ: Այսուամենայնիվ նրանք վայելում են ցեղի համակրությունը նույն չափով, որքան ջերմ էր կրոնական զգացմունքը մի պարզ և կիսավայրենի ժողովրդի մեջ, որպես էր քուրդը:

Տարոնի և Վասպուրականի ամբողջ նահանգները բաժանված էին քրդերի զանազան ցեղերի մեջ: Իսկ յուրաքանչյուր ցեղի մեջ երկրի բաժանմունքը ամենախոշոր մասներից հասնում էր իր ամենափոքր մանրերորդին: Այսինքն, սկսյալ մի գավառից, մի փոքրիկ վիճակից և մինչև անգամ մի գյուղից և մի ընտանիքից, յուրաքանչյուր առանձին-առանձին տերեր ունեին, և յուրաքանչյուր բաժինը հավասարվում էր տիրողի զորության բարձր կամ ստոր աստիճաններին:

Ռայան — հպատակը, վճարում էր այլևայլ հարկեր հողի մշակության համար, իր անասունների համար, իր արհեստի համար, իր բնակության տեղի համար, իր գլխի համար, մի խոսքով, ամեն բանի համար, որ վերաբերում էին նրա կյանքի և ապրուստի անհրաժեշտություններին: Հարկերի չափը և նրանց քանակությունը ոչ կշիռ ունեին և ոչ սահման, դա կախված էր առնողի խղճմտանքից: Ռայայի տեր լինելու և հարկեր պահանջելու արտոնություն վայելողները կոչվում էին *խաֆիր* և *դարաբեյիններ*: Դրանք ցեղի մեջ որևիցե նշանակություն ունեցող ազնվական մարդիկ էին: Օրինակ, գլխավոր ցեղապետը ունի իր ազգակիցները կամ պաշտոնակալները, նրանց ապրուստի համար տալիս է մի կամ ավելի գյուղեր, որոնց հասույթով պետք է կառավարվեն նրանք, այսպիսիները ստանում են խաֆիրության իրավունք: Նույնիսկ պաշտոնակալները կամ ցեղապետի ազգակիցներն ունեն ծառաներ կամ սպասավորներ. նրանց ռոճիկի փոխարեն տալիս են իրանց ստացած գյուղերից մի կամ շատ ընտանիքներ որպես ծուխ, և այն ծառան վառվում է նույն ընտանիքների հետ, որպես իր սեփականության կամ հպատակների հետ: Ահա՛ պատճառը, որ երկրի բաժանմունքը, սկսյալ ամենախոշոր կտորներից, հասնում էր մի ընտանիքի:

Որպես իշխանությունը, սկսյալ ցեղապետից, աստիճանաբար իջնում էր մինչև վերջին սպասավորը, նույնպես և սեփականության իրավունքը, սկսյալ երկրի խոշոր կտորներից, հասնում էր նրա ամենափոքր մասին:

Բայց երկիրը աղաների (խաֆիրների) տոհմային կամ կալվածական ժառանգությունը չէր, այլ նա սեփականացուցած էր սրի ուժով. այս պատճառով, նա անդադար անցնում էր մի տիրապետողից դեպի մյուսը, որի սուրն ավելի զորություն էր ստանում:

Եվ այսպես, պատերազմը տիրողների մեջ դառնում էր մշտական, անընդհատելի:

Պատերազմների ժամանակ, յուրաքանչյուր հակառակ կողմերի, թե հաղթության և թե հաղթվելու միջոցին, բնակիչների վիճակը սարսափելի էր: Օրինակ, մի ցեղ կամենում է խլել մյուս ցեղի ձեռքից երկրի այս կամ այն մասը, նա կամ հաղթելով տիրում է, կամ ավար առնելով, թալանելով ամեն հանդիպածը, ետ է դառնում: Այսպիսի դեպքերում ժողովուրդը թողնում է իր տունը, տեղը, մշակության դաշտերը, և իր գլուխը միայն ազատելու համար, պատսպարվում է լեռների անմատչելի տեղերում: Կռիվը տևում է երկար: Անասունները, անտեր մնալով, թշնամին կողոպտում է. հունձքը, անխնամ մնալով, չորանում է, ոչնչանում է, և կռիվներից հետո վրա է հասնում մի նոր, ամենասարսափելի թշնամի — սովը:

Ժողովուրդը միշտ գտնվում էր անվերջ երկյուղի և հուսահատության մեջ: Նա չգիտեր, թե էգուց կարո՞ղ է հանգիստ լինել, որովհետև թշնամին միշտ կանգնած էր որպես ասում են՝ նրա քամակին: Կռիվների փոթորիկների մեջ եթե մի անգամ զրկվեցան նրա մշակությունները բերքից, մյուս օրը նա ուտելու հաց չուներ: Որովհետև նա ապագայի համար պաշար չէ պահում, նախ, որ ապահով տեղ չունի պահելու, երկրորդ, ավելորդ ծանրությունը միշտ արգելում է նրա փախուստը թշնամու ձեռքից, երբ նա աշխատում է ազատել իր գլուխը միայն:

Կռիվները, ժողովրդի անդադար անցնելը մեկ տիրապետողից դեպի մյուսը, սպառում էին բնակիչների կյանքը սրով, կրակով և սովով:

Հանկարծ երկրի նախկին տիրապետողն իրան հաղթված է համարում, որպեսզի նա հաղթողի համար շահվելու ոչինչ չթողնե, հրդեհում է ամբողջ գյուղորայք, ավերում է քաղաքները, կրակ է տալիս հասունացած հունձքերին, և բոլորովին անապատ դարձնելով երկիրը պատկանում էր իրան, այնպես թողնում է և հեռանում: Այսպիսի

հանգամանքներում քուրդը կորցնելու ոչինչ չուներ, որովհետև նա մի ժամանակավոր հյուր էր. իսկ այն բոլոր կրակի նյութ դարձած շինությունները պատկանում են հայ կամ օտարազգի բնակիչներին. այն բոլոր մշակությանց արդյունաբերությունը նրանց ձեռքերի վաստակն է: Նույն բարբարոսությամբ վարվում էր և հարձակվողը, երբ տեսնում էր թե տիրելու անկարող է: Նա խույս էր տալիս կռվի դաշտից, իր հետքից թողնելով ավերակներ և ամայություն:

Ժողովուրդը միշտ գտնվում էր նույն դրության մեջ, որպես մի թռչուն, որի բույնը քանդված էր չար երեխայի ձեռքով. նա նստած է միշտ օրորվող տերևի վրա և չգիտե ի՞նչ անե: Բնակիչը սիրտ չուներ կրկին նորոգելու իր խրճիթը որովհետև մտածում էր՝ արդյոք երկա՞ր կարող է բնակվել նրա մեջ. սիրտ չուներ մյուս անգամ ցանել իր արտը, որովհետև հույս չուներ, թե կհաջողվի՞ իրան քաղել իր հունձքը: Նրա տան շարժական իրեղենները միշտ թաղված էին հողի մեջ կամ նրանց համար հատուկ շինված ստորերկրյա պահարաններում, որպեսզի, փախուստների ժամանակ թշնամու ձեռքը չընկնեն: Բայց հաջողվո՞ւմ էր նրան մյուս անգամ դուրս բերել իր կայքը գերեզմանից,— խիստ հազիվ, որովհետև շատ անգամ թաքցնողը, հանդիպելով թշնամուն, զրկվում էր կյանքից և իր պահարանի գաղտնիքը տանում էր դեպի մյուս աշխարհը: Այս է պատճառը, որ Հայաստանում մինչև այսօր գետինը փորելու ժամանակ գտնվում են այնքան շատ պղնձե, երկաթե իրեղեններ, կանանց զարդեր. դրանք պատերազմների միջոցներում թաքցրած կայքեր են, որոնց տերերն իրանց հետ իջել էին գերեզման:

Այսպես էր այն ժամանակ հայի վիճակը Տարոնի և Վասպուրականի մեջ, նրա դժբախտությունն ավելի նրանումն էր կայանում, որ տիրող բռնավորը — քուրդը — երկրի տերը չէր, այլ զանազան թափառական ցեղերից բաղկացած մի ամբոխ, որ կատաղի մրրիկի նման, տարուբերվում էր երկրի մի կողմից դեպի մյուսը, ոչնչացնելով ամեն կենդանություն, ամեն ինչ, որ արդյունաբերել էր արհեստը և մարդու աշխատասեր ձեռքը:

Քուրդը պետական փառասիրություն չուներ, և ոչ հասկանալի էր նրան աշխարհակալության հպարտությունը: Նա նայում էր իր նվաճած ժողովրդի վրա, որպես այն սարերի խոտերի վրա, ուր արածում էին նրա անասունները: Մեկը — ժողովուրդը — մատակարարում էր իրա՝ քրդի պիտույքները, մյուսը — սարերի խոտերը ճարակ էին տալիս նրա հոտերին, որպես վերջինի աճեցնելու և մշակելու համար նա հոգ չէր տանում, նույնպես և ժողովուրդը խնամելու մասին նա չէր մտածում: Քուրդը վստահ էր, թե աշխարհի մեջ ամեն տեղ բաց է նրա ասպարեզը, ամեն տեղ կարող է գտնել այս տեսակ արոտներ, քանի իր սուրը կարում է, քանի իր թևքը շարժվում է: Վասպուրականի և Տարոնի նահանգներում, բացի ներքին խռովությունները քրդերի կողմից, լինում էին հարձակումներ արտաքին թշնամիներից: Քիչ չէր պատահում, պարսիկներն արշավանքներ էին գործում և բազմաթիվ բախտախնդիր հրոսակներով թափվում էին այն երկրների վրա: Պատերազմը վերջանում էր կրակով, արյունով, գերեվարությամբ և ավարառությամբ: Այսպիսի դեպքերում վտանգը հասնում էր դարձյալ բնիկ ժողովրդին, որովհետև քրդերը, եթե թշնամուն ընդդիմանալու կարողություն չունեին, թողնում էին երկիրը, քաշվում էին դեպի լեռների անմատչելի տեղերը, և սպասում էին մինչև թշնամու հեռանալը:

Քիչ չէր պատահում, և Օսմանյան պետությունն ուղարկում էր զորքեր խաղաղացնելու իր տերության սահմանագլուխները և նվաճելու ապստամբ քրդերին: Եվ տաճկի ասկերը վարվում էր նույն բարբարոսությամբ, որպես պարսիկները: Որովհետև տաճկի տիրապետելը կամ իսպառ չէր հաջողվում, կամ եթե հաջողվում էր, լինում էր ժամանակավոր, և ասկերը, դատարկաձեռն ետ չդառնալու համար, հափշտակում էր ամեն հանդիպածը:

Ահա՛, այսպիսի դրության մեջ էին այն ժամանակ Արզրումի, Բայազեդի, Հաղբակա, Վանի, Բաղեշի, Մուշի, Շատախու, Սասնո, Խիզանու, Մոգաց, Չարսանջախու, Քեղվա գավառները, իրանց բազմաթիվ հայ բնակիչներով: Նրանց տիրում էր մի ավազակ ցեղ, որի աջ ձեռքը — իր սուրն էր, որի ոտքերը — իր նժույգն էր, որի տունը — իր թեթև չադրը, որի հայրենիքը — ամեն տեղ, որի հունձքը — թշվառ մարդկությունը, որի օրենքը և իրավունքը — իր կամքը, որի կյանքի նպատակը — փշրել, խորտակել և ոչնչացնել, որի գործող ոգին — իր երկաթի սիրտը, վայրենի կատաղությունը և գազանական հանդգնությունը…

ԻԶ

Ի՞ՆՉ Է ՊԱՐՍԻԿԸ

Այսքանը բավական է Վասպուրականի և Տարոնի մասին, դառնանք այժմ դեպի Ատրպատականը, այսինքն՝ Պարսկաստանի մասը:

Ես կհիշեմ Ատրպատական նահանգի այն գավառները միայն, ուր հայեր էին բնակվում. դրանք էին՝ Սալմաստ, Խոյ, Մագու, Գունեյիստան,Մարանդ, Ուրմի, Սուլդուզ, Սովուխբուլախ, Դուխարղան, Մարաղա, Թաբրիզ, Ղարադաղ, Արդաբիլ: Բացի հայերից, հիշյալ գավառներում բնակվում էին Ղզըլբաշ կոչված թուրքերը, որոնք կազմում էին ժողովրդի մեծ մասը, և այստեղ ու այնտեղ ցրված էին՝ հրեաներ, ասորիներ, քրդեր, բոշաներ:

Տիրող ազգը պարսիկն էր, որոնց մեջ նույնպես կային ցեղեր, որպես էին՝ լաքերը, ավշարները, թաթերը և Ղարադաղի զանազան էլաթները, որոնք ընդհանրապես խիստ հազիվ էին որոշվում միմյանցից թե տիպերով, թե սովորություններով և թե բարբառներով: Խոսում էին թուրքերեն լեզվով, որ շատ տարբերվում է Օսմանյան տաճկերենից, կրոնքով մահմեդականներ էին և պատկանում էին շիա աղանդին: Կրոնքի հոգևոր ներկայացուցիչներն էին մոլլաները, չափազանց խորամանկ, փառասեր և կեղծավոր մի հասարակություն, որ արտաքին բարեպաշտությամբ, ծածկված ավելի ճգնավորական դիմակով, գրավել էին ժողովրդի խորին հարգանքը, միևնույն ժամանակ մտցրել էին նրա մեջ կույր սնահավատություն և խավար մոլեռանդություն: Նախապաշարմունքները մուսուլմանների մեջ, մահմեդականության չպատկանող ազգերի վերաբերությամբ, հասնում էին խելագարության: Ինչ ազգ չէր հետևում իսլամին, նա համարվում էր պիղծ, զրկված թե այս աշխարհի և թև հանդերձյալ կյանքի երանություններից, որոնց պատրաստել էր ալլահը միմիայն Մուհամմեդի շիաների համար: Այս պատճառով, մահմեդականը, ոչ միայն ատելությամբ էր նայում դեպի այլակրոնները, այլ իրան մեղք էր համարում սերտ հարաբերություններ ունենալ նրանց հետ: Մահմեդականը չէր ուտում կերակուրը, որ պատրաստված էր այլակրոնի ձեռքով, նա չէր հագնում հագուստը, որ գործված էր այլակրոնի ձեռքով, նա իր տան մեջ չէր բանեցնում կարասիք, որոնց արհեստագործել էր այլակրոն մարդը, մի խոսքով, նա պիղծ էր համարում բոլոր արդյունաբերությունը, որ դուրս էր գալիս մահմեդականության չպատկանող ազգերի ձեռքից: Նա պիղծ էր համարում և այլակրոնների անձը, օրինակ, մի հայ, մի հրեա, մի ասորի անձրևային օրերում, թաց հագուստով չէին կարող քսվել մահմեդականին, այս համարվում էր սրբապղծություն և անզգույշ հանցավորը կրում էր իր պատիժը: Ահա այսպիսի և դրանց նման շատ խտրություններ, որոնց դրել էր մահմեդականությունը մուսուլմանների մեջ, ոչ միայն քրիստոնյաներին և հրեաներին ենթարկում էին իսլամի հալածանքին, այլև զրկում էին նրանց շահվել իրանց արդյունաբերությունից, և վնասում էին իրանց տնտեսությանը: Դա էր գլխավոր պատճառը հայերի, հրեաների և ասորիների աղքատության:

Մոլլաները, բացի իրանց ժողովրդին հոգևոր ուղղություն տալուց, կատարում էին և շարիաթի գործադրությունը, այսինքն, նրանց ձեռքումն էր օրենքը և արդարությունը, որ ավանդել էր ալլահը Մուհամմեդի միջնորդությամբ: Ամեն գործ, թե քրեական, թե քաղաքական, վճռվում էր նրանց ձեռքով: Այստեղ ևս այլադավանները զրկվում էին շատ իրավունքներից, որ վայելում էին մահմեդականները: Օրինակ, մի քրիստոնյա ունե դատաստանական գործ մահմեդականի հետ. գործը քննում է մոլլան. քրիստոնյան իր իրավունքը հաստատելու համար չէր կարող ներկայացնել վկաներ իր հավատակցիներից, որովհետև քրիստոնյայի վկայությունն ընդունելի էր դատարանում այն ժամանակ միայն, երբ նա տված կլիներ հօգուտ մահմեդականի, իսկ ընդդեմ մահմեդականի վկայելու նա իրավունք չուներ: Այսպիսի դեպքերում պահանջվում էր քրիստոնյայից մահմեդական վկաներ. բայց ոչ մի մահմեդական չէր ցանկանա քրիստոնյայի օգտի մասին վկայել, որովհետև այդ կհամարեր իր համար մեղք: Ուրեմն թե առաջին և թե վերջին դեպքերում քրիստոնյան զրկվում էր վկաներ ներկայացնելուց, և, իհարկե, տարվում էր գործը, մի այնպիսի դատարանում, ուր գործերը վճռվում էին ըստ մեծի մասին հիմնվելով վկաների ցուցմունքների վրա:

Դատարաններում փաստաբան լինելու իրավունք ունեին միայն մահմեդականները, իսկ մահմեդական փաստաբանը, չէր կարող պաշտպանել քրիստոնյայի գործը, երբ հակառակ կողմը մահմեդական էր: Քրիստոնյան ստիպված էր ինքը խոսել իր գործի մասին, մի այնպիսի դատարանում, որի օրենքները բոլորովին անծանոթ էին նրան: Այս դեպքում ևս նա զրկվում էր իր իրավունքը պաշտպանելուց և հետևանքը լինում էր գործի տարվելը:

Ես չեմ ուզում մանրամասնաբար գրել, թե որպես խորամանկ շարիաթը սահմանափակում էր իսլամը չդավանող ազգերի իրավունքները և զրկում էր նրանց բարոյական և նյութական բավականությունից, միայն այն կասեմ, թե որպիսի որոգայթներ էր լարում նա ուրիշ ազգություններից որսալ դեպի մահմեդականություն: Աղջիկներ, տղաներ գողանալ, հափշտակել նրանց և բռնությամբ մահմեդականություն ընդունել տալ,— դա ամենօրյա և սովորական գործ էր: Բայց կային և այլ հնարներ, որոնք գրավում էին քրիստոնյայի հաճությունը թողնել իր կրոնքը: Մահմեդականություն ընդունող քրիստոնյան, բացի նրանից, որ բավականին օժանդակություն էր ստանում իր նոր հավատակիցներից, բացի նրանից, որ նա գրավում էր նրանց հարգանքը և վրեժխնդիր էր լինում իր հին կրոնակիցներից, եթե ուներ մեկի հետ ոխ կամ թշնամություն, այլև, նա տեր է լինում բոլոր թե շարժական և թե անշարժ ժառանգությանը, որ պատկանում էր նրա ազգակիցներին: Այլ խոսքով, որևիցե գերդաստանի անդամներից մեկը, մահմեդականություն ընդունելով, իրավունք էր ստանում տիրել բոլոր կայքերին, ինչ որ պատկանում էր նույն գերդաստանին: Մի այսպիսի արտոնությունը կարող էր գրավել շատ անբարեխիղճ քրիստոնյաների շահասիրությունը, մանավանդ երբ նրանք ընտանեկան անբավականություններ ունեին միմյանց հետ: Եվ օրինակներ պատահում էին ոչ սակավ:

Բացի հիշյալ աշխարհային արտոնություններից, որ ստանում էր նոր մահմեդականություն ընդունող քրիստոնյան, նա օրենքով վայելում էր մի ավելի մեծ արտոնություն մյուս աշխարհում,— նրա որդիքը մինչև յոթն սերունդ երկնքի դատաստանի առջև ազատ էին մնում ամենայն պատասխանատվությունից իրանց մեղքերի մասին. որպիսի և հանցանք գործած լինեին նրանք, նրանցից հարցուփորձ չէր լինելու…

Քրիստոնյաների կրոնական արարողությունները իրանց կատակի և ծաղրածության առարկա դարձնելը մահմեդականների գլխավոր զվարճություններից մեկն էր: Քիչ չէր պատահում, երբ խաները հարսանիք ունեին, կամ իրանց տոների ժամանակ, ուրիշ շատ կատակերգությանց թվում, բերել էին տալիս և հայոց քահանաներ իրանց

եկեղեցական սպասով, ստիպում էին պատարագ մատուցանել կամ այլ ծեսեր կատարել: Ես երբեք չեմ կարող մոռանալ, երբ այսպիսի հանդեսներից մեկի մեջ խանը հրամայեց քահանային սաղավարտը դնել իր շան գլխին, շուրջառը գցել նրա վրա, և ստիպեց տերտերին իր բուրվառով խնկարկել շանը: Տերտերը իհարկե չկատարեց հրամանը: Ողորմելի քահանային շան հետ միասին գցեցին մի տոպրակի մեջ, բերանը կապեցին և սկսեցին բազմության առջև փայտով ծեծել: Քահանայի հառաչանքը, շան կնձկնձոցը, միախառնվելով միմյանց, դարձյալ զվարճություն էին պատճառում անգութ բարբարոսներին:

Մահմեդականները չունեին զորանոցներ: Հայոց վանքերը և եկեղեցիները միշտ ունեցել են և ունեին օթևաններ, և պատերազմների ժամանակ նրանք դառնում էին մահմեդական զինվորների բնակարաններ. իսկ սուրբ տաճարը, որովհետև ավելի ընդարձակ էր, գործ էին դնում որպես ախոռ ձիաների համար: Իհարկե, միևնույն ժամանակ կողոպտում էին ինչ որ գտնվում էր տաճարի մեջ: Շատ անգամ ևս վանքերը և եկեղեցիները ծառայեցնում էին որպես ոչխարների ձմեռանոցներ: Ի՞նչ հայ կարող էր ընդդիմանալ, ով կարող էր մի խոսք ասել, նրա լեզուն իսկույն կկտրեին:

Քանդված վանքերը, եկեղեցիները կրկին նորոգելու կամ կարկատելու իրավունք չկար: Շատ անգամ պատահում էր, տաճարի կտուրը ծակվում էր կամ ճեղքվում էր, ձյունը, անձրևը ցած էր թափվում: Որմնադիր հրավիրել անկարելի էր: Վարդապետները, քահանաները, եթե միջոց էին գտնում, շինում էին գաղտնի, այն ևս գիշերով: Ծա՜նր էր մի այսպիսի հանցանքը, եթե հայտնվեր նա, պատիժը վերջանում էր ամենասարսափելի կերպով: Նոր վանքեր կամ եկեղեցիներ շինելու թույլտվություն չկար. այդ կարող էր հաջողվել այն ժամանակ միայն, երբ մի մեծ գումարով քիրստոնյաները կգնեին այս և այն իշխանի հաճությունը: Իսկ զանգակի ձայն ամենևին չէինք լսում. զանգահարությունը արգելված էր:

Մահմեդականների հալածասիրությունը ոչ միայն բռնաբարում էր քրիստոնյաների կրոնական ազատությունը, ոչ միայն սրբապղծում էր ամեն ինչ, որ նրանց համար նվիրական և աստվածային էր, այլևս արատավորում էր նրանց ընտանեկան պատիվը: Ես գիտեմ հարյուրավոր և հազարավոր օրինակներ, թե որպես հայ կինը, հայ աղջիկը զոհվում էր մահմեդականի անբարոյական կրքերին: Ես երբեք չեմ կարող մոռանալ,— այս պատահեց մեր քաղաքում — երբ խանի սպասավորները եկան իրանց տիրոջ համար տանելու մի աղջիկ, հայրն երկար աղաչում էր, որ չխլեն իր աղջիկը: Երբ հոր արտասուքը չկարողացավ շարժել նրանց գութը, նա առեց մի դանակ, և խրելով իր դստեր կուրծքի մեջ, ասաց՝ «հիմա տարեք այս դիակը»: Նույն օրը խեղճի տունը հրդեհեցին և ինքը մեռավ բանտի մեջ: Ես գիտեմ մի օրիորդ, որին խանի որդին դաշտումը հանդիպելով, ասել էր՝ «աղջիկ, ի՛նչ լավ են քո աչքերը»: Մյուս օրը, երբ եկան նույն աղջկան տանելու խանի որդու համար, գտան երկու աչքով ևս կույր: Օրիորդն ինքն էր կուրացրել իր աչքերը, գուցե դրանով կարողանա ազատել իր պատիվը: Իսկ այսպիսի օրիորդ և այնպիսի հայր շատ քիչ էին գտնվում. մեծ մասը ենթարկվում էր կատաղի բռնաբարության… Կորուստը մեծ էր, որովհետև մի անգամ մահմեդականի հարեմխանայում ներս տարած հայ կնոջը էլ այնտեղից դուրս չէին թողնում: Խանը իր հաճությունը կատարելուց հետո ամուսնացնում էր նրան իր սպասավորներից մեկի հետ, ինչպես նա իր մնացած հագուստը պարգևում էր այս և այն ծառային որպես *խալաթ*:

Թե բռնի և թե կամավոր կերպով, մի անգամ մահմեդականություն ընդունող մարդը, շարիաթի օրենքով, կրկին վերադառնալ դեպի իր նախկին կրոնքը չէր կարող եթե տղամարդ էր նա, ամեն մի մահմեդական նրան հանդիպելիս, իրավունք ուներ սպանելու, իսկ եթե կին էր, պետք է դնեին նրան բանտում և այնքան տանջեին, մինչև կրկին խոստովանվեր, թե ընդունում է իսլամը:

Ղզըլբաշ-թուրքերը ազգային գրականություն չունեին, բայց արաբական և պարսից դպրությունը շատ ծաղկած էր նրանց մեջ: Գյուղերը և քաղաքները լիքն էին մզկիթներով, և յուրաքանչյուր մզկիթին կից կար մի վարժատուն: Բացի մոլլաներից, աշխարհական մարդը դասատվություն անելու իրավունք չուներ, այս պատճառով ուսումը և դաստիրակությունը ժողովրդի մեջ ընդունել է, կրոնական բնավորություն: Հին սերունդը մոլորված էր կրոնքի ֆանտաստիկության մեջ, այն կրոնքի, որ բացի իրանից չէր համբերում ուրիշ դավանություններին: Նոր սերունդը ընթանում էր նույն ուղղությամբ, որովհետև առաջնորդող անձինքը մոլլաներից էին: Այստեղից հասկանալի է թուրքերի և պարսիկների հալածասիրությունը այլադավանների վերաբերությամբ:

Հալածանքներին վիճակակից էին բացի հայերից և ասորիները, հրեաները և բոշաները:

Բացի մոլլաներից, կային և *սեիդներ*, նրանք համարվում էին մեծ մարգարեի որդիներ: Ժողովրդի այս դատարկապորտ, ծույլ և անգործ դասը ապրում էր տասնորդներով, որ ամեն մի մահմեդականի պարտավորությունն էր վճարել նրանց: Ոչ մի օրենք չէր սահմանափակում նրանց բռնությունները, որովհետև նրանք օրենք տվողի — Մուհամմեդի — անմեղանչական որդիքն էին: Ոչ միայն այլադավանները, այլ իրանք մահմեդականները չափազանց նեղված էին սեիդներից, որոնք գործում էին, ինչ որ կամենում էին: Աշխարհի դատարանները պատժի ենթարկել նրանց չէին կարող. ստոր մահկանացուն իրավունք չուներ դատել երկնքի որդիներին, և դրա համար սեիդներն անձնատուր էին եղած իրանց անսանձ կամայականությանը: Այս րոպեիս էլ սարսափում եմ ես, երբ մտաբերում եմ այն բոլոր չարագործությունները, որ անում էին այդ անիրավները. ո՛րքան ավերմունքի, ո՛րքան արյան, ո՛րքան ընտանիքների աղքատության պատճառ էին դառնում նրանք…

Ատրպատականը Պարսկաստանի մեկ մասն էր, բայց նա իբրև ֆեոդալական երկիր (մուլքը թավաիֆ), բաժանված էր զանազան խաների, բեկերի, շահզադաների և այլ ազնվական տների մեջ: Նրանք կոչվում էին աղաներ: Աղաները համարվում էին բարձրագույն դռան կամ շահի *վասալներ*: Բացի աղաներից, կալվածական բաժիններ ունեին մեծ մոլլաները, որպես հոգևորականության ներկայացուցիչներ, և սեիդները, որպես մեծ մարգարեի որդիներ: Վասալները երբեմն վճարում էին շահին իրանց կալվածների հասույթից մասնավոր տուրք, պատերազմի ժամանակ օգնում էին նրան, իսկ շատ անգամ, ապստամբվելով, ոչ առաջին պարտավորությունն էին կատարում և ոչ վերջինը: Քիչ չէր պատահում, որ նույնիսկ խաները, բեկերը, շահզադաները միմյանց դեմ պատերազմ էին հարուցանում, հարձակվում էին միմյանց երկրի վրա, ավերում էին, հրդեհում էին, թալանում էին և գերիներ էին տանում: Գերին նրանց համար նույնպես մի ապրանք էր, որպես տնային կայքը, որովհետև հետո վերադարձնում էին, նրա փոխարեն փրկանք ստանալով: Այս պատճառով կռիվը և թշնամական հարաբերությունը ֆեոդալական իշխանների մեջ մնում էին անխզելի:

Եվ այսպես, բոլոր գյուղորայքը բաժանված էին աղաների մեջ. շատ տեղ մի գյուղը ուներ մի քանի աղաներ: Բայց թե կառավարության ձևը, թե աղաների հարաբերությունները կամ նրանց պայմանները գյուղացիների հետ այստեղ այնպես չէին, ինչպես որ էր Վասպուրականի և Տարոնի նահանգներում, ուր տիրապետում էին քրդերը: Ատրպատականում աղան համարվում էր կալվածատեր: Հողը — մի ժամանակ նրան շահից շնորհված, որպես աղբյուր իր վասալի ապրուստը բավականացնելու, սերունդից սերունդ անցնելով և պատմական փոփոխությունների պատճառով,— դարձել էր նրա սեփականություն: Նա իրավունք ուներ գրավ դնելու իր հողը, վաճառելու և ամեն կերպ նրանից շահվելու: Բայց քրդերը կալվածատերեր չէին. նրանց մեջ աղաներից մեկը սեփականացնում էր սրի ուժով մի կտոր հող, մյուս

աղան, ավելի զորեղ գտնվելով, խլում էր նրա ձեռքից, և այսպես հողը անդադար անցնում էր մի աղայից դեպի մյուսը:

Աղայի հարաբերությունները և նրա պայմանները, հողի մշակության մասին, ռայայի (հպատակի) հետ, ամեն տեղ միակերպ չէին: Յուրաքանչյուր գյուղ ուներ իր առանձին օրենքները և պայմանները: Մշակության բերքերից ստացվելու տասանորդները մի տեղ գյուղացիք վճարում էին հարյուրին տասն, մյուս տեղ տասն և հինգ, այլ տեղ քսան, երեսուն, քառասուն: Շատ տեղերում աղան կես էր կիսում բերքը, մի մասն ինքն էր վերառնում, մյուս մասը տալիս էր գյուղացուն: Ոմանք աղաներից բերքի երեք քառորդ մասն իրանք էին ստանում, մի քառորդը միայն տալիս էին մշակին: Ընտանի անասունների ամեն տեսակների համար հարկ էր վճարվում. հարկից ազատ էին միայն այն անասունները, որոնք գործում էին մշակության դաշտի մեջ, օրինակ, եզը, արու գոմեշը, որձ ձին. էգերը բոլորը հարկ էին վճարում: Ազատ չէր հարկից ինքը մշակը, նա ավելի անբախտ էր, քան իր եզը: Հարկեր վճարում էր և թռչունների համար. տասն հավ ունեցողը հինգ հատը տալիս էր աղային, նա պարտավոր էր ամեն տարի տալ և մի քանի տասնյակ ձվեր իր հավերի բերքից: Տուրքերի տեսակներն այնքան շատ էին, որ երկար, շատ երկար կլիներ մի ըստ միոջե թվել. միայն այսքանը կասեմ, որ գյուղացու ամեն մի աշխատությունը, ամեն մի պարապմունքը, թե արհեստ, թե երկրագործություն, թե վաճառականություն, բոլորը, բոլորը ենթարկված էին հարկերի տակ: Եվ հարկերի ծանրությունը կամ թեթևությունը զանազանվում էր այլևայլ տեղերում այն չափով, որքան տարբերվում էին միմյանցից աղաներն իրանց լավ կամ վատ հատկություններով:

Բացի հարկերից, ավելի անտանելի էին զանազան տեսակ մաքսերը: Յուրաքանչյուր բերք, որ ստացվում էր հողից, միևնույն երկրի մեջ վաճառվելու ժամանակ մաքս էր վճարվում: Արհեստավորների ամեն մի արդյունաբերությունը, օրինակ ջուլհակի գործած կտավը, կոշկակարի կոշիկները, դարբնի ձեռագործը և այլն ազատ չէին մաքսերից: Մաքս էին վճարում և զանազան գործարանները, որպիսիքն էին ներկարարության, կաշեգործության, չիթ շինելու, արաղ քաշելու, գինեգործության, ձիթահանության և այլն:

Բացի աղաների բաժինը, որ ստացվում էր մշակության բերքից, բացի հարկերից, որ վճարվում էր աղաներին, բացի մաքսերից, կային և արքունի տուրքեր, որ ստանում էին տերությունից գավառներում նշանակված կուսակալները: Արքունի տուրքը կառավարությունից որոշված էր ամեն մի գյուղի վրա նշանակյալ գումար: Բայց կուսակալները, ուշադրություն չդարձնելով կառավարության կարգադրությանը, առնում էին որքան և ցանկանում էին: Պատճառն ի՞նչ էր: Կառավարությունը գավառների ամբողջ տուրքը տալիս էր կուսակալներին կապալով. կուսակալները իրանց կողմից գավառի այս և այն մասը, այս և այն գյուղը նույնպես կապալով տալիս էին ուրիշներին. և այսպես կապալառությունը ձեռքից ձեռք անցնելով, ավելի և ավելի թանկանում էր, իսկ շահը դուրս էր գալիս դարձյալ գյուղացու քսակից: Այդ էր պատճառը, որ գյուղացին վճարում էր ավելի հարկ, քան այն գումարը, որ կառավարությունից նշանակված էր նրա գյուղի վրա, որպես արքունի տուրք:

Գյուղերի աղաները իրավունք ունեին դատել գյուղացիներին, ենթարկել նրանց պատիժների և տուգանքների, բանտարկել նրանց, վճռել նրանց մեջ ծագած վեճերը, մի խոսքով, վարվել նրանց հետ, որպես իրանց ամենախոնարհ և հնազանդ հպատակների հետ: Եվ այս բոլորի մեջ կառավարող ոգին չէր օրենքը, իրավունքը կամ ճշմարտությունը, այլ — աղայի կամքը և նրա հաճույքը: Իսկ բարձրագույն կառավարությունը, որքան և ցանկանում էր, բայց չուներ այնքան ուժ աղաների,— այսինքն խաների, բեկերի, շահզադաների, մոլլաների, սեիդների,— բռնակալությանց սահման դնելու:

Ահա՛ այս դրության մեջ էին այն ժամանակ՝ Սալմաստա, Խոյի, Մագվա, Գունեյստանի, Մարանդի, Ուրմիի, Սուլդուզի, Սովուխբուլախի, Դուխարղանու, Մարաղայի, Թաբրիզի, Ղարադաղի, Արդաբիլի — բազմաթիվ գյուղերի բնակիչների վիճակը:

Եվ այսպես, Պարսկաստանում Ատրպատականի բնակիչների կյանքը, իսկ Տաճկաստանում Տարոնի ու Վասպուրականի բնակիչների կյանքը, ներկայացնում են երկու միմյանց շատ հակառակ պատկերներ: Պարսկաստանի մասում տիրում են պարսիկները, ղզըլբաշ-թուրքերը, իսկ Տաճկաստանի մասում՝ քուրդերը: Պարսիկ աղան, որպես ֆեոդալական կալվածատեր, սեփականել է հողը, և իր կառավարության բոլոր խորամանկությամբ, շարունակ կերպով քամում է գյուղացու ձեռքի վաստակը: Քուրդը հափշտակել է հողը և ժամանակավոր կերպով միայն շահվում է նրանից: Պարսիկը, որպես կրոնական նախանձով ոգևորված ազգ, լի մոլեռանդությամբ հալածում է այլադավաններին, չէ համբերում ուրիշ կրոնքների, և ամեն միջոցներ գործ է դնում իր հպատակ ազգերին մտցնել մահմեդական մզկիթը: Քուրդը բնության ազատ որդին, դեռ վարակված չէ կրոնական նախանձով: Պարսիկը նենգավոր է, խարդախ է, կեղծավոր է, նա խայթում է օձի պես, գետնի վրա սողալով: Քուրդը վայրենի հերոս է. նա որպես գազան չէ մեղանչում իր բնության դեմ, նա գործում է առանց նենգության. նա իր զոհերի վրա նայում է, որպես իր կերակուրի վրա: Պարսիկը, որպես մշտական երաշտություն, հաջորդաբար ցամաքեցնում է, չորացնում է ամեն կենդանություն, մինչև անապատ է դարձնում երկիրը: Քուրդը անցնում է կատաղի հեղեղատի պես, ոչնչացնում է բոլոր հանդիպածը, բայց երբ կրկին ցամաքում է գետինը և հողը ետ է ստանում իր ուժը, այն ժամանակ կրկին բուսեցնում է բոլոր սերմերը, որ դրած էին նրա արգանդի մեջ:

Մեկը խորամանկ հարստահարող է, մյուսը մեծասիրտ ավազակ: Իսկ երկու դեպքումն ևս տանջվում է, սպառվում է անբախտ գյուղացու կյանքը…

Կարոն բացատրում էր ինձ այս բոլորը, ասում էր՝ թե գյուղացու վիճակը կարող է ավելի բարվոք լինել, եթե հասարակությունը ուրիշ ձևով կազմակերպված կլինի: Նա ասում էր, թե այն ժամանակ չարություն չի լինի, բոլոր մարդիկը բարի կլինեն, ամենի ապրուստը ապահովված կլինի,— աղաների դարը կանցնե, կտիրե միայն արդարությունը և իրավունքը: Նա երկար ու երկար մեկնում էր, թե ինչ ձևով պետք է հասարակությունը կազմակերպել, որ զորեղն անզորին չճնշե, որ մշակ մարդու աշխատության վաստակը չխլեն և նա միշտ իր տանը ուտելու հաց ունենա, և ամենի վրա տիրե հավասարությունը…

Կարոն ուրիշ շատ բաներ ասում էր ինձ, բայց ես հիմար էի, շատ հիմար, նրա խոսքերը իմ գլխումը չէին մտնում, ես ոչինչ չէի հասկանում և սկսում էի նրա մտքերի դեմ հակառակել: Ես միայն ասում էի այս բոլորը աստուծո կամքովն է լինում, մարդը չէ կարող իր տիրոջ կամքին հակառակել, եթե աստված ուզենա, ինքը ժողովրդին հանգստություն կուղարկե, ինքը կուղղե նրա ճանապարհը: Երևի աստված չէ կամենում, որ ժողովուրդը իր անբախտ դրությունից դուրս գա, որովհետև այս նրա պատիժն է:

Կարոն շատ էր տխրում, երբ ես այսպիսի մտքեր էի հայտնում: Բայց ես հետո հասկացա, որ նա իր դատողությունների մեջ ուղիղ էր: Հասկացա, բայց խիստ ուշ…

ԻԷ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԵՐԸ

Բայց ի՞նչ էր, որ կապում էր հայերին մի այնպիսի երկրի հետ, ուր նրա կյանքը հանապազօրյա վտանգի մեջ էր, ուր նրա կայքը ապահովված չէր, ուր նրա ապրուստը խառն էր արյան ու քրտինքի մեջ, ուր նրա ընտանեկան սրբությունը արատավորվում էր, ուր նրա կրոնքը և ամեն ինչ, որ նվիրական էր նրա համար, սրբապղծվումէր: Ի՞նչ էր, որ կապում էր հայերին այսպիսի երկրի հետ.— Հայրենիքի սերը:

Հայրենիքը լի էր անթիվ հիշատակարաններով, որոնք ասում էին հային՝ «դա քո երկիրն է, այստեղ էին ապրում քո նախնիքը, և այստեղ մեռան նրանք, դու էլ պետք է այստեղ մեռնես և քո ոսկերքը խառնես նրանց ոսկերքի հետ»:

Վանա բերդի պարսպաքարերի վրա և Վասպուրականի մեջ՝ բլուրների գագաթին՝ հայը տեսնում էր անթիվ արձանագրություններ, իրանց սեպաձև բևեռագրերով, որոնք հազարավոր տարիներ պատերազմելով ժամանակի հետ, պահել էին հայոց հին, շատ հին թագավորների հիշատակարանները: Այն անբարբառ և խուլ նշանագրերի մեջ հայը կարդում էր իր վաղեմի մեծությունը:

Նույն երկրում հայը դեռ չէր մոռացել իր հին աստվածներին, որոնց հետ այնքան շատ դարեր ապրել էր նա միշտ հաշտ կերպով, որոնց նվիրել էր իր զոհերը, որոնցից խորհուրդներ և պատգամներ էր հարցրել իր գործերի մասին:

Դեռ Աստղիկը, Աշտիշատի գեղեցիկ դիցուհին, իր վաղեմի սովորության համեմատ, ամեն օր վաղ առավոտյան, լողանում էր Մուրադ գետի (Եփրատի) ալիքների մեջ:

Նույն ժամուն հայոց երիտասարդ դյուցազունները հավաքվում էին Տաղոնաց սարի գլխին, այնտեղից գաղտնագողի կերպով դիտելու գեղեցիկ աստվածուհու մարմինը: Բայց Աստղիկը Մշու դաշտի ամբողջ երեսը և նրա լեռները պատում էր թանձր մշուշով, և անթափանցիկ օդեղեն վարագույրները անտեսանելի էին կացուցանում նրա լոգարանը անհամեստ աչքերից: Դեռ Արշակա ծովակի մեջ բնակվում էին հայոց ջրային հավերժահարսունքը: Եվ հայ պատանին, լի ախտաբորբոք կրքերով լուսնկա գիշերներում թափառում էր լճի ափերի մոտ «հրեղեն աղջիկներ» որսալու համար: Դեռ հայոց ամենահին և ծերունի աստվածը — Արեգը — հրային-լուսափայլ ճաճանչներով, ամեն գիշեր հանգստանում էր Վանա ծովակի մեջ, որի հատակի վրա դրած էր նրա ոսկեղեն անկողինը: Այնտեղ ջրային կույսեր իրանց գողտրիկ երգերով անուշցնում էին ցերեկվա հոգնած լուսատվի քունը: Դեռ Լեզք կոչված բլուրի վրա ապրում էին Հարալեզ դիք, որոնք լիզելով կյանք էին շնորհում պատերազմի դաշտում ընկած հայոց քաջերին:

Այն երկրում, Հայոց ձորով անցնելու ժամանակ, հայը միշտ հիշում էր իր նախահոր — Հայկ դյուցազնի, այն մեծ հսկայի կռիվը տիտանների հետ: Ցույց էր տալիս իր զավակներին Նամրութա սարը, ուր մեր Հայկ պապը վեր հանեց Նեբրովթի դիակը, նրան սպանելեն հետո: Եվ իր աշխարհին ցույց տալու համար գոռոզ վիթխարի ամբարտավանությունը, նույն սարի բարձրության վրա մեխեց նրա դիակը և հետո այրեց նրան: Մինչև այսօր մնում են նույն սարի մոտ Նեբրովթա քարավանի ուղտերը, երկար քարացած շարքերով, որոնք նրա զինվորների համար պաշար էին կրում և հայոց աստուծո հրամանով քար դարձան: Եվ հայը միշտ պարծենալով է հիշում իր նախահոր — Հայկ դյուցազնի հաղթությունը, և հպարտանում է, որ ինքը մի այնպիսի մեծ մարդու սերունդ է, որ շառավիղում էր աստվածների արյունից:

Այն երկրում դեռ չէին ցամաքել չորս գետերը, որոնք բխում էին աստուծո դրախտից, և Բինգյոլի ծաղկավետ դաշտին նայելով, հայը ասում էր իր որդուն՝ «տես, տես, այստեղ էր մեր նախահոր և նախամոր բնագավառը»: Նա ցույց էր տալիս «կայենի ծառերը», որոնց հովանու տակ հանգստանում էր առաջին երկրագործը: Նա ցույց էր

տալիս «Ղամեքա բերդը» — այն քաջ որսորդի ամրոցը, որը սպանեց Ադամի անդրանիկ, բայց դատապարտյալ որդուն: Նա ցույց էր տալիս դաշտերը, ուր առաջին խաշնարած Աբելը արածացնում էր իր ոչխարները: Իսկ Մարանդի մեջ գտնում էր նա Նոյի կնոջ՝ Նոյեմզարի գերեզմանը:

Հայի որդին տեսնում էր, որ առաջին հոր և առաջին մոր ժամանակից, ինքն անբաժան է մնացել այն երկրից, ուր բնակվում էր մարդկության նախաստեղծ զույգը:

Ջրհեղեղը մինչև անգամ իր աշխարհավեր սասանմունքով չկարողացավ դուրս մղել հային հայրենի երկրից: Գրգուռ սարին նայելով, նա միշտ հիշում էր այն ավանդությունը, թե Նոյի տապանը այս սարին քսվելով, անցավ դեպի Սիփան լեռը, խնդրեց նրանից ընդունել իրան իր գագաթի վրա: Սիփանը համեստությամբ պատասխանեց, թե ինքը հայոց լեռների ամենակրտսերն է, և ցույց տվավ դեպի իր անդրանիկ եղբայրը — հսկա Արարատը, ասելով՝ «գնա՛ ի Մասիս, որ բարձր է քան զիս»:

Ահա՝ այսպիսի պատմական հիշատակներով էր կապված հայի սրտի հետ հայրենիքը, ուր սկսյալ ամենախորին հեթանոսական դարերից, ժողովրդի մեջ կենդանի մնացած ավանդությունները հիշեցնում էին նրան իր հին առասպելա-վիպական անցյալը:

Այս հիշատակները պահպանել էին հսկայական լեռները, որոնք ստեղծվել էին ժամանակի հետ և ապրում էին, քանի որ նա կար: Այս հիշատակները պահպանել էին ահագին գետերը, ծովակները և լճերը, որոնց կյանքը տևում է անթվելի դարերով: Այս հիշատակները պահպանել էր վերջապես ժողովրդի ոգին, որ երբեք չէ մեռնում:

Հայը չէր ուզում բաժանվել հայրենիքից: Հայրենիքը նրա սրբությունն էր: Այնտեղ ամեն մի քար, ամեն մի ավերակ հիշեցնում էին նրան իր վաղեմի մեծությունը: Դեռ բոլորովին չէին անհետացել բերդերի, ամրոցների փլատակները, ուսկից մի ժամանակ նրա ազգի պետերը տարածում էին իրանց իշխանությունը: Դեռ մնում էին հին քաղաքների ավերակները, որոնց փշրանքի մեջ երևում էր հայ մարդու արհեստը և ճարտարությունը, որոնք քարոզում էին, թե որքա՜ն հանգիստ էր քաղաքացու կյանքը, որքա՜ն զարգացած էր նրա մեջ գիտությունը: Դեռ բոլորովին չէին անհետացել հետքերը բազմաթիվ ջրանցքների, ստորերկրյա խողովակների, որոնք ցանցատեսակ հյուսվածքով տարածվել էին ընդարձակ դաշտերի վրա, անցնում էին ամենադժվարին լեռների և բլուրների միջով, որոնք ցույց էին տալիս, թե որքան ծաղկած էր մշակ մարդու գործը, որքան նա սերտ կերպով կապած էր բնության և երկրի հետ:

Իսկ այժմ տիրում էր անապատ և ամայություն…

Մի բան, որ մնացել էր անջնջելի թե ժողովրդի սրտի մեջ և թե երկրի վրա, դա էր կրոնքը և նրան արտահայտող հիշատակարանները: Ամեն տեղ, անմարդաբնակ և խուլ ձորերի մեջ հանդիպում էին հսկայակապ վանքեր, ուր տոնական հանդեսների ժամանակ միայն հավաքվում էր ուխտավորների բազմությունը, իսկ այնուհետև նրա շեմքը չէր կոխում աղոթողի ոտքը: Միայն միաբան աբեղաները ամենայն ջերմեռանդությամբ կատարում էին սովորական ժամերգությունները: Բլուրների վրա, լեռների խորին ծոցերում, ցրված էին անթիվ մատուռներ, որոնք կրում էին իրանց մեջ այս և այն ճգնավորի մարմնի փշրանքը: Սարերի անմատչելի տեղերում տեսնվում էին մթին քարանձավներ, ուր միայնակյացները, հեռանալով աշխարհի աղմուկից, նվիրել էին իրանց աստծուն: Այս քարանձավները, երևի, մի ժամանակ

նախնական մարդիկների բնակարաններ էին, որ հետո դարձան ճգնավորների ապաստարաններ: Քիչ չէր այն հիշատակությունների թիվը, որոնք կոչվում էին «խաչքար» կամ «թուխմանուկներ». դրանք կանգնած էին զանազան բարձրավանդակների վրա, ուր մի նահատակ թափել էր իր արյունը հավատքի համար, կրոնական հալածանքների ժամանակ: Ժողովուրդը ջերմեռանդությամբ հարգում էր սուրբի հիշատակը և ծխում էր այնտեղ իր խունկը: Իսկ եկեղեցիները ոչ թիվ ունեին և ոչ համար: Յուրաքանչյուր գյուղ, որ բաղկանում էր մի քանի գետնափոր խրճիթներից, ուներ մի փառավոր եկեղեցի: Իսկ այն հոյակապ տաճարը շատ հին ժամանակների գործ էր, երբ գյուղի ժողովուրդը բազմաթիվ էր և հարուստ, և ոչ այնպես աղքատ և փոքրաթիվ որպես այժմ:

Ես մոռացել եմ բոլոր վանքերի անունները, որոնք գտնվում էին իմ նկարագրած գավառներում, բայց մի քանիսը դեռ հիշում եմ: Մագվա գավառումն էր սուրբ Թադեոս առաքելո վանքը, որը մեր Աբգար թագավորի խնդրելով, ուղարկվեցավ Հայաստան և այստեղ նահատակվեցավ: Նույն գավառումն էր և սուրբ Ստեփաննոս Նախավկայի վանքը: Այստեղ էր պատմական Արտազը, Ավարայրն, Տղմուտը, ուր հայոց քաջերը այնպես եռանդով պատերազմեցին Հազկերտի և նրա մոգերի հետ կրոնքի ու հայրենիքի պաշտպանության համար: Վանա ծովակի կղզիներումն էին՝ Լիմ, Կտուց և Աղթամարա անապատները իրանց խստակյաց աբեղաներով: Հաղբակումն էր սուրբ Բարդուղիմեոս Առաքելո վանքը, որը սուրբ Թադեոսից հետո Հայաստան եկավ և այնտեղ նահատակվեցավ:

Վանքերը, ոչ միայն իբրև կենտրոն հայերի կրոնական կյանքի, պահպանում էին իրանց մեջ ազգի սրբությունները, այլև ամփոփում էին իրանց մեջ նախնյաց մտավոր վաստակները, հին մագաղաթների վրա, ժամանակակից դեղնած և գունատված տառերով: Վանքերի մեջ գրած էին և շիրիմները հայոց մեծ մարդերի: Օրինակ՝ Աշտիշատա եկեղեցին Մուշի մեջ կրում էր Սահակ պարթևի գերեզմանը, այն մեծ քահանայապետի, որ այնքան երկար տարիներ պատերազմելով պարսից արքունիքի և Բյուզանդիոնի խորամանկ քաղաքականության հետ, պահպանեց Արշակունիների այն ժամանակ խարխուլ գահը: Սուրբ Ղազարու կամ Առաքելոց վանքը, Մուշի մեջ, ուներ Մովսես Խորենացու գերեզմանը, որը մտցրուց Հայաստան հունական գիտությունը, որ տվեց հայերին իրանց նախնյաց պատմությունը, որպես Եհովայի Մովսեսը տվեց Իսրայելին Հին Կտակարանը: Նույն վանքումն էր Դավթի, «անհաղթ» փիլիսոփայի գերեզմանը, Խորենացու աշակերտակցի, որ նույնպես Աթենքից բերավ Հայաստան հունաց դպրությունը և սովորեցրուց հային իմաստասիրություն և առողջ մտածություն: Այնտեղ էին և Հովհան և Ղազար թարգմանիչների գերեզմանները: Վանքն Ոստանա, Ռշտունյաց երկրում, ուներ Եղիշեի գերեզմանը, այն ոգելից բանաստեղծի, որ այնքան եղերական կերպով երգեց հայոց քաջերի նահատակությունը Ավարայրի դաշտում: Վանքն Նարեկա ուներ Գրիգոր Նարեկացու գերեզմանը, որի գիրքը յուրաքանչյուր հայ մարդու սրտի սրբազան բուրվառն է, որով ծխում է նա իր ջերմ օրհներգությունը դեպի հավիտենականի աթոռը: Հոգվոց վանքը, Անձևացյաց երկրում, ուներ Տրդատ մեծի գերեզմանը, այն հզոր թագավորի, որ մտցրուց Հայաստանում Ավետարանի լույսը: Վարագա վանքը, Վանի մոտ, ուներ Սենեքերիմ Արծրունու գերեզմանը. այնտեղ էին դրած և Խոշոշ թագուհու և Պետրոս գետադարձի գերեզմանները: Վանքն Կոփա, Մուշի մոտ, ուներ Դանիել երջանիկի, Լուսավորիչի թոռան շիրիմը: Վանքը Բասենու կամ Հասանկալեի՝ Գրիգոր մագիստրոսի գերեզմանը: Վանքն Խեկայ՝ Հայոց ձորում՝ Աբրահամ խոստովանողի գերեզմանը: Տարոնի սուրբ Կարապետի վանքը՝ Մուշեղ և Գայլ-Վահանի գերեզմանները: Իշխանագամ գյուղի եկեղեցին՝ Վարդ Պատրիկի գերեզմանը:

Բայց կային վանքեր և եկեղեցիներ, որոնք պահում էին զանազան սուրբերի մարմնի փշրանքները, ամփոփած ոսկու և արծաթի մեջ: Օրինակ — Վանա սուրբ Վարդանի

եկեղեցումն էր Մամիկոնյան Վարդանի մեկ մատը: Մշո սուրբ Կարապետա վանքումն էր սուրբ Ղևոնդա մասունքները: Կային վանքերում և այլ սրբություններ, որպես Ոստանա վանքը պահում էր իր մեջ այն խաչը, որ Սահակ պարթևը տվեց իր թոռին - Վարդանին, և Քրիստոսի այդ խաչակիր զինվորը, Ավարայրի դաշտում ընկած ժամանակ, արձակեց իր պարանոցեն պապենական նվերը, և Եղիշեին տալով ասաց. «Այս եմ թողնում քեզ իմ վերջին հիշատակ, առ, թող պարսկի ձեռքը չդիպչե դրան»…

Վանքերը և եկեղեցիները շատ ունեին այսպիսի սրբություններ, որոնք ամփոփում էին իրանց մեջ այս և այն ճգնավորի, առաքյալի, մարտիրոսի և եկեղեցո հարց մարմնի մասունքները: Նրանք պատած էին արծաթով և ոսկով, զարդարած էին թանկագին քարերով և պահվում էին նույնպես թանկագին արկղների մեջ: Եթե ավելացնենք դրանց վրա արծաթի բուրվառները, սկիհները, աշտանակները, արծաթակազմ ավետարանները և ազնիվ մետալներից կազմված այլ եկեղեցական անոթները, կարելի է ասել, որ ազգի հարստությունը կենտրոնացած էր այդ ժամանակ եկեղեցիների և վանքերի մեջ: Այդ հարստությունները շատ անգամ գրավում էին մահմեդական ավարառուների շահասիրությունը, և քիչ չէր պատահում, որ վանքերի սրբությունները գերի էին ընկնում: Քուրդերը հարգում էին իրանց ձեռքը ընկած սրբությունները և չէին ոչնչացնում նրանց: Քուրդի համար քրիստոնեական տաճարի սրբությությունը նույն նշանակությունն ուներ, որպես իր շեյխի տված թիլիսմանը, որը նա կապում էր աջ թևին թշնամու զենքերից անխոցելի մնալու համար: Քուրդը դարձնում էր սրբազան կողոպուտը, միայն ծանրագին փրկանք ստանալեն հետո: Պարսիկները և թուրքերը այն ակնածությունը չունեին դեպի քրիստոնյաների սրբությունները. նրանք կոչնչացնեին, եթե տեսնեին, որ նրանցից գոյացած ոսկին ու արծաթը կարող էր ավելի գին բերել, քան թե այն գումարը, որ ստանալու էին իբրև փրկանք: Իսկ փրկանքը լինում էր միշտ ավելի բարձր, քան սրբության արժեքը: Օրինակի համար ես կհիշեմ մի դեպք, որը պատահեց իմ ժամանակում: Բարդուղիմեոս առաքելո աջը, որ գտնվում էր Հաղբակա նույն անունով վանքում, գերի ընկավ պարսիկների ձեռքում: Ժողովուրդը վճարեց սուրբ աջի ծանրության չափով տասն անգամ ոսկի և փրկեց գերին: Ամբողջ գավառի կանայքը զրկվեցան իրանց ոսկի և արծաթի զարդերից, նրանք իրանց մատանիները, քամարները, գլխի պաճուճանքը և պարանոցի մանյակները թափում էին վանահոր մոտ, որպեսզի հայոց առաքյալի սուրբ աջը՝ «իրանց երկրի պաշտպանը», գերի չմնա «անօրենների և անհավատների» ձեռքում:

Ես մինչև այսօր հիշում եմ նույն սուրբ աջը, նա մի հսկայական բազուկի մեծություն ուներ, տասն անգամ նրա ծանրությամբ ոսկին՝ այդ սարսափելի քանակություն էր աղքատ ժողովրդի համար: Բայց նա զոհեց բոլորը, միայն թե իր սրբությունից չզրկվեր, որովհետև նրանից կախված էր իր ներկա և հանդերձյալ կյանքի բախտավորությունը,— իր հոգու և մարմնի փրկությունը…

Ես դեռ չեմ մոռացել, երբ երաշտություն էր լինում կամ մարախ էր գալիս, ժողովուրդը դիմում էր վանահորը, որ «անդաստան» անե: Վանահայրն առնում էր սուրբ աջը, և խաչերով, խաչվառներով, բոլոր եկեղեցական սպասով դիմում էին դեպի դաշտերը և սուրբ թափորը, ժողովրդի անհուն բազմության հետ, հանդարտ և դանդաղ ընթացքով շրջում էին մշակության դաշտերում, և իրանց արտասուքով, խնկարկությամբ, ողբալի շարականներով աղերսում էին երկնքի հաշտությունը, միջնորդ ունենալով սուրբ աջը, որ ամբոխը տանում էր իր առջևից, որպես Իսրայելը «տապանակ ուխտին»:

Եվ այսպես, վանքերի և եկեղեցիների ամեն մի սրբությունը ուներ իր հրաշագործ հատկությունները: Մեկը նշանավոր էր որպես դիվահարներին ազատող, մյուսը հռչակված էր որպես անդմալույծները բժշկող, երրորդը՝ որպես ջերմախտի

փրկարար և այլն: Եվ ժողովուրդն ամենայն ջերմեռանդությամբ դիմում էր դեպի սրբությունները իր հիվանդություններից բժշկություն գտնելու համար: Հրաշագործ էին և զանազան ավետարաններ, նարեկներ, որոնք գրված էին սուրբ մարդերի գրիչով: Այս մագաղաթյա գրքերը, ոսկենկար պատկերներով, զարդարած թանկագին կազմով, պահվում էին փաթաթած մետաքսյա և զառ թաշկինակների մեջ, և բոլորովին անմերձենալի էին ժողովրդին: Նրանց բաց էր անում միայն շատ անհրաժեշտ դեպքերում վանահայրը, երբ հարկավոր էր նույն գրքերով մի գլուխ ավետարան կարդալ որևիցե հիվանդի վրա:

Ես բոլորովին անօրեն և անհավատ էի համարում Կարոյին, երբ նա ասում էր ինձ, թե «վանքերի սրբությունները մեր ազգի տունը քանդեցին, թե նրանք մի պատրաստի առարկա էին դարձել մեր թշնամիների և նույնիսկ մեր վարդապետների շահասիրությանը»: Նա ասում էր, եթե հնար լիներ, ինքը պատրաստ էր բոլորը ոշնչացնել, որվհետև նրանց վրա գտնված ոսկին և արծաթը իր համար շատ հարկավոր էին…

Կարոյի անպատկառ խոսքերը մինչ այն աստիճան գրգռում էին իմ բարկությունը, որ մի օր մտածեցի՝ խենջարս խրեմ նրա սրտի մեջ, ուր ամենևին չկար ոչ աստուծո երկյուղը և ոչ ակնածություն դեպի եկեղեցու սրբությունները: Բայց ես ո՛ւշ հասկացա, շա՛տ տարիներից հետո, որ իմ կարծիքը Կարոյի մասին բոլորովին սխալ էր,— հասկացա, որ մի շատ բարի նպատակի համար Կարոն ցանկանում էր գործ դնել վանքերի ոսկին և արծաթը…

Թեև վանքերը և եկեղեցիներն ունեին գաղտնի պահեստներ, ուր խռովության միջոցներում թաքցնում էին սուրբ տաճարների հարստությունները, բայց շատ անգամ վանահայրը կամ եկեղեցու ավագ քահանան չդիմանալով ավարառուների տված չարչարանքին, հայտնում էին պահեստի տեղը: Գտնվում էին եկեղեցականներից և այնպիսիները, որոնք ավելի հեշտությամբ ավանդում էին իրանց հոգին, քան թե պահեստի գաղտնիքը:

Վանքերի և եկեղեցիների սրբազան սպասները, արդարև, որպես Կարոն ասում էր, դարձել էին շահասիրության առարկա: Թողյալ այն, որ վարդապետները նրանց շնորհիվ բավականին արծաթ էին քամում ժողովրդի աղքատ քսակից, թողյալ այն, որ ժողովուրդը շատ անգամ ստիպված էր փրկել իր սրբությունները գերությունից, պատահում էր, որ երկրի իշխանը — իհարկե, չնչին պատճառի համար — վանքը, եկեղեցին կամ ամբողջ հայոց գյուղորայքը տուգանքի էր ենթարկում: Պատճառները հնարում էին իրանք՝ իշխանները: Օրինակ, լուր էին տարածում, թե հայոց քահանաները մի մահմեդական երեխա գողացել և մկրտել են, կամ գցում էին վանքի գավիթումը մի մահմեդականի սպանված դիակ: Այս բավական էր գրգռելու մահմեդականների կատաղությունը. նրանք կամ կողոպտում էին քրիստոնյաների գյուղերը և կամ սպանվածի արյան փոխարեն նշանակում էին մի մեծ տուգանք: Ժողովուրդը պատրաստի փող չուներ. նա ստիպված էր վեր առնել պարտքով: Եվ այնպիսի ծանր տոկոսներով վաշխառուն միշտ պատրաստ էր փող տալ, մանավանդ որ նա ստանալու էր խիստ ապահով գրավական,— այսինքն վանքի սրբությունները: Հրեա կամ մահմեդական վաշխառուն գիտեր, որ իր պարտականը եթե կինը, աղջիկը, տղան գրավ դնե, եթե ժամանակին չկարողանա վճարել, կասե՝ տիրե գրավներիդ, իսկ իր եկեղեցական սրբությունը նա երբեք չի թողնի օտարի ձեռքում:

Երբեմն այսպիսի դժբախտությանց պատճառ դառնում էին վանահայր աբեղաները կամ վիճակավոր առաջնորդները: Նրանցից շատերը կաշառքներով իրանց կողմն էին գցում քուրդ, թուրք կամ պարսիկ իշխաններին և նրանց օգնությամբ խլում էին միմյանցից վանքեր, տիրում էին թեմերի: Այսպիսի հափշտակությունները խիստ թանկ էին նստում: Վանահայրը կամ առաջնորդը գրավ էր դնում վանքի

սրբությունները, պարտք էր անում իր խոստացած կաշառքը վճարելու համար: Բայց ո՞վ էր թափում գրավները:— Դարձյալ ժողովուրդը:

Ես հիշում եմ մի այսպիսի դեպք, որ պատահեց իմ ժամանակում: Վանա ծովակի կղզիներից մեկում գտնվում էր Աղթամարա անապատը. այնտեղ նստում էին կաթողիկոսներ, որոնց մեկը իր կողմը ձգելով Շատախու, մյուսը Սասնո կիսավայրենի հայ լեռնականներին, անդադար միմյանց ձեռքից խլում էին հայրապետական աթոռը: Այսպիսով ծագել էր ժողովրդի մեջ երկու կուսակցություններ, և խռովությունը հասավ մինչև արյունահեղության: Կաթողիկոսներից մեկը տարավ հաղթությունը քուրդ իշխանի օգնությամբ: Պաշտպանությունը արժեց նրան մի քանի տասնյակ «քիսա» արծաթի, որը նա պարտք առավ, իհարկե, ամենաապահով գրավականով՝ վանքի սրբազան սպասներով: Հաստատվելով իր աթոռի վրա, նորին վեհափառությունը ուզեց թափել գրավականները, և այս նպատակով պատրաստեց նա նվիրակների մի խումբ, որ գնացին թեմերից ժողովք անելու: Միաբաններից մի ծերունի աբեղա առաջարկեց, թե նա կարող էր նույնիսկ վանքից գոյացնել ցանկացած գումարը, եթե նորին վեհափառությունը կընդուներ իր տված խորհուրդը: Կաթողիկոսը մի օր բոլոր աբեղաներին կանչեց իր մոտ ճաշի, հացկերույթը վերջանալեն հետո հրամայեց փակել նրանց նույնիսկ սեղանատան մեջ: Հետո ինքը վեհափառը, մտնելով աբեղաների խուցերը, բաց անել տվավ «աշխարհից հրաժարված» աբեղաների փոքրիկ արկղիկները, և հիրավի, հայտնվեցան ավելի քան կաթողիկոսի ցանկացած գումարը ոսկի և արծաթ: Ո՞վ կկարծեր, որ աշխարհի հարստությունից հրաժարված ճգնավորները,— որոնք իրանց վանքում կին ուխտավորներ չէին ընդունում, որոնք հագնում էին կոշտ մազից զգեստներ, որոնք մերկ ոտքերով էին ման գալիս, որոնք աղ ու հացով էին կերակրվում, որոնք արծաթից այնպես էին վախենում, որպես դևից,— ունենային իրանց սնդուկների մեջ այնքան ոսկու և արծաթի մթերք:

Ծերունի աբեղայի հնարագիտությունը, որ երևան հանեց այս գաղտնիքը, վարձատրվեցավ նրանով, որ քանի օրից հետո գտան նրա խեղդված դիակը ծովակի ափում…

Չնայելով, որ վանքերում այսպիսի եղեռնագործություններ էին պատահում, դարձյալ ժողովրդի ջերմեռանդությունը դեպի իր սուրբ աթոռները մնում էր տաք և իր բոլոր բարեպաշտական ոգևորության մեջ: Նա ինքը, ժողովուրդը, իր տանը հաց չուներ ուտելու, նրա որդիքը անոթի և կիսամերկ էին, նա իր աղքատ դրության մեջ դարձյալ հագցնում էր և կերակրում էր իր հոգևոր հայրերին, որպես իր վանքերի պաշտոնյաներին, որպես աստուծո տան սպասավորներին, որոնց աղոթքովն էր ապրում ինքը, որոնք հաշտեցուցիչ կապ էին իր և երկնքի մեջ… Ժողովուրդն իր հունձքից մասն էր հանում աբեղաների համար, իր անասունների յուղից և պանրից նրանց բաժին էր տալիս, ինքը և իր արորը ձրի աշխատում էին վանքապատկան կալվածքների մեջ, մի խոսքով, նա վճարում էր իր աբեղաներին ավելի, քան թե իր կարողությունը ներում էր: Ահա ինչ էր, որ կապում էր հային իր հայրենիքի հետ: Բայց Կարոն ասում էր, թե վարդապետները նույնպիսի հարստահարողներ են, որպես քուրդ և թուրք աղաները: Ես բարկանում էի…

ԻԸ

ՆՇՈՒՅԼԵՐԸ ԵՐԵՎՈՒՄ ԵՆ

Թեև ծերունի որսորդը միշտ ցավակցական արհամարհանքով էր խոսում հայերի մասին, ասելով՝ թե նրանք հոգով և մարմնով բոլորովին ընկած և սպանված

ժողովուրդ են, բայց ես նրա նկատողությունը իրավացի էի գտնում միայն Պարսկաստանի հայերի վերաբերությամբ, այսինքն նրանց, որ բնակվում էին Ատրպատական նահանգում: Ընդհակառակն, Տաճկաստանի հայերը — Տարոնի և Վասպուրականի մեջ — համեմատելով իրանց ատրպատականցի համազգայինների հետ, բավականին աշխույժ և կենդանի մարդիկ էին:

Դա ուներ իր տեղական և կլիմայական պատճառները:

Ատրպատականի գավառները, բացի լեռնային և անտառապատ Ղարադաղից, մնացածները տափակ երկիրներ էին և ավելի տաք կլիմայով: Երկրագործությունը, որ միակ աղբյուրն էր ժողովրդի ապրուստի, խիստ պինդ կերպով կապել էր բնակիչներին հողի հետ, և հետևաբար շատ նեղ կերպով սեղմել էր նրանց հողատիրոջ —աղաների ճանկերի մեջ:

Աղաների ճնշումն էր հաջորդաբար և տևողական: Մի այսպիսի կեցության մեջ մարդը կորցնում էր իր ազատությունը և նրա հետ իր մտավոր և հոգեկան կենդանությունը: Նա դառնում է կրավորական էակ: Արձակ դաշտը, տափակ երկիրը շինում է նրան ավելի ընտանեկան, ավելի խաղաղասեր, միևնույն ժամանակ երկչոտ: Մինչդեռ լեռը, անտառը պահպանում են մարդու մեջ նրա սկզբնական վայրենությունը և հետևապես նրա սրտի ամրությունը և քաջությունը: Ստրկությունը սկսվել է և շարունակվել տափակ երկրների վրա և ավելի տաք կլիմայի մեջ: Տափակ երկիրը տալիս է մարդուն տափակ բնավորություն, զարգացնում է նրա մեջ թեքվելու ընդունակությունը: Բայց լեռնային երկրի բնակիչը նույնպես ուղղաձիգ, նույնպես բարձրադիտակ է, որպես իր շրջապատող սեպաձև ժայռերը: Հարթ-հավասար անապատը չէ տալիս փախուստի միջոց և պատսպարան իր նեղյալներին: Մինչդեռ սարերը և անտառները միշտ ունեն իրանց ծոցի մեջ ապահով ապաստարան ապավինողի համար:

Ատրպատականի գավառները, բոլորած լեռների շղթաներով, ընդարձակ հովիտներ էին հարթ-հավասար մակերևույթով: Ժողովուրդը խիստ խորին կերպով արմատ էր գցել երկրի մեջ, նա ուներ հաստատ տուն և բնակություն. նա ուներ այգիներ, պարտեզներ և կայք: Ուր և քշում էին նրան, որքան և հալածում էին, նա դարձյալ չէր բաժանվում իր բնակության տեղից: Նա կանգնած էր միևնույն կետի վրա և համբերում էր իր վիճակի թշվառությանը: Նա համբերում էր, որովհետև նրան դժվար էր բաժանվել մի երկրից, ուր պետք է թողներ իր շատ տարիների աշխատության պտուղը: Նա մեխված էր գետնի հետ, որպես իր տնկած ծառերը, իր շինած տունը և իր ցանած բույսերը, որովհետև նրանց գոյության հետ կապված էր իր կյանքը: Թեև այստեղ ժողովուրդը աշխատում էր մեծ մասամբ աղաների համար, բայց նրանք թողնում էին այնքան, որ մշակը կարողանար շարունակել իր կենդանությունը, որ նրա ձեռքերը կարողանային գործել: Բայց իսպառ խլել մշակից կյանքը, դա աղայի համար ձեռնտու չէր, որպես ձեռնտու չէր նրան սպանել իր աշխատող անասուններին:

Ատրպատականի հայը միշտ երևում էր զինվորված իր երկրագործական գործիքներով. նրա ձեռքում միշտ տեսնվում էր բահ, բրիչ, մանգաղ և անասունները քշելու խարազան: Արյուն թափող և անձնապաշտպանության անոթների մասին նա գաղափար անգամ չուներ: Նա այնքան վախենում էր արյունից, որքան դևից և սատանայից: Տաք կլիման թուլացրել էր նրա ուղեղը, նրա կենսական ուժը: Տափակ երկիրը շինել էր նրան մի անփախչելի որս աղայի ձեռքում: Իսկ հողագործությունը պահպանում էր նրա մեջ անասնական բթամտությունը և եզի համբերությունը:

Տարոնը և Վասպուրականը ավելի լեռնոտ և սառն երկիրներ էին: Շատ տեղ սարերը ծածկված էին անտառներով: Երկարատև ձմեռը, անդադար անձրևները, իսկ

տարվա ջերմ եղանակներում երաժշտությունը՝ կացուցանում էին հողը անհարմար ցանքերի համար: Ի բաց առյալ Վանա ծովակի շրջակա ցած երկիրները, և Ասորեստանի սահմանակից հարավային կողմերը, մնացյալ գավառները լեռնային բարձրավանդակներ էին, որոնք միայն տալիս էին ճոխ մարգեր խաշնարածության համար: Այս պատճառով բնակիչների գլխավոր պարապմունքը անասնապահությունն էր:

Հայերը առավելապես բռնել էին այն տեղերը, ուր կարելի էր և վարուցանքով պարապվել. իսկ այդ չէր կացուցանում նրանց ապրուստի գլխավոր աղբյուրը, նրանք միևնույն ժամանակ և երկրագործ և հովիվներ էին: Ձմեռը անցուցանում էին նրանք գետնափոր խրճիթներում, իրանց գյուղերի մեջ, իսկ տարվա մնացած ամիսները չադրներում, լեռների բարձրավանդակների վրա:

Այստեղ հայերի մի այսպիսի կիսա-չվական և կիսա-հաստատաբնակ կեցությունը տվել էր նրանց բնավորությանը երկակենցաղ կենդանիների հատկություններ: Նրանց գետնափոր խրճիթներն, իրենց ստորերկրյա ոլոր-մոլոր խորշերով, ավելի նման էին սողունների որջին, և դա մտցրել էր բնակիչների մեջ օձի նենգությունը և նրա ոխերիմ չարամտությունը, նա պատրաստ էր խայթել, եթե հարմար միջոց գտներ: Նրանց հովվական չադրները, կազմված լեռների բարձրավանդակների վրա, բազմագոչ ջրվեժների մոտ, շրջապատած հսկայական ժայռերով, որոտի և կայծակի ահեղ սպառնալյաց ներքո,— տվել էին նրանց բնավորությանը ավելի կիսավայրենի և կիսագազանային հատկություններ:

Հովվական կյանքը իր նահապետական պարզության հետ ունի և իր վայրենի կատաղությունը: Մշակական կյանքը իր աշխատասեր հոգու հետ պահպանում է թուլասրտություն և երկչոտություն:

Հայը իր հայրենի լեռների թեև հարազատ, բայց փչացած որդին էր: Քուրդը նրա մտերիմ որդեգիրն էր: Հայը ոչ կատարյալ երկրագործ էր և ոչ կատարյալ հովիվ: Քուրդը հավատարիմ էր մնացել իր պարապմունքին. նա հոգով և սրտով հովիվ էր, այդ բառի բուն նշանակությամբ: Այս պատճառով նա տիրում էր:

Հովիվները միշտ տիրում են, որպես իրանց հոտերին, նույնպես և մերձավոր ժողովուրդներին: Մարդկության առաջին տիրապետողները եղել են հովիվները: Մեր Հայկ նահապետը նույնպես մի քաջ հովիվ էր:

Տարոնի և Վասպուրականի հայը և հովիվ էր և երկրագործ. նա վարում էր որպես չվական, նույնպես և հաստատաբնակ կյանք: Իր գյուղում, գետնափոր խրճիթների մեջ նա ապրում էր որպես գազանը իր որջում, իր արտերի մեջ նա զինվորված էր բահով և մանգաղով, իր լեռների արոտներում նա զինվորված էր հրացանով և թրով: Այսպիսի երկակենցաղ ապրուստը տվել էր նրան երկերեսանի բնավորություն,— նա միևնույն ժամանակ նվաճյալ ժողովուրդ էր հպատակի բոլոր համբերությամբ, և միևնույն ժամանակ կատաղի ապստամբ էր, եթե միջոցները կնպաստեին նրան:

Այս էր պատճառը, որ Կարոն շատ անգամ ասում էր՝ «այս ժողովրդից կարելի է մի բան սպասել, նա բոլորովին մեռած չէ. նա մի օր կգցե իր պարանոցեն քրդի լուծը»:

Կարոյի գուշակությունը անհիմն չէր: Շատախի, Սասնո և Մոկաց երկրի հայերը, որոնք իրանց կենցաղավարությամբ չէին զանազանվում քրդերից, բոլորովին ազատ էին և ինքնակա: Նրանք շատ անգամ միանալով քրդերի հետ, թալանում էին այս և այն երկրները. և զարմանալին այն է, որ չէին խնայում մինչև անգամ իրանց ազգայիններին: Սասնո հայը երբեք իր պատյանը չէ դնում մերկացրած խենջարը առանց նրան թաթախելու հակառակորդի արյան մեջ: Նա շատ դժվարությամբ է

դուրս քաշում իր սուրը, իսկ երբ սուրը մերկացավ պատյանից, գործը վճռված է. նա պետք է կոտորե:

Այս երկրում, որքան ես նկատում էի, յուրաքանչյուր հայի սիրտը նմանում էր կիսաքանդած օջախի, որքան քրքրում ես մոխիրը, նոր և նոր կայծեր էին հայտնվում. մի փոքր վառելու նյութ, մի բորբոք — և ահա բռնկեց կրակը…

Վերքն այնքան վտանգավոր չէ, երբ վիրավորը զգում է նրա ցավը.— դա կենդանության նշան է: Տարոնի և Վասպուրականի հայը իսպառ թմրած չէր, նա իր սրտի մեջ զգում էր վերքերը, հասցրած նրան բռնության կոպիտ ձեռքից: Այս պատճառով նա միշտ սնուցանում էր իր սրտի մեջ վրեժխնդրության դառն թույնը: Ոչ այնքան հայրենասիրությունը, ոչ այնքան անձնասիրությունը դրդում էր նրան դեպի մի այսպիսի միտք, որքան իր եկեղեցու, իր սրբությունների հալածանքը մահմեդական ազգերից: Հայը ամեն բանի համբերում է, ամեն թշվառություն տանում է, բայց նա համբերել չէ կարող, երբ բռնաբարվում է նրա եկեղեցին, նրա միակ սրբարանը: Եկեղեցին հայի կյանքի նպատակն է և նրա բարձրագույն իդեալը:

Կարոն լավ էր հասկացել հայի սրտի այս ամենազգալի կողմը, և նրա տեսությունը Բարդուղիմեոս առաքելո վանքի վանահոր հետ ուներ մի գաղտնի խորհուրդ, որ կապված էր իր նպատակների հետ: Ես այս չէի գիտենալ, եթե մի դեպք առիթ չտար ինձ կիսով չափ տեղեկանալ նրա դիտավորությանը:

Կարոն, որպես հայտնի է մեր ընթերցողին, իր ընկերների հետ գնաց Բարդուղիմեոս առաքելո վանքը, խոստանալով, թե կվերադառնա ոչ ավելի, քան մի օրից հետո: Բայց ահա մի շաբաթ անցավ այն օրից, նրանից ոչինչ լուր չկա: Ծերունի որսորդը այս մասին խիստ անհանգստության մեջ էր, չգիտեր ինչ բան արգելք եղավ նրանց վերադարձին: Մի գիշեր դեռ նոր էր պատել մութը, հայտնվեցավ մի գրաբեր, բոլորովին քրդի ձևով հագնված, նա տվեց ծերունի որսորդին մի նամակ: Ես այն ժամանակ հասկացա, թե նա գիտեր կարդալ: Իմանալով, որ նամակը Կարոյիցն է, նա անհամբեր կերպով սկսեց կարդալ: Ես նստած էի նրա մոտ: Նամակի պարունակության մասին նա ինձ ոչինչ չհայտնեց, կարծես բոլորովին մոռացավ իմ գոյության մասին: Միայն վերջացնելով ընթերցումը, նա իսկույն հրամայեց Մըհեին իր ձին թամքել, և ասաց Մարոյին շուտով իր զենքերը բերե: Այսպիսի երևույթները ծերունի որսորդի տնակում սովորական լինելով, Մարոն ամենայն հանդարտությամբ գնաց հոր զենքերը բերեց, և մինչև անգամ չհարցրուց՝ հայր, ո՞ւր ես գնում, երբ նա նստեց ձին և բակից դուրս էր գնում: Այդ ժամանակ միայն ծերունին տեսավ ինձ և ասաց.

— Ես կվերադառնամ մի քանի օրից հետո:

Գրաբերը գնաց որսորդի հետ:

Երբ ես մտա սենյակը, Մարոն սովորական ժպիտը երեսին ինձ ասաց.

— Մենք էլի՛ մնացինք մենակ…

Բայց ես այնքան խռովված էի ծերունու անակնկալ հեռանալով, որ ոչինչ չպատասխանեցի Մարոյի ուրախ ժպիտին: Նա, երևի, վիրավորվեցավ իմ սառնասրտությամբ, և մի գեղեցիկ խոժոռ գործելով իր սիրուն երեսի վրա, ասաց.

— Դու չա՛ր մարդ ես, Ֆարհատ:

Մարոն էլ չնայեց իմ վրա, ծիծաղելով սենյակից դուրս վազեց: Ես մնացի միայնակ: Իմ խռովությունը հետզհետե սաստկանում էր: Ծերունի որսորդի վարմունքը

չափազանց տանջում էր ինձ, որ նա արժան չհամարեց հաղորդել և ոչ մի բառ Կարոյի նամակի պարունակությունից, լավ գիտցած լինելով, որ ամենայն տեղեկություն նրա մասին որքան իր համար, նույնքան և իմ համար ուրախալի էր: Ինչո՞ւ նա զրկեց ինձ այդ ուրախությունից: Ինչո՞ւ չգիտենալ ինձ, թե ո՞ւր մնաց այն մարդը, որին ոչ միայն հարգում էի ես, այլև սիրում էի:

Մինչ ես այս վրդովմունքի մեջ էի, աչքս դարձրի դեպի այն կողմը, ուր նստած էր ծերունի որսորդը. տեսա մի թուղթ ընկած էր այնտեղ, մոտենում եմ,— նույն նամակը:

Ծերունին սաստիկ շտապելով, մոռացել էր իր հետ վեր առնել նամակը: Իմ ուրախությանը սահման չկար, ես մի քանի րոպե միայն երեխայի հրճվանքով շրջում ու շրջում էի ձեռքումս երկծալ թերթը, որի չորս երեսների վրա սպիտակ տեղ չէր մնացել: Ամբողջապես գրված էր:

Կարոն տեր Թոդիկի դպրոցից փախչելու ժամանակ այնքան չէր սովորած, որ գրել գիտենար: Իսկ այնուհետև ո՞րտեղ ուսել էր նա: Ես առաջ չէի կարդում նամակը, միայն նայում էի նրա վրա: Երևում էր, գրիչը խիստ ճարպիկ և համարձակ կերպով վազել էր տողերի վրա, ուր տառերի յուրաքանչյուր գծերից երևում էր մի հաստատուն ձեռքի ամրություն, որ գիտե տիրապետել գրչին, որպես իր սրին:

Որքան կարդում էի նամակը, այնքան ավելի գրգռվում էր իմ հետաքրքրությունը: Կարոն նույնն էր մնացել իր գրության մեջ, ինչ որ էր իր խոսակցության ժամանակ: Նա խոսում էր խիստ պարզ, առանց գեղաբանության և հասարակ լեզվով: Նրա պարբերությունները շատ կարճ էին, միևնույն ժամանակ հասկանալի և խորախորհուրդ: Իր նամակի մեջ մնացել էր նա միևնույն ոճով: Ինձ առաջին անգամ պատահում էր տեսնել, որ մարդը գրում է այնպես, որպես խոսում են: Բայց ինչո՞ւ իմ վարժապետը չէր գրում այնպես, որպես մարդիկ խոսում են: Նրա գրածն ինձ համար մնում էր միշտ հանելուկ, չէր կարելի հասկանալ, կարելի էր միայն գուշակել, թե ինչ էր ուզում ասել:

Կարոյի նամակի մեջ ևս մի քանի տեղեր մնացին ինձ անբացատրելի. նրանց մթին այլաբանական ձևը, որպես երևում էր, պարունակում էր իր մեջ մի գաղտնիք, որ հայտնի էր միայն այն մարդուն, որի անունով ուղարկված էր նամակը:

Ես կբերեմ մի քանի կտորներ նույն նամակից, որ մինչև այսօր չեմ մոռացել, որ և երբեք մոռանալու չեմ:

«Բարդուղիմեոս առաքելո վանահոր հետ տեսնվեցա: Ես գտա նրան այնպես, որպես հույս ունեի: Ամեն ինչ պատրաստ էր: Այս աբեղային կարելի է կոչել մարդ, որ իր խոսքի տերն է, և ոչ վարդապետ: Հազվագյո՛ւտ բացառություն: Մի ամիս առաջ նա սկսել էր ծախել վանքի ավելորդությունքը, որպես պատվիրել էի ես, և գոյացած գումարը բավականացել էր գնելու *գործիքներին*: Խեղճ գյուղացիներից շատերը սոխ կոտորելու դանակ անգամ չունեին իրանց տանում. այժմ նրա վիճակի մեջ ամեն տղամարդ զենքեր ունե: Բոլորը վանահոր շնորհիվն է: Վանքը կլինի գլխավոր ամրոցը, նրա գիրքը և ամրությունը հարմարություն ունեն այդ կոչմանը: Ինքը վանահայրը կառաջնորդե իր վիճակի հաղբակեցիներին: Հասբիստանու կռվում նա արդեն ցույց տվեց, թե ինքը ընդունակ է այս գործին»:

Հասբիստան կոչվում էր Բարդուղիմեոս առաքելո վանքի մոտ մի դաշտ, ուր քանի տարի առաջ պատահեց մի արյունահեղ կռիվ հայերի և քրդերի մեջ արոտամարգերի սահմանների պատճառով: Քրդերի մի նոր ցեղ, որ գաղթել էր այստեղ Մար-գավառի կողմերից, չէր թողնում հայերին արածացնել իրանց հոտերը: Հասբիստանում, որ

սկզբանե հայերի սեփականություն էր: Վեճը վճռվեցավ սրով, և հաղթությունը մնաց հայերի կողմը:

Մի քանի տողերից հետո Կարոն շարունակում էր.

«Վանահոր հետ — դարձյալ Բարդուղիմեոս առաքելո — մեր խորհրդակցությունից երևցավ, որ հակառակ կողմի ուժը ավելի զորավոր է, քան թե մենք կարծում էինք: Երկու եղբայրներ՝ Օմար և Օսման աղաները, որոնցից յուրաքանչյուրը Ջալալիների ցեղի գլխավորությունը հափշտակելու պատճառով թշնամացել էին, կրկին հաշտվել են: Ջալալիների բաժանված կուսակցությունները միացել են: Շիկակների Մահմուդ աղան, իր աղջիկը հարսնության տալով Ռավանդների Վազիր աղայի որդուն, երկու ցեղերի մեջ բարեկամական հարաբերությունները նորից սկսվել են: Մյուս կողմից, Մուքրիների և Մամըքանների մեջ հին թշնամությունը նորոգվել է: Ռաշիդ աղայի կինը, երկար սպասելով, թե իր սպանված ամուսնի եղբայրները չկամեին առնել նրա արյան վրեժը, քանի օր առաջ ծպտյալ հագուստով հանդիպում է իր տղամարդի սպանողին, և ինքը կինը վրեժխնդիր է լինում: Դու գիտես, որ այդ երկու ոսոխները հիշյալ երկու ցեղերի գլխավորներն են»:

Ես զարմանում էի, թե Կարոն ինչո՞ւ է ուրախանում քրդերի զանազան ցեղերի միմյանց հետ թշնամական հարաբերություններ ունենալու մասին, և կամ ինչո՞ւ է տխրում, երբ նրանք հաշտվում են: Բայց վերջին դեպքի մանրամասնություններն իմացա ես հետո: Ռաշիդ աղան Մամըքանների ցեղապետի որդին էր: Նրա իսկական անունն էր Կրպո. կոչվեցավ Ռաշիդ (քաջ) իր զարմանալի քաջագործությունների համար: Նա սպանվեցավ Մուքրիների ցեղապետի որդու նենգությամբ: Ռաշիդի կինը ուխտել էր չվեր առնել իր երեսից սգավորի սև քողը, մինչև իր ամուսնի գերեզմանը չհանգստացնե: Դա նշանակում է քրդի լեզվում՝ մինչև սպանվածի արյան վրեժը չառնվի: Այս նպատակով նա սնուցանում էր իր տասներկու տարեկան որդուն, որ առնե հոր վրեժը և կատարե մոր ուխտը: Որդին մեռնում է կարճատև հիվանդությունից հետո: Մայրը մի քանի օր անհետանում էր իր չադրից: Նրան գտնում են իր տղամարդի գերեզմանի մոտ այն ժամանակ, երբ իջնում է իր ձիուց, և ոսոխի կտրած գլուխը դնելով ամուսնի շիրիմի վրա, ասում է՝ «այժմ թող հանգստանան քո ոսկերքը»…

«Վերջին օրերումս Ուշնիի մեջ պատահած անցքը բավականին երաշխավորում է ասորոց կաթողիկոսի դաշնադրությունը մեզ հետ,— շարունակում էր նամակագիրը:— Այնտեղի շեյխը քանդել է տվել մի հին ասորոց վանք, նրա քարերը իր բաղնիքի շինվածքի համար գործ ածելու: Այդ այն վանքն է, ուր նեստորականները վաղեմի ժամ տնակներից սովորություն ունեին իրանց եպիսկոպոսների մարմինները թաղելու: Կաթողիկոսը, որպես լսում եմ, բոլորովին կատաղած է այս բարբարոսության պատճառով: Այսօր նրա սուրհանդակը ինձ մոտ եկավ: Կաթողիկոսը կանչում է ինձ: Առավոտյան ճանապարհ կընկնեմ դեպի Ճոլամերիկ: Հարմա՛ր առիթ… պետք է օգուտ քաղել դրանից»…

Ասորոց կաթողիկոսը նստում էր Ճոլամերկի Կոճանիս կոչված գյուղում, որ սահմանակից էր Հաղբակին: Ասորոց մի ցեղ, որ կոչվում էր Ջուլո, անհիշելի ժամանակներից, պատսպարվելով Ճոլամերկի լեռների մեջ, պահպանել էր իր անկախությունը, որպես լազգիները Դաղստանում: Կաթողիկոսը, որ կոչվում էր Մար-Շիմոն, էր իր ցեղի քահանայապետը, միևնույն ժամանակ նրա մարմնավոր իշխանը: Նա ուներ մինչև երեսուն հազար զենք բռնող տղամարդիկ, մի խոսքով, նրա ժողովուրդը բոլորը պատերազմողներ էին: Կաթողիկոսը ինքը սուր էր կրում: Ճոլամերիկը, զետեղված Կորդվաց լեռների մեջ, մի փոքրիկ, փակյալ Չինաստան էր, որի մուտքը կապված էր օտարների համար: Այնտեղ բնակվում էին միայն ջուլոներ և հայեր: Եթե ուրիշ մարդ այնտեղ մտներ, առանց կաթողիկոսից թուղթ ունենալու իր

ձեռքում, ամեն պատահող ջուլոն պատրաստ էր նրան սպանելու: Բոլոր ժողովուրդը անասնապահներ էին. նրանց կյանքի պետքերը գոյանում էին իրանց հոտերից: Ջուլոներն ամենևին հարաբերություններ չունեին դրսի հետ, նրանք կենտրոնացած էին իրանց երկրի մեջ: Ջուլոն հայտնի է իր դյուրագրգիռ, բարկացկոտ և հանդուգն բնավորությամբ. նա միևնույն ժամանակ քաջ և բարի մարդ է: Բայց Կարոն ի՞նչ գործ ուներ միանալու այդ վայրենիների հետ. ի՞նչ դաշնադրություն էր, որ նա կապում էր ասորաց պատրիարքի հետ…

«Այստեղ (Բարդուղիմեոս առաքելո վանքում) ես ստացա մի քանի նամակներ: Ն. Կ. Վ. գրում է Վարագա վանքից, թե գործերը այստեղ վատ են. քրդերի մի նոր արշավանք թալանեց Հայոց-Ձորը: Արտամետ գյուղը իր ընդդիմադրության համար մոխիր դարձավ: Հրձիգությունը թշնամիների կողմից պատահել է գիշերով: Ավելի քան հարյուր հոգի — ծերունիներ, երեխաներ, փախչելու կարողություն չունեցող մարդիկ,— այրվել են կրակի մեջ: Այս, թեև խիստ տխուր, լուրը ինձ ուրախություն պատճառեց, Հայոց-Ձորը գոնյա այժմ կզգա իր սխալը… նա երկար չէր ուզում մասնակից լինել ընդհանուր գործին… Բժշկության մասին մտածում են այն ժամանակ, երբ հիվանդն ընկած է»…

Վերջին տողերը կարդալու ժամանակ ես սարսափեցա: Կարոյի խստասրտությունն անցնում էր չափից: Ավելի քան հարյուր ծերեր, երեխաներ այրվում են հրդեհի բոցերի մեջ, նա ուրախանում է, որովհետև այս դեպքից կարող էր նա օգուտ քաղել իր դիվական նպատակների համար, իսկ նպատա՞կը,— դեռ ինձ հայտնի չէր:

«Մուշի և Բաղեշի կողմերից ոչինչ լուր չկա: Դատվանի ռայիսը (տանուտերը) գրում է՝ այստեղ ամեն ինչ պատրաստ է: Շատախում նոր վրդովմունք է ծագել ժողովրդի մեջ: Հոգվոց վանքի վարդապետը չէ դադարում իր վաղեմի նենգություններից: Ի՞նչ պետք է անել այդ Վասակի հետ, ուղարկեցեք այնտեղ Մըհեին, իմ կարծիքով նրա գործն է հանգստացնել սևագլուխ սատանային»…

Մըհեն, ծերունի որսորդի գնացած գիշերի մյուս առավոտը, էլ չերևցավ: Քանի օրից հետո մենք լսեցինք Հոգվոց վանքի վարդապետին իր խուցի մեջ սպանել են: Երկու օր չանցած, այս լուրը մեզ հասնելեն, կրկին հայտնվեցավ Մըհեն:

«Ասլանին ուղարկեցի Բաղեշի և Մուշի կողմերը այնտեղի դրությունը իմանալու համար: Սագոն կանցնի Խնուսից դեպի Արզրում, Բայազեդ և կվերադառնա Խոյի ճանապարհով: Ջալլադը և Մուրադը գնացին Մոգաց և Սասնո կողմերը: Յուրաքանչյուրի համար նշանակվել է մի ամիս ժամանակ, իրանց ճանապարհորդությունը, հետազոտությունները և կարգադրությունները վերջացնելու համար: Ամեն մեկին ես տվել եմ հարկավոր հրահանգները: Այսօր հուլիսի քսանն է, կնշանակե, մինչև օգոստոսի քսանը բոլորը կրկին կհավաքվեն Բարդուղիմեոս առաքելո վանքումը, իրանց գործունեության համարը տալու»:

Ջալլադը և Մուրադը այն երկու քրդստանցի տղամարդիկն էին, որոնց ես առաջին անգամ տեսա արաբական մինարեթում: Դրանք այն օրից անհայտացած էին, իսկ այժմ երևում էր, որ դարձյալ խառն էին Կարոյի գործերի մեջ:

«Իսկ դու, ծերունի ընկեր, այս նամակը քեզ հասածին պես, կգնաս եզիդիների ցեղապետ Միր-Մասումի մոտ. դա քո հին բարեկամն է, այս պատճառով որոշվեցավ, որ դու կապես նրա հետ հարկավորած պայմանները: «Անտառը կոտորող կացինի կոթը փայտից են շինում»: Քուրդը քրդի դեմ — մի լավ գործիք է մեր ձեռքում»…

Եզիդիները, եթե ընթերցողը հիշում է, քրդերի այն ցեղն էին, որ կրոնքով տարբեր էին իրանց մահմեդական ազգայիններից և միշտ հալածված նրանցից: Այդ միակ ցեղն

էր, որ հաշտ էր հայերի հետ և ավելի բարեկամ, թեև նա ուներ իր ազգի բոլոր ավազակային հատկությունները: Մահմեդական քրդերը համարում էին եզիդիներին հեթանոսներ և խիստ ատելությամբ վարվում էին նրանց հետ: Եզիդիները ներկայացնում էին մարական ցեղի սկզբնական տիպը, մնացած իր մոգական սովորություններով: Կարդալով Կարոյի գրածները եզիդիների մասին, ես այժմ գիտեի ծերունի որսորդի ճանապարհորդության նպատակը:

Մի քանի տողեր նամակի մեջ վերաբերում էին ինձ:

«Ֆարհատի մասին անհանգիստ եմ, ես նրան թողեցի հիվանդ, չգիտեմ ի՞նչպես է այժմ նրա առողջությունը: Իհարկե, նրա մասին ինձ տեղեկություն կտաք: Խնամեցեք այդ մանուկ վագրին, նրա մեջ շատ հարուստ, բայց դեռ չմշակված ուժեր կան»… Վերջին տողերը կարդալու ժամանակ արտասուքս սկսեց թափվել իմ աչքերից, ես չկարողացա շարունակել ընթերցումը:

ԻԹ

ՄԸՀԵԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Կարոյի իսկական նպատակը դարձյալ մնում էր ինձ համար մթության մեջ: Ես չգիտեի՝ ի՞նչ էր կամենում անել նա. ինձ հասկանալի չէր՝ ինչո՞ւ համար նա իր ընկերներին այս կողմ և այն կողմ էր ուղարկում: Եվ իր՝ Կարոյի ասորոց կաթողիկոսի — այն կիսավայրենի զինվորի և քահանայապետի — մոտ գնալը արդյոք ի՞նչ խորհուրդ ուներ: Կարոն այն մարդերից չէր, որ օդի մեջ ամրոց կառուցանե կամ դատարկ ցնորքների ետևից ընկնե: Նա կցաներ այնտեղ, որտեղից հաստատ գիտեր, թե հնձել կարող է: Իսկ այդ բոլոր զգուշավոր և գաղտնածածուկ նախապատրաստություններից ի՞նչ օգուտ պետք է քաղեր նա:

Ահա մտքեր, որոնք ինձ պաշարեցին նամակի ընթերցումից հետո:

Կարոյին ես ճանաչում էի այն ժամանակ, երբ նա մի լուռ, մտախոհ, միևնույն ժամանակ դեպի ամեն վատություն ոխերիմ պատանի էր: Երբ նա մեր դպրոցից անհայտացավ, այնուհետև նրա մասին ոչինչ չգիտեի, թե ո՞ւր գնաց նա, ի՞նչով էր պարապում այնքան ժամանակ և ի՞նչ առիթով կրկին վերադարձավ: Միայն հասարակական կարծիքը նրա մասին լավ չէր խոսում. նրան համարում էին մի համարձակ սրիկա և ավելի ոչինչ:

Բայց մի մարդ, որ միշտ անբախտի և թշվառի բարօրության համար էր մտածում, մի մարդ, որ աշխատում էր նեղյալի հանգստության համար, կարո՞ղ էր սրիկա լինել:

Ներքին ձայնը պատասխանում էր՝ ոչ:

Իսկ միևնույն ժամանակ Կարոյի անսահման բարեմտության հետ խառն նկատվում էին արարմունքներ, որոնք բարի մարդու գործեր չէին: Մարոյի հայտնած գաղտնիքը «քանդված մատուռի» մոտ, Ղանլի-դարայի մեջ, այն նվիրական ծառերի հովանու տակ,— թե որպես Կարոն սպանել էր իր ընկերներից մեկին, մի հնդկացի երիտասարդի, ամենափոքր կասկածանքի պատճառով,— այս սարսափելի եղեռնագործությունը ես տակավին մոռացել չէի: Իսկ այժմ իր նամակի մեջ նա ծերունի որսորդին առաջարկում էր մի ուրիշ չարագործություն՝ «հանգստացնել» Հոգվոց վանքի վարդապետին, կտրել մի օծյալ գլուխ, և կիսախելագար Մըհեն պետք է կատարեր դահճի պաշտոնը:

Բայց կմասնակցե՞ ծերունի որսորդը մի այսպիսի արյունոտ գործին, մտածում էի ես:

Ներս մտավ Մարոն ծիծաղելով, նա ձեռքը սեղմել էր իր կուրծքի վրա, կարծես աշխատում էր պահել իր ծիծաղը, թեքթեքվում էր, ուզում էր խոսել, բայց դարձյալ զսպել իր ծիծաղը չէր կարողանում. այնպես ծիծաղելով ընկավ օթոցի վրա, համարյա թե մարեցավ:

— Ի՞նչ է պատահել,— հարցրի ես:

Նա չկարողացավ պատասխանել:

Հանկարծ դռները շառաչմամբ ետ գնացին, լսելի եղավ Մըհեի ձայնը.

— Ո՞ր սատանան տարավ իմ տրեխները:

Վիթխարի կերպարանքը հայտնվեցավ սենյակի մեջ, որպես մարմնացած կատաղություն: Նա իր ձեռքում բռնած ուներ մի ահագին լախտ, որի գնդաձև գլխի վրա մեխել էր իր կյանքի մեջ գտած բոլոր բևեռները:

Մարոն սկսեց հավատացնել Մըհեին, թե ինքը նրա տրեխների կորուստի մեջ հանցավոր չէ, թե նա շատ ցավում է, որ այսպես էր պատահել: Եվ ավելացրուց, տրեխները բոլորովին հում կաշուց շինած լինելով, և որովհետև ինքը Մըհեն չէր հագնում նրանց, այլ քարշ տալով ախոռի պատից, պահում էր զատիկ օրվա համար, տրեխները բոլորովին չորացել և կծկվել էին: Երբ Մըհեն դրեց նրանց ջրի մեջ, որ փափկեն, լայնանան, որ կարողանա հագնել, անիծված շունը օգուտ քաղելով Մըհեի բացակայությունից, գողացավ տրեխները, և ինքը Մարոն այս րոպեիս տեսավ, որ նա բակի, մեկ անկյունում նստած, դեռ վայելում էր իր անուշ ընթրիքը:

Մարոն այս բոլորը պատմեց մի այնպիսի հեգնական ոճով, որ ավելի շարժեց Մըհեի կատաղությունը և ավելացրուց:

— Դու խո գիտես, Մըհե, որքան ես սիրում եմ քեզ: Ես այնպես բա՞ն կանեմ քո տրեխների հետ:

— Ես գիտեմ…— քրթմնջաց վիթխարին, և իր վայրենի աչքերը ուղղելով սիրուն օրիորդի երեսին, դուրս գնաց սենյակից:

— Իմանում ես, Ֆարհատ, ախար այդ հիմարը սիրահարված է իմ վրա,— դարձավ Մարոն դեպի ինձ:

— ՉԷ կարելի քեզ տեսնել ու չսիրահարվել:

Նա որպես թե չլսեց իմ խոսքը:

— Խե՛ղճ տղա, նա մինչև այսօր պահում է իր ծոցի մեջ իմ հին գուլպաների մի հատը: Քանի՛ տարի է: Շատ անգամ տեսել եմ, ինչպես հանում է նա ծոցեն, մտիկ է անում, ուրախանում է ու սեղմում է շրթունքի վրա: Մի անգամ հիվանդ էի ես. ձմեռ էր, խեղճը նստում էր իմ սենյակի դռանը, ամբողջ գիշերը չէր քնում. դռան ճեղքից ականջ էր դնում, թե ինչպես շունչ եմ քաշում ես, որպես հոգոց եմ հանում: Շատ անգամ ես լսում էի, նա լաց էր լինում. մի այնպիսի գազանը լաց էր լինում: Դու գիտե՞ս, Ֆարհատ, իմ սենյակի դուռը բացվում է ուղիղ բակի մեջ. նա նստում էր ձյունի և սառի տակ:

— Երևի, նա երբեմն քաղցրիկ խոսքեր է ասում քեզ:

— Ոչ, չէ ասում: Նա միայն մտիկ է անում իմ երեսին, խորին կերպով մտիկ է անում, ուրախանում է, երբ ես նրան ուշունց եմ տալիս:

— Երևի, դա նրան զվարճություն է պատճառում:

— Հա՛, մի այդպիսի բան: Լսիր, մի անգամ նա ինձ ասաց՝ «Մարո, բե՛ր ձեռքս քսեմ քո մազերին»:

— Դու բարկացա՞ր:

— Չբարկացա: Եթե մի այսպիսի խոսք Սագոն ասեր, ես կբարկանայի, բայց Մըհեն ինչ որ ասե, ես չեմ բարկանա, նրա սիրտը իստակ է, նա չէ հասկանում ինչ բան է սերը:

— Դու հասկանո՞ւմ ես:

Մարոն ոչինչ չպատասխանեց, որովհետև նույն րոպեում լսելի եղավ շան խորին կնձկնձոցը և իսկույն լռեց գիշերային մթության մեջ:

— Վա՛հ, այս ի՞նչ արեց, երևի այն հիմարը շանը սպանեց,— ձայն տվեց Մարոն և ճրագը խլեց, դուրս թռավ:

Ես էլ գնացի նրա հետ: Եվ իրավ, շունը անմռունչ կերպով ընկած էր բակի մեջ. ճրագի լուսով մենք տեսանք՝ նրա գլուխը Մըհեի լախտի մի հարվածից բոլորովին փշրվել էր և ուղեղը դուրս թափվել:

— Թաղե՛մ քո սարսաղ գլուխը, ինչո՞ւ սպանեցիր շանը,— ասաց Մարոն ցավալի կերպով:

Մըհեն, որ դեռ կանգնած էր իր զոհի մոտ, ոչինչ չպատասխանեց, մոտեցավ բակի դռանը, ոտքով մի կողմ գլորեց ահագին քարը, որ դրած էր դռան ետևը փականքի տեղ, և լախտը իր ուսին դնելով, լուռ ու մունջ դուրս գնաց:

— Ո՞ւր է գնում նա,— հարցրի ես Մարոյից:

— Աստված ոչ գիտե նրա գլուխը: Նա երբ որ իր մահակը վեր առավ, տրեխները հագավ, կնշանակե հեռու տեղ ունե գնալու: Թե չէ ողջ տարին նա բոբիկ ոտքերով է ման գալիս. ոտնամանը մի ծանրություն է նրա համար:

— Նա հիմա էլ ոտնաման չուներ:

— Նրա համար, որ շունը կերավ: Փակիր դուռը, Ֆարհատ:

Ես մոտեցա դռանը, այն քարը, որ Մըհեն մեկ ոտքով հեռու գլորեց որպես թեթև տաշեղ, ես հազիվ կարողացա երկու ձեռքով իր տեղը դնել: Մարոն տեսնելով այդ, սկսեց ծիծաղել:

— Այնպես, խո ես էլ կարող էի մոտ մղել քարը:

— Դե՛, փորձիր:

Եվ իրավ, Մարոն ավելի թեթև կերպով, քան թե ես, վեր առավ ահագին քարը և բարձրացրուց գետնից:

— Դու ուժեղ ես, Մարո, դրա համար էլ Մըհեն քեզ սիրում է, որ իր պես ուժեղ ես:

— Սատկի՛ Մըհեն, ես նրան էլ չպետք է սիրեմ,— պատասխանեց նա, երբ կրկին տեսավ սպանված շանը, որի ահագին դիակը պառկած էր բակի մեջ:

Մյուս շները հավաքվել էին և լիզում էին իրանց բարեկամի վերքը: Կարծես, ուզում էին բժշկել նրան: Մենք գնացինք սենյակը:

— Ես գիտեմ Մըհեն ուր գնաց Մարո:

— Ո՞ւր գնաց:

— Չեմ ասի, վախենում եմ ուրիշին ասես:

— Ես խո երեխա չեմ:

Ես հայտնեցի Մարոյին, ինչ որ գիտեի Մըհեի ճանապարհորդության նպատակի մասին: Նրա դեմքն ընդունեց խիստ աղոտ արտահայտություն և խոսեց բարկացկոտ, դողդոջուն ձայնով:

— Ես հավատում եմ, նա կանե, նա պատրաստ է ամեն բան անել, երբ հայրս հրամայում է նրան: Ա՛խ, հայրս…

Նա խեղդեց իր ձայնը և չշարունակեց խոսքը: Րոպեական լռությունից հետո նա ասաց.

— Դու գիտե՞ս, Ֆարհատ, Մըհեն մարդասպան է:

— Ո՞րպես:

Մարոն պատմեց, թե Մըհեն հաղբակեցի չէ, ինչ որ երկրից է, որի անունը մոռացել է, բայց այն երկիրը շատ հեռու է: Թե նա, Մըհեն ունեցել է մի քույր, որպես ինքն է ասում, գեղեցիկ աղջիկ: Նրանց գյուղի աղայի տղան աչք է ունեցել Մըհեի քրոջ վրա: Քույրը հայտնել է եղբորը: Աղայի տղան հայ չէ լինում, «անօրեն» պարսիկ է լինում: Մի օր քույրը մենակ գնում է դաշտից խոտ քաղելու, աղայի տղան նրան բռնում է, չարչարում է… Մըհեն վրա է հասնում և իր դանակով նրա վիզը կտրում է, ու հետո թողնում է այն երկիրը, փախչում է:

Ես Մարոյին պատասխանեցի, թե այս գործի մեջ Մըհեն շատ հանցավոր չէ, թե ես ինքս այդպես կվարվեի, եթե մեկը համարձակվեր անպատվել իմ քրոջը:

— Ես ինքս կսպանեի մի այնպիսի տղին, և չէի թողնիլ, որ եղբայրս մեջ մտներ,— պատասխանեց Մարոն:— Բայց Մըհեն այստեղ էլ շատ բաներ է արել…

— Ի՞նչ բաներ:

— Չեմ կարող ասել, մի՛ հարցրու: Հայրս պատվիրել է, որ ոչ մի մարդու չասեմ:

— Ի՞նձ էլ:

— Քեզ էլ:

Ես տեսա, որ անկարելի էր Մարոյից խոսք դուրս քաշել այս գաղտնիքի մասին, որովհետև Մարոն միամիտ աղջիկներից չէր: Եվ հարցրի.

— Ինչո՞ւ հայրդ պահում է իր մոտ մի այսպիսի մարդասպանին:

— Նրա համար, որ նա մարդասպան է:

— Լա՞վ է մարդ սպանելը:

— Վատ մարդուն, իհարկե:

— Ուրեմն դու ինչո՞ւ Մըհեի վրա բարկանում ես:

— Նրա համար, որ նա սպանեց շանը:

— Շունը մարդից լա՞վ է:

— Շատ մարդերից, որոնք վատ են, ինչպես քրդերը: Շունը մեր տունը պահում էր: Բայց քրդերը մեր տունը քանդում են:

«Իսկ և իսկ իր հոր կտորն է»… ասեցի ես իմ մտքում:

— Գիտես, Ֆարհատ, ո՞րքան գող են քրդերը, նրանց երեխաներն էլ գող են. հենց որ օրորոցից դուրս են թռչում, գողություն են անում: Անցյալ տարի մեր հավերի ճուտերից ամեն օր մեկը պակասում էր, էնպես որ տասներկու ճուտից մնաց երեքը: Ո՞վ է տանում, տեր աստված: Հայրս ասում էր՝ քորքորան (ուրուրը) է տանում. Մըհեն ասում էր՝ աղվեսն է գողանում: Ես բակի բոլոր ծակերը բռնեցի, որ աղվեսը ներս չմտնի, մի ծակ միայն բաց թողի, որ գալու ժամանակ բռնեմ նրան: Գիշերը նստում եմ, մտիկ եմ անում, մտիկ եմ անում, աղվեսը չկա: Ցերեկով մտիկ եմ անում, ագռավն էլ չէ թռչում մեր կտուրի վրայով: Բա՛ ո՞վ է տանում ճուտերը: Մի օր տեսնեմ, մեր հարևան քրդի աղջիկը, Գյուլին, մեր տան դռնիցը անց կացավ, մտավ մարագը, կանչեց՝ ճո՛ւ, ճո՛ւ: Ճուտերը նրա ձայնին սովորած էին, իսկույն դուրս վազեցին: Նա կուտ գցելով, ճուտերին հեռացրուց, տարավ մինչև մեր տան մոտի խրամը, իջավ փոսի մեջ: Ի՞նչ սատանա է: Ես վրա հասա, տեսնեմ՝ ճուտերից մեկը բռնել է, ուզում է տանել: «Տո, սատկած Գյուլի, ո՞ւր ես տանում մեր ճուտը», ասում եմ ես ու բռնում նրա ծամերից: Նա մատները գցեց, ուզում էր իմ երեսը ճանկռտել: Ես բռնեցի բողազից (շնչափողից), դրի տակս, խեղդում եմ, խեղդում, մինչև աչքերը դուրս թռան: Ափսո՛ս, որ Հասոն եկավ, ձեռքիցս առեց:

— Մե՞ծ էր այն աղջիկը:

— Տես, այսքան բարձր էր ինձանից:— Նա ձեռքը տարավ դեպի գլուխը և կես արշինի չափ վեր բռնեց:— Մինչև այսօր էլ Գյուլին ինձ հետ ոխ ունի, ասում է՝ քեզ մի օր պետք է սպանեմ: Հո՛ղեմ նրա սարսաղ գլուխը, լա՛վ մարդու է սպանում… Ի՛նչ նրա ատամների խարջն եմ…

Վերջին խոսքերը Մարոն արտասանեց մի առանձին հպարտությամբ: Նա շարունակեց.

— Ախար, քրդերը ամենն այսպես են, հենց որ նրանցից վախենում ես, գլխիդ նստում են: Մի անգամ ձեռքիդ ուժը ցույց տվեցիր, էլ մոտ չեն գա: Այն օրից մեր հավերից և ոչ մեկը չի կորել: Է՛հ, ինչքան խոսեցի ես… հիմա դու կասես՝ կոտրած ջաղացի պես չըխկչըխկում է…

— Չէ՛, ես այսպես չեմ ասի. ես կասեմ՝ դու շատ լավ աղջիկ ես:

— Դրո՞ւստ:

— Քո արևը գիտենա:

— Բաս բե՛ր ականջիդ մի բան ասեմ:

Ես ականջս մոտ տարա նրա բերնին. նա ինչ—որ փսփսաց, և ես զգացի, որ ջերմ շրթունքները կպան իմ երեսին…

Լ

ՔՐԴՈՒՀԻՆ ԵՎ ՀԱՅՈՒՀԻՆ

Առավոտյան ես զարթեցա խիստ վաղ: Իմ սենյակի պատուհանից տեսա,— կովերը բակումը կանգնած էին, Մարոն կթում էր նրանց: Նրա շապիկի թևքերը ծալած էին, և ձեռքերի բազուկները մինչև արմունկը մերկ էին: Ի՜նչ գեղեցիկ էին այն լիքը, կլորիկ բազուկները: Ես ագահ աչքերով մտիկ էի անում: Գոգնոցը կապած չէր, և շապիկի օձիքի ճեղքից երբեմն դուրս էր նայում սիրուն կուրծքը: Նա վարսակալի նման մի սև բան կապել էր բաց գլխին, և նրա տակից խիտ ծամերը փռփռում էին առավոտյան հովի հետ: Մարոն երբեք չէր երևացել ինձ այնքան հրապուրիչ, որպես այն առավոտ: Նա իր կարմիր շապիկի մեջ, որ իջնում էր մինչև ոտքերը, ներկայացնում էր հովվական կյանքի մարմնացած անմեղությունը:

Նա վերջացրեց իր գործը և սկսեց կովերը քշել դեպի նախիրը:

Խաթունը — ծերունի որսորդի տնակալուչ պառավը,— զբաղված էր թոնիր վառելով: Հասոյի կինը, որսորդի հարսը, ծածկյալ ուրվականի նման, լուռ և մունջ պտըտում էր թոնրի շուրջը, պառավի զանազան պատվերները կատարելով: Այնքան ժամանակ ես չկարողացատեսնել այս կնոջ երեսը կամ լսել նրա բերանից մի խոսք: Նա ոչ ոքի հետ չէր խոսում, բացի Մարոյից և բացի իր ամուսնից, այն ևս այն ժամանակ, երբ երկուքը միասին էին, և երրորդ անձն չկար նրանց մոտ:

Տանեցիներից ուրիշ մարդ չէր երևում:

Միայն Հասոյի երեխաները, քարշ ընկած մոր փեշերից, ճչվչում էին, պահանջում էին մի բան ուտելու: Մայրը խփում էր նրանց գլխին, պատվիրում էր, որ սուս կենան և համբերեն:

Ես նկատեցի, Մարոյի խոսքը բոլորովին ուղիղ էր, որ նա ասաց ինձ իր հորը ճանապարհ դնելեն հետո՝ «մենք էլի մնացինք մենակ»…

Եվ իրավ, ծերունի որսորդը գնաց եզիդիների ցեղապետի մոտ: Մըհեն սատանայի պես անհայտացավ: Հասոն իր ագարակից տուն չէր դառնում. նա պարապված էր իր դաշտային գործերով: Պառավ Խաթունը թոնիրը վառելեն և կերակուրները եփելեն հետո, նստում էր չարդախի տակ, այն հով տեղում բուրդ էր մանում: Հասոյի կինը հանգստություն չուներ իր երեխաների ձեռքից: Էլ ո՞վ էր մնում,— ես ու Մարոն, որ բավականին ազատ ժամեր ունեինք, խոսի՛ր, ծիծաղի՛ր, որքան քեֆդ է: Մարոն շուտ դարձավ նախիրից: Նա մոտեցավ, իմ սենյակի պատուհանից նայեց, որ իմանա ես զարթնե՞լ եմ, թե ոչ: Երբ տեսավ ինձ հագնված, ներս մտավ: Նրա դեմքը բավականին տխուր էր:

— Գիտե՞ս, Ֆարհատ,— ասաց նա,— երբ կովերը հասցրի նախիրին, ետ դառնալու ժամանակ անցա գյուղի միջով: Ամեն տներից գալիս էր գաթայի ու նազուքի հոտը, ամեն տեղ հալվա էին շինում: Բոլորը պատրաստվում են ուխտ գնալու:

— Ո՞րտեղ:

— Չե՞ս իմանում: Այսօր հինգշաբթի է, էգուց ուրբաթ, մյուս օրը…

— Շաբաթ:

— Հա՛: Շաբաթ օրը սուրբ աստվածածնի ուխտի օրն է: Ողջ Հաղբակը այնտեղ կլինի:

— Սալմաստն էլ այնտեղ կլինի,— պատասխանեցի ես:

Իրավ որ, նրա տոնին այնտեղ հավաքվում էր մեծ բազմություն սալմաստեցի և հաղբակեցի ուխտավորների: Չգիտեմ ինչո՞ւ աստվածածնի անունը հիշեցրեց իմ մանկությունը: Այնտեղ ամեն տարի տանում էր ինձ մայրս, քույրերիս հետ, տոնական հանդեսների ժամանակ:

— Բա՛, ամենը գնան, ես մնա՞մ,— հարցրուց Մարոն:

— Դու էլ գնա:

— Ո՞ւմ հետ: Հայրս տանը չէ: Մըհեն կորավ: Եղբայրս այսպիսի բաների գլուխ չունի: Ո՞վ կտանե ինձ:

— Ես:

— Դու հանաք ես անում, Ֆարհատ:

Ես հավատացրի Մարոյին, որ իմ խոստմունքը կատակ չէր, թե ես բոլորովին մոռացել էի, որ այս շաբաթ աստվածածնի տոնն է, հիմա որ իմացա, ես ինքս մեծ ցանկություն ունեմ այնտեղ գնալու, որովհետև գիտեմ, ուխտավորների թվում կլինեն մեր քաղաքացիներից շատերը, գուցե նրանց մեջ կգտնեմ իմ բարեկամներին, որոնցից այնքան ժամանակ բաժանված էի:

— Կարելի է տեսնես մորդ և քույրերիդ:

— Շատ կարելի է:

— Լավ: Հիմա ինչ եմ ուզում անել, Ֆարհատ,— շարունակեց Մարոն ծանր կերպով:— Առանց եղբորս կամքին ես չեմ կարա գնալ, դու պետք է խնդրես Հասոյից, որ ինձ թող տա քեզ հետ գալու: Դու ասա նրան, թե ինքդ ուզում ես ուխտ գնալ, ինձ էլ տանում ես քեզ հետ: Հասոն քո խաթրը շատ ունի, քո խոսքը չի կոտրի:— Այսպես կասես, հա՞:

— Հա՛, այդպես: Ես այս րոպեիս կերթամ Հասոյի մոտ, քեզ համար հրաման կառնեմ:

Մարոն փաթաթվեցավ ինձ որպես երեխա, որին խոստանում են բազարից քիշմիշ բերելու: Նա թողեց ինձ և դուրս վազեց, ասելով.

— Սպասի՛ր, մի քիչ կաթ բերեմ խմի՛ր, քաղցած մի՛ գնա:

Նա շուտով բերեց մի մեծ թասով կաթ և մի կտոր հաց: Նախաճաշիկս անելեն հետո, ես դիմեցի դեպի Հասոյի արտը:

Հասոն սկզբում շատ դժվարացավ մեր ուխտ գնալու մասին, ասելով, թե տունը բոլորովին կմնա անտեր, թե տունը առանց տղամարդի հսկողությամբ թողնել չի կարելի, որովհետև ամեն գիշեր գողություններ են պատահում. թե նա, Հասոն պետք է ստիպված լինի թողնել դաշտը և գնալ տանը պառկելու. այն ժամանակ նրա ցանքերը կմնան առանց հսկողության: Նա ավելցրուց, թե անիծած քրդերն իստակ բարբարոսներ են, որքան կարողանում են վերառնել՝ գողանում են, իսկ մնացածը փչացնում են և այնպես հեռանում: Եվ նա այս պատճառով ամբողջ գիշերը չէ քնում, հենց հրացանը գոգին դրած, նստում է և բաց աչքերով հսկում է. աչքդ խփեցիր,

բոլորը կտանեն: Եվ վերջացրուց թե իր հայրը — ծերունի որսորդը — կամ Մըհեն եթե հեռացան, նրանք հույս ունեին իմ վրա, հիմա որ ես էլ գնամ, գիշերները տանը ո՞վ պետք է նայե և այլն:

Ես պատասխանեցի, թե մեր գնալ և գալը կտևե ոչ ավելի քան թե մի շաբաթ, և այս միջոցում դժվար չէր լինի մի մարդ վարձել և դնել տանը որպես պահապան:

Այնուհետև Հասոն շատ խուլ կերպով ակնարկեց, թե հասարակության կարծիքը վատ բացատրություն կտար մի այսպիսի նոր, և իրանց երկրում դեռ օրինակը չտեսնված երևույթի մասին, երբ մի չափահաս աղջիկ մի քանի օրով ուխտ է գնում, իր մոտ ազգականը չեղող օտար տղամարդի հետ:

Հասոյի ակնարկությունը թեև բոլորովին ճիշտ էր, բայց ես կամեցա հերքել, ասելով՝ թե Մարոն ինձ համար նույն նշանակությունն ունի, որպես իրան, Հասոյի հանար, նա մեր երկուսիս քույրն է: Մենք ամենքս երեխայությունից մեծացել ենք միասին, որպես միևնույն գերդաստանի զավակներ:

– Դրուստ է քո ասածը, Ֆարհատ,– պատասխանեց նա:– Բայց դու տեսե՞լ ես, որ մեր երկրում մի քույր իր եղբոր հետ հեռու տեղ ուխտ գնար:

– Չեմ տեսել:

– Էլ ի՞նչ ես խոսում: Կովը կովի մոտ են կապում, հորթը՝ հորթի մոտ, եզը՝ եզան մոտ: Այսպես էլ են մարդիկը:

Հասոն սովորություն ուներ իր խոսակցության մեջ ամեն օրինակները վերառնել անասուններից: Դասավորել տեսակը տեսակի հետ — դա նրա համար օրենք էր:

— Ես կգնամ մենակ, առանց Մարոյին իմ հետ տանելու:

Նա ոչինչ չպատասխանեց, մտածության մեջ ընկավ:

— Ես գուցե կրկին չեմ վերադառնա,— ավելացրի ես:

Հասոն նկատեց, թե որպիսի վիրավորական հանգով հայտնեցի իմ վերջին և վճռական խոսքը, որ դրեց նրան խիստ դժվար դրության մեջ: Նա գիտեր, որ իր հայրը ցանկանում էր ինձ իր մոտ պահել. այժմ հոր բացակայության ժամանակ առիթ տալ ինձ հեռանալու, դա գցում էր Հասոյի պատասխանատվության ներքո:

Հասոն անկեղծ էր. նա չուներ խորամանկ մարդու ձևերը: Նա հայտնեց, թե Կարոն ինձ հանձնել էր նրա հորը, իսկ հայրը գնալու ժամանակ պատվիրեց Հասոյին, որ վարվեն իմ հետ եղբայրաբար, որպեսզի որսորդի տունը ինձ ձանձրալի չլիներ, և ավելացրուց, մի փոքր հանաքի ձև տալով իր խոսքերին:

— Դու երեխայությունից իրասածի (համառ) տղա էիր, Ֆարհատ: Ես գիտեմ, թե քեզ կարողանամ հանգստացնել, Մարոյին չեմ կարող. նա ավելի կապը-կտրած է: Գնացեք, ինչպես ուզում եք, այնպես արեցեք, ես էս գործիցը ձեռքերս լվանում եմ…

— Մարոն ուզում է, որ քո կամքովն լինի:

— Ուրեմն, թող Խաթունին էլ իր հետ վեր առնե:

— Դարձյա՞լ «կովը կովի հետ»…

Հասոն ծիծաղեց: Ծիծաղը նրա բարի երեսի վրա փոխվեցավ ժպիտի և նա ասաց.

— Քույրս քեզ շատ է սիրում, Ֆարիատ:

— Ի՞նչ գիտես:

— Նա ինքն ասաց ինձ:

— Թող սիրե, ավելի լավ:

— Բայց դո՞ւ:

— Ե՞ս… Մենք սիրում էինք մեկ մեկու, երբ դեռ երեխա էինք:

— Այն սերն ուրիշ էր:

— Սերը միշտ սեր է. նա չի փոխվում:

— Դու կարդացողի գլուխ ունես, Ֆարիատ, քեզ հետ դժվար է խոսելը,— ասաց Հասոն և բարձրացրուց իր խարազանը, սկսեց քշել արորին լծած եզները:

Ես հեռացա:

Զարմանալին այն էր, որ մի քանի շարականներ սովորած լինելով, այն ժամանակ ես ուսումնական էի համարվում: Իհարկե, Հասոյի աչքում ամեն տիրացու կշիռ ուներ. թեև ես ինքս այժմ ծիծաղում եմ իմ այն ժամանակվա գիտության վրա:

Հասոյի արտը բավականին հեռու էր գյուղից: Ես շտապում էի շուտ տուն հասնել, հայտնել Մարոյին եղբոր համաձայնությունը. այդ պատճառով ընտրեցի թեև դժվարին, բայց ավելի կտրուկ և կարճ ճանապարհը: Հարկավոր էր միայն իջնել ձորը, անցնել մի քանի բլուրներ, վերջին բլուրի վրա արդեն կանգնած էր ծերունի որսորդի տունը:

Արեգակը թեև մի ժամ առաջ ծագել էր, բայց չէր երևում: Օրը մառախլապատ էր, և մռայլոտ ձորի խլությունը տալիս էր նրան գերեզմանի նմանություն: Այստեղ մի հազիվ նշմարելի շավիղ ոլոր-մոլոր գնում էր ձորի միջով, տեղ-տեղ թաքնվում էր խոտերի մեջ, իսկ երբեմն ծածկվում էր փուլ եկած ժայռերի բեկորներով: Այս զառիվայր և զառիվեր ճանապարհով կարող էին շրջել միայն եղջերուները:

Խորասուզված մտածությունների մեջ, համարյա աննկատելի էր ինձ ճանապարհի դժվարությունը, ինձ պաշարել էր աստվածածնի ուխտագնացության ուրախությունը: Մտածում էի, այնտեղ ուխտավորների թվում կտեսնեմ մեր քաղաքացիներից շատերին. գուցե մայրս, Մարիամը և Մագթաղը նույնպես նրանց հետ կլինեն: Մայրս ամեն տարի կատարում էր աստվածածնա ուխտը: Ո՛րքան կուրախանա նա, ո՛րքան կուրախանան քույրերս, երբ որ ինձ կտեսնեն: Երևի նրանք իմ մասին շատ տխուր են, ինձ բոլորովին կորած են համարում…

Եվ վերջ ի վերջո ես մտածում էի, գուցե կտեսնեմ և Սոնային. նրա հայրն որպես քահանա կգար գյուղացիների հետ (նրա հունձի օրն է), Սոնային ևս կբերե իր հետ: Ի՞նչ կասե Սոնան, երբ կտեսնե ինձ:

Ծերունի որսորդի տունը գալեն հետո, առաջին անգամ ջերմ կարոտով ես հիշեցի մեր խրճիթը, հայրենական երկիրը և այն մարդիկներին, որոնց ճանաչում էի, որոնց հետ սնվել ու մեծացել էի:

Երևցավ մի բարակ վտակ, որ խաչաձև կտրելով իմ ուղին, թափվում էր փոքր-ինչ հեռու ձորի խորության մեջ: Նա այնքան հստակ էր, որպես բյուրեղ: Երբ թեքվեցա ջրիցը խմելու, տեսնում եմ, վտակը բերում է իր հետ խիստ մանր ավազներ, որ անկարելի էր խմել: Ես դիմեցի դեպի ջրի աղբյուրը, որ երևում էր շատ հեռու չպետք է լինի: Մի աղոտ բան անորոշ կերպով խլրտվում էր, թեև մոտ էր նա, բայց վաղորդյան մառախուղը թույլ չէր տալիս պարզ տեսնել: Երբեմն կծկվում էր նա, երբեմն բաժանվում էր, և ամեն մի մասը տնկվելով գետնի վրա, մարդու մռայլ կերպարանք էր ընդունում: Նրանք դարձյալ միացան և կազմեցին մի սև շարժուն գունդ: Ի՞նչ պետք է լինի: Մոտենում եմ: Երկու արարած, միմյանց փաթաթված, աշխատում էին մինը մյուսին տակով անել: Նրանք կանայք էին: Մեկի ձեռքում փայլեց դանակը: Ես մոտ հասա: Մարոն տարածել էր գետնի վրա մի աղջկա, և նրա բազուկը պինդ բռնած, աշխատում էր ձեռքից խլել դանակը: Սարսափելի մի տեսարան էր այդ: Երկու կատաղած առյուծուհիք մենամարտում էին: Մարոյի հակառակորդը քրդուհի էր: Ես վրա հասա և բաժանեցի նրանց:

— Ես քեզ դարձյալ կստակացնե՛մ, դու իմ ձեռքից չե՛ս պրծնի,— ասաց քրդուհին, որի գեղեցիկ, սևորակ աչքերը նույն րոպեում ընդունել էին գազանի աչքերի նմանություն:

Մարոն ոչինչ չասաց, նա այնքան վրդովված էր, որ խոսել չէր կարողանում: Նա պատասխանեց իր արհամարհական նայվածքով:

Քրդուհին ավելի գեղեցիկ է իր կատաղության րոպեում. նրա հոգին և արտաքին կերպարանքը կազմակերպում են այն ժամանակ մի ամբողջ պատկեր, որի մեջ նա երևում է իր բոլոր քաջազնական բնավորությամբ:

Ես չէի կարող առանց համակրության նայել լեռների այն ազատ դստեր վրա, թեև մի րոպե առաջ նա ուզում էր սպանել Մարոյին:

— Ինչո՞ւ էիր սպանում այս աղջկան,— հարցրի ես քրդուհիից:

— Դու չգիտես, աղա,— նա ինձ համարում էր թուրք,— ի՞նչպես սատանա է այս աղջիկը, կասես թե ֆըլա (հայի նախատական կոչումը քրդի լեզվում) չլինի, նա համարձակվում է ձեռքը բարձրացնել իմ վրա. մի օր ուզում էր խեղդել ինձ: Ո՞ր հայը այսպես կանե:

— Հայը ի՞նչ է, որ չկարողանա այսպես անել:

— Հայը շո՛ւն է, հենց որ հաչե, գլխին խփի՛ր, ձենը կկտրե:

Արյունը վազեց դեպի իմ գլուխը, ձեռքերս դողացին: Բայց ի՞նչ մեղ ուներ քրդուհին, երբ անարգում էր մի ազգություն, որ ինքն իր ստորությամբ առիթ էր տվել իր մասին կազմել մի այսպիսի վատ կարծիք…

Բայց Մարոն համբերել չկարողացավ. նա կրկին հարձակվեցավ քրդուհու վրա և մի հարվածով գլորեց նրան գետին: Ես դժվարությամբ կարողացա ազատել նրա ճանկերից ոչ սակավ կատաղած զոհը:

— Թո՛ղ տուր խեղդեմ դրան,— ասում էր Մարոն:

— Շո՛ւն,— գոռում էր քրդուհին:

Այն ժամանակ միայն նկատեցի, որ Մարոյի ձեռքից արյուն էր հոսում: Երբ առաջին անգամ քրդուհու բազուկը բռնած, նա աշխատում էր խլել նրանից դանակը, մատը

վիրավորել էր, և իր խռովության մեջ չէր զգում ցավը: Ես ուզեցի փաթաթել վերքը, բայց նա թող չտվեց, ասելով, թե ինքն ևս կարող է փաթաթել: Նա մոտեցավ աղբյուրին, սկսեց սառն ջրով լվանալ արյունը:

Քրդուհին գցեց իր ուսին մի տոպրակ, որի մեջ դրած էր մի գառն, և իր քայլերն ուղղեց դեպի գյուղը:

— Ո՞ւր ես տանում այս գառը,— հարցրի նրանից:

— Տանում եմ «աստծո մարդու» համար,— պատասխանեց նա հանդարտ կերպով:

— Ո՞վ է «աստծո մարդը»:

— Նա գրում է թիլիսմաններ, և որ տղային սիրում է աղջիկը, նրան բերում է այն աղջկա համար:

— Ուրեմն դու սիրո՞ւմ ես մեկին:

— Ահմեի որդի Սաֆոյին: Նա մի քաջ որսորդ է:

— Իսկ այդ գառը քո հոր հոտի՞ցն է:

— Ես նրան գողացա ճանապարհին գալու ժամանակ:

— Երևի, հայերի ոչխարներից: Այդպես չէ՞:

— Բա՛ ո՞րտեղից: Քրդի գառը ես չեմ գողանա:

— Հեռո՞ւ է քո հոր չադրը:

— Խանա-Սորի այն կողմը: Ես այնտեղից դուրս եկա, երբ լույսը դեռ չէր ծագել: Հայրս չիմացավ:

Ավելի քան երեք մղոն ճանապարհ էր եկել քրդուհին: Նա նայեց դեպի վեր, տեսնելու թե արևը որտեղ էր կանգնած և շարունակեց իր ճանապարհը, ասելով.

— Ես հեռու պետք է գնամ, «աստծո մարդը» կենում է այստեղից շատ հեռու, տե՛ս, այն կապույտ սարերի մեջ: Թե մի օր կպատահի քեզ անցնել Խանա-Սորի ձորով, հարցրու այնտեղ Գյուլիի հոր չադրը, նրան կոչում են Ռահմանի որդի Ռահիմ. նա Բիբլասների ցեղապետն է: Գյուլին շատ սիրեց քեզ, դու օգնեցիր նրան: Քո աչքերը նմանում են նրա Սաֆոյի սուրմայած աչքերին: Գյուլին հանգստություն կտա քեզ իր հոր չադրում, մի ամսական գառը կմորթե քեզ համար:

Ես կամեցա գեղեցիկ քրդուհու քաղցրախոսությանը պատասխանել նույն ոճով և ասացի.

— Բայց Գյուլին նմանում է քյաֆար գյուլի (մուգ-ծիրանի գույն ունեցող վարդի):

Քրդուհի օրիորդի գորշ, բայց սիրուն դեմքի վրա փայլեց մի ժպիտ, նա երեսը շուռ տվեց, շարունակեց իր ճանապարհը, ասելով.

— Աստված կտա՛ ինձ մի օր, որ կսպանեմ այն սատանայի քածին… նա ցույց տվեց Մարոյի վրա և հեռացավ:

Մարոն լվացել և փաթաթել էր իր վերքը, երբ ես մոտեցա նրան:

— Գիտե՞ս ով էր այն աղջիկը,— հարցրեց նա:

— Գյուլին: Այդ աղջիկը գնում էր կախարդի մոտ, որ նրա թիլիսմաններով գրավե իր սիրականին:

— Ո՞վ ասաց քեզ: Դու արդեն նրա անունն էլ գիտես…

— Նա ինքն ասաց:

— Բայց դու, Ֆարհատ, բավականին սիլի-բիլի արեցիր նրա հետ… Շա՜տ խորամանկ ես…

— Դրուստն ասեմ, ինձ շատ դուր եկավ Գյուլին:

— Նրա համար, որ իմ մատը կտրեց, հա՞:

Մարոյի աչքերում ցոլաց նախանձի կայծը:

— Դրա համար չէ: Նա սիրուն աղջիկ է:

— Սարսա՜ղ…

— Ես քեզ ուզեցի բարկացնել, Մարո:

— Առանց դրան էլ բարկացած եմ:

— Ի՞նձ վրա:

— Հա՜: Ինչո՞ւ չթողեցիր սատկեցնեի նրան:

— Գիտե՞ս ինչ կանեին քեզ քրդերը:

— Կսպանեին: Թող սպանեին: Մի օր պիտի մեռնեմ, բոլորը մեկ է:

— Հետո ես կմնայի առանց Մարոյի:

Նա ոչինչ չպատասխանեց և րոպեական լռությունից հետո հարցրուց.

— Հասոն ի՞նչ ասաց:

Ես պատասխանեցի, թե Հասոն համաձայնեցավ մեր ուխտագնացության համար, միայն ասաց, որ Խաթունին պետք է մեզ հետ տանենք: Ես հարցրի, արդյոք ձեռքի վերքն արգելք չէ՞ր լինի:

— Այդ ոչինչ, կտրածը շատ չէ,— պատասխանեց նա:— Ո՞րտեղից պատահեց այն անիծածը: Գիշերը վատ երազ էի տեսել, հիմա կատարվեց:

— Նա գնում էր կախարդի մոտ իր սիրականի համար թիլիսման գրել տալու:

— Հո՜ղը նրա գլխին, նրա հայրը քրդերի մեծավորն է, բայց ինքը սիրում է մի աղքատ որսորդի, նրա համար միայն, որ այն տղան լավ խաղ է ասում և սիրուն աչքեր ունի:

— Ի՞նչպես եղավ, որ դու եկար այստեղ և հանդիպեցար նրան:

Մարոն ասաց, ինքը անհամբերությամբ սպասում էր, թե ինչ լուր կբերեմ ես Հասոյից, և այս ճանապարհով եկավ իմ առաջ լսելու եղբոր խոսքը: Գյուլին նստած էր աղբյուրի մոտ հանգստանալու համար, հենց որ տեսավ իրան, դանակը հանեց և հարձակվեցավ:

— Բայց ինչո՞ւ է նա քեզ հետ թշնամացել,— հարցրի ես:

— Դա հին բան է,— պատասխանեց Մարոն,— մի տարի Գյուլիի հոր ցեղը եկավ մեր գյուղում ձմեռելու, Գյուլին մեր տան մոտն էր կենում: Ամեն օր մենք տեսնում էինք, որ մեր հավերից մեկը պակասում էր, ո՞վ էր տանում, չէինք իմանում: Հայրս ասաց, կարելի է աղվեսն է գողանում: Ես մի օր նստեցի մարագի դռանը, հսկում էի, որ աղվեսը գա և նրան բռնեմ, հավերի վրեժն առնեմ: Տեսնում եմ Գյուլին դևի պես հայտնվեցավ: Նա կուզեկուզ մոտեցավ, մարագի դուռը բաց արավ: Ես թաքնված էի, նա ինձ չտեսավ: Ձայն չհանեցի, մինչև մտավ մարագը: Հավերից երկուսը բռնեց, հենց որ դուրս էր գալիս, բռնեցի ծամերիցը, գցեցի գետին, խեղդում էի, բայց այդ միջոցին Մըհեն վրա հասավ, չթողեց: Հիմա այն օրից ինձ հետ թշնամություն ունի:

— Դու այսօր էլ նրան կխեղդեիր, եթե ես վրա չհասնեի: Բայց Գյուլիի պատմությունը մի անգամ էլ քեզանից լսած եմ:

— Բայց դու ոչ ոքին չասես այսօրվա անցքը, Ֆարհատ:

— Իսկ քո ձեռքի վե՞րքը:

— Ես կասեմ՝ ինքս վիրավորեցի, երբ դանակով սոխ էի կոտորում:

— Լավ:

— Դե՛, գնանք:

ԼԱ

ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐ

Մարոյի ձեռքի վերքն այնքան թեթև չէր, որքան նա կամենում էր ցույց տալ. դանակը կտրել էր բթամատի պտղուցը կես եղունգի հետ: Բայց նա դրա վրա ուշադրություն չէր դարձնում և ողջ օրը զբաղված էր ուխտագնացության պատրաստություններով: Ես տեսնում էի, թե որպես նա մի ձեռքով հունցում էր խմորը նազուքներ և յուղով հացեր թխելու համար, որպես եռանդով պատրաստում էր մեղրալի հալվաները:

Պառավ Խաթունը նույնպես ոչ սակավ զբաղմանց մեջ էր. նա ինքը վազեց խունկ և մոմ գնելու գյուղի մանրավաճառից իր սեփական արծաթով, որ ետ էր գցել այսպիսի հոգեշահ բաների համար: Նա աշխատում էր վերջացնել իր գործած գուլպաների երկրորդ ջուխտը, որ պատրաստել էր վանահորն ընծայելու, որպեսզի նա իրան հիշե իր աղոթքների մեջ:

Այդ բոլորը կատարվում էր խիստ ջերմ և բարեպաշտական ոգևորությամբ:

Տխուր էր միայն Մարգարիտը,— այդպես էր Հասոյի կնոջ անունը,— նա չէր կարողանում համբերել, որ Մարոն և Խաթունը ուխտ էին գնում, իսկ ինքը մնում էր: Ինչո՞ւ չէին թողնում նրան, մի՞թե նա հոգի չուներ, մի՞թե նա չէր ուզում վանքի սրբությունները համբուրել: Վերջապես նրան ևս պետք էր որսորդի փակված խրճիթից դուրս գալ և արձակ աշխարհ տեսնել: Մարոն կապը կտրած հորթի նման,

ուր որ ասես, գնում էր, բայց ինքը պետք է տանից դուրս չգա, նրա համար, որ Մարոն դեռ աղջիկ էր, իսկ ինքը՝ հարս… Երևի այսպես էր մտածում Մարգարիտը, երևի, այսպես էր բողոքում նրա լռության դատապարտված լեզուն իր սրտի խորքում:

Եվ իրավ, հայ ընտանիքի մեջ խիստ տարբեր էր հարսի և դեռ չամուսնացած աղջկա վիճակը: Աղջիկը վայելում էր բավականին ազատություն: Նա, ում հետ ուզում էր, խոսում էր. նա կարող էր ոտքը շատ հեռու դուրս դնել հոր տան շեմքից, գնալ դրացիների տները, գնալ արտը, դաշտը, ուր որ ուզում էր ման գալ, իհարկե, պահպանելով համեստության բոլոր պատշաճը: Նրա երեսը ծածկված չէր քողով, և լեզուն արձակ էր: Իսկ այն օրից, երբ նա նշանվեցավ մեկի հետ, նա իր բոլոր հարաբերությունները կտրում էր դրսի աշխարհի հետ. նա դառնում էր իր տղամարդի սեփականությունը. նրա աշխարհը լինում էր ամուսնի տան չորս պատերը: Նրա բերանը փակվում էր, ոչ ոքի հետ խոսելու իրավունք չուներ, նրա երեսը ծածկվում էր թանձր քողով, ոչ ոքին ցույց տալու իրավունք չուներ: Նա ապրում էր իր ամուսնի համար, որպես նրա ծածկյալ և վարագուրված սրբությունը, որի ներսը նայելու օտար ոք կարող չէր:

Այս վիճակի մեջն էր գտնվում խեղճ Մարգարիտը:

Իր փակված դրությունը հարուցել էր նրա մեջ նախանձի նման մի բան դեպի ուրիշների ազատությունը, դեպի Մարոն, որ դեռ մանուկ աղջիկ էր, և դեպի պառավ Խաթունը, որ կյանքի համար անպիտանացած էր: Մանկություն և զառամություն — երկու հակառակ ծայրեր, որոնք ավելի չէին ենթարկվում ընտանեկան խստությունների պահանջներին:

Նույն ավուր երեկոյան պահն էր, որի մյուս առավոտը մենք պետք է ճանապարհ ընկնեինք դեպի վանքը: Ես գնացել էի ախոռատունը ձիս նայելու և պատանի Ատոյին — դա Մըհեի օգնականն էր — պատվիրելու, որ Մարոյի և Խաթունի նստելու ձիաների սարքը պատրաստեր, վաղ առավոտյան գարին տար, որ հովով ճանապարհ ընկնեինք: Դարձա իմ սենյակը, մութը բավականին թանձրացել էր: Մարոն ամեն օր այս ժամուն ճրագ էր ներս բերում. այսօր, երևի, այնքան զբաղված էր, որ մոռացել էր, թե ես նստած եմ խավարի մեջ: Մեծ եղավ իմ զարմանքը, երբ տեսա փոխանակ Մարոյին հայտնվեցավ Մարգարիտը ճրագը ձեռին: Մոր փեշից բռնած, ներս մտավ և փոքրիկ Սալբին — Հասոյի անդրանիկը — և մի այնպիսի վախկոտ երես էր շինել չորս տարեկան երեխան, կարծես երկյուղ ուներ՝ չիցե թե մորը խլեն իր ձեռքից:

Մարգարիտը ձգած ուներ կարմիր քողը գլխին, որ առջևից ծածկում էր նրա երեսը մինչև գոտին, իսկ ետևից՝ բոլոր մեջքը: Նա առանց քողը բարձրացնելու, լուռ գլուխ տվեց և դրեց ճրագն իր տեղում: Ինձ երևաց, որ նա չէր ուզում հեռանալ, որպես ասում են՝ ոտքը քարշ գցեց, կարծես ուզում էր մի բան ասել ինձ: Նա կանգնեց ինձանից փոքր-ինչ հեռու դռան մոտ, իսկ Սալբին տնկվեց մոր առջևը: Մայրը խթեց դստեր կողքը, դուստրն իր փայլուն աչքերը դարձուց դեպի նա և հարցրուց.

— Ի՞նց աշեմ:

Մայրը թեքվեցավ, Սալբիի ականջին փսփսաց մի խոսք:

— Աշա՛, ախպեր, ախար եշ էլ խեղճ եմ…

Սալբին շփոթվեցավ, նա մոռացավ մոր ասած պարբերության կեսը: Մայրը կրկին խթեց նրա կողքին և փսփսաց այս անգամ փոքր-ինչ լսելի ձայնով.

— Խորա՛ծ, էսպես չեն ասի:

Թարգմանը կրկնեց նրա խոսքերը.

— Խորա՛ծ, էշպեշ ցեն աշի:

Մայրը բարկանալով անհմուտ թարգմանի տգիտության վրա, այս անգամին ավելի սաստիկ խթեց նրա կողքին: Սալբին օրորվեցավ, ուզում էր ընկնել գետին, բայց հազիվ կարողանալով պահել իրան փոքրիկ ոտների վրա, տհաճությամբ հարցրուց.

— Բա՛, ի՞նցպեշ աշեմ:

— Գլուխդ թա՛ղեմ, գիժ սատանա, տե՛ս, էդպես ասա՛ — ախպեր, բա ես խեղճ չե՞մ, ամենը գնում են ուխտ, ես մնում եմ տանը:

Սալբին հաղորդեց ինձ.

— Գլուխդ թա՛ղեմ, գիզ շատանա…

Մայրը բամփեց դստեր գլխին, փոքրիկ թարգմանը լաց ելավ, և ձգելով իր անախորժ պաշտոնը, դուրս փախավ:

— Ես հասկացա, քույրս,— ասեցի Մարգարիտին:

Նա անշարժ և լուռ մնաց իր տեղում, սպասելով իմ վերջին խոսքին:

— Դու ուզում ես Մարոյի հետ ուխտ գնալ, այդպես չէ՞:

Նա գլուխը շարժեց հավանական եղանակով:

— Ինչո՞ւ Հասոն չէ ուղարկում և քեզ:

Նա այժմ շարժեց ուսերը, որ նշանակում էր, թե ինքն էլ չգիտե:

— Դու ցանկանում ես, որ ես խնդրե՞մ Հասոյից:

Նա գլուխ տվեց, իբր թե շնորհակալ կլինի: Նույն միջոցին ներս մտավ Մարոն: Նրա երեսի վրա երևեցավ զարմացման նման մի բան:

— Դո՞ւ այստեղ ինչ ես շինում,— հարցրուց Մարգարիտից:

Հարսը ձեռքով ցույց տվեց ճրագը, իբր թե ճրագն էր բերել:

— Մարգարիտն ուզում է գալ մեզ հետ,— ասացի ես Մարոյին:

— Թող գա, ավելի լավ: Բայց Հասոն ի՞նչ կասե:

— Ես Հասոյից կխնդրեմ:

Մարոն ուրախացավ, և դառնալով դեպի Մարգարիտը, ձեռքը տարավ դեպի նրա քողը, բարձրացնելով ասաց.

— Ումի՞ց ես երեսդ ծածկում, Ֆարհատի՞ց, ինչո՞ւ չես խոսում, քույրն եղբոր հետ չի՞ խոսի: Ֆարհատը ինչպես իմ, այնպես էլ քո եղբայրն է:

Մարգարիտը թեև շուտով քողը քաշեց երեսին, բայց ես կարողացա տեսնել նրա դեմքը, նա նմանում էր մի խամրած, դալկացած ծաղկի, որ երկար պահվել էր ծածկոցի տակ:

Մարոն կրկին ձեռքը տարավ դեպի նրա քողը: Մարգարիտը չկարողանալով դիմանալ նրա հանաքներին, մի բան ասաց Մարոյի ականջին և դուրս վազեց: Մարոն սկսեց ծիծաղել:

— Ինչ ասաց նա:

— Ասաց՝ «մեղք չէ՞, որ դու ասում ես՝ Ֆարհատն իմ եղբայրն է»:

— Ինչո՞ւ է մեղք:

— Տղան և աղջիկը երբ մեկմեկու հետ քույր ու եղբայր են դառնում, նրանք էլ…

— Չեն պսակվում:

— Հա՛: Մեր գյուղում մի տղա ու աղջիկ կային, խաչ-ավետարան համբուրեցին, քույր-եղբայր դարձան. հետո նրանց հերն ու մերն ուզեցին պսակել նրանց. նրանք չպսակվեցան, ասեցին՝ մեղք է. թեև մինչև հիմա էլ սիրում են մեկմեկու:

— Պսակվելու ժամանակ էլ խաչ-ավետարան են համբուրում:

— Բայց քույր-եղբայր չեն դառնում:

— Բա ի՞նչ են դառնում:

— Է՛հ, դու չե՞ս իմանում…

— Իմանում եմ: Դու շատ չար աղջիկ ես, Մարո, ի՞նչու այնպես արեցիր, երևի Մարգարիտը բարկացավ, որ նրա երեսը ինձ ցույց տվեցիր:

— Նա չի բարկանա: Մարգարիտը լավ սիրտ ունի. նա քեզ շատ է սիրում. երբ գնանք աստվածածին, ես ճանապարհին նրան քեզ հետ կխոսացնեմ: Այնտեղ քույր-եղբայր դարձեք, Ֆարհատ: Հետո նա քեզ հետ միշտ կխոսի, երեսը չի թաքցնի, բայց հիմա կարգ չէ, ամաչում է:

— Դու երբ որ հարս կդառնաս, դո՞ւ էլ երեսդ կծածկես, մարդու հետ չե՞ս խոսի:

— Բա ինչպե՞ս, դրա համար են հարս դառնում:

— Այդ բլբլացող լեզուդ ի՞նչպես պետք է լուռ պահես:

— Կսովորեմ: Ախար տղամարդը կծեծե, երբ կնիկը իր երեսը ուրիշին նշանց տալու լինի:

— Ես չեմ ծեծի…

Մարոն ծիծաղեց.

— Ուրիշներն ի՞նչ կասեն, չե՞ն ասի՝ անամոթ հարս է:

Ներս մտավ Հասոն: Նա իմանալով, որ մենք վաղ առավոտյան պետք է գնանք, եկել էր տան համար կարգադրություններ անելու:

Թեև խիստ դժվարությամբ, այնուամենայնիվ ես կարողացա Հասոյին համոզել, որ Մարգարիտին ևս մեզ հետ ուղարկե: Այժմ դժվարությունը մնում էր մի ուրիշ բանում: Ուխտավորների թվի վրա երկու հոգի ևս ավելացավ՝ Մարգարիտը և փոքրիկ

Սալբին, որ լսելով մոր գնալը, լաց եղավ, թե ինքն էլ է ուզում սուրբ աստվածածինը տեսնել: Ուրեմն մեր ամբողջ քարավանը կազմվում էր հինգ հոգուց: Նրանց թվի համեմատ գրաստները չորս հատ էին՝ իմ ու Հասոյի նժույգները, մի մատակ ձի և մի ավանակ: Ավանակը որոշված էր մեր պաշարները բառնալու համար. խեղճի բեռան վրա ավելացրին և Սալբիին: Հասոյի նժույգը և մատակ ձին Մարոյի և Մարգարիտի մեջ բաժանելով, պառավ Խաթունը մնում էր առանց երիվարի: Գյուղից գրաստ վարձել անկարելի էր, որովհետև գյուղացիներից և ոչ մեկը, բացի ծերունի որսորդից, ձիաներ և ավանակներ չունեին: Այս խնդիրը վճռեց ինքը Խաթունը, նա ասաց՝ եթե գրաստ ևս գտնվեր, ինքը դարձյալ ոտով կգնար, նրա համար, որ ուխտ է դրել յոթն անգամ հետիոտ սուրբ աստվածածին գնալ. վեցը կատարել է, մնում է մեկը: Թեև խիստ դժվար էր պառավի համար երեք օրվա ճանապարհը անցնել ոտով, բայց նա հավատացրուց, թե կկատարե առանց նեղացնելու իրան և ընկերներին: Մենք մեր կողմից խոստացանք՝ երբեմն վայր իջնել մեր երիվարներից և տալ պառավին, որ նստե հանգստանալու համար:

Ոչ սակավ տևեց վեճը Մարգարիտի և Մարոյի մեջ. նրանցից յուրաքանչյուրն ուզում էր հեծնել Հասոյի նժույգը, հաղթությունը տարավ, իհարկե, Մարոն. մատակ ձին որոշվեցավ Մարգարիտի համար:

Մարոն ուներ իր փոքրիկ փառասիրությունը. նա ուզում էր հայտնվել ուխտավորների մեջ, նստած գեղեցիկ նժույգի վրա, և ցույց տալ Հաղբակա աղջիկներին, թե ինքը նրանց երկրի «միրի» դուստրն է: Տղամարդերի մասին չէր մտածում. նա կամենում էր գրգռել իր ընկերուհիների նախանձը և նրանց ուշադրությունը գրավել:

«Միրը» մեծ նշանակություն ուներ հասարակության մեջ. նա ժողովրդի գլխավորը և ներկայացուցիչն էր, Հաղբակա հայերի «միրի» պաշտոնը վարում էր Մարոյի հայրը: Ամենքը կճանաչեին նրան, որպես դուստր այն մարդու, որ հասարակական դրության մեջ բռնել էր բարձր տեղ: Այդ պատճառով Մարոն աշխատում էր իր արտաքին փայլը հավասարեցնել իր հոր կոչման հետ: «Միրի» աղջի՛կ, մեծ բան էր Հաղբակում: Նա ոչ սակավ հոգ էր տանում և իր հագուստի ու պաճուճանքի մասին: Նրա զարդարանքները բաղկանում էին գույնզգույն հուլունքներից, քթի և ականջների օղերից, մատանիներից, պարանոցի մանյակից, գլխի արախչինից, նախշած ոսկի և արծաթի դրամներով, և արծաթյա քամարից: Վերջինը խիստ գեղեցիկ կերպով սազ էր գալիս բարակ մեջքին:

Նա մտածում էր և իմ մասին: Երևի, չէր ուզում, որ ես հայտնվեի ամբոխի մեջ իմ արդեն հնացած հագուստով: Այն օրից, որ ես փախա տեր Թոդիկի դպրոցեն, ես չէի փոխել իմ հագուստը, որովհետև ուրիշը չունեի: Գիշերից բավական անցել էր, երբ Մարոն, բոլորովին հոգնած, իմ մոտ եկավ: Նա հայտնեց, թև ինքը չէ ցանկանում, որ ես երևնայի ուխտավորների մեջ հնացած շորերով, ասաց, որ իր եղբայրը ունե մի ձեռք հագուստ բոլորովին նոր, որոնց ամենևին չէ հագել և ընծայեց ինձ հագնելու համար:

— Հասոյի շորերը իմ վրա չէին կարող նստել,— պատասխանեցի ես:— Հասոն ավելի հաստ է և հասակով կարճ. ես նրանից բարակ եմ և երկայն:

— Ես չեմ քնի, այս գիշեր կնստեմ, բոլորը կդրստեմ քո հասակի համեմատ:

Նա չափեց իմ հասակը և հեռացավ:

Հաղբակեցի կինը իր տան դերձակն է: Նրանց հագուստներն այնպես էին ձևված, որ մեծից փոքրի համար և փոքրից մեծի համար փոփոխելու միշտ հնար կար:

Հայերի համար շատ թանկ էր նստում ուխտագնացությունը:

Մի քանի գյուղի բնակիչները հավաքվում էին միասին, կազմում էին ամբողջ քարավան, շատ անգամ բաղկացած հարյուր-երկու հարյուր հոգուց: Մի այսքան բազմություն դարձյալ չէր կարող առանց վտանգի կատարել իր ճանապարհորդությունը. նրանք վարձում էին քրդի ձիավորներ, որ իրանց պաշտպանեն ավազակների հարձակումներից և մարդագլուխ վճարում էին մի նշանակյալ արծաթ: Բայց քիչ չէր պատահում, որ նույնիսկ պահապան քրդերի անհայտ ընկերները հարձակվում էին և կողոպտում էին ուխտավորների քարավանը: Պահապանները թեև ընդդիմություն էին գործում, բայց միայն ցույց տալու համար, թե իրանք ավազակների հետ առաջուց հարաբերություն չունեին:

Ուրբաթ օրը մենք ճանապարհ ընկանք, վաղ-առավոտյան, առանց քուրդ ձիավորների պահպանության, և ոչ խառնվեցանք գյուղացիների հետ: Մի այսպիսի համարձակությունը թեև հանդգնություն էր մեր կողմից, բայց նախ, իմ սնափառությունը չէր ներում ապավինել քրդերի պահպանությանը, երկրորդ, ծերունի որսորդի անունը, որ այնքան հարգված էր Հաղբակա մեջ, բավական էր նրա ընտանիքը քրդերի հարձակմունքից զերծ պահելու համար:

Քուրդը գիտե պատվել մեծությունը. նա ժողովրդի պետի վրա նայում է որպես աստուծո ձեռքին, որը հովանավորում է ժողովրդին: Ծերունի որսորդը Հաղբակա հայ ժողովրդյան գլուխն էր:

ԼԲ

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՎԱՆՔԻ ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Շաբաթ ավուր երեկոյան պահուն մենք հասանք վանք: Իմ առաջին հոգսն եղավ մեր վրանը կազմել մի հարմար տեղում, որ ուխտավորները հանգստանան: Մարգարիտը և Խաթունը շատ հոգնած էին, նրանք հենց որ տեղ հասան, դիակի պես վայր ընկան: Մարոյի հպարտությունը թույլ չէր տալիս ցույց տալ իր հոգնածությունը, նա օգնում էր ինձ վրանը կանգնելու միջոցին և ծիծաղում էր Մարգարիտի վրա: Փոքրիկ Սալբին իր ավանակից իջնելուն պես, վազեց դեպի վանքը, ասելով.

— Եշ գնում եմ աշվաճաճինը տեշնեմ:

Համաձայն Մարոյի ցանկության, ես վրանը կազմեցի մի երևելի տեղում: Քառորդ ժամից հետո ամեն ինչ սարքված էր:

Սուրբ Տիրամոր վանքը գտնվում էր Վանա ծովակի ափին, Լիմ անապատի հանդեպ, Կորդվաց լեռների մեջ: Հայաստանի վանքերից համարյա ամեն մեկը սեփականել է մի առանձին հրաշագործ զորություն, և ժողովրդի մեջ հռչակված է որպես այս և այն բժշկությունների մասնագետ: Կորդվաց երկրի սուրբ աստվածամայրը նշանավոր էր որպես բորոտության, քոսոտության և տեսակ-տեսակ խոցերի բժշկող: Նա ոչ միայն սրբում էր հուսով իր դուռը դիմող ուխտավորներին հիշյալ ախտերից, այլ բոլորովին առողջ մարդերի մեջ պատճառում էր նույն ախտերը, եթե նրանք բարկացնեին իրան, եթե անհնազանդ կգտնվեին դեպի իր վանականները, և կամ չէին լրացնի նրանց պահանջները: Այս պատճառով, ժողովրդի մեջ բորոտությունը, քոսոտությունը, մի քանի տեսակ խոցեր և կերցավը՝ կոչվում էին «տիրամոր յարա», այսինքն՝ տիրամոր վերք կամ խոցեր, որոնք հայտնվում են որպես պատիժ մարզիկների հանցանքի համար աստվածամոր կողմից:

Կորդվաց երկրի աստվածամայրը խստասիրտ էր և վրեժխնդիր: Նրա բարկությունը մարզիկներից անցնում էր և անասուններիվրա: Ընտանի կենդանիներից ամեն պիսակավորը համարվում էր նրա վանքին նվիրական, որովհետև սուրբ տիրամայրը դրել էր նրա վրա իր «նշանը»: Տերն իրավունք չուներ իր պետքերի համար գործածել իր կովը, եզը, գոմեշը, ձին և այլ չորքոտանին, եթե նրանց վրա գտնվում էր «տիրամոր նշանը», որը մի ուրիշ բան չէր, եթե ոչ մի քանի պիսակներ անասունի մարմնի որևիցե տեղում: Նա կամ պետք է ինքն իր անասունը ուղարկեր վանքը, և կամ սպասեր, մինչև վանքի «մղդսիքը» գային և տանեին: Ամեն տարի վանքի «մղդսիքը» պտտում էին գավառներում և հավաքում էին այսպիսի անասուններ: Ոչ մի հայ իրավունք չուներ գնել կամ վաճառել նրանց, որովհետև վանքի սեփականություն էին:

Վանքի մոտ կար մի գյուղ, որ կոչվում էր «վանքի գյուղ». նրա բնակիչները բոլորովին ծույլ և տխմար մարդիկ էին, ուրիշ պարապմունք չունեին, միայն ծառայում էին վանքին և կոչվում էին «տիրամոր մղդսիք»: Նրանց ապրուստի աղբյուրը վանքն էր:

Առանց ցավելու չէր կարելի նայել, երբ մի ամբողջ գյուղի ողորմելի բազմությունը նվիրել էր իրան միայն վանքի սպասավորությանը, դառնալով կույր գործիք նրա միաբանության ձեռքում: Տիրամոր «մղդսին» գրագետ մարդ չէ: Բայց նա գիտե ավետարանից ամբողջ գլուխներ, երգում է շարականներ, կարդում է եկեղեցական ընթերցանություններ, երբ նա, առած իր հետ վանքի սրբություններից մեկը, ման է գալիս գյուղից գյուղ, քաղաքից քաղաք, մտնում է ամեն ջերմեռանդ հայի տուն, վանքի սրբությունը բաց է անում, մաղթանք է կատարում, համբուրել է տալիս և ողորմություն է հավաքում:

Տիրամոր «մղդսիների» մուրացիկ թափառականները կարելի էր տեսնել ամեն տեղ: Ես դեռ հիշում եմ, երբ նրանք մեր տունն էին գալիս, բաց էին անում վանքի «սուրբ նշանը» – նա լինում էր՝ կամ մի խաչ, կամ մի որևիցե սուրբի մարմնի մասունքը,– որը դնում էին մաղի վրա, նրա չորս կողմից ձեռքով բռնում էին, և սկսում էին զանազան բաներ կարդալ: Մայրս ինձ, Մարիամին և Մագթաղին նստեցնում էր մաղի տակ, որի վրա դրած էր «սուրբ նշանը»: Այդ անում էր այն մտքով, որ մաղի ծակերից «սուրբ նշանի» օրհնությունը թափվեր մեր գլխին: Հետո նրանք «խաչալվա» էին անում, մեր երեսին օրհնած ջուր էին քսում, և շատ ուրիշ բաներ էին անում, որ այժմ մոռացել եմ…: Մայրս փող չէր ունենում, բայց դարձյալ տիրամոր մղդսիներին առանց մի բան տալու ճանապարհ չէր գցում, նա կտրում էր իր պարանոցի կամ գլխի զարդերից մի արծաթ և տալիս էր նրանց:

Վարդապետները վանքի սրբությունները տալիս էին մղդսիներին, ժողովրդի մեջ ման ածելու, զանազան պայմաններով՝ երբեմն վարձով, երբեմն կապայով, իսկ երբեմն այն դաշամբ, որ հավաքած գումարի մի մասը տային վանքին, մյուս մասը իրանք մղդսիքը վեր առնեին:

Բայց քիչ չէր պատահում, որ մղդսիները, օգուտ քաղելով ժողովրդի միամտությունից և նրա սնահավատությունից, դեպի չարն էին գործ դնում վանքի հավատարմությունը: Նրանցից շատերն ունեին իրանց տներում խաչեր և կեղծ, հնարած «սուրբ նշաններ» — դրանց ման էին ածում վանքի սրբությունների անունով:

Սուրբ տիրամոր հրաշագործությունը, զանազան բորոտություններ, խոցեր ու այլ փոխանցիկ հիվանդություններ բժշկելու մասին, ամեն տեղ հռչակված լինելով, ամեն կողմից բերում էին նրա վանքը այսպիսի ախտավորներին: Նրանք մնում էին այնտեղ տարիներով, իհարկե, քչերին էր հաջողվում առողջանալով իրանց տունը վերադառնալ, իսկ մեծ մասը անխնամ մնալով, ոչնչանում էին: Ես հիմա եմ

հասկանում վնասակար հետևանքը մի այսպիսի սնահավատության, որ մտցրել էին ժողովրդի մեջ վանքի աբեղաները: Հիվանդություններից շատերը փոխանցական լինելով, ուխտավորները վարակվում էին և տարածում էին ժողովրդի մեջ: Այս էր պատճառը, որ երբեմն բոլորովին առողջ ուխտավորը վերադառնում էր իր տունը ախտավորված. նա համարում էր այդ մի պատիժ, որ տվեց նրան տիրամայրը, գուցե իր մեղքերի համար…

Նույնիսկ վանքի գյուղացիները, անդադար հարաբերություններ ունենալով հիվանդների հետ, վարակվում էին: Ոչ մի տեղ չէ կարելի տեսնել այնքան բորոտներ, մարմնով և դեմքով այլանդակված մարդիկ, որքան վանքի գյուղում: Մի քանի տեսակ հիվանդություններ դարձել էին նրանց մեջ ժառանգական, անցնում էին սերունդից սերունդ, որպես էր հաշմանդամությունը:

Մովսես առանձին օրենքներ գրեց բորոտների և զանազան փոխանցական հիվանդություններ ունեցողների մասին: Եվ մինչև այսօր արևելցիք իրանց բնակությունից դուրս են քշում նրանց: Բայց սուրբ տիրամոր «մղդսին» ուրախ է լինում, երբ նրա կինը ծնում է մի զավակ բոլորովին այլանդակված կերպարանքով, այլ խոսքով ասած, զարդարված «տիրամոր նշաններով»: Մի այսպիսի հրեշավոր ցուցանքը բերում է հոր համար բավականին արդյունք: Նա դնում է իր որդին ավանակի վրա, ման է ածում երկրից երկիր, ցույց է տալիս աստուծո մոր սքանչելիքը, շարժում է, մարդկանց մեջ երկյուղ և ջերմեռանդություն,— փող է հավաքում…

Հիշյալ հիվանդությունները ունեցող թշվառները կոչվում էին «տիրամոր խեղճեր»: Դրանց ման ածելը ժողովրդի մեջ՝ սարսափ էր տարածում և ավելի էր շարժում տեսնողների հավատքը դեպի վանքը, և հետևապես բազմացնում էր ուխտավորների թիվը: Այս պատճառով վարդապետները ամենևին չէին արգելում մղդսիների խաբեությունները, որովհետև նրանց հետ կապակից էին վանքի ջահերը:

Հայերի մեջ անեծք է դարձել ասելը — «տիրամոր յարան (խոցը) ընկնի քո վրան»: Եվ առանց սարսափելու ոչ ոք չէ հիշում Կորդվաց լեռների սուրբ աստվածածինը…: Նա վրեժխնդիր է և խստասիրտ…

Ես էլ այն ժամանակ նույն մոլորության մեջն էի, ես էլ տոգորված էի նույն սնահավատության ախտով…: Ես էլ հավատում էի այս բոլորին…: Բայց երբ կարդացի Հայոց Պատմությունը, այն ժամանակ հասկացա, որ տիրամոր վանքի այս ավանդությունները և սովորությունները խիստ խորին կապ ունեին մեր պատմական անցյալի հետ, այն ժամանակների հետ, երբ Ներսես մեծը Տիրանի որդի Արշակի օրերով Հայաստանում հիմնեց բազմաթիվ վանքեր, նրանցից շատերը ծառայում էին որպես բորոտների և հաշմանդամների պատսպարաններ: Ժողովրդից հեռացրած այդ ախտավոր հասարակությունը ապրում է առանձին վանքերի մեջ, ուր նրանց խնամք էին տանում: Բայց այդ մարդասիրական սովորությունը, ժամանակների հետ փոխվելով, ստացավ բոլորովին ուրիշ նշանակություն, և ժողովրդի սնահավատությունը տվեց նրան մի այլ կերպարանք: Բայց 15 դար առաջ, այսինքն Ներսես մեծի օրերով, այսպիսի հիմնարկությունների նպատակը բոլորովին ուրիշ էր, բոլորովին մարդասիրական էր:

Տիրեց մթին գիշեր: Ուխտավորներից ոչ ոք դեռ քնած չէ: Վանքի շուրջը ընդարձակ տարածություն պատած է վրաններով, նրանց առջևից քարշ ընկած գույնզգույն լապտերները տալիս են այն ընդհանուր լուսավորությանը կախարդական բնավորություն: Վրանների ամեն մեկի մեջ զետեղված են ուխտավոր գերդաստաններ, իսկ շատերը մնացել են բացօթյա, իջևանելով բաց երկնքի տակ: Այս խառնիճաղանջ ամբոխի մեջ կարելի էր գտնել ամեն երկրի հայեր, սկսյալ Փոքր

Ասիայից մինչև Պարսկաստան, մինչև Արարատի գավառները: Իսկ Հաղբակա, Վանա, Մուշի, Բաղեշի բնակիչների մեծ մասն այնտեղ էին:

Ես դուրս եկա մեր վրանից տեսնելու, թե սալմաստեցիներից ովքեր էին եկած: Մարոն ցանկություն հայտնեց ինձ հետ գալու: Մարգարիտը և Խաթունը չափազանց հոգնած էին, մնացին վրանում: Փոքրիկ Սալբին արդեն քնած էր: Երկար ես ման էի գալիս Մարոյի հետ ուխտավորների բանակի մեջ: Ամեն տեղ շարժողություն կար, խառնվում էին, ամբոխվում էին, ամեն տեղ լսելի էր լինում երգ, աղաղակ, ծիծաղ, անեծք, աղոթք, և երբեմն մանուկ շրթունքների ջերմ սիրախոսություններ…

Կարդալով վերջին ժամանակներում Հունաստանի պատմության մեջ օլիմպիական, դելֆյան Ապողոնի և սպանդարամետական տոների մասին, միշտ ես հիշում էի իմ ուխտագնացությունը և սուրբ Տիրամոր վանքը: Ես հիշում էի նրա տոնախմբությունը, ուր սկսյալ խորին հեթանոսությունից, ժողովրդի հոգու մեջ մտած նախապաշարմունքները արտահայտվում էին իրանց բոլոր նախնական կերպարանքով: Ես երևակայում էի իմ մտքում միշտ մի այսպիսի պատկեր՝ քրիստոնեությունը հայտնված քուրմի զգեստով…

Ոչ մի նոր վարդապետություն բոլորովին չէ կարողանում ջնջել, անհետացնել ժողովրդի սրտից այն, որ թողել է անցյալը: Հեթանոսության ծեսերը, արարողությունները, պաշտամունքը դարերով արմատացել էին հայի հոգու մեջ, նրանք միացել էին նրա բնավորության հետ: Քրիստոնեությունը միանգամով սրբել Հայաստանը հին նախապաշարմունքներից կարող չէր, մինչև ժամանակը և կրթությունը չտար նրան մի նոր ձև և կերպարանք:

Մենք ման էինք գալիս ուխտավորների բանակի մեջ, ուր յուրաքանչյուր քայլում հանդիսանում էր մի նոր տեսարան: Մարոն լուռ էր. նա խիստ սակավ էր խոսում: Նա վազում էր մի տեսարանից մյուսը՝ որպես անհանգիստ թիթեռնիկը թռչում է մի ծաղկից դեպի մյուսը: Կարծես նրա հետաքրքրությունը ոչ մի բանի մեջ չէր կարողանում բավականություն գտնել. նա բոլորից էլ շուտով ձանձրանում էր:

Մի տեղ՝ *աշուղը* սազը ձեռին հանդես է մտել, նա իր նվագարանը սեղմած կուրծքին, ածում է, երգում է և պատմում է մի հին վեպ: Հեքիաթ սիրող բազմությունը, շրջապատած նրան, խորին ուշադրությամբ լսում է և քաջալերում է իր գովեստներով և ընծաներով ժողովրդական վիպասանին:

Մի տեղ հանդես են մտել երկու աշուղներ: Նրանք մրցություն են անում միմյանց հետ: Որպես մի զույգ համարձակ մենամարտողներ, տաքացած, բորբոքված կռվում են: Դա հանճարի և մտավոր ճարտարության կռիվ է: Նրանցից մեկը երգով առաջարկում է մի հարց, մյուսը պետք է իսկույն պատասխանե նույնպես երգով: Երկուսի երգեցողության հանգերը չափերը և եղանակը պետք է միաձև լինեն: Հարցը և պատասխանը կատարվում է զարմանալի արագությամբ, հանպատրաստից: Նա հաղթված է համարվում, երբ պատասխանում է անճիշտ կամ խիստ անագան: Հաղթողը խլում է իր հակառակորդի *սազը*, մուզաների նրան պարգևած քնարը — դա բանաստեղծի մրցանակն է:

Ես հետո շատ անգամ մտածում էի, երբ մինչև այսօր վանքերի տոնախմբությունների ժամանակ հայտնվում են աշուղները, որպես ժողովրդական բանաստեղծներ, ցույց տալու իրանց հանճարը և մրցանակ ստանալու,— չէ՞ որ դա միևնույն հին սովորությունն է, որ մնացել է կռապաշտական դարերից, երբ մեր երգիչները հայտնվում էին մեհենական տոներում: Բայց ո՞րտեղ մնացին նրանց ստեղծագործության պտուղները:

Մի այլ տեղ *սազանդարներն* ածում են զուռնա և նաղարա: Նրանք կանգնած են տափարակի վրա: Այնտեղ հավաքվել է զվարճասեր բազմությունը: Պար են բռնել. դա կոչվում է *յալլի* կամ *գուանդ*: Տղամարդիկ, կանայք և աղջիկներ, միմյանց ձեռքից բռնած, կազմել են մի բոլորակ շղթա: Նվագածուները կանգնած են բոլորակի կենտրոնում: Խայտաճամուկ շղթան պտտվում է նրանց շուրջը: Կնիկների երեսները քողարկած են, իսկ աղջիկներինը բաց են: Մի տղամարդ, գույնզգույն թաշկինակը ձեռքում, դրոշակի նման փռփռացնելով, տանում է պարագլուխը: Նա սկսել է մի *ջանգյուլում* և ամեն անգամ երգում է մի տուն, ամբողջ խորը կրկնում էր նրա խոսքերը:

Իսկ երբեմն երգում են հերթով: Այն ժամանակ մրցություն է լինում տղամարդերի և աղջիկների մեջ: Նրանք պատասխանում են միմյանց զանազան սրախոսություններով:

Պարի եղանակը կամ ձևը պահպանվում էր ոտքերի զանազան տեսակ շարժվածքներով: Երբեմն շղթայի բոլորակ շարքը ստանում է ոլոր-մոլոր ձև, այն ժամանակ կազմվում է մի կատարյալ լաբիրինթոս: Բայց երբեք խաղացողները չեն խառնվում միմյանց:

— Կուզե՞ս մենք էլ պար բռնենք,— հարցրի Մարոյից:

— ՉԷ՛, գնանք ուրիշ բաներ մտիկ անելու,— պատասխանեց նա:

Պատառելով խառնված ամբոխը, մենք անցանք վանքի գավիթը. այստեղ հանդիսանում էր մի այլ տեսարան:

Մարոն սարսափեցավ:

Այստեղ բազմությունը շրջապատել էր մի նորահարս կնոջ, որ ուշաթափ եղած, մոլեգնաբար թավալվում էր գետնի վրա: Նրա բերանը փրփրում էր, աչքերը վառվում էին վայրենի կրակով. մարմնի անդամները դողդողում էին, և կատաղի կերպարանքը ցույց էր տալիս, որպես թե նա տանջվում է մի աներևույթ զորությունից: Նա երբեմն իր դողդոջուն շրթունքի միջից արձակում էր խուլ, մթին և անկապ խոսքեր:

Նրան կոչում էին «ընկավոր»:

Մի վարդապետ փոքրիկ խաչը ձեռին կանգնած էր «ընկավորի» մոտ: Նրա մորուքի և շրթունքի ցնցողությունից երևում էր, թե աբեղան աղոթում է:

«Ընկավորը» կրկին ուշաթափ եղավ, մտավորապես հափշտակվելով մի վերին ազդեցությունից: Քանի րոպե նա մնաց անշարժ: Եվ ապա սկսեց արձակել խորին հառաչանքներ, արտասանել կցկտուր բառեր և կոչել հրեշտակների, դևերի, սատանաների, սուրբերի անուններ:

Վարդապետը դրեց «ընկավորի» բերնում փոքրիկ խաչը: Նա ագահ ախորժակով խաչը ներս է կլանում: Քանի րոպեից հետո վարդապետը ձգում է շղթայից, որին կապված էր փոքրիկ խաչը և դուրս է քաշում:

«Ընկավորը» փոքր-ինչ սթափվում է: Բայց տակավին նրա երեսը զարհուրելի է և աչքերն արտահայտում են սարսափելի վրդովմունք:

Վարդապետը դարձյալ նրա բերնումն է դնում խաչը և այս գործողությունը կրկնվում է երեք անգամ:

«Ընկավորը» բավականին զգաստացած, ձայն է տալիս:

— Վանեցի Շուշան-Խաթունը թող այստեղ հրամայե, «աղան» (աստվածամայրը) կանչում է:

Շուտով երևան է լինում Շուշան-Խաթունը լի ահ ու դողով: Դա մի հարուստ վաճառականի կին է, որ ավելի քան տասն տարի ամուսնացած լինելով, տակավին զավակ չունի:

«Ընկավորը» սկսում է բարբաջել.

— «Եղիսաբեթն ավետիս տվեց… կույս Մարիամը հղացավ… Գաբրիելը ուրախացավ… որդին արգանդումը ցնծացավ… Ո՞վ է, որ բաց է անում ամլության կապը… սուրբ տիրամայրն է այն…: Գոհացեք, ժողովուրդներ…: Ուրախ եղեք, ուխտավորներ…: Աստուծո ատյանը բացվել է… Լույսը վերևից կաթել է…: Երանի՛ տեսնողին… երանի՛ լսողին…»:

Վարդապետը սկսում է բացատրել «ընկավորի» խոսքերը. ասում է Շուշան-Խաթունին, թե «աղան» այսինքն՝ աստվածածինը, ընդունեց նրա խնդիրքը, թե նրա ամլության կնիքը ջնջվեցավ, և նա կծնե մի որդի, որը մինչև յոթը տարի պետք է նվիրված լինի վանքին, ամեն տարի նրա տոնախմբությունների ժամանակ կատարելով տիրամոր ուխտագնացությունը և ողորմություն տալով նրա «խեղճերին»:

Շուշան-Խաթունը ուրախանում է և արձակելով իր պարանոցեն ծանրագին շղթան, զարդարած ոսկի դրամներով, ձգում է «ընկավորի» առջևը:

Մարգարե կինը դարձյալ ընկնում է մտավոր հափշտակության մեջ: Նրա բերանը սկսում է փրփրել. երեսի վրա երևում են զարհուրանքի նշաններ: Նա մրմնջում է, որպես թե խոսելով մի աներևույթ էակի հետ: Վարդապետը գործ է դնում խաչի ներգործությունը: Նա փոքր-ինչ ուշի գալով, ձայն է տալիս.

— Մշեցի Գրիգոր աղային կանչեցեք:

Հայտնվում է Գրիգոր աղան:

«Ընկավորը» կարդում Է պատգամը.

— Անարժանի վարձն Է դաժան… Սև հավեր, կարմիր կատու… նա թո՛ղ լինի ինձ վարձատու…: Քո սիրտն ի՞նչու չէ ցնծում… չցանած տեղից դու չես հնձում…: Ալաք… բալաք… ա՛ռ… չորս կողմը զառ… մեջն աբրեշում… Գնա բե՛ր… Ուրախացիր…:

Վարդապետը բացատրեց պատգամախոսի գուշակություններն այսպես.

— «Ուրախացի՛ր»… վերջն էլի լավ եկավ, վերջն ուրախություն է:

Եվ նույն րոպեում աբեղայի խորամանկ դեմքի վրա երևաց մի կեղծ ժպիտ: Նա շարունակեց.

— «Ալաք, բալաք» նշանակում է գույնզգույն կամ զոլ-զոլ, այսինքն՝ կերպաս, աբրեշումի կերպաս, եզերքը զառով զարդարած: Դա տաճարի վարագույրն է: «Աղան» պահանջում է ձեզանից,— աբեղան դարձավ դեպի մշեցի Գրիգորը:— Դուք այսուհետև կուրախանաք, ձեր խնդիրքը կկատարվի: «Աղայի» տաճարի վարագույրը հնացել է:

Գուշակությունները մինը մյուսի ետևից շարունակվում էին: Զարմանալին այն էր, որ «աղան» իր պատգամախոսի բերանով կոչում էր ամեն երկրից եկած նշանավոր և հարուստ ուխտավորներին: Իսկ նրանք խորին երկյուղածությամբ լսում էին իրանց դատավճիռը:

Հետո գուշակողը ընկնում է բոլորովին ուշագնացության մեջ: Վարդապետները տանում են նրան, հավատացնելով, թե նույն գրության մեջ նա կմնա մի քարայրի մեջ մինչև վանքի գալոց տոնախմբության օրը:

— Խե՛ղճ,— ասաց Մարոն,— ի՛նչպես պետք է մնա այնտեղ, բա չի՞ մեռնի: Ֆարհատ, ես կուզեի, որ «ընկավորը» մի բան էլ ինձ համար ասեր: Դու չե՞ս հավատում:

— Հավատում եմ,— պատասխանեցի ես:

Իրավ որ, հավատում էի: Իսկ եթե Մարոն ա՛յժմ հարցներ ինձանից, նրան կասեի՝ այն ժամանակ, երբ մարդիկ կուռք էին պաշտում, Պյութիաս քրմուհին, իր եռոտանիի վրա կանգնած, այսպիսի պատգամներ էր կարդում: Դա ևս Հայաստանի հեթանոսական դարերից մնացած հին սովորություն է:

Մենք անցանք եկեղեցական մարգարեությունից դեպի ժողովրդական մարգարեությունը:

Հեռու, մի քարաժայռի վրա, նստած էր փոքրիկ աղջիկ: Նրա նիհար և բարակ երեսը, օծված ընկույզի յուղով, փայլում էր ջահի լուսով, որ վառվում էր նրա մոտ: Նա հագած ուներ մի տեսակ խայտաճամուկ և կախարդական զգեստ: Մանուկ օրիորդների բազմությունը շրջապատել էր նրան: Նա նույնպես գուշակում էր:

Մենք մոտեցանք:

— Դա այն աղջիկն է,— ասաց Մարոն:

— Հյուբբին: Այսպես կոչում են նրան:

Հյուբբին ճանաչեց թե ինձ և թե Մարոյին:

— Եկեք, գուշակեմ ձեզ համար,— նա դարձավ դեպի մեզ ժպտելով:— Ձեզանից փող չեմ առնի:

— Ե՞րբ եկար այստեղ: Ո՞ւր է քո մայրը,— սկսեցի ես շփոթեցնել նրան զանազան հարցերով:

Դեռ նա պատասխան չտված, հայտնվեցավ Սուսանը, կասկածավոր կերպով նայեց իմ երեսին, մռմռաց դեպի Հյուբբին մի քանի անհասկանալի խոսքեր: Փոքրիկ վիուկը վայր թռավ ժայռից, որի վրա նստած էր, և երկուսը միասին անհայտացան գիշերային խավարի մեջ:

— Ինչո՞ւ նրանք փախան, երբ տեսան մեզ,— հարցրուց Մարոն:

— Չեմ իմանում: Պառավ կախարդը միշտ զգուշանում է, որ Հյուբբին ինձ չհանդիպե,— պատասխանեցի ես:

— Իստա՛կ սատանա է այդ աղջիկը,— ասաց Մարոն:

— Նա հավատացնում էր, թե իր մայրը գողացել է նրան դևերի օրորոցից,— մեջ մտավ մի աղջիկ, որ կանգնած էր մեզ մոտ:— Դրուստ է ասում, եթե դևիկ չլինի, մի

այնքան պստիկ երեխան կարո՞ղ է ամեն բան գիտենալ: Նա ասաց ինձ բոլորը, ինչ որ կար իմ սրտում, ինչ որ ես արել էի…

Երբ հեռացանք բազմությունից, Մարոն ինձ ասաց.

— Կամ Կարոն, կամ նրա ընկերներից մեկն այստեղ պետք է լինի:

— Դու ինչի՞ց ես իմանում:

— Այդ կախարդ կինը և փոքրիկ վիուկը միշտ հետևում են նրանց: Որտեղ որ Կարոն լինում է, դրանք այնտեղ իսկույն հայտնվում են:

— Ես չեմ հասկանում, Կարոն և իր ընկերներն ի՞նչ գործ ունեն այդ բոշաների հետ:

— Ես էլ չեմ հասկանում,— պատասխանեց Մարոն:— Բայց մի բան ասեմ քեզ, Ֆարհատ, այն փոքրիկ վիուկը, որին կոչում են Հյուբբի, հայերեն խոսում է և խոսում է ինչպես մի հայ:

— Բոշաներն ամեն լեզվով խոսում են:

— Դա նրանց նման չէ: Մի անգամ ես ասեցի՝ Հյուբբի, ե՛կ մեր տանը մնա՛, ես քեզ կպահեմ, ինձ քույր կշինեմ: Նա ինձ ասաց, «չէ, ես մորս մոտ պիտի գնամ, մայրս ինձ շատ է սիրում»: Այս խոսքերը նա ասաց հայերեն լեզվով, բայց պառավը հենց որ լսեց, բարկացավ, շուտով հեռացրուց Հյուբբիին:

— Նա մի *կորած մայր* է պտռում, Մարո, բայց ո՞րտեղ է, հայտնի չէ, խեղճը միշտ հիշում է նրան:

— Այդ ես էլ իմանում եմ,— պատասխանեց Մարոն:

Դառնալով դեպի մեր վրանը, մենք անցանք «փորձության ձորի» միջով: Այնտեղ էր «վիճակի ժայռը»: Նա կոչվում էր «վիճակի ժայռ» այն պատճառով, որ նրա վրա ուխտավորները փորձում են իրանց բախտը: Նրանցից յուրաքանչյուրը մոտենում է ժայռին, առնում է գետնից քարի փոքրիկ կտոր և կպցնում է ժայռին: Եթե քարի կտորը մնա նրա վրա կպած, նշանակում է, որ նրա ուխտը ընդունելի է եղած: Իսկ եթե պոկ գալով, քարը վայր ընկավ, վիճակափորձը տխուր դեմքով հեռանում է խորհրդական ժայռից:

Մարոն մոտեցավ փորձելու իր բախտը, բայց այնքան բազմություն թափված էր այնտեղ, որ չկարողացավ տեղ գտնել: Մենք թողեցինք այդ մի ուրիշ ժամանակի:

ԼԳ

ԲՈՂՈՔ ՎԱՆԱԿԱՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Գիշերից բավական անցել էր, երբ դարձանք մեր վրանը: Պառավ Խաթունը անքուն պահապանի նման հսկում էր: Մարգարիտը քնած էր, փոքրիկ Սալբիին սեղմած ունենալով իր գրկում: Քնի մեջ նա մոռացել էր իր քողը, երեսը մնացել էր բաց: Պառավը տեսնելով իմ ներս մտնելը, նրա երեսը ծածկեց: Մարոն սկսեց ծիծաղել, որ ոչ սակավ բարկություն պատճառեց պառավի մեջ:

— Դու ոչ ահն ես իմանում, ոչ ամոթը, Մարո, միայն աստված գիտե, թե քո վերջն ինչ կլինի…— ասաց նա ծանր կերպով:

Մարոն ժպտաց և ոչինչ չպատասխանեց:

Մարոն թեև խոստացավ, թե կաշխատե, որ ճանապարհին Մարգարիտին խոսացնե ինձ հետ, կամ նրան իր երեսը բաց անել կտա ինձ մոտ, բայց հնար չեղավ. Մարգարիտը մնաց ինձ համար միշտ լուռ և վարագուրյալ կուռք:

Առավոտը պետք է լուսացներ տիրոջ կյուրակեն — տոնի մատաղ կտրելու օրը: Ահա այդ պատճառով, կեսգիշերից սկսած, ամեն մի ուխտավորի վրանի առջև, գետնում փորած հնոցի մեջ, վառվում էր կրակ, և նրա վրա դրած կաթսայի մեջ եփ էր գալիս մատաղի խաշլաման: Շոգին կաթսաների արտաշնչությունից լցրել էր օդը ախորժ-բարեպաշտական հոտով: Մի քանի տեղերում դեռ նոր էին մորթում զոհերը: Վանքի մղդսիները փութաջան եռանդով պտտում էին ուխտավորների բանակի մեջ, կատարելու նրանց պահանջները: Մղդսիներն էին վաճառում մատաղացու ոչխարները և մատուցանում էին ուխտավորներին ինչ որ նրանց պետք էր: Եվ դրանց մեջն էր վանքի սպասավորների օգուտը: Ամեն մի կտրած մատաղի ազդրը մղդսիների սեփականությունն էր, իսկ մորթը պատկանում էր վանքին: Եվ վարդապետների թիվը մղդսիներից պակաս չէր, որոնք հավաքում էին մորթերը:

Պառավ Խաթունը վաղուց գնել էր մեր մատաղացու ոչխարը, մի սպիտակ, անարատ խոյ:

— Ի՞նչ եղավ, ուշացավ վարդապետը,— ասում էր անդադար պառավը:— Չեկավ, որ աղը օրհնե:

— Ի՞նչ պետք է օրհնած աղը,— հարցրի ես:

— Կարծես, հայ-քրիստոնյայի տղա չլինի,— պատասխանեց պառավը կծու կերպով.— այսքանն էլ չէ իմանում, բայց հինգ տարի վարժատուն է գնացել, գիրք է կարդացել…

Մարոն ասաց՝ թե օրհնած աղը նրա համար է, որ ուտացնում են մատաղին, նախքան նրան զոհելը:

Վերջապես հայտնվեցավ վարդապետը: Նա այնքան զբաղված էր, որ հազիվ ժամանակ ունեցավ առնել իր ափի մեջ մի քիչ աղի փշրանք, որը մոտեցրուց իր բերանին, անլսելի ձայնով փնթփնթաց նրա վրա մի քանի խոսքեր — իհարկե աղոթք պետք է լիներ — և ապա տվեց աղը պառավ Խաթունին: Պառավը առեց աղը, վարդապետի աջը համբուրելով, և միևնույն ժամանակ կոխեց նրա ափի մեջ մի բան: Վարդապետը շնորհակալություն հայտնեց, օրհնեց և հեռացավ, ասելով՝ «ընդունելի մատաղ լինի, սուրբ աստվածածնի օրհնությունը ձեզանից անպակաս լինի» և այլն:

Աղն ուտացրինք ոչխարին, խեղճ անասունը այնպես ախորժանոք կերավ, ամենևին չմտածելով, թե այնուհետև որպիսի դառն վիճակ էր սպասում նրան:

Թեև ես երկար թափառեցի ուխտավորների բանակի մեջ, բայց տակավին իմ նպատակին հասած չէի. սալմաստեցիներից ոչ մեկին չտեսա: Վանքի մղդսին հայտնեց՝ թե նրանց քարավանը իջևանել է բլուրի մյուս կողմում, որովհետև սալմաստեցիք, ուխտավորների վերջինները լինելով, վանքի մոտակայքում տեղ չգտան: Երբ ես տվեցի նրան երկու ղուրուշնոցը, նա հանձն առավ տանել ինձ և ցույց տալ նրանց տեղը:

Եվ իրավ, յուրաքանչյուր երկրի ուխտավորների քարավանը իջևանել էր մի առանձին տեղում: Ամբողջ կես ժամ մենք անց էինք կենում այն ընդարձակ և խուռն բանակի միջով, դեռ վերջ չկար: Բայց մղդսի Թորոսը — այսպես էր իմ առաջնորդի անունը — դեռ գոհ չէր վանքի այն տարվա «հունձքով»՝ նա գտնում էր ուխտավորների թիվը շատ պակաս, անցյալի հետ համեմատելով:

— Վատացա՜ն ժամանակները, աղա,— ասում էր նա խորին կերպով հոգվոց հանելով:— Առաջ լա՜վ էին տարիները. կտեսնեիր, այստեղ սար, ձոր, դաշտ, ասեղ գցելու տեղ չկար, ամենը բռնած կլիներ ուխտավորներով: Հիմա նրա կեսը, կեսի կեսը չկա: Էլ ինչո՞վ պետք է ապրես: Տասներկու գլուխ քուլֆաթ կա իմ տանը, ամենից պստիկը հինգ տարեկան է: Հաց կուզեն, հալավ կուզեն, ո՞րտեղից բերես: Ինչ էլ որ ուխտավորներից ձեռքդ է գալիս, մեծ բաժինը մեր հայր սուրբերը խլում են. թե չտաս, վանքի գյուղից դուրս կանեն: Ի՞նչ պետք է անես նրանից հետո…

Մի քանի րոպե տխուր լռությունից հետո մղդսին շարունակեց.

— Իմ տղերքը իմ բախտից բոլորն էլ մարմնով ողջ դուրս եկան, գոնյա մեկն էլ «խեղճ» չեղավ, որ հոր դարդին դարման աներ…

Ես սարսափեցա, լսելով հոր մի այսպիսի անգութ ցանկությունը, որով կամենում էր, որ իր զավակներից մեկը «խեղճ» լիներ, այսինքն սուրբ աստվածածնի հրեշավոր ախտավորներից մեկը լիներ, մարմնով այլանդակված, որ կարողանար «հոր դարդին դարման անել»…

— Դու կուզե՞ր, որ մեկը «խեղճ» լիներ,— կտրեցի ես մղդսու խոսքը:

— Ի՞նչպես չուզես, աղա: «Խեղճին» ամեն անգամ զանազան երկրներ պտտացնելիս, կտար ինձ ավելի քան հինգ հարյուր ղուրուշ. դա բավական էր իմ տանը մի տարվա համար: Հիմա ի՞նչ բանի են պետք մեկելները, որ ողջ են, որ ձեռք և ոտք ունեն: Նրանցից խեր (օգուտ) չկա…

— Ի՞նչու ես դու ցանկանում, որ «խեղճը» անպատճառ քո որդիներից մեկը լիներ. այս վանքում խո շա՛տ կա, որին ուզենաս կարող ես տանել, ման ածել և փող հավաքել:

— Կարող եմ: Բայց դու կարծում ես, որ մեր հայր սուրբերն իրանց հոր հոգու համար կտա՞ն ինձ «խեղճին» ման ածելու: Չէ՛, եղբայր: Դրա համար նրանք կվերառնեն ավելի՝ քան թե ես կհավաքեի: Ինձ կմնար իմ չարչարանքը: Օրինակ քեզ, մղդսի Հակոն այս տարի տարավ «խեղճերից» մեկին Վանա երկրում ման ածելու. նա բերեց հազար ղուրուշից ավելի. բայց հարյուր ղուրուշ չմնաց իր ձեռքում: Բայց երբ «խեղճն» իմ մսից և արյունից կլինի, այն ժամանակ վարդապետները չեն կարող պարպել իմ քսակը…

Այժմ հասկանալի էր ինձ մղդսու ցանկությունը. նա կամենում էր շահվել իր «խեղճից», որպես իրան պատկանող սեփականությունից, և չէր ուզում վարձել վարդապետներից իր համար անօգտավետ պայմաններով: Թողյալ այդ, ես մղդսի Թորոսի խոսքերի մեջ նկատում էի ոչ միայն բողոք դեպի վանական աբեղաների հարստահարությունը, այլ մի դառն ատելություն դեպի նրանց սրբազան անձնավորությունը, որը չպետք է լիներ առանց իրական պատճառների:

— Երևում է, վարդապետները քեզ հետ այնքան լավ չե՞ն, մղդսի Թորոս:

— Վարդապետնե՛ր…— կրկնեց նա խորհրդական ձայնով:— Ի՞նչ կասես, եղբայր, դրանք մարդիկ չեն, իստակ սև սատանաներ են… Դրանք այն մղդսուն հաց կտան,

որ նրանց ամեն ասածին պատասխանե՝ «հա՛»: Բայց մղդսի Թորոսը մեկ դրուստ մարդ է, նա չէ կարող վատ բանին «հա՛» ասել…

Առհասարակ ես նկատում էի, որ մարդիկ այն ժամանակ միայն ջերմեռանդ են դեպի վանքերը և վանական աբեղաները, երբ նրանցից հեռու են: Որի ընդհակառակն, ես տեսնում էի, որ վանքերին մերձավոր ժողովուրդը չափազանց զզված էր նրանցից: Ի՞նչ էր դրա պատճառը, ես չգիտեի. միայն երևում էր նրանց մեջ մինչև անգամ թերահավատություն այն սրբազան տեղերի մասին, որոնք նվիրական էին ամեն մի հայի համար: Շատ անգամ մի գործարանի կառավարչի վատությունը ծնուցանում է հաճախորդների մեջ ատելություն դեպի նույնիսկ գործարանի հիմնարկությունը: Արդյոք այս օրինակը չէ՞ր վերաբերում և մեր աբեղաներին և մեր վանքերին:

Ես երեխայությունից ունեի փոքրիկ խորամանկություն, սատանայի պես մտնել մարդու դամարում, և որպես ասում են, նրա ուղեղը թափ տալ: Լսելով մղդսի Թորոսի վերջին խոսքերը, թե վարդապետները այն ժամանակ միայն վարձատրում են վանքի սպասավորներին, երբ նրանց կամքին հլու ծառաներ են դառնում, որոնք նրանց յուրաքանչյուր խոսքին, որքան և վատ լիներ նա, կպատասխանեն՝ «այո՛»,— ես սկսեցի ավելի հետաքրքիր լինել, թե ի՞նչ էր պատճառ տվել մղդսու դժգոհությանը: Նա թեև խիստ դժվարությամբ, այսուամենայնիվ պատմեց.

— Մենք երկու եղբայրներ էինք. իմ պստիկ եղբայրը պսակվեց, մի ամիս չանցավ, մեռավ: Նրա հարսը մնաց տանը այրի: Մեկ օր մեր Կարապետ հայր սուրբն ինձ կանչեց իր մոտ, ասաց՝ «Մղդսի Թորոս, քո եղբոր կնիկը ի՞նչ կանե տանը»: Ես պատասխանեցի,— հայր սուրբ, ծառա եմ աջիդ, ի՞նչ պետք է անե, իմ երեխեքին շորեր կկարե, կկարկտե, թոնիր կվառե, հա՛, այդպես տան բաներ կանե: Իմ կնիկը հիվանդ է, իմ երեխեքը նա կպահե»: Վարդապետն ասաց. «Այդ բաներից քեզ ի՞նչ խեր, դու քո եղբոր կնիկն ուղարկիր, թող գա վանքի ոչխարները կթե, այս գործից քեզ համար շատ շահմունք կլինի. եղից, պանրից, բուրդից իր համար «քալաֆուր» կանե: Քեզ էլ սուրբ սքանչելագործի մասունքը կտամ, կերթաս Թաբրիզու կողմերը, կպտտես»: Ես ուրախացա, այն ժամանակ մի քանի հարյուր ղուրուշ պարտք ունեի, մտածեցի, հա՛, աստված ողորմաց, պարտքերս կտամ: Մեկ էլ միտք արի՝ լա՛վ, իմ եղբոր կնիկը մեկ ամսվա ջահել հարս է, հալա իր մեռելի սևի մեջն է, ես ի՞նչպես թողնեմ, որ նա գնա վանքի ոչխարները կթե: Կասես թե, սատանան ինձ խելքից հանեց, ասեցի՝ ի՞նչ կա, մեր մղդսիների շատերի կնիկներն, հարսները վանքին ծառայություն կանեն, միաբանների համար հաց կթխեն, նրանց շորերը կլվան, կկարկատեն, վանքի պանիրը կմակարդեն, յուղ կհանեն, բուրդը կմանեն, ի՞նչ գլուխդ ցավեցնեմ — վանքի համար տանտիկնություն կանեն: Ու այն կնիկների տղամարդիկն ավելի պատիվ ունեն հայր-սուրբերի մոտ. լավ ուտում են, լավ խմում են, լավ հագնում են: Ինչո՞ւ մղդսի Թորոսը նրանցից պակաս մնա: Ես Կարապետ հայր-սուրբի հրամանը կատարեցի. իմ եղբոր կնիկը գնաց վանքի ոչխարները կթելու, ես էլ առա սուրբ սքանչելագործի մասունքը, գնացի դեպի Թաբրիզու երկիրը: Իմ ժողովարարությունը քաշեց ավելի քան կես տարի: Երբ դարձա տուն, տեսնեմ հարսը չկա:— Ո՞ւր է մեր հարսը, հարցնում եմ իմ կնկանից: Նա պատմեց, թե՝ «հարսն ամեն օր կգանգատվեր, չէր ուզի վանքը գնալ, հայր սուրբը մարդ կուղարկեր, կտաներ: Հայր սուրբը կասեր՝ «քեզ մղդսի Թորոսն է տվել, որ վանքի ոչխարները կթես, դու քո *խզմաթ* պետք է կատարես, մինչև նրա գալը»: Մեկ օր տեսանք՝ հարսը չկա, արևը մտավ, գիշերն անցավ, նա տուն չեկավ: Առավոտյան գնացինք սարը պտռեցինք, ձորը պտռեցինք, չկա ու չկա: Ո՞րտեղ կորավ, աստվա՛ծ: Գնացինք ծովի ափը. այնտեղ տեսանք հարսի մարմինը ծովի դալղաները գցել էին դուրս. նա խեղդված էր… Մորեն ոչ այնքան հեռու ընկած էր մի նորածին տղա, որին դաշտի գազանները պատռեր էին»…

Մղդսին ձեռքը տարավ դեպի երեսը, ինձ երևաց, որ նա սրբեց աչքերի արտասուքը, և ապա ձեռքը մեկնեց դեպի բլուրի ստորոտը, ասելով.

— Այստեղ են սալմաստեցի ուխտավորները:

Ես բաժանվեցա, ինձ հետ տանելով նրա պատմության տխուր տպավորությունը…

ԼԴ

ԿՐԿԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ

Մեծ եղավ իմ ուրախությունը, երբ սալմաստեցի ուխտավորների թվում գտա իմ մորը և քույրերիս: Նրանք եկել էին իմ քեռի Պետրոսի հետ, որը իր ընտանիքով նույնպես ուխտ էր եկած: Մորս վրանը կազմված էր քեռուս վրանին կից: Իմ հայրենակիցներից մեկը ինձ այնտեղ տարավ:

Մինչև այնօր երբեք չէր պատահել ինձ այնպես ջերմ կերպով զգալ մայրական սերը և քրոջ սրտի գորովական քնքշությունը, որպես այն րոպեում, երբ ես գտա իմ մորը և քույրերիս: Սկզբում նրանք մնացին բոլորովին ապշած, խոսք չէին գտնում խոսելու, և իրանց կարոտությունը հայտնում էին համբույրներով, գրկախառնությամբ և արտասուքով: Ես էլ չկարողացա պահել իմ սրտի զեղմունքը, և իմ աչքերում հայտնվեցավ արտասուք:

— Փա՛ռք քեզ, աստված, չմեռա և կրկին տեսա որդուս… քեզ մատաղ, բալաս… Ի՞նչպես դու թողեցիր մեզ, իմ աչքի լույս… ես ո՞վ ունեմ բացի քեզանից, Ֆարհատ ջան, դու որ չլինես, ինձ թող տանեն ողջ-ողջ գերեզմանը դնեն… Ի՞նչ էի արել քեզ, Ֆարհատ ջան, ինչո՞ւ հեռացար մեզանից…

Այսպես մրմնջում էր մայրս, մերթ ուրախանալով և մերթ լալով, իսկ քույրերս, Մարիամը և Մագթաղը չէին ուզում ինձ բաց թողնել իրանց գրկից:

Մայրս եկած էր ուխտ, որպես հիշեցի, իմ քեռի Պետրոսի ընտանիքի հետ: Այդ մարդն իմ հոգևոր հայրն էր, միևնույն ժամանակ մեր թաղի տանուտերը: Քեռի Պետրոսը Սալմաստի մեջ համարվում էր շատ փորձված, խոհեմ և խելացի մարդ, նա նշանավոր էր իր երկար ճանապարհորդություններով զանազան երկրներում:

— Ո՞ւմ հետ ես եկել, Ֆարհատ,— հարցրուց մայրս:— Դու ի՞նչ գիտեիր, որ մենք այստեղ ենք:

Ես պատասխանեցի, թե եկած եմ որսորդ Ավոյի ընտանիքի հետ, հայտնեցի՝ թե ովքեր են նրանցից եկածները: Մարիամը և Մագթաղը շատ ուրախացան, երբ լսեցին, թե Մարոն էլ ուխտավորների թվումն է:

— Ֆարհատ ջան, տար մեզ տեսնենք Մարոյին,— ասաց Մարիամը:

— Դու խո կթողնե՞ս, մայրիկ, գնանք Մարոյին տեսնենք,— ավելցրուց Մագթաղը:

Ես առաջարկեցի և մորս գալ ծերունի որսորդի ընտանիքի վրանը և նրանց հետ միասին լինել մինչև տոնախմբության վերջը: Մայրս պատասխանեց, թե անհարմար կլիներ քեռի Պետրոսի ընտանիքից բաժանվել, գուցե կվիրավորվեին նրանք: Բայց երեխերքը, որ ցանկանում էին Մարոյին տեսնել, կարող էին գնալ, միայն պետք է գիշերը չմնան նրանց մոտ, այլ շուտով վերադառնան. իսկ ինքը առավոտյան պատարագից հետո կգա Խաթունին և Հասոյի նշանածին տեսնելու: Եվ ավելցրուց,

թե ինքը միշտ գոհ է եղել ծերունի որսորդից, և համարում է որսորդին շատ բարի մարդ. և նա փոքր-ինչ հանգիստ էր իմ մասին նրանով միայն, որ գիտեր, թե ես գտնվում եմ որսորդի տանը:

— Դու ո՞րտեղից գիտեիր, մայրիկ:

— Ինքը որսորդը մարդ էր ուղարկել ինձ մոտ, քո մասին իմացում տալու:

— Եվ դու գիտե՞ս, թե ինչպես հայտնվեցա ես այնտեղ:

— Կարոն քեզ տարավ: Ես բոլորը գիտեմ…

Վերջին խոսքը արտասանելու միջոցին մորս ձայնը դողաց: Չգիտեմ ինչո՞ւ Կարոյի անունը նրան վրդովմունք պատճառեց:

— Կարոն շատ լավ տղա է, մայրիկ:

— Լավ է, բայց… Թող մնա, ես հետո կխոսեմ նրա մասին…

— Հայտնվեցա՛վ փախստականը,— լսելի եղավ քեռի Պետրոսի որոտացող ձայնը, որ նույն միջոցին ներս մտավ մորս վրանը, ուր նստած էինք մենք:

Ես կանգնեցա, և պահպանելով այն ժամանակի քաղաքավարության ձևը, համբուրեցի քեռուս ձեռքը: Նա համբուրեց իմ ճակատը և նստեցրուց իր մոտ:

Քեռի Պետրոսը գտնվում էր իր հոգու խիստ ուրախ տրամադրության մեջ. ինձ երևաց, որ նա փոքր-ինչ հարբած էր: Նա տարել էր իր գերդաստանը ման ածելու և դառնում էր զբոսանքից: Նա դարձավ դեպի ինձ այսպիսի անկապ խոսքերով.

— Ի՞նչ ես շինում դու, լա՛վ ես, ի՞նչ է անում *հին աղվեսը*…մարդիկ այստեղ հոգու համար են գործում, իսկ «նա» այնտեղ եզիդիների իշխանի մոտ, աստված ոչ գիտե, ի՛նչ սատանայական որոգայթներ է լարում… և իր «ճտերին» երկրի զանազան կողմերն է ուղարկում… Ինչի՞ համար, ի՞նչ դուրս կգա այս հիմարություններից… Եվ դու, քամի փչող ընկեր, լա՛վ տեղն ընկար, ինչպես մուկը մկնորսակի մեջ…

Ինձ պարզ հասկանալի էր, թե քեռի Պետրոսի հեգնական ակնարկություններն ումն էին վերաբերում: Նա խոսում էր որսորդ Ավոյի և նրա հյուրերի՝ իմ ընկերների մասին: Բայց ո՞րտեղից գիտեր նա, թե որսորդը կամ նրա խոսքով՝ «հին աղվեսը» գնացել էր եզիդիների իշխանի մոտ. այդ մի գաղտնիք էր, որ ես նույնպես չէի կարող իմանալ, եթե Կարոյի նամակն իմ ձեռքը չընկներ: Եվ ո՞րտեղից հայտնի էր նրան, թե ծերունի որսորդի «ճտերը», այսինքն՝ Կարոն իր ընկերների հետ, գնացել էին զանազան կողմեր: Եվ ի՞նչ կասկածավոր մի բան կար նրանց վարմունքի մեջ, որը, որպես երևում էր, ընդդեմ էր քեռի Պետրոսի համակրությանը: Այս հարցերն ինձ համար բոլորովին հանելուկներ էին: Այնուամենայնիվ, ինձ խիստ անհաճո երևեցավ քեռի Պետրոսի արհամարհական խոսքերն այն մարդկանց մասին, որոնց ես շատ պատվում էի: Ես ուզեցի, որպես ասում են՝ նրա բերնի համը տալ, բայց այն միջոցին ներս մտավ վանքի աբեղաներից մեկը: Դա Կարապետ հայր սուրբն էր, այն վարդապետը, որ այնպես անխիղճ կերպով անբախտացրել էր մղդսի Թորոսի հարսին, և երկու թշվառ զոհերի մահվան պատճառ էր դարձել…

Մարիամը և Մագթաղը վաղուց ինձ աչքով լուռ նշաններ էին անում, որ շուտ վերջացնեմ քեռի Պետրոսի հետ: Նրանք շատ ուրախացան, որ աբեղայի հայտնվելն ընդհատեց մեր խոսակցությունը, և ես դուրս եկա վրանից:

— Դու էլի կգա՞ս մեր մոտ, Ֆարհատ,— հարցրուց քեռի Պետրոսը:

— Իհարկե,— պատասխանեցի ես:

— Լավ, գնա:

Աբեղան և քեռի Պետրոսը նստեցան միմյանց շատ մոտ և մեզ բոլորովին անլսելի ձայնով խոսում էին:

Մայրս նույնպես վրանից դուրս եկավ ինձ հետ: Նա ասաց, թե շատ կցանկանար, որ ես նրա մոտ մնայի, բայց որովհետև ծերունի որսորդի ընտանիքը եկած են առանց տղամարդի, չէ ուզում ինձ բաժանել նրանցից, միայն ցանկանում է, որ ես գոնյա ցերեկներն անցուցանեմ նրա մոտ, իսկ գիշերները Մարոյի և Մարգարիտի մոտ մնամ, չիցե թե նրանց մի վտանգ պատահի որովհետև ուխտավորների մեջ շատ անկարգություններ էին լինում:

— Բայց թող քույրերս այս գիշեր մնան ինձ մոտ,— խնդրեցի մորիցս:

— Հա՛, մայրիկ, մենք կմնանք Մարոյի մոտ,— ասաց Մարիամը:

— Լավ, մնացեք,— ասաց մայրս,— և կրկին ինձ համբուրելով, ճանապարհ դրեց:

Երբ փոքր-ինչ հեռացանք սալմաստեցի ուխտավորների իջևանից, ես քույրերիցս հարցրի, թե մեր քաղաքացիներից ո՞վքեր են եկած:

Նրանք հայտնեցին մի քանի անուններ, իսկ Մարիամը ավելացրուց.

— Գիտե՞ս, Ֆարհատ, Սոնան էլ եկել է մեզ հետ. նրա հայրն էլ, եղբայրն էլ եկել են: Հիմա ի՞նչ կասի, երբ որ տերտերը քեզ կտեսնե:

— Ինչ պետք է ասի,— պատասխանեց Մագթաղը ծիծաղելով:— Կբռնե ականջներիցը ձիգ կտա ու կասե՝ Ֆարհատ, ինչո՞ւ փախար վարժարանից:

— Նա չէ կարող, հիմա ես նրա ականջներից ձիգ կտամ,— պատասխանեցի ես:

— Վա՛յ, մեղք չէ՞, ախար նա տերտեր է:

— Ֆարհատը հանաք է անում,— խոսեց Մարիամը:

— Սոնան գիտե՞, որ այստեղ եմ,— հարցրի ես:

— Նա չէ իմանում, նա այսօր առավոտյան ինձ ասում էր՝ «Էրնե՛կ Ֆարհատն այստեղ լիներ»:— Նա շատ ուզում էր քեզ տեսնել: Ինչո՞ւ էր ուզում, Ֆարհատ,— հարցրուց Մարիամը:

— Չեմ իմանում… Բայց ո՞րտեղ են վեր եկել նրանք:

— Չտեսա՞ր դու, նրանց չադրը կպած էր մերին: Նրանք էլ քեզ չտեսան, չեմ իմանում, ուր էին գնացել, այնտեղ չէին,— ասաց Մարիամը:

Քույրերս պատմեցին մեր քաղաքից մի քանի նորություններ, որոնց թվում հայտնեցին և վարժապետիս կնոջ՝ ողորմելի Գյուլ-Ջհանի մահը: Ես մի կողմից ուրախացա, որ խեղճ կինը ազատվեցավ իր տանջանքներից, որով չարչարվում էր նա այնքան շատ տարիներ, խիստ հազիվ բաժանվելով հիվանդության մահճից: Բայց ինձ վրա խիստ տխուր տպավորություն գործեց, երբ Մագթաղը ասաց, թե մեր

քաղաքում այնպես լուր էր տարածվել, իբր թե տերտերակնոջ մահվան պատճառն եղել է տեր Հոր սաստիկ ծեծը, որին արժանացրել էր քահանան իր կնոջը նրա մահվանից մի քանի օր առաջ: Ես առանց երկբայության հավատացի, մտաբերելով, թե ո՞րպես բարբարոսաբար ծեծում էր նա ինձ և իմ ընկերներին: Եվ մի այսպիսի մարդը, որպես վարժապետ և քահանա, առաջնորդում էր մի ամբողջ քաղաքի ուխտավորներին դեպի աստուծո մոր տաճարի երկրպագությունը…

Որպես իմացա քույրերիցս, տեր Թոդիկը, բացի Սոնայից, բերել էր իր հետ և իր որդի Ստեփանին: Խեղճ տղայի խելացնորությունը, վերջին օրերում ավելի սաստկացած լինելով, հայրը բերել էր նրան սուրբ աստվածածնի վանքը այն մտքով, որ թողնե Ստեփանին մնալու վանքի «խեղճերի» մեջ, այնտեղ բժշկվելու համար: Նա այժմ համարում էր Ստեփանի խելացնորությունը տիրամոր պատիժներից մեկը: Որքան ճիշտ էր այդ կարծիքը, ես չգիտեի, բայց ես գիտեի մի բան, թե ո՛րպես Ստեփանի հայրը չարաչար կերպով վարվում էր նրա հետ, ո՛րպես նրա երեխայության ժամանակ, իբրև պատիժ, կախ էր տվել խեղճ տղային ջրի հորի մեջ, նա մնացել էր այնտեղ կես ժամ, և այնուհետև Ստեփանի խելքը տեղը չեկավ. նա միշտ ցնորվում էր, երբ ջուր կամ հոր էր տեսնում…: Այս ես գիտեի…

Ես շատ ուրախ էի, որ գնալով մորս մոտ, քեռի Պետրոսի վրանը, չհանդիպեցա վարժապետիս: Ինձ խիստ անտանելի էր մյուս անգամ տեսնել այն մարդու երեսը, որը այնքան դառն ցավերի պատճառ էր եղել ինձ:

Հասնելով մեր վրանը, գտանք պառավ Խաթունին և Մարգարիտին քնած. Մարոն արթուն նստած սպասում էր ինձ:

Ես չեմ կարող նկարագրել այն ուրախությունը, որով Մարոն հանդիպեց իր երեխայության երկու ընկերուհիներին, նրանց միմյանց հետ փաթաթվելը, նրանց պարզ ու անմեղ սրտերի արտահեղությունը, նրանց անկեղծ շրթունքների մրմունջը բարձր է գրչի զորությունից. այդ միայն պետք է տեսնել և գդալ:

Հայկական աղջկա սրտի մեջ կա մի բան, կատարյալ հրեշտակային, որ մնում է միշտ անհասկանալի հասարակ մահկանացուների համար: Նա այնպես մաքուր և սրբազան է, որպես մի անարատ աստվածություն, նա արտափայլում է իր ջերմ լուսով, նա բուրում է իր անուշ հոտավետությամբ, բայց նա միշտ մնում է անշոշափելի…

ԼԵ

ՔՈՒՐԴԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՍՐԲԱՐԱՆԻ ՄԵՋ

Աստուծո լույսը բացվեցավ: Օրը կյուրակի էր: Առավոտյան մայրս եկավ մեզ մոտ, մենք բոլորս միասին գնացինք վանքը ժամ: Մեր վրանումը մնաց միայն պառավ Խաթունը, մատաղն եփելու համար:

Ուխտավորների բանակը գտնվում էր իր ջերմեռանդ-բարեպաշտական վրդովմունքի մեջ: Ամեն տեղ երևում էր շարժողություն, ամեն տեղ եփ էր գալիս բորբոքված հավատքը, իր բոլոր աստվածային կարողությամբ: Բազմությունը շտապում էր դեպի վանքը պատարագ տեսնելու և սուրբ տիրամոր գերեզմանը համբուրելու: Այն խառնիճաղանջ ամբոխի մեջ կարելի էր տեսնել ամեն երկրի հայեր, ամենատեսակ գլխարկներով, սկսած օսմանլվի ֆեսից, քրդի ապարոշից, մինչև պարսկի երկայն,

մորթե գդակները: Կանայքը նույնպես զանազանվում էին տեսակ-տեսակ հագուստներով, ամեն երկրի կինը ընդունել էր տիրող ազգի կանանց զգեստի ձևերը:

Հայը միշտ սիրում է նմանել: Նա չէ պահպանում իր ինքնուրույն, հատկանիշ առանձնությունները:

Ուխտավորների մեջ լեզուները մինչև անգամ բաժանված էին բարբառներով. մեկի խոսակցությունը մյուսին համարյա անհասկանալի էր: Ցավալին այն էր, որ շատերը խոսում էին այն ազգի լեզվով, որի լծի տակ ապրում էին, բոլորովին մոռանալով մայրենի խոսքը: Ինձ երևում էր, իբր թե այն բազմազան ամբոխի մեջ ազգային ամբողջությունը իսպառ քայքայվել էր, և քանդվել էին նրա մեջ միավորիչ հոդերը…

Բայց մի կապ, որ դեռ պահպանվել էր, մի կապ, որ միավորում էր այն խորտակված ամբողջության զանազան կտորտանքը, մի կապ, որին չէր կարողացել խզել բռնակալի սուրը, դա էր կրոնքը և եկեղեցին:

Բայց կարո՞ղ էր պահպանվել այս կապը միշտ անխզելի, իր աստվածային ամուր հաստատության մեջ, երբ նրա հոգատարներն էին՝ Կարապետ հայր սուրբի նման աբեղաներ և տեր Թոդիկի նման քահանաներ…

Եվ այժմ դառն մտածմունքներ պաշարում են ինձ, երբ ծագում է իմ գլխում այդ հարցը…:

Սուրբ տիրամոր տոնախմբությունը մի կատարյալ տոնավաճառ էր, ուր գլխավորապես երկու դաս *վաճառականներ* հանդես էին հանել իրանց մթերքը և կարծես, աննկատելի կերպով միմյանց հետ մրցություն էին անում:

Վաճառականների մի դասը բաղկացած էր վանեցի առևտականներից, իսկ մյուսը՝ վանքի աբեղաներից:

Վանեցին դարսել էր հրապարակի վրա զանազան տեսակ մանրուքներ, կանանց հասարակ զարդեր, գույնզգույն փարչաներ, մի խոսքով, այնպիսի խայտաճամուկ ապրանքներ, որոնք կարող էին հրապուրել գնողներին, և մինչև անգամ ամենախնայող ժլատի քսակից դուրս քաշելով մի քանի ղուրուշներ: Ծախողը կանգնած էր իր մթերքների մոտ և բարձրաձայն գովաբանում էր իր վաճառքի լավ հատկությունները:

Անցնելով վանեցիներից, գալիս է աբեղա-վաճառականների կարգը, և քո առջև բացվում է մի ահագին հիմնարկություն՝ վանքը: Դա բովանդակում է իր մեջ մի հանդիսարան…

Մտնում ես վանքի գավիթը: Այստեղ, վանքի դռան երկու կողմերից սկսած, մինը մյուսի մոտ զուգահեռաբար նստած են «խեղճերը»: Նրանց երկու կարգ շարվածքի միջով բացվում է մի քուչա, որ տանում է դեպի վանքի դուռը: Նույն քուչայով անցնում են ուխտավորները: «Խեղճերի» այլանդակված կերպարանքները բերում են անցորդի վրա զարհուրանք, միևնույն ժամանակ լցնելով նրա սիրտը մի պատկառելի երկյուղածությամբ դեպի մեծ աստվածուհու վեհությունը, որ ցույց էր տվել իր նշանները այն թշվառների վրա:

Երբ մենք անցնում էինք «խեղճերի» միջով, մի պատանի, մաշված և գունաթափ երեսով, գեղեցիկ երկնագույն աչքերով, և շեկ-մետաքսանման մազերով, վեր թռավ տեղից և գրկեց ինձ, ասելով.

— Ֆարհատ, ես վախում եմ դրանցից…

Պատանին ցույց տվեց «խեղճերին», որոնց կարգում նստացրել էին և իրան:

Ես ճանաչեցի. նա տեր Թոդիկի որդին՝ Ստեփանն էր:

Մինչև իմ խոսելը, շուտ վրա հասավ աբեղաներից մեկը, որ կանգնած «խեղճերի» մոտ պատմում էր անցորդներին, թե նրանցից յուրաքանչյուրն ինչ հանցանքի համար ենթարկված էր տիրամոր պատժին: Աբեղան, ինձանից հեռացնելով Ստեփանին, ստիպեց նստել իր տեղը: Պատանին ողորմելի կերպով նայեց մեզ վրա և գլուխը քարշ գցեց: Խե՜ղճ տղա, ընտանիքը, որ անբախտացրել էր նրան, բավական չէր, որ չէր զգում իր բարբարոսությունը, այժմ բոլորովին դուրս էր գցել թշվառ զոհին իր միջից:

Մենք մտանք վանքի մեջ: Այստեղ տաճարի սուրբ սեղանի վրա կարգով շարած էին՝ արծաթի և ոսկու մեջ պատած սրբոց մասունքներ և զանազան տեսակ մեծ և փոքր խաչեր: Ուխտավորները հերթով մոտենում էին, համբուրում էին և գցում էին նրանց մոտ դրած թասերի մեջ փողեր:

Համբուրելով սուրբ մասունքները, մենք անցանք երկրպագություն տալու աստուծո մոր գերեզմանին:

Ամեն տեղ դրած են գանձանակի թասերը, որոնց մեջ ուխտավորները գցում են իրանց նվերները: Աբեղան, կանգնած գանձանակի թասերի մոտ, պատմում է սրբությունների հրաշալի զորությունը, շարժվում է ուխտավորների ջերմեռանդությունը, և ուժ է տալիս նրանց առատաձեռնությանը:

Այս բոլորն ինձ վրա այն տպավորությունը չէր գործում, ինչ որ այժմ գրում եմ. դա վերջին ժամանակներում, շատ տարիներից հետո, հին տպավորությունների այլակերպված արտագրությունն է: Իսկ այն ժամանակ ես էլ, նախապաշարմունքներով լի, նույն սնահավատ ուխտավորներից մեկն էի: Ես մինչև այսօր չեմ կարող մոռանալ այն ուրախությունը, երբ Մարոն, տալով ինձ Մարգարիտի ձեռքը, ասաց.

— Հիմա համբուրվեցեք և քույր-եղբայր դարձեք:

Ես և Մարգարիտը միասին համբուրեցինք սուրբ մասունքները և այն օրից ուխտեցինք մնալ միմյանց հետ որպես քույր և եղբայր: Մարոն համբուրվեց Մարիամի և Մագթաղի հետ, իսկ մայրս պառավ Խաթունի հետ, որ վերջացնելով իր գործը, եկել էր ժամ:

Տիրամոր վանքի ներսի կազմակերպությունը ուներ նույն ձևը, որը տեսնվում է այս կողմերում այն վանքերի մեջ, որոնց շինության հնությունը հասնում է մինչև հինգերորդ դարը, այսինքն՝ տաճարը բաժանված է նախագավիթից, որ կոչում են դարպաս: Ժողովուրդը կանգնած է դարպասի մեջ, իսկ տաճարում կատարվում է ժամերգությունը, այնպես որ, հանդիսականները դպիրներին չեն տեսնում: Մի դուռ միայն տաճարից բացված է դարպասի մեջ, որտեղից պատարագիչը երբեմն դուրս է երևում, խորհուրդը կատարելու ծեսերին համաձայն:

Տաճարի մեջ կատարվում էր սուրբ սեղանի խորհուրդը. թեև պատարագիչը չէր երևում, բայց ես իսկույն նրա ձայնից ճանաչեցի վարժապետիս՝ տեր Թոդիկին: Թույլ տալ մի օտարերկրյա քահանայի պատարագ մատուցանել վանքի բեմի վրա, այն ևս մի այնպիսի հանդիսավոր օրում, դա մեծ շնորհ էր վանահոր կողմից դեպի տեր Թոդիկի անձնավորությունը: Դա ուներ և իր նյութական օգուտը, որովհետև, ո՞րքան բազմաթիվ ձեռքերից նա այնօր նվերներ ընդունելու էր նրանց անունները սուրբ սեղանի վրա «հիշելու» համար…

Այս իրողությունը դարձրուց իմ առանձին ուշադրությունը դեպի տեր Թոդիկը:

Մի այլ երևույթ, որ ոչ սակավ գրավեց իմ ուշադրությունը, այն էր, որ այնտեղ, ուր բեմի վրա շարած էին վանքի սրբությունները համբուրելու համար, վարդապետների թվում կանգնած էր մի քուրդ, և հսկում էր նվերների վրա, որ համբուրող ուխտավորները ընծայում էին: Մի այլ քուրդ ևս նույն պաշտոնով կանգնած էր տիրամոր գերեզմանի մոտ:

Ինձ ասացին, թե քրդերը Հեյդար աղայի մարդիկն են, որոնք պահպանում են ուխտավորներից նվիրված արծաթը, որ վարդապետները անհավատարիմ կերպով չվարվեն նրա հետ, և աղան կարողանա ամբողջությամբ ստանալ իր մասը, որ նշանակված է նրա համար տոնի եկամուտից: Եվ ասացին, թե ինքը Հեյդար աղան գտնվում է վանքում և վանահոր մոտ հյուր է:

Ինձ վրա խիստ դառն տպավորություն գործեց, որ քրդի ոտքը անցնում էր մինչև անգամ քրիստոնեական սրբարանի շեմքից, և նա միջամտություն էր գործում եկեղեցականի տնտեսության մեջ:

Մինչ ինձ խոռվում էր այս մտածությունը, զգացի, որ իմ ետևից մեկը հանդարտ կերպով փեշս քաշեց: Շուռ եկա, տեսնեմ Սոնան կանգնած էր իմ մոտ, խոսում էր Մարոյի հետ: Բազմությունն այնքան սեղմված էր մինը մյուսի վրա, որ Սոնայի արարմունքը մնաց աննկատելի: Նա իր հոնքի շարժմունքով նշան տվեց և շարունակեց խոսել Մարոյի հետ: Ես հասկացա, նա ինձ զգուշացրուց, որքան կարելի է ինձ հեռու պահեմ նրանից, որովհետև նրա մոտ կանգնած էր իր մորաքույրը: Ի՞նչ էր նշանակում այդ: Բայց ես չկարողացա առանց հիացմունքի տեսնել նրա տխուր և գունաթափ դեմքը, որ իր դալկության մեջ ավելի գեղեցիկ էր:

— Ասում են, սարիցը մի ճգնավոր են բռնել,— խոսում էր Սոնան:

— Ես էլ լսեցի,— պատասխանեց Մարոն:— Ասում են, բերել են վանքը, գցել են մեկ խուցի մեջ, դուռը փակել են, մյուս օրը գնացել են, դուռը բաց են արել, տեսել են ճգնավորը խափանվել է: Հիմա չեն իմանում արդյոք ճգնավո՞ր էր, թե սատանա:

— Մեղք է, այդպես չեն խոսի, Մարո,— ասաց Սոնան:— Սատանան ո՞րն է. ախար ճգնավորն էլ խափանվում է. տեսնում ես, աչքիդ առջև կանգնած է, մեկ էլ տեսար՝ էլ չկա:

— Ասում են, այստեղ մի այդպիսի վարդապետ կա, այնտեղ սարումը ճգնում է, որը երբեմն երևում է, իսկ երբեմն աներևույթ է լինում,— մեջ մտավ Սոնայի մորաքույրը:

— Գնանք տեսնենք,— ասաց Մարոն:

— Ես կվախենամ,— պատասխանեց Սոնան:

— Վա՛, ճգնավորն էլ մարդ է, խո դև չէ, ինչո՞ւ ես վախենում,— ասաց Մարոն:

— Ես մեր Ստեփանիցն էլ վախեցա, հենց որ տեսա՝ նա նստած էր «խեղճերի» մեջ:

Քույրը վախենում էր եղբորից, որոնք միասին մեծացել էին, որոնք հազար անգամ համբուրվել էին. վախենում էր, որովհետև եղբայրն այժմ գտնվում էր այն հասարակության մեջ, որոնք ոգիների հետ հաղորդակցություն ունեին…

Ուխտավորների բազմությունը հետզհետե ամբոխվում էր վանքի մեջ. տեղի նեղությունից արձակ շարժմունք գործել անկարելի էր. մարդ դժվարանում էր ազատ շունչ քաշել: Աբեղաների ահագին խումբը իրանց աղաղակներով, խրատներով և

մինչև անգամ հայհոյանքներով, չէին կարողանում կարգ պահպանել բազմության մեջ: Խռովությունը գնալով սաստկանում էր: Ես առաջարկեցի մերայիններին դուրս գնալ. սկսեցինք զոռով պատառել ամբոխը, մինչև կարողացանք հասնել վանքի դռանը: Նույն միջոցին Սոնան թեքվեցավ դեպի ինձ և խուլ կերպով ասաց՝ «արևը մտնելեն հետո ե՛կ *«Կաթնաղբյուրի»* մոտ»…

ԼՉ

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԱԲԵՂԱՆ

«Կաթնաղբյուրի՛» մոտ…: Հիմա ես հասկանում եմ թե ի՛նչու Սոնան այնտեղ նշանակեց տեսության համար: «Կաթնաղբյուրն» այն աղբյուրներից էր, որոնք ժողովրդի մեջ վայելում են սրբազաննշանակություն: Նրան կոչում էին «Կաթնաղբյուր» այն պատճառով, որ ժողովրդի մեջ պահպանվել էր մի այսպիսի ավանդություն, իբր թե այն աղբյուրի մեջ ծորեցրել էր տիրամայրը մի կաթիլ իր սուրբ կաթնից: Նրա ջուրն ուներ բժշկական զորություն ոչ թե իր մեջ գտնված հանքային բաղադրությանց պատճառով, ոչ, ջուրը հասարակ մաքուր ջուր էր, այլ նա ուներ գերբնական հատկություններ: Նրա մեջ լվացվողը փրկվում էր իր ցավերից, նաև կատարվում էին նրա սրտի այս և այն ցանկությունները: Լողացողն ընտրում էր այնպիսի ժամանակ, որ ոչ ոք չխռովեր նրա հանգստությունը, ոչ ոք չխանգարեր այն խորհրդական պայմանները, որ նա պետք է կատարեր լվացվելու ժամանակ:

Ա՛խ, ո՛րպիսի անհամբերությամբ սպասում էի այն օր արևի մտնելուն: Կարծես Հեսուի ձեռքը մեխել էր նրան երկնքի վրա, տեղիցը չէր շարժվում: Ես համբերել չկարողացա և գնացի ավելի շուտ, քան Սոնայի նշանակած ժամանակը:

Վանքի պարիսպների մոտ, երկայն գերանների գլխին կապած չվանի վրա խաղում էր մի մանկահասակ լարախաղաց. նա իր գույնզգույն, խայտաճամուկ զգեստով և զարմանալի ճարպկություններով հափշտակել էր ռամկի հիացմունքը: Ուխտավորների բազմությունը, տաքացած կրոնական զգացմունքներով, շրջապատել էին *ջամբազին*. նրանք օրհնում էին «Մուշի սուլթան սուրբ Կարապետի» հրաշագործությունը, որ տվել էր նրան այնքան շնորհ և ճարպկություն:

— Լա՛վ ժամանակ է ընտրել Սոնան,— մտածում էի ես,— հիմա «Կաթնաղբյուրի» մոտ ոչ ոք չի լինի, բոլորը այստեղ են:

«Կաթնաղբյուրը» գտնվում էր նեղ ձորի մեջ, մի ահագին քարաժայռի ներքո, որ գոգավորվելով, կազմել էր մի լայն քարանձավ, որտեղից բխում էր ջուրը, և նույն քարանձավի մեջ հավաքվելով, առաջ էր բերում մի փոքրիկ ավազան: Այս նվիրական ավազանի մեջ լողանում էին ուխտավորներն, ավելի բժշկության և հոգևոր շնորհներ ստանալու հույսով: Քարանձավի մուտքը այնքան լայն բացվածք ուներ, մինչ կիսով չափ երևում էր նրա ներսույքը:

Ես մտածում էի, թե Սոնան դեռ եկած չի լինի, որովհետև նշանակել էր տեսնվել ինձ հետ արևը մտնելուց հետո, իսկ ես, անհամբերս, եկել էի մի ամբողջ ժամ առաջ: Բայց երբ ես հեռվից նայեցա քարանձավի մեջ, ինձ երևացին հանված հագուստներ, որ դրած էին նրա մուտքի մոտ: Հետաքրքրությունս ստիպեց ստուգել՝ արդյոք ա՞յր մարդ էր լողացողը, թե կին: Մտածում էի՝ մի՛ գուցե նույն ինքն Սոնան լիներ, որ ինձ դիտմամբ տեսություն նշանակեց արևի մտնելուց հետո, որպեսզի ինքը վերջացրած լինի իր լողանալը:

Ես սկսեցի հեռվից նայել դեպի քարանձավի ներսը, մանուկ մարդիկ այսպիսի անպատկառ հետաքրքրություններ շատ ունեն: Հանկարծ ջրի մակերևույթից դուրս բարձրացավ մի գեղեցիկ մարմին: Հրաշալի՛ մի մարմին էր նա: Գլխի արձակված գիսակները սքողել էին դեռ նոր զարգացած կուրծքը: Նա երեխայական անմեղ զվարճությամբ թրթռում էր, խաղ էր անում ավազանի ալիքների հետ: Արևի վերջին ճառագայթներն ընկած էին նրա դեմքի վրա: Ո՛րքան հրապուրիչ էր ջրի մանրիկ կաթիլներով ցողված այն կուսական դեմքը: Բայց նա երեսը շուռ տվեց, կարծես, չէր ցանկանում, որ արեգակն իր լուսեղեն շրթունքներով շոշափեր նրա անմեղ կուրծքը: Նույն ժամուն նա երևցրուց մի լիքն և հրաշալի թիկունք:

Դա մի րոպեական երևույթ էր: Մարմինը կրկին անհետացավ ջրի մակերևույթի տակ:

Այսպես երևում են «հրեղեն կուսանքը» Վանա ծովակի միջից, այսպես հրապուրում են նրանք պատանիներին, որոնք լի սիրահարական ցնորքներով իրանց գցում են ալիքների մեջ, և ջրային աղջիկները հափշտակում, տանում են իրանց որսին դեպի ծովակի անդունդը, և այնտեղ իրանց բյուրեղային պալատներում զվարճացնում են նրան…

Ջրային հավերժահարսը կրկին հայտնվեցավ: Այս անգամ նա հանգիստ էր. այս անգամ նա չէր թռչկոտում այս կողմ և այն կողմ: Նա կիսով չափ նստած ջրի մեջ, սանդրում էր իր երկայն գիսակները: Նա ինքն էր,— Սոնան էր: Ես վաղուց ճանաչում էի այն խարտյաշ մետաքսանման գիսակները, ինձ ծանոթ էր այն հրեշտակային կերպարանքը, որ իր մերկության մեջ ավելի սքանչելի էր:

Նույն միջոցին ինձ տիրեց մի զգացմունք. դա նմանում էր այն սարսափելի զգացմունքին, որ տանջում է մի եղեռնագործին, որը մեղանչել էր մի որևիցե սրբության դեմ:

Ձարհուրելի՛ է խղճի խայթն, երբ նա սկսում է ծակոտել մի սիրտ, որ դեռ ոչ բոլորովին կորուսել էր իր կենսական զորությունը… «Ես սիրում էի այս անմեղ աղավնյակին…— մտածում էի ես,— բայց Մարոն, կիսավայրենի Մարոն խլեց այն սիրտը, որ պատկանում էր Սոնային»…

Իմ մտածությունները ընդհատեց մի մարդ, որ ձորի միջով գալով, ինձ երևաց, թե ուղիղ դիմում էր դեպի քարանձավը: Նա ոտքից գլուխ հագած ուներ սև զգեստ կոշտ մազե շալերից: Նրա բոլոր կերպարանքից հայտնի էր, թե անապատական աբեղա պետք է լինի: Նա ընթանում էր հանդարտ և հաստատուն քայլերով, և մեղմ ձայնով եղանակելով մի տխուր մեղեդի:

Ես իսկույն վազեցի դեպի նրա կողմը և առաջը կտրեցի, ասելով.

— Հեռվից անցեք, չմոտենաք քարանձավին, այնտեղ լողանում է մի օրիորդ, որ իմ ազգականն է:

— Ես դեպի այս կողմն եմ գնում,— պատասխանեց աբեղան, ցույց տալով ծովակը, և մի քննողական հայացք ձգելով իմ երեսին, անցավ:

Բայց ի՞նչ խորհրդական մարդ էր դա. ես մտածում էի, անտարակույս նույն լեռների մեջ առանձնացած ճգնավորներից մեկը պետք է լիներ: Երբ ավելի հեռացավ, նա փոխեց երգի եղանակը. այժմ նրա ձայնը լսելի էր լինում ավելի բարձր հնչյուններով: Ես բոլորովին զարմացա, այն մի հոգևոր մեղեդի չէր, այնպիսի երգեր միայն կարելի է լսել Արաբիայի դաշտերում, երբ բեդվինը միայնակ անցնում է անապատի միջով:

Նույն միջոցին ինձ զարմացրուց մի այլ երևույթ ևս. ես տեսա, որ կախարդ Սուսանը իր փոքրիկ վհուկ ընկերի հետ դուրս վազեցին թփերի միջից և միացան աբեղայի հետ: Աբեղան գրկեց Հյուբբիին, համբուրեց և ապա միասին անհետացան բլուրների հետքում:

Ի՞նչ գաղտնիք էր այդ. ի՞նչ գործ ուներ աբեղան կախարդ պառավի հետ օրվա մի այնպիսի տարաժամ պահուն: Նրա երգն անգամ որպես ես հասկացա, իր խորհրդական հնչյունների մեջ ուներ մի ծածուկ նշանակություն, որ դուրս կանչեց կախարդին իր թաքստյան տեղից: Եվ ի՞նչ լեզվի երգ էր այն:

Այս մտածություններն ինձ այն աստիճան զբաղեցրել էին, որ ես ամենևին չէի նկատել, թե արևը վաղուց մայր էր մտել և ձորի մեջ մութը բավականին թանձրացել էր, իսկ Սոնան հագնված, դուրս էր եկել քարանձավից:

Երբ ես մոտենում էի նրան, իմ գլխում պտտվում էին խիստ քաղցր ցանկություններ. ես հույս ունեի, թե Սոնան ինձ կգրկե, կհամբուրե, կհայտնե իր կարոտությունը ինձ երկար ժամանակ չտեսնելու համար, և շատ գեղեցիկ խոսքեր կասե: Բայց դրանցից և ոչ մեկը չեղավ:

— Ֆարհատ,— ասաց նա խիստ սառն կերպով,— որոնի՛ր մի ծածուկ տեղ, ուր մեզ չտեսնեն, ես մի քանի խոսքեր ունեմ քեզ ասելու:

Մենք բարձրացանք դեպի մերձակա բլուրի զառիվերը, որ պատած էր վայրենի նշենիներով, և նստեցինք մի սեպացած ժայռի մոտ: Այնտեղից գիշերային մթության մեջ տեսնվում էր ուխտավորների բանակը, որ լուսավորված էր գույնզգույն լապտերներով, որ բռնել էր ընդարձակ տարածություն վանքի չորեք կողմում, և մինչև այնտեղ լսելի էին լինում զանազան նվագածությանը ձայներ: Բայց Սոնային ոչինչ չէր գրավում. տխո՛ւր էր նա, մահվան պես տխուր էր նա: Խեղճ աղջիկ, ես երբեք նրան ուրախ չէի տեսել…

Սոնայի առաջին խոսքերը բոլորովին ընտանեկան էին, վերաբերում էին իր վիճակին: Նա ասաց, թե զրկվելով մորից, իր միակ մխիթարությունն էր Ստեփանը՝ իր սիրելի եղբայրը: Եվ չնայելով, որ Ստեփանը վերջին ժամանակներում բավականին ուղղվել էր, այսուամենայնիվ նրա հայրը, Ստեփանի խելագարությունը տիրամոր պատիժ համարելով, բերեց նրան և վանքի «խեղճերի» մեջ գցեց: Նա պատմում էր, թե ինքը շատ աղաչեց հորը, որ այս անգթությունը չանե, Ստեփանին թողնե տանը, թե ինքը խոստանում է միշտ խնամել, պահպանել նրան,— բայց հնարք չեղավ, հայրը չընդունեց: Այս պատճառով Սոնան ստիպվեցավ աստվածածին ուխտ գալ, որովհետև չէր ուզում շուտով բաժանվել իր եղբորից: Եվ այժմ ամեն օր աղաչում է, պաղատում է հորը, որ Ստեփանին «խեղճերի» մեջ չթողնե, որ նրան վանքից ետ առնե և կրկին տուն տանե և այլն:

Այս բոլորը նա պատմեց խիստ ցավալի և դառն եղանակով, բայց առանց մի կաթիլ արտասուքի: Խե՜ղճ աղջիկ, այնքան անբախտ էր, որ լացել ևս չէր կարող…

Այնուհետև նա ինձանից երդում առեց և սկսեց պատմել մի գաղտնիք:

Նա ասաց, թե որսորդ Ավոյի և նրա հյուրերի, այսինքն՝ Կարոյի և նրա ընկերների դեմ սարքվում է մի մեծ դավադրություն: Պատմեց, թե իր հոր մոտ մի քանի անգամ եղել են գաղտնի ժողովներ, ուր հավաքվում էին տիրամոր վանքի վանահայր Կարապետ հայր սուրբը, իմ քեռի Պետրոսը, մի մեծ քուրդ իշխան և ուրիշ մի քանի մարդիկ, որոնց չէ ճանաչում: Հայտնեց, թե ինքը մի քանի անգամ ծածուկ լրտեսել է նրանց խոսակցությունը, թեև բոլորը չէ հասկացել, բայց այսքանը իմանում է, որ

նրանք խոսում էին որսորդ Ավոյի, Կարոյի և նրա ընկերների մասին «շատ վատ բաներ», և մտածում էին, թե ի՞նչ հնարքով նրանց բռնել տան, ոչնչացնեն, որ «երկրի խռովությունը հանդարտվի»…

— Լավ, նրանք ի՞նչով են մեղավոր,— կտրեցի ես Սոնայի խոսքը, բոլորովին շփոթվելով:

— Ես չեմ իմանում, Ֆարհատ,— պատասխանեց Սոնան նույնպես վրդովված ձայնով:— Ասում են՝ նրանք չար մարդիկ են, ավազակներ են, ուր որ գնում են, այնտեղից արյունը և կոտորածը պակաս չէ լինում…

— Ես չեմ հավատում, Սոնա:

— Ես էլ չեմ հավատում, բայց ի՞նչ անես, ասում են, չես կարող ասողի բերանը բռնել: Ես երբ որ այս խոսքերը լսեցի, շատ տխրեցի, մտածում էի, որ դու էլ նրանց հետ ես, քեզ էլ կարող է մի վտանգ պատահել:

Սոնայի աչքերը այդ միջոցին լցվեցան արտասուքով: Նա հեկեկալով շարունակեց.

— Ես հենց որ լսեցի, գնացի քո մոր մոտ, բոլորը պատմեցի, որ նա քեզ ասեր. մայրդ ժամանակ չգտավ: Բայց որքան տխրեց մայրդ, Ֆարհատ, «որդիս կորավ»… ասում էր նա:

Իմ վրդովմունքը հետզհետե սաստկանում էր. ես չէի կարողանում հասկանալ, թե այս ի՞նչ բան է, որ հայոց վարդապետը, որ հայոց քահանան և իմ քեռի Պետրոսի նման մարդը, միացած քուրդ իշխանի հետ, դավադրություն էին հնարում մի քանի բարի, և խեղճ ժողովրդի արտասուքը սրբող երիտասարդների դեմ: Նրանք ավելի բարվոք էին համարում քուրդ իշխանի անտանելի լուծը, այն իշխանի, որի սրբապիղծ ձեռքը մուտք էր գործել մինչև հայոց տաճարի ներսը, որն, ինչպես իմ աչքով տեսա, կանգնած սուրբ սեղանի մոտ, տաճարի գանձանակի վրա էր հսկում…

Բայց Սոնայի երկյուղը միայն իմ մասին չէր. նա ափսոսում էր և Կարոյին, և նրա ընկերներին: «Նրանք լավ տղերք են, ասում էր նա, ես նրանց ոչ մի ժամանակ չեմ մոռանա»:— Եվ նա խորհուրդ էր տալիս, բոլորը հայտնել նրանց, զգուշացնել, որ վտանգի չհանդիպեն:

Մութը բոլորովին պատել էր, երբ մենք վերադարձանք ուխտավորների բանակը: Թե Սոնան և թե ես այն աստիճան խռովված էինք, որ մեր մեջ ուրիշ խոսակցություն չեղավ: Լուռ իմ կողքով գնում էր Սոնան: Խե՛ղճ աղջիկ, նա միանգամից կորցնում էր երկու մխիթարություն՝ իր հարազատ եղբորը, որին պետք է թողներ վանքի «խեղճերի» մեջ, և այն տղամարդին, որին սիրում էր, որի ձեռքը բռնած գնում էր այժմ:

Երբ մենք մոտեցանք ուխտավորների բանակին, նա ասաց.

— Դու ինձ հասցրու մինչև մեր տիրացու Թաթոսի վրանը և հեռացիր:

— Նա՞ էլ այստեղ է,— հարցրի ես:

— Այստեղ է, ուխտ է եկած իր կնոջ և ազգականների հետ:

— Մի՞թե նա այժմ կին ունի:

— Մի քանի ամիս է, ինչ որ պսակվել է, միտք ունի շուտով քահանա դառնալու:

— Հենց ես մնացի առանց կնոջ, ամենքը պսակվեցան…

— Քեզ էլ աստված ողորմած է…— պատասխանեց Սոնան, խորհրդավոր ձայնով. և այն ժամանակ միայն ես նկատեցի, որ ժպիտի նման մի բան շողաց նրա տխուր դեմքի վրա:

Տիրացու Թաթոսն արդեն ծանոթ է մեր հիշատակարանի մեջ նրա սկզբից: Այս տխմարը մի ժամանակ մեր դպրոցի վերակացուն էր, աշակերտները նրան կոչում էին «դպրոցի շուն». այժմ նա ամուսնացած էր և շուտով պետք է քահանա դառնար… արդյոք, արժա՞ն էր այդ պատվին…

Հասցնելով Սոնային տիրացու Թաթոսի վրանը, ես հեռացա:

ԼԷ

ԴԻՄԱԿԸ ՊԱՏՌՎՈՒՄ Է

Գիշերից բավական անցել էր. ես իմ մտածությանց մեջ բոլորովին մոլորված, չգիտեի թե ուր գնամ: Սոնայի հաղորդած տեղեկություններն ինձ բոլորովին շփոթել էին: Մեկ էլ տեսնեմ, առաջս կտրեց իմ քեռի Պետրոսը:

Ե՛կ, ասաց նա ծանր կերպով,— ե՛կ, մոլորյալ ոչխար, գնանք ինձ մոտ, քեզ հետ խոսելիք ունեմ: Ես հետևեցի նրան ամենայն խոնարհությամբ, որովհետև երեխայությունից սովորած էի նրան իբրև հայր ճանաչել: Նա ինձտարավ իր վրանը, կնոջը և մյուսներին հրամայեց գնալ դրացիների մոտ, և առանձին ինձ հետ սկսեց խոսել: Նրա խոսքերը դարձյալ վերաբերում էին ծերունի որսորդին, Կարոյին և նրա ընկերներին, և ավելի բացատրում էին Սոնայի ինձ հաղորդած գաղտնիքների ճշտությունը: Բայց ինչ որ նոր և հետաքրքրական էր քեռի Պետրոսի խոսքերի մեջ, դա վերաբերում էր ծերունի որսորդի երիտասարդական կյանքին, և նրա աղմկալի անցյալին:

Քեռի Պետրոսն ասում էր, թե ծերունի որսորդը մի ծպտյալ անձնավորություն է, որ ծածկված է հասարակ որսորդի կերպարանքում. թե նա Մոգաց և Սասնո երկրից փախստական անցել էր Պարսկաստան, այնտեղ առժամանակ իրան թաքցնելու համար: Թե նրա անունը առաջուց Ավո չէ եղել, այլ նա կոչվում էր իր երկրում Մելիք-Միսաք, և ամբողջ Սասունի և Մոգաց երկրի իշխանն է եղել: Նա ուներ այնտեղ իր սեփական ամրոցը, հարուստ կալվածներ և իր ձեռքի տակ բազմաթիվ քաջ պատերազմողներ: Ամբողջ Սասունը և Մոգաց երկրի կիսավայրենի ժողովուրդը դողում էին նրա զորությունից: Նա իր իշխանության ներքո զսպել էր ոչ միայն տեղացի հայերին, այլ բոլոր նույն երկրում բնակվող քուրդ և օտարազգի ցեղերին:

Մելիք-Միսաքը իր կառավարության մեջ նույնն էր, ինչ որ է մի երևելի քուրդ իշխան իր բոլոր միապետական զարհուրանքով: Նա նույնպես արշավանքներ էր գործում հակառակ ցեղերի վրա, կոտորում էր, հափշտակում էր, ավարներ և գերիներ էր բերում: Այսպիսով նա իր իշխանության ներքո խոնարհեցրել էր բացի հայերից և մի քանի քրդերի ցեղեր: Վերջիններն այնպես սերտ կապված էին իրանց հայ Մելիքի հետ, որ առանց խտրություն դնելու, մասնակցում էին և այն արշավանքների մեջ, որոնք տարածվում էին հակառակ կողմի քրդերի վրա:

Այստեղ ես կտրեցի քեռի Պետրոսի խոսքը, հարցնելով.

— Քրդերը նույնը չէի՞ն անում հայերի վերաբերությամբ:

— Անում էին,— պատասխանեց նա:— Բայց հային ի՞նչ կվայելե ավազակ քրդից օրինակ առնել:

Ես մտաբերեցի այն խրատը, որ լսել էի ծերունի որսորդից, և պատասխանեցի նույն ոճով.

— Ավազակի հետ պետք է ավազակ լինել, ավազակի հետ չէ կարելի ճգնավորի պես վարվել: Երբ որ քուրդն իր սրով և նիզակով դիմում է մեզ վրա, երբ որ նա գալիս է մեր տունը քանդելու, մեր կայքը հափշտակելու, մեր ընտանիքն անպատվելու, մեզ պետք չէ խաչով և ավետարանով դուրս գալ նրա առաջը, այլ մեզ պետք է նույնպես սրով պաշտպանել մեր պատիվը:

— Վարակվե՛լ է թշվառականը…—ասաց քեռի Պետրոսը գլուխը շարժելով:— Այսպես կարող է խոսել միայն ծերունի որսորդի հառաջադեմ աշակերտը:

— Ուղիղ է, ես առաջ այսպես չէի մտածում, ես կարծում էի թե աստված հային ստեղծելու ժամանակ նրա ճակատին գրել է, որ նա միշտ խեղճ լինի, օտարի ձեռքի տակ գերի լինի, ինքն աշխատե և ուրիշին ուտացնե, գլխին ծեծեն լուռ կենա, երեսին թքեն՝ լուռ կենա, մի խոսքով, աշխարհի բոլոր անպատվություններին պետք է համբերե նա: Բայց հիմա ես հասկանում եմ, որ աստված չէ ցանկանում, որ հայը թշվառ լինի, և եթե նա թշվառ է, ինքն է պատճառը…

— Դու վարակվել ես… խե՛ղճ տղա,— պատասխանեց քեռի Պետրոսը ցավակցական եղանակով:— Դրանք այն երևելի ավազակապետի (ծերունի որսորդի) խոսքերն են, որ դուրս են թափվում քո բերանից: Դրանք այն «հին գայլի» խոսքերն են, որի համար ադամորդու կյանքը մի ճանճի կյանք է, որն իր գլխի մազերի համբարքով մարդիկ է կոտորել, որը հազարավոր տուներ է քանդել, որի սիրտը գութ և խիղճ կոչված բաների հետ երբեք ծանոթ չէ եղել:

Վերջին խոսքերն ավելի զայրացուցին ինձ, նրանք խիստ կեղտոտ հայհոյանք էին մի մարդու դեմ, որն այնքան բարեսիրտ էր և մեծահոգի, որը թշվառի հայր էր և կարոտյալի բարերար: Ես պատրաստ էի իսկույն վեր թռչել, բռնել քեռուս կոկորդից և խեղդել նրան, բայց մի հանկարծակի այցելություն արգելեց իմ կատաղությանը:

— Ողջույն,— լսելի եղավ մեր ետևից, և վրանի մեջ հայտնվեցավ իմ վարժապետը — տեր Թոդիկը:— «Անառակ որդին» երևաց,— ասաց նա ինձ տեսնելով:— Բայց արդյոք զղջացե՞լ է նրա սիրտը:

— Ընդհակառակն, ավելի խստացել է,— պատասխանեց քեռի Պետրոսը:

Ես լուռ էի:

Տերտերը եկավ նստեց:

Քեռի Պետրոսը մասնավորապես պատմեց նրան այն վիճաբանությունը, որ անցել էր մեր մեջ, և խիստ սև գույներով նկարագրեց իմ համառությունը և մոլորությունը:

Տերտերը իր հատուկ կրոնական փիլիսոփայությամբ սկսեց կշտամբել իմ ցնորքները, ասելով.

— Մեր, տիրոջ մեղավոր ծառաներիս, ձեռքումը ոչինչ չկա. մենք ոչինչ չենք կարող անել: Ամեն ինչ, որ լինում է, աստուծո կամքովն է լինում. առանց նրա կամքին տերևն անգամ ծառից ցած չէ գալիս: Աստված է ստեղծել բոլոր արարածներին և նա է նշանակել բոլորի վիճակները: Օրինակ, եզին ստեղծել է, որ մարդու վարը վարե,

ոչխարին ստեղծել է, որ մարդուն կաթ, կերակուր և հագուստ տա, ձիուն ստեղծել է, որ մարդու ծանրությունները տանե,— այսպես ամեն մեկին մի բանի համար է ստեղծել աստված: Բայց մարդը գայլից չէ կարող կաթ և բուրդ ստանալ, առյուծին չէ կարող ստիպել, որ իր վարը վարե, և արջին կարող չէ հրամայել, որ իր ծանրությունները՝ տանե: Դրանք գազաններ են. դրանց մյուս անասունների համար որպես պատիժ ստեղծել է աստված: Դրանք պետք է հափշտակեն, կեղեքեն, մյուսների մսով և արյունով կերակրվեն:

Ես դարձա դեպի վարժապետս, ոչ աշակերտի երկչոտությամբ, այլ համարձակ կերպով հարցրի.

— Ի՞նչ համեմատություն կա ձեր ասածների և մարդու մեջ:

— Համեմատությունը նույն է,— պատասխանեց տերտերը:— Մարդիկ էլ այնպես են ստեղծված, մեկը ոչխարային բնություն ունի, մյուսը գազանային:

— Մենք, հայերս, որ մեկիցն ենք:

— Մենք աստուծո գառնուկներն ենք,— պատասխանեց նա ավելացնելով ավետարանական խոսքը — «արածեա՛ զոչխարս իմ» ասաց տերն մեր Հիսուս Քրիստոս Պետրոս առաքյալին. դրանից երևում է, որ մենք գազան քրդերի նման չպետք է լինենք:

Ես տերտերի խոսքերի մեջ մի նոր բան չգտա, դարձյալ նույն քարոզներն էին, որ հազար անգամ լսած էի, բայց այժմ նրանք իմ գլխում չէին մտնում, այժմ ես հասկանում էի, թե ո՛րքան վնասակար էին նրանք:

Բայց ինձ նույն րոպեում տանջում էր մի այլ միտք, ես շատ դժգոհ էի, որ տերտերը եկավ և խառնեց իմ և քեռի Պետրոսի մեջ սկսված խոսակցությունը: Նրա պատմությունը ծերունի որսորդի անցյալի մասին մնաց անկատար, ես ցանկանում էի մինչև վերջը լսել այս գաղտնաճաճուկ մարդու կյանքի պատմությունը:

Քեռի Պետրոսը ինքն առիթ տվեց շարունակելու ընդհատված պատմությունը:

— Տեսա՞ր, որդի,— ասաց նա,— տերտերն էլ նույնն է խոսում, ինչ որ ես էի ասում քեզ. հեռացի՛ր *այս մարդերից*, եթե չես կամենում կորցնել քեզ:

— Ես ուզում եմ ավելի լավ ճանաչել նրանց, քեռի, պատմեցեք, թե ի՞նչպես ընկավ Մելիք-Միսաքը իր փառքից և ի՞նչ առիթ տվեց նրան հասարակ որսորդի կերպարանքով հայտնվել Պարսկաստանում:

— Դա մի երկար պատմություն է, որի մանրամասնություններն ինձ ևս հայտնի չեն,— ասաց նա:— Միայն այսքանը գիտեմ, որ Մոգաց և Սասնո երկրներում մի քանի ուրիշ հայ իշխաններ և մի քանի տանուտերեր հակառակ կուսակցություն էին կազմում Մելիքի դեմ: Նրանք միացան տեղային հայոց առաջնորդի հետ, և մի քանի վարդապետներ էլ իրանց կողմը գցելով, գրգռեցին ժողովուրդը Մելիքի դեմ: Նրանք ասում էին, թե մենք չենք ուզում, որ մեզ վրա «հայ» տիրե, մեզ համար լավ է քուրդը, «հայից բեկ (իշխան) լինել չէ կարող»:

Այնուհետև քեռի Պետրոսը խիստ արհամարհական կերպով նկարագրեց Մելիքի անկումը: Ես նրա խոսքերից միայն այսքանը կհիշեմ:

Ամեդիայի մեջ այն ժամանակ նստում էր մի քուրդ իշխան. նա մի քանի ցեղերի գլխավորն էր և ուներ իր ձեռքի տակ բազմաթիվ պատերազմող տղամարդիկ: Քուրդ

իշխանը Մելիքի ոխերիմ թշնամիներից մեկն էր: Հայոց առաջնորդը մի քանի տանուտերերի հետ ծածուկ գնում են նրա մոտ, հայտնում են, թե որպես իրանք, նույնպես և ժողովրդի մեծ մասը Մելիքից գոհ չեն, և ցանկանում են նրա լուծը իրանց վզից գցել: Այս պատճառով հրավիրում են քուրդ իշխանին հանձն առնել իրանց վրա տիրապետելը: Եվ առաջնորդը իր տանուտերերի հետ խոստանում են, որ ամեն կերպով կօգնեն և ձեռնտու կլինեն քուրդ իշխանին Սասունը և Մոգաց երկիրը տիրելու գործի մեջ:

Ես կտրեցի քեռի Պետրոսի խոսքը՝ հարցնելով.

— Առաջնորդը ի՞նչ մի առանձին օգուտ ուներ հայ ժողովուրդը քուրդ իշխանի ձեռքում մատնելու մեջ:

— Շատ օգուտ,— պատասխանեց նա.— եթե Մելիքը մեջտեղից վերցվեր, միայն առաջնորդը կմնար որպես ժողովրդի հոգևոր և մարմնավոր ներկայացուցիչը: Բայց Մելիքի ստվերի տակ նա ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ մի բարձր հոգևորական:

Այս հետո, խիստ հետո ես հասկացա հայոց հոգևորականության մշտական կռիվը մարմնավոր իշխանության դեմ: Այս այն ժամանակ հասկացա, երբ կարդացի մեր ազգի պատմությունը և ծանոթացա նրա թշվառ անցյալի հետ…:

Քուրդ իշխանի վաղուց փափագած բաղձանքը հենց այն էր, ինչ որ առաջարկում էին հայոց առաջնորդն և տանուտերերը: Դավադրությունը սահմանվում է, իսկ գործադրությունը նշանակվում է զատկի ավագ շաբաթի գիշերը: Նույն գիշերը, երբ Մելիքը իր ընտանիքով բոլորել էին ճրագալույցի սեղանի շուրջը, հանկարծ նրա ամրոցը պաշարվում է բազմաթիվ քրդերով: Մի քանի րոպեում հրդեհը չորս կողքից սկսվում է տարածվել դեպի ներսը. ամրոցը կորչում է ծուխի և բոցերի մեջ: Պարիսպները խորտակվում են և ներս է թափվում կատաղի ամբոխը: Սկսվում է սարսափելի կոտորածը: Մելիքը երկար քաջությամբ կռվում է, բայց շատ վերքեր ստանալով, վերջապես ընկնում է նա: Մըհեն կրակի, սրերի և գնդակների միջից հափշտակում է իր, դեռ ոչ բոլորովին անշնչացած, տիրոջը: Բայց նրա բոլոր որդիքը, աղջիկները, ծառաները և աղախինները կոտորվում են: Ազատվում է միայն Մելիքի մի հատիկ աղջիկը՝ փոքրիկ Մարոն, որին ստնտուն փախցնում է:

Բայց դրանով բոլորը չէ վերջանում: Ժողովրդի մեծ մասը չէր ցանկանում զրկվել իր գլխավորից, որ այնքան սիրելի էր բոլորին, որ միշտ հոր պես խնամել էր նրանց կյանքը և պատիվը թշնամիներից: Ժողովուրդը ոտքի է կանգնում, սկսում է ընդդիմանալ քուրդ իշխանին: Բայց ի՞նչ կարող է անել մի անգլուխ ժողովուրդ, որ առաջնորդող չունի: Մի քանի ամբողջ շաբաթներ Սասունը և Մոգաց երկիրը դարձել էին արյան և կոտորածի ասպարեզ: Մելիքը վիրավորված առյուծի նման հեռվից մռնչում էր, բայց ոչնչով չէր կարող օգնել: Քրդի սուրն անխնա կոտորում էր, և նույն սրին ուժ և զորություն տվողներն էին նույնպես հայեր, չա՛ր և եղեռնագո՛րծ եկեղեցականներ…

Ժողովուրդը վերջապես նվաճվում է օտարի լծի տակ… քուրդ իշխանը տիրում է…

Այնուհետև հազարավոր մարդիկ որոնում էին Մելիքին, որովհետև նրա դիակը ամրոցի կոտորածի մեջ չգտնվեցավ: Բայց նա Մըհեի հսկայական ուսերի վրա, անմատչելի լեռներից և ձորերից անցնելով, արդեն փոխադրվել էր Պարսկաստան:

Քեռի Պետրոսի պատմությունը ինձ վրա սարսափելի տպավորություն գործեց. ես բոլոր մարմնով դողում էի, և մանավանդ ավելի եղավ իմ բարկությունը, երբ տերտերն՝ այս բոլորը լսելուց հետո՝ ասաց առածի ձևով.

— «Չարը միշտ չարով կսասանվի».— «Սրի հետ խաղացողը միշտ սրով կմեռնի»,— և ավելացրուց.— Այսպիսի մարդիկ ոչ միայն իրանց անձի կորստյան պատճառ են դառնում, այլ ժողովրդին էլ արյան և կրակի մեջ են գցում:

— Բոլորովին ուղիղ է ձեր խոսքը, տեր հայր,— ասաց քեռի Պետրոսը:— Մելիքը Պարսկաստան գալուց հետո, նա երկար ժամանակ իր գաղտնի նպատակներով կարողացավ թաքնված մնալ որսորդի անվան տակ, բայց երբ որ նկատեց, թե այնտեղ ևս պետք է մերկացվի ինքը, նա թողեց Սալմաստը և անցավ Հաղբակ: Ժողովուրդն այնտեղ ռամիկ էր և կիսավայրենի, իսկ մի այսպիսի ժողովուրդ պետք էր նրան: Նա շուտով կարողացավ գրավել ռամկին և բոլորի հավանությամբ նույն գավառի «Միր» ընտրվեցավ: Այնուհետև խռովությունը այս երկրից պակաս չէ: Հասպիստանու կռիվը իր հաջողությամբ խրախույս տվեց նրան, այժմ նա իր նպատակին մասամբ հասել է և կամենում է Հաղբակա[5] լեռների վրա այն խաղը խաղալ, ինչ որ խաղում էր մի ժամանակ Սասնո մեջ:

— Այսպիսի մարդիկը ժանտախտ են, ուր և գնում են, իրանց հետ տանում են մահ և կոտորած,— ասաց տերտերը:

— Եթե ծերունի որսորդի միտքն այն է,— պատասխանեցի ես,— որ հայը ազատված լինի օտարի լծից, որ նա իր տունը, իր երկիրը ինքը կառավարե, դրա մեջ ես մի վատ բան չեմ տեսնում: Եվ ես ինքս կլինեմ առաջինը, որ կնվիրեմ իմ արյունը նրա նպատակին:

— Եվ դու ինքդ կլինես առաջին խելագարը…— լսելի եղավ մի նոր ձայն:

Ես մինչ այն աստիճան խռովության մեջ էի, որ ամենևին չէի կարողացել նկատել, որ մի վարդապետ ներս էր մտած քեռի Պետրոսի վրանում և ականջ էր դնում մեր խոսակցությանը: Դա միևնույն աբեղան էր, որին ցերեկով տեսած էի «Կաթնաղբյուրի» ձորում: Նա եկավ նստեց: Քեռի Պետրոսի և տեր Թոդիկի ընդունելության ցույցերից երևաց, որ չափազանց հարգանք ունեին դեպի հայր սուրբը: Ճրագի լույսով ես ավելի լավ կարողացա զննել նրան: Նա մի մարդ էր ալեխառն մորուքով և նույնպես դեռ նոր ճերմակած երկայն մազերով: Հագուստը խիստ անշուք էր, այնպես հագնվում են միայն անապատական ճգնավորները: Ինչ որ նշանավոր էր նրա կերպարանքի մեջ, դոքա էին կենդանի և կրակոտ աչքերն, որոնք իրանց առույգությամբ մի հայտնի բացառություն էին կազմում նրա զառամյալ հասակի մեջ:

Նա, առանց ինձ վրա ուշադրություն դարձնելու, սկսեց խոսել քեռի Պետրոսի և տերտերի հետ: Քանի րոպեից հետո ես ինձ բոլորովին ավելորդ զգացի նրանց հասարակության մեջ, մանավանդ երբ նշմարեցի, որ իմ ներկայությունը նրանց հաճո չէր, ուստի բարի գիշեր ասելով, հեռացա:

ԼԸ

ԲԱՐԿԱՑԱԾ ՄԱՐՈՆ

[5] Մեր հիշատակարանի մեջ բազմիցս հիշված Հաղբակը Վասպուրականի Փոքր Հաղբակ կոչված գավառը հասկանալու է, որն այժմյան Վանա փաշալիկի գավառներից մեկն է: Փոքր Հաղբակը իր լեռնային դրությամբ կազմում է մի բարձրավանդակություն, որ իր սառը կլիմայի պատճառով ավելի հարմար չէ երկրագործության համար, բայց ունի ճոխ արոտամարգեր, որ շատ նպաստավոր են խաշնարածներին:

Դուրս վազեցի քեռի Պետրոսի վրանից: Ես երկար չէի կարողանում մոռանալ անապատական ճգնավորին: Այս աբեղան ինձ երևում էր որպես մի կախարդական անձնավորություն: Քանի ժամ առաջ ես տեսա նրան «Կաթնաղբյուրի» ձորում. նա անցավ այնտեղից որպես մի անրջային ուրվական, մեղմ կերպով եղանակելով մի արաբական երգ: Նրա ձայնը թփերի միջից դուրս կանչեց կախարդ Սուսանին: Նա գրկեց Հյուբբիին և անհետացավ բլուրների մեջ: Այժմ կրկին ես տեսա նրան երկու մեծ դավադիրների վրանում: Ի՞նչ գործ ուներ Սուսանի և Հյուբբիի բարեկամը Կարոյի և ծերունի որսորդի թշնամիների մոտ.— այդ ես հասկանալ չէի կարողանում:

Այդ մտածողության մեջ ես անցա ուխտավորների բանակը: Հասնելով մեր վրանը տեսա այնտեղ բոլորը քնած էին. արթուն էր միայն Մարոն. նա դևի պես նստած վրանի մուտքի մոտ, սպասում էր ինձ:

— Ո՞րտեղ կորար դու,— հարցրուց նա, երբ տեսավ ինձ:

Ես ոչինչ չպատասխանեցի, և տեսնելով, որ վրանի մեջ կանայք քնած են, ներս չմտա, այլ նստեցի դրսում կանաչ խոտերի վրա: Բայց իմ լռությունը ավելի շարժեց Մարոյի բարկությունը:

— Շատ հարկավոր է,— ասաց նա ինքն իրան խոսելով,— չի էլ ուզում պատասխան տալ, կարծես ինձ համար կարմիր հարս է դարձել, սպասում է, որ ես դրան «բերանբացուկ»[6] պետք է տամ:

Այս խոսքերը մի այնպիսի հեգնական եղանակով արտասանեց Մարոն, որ անկարելի էր չծիծաղել: Բայց ես մտածեցի ծանր երևացնել ինձ, այս պատճառով երեսս շուռ տվի, որ նա չտեսնե իմ ծիծաղը:

Մարոն նստած էր վրանի դռանը ներսի կողմից, ես նրանից փոքր-ինչ հեռու էի:

— Եթե դու կգաս ինձ մոտ, այն ժամանակ քեզ հետ կխոսեմ,— ասացի ես:

— Շատ հարկավոր չէ,— պատասխանեց նա արհամարհանոք:— Ի՛նչ մեծ տղա է դարձել, պետք է նրա սպասին գնալ, ո՛նց չէ:

Ես նկատեցի, որ Մարոն բարկացած էր իմ վրա, պետք էր գիտենալ պատճառը. դրա համար ես մոտեցա և նստեցի նրա մոտ:

— Դու այսօր շատ ես խոսացել,— ասաց նա այժմ ավելի ծանր կերպով.— լավ է, որ գնաս քնես, գիտեմ, հոգնած կլինես:

— Ի՞նչ գիտես,— հարցրի զարմանալով:

— Ես գիտեմ…: Բայց դու լավ ընկեր չես, Ֆարհատ, ամո՛թ քեզ համար,— փոխեց նա իր խոսքը:— Քեզ հետ ժամադիր եղող աղջիկը այնքան շտապեց, որ թողեց «Կաթնաղբյուրի» մոտ իր սանդրը, բայց դու այնքան անշնորհք գտնվեցար, որ չկարողացար նկատել: Ա՛ռ, քեզ եմ տալիս, տար, առավոտյան իրան տո՛ւր, գլուխդ գովի՛ր, ասա՛, ես գտա, թող երեսդ սպիտակի:

---

[6] Հայաստանում դեռ շատ տեղերում մնացել է այս սովորությունը, որ նորահարսը, առաջին անգամ փեսայի տունը գնալով, առհասարակ ոչ մեկի հետ չի խոսում, բացի իր ամուսնի փոքրիկ քույրերից և փոքրիկ եղբայրներից: Նա և իր փեսայի հետ չի խոսի առաջին գիշերում, մինչև չստանա նրանից մի ընծա. այս ընծան կոչվում է «բերանբացուկ»:

Այժմ ես հասկացա, թե ինչու էր Մարոն բարկացել իմ վրա: Նա տվեց ինձ մի սանդր. դա Սոնայի սանդրն էր, որ մոռացմամբ թողել էր «Կաթնաղբյուրի» մոտ լողանալու ժամանակ: Բայց ո՞րտեղից էր ընկել Մարոյի ձեռքը:

— Ո՞վ տվեց քեզ այդ սանդրը,— հարցրի ես:

— Ես ինքս գտա այնտեղ:

— Դու մեզ տեսա՞ր:

— Կույր չէի, որ չտեսնեի:

— Բայց մենք ինչո՞ւ չտեսանք քեզ:

— Ես շատ անգամ դևի պես աչքի չեմ երևում,— պատասխանեց նա ծիծաղելով:

Մարոյի խորամանկությունները ես վաղուց գիտեի. այդ պատճառով իսկույն չկարողացա հավատալ նրան և ասեցի.

— Դու սուտ ես խոսում, այս սանդրը ուրիշ կերպով հասել է քո ձեռքը:

— Չե՞ս հավատում ինձ,— պատասխանեց նա պինդ ձայնով:

— Կուզե՞ս բոլորը կպատմեմ. նա աղբյուրի մեջ լողանում էր, դու հեռվից ապուշի պես նայում էիր, հանկարծ անցավ ձորի միջով ճգնավորը. նա երգում էր մի տխուր մեղեդի: Հետո հայտնվեցան Սուսանը և Հյուբբին, իսկ դուք բարձրացաք բլուրի վրա, նստեցիք նշենիների թփերի մեջ: Թե կուզես, կպատմեմ դուք ինչ խոսեցիք:

— Հիմա հավատում եմ:

Մարոն մտածության գնաց և րոպեական լռությունից հետո խոսեց.

— Խե՛ղճ Սոնա, ո՛րքան անբախտ է նա… իմ սիրտը չդիմացավ, երբ նա այնպես ցավալի կերպով խոսում էր իր մոր մահվան մասին և իր եղբոր կորստյան մասին: Իմ սիրտը չդիմացավ, և ես թաքնված թփերի մեջ, լաց էի լինում, Ֆարհատ:

Վերջին խոսքերի միջոցին ես նկատեցի Մարոյի աչքերում արտասուք:

— Դու հիմա էլ լաց ես լինում,— ասացի նրան:

Նա ոչինչ չպատասխանեց: Բայց հանկարծ մի կատաղի ցնցում փոխեց նրա հեզ, ցավակցական դեմքը, և նա խոսեց լի սպառնալիքով:

— Ֆարհատ, աստված վկա, ես նրա հորը շան պես կսատկացնեմ, թո՛ղ նա տերտեր լինի, մեղքից չեմ վախենա, գիտեմ, որ նա սատանա է:

— Բայց նա Սոնայի հայրն է:

— Ղորդ է, ես Սոնային շատ եմ սիրում, նա լավ աղջիկ է, եթե ես մի քույր ունենայի, նրանից ավելի չէի սիրի, բայց իմ Հորը ավելի եմ սիրում…

Մարոյի կատաղության պատճառը հայտնի էր. բայց նրա վրդովմունքը ինձ ծիծաղելի էր թվում, և ես փորձելու համար հարցրի.

— Տերտերն ինչո՞վ է մեղավոր:

— Դու կարծում ես, ես չլսեցի՞,— պատասխանեց նա.— ես բոլորը իմանում եմ, թե որպիսի խոր (հոր) է ուզում տերտերը փորել իմ հոր, Կարոյի և նրա ընկերների համար: Նրանք ի՞նչ են արել, ինչո՞վ են մեղավոր:

Ես աշխատեցի հանգստացնել կատաղած Մարոյին, որից ամեն բան սպասելի էր:

— Չէ՛, Մարո, այդ լավ չէ, ինչ որ դու մտքիդ դրել ես: Ճշմարիտ է, քո հոր դեմ դավադրություն կա, բայց մենք պետք է խոհեմ լինենք, մենք պետք է շտապենք շուտով վերադառնալ տուն և բոլորը հայտնել քո հորը:

— Շտապել պետք չէ, նա մի օրից հետո բոլորը կիմանա,— պատասխանեց Մարոն անփույթ կերպով:— Բայց ես իմ ուխտածը պետք է կատարեմ…

— Այդ թող մնա՛, ինչ որ դու ուխտել ես: Բայց դու ինձ այն ասա՛, թե քո հայրն ո՞րտեղից կարող է իմանալ:

— Ես նրա մոտ մարդ ուղարկեցի:

— Ե՞րբ, ո՞ւմը:

— Մըհեն կես ժամ առաջ այստեղ էր. նա այս կողմով անցնելով, եկել էր սուրբ աստվածածինը համբուրելու: Նրան ասել էին, թե մենք ևս ուխտավորների թվումն ենք. տեսա՝ ուրախ-ուրախ գալիս է: Ո՞րտեղից էր գալիս, նա ինձ չասաց, բայց շատ ուրախ էր: Ես պատմեցի նրան իմ լսածները հորս մասին: Նա բարկացավ, և էլ չսպասեց, որ գնա սուրբ աստվածածինը համբուրե, իսկույն վեր առավ իր ահագին լախտը և շտապեց հորս մոտ:

— Բայց նա իմանո՞ւմ էր, հայրդ որտեղ է:

— Իմանում էր: Ասաց. «Էդ ի՞նչ սատանայական բան է, ես մի օրից հետո բոլորը կպատմեմ որսորդին»: Թեև հայրս այժմ Շատախի մեջն է գտնվում, որ այստեղից մի քանի օրվա ճանապարհով հեռու է, բայց ես գիտեմ, որ Մըհեն քամուց ավելի արագ է գնում, նա էգուց չէ՝ մյուս օրը հորս մոտ կլինի:

Մըհեն չէր ասել Մարոյին, թե ո՛րտեղից է գալիս, բայց ես գիտեի, թե ուր էր գնացել նա և որտեղից էր վերադառնում: Նա եկել էր իր արյունոտ շրթունքով աստվածածինը համբուրելու…: Զարմանալի՛ է, կրոնական զգացմունքը գտնվում է և ամենակատաղի եղեռնագործի մեջ…: Բայց մի՞թե կարելի էր նրան եղեռնագործ համարել…

Մարոյի կարգադրությունները, թեև բավականին հանգստացրին ինձ, բայց ես դարձյալ պնդեցի, թե մեզ պետք է շտապել շուտով տուն վերադառնալու: Նա դարձյալ ընդդիմացավ ինձ:

— Ես չեմ գնա, մինչև ասածս չկատարեմ, ես այս գիշեր պատրաստվել էի, բայց…

Հեռվից լսելի եղավ մի մեղմ երգեցողության ձայն, նույնիսկ եղանակով, որ ես լսել էի այսօր «Կաթնաղբյուրի» ձորում: Մարոն լսելով ձայնը, փոխեց իր խոսքը:

— Այդ «ճգնավորն» է, որ երգում է,— ասաց նա,— ի՜նչպես լավ երգում է, լսի՛ր, Ֆարհատ:

Եվ իրավ, գիշերային լռության մեջ երգը հիանալի էր: Մարոն երկար ականջ դնելուց հետո, հարցրուց.

— Դու գիտե՞ս նա ով է, Ֆարհատ:

— Ես նրան չեմ ճանաչում, այսօր առաջին անգամ տեսա նրան «Կաթնաղբյուրի» ձորում, և նա երգում էր միևնույն այս երգը: Իսկ հետո երևցավ նա իմ քեռի Պետրոսի վրանում:

— Ո՛րքան միամիտ ես, Ֆարհատ:

— Ինչո՞ւ:

— Նրա համար, որ դու չկարողացար ճանաչել քո վաղեմի ընկերին:

— Ո՞վ էր նա:

— Ասլանը:

— Չեմ հավատում, դու ինձ վրա ծիծաղում ես, Մարո:

— Վեր կա՛ց, գնանք, նա մեզ կանչում է. ես հասկանում եմ նրա երգի միտքը, գնանք, մի՛ ուշացիր. նրան մեկ էլ կտեսնես ու կհավատաս:

Թեև այս խոսքերը Մարոն արտասանեց խիստ պինդ համոզմունքով, այսուամենայնիվ ես չէի կարողանում հավատացնել ինձ, թե մի զառամյալ անապատական աբեղա կարող էր Ասլանը լինել: Բայց Մարոն հաստատեց իր խոսքը մի ուրիշ փաստով, որ շատ հավանական էր: Նա հիշեցրուց ինձ այն նկատողությունը, որ արել էր նա, երբ առաջին անգամ տեսավ պառավ կախարդին և փոքրիկ Յյուբբիին, որ նստած ժայռի վրա, ուխտավորների համար գուշակում էր: Նա այն ժամանակ ասաց. «Կարոն կամ նրա ընկերներից մեկը պետք է այստեղ լինի» և ավելացրեց, թե «այս պառավն իսկույն հայտնվում է այնտեղ, ուր նրանք լինում են»: Եվ ես այնօր միթե չէ՞ի տեսել միևնույնը, երբ «Կաթնաղբյուրի» ձորում ծպտյալ աբեղան միացավ պառավ կախարդի հետ և համբուրեց Յյուբբիին:

Իմ տարակույսը փարատված էր. ես հոժարվեցա գնալ և գտնել «ճգնավորին», բայց մտածում էի մեր վրանը անտեր և առանց տղամարդի չթողնել: Երբ այդ մասին հայտնեցի Մարոյին, նա պատասխանեց.

— Սուրբ աստվածածինը իր ուխտավորներին կպահե, գնա՛նք:

Ես չհամոզվեցա: Նա խնդրեց ինձ փոքր-ինչ դրսում սպասել, իսկ ինքը մտավ վրանի ներսը: Մինչև նրա դուրս գալը, ես գտա վանքի գյուղացիներից մեկին, և նրան մի քանի ղուրուշ տալով, պատվիրեցի հսկել վրանին մինչև մեր վերադարձը:

Քանի րոպեից հետո դուրս եկավ Մարոն. ես հազիվ կարողացա ճանաչել նրան. նա փաթաթված էր մի լայն վանա աբայի (վերարկվի) մեջ և գլխին քրդի ձևով ապարոշ էր կապել:

— Դա ո՞վ է,— հարցրուց նա, տեսնելով գյուղացուն:

— Ես պատվիրեցի նրան հսկել վրանին մինչև մեր վերադարձը:

— Խաթունը արթուն է: Լավ, գնանք:

Երբ փոքր-ինչ հեռացանք, նա ասաց.

— Դու չես իմանում, Ֆարհատ, նա ինքը կգողանա: Այստեղ բոլորն էլ ավազակներ են:

— Վանքի սպասավորն երկյուղած կլինի,— պատասխանեցի ես:

— Չէ՛, այդպես չէ, ես իմ աչքով տեսա, ինչպես մի վարդապետ գողացավ և գրպանը դրեց իմ գցած գանձանակը: Նրանք մեզ խաբում են, Ֆարհատ, նրանք այն չեն, որպես դրսից երևում են… հայրս շատ է պատմել ինձ նրանց գործերի մասին…

— Քո վերարկվի տակից զենքի ձայն է լսվում, Մարո:

— Հայրս պատվիրել է ինձ, երբ գիշերով հեռու տեղ ես գնում, պետք է միշտ զենք ունենաս:

Ճանապարհին ես Մարոյից հարցրի, թե ո՞րպես նա կարողացավ ճանաչել ծպտյալ «ճգնավորին»:

— Սկզբում ես չկարողացա ճանաչել, երբ տեսա նրան «Կաթնաղբյուրի» ձորում,— պատասխանեց նա:— Թշվառականը մի այնպիսի մորուք և ծամեր էր շինել, որ ինքը սատանան չէր կարող հնարել, երբ կամենում է ծերի կերպարանք ընդունել: Երեսը ներկել էր և պառավի գույն էր տվել, մինչև անգամ խորշոմներ կային: Բայց աչքերը մնացել էին անփոփոխ: Ո՞վ չէ կարող ճանաչել Ասլանի գեղեցիկ աչքերը, եթե մի անգամ տեսել է նրան:

— Բայց ո՞ր դևը բերեց քեզ այնտեղ, «Կաթնաղբյուրի» ձորում: Մարոն բոլորովին անկեղծաբար խոստովանեց, թե նա հենց այնօր տիրամոր տաճարի մեջ նկատել էր, երբ Սոնան մոտեցավ և շշնջաց իմ ականջիս, նշանակելով տեսություն «Կաթնաղբյուրի» ձորում. թե այն շշունջը ծնուցել էր նրա սրտում կասկած և նախանձ… և ինքը չկարողացավ համբերել, եկավ այնտեղ…

— Եվ քո կասկածանքը փարատվեցա՞վ,— հարցրի ես, երբ նա վերջացրուց իր խոսքը:

— Դեռ ոչ բոլորովին…: Բայց ինձ համար միևնույն է…: Սոնան լավ աղջիկ է… ես սիրում եմ նրան… դու էլ պետք է սիրես…

Այս խոսքերը Մարոն արտասանեց կտրատելով, կարծես, նրա լեզուն այրում էին: Բայց նա մեղավոր չէր, նախանձը տիրում է բոլոր կենդանիների սրտին, որոնց մեջ զգացմունք կա:

Հեռվից այժմ ավելի պարզ լսելի եղավ «ճգնավորի» երգի ձայնը:

— Այս կողմով գնանք,— ասաց Մարոն, նրան կգտնենք այն լեռների մեջ:

ԼԹ

ԾԱԾԿԱՄԻՏ ԱՍԼԱՆԸ ԲԱՑՎՈՒՄ Է

Մենք գտանք «ճգնավորին» վանքից բավականին հեռու, լեռների մեջ, որ մոտ էին ծովեզրին: Նա նստած էր մի քարանձավի մեջ, որի մուտքը նայում էր դեպի Լիմ անապատը: Լուսավորված լուսնի արծաթափայլ շողքերով, այդ փոքրիկ կղզին երևում էր ծովակի մեջ մի մռայլ բծի նման: Քարանձավը, որի մեջ գտանք

«ճգնավորին», մի հին միայնակյացի բնակարան էր, որի հատակի վրա դեռ մնացած փոսիկների մասին տակավին կային կենդանի ավանդություններ, թե նրանք առաջ էին եկել իր անձը աստծուն նվիրած մարդու ստեպ ծնրադրությունից: Այնտեղ ճրագ չկար, բայց մի անկյունում վառվում էին մի քանի կտոր փայտեր, ոչ թե տաքացնելու համար, այլ լույսի համար:

Մի կողմում խորին քնի մեջ պառկած էր պառավ կախարդը: «Ճգնավորն» արթուն էր. նա իր փառահեղ մորուքով նստած, մտածումէր: Նրա ծնկների վրա գլուխը դրած, ննջել էր փոքրիկ Հյուբբին:— Հրաշալի՛ մի տեսարան էր այդ:

Երբ մենք ներս մտանք, «ճգնավորը» խիստ զգուշությամբ փոքրիկ վիուկի գլուխը դրեց իր վերարկվի վրա, որ նրա անուշ քունը չխանգարե, և վեր կացավ: Նա գրկեց առաջ ինձ և համբուրեց, հետո գրկեց և Մարոյին: Մարոն չընդդիմացավ նրան, որովհետև ոչ մի աղջիկ չէր կարող մերժել այն անմեղ շրթունքը, որ այնպես եղբայրաբար մերձեցան սիրելի օրիորդի շրթունքին:

Այնուհետև «ճգնավորը» ոտքից մինչև գլուխ զննելով ծպտյալ և զինվորված Մարոյին, ասաց.

— Ահա այդպես լավ է. այդ սիրում եմ ես:

Մենք նստեցինք:

— Այժմ ես կխլեմ իմ դիմակը,— ասաց նա,— բարեկամներիս մոտ պետք չէ ինձ թաքնված մնալ:

Նա առեց իր կեղծամը, մորուքը և մեր առջև ներկայացավ Ասլանը իր բնական կերպարանքով:

Ես մի քանի խոսքերով հայտնեցի մեր գալու նպատակը, այնուհետև պատմեցի այն բոլորը, ինչ որ լսել էի Սոնայից «Կաթնաղբյուրի» ձորում, այլև հաղորդեցի նրան՝ ինչ որ ասել էին ինձ քեռի Պետրոսը և տերտերն իրանց վրանում: Այնուհետև ավելացրի, թե որպիսի դավադրություն է պատրաստվում ծերունի որսորդի և նրա բարեկամների դեմ: Իսկ Մարոն իր կողմից հայտնեց իր արած կարգադրությունները, թե Մըհեի ձեռքով նա արդեն բոլորը իմացում տված է իր հորը:

— Շնորհակալ եմ ձեր հոգածության մասին,— ասաց նա տխուր կերպով:— Բայց այդ բոլորը ես արդեն գիտեի: Իմ աբեղայական կերպարանքը առիթ տվեց ինձ մտնել դավադիրների ժողովների մեջ որպես խորհրդակից: Բայց նրանց ճիգը անզոր է…

Որպես երևում էր, Ասլանը շատ տխուր էր, և մեր այցելությունն այնքան հաճելի չէր նրան: Գուցե նա չէր ցանկանում, որ իր կերպարանափոխությունը մերկացվեր մեր մոտ, գուցե նա մեզ այնքան անփորձ էր համարում, որ չէր կարող հավատալ մեզ իր գաղտնիքները, որ նա պետք է ծառայեցներ մեզ բոլորովին անհայտ նպատակների:

Առժամանակ մտածելուց հետո, նա խոսեց.

— Ես չեմ զարմանում գործերի այսպես լինելու մասին, այլ ցավում եմ, որովհետև ամեն ժամանակ, երբ հայի համար որևիցե դավաճանություն է պատրաստվում, նրա մեջ խառն է լինում դարձյալ նույնիսկ հայի մատնիչ ձեռքը: Դա մի պատմական եղեռնագործություն է, որ սկսյալ ամենահին դարերից, խիստ հաճախ կրկնվել է մեր ազգի կյանքում: Դա հայի վա՛տ հատկություններից մեկն է…

Ես առաջին անգամ տեսնում էի Ասլանին երկար խոսելիս, նա առհասարակ լուռ և ծածկամիտ երիտասարդ էր: Բայց նրա խոսելու ձևը շատ տարբեր էր Կարոյից: Կարոն ժողովրդի որդի էր նրա խոսքերն անտաշ էին և պարզ, բայց նրանց մեջ ուժ և զորություն կար, նրանք ազդում էին ավելի մարդու սրտի վրա: Ասլանը ժողովրդի կրթված որդին էր, նրա խոսքերը կոկված էին և գեղեցիկ, ազդում էին ավելի մարդու մտքի վրա:

Նա շարունակեց.

— Թե ի՞նչ հետևանք կունենա մեր ձեռնարկությունը, մենք այժմեն նախագուշակել չենք կարող, միայն վստահ ենք նրա հաջողության մեջ, որովհետև մենք հետևում ենք բնության ընդհանուր օրենքներին: Թե բնության մեջ և թե մարդկային կյանքում ոչինչ բան առանց պատճառի չէ կատարվում: Մենք տեսնում ենք, ամեն մի ճնշված և սահմանափակված զորություն որքան ավելի սեղմվում է, այնքան ավելի զարգանում է նրա մեջ ընդդիմահարության ուժը: Այնուհետև նա պիտի պայթի, նա պիտի խորտակե իրան սահմանափակող պատվարը և իր բնական ազատ ծավալականությանը պիտի հետևի: Ժողովուրդը, ամբոխը նույնպես մի զորություն է: Նա երկար չէ կարող համբերել իրան ճնշող և ստրկացնող կոպիտ ձեռքին: Նա վերջապես պիտի խլրտի, պիտի խորտակե իր շղթաները և պիտի թոթափե բռնակալի լուծը: Ոռպեն հասել է… այս դրության մեջն է այժմ մեր ժողովուրդը:

— Քեռի պետրոսները, տեր թոդիկները,— շարունակեց նա,— ժողովրդի անհարազատ որդիքն են, նրանք կտրված են ընդհանրությունից, որովհետև իրանց եսական շահերին են ծառայում: Նրանց թիվը փոքր չէ և ավելի ցավալին այն է, որ նրանք ժողովրդի առաջնորդող մասն են կազմում: Ահա այստեղ է մեր դժբախտությունը:

— Ի՞նչ առանձին շահեր պետք է ունենան,— հարցրի ես:

— Քեռի Պետրոսը մի երևելի քուրդ իշխանի տան «շահբանդան» է. նա մատակարարում է բոլոր պիտույքները, ինչ որ կհարկավորվի նրա տանը: Նա այնպիսի ընդարձակ իրավունքներ ունի իշխանի տնտեսության մեջ, որ առանց նրա հաճությունը ստանալու, առանց նրանից հարցնելու, կատարում է բոլոր խնդիրները, բոլոր ապսպրանքները՝ ինչ որ տանեցիք պահանջում են իրանից: Սկսած ուտելեղեններից, հագուստից, մինչև ամենամանր բաները նա է տալիս: Վաճառականությունից անտեղյակ քրդի հետ ցանկալի է այսպիսի առևտուր ունենալ: «Շահբանդան» ինքն է գնահատում, ինքն է գրում իր տետրակների մեջ իր տվածը, և տարեգլխին հայտնում է մի ահագին գումարի պահանջ: Միամիտ քուրդն ընդունում է, բայց նա փող չունի, որ պարտքը հատուցանե, բացի դրանից, նա զուտ արծաթով պարտք վճարելու սովորություն չունի: Նա իր ստացած նյութը փոխարինում է ուրիշ նյութով: Այս վերջինը նա ունի: Բավական է միայն, որ իշխանը բարեհաճեր մի արշավանք գործել դեպի երկրի որևիցե կողմը, և ահա նա վերադառնում է ոչխարների, ձիերի, կովերի, գորգերի ու կապերտների ահագին ավարով: Մի մարդ պետք է, մի վաճառականության գլուխ ունեցող մարդ, որ այս մթերքը տանե և մի հեռու երկրում արծաթի հետ փոխե: Եվ ահա քեռի Պետրոսը պատրաստ է. նա ամեն տեղ ունե իր գործակալները գողացած ապրանքը «սաղացնելու» համար: Նա իշխանից արծաթի պահանջ ունի և փոխարենը ստանում է այդ ավարը: Իսկ գողացած ապրանքը միշտ էժան է լինում…

— Քեռի պետրոսները,— շարունակեց նա,— մի տեսակ ավազակներ են, միայն վաճառականի կերպարանքով: Ամեն մի քուրդ իշխան ունի դրանցից մի-մի հատ: Քեռի պետրոսներին ցանկալի է, որ իրանց իշխանը միշտ հաստատուն մնար իր անսահման իշխանության մեջ, թեև նրանք գիտեն, որ իրանց ստացած մթերքը

հափշտակված է հազարավոր թշվառ հայերից: Բայց փույթ չէ նրանց հայի արտասուքը, բավական է, որ իրանք շահվում են…

Ասլանը խոսում էր մեղմ և անվրդով կերպով, որպես թե շատ հասարակ առարկայի վրա լիներ նրա խոսքը: Բայց նա խոսում էր առանց լռելու, որովհետև նրա սիրտը լցված էր: Այդ ժամանակ ես չէի կարողանում առանց սարսափելու նայել Մարոյի երեսին, նրա շրթունքները դողում էին, գույնը ստեպ-ստեպ փոփոխվում էր, և երեսի բոլոր արտասանության մեջ երևում էր խիստ կատաղի բարկությունը:

— Պետք է ոչնչացնել այս բոլոր քեռի պետրոսներին,— ասաց նա երկար լռությունից հետո:

— Դա մի առանձին օգուտ չի բերի,— պատասխանեց Ասլանը իր սովորական սառնությամբ:— Ոչնչացնելով մի հասարակության միջից ավազակներին, մենք դրանով ավազակությունը ոչնչացրած չենք լինի: Դա ասիական կոշտ միջոց է չարությունը բառնալու համար: Մարդկային կյանքի մեջ ոչ մի երևույթ՝ առանց նույն հասարակությանը հատուկ պատճառների՝ երևան չէ գալիս: Վեր առնենք մի ավազակ, մի մարդասպան, մի ստրուկ և քննենք նրանց կյանքի պատմությունը, կտեսնենք, որ նրանց կյանքն այնպիսի պայմանների մեջ է դրված եղել, որ ավազակը պետք է ավազակ լիներ, մարդասպանը՝ մարդասպան և ստրուկը՝ ստրուկ: Փոխի՛ր Նրանց կյանքի պայմանները, և դու կտեսնես, որ նրանք օրինավոր մարդիկ կդառնան: Եվ այսպես, մենք միայն պիտի ցավենք, որ մեր մեջ հայտնվում են անպիտան մարդիկ, բայց դատապարտել նրանց չենք կարող, որովհետև մեր հասարակությունը իր փտած կազմակերպությամբ ինքն է ծնել այն մարզիկներին: Եվ եթե մենք ցանկանում ենք, որ չարագործությունը բառնանք, պետք աշխատենք նախ ուղղել հասարակության վատ կազմակերպությունը, և այն ժամանակ նրա անդամները բոլորը լավ մարդիկ կլինեն:

— Ես ձեր ասածները չեմ հասկանում,— պատասխանեց Մարոն,— թե ինչու մարդիկ այսպես կամ այնպես են լինում: Ես գիտեմ միայն, որ պետք է օձի գլուխը ջարդել, երբ տեսնում ես, որ նա պատրաստվել է քեզ խայթելու: Ես երդվել եմ սատկեցնել քեռի Պետրոսին նրա համար, որ նա իմ հոր թշնամին է, և այս դիտավորությունը արդեն հայտնել էի Ֆարհատին:

— Քո նպատակը շատ մասնավոր է,— ասաց Ասլանը,— դրանով շատ չես օգնի «ընդհանուր գործին» Եթե այստեղ լիներ մեր ընկեր Կարենը, նա գուցե կհամաձայնվեր քեզ հետ, բայց ես համարում եմ որ այդ մանուկ սրտի բորբոքում և ավելի ոչինչ:

Առժամանակյա մտածությունից հետո նա դարձյալ խոսեց.

— Եթե օձը մի հատ լիներ, որպես դու ասացիր, պետք էր նրա գլուխը ջարդել, այսպիսով մենք ազատված կլինեինք գոնե մի չարագործից. բայց դժբախտաբար նրանց թիվը շատ է: Ես եղել եմ Ասիական Տաճկաստանում, Կոստանդնուպոլսում, Եգիպտոսում, մի խոսքով ամեն տեղ, ուր կան հայեր: Ես բավականաչափ ուսումնասիրած եմ մեր ազգի թե ներկա և թե անցյալ կյանքը: Ես տեսել եմ, որ սկսած ամենաստոր քուրդ իշխանի դռնից, սկսած նահանգական կուսակալ փաշաների դռնից, մինչև վեզիրների դռները, մինչև սուլթանի բարձրագույն դուռը, բոլորը բռնված են քեռի պետրոսներով: Եվ որքան մեծ անձի մոտ է նրանց ծառայությունը, այնքան մեծ է և նրանց վնասակարությունը: Նրանք բոլորն էլ շատ նման են միմյանց. բոլորն էլ ավազակներ են. զանազանությունը միայն գողության տեսակի մեջն է:

— Բայց գողը այնքան վնասակար չէ, երբ մեկի ոչխարը, մյուսի ավանակը գողանում է. իմ ասածները այնպիսի գողեր են, որ նրանց վնասը հասնում է մեր ամբողջ ժողովրդին: Նրանք խիստ հարմար գործիքներ են մեր բռնակալների ձեռքում: Նրանք ճնշում են, ոչնչացնում են ամեն զորություն, որ գործ է դրվում թշվառ ստրուկին հանգստություն պարգևելու համար: Եվ այդ գողերը, այդ ավազակները, որպես ասեցի, մեր հասարակության առաջնորդող անձինքն են…

— Թողնենք մանր քեռի պետրոսներին, անցնենք դեպի խոշորները: Սուլթանի դռան համարյա ամբողջ տնտեսական և գանձային կառավարությունը հայ սառաֆների ձեռքումն է: Նրանք կրում են ավելի բարձր տիտղոսներ,— կոչվում են ամիրաներ: Տեսեք ի՛նչ է ամիրա սեղանավորի (սառաֆի) պաշտոնը. կառավարությունը տալիս է գավառների հարկահանությունը՝ միևնույն ժամանակ նրանց դատավորությունը փաշաներին կապալով: Բայց նա փաշայի վրա վստահություն չունի, թե նա իր ժամանակին կներկայացնե նշանակած տուրքը: Փաշան պետք է մի երաշխավոր տա: Ամիրա սեղանավորը միշտ պատրաստ է այս երաշխավորությունը իր վրա ընդունելու, որովհետև նրա մեջ մեծ շահեր ունի, որովհետև փաշայի կապալառության վաստակի մի մասն էլ ինքն պիտի վայելե: Բայց որտեղի՞ց է գոյանում վաստակը:— Բյուրավոր թշվառ հարստահարվածների քրտինքից: Փաշան սարսափելի անգթություններով հավաքում է իրան հանձնված վիճակից տերության հարկը և ուղարկում է երաշխավոր սեղանավորին, իսկ սեղանավորն իր կողմից պետք է արծաթը ներկայացնե տերության գանձարանը: Բայց նա զուտ արծաթ չէ տալիս, այլ փողի փոխարեն ետ է դարձնում գանձարանին թղթեր (փուսուլաներ), որոնց ինքը նույնպես փողի տեղ ընդունել էր գանձարանից: Այսպիսով նա «սաղացնում է» իր ձեռքի թղթերը:

— Բայց ո՞րտեղից ընկան նրա ձեռքը այդ թղթերը,— հարցրի ես, լավ չհասկանալով Ասլանի վերջին խոսքերը:

— Սեղանավոր ամիրան,- պատասխանեց նա,- զանազան առևտրական հարաբերություններ ունի բարձրագույն դռան հետ. կամ նա ընդունել է զորքը կերակրելու և հագուստ մատակարարելու պատվավորությունը և կամ նա իր ձեռքում ունի, օրինակ, հարեմի տնտեսությունը: Աշխարհի ամենապատվական գոհարներով զարդարում է նա սուլթանի բազմաթիվ կնիկներին, և աշխարհի ամենաթանկագին փարչաները մատակարարում է նրանց հագուստի և պաճուճանքի համար: Այս բոլորի փոխարեն նա չէ ստանում, որպես ասում են «նաղդ փող» — նրան տալիս են թղթեր միայն: Ահա նույն թղթերն է, որ նա կրկին ետ է դարձնում գանձարանին իր երաշխավորության պարտավորությունը կատարելու ժամանակ:

— Հիմա դուք տեսա՞ք,— շարունակեց նա,— որ ամիրա սեղանավորը, բարձրագույն դռան տնտեսը, զորքի և հարկերի կապալառուն նույնպիսի ավազակներ են, որպես քուրդ իշխանի «շահբանդան» — որպես քեռի Պետրոսը: Բայց նույն «ամիրաներն» են մեր ազգապետները, նրանք են դարձնում մեր ազգի կառավարության գանձը դեպի ամեն կողմ, որ կողմը որ իրենց հաճելի է…: Այժմ ի՞նչ հույս կարող ենք ունենալ նրանցից,— մեր արյունը ծծողներից, մեր աշխատության վաստակը մեր ձեռքից խլողներից…: Նրանց համար միշտ ձեռնտու է մի անկարգ և բռնակալ կառավարություն, որի պղտորության մեջ կարողանում են որսալ իրանց շահերը: Հայի արտասուքը և թափած արյունը նրանց չէ ազդում, նրանք իրանց քսակը հարստացնելու համար են միայն մտածում…

— Եվ այսպես, մեր ժողովրդի դրամատերերը, այսինքն այն անձինքը, որոնց ձեռքում կա նյութական կարողություն, փոխանակ օգնելու, որ մշակը և գյուղացին հաց և հանգստություն ունենան, ավելի իրանք են մաշում նրանց կենսական զորությունը,

ավելի իրանք ամրացնում նրանց ստրկության շղթաները: Թեև նրանք գործողությունները կատարվում են անուղղակի կերպով, բայց միևնույն է՝ լինել ավազակ, կամ ավազակի ձեռքում գործիք: Բայց ազգը, միամիտ և տգետ ազգը պարծենում է իր «ամիրաների» փառքով, խոնարհվում է նրանց առջև, և խորին հարգությամբ մատուցանում է իր խոնարհ երկրպագությունը…

— Բայց ի՞նչպես է լինում, որ այսպիսի վատ մարդիկ մեծամեծ պաշտոնների են հասնում,— հարցրի ես:

— «Հայը հավատարիմ է, ասում է թուրքը, նա լավ ծառայել գիտե»… Այո՛, հավատարիմ է նա և նրա հավատարմությունը հնար է տալիս վայելել կառավարության վստահությունը: Բայց հավատարմություն բառը բռնակալի լեզվում ունի բոլորովին այլ նշանակություն,— նույնիսկ նշանակությունը,— որպես ավազակապետը իր ձեռքի տակ եղող սրիկաներին իր հավատարիմ պաշտոնյաներ է կոչում:

— Հայ դրամատերերի այս տեսակ «հավատարմությունը» մի կողմից առիթ տվեց նրանց իրանց գործունեությունը նվիրել կառավարության պիտույքներին, մյուս կողմից, զրկեց նրանց մի ավելի հաստատուն և ընդարձակ ասպարեզից, այն է՝ արդար և խղճմտանքով վաճառականությունը:— Այս ասպարեզը մնաց հույներին:— «Հույնը անհավատարիմ է», ասում է թուրքը, և նրա վրա վստահություն չունի, նրան գործ չէ հանձնում: Դա իրավ է: Որովհետև հույնը այնքան մեծամիտ է, որ նա չէր կարող հայի պես իրան այնքան ստորացնել, որ կարող լիներ հաշտվել իր ատելի թշնամու հետ,— իր երկիրը տիրողի և իր ազգակիցներին ստրկացնողի հետ: Այս պատճառով հույն դրամատերերը չուզեցին ամիրաներ, սառաֆներ և տերության կապալառուներ դառնալ. նրանք ձեռք առին ազատ վաճառականությունը, սկսեցին երկրի արդյունաբերությունը դուրս հանել և դրսից ներս բերել: Եվ ահա այսօրվա օրում Տաճկաստանի ընդարձակ վաճառականությունը նրանց ձեռքումն է:

— Բայց հայերը բոլորովին զուրկ չեն վաճառականությունից,— կտրեցի ես Ասլանի խոսքը:

— Այն քո տեսածը վաճառականություն չէ,— պատասխանեց նա,— այն մի տեսակ վաշխառություն է, որով պարապվում են հրեաները: Վեր առնենք, օրինակ, Վանա նահանգը, որը ձեզ փոքր ի շատե ծանոթ է, քննելով այստեղի վաճառականների գործունեությունը, դուք կտեսնեք միևնույնը, ինչ որ անում են մայրաքաղաքներում մեր խոշոր դրամատերերը: Զանազանությունը միայն նրանումն է, որ դրանք մանր հարստահարողներ են, այլ խոսքով, փոքրիկ ավազակներ են, իսկ նրանք — մեծ: Մեր գյուղացիները միշտ փողի կարոտություն ունեն հարկեր վճարելու համար և այլ կենսական պահանջների համար: Փողը նրանք ստանում են վաճառականից, իհարկե, ծանր տոկոսներ վճարելով: Գյուղացիները նույնպես պարտքով գնում են վաճառականից իրանց տան, հագուստի և այլ հարկավորությանց վերաբերյալ իրեղենները: Գալիս է պարտքը վճարելու ժամանակը. գյուղացին փող չունի որ տա, վաճառականը հափշտակում է նրա բոլոր երկրագործական արդյունքը կես գնով: Այսպիսի ավազակները կցանկանա՞ն, որ գյուղացու վիճակը բարվոքվի, կցանկանա՞ն, որ նա փողի կարոտություն չունենա: Ավելացնենք դրա վրա քրդի, թուրքի, տերության հարկահանների հարստահարությունները.— խեղճ գյուղացին ինչո՞վ կարող է այս բոլորին բավականություն տալ: Նրա երկրագործությունը դեռ իր նահապետական ձևի մեջն է, ավելի արդյունք չէ տալիս: Նա արհեստ չգիտե, որ իր ձեռքի արդյունաբերությունը մշակված կերպով վաճառահանե դեպի օտար երկրներ: Այլևս ինչո՞վ կարող է նա իր ընտանիքը պահել, երբ իր աշխատության այն փոքրիկ վաստակն ևս ձեռքիցը խլում են: Ահա այստեղից է ծագում այն տխուր երևույթը, որ մեր ժողովուրդը հայրենի հողի վրա իր ապրուստը ճարելու հնարներ չունի: Նրա

աշխատության արդյունքը նրա ձեռքից խլում են. նա մնում է միշտ աղքատ և միշտ առանց հացի, և այդ պատճառով ստիպված է թողնել հայրենի հողը և օտար երկրներում բախտ որոնել: Եվ քանի՛ հազար թշվառ ընտանիքներ այժմ մնացել են առանց տղամարդների. միայն Կոստանդնուպոլսում այժմ 40 հազար հայ պանդուխտներ կան, և նրանց մեծ մասը վանեցիներ են: Ի՞նչ անե խեղճ գյուղացին, որ չգաղթե: Թողյալ այն, որ նրան կողոպտում է թուրքը, քուրդը և տերության պաշտոնյան,— նույնիսկ իր արյունակիցը, իր կրոնակից հայը նրա կյանքի զորությունը ծծում է, նրան խեղճության և թշվառության մեջ է գցում: Տաճկաստանի բոլոր քաղաքները լցված են հայ մշակներով կամ հայ համալներով.— բայց դրանք մեր երկրի գլխավոր ուժերն են, որ մաշվում են և ոչնչանում են պանդխտության մեջ:

— Դուք տեսաք,— շարունակեց նա,— որ հայ դրամատերերը, հայ վաճառականը՝ մեր հասարակության բոլորովին ավերված և վնասակար մասն է. նրանցից մենք ոչինչ բարիք չենք սպասում: Նրանք պաշտում են իրանց քսակը և ավելի ոչինչ: Վաճառականը ազգ և հայրենիք չունի, նրա հայրենիքն այնտեղ է, որտեղ են նրա շահերը: Եվ այս տեսակ վաճառականությունը (եթե կարելի է վաճառականություն կոչել) ավելի վտանգավոր է դառնում, երբ նա ներքին կապ ունի կառավարության պաշտոնակալների և նրանց անիրավ գործունեության հետ: Դուք շատ անգամ և շատ տեղ տեսած եք այս բանը. օրինակ, գյուղացին պատրաստի արծաթ չունի և հարկի փոխարեն տալիս է իր արդյունաբերած նյութի մի մասը, հարկահանը չէ ընդունում, և ոչ ժամանակ է տալիս Նրան, որ կանոնավոր կերպով վաճառե և հարկը լրացնե: Դուք տեսնում եք, որ իսկույն հայտնվում է հայ վաճառականը, և օգուտ քաղելով գյուղացու նեղ դրությունից, խոստանում է հարկահանի փողը տալ, և խիստ չնչին գնով առնում է գյուղացու դառն աշխատության պտուղը: Հիմա տեսնո՞ւմ եք, դրանք բոլորն էլ քեռի պետրոսներ են, միայն զանազան կերպարանքներով…— Քեռի պետրոսներին միշտ ձեռնտու է միանալ քուրդ իշխանների հետ և դավադրություն մեքենայել մեր դեմ…

Ասլանի ասածները ես բոլորը հասկանում էի, որովհետև իմ փորձած և տեսած բաներ էին: Կարծես թե, ես բոլորը առաջուց գիտեի, թե ոչ մի անգամ իմ մտքով անցած չէին նրանք, և ոչ մի անգամ իմ ուշադրությունը գրաված չէին: Կյանքի խոսքը միշտ հասկանալի է լինում մարդուն, որքան և նա անզգա լիներ, որովհետև այն խոսքը ուղղակի վերաբերում է նրա գոյության պահանջներին:

— Այս բոլորը հասկանում եմ,— ասեցի ես,— թե ինչո՞ւ քեռի պետրոսներն այսպես են վարվում, բայց չեմ հասկանում մի բան, թե մեր տեր թոդիկներն ի՞նչ շահ ունեն միանալու դրանց հետ:

— Դրանք էլ մի տեսակ վաճառականներ են,— պատասխանեց նա.— դրանք էլ ունեն իրանց կրոնական մենավաճառությունները: Զանազանությունը միայն վաճառքի նյութի մեջն է: Եվ վաճառականը միշտ խաբեբա է, միշտ խարդախ է, միշտ անիրավ է: Իբրև օրինակ, ես կխոսեմ միայն այս վանքի վանահայր Կարապետ վարդապետի վրա: Դա առաջ տեր Հուսական որդու վանքի վանահայրն էր, որն այս կողմերի աննշան և ոչ այնքան արդյունավոր վանքերից մեկն է: Նա մտածեց ձեռք ձգել սուրբ աստվածածնի վանքը, և ի՞նչ միջոցով.— խոստացավ մի քուրդ իշխանի, թե տարեկան արդյունքի կեսը նրան կտա, միայն թե նա օգնե իրան վանահայր լինելու, և այսպիսով հասավ իր նպատակին: Եվ դուք ձեր աչքով տեսաք, թե ո՛րպես քուրդ իշխանի գործակալները, մտած մեր տաճարի սրբարանի մեջ, հսկում էին գանձանակների վրա: Հիմա հարցնում եմ, դուք մի պարզ նմանություն չե՞ք տեսնում այս եկեղեցականի և կառավարության կապալառվի մեջ…:

Մեր խոսակցությունն ընդհատեց պառավ կախարդի ձայնը, որն իր անրջային զառանցությանց մեջ խոսում էր զանազան կցկտուր և մեզ անհասկանալի խոսքեր:

Եվ զարմանալին այն է, որ նա խոսում էր խիստ մաքուր հայերեն լեզվով: Նրա խոսքերի մեջ ստեպ լսելի էր լինում անունս Հռիփսիմե: «Ես կայրեմ ամրոցը… ասում էր նա. կխորտակեմ նրա պարիսպները… իմ Հռիփսիմեն այնտեղ տխուր է… ես կազատեմ նրան… մոտ է օրը… տագնապի մեծ օրը… արյուն, հուր և փոթորիկը կմաքրե այս երկիրը… Հռիփսիմե՛, շա՛տ տանջվեցար… ես կսրբեմ քո արտասուքը»…

— Այս պառավը միշտ խոսում է մի «ամրոցի» և այնտեղ պահված մի «աղջկա» մասին,— ասացի ես Ասլանին:

— Դա նրա ցնորքն է…— պատասխանեց նա.— խելագարները շատ անգամ ունենում են մի երևակայական ինքնագաղափար, որը մոռանալ կարող չեն…:

— Դա խոսում է հայերեն, և ո՛րքան լավ է խոսում, ես առաջին անգամ լսում եմ դրա հայերեն խոսելը,— մեջ մտավ Մարոն:

— Բոշաներն ամեն լեզվով խոսում են,— ասաց Ասլանը ժպտալով.— երևի նա զգում է, որ Հայաստանումն է պառկած…:

— Բայց այս փոքրիկ վիուկը ի՞նչու լուռ է,— ասաց Մարոն, և խոնարհվելով՝ համբուրեց Հյուբբիի երեսը:

— Նա խելացի է…— պատասխանեց Ասլանը, ապա խոսքը փոխեց,— դուք ավելի լավ կանեք, որ այժմ հեռանաք այստեղից. ահա մոտ է արեգակի ծագելը. թող ձեզ չտեսնեն այստեղ:

Արշալույսը, իրավ, սկսել էր շառագունել. մենք առանց նկատելու անցուցել էինք ամբողջ գիշերը: Բայց Ասլանի մեզ հեռացնելու պատճառը ոչ այնքան լույսի ծագելն էր, որքան այն, որ նա վախում էր, չլինի թե մենք լսեինք պառավ կախարդի բերնից մի անզգույշ խոսք, որը կմերկացներ այն գաղտնիքը, թե ի՞նչու պառավը իր փոքրիկ Հյուբբիի հետ միշտ անբաժան էին Կարոյից և նրա ընկերներից, և կամ այն ի՛նչ «ամրոցային աղջիկ» էր, որ պառավ կախարդի երևակայության մշտական ցնորքն էր դարձել, որպես աշխատում էր մեզ հավատացնել ծածկամիտ Ասլանը…

Մենք ընդունեցինք Ասլանի ասածը և պատրաստվեցինք գնալու դեպի վանքը:

— Քանի որ այստեղ եք,— ասաց նա,— մենք կրկին ու կրկին անգամ պետք է տեսնվենք, և հարկավոր է, որ տեսնվենք, մենք խոսելու շատ բաներ ունենք…

Խ

ԱՍԼԱՆԻ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արեգակը արդեն ծագել էր, երբ մենք հասանք վանքի մոտ: Մարոն այնպես անցավ ուխտավորների բանակի միջից, որ ոչ ոք նրան չճանաչեց:

Ես այնուհետև մի քանի անգամ տեսնվեցա Ասլանի հետ. նա իր աբեղայական կերպարանքով հայտնվում էր ուխտավորների ամեն շրջաններում: «Այստեղ, ասում էր նա, այս տոնախմբության առիթով հավաքվել են ամեն երկրի հայեր, և ես նրանց լավ ուսումնասիրելուհամար փոխեցի կերպարանքս, գիտեի, որ աբեղան ավելի մատչելի է նրանց: Այս մարդիկն առանց զգացմունքի, առանց եռանդի չեն. նրանք հասկանում են իրանց դրության բոլոր այլանդակությունը, բայց դարևոր

հարստահարությունների տակ ճնշվելով, մինչ այն աստիճան հոգով և մարմնով թուլացած են, որ շատ բնական են գտնում իրանց վիճակի բոլոր դառնությունները: Նրանք կարծում են, թե այլ կերպ լինել կարող չէր, թե իրանք ստեղծված են ստրուկներ լինելու համար: Մի ձեռք, մի զորեղ ձեռք պետք է, որ դրանց վեր բարձրացնե ընկած դրությունից և կանգնեցնե մարդկային ազատ իրավունքների վրա»: Այնուհետև նա երկար խոսում էր ինձ հետ զանազան առարկաների վրա, ես մինչև այսօր չեմ մոռացել, և կարող եմ բոլորը բառ առ բառ գրել: Նա ասում էր.

«Լինում է, այո՛, որ մի ամբողջ ժողովուրդ ինքն է կանգնում ոտքի վրա, ինքն առանց օտարի ձեռնտվության թոթափում էր իր վզից ստրկության լուծը: Բայց դա լինում է այն ժամանակ, երբ նա բավականին հասկացել է, թե ինչ բան է ազատությունը: Եթե մեր ժողովրդի առաջնորդող մասը նրան այն շավղի մեջ տված լիներ, նրան այնպիսի ուղղություն տված լիներ, որ նա վերջապես հասկանար, թե որքան վատ է օտարի կոպիտ ուժի տակ ճնշված դրությունը, թե որքան լավ է իր սեփական հողի վրա իր քրտինքով ազատ ապրելը.— *մեր գործը* շատ հեշտ առաջ կերթար…

Բայց ո՞վքեր են մեր ժողովրդի առաջնորդող անձինքը:— Մենք ազնվապետական դաս չունենք, մենք ունենք վաճառականներ և եկեղեցականներ: Վաճառականները, այլ խոսքով դրամատերերը, դուք գիտեք, ի՛նչ տեսակ հրեշներ են. մնում են եկեղեցականները, որոնց ձեռքումն է ժողովրդի կրթությունը և նրա բարոյական և մտավոր դաստիարակությունը: Եկեղեցականը, որ ազգի մեջ և լիներ նա, միշտ ընդդեմ է մարդկային անհատական ազատության: Եկեղեցականը միշտ ընդդեմ է ազգայնության գաղափարին. նա ճանաչում է ազգը միայն կրոնքի անունով. նրա «հոտի» մեջ «խուժդուժ, սկյութացի և հույն» — բոլորը մեկ են: Եկեղեցականը միշտ ընդդեմ է աշխարհային բարեկեցության. նա չէ կարող համբերել, որ մարդը ճանաչեր իր հայրենիքը, այսինքն երկրի այս կամ այն կտորի վրա հիմներ իր կյանքի և ապրուստի գոյությունը: Եկեղեցականը հերքում է ներկա աշխարհը, նրա հայրենիքը երկինքն է.

Ուրեմն մի ժողովուրդ, որ հանձնված էր եկեղեցականի կրթությանը, կարո՞ղ է մտածել այս բաները.— թե ինքը մի ազգի որդի է, ունի իր առանձնությունները, իր պատմությունը և իր ավանդությունները, որոնք իր համար նույնքան սուրբ են, որքան սուրբ է ազգային ինքնուրույնությունը: Թե իր նախնիքը թողել են իրան մի կտոր հող. դա իր նվիրական ժառանգությունն է. այն հողը պետք է մշակել և նրանով քաղցր ու հանգիստ վարե իր կյանքը:

Ես կհայտնեմ քեզ միմիայն Վանա նահանգի, կամ հին անունով Վասպուրականի, վիճակագրությունը, և կտեսնես, թե ժողովրդի հետ համեմատելով, որքան մեծ տեղ է բռնում եկեղեցական տարրը իր վանքերով և մենաստաններով»:

Նա հանեց իր ծոցից մի փոքրիկ հիշողության գրքույկ և սկսեց կարդալ.

«Վանա նահանգն ունի 24 գավառ, որոնք շրջապատում են Բզնունյաց ծովակի չորս կողմը: Հիշյալ գավառների մեջ բազմաթիվ հայաբնակ և խառնաբնակ գյուղերից այժմ շեն մնացած են 1652-ը. նրանց մեջ բնակվում են 43,750 հայ ընտանիք, որոնք բաղկացած են մոտ 350,000 հոգուց: Բացի գյուղաբնակներից, Վան քաղաքն ունի 20,640 հոգի հայ բնակիչ. կնշանակե՝ ամբողջ Վանա նահանգն ունի 370,640 հոգի հայ բնակիչներ: Հիշյալ գյուղորայքում և Վան քաղաքում կան 382 եկեղեցիներ, որոնք ունեն 270 քահանա, կնշանակե՝ շատ գյուղեր զուրկ են եկեղեցուց, և շատ եկեղեցիներ քահանա չունեն, բայց կան այնպիսի գյուղեր, որոնք մի եկեղեցու փոխարեն ունեն մի քանիսը: Դրա հակառակ, համեմատաբար շատ խոշոր բազմություն են կազմում կուսակրոն աբեղաները, վանքերը և մենաստանները:— Վանա նահանգն ունի 87 վանքեր և մենաստաններ, որոնց մեջ բնակվում են 1,500-ի

չափ եպիսկոպոսներ, վարդապետներ, ճգնավոր և մենակյաց աբեղաներ։— Այս բոլոր կրոնական հիմնարկությունների հանդեպ ամբողջ նահանգում չկա ոչ մի ժողովրդական դպրոց։ Կան, արդարև, մի քանի վանքերի խուցերում փոքրիկ վարժարաններ, բայց նրանք պատրաստում են տիրացուներ և կրոնավորներ միայն, իսկ ժողովրդի հազարից մեկը անգամ գրագետ չէ։

Երևակայեցեք 87 վանքեր և մենաստաններ ու 1,500-ի չափ կուսակրոն աբեղաներ մի նահանգում,— դա մեծ քանակություն է։ Բայց առաջ ավելի բազմաթիվ են եղել վանքերը, նրանց շատերի ավերակներն են մնում այժմ, և շատերը բոլորովին անհետացել են։ Աբեղաների մասին նույնպես խոսում են, թե այժմ նրանց թիվը կիսով չափ պակասել է. բայց այդ մնացածները դարձյալ շատ են։ Եվ այս ծույլ, ցնորամիտ «երկնաքաղաքացիների» ազդեցությանն ենք պարտական, որ մեր ժողովուրդն այսօր գտնվում է իր խորին բթամտության մեջ։

Բայց եղել են ժամանակներ և այն ժամանակները շա՛տ հին են, երբ մեր եկեղեցականներն այնպես չէին, որպես այժմ։ Նրանք դրանց նման անբնական կյանք չէին վարում. նրանք գերդաստանի հայրեր էին և ընտանիքների մեջ էին բնակվում։ Այս պատճառով, նրանք գիտեին, թե ի՛նչ է կյանքը, ի՛նչ է աշխարհը և ինչպես պետք է հոգ տանել նրա համար, որ մարդու ապրուստը հանգիստ ու բախտավոր լինի։ Գերդաստանի հայր լինելով, միևնույն ժամանակ նրանք ժողովրդի հայրն էին. ծնողական սիրո զգացմունքը առաջ էր բերել նրանց մեջ և խիստ ջերմ սեր դեպի ամբոխը, և բոլոր սրտով նվիրել էին իրանց անձը ժողովրդի բարօրությանը։ Իսկ այժմ չէ կարելի գտնել մի մարդ, որ այնպես վայրենի, անզգա և անտարբեր լիներ դեպի հասարակաց բարին, ինչպես մեր կուսակրոն եկեղեցականը։

Վանքն այն ժամանակ, այժմյան պես, աշխարհային գործերից փախած և իրան երևակայական հոգևոր ցնորքների նվիրած, ծույլերի բնակարան չէր։ Վանքն այն ժամանակ, այժմյան պես շնորհավաճառության, կախարդության և տեսակ-տեսակ մոլությունների հանդիսարան չէր։— Վանքն այն ժամանակ հոգևոր և մարմնավոր դպրոց էր, ուր անխոնջ միաբանությունը պարապած էր մանկտու կրթությունով, գրքերի թարգմանությունով, ինքնուրույն հեղինակություններով, և գիտությունն ու լույսը ժողովրդի մեջ տարածելով։

Եկեղեցականությունն այն ժամանակ, որպես կրոնի, եկեղեցու և կրթության, նույնպես և հայրենիքի ու պետության՝ հզոր պաշտպանն էր։— Եթե լինում էին մեր թագավորների ու նախարարների մեջ խռովություններ, եկեղեցականն էր նրանց մեջ հաշտեցուցիչ տարրը։ Եթե լինում էին թշնամու հետ պատերազմներ, եկեղեցականն էր ոգևորում ժողովրդին կռվելու, քաջությամբ կռվելու և պաշտպանելու իր հայրենիքը։ Եթե որևիցե թագավորի հետ պետք էր խաղաղության դաշն կապել, եկեղեցականն էր դեսպանախոսության գնում։ Եթե հայրենիքին վտանգ էր սպառնում և ուրիշ թագավորից պետք էր օգնություն խնդրել, եկեղեցականն էր միջնորդ դառնում։— Մի խոսքով, բարձր հոգևոր կառավարությունը խիստ սերտ կերպով կապված էր թագավորի իշխանության հետ. և երկու ներդաշնակ ուժեր, միացած մի ամբողջության մեջ, առաջ էին տանում պետության կառավարությունը։ Եվ այն ժամանակ Հայաստանը երջանիկ էր…։

Այս ամենը, ինչ որ գործում էր եկեղեցականությունը, բոլորովին ընդդեմ էր նրա կրոնական բնավորությանը։ Բայց մեր եկեղեցականությունը այն ժամանակ մի նշանավոր բացառություն էր կազմում ամբողջ քրիստոնեական աշխարհում.— նա կատարյալ ժողովրդական էր. նա միացնում էր իր մեջ հոգևոր և նյութական կյանքը — իրական աշխարհը և երկինքը։ Իսկ ա՛յժմ…։

Այժմ եկեղեցականը մեզ համար մի մեռած և անպիտանացած տարր է. նորից կյանք տալ նրան, դա շատ ուշ կլիներ. այդ պատճառով մենք ստիպված ենք դիմել ուրիշ միջոցների, որպեսզի մեր ժողովուրդը վերականգնենք, որի մեջ դեռ բոլորովին հանգած չեն կենսական ուժերը: Այո՛, հանգած չեն, բայց մնացել են նրանց անզոր կայծերը միայն, որոնց պետք է շունչ տալ, բորբոքել, մինչև նրանք բոցավառվեն…: Իսկ դա լինում է տոկուն և հիմնավոր կրթությամբ, որպեսզի ժողովուրդն ինքը հասկանա, թե որքան լավ է ազատությունը, որքան հանգիստ և ուրախ է լինում մարդու կյանքը, երբ նա ազատ է…:

Բայց մեր ընկեր Կարոն բոլորովին տարբեր մտածություն ունի. նա բնության հարազատ և ազատ որդին է: Նա ասում է՝ ազատությունը մարդու ընդաբույս բնազդումներից մեկն է. նա ստեղծված և ծնված է մարդու հետ: Նա ասում է՝ բնության մեջ ամեն մի առարկա, որոնց մեջ կա կյանքի և աճելության զորություն, պահանջում են ազատ լինել, ազատ զարգանալ: Եվ եթե մարդը տանում է ստրկության, դա ակամա է. հեռացրու նրանից ճնշող ուժը, կտեսնես, նա ազատ էակ է: Շատ հարկավոր չէ, ասում է Կարոն, որ մարդը հասկանա թե ի՛նչ բան է ազատությունը, որպեսզի ձգտումն ունենա դեպի նա: Որպես կարող է մարդը չգիտենալ, թե ինչ նյութ է օդը կամ որպիսի քիմիական տարերքից բաղադրված է նա և կամ ի՛նչ սնունդ է տալիս իր մարմնին,— բավական է, որ նա գիտե, երբ օդ չշնչե, կմեռնի: Ազատությունը, ասում է նա, մարդու հասարակական կյանքի մթնոլորտն է, որի մեջ զարգանում է նա, կատարելագործվում է և հասնում է իր մարդկային բարձր նշանակությանը: Որքան ճնշված, որքան սահմանափակված լինի այս մթնոլորտը, այնքան մարդը անզոր, ծույլ և բթամիտ կմնա: Ազատությունը մարդ սովորում է ազատության մեջ:

Ես մասամբ համաձայն եմ Կարոյի հետ,— առաջ տարավ Ասլանը, — այո, ազատությանը մարդ ընտելանում է ազատության մեջ: Բայց գլխավոր բանն այն է, թե ի՛նչ միջոցներով պետք է տալ մի ճնշված ժողովրդին ազատություն, երբ որ հազարավոր զորեղ ձեռքեր արգելք են լինում: Եվ ո՞վ պետք է առաջնորդե ժողովրդին դեպի ազատություն:

Մեր դրամատերերն, որպես դու տեսար, սկսած առաջին «ամիրայից» մինչև վերջին «քեռի Պետրոսը» ավազակներ են, ապրում են ժողովրդի արյունով և քրտինքով: Մեր եկեղեցականները, սկսած պատրիարքից մինչև վերջին Կարապետ հայր սուրբը, նույնպես ավազակներ են: Պատրիարքը իր առաքելական աթոռը գնում է սուլթանի բարձրագույն դռնից կաշառքով. իսկ Կարապետ հայր սուրբն իր վանքի վանահայրությունը գնում է քուրդ իշխանից նույնպես կաշառքով:— Երկուսն էլ պետք է կողոպտեն, կեղեքեն ժողովուրդը, որ կարողանան իրանց բռնապետական դիրքը պահպանել:

Մեզ պակաս է և հասարակական գլխավոր զորությունը, այն է թարմ և նորահաս **երիտասարդությունը**, դրանք կարող էին դպրոցների, գրականության և լրագրության միջոցով զարթեցնել և նախապատրաստել ժողովրդին: Բայց դժբախտաբար մենք երիտասարդություն չունենք. մենք ունենք Կ. Պոլսում մի քանի տգետ և ամեն կրթությունից զուրկ «զևզեկներ» միայն, որոնք ուրիշ ոչինչ չեն, եթե ո՛չ շաղակրատ տիրացուներ: Էլ ո՞վ է մնում:— Մնում են մի քանի կարոներ, արդարև, ազնիվ և գործող անձինք, բայց մի ձեռքը ծափ կզարկե՞…:

Այսուամենայնիվ, մենք բոլորովին հուսահատ չենք. մենք ունենք մի, թեև անմշակ, բայց մեծ զորություն — **ամբոխը**,— դա բավական է…

Քեզ ցույց տված վիճակագրական թվանշաններից հայտնի է, թեև հայ ժողովուրդը Վանա նահանգում թշնամու սրից, սովից, կրակից և բարբարոսական

հարստահարություններից այժմ մեծ մասամբ սպառվել է, այսուամենայնիվ 370,640 հոգին դարձյալ մի խոշոր թվանշան է: Մի այսքան բազմություն դեռ ամփոփ կերպով մնացել է հայրենական հողի վրա: Թողյալ այդ, այս նահանգում կան և ուրիշ ազգություններ, որոնք մեզ վիճակակից են: Հրեաների, ասորիների, բոշաների և եզիդիների դրությունն ավելի վատ է, քան թե հայերինը: Այս թշվառականները նույնպես մարդիկ են և մեզ նման մարդիկ, նրանց էլ պետք է ազատությունը: Նրանք մեր բարի դրացիներն են և լավ կենակիցներ են, նրանք պատրաստ են մեզ հետ գործելու…:

Հաշվելով ամբողջ Վանա նահանգի քուրդ, թուրք և այլ մահմեդական ազգաբնակությունները, բոլոր հայերի կես մասը հազիվ են կազմում. բայց նրանք տիրում են ամենի վրա, որովհետև զենք ունեն, որովհետև կոպիտ և վայրենի ուժ ունեն: Այս երկրներն անունով միայն պատկանում են Տաճկաստանին, բայց իսկապես տիրում են քրդերը: Այսպիսի բարբարոս ազգերի իշխանության ներքո, որոնք ամենևին կրթության ընդունակ չեն, անհնար է մի ուրիշ, ավելի ընդունակ ազգության զարգանալ և մարդկային առաջադիմության ձգտել: Ահա՝ գլխավոր պատճառը, թե ինչո՞ւ այստեղ հայերն այսքան ետ են մնացել, և այսպես խավարի մեջ են ապրում: Կրկնում եմ, հայը ընդունակ է կրթության, որովհետև նա քրիստոնյա է, որովհետև նա ունի հարուստ լեզու և ճոխ, բազմակողմանի գրականություն. նա ունի պատմական անցյալ: Մի քրեական հանցանք է դա մարդկության դեմ, թողնել մի այսպիսի ազգություն, որ բարոյապես, մտավորապես և ֆիզիկապես ոչնչանա վայրենի քրդի ու թուրքի լծի տակ: Հայը և ասորին կարող են արևելքում գիտության և կրոնի առաքյալներ լինել, ինչպես եղել են առաջ, բայց նախ պետք է նրանց ազատություն տալ:

Բայց երբեք օտարը մարդու համար չէ մտածում, քանի որ նա ինքն իր մասին անհոգ է: Ռամկական առածն ասում է՝ «մինչև տղան լաց չէ լինում, մայրը ծիծ չէ տալիս»: Բայց մենք այդ էլ փորձեցինք, շա՛տ լաց եղանք, շա՛տ աղաղակեցինք, բայց մեր ձայնը լսող չեղավ…: Որովհետև ամբողջ աշխարհն իր փորի և քսակի համար է մտածում…: Որպես Կ. Պոլսի «ամիրա» սեղանավորը, իր անձնական շահերի պատճառով, միշտ խնկարկում է մի փտած և անկարգ կառավարության և միշտ նրա տևողականության համար է աղոթում,— այնպես էլ կան ամբողջ քրիստոնյա պետություններ, որոնք թուրքի հետ առևտրական հարաբերություններ ունեն, և իրանց մասնավոր շահերի պատճառով թողնում են, որ զանազան խեղճ ազգություններ թուրքի բռնակալության տակ ճնշվեն:— Նրանք վաճառականներ են, վաճառականի սրտից միշտ հեռու է մարդասիրական զգացմունքը…

Օտարի օգնությունից մեզ շահ չկա: Դժբա՛խտ է այն ազգը և մի՛շտ դժբախտ կմնա, որ օտարի օգնությանը կարոտ կլինի: Ոչ ոք իր հոր հոգու համար մեզ չի օգնիլ. նա պետք է տասը բան առնե մեզանից, որ մի բան տա: «Ողորմություն խնդրողի երեսը միշտ սև կլինի և քսակը դատարկ»: Մարդ պետք է իր սեփական աշխատությամբ և իր ուժովը ոտքի կանգնե: Օտարի օգնությունը նման է մի նեցուկի, որը հենց որ ետ քաշեցիր, կտեսնես, դարձյալ ցած կընկնի նրա վրա հենված առարկան…

Մեր գլխավոր օգնականն է մեր երկրի բնությունը — նրա տեղագրական դիրքը: Վան-Տոսպը իր անմատչելի լեռներով, իր անդնդախոր ձորերով և իր նեղ փապարներով մի հսկայական ամրոց է. այստեղ շատ դժվարությամբ կարող է մուտք գործել օտար և ինքնակոչ հյուրը: Այստեղ շատ անգամ հռոմայեցիք, հույները, պարսիկները, մարերը և արաբացիք կորցրել են իրանց լեգեոնները: Վանա նահանգը բնությունից պատրաստված է հայերի համար **ազատ կեցության կենտրոն** լինել: Նա իր չորեք կողմում ունի այնպիսի գավառներ, որոնք մինչև այսօր շատ խիտ բնակեցրած են հայերով: Հյուսիսից բռնած է Արզրումի ընդարձակ նահանգը Կարսի, Բայազեդի և Մագվի գավառներով: Հարավից՝ Դիարբեքիրի նահանգը Սասնո և

Մոգաց գավառներով: Արևմուտքից տարածվում է ընդարձակ Տարոնը՝ Բաղեշի և Մուշի գավառներով: Արևելքից՝ Խոյի, Սալմաստի, Ուրմիայի և Ռավանդուզի գավառները:

Բացի հիշյալ նահանգներից և գավառներից, որոնք շրջապատում են Վան-Տոսպը, մենք հարավ-արևելյան կողմում ունենք մի լավ դրացի — լեռնային Ջոլամերիկը, որ իր վայրենի դրությամբ կարող է Հայաստանի Դաղստանը համարվել: Այս երկիրը, որ մեր հին Տմորիք կամ Կորդիք գավառն է, այժմ բնակեցրած է ասորիների ջոլո կոչված ցեղով, որոնք նեստորական քրիստոնյաներ են: Ջոլոն մի քաջազնական ժողովուրդ է, որ սկսյալ անհիշելի ժամանակներից, Ջոլամերկի լեռներում պահպանել է իր անկախությունը: Քրդի և թուրքի իշխանությունը մինչև այսօր այնտեղ մուտք չէ գործել: Բայց ի՞նչ է պատճառը: Ջոլոները թվով այստեղի հայերից շատ փոքր են. նրանց թիվը հազիվ թե 50 հազարի է հասնում, կնշանակե Վանա նահանգի հայ ազգաբնակության ութերորդ մասը: Ուրեմն ի՞նչ է պատճառը, որ նրանք ազատ են:

Ջոլոները բոլորը զինվորված մարդիկ են. նրանց կանայք, աղջիկներն մինչև անգամ զենք են կրում: Նրանք հասկացել են, թե առանց սրի մեր դարում չի կարելի գլուխ պահել: Հրեշտակները միայն չեն կրում, որովհետև պաշտպանելու ոչինչ չունեն. բայց նրանք էլ հարկավորված միջոցում զինավորվում են…

Ջոլոները կառավարվում են իրանց պատրիարքի իշխանության ներքո, որ կոչվում է Մար-Շիմոն. դա ժողովրդի հոգևոր և մարմնավոր իշխանն է: Այժմյան Մար-Շիմոնը մի քաջ երիտասարդ է, որ միացրել է իր ձեռքում Քրիստոսի խաչը և ազատության սուրը: Բոլոր ժողովուրդը հպատակում է նրան որդիական հնազանդությամբ: Մար-Շիմոնի օրինակը մի բացառություն է ամբողջ քրիստոնեական աշխարհում, որ հոգևոր պատրիարքը միևնույն ժամանակ հասարակ զինվոր է, հայրենիքի պաշտպան է: Հռոմի պապը նույնպես պահում է զինվորներ, բայց պապի իշխանությունը մի կատարելագործված խաբեություն է: Մար-Շիմոնը զինվոր է, զինվորի բոլոր ազնիվ հատկություններով:

Մար-Շիմոնի երկիրը մեծ մասամբ մաքրած է օտարազգիներից. այնտեղ կան փոքր թվով հայեր և մի քանի քրդի ցեղեր, որոնք բոլորն էլ հպատակում են պատրիարքի իշխանությանը: Մար-Շիմոնի երկիրը մի փակված Չինաստան է, ուր օտարի ոտքը մուտք չէ գործում: Բայց Կարոն այժմ այնտեղ է. նա գնացած է պատրիարքի մոտ մի քանի գործերի համար տնօրինություններ անելու, հուսով եմ, որ նրա տեսությունը հաջող վախճան կունենա…

Ջոլոների օրինակը մի մեծ խրատ է մեզ, հայերիս համար, թե մենք էլ կարող ենք մեր լեռներում ազատ և հանգիստ ապրել, եթե մեր ազատությունը կամենայինք պաշտպանել մեր սրով և արյունով: Բայց մենք ունե՞նք այնպիսի հոգևորականություն ինչպես Մար-Շիմոնը. մենք ունե՞նք այնպիսի ժողովուրդ, ինչպես Ջոլոն: Հայը սրից այնպես է վախենում, ինչպես դևից…»:

ԽԱ

ՍԻՐՈ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Վանքի տոնախմբությունը արդեն վերջացած էր: Ուխտավորները սկսել էին վերադառնալ դեպի իրանց երկրները: Ծերունի որսորդի ընտանիքը նույնպես պատրաստվում էր առավոտյան թողնել վանքը: Բայց իմ մեջ առաջ էր եկել մի զարմանալի փոփոխություն. ես մոռացել էի Մարոյին, մոռացել էի Սոնային, մոռացել

էի մորս և քույրերիս, որոնք այնքան սիրում էին ինձ, և աշխատում էին ինձ իրանց հետ մեր տունը տանել: Ես սիրահարվել էի Ասլանի վրա: Կարծես թե այդ ոգելից երիտասարդը կախարդած լիներ ինձ. ես չէի ուզում բաժանվել նրանից: Թեև Ասլանի խոսքերն ինձ շատ մութն էին, թեև ես դեռ պարզ չէի հասկացել, թե ի՛նչ նպատակի է ձգտում նա, և ի՛նչ են ուզում անել նրա մտերիմընկերներն, այսուամենայնիվ, մտածում էի, թե լավ է նրանց հետ լինել, նրանց հետ գործել,— նրանք ազնիվ մարդիկ են: Այս պատճառով, երբ Ասլանը հայտնեց, թե «մի գործի» համար միտք ունի Վան քաղաքը գնալ, ես աղաչեցի, որ ինձ էլ իր հետ տանե: Նա չհոժարվեցավ, ասաց, թե դու եկել ես ծերունի որսորդի ընտանիքի հետ, պետք չէ նրանց անտեր թողնել:— Մարոն մեզ մոտ էր, նա լսեց այս խոսքերը և իրան հատուկ արհամարհական ոճով պատասխանեց, թե ես շատ հարկավոր չեմ նրանց, թե նրանք առանց ինձ էլ կարող են տուն վերադառնալ, թե որսորդի ընտանիքին ոչ ոք չի համարձակվի մոտենալ: Ով որ չէր ճանաչում Մարոյին, կարող էր վշտանալ այս խոսքերից, բայց ես գիտեի նրա սիրտը, թե որքան բարի էր նա, այս պատճառով նրա խոսքերը շարժեցին իմ ժպիտը միայն:

Երեկո էր: Այս խոսակցությունն անց էր կենում մեր մեջ մի բլուրի վրա, որ բավականին հեռու էր վանքից. այնտեղ գնացել էինք Մարոյի հետ «տիրամոր ծաղիկներ»[7] քաղելու, ուր և հանդիպեցանք Ասլանին: Նա դարձյալ կերպարանափոխ էր եղած: Այժմ նմանում էր մի վանեցի վաճառականի:

Մարոն ևս իր կողմից խնդրեց Ասլանից, որ ինձ վեր առնե իր հետ, ասելով, թե ես ամենևին քաղաք չէի տեսել, հարկավոր էր ինձ քաղաք տեսնել, և մենք երկուսս էլ երկար թախանձելուց հետո, վերջապես նրան ընդունել տվինք:

— Ես դուրս եմ գալու հենց այսօր, արևը մտնելեն հետո,— ասաց նա.— մնում է մեկ ու կես ժամ:

Ես խնդրեցի մի փոքր սպասել, մինչև ես գնամ մորս և քույրերիս հետ տեսնվեմ:

— Սպասել կարող չեմ,— ասաց նա,— վաղը չէ մյուս օրը առավոտյան ես պետք է Վանում գտնվեմ:

— Ուրեմն, դու գիշերները չի՞ պիտի հանգստանաս, որ կարողանաս հասնել,— հարցրուց Մարոն.

— Ոչ,— պատասխանեց նա,— որովհետև երեք օրվա ճանապարհ է:

— Ուրեմն ես չի՞ պիտի կարողանամ տեսնել մորս:

Նա մոտեցավ ինձ և հազիվ լսելի ձայնով ասաց.

— Ով որ կամենում է մեր ետևից գալ, պետք է թողնե իր մորը, հորը, քույրերին և եղբայրներին: Հասկացա՞ր:

Այնուհետև Ասլանը հայտնեց, թեև ընդունում է ինձ իր հետ Վան տանել, բայց չէ կարող միասին դուրս գալ, այլ կսպասե ինձ առաջին իջևանում, որ այնքան հեռու չէր, և պատվիրեց գնալ ձի նստել և անմիջապես ճանապարհ ընկնել: Այնուհետև նա խիստ մտերմությամբ գրկեց Մարոյին և ինձ, հետո բաժանվեցանք: Մենք շտապեցինք դեպի մեր վրանը:

---

[7] Դա մի տեսակ դեղնագույն ծաղիկ է մանրիկ և ցամաք թերթիկներով, որոնցմով լի է վանքի շրջակայքը. այս պատճառով է կոչվում «անթառամ ծաղիկ». նվիրված է աստվածամորը, երկնքի անթառամ կույսին:

Ճանապարհին Մարոն ինձ ասաց:

— Գնա՛, Ֆարհատ, լավ ես անում, որ գնում ես, Վան քաղաքը կտեսնես, բայց Սոնային չմոռանաս…

Այս խոսքը ինձ կասկածանքի մեջ գցեց, և ես հարցրի, թե ի՞նչ մտքով էր ասում այդ:

— Սոնան սիրում է քեզ, Ֆարհատ, դու էլ նրան խոսք ես տվել…տղամարդը պետք է իր խոսքը կատարե…:

— Այս դու ո՞րտեղից գիտես:

— Ես բոլորը գիտեմ… ես գիտեմ, թե դուք ինչպես եք անցկացրել ձեր օրերը այն ժամանակ, երբ դու աշակերտ էիր նրա հոր տանը… ես ամենը գիտեմ…

Ես բոլորովին շփոթվեցա:

— Ո՞վ ասաց քեզ:

— Սոնան ինքը պատմեց ինձ: Նա այնպես ցավելով էր պատմում, որ ես չկարողացա իմ արտասուքը պահել:

Ես ոչինչ չպատասխանեցի. նա շարունակեց խոսել.

— Դու գիտե՞ս, Ֆարհատ, Սոնան որքան անբախտ է. նրա մխիթարությունն այժմ դու ես. բայց եթե դու էլ խաբես նրան, նա էլ չի ապրի:

Մարոյի ամեն մի բառը ինձ վրա կայծակի ներգործություն էր ունենում: Ես չգիտեի ինչ պատասխանեմ. նրա ասածները բոլորը ճշմարիտ էին. ես Սոնային խոսք էի տվել…

— Դու Սոնային խոսք ես տվել,— կրկնեց Մարոն,— լավ չէ, երբ տղամարդն իր խոսքը չէ կատարում…

— Բայց եթե աղջիկը չէ՞ կատարում…

— Նույնպես լավ չէ:

Ես նկատեցի, Մարոյի ձայնը զգալի կերպով դողում էր վերջին պատասխանը արտասանելու միջոցին:

Ես ասեցի:

— Դու էլ ինձ խոսք ես տվել…

— Տվել եմ, ճշմարիտ է, բայց ես չեմ ուզում ուրիշի սիրո փշրանքովը կշտանալ…

Ես թեև հասկացա, թե ինչ ասաց նա, բայց դարձյալ հարցրի.

— Ի՞նչ է նշանակում այդ:

Նա իսկույն չպատասխանեց, բայց ես նկատեցի, որ նրա աչքերը վառվում էին բարկության բոցով, և նա վերջապես պատասխանեց բոլորովին կատաղած կերպով.

— Ես գիտեի, որ դու խիղճ չունես, բայց հիմա տեսնում եմ, որ դու խելք էլ չունես: Ես չեմ կարող սիրել այն մարդուն, որ խաբել գիտե…

— Ուրեմն մեր մեջ ամեն ինչ վերջացած է:

— Հենց այն րոպեից, երբ «Կաթնաղբյուրի» ձորում, Սոնան քո մոտ նստած, իր անբախտությունն էր պատմում…

Մարոյի խոսքերն որքան և վիրավորական լինեին, որքան և կծու լինեին, բայց նրանք ուղիղ էին: Ես զգում էի իմ մեղքը, ո՛չ բարկանալու և ո՛չ ներողություն խնդրելու իրավունք չունեի…

Առժամանակյա լռությունից հետո նա հարցրուց.

— Եթե դու ուզում ես, որ մենք դարձյալ բարեկամներ մնանք, պետք է սիրես Սոնային:

— Ես ուզում եմ, որ մենք մնանք այնպես, ինչպես էինք առաջ…

— Դա անցավ: Պատասխան տուր, ինչ բանի համար հարցը հարցնում եմ քեզանից: Կսիրե՞ս Սոնային, թե ոչ:

— Իմ խոսքը հենց այն է…

Նա կանգնեց կես ճանապարհի վրա. ես նշմարեցի, նա ամբողջ մարմնով դողում էր, և գունատված դեմքի վրա նկարված էր վայրենի կատաղություն:

Այստեղ մենք բաժանվում ենք,— ասաց նա աշխատելով զսպել իր վրդովմունքը:— Դու այլևս չես կարող ոտք կոխել որսորդի վրանը: Սպասի՛ր այստեղ, ես կգնամ, կուղարկեմ քո ձին և զենքերը, ուր որ ուզում ես, գնա:

— Ուրեմն դու արտաքսում ես ինձ:

— Ինչպես կուզես, այնպես հասկացիր…

— Անգո՛ւթ…

Նա շուռ տվեց երեսը, որ ես չտեսնեմ և շարունակեց շտապով գնալ դեպի ուխտավորների բանակը: Որքան էլ խռոված լինեի ես, դարձյալ չէր կարելի չնկատել նրա աչքերում արտասուքի այն կաթիլները, որոնք դուրս ցայտեցին հրեղեն գնդակների նման:

Մինչև այսօր և գուցե հավիտյան, չեմ կարող մոռանալ այն վշտահար դեմքը իր արդար-վրեժխնդրական զարհուրանքով…

Ես բոլորովին սառեցա, մնացի քարե արձանի նման կանգնած: Աչքերիս առջևը մթնեց, ոտքերս դողացին և անշունչ դիակի նման գլորվեցա գետին…

Մութը բոլորովին պատել էր, երբ հուշի եկա: Ո՛րքան մեծ եղավ իմ ուրախությունը, երբ գլուխս Մարոյի գրկումը գտա: Նա համբուրեց իմ ճակատը, ասելով:

— Դու կներես ինձ, Ֆարհատ, ես քո սիրտը կոտրեցի…

Նա սկսեց դառը կերպով հեկեկալ:

— Քո վերքը վտանգավոր չէ, Ֆարհատ, ես լվացի նրան, փաթաթեցի, արյունը բոլորովին դադարել է: Այժմ դու լավ ես:

Եվ իրավ, ես զգացի, որ ամբողջ մարմնով շաղախված եմ արյան մեջ: Իսկույն հասկացա, որ վայր ընկնելու միջոցին գլուխս դիպցրել էի քարին, և Մարոն այդ տեսնելով, ետ էր դարձել ինձ օգնելու համար:

— Ես պատճառ եղա…— ասաց Մարոն,— ես կսիրեմ, մի՛շտ կսիրեմ քեզ: Մի՛ նախատիր ինձ, Ֆարհատ:

Եթե մեռած ևս լինեի, այս խոսքերը կարող էին կենդանացնել ինձ: Բայց արյան չափազանց հոսումը բավականին սպառել էր իմ ուժերը: Ես կարծես երազի մեջ լսում էի նրա խոսքերը, կարծես, երազի մեջ զգում էի նրա ջերմ շրթունքների հպավորությունը, որ ստեպ-ստեպ սեղմվում էին իմ երեսի վրա…

Մին էլ զգացի՝ մի հսկայական ձեռք վեր բարձրացրուց ինձ գետնից և ծտի նման գցեց ուսին, և ինձ լսելի եղան Մըհեի խոսքերը.

— Սատանան տանի… մի պստիկ ծվատվելուց ընկած է գետին, կթրթփա… չի էլ ամաչում… արյունից սիրտը կմարի՞…

Ես արթնացա մյուս անգամ, երբ գիշերից բավական անցել էր: Ծերունի որսորդի վրանի մեջ աղոտ լույսով վառվում էր յուղն սպառված լապտերը: Մարոն միայնակ նստած էր իմ մոտ. վրանում բացի մեզանից, ոչ ոք չկար, մյուսները քնած էին դրսումը: Մարոյի առաջին հարցմունքն եղավ, թե ի՞նչպես եմ զգում ինձ: Ես պատասխանեցի, թե լավ եմ, միայն շատ ցավում եմ, որ ետ մնացի Ասլանի հետ ճանապարհորդելուց:

— Մըհեն այստեղ է,— ասաց նա,— երբ բոլորովին կառողջանաս, նա քեզ կտանե Վան: Ասլանը այնտեղ մի քանի օր պետք է մնա: Դու դարձյալ կգտնես նրան:

— Ես կգնամ առավոտյան, վաղ առավոտյան: Ասլանը խոստացավ սպասել ինձ առաջին իջևանում, ես նրան սպասել չեմ տա:

Առավոտյան ինձ բոլորովին առողջ չէի զգում: Արյան չափազանց հոսումը բավական թուլացրել էր ինձ: Բայց մի քանի օրից հետո ես կարող էի ձի նստել և ճանապարհ գնալ: Մարոն առաջարկեց Մըհեին ինձ հետը վեր առնել:

— Մըհեն ի՞նչու է եկել,— հարցրի ես:

— Նա եկել է մեզ տանելու,— պատասխանեց նա:

— Ո՞վ է ուղարկել:

— Հայրս:

— Ուրեմն ես ի՞նչպես կարող եմ նրան առնել ձեզանից:

— Մենք առանց նրան ևս կարող ենք գնալ:

— Հենց ե՞ս կույր հավի պես չեմ կարող մենակ ճանապարհ գնալ:

— Կարող ես, բայց ճանապարհը կկորցնես: Բացի դրանից Մըհեն հորիցս նամակ ունի Ասլանի վրա, պետք է շուտով հասցնի:

Արևը դեռ չծագած Մըհեի հետ ճանապարհը ընկանք: Նա ձի նստելու սովորություն չուներ: «Մեղք է, ասում էր, ապա ոտքերս ինչո՞ւ համար ստեղծել է աստված»:

Մըհեն գնում էր իմ ձիու առջևից, ահագին լախտը իր թևի վրա դրած: Նա լուռ էր, նա չէր խոսում և իմ հարցերին տալիս էր խիստ կարճ պատասխաններ:

Ես ճանապարհին հազիվ կարողացա մտաբերել, թե որքան անքաղաքավարի կերպով բաժանվեցա Մարոյից: Ես նրան ոչ մի խոսք չասացի. նա այնքան տեղ եկավ ինձ հետ, նայում էր իմ վրա, սպասում էր մի քաղցր խոսք լսել: Ես մտաբերեցի, որ իմ հեռանալուց հետո, նա իսկույն չվերադարձավ դեպի վրանը, այլ նստեց ճանապարհի մոտ մի քարի վրա: Ես այժմս էլ հիշում եմ, թե ինչպես գլուխը քարշ գցած, նստած էր նա: Ես հարցրի Մըհեից: Մըհեն Մարոյի մոտ էր, նա հետո եկավ և հասավ ինձ:

«Նա լաց էր լինում», ասաց իմ ուղեցույց Հերքուլեսը:

— Ինչո՞ւ էր լաց լինում, Մըհե:

— Սատանան գիտե, թե աղջիկը ինչու լաց կլինի…

Մըհեն, ինչպես առաջ ես մտածում էի, այնքան հիմար չէր. նա երևաց ինձ խիստ ծածկամիտ մի մարդ: Որովհետև որքան ես աշխատեցի նրանից դուրս քաշել մի խոսք, թե ի՛նչ նպատակ ուներ նրա թափառելը մի օր այստեղ, մյուս օր այնտեղ,— նա ոչինչ չհայտնեց, տվեց միայն մի քանի արհամարհական պատասխաններ, ասելով.— «Եթե շատ բան գիտենաս՝ շուտ կպառավես»:

Առաջին իջևանում, ուր ժամադիր էր եղած Ասլանը ինձ սպասելու, նրան չգտանք: Դա մի փոքրիկ հայաբնակ գյուղ էր քրդերի հետ խառը: Բայց երբ մոտեցանք գյուղին, մի մարդ դուրս եկավ իմ առաջ, երևում էր, որ նա մեզ սպասում էր:

— Ի՞նչպես է քո անունը,— հարցրուց նա:

— Ֆարհատ:

Նա հանեց իր ծոցից մի կնքած թուղթ և տվեց ինձ: Նրա մեջ գրած էին այս խոսքերը.

«Ֆարհատ, մի դեպք առիթ տվեց ինձ շեղվիլ այն ճանապարհից, որ ուղղակի տանում է դեպի Վան: Ներիր, որ չկարողացա սպասել քեզ: Այս մարդուն պատվիրած եմ, որ քեզ ինձ մոտ բերե: Նա գիտե իմ տեղը: Ասլան»:

Թուղթը կարդալուց հետո այն մարդը հարցրուց.

— Եթե այստեղ հանգստանալու միտք չունեք, ես այս րոպեիս էլ պատրաստ եմ ձեզ առաջնորդելու:

Այս տղամարդը հագնված էր բոլորովին քրդի ձևով, և եթե նա հայերեն չխոսեր, ես նրան քուրդ պիտի կարծեի: Զենքերը նույնպես քրդի էին՝ երկար նիզակը ձեռին, մի զույգ ատրճանակներ գոտիումը խրած, ահագին երկաթապատ վահանը ուսին գցած և կեռ սուրը կողքից քարշ տված:

Նա սկսեց քրդերեն խոսել Մըհեի հետ: Երևում էր, երկուսն էլ ճանաչում էին միմյանց:

Ինձ էլ ծանոթ երևաց այն հսկա տղամարդի դեմքը, որպես թե մի անգամ պետք է տեսած լինեի նրան: Իսկույն մտաբերեցի, որ դա այն երկու զեյթունցի տղամարդերից մեկն է, որոնց ես տեսա արաբական մինարեթում, այն գիշերը, երբ առաջին անգամ հանդիպեցա Կարոյին: Այժմ հասկացա, թե ինչո՞ւ Ասլանը փոխել էր իր ճանապարհի ուղղությունը. երևի, զեյթունցին նրան մի անակնկալ բան հաղորդած պետք է լիներ, որ առիթ էր տվել նրան թողնել ուղղակի Վան գնալը:

Վերջացնելով իր խոսակցությունը նրա հետ, Մըհեն դարձավ դեպի ինձ այս խոսքերով.

— Ես հիմա գիտեմ, թե ուր է գնացել Ասլանը, ես քեզ կտանեմ ուղիղ նրա մոտ, այս մարդը մեզ պետք չէ:

— Բայց դու ճանապարհը ճանաչո՞ւմ ես,— հարցրի ես:

— Սատանայի պես:

— Բայց քանի որ դուք չեք ուզում այստեղ հանգստանալ, սպասեցեք, մինչև ես մի բան կբերեմ ճանապարհին ուտելու համար,— ասաց զեյթունցին և վազեց դեպի գյուղը:

Նա մտավ գյուղի ծայրումը գտնված տներից մեկի մեջ և քանի րոպեից հետո դուրս եկավ մի մաղ՝ ձեռին բռնած: Նրա մեջ դրած էին մի քանի հատ տափակ, լայն և բոլորակ հացի նման բաներ, մի փոքր դեղնագույն և երեսներն օծած մեղրով: Դա չորացրած սեր էր, բավականին հաստ զանգվածով, Հայաստանի պարարտ կաթի արդյունքն էր:

Մըհեն երկու հատ առեց, և փողի նման գալարելով, մի րոպեում կերավ:

— Մըհեն էսպիսի սատանայական բաներով չի կշտանա, գնա՛, հաց բեր,— ասաց զեյթունցուն:

Բայց ես մեկ հատի կեսը հազիվ կարողացա ուտել, այնքան պարարտ և սննդարար էր սերը:

— Ես հաց ունեմ հետս վերառած, երբ որ քաղցած լինես կտամ, հիմա գնանք, ուշ է, Մըհե,— ասեցի նրան:

— Հիմա տո՛ւր, երբ փորս դատարկ է:

Զեյթունցի տղամարդը չթողեց ինձ բաց անել խուրջինը, որ կապած էր ձիուս գավակին, որի մեջ Մարոն ինձ համար ճանապարհի պաշար էր դրած, այլ ինքը գնաց, բերեց երկու հատ գարեհացի ահագին բլիթներ: Մըհեն նրանց ևս կերավ: Այնուհետև մենք ճանապարհ ընկանք:

Արևն արդեն սկսել էր թեքվել իր կեսօրվա կետից դեպի մուտքը:

ԽԲ

ՀԱՅ ՀՈՎԻՎՆԵՐ

Մըհեն հայոց լեռների գազանն էր, նա այնպիսի անհայտ շավիղներով տանում էր ինձ, ուր սատանան ինքը կմոլորվեր: Ես ստիպված էի ցած իջնել ձիուցս: Սարերի ելևէջներն այնքան դժվարինէին, որ ձիս չէր կարողանում առաջ գնալ: Մըհեն կատաղության չափ բարկացած էր. «թո՛ղ էս անպիտանին,— ասում էր նա,— ես չեմ իմանում ի՞նչ բանի պետք է»: Մըհեի հետ վիճել այն քարերի մեջ, հիմարություն կլիներ, պետք էր նրա գլուխը մի կերպով շոյել: «Դա Կարոյի ձին է, ասում էի ես, նա է ընծայել ինձ, դու խո Կարոյին սիրո՞ւմ ես»:

Մըհեն Կարոյի վրա մեծ համարում ուներ, նրա անունը տալու ժամանակ նա մեղմանում էր. այսուամենայնիվ ձին մեզ հետ քարշ տալը վերջապես բոլորովին անհնարին եղավ: Մըհեն հայտնեց, եթե ես հաճություն կտայի, նա կարող էր մի մարդ գտնել և ձին նրան հանձնել, որ հետո ուրիշ ճանապարհով բերեր և հասցներ մեզ: Եվ ավելացրուց, թե ինքը շտապում է, շատ է շտապում, ձիան դանդաղ ընթացքով գնալ չէ կարող, որովհետև Ասլանի վրա նամակ ունի, պետք է շուտով հասցնի, և դրա համար ընտրեց դժվարին, բայց կարճ ու կտրուկ ճանապարհը:

Ես տեսա, որ Մըհեի առաջարկությունն ուներ իր առանձին կարևորությունը, բայց ո՞րտեղից մարդ գտնել և ո՞ւմ հանձնել ձին:— «Ես կգտնեմ», ասաց նա և պատվիրեց ինձ մի փոքր սպասել ձիան մոտ, իսկ ինքը առաջ վազեց և մի րոպեում բարձրացավ սարի գլխին, սկսեց այնտեղից նայել իր շուրջը: Նա արծվի սրատեսություն ուներ, շատ հեռվից տեսավ մի հովիվ, որ արածացնում էր ոչխարներ: Այնուհետև նա իր մատները փողի ձևով գալարելով դրեց բերնին, և այնպիսի մի որոտալիք ձայն արձակեց, որի արձագանքը կրկնվեցավ լեռների հեռակայքում: Քանի րոպեից հետո նույն ձայնով պատասխանեցին: Ես առաջին անգամ տեսա, թե լեռների մեջ ինչպես են հեռվից-հեռու խոսում:

Շատ չանցավ, մեզ մոտ հայտնվեցավ հովիվը. դա մի քուրդ էր: Մըհեն մի քանի խոսք ասաց նրան քրդերեն, հետո ձին հանձնեց:

— Հիմա մենք գնանք,— ասաց ինձ:

— Ո՞ւր գնանք, դու ձին տալիս ես ավազակին և կարծում ես, թե նա կդարձնե՞ մեզ:

Մըհեն իր առանձին եղանակով հանգստացրուց ինձ, ասելով, թեև ինքը գիտե, որ նա ավազակ է, բայց մի բան, որ հանձնում ես ավազակին որպես ավանդ, նա սրբության պես պահում է և կրկին դարձնում է իր տիրոջը: Բացի դրանից, ավելացրուց նա, թե ինքը տեղեկացավ, որ այդ հովիվը ո՛ր քրդի հոտերն է արածացնում, եթե նա անհավատարիմ կգտնվի իր պարտավորության մեջ, ինքը Մըհեն կարող է մի ձիու փոխարեն հափշտակել նրա աղայի ամբողջ երամակը:

Այս բաները, իհարկե, Մըհեն ինձանից լավ էր հասկանում. ես համաձայնվեցա, միայն հարցրի, թե մինչև ե՞րբ կարող էր նա հասցնել մեզ ձին:

— Մի օրից հետո,— պատասխանեց նա,— որովհետև այն ճանապարհը, որտեղից նա պետք է ձին բերե, մի օրով երկար է:

Մենք շարունակեցինք գնալ:

— Բայց մենք ե՞րբ կարող ենք հասնել այն տեղը, որտեղ այժմ գտնվում է Ասլանը,— հարցրի ես Մըհեից:

— Թե որ ամբողջ գիշերը գնալու լինենք, էգուց կեսօրին կհասնենք,— ասաց նա:

— Ամբողջ գիշերն ի՞նչպես կարող ենք գնալ առանց հանգստանալու, ես հիմակվանից հոգնած եմ:

— Թե որ չես կարող,— ասաց նա խիստ սառը կերպով,— ես քեզ թող կտամ, ինչպես քո ձիուն: Ես նորահարսի հետ քայլելու համբերություն չունեմ…

Ես մեղմությամբ պատասխանեցի.

— Մըհե, դու իմանում ես, որ ես սովոր չեմ այսպիսի քարերի մեջ ոտքով երկար ման գալ:

— Հիմա սովորի՛ր:

— Կսովորեմ, բայց մի անգամով չէ կարելի:

— Թե որ հոգնես, քեզ կառնեմ շալակս:

— Ես խո երեխա չե՞մ:

— Ապա ի՞նչ ես,— հարցրուց նա վայրենի ժպիտով:

Ես ոտքով ճանապարհորդելու մեջ շատ թույլ չէի, բայց ինձ թուլացրել էր գլխիս վերքը և արյան չափազանց սպառվիլը: Բայց Մըհեի նման երկաթի մարդու ծիծաղը միայն կշարժեր, եթե նրան ասեի, թե վերքիս պատճառով է, որ ես չեմ կարողանում նրա հետ ընթանալ: Նա իր մարմնի վրա ուներ անթիվ մեծամեծ սպիներ, որոնք ստանալու ժամանակ երբեք թուլացած չէ եղել…

Արևը մտավ: Բարեբախտաբար այն գիշեր լուսնկա էր: Ես ստիպված էի հպատակել իմ խստասիրտ ուղեկցի կամքին: Գիշերային հովասուն պահուն ճանապարհորդությունը շատ հոգնեցուցիչ չէ լինում, այսուամենայնիվ, երբ կեսգիշեր դարձավ, ես բոլորովին թուլացա: Մըհեն նկատեց այդ, երևի նա խղճաց իմ վրա:— Մի փոքր էլ գնանք, ասաց, նա, ձորի մեջ հովիվների վրաններ կան, քեզ այնտեղ կհանգստացնեմ: Բայց Մըհեի լեզվով ամեն խոշոր բան փոքր էր, ամեն երկար բան կարճ էր: Լուսաբացին երկու ժամ մնացած, մենք հազիվ կարողացանք հասնել այն ձորին, որ Մըհեն ասում էր, և իրավ, այնտեղ գտանք հովիվների վրաններ: Բայց կատաղի շները չէին թողնում մոտենալ, իսկ վրանների մեջ բոլորը քնած էին: Մըհեն ինձ ավելի երկյուղ տվեց, ասելով թե շների ձայնից հովիվները կզարթնեն, և մեզ ավազակներ կարծելով, գուցե հրացանով հեռվից կզարկեն: Բայց ես այնքան հոգնած էի, որ Մըհեի խոսքերը բանի տեղ չդրեցի, ես պատրաստ էի ամեն վտանգ հանձն առնել, գե՛թ մի փոքր հանգստանայի:

Բայց Մըհեն հեռվից մի տեսակ ձայն արձակեց, որի միտքը այն էր թե՝ «հյուր ենք»: Վրանների գիշերային պահնորդներից երկուսը մոտեցան մեզ: Մըհեն այժմ սկսեց խոսել հայերեն: Այլևս երկար բացատրություններ պետք չէին. մեր հայ լինելը փարատեց նրանց կասկածանքը, և իսկույն ընդունվեցանք: Հովիվները հայեր էին: Մեզ տարան տանուտերի վրանը, որ հովիվների գլխավորն էր: Տանուտերի մեծ որդին ընդունեց մեզ, իսկույն վառել տվեց փայտյա լուցկիներ ճրագի տեղ, և առանց մեզ հարցնելու, հրամայեց ուտելու մի բան պատրաստել: Ես հայտնեցի, թե ուտելու ամենևին ախորժակ չունեմ, թե շատ կցանկանայի ինձ մի անկյուն շնորհեին, որ մի փոքր քնեի և հանգստանայի:

— Թող նա քնե,— ասաց Մըհեն,— ես ուտել եմ ուզում, գայլի պես քաղցած եմ:

Վրանի մի կողմում, ուր պառկած էին մի քանի երեխաներ, ինձ համար պատրաստեցին անկողին, գլուխս բարձի վրա դնելն և աչքերիս փակվիլը մին եղավ: Ո՛րքան դուր է գալիս քունը վաստակած մարմնին, ո՛րքան քաղցր է լինում նա, մանավանդ հովվի խաղաղ վրանի տակ…

Քանի՞ ժամ քնել էի, ես չգիտեմ, միայն երբ արթնացա, արեգակը կանգնած էր կեսօրվա տեղում: Մըհեն չկար, նա անհայտացել էր: Տանուտերը, որ մի ծերունի մարդ էր, պատմեց, թե քո ընկերը հեռացավ այստեղից հենց գիշերով, երբ իր քաղցը

մի փոքր հագեցրուց: Ասաց, թե նա սաստիկ շտապում էր, այս պատճառով սպասել չկարողացավ:

Ես շատ բարկացա կիսախելագար Մըհեի մի այսպիսի վարմունքի վրա, և մտքումս սկսեցի նախատել Մարոյին, որ ինձ այն հիմարի ձեռքը գցեց: Բայց տանուտերն ինձ հանգստացրուց, ասելով.

— Դու քո սիրտը մի՛ դառնացնի, դու օտար տեղում չես, այստեղ քո տունն է, հանգստացի՛ր, բայց երբ կկամենաս գնալ, այն ժամանակ իմ որդիներից մեկը կտանե քեզ այնտեղ, ուր պետք է գնայիր:

— Բայց ես չեմ իմանում, ո՞ւր պետք է գնամ. այն հիմարը պետք է տաներ ինձ,— պատասխանեցի դարձյալ վրդովված կերպով:

— Մենք գիտենք,— ասաց ծերունին հանդարտությամբ:— Քո ընկերը պատվիրեց. մեզ, որ քեզ հասցնենք Ս.-բեկի վրանները. նրա արոտամարգերը շատ հեռու չեն այստեղից:

— Ո՞վ է Ս.-բեկը:

— Եզիդիների գլխավորն է:

Ես մի փոքր հանգստացա, մանավանդ, երբ մտաբերեցի, որ Մըհեն նամակ ուներ Ասլանին հասցնելու, դրա համար նա շտապում էր, նա չէր կարող իմ դանդաղ քայլերին համբերել:

Տանուտերի խոսքերից երևաց, որ Մըհեն չէր հայտնել նրան մեր իսկական նպատակը, թե ինչ գործով էինք գնում եզիդիների գլխավորի մոտ և ոչ Ասլանի մասին հիշել էր մի բառ: Նա հնարել էր մի խոշոր սուտ, իբր թե մենք սուրբ տիրամոր ուխտավորներ ենք, այնտեղ գողացել էին մեր ձին, և լսելով, թե ձին եզիդիների ցեղի մեջն է տարվել, այժմ գնում էինք այնտեղ ձին գտնելու: Մըհեի սուտը մասամբ ճշմարիտ էր, որովհետև նա իմ ձին հանձնեց մի հովվի, որ եզիդիների ցեղին էր պատկանում, և գուցե այնտեղ կգտնեինք, ուր պետք էր մեզ գնալ:

Ծերունի տանուտերը, իր նահապետական բնավորության հարմար, միշտ աշխատում էր մի բանով հյուրասիրել ինձ, որ ես ուտեի, խմեի և ուրախ լինեի: Դուք, ասում էր նա, անպատված կլինեք իմ վրանը, եթե դժգոհ հեռանաք այստեղից: Բայց ինչ որ աչքի էր զարկում, այն էր, որ նրա հարսները, աղջիկ թոռները, ոչ մեկը չէր թաքչում ինձանից, ոչ մեկը երեսը չէր ծածկում, որպես սովորություն է Պարսկաստանի հայ կնիկների մեջ: Նրանք բոլորը խոսում էին ինձ հետ, որպես թե ես նրանց վաղեմի բարեկամը լինեի: Եվ նրանց խոսակցությունն այնքան պարզ և անմեղ էր, որ չէր կարելի չհամակրել նրանց:

— Դու քույր ունե՞ս,— հարցնում էր մի հասուն օրիորդ:

— Ունեմ, երկուսը,- պատասխանեցի ես:

— Նրանք քեզ համար գուլբաներ գործում ե՞ն, քո ոտքերը մաժո՞ւմ են քնելու ժամանակ:

— Ո՛չ, նրանք ծույլ են:

— Եվ դու նրանք չե՞ս ծեծում:

Մեկը ուրիշը հարցնում էր.

— Քո քույրերն այսպիսի ականջի օղեր ունե՞ն,— և ցույց էր տալիս իրը:— Տե՛ս, եղբայրս է առել:

— Չունեն,— պատասխանում էի ես:

— Բայց դու նրանց չե՞ս սիրում:

Հարսներից մեկը հարցրուց.

— Քո նշանածը քա՞նի տարեկան է:

— Ես նշանած չունեմ,— պատասխանեցի:

— Հը՛մ, դու երևի քաջ տղա չես, որ աղջիկները քեզ չեն հավնում,— նկատեց նա ծիծաղելով:

— Կարելի է դա նրանց չէ հավնում,— մեջ մտավ մյուս հարսը:

— Կարելի է վարդապետ է ուզում դառնալ,— ասաց մեծ մայրը:

Բայց իմ սիրտն այնքան լցված էր, որ ես այս կատակները ախորժակ չունեի լսելու: Իմ պատասխանները լինում էին սառն և անհամ, այնպես, որ նրանք շուտով ձանձրացան:

Բայց տանտիրոջ որդիքն ամենևին խոսակցության մեջ չէին մտնում, երևում էր, հոր մոտ համարձակություն չանեին խոսելու: Իսկ բոլորը զինվորված էին. ինքը տանուտերն իր ծեր հասակով գոտկում խրած ուներ մի զույգ ատրճանակներ: Երբ ես հարցրի, թե խաղաղության ժամանակ, իր օթևանի ծածկի տակ, ի՞նչ պետք կար զենք կրելու, տանուտերը պատասխանեց.

— Մենք մեր ձեռքը մեզանից չենք կտրում, և դեն չենք գցում, երբ որ անգործ ենք մնում:

— Բայց ձեռքը մեզ ուրիշ ժամանակ պետք է:

— Սուրն էլ նույնպես,— ասաց նա, և ապա ավելացրուց.— աստված բոլոր անասուններին զենք է տվել, որովհետև թշնամի ունեն: Մարդուն զենք չէ տվել, բայց խելք է տվել զենք շինելու: Անասունը իր կարճ խելքով միշտ իր զենքը իր վրա է պահում, բայց մենք հիմար կլինեինք, թե առանց զենքի մնայինք, որովհետև մեր թշնամին ավելի կատաղի է:

— Ո՞վ է մեր թշնամին,— հարց արի ես միամտաբար, ծերունուն փորձելու մտքով:

— Չե՞ս իմանում, քո ձին ո՞վ գողացավ,— հարցրուց նա:

— Քուրդը:

— Հիմա իմացա՞ր, մեր թշնամին նա է, որ մեր ունեցածը մեր ձեռքից խլում է: Դու ճանապարհ ես գնալու, ի՞նչ կանես, եթե մի քուրդ գա և իր նիզակը կուրծքիդ դնելով, ասե, դե՛, մերկացի՛ր:

— Ի՞նչ պետք է անեմ, կմերկանամ, ինչ որ ունեմ բոլորը կտամ:

— Այն ժամանակ առանց շապիկի կմնաս:

— Ուրիշ ի՞նչ ճար կա:

— Ինչո՞ւ չկա,— հարցրուց ծերունին մի փոքր բորբոքվելով:— Քրդի մարմինը խո երկաթից չէ շինած, նա էլ մեզ նման մարդ է: Դու էլ կարող ես քո նիզակը նրա կրծքին դնել, կամ կսպանես և շապիկդ կազատես, կամ կսպանվես. թող նրանից հետո ինչ որ տանելու է տանե, որովհետև մեռելի համար էլ հագուստ պետք չէ:

— Բայց Քրիստոս ասում է, որ հակառակություն չանեք, ով որ մեր շապիկն ուզում է, պետք է իրան տանք:

— Քրիստոս եթե շապիկ ունենար, այս խոսքը չէր ասի,- պատասխանեց ծերունին հեգնական ձևով:

Այս խոսքերը ինձ համար նոր չէին, ես հազար անգամ լսել էի ծերունի որսորդից: Բայց զարմանալին այն էր, որ ես տեսնում էի՝ խաշնարած հայերը բոլորովին ուրիշ սիրտ ունեին, մինչդեռ երկրագործներն և քաղաքացիքը բոլորովին մեռած մարդիկ էին: Ասլանը ասում էր. «դա նրա համար է, որ խաշնարածներն ավելի տերտերի երես չեն տեսնում»:

Այս հայերը մնացել էին իրանց նախնական պարզության մեջ, մտածում էի ես, իրանց լեռներում անարատ պահվել են նրանք, որովհետև փչացած, անպիտանացած հասարակության հետ հաղորդակցություն չեն ունեցել:

Ես վաղուց լսել էի այս ժողովրդի մասին մի զրույց, որ ինձ անհավատալի էր թվում, իբր թե մի անգամ նրանց մեջ խոլերա ընկած է եղել: Ժողովուրդը մի քանի անգամ դիմել է եկեղեցին, և խնդրել է իրանց սուրբ խաչից (եկեղեցին նրա անունով էր շինված), որ ցավը իրանցից հեռացնե: Բայց տեսել են, որ սուրբ խաչը ամենևին ուշադրություն չէ դարձնում, և ցավը օրըստօրե սաստկանում է: Այն ժամանակ բոլոր ամբոխը բարկությամբ հարձակվում են սուրբ խաչի վրա, եկեղեցու դռները փակում են և սկսում են նրա վրա հրացաններ արձակել և սպառնալիքներ կարդալ: Բարեբախտաբար խոլերան դադարում է և եկեղեցին ազատվում է քանդվելուց:

Այժմ, լսելով ծերունի տանուտերի խոսքերը, ես մտածում էի, թե շատ հեռու չէ մի այսպիսի ժողովրդից այս տեսակ վարմունք, որովհետև նա սուրբի վրա նայում է այն աչքով, ինչ աչքով նայում է ծառան իր տիրոջ վրա, որ եթե հաց չտա և նրան չվարձատրե, ծառան կդադարե ծառայելուց, և գուցե կթշնամանա նրա հետ:

Բայց որքան էլ հաճելի լիներ ինձ ծերունի տանուտիրոջ հյուրասիրությունը, ես դարձյալ շտապում էի շուտով ճանապարհ ընկնել: Որովհետև մտածում էի, եթե ուշանամ, գուցե Ասլանը դարձյալ չի սպասի ինձ: Ես նրան վերջին օրերում լավ էի ճանաչել, նրա համար ընկեր, բարեկամ ոչինչ նշանակություն չունեին. նա իր «գործին» էր նայում: Եվ շատ կարելի էր, նա ինձ բոլորովին մոռացել էր, որպես մոռացել էր Սոնային, որին մի ժամանակ այնքան տաք կերպով սիրում էր նա: «Այսպիսի մասնավոր սերը, ասաց նա, ոչինչ նշանակություն չունի այն մեծ սիրո մոտ, որով լցված է այժմ իմ սիրտը»…

Հովիվների վրանները կազմված էին մի նեղ հովիտի մեջ. նրանք թվով մի քանի հարյուր կլինեին. յուրաքանչյուր վրանը պատկանում էր մի ընտանիքի. բայց բոլորը մի գյուղի ժողովուրդ չէին, այլ մի քանի գյուղերի բնակիչները հավաքված էին միասին: Բայց դարձյալ նրանք խառնված չէին, և ամեն մի գյուղի խաշնարածներն իրանց առանձին տեղն ունեին, նրանց վրաններն առանձին խումբեր էին կազմում: Բայց այս ժողովուրդը բոլորովին չէր նվիրված խաշնարածության, նրանք ունեին և իրանց երկրագործությունը: Ամեն ընտանիքի մի մասը մնացել էր գյուղերում

ցանքերը մշակելու համար, մանավանդ ցանքերի մեծ մասը չորային էր, որ ավելի խնամոց կարոտություն չունի, վարում են սարերի հարթահավասար կողքերը և ցանում են, այնուհետև ոռոգումը թողնում են բնության հոգատարությանը:

Տղամարդիկ միայն հոգս էին տանում հոտերի պահպանության և դարմանելու մասին. տնտեսական հոգսերը կանանց վրա էր: Ոչ մի կին, ոչ մի աղջիկ անգործ չէր այս աշխատասեր հասարակության մեջ. կանայք էին կաթը կթում, յուղ պատրաստում և պանիր մակարդում. կանայք էին ոչխարները մազակտուր անում, բուրդը մանում և նրանից կապերտներ, գորգեր և զանազան օթոցներ պատրաստում: Այս կանանց արդյունքն է այն նուրբ շալեղեն գործվածները, որոնցմով պարծենում է Վանը, որոնք ծառայում են հարուստ իշխանների համար վերարկու և այլ հագուստներ լինելու: Նրանք ծանոթ են բոլոր բույսերի, արմատների և հանքերի հետ, որոնք տալիս են զանազան ներկեր, և իրանք են պատրաստում այն գեղեցիկ գույները, որոնցմով նշանավոր են Վանա շալեղեն գործվածները: Այս բոլորից երևում է, որ այս ժողովուրդը շատ հին ժամանակներում դուրս է եկել իր վայրենությունից, և արհեստը ու աշխատությունը խիստ վաղուց ծանոթ է եղել նրան:

Կինը այստեղ մարդ էր, իր բուն նշանակությամբ. նրա հարաբերությունները տղամարդի հետ ավելի ազատ էին: Նա մնացել էր իր նահապետական պարզության մեջ. նա դեռ չէր խարդախվել հարեմական սովորություններով, որպես Պարսկաստանի և Հայաստանի այլ կողմերի հայ կանայք, որոնք մահմեդականների ազդեցության տակ փոխել էին իրանց ազգային բնավորության իսկական հատկանիշները:

Ավելի ազատ էին աղջիկները, դեռ կույս, չամուսնացած աղջիկները: Նրանք թեև սովոր չէին խոսել սիրո վրա, թեև չգիտեին սեթևեթել մանուկ պատանիների հետ, բայց նրանց արգելված չէր խոսել, զվարճանալ, զբոսանքի գնալ երիտասարդների հետ: Այսպիսի սպարտական սերտ հարաբերությունները երկու սեռերի, առաջ էր բերել ամբողջ ժողովրդի մեջ մի տեսակ անմեղություն, որ տիրում է մի ընտանիքի մեջ, քույր և եղբոր մեջ:

«Ազատությունը, ասում էր Ասլանը, գտնվում է ժողովրդական կենցաղավարության երկու ծայրերի մեջ, մեկում, երբ նա դեռ իր նահապետական պարզության մեջ է ապրում, մյուսում, երբ նա հասել է քաղաքակրթության լույսին: Այս երկու ծայրերի միջոցում տիրում է ստրկությունը»:— Այս ժողովուրդը դեռ առաջին ծայրի վրա է կանգնած:

Ծերունի տանուտերը, տեսնելով, որ ես շատ շտապում եմ, հրամայեց իր ձիերից պատրաստել երկուսը, մեկը տվեց իր միջնակ որդուն և հրամայեց ինձ տանել և հասցնել Ս.-բեկի վրաններին, մյուսը ինձ տալով, ասաց.

— Քո ձին գողացվել է, ինձ համար նախատինք կլիներ, որ մի «լավ բարեկամիս» որդեգիրն իմ վրանում հյուր լինելուց հետո, այստեղից հեռանար առանց ձիու. դրա համար այս նժույգը կտանես որպես իմ կողմից ընծա:

Ես հրաժարվեցա ընդունելուց, և միևնույն ժամանակ դժվարացա Մըհեի հնարած սուտը պարզել, որ իմ ձին ամենևին գողացված չէր:

Ծերունին դարձյալ պնդեց, թե ես հյուրասիրության դեմ վարված կլինեմ, եթե չընդունեմ նրա պարգևը: Ես պատասխանեցի:

— Դուք այս ձին ինձ նրա համար եք ընծայում, որ ես կորցրել եմ իմը, ես կընդունեմ, միայն այն պայմանով, եթե կգտնեմ իմ ձին, այն ժամանակ ձերը ետ կդարձնեմ: Ծերունին ասաց, միայն դա չէ պատճառը, այլ նա ցանկանում է, որ «իր բարեկամի» որդեգրին մի թեթև բանով պատված լինի: Բայց ո՞վ էր նրա բարեկամը, որի որդեգիրը լինեի ես:

— Ծերունի որսորդը,— ասաց նա:

— Բայց դուք ո՞րտեղից գիտեք, որ ես նրա որդեգիրն եմ:

— Ես բոլորը գիտեմ…— պատասխանեց նա խորհրդավոր ձայնով:

Մենք ճանապարհ ընկանք: Տանտիրոջ ընտանիքը շատ սիրով ճանապարհ դրեց ինձ, կարծես, ես տարիներով նրանց մեջ ապրած լինեի:

Տանտիրոջ միջնակ որդին, որ պետք է առաջնորդեր ինձ մինչև եզիդիների գլխավորի վրանը, մի կատարյալ դյուցազն էր. նա իր ձիու վրա նստած, կարծես թե, կազմում էր նրա հետ մի ամբողջ մարմին, որ ստեղծված էր պատերազմի համար: Ես երբեք չեմ մոռանա նրա խոսքը, որ ճանապարհին ասաց ինձ. «Մեր կյանքը սրի մեջն է»…

Մենք գնացինք ուղիղ ճանապարհով, և ոչ լեռների միջով, որպես տանում էր Մըհեն, և նույն ավուր երեկոյան պահուն հասանք Ս.-բեկի վրաններին:

ԽԳ

ԵԶԻԴԻՆԵՐ

Մենք հասանք եզիդիների բեկի չադրներին նույն ավուր երեկոյան պահուն, երբ արևն արդեն մտած էր: Երկու մարդ կես ճանապարհի վրա սպասում էին, և մեզ ուղղակի տարան բեկի վրանը: Ասլանը այնտեղ էր. նա երբ տեսավ ինձ, «վերջապես եկար դու» ասաց և ժպիտի նման մի բան երևաց նրա սառն դեմքի վրա: Մի փոքրիկ, կանաչազարդ հովիտի մեջ զետեղված էին եզիդի-ների չադրները մի քանի հարյուրի չափ, իսկ կենտրոնում կազմված էր բեկի վրանը: Նա որոշվում էր մյուս բոլորից իր մեծությամբ և գեղեցկությամբ: Նա բաժանված էր չորս մասի,- մեկի մեջ, ուր ընդունեցին մեզ, նստած էր ինքը բեկը, և դիտակը ձեռին անդադար նայում էր այս կողմ և այն կողմ, կարծես, նա միշտ երկյուղի մեջ էր, չիցե թե թշնամու անակնկալ հարձակում լինի նրա վրա:- Այդ մասը նրա հյուրանոցն էր: Նրա առջև, մերկ գետնի վրա կարգով ցցված էին մի քանի երկայն նիզակներ, շինված այն եղեգներից, որ բուսնում են Տիգրիսի եզերքի վրա, որոնք այնքան թեքուն և անբեկանելի են, որ կարծես բնությունն ինքը ստեղծել էր մահվան գործիք դառնալու: Հյուրանոցի սյուներից քարշ էին տված զենքերի այլևայլ տեսակներ, որպիսի են՝ վահաններ, սրեր և զանազան հրացան գործիքներ: Հյուրանոցի աջակողմյան մասնում կապած էին մի քանի ձիաներ, թամքած և բոլորովին կազմ ու պատրաստ: Այդ նրա համար էր, եթե վտանգ պատահի, իսկույն տերերը թռչեն նրանց վրա և դուրս գան թշնամու առջև: Հյուրանոցի ձախակողմյան մասնում զետեղված էին բեկի թիկնապահները, որոնք նրանից միշտ անբաժան են մնում: Դրանք նրա մերձավոր ազգականներիցն էին, որոնց վրա ավելի վստահություն ուներ բեկը: Հյուրանոցի ետևի կողմում մի ընդարձակ բաժին կացուցանում էր կանանոցը, ուր զետեղված էր նրա ընտանիքը:- Այս բոլորն այնպես հարմար կերպով վարագույրներով բաժանված էր մինը մյուսից, որ ամբողջ վրանը ներկայացնում էր մի գեղեցիկ, շարժական ապարանք իր բոլոր

սարք ու կարգով. բայց ամենի մեջ նշմարվում էր պարզություն և նահապետական անշքություն:

Ինքը բեկը մի ցամաք մարդ էր միջակ հասակով, և կարելի է ասել ավելի կարճ, քան թե լինում են միջակ հասակ ունեցող մարդիկ: Նրա տարիքը վաղուց անցել էին հիսունից, բայց դեռ ոչ մի մազ չէր սպիտակել գլխի վրա: Դեմքը թուխ-դեղին գույն ուներ, խիստ մելամաղձոտ, բայց աչքերի մեջ բորբոքվում էր վայրենի կրակ: Ինձ վրա շատ վատ տպավորություն էր գործում նրա ավազակային հայացքը:

Բայց նա շատ քաղաքավարությամբ դարձավ դեպի ինձ և ասաց այս խոսքերը.

— Ես ուրախ եմ, որ դու ոտք կոխեցիր իմ վրանի շեմքի վրա, որովհետև դու իմ «լավ բարեկամի» ընկերն ես: Վերջին խոսքերի միջոցին նա ակնարկություն արեց Ասլանի վրա: Ես գլուխ տվեցի և ոչինչ չպատասխանեցի:

Վրանի մուտքի այս և այն կողմերում, ձեռքները իրանց սրերի վրա դրած, կանգնած էին բեկի հինգ որդիքը, որպես պահապան հրեշտակներ: Նրանց երեսների բացատրության մեջ պարզ նշմարվում էր, թե բավական էր մի փոքր ակնարկություն հոր կողմից, և նրանք իսկույն կկոտորեին հանդիպածին:

Հայրը նրանց մեկին հրամայեց, որ ընթրիք տան:

Բեկը ինձ հետ խոսում էր և վարվում էր, որպես մի երեխայի հետ: «Դու քանի՞ ձի ես գողացել, հարցնում էր նա, քանի՞ մարդ ես սպանել:— Պատահե՞լ է քեզ աղջիկ փախցնել»:— Այս և սրա նման շատ բաներ հարցնում էր նա այնպիսի մի հասարակ ձևով, որպես մեկը վարժատան աշակերտից հարցնելու լինի՝ «դու կարդացե՞լ ես Նարեկը, կամ շարականից որքա՞ն ես անցել»:

Երբ ես պատասխանում էի, թե նրա ասածներից ոչ մեկը չեմ կատարել, նա ծիծաղում էր, ասելով, «որքա՞ն ծույլ ես դու»…

Ասլանը այս խոսքերը լսելով, նույնպես ծիծաղում էր, բայց ես բարկանում էի:

— Դու լավ աղա կդառնաս,— ասաց բեկը,— ես քեզ իմ որդիների մեջ կպահեմ և կսովորես քաջ լինել:

Մտքումս ասեցի, եթե քաջությունը ավազակության մեջն է, ես երբեք նպատակ չունեմ այդ սովորելու:

— Ես այնքան երկչոտ չեմ, որքան դուք կարծում եք, բեկ,— պատասխանեցի լսելի ձայնով:

— Այդ մենք կարող ենք փորձել,— ասաց նա,— և փորձելու առիթ կա. քո ձին, որ Մըհեն հանձնել է մի հովվի, նա ռավանդների ցեղին է պատկանում, թշվառականը, որպես խոստացել էր, դեռ չէ վերադարձրել ձին: Երևի պահելու միտք ունի: Ռավանդների երամակները մեզանից ոչ այնքան հեռու մի սարի ետևում արածում են: Եթե քեզանում սիրտ կա, այս րոպեիս կգնաս և նրանց ձիերից մի քանի հատ կբերես: Էգուց նրանք ստիպված կլինեն քո ձին բերել և իրանցը տանել:

Ես զարմացա բեկի մի այսպիսի առաջարկության վրա և պատասխանեցի.

— Դիցուք թե մի խաբեբա հովիվ, օգուտ քաղելով Մըհեի միամտությունից, իմ ձին տարավ և ետ դարձնելու նպատակ չունի. բայց ես ի՞նչ իրավունք ունեմ ուրիշի ձին բերել նրա փոխարեն:

Բեկը պատասխանեց.

— Հիմա երևաց, որ դու ոչ միայն երկչոտ ես, այլ աշխարհի կարգն էլ չես իմանում:

Ես կարծում էի, թե բեկն այս բոլորը կատակի համար էր խոսում, բայց երբ Ասլանը պատմեց մի քանի բաներ քրդերի կյանքից, այն ժամանակ ես համոզվեցա, որ նա կատակ չէր անում: Քրդերի մեջ օրենքի զորություն էր ստացել այն սովորությունը, երբ մի առանձին ցեղի պատկանող մարդ հափշտակում է որևիցե ուրիշ ցեղի հասարակությանը պատկանող մի մարդու սեփականությունը, վերջինը իրավունք ունի իր կորուստի փոխարենը հափշտակել ավազակի ցեղին պատկանող մի օտար մարդու կայքից, թեև նա ամենևին խառն չէ եղել հիշյալ գողության գործի մեջ:— Այստեղից առաջ են գալիս այն անընդհատ հափշտակությունները, որ կատարվում են տարբեր ցեղերի մեջ և պատճառ են տալիս նրանց մշտական կռիվներին: Վրեժխնդրության մի այսպիսի ձևը շարժական կայքից անցնում է անձինքների վրա: Մի ցեղին պատկանող մարդ իր սպանված աղգակցի արյան փոխարեն կարող է սպանել մի ուրիշ մարդու հակառակ ցեղից, թեև նա բոլորովին անմեղ լիներ:— Դա ծագում է այն սկզբունքից, որ ցեղը քրդերի մեջ մի ամբողջ ընտանիք է, կապված թե նյութական, թե բարոյական շահերով, և ցեղը բաղկացնող յուրաքանչյուր անհատը մինը մյուսի փոխարեն պատասխանատու է: Մի այսպիսի կապակցությունը, թողնելով իր վատ կողմերը, ունի և իր հասարակական օգուտները, օրինակ, եթե մի քրդի ոչխարները հիվանդությունից կոտորվեցան, և նա մնաց առանց ապրուստի, այն ժամանակ նրա ցեղակից քրդերի պարտավորությունն է իրանց ունեցածից տալ անբախտին մի-մի ոչխար, մինչև նրա հոտի առաջվա թիվը լրանա:

Երբ որ բեկն ինձ հետ խոսում էր, հեռվից լսվեցան շների խառն ձայներ: Նրա որդիներից երկուսն իսկույն դուրս վազեցին իմանալու, թե ինչ էր աղմուկի պատճառը: Քանի րոպեից հետո հայտնվեցավ Մըհեն, քշելով իր հետ ձիաների մի ամբողջ երամակ:

— Սատանան տանի…— ասում էր նա ինքն իրեն մրթմրթալով,— թևքս ծվատեցին:

Եվ իրավ, մենք տեսանք, նրա թևքից արյուն էր հոսում, և վերքը թողած էր բոլորովին անխնամ, առանց փաթաթելու: Բեկի կանանոցից դուրս եկան մի քանի պառավներ, սկսեցին համոզել Մըհեին, որ վերքը վտանգավոր է, և խնդրում էին, որ թույլ տա սպեղանի դնել և փաթաթել: Նա խիստ դժվարությամբ ընդունեց:

Վերքը առաջ էր եկած նիզակի ծակելուց: Պառավներից մեկը սկսեց լիզել վերքը և ծծելով դուրս քաշել արյունը: Դա մի զգուշություն էր, չթողնել որ մարմինը վարակվի, եթե վիրավորող զենքը թունավոր է եղել: Այս գործողությունը ինձ զարմացրուց, որովհետև առաջին անգամն էի տեսնում: Բայց երբ վերջին ժամանակներում, կարդալով հայոց պատմությունը, պատահեցան ինձ Առլեզ կամ Հարալեզ դից անունները, ես հասկացա, թե ինչ պաշտոն էին կատարում հայոց այդ բժիշկ աստվածները: Եվ շատ բնական է, գազանները միշտ իրանց մարմնի վերքը լիզելով են առողջացնում, և նախնական մարդիկ պետք է հետևին նրանց օրինակին:

Այսուամենայնիվ, քրդերի մեջ շատ առաջ է գնացել բժշկության վիրաբուժական մասը, կյանքն ու նրա կարիքներն ուսուցել են նրանց զարգանալ արհեստի այս ճյուղի մեջ: Բայց ի՞նչ էր այս բոլոր աղմուկի պատճառը, որտեղի՞ց էր բերել Մըհեն այս ձիաները:

— Տե՛ս, քաջն այսպես է լինում,— ասաց բեկը դառնալով դեպի ինձ,— տեսնո՞ւմ ես Մըհեին, մի ձիու փոխարեն բերեց տասը ձիաներ:

Ես հասկացա, Մըհեն կատարել էր այն հափշտակությունը, ինչ որ բեկը քանի րոպե առաջ ինձ էր առաջարկում: Նա այս արել էր առանց ոչ ոքի հայտնելու: Առաջին օրը, երբ նա եկել էր Ասլանի մոտ և իմացել էր, որ ձին տակավին չեն բերած, առանց նրա հետ խորհուրդ անելու, անհայտացել էր, և ահա դարձավ նա մեծ ավարով: Թեև Մըհեն մեզ ոչինչ չասեց, բայց երևում էր, որ նա կռիվ էր ունեցել քրդերի հովիվների հետ, եթե ոչ, այլապես վիրավորված լինել չէր կարող:

Մըհեն չսպասեց մինչև ընթրիք տային, և խնդրեց մի քանի հացեր և մի մեծ կտոր պանիր, բոլորը կերավ, և խմելով մի ահագին ման ջուր, գնաց քնելու: Խղճալին երեք օր էր, որ մի րոպե ևս հանգստացած չէր:

Գիշերից բավական անցել էր, բայց տակավին վրաններից շատերի մեջ լույս էր երևում: Մեր ընթրիքը տվեցին. նա պատրաստված էր խիստ պարզ կերակուրներից, որոնց մեջ գլխավոր տեղն էր բռնում մի ամբողջ խորոված գառը:

Ընթրիքից հետո բեկը կամեցավ մեզ զվարճացնել և կանչել տվեց մի երգիչ: Նա մի փոքրիկ մարդ էր, ոտքերով կաղ, որ շատ նմանում էր մեր աշուղներին, որոնք հազիվ ազատ են լինում մի որևիցե մարմնական արատից: Երգիչն ածում էր ջութակի վրա:

Ինձ մինչև այնօր չէր պատահել լսել մի երգ, որ այնքան հատկանիշ լիներ ազգային բնավորության, որ այնքան արտահայտող լիներ ժողովրդական ոգուն, որպես քրդի երգը: Քրդի երգը լսելիս, մարդ միշտ երևակայում է՝ իրան - քրդին, նիզակը ձեռին, սեգ նժույգի վրա նստած, կայծակի պես սլանում է լեռների մեջ…

Քուրդ աշուղի երգածները հասարակ տաղեր չէին. նա երգում էր մի ամբողջ վեպ, որ ժողովրդական պոետը առել էր կենդանի անցքերից: Դա մի քաջազնական բանաստեղծություն էր, որի մեջ խիստ ազդու կերպով նկարագրված էր այն արյունահեղ կռիվը, որ ունեցել էր բեկը քրդերի մի ուրիշ ցեղի հետ, և որի մեջ սպանվել էին նրա երկու որդիներն և ավար էին առնվել նրա հոտերը:

«Այսպես, ասում էր Ասլանը, մի ժամանակ մեր նախարարների տներում երգում էին Գողթան երգիչները, բայց նրանց ձայնը լռեց այն օրից, երբ հայերի մեջ քաջազնական հոգին հանգավ»…

Աշուղի բոլոր երգեցողության ժամանակ տխուր էր բեկը: Վրեժխնդրության արյունը բորբոքվում էր նրա աչքերում, որովհետև նա լսում էր սիրելի որդիների արյունոտ կռիվը, որի մեջ այնքան շատ սպանեցին նրանք և սպանվեցան…

Նույն միջոցին վարագույրի հետքից, որ բաժանում էր մեզանից կանանոցը, լսելի եղան դառն հեկեկանքի ձայներ: Մի աղախին դուրս եկավ այնտեղից, և մոտենալով բեկին, ասաց. «Տիկինը խնդրում է, որ այս երգը չերգեն»:

Ո՞վ էր տիկինը:— Դա նույն տղամարդի ամուսինն էր, որի քաջագործություններն էր երգում աշուղը, և որը սպանված էր…

Ճշմարիտն ասած, ինձ վրա ևս խիստ դառն տպավորություն գործեցին վիպասանի խոսքերը, որոնք ազդում էին կորով և ցավակցություն:

Երևի ինքն բեկն ևս ուրախ տրամադրության մեջ չէր. նա մեզանից ներողություն խնդրեց և գնաց քնելու: Նրա գնալուց հետո երգիչը նույնպես հեռացավ: Այնուհետև Ասլանը ինձ պատմեց, թե այս անցքը պատճառ էր տվել եզիդիների ցեղի տոհմային ոխակալությանը մի ուրիշ ցեղի հետ, որ Վանա նահանգում նշանավոր է իր վայրենի բարբարոսությամբ, որոնց ձեռքում այնքան տանջված են հայերը…

Այս լսելուց հետո ես մասամբ հասկացա Ասլանի եզիդիների բեկի մոտ գալու նպատակը, հասկացա նաև, թե ինչ խորհուրդ ուներ Կարոյի նամակի մեջ այն մասը, որով առաջարկում էր ծերունի որսորդին եզիդիների բեկի մոտ գնալ, և նա ստանալով նամակը, էլ չսպասեց, գիշերով ճանապարհ ընկավ: Դա մի քանի շաբաթ առաջ էր, երամակը մի դիպվածով իմ ձեռքը ընկավ…

Մեզ համար ևս անկողին պատրաստեցին քնելու: Բայց Ասլանը երկար նստեց, նա պատրաստում էր մի քանի նամակներ, որ վաղ առավոտյան պետք է Մըհեն տանե: Նա ինձ չասաց, թե ումն է գրում նամակները և ոչ ես համարձակություն ունեցա հարցնելու, միայն նկատեցի, թե խեղճ Մըհեն այնպես վիրավոր, ո՛րպես կարող էր ճանապարհ գնալ:

— Կգնա,— ասաց նա,— այնպիսի վերքերը Մըհեի համար նշանակություն չունեն:

Որքա՞ն անգութ են այս մարդիկը… մտածում էի ես:

Ես սպասել չկարողացա, մինչև Ասլանը վերջացներ իր գրությունները. հենց գլուխս դրի բարձի վրա, քունս տարավ: Բայց երբ աչքս ընկավ նրա նամակներից մեկի վրա, տեսա, նրա գրվածքը ոչ մի ազգի տառերի չէին նմանում, կարծես դա մի առանձին հնարած գիր լիներ, որի գաղտնիքը միայն գրողին և ստացողին էր հայտնի…

Վաղ առավոտյան Ասլանը ինձ զարթեցրուց: Ես շատ նեղացա: Այս մարդը դևի նման քուն չուներ, ինձ էլ անհանգիստ էր անում: Մըհեն արդեն գնացել էր. ես նրան տեսնել չկարողացա: Բայց Ասլանը, նկատելով իմ վրդովմունքը, մի առանձին կարեկցությամբ ասաց.

— Ես գիտեի, որ քունը քաղցր էր քեզ համար, բայց ես ցույց կտամ քեզ մի տեսարան, և դու կներես, որ քեզ անհանգիստ արեցի:

Նույն միջոցին ես լսեցի մի տխուր երգի ձայն.

«Այն քաջ մարդու շապիկն է դա,
Որ իմ ձեռքով կարեցի.
Արյունոտ է, կարմիր ներկած,
Արտասուքով լվացի:

Դա շապիկն է այն քաջ մարդու,
Որ քեզի հայր կոչվում է,
«Վըրե՛ժ, վըրե՛ժ չար ոսոխից»
Գերեզմանից կանչում է:

Դե՛, մեծացիր, իմ նազելի,
Չարի արյունը խմե՛,
Քո մոր սրտին մխիթարանք,
Ուրախություն պարգևե՛»:

Սարսափելի՛ մի տեսարան էր այդ: Մի մանկահասակ տիկին նստացրել էր իր

փոքրիկ երեխային մոխիրների կույտի վրա, և նրա վզին գցել էր արյան մեջ շաղախված մի շապիկ: Նա մոխիրը ճանկերով առնում էր գետնից, ցրվում էր իր գլխի վրա, լաց էր լինում, և դառն ձայնով եղանակում էր հիշյալ երգը:

— Այս այն տիկինն է,— ասաց Ասլանը,— որ գիշերը իր աղախնին ուղարկեց բեկի մոտ, խնդրելու, որ չասել տա այն երգերը, որոնք հարուցանում էին նրա մեջ տխուր զգացմունքներ: Ամեն առավոտ, արևածագից առաջ, ես տեսնում եմ սրան, այսպես լաց է լինում, սովորեցնում է իր զավակին վրեժխնդիր լինել հոր մահվան համար: Սովորեցնում է քաջ լինել…: Այսպես կրթում է դյուցազնական մայրը իր որդուն, այսպես պատրաստում է նրան այն կյանքի համար, որ առանց սրի և արյունի կյանք չէ:

Մի առանձին զգացմունքով արտասանեց Ասլանը այս խոսքերը: Րոպեական լռությունից հետո նա շարունակեց.

— Բայց ի՞նչ է սովորեցնում իր զավակին հայ մայրը: Սովորեցնում է խոնարհ և համբերող լինել… Եվ ստրկությունը ուսանում է որդին օրորոցի մեջ…: «Խոնա՛րհ և համբեր՛ող լինել»… գեղեցիկ խոսքեր են, քրիստոնեական ընկեր՝ հաշտության խոսքեր են: Բայց մենք բոլորովին ուրիշ աշխարհում ենք ապրում, մեզ դեռևս պետք է հետևել այն օրենքին, որ ասում է՝ «ակն ընդ ական»:

Ասլանը լռիկ մեկն էր, բայց երբ նա սկսում էր խոսել, էլ խոսքերին վերջ չկար:

— Քուրդ կինը իր զավակներից գազաններ է զարգացնում,- ասաց նա.— բայց հայ կինը պատրաստում է գառներ: Ի՞նչ համեմատություն կա այս երկուսի կենակցության մեջ. չէ՞ որ վերջիը պետք է զոհ գնա իր տկարությամբ առաջինի կատաղությանը: Արդարև, ես ընդդեմ եմ վայրենության, բայց անձնապաշտպանությունը սուրբ է մարդու համար նույնքան, որքան արդար վրեժխնդրությունը:

Ասլանի խոսակցությունը ընդհատեց մի ծառա, որ ներս մտնելով ասաց, թե բեկը իր առանձնարանում կոչում է նրան: Նա իսկույն վեր կացավ գնաց: Ես մնացի մենակ: Նույն միջոցին իշխանի աղջիկները ներս մտան, հավաքեցին մեր անկողինները: Նրանցից մեկը ջուր բերեց և սկսեց իր ձեռքով ածել, որ ես լվացվեմ: Լեռների այս հարազատ կույսը մի սիրուն աղջիկ էր, և խիստ հրապուրիչ իր վայրենի գեղեցկությամբ:

— Քո անկողինը ես էի պատրաստել,— ասաց նա:— Դու հանգիստ քնեցի՞ր, լավ երազներ տեսա՞ր:

— Լավ երազներ տեսա: Ես ամբողջ գիշերը խոսում էի մի աղջկա հետ, որը այնպես գեղեցիկ էր, որպես դու:

Այս խոսքը ես ասեցի բոլորովին կատակով, բայց նա շարժեց սիրուն օրիորդի սիրտը, և նրա արտասուքի հետ դուրս թափեց մի գաղտնիք, որ ոչ սակավ զարմացրուց ինձ:

— Ես գեղեցիկ չեմ,— ասաց նա,— ես մի անպետք լաթի կտոր եմ, որ ոտքի տակ են գցում…

Ես ոչինչ չգտա նրան պատասխանելու, որովհետև չէի իմանում, թե ի՞նչ մտքով է ասում այդ: Նրա եղբայրները ներս մտան, օրիորդը հեռացավ:

Արևը նոր սկսեց ծագել:

Նույն միջոցին բեկի առանձնասենյակից ետ դարձավ Ասլանը, ինձ հայտնեց, թե ինքը մի ոչ այնքան հեռու տեղ պետք է երթա, և պատվիրեց սպասել մինչև իր վերադարձը:

Ձիերը վրանի առջև պատրաստ էին. նա և բեկը հեծան, և առնելով իրանց հետ մի քանի ծառաներ, հեռացան:

— Ո՞ւր են գնում,— հարցրի բեկի որդուց, որ ինձ մոտ նստած էր:

— Մեզանից ոչ այնքան հեռու մի ավերակ բերդ կա, հայրս միտք ունի նորոգել տալու, գնում են այն բերդը տեսնելու,— ասաց նա:

Ինձ շատ հետաքրքրական չէր այդ, որովհետև ես ուր որ գնում էի, միշտ ավերակ բերդեր էի տեսնում: Վանա կողմերի լեռները լիքն են ավերակ բերդերով, և նրանք ամենևին չէին գրավում ինձ: Բայց նույն րոպեում իմ միտքը գրավել էր գեղեցիկ օրիորդը, մտածում էի՝ թե այն ի՞նչ խոսք էր, որ նա ասաց ինձ, և ինչո՞ւ այնպես ակամա փղձկեցավ նա: Բայց ո՞րտեղ մյուս անգամ կարող էի տեսնել նրան:

Շուտով մեզ նախաճաշիկ տվեցին: Քրդի նախաճաշիկը շատ համեղ է լինում. նա պատրաստված է՝ սերը, կարագը, մածունը մեղրի հետ խառնած մի բաղադրությունից, և համեմած է լեռնային բույսերով: Հացը նրանք թխում են երկաթյա լայն կասկարայի վրա: Ես վաղ առավոտյան տեսնում էի, թե որպես կանայք փութաջան կերպով հաց էին պատրաստում: Եվ չնայելով, որ բեկը մի ամբողջ ցեղի գլխավորն էր, դարձյալ նրա կանանց, աղջիկների և հարսների մեջ չէր երևում այն, այսպես ասած, տիկնության անշարժությունը, որ տիկինները հանգիստ նստած, տնային բոլոր գործերը աղախիններին և սպասավորներին են կատարել տալիս: Քրդի կինը, թե իշխանի տիկին լիներ նա և թե հասարակ հովվի, իր տնային գործերը իր ձեռքովն է կատարում: Քրդի տնտեսության մեջ անգործ է միայն տղամարդը: Նա առավոտյան վեր է կենում, կամ իր ձիու հետ է խաղում, կամ իր զենքերն է մաքրում, կամ վառոդ ու գնդակ է պատրաստում, և եթե ուրիշ գործ չունի, մի ընկեր է գտնում, և նստում է նրա հետ ծխում է ու իր գլխի անցքերն է պատմում: Գլխավոր արհեստը, որի մեջ նա շահ է բերում իր ընտանիքին, է ավազակությունը,- այս գործի մեջ քուրդը ծույլ չէ:

Նախաճաշիկից հետո բեկի որդիքը կամեցան ինձ զվարճացնել և առաջարկեցին գնալ որսորդության: Ես ընդունեցի: Որսորդության համար ամեն ինչ հոգացել էին. ձիերը, շները և բազեներն արդեն պատրաստ էին: Մենք առավոտյան հովով դուրս եկանք: Այն հովտի մեջ, ուր զետեղված էին եզիդիների վրանները, կար մի ընդարձակ, կանաչապատ դաշտ: Այստեղ բեկի որդիքը կամեցան մի փոքրիկ ձիարշավ հանդիսացնել: Վրանաբնակների կանայք կանգնած, նայում էին մեզ վրա: Նրանք խիստ վարպետ կրիտիկոսներ են տղամարդի արիությունների:

Ինձ դժվար է նկարագրել, պետք է աչքով տեսնել, որ հասկանալ, թե որքան ճարպիկ, որքան արագաշարժ և որքան դևի պես խորամանկ է քուրդը, երբ նա հեծած է ձիու վրա: Ձին ամենայն արագությամբ վազելու ժամանակ՝ քուրդը ճախարակի նման պտույտվում է նրա ամեն կողմերը: Երբեմն տեսնում ես, նա մի թռիչք գործեց, ձիու պարանոցովն անցավ, և կրկին նստեց թամբի վրա: Երբեմն տեսնում ես, նա իր ոտքերը ասպանդակի մեջ թողնելով, կռացավ, և ձեռքով գետնից հավաքում է քար, փայտ կամ իր ձգած նիզակը, և նրանցով կարկտի նման մինը մյուսի ետևից ռմբակոծում է իր հակառակորդին, որին հալածում է: Բայց ձին նույն միջոցում արագ վազում է առանց կանգնելու: Եվ գլխավորը, որ միջոց է տալիս քրդին պատերազմելու ձիու վրա, այն է, որ նրա ձեռքերն ամենևին չեն զբաղված իր նժույգի սանձը կառավարելով. նա սանձը բոլորովին բաց է թողնում, և իր ծնկների զանազան շարժմունքները բավական են ցույց տալու ձիուն իր ընթացքի ուղղությունը: Եվ

խելացի անասունը այն աստիճան վարժված է, որ բոլորը հասկանում է, և համարյա գուշակում է իր տիրոջ միտքը: Այսպիսով ձիավորի ձեռքերն ազատ են մնում, և նա կարողանում է իր ձին դեպի զանազան կողմերը պտտացնել և միևնույն ժամանակ գործածել իր զենքերը,- հրացան արձակել, դարձյալ լեցնել, դարձյալ արձակել, թեև ձին անդադար շարժողության մեջ է: Մի խոսքով, ձին և քուրդը գործում են, որպես մի ամբողջ մարմին, որին մի կամք և մի նպատակ է կառավարում:

Այսպես ես տեսա բեկի որդիներին, որոնք մի փոքրիկ ձիարշավ կատարեցին այն դաշտում: Նրանք հրավիրեցին ինձ ևս մասնակից լինել, բայց ես հրաժարվեցա, որովհետև բոլորովին անվարժ էի, և ինձ խայտառակել չուզեցի:

Բայց ինձ բոլորովին զարմացրին նրանց ձիերը: Չափազանց լավ կրթված էին արշավանքի համար: Քուրդն երբեք իր նժույգը չէ տալիս ուրիշին հեծնելու, թեև նա իր եղբայրը լիներ, որովհետև նրանք երկուսը ծանոթ են միմյանց բնավորությանը. մի օտար մարդ կարող էր հակառակ վարված լինել ձիու վարժությանը և վայրենացնել նրան: Այս պատճառով առած է դարձել քրդերի մեջ ասել, թե «երկու բան չէ կարելի ուրիշին տալ հեծնելու համար, մեկը՝ կինը, մյուսը ձին»:

Մեր որսորդությունը բավականին հաջող անցավ: Ես թեև ձիարշավի մեջ ցույց տվի իմ կատարյալ անկրթությունը, բայց որսորդության մեջ մի փոքր երեսս պարզացրի: Քրդերը, սովորած լինելով ավելի նիզակի, ատրճանակի և սրի կռիվներում, հրացան արձակելու և նպատակին դիպցնելու մեջ շատ վարժ չեն լինում: Ես քանիցս անգամ կարողացա վայր ձգել օդի մեջ թռչող կաքավին, կարողացա գետին գլորել նապաստակին իր փախչելու միջոցին, բայց նրանցից միայն երկուսին հաջողվեցավ այդ անել:

Ասլանը ինձ հետ ժամանակ չորոշեց, թե երբ կվերադառնա, այս պատճառով ես շտապում էի շատ չուշանալ, մտածելով, գուցե նա եկած կլիներ: Դրա համար մենք վերադարձանք բեկի վրանը, երբ կեսօր էր: Ասլանը դեռ եկած չէր:

Ես շատ սոված էի, բայց ճաշը ուշ տվեցին, որովհետև մեր որսած թռչուններից և երեներից ևս պետք էր մի բան պատրաստել, բացի դրանից, սպասում էին բեկի և Ասլանի գալուն:

Ես չուզելով անգործ նստել վրանի տակ և ինքնակոչ հյուրի պես սպասել, մինչև ուտելու մի բան տային, դուրս եկա այնտեղից և սկսեցի դիմել դեպի փոքրիկ վտակը, որ հոսում էր հովտի միջով:

Կեսօր էր: Այս ժամին հովիվները քշում են ոչխարները վրանների մերձակա մակաղատեղիներում, ուր գնում են կնիկները և աղջիկները կաթը կթելու: Նրանք արդեն իրանց գործը վերջացրել էին, և կաթնով լի սափորները գլխների վրա դրած, վերադառնում էին ոչխարների հանգրվանից: Քիչ էր պատահում, որ այդ աղջիկները կամ մանկահասակ կանայք իմ մոտով անցնելիս, որևիցե կատակ կամ սրախոսություն չարձակեին դեպի ինձ: Նրանք մի բան էին ասում, և առանց պատասխանին սպասելու, ծիծաղելով անց էին կենում: Ես հիմարի պես նայում էի նրանց ետևից և լուռ էի մնում:- Վերջապես հանդիպեց նա, որին ես որոնում էի.— Թութին, այսպես էին կոչում այն աղջկան, որ առավոտյան իմ լվացվելու ժամանակ թողեց իմ մտքում մի կասկածավոր կարծիք. այժմ նա դառնում էր ոչխարների հանգրվանից, և որպես իր ընկերուհիքը, կաթնով լիքը սափորը գլխին դրած: Նրա հետն էր այն մանկահասակ կինը, որից առավոտյան լսեցի աղետալի երգը: Նրանք տեսնելով ինձ, բաժանվեցան իրանց խմբից և եկան ինձ մոտ:

— Կաթ կխմե՞ս,— եղավ Թութիի առաջին խոսքը:

Թեև ես սովորություն չունեի հում կաթ խմելու, բայց Թութիի խոսքը չկոտրելու համար, ընդունեցի նրա հրավերը: Նա լեցրուց փոքրիկ փայտյա գավաթը, որ իր հետ ուներ, և ժպտելով տվեց ինձ:

Նրանք նստեցին վտակի ափի մոտ հանգստանալու: Եվ իրավ, բավական հոգնած էին, որովհետև հեռու տեղից էին գալիս: Թութին սկսեց վտակի սառը ջրով լվանալ իր բորբոքված երեսը և հետո սրբեց հագուստի դրոշակով: Նրա ուղեկիցը լուռ էր. ցերեկով ես ավելի պարզ կարողացա նշմարել նրա գեղեցիկ երեսի տխուր գծերը:

Ես ուզեցի զբաղեցնել նրանց:

— Դուք ունեք շատ աղախիններ,— ասեցի ես,— էլ ինչո՞ւ եք ինքներդ այսքան նեղություն քաշում:

— Մենք խո հիվանդ չենք,— պատասխանեց Թութին,— որ հանգիստ պառկենք ու ոչինչ չշինենք:

— Աղախինն էլ ունի իր գործերը,— պատասխանեց մյուսը ավելի խոհեմ կերպով:

— Ընկերիդ որտե՞ղ ես թողել,— հարցրուց Թութին:

Ես իմացա, որ Ասլանի մասին է հարցնում:

— Քո հոր հետ գնացել են, չեմ իմանում որտեղ:

— Նրա սրտում սատանա է նստած, դու գիտե՞ս,— հարցրուց Թութին բարկացած ձայնով:

— Ինչո՞ւ ես այսպես խոսում, խենթ,— զգուշացրեց նրան տիկինը և սկսեց կշտամբել:— Ասլանը շատ լավ տղա է:

— Բայց ձյունի պես սառն է նա:

— Ինչո՞ւ, նրա՞ համար, որ քեզ հետ սիլի-բիլի (սեթևեթ) չէ՞ անում:

Այս երկուսի վիճելուց ես իսկույն հասկացա Թութիի ատելության պատճառը դեպի Ասլանը: Երևում էր, խղճալի աղջիկը սիրում էր նրան, և սառնասիրտ, անգութ Ասլանից մերժված էր եղել: Բայց Թութին չհանգստացավ տիկնոջ խոսքերով, և ավելի բարկանալով ասաց.

— Ես մի՛շտ կասեմ, նրա սրտում սատանա է նստած. նա խիղճ չունի, դրա համար էլ ոչ մի աղջիկ նրան լավ տղամարդ չի ասի…

Ես նկատեցի նրա աչքերի արտասուքը, նա էլ չսպասեց, առեց իր սափորը և սկսեց դիմել դեպի վրանները:

Նրա գնալուց հետո տիկինը ինձ պատմեց, թե մի օր բեկի վրանում մի քանի քուրդ իշխաններ ժողով են ունեցել, նրանց մեջն է եղել և Ասլանը: Ժողովի խորհրդածությունը հասել է տաք վիճաբանության, որի մեջ Աբդուլլահի որդի Ահմեն խոսքով վիրավորել է Ասլանին: Այս Ահմեն նշանավոր էր քրդերի մեջ իր ժանտ բնավորությամբ և միևնույն ժամանակ իր տարօրինակ ուժով: Ասլանը չէ համբերում, հարձակվում է նրա վրա, և երեխայի նման կաշկանդելով, խլում է ժողովի միջից, և վրանից դուրս քարշ տալով, կամենում է սպանել նրան: Ժողովի բոլոր իշխանները վրա են թափվում, հազիվ կարողանում են ազատել վիթխարի Ահմեին Ասլանի

ձեռքից: Թութին տեսնում է այս կռիվը, և «այն օրից, ասաց տիկինը, խեղճ աղջիկը գժված է Ասլանի համար»…

— Բայց նա որքան քաջ է, այնքան և լավ մարդ է,— ավելացրուց տիկինը:— Շատ անգամ նա մխիթարել է ինձ սիրելի ամուսնիս մասին, շատ անգամ խրատներ է տվել, թե որպես պետք է կրթեմ սիրուն զավակիս: Նա մի կատարյալ շեյխ է, միայն գիրքն է պակաս…

Ինձ շատ գրավեց տիկնոջ համակրական զգացմունքը դեպի ազնիվ մարդը:

— Թութին խենթ է,— ասաց նա,— չէ ճանաչում նրան:

Եվ նա դիմեց դեպի վրանները, ինձ թողնելով վտակի ափի մոտ:

Ասլանը և բեկը վերադարձան խիստ ուշ, քան թե մենք մտածում էինք: Եկածին պես նա մի փոքր հաց խնդրեց, կերավ, և ինձ պատվիրեց, որ պատրաստվեմ, որովհետև կես ժամից հետո ինքը պետք է ճանապարհ ընկներ դեպի Վան գնալու: Նույն միջոցին նա բաց արեց թղթերի մի պահարան, և կամենում էր այնտեղ դնել մի հաստ թերթ, որի վրա երևաց ինձ մի նկարված պատկեր: Ես մոտեցա, որ տեսնեմ պատկերները: Նա չգաղեց ինձանից և ցույց տվեց:

Դա ավերակ բերդի պատկերն էր, որին գնացել էր նա հետազոտելու: Թղթի վրա երևում էր բերդը իր աշտարակներով և կիսակործան փլատակներով, երևում էին լեռները, շավիղները և բերդի բոլոր մերձակայքը, այնքան կենդանի կերպով նկարված, որ կարծես իսկականը լիներ: Դա Ասլանի շնորհալի ձեռքի գործն էր: Սև մատիտը ամենայն ճարտարությամբ հնազանդվել էր նրան: Եվ ես առաջին անգամ տեսնում էի մի այսպիսի հիանալի պատկեր:

Ասլանը տեսնելով, որ ես շատ գրավվեցա, ցույց տվեց ինձ մի քանի ուրիշ թղթեր ևս, բայց նրանք պատկերներ չէին, ես նրանցից ոչինչ հասկանալ չկարողացա, ինձ երևում էին միայն թղթի վրա խազխազած սև գծեր, որոնք բաժանված էին գույնզգույն ներկերով:

— Դրանք ի՞նչ են,— հարցրի Ասլանից:

— Վանա նահանգի աշխարհագրական քարտեզներն են,— պատասխանեց նա:

Ես դարձյալ ոչինչ հասկանալ չկարողացա:

— Այս թղթերի վրա,— ասաց նա,— նկարված են Վանա նահանգի բոլոր գյուղերը, լեռները, գետերը, դաշտերը, մի խոսքով, ինչ որ ստեղծել են բնությունը և մարդիկ:

— Ցույց տուր մի գյուղ,— ասեցի նրան: Նա ցույց տվեց փոքրիկ օ-ի պես մի բան, որի մոտ խազած էր նույնպես փոքրիկ մի խաչ:

— Դա,— ասաց,— սուրբ տիրամոր գյուղն է, որտեղ դու ուխտ էիր գնացել: Իսկ այն խաչը վանքն է:

— Այս ի՞նչպես գյուղ է, որտեղ ոչ մի մարդ չէ երևում,— հարցրի ես:

Նա ծիծաղեց և ոչինչ չպատասխանեց:

— Դրանք է՞լ դու ես նկարել,— հարցրի ես:

Նա գլխով շարժեց, թե այո՛:

Բայց ի՞նչ բանի պետք են դրանք:

— Բժիշկն երբ որ կամենում է բժշկել մի մարդու հիվանդությունը, նախ և առաջ պետք է ծանոթանա նրա մարմնի կազմվածքի հետ,— պատասխանեց նա:— Եվ մենք, եթե կամենում ենք մեր հայրենիքին որևիցե օգուտ մատուցանել, նախ և առաջ պետք է ճանաչենք նրան: Մեր ձիերը վրանի առջև կանգնած էին. ինձ համար պատրաստել էր տվել բեկը մինը իր ձիերից: Ես հայտնեցի նրան, թե ինչ պայմանով էի ընդունել ինձ ընծայած ձին հայ վրանաբնակների գլխավորից, և ավելացրի, թե ես այժմ իրավունք ունեի նրա տված պարգևը ինձ հետ տանել, որովհետև իմը չգտնվեցավ: Ուրեմն բեկին պետք չէր իր ձիերից մեկը անհանգիստ անել:

— Ձեր ձին գտնվածի հաշվումն է, որովհետև նրա փոխարեն մենք ունենք տասը հատ,— ասաց բեկը ծանր կերպով:— Բայց հայ վրանաբնակների գլխավորի քեզ ընծայած ձին ես վաղուց արդեն դարձրել եմ իր տիրոջը:

Ես ստիպվեցա ընդունել բեկի պարգևը, որի վրա ավելացրուց նա մի զույգ ատրճանակ, ասելով

— Այս ատրճանակները նույնպես ընդունեցեք իմ կողմից որպես ընծա, դրանք Բախչիսարայի ընտիր գործ են: Երբ որ կհաջողվի ձեզ դրանցով սպանել ձեր թշնամիներից մեկին, միշտ հիշեցեք եզիդիների բեկին:

Ասլանը մինչ այն աստիճան ընտանեցած էր բեկի գերդաստանի հետ, որ մինչև անգամ մտավ կանանոցը և ամենի հետ մնաք բարյավ ասաց: Բոլորը շատ սիրով մեզ ճանապարհ դրին, միայն մի հոգի դժգոհ էր, դա էր գեղեցիկ Թուլթին, որ վրանի ետևում մենակ կանգնած, լաց էր լինում…

Արևը մտավ, երբ մենք հեծանք ձիերը: Ես չկարողացա հասկանալ, թե ի՞նչ էր պատճառը, որ Ասլանը միշտ գիշերով էր ճանապարհ գնում:

ԽԴ

ԳԻԺ ՏԵՐՏԵՐԸ ԵՎ ԲԺԻՇԿԸ

Երկրորդ ավուր առավոտյան պահուն մենք հասանք ոչ այնքան հեռու Վանից մի հայաբնակ գյուղ:— Այստեղ, ասաց Ասլանը, պետք է փոքր-ինչ հանգստանալ:

Ինձ շատ հաճելի էր նրա խոսքը, որովհետև ամբողջ գիշերը չէինք քնել, անդադար ճանապարհ էինք եկած:

Նա ձին քշեց դեպի մի տուն, որ գյուղի քահանային էր պատկանում, ես էլ հետևեցի նրան: Քահանան հայտնի էր այս կողմերում իր մականունով՝ «դալի քեշիշ» — որ նշանակում է գիժ տերտեր, բայց ոչ այն տեսակ գիժերից, որոնք խելք չունեն, այլայն տեսակներից, որոնք մեր գրաբար լեզվում արտասանվում են բառերովս «խոլ» կամ «վիրագ»:

Մենք հասանք նրա տանը նույն ժամանակներում, երբ նա մի քանի մարդկանց իր դռան առջև կապած, ծեծ էր տալիս:

— Հը՛մ, տերտեր, էլ ի՞նչ կա,— ասաց Ասլանը նրան տեսնելով:— Դարձյալ արդարության գավազանը ձեռք ես առել…

— Այս անպիտաններին պետք է մի փոքր խրատել…— պատասխանեց նա անփույթ կերպով և մոտեցավ մեզ:

— Դե՛, ցած իջեք, Վանից նոր բերել տված լավ արաղ և գինի ունեմ:

— Բայց մինչև մենք կխմենք ձեր լավ արաղն ու գինին, դուք հրամայեցեք, որ այս «անպիտաններին» արձակեն,— ասաց Ասլանը ծիծաղելով:

— Ոչ, դուք իմ դատաստանական գործերը մի՛ խառնեք, անպիտանները պետք է պատժվեն,— ասաց նա:— Գնանք տուն:

Հանցավորներն երկու քրդեր էին, որոնք, ասում էր տերտերը, գողացել են գյուզի նախիրից երեք կովեր: Ասլանը այս ասելով, այլևս չմիջնորդեց. մտանք տերտերի տունը: Նա մեզ տարավ մի սենյակ, որ իր հյուրանոցն էր և միևնույն ժամանակ քնարանը, բայց տերտերը նրան կոչում էր դիվանխանա, այսինքն, դիվանատուն:

Ես մտածում էի, թե այնտեղ կգտնեմ տեր Թոդիկի սենյակի նման զանազան կախարդական գրքեր կամ Այսմավուրք. բայց մի թղթի պատառ անգամ չկար այնտեղ: Այնտեղ կային՝ նիզակներ, հրացաններ և զանազան տեսակ զենքեր:

Տերտերը, որպես երևում էր, առաջուց գիտեր Ասլանի նույն ժամուն իր տունը գալը, գիտեր նաև, թե որտեղից է գալիս նա: Ես իսկույն հասկացա, որ Ասլանը և «գիժը» նախածանոթներ էին, գուցե շատ մոտ բարեկամներ: Բայց ի՞նչ գործ ուներ խելացի Ասլանը «գժի» հետ:

Տերտերը բավական բարձրահասակ և ցամաք մարդ էր. նրա կազմվածքի բոլոր գծերից երևում էր վայրենություն: Ինչ որ ավելի սարսափելի էր և անախորժ, էր նրա ձայնը, որ խոսելու միջոցում որոտում էր: Նրա ձախ ձեռքի երեք մատնեքը կտրած էին, երևի, սրով, իսկ գլխի ու պարանոցի վրա նույնպես վերքի նշաններ կային: Եթե Ասլանը չասեր ինձ, թե նա քահանա է, ես կհամարեի «գժին» մի ավազակ, որ իր ամբողջ կյանքը անցուցել էր հափշտակություններով և մարդասպանությամբ:

Հենց որ մտանք «դիվանատունը», նա մոտեցավ մի պատուհանի, վարագույրը ետ քաշեց և այնտեղից դուրս բերեց մի ահագին շիշ լիքը արաղով. նախ լեցրուց ինքը խմեց, հետո տվեց Ասլանին, և ապա ինձ առաջարկեց, ասելով.

— Ա՛ռ խմիր, ոսկորներդ կպնդացնե, հոգնած ես:

Տեսնելով ահագին բաժակը, ես սարսափեցա:

— Արաղ խմելու սովորություն չունեմ,— ասեցի:

— Ինչո՞ւ, տիրացու,— հարցրեց նա, իր սոսկալի աչքերով ուղիղ իմ երեսին նայելով:

— Տիրացու չէ,— պատասխանեց Ասլանը:

— Բայց շատ նման է,— ասաց նա հեգնական ձայնով:

— Մենք նրան տիրացությունից ազատեցինք,— պատասխանեց Ասլանը խորհրդական ձայնով:

— Այդ լավ է…— խոսեց նա և մոտեցավ մի ուրիշ պատուհանի:

— Ես կտամ քեզ «կարմիր հարսի արաղ»,— ասաց նա և դուրս բերեց վարագույրի ետևից մի ուրիշ շիշ, լցրած դեղնագույն ըմպելիքով:

Ես նրանից խմեցի, որովհետև բավականին քաղցր էր և ախորժելի: Հետո տերտերը մոտեցավ լուսամատին և ձայն տվեց:

— Տիրոխնի, սատանան քեզ տանի, որտե՞ղ ես կորի:

Իսկույն հայտնվեցավ մի կարճլիկ հասակով կին, և սկսեց Ասլանի հետ բարովել: Դա տերտերակինն էր, բավականին համակրական մի կին:

— Գնա՛, այդ նոր հյուրի երեսն էլ պաչիր, քոռացած,— ասաց «գիժը» իր կնոջը:

Նա գրկեց ինձ և սկսեց երեսս համբուրել:

— Դե՛, հիմա գնա ինչ «հոգու բաժին» որ ունես, բոլորը բեր. դրանք քաղցած են:

Երեցկինը մի թեթև ժպիտ գործեց փոքրիկ երեսի վրա և դուրս վազեց: Երևում էր, նա շատ, ուրախ էր իր հյուրերով, և գնաց մեզ համար նախաճաշիկ պատրաստելու:

«Գիժը» փոքր առ փոքր սկսեց ինձ դուր գալ. նրա առաջին ժանտությունը, որ ինձ վրա վատ տպավորություն գործեց, կարծես թե անցավ, և նա երևում էր ինձ մի մարդ չափազանց պարզ և բարեմիտ:

Ասլանը հարցրուց տերտերից, թե ո՞րտեղ են պահված իր «իրեղենները»: Նա ցույց տվեց մի ուրիշ սենյակ, և Ասլանը առանց առաջնորդի մտավ այնտեղ: Ես մնացի տեր հոր հետ մենակ:

— Կարդացե՞լ ես,— հարցրուց նա ինձանից:

— Կարդացել եմ,— պատասխանեցի ես:

— Ո՞ւմ մոտ:

— Մեր թաղի քահանայի, տեր Թոդիկի մոտ:

— Հասկացա…: Դեռ չէ՞ սատկել այն ավազակը:

— Մնում է,— պատասխանեցի ես:— Բայց դուք ո՞րտեղից եք ճանաչում նրան:

— Ո՞վ չէ ճանաչում այն անպիտանին. նա Դատվանի «գզիրն» էր, էլ չարություն չթողեց, որ չգործեր: Վերջը «ռեսին» սպանեց, փողերը կողոպտեց, փախավ, եկավ Սալմաստ, այնտեղ անունը փոխեց, և ասաց, թե անապատի ճգնավոր եմ, այսպիսով քահանա դարձավ. հիմա սկսել է կախարդություններով ժողովրդին խաբել: Այդպես չէ՞:

Այս խոսքերը լսելով, ես բոլորովին զարմացա:

— Դու ինչպե՞ս պրծար նրա ձեռքից,— հարցրուց ինձ:

— Փախա նրա ուսումնարանից:

— Խելացի բան տեսար: Երանի՛ թե Կարոյի հետ փախած լինեիր, հիմա մի օրինավոր մարդ դարձած կլինեիր… Ա՛խ, թե մի անգամ ձեռքս կընկներ այն անպիտանը…

— Ի՞նչ կանեիք,— հարցրի ես ծիծաղելով:

— Ի՞նչ պետք է անեի, իր հանգուցյալ հոր մոտ կուղարկեի…

Մեր խոսակցությունը ընդհատեց մի մարդ, որ դուրս եկավ այն սենյակից, ուր մտել էր Ասլանը:

Նա աչքերին ակնոցներ ուներ դրած և ոտքից ցգլուխ հագնված էր եվրոպական ձևով: Ես առաջին անգամ տեսնում էի այսպիսի հագուստով մարդ: Նույն միջոցին ներս մտավ և երեցկինը նախաճաշիկի մատուցարանը ձեռին բռնած, և տեսնելով եվրոպացուն, երեսը խաչակնքեց, ասելով.

— Վա՛հ, տեր Հիսուս, չարը տանես, բարին բերե՛ս…

Տերտերը մի անկյունում կանգնած ծիծաղում էր: Ես լավ զննեցի, տեսա, որ եվրոպացին ոչ այլ ոք էր, եթե ոչ Ասլանը, միայն կերպարանափոխ եղած, որպես շատ անգամ տեսել էի նրան աբեղայի հագուստով կամ վանեցի վաճառական ձևացած:

— Հը՛մ, երեցկին,— դարձավ նա դեպի միամիտ «տիրոխնին»,— եթե գիշերով տեսնեիր ինձ, ի՞նչ կանեիր:

— Ի՞նչ պիտի անեի, երեսս խաչ կհանեի, դու դևի պես կխափանվեիր:

— Ես խո դև կամ սատանա չեմ, որ խաչից վախենայի:

— Բա՛ սատանան ի՞նչպես կլինի: Ափսոս չէի՞ն առաջվա շորերդ, որ փոխեցիր:

— Ես ամբողջ տասը տարի այսպես եմ հագնված եղել…— պատասխանեց Ասլանը:

— Սուրբ տիրամերը վկա, դա լավ չէ, ախար ինչի՞ է նման այսպիսի նեղ վարտիքը:

— Դրանք թող մնան,— կտրեց տերտերը կնոջ խոսքը:— Հիմա պետք է տեսնենք, թե ինչ բանի է նման քո բերած նախաճաշիկը:

Տերտերը ետ քաշեց մի ուրիշ վարագույր և նրա ետևից դուրս բերեց մի մեծ սրվակ գինի, դրեց իր կողքին և նստավ սեղանի մոտ: Մենք ևս մոտեցանք ուտելու: Նախաճաշիկը բավականին լավ էր պատրաստած. շա՛տ ապրի տերտերակինը, ամենևին չէր երևում, թե հասարակ գյուղացու եփած կերակուրներ լինեն: Բայց տերտերակինը գյուղացի չէր, նա Վանա քաղաքիցն էր, և որպես հայտնեց ինձ հետո Ասլանը, նա տեր հոր երկրորդ կինն էր, որի հետ ամուսնացել էր նա իր քահանայության ժամանակ, առաջին կինը մեռնելուց հետո: Թեև հայ քահանաներին թույլ տրված չէ երկրորդ ամուսնություն, բայց «գիժը» այն տերտերներից չէր, որ ենթարկվեր եկեղեցական կանոններին: Նա ամեն բանի մեջ, որպես ռամկորեն ասում են «չոմախի (մահակի) զոռով էր գործում»… Բայց որպես և լիներ, տերտերն ու երեցկինը շատ սիրով էին երևում միմյանց հետ:

Հացի ժամանակ Ասլանը հարցրուց, թե ի՞նչ նոր լուրեր կան Վանից:

— Ազգային գործերը վատ չեն,— պատասխանեց տեր հայրը ծանր կերպով:— Պ…-ը ողջ և առողջ է, գիշերները բոշաների լակոտներ պար ածելով է անցկացնում… իր ձեռները նրանց շլինքին է փաթաթում…: Քրդերին սովորեցնում է այս և այն վանքի հունձքի դեզերը կրակում են, որ գիշերները լույս լինի…: Տոնախմբությանը ժամանակ ինքն էլ ետ չէ մնում հասարակաց ուրախությունից, և իր ժողովուրդը բարոյապես մխիթարում է. կույս աղջիկներ և ջահել հարսներ է փախցնել տալիս, որ հայոց զավակներն աճեն, ազգը բազմանա…: Եթե մի անպատված աղջկա հայր գալիս է նույն անպատվողի մոտ բողոքելու (ուրիշ որտե՞ղ կարող է գնալ խեղճը), նրան մի փոքր խրատում է, փայտի տակ է գցում, ոսկորները լավ ջարդում է, որ փափկանան…: Հետո նրան ասում է — «գնա՛, եղբայր, այս աշխարհը քո տեղը չէ,

դու մեծի պատիվը չես հասկանում»: Նա ականջ է դնում նրա խրատին և գնում է մյուս աշխարհը…: Մի ուրիշ սովորություն էլ ունի նա, որից երևում է, որ նա շատ բարեսիրտ է: Երբ քրդի ավազակները հայոց գյուղորայքը թալանում են, և դժբախտաբար բռնվում են, նա քրիստոնեական մարդասիրությամբ գնում է փաշայի մոտ և ավազակներին ազատում է, դրա համար քրդերը նրան «հայր» են կոչում…: Մի ուրիշ լավ կանոն էլ ունի նա, երբ մեկին կամենում է խրատել, նրանից փող է առնում. «ոչինչ պատիժ, ասում է նա, այնպես չի ցավեցնի ադամորդուն, որպես փողը, որովհետև շատ է սիրում»:

— Բայց ի՞նչպես մինչև այսօր նույն խրատներից զուրկ մնացիք դուք,— հարցրուց Ասլանը վրդովված ձայնով:

— «Գիժը գժին երբ որ կտեսնի, իր մահակը կթաքցնին,— ասաց նա թուրքի առածով:— Թեև նա ավազակ է, բայց ես էլ շատ բարի պտուղ չեմ…

— Լավ, դու այն ասա՛, ի՞նչ աչքով են նայում քաղաքի իշխաններն այդ ավազակի այս տեսակ առաքինությունների վրա,— հարցրուց Ասլանը:

— Նրանք անշնորհակալ մարդիկ չեն, ընդհակառակն, շատ երախտագետ են,— պատասխանեց տերտերը առաջվա ծանր կերպով:— Նրանք իրանց պարտքը լավ ճանաչում են, և ամեն ամիս ժողովրդի կողմից շնորհակալության վկայականներ են ուղարկում Պոլիս և նրան մեծ մարդկերանց հետ են համեմատում: Բայց պետք է ճշմարիտն ասած, նա էլ չէ մոռանում իր պարատ որսերից երբեմն նրանց բերանը փոքրիկ պատառներ գցել…

— Փաշայի հետ ինչպե՞ս է նա:

— Որպես եղ ու մեղր, այնքան քաղցր են:

— Դա նույն փաշա՞ն է, որ մի անգամ հայոց եկեղեցու սեղանի վրա բոշա տղաներ էր պար ածել տվել և գինի էր խմել:

— Հենց նույնը: Նա էլ հենց փաշայից սովորեցավ բոշաների պար ածելը:

Բոլոր այս խոսքերը, ինչ որ ասում էր տերտերը, թեև ինձ շատ հասկանալի չէին, բայց որպես նկատում էի, խայթոցի նման ծակում էին Ասլանի սիրտը: Նրա պարզ դեմքը հետզհետե մթնում էր և նրա ձայնը զայրացած եղանակ էր ստանում:

— Ինձ բոլորովին անհավատալի է թվում,— ասաց նա,— Վանա ժողովուրդը իր նահապետական պարզամտության մեջ չէր կարող համբերել այս աստիճան չարագործութուններրի: Այդ նշանավոր մարդու վատ օրինակը ավելի շատ գայթակղեցնում է, ավելի շատ վիրավորում է միամիտ ժողովրդի զգացմունքը:

— «Նիզակը գողացողը առաջ նրա թաքցնելու տեղը կգտնի»,— պատասխանեց տերտերը:— Նա շատ ճարպիկ է իրան արդարացնելու խոսքեր գտնելու մեջ: Երբ նրան ասում են, թե դու ի՞նչ գործ ունես փաշայի կամ այս և այն ավազակ քրդի և բոշա պար եկողների հետ:— Նա միշտ Պողոսի, իր անվանակցի, խոսքերը վկայություն է բերում, թե «պետք է հրեայի հետ հրեա լինել և հեթանոսի հետ հեթանոս»: Ասում է, թե ես ժողովրդի օգտի համար եմ նրանց հետ բարեկամություն պահպանում, և *մահմեդականության սովորություններին* հետևում, որ նրանց հաճոյանամ և իմ ազգի շահերը պահպանեմ:

— Չարագո՛րծ,— ասաց Ասլանը:— Վասակները միշտ այսպես էին իրանց արդարացնում:

Թեև Ասլանը առաջուց ասում էր, շատ քաղցած եմ, բայց համարյա ոչինչ չկերավ: Տերտերն էլ նկատեց այս և հարցրուց.

— Ինչո՞ւ չես ուտում:

— Ախորժակս ավերվեցավ,— ասաց նա:

— Ա՛ռ, խմիր, թող սիրտդ հովանա, դարդերդ կմոռանաս:

Ասլանը ընդունեց գինու ահագին գավաթը, միանգամով խմեց:

— Բայց քո ախորժակը տեղն է,— դարձավ դեպի ինձ տերտերը.— որովհետև դու չես մտածում այն բանի վրա, թե Վանում ի՞նչեր են կատարվում:

— Ես դրա համար էլ գնում եմ այնտեղ, որ տեսնեմ, ինչպիսի քաղաք է:

— Ավելի լավ կանես, որ տեսնես մարդիկ ինչպես են ապրում այնտեղ,— ասաց քահանան:

Այնուհետև Ասլանը և տերտերը գնացին մի առանձին սենյակ, այնտեղ առժամանակ տաք-տաք խոսում էին. ես ոչինչ հասկանալ նրանց խոսքերից չկարողացա, որովհետև հեռու էին: Ասլանը դուրս եկավ շատ վրդովված, և հրամայեց իսկույն պատրաստել ձիերը:

— Դուք մտածեցեք, որևէ բան չմոռանալ այստեղ,— ասաց քահանան:

— Ինչ որ պետք էր վեր առնել՝ ես տեղավորեցի այն երկու արկղների մեջ,— ասաց Ասլանը:— Բայց դուք պատրաստեցեք մի ձի արկղները կրելու համար և մի ծառա, որ ինձ հետ լինի:

— Կես ժամից հետո կարող ես ճանապարհ ընկնել. դուք համեցեք, այս մի գավաթն էլ անուշ արեք:

Ասլանը ընդունեց և խմեց:

Տերտերի խոսակցության մեջ «դու» և «դուք» միևնույն նշանակությունն ունեին. նա խառն ամեն կերպ գործ էր ածում:

— Ո՞ւր են, տղերքից ոչ մեկը չէ երևում,— հարցրուց Ասլանը:

— Ամենքն իրանց սիրելի խանումներին առած, գնացել են սարը, ոչխարների մոտ. Ալմաստն էլ այնտեղ է. ես և իմ թանկագին «տիրոխնին» մնացել ենք տանը: Քահանայությունը ծա՜նր պաշտոն է,— ավելացրուց նա:

— Եվ դու ճշտությամբ կատարում ես… այնպես չէ՞,— հարցրուց Ասլանը ծիծաղելով:

— Ավելի լավ, քան մեր տեր Մարուքը, որը քերականություն է կարդացել: Իմ մկրտածները ավելի լավ քրիստոնյաներ են դառնում, և իմ թաղած մեռելը գերեզմանից բնավ չէ վեր կենում…

— Բայց այն ինչպե՞ս եղավ, որ մի անգամ երեխային ավազանի մեջ խաշեցիր: Պատմի՛ր տեսնեմ:

— Դա հին բան է, հիմա այնպես չեմ անում:

— Պատմիր, թող Ֆարհատն էլ լսե:

Տերտերը շատ ծիծաղելի կերպով պատմեց, թե իրանց երկրում սովորություն կա, երբ ձմեռը երեխային եկեղեցում մկրտելու են բերում, նրա հետ տաք ջուր են բերում ավազանում լեցնելու համար: Մի մկրտության ժամանակ տատմոր բերած ջուրը շատ տաք է լինում, տեր հայրը այնպես լցնում է ավազանի մեջ, և չէ մտածում փորձել տաքության աստիճանը: Հենց որ տղային կոխում է ավազանի մեջ, խեղճը իսկույն խաշվում է, և տերտերը այն ժամանակ միայն հասկանում է, թե նա մեռավ, երբ նկատում է, որ էլ ձայն չէ հանում: «Դա փչացավ, ասում է կնքահորը, թե կա, գնացեք մի ուրիշը բերեք, որ մկրտեմ»:

Տերտերը մեզ երկար չպահեց՝ երևում էր, նա ինքը նույնպես շտապում էր, որ մենք շուտով ճանապարհ դուրս գանք: Ինքը և երեցկինը եկան մեզ հետ մինչև գյուղից դուրսը, և այնտեղից բարեմաղթություններով բաժանվեցան մեզանից:

Գյուղը, ուր գտնվում էր տեր հոր տունը, նստած էր լեռների կուրծքի վրա, և չորեք կողմից, որպես բնական պարիսպներ, շրջապատել էին նրան սեպաձև բլուրներ, որով նա ստացել էր շատ ամուր և անառիկ դիրք:

— Տեսնո՞ւմ ես այս գյուղը,- ասաց Ասլանը, երբ հեռանում էինք այնտեղից.— նա ունի հիսուն տուն միայն, բայց ամբողջ մի ամիս պատերազմեց ավելի քան 500 քրդերի հետ և մնաց դարձյալ անառիկ:

— Որովհետև ամուր դիրք ունի պատասխանեցի ես:

— Այդ չէ միայն պատճառը, բնակիչները քաջ և սրտոտ մարդիկ են:

— Որովհետև այնպիսի քահանա ունեն, որպես «գիժը»:

— Զարմանալի մարդ է դա,— պատասխանեց Ասլանը:— Դու նրա կատակներին մի՛ նայիր, բավականին խելք ունի և շատ բարեսիրտ է:

Այնուհետև Ասլանը պատմեց մի քանի հետաքրքիր անցքեր «գժի» կյանքից, որոնց ամենի մեջ երևում էր նա չափազանց հանդուգն և մեծասիրտ բնավորությամբ,— մի արկածախնդիր մարդ, որ իր ամբողջ կյանքում կռվել էր զանազան դժվարությունների դեմ: Նրա ձեռքերը մաքուր չէին մնացել և արյունից. նա շատ անգամ սպանել է, հափշտակել է, ավար և գերի է բերել: Շատ անգամ ևս հաղթվել է, բոլոր կայքը թշնամուց հափշտակվել է, և նրա առաջին կինը և որդիքը սրի բերան են ընկել: Մի փոքր նշմարվող խելագարությունը այս անցքից հետո է պատահել:

— Այսուամենայնիվ,— շարունակեց Ասլանը,— տեր Մեսրոպը ժողովրդից շատ սիրված մարդ է. մոտ տասն հայոց գյուղեր այս կողմերում գտնվում են նրա հովանավորության ներքո: Եվ բոլորը հոր նման պաշտում են նրան: Մի սաստիկ սովի ժամանակ, նա ծախեց ինչ որ ինքն ուներ, և ծախել տվեց հարուստներինը, և այսպիսով պահպանեց աղքատների կյանքը: Նա իբրև քահանա, թեև անհարմար է, բայց իբրև կառավարող անձն, ունի շատ արժանավորություններ: Այս պատճառով է, որ կարողացել է իր ձեռքի տակը պահել այս լեռներում գտնված բոլոր հայոց գյուղորայքը, առանց թույլ տալու որևիցե քրդի կամ թուրքի միջամտություն գործել նրանց հասարակական գործերի մեջ:

— Բայց կարդալ իմանո՞ւմ է,— հարցրի ես:

— Նա անգրագետ է և իր անունը հազիվ է գրում. բայց իմ կարծիքով, այսպիսի քահանաներն ավելի լավ են, քան թե նրանք, որ աստվածաբանական մթին

խնդիրների մեջ թթված, ժողովրդին ավելի մոլորության և *հոգևոր մեռելության* մեջ են գցում: Այսպիսի ժողովուրդը կյանք և հիմք չունի երկրի վրա:

— Տեր Մեսրոպը,— առաջ տարավ նա,— հայ քահանայի տիպ չէ: Նա, ավելի հարմար է ասել, քրդի *շեյխ* է, որ մասնակից է լինում իր ժողովրդի բոլոր կարիքներին, կռվի ժամանակ քաջ զինվոր է, խաղաղության ժամանակ քահանա է և դատավոր: Միշտ այսպես են եղել խաշնարած ցեղերի քահանաները: Այսպես էին և Աբրահամը, Իսահակը, Հակոբը ու նրանց հաջորդները: Մեր ընկերներից մեկը քահանա է,— չեմ ուզում անունը տալ և լավ քահանա, գիտե հունաց, եբրայեցոց և լատինացոց լեզուները, կարդացել է այն բոլոր գրքերը, ինչ որ վերաբերում է աստծուն, սկսած այն օրից, երբ հայտնվեցավ մարդերի մեջ աստվածության գաղափարը: Բայց այս երևելի աստվածաբանը իր բոլոր գիտությունը ծալել է և պարկն է դրել, որովհետև իմանում է, թե ժողովուրդը չի հասկանա իրան: Բայց մեր ժողովուրդն ավելի լավ կհասկանա տեր Մեսրոպի լեզուն, որովհետև նա ժողովրդի միջից ծագած և ժողովրդի գաղափարներով մարդ է, նա *դպիր* չէ:

Ասլանի այն խոսքը,— թե «մեր ընկերներից մեկը քահանա է» — ինձ նոր մտածության մեջ գցեց: Ես նրա ընկերներին բոլորին ճանաչում էի, այդ ո՞րն էր, որ «աստվածաբանությունը ծալած պարկն էր դրել» և այժմ սրի հետ էր խաղում: Նա ինձ ոչինչ չասաց և ես չհարցրի, որովհետև սկզբից հայտնեց, թե ասելու նպատակ չունի: Բայց ինձ ոչ սակավ զարմացնում էր Ասլանի եվրոպական ձևով կերպարանափոխությունը, մանավանդ այն խոսքը, որ նա ասաց տերտերակնոջը՝ «ես ամբողջ վեց տարի այսպես եմ հագնված եղել»… Որտե՞ղ, ո՞ր երկրում:

Մինչ ես այս մտածության մեջ էի, նա ինձ ասաց.— Ֆարհատ, այսօր մենք հասնելու ենք Վան քաղաքը. այնտեղ ոչ ոք չէ ճանաչում ինձ, բացի մի քանի բարեկամներից. ես այնտեղ հայտնվելու եմ, որպես եվրոպացի բժիշկ. դու պետք է զգույշ լինես չխանգարել իմ դերը…

— Ես այնքան հիմար չեմ,— պատասխանեցի:— Բայց եթե քեզ առաջարկելու լինեն մի հիվանդ, ի՞նչ կանես:

— Կբժշկեմ,— պատասխանեց նա:

— Ինչպե՞ս կարող ես բժշկել,— հարցերի ես զարմանալ:

— Կարող եմ,— դարձյալ պատասխանեց նա վճռական կերպով:

— Տեսնո՞ւմ ես այն երկու մեծ արկղները, որ տանում է տեր Մեսրոպի ծառան, նրանց մեջ ամփոփված են իմ դեղորայքը և բժշկական գործիքները, որ շատ անգամ ինձ հետ ման եմ ածում:

Ես հետո, շատ հետո իմացա, որ Ասլանը ոչ թե հասարակ բժիշկ էր, այլ մի հմուտ բժշկապետ: Նա այդ արհեստը ուսել էր Ամերիկայում, երբ Հնդկաստանից այնտեղ էր գնացել: Նա ուսել էր և շատ եվրոպական լեզուներ, և այնպես էր սիրում արհեստը ու գիտությունը, որպես հասարակաց բարօրության գործը: Այո՛, ես շատ հետո իմացա, որ նա տեր Թոդիկի դպրոցից փախչելուց հետո իրան նվիրել էր ուսման և բարձր գիտությունների…

— Լավ, քանի որ դու բժիշկ ես, այլևս կասկածելու ի՞նչ ունես: Ես ինչո՞վ կարող եմ խանգարել քո դերը,— հարցրի ես:

— Ես այնտեղ պետք է գաղեմ իմ հայությունը…— պատասխանեց նա վրդովված ձայնով, կարծես, նրան խիստ ծանր էր արտասանել այս խոսքը:

Նույն օրվա երեկոյան պահուն, երբ մութը պատել էր աշխարհը, մենք մտանք Վան քաղաքը:

Առաջին հատորի վերջը

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Ա

ՎԱՆ

Հասնելով Վան, մենք իջևանեցինք Այգեստան կոչված արվարձանում, որ կից էր այդ քաղաքին: Մեզ ընդունեց իր տանը թաղի նշանավոր անձիքներից մեկը, որ կոչվում էր վարպետ Փանոս: Այդ պարոնը արհեստով ներկարար էր:

Տան տերը առաջին անգամից երևաց ինձ բարի և ազնիվ մարդ, բավական վայելչակազմ մարմնով և պայծառ դեմքով: Արևելքում մարմնի բարեձևությունը շատ անգամ մարդու հառաջադիմության պատճառ է դառնում: Բայց վարպետ Փանոսը, բացի դրանից, ուներ և ճարտար լեզու և, որպես երևում էր, բավական փորձված ու խելացի մեկն էր: Երևի այդ էր պատճառը, որ չնայելով նրա երիտասարդությանը, նա ընտրված էր թաղական խորհրդի անդամ, ուր ծերությունը և սպիտակ մորուքը ավելի մեծ նշանակություն ունեին, քան խելքը:

Բոլորովին մութն էր, երբ հասանք Այգեստան:

Ասլանը սկսել էր այժմ, որպես ասում են, ինձ փոքր ի շատե մարդու տեղ դնել: Երբ մտանք վարպետ Փանոսի հյուրանոցը, նա իսկույն ինձ ծանոթացրեց տան տիրոջ հետ, ավելացնելով, թե իր մանկության ընկերներից մեկն եմ եղել և այժմ նրա լավ բարեկամն եմ: Վարպետը իր սուր և թափանցող աչքերով ոտքից ցգլուխ չափեց ինձ, հետո խիստ մտերմաբար հայտնեց իր ուրախությունը ինձ տեսնելու համար:

Որպես երևում էր, վարպետը նախածանոթ էր Ասլանի հետև իր տան մեջ հենց այն գիշեր սպասում էր նրան: Նա գիտեր և այն, թե որտեղից էր գալիս Ասլանը, այդ պատճառով, երբ նստեցինք, նա մի առանձին խորհրդավոր եղանակով հարցրեց.

— Ինչո՞ւ այդքան երկար տևեց քո ուխտագնացությունը…

— Այդպես պատահեց…— պատասխանեց Ասլանը նույն եղանակով:

— Հուսով եմ, որ սուրբ աստվածամայրը կատարած պետք է լինի քո ցանկությունը…

— Նա իր ուխտավորներին անմասն չէ թողնում իր շնորհներից…

— Ուրախ եմ…— ասաց վարպետը, ոլորելով աջ կողմի ընչացքը, որ նշան էր նրա սրտի առանձին բավականության:— Ուրեմն վատ չէր լինի, եթե խմեինք մի-մի բաժակ օղի ձեր հաջողության համար:

— Վատ չէր լինի,— ասաց Ասլանը,— միայն ոչ առանց նախաճաշելիքի: Մենք բավական սոված ենք:

— Այդ ինքնըստինքյան հասկանալի է,— ասաց վարպետը ժպտելով և դուրս գնաց ընթրիք պատվիրելու:

Ասլանը ձգվեցավ օթոցի վրա և, բարձի փոխարեն ձախ ձեռքը նեցուկ տալով գլխին, նայում էր առաստաղին, որի մերկ գերանները, հնությունից դեղնելով, ստացել էին մուգ-ծիրանի գույն, իսկ ճանճերը նրանց վրա դրել էին միլիոնավոր սև բծեր: Նա ընկղմված էր մտածությունների մեջ: Առանց մտածությունների չէի և ես: Գալով այդ քաղաքը, թեև ծիծաղելի է, բայց պետք է խոստովանվիմ, որ իմ ամենամեծ բաղձանքներից մեկն այն էր, որ տեսնեմ Վանա հռչակավոր կատուները:— Մի՞թե այդ տան մեջ կատու չկա,— մտածում էի ես, և աչքերս անհամբերությամբ թափառում էին այս կողմ ու այն կողմ: Չգիտեմ այստեղ ինչ հոգեբանական մի գաղտնիք կա, որ շատ անգամ մարդ հանկարծ տեսնում է միևնույն առարկան, որի վրա մի րոպե առաջ անգիտակցաբար մտածում էր: Ահա հանդիսավոր կերպով ներս մտավ իմ նազելին, բոլորովին սպիտակ, որպես ձյուն, երկայն, մետաքսի նման փափուկ մազերով և թավիշյա բրդոտ թաթիկներով: Նա լուռ անցավ սենյակի միջով, նախ մոտեցավ ինձ և մի առանձին քնքշությամբ գանգրահեր գլուխը և թավամազ պոչը քսեց իմ երեսին, հետո գնաց բարևելու Ասլանին: Շնորհալի կերպով մռմռալով, մի քանի պտույտներ կատարեց Ասլանի շուրջը և ապա նստեց նրա մոտ: Կարծես, այդ խելացի անասունն էլ էր հասկանում, թե մեզանից որն էր ավելի հարգանքի արժանի, Ասլանը սկսեց փայփայել նրա գեղեցիկ գլուխը, մեջքն ու ագին: Առաջին անգամ մի զարմանալի երևույթ գրավեց իմ ուշադրությունը: Որքան Ասլանը ձեռքով շփում էր նրա գլուխն ու մեջքը, այնքան արագ նրա երկար մազերը ճրըխկճրըխկում էին և դուրս էին արձակում կրակի ամբողջ փոշի:

— Այդ ի՞նչ է,— հարցրի ես:

— Կայծեր են…— պատասխանեց նա, և սկսեց բացատրել նրանց դուրս ցայտելու բնական պատճառները, թե որպես շփումից առաջ է գալիս կրակը:

Բացի կատվից, տանեցիներից ուրիշ ոչ ոք չհայտնվեցավ: Երեխաները, երևի, քնած էին. նրանց ձայնն անգամ չէր լսվում: Իսկ կանայք այդ կողմերում օտար տղամարդի աչքին երևնալու սովորություն չունեին:

Այգեստանը արժանի էր իր կոչմանը: Քաղաքի այդ գեղեցիկ արվարձանը ծառախիտ այգիների բավական ընդարձակ տարածություն է, բաժանված լայն փողոցներով, որոնց աջ և ձախ կողմերում հոսում են առվակներ, հովանավորված ուռենի և բարդի ծառերով: Դրսից տները չեն երևում, ոչ մի լուսամուտ բացված չէ փողոցի վրա, բացի գլխավոր դռնից, որ ներս է տանում դեպի բնակարանը, որ ետևի կողմից միայն նայում է դեպի այգին կամ պարտեզը: Ամեն մի տուն կենտրոնացած է իր մեջ, ապրում է իր նեղ առանձնական կյանքով: Վարպետ Փանոսի տունը նույնպես այդ ձևն ուներ:

Սենյակը, որ որոշված էր մեզ համար, տան երկրորդ հարկումն էր գտնվում: Բավական կոկիկ մի սենյակ էր այդ, երևի միայն հյուրերի համար էր պատրաստված: Տան մեջ որքան գեղեցիկ իրեղեններ կային, իբրև զարդարանք, բոլորը դրված էին այստեղ: Պատուհանների մեջ շարած էին զանազան տեսակ չինական և պարսկական ամաններ, ամենահին ժամանակներից մնացած, որոնց շատերը այժմ գործածությունից ընկել էին: Նրանց թվում կային պղնձյա թասեր, աշտանակներ, ափսեներ և մեծ բոլորակ սինիներ, բոլորը գեղեցիկ քանդակներով: Կային և բազմաթիվ նարգիլեներ ու չիբուխներ՝ երկայն ծխաքարշներով՝ հասմիկի փայտից կամ Շիրազի կեռասենուց պատրաստված: Երևում էր, որ այստեղ սովորություն կար այնքան թվով չիբուխներ ու նարգիլեներ պահել իր տանը, ինչ թվով պատահած ժամանակը հյուրեր կունենային: Երևում էին և զենքեր: Պատերից քարշ էին ընկած

զանազան տեսակ պատերազմական գործիքներ, սկսյալ հնադարյան երկաթյա տապարներից, վահաններից, սաղավարտներից և զրահներից մինչև նոր ժամանակների երկայն նիզակները, ղարաբինաները, ատրճանակները և հրացանները: Դրանց թվում պատերից քարշ էին ընկած տեղային զանազան նվագարաններ՝ սազ, սանթուր, չոնգուր, սրինգ, դափ, թմբուկ և այլն: Երևում էր, որ տանտերը ածել ևս գիտեր, կամ դրանք պահվում էին հյուրերի համար: Այդ բոլոր զարդարանքները լրացնում էին մի քանի պատկերներ, որոնք, ինչպես թվում էր ինձ, հին դարերի գործ պետք է լինեին: Արդյոք ո՞ւմ պատկերներն էին, ես հասկանալ չկարողացա, շատ հավանական էր, որ թագավորների, իշխանների պատկերներ լինեին, գոնե այդպես էին ցույց տալիս նրանց թե զգեստավորությունը և թե զենքերը, որոնք բոլորը հին ժամանակներին էին պատկանում: Այստեղ ու այնտեղ փունջերով դրած էին չորացրած ծաղիկներ, որոնց մեջ իր գեղեցկությամբ առաջին տեղը բռնում էր անթառամ ծաղիկը: Վասպուրականի լեռների ծաղիկները չորանալուց հետո ևս պահպանում են իրանց գեղեցկությունը: Ես թողնում եմ ուրիշ մանր-մունր զարդարանքները, որոնց բոլորից երևում էր, որ վարպետ Փանոսը ոչ միայն լավ արհեստավոր էր, այլև կրթված ճաշակի տեր մարդ էր և իրեն շրջապատել գիտեր հազվագյուտ առարկաներով: Սենյակի պատերը ծեփված էին սպիտակ գաջով, որի վրա երևում էին պարսկական ճաշակով նկարված զանազան տեսարաններ: Մի տեղ պատկերացրած էր վագրի որսորդության հանդես. մի երիտասարդ, փղի վրա նստած, երկայն նիզակը ձեռքում բռնած, կռվում էր ամեհի գազանի հետ. շները շրջապատել էին նրան, բայց ոչ մեկը չէր համարձակվում մոտենալ. վագրը իր առջևի ճիրաններով պատերազմում էր փղի զորավոր կնճիթի հետ. երիտասարդը իր նիզակի ծայրը խրել էր նրա կողքը: Մի այլ տեղ կատարվում էր *սալամի* հանդես: Արևելքի թագավորներից մեկը, շողշողուն գոհարներով զարդարված, նստած էր փառավոր գահի վրա. հարյուրավոր գլուխներ խոնարհված էին նրա առջև, արքունիքի հռետորը, գահի մոտ կանգնած, ձեռքը ոգևորությամբ բարձրացրած, ճառախոսում էր, գովաբանելով արքայի ողորմածությունը և չկատարած սխրագործությունները: Մի տեղ ուժից ընկած, ծերունի մահմեդական էֆենդին, թիկն տված թավիշյա մութաքաներին, պառկած էր փափուկ օթոցի վրա. նարգիլեի օձապտույտ ծխաքարշը թույլ կերպով մխում էր նրա բերնում. երկու մանկահասակ կանայք փայփայում էին նրա մեկնած ոտները, երրորդը արմավենու տերևից կազմված հովիարով զովացնում էր զառամյալ դեմքը: Մի այլ տեղ չորս սևամորթ ստրուկներ, կիսամերկ, բոբիկ ոտներով, թևքերի վրա տանում էին մի շքեղ պատգարակ, որի մեջ նստած էր նրանց տերը, նախշուն, ոսկենկար զգեստներով: Վերջին երկու պատկերները բոլորից ավելի գրավեցին իմ ուշադրությունը:

Ինձ պատահել էր տեսնել Պարսկաստանի հարուստ հայերի տներում նկարներով զարդարված սենյակներ, բայց նրանց նկարները ոչինչ միտք չունեին, պատկերացնում էին ծաղիկներ, ափսեների մեջ դրած պտուղներ, պարտեզներ և սիրուն կանանց դեմքեր: Իսկ այստեղ, վարպետ Փանոսի հյուրանոցում, պատկերների մեջ ես իմաստ էի տեսնում, կարծես նրանք դիտմամբ պատվիրված լինեին:

Սենյակի հատակը թեև զուրկ էր տախտակամածից, բայց նրա փոխարեն ծածկված էր եղեգնյա փսիաթներով, որոնց վրա տարածել էին գեղեցիկ պարսկական գորգեր և կապերտներ: Վերջինները տեղային տնային արհեստի արդյունք էին: Անկողինները, ծալած, փաթաթած, առանձին-առանձին դրած էին պատերի մոտ. նրանց թիվը ցույց էր տալիս, թե վարպետ Փանոսը ո՛րքան հարուստ պատրաստություններ ուներ իր հյուրերի համար, որոնք նրա տնից միշտ անպակաս էին լինում: Ես ոչ մի վանեցու տանը եվրոպական կարասիք չտեսա, իսկ այստեղ կար մի գրասեղան և մի քանի աթոռներ, թեև նրանց վրա չէին նստում:

Սենյակի լուսամուտների առջև կար պատշգամբի նման մի բան, հովանավորված տանձի ու ծիրանի ծառերով: Խաղողի որթը ներքևից վեր էր բարձրացել և, փաթաթվելով պատշգամբի սյուներին, տալիս էր նրան կանաչազարդ հովանոցի կերպարանք: Սենյակում օդը բավական հեղձուցիչ էր: Ես, Ասլանին միայնակ թողնելով, դուրս եկա պատշգամբի վրա: Սկսեցի նայել դեպի այգին: Ծառերը ընկղմված էին գիշերային մթության մեջ. ոչ մի տերև չէր շարժվում: Ամեն ինչ լուռ էր, միայն անհանգիստ ճպուռը իր մերձակայքում եղանակում էր իր միակերպ, տաղտկալի երգը:

Ներքևում, բակի մեջ, կրակ էր վառվում: Վարպետի համարյա բոլոր ընտանիքը պտտվում էր կրակի շուրջը: Այնտեղ, ամառնային օջախի վրա, մեզ համար կերակուր էին պատրաստում: Ամառը այգեստանցին եփում է, ուտում է և պառկում է բաց օդի ներքո: Ես տեսնում էի, թե ինչպես տափակ կտուրների վրա նստած էին հարևանները և ընթրիք էին վայելում: Նրանց սեղանը լուսավորված էր մի տեսակ արևելյան օտարոտի լամպայով, որը շինված էր փայտից և բարձր վանդակի ձև ուներ, և որի մեջ թռչունի փոխարեն՝ վառվում էր մի ճրագ: Վանդակի վրա հագցրած էին բարակ կտավից սպիտակ շապիկ, որ պահպանում էր ճրագը քամու հոսանքից:

Սովորությունները համարյա միևնույնն էին, ինչ որ տեսել էի մեր կողմերում: Ընթրիք էին անում կտուրների վրա. սեղանների շուրջը բոլորել էին միայն տղամարդիկ, իսկ կանայք ոտքի վրա սպասավորում էին, սպասելով, որ տղամարդիկ վերջացնեն, հետո իրանք ևս մի բան ուտեն: Աղջիկները նույն կտուրների վրա անկողիններ էին պատրաստում, իսկ մայրերը ճոճում էին անքուն զավակների օրորոցները: Ա՛խ, ո՛րքան քաղցր էր կտուրային այդ բացօթյա կյանքը… ո՛րքան անմոռանալի հիշատակներով կապված էր նա իմ սրտի հետ… Դեպի բարձր նայում ես, քեզ հովանավորում է պարզ, աստղազարդ երկինքը, իսկ քո շուրջը տիրում է անսահման, ազատ տարածություն, խնկարկված հազարավոր բուսականների անուշահոտությամբ:

Մի քանի կտուրներից երգի ձայն էր լսվում, երգում էին ըստ մեծի մասին հոգևոր երգեր: Աշխարհիկ երգեր շատ չունի այդ ժողովուրդը և ինչ էլ որ ունի, խիստ տխուր են և մելամաղձոտ: Դա ամենապարզ հատկանիշն է հուսահատ ինքնուրախության,— երբ մարդու միտքը, հոգին, բավականություն չգտնելով աշխարհային վայելչությունների մեջ և զուրկ լինելով նրա ուրախություններից, ձգտում է դեպի հոգևորը, դեպի երկնայինը: Տեղ-տեղ ածում էին չոնգուրների վրա: Այդ ձայները խիստ թախծալի եղանակով հնչում էին գիշերային լռության մեջ, որպես վշտալի սրտի դառն մրմունջներ: Վանեցու սեղանի երգն անգամ խառն է լինում արտասուքի հետ…

Երկար լսում էի ես: Երբեմն գիշերային խաղաղությունը վրդովվում էր խառնաշփոթ աղաղակներով: Աղմուկը հետզհետե սաստկանում էր: Ահա լսելի եղավ հրացանի խուլ նետում, և իսկույն տիրեց խորին լռություն…

— Էլի կատաղե՛լ են անզգամները,— ասաց վարպետը՝ շտապով իմ մոտից անցնելով:— Առավոտյան կամ մի երկու սպանվածներ կունենանք, կամ մի քանի վիրավորվածներ…

Այնտեղ սպանում էին, իսկ այստեղ հոգևոր երգեր էին երգում:

Բայց մեր հյուրընկալը, որպես երևում էր, միայն աղոթքով բավականացող մարդիկներից չէր: Նա մտավ սենյակը, դրեց Ասլանի մոտ մի շիշ օղի և ափսեի մեջ խորոված տառեխ և, խլելով սենյակի պատից քարշ ընկած զենքերից մեկը, կրկին շտապով դուրս եկավ:

— Ո՞ւր եք գնում,— հարցրեց Ասլանը:

— Մեր թաղում աղմուկ կա, գնում եմ տեսնելու ի՛նչ է պատահել,— պատասխանեց նա և, մի բան մտաբերելով, կանգ առեց շեմքի վրա:— Ձեր անունով նամակներ են ստացված,— ասաց նա, հանելով ծոցից մի ստվար կապոց և ձգելով Ասլանի մոտ:

Նա վազելով ցած իջավ սանդուղքներից:

Ասլանը լռությամբ վեր առեց նամակների ծրարները, մոտեցավ ճրագին և սկսեց ուշադրությամբ կարդալ: Ես հեռու նստած, հետազոտում էի նրա դեմքի փոփոխակի արտահայտությունները: Նրա սիրտը խռովության մեջ էր: Այն հեզ և խաղաղ աչքերը վառվում էին բարկության բոցով: Նա, որ այնքան զգույշ էր, կարծես մոռացավ իմ ներկայությունը, և նամակներից մեկը դեռ չվերջացրած, նետեց հատակի վրա և ձեռքը հուսահատական կերպով տարավ դեպի ճակատը, բռնեց աչքերը: Ի՞նչ էր պատահել: Նրա դողդոջուն շրթունքները մեքենաբար արտասանեցին միայն մի բառ — «թշվառակա՛ն»… Մի մեծ անհաջողություն միայն կարող էր Ասլանին այդ աստիճան զայրացնել: Նա կրկին վեր առեց չավարտած նամակը և շարունակեց կարդալ: Հետո բռնեց ճրագի վրա, և բարակ թուղթը մի վայրկյանում մոխիր դարձավ: Նա սկսեց կարդալ մնացած նամակները: Այժմ նրա դեմքը փոքր-ինչ խաղաղ էր: Բայց ճակատի վրա տակավին նշմարվում էին կնճիռներ: Երբեմն նամակը ցած էր դնում և իր հիշողության տետրակի մեջ ինչ-որ գրում էր, երբեմն մատների վրա թվեր էր հաշվում: Բայց ինձ զարմացրեց մի բան, երբ նա նամակներից մեկի վրա քսեց մի հեղուկ, և իսկույն առաջվա տողերի մեջտեղում հայտնվեցան նոր տողեր՝ բաց-կանաչագույն տառերով: Ո՞րտեղ էին թաքնված այդ տառերը: Ես չհամարձակվեցա հարցնել, երբ նկատեցի, որ նա դեռ ոչ բոլորովին հանգստացած էր:

Նամակները կարդալուց հետո, նա բոլորը այրեց: Այժմ միայն ուշադրություն դարձրեց իր մոտ դրած տառեխների և օղիի շիշի վրա:

— Վանա տառե՛խ… որքան ընտանիքներ ապրում են միայն այդ փոքրիկ ձկներով,— բացականչեց նա և սկսեց ուտել:— Դու չե՞ս սիրում,— դարձավ դեպի ինձ:

Ես ախորժակ չունեի մի բան ուտելու: Ճանապարհի հոգնածությունից սաստիկ ջարդված էի: Հանգիստ և երկարատև քունը միայն կարող էր փոքր ի շատե կազդուրել ինձ: Բայց Ասլանի հոգը չէր. այդ երկաթի մարդը չգիտեր, թե ինչ է հանգստությունը: Նա անհամբերությամբ սպասում էր վարպետին: Շատ չանցավ, վերադարձավ նա և, տարած զենքը իր տեղը դնելով, մի քանի անգամ անցուդարձ արեց սենյակի մեջ, ինքն իրան կրկնելով.

— Անտանելի՛ է… անտանելի՛ է… մինչև ե՞րբ… համբերություններս հատավ…

— Ի՞նչպես վերջացավ ձեր արշավանքը,— հարցրեց Ասլանը ժպտելով:

— Մինչև իմ հասնելը՝ ամեն ինչ վերջացած էր, քրդերը իրանց գործը կատարել էին…— պատասխանեց նա՝ լեղակի կարասների մեջ կապույտ գույն ստացած ձեռքերը տրորելով և միևնույն խոսքերը կրկնելով:— Համբերություններս հատավ… էլ համբերություն չմնաց… մինչև ե՞րբ…

Ասլանի մեղմ ժպիտը ծիծաղի փոխվեցավ:

— «Համբերությունը կյանք է», այդ խրատը ավանդեցին մեզ մեր պապերը,— ասաց նա, հեգնական կերպով նայելով վարպետի վրա:

– Այո՛, բայց ամեն համբերություն իր չափն ու սահմանն ունի,— պատասխանեց նա, շարունակելով կապույտ ձեռքերը տրորել։— Իսկ մեր համբերությունը անզգա դիակների համբերություն է, և ավելի ոչինչ:

Ասլանը այժմ լուրջ դեմք ընդունեց:

— Պատմեցեք, բանը ինչումն է,— հարցրեց նա:

— Իսկապես շատ սովորական մի դեպք, որի նմանը համարյա ամեն օր, ամեն գիշեր պատահում է,— պատասխանեց վարպետը, նստելով Ասլանի մոտ:

— Այգիներից միրգ էին գողանում: Թուրք կամ քուրդ գյուղացիները, երբ քաղաքը բան են բերում վաճառելու, գիշերը, դեպի իրանց գյուղերը վերադառնալու ժամանակ, սովորություն ունեն կողոպտելու հայերի այգիները: Դա պետք է մի առանձին բարություն համարել, երբ բավականանում են միայն պտուղներ գողանալով, բայց այդ անիրավները կտրատում են և ծառերը: Տեսնում ես, ցերեկով լուռ ու մունջ անցնում են այգիների մոտից, նայում են ծառերի վրա, նկատում են, որ այսինչ նորահաս կեռասենին, այնինչ գեղեցիկ տանձենին կարող է ծառայել իրանց կոտրած գութանը կամ արորը նորոգելու, իսկույն նշան են դնում, և գիշերը մտնելով այգին, կտրում են և տանում: Տիրոջ տարիներով խնամած ու հասցրած ծառը ոչնչանում է, այգին այլանդակվում է: Իսկ որքան ցավ է պատճառում այդ դժբախտությունը խեղճ այգեգործին: Ես տեսել եմ ընտանիքներ, որոնք օրերով նստած իրանց սիրելի ծառերի կտրած բների մոտ, լաց են եղել, սուգ են կատարել, որպես սպանված որդու գերեզմանի վրա:

Պատահած անցքը, որքան վարպետի համար վրդովեցուցիչ էր, նույնքան Ասլանը սառն կերպով վերաբերվեցավ: Այդ երկրում կարգից դուրս բան չէր, որ մեկը աշխատասեր է, ծառեր է տնկում, այգի է մշակում, պտուղներ է հասցնում, իսկ մյուսը ծույլ է, անկիրթ է, սովորել է միայն բռնությամբ հափշտակել առաջինի աշխատության արդյունքը:

— Փոխանակ իրանք լաց լինելու, լավ չէ՞ր լինի, որ կտրողներին լացացնեին,— ընդհատեց Ասլանը վարպետի խոսքը:

— Լավ կլիներ,— պատասխանեց վարպետը խորին կերպով հոգվոց հանելով։— Բայց այդ դժվար է… շատ դժվար է… Նրանց կողմումն է վայրենի ուժը… նրանց կողմումն է անպատիժ բարբարոսությունը… Մեր ձեռքերը կապել են, իսկ նրանցը բաց թողել… Մեր ձեռքում մի փայտի կտոր անգամ չեն թողել, իսկ նրանք սուր են կրում… Մենք զրկված ենք անձնապաշտպանության ամեն միջոցներից: Եթե այգետերը մի ամենափոքր ընդդիմադրություն ցույց տա և թույլ չտա, որ իր ծառը կտրեն, հավատացած եղեք, որ մյուս գիշերը կմտնեն նրա տունը և նրա պարանոցը կկտրեն: Եվ այս տեսակ չարագործությունները կմնան անպատիժ, որովհետև այստեղ հայի գլուխը մի սոխի գլխի չափ արժեք չունի:

— Եթե ամեն հայ իր սենյակում այսպես զենքեր ունենար, էլ նրա գլուխը չէին կտրի սոխի գլխի նման,— նկատեց Ասլանը:

— Այո՛, եթե ունենա՛ր…— պատասխանեց վարպետը վրդովված ձայնով։— Բայց հայը երբ երկու ղուրուշ ունի, միշտ մտածում է այդ բանի վրա, թե ի՞նչ գնեմ ու ինչ ծախեմ, որ երկուսը երեք դարձնեմ: Նա այլևս ուրիշ բանի վրա չէ մտածում: Եվ կառավարությունը սովորել է նրան միշտ այդպես տեսնել, և երբ նրա ձեռքում մի զենք է նկատում, իսկույն խլում է՝ ասելով, «այդ քո գործը չէ, դու գնա քո արշինով պարապվի՛ր»… Եվ հայը մնում է, որպես մի անպաշտպան որս քրդի և տաճկի

ձեռքում: Նրա հունձքի արտերը այրում են, նրա այգիները կտրատում են, և տերը կանգնած, ձեռքերը փակած, միայն բաց աչքերով նայում է ու ա՛խ քաշում…

— Մի՞թե այդ աստիճան անարդար է կառավարությունը,— հարցրի ես:

— Ի՛նչ կառավարություն: Այստեղ կառավարություն չկա, այստեղ կան միայն կեղեքիչ և ինքնակամ կառավարիչներ, որոնք միևնույն բարբարոսություններն են գործ դնում: Լսեցեք, ես ձեզ կպատմեմ մի փաստ, որից կարելի է հասկանալ, թե ինչ պտուղներ են մեր կառավարիչները: Մեր քաղաքը վաղուց անտի զինվորանոց չուներ: Զինվորներին սովորաբար բաժանում էին շրջակա գյուղերի հայոց տներում, և ամեն մի ընտանիք պարտավոր էր մի քանի զինվորներ պահել: Կարող եք երևակայել, թե ի՞նչ բան է անկարգ բաշիբոզուկը հայ ընտանիքի մեջ: Նա իրան կատարյալ տան տեր է համարում և թույլ է տալիս ամեն տեսակ կամայականություն: Գյուղացիները, չկարողանալով համբերել, դիմեցին նահանգապետ փաշային, խոստացան, թե իրանց ծախքով պատրաստ են քաղաքի մոտ մի զինվորանոց կառուցել, միայն թե ազատվեն նրանց անկարգ հյուրերից: Փաշան ընդունեց: Հավաքվեցան, խորհեցին, հաշվեցին շենքի ծախքերը, և բաժանելով իրանց մեջ, վճարեցին ամբողջ գումարը: Փողերի մեծ մասը դրա ու նրա կոկորդն անցավ, և վերջը շենքի բոլոր փայտեղենները դարձյալ գյուղացիների այգիներից կտրեցին:

— Ձրի՞:

— Այո՛, ձրի: Եվ մեծ անգթությունը նրանումն էր, որ տապարը ծառի տիրոջ ձեռքը տալով և նրա գլխին ծեծելով, հենց իրան՝ տիրոջն էին ստիպում կտրել իր սիրելի ծառը, որպես դանակը հոր ձեռքը տալով ստիպում են կտրել սիրելի որդու պարանոցը:

— Ապա ի՞նչ էին շինում ձեր քաղաքի սրբազան առաջնորդը և ձեր էֆենդի աղաները: Ինչո՞ւ ժողովրդի այդ պատվելի ներկայացուցիչները չբողոքեցին:

— Հենց այդ էֆենդի աղաներն էին կտրել տվողները, որովհետև նրանց գլխավորները կապալով հանձն էին առել շենքը կառուցանելու: Իսկ սրբազան առաջնորդը նրանց բարեկամն է…

— Հիմա ի՞նչ եք կարծում, ո՞վ է մեղավորը:

— Իհարկե, մերոնք, մեր ժողովրդի ներկայացուցիչները, որ ավելի վնասակար են, քան թե թուրքը ու քուրդը:

Ասլանը և վարպետը դեռ երկար խոսում էին: Ես արդեն սկսել էի ձանձրանալ. եթե չամաչեի կպառկեի ու կքնեի: Աչքերս դժվարությամբ էին բացվում, գլուխս այնքան ծանրացել էր, կարծես արճիճով լցված լիներ:— Ի՞նչ մի առանձին բավականություն են գտնում այդ տեսակ վիճաբանությունների մեջ,— մտածում էի ես,— միշտ միևնույն խոսքերը, միշտ միևնույն դատողությունները. մեկը հարստահարված է, մյուսը հարստահարող է, մեկը հալածված է, մյուսը հալածող է, ի՞նչ պետք է անել, որ նեղյալների դրությունն ավելի բարվոքվի, ի՞նչպես պետք է թեթևացնել ճնշվածների ծանր բեռը և այլն: Կարծես դրանք այն մեծ աստվածորդու աշակերտները լինեին, որ հրավեր կարդաց նեղված մարդկության՝ ասելով— «Եկա՛յք առ իս ամենայն նեղեալք և ծանրաբեռնեալք, և ես հանգուցից զձեզ»:

Ընթրիքի սեղանը վերջապես ազատեց ինձ նրանց խոսակցություններից. վիճաբանության թելը ընդհատվեցավ: Վարպետի տան սպասավորները նրա գործարանի աշակերտներն էին: Ներս մտան մի խումբ զանազան հասակի պատանիներ, յուրաքանչյուրը ձեռքում մի բան բերելով, մեկը աղ, մյուսը հաց,

երրորդը գինի, չորրորդը կերակուրներ,— մի խոսքով, ինչ որ պատրաստված էր, բոլորը միանգամից դրվեցավ սեղանի վրա: Նրանց տեսնելով, ես բոլորովին սթափվեցա, այլևս չէի նիրհում, մանավանդ երբ նկատեցի, որ այդ չարաճճիները մի առանձին հեգնությամբ էին նայում իմ վրա: Մեկը նրանցից մինչև անգամ դիտմամբ կոխեց իմ ոտքը: Բայց ես ավելի պատճառներ ունեի նրանց վրա ծիծաղելու: Բոլորի ձեռքերը, սկսած մատներից մինչև արմունկները, կապույտ գույն ունեին, կապույտ գույներով ներկված էին և նրանց երեսներն ու քթերը: Հեշտ բան չէր ներկարարի աշակերտ լինել և չթաթախվել ներկերի մեջ: Բայց ե՛ս… ե՛ս ում աշակերտն էի… իմ ձեռքերն ի՞նչ գույնով պիտի ներկվեին… Այդ հարցերը իմ գլխում ծագելու ժամանակ ես ամբողջ մարմնով դողում էի…

Ընթրիքից հետո ես խնդրեցի վարպետից, որ ինձ մի տեղ ցույց տային քնելու: Նա իսկույն հրամայեց աշակերտներից մեկին, և նա ինձ համար անկողին պատրաստեց միևնույն սենյակում, ուր մեզ ընդունել էին: Տնային բարեկեցության գլխավոր հատկանիշներից մեկը երևում է անկողնի մաքրությունից: Ես այն տեսակ անկողին չէի տեսել իմ կյանքում: Գլուխս փափուկ բարձի վրա դնելը և աչքերս փակվելը՝ միևնույն րոպեում կատարվեցան:

Գիշերվա կեսին ես զարթեցա. սաստիկ ծարավ էի: Վանա աղի տառեխը ուտելը հեշտ բան չէ, այն ևս գիշերը: Բայց մեծ եղավ իմ զարմանքը, երբ տեսա, որ Ասլանը դեռ քնած չէր: Նա նստած էր աշտանակի հանդեպ, որի վրա վառվում էր յուղային ճրագը: Ինչ-որ գրում էր:

— Այդ ի՞նչ ես գրում,— հարցրի նրանից:

— Նամակներ,— պատասխանեց նա:— Վաղը առավոտյան մեր թղթատարը մեկնելու է…

Արդյոք դեպի ո՞ր կողմը, արդյոք ո՞ւմ պետք է նամակ տանե,— այդ մասին նա ոչինչ չխոսեց:

— Եթե որսորդին գրելու լինես, իմ կողմից ողջունիր,— խնդրեցի նրանից:

— Լավ,— ասաց նա և շարունակեց իր գործը:

Ես նկատեցի, նա չէ ուզում, որ ես նրան խանգարեմ: Լուռ կացա: Քունը փախավ իմ աչքերից: Անկողնիս մեջ պառկած, մի առանձին ապշությամբ նայում էի Ասլանի վրա: Նա երևում էր ինձ, որպես մի մարմնացած գործունեություն: Բայց ի՞նչ նպատակի համար էր գործում այդ անխոնջ, մշտապտույտ ուժը, ես հասկանալ չէի կարողանում: Փետուրյա գրիչը երբեմն թղթի վրա սլանում էր, որպես նրա սրաթռիչ միտքը, իսկ երբեմն նա շարժվում էր դանդաղ, շրջանկատ կերպով, որպես հեռատես զգուշություն: Եթե ես վեր առնեի այն նամակներից մեկը, անտարակույս, կարդալ չպիտի կարողանայի, թեև նրանք գրված էին հայոց տառերով և հայերեն լեզվով: Գրելու այդ ձևը ես հետո սովորեցի, դա պայմանական մի ձև է, որ միայն նամակի գրողին և ստացողին է հայտնի:

Ասլանը գրում էր: Ես շարունակում էի նայել նրա վրա, և միևնույն ժամանակ զանազան մտածություններ զբաղեցնում էին իմ անփորձ գլուխը: Այդ մտածություններն այնքան խառն, այնքան անկապ էին, որ անկարելի էր նրանցից մի որոշ եզրակացություն դուրս բերել: Իմ երևակայության մեջ, որպես անրջական տեսիլքներ, պատկերանում և դարձյալ աներևութանում էին այն փոփոխությունները, թե ո՛րքան անգամ և ո՛րպիսի տարբեր կերպարանքներով այդ խորհրդավոր երիտասարդը հայտնվել էր ինձ: Երբեմն տեսնում էի նրան արաբական մինարեթում,

այն ամայի, մշտալուռ ավերակների մեջ, իր ավազակային խմբով, բոլորած բոցավառ փայտակույտի շուրջը, անքուն սպասում էին, որ գիշերային խավարը թանձրանա, որ ճանապարհների անցուդարձը դադարի, որ մարդիկ հանգստանան խաղաղ քնով, իսկ իրանք կատարեն մի խավար գործ… Երբեմն տեսնում էի նրան նույն աբեղայական կերպարանքով, որպես երևաց ինձ «Կաթնաղբյուրի» ձորում: Հանդարտ, չափավոր քայլերով անցավ նա իմ մոտից և իբրև մի խաբուսիկ ուրվական, անհայտացավ ժայռերի մեջ: Կարծես և այժմ լսում էի նրա այն տխուր, անապատական երգը, որ դուրս կոչեց պառավ կախարդին փոքրիկ Հյուբբիի հետ տերևախիտ թուփերի միջից: Երբեմն տեսնում էի նրան վանեցի մանրավաճառի հագուստով, եզիդիների իշխանի վրանում: Գեղեցիկ Թութին, վրանի վարագույրի ետևից, սիրաբորբոք աչքերով նայում էր նրա վրա, առանց հասկանալու, որ այդ անգութ, խստաբարո երիտասարդի սրտում կնոջ սիրո համար տեղ չէր մնացել: Երբեմն տեսնում էի նրան «Գժի» տանը, կարծես և այդ րոպեում, ներկայանում էր ինձ այն զայրացած դեմքը, թե որպիսի խորին վրդովմունքով լսում էր նա բարեսիրտ քահանայի տխուր պատմությունները՝ հոգևոր առաջնորդի անկարգությունների մասին: Իսկ այժմ տեսնում էի նրան մի օտարոտի արհեստավորի տանը: Այստեղ նա բժիշկ էր, եվրոպական բարձր ուսում ստացած բժիշկ և ինձ հրամայել էր թաքցնել իր հայությունը: Ինչո՞ւ էր նա փախչում հայ անունից, ինչո՞ւ էր նա այդպես տեղերի և հանգամանքների համեմատ անդադար կերպարանափոխ լինում:— Ահա այդ գաղտնիքը երկար զբաղեցնում էր իմ միտքը, և ես մի որոշ եզրակացության հասնել չէի կարողանում:

Մի բան, որ ավելի պարզ կերպով նկատում էի, սկսյալ այն օրից, որ ճանապարհորդում էի Ասլանի հետ՝ այն էր, որ նրա խորհրդավոր տեսակցությունները, ամեն տեղ և ամեն դեպքում, այնպիսի անձինքների հետ էին լինում, որոնք բողոքում էին երկրի ընդհանուր անկարգության դեմ: Եվ այդ տարբեր, զանազան ցեղերին պատկանող անձինքների մեջ, կարծես թե տարածված էր մի գաղտնի թել, որ կապում էր բոլորի սրտերը, բոլորի կամքերը միմյանց հետ: Բայց ո՞ւմ ձեռքումն էր գտնվում այդ թելի ծայրը, ո՞վ էր դարձնում բոլորի կամքերը դեպի մի որոշ նպատակ,— այդ գաղտնիքը և մինչև այսօր մնաց ինձ համար անհայտ: Կարոն, Ասլանը, Որսորդը և նրանց բոլոր համախոհները մի-մի գործիքներ էին, որ բաղկացնում էին մի բավականին բաղադրյալ մեքենայի կազմվածքը: Բայց այն ի՞նչ զորություն էր, որ պտտեցնում էր այդ մեքենան և նրան ընթացք և ուղղություն էր տալիս: Դա, որպես ինձ թվում էր, այն գերագույն տիրապետող ոգին էր, որ ինքը գոյություն ունի անհայտության մեջ, որ իրան պահում է անմատչելի, իսկ իր հզոր, աներևույթ ձեռքով կառավարում է մարդկանց սրտերը, մարդկանց մտքերը, և նրանց ուղղություն է տալիս…

Ասլանը վերջացրել էր նամակները. նա այժմ սկսել էր կնքել ծրարները: Ճրագի լույսը խիստ աղոտ կերպով լուսավորում էր նրա գունաթափ դեմքը: Նա հագած ուներ մի տեսակ գիշերային խալաթ, և սենյակում տիրող տոթի պատճառով կոճակները թողել էր արձակ: Շապկի կիսաբաց օձիքից երբեմն երևում էր նրա մերկ կուրծքը: Այն լայն, զորավոր կուրծքի վրան նշմարում էի ես մի ընդարձակ սպի, որը, շատ հավանական էր, ստացվել էր հրացան գործիքից: Ես մի առանձին ուշադրությամբ նայում էի այն նշանի վրա: Չգիտեմ, ինչո՞ւ վերքը, սպին միշտ իմ մեջ հետաքրքրություն էր զարթեցնում: Երևի նրա համար, որ նա պարունակում էր իր մեջ մարդու կյանքի մի նշանավոր արկածի հիշատակները: Գուցե այդ էր պատճառը, երբ նա ծրարները կողպեց պահարանի մեջ, որ առավոտյան հանձնե թղթատարին, և երբ մտավ իր համար պատրաստած անկողինը, ես մտածեցի գոհացնել իմ հետաքրքրությունը: Բայց Ասլանը տարօրինակ բնավորություններից մեկն էր: Երբեմն նա այնքան քաղցր էր, որ կարծես թե շրթունքներից մեղր էր կաթում, իսկ երբեմն այն աստիճան ժանտ էր, որ կկարծեիր, թե աչքերից, երեսից լեղի էր թափում: Այդ րոպեներում լավ էր

չխոսել նրա հետ: Բայց ես համբերել չկարողացա և համարձակվեցա հարցնել, թե այն ի՞նչ վերքի նշան է, որ երևում է նրա կուրծքի վրա:

— Ինչո՞ւ ես հարցնում,— մաղձոտ կերպով կտրեց իմ խոսքը:

— Այնպես… ուզում եմ իմանալ…

— Դրանից ի՞նչ օգուտ քեզ:

Ես լուռ կացա: Նա նկատեց, որ ես վշտացա, ավելի մեղմ կերպով ասաց ինձ.

— Ոչ ոք իրավունք չունի ուրիշի գաղտնիքների մեջ մտնել: Եթե դու հարցնեիր, թե ի՞նչպես է կազմված իմ կուրծքը, ո՞ր կողմումն է գտնվում իմ սիրտը և ինչ պաշտոն է կատարում, կամ որպես են դասավորված իմ թոքերը,— ես բոլորը կբացատրեի քեզ, որովհետև դրանից մի բան կսովորեիր: Բայց գիտենալ իմ կուրծքի վրա մի ծվատած տեղի պատմությունը, դա, կարծեմ, մի առանձին օգուտ չի բերի քեզ:

Ես ավելի վիրավորվեցա, ասելով.

— Դու միշտ համարել ես ինձ մի երեխա, մի հիմար և տգետ երեխա, որի հետ, բացի կատակներից, ուրիշ բան չէ կարելի խոսել:

— Ես կատակ չեմ անում: Բայց դու այնքան խելացի էլ չես, որքան կարծում ես…

Բ

ՓԱՆՈՍԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Գիշերը անցուցի անհանգիստ, տենդային դրության մեջ: Առավոտյան զարթեցա խիստ ուշ: Ասլանը սենյակում չէր, չէր երևում և վարպետ Փանոսը: Ես ինձ բավական թույլ էի զգում, մարմինս կոտրատվում էր, իսկ գլխիս մեջ տիրում էր մի տեսակ թմրություն, մի տեսակ մառախուղ: Գիշերվա բոլոր անցքերը երևում էին ինձ ինչպես մի երազ: Կոկորդիս մեջ ցավ էի զգում և, նայելով հայելու մեջ, տեսնում էի պարանոցիս վրա բաց-կապտագույն բծեր: Շապիկս բուրում էր դեղորայքի հոտով: Երևում էր, գիշերը Ասլանը իմ վրա գործ էր դրել բժշկական միջոցներ:

Վարպետի գործարանի փոքրիկ աշակերտներից մեկը ջուր բերեց. լվացվեցա, հագնվեցա և դուրս եկա պատշգամբի վրա:

Այստեղից բացվեցան իմ առջև հրաշալի տեսարաններ, երևում էին շրջակա լեռները իրանց գեղեցիկ հովիտներով, երևում էր քաղաքը իր կրկնակի պարիսպներով ու աշտարակներով, երևում էին քաղաքի բարձր սյունաձև մինարեթները և հայոց եկեղեցիների գմբեթները, երևում էր միջնաբերդը իր ահռելի, հսկայական կերպարանքով, երևում էր ծովը իր մանիշակագույն հարթ տարածությամբ: Իմ սիրտը տրոփում էր անհամբերությունից, թե երբ պետք է մոտից, շատ մոտից տեսնեմ այդ բոլորը: Գիշերով հասած լինելով Այգեստան՝ ես դեռ ոչինչ չէի տեսել: Իրավ, գեղեցիկ, շատ գեղեցիկ էր քաղաքի այդ ծառազարդ արվարձանը: Այգիների ծառերը, ծանրաբեռնված գույնզգույն պտուղներով, առավոտյան լուսով ավելի սքանչելի էին երևում, քան թե գիշերը: Արեգակը հսկում էր վերևից: Այժմ նրա լույսի երկյուղից գիշերային գողերը դադարել էին կողոպտելուց: Այժմ հերթը հասել էր ցերեկվա գողերին: Ահա ճնճղուկների ահագին երամը, խառնաձայն աղմուկով իջավ

ծիրանի ծառի վրա: Նրա տերևախիտ ճյուղերը թեքվեցան այդ փոքրիկ ավազակների ծանրության ներքո: Ծլվլում են, ոստոստում են և ուրախ, հաղթական աղաղակներով, կտցահարում են իրանց քաղցր, հյութալի ավարը: Հեռվից ճռնչում է այգեպանի ճոճանակը, և չարաճճի խումբը միանգամից թողնում է ծառը: Ի՞նչ զանազանություն քրդերի և այդ անմեղ արարածների մեջ: Երկուսն էլ ապրում են ուրիշի վաստակով: Բայց ճնճղուկներն ավելի բարեխիղճ են, դրանք գոնե չեն ոչնչացնում ծառերը: Այդ համեմատությունն էի անում, երբ վերադարձավ Ասլանը: Նրան տեսնելով, ես մտա սենյակը:

— Ես չկամեցա քեզ զարթեցնել, լավ է, որ վեր ես կացել,— ասաց նա բժշկի եղանակով, որ մի անծանոթ հիվանդի մոտ այցելություն է գործում:— Մոտ եկ, տեսնեմ:

Ես մոտեցա: Նա սկսեց քննել իմ կոկորդը:

— Փոքր-ինչ ուռուցք է գոյացել, բայց շուտով կանցնի,— ասաց նա, տալով ինձ մի ինչ-որ հեղուկ և մի օծանելիք, և պատվիրելով, որ առաջինով ներսից ողողեմ կոկորդս, իսկ երկրորդը դրսից քսեմ:

— Այդ քաղաքում բժշկությունը նախ իմ վրա փորձեցիր,— նկատեցի ես ծիծաղելով:

— Ո՛չ, այս րոպեիս մի հիվանդի մոտից եմ գալիս,— պատասխանեց նա իր սովորական սառնությամբ,— բայց խեղճը հազիվ թե կապրի:

Նա վեր առեց իր եվրոպական լայնեզր գլխարկը և հեռացավ՝ պատվիրելով ինձ հանգիստ մնալ և տնից դուրս չգալ: Ես մնացի սենյակի մեջ միայնակ:

Երևում էր, որ վարպետ Փանոսը տանը չէր, եթե ոչ՝ նա կգար ինձ տեսնելու: Որդու փոխարեն եկավ մայրը: Դա այն ճարպիկ, լեզվանի և աչքաբաց կանանցից մեկն էր, որ իր ընդունակություններով սքողում է, մոռացության է տալիս տղամարդի անունը, և ամբողջ զավակները հասարակության մեջ ճանաչվում են միայն մոր անունով: Նրան կոչում էին Սանամ, և վարպետ Փանոսը մոր անունով կոչվում էր Սանամի տղա:

Նա մոտեցավ ինձ այս խոսքերով,

— Լսեցի հիվանդ ես, որդի, ո՞ր տեղդ է ցավում, որդի, ասում են, կոկորդդ ուռել է. սուրբ տիրամայրը փարատություն տա: Ես հիմա կլավացնեմ, մի վախիր, հենց որ մատս դնեմ մի քիչ հուփ տամ, աստծո շնորհիվ կլավանա: Անցյալ օրը մեր հարևանի տղան էլ այսպես էր, հենց որ ձեռքս դիպավ, իսկույն լավացավ:

Պառավն էլ ուզում էր նորից խեղդել ինձ: Ես, իհարկե, քաղաքավարությամբ մերժեցի նրա բժշկական հնարները, հայտնելով, որ բոլորովին առողջ եմ զգում ինձ: Բայց նա դարձյալ չհանգստացավ զգուշացնելով ինձ, թե քաղաքում «կապույտ հազ» կա, շատերի կոկորդը ուռչում է, շատերը մեռնում են, և միայն չափահասներն ազատվում են այդ «պատուհասից», իսկ երեխաների մեջ մեծ կոտորած է պատճառում:— Այսուամենայնիվ,— վերջացրեց նա իր խրատները,— զգուշությունը լավ բան է,— և խորհուրդ տվեց այցելել իր որդու գործարանը:

Ես զարմանում էի, ի՞նչ փրկարար ազդեցություն կարող էր ունենալ ներկարարի գործարանը «կապույտ հազի» կամ մի կոկորդի ուռուցքի վրա: Այդ մասին պառավը ոչինչ չբացատրեց ինձ: Իսկ ես հետևեցի նրա խրատին միայն այն մտքով, որ առիթ ունենամ տեսնելու գործարանը:

Երբ պառավի հետ ցած իջանք սանդուղքներից, բակում մեզ հանդիպեց վարպետ Փանոսի կինը: Նրա երեխաները մինը— տղա, մյուսը աղջիկ— մոր փեշիցը բռնած, տրտնջում էին և ինչ-որ ուզում էին: Ինձ տեսնելով, երկուսն էլ շնորհալի դեմք ընդունեցին: Ո՞րքան գեղեցիկ էին այդ մի զույգ հրեշտակները, կայտառ, առողջ և մաքուր: Երեխայի մաքրությունից կարելի է գաղափար կազմել և մոր մաքրասիրության մասին: Վարպետի երրորդ որդին, բոլորից մեծը, գրքերը թևի տակ առած, տանից դուրս էր գնում: Երևի գնում էր մի տեղ սովորելու: Երբ նա հեռացավ, երկու փոքրիկները նորից սկսեցին տրտնջալ: Նրանց մայրը մոտեցավ ինձ և գլխով լռությամբ ողջունեց: Նա թեև չխոսեց իմ հետ, բայց իմ հասակին նայելով, երեսը չծածկեց: Ճակատը զարդարված էր ոսկիներով, իսկ պարանոցը և կուրծքը՝ մարջանի խոշոր շարքերով: Այդ բոլորը մի առանձին փայլ էր տալիս նրա սիրուն, համակրական դեմքին: Ժիր տանտիկնոջ հատուկ սովորությամբ՝ նա իր բավական նուրբ գործվածներից պատրաստված զգեստների վրա հագել էր լայն, երկար, կարմիր շապիկ, որ իջնում էր մինչև ոտները: Այդ հագնում են գործի ժամանակ, որ մյուս հագուստները չկեղտոտվին:

— Ինչո՞ւ չես խոսում,— հարսին իրավունք տվեց պառավ սկեսուրը,— դա էլ քո եղբայրն է:

Հարսի բերանը դարձյալ չբացվեցավ, որովհետև քաղաքավարությունը պահանջում էր, որ ես սկսեի խոսակցությունը: Բայց ես կին տեսած չլինելով, կանանց հետ խոսելու ամենևին շնորհք չունեի: Որոնում էի մի բան՝ ասելու համար: Երեխաների տրտունջը ազատեց ինձ, նյութ տվեց իմ խոսակցությանը: Ես հարցրի:

— Ինչո՞ւ են տրտնջում դրանք:

— Ուզում են եղբոր հետ գնալ:

— Կարդալո՞ւ:

— Ինչ կարդացող պտուղներ են. կգնան այնտեղ, կխաղան, եղբորն էլ կխանգարեն, վարժապետին էլ:

— Ո՞վ է վարժապետը:

— Տեր Եղիշեն:

— Նա դպրոց ունի՞:

— Ուներ, բայց փակեցին… Այժմ այնպես, իմ որդու և մի քանի բարեկամների մանուկների հետ օրեկան մի քանի ժամ պարապվում է:

Իմ խոսակցության պաշարը սպառվեցավ: Մտածեցի հարցնել երեխաների անունները:

— Ի՞նչպես է մեծի անունը:

— Հայկ:

— Փոքրի՞նը:

— Արամ:

— Իսկ այդ սիրուն աղջկանը:

— Շամիրամ:

— Պատմական անուններ են,— նկատեցի ես, ինքս էլ զարմանալով իմ գյուտի վրա:

— Թագավորների անուններ են,— ավելացրեց պառավը:

— Որդիս շատ անգամ պատմում է երեխաներին այդ թագավորների գործերը, ասում է, որ ամեն մեկը պետք է գիտենա, թե ո՛վ էր իր անվան տերը:

Տիկինը, ինչպես երևում էր, շտապում էր: Առավոտ էր. տնային գործերը կոչում էին նրան: Մեր թեթև խոսակցությունը նա ավելի գործնականի փոխեց, ասելով, որ ճանապարհից ու հեռու տեղից ենք եկել, խնդրեց որ մեր սպիտակեղենները, թե իմը և թե Ասլանինը, ուղարկեմ, որ լվանալ տա, որովհետև տանը այդ օրը լվացք չէին լվանալու, և ավելացրեց, եթե կարկատելու մի բան կա, նույնպես ուղարկեմ:

— Ձեր տունն է, եղբայր,— ասաց նա,— մի ամաչեք, ինչ որ պետք ունեք, կարող եք պահանջել, որպես ձեր մորից և քույրից:

Ես շնորհակալություն հայտնեցի: Նա հեռացավ: Երեխաները այժմ հանգիստ էին: Նրանք կարծես մոռացան մեծ եղբորը, և երկուսն էլ ուրախանալով վազեցին կատվի փոքրիկ ձագի ետևից, որ նույնպես վազվզում էր բակում: «Դրանք էլ են սիրում Վանա կատուներին, որոնց մազերը կայծեր են արձակում»,— մտածեցի ես:

Թե մեր կողմերում, թե այստեղ, հյուրի համար մի առանձին հարգանքի և մտերմության նշան է համարվում, երբ տանտերը ցույց է տալիս յուր տնային տնտեսությունը: Այդ պատճառով ես սիրով ընդունեցի պառավի առաջարկությունը, երբ նա հրավիրեց տեսնելու իրանց տնտեսությունը: Նախ տարավ ինձ մառանը: Դա մի ստորերկրյա ներքնատուն էր, որ ամառնային սաստիկ տոթի ժամանակ ևս պահպանում էր իր մեջ խիստ ախորժելի զովություն: Այստեղ, մի կողմում, կիսով չափ հատակի մեջ թաղված, մինը մյուսի մոտ շարված էին գինու կարասները:— Այդ բոլորը մեր այգիից է,— ասաց պառավը անմեղ պարծենկոտությամբ: Մյուս կողմում, զանազան փոքրիկ թակույկների (տուճիկ) մեջ կարգով դրված էին յուղ, պանիր, մեղր, աղ դրած տառեխ և զանազան տեսակ թթուներ խաղողից, բոխիից և պես-պես մրգերից ու բանջարներից: Ես առաջին անգամ տեսնում էի այսպիսի լիություն:

— Այդ բոլորը ո՞վ պիտի ուտե,— հարցրի ես զարմանալով:

— Մենք էլ կուտենք, ուրիշներն էլ կուտեն,— պատասխանեց պառավը բարեսիրտ ծիծաղով:— Աստված խո բոլորը միայն մեզ չէ տվել, նա տվել է, որ մենք էլ չունեցողների համար բաժին հանենք:

— Գնե՞լ եք այդ ամենը:

— Ոչինչ չենք գնել: Բոլորը մեր տանիցն է. յուղը, պանիրը ստացել ենք մեր կովերից ու ոչխարներից, մեղրը մեր մեղուներից, մյուսները նույնպես մեր բերքերից ենք ստացել: Պատահում է, որ երբեմն քրդերը մեզ համար յուղ, պանիր, չորաթան ընծա են բերում, բայց մենք նրանց բերածը չենք ուտում, տալիս ենք վաճառելու:

Ես իսկույն հիշեցի, որ այդ սովորությունը Պարսկաստանի հայոց մեջ էլ կար, մանավանդ կանանց մեջ, որ «թրքազեն» է ասելով, մահմեդականների թե՛ մորթած միսը և թե՛ այլ ուտեստները պիղծ կհամարեին և չէին գործածի, ինչպես փոխադարձապես, մահմեդականները հայերի պատրաստած ուտեստների վերաբերությամբ նույն կարծիքն ունեին:

Հետո մտանք ամբարը, որ մի ցամաք շինվածք էր, և ամեն կողմից օդը համարձակ անցուդարձ էր անում: Այստեղ ահագին, քառանկյունի փեթակները լի էին ցորենով և այլուրով: Մեծ և փոքր խարարների ու ջվալների մեջ դրած էին զանազան տեսակ ընդեղեններ— բրինձ, ձավար, կորկոտ, մաշ, բակլա, սիսեռ, ոսպ և այլն: Դրանք պահոց օրերի համար էին:

— Բացի բրինձից,— ասաց պառավը,— մնացած բոլորը մեր մշակություններից ենք ստացել: Բրինձի մշակությունը այստեղ չի հաջողվում, և այնքան էլ ջուր չկա. ասում են, որ նա ջուր շատ է սիրում:

Պառավը երկրագործությունից նույնպես տեղեկություն ուներ:

Հետո անցանք թոնրատունը: Այստեղ հաց էին թխում, կերակուրներ էին եփում: Աղախինների և սպասավորների մի ամբողջ խումբ աշխատում էր, կարծես մի մեծ բանակ պետք է կերակրեին: Բոլորի վրա հսկում էր, բոլորին կառավարում էր վարպետի կինը: Ես զարմանում էի, թե ինչպես նրա պառավ սկեսուրը իր իրավունքները տվել էր նրան: Մեր կողմերում այս տեսակ առանձնաշնորհություններ խիստ հազիվ էին պատահում ընտանիքների մեջ: Քանի որ պառավ սկեսուրը դեռ կենդանի էր, հարսը ձայն չուներ տնային տնտեսության մեջ:

Թոնրատունը, դեպի բակի կողմը դարձրած երեսը բաց, իսկ երեք կողմից ծածկված, մի ընդարձակ սրահ էր, որ հարմարեցրած էր ամառվա կեցության համար: Այստեղից մտանք հացատունը: Կարելի է ասել, որ վարպետ Փանոսի կահ-կարասիքը և տնային հարստության մեծ մասը այստեղ էր տեղավորված: Մինը մյուսի վրա ծալած դարսած էին գեղեցիկ կապերտներ, գորգեր, սփռոցներ և նախշուն թաղիքներ: Պղնձյա մեծ և փոքր կաթսաները, սինիները, թասերը, մաքուր, նոր կլայեկած, աչք էին շլացնում: Այստեղ ևս անկողինները, իրանց բոլոր պարագաներով կապած, կարգով դարսված էին ծալքերի վրա: Ո՞ւմ համար— վարպետ Փանոսի ընտանիքը շատ փոքր էր այդքանի համար: Պառավը փարատեց իմ մտատանջությունը՝ ասելով.

– Պատահել են ուրախության հացկերույթներ, կնունք ենք ունեցել կամ մկրտություն, պատահել է, որ սուգ ենք ունեցել, մեռելահաց ենք տվել. հարյուր հոգուց ավելի մեր սեղանի վրա նստած են եղել: Բայց երբեք չի պատահել, որ մի գդալ անգամ հարևանից փոխ առած լինեինք: Ամեն ինչ մեր տանը պատրաստ ունեցել ենք, և ամոթ ենք համարել ուրիշից բան խնդրել: Մարդս մեռնելուց հետո ես շատ խեղճություն կրեցի. բայց այն ժամանակ ես իմ աշխատանքով էի ապրում: Իսկ երբ որդիս մեծացավ, աստուծո ողորմածությամբ, հոր դատարկված տունը նորից լցրեց: Հիմա շատերը, որոնք առաջ ծիծաղում էին մեզ վրա և մարդի տեղ չէին դնում, հիմա նախանձվում են:

Պառավի խոսքերը, և այն բոլորը, որ ես տեսա, իմ մեջ զարթեցրին և՛ ուրախ, և՛ տխուր մտածություններ: Ուրախալի էր ինձ տեսնել հայկական մի ճոխ տուն, աստուծո բոլոր բարիքներով լի, ուր ամենքը ուրախ և գոհ վայելում էին անսպառ բախտավորություն: Իսկ նրա շուրջը բազմաթիվ ընտանիքներ հեծում էին աղքատության մեջ: Ի՞նչ էր դրա պատճառը: Ես համոզված էի, որ թողյալ արտաքին հանգամանքները, որոնք փութացնում էին տիրող աղքատությունը, գլխավոր և բուն պատճառը պետք էր որոնել իրանց՝ աղքատների մեջ: Ես հետո առիթ ունեցա մոտից, շատ մոտից շոշափել այդ պատճառները: Այդ դուք կտեսնեք իմ պատմության ընթացքում: Բայց ավելի համոզվեցա իմ կարծիքների մեջ, երբ տեսա վարպետ Փանոսի գործարանը:

Պառավի առաջնորդությամբ ես մտա մի երկարաձև շինվածքի մեջ, ուր զետեղված էր գործարանը: Այստեղ մինը մյուսի մոտ շարված էին ներկի կարասները: Ներկում

էին ամեն գույներով, առավելապես լեղակի գույնով: Գյուղացիները բերել էին զանազան տեսակ տնային գործվածքներ, որպիսիք են՝ կտավ, շալ, բամբակյա կամ բրդյա թելեր և այլն: Հաճախորդների մեջ կային զանազան ազգերից և զանազան լեզուներից՝ հայ, թուրք, քուրդ, ասորի և ուրիշները: Վճարների հատուցումները կատարվում էին ըստ մեծի մասին երկրագործական և անասնապահական բերքերով. փողի փոխարեն տալիս էին յուղ, պանիր, ցորյան, բուրդ, մորթիք և այլն: Այդ էր պատճառը, որ գործարանատերը ստիպված էր քաղաքում մի խանութպանի հետ ընկեր լինել, որպեսզի վաճառվեն այդ մթերքները: Ոմանք ոչինչ չէին վճարում:

Աշխատանքը եռ էր գալիս ժրաջան բանվորների ձեռքում: Փոքրիկ և մեծ աշակերտները, հագուստով ու մարմնով թաթախված ներկերի մեջ, վժվժում էին այս կողմ ու այն կողմ: Կապույտ լեղակը ամենի ձեռքերի և դեմքի վրա թողել էր իր թախծալի գույնը: Կապույտ էին գործարանի փայտյա սյուները, կապույտ էին առաստաղը, հատակը և կավով ծեփած պատերը, կապույտ էին երկայն փայտյա ձողերը, որոնց վրա չորացնելու համար կախ էին տված ներկված կտավները: Կապտագույն էր և լույսը, որ ներս էր թափանցել գործարանի նեղ պատուհաններից:

Բայց իմ ուշադրությունը գրավեց մի այլ բան. գործարանի փոխ-վարպետը, մի երեխա գրկում բռնած, լռությամբ մոտեցավ լեղակի կարասին: Կարասը հենց նոր էին խառնել և մուգ-լրջագույն փրփուրը դեռ դիզված էր նրա բերանի վրա: Նա երեք անգամ պտտացրեց երեխային կարասի շուրջը, հետո խորհրդավոր կերպով մատը թաթախեց փրփուրի մեջ և նրանով խաչաձև օծեց երեխայի կոկորդը: Պառավ դայակը, որ կանգնած էր այնտեղ և երկյուղածությամբ նայում էր այդ գործողության վրա, ընդունեց փոխ-վարպետի ձեռքից երեխային, նրա բժշկությունը վարձատրելով մի կապտագույն աքաղաղով, որ բերել էր յուր հետ:

– Այդ երեխան կապույտ հազ ունի,– ասաց վարպետ Փանոսի մայրը, որ կանգնած էր իմ մոտ, և խորհուրդ տվեց, որ նույն գործողությունը և իմ կոկորդի վրա կատարել տամ:

Շատ չանցավ, սովորական ժպիտը երեսին, ներս մտավ վարպետ Փանոսը: Նրա հայտնվիլը այն ազդեցությունը չգործեց, ինչպես առհասարակ լինում է վարպետի ներկայության ժամանակ. անգործը գործի է դիմում, աղաղակները լռում են, կրկին տիրում է կարգը, ոչ, այլ կարգը պահպանված էր և նրա բացակայության ժամանակ: Նրա մեջ չէր երևում ոչ հպարտ գործարանատիրոջ խստությունը և ոչ արևելյան վարպետի կոպիտ տիրասիրությունը, այլ մի պարզ, մտերմական կապ միացնում էր ստորադրյալներին իրանց գլխավորի հետ: Նա գործունյա մարդու հատուկ աչալրջությամբ մոտեցավ կարասներին, նայեց նոր ներկած կտավներին ու շալերին, մի քանի բաներ հարցրեց, մի քանի պատվերներ տվեց և հեռացավ: Նրա մի հայացքը բավական էր գիտենալու համար, թե որտեղ ի՛նչ էր պակաս, և որտեղ ի՛նչ պետք էր անել: Հետո նա դարձավ դեպի հաճախորդները. մոտենում էր ամեն մեկին, բարևում էր, հարցնում էր նրանց առողջությունը, հետաքրքրվում էր նրանց դրությամբ, թե ի՞նչպես է հացի բերքը, առո՞ղջ են նրանց անասունները, առո՞ղջ են նրանց հայրը, մայրը, կանայք, զավակները և այլն: Բոլորի անունները գիտեր, բոլորի մասին հարցմունքներ էր անում:

Ինչ որ ավելի աչքի էր զարկում, այդ էր՝ հաճախորդների չափազանց ընտանիությունը թե՛ վարպետ Փանոսի և թե՛ նրա տան հետ: Մի քուրդ մոտեցավ նրա մորը խնդրեց, որ իր անթարիի պատռված թևքը կարել տա: Մի այլ քուրդ մի զույգ կենդանի կաքավներ էր բերել վարպետի փոքրիկ երեխաների համար: Ես զարմանում էի, ի՞նչ էր պատճառը, այդ մարդը, որ գիշերը Ասլանի հետ այնքան դառնությամբ էր խոսում քուրդերի մասին, այժմ այդպես բարեկամաբար ողջագուրում էր նրանց: Մի՞թե դա մի տեսակ կեղծավորություն էր նրա կողմից,

մի՞թե շահեկան նպատակները ստիպում էին նրան շողոքորթել իր հաճախորդներին: Ոչ, վարպետ Փանոսը ոչ կեղծավոր և ոչ շահասեր մարդ էր: Նա առհասարակ սիրում էր բարեկամական հարաբերություններ պահպանել ամեն տեսակ մարդկանց հետ, մանավանդ գյուղացիների հետ:

Վարպետ Փանոսի տունը մի տեսակ հյուրանոց էր այդ ամեն կողմից եկած, խառնիճաղանջ բազմության համար: Ես նրա գործարանը համեմատում էի իմ քեռիների զինագործության գործարանի հետ: Բայց այնտեղ բոլորովին ուրիշ բան էր. այնտեղ գլխավորապես դեր էր խաղում շահը: Հաճախորդներից ոմանք, որոնք հեռու տեղերից էին եկած, իրանց գրաստները կապել էին վարպետի ախոռատանը, այնտեղ նրանց համար թե՛ սնունդ և թե՛ խնամք պակաս չէր: Գրաստների տերերը, իրանք ևս գիշերում էին ախոռատանը կից առանձին բնակարանում և վարպետի խոհարանից կերակուր էին ստանում: Ոմանք իրանց գյուղերից բերած մթերքները տեղավորել էին նրա տանը. այստեղից տանում էին բազարը, վաճառում էին և փոխարենը ինչ-որ գնելիք ունեին, առնում էին ու բերում, նույնպես դնում էին նրա տանը: Կարծես այստեղ մի տեսակ մթերանոց լիներ նրանց համար: Նրանք այնքան ժամանակ հյուրասիրություն էին վայելում, մինչև գործները վերջացնում էին, հետո շնորհակալությամբ գնում էին իրանց տեղերը:

Երբ որ պատահում էր վարպետ Փանոսին գնալ քրդերի «օբաները», նա նույն հարգանքը և սիրալիր հյուրասիրությունն էր վայելում նրանց վրաններում: Օրերով, շաբաթներով, ամիսներով պահում էին իրանց մոտ, մի ընտանիքի վրանից մյուս ընտանիքի վրանն էին հրավիրում, ուտեցնում էին, խմեցնում էին, հետո զանազան պարգևներով ճանապարհ էին դնում: Մեկը ընծայում էր մի գեղեցիկ ձի, մյուսը թանձր թաղիք կամ կապերտ, երրորդը մի քանի ոչխարներ «ղավուրմայի» համար, չորրորդը մի տիկ պանիր, յուղ, մեղր և այլն:

Զարմանալի էր այդ եռանդոտ և վերին աստիճանի բանիմաց մարդու բարոյական ազդեցությունը քրդերի վրա: Քրդերի զանազան ցեղերի մեջ, ուր նրա անունը հայտնի էր, ուր ճանաչում էին նրան,— նա համարյա թե պաշտելի էր: Լինում էին կռիվներ քրդերի մեջ, թշնամություն, արյան վրեժխնդրություն, բավական էր, որ վարպետ Փանոսը հայտնվեր նրանց մեջ և մի երկու խոսք ասեր, իսկույն կտիրեր խաղաղություն: Շատ անգամ իրանք, քրդերը փոխանակ իրանց շեյխերին դիմելու հրավիրում էին նրան վճռելու իրանց մեջ ծագած այս և այն վեճերը: Նա այն աստիճան հեղինակություն էր վայելում, որ ամենադժվարին խնդիրներում անգամ, կարող էր մի քանի խոսքով հաշտություն կայացնել:

Վարպետ Փանոսի բարեկամությունը քրդերի հետ ոչ սակավ օգուտ էր բերում հայ գյուղացիներին: Ինձ պատմում էին այսպիսի դեպքեր. պատահում էր, որ հայ գյուղացիներից մեկի կովը, եզը կամ ոչխարները գողանում էին քրդերը. բավական էր, որ գյուղացին գիտենար, թե իր անասունները ո՞ր ցեղի մեջ են տարել կամ ո՞վ է իր գողը: Նա այլևս փաշային կամ մուֆթիին չէր դիմում գանգատվելու, ուղղակի գալիս էր վարպետ Փանոսի մոտ, հայտնում էր իր հետ պատահած անցքը: Վարպետը ուղարկում էր նրան նույն ցեղի ցեղապետի մոտ, ուր տարել են կողոպուտը: Գյուղացին գնում էր, ներկայանում էր ցեղապետին այսպիսի խոսքերով. «Իմ այս և այն անասունները գողացել են. ասում են, որ ձեր «էլի» մեջն են բերել. ինձ ուղարկեց ձեր սպասին վարպետ Փանոսը, խնդրեց, որ գտնվի կողոպուտը»: Եթե, իրավ, գողացված անասունները այնտեղ էին տարված, իսկույն գտնում էին և հանձնում տիրոջը, իսկ եթե տերը սխալվել էր, նրան ցույց էին տալիս կողոպուտի տեղը (քրդերի մեջ ոչ մի գողություն գաղտնի չէ մնում): Տերը հայտնում էր ցույց տված տեղը՝ դարձյալ միևնույն խոսքերով, և ետ էր ստանում իր կորուստը:

Այդպիսի դեպքերում վարպետ Փանոսը նամակ չէր գրում, այլ ամեն հանձնարարություն կատարվում էր բերանացի պատվերներով: Բայց որպեսզի հավատային, որ ներկայացողը իսկապես նրա կողմից էր ուղարկված, նա սովորաբար տալիս էր նրա ձեռքը մի որևիցե նշան, օրինակ՝ իր դանակը, «տեր-ողորմյան», մորուքի սանդրը, վերջապես մի բան, որ տանողը ցույց էր տալիս՝ ասելով, «այդ էլ վարպետի նշանն է»: Երբ ճանապարհների վրա քրդերը պատահեին մի հայ գյուղացու, բավական էր, որ նա ասեր, թե ես վարպետ Փանոսի մարդն եմ, այլևս նրան չէին դիպչի: Իհարկե, այդ բոլոր հարգանքները վայելում էր վարպետը այն ցեղերի կողմից, որոնց հետ նա բարեկամական հարաբերությունների մեջ էր, իսկ թշնամի ցեղերը ոչ միայն հայերին, այլ նույնիսկ քրդերին կկողոպտեին, եթե նրանք օտար ցեղի էին պատկանում: Գողությունը, հափշտակությունը, կողոպուտը քրդերի համար ապրուստի սովորական միջոցներից մեկն է:

Մի անգամ ես հարցրի վարպետ Փանոսից.

— Ի՞նչ միտք ունի քո այդքան բարեկամությունը քրդերի հետ, որոնց այդքան ատում ես:

Նա պատասխանեց հայկական առածով.

— «Շան հետ բարեկամացի՛ր, բայց փայտը ձեռքումդ պատրաստ պահի՛ր»…

Վարպետ Փանոսը կարդացած մարդ էր. հայոց հին գրականությունը նա բավական լավ ուսումնասիրած էր. Եղիշեից, Թոմա Արծրունուց նա ամբողջ գլուխներ անգիր գիտեր, իսկ Խորենացու հետ այնքան ծանոթ էր, որպես մի հմուտ քարոզիչ, որ գիտե, թե Ավետարանի այսինչ գլխի այնինչ համարում ինչ է ասված: Նրա մանկության օրերում հայտնի էր Ղազար վարդապետ «սքանչելագործը»: Այս տարապայման աբեղան ոչ մի վանական միաբանության հետ չհաշտվեցավ,— կամ ավելի ճիշտ կլիներ ասել՝ միաբանությունները նրա հետ չհաշտվեցան, այդ պատճառով առանձնացավ իր տանը, և մի քանի մանուկներ հավաքած իր շուրջը, սկսեց պարապել նրանց կրթությամբ. Այդ աշակերտներից մեկն էր պատանի Փանոսը և հառաջադեմ աշակերտներից: Վարժապետը նրան շատ էր սիրում և շատ անգամ խրատում էր, որ վարդապետ չդառնա: Այդ ժամանակ ուսում առնում էին միայն հոգևորական դառնալու նպատակով: Պատանի Փանոսի հայրը վաղուց մեռած լինելով՝ նրա վարժապետը առանձին հոգ էր տանում նրա ապագայի համար, նշմարելով նրա մեջ բավական հարուստ ընդունակություններ: Իր վարժապետի խորհրդով Փանոսը մտավ մի ներկարարի գործարան: «Ինչ որ ինձ մոտ սովորեցար, այդքանը բավական է մի արհեստավորի համար,— ասաց բարեսիրտ վարժապետը, երբ ճանապարհ դրեց նրան իր դպրոցից,— հիմա գնա արհեստ սովորի՛ր, որ քեզ հաց տա»…

Ներկարարի գործարանում Փանոսը նույն հաջողությունը ունեցավ, որպես իր վարժապետի փոքրիկ դպրոցում: Իր ընդարձակ ընդունակությունների համար այստեղ ավելի լայն ասպարեզ գտավ, և մի քանի տարուց հետո աշակերտից դարձավ փոխվարպետ և մի նոր փայլ տվեց իր վարպետի գործարանին: Այդ տեսնելով, վարպետը շատ անգամ առաջարկում էր նրան ընկերանալ իր հետ, բայց Փանոսը միշտ շնորհակալությամբ մերժում էր: Երբ նա փոքր ի շատե գումար ձեռք ձգեց, հիմնեց իր համար մի փոքրիկ գործարան, որը հետզհետե ընդարձակելով, այն կատարելագործությանը հասցրեց, որպես մենք տեսանք:

Միևնույն տարում, երբ Փանոսը թողեց դպրոցը, նրա վարժապետի հետ պատահեց մի դժբախտություն: Նա սովորություն ուներ ամառը աշակերտներին տանել ծովեզրը լողանալու: Այդ միջոցին աշակերտներից մեկը խեղդվեցավ: Նրա ծնողները թեև բոլորովին ներողամտությամբ վերաբերվեցան դեպի անզգույշ վարժապետը, բայց

կորուստը այնքան ծանր էր վարդապետի զգայուն սրտի համար, որ նա ոչնչով չէր կարողանում մխիթարել իրան: Իր ցավերը մոռացության տալու համար նա մտածեց ընտրել մի նոր և ամենադժվարին պարապմունք, որի մեջ կյանքը ենթակա լիներ անընդհատ վտանգների, և որը ավելի բախտավորություն կպատճառեր նրան, եթե կվերջանար մահվամբ: Այդ նպատակով նա ցրեց իր աշակերտներին և անհայտացավ: Նրա մասին շատ բաներ էին պատմում. ասում էին, որ քուրդ վայրենիների մեջ հայոց տառեր և քրիստոնեություն է տարածում, հրաշքներ է գործում, լուսավորչական եկեղեցի է հիմնում և բավական հետևողներ ունի: Բայց թե ո՞րտեղ էր այդ նոր առաքյալը և ո՞ր երկրում,— ոչ ոք չգիտեր, միայն խոսվում էր, թե դեռ կենդանի է:

Գ

ԱՍԼԱՆԸ ՈՐՊԵՍ ԲԺԻՇԿ

Եվրոպական բժշկի հայտնվելը շուտով տարածվեցավ ամբողջ քաղաքում և մինչև նահանգապետ—փաշայի ականջը հասավ: Փաշան ցանկացել էր տեսնել բժշկին: Բացի նրանից, ամեն նշանավոր և աննշան անձինքներից հրավիրվում էր նա, իսկ շատերը նրա մոտ էին գալիս: Ասլանը հանգստություն չուներ. ես նրան խիստ հազիվ անգամ էի տեսնում. պատահում էր, որ ամբողջ օրով տուն չէր վերադառնում: Վերադառնում էր գիշերը միայն, այն ժամանակ ևս, վարպետ Փանոսի հետ առանձնացած, երկար ու երկար խոսում էին: Այդ խորհրդակցությունները խլում էին նրանից գիշերային հանգստի մեծ մասը: Երբեմն նկատում էի՝ նրա մոտ գալիս էին անծանոթ անձինք, տարօրինակ հագուստներով, ինչ-որ լեզուներով խոսում էին, և ստվերի նման անհետանում: Ասլանը ինձ մոտ ոչինչ չէր խոսում, նրա այդ ծածկամտությունը վրդովեցնում էր ինձ. երևի նա դեռևս իմ վրա հավատ չուներ:

Վարպետ Փանոսի տունը շատ նպաստավոր էր Ասլանի համար ամեն տեսակ անձանց հետ տեսնվելու. այնտեղ ով ասեք՝ չէր մտնում, նրա գործարանի առիթով, ամեն օր, շրջակայքից բազմաթիվ մարդիկ էին գալիս ու գնում: Իսկ նրա բժշկությունը ամեն կասկած փարատում էր. բժիշկը ամեն տեսակ անձինք իր մոտ ընդունելու իրավունք ունի: Նրա մոտ գալիս էին հիվանդներ, կամ ձևացած որպես հիվանդներ, խոսում էին իրանց հիվանդությունների մասին: Ա՛խ, որքան բազմատեսակ էին այդ հիվանդությունները,— բարոյական հիվանդություն…մտավորական հիվանդություն… հոգեկան հիվանդություն… երկրի անկարգությունից առաջացած տնտեսական հիվանդություն… բողո՛ք և բողո՛ք ամեն կողմից: Ամեն ոք դեղ ու դարման էր պահանջում: Բայց կարո՞ղ էր Ասլանը և այդ հիվանդությունների բժիշկը լինել: Նրա բժշկարանի մեջ կա՞ր արդյոք մի որևիցե դարման երկրի հասարակական փտությունը և անդամալուծությունը բուժելու համար: Այդ հարցերը վճռելու համար ես այն ժամանակ ոչ բավական գիտություն ունեի և ոչ բավական զարգացում: Բայց իբրև իսկական բժիշկ, Ասլանը, իրավ որ, անգնահատելի էր:

Ասլանի դրությունը ես համեմատում էի մի շրջական կլայեկագործի հետ, որ սովորաբար, մեծ զատիկը մոտենալու ժամանակ, թափառում է գյուղից գյուղ, ժանգոտած, փախրոտած պղնձեղենը մաքրելու և կլայեկով պատելու համար: Գյուղացիները իրանց բոլոր պղնձե ամանները թափում են նրա մոտ, որովհետև գիտեն, որ մի ամբողջ տարի նրա երեսը այլևս տեսնելու չեն:— Այսպես թափում էին բժշկի մոտ քաղաքացիները իրանց հիվանդներին, մտածելով, որ նա երկար չպիտի մնա իրանց մոտ, և շտապում էին նրա ներկայությունից օգուտ քաղել. Ասլանը, որպես գործից անվաստակելի մարդ, չէր խնայում ամենին իր օգնությունը:

Կոկորդիս ցավը բոլորովին անցել էր, մի քանի օրից հետո ինձ այնքան առողջ էի զգում, որ կարող էի տնից դուրս գալ: Բայց դրսում և մանավանդ քաղաքում երևնալու համար պատշաճավոր հագուստ չունեի: Իմ հագուստը դեռ նույնն էր, ինչ որ Մարոն, սուրբ աստվածածնի ուխտագնացության ժամանակ, մի կերպով կարկատեց ինձ համար: Բայց ո՛րքան մեծ եղավ իմ ուրախությունը, երբ իմացա, որ Ասլանը վաղօրոք հոգացել էր այդ մասին, գնելով շուկայից ինձ համար ամենապատվական հագուստներ: Ես իսկույն հագնվեցա, երբ Ասլանը հայտնեց, թե դիտավորություն ունի ինձ իր հետ տանելու: Թեթև նախաճաշիկից հետո Ասլանը վեր առեց իր հետ զանազան տեսակ բժշկական դեղեր ու գործիքներ, մի մասն էլ ինձ տվեց, և մենք դուրս եկանք տնից: Նա ասաց, որ մի քանի հիվանդների այցելություն պիտի գործե: Քաղաքում դեղատուն չլինելու համար, նա ումն որ բժշկում էր, դեղերն էլ ինքն էր տալիս, աղքատներին ձրի, իսկ հարուստներից փող էր ստանում:

— Դու գիտե՞ս քո դերը, Ֆարհատ,— ասաց նա, երբ դուրս եկանք փողոցը:

— Ի՞նչ դեր,— հարցրի ես, բոլորովին մոռացած լինելով այն պատվերները, որ Վան քաղաքը մտնելուց առաջ, ճանապարհին տվել էր ինձ:

— Դու եվրոպացի բժշկի ճանապարհորդության առաջնորդն ես: Հասկացա՞ր:

— Հասկացա,— մեքենայաբար պատասխանեցի ես:

Ի՞նչ առաջնորդ կարող էի լինել ես, երբ ոչ երկրի հետ ծանոթ էի և ոչ լեզուներ գիտեի: Ես, իսկապես, նրա խուլ ստվերն էի, որ անգիտակցաբար գնում էի նրա ետևից:

Ասլանը սիրում էր ոտքով ման գալ, որքան և հեռու լիներ ճանապարհը: Նա հագած ուներ մինչև ծնկները երկայն կոշիկներ, գլխին դրել էր մոխրագույն, լայնեզրյա, փափուկ գլխարկ, իսկ աչքերը զինված էին մուգ-ծխագույն ակնոցներով, որոնք բոլորովին անտեսանելի էին կացուցանում նրա թափանցիկ, խորախորհուրդ աչքերը, որոնք ակնոցների ամենևին պետք չունեին: Թևքի տակ կրում էր իր դեղորայքի պայուսակը, ձեռքին բռնած ուներ մի հաստ փայտ, որ ավելի մահակ էր, քան թե գավազան:

Արևը դեռ նոր էր բարձրացել: Ամառային առավոտը մի առանձին զովություն էր ստացել Այգեստանի այն փողոցների մեջ, որոնք աջ և ձախ կողմից զարդարված էին ահագին ուռենիների և բարդենիների շարքերով: Այդ դարևոր ծառերով հովանավորված էին փոքրիկ առվակները, որոնք հոսում էին փողոցների երկու կողմերից ևս, և ջուր էին մատակարարում թե այգիներին և թե բնակիչների տները շրջապատող պարտեզներին: Նայելով այդ ծառազարդ բնակարաններին, անծանոթ մարդու գլխում իսկույն ծագում է այդ միտքը, թե ո՛րքան ուրախ և խաղաղ ապրում է այստեղ քաղաքացին:

— Հայը ապրել գիտե,— ասում էր Ասլանը,— ստրկության լծի տակ անգամ նա պահպանում է մի տեսակ բարեկեցություն, և դրա մեջն է նրա կենդանությունը, որ դարերի ընթացքում թեև տրորվում է ճնշման ներքո, բայց դարձյալ չէ մեռնում:

Առաջին անգամն էր, որ ես դուրս էի գալիս փողոցը, այդ պատճառով երեխայի նման, ամեն մի հանդիպած առարկան հետաքրքրում էր ինձ: Ես նայում էի, թե ինչպես նորահարսները, երեսները ծածկած կամ հասած աղջիկները բաց երեսներով, վաղ առավոտյան ավելում էին, մաքրում էին իրանց տան առջևը: Նրանք ճարպիկ մատներով նախ գետինը ցողում էին առվակից անցնող ջրով, որ փոշի չբարձրացնեն: Ես տեսնում էի, թե ինչպես հայ վաճառականները, ավանակների վրա հեծած, մի առանձին հոգածությամբ շտապում էին դեպի քաղաքը, իրանց

խանութները բաց անելու: Ես տեսնում էի, թե ինչպես նրանք աջ ու ձախ կողմերից ողջույններ էին ընդունում և, միևնույն ժամանակ, ավանակի վրա նստած, շարունակում էին իրանց չավարտած առավոտյան աղոթքը, որպեսզի բարեհաջող առևտուր ունենան:

— Այստեղ մի հիվանդի պետք է նայել,— ասաց Ասլանը, և մենք մտանք մի տուն:

Տունը, որպես երևում էր, ժամանակով գեղեցիկ շինվածք էր ունեցել, բայց երկար տարիներ մնալով անխնամ և առանց նորոգության, համարյա ավերակ էր դարձել: Մի սենյակ միայն մնացել էր ամբողջ, ուր մենք ներս մտանք: Ես առաջին անգամ տեսնում էի աղքատությունը իր վերին աստիճանի սոսկալի պատկերի մեջ: Խոնավ, առանց սփռոցի գետնի վրա պառկած էր մի մանկահասակ կին. հնոտի, քրքրված վերմակը հազիվ ծածկում էր նրան. բարձի փոխարեն դրած էր գլխի տակին հիվանդի նույնպես քրքրված հագուստը: Նրա մոտ, ձեռքերը հուսահատական կերպով փակած ծնկների վրա, նստած էր պառավ սկեսուրը: Մի կիսամերկ երեխա սողում էր հիվանդի անկողնի մոտ և խուլ մրմնջում էր:

Պառավը տեսնելով մեզ, կանգնեց և լռությամբ գլուխ տվեց: Բժիշկը մոտեցավ հիվանդին:

— Այժմ լավ է,— ասաց նա,— վտանգը անցած պետք է համարել: Դեղերի այլևս պետք չկա. հարկավոր է միայն այստեղ մաքուր պահել, թարմ օդ և լույս ներս թող տալ, և ամենագլխավորը՝ հիվանդին պետք է լավ սնունդ:

— Սնո՞ւնդ…— կրկնեց պառավը, հոգվոց հանելով,— որտեղի՞ց գտնել: Կար ժամանակ, որ այս տունը լի էր աստուծո ամեն բարիքներով. հարյուրավոր աղքատները ապրում էին մեր հացով, իսկ ա՛յժմ… ձեր բարի աչքով տեսնում եք… ի՞նչ է մնացել… բոլորը ոչնչացավ… բոլորը կորավ…

Արտասուքը խեղդեց նրան և չկարողացավ շարունակել:

Ասլանը դրեց պառավի ափի մեջ մի քանի ոսկի և կամենում էր դուրս գալ: Բայց նա չընդունեց, ասելով.

— Դուք մի քանի անգամ այցելություն գործեցիք իմ հիվանդին, այդքանը բավական է: Ես ձեզ վճարել չեմ կարող, բայց աղոթել ձեզ համար կարող եմ:

Երևում էր, որ պառավը աղքատության մեջ ևս պահպանել էր տոհմային հպարտությունը: Բայց Ասլանը դարձյալ աշխատում էր համոզել, որ ընդունե ոսկիները:

— Ի՞նչ պետք է անեմ,— պատասխանեց պառավը փոքր-ինչ հուզված ձայնով:— Դուք, պատվելի պարոն, կարծում եք, որ ես կարո՞ղ եմ այդ ոսկիները մեկին ցույց տալ, կարո՞ղ եմ դրանցով մի բան գնել:

— Ինչո՞ւ չեք կարող,— հարցրեց Ասլանը զարմանալով:

— Չեմ կարող…— կրկնեց պառավը տխուր ձայնով:— Երբ որ պարտատերերը իմ ձեռքում փող տեսնեն, իսկույն կմտածեն, որ ես պանդուխտներիցս փող եմ ստացել, և բոլորը կխլեն իմ ձեռքից: Այդ բավական չէ, նրանք գանգատ կանեն, կնեղացնեն ինձ, կասեն շատ ես ստացել, բեր մնացածն էլ տուր:

Ասլանը, կարծես թե, հետաքրքրվեցավ պառավի տխուր խոսքերով, որոնեց մի տեղ նստելու համար, երբ ոչինչ չգտավ, նստեց մի կողմում ընկած կոտրած սնդուկի վրա:

— Քանի՞ պանդուխտներ ունես օտարության մեջ,— հարցրեց պառավից:

— Հինգ որդի: Երկուսը Ստամբոլում չգիտեմ ի՞նչ են անում, իսկ մնացածների մասին ձայն չկա, թե որտեղ են: Ծերունի հայրը գնաց որոնելու կորած որդիներին, ինքն էլ կորավ…

Պառավի կարոտ աչքերը կրկին լցվեցան արտասուքով: Ես խիստ ցավակցությամբ էի լսում նրա խոսքերը, և միևնույն ժամանակ հիշում էի և իմ կորած հորը… հիշում էի և իմ վշտալի մորը… հիշում էի որբ մնացած քույրերիս… հիշում էի և մեր ավերակ խրճիթը… որտեղից արտաքսեց մեզ վաշխառու պարտատերը… «Ի՞նչ է այդ… մտածում էի ես,— մի՞թե միշտ այդպես պետք է մնա հայի վիճակը… մի՞թե նա, միշտ պանդուխտության մեջ պիտի տրորվի, մաշվի, մեռնի, արժանի չլինելով հայրենի հողին… մի՞թե մի ճակատագրական անեծք հալածում է նրան հայրենի երկրից»…

Պառավը, իր արտասուքը սրբելով, շարունակեց.

— Այդ տունը լիքն էր երեխաներով… լիքն էր մայրերով ու հայրերով… հիմա տեսնում եք, մնացել է մի հիվանդ միայն և այս փոքրիկը,— նա ցույց տվեց կիսամերկ տղային, որ այժմ խլրտվում էր մոր բարձի մոտ:— Ամենքը ոչնչացան… ամենքը կորան… նրա համար, որ աղքատությունը մահվան հետ միասին է մտնում մարդու շեմքից:

Երեխան այժմ հեռացավ մոր անկողնից, սողալով մոտեցավ Ասլանին, բռնեց կոշիկներից, կանգնեց և իր փոքրիկ ձեռիկներով սկսեց խաղալ նրա ժամացույցի շղթայի հետ: Ես միշտ երևակայում էի Ասլանի մեջ քարե սիրտ, բայց նա չկարողացավ դիմանալ, երբ երեխան իր սև փայլուն աչիկներով նայելով նրա երեսին, ժպտաց և թոթովեց մի քանի խոսքեր: Դժբախտության զավակը խոսում էր… խոսում էր ավելի ազդու, քան ամեն բողոք… և կարծես, իր անհասանելի թոթովանքով ասում լիներ. «Ինչո՞վ եմ ես մեղավոր, որ ինձ աշխարհ բերեցին… մի՞թե միայն տանջվելու համար»…

Ասլանը համբուրեց երեխային, վեր կացավ և, ձգելով հիվանդի բարձի մոտ ոսկիները, իսկույն դուրս եկավ թախծալի բնակարանից:

— «Աղքատությունը մահվան հետ միասին է մտնում մարդուս շեմքից»…— ճանապարհին կրկնեց նա պառավի իմաստալի խոսքերը:— Դա մի անհերքելի ճշմարտություն է: Որտեղ տիրում է թշվառությունը, այնտեղ ավելի մեծ թվով զոհեր է տանում մահացությունը: Ոչ մի ժողովրդի մեջ չէ կարելի հուսալ կանոնավոր աճելություն, երբ որ նրա տնտեսական դրությունը օրինավոր պայմանների մեջ չէ դրված: Այդտեղից հասկանալի է, թե ինչո՞ւ մեր ժողովուրդը օրըստօրե սպառվում է: Այդ սպառմանը ավելի զարկ է տալիս գաղթականությունը: Տղամարդը, իր կյանքի ամենաթարմ տարիները պանդխտության մեջ մաշելով, զրկվում է գերդաստանի հայր դառնալուց, որդիք և սերունդ առաջ բերելուց: Իսկ ինչ զավակներ էլ որ թողել է տանը, աղքատության մեջ մեռնում են: Ահա, մեր աչքով տեսանք մի հոյակապ ընտանիք, որ հանգչելու մոտ է: Բայց քանի հազար այսպիսի ընտանիքներ կան այդ քաղաքում: Այդ գեղեցիկ, ծառազարդ տներում,— նա ձեռքը մեկնեց դեպի Այգեստանի տները,— բնակվում են երկու ծայրահեղություններ. ճոխություն, շռայլություն և վերին աստիճանի աղքատություն: Շռայլում են հարստահարիչ մեծատունները, իսկ հեծում են պարտքերի տակ ճնշված թշվառները…

Այդպես խոսելով գնում էինք մենք, երբ ճանապարհին հանդիպեց մեզ վարպետ Փանոսը:

— Այն հիվանդը կապրի՞,— հարցրեց նա, մոտենալով Ասլանին:

— Կապրի, եթե ուտելու մի բան ունենա,— պատասխանեց Ասլանը վրդովված ձայնով:

— Այդ մասին ես հոգացել եմ…— ասաց վարպետը հազիվ լսելի ձայնով:

Նրա խոսքը ընդհատեց մի կարճահասակ մարդ, համարյա ցնցոտիներով հագնված, ողորմելի և երկչոտ կերպարանքով, որ այդ միջոցին անցավ մեր մոտով: Վարպետը հարգանքով ողջունեց նրան և, երբ բավական հեռացավ նա, ասաց մեզ.

— Դա մեր թաղի ամենահարուստ մարդն է:

— Դա՞, այդ մուրացկա՞նը,— հարցրեց Ասլանը զարմանքով:

— Այո՛, այդ մուրացկանի նման մարդը:

— Ապա ինչո՞ւ է այնպես հագնված, կարծես բոլորովին աղքատ լինի:

Վարպետը մի առանձին տխրությամբ պատասխանեց.

— Այստեղ աղքատը խո աղքատ է, իսկ հարուստն էլ ստիպված է աղքատ ձևանալ, որովհետև նրա հարստությանը միշտ սպասում է մի վտանգ: Տեսար մի օր թուրքերը մի «շառ ու շուռ» հնարեցին և ինչ որ ունի, ձեռքիցը խլեցին:

— Ի՞նչպես կարելի է այդ,— հարցրի ես ոչ սակավ զարմանալով:

— Ինչո՞ւ չէ կարելի, երբ իրավունքն էլ թշնամու ձեռքումն է, դատաստանն էլ: Հենց այդ ընտանիքը, որի թշվառությունը մի քանի րոպե առաջ տեսաք, թող ձեզ օրինակ լինի: Դա մեր քաղաքի ամենահարուստ և ամենապատվական ընտանիքներից մեկն էր: Մի առավոտ տանեցիք վեր են կենում և սարսափելով տեսնում են իրանց բակումը ընկած մի թուրքի դիակ: Խեղճերին զրպարտեցին սպանության մեջ և այնքան ժամանակ բանտերում մաշեցին, մինչև ամեն հյութ ծծեցին նրանցից, և այն ժամանակ միայն բաց թողին, երբ տեսան, որ Ադամից ավելի մերկ են և Եվայից ավելի բոբիկ:

— Բայց միշտ այդպիսի զրպարտություններ չէ կարելի հնարել,— պատասխանեցի ես:

— Եթե այդպիսին չէ կարելի, դրա նմանները միշտ կարելի է: Մեկին կզրպարտեն, ասելով, թե մահմեդականի հավատն է հայհոյել, մյուսին թե՝ մահմեդականի կնոջը ծուռն աչքով է նայել, երրորդին՝ թե իր տնում զենք և վառոդ է պահել, չորրորդին՝ թե քաղաքադռնից ձիով է ներս մտել և այլն:

Վարպետի վերջին խոսքը դարձրեց իմ ուշադրությունը այն երևույթի վրա, որ նկատեցի առավոտյան. բոլոր հայերը էշով էին գնում բազար, ձի հեծնելը նրանց արգելված էր: Այս սովորությանը կար և Պարսկաստանում, ազնիվ անասունը՝ ձին, մահմեդականի համար էր, իսկ ստոր անասունը՝ ավանակը, քրիստոնյայի համար:

Մենք մտանք մի խուլ փողոց, Վարպետը շարունակեց.

— Այսպիսի և դրա նման վտանգները պատահում են, որպես ասացի, հարուստներին, և այդ է պատճառը, որ հարուստները աշխատում են իրանց կայքը թաքցնել և, որքան կարելի է, աղքատ ձևանալ: Բայց այդ չէ օգնում նրանց: Այդ դեպքերում մահմեդականները ավելի վարպետ են, քան թե մեր հարուստները: Բավական է, որ մեկի համար լսում են, թե նա փող ունի, թեև նա իր փողը ամեն կերպով թաքցնում է, բայց դուրս են բերում: Ինչպես աղվեսն էլ իր որջը մտած

ժամանակ չէ երևում, բայց երբ որսորդները նրա ծակի առաջ մուխ են դնում, խեղճ անասունը ինքն իրան դուրս է գալիս: Փաշայի դուռը շրջապատել են մի ամբողջ խումբ որսորդներ, որոնք այսպիսի որոգայթներ են լարում: Դրանք այնպիսի ճարպիկներ են, որ սատանան պետք է նրանցից դաս առնե:

Իմ նոր հագուստից հետո ես այժմ սկսել էի խոսակցության մեջ խառնվիլ: Ես ինձ «մարդու տեղ էի դնում»…

— Ուրեմն ոչ ոքի կայքը այստեղ ապահովված չէ՞,— հարցրի ես վարպետից:

— Ոչ միայն կայքը, այլև նրա կյանքը, պատիվը և ամեն ինչ: Եվ այդ է պատճառը, որ հայերը այստեղ նույն միջոցներին են դիմում, ինչ որ անում էին մի ժամանակ Տաճկաստանի զանազան քաղաքների հայերը ենիչարիների դարերում: Ամեն մի ընտանիք ընտրել էր մի ենիչարի, որի պաշտպանության տակն էր մտած, որը պահպանում էր իրան ապավինած ընտանիքը մյուս ենիչարիների գազանությունից, ասելով— «դրան մի դիպեք, դա իմ գավուրն է»… Բայց այդ պաշտպանությունը շատ թանկ էր նստում ողորմելի ընտանիքին. նա դառնում էր իր պաշտպանի գերին, ստրուկը, նրա բոլոր հաճույքների կամակատարը: Նրա կայքը, մինչև անգամ ընտանիքի պատիվը զոհվում էր իր պաշտպանի անբարոյական կրքերին… Դա մի այնպիսի հովանավորություն էր, որպես մի գայլ պաշտպանում է իր որսը մյուս գազանների հափշտակությունից, որպեսզի ինքը միայնակ վայելե: Այժմ այստեղ միևնույն բարբարոսություններն են կատարվում: Շատ ընտանիքներ ստիպված են մտնել այս և այն նշանակություն ունեցող թուրքի կամ քրդի հովանավորության ներքո, որոնք նույն անգթությամբ են վարվում իրանց պաշտպանյալի հետ, որպես հին ժամանակների ենիչարին:

Ասլանը լռությամբ լսում էր, երևում էր, ոչ այնքան հետաքրքրվելով: Կարծես նա այդ բոլորը գիտեր, և գիտեր ավելի լավ, քան թե վարպետ Փանոսը: Բայց իմ վրդովմունքը չափ չուներ. «այդ ինչ դրություն է, մտածում էի ես, ավելի լավ չէ՞ր լինի, որ մարդիկ ամենևին գոյություն չունենային, քան թե այդպիսի անպատիվ կյանքով ապրեին»:

Մենք շարունակում էինք գնալ երկար, ծառազարդ փողոցներով: Վարպետ Փանոսը ավելացրեց.

— Ահա այդ գիշակեր խնամակալներն են, որոնք պարտքով փող են տալիս իրանց «գավուրներին», երբ նրանք օտար երկիրներ են գնում բախտ որոնելու, և ավելի շուտ են ճանապարհ դնում նրանց, երբ նրանց ընտանիքի մեջ կար մի սիրուն կին կամ գեղեցիկ աղջիկ: Գաղթականը ճանապարհի ծախքի կարոտ է, բացի դրանից նա պետք է շատ ու քիչ փող թողնե իր տան ապրուստի համար,— այդ բոլորը նա պարտքով վեր է առնում իր խնամակալից: Նրա պարտքը սկզբում մի քանի հարյուր ղուրուշ է լինում, բայց այդ մի քանի հարյուրը տարիների ընթացքում աճում է, բազմանում է և շատ հազարներ է դառնում: Այնուհետև պարտքից ազատվելու հնար չկա: Պարտքի արմատը միշտ մնում է միևնույնը, հատուցվում է տոկոսը միայն: Իսկ այդ անիծյալ տոկոսը վթարելու համար պետք են մի քանի ուժեղ տղամարդիկ, որ, Կ. Պոլսի մաքսատներում կամ քարվանասարաներում համալություն անեին: Ամբողջ Վանի մեջ չկա մի ընտանիք, որի մի քանի անդամները պանդխտության մեջ չլինեին: Առաջ գնում էին միայն տղամարդիկը, իսկ այժմ կանայք նույնպես սկսել են օտար երկրներում բախտ որոնել: Վանեցի կինը, որ իր տան ծածկի տակից չէր դուրս գալիս, որ նրա երեսը մի ուրիշ մարդ չտեսնե, այժմ պանդխտության մեջ վատնում է իր ավանդական համեստությունը…

Ասլանը ընդհատեց վարպետի տխուր պատմությունը, հարցնելով.

— Կարծեմ այստեղի հայերից և՛ կան այնպիսիները, որոնք մահմեդական խնամակալների պաշտոն են կատարում…

— Կան, և նրանց թիվը սակավ չէ: Այդ անիրավները անունով միայն հայ են, իսկ գործով կատարյալ ենիչարի…

— Բայց ի՞նչպես է, որ նրանք չեն թաքցնում իրանց հարստությունը և փառավոր կերպով ապրում են:

— Նրանք էլ ունեն իրանց պաշտպանները, ավելի բարձրաստիճան անձիքներից, որոնց հովանավորությունը վայելելով, տկարներին խեղդում են, իսկ հզորներին տուրք են վճարում…

Մենք անցանք մի եկեղեցու դռնից, որտեղ մինը մյուսի ետևից մտնում էին և դուրս էին գալիս երեխաներ, գրքերը թևքերի տակ առած:

— Երևի այստեղ դպրոց կա,— հարցրեց Ասլանը,— աշակերտներ են ման գալիս:

— Կա,— պատասխանեց վարպետ Փանոսը,— մեր քաղաքի առաջնակարգ դպրոցներից մեկն է. եթե ժամանակ ունեք, մտնենք, դուք գաղափար կստանաք մեր նոր սերունդի մտավոր զարգացման մասին:

Մտանք վարժարանը, որ գտնվում էր եկեղեցու բակումը: Իմ առջև իսկույն նկարվեցավ տեր Թոդիկի դպրոցը իր բոլոր այլանդակությամբ: Աշակերտները այստեղ և՛ ածած էին մի դասատան մեջ և խառն կերպով նստած էին հասիրների (փսիաթ) վրա: Բոլորը միասին կարդում էին, ամեն մեկից մի տեսակ ձայն էր լսվում, որովհետև որքան աշակերտներ կային, այնքան զանազան գրքեր կային նրանց ձեռքում: Ամեն մեկի տանը, եթե պապերից մնացած մի գիրք էր գտնվել, հայրը տվել էր որդու ձեռքը, ասելով— «տար վարժապետիդ ասա, որ դրա վրա կարդացնե»… թող այն գիրքը Սաղմոս լիներ, Ժամագիրք լիներ, Կիպրիանոս լիներ, Պղնձե քաղաք լիներ, հին բժշկարան կամ երազահան լիներ,— միևնույն է, բավական է, որ գիրք էր: Զանազանությունը այս վարժարանի և տեր Թոդիկի դպրոցի այն էր միայն, որ ես առաջին անգամ այստեղ լսեցի մի քանի գրքերի անուններ, որպիսիք էին քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն և այլն: Այդ գրքերը գրավարժության համար, որպես ընթերցանության գրքեր, կարդում էին նույն եղանակով, ինչպես կարդում էին Ավետարանը: Երևում էր, որ վերջին գրքերը ունեցող աշակերտների տանը ուրիշ գրքեր չէին գտնվել, որ ավելի հարմարը տային նրանց ձեռքը:

Վարժապետին կոչում էին Սիմոն պատվելի, նա մի ժամանակ Կ. Պոլսում սափրիչ էր եղել, և բավականին հաստլիկ ու մսուտ մարդ էր, որպես սովորաբար լինում են սափրիչները: Նրա դեմքը, անկանոն խմելուց, ստացել էր մի տեսակ լրջագույն-կարմրություն, որի նմանը կարելի է տեսնել հնդկահավի գլխի վրա, իսկ երեսի կաշին հաստանալով, բոլորովին կորցրել էր իր կոկությունը և նարնջի կեղևի նմանություն էր ստացել: Քթի վրա, որը իր մեծությամբ ընդարձակ տեղ էր բռնում, երևում էին կասկածավոր կարմիր բծեր: Այսպիսի դեմքեր շատ ընդունակ են կեղծավորվելու, թեև քսությունը ավելի չէ հարմարվում նրանց: Նրա հագուստը մի ծիծաղելի խառնուրդ էր եվրոպականից և՛ ասիականից: Գլխին դրած ուներ տաճկի կարմիր ֆես, որի վրա քրդի ձևով փաթաթել էր երկու «յազմա» կոչված թաշկինակներ. հագել էր վանեցու երկայն անթարի, կողքից ճղած լայն դրոշակներով, որի վրա հագել էր մի մուգ-դեղնագույն եվրոպական կարճ պալտո: Կարճ պալտոն և՛ երկայն անթարին վերևից պնդած էին շալե հաստ գոտիով, որը մի քանի փաթոթներով պատած էր նրա մեջքին: Նրա նեղ պանտալոնը հազիվ իջնում էր ծնկներից մի փոքր ցած: Սրունքները բաց էին մնացած: Երևում էր, որ այդ ողորմելի պանտալոնը նա գնել էր

հնոտիների բազարից, այդ պատճառով նրա համար չափազանց կարճ էր: Դասատան մեջ նա հագած ուներ մի տեսակ հողաթափներ, որոնք երեք մատի հաստությամբ փայտյա տակեր ունեին, և շարժվելու ժամանակ այդ տախտակները խիստ օտարոտի ձայներ էին հանում աղյուսով պատած հատակի վրա: Միակ առարկան, որ ցույց էր տալիս, թե նա գրի ու կարդալու մարդ է, էր նրա ահագին թանաքամանը, որ փորի վրա խրած ուներ գոտիի մեջ: Այդ ինքնուրույն թանաքամանը կազմված էր պղնձե երկայն քառանկյունի փողից, որի մի ծայրի կողքին ամրացրած էր բուն թանաքամանը, թրաշած բաժակի ձևով: Նրա մեջ թանաք էր ածած և սև աբրեշումի թելեր էր դրած, որպեսզի թելերը հեղուկ թանաքը իրանց մեջ ծծեին, որ չվիթվեր: Քառանկյունի փողի մեջ ամեն բան կար, այնտեղ կար և զմելի, և գրիչ. այնտեղ կար մի մաղաշ, որով պատվելին իր քթից մազեր էր դուրս հանում, այնտեղ կար և մի ականջափորիկ թեյի փոքրիկ գդալի չափով, որով և թանաքամանի մեջ ջուր էր ածում ցամաքելու ժամանակ, և ականջների կեղտն էր դուրս տալիս, երբ բավական լցվում էին,— այնտեղ կար և մի ածելի, որով պատվելին երեսը ածիլում էր: Պատվելիի այդ գրական պարագայքը լրացնում էին և մի քանի այլ առարկաներ, որ նույնպես քարշ էին ընկած նրա գոտիից. դրանցից մեկն էր նրա կարճ ծխաքարշը փայտյա կոթով, երկրորդը, գույնզգույն ճոթերից կարված մի մեծ քսակ էր, որի մեջ ծխախոտ էր ածած, իսկ երրորդը, երկաթյա մի փոքրիկ ունելի էր, որով ծխաքարշի վրա կրակ էր դնում, երբ պետք էր վառել նրան, իսկ հարկավոր ժամանակ նրանով բռնում էր աշակերտների քթից և հուփ էր տալիս…

Տեսնելով մեզ, Սիմոն պատվելիի առաջին հոգսը եղավ հանգստացնել իր աշակերտներին «սո՛ւս», «սո՛ւս» գոչելով, ճիպոտը ձեռքին, նա սկսեց վազ տալ դասատան այս կողմը, այն կողմը, մի քանի պտույտներ գործեց, մի քանի հայհոյանքներ տվեց, աշակերտներից մեկի մազերից բռնելով, նստեցրեց իր տեղը, մյուսի ականջները ձգձգեց և, վերջապես, նրան հաջողվեցավ կարգը վերականգնել: Բոլոր աշակերտները լռեցին և յուրաքանչյուրը յուր տեղում անշարժ նստած մնաց: Այդ գործողությունը թեև փոշու թանձր մառախուղ բարձրացրեց, առանց դրան ևս լույսից զրկված դասատան մեջ, բայց այդ մթության միջից դարձյալ կարելի էր տեսնել, թե ինչպես աշակերտները երկչոտ կերպով, ապուշ-ապուշ նայում էին մեզ վրա:

Հետո պատվելին ընդառաջ եկավ, ընդունեց մեզ, որպես մի մարդ, որ իր տանը հյուր էր ընդունում, այդ խոսքերով.

— Բարով եք եկել, հազար բարով, իմ աչքի վրա, իմ գլխի վրա…

Հայտնի չէ, թե այլևս նրա որտեղի վրա պետք է լիներ մեր ընդունելությունը, որովհետև աշակերտներից մեկը այդ միջոցին փռթկաց և պատվելիի ճառը ընդհատվեցավ: Նա երեսը շուռ տվեց դեպի եղեռնագործը և ձեռքով սպառնալով մրթմրթաց— «սպասի՛ր, գարշելի»…

— Ի՞նչ են սովորում այստեղ,— հարցրեց Ասլանը:

— Ամեն բան սովորում են, պարոն,— պատասխանեց պատվելին, աջ ձեռքի ցուցամատով աջ կողմի պնչածակը քչփորելով,— ինչ որ կամենում եք, հարցրեք, բլբուլի պես պատասխան կտան:

— Այդ լավ է,— ասաց Ասլանը ժպտալով:

— Տեսնո՞ւմ եք այդ փոքրիկին, պարոն,— նա ցույց տվեց մի ութ տարեկան երեխա,— կարող է ամբողջ «Հայր-մերը» թարսա ասել:

— Ի՞նչպես թարսա ասել:

— Այնպես… այսինքն… զոր օրինակ… տակից դեպի վեր… այնպես ասել,— պատասխանեց պատվելին կակազելով:

— Երևի դրանում մի առանձին միտք կա, որ դուք «Հայր-մերը» թարսա եք սովորեցնում,— հարցրեց Ասլանը լուրջ կերպով:

— Ինչպես չէ, պարոն, այո՛, առանձին միտք կա, պարոն,— կրկնեց պատվելին վարդապետական եղանակով:— Երբ «Հայր-մերը» թարսա են կարդում, Հիսուս Քրիստոսի շնորհքով, սատանան իր պոչի վրա մեխվում է գետնին, էլ չէ շարժվում տեղից: Դա փորձված է, շատ անգամ փորձված է, պարոն:

Ասլանը դարձավ դեպի փոքրիկ աշակերտը:

— Դե՛, իմ քաջ, տեսնենք՝ ինչպես ես սատանային պոչի վրա կանգնեցնում:

Փոքրիկ աշակերտը վեր կացավ նստած տեղից, երկու ձեռքերը միմյանց վրա կպցրեց կուրծքին, երկու անգամ հազաց և անմեղ աչքերը պլշացնելով, կարդաց «ամեն հավիտյանս փառք և զորություն և արքայություն է քո զի»…

— Բավական է,— ընդհատեց Ասլանը,— այս անգամ սատանային հանգիստ թողեցեք:

Երևի պատվելին գոհ մնաց այդ հարցաքննությամբ, նա ցույց տվեց մի այլ աշակերտ, ասելով.

— Տեսնո՞ւմ եք, պարոն, այդ փոքրիկին, այնպես լավ սերտել է «Հավատամք»-ը, որ գիտե՝ նրա մեջ քանի այբ կա, քանի բեն կա, մի խոսքով բոլոր տառերը գիտե, պարոն, և բլբուլի պես պատասխան կտա:

— Երևի դուք թվաբանությունը այդ եղանակով եք սովորեցնում,— նկատեց Ասլանը:

— Ոչ, պարոն,— ասաց պատվելին խորհրդավոր ձայնով և միևնույն ժամանակ մի թթու ժպիտ երևաց նրա թոշնած դեմքի վրա:— Այստեղ ուրիշ իմաստություն կա…

Ես իսկույն հիշեցի, թե ինչպես տեր Թոդիկը ստիպում էր մեզ սովորել, թե քանի անգամ կրկնվում է աստուծո անունը «Շնորհյա»-ի մեջ, և միշտ խոստանում էր բացատրել մեզ մի խորհրդավոր գաղտնիք, որ թաքնված էր այդ կրկնությունների մեջ: Բայց նա ոչինչ չբացատրեց մեզ: Այսպես էլ Սիմոն պատվելին մեզ չասաց, թե, ինչ «իմաստություն» կար «Հավատամք»-ի այբուբենի թվերի մեջ:

Այնուհետև պատվելին առաջարկեց իր աշակերտներին զանազան այսպիսի հարցեր:

— Պետրոս, այն ո՞վ էր, որ երկու անգամ ծնվեց, մի անգամ մեռավ:

— Հովնան մարգարեն, վարժապետ:

— Թորո՛ս, այն ո՞ր անասունն էր, որ մարդու լեզվով խոսեց և հրեշտակի ձեռքով սուր քաշեց:

— Բաղաամի էշը, վարժապետ:

— Մարտիրո՛ս, այն ո՞ր թռչունն էր, որին անիծեց Սողոմոն իմաստունը:

— Ճնճղուկը, վարժապետ:

— Ստեփա՛ն, այն ի՞նչ պտուղ էր, որ Ադամը կերավ, մերկացավ, Եվան կերավ, խենթացավ:

— Թուզը, վարժապետ:

— Տեսնո՞ւմ եք, պարոն,— պատվելին դարձավ դեպի Ասլանը,— ինչպես բլբուլի պես պատասխան են տալիս:— Այդ միջոցին թթու ժպիտը դարձյալ հայտնվեցավ նրա դեմքի վրա և կարմիր աչքերի կարմիր կոպերը խիստ ծիծաղելի անկյուններ կազմեցին:— Իմ աշակերտները ամբողջ աշխարհում գովված են, պարոն, այդ քաղաքի մեջ իմ աշակերտները առաջիններն են համարվում, պարոն, ոչ տերտեր կարող է նրանց հետ խոսել և ոչ վարդապետ. այնպիսի հարց կտան, որ կապված կմնան: Նորին սրբազնությունը հիացած է իմ աշակերտներով, ամիս չի անցնի, նորին սրբազնությունը ոտքը ներս չդնե իմ դպրոցի շեմքից: Ահա այդ թանաքամանը նորին սրբազնությունն է ընծայել ինձ, պարոն:

Վերջին խոսքերով պատվելին կամեցավ ուշադրություն դարձնել իր թանաքամանի վրա, այդ պատճառով ձեռքը տարավ դեպի ուռած փորը:

— Այլևս ի՞նչ են սովորում,— հարցրեց Ասլանը:

— Մինչև ճաշ ուսում են ստանում, սովորում են գրել, կարդալ և զանազան իմաստություններ, իսկ ճաշից հետո սովորում են քաղաքավարություն, մարդավարություն,— այդպիսի բաներ:

Այս անգամ պատվելին, որ բոլոր խոսակցության ժամանակ մոռացել էր իր կարմիր քիթը, ձախ ձեռքի ցուցամատը տարավ դեպի ձախ կողմի պնչածակը և սկսեց քչփորել, կարծես այնտեղ մի բան նեղացնում էր նրան: Հետո, կամենալով քաղաքավարության մի քանի օրինակներ ցույց տալ, դիմեց աշակերտներից մեկին, ասելով.

— Ապա՛, Օհանիկ, պարոնին մեկ պատիվ տուր:

Աշակերտների միջից դուրս եկավ մի թզաչափ երեխա, կանգնեց Ասլանի առջև, և երկու ձեռքերը դնելով միմյանց վրա, փոքրիկ ափերը բաց արեց, մեկնեց դեպի Ասլանը: Բայց Ասլանը չգիտեր ի՞նչ անել: Պատվելին ժպտելով նկատեց, որ ձեռքը դնե աշակերտի ափի մեջ: Ասլանը կատարեց նրա պատվերը: Փոքրիկ Օհանիկը, նրա աջը երկու ափերի մեջ բռնած, նախ տարավ դեպի շրթունքը, համբուրեց, հետո տարավ դեպի ճակատը, դրեց գլխի վրա:

— Ապա՛, Ավագ, պարոնին գլուխ տո՛ւր,— պատվելին դարձավ դեպի մի այլ աշակերտ:

Բայց Ասլանը թույլ չտվեց, ասելով, որ չանհանգստացնե աշակերտներին: Այսպես, պատվելին աշխատում էր ցույց տալ իր սանիկների բոլոր մտավոր և բարոյական կարողությունը, որոնք նրա կարծիքով, օրինակելի էին ամբողջ քաղաքում: Նա խնդրեց, որ աշակերտները զանազան տաղեր երգեին, ավելացնելով, որ բոլոր տաղերը գիտեն՝ «վարդի ու բուլբուլի» տաղը, գինու տաղը, մեջլիսի տաղերը, մի խոսքով, բոլորը գիտեն:

— Հայոց պատմություն սովորո՞ւմ են,— հարցրեց Ասլանը:

— Ի՞նչ պետք է հայոց պատմությունը,— պատասխանեց պատվելին իր սովորական ժպիտով,— հայոց թագավորները բոլորն էլ կռապաշտ էին:

Ասլանը ոչինչ չպատասխանեց: Պատվելին, հավատացած լինելով, որ իր այցելուն շատ գոհ մնաց իր դպրոցից, վստահություն ունեցավ հարցնելու:

— Պարոն, կարծեմ դուք բժիշկ եք:

— Այո՛, բժիշկ եմ:

— Այդ իմ քիթը… մի խոսքով… շատ է նեղացնում ինձ…— Նա այժմ աջ ձեռքի ցուցամատը կոխեց աջ կողմի պնչածակի մեջ սկսեց քչփորել:

Ասլանը նայեց նրա երեսին և ասաց.

— Քի՛չ օղի խմեցեք և կլավանա ձեր քիթը:

Մենք դուրս եկանք դասատնից: Այդ ժամանակ միայն նկատեցինք դասատան դռան մի կողմում երկու պատժված աշակերտներ: Երկուսն էլ մերկ ծնկներով չոքեցրած էին մանր, սրածայր խիճերի վրա, երկուսն էլ ձեռքերով վեր էին բարձրացրել մի-մի հատ ամբողջ աղյուս: Մի այլ աշակերտ, ճիպոտը ձեռին, կանգնած էր սրանց մոտ, հսկում էր, որ դատապարտյալները իրանց դիրքը չփոխեն:

— Ինչո՞վ են հանցավոր այդ ողորմելիները,— հարցրեց Ասլանը մոտենալով նրանց:

— Ես, պարոն, պատվիրել եմ իմ աշակերտներին, որ դրսում ոչ ոքի հետ չխոսեն, մինչև անգամ իրանց ծնողների հետ չխոսեն, միշտ լուռ ու մունջ լինեն (լռությունը ամենագլխավոր պայմանն է համեստության): Իսկ այդ գարշելիները չեն պահպանել իմ պատվերը:

— Դուք ի՞նչպես իմացաք, որ չեն պահպանել:

Սովորական ժպիտը դարձյալ երևաց պատվելիի դեմքի վրա, և այս անգամ նրա կարմիր աչքերը բոլորովին անհայտացան հաստ կոպերի տակ: Երեսի վրա որքան կնճիռներ կային հավաքվեցան աչքերի շուրջը և նրանց ծածկեցին իրանց կոհակների ներքո:

— Ես, պարոն, ամեն բան գիտեմ և ամեն բան կարող եմ իմանալ,— պատասխանեց նա մի առանձին պարծենկոտությամբ:— Իմ աշակերտներից որի վրա կասկած ունեմ, թե նա չէ պահել իմ պատվերը, բերանը չափում եմ, իսկույն իմանում եմ, արդյոք նա դրսում խոսացե՞լ է, թե ոչ:

— Երևի, եթե խոսեցած լինի, բերանը կմեծանա:

— Այո՛, կմեծանա, իհարկե, կմեծանա, պարոն:

Ասլանը այս անգամ չկարողացավ զսպել իր ծիծաղը: Պատվելին կարծելով, թե յուր գյուտը զարմացրեց նրան, ավելի խրախուսյս ստացավ, և դառնալով դեպի վարպետ Փանոսը, որ բոլոր ժամանակը լուռ էր, հարցրեց.

— Դուք վկայեցեք, վարպետ, թե ի՞նչպես են իմ աշակերտները, ամբողջ քաղաքում նրանց հատը կա՞:

— Իհարկե, չկա…— պատասխանեց վարպետը ծաղրական եղանակով:— Այսպիսի աշակերտներ միայն դուք կարող եք կրթել:

Պատվելին նրա խոսքերը ճշմարտի տեղ ընդունեց:

Մենք հեռացանք Սիմոն պատվելիի դպրոցից, տանելով մեզ հետ խիստ տխուր զգացմունքներ:

Տեր Թոդիկի դպրոցում հազար ու մեկ խստություններ, հազար ու մեկ կանոններ կային, բայց այդ բանը չկար, որ աշակերտների բերանը չափելով իմանային, թե արդյոք նրանք դրսում խոսո՞ւմ են, թե ոչ:

Երբ դուրս եկանք փողոցը, վարպետ Փանոսը ասաց Ասլանին:

— Եթե գիտենայիք, թե ո՛րքան աշխատել եմ, ո՛րքան չարչարվել եմ ես, որ մի կերպով այդ անպիտանին հեռացնեմ այդ դպրոցից, բայց հնար չի եղել:

— Ինչո՞ւ,— հարցրեց Ասլանը:

— Նա մի քանի հզոր պաշտպաններ ունի, ինչպես նահանգապետ փաշան և սրբազան առաջնորդը:

— Այդ գարշելի արարածի մեջ ի՞նչ են գտել, որ պաշտպանում են նրան:

— Հենց այն, որ նա գարշելի է: Չեք կարող երևակայել մի մարդ, որ դրա չափ բարոյապես փչացած և կեղտոտ լիներ: Կատարյալ եղեռնագործ է այդ անպիտանը: Նրան խեղդել պետք է, և ավելի ոչինչ: Գիտե՞ք, շատ երեկոներ նա ընտրում է իր աշակերտներից մի քանիսը և տանում է փաշայի մոտ. այնտեղ մնում են ամբողջ գիշերը, երգում են, պար են գալիս և զվարճացնում են փաշային…

— Լա՛վ բարոյականություն կսովորեն…— ասաց Ասլանը խորին զզվանքով:

— Փաշան առաջ չգիտեր, թե հայոց մանուկները քաղցր ձայն ունեն և լավ տաղեր երգել գիտեն. մի գիշեր նա հյուր է լինում նորին սրբազնության մոտ, տեսնում է այնտեղ մի խումբ մանկահասակ երգիչներ. շատ հաճելի են թվում նրան երգիչները, և երբ նորին սրբազնությունը նկատում է այդ, պատվիրում է Սիմոն պատվելիին, որ ամեն անգամ, երբ փաշան պահանջելու լինի, նա իր աշակերտներից ամենալավ երգիչները տանե նրա մոտ:

— Բայց ի՞նչպես են համբերում ծնողները:

— Ծնողները ավելի անպիտան են. նրանք մի առանձին պատիվ են համարում, որ իրանց զավակները զարդարում են փաշայի խնջույքները:

Արդեն ճաշին մոտ էր, երբ մենք վերադարձանք վարպետ Փանոսի տունը: Ասլանը իսկույն առանձնացավ իր սենյակում: Վարպետ Փանոսը մտավ իր գործարանը: Իսկ ես գնացի այգին միրգ ուտելու:

Դ

ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՓԱՇԱՆ

Մի առավոտ Ասլանը ասաց ինձ, թե ինքը ժամադիր է եղած գնալ քաղաքը, փաշային ներկայանալու, և ցանկանում է ինձ էլ իր հետը տանել: Ես շատ ուրախացա, որովհետև մինչև այն օրը ոչ մի բարձր պաշտոնակալ չէի տեսած:

Փաշան կենում էր քաղաքում, այսինքն բերդի մեջ: Այգեստանից մինչև այնտեղ թեև շատ հեռու չէր, այսուամենայնիվ, մենք գնացինք ձիերով: Ձիերը, զարդարված

ասիական շքեղ ասպազենքով, ուղարկված էին փաշայի կողմից երկու ղավազների հետ, որոնք, մեր առջևը ընկած, տարան մեզ: Թեև արգելված էր քրիստոնյաներին ձիով քաղաքը մտնել, բայց դա մի առանձին պատիվ էր, որ ցույց էր տալիս նահանգապետը իր քաղաքի նորեկ հյուրին:

Երբ մոտեցանք քաղաքին, նա մի առանձին կախարդական տպավորություն գործեց իմ վրա. գուցե այդ այն պատճառով էր, որ առաջին անգամ տեսնում էի մի այնպիսի ընդարձակ մարդկային բնակություն:

Քաղաքը գտնվում էր ծովակի ափի մոտ և շատ հիանալի տեսարան էր ներկայացնում. Նա շրջապատած էր կրկին պարիսպներով, որոնք ամրացուցած էին բրգաձև աշտարակներով, և մի խորունկ խրամատ դրսից բոլորում էր քաղաքի շուրջը, Ասլանը բացատրեց ինձ, թե այդ խրամատը նրա համար է, որ պաշարման ժամանակ լցնում են ջրով, կամուրջները վեր են առնում, թշնամուն ներս չթողնելու համար: Բացի այդ արտաքին ամրություններից, քաղաքը ուներ և միջնաբերդ, որ բնությունը ինքն էր հրաշակերտել: Քաղաքի հյուսիսային մասում տարածվում էր կես փարսախ երկարությամբ մի քարաժայռ, որը հետզհետե բարձրանալով, սեպաձև դիրք էր ընդունում: Այդ սեպի գլխին, խորին ժամանակներից, վեհանձնաբար նստած էր մի փառավոր ամրոց: Հայոց լեգենդական ավանդությունը այդ ամրոցը ընծայում էր Ասորեստանի թագուհի Շամիրամին:

Մտնելով քաղաքադռնից, ես մի անբացատրելի սարսուռ զգացի, որ առաջ էր գալիս և՛ ուրախությունից, և՛ երկյուղից: Ամբողջ քաղաքը կարծես որոտում էր մի խուլ, ծանր դղրդյունով: Ինձ երևում էր մի հսկայական մրջնանոց, որտեղ փոքրիկ միջատների փոխարեն, խառնված էին միմյանց հետ ահագին բազմություն մարդիկների և զանազան անասունների: Շները ստվար խումբերով, համարձակ վխտում էին ամեն կողմում: Փողոցներից անցնելու տեղ չկար: Ղավազները մեզ համար ճանապարհ էին բաց անում: Ամեն կողմից ես նկատում էի մռայլ դեմքեր, որոնք մի առանձին դառնությամբ նայում էին մեզ վրա: Մահմեդականը չէր կարող համբերել, երբ տեսնում է «գավուրին» փոքր ի շատե վայելուչ կերպարանքի մեջ: Ասլանը մի եվրոպական կոնսուլի կամ դեսպանի տպավորություն էր գործում: Իսկ ես այնօր, նրա պատվիրելով, կրում էի իմ բոլոր զենքերը, մի զույգ ատրճանակ կապած էին իմ ձիու թամքի ղաշին, մի զույգ ևս խրած ունեի գոտիիս մեջ. ուսիցս քարշ էր ընկած մի թեթև եվրոպական հրացան, իսկ իմ սուրը իր արծաթյա զարդարանքով կարող էր գրավել բոլորի ուշադրությունը: Հայերի վրա ևս, որպես երևում էր, ոչ այնքան հաճելի տպավորություն էր գործում մեր փառքը: Նրանք չէին նախանձվում, այլ վախենում էին չզայրացնել մահմեդականներին: Իրանց փոքրիկ խանութներում, խորասուզված զանազան փարչաների մեջ, նրանք զբաղված էին իրանց արշինով և չէին ուզում նայել անգամ մեզ վրա:

Վերջապես հասանք փաշայի ապարանքը: Դրսից նա այնքան փառահեղ չէր, իսկ ներսից շնչում էր արևելյան բռնապետի բոլոր շռայլությամբ: Ջրի շատրվանները գործում էին, սիրամարգները սիգալով ճեմում էին ծաղկազարդ պարտեզների մեջ, սևամորթ և սպիտակամորթ սպասավորները թիվ չունեին: Մի բարձր աստիճանավոր ապարանքի գլխավոր մուտքի առջև ընդունեց մեզ: Մենք անցանք մի քանի բակերից, որոնք մինը մյուսից ավելի գեղեցիկ էին: Խաղացող ջուրը, ծաղիկը և կանաչեղենը, արևելքցու սիրելիները, կենդանացնում էին բոլոր բակերը մի սքանչելի սրտապարար շքեղությամբ: Սենյակների լուսամուտները զարդարած էին գույնզգույն ապակիներով, իսկ նրանց պատերի վրա նկարված պատկերները ներկայացնում էին զանազան առասպելաբանական ավանդությունների գեղեցիկ տեսարաններ:

Այդ տերևների և ճոխության մեջ ծածկված բնակարանը, որ սովոր էր ամբողջ գիշերները լուսացնել նվագներով, երգերով ու պարերով, ուր շալերի, մետաքսի և գոհարների մեջ հանգչում էին երկրի ամենաընտիր գեղեցկուհիները, այդ սիրո և վայելչության դրախտ էր, միևնույն ժամանակ մի դժոխք՝ լի սոսկումով և արտասուքով: Նրա ներքին հարկի ստորերկրյա զնդաններում հեծում էին հարյուրավոր բանտարկյալներ: Վերևում, շքեղ դահլիճների մեջ, նվագներ էին հնչում, իսկ ներքևում, մթին նկուղների մեջ՝ որոտում էին այդ թշվառների շղթաները: Նրա ծաղկազարդ բակերի մարմարյա սալահատակը ոչ սակավ անգամ սրսկված է եղել անմեղ զոհերի արյունով, և նրա գեղեցիկ, սաղարթախիտ ծառերը ոչ սակավ անցամ և կախաղանի պաշտոն են կատարել… Այդ բոլորը կատարվել է խուլ պարիսպների մեջ, լուսնի լույսի ներքո, և ավազանների խաղաղ հայելին ցոլացել է իր մեջ եղեռնական գործողությունների սոսկալի պատկերները… Դրսի աշխարհը երբեք տեղեկություն չէ ունեցել, թե ինչ է կատարվել ներսում… Սերը, ուրախությունը, զեխությունը միշտ թագավորել է այստեղ գազանային անգթության հետ…

Երեխայությունիցս ես սովորած էի սարսափել, դողալ մեծ մարդերի առջև, այդ պատճառով մինչև փաշային ներկայանալը, ինձանում սիրտ չէր մնացել: Ասլանը նկատեց իմ երկչոտությունը և, մի կողմից հանդիմանելով, մյուս կողմից խրախուսելով, ասաց.

— Դու տակավին ստրկահոգության մեջ ես մնացել, ինչո՞ւ ես շփոթվում, մի՞թե նա էլ քեզ նման մարդ չէ՞, միթե ահեղ աստուծո առջև պիտի դուրս գաս…

Ես փոքր-ինչ հոգի առա, ավելի ամաչելուց, քան թե քաջալերություն ստանալուց:

Փաշան, եթե կարելի է այսպես կոչել, մի ահագին մսեղեն բլուր էր, հաստ փորով, հաստ գլխով, հաստ ձայնով, մի խոսքով, նրա մեջ ոչինչ նուրբ և տաշած բան չկար: Նուրբ էր նրա մեջ միայն տաճկական բարձր պաշտոնականի բնական խելքը, խորամանկությունը, կեղծավորությունը, որ նենգավորության էր հասնում: Նա խիստ քաղաքավարությամբ ընդունեց մեզ, և իր մանկլավիկների օգնությամբ, որոնք նրա աջ ու ձախ թևքերից բռնելով վեր բարձրացրին, կանգնեց և մի քանի քայլ փոխելով, մոտեցավ բռնեց Ասլանի ձեռքը:

— Իմ բախտավորությանը չափ չկա,— ասաց նա,— որ իմ տան շեմքը արժանանում է ընդունել ձեզ պես թանկագին հյուրին, պարոն բժշկապետ:

Փաշան Ասլանի աջը չթողեց իր ձեռքից, տարավ նրան, նստեցրեց իր մոտ, աջ կողմում: Ես մնացի ոտքի վրա կանգնած, դահլիճի դռան մոտ: Գիտեի այդ սովորությունը և մի քանի անգամ տեսել էի, թե ինչպես զինված ծառաները սպասավորում են իրանց տիրոջը, հենց միևնույն սենյակում, ուր նա ընդունելություն է գտնում մի օտարի մոտ: Ծառան այդ դեպքում թիկնապահ է, մի քաջ վերահսկող է, որ, ձեռքը իր սրի կոթի վրա դրած, ամենայն զգուշությամբ նայում է իր տիրոջ վրա: Երբ նրա կյանքին մի որևիցե վտանգ է սպառնում, նա պահապան հրեշտակի նման օգնության է հասնում: Ես այդ դիրքն էի բռնել:

Փաշայի առաջին խոսակցությունը այն աստիճան քաղցր սահուն և գրավիչ էր կարծես մի շաբաթ առաջ սերտել էր այն ջերմ, սրտից բխած խոսքերը: Բայց ոչ թե մի շաբաթ առաջ, այլ իր ամբողջ կյանքում նա սերտել էր այդ խոսքերը: Օտարերկրացու մոտ այդ հրեշները վերին աստիճանի բարի և քաղաքավարի են, իսկ իրանցների մոտ մի խստասիրտ գազան:

Հետո խոսակցությունը ձևականից ավելի սովորական դարձավ. խոսում էր նա, ինչ որ առհասարակ խոսում են մի ճանապարհորդի հետ, այն ևս եվրոպացի ճանապարհորդի հետ:

— Հանգի՞ստ անցավ ձեր ճանապարհորդությունը, պարոն բժշկապետ,— հարցնում էր նա:— Հույս ունեմ, մի որևիցե անախորժություն պատահած չի լինի ձեզ հետ:

— Առանձին ոչինչ չէ պատահել, ամեն տեղ սիրալիր ընդունելություն էի գտնում,— պատասխանում էր Ասլանը:

— Ուրիշ կերպ չէր կարող լինել: Ես ինձ բոլորովին անպատված կհամարեի, եթե իմ կառավարությանը հանձնված երկրում դուք մի ամենաթեթև նեղություն անգամ կրած լինեիք: Եվրոպացիք առհասարակ խիստ աննպաստ կարծիք ունեն մեր երկրի մասին, համարում են վայրենիների աշխարհ, ուր գլխի մազից օգուտ քաղելու համար մարդկանց կառափներ են կտրում: Մենք շատ ուրախ ենք լինում, երբ երբեմն մեր կողմերում հանդիպում են եվրոպացի ճանապարհորդներ, գոնե այդ կարծիքը մասամբ կփարատեին մեր մասին:

— Եվրոպացի ճանապարհորդներից ոմանք շատ լավ կարծիքներ են հայտնել ձեր երկրի մասին,— նկատեց Ասլանը:

— Արդարությունն էլ այդպես է պահանջում: Այդ գոնե առիթ կտար եվրոպացիներին չվախենալ մեր երկրից, և մենք ավելի հաճախ հարաբերություններ կունենայինք միմյանց հետ, և մեր երկրի քաղաքակրթությունը ավելի և ավելի կծաղկեր: Իրավ է, երբեմն մասնավոր անկարգություններ պատահել են (ո՛րտեղ չեն պատահում նրանք), բայց այդ եղել է ավելի հին ժամանակներում: Իմ կողմից կատարյալ անհամեստություն կլիներ, պարոն բժշկապետ, իմ բերնով ձեզ ասել, դուք կարող եք այդ և ուրիշներից տեղեկանալ, որ այն օրից, երբ ես ոտք կոխեցի այդ երկրի վրա, գայլն ու գառը միասին են ապրում, որպես երկու հարազատ եղբայրներ:

— Այդ ես տեսա…— ասաց Ասլանը ժպտելով:

Այդ միջոցում ներս մտավ մի լավ հագնված մանկլավիկ, մի ձեռքում բռնած ուներ արծաթյա փոքրիկ սրճամանը, մյուս ձեռքում մի գեղեցիկ արծաթյա մատուցարան, որի վրա դրած էին երկու չինական հիանալի ֆինջաններ, նույնպես արծաթյա տակերի մեջ: Նա, տեղային սովորության համեմատ, լցրեց ֆինջաններից մեկը, նախ տվեց փաշային: Իսկ փաշան, իր հյուրին առանձնապես պատվելու, համար, իր ստացած ֆինջանը իր ձեռքով տվեց նրան, և Ասլանը շնորհակալությամբ ընդունեց: Փաշան վեր առեց երկրորդ ֆինջանը:

Մանկլավիկը սենյակից դուրս գալու ժամանակ լռությամբ անցավ իմ մոտից և թևքով կամաց իմ կողքին բոթեց. դա արդեն նշան էր, որ ես դուրս գամ նախասենյակը, որ ինձ էլ ղահվե խմացնե: Բայց ես չշարժվեցա իմ տեղից: Այդ շատ զարմացրեց նրան:

Ղահվեից հետո մի այլ մանկլավիկ, ավելի լավ հագնված, նարգիլե ներս բերեց, որը իր գեղեցկությամբ բոլորովին ապշեցրեց ինձ: Նրա գլուխը, որի մեջ թամբաքու և կրակ էին դրած, շինված էր զուտ ոսկուց և զարդարած թանկագին քարերով. օձապտույտ «բուլղարիի» ծայրը շինած էր մի թզաչափ երկարությամբ դեղին սաթից, որ նույնպես բռնված էր ոսկու մեջ: Նարգիլեի տակը, որի մեջ ջուր էր ածած, շինված էր ադամանդի նման փայլուն բյուրեղից, որ զարդարած էր գույնզգույն ծաղիկներով: Փաշան նարգիլեի վերաբերությամբ նույն քաղաքավարությունը գործ դրեց, ինչ որ ցույց տվեց ղահվեի ժամանակ, այսինքն նախ ինքը ընդունեց սպասավորին, հետո իր ձեռքով առաջարկեց Ասլանին:

— Դուք արդեն փոքր ի շատե ընտելացել եք մեր սովորություններին,— ծիծաղելով նկատեց փաշան:— Ի՞նչպես է թվում ձեզ մեր նարգիլեն:

— Ես խիստ ախորժանոք ծխում եմ,— պատասխանեց Ասլանը,— Պոլսում սովորեցի:

Ղահվեն և նարգիլեն ընդհատեցին նրանց խոսակցությունը: Փաշան, կամենալով շարունակելն այն, վարպետությամբ հարցրեց:

— Հա, մոռացա, ինչ բանի վրա էինք խոսում:

— Դուք ասում էիք, որ հիմա գառն ու գայլը միասին են ապրում…

— Այո՛, հենց այստեղ ընդհատվեցավ մեր խոսակցությունը: Որովհետև սիրտս լցված է, թույլ տվեցեք ինձ, պարոն բժշկապետ, փոքր-ինչ շատախոս լինել: Եվրոպան մեզ մեղադրում է մեր անմարդասիրական վարմունքի մասին քրիստոնյաների հետ, իբր թե նրանք ճնշված են մեր երկրում, հալածված են, մի խոսքով, ինչ չարիքների մեջ ասեք, չեն զրպարտում մեզ: Բայց հավատացած եղեք, որ քրիստոնյաների վիճակը ավելի լավ է, քան թե մահմեդականներինը: Մեր երկրում ամեն տեղ քրիստոնյաներին առավելություն են տալիս: Մենք նրանց ազատել ենք շատ պարտավորություններից որ կատարում են միայն մահմեդականները, օրինակ, զինվորագրությունից, որ նրանց շատ ծանր է թվում: Ես ինքս առանձին հոգ եմ տանում, իմ կառավարությանը հանձնված երկրում, քրիստոնյաների վիճակը բարվոքելու համար, որպեսզի Նրանց բեռը ավելի թեթև լինի և նրանց ապրուստը ավելի ապահով լինի: Շնորհակալ եմ, որ քրիստոնյաները իրանց կողմից հասկանում են իմ նրանց մատուցած ծառայությունները, և ամիս չէ անցնում, որ իրանց երախտագիտությունը չարտահայտեին, որտեղ որ հարկն է: Ձեզ այս րոպեին ցույց կտամ, պարոն բժշկապետ, մի նոր հանրագիր, որ պատրաստված է երկու օրինակ, մեկը Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը ուղարկելու համար, մյուսը՝ բարձրագույն Դուռը ուղարկելու համար: Դրանց մեջ հայ հասարակությունը, հազարավոր ստորագրություններով, հայտնում է իր խորին գոհունակությունը իմ կառավարությունից և միևնույն ժամանակ, ցույց է տալիս իր բախտավոր դրությունը և բարօրությունը:

Նա հրամայեց սպասավորին, որ ոտքի վրա կանգնած էր իր մոտ, բերել իր թղթապահը: Նրա միջից դուրս հանեց մի քանի թերթեր, ծածկված բազմաթիվ կնիքներով և ստորագրություններով, որոնց մեջ առաջին տեղը բռնում էր հայոց հոգևոր առաջնորդի կնիքն ու ստորագրությունը, հետո դրված էին զանազան հայ բեկերի, էֆենդիների և նշանավոր անձինքների ստորագրությունները:

Այդ թղթերը ոչ սակավ զարմացրին թե՛ Ասլանին և թե՛ ինձ: Բայց երբ վերադարձանք տուն, վարպետ Փանոսը բացատրեց մեզ, թե որպիսի պղտոր աղբյուրներից էին բխում այս տեսակ շնորհակալությունները…

Փաշան, կարծելով, թե լավ ազդեցություն գործեցին ցույց տված թղթերը իր հյուրի վրա, շարունակեց:

— Մենք շատ պիտի ամաչեինք քաղաքակիրթ Եվրոպայի առջև, պարոն բժշկապետ, որ այժմյան լուսավոր դարում՝ մեր երկրում ազգերի և կրոնների խտրություն լիներ, որ մենք հալածեինք քրիստոնյային, որովհետև նա մեր ազգին և կրոնին չէր պատկանում: Իրավ է, որ մեր մահմեդական ժողովուրդը դեռ ոչ բոլորովին թոթափել է վաղեմի նախապաշարմունքը, նա դեռ բավական մոլեռանդ է մնացել: Բայց ո՞րտեղ չկա այդ մոլեռանդությունը: Մինչև այսօր, լուսավոր Եվրոպայում անգամ, տեղ-տեղ հալածվում են հրեաները: Իսկ մեր կառավարությունը այժմ ամեն ջանքով

աշխատում է կրթության միջոցով ոչնչացնել ժողովրդի մոլեռանդությունը, և այդ նպատակով դպրոցների թիվը մեր երկրում օրըստօրե բազմանում է: Մենք մինչև անգամ հոգ ենք տանում և հայոց դպրոցների հառաջադիմության մասին: Այգեստանում կա մի նշանավոր դպրոց, որը գտնվում է իմ առանձին խնամակալության ներքո: Ես իմ սեփական միջոցներից այդ դպրոցի վարժապետին թոշակ եմ տալիս:

— Վարժապետը ի՞նչպես մարդ է, ընդունա՞կ է իր պաշտոնին,— հարցրեց Ասլանը:

— Ամենապատվական մարդ է, մեր քաղաքի հայ գիտնականների մեջ նրան կարելի է առաջինը համարել:

Փաշայի խոսքը Սիմոն պատվելիի և նրա դպրոցի մասին էր: Ասլանը այնպես ձևացրեց իրան, որ ամենևին տեղեկություն չունի այդ դպրոցի մասին:

Խոսակցությունը դարձյալ ընդհատվեցավ, երբ մանկլավիկների մի խումբ, գեղեցիկ արծաթյա մատուցարանների վրա դրած, ներս բերեցին զանազան տեսակ անուշահոտ շերբեթներ և զանազան տեսակ քաղցրավենիք ու խմորեղեններ, պատրաստված նուշով և հոտավետ համեմներով: Փաշան իր ձեռքով ընտրում էր անուշ պատառները և առաջարկում էր Ասլանին:

— Փորձեցեք այդ «փախլավայից»,— ասում էր նա,— հայոց առաջնորդը սաստիկ սիրում է այդ «փախլավան»: Երբ որ նա ինձ մոտ է գալիս, եթե «փախլավա» չլինի, անպատճառ դժգոհ կմնա:

— Իրավունք ունի հայոց առաջնորդը,— պատասխանեց Ասլանը,— բավական լավ է պատրաստած:

— Դուք ծանո՞թ եք նրա հետ:

— Ոչ, ես դեռ չեմ տեսնվել նրա հետ:

— Անպատճառ պետք է տեսնվել, ես ձեզ խորհուրդ կտայի տեսնվել նրա հետ, դուք շատ գոհ կմնայիք, նա պատվական մարդ է. ամենապատվական մարդ է: Գալ Վան և հայոց առաջնորդին չտեսնել, դա միևնույն կլիներ, որպես գնալ Հռոմ և պապին չտեսնել:

— Ես օգուտ կքաղեմ ձեր խորհրդից,— ասաց Ասլանը,— առանց հայոց առաջնորդի հետ տեսնվելու, չեմ հեռանա այդ քաղաքից:

Փաշայի և հայոց առաջնորդի բարեկամական հարաբերությունները մեզ հայտնի էին. այստեղից բացահայտ էր, թե նա ինչու հորդորում էր Ասլանին՝ անպատճառ տեսնվել «ամենապատվական մարդու» հետ: Տարակույս չկա, որ փաշան հավատացած էր, որ առաջնորդն էլ նույն վկայությունը կտար իր մասին, թե փաշան ամենապատվական մարդ է, և եվրոպացի ճանապարհորդի ուղևորության տետրակի մեջ կավելանային մի քանի փայլուն խոսքեր երկրի այդ երկու բարձր ներկայացուցիչների մասին:

Փաշան ինքը մատնեց իրան ասելով.

— Նա իմ լավ բարեկամս է և իմ եռանդոտ գործակիցս է իմ բոլոր ձեռնարկությունների մեջ: Ես կատարյալ սիրահար եմ եվրոպական կրթության, պարոն բժշկապետ: Եթե ես հրաշագործության շնորհ ունենայի, կաշխատեի մի քանի վայրկյանի մեջ մեր հայրենիքը Ֆրանսիա դարձնել: Բայց դժբախտաբար այդ

անկարելի է: Մենք շատ գործ ունենք կատարելու, մենք շատ ետ ենք մնացել, այժմ ստիպված ենք թռիչքներ գործելով առաջ ընթանալ, որ հասնենք լուսավոր ժողովուրդներին:

Մի թեթև ժպիտ երևաց Ասլանի դեմքի վրա:

— Ժողովրդի կրթությունը կանոնավոր լինելու համար,— նկատեց նա,— հարկավոր չէ թռիչքներ գործել, այլ թողնելու է նրան, որ իր բնական ընթացքով առաջ գնա: Միայն գլխավոր պայմանը այն պետք է լինի, որ ժողովրդի հառաջադիմության ղեկը պետք է ուղիղ ճանապարհի վրա դրվի որպեսզի նրանից չշեղվելով, ցանկացած նպատակին հասնի:

— Բոլորովին ճշմարիտ է ձեր նկատողությունը,— պատասխանեց փաշան գործագետ մարդու եղանակով:— Բայց մեր դժբախտությունը նրանումն է, որ մեր առաջավոր մարդիկը, խիստ սակավ բացառությամբ, անբարեխիղճ են: Քանի՛ անգամ առաջարկել եմ ես մեծ վեզիրին, որ այդ երկրի հարկերի մի մասը հատկացնե նույնիսկ այդ երկրի տեղային բարեկարգությունների համար գործ դնելու: Բայց միշտ մերժումն եմ ստացել: Հազարավոր բաներ կան շինելու: Օրինակ, դուք տեսաք մեր ճանապարհները, մեր կամուրջները, մեր ջրանցքները, այդ բոլորը նորոգելու կարոտ են: Վաճառականության և երկրագործության անկման բուն պատճառները մեր երկրում՝ պետք է վատ հաղորդակցությունների մեջ որոնել:

Թուրք պաշտոնակալները բոլորը լավ ձևել գիտեն, բայց կտրելու շնորհք չունեն: Չանազան ծրագրներ կազմելու մեջ անհամեմատ ճարպիկ են, իսկ գործադրության մեջ անպետք: Տուր նրանց փող իրանց կազմած ծրագիրը իրագործելու համար, այդ փողով նախ իրանց գրպանը կլիացնեն:

Եվրոպացու առջև ազատամիտ երևնալ, կրթության և հառաջադիմության սիրահար ձևանալ— տաճիկ պաշտոնակալների, խոսակցության սովորական ձևն է— ցույց տալ, թե իրանք շատ բարի ցանկություններ ունեն ժողովրդի բարօրության համար, բայց ի՞նչ, արած, որ այս և այն անհաջող հանգամանքներն արգելք են լինում:

Իր բոլոր դիվանագիտական ճարտարությունը գործ դնելուց հետո, փաշան կիսապաշտոնական խոսակցություններից անցավ հասարակ խոսակցության: Այժմ խոսում էր, ինչ որ սովորաբար խոսում են բժշկի հետ. գանգատվում էր, թե ստամոքսի թուլություն ունի, ախորժակը ավերված է, ոչինչ ուտել չէ կարողանում. գանգատվում էր անքնությունից, հոդացավից. գանգատվում էր մի ինչ-որ երևակայական հիվանդության մասին, որը ոչինչ կերպով բացատրել չէր կարողանում կամ ամաչում էր, որ պարզն ասեր:

Վերջապես նա ասաց.

— Ես մանկանալ եմ ցանկանում… մանկացրեք ինձ, պարոն բժշկապետ: Ասում են, եվրոպացի բժիշկները գիտեն մի դեղ, որ մանկացնում է մարդուն…

— Ի՞նչպես է մանկացնում,— հարցրեց Ասլանը ժպտելով:

— Ճերմակ մազերը սևանում են, զառամյալ ծերունին դառնում է առույգ, տասնևյոթը տարեկան պատանի…

— Ճերմակ մազերը սևացնելու համար ներկ կա, բայց ծերունին պատանի դարձնելու դեղը դեռ չէ գտնված Եվրոպայում:

— Մի այնպիսի դեղ չկա՞, որ փոքր-ինչ ուժ տար… զորություն տար…

Այդ հարցերի ժամանակ փաշան ներկայանում էր, որպես իսկական տաճիկ: Նա, որ իրան զարգացած, կրթված մարդ էր ձևացնում, զանազան տնտեսական, հասարակական խնդիրներ էր վճռում հանկարծ սնահավատությամբ պահանջում էր այն էլեքսիրը, որով արևելյան դերվիշները հրապուրում են իրանց երկրի պետերին: Բայց Ասլանը քաղաքավարությամբ նրա պահանջը զանցառության տվեց, հարցնելով.

— Ինձ ասացին, որ ձեր որդին առողջ չէ, խնդրեմ հրամայեցեք, որ ինձ տանեն հիվանդի մոտը:

— Ոչ, Դուք նեղություն մի կրեք. նա այնքան տկար չէ որ ինքը չկարողանա գալ,— ասաց փաշան, երևի չկամենալով, որ բժիշկը կանանոցը մտներ, ուր այդ ժամանակ գտնվում էր հիվանդը:

Քանի րոպեից հետո, մի ներքինի ձեռքիցը բռնած, ներս բերեց մի տասն տարեկան բավական տկար, բայց շատ սիրուն տղա, որը ոտքից գլուխ հագած ուներ մուգ-վարդագույն օսմանյան զգեստ գեղեցիկ նկարներով նախշած և ոսկի թելերով ասեղնագործած: Երեխան պարբերական ջերմ ու տենդ ուներ: Ասլանը քննեց նրան, մի քանի առողջապահական պատվերներ տվեց և խոստացավ դեղեր ուղարկել:

Այդ ամբողջ խոսակցության ժամանակ, որ տևեց բավական երկար, Ասլանը երևաց ինձ իր աշխարհագիտական խորին տաղանդով: Նա փաշային ավելի խոսել էր տալիս, քան թե ինքը խոսում էր: Իր վարվողության մեջ մինչև այն աստիճան հրապուրիչ էր, որ ինձ թվում էր, թե փաշան բոլորովին սիրահարվեցավ նրա վրա: Եվ իրավ, նա հայտնեց, թե իրան շատ բախտավոր կհամարեր, եթե բժշկապետին միշտ իր մոտ տեսներ, թե իր տան մեջ նա ամեն հարմարություններ կգտներ, եթե բարեհաճեր, քանի որ այդ քաղաքումն էր, իր մոտ բնակվել: Ասլանը շնորհակալությամբ հրաժարվեցավ, հայտնելով, թե դժբախտաբար չէ կարող վայելել նորին վսեմության շնորհը, որ իր համար միշտ անմոռանալի կմնա, ըստ որում մի քանի օր միայն դիտավորություն ունի մնալ այդ քաղաքում, և խոստացավ մինչև իր դուրս գալը քաղաքից, միշտ այցելել փաշայի մոտ, և թե նրա որդուն, թե իրա տկարություններին դարման անել:

— Ինչո՞ւ եք այդքան շտապում, պարոն բժշկապետ,— հարցրեց փաշան:

— Ինձ հարկավոր է մի երկու ամսից հետո անպատճառ Հնդկաստանում լինել: Ժամանակ կորցնել չեմ կարող: Ես այս քաղաքով անցա միայն այն նպատակով, որ տեսնեմ մի քանի հնություններ: Այստեղից ուղղակի Մուսուլ գնալու դիտավորություն ունեմ, ինձ այնտեղ հետաքրքրում են հին Նինվեի ավերակները: Այնտեղից Բաղդադ պետք է անցնեմ, Բաբելոնը տեսնելու համար: Հետո նավով կուղևորվեմ դեպի Հնդկաստան:

— Մեր քաղաքում բավական հնություններ կան, որոնք դեռ հետազոտված չեն,— ասաց փաշան:— Շատ լավ եք մտածել, որ ձեր ճանապարհորդության մեջ մեր քաղաքը զանցառության չեք տվել:

— Ինձ ավելի հետաքրքրում են սեպաձև արձանագրությունները, որոնցով, կարծեմ, շատ հարուստ է Վանը:

— Այո՛, այո՛, հարուստ է: Ես կտամ ձեզ մի առաջնորդ, որը ձեզ ամեն տեղ ման կածե և ամեն ինչ ցույց կտա, կտանե և միջնաբերդը, որտեղ շատ կգտնեք հիշյալ արձանագրություններից:

Ասլանը իր խոսակցությունը բևեռաձև արձանագրությունների վրա դարձնելու նպատակն էլ հենց այդ էր, որ միջնաբերդը տեսնե: Այդ պատճառով, երբ որ լսեց փաշայի վերջին խոստմունքը մեծ շնորհակալություն հայտնեց և վեր կացավ: Փաշան նույնպես վեր կացավ, նրան ճանապարհ դրեց մինչև սենյակի դուռը, և բաժանվելու միջոցին հարյուրավոր շողոքորթություններով հեղեղեց իր «թանկագին» հյուրին…

Նույն կերպով, նույն հանդեսով, որպես ղավազները մեզ բերել էին փաշայի ապարանքը, դարձյալ նույն պատվով մեզ տարան Այգեստան, մինչև վարպետ Փանոսի տունը: Ասլանը դրեց ղավազների յուրաքանչյուրի ափի մեջ մի-մի ոսկի, և նրանք շնորհակալությամբ հեռացան:

Մտնելով մեզ համար պատրաստված սենյակը, Ասլանը ծիծաղելով իր գլխարկը մի կողմ ձգեց և, գլուխը զարմացած կերպով շարժելով, կանգնեց սենյակի մեջտեղում և, դառնալով դեպի ինձ, ասաց.

— Խելացի՛ մարդիկ են… խելացի՛… գիտեն իրանց գործը… Եթե ես իսկապես եվրոպացի լինեի, եթե չճանաչեի այդ անպիտաններին, անպատճառ հիացած կմնայի այդ մարդուց:

Նրա խոսքը փաշայի մասին էր: Ներս մտավ վարպետ Փանոսը և անհամբերությամբ հարցրեց, թե ինչպես անցավ նրա այցելությունը: Ասլանը համառոտ կերպով պատմեց բոլորը և ապա ավելացրեց.

— Եթե դուք գիտենայիք եվրոպական լեզուներ, եթե դուք կարդայիք, թե ի՞նչ են գրում եվրոպացի ճանապարհորդները թուրք ժողովրդի և թուրք պաշտոնյաների մասին, դուք այդ ճանապարհորդներին կատարյալ խելագարի տեղ կդնեիք: Նրանց նկարագրությունների մեջ թուրք ժողովուրդը բարի է, աշխատասեր է, հառաջադիմության ընդունակ է. նրանց նկարագրությունների մեջ թուրք պաշտոնյան, թուրք աստիճանավորը ազնիվ է, մեծահոգի է, գեղեցիկ ձգտումներ ունի, հյուրասեր է, առատաձեռն է, մի խոսքով, հիացած են նրանցով, և ամեն լավ հատկություններ վերաբերում են այդ հրեշներին: Ինչի՞ց է առաջ գալիս այդ հիացումը: Երևակայեցեք, մի անհայտ եվրոպացի, որին իր երկրում ոչ ոք մարդու տեղ չի դնում, որի հետ իր երկրի ամենաահետին հյուրանոցում սպասավորը իրան թույլ կտա կոպտությամբ վարվել, հանկարծ մի այսպիսի մարդու խելքին փչում է՝ արևելքում ճանապարհորդություններ անել: Նրա եվրոպացի լինելը բավական է, որ նրան ամեն տեղ լավ ընդունեին, որովհետև նա այս ու այն մեծ պետության քաղաքացին է: Այսուամենայնիվ, նա զինված է լինում զանազան հանձնարարական թղթերով, որ ստանում է իր դեսպանի կամ հյուպատոսների շնորհիվ: Եթե նրա հետ վատ կվարվեն, նրա պետության դեսպանը կամ հյուպատոսները սաստիկ պահանջել գիտեն: Իր երկրում մի այսպիսի անձին գուցե ժամերով սպասել կտային մի որևիցե իշխանի կամ հասարակ ազնվականի նախասենյակում: Բայց Ասիայում ամենանշանավոր անձանց դռները բաց են նրա համար, որովհետև եվրոպացի է և ճանապարհորդ, կարող է վատ խոսել, կարող է վատ գրել նրանց մասին: Ամեն տեղ սիրալիր ընդունելություն, պատրաստականություն և հարմարություններ է գտնում: Նա կարծում է, որ այդ մարդիկը բնականապես բարի են, ազնիվ են, մեծահոգի են, բայց չգիտե, որ նրանք նույնիսկ դժբախտ Շուլցի գլուխը կտրողներն են, միայն այժմյան հանգամանքները ստիպել են նրանց այլապես վարվել: Իր տեղեկությունները երկրի տնտեսական և հասարակական դրության մասին՝ քաղում է նա իր հյուրընկալի պատմությունից: Նրա սեղանի մոտ նստած ժամանակ, նրա բարերար ազդեցության ներքո, գրում է նա իր հիշատակարանը: Իսկ այն սեղանը, որ իր կյանքում նա երբեք չէ տեսել, այնքան ճոխ է, այնքան հրապուրիչ է, որ բոլորովին շլացնում է, խելքից հանում է նրան: Նա իր հյուրընկալից ստացած սուտ ու սխալ

տեղեկությունները նույն ախորժակով է զետեղում իր ճանապարհորդական հիշատակարանի մեջ, ինչ ախորժակով որ խմում է նրա անուշահոտ շերբեթները կամ ինչ ագահությամբ որ զետեղում է իր փորում նրա լավ պատրաստած «փախլավան»: Իսկ այդ սուտ ու սխալ տեղեկությունները, որոնք, իհարկե, ի նպաստ մահմեդականների են լինում, եթե մի օր տպագրությամբ լույս են տեսնում, սաստիկ ազդում են եվրոպացիների հասարակական կարծիքի վրա: Եվ այդպես, Եվրոպացի ճանապարհորդը, միայն արտաքին հրապուրիչ կեղևից դատելով, առանց միջուկը քննելու, ինքը սխալ գաղափարներ է կազմում և մոլորեցնում է իր հայրենակիցներին: Դիցուք թե ճանապարհորդը շրջանկատ, խորազնին, անաչառ և բարեխիղճ մեկը լիներ, բայց ի՞նչ կարող է նկատել նա իր շուտափույթ, անցողական ճանապարհորդության մեջ, միայն թեթև հայացքներ ձգելով, մանավանդ, երբ նրա առաջնորդները այդպիսի փաշաներ կամ դրանց նմանները կլինեն: Մի ժողովրդի դրությունը լավ հետազոտելու համար պետք է դիմել իրան, ժողովրդին և ոչ թե նրա կառավարիչներին:

– Եղեռնագործը սովորում է ինքն իր անձի փաստաբանը լինել,– շարունակեց նա:– Այդ մարդիկը, սկսյալ առաջին վեզիրից, մինչև վերջին զափթիան, շատ լավ գիտեին իրանց հանցանքները, և այդ պատճառով նրանց լեզվում կազմվել է մի ամբողջ մշակված ճառ իրանց արդարացնելու համար: Մի այդպիսի ճառ ես այսօր լսեցի ինձ ամենայն քաղաքավարությամբ հյուրասիրող փաշայի բերանից: Նրան չէ կարելի հիմար կոչել, ընդհակառակն, նա ինձ բավական խելացի երևաց: Ես ներկայացա նրան որպես եվրոպացի և ճանապարհորդ: Այդպես էլ նա ընդունեց ինձ: Նա գիտեր, թե ի՞նչ կարծիք, ի՞նչ նախապաշարմունքներ կարող է ունենալ մի եվրոպացի նրա մասին. նա գիտեր, թե ի՞նչ է պահանջում նրանից, որպես մի երկրի գլխավոր կառավարչից, այժմյան քաղաքակրթությունը. նա գիտեր և իր երկրի անկարգությունները, այդ բոլորը շատ լավ գիտեր նա, և այդ նկատումներով, իր բոլոր խոսակցությունը ճարտարությամբ այնպես էր դարձնում, որ ինքը և իր կառավարությունը ընդհանուր ցեխի միջից մաքուր դուրս գան: Եթե այդ բոլորը ինձ հայտնի չլիներ, եթե ես մի միամիտ եվրոպացի ճանապարհորդ լինեի, անտարակույս, շատ լավ գաղափար կկազմեի այդ մարդու և նրա կառավարության մասին:

– Այդ մարդիկը,– առաջ տարավ նա,– գրավելու և իրանց լավ ցույց տալու զարմանալի շնորհք ունեն: Մինչև անգամ բարբարոս քուրդ ցեղապետը շնորհք ունի հիացնելու միամիտ եվրոպացուն, երբ պատահում է նրան հյուրասիրվել այդ ավազակի վրանում: Բայց ի՞նչ բարոյական նշանակություն ունի մի ասիական բռնապետի հյուրասիրությունը, երբ նրա հացը իր զոհերի արյունովն է շաղախված, երբ կերակրում է նա իր հյուրին այն կողոպուտներով, որ հափշտակել էր հարյուրավոր թշվառներից: Մեր դժբախտությունը նրանումն է, որ այդ բոլորը այդպես լինելուց հետո իսկությունը, բուն իրողությունը՝ մեր վիճակի դառն ճշմարտությունները դառնում են տարակուսական, և եվրոպացիք դժվարանում են մեզ հավատալ, երբ մեր բողոքն ու դժգոհությունները ներկայացնում ենք նրանց: Բայց մեզ համար մեծ նշանակություն ունի Եվրոպայի հասարակական կարծիքը: Իհարկե, մենք չէինք ցանկանա մահմեդականների նման խաբել նրանց, բայց կցանկանայինք, որ նրանք լավ հասկանային մեր դրությունը…

Ասլանը բնավորությամբ լռություն սիրող էր, բայց երբ տաքանում էր, երբ սկսում էր խոսել, խոսում էր շատ երկար: Այդ միջոցին անկարելի էր ընդմիջել նրան, պետք էր թույլ տալ, որ իր ասելիքը վերջացնե: Այնօրվա այցելությունը նրա վրա խիստ անախորժ տպավորություն էր թողել: Չնայելով, որ արդեն ճաշի ժամանակ էր, վարպետ Փանոսն անգամ մի առանձին հետաքրքրությամբ լսում էր նրան, և չէր կամենում խանգարել նրա խոսակցությունը, պատվիրելով, որ ճաշի սեղանը պատրաստեն: Նա շարունակեց.

— Որքան մահմեդական ժողովրդի ներկայացուցիչները շնորհալի են օտարներին գրավելու մեջ, այնքան մերոնք կոպիտ և անշնորհք են: Երբ որ եվրոպացին նրա դուռը կբախե, նա կա՛մ իր դուռը կփակե նրա առջև կա՛մ եթե ներս կընդունե և մի կտոր հաց կտա, անպատճառ կաշխատե իր անվերջ տրտունջներով, իր լացուկոծով ձանձրացնել իր հյուրին: Հայը իր դատը մարդավարի կերպով պաշտպանելու ընդունակություն չունի: Դարավոր ստրկությունը սովորեցրել է նրան վիզը ծռել և խնդրել: Նա չէ կարող իր դժգոհությունը հայտնել, առանց ստորացնելու իր անձնավորությունը: Նա կա՛մ այդպես կվարվե, կա՛մ բոլորովին կլռե, ամեն ինչ թողնելով նախախնամության կամքին:

— Եվրոպացին, ճանապարհորդելով արևելքում, ըստ մեծի մասին թողնում է, անցնում է գյուղերը և կանգ է առնում միայն քաղաքներում: Եվ որովհետև քաղաքներում օրինավոր հյուրանոցներ չկան, այլ կան միայն կեղտոտ քարվանսարաներ, այդ պատճառով նա օթևան է որոնում մասնավոր տներում: Թուրք կառավարիչները, որպես հիշեցի, մեծ ուրախությամբ ընդունում են նրանց իրանց հարկի տակ: Նա չէ մտնում հայ գյուղացու, հայ արհեստավորի տունը, որոնք իրանց սիրտը, հոգին և ամեն ինչ դնում են աստուծո հյուրի առջև, որոնք իրանց նահապետական պարզությամբ կարող էին հիացնել ամեն մի օտարականին: Եթե պատահում է եվրոպացուն մի հայի տուն մտնել, անպատճառ դա կա՛մ արքունի ծառայող կլիներ, կա՛մ մի կապալառու և կամ մի հարուստ վաճառական: Ծառայողը, կապալառուն, վատ չէր խոսի այն կառավարության մասին, որից ինքը հաց է ստանում: Իսկ վաճառականը ամեն ազգի մեջ՝ ըստ մեծի մասին եսական է, անտարբեր է դեպի հասարակաց թշվառությունները: Ցավալին այն է, որ եվրոպացիները միշտ հայ վաճառականների են հանդիպել, և նրանց գլխում մեխի պես ցցվել է այն սխալ կարծիքը, թե հայոց ազգը բաղկացած է ամբողջապես վաճառականներից: Այդ մեխը մինչև այսօր անհնար է եղել դուրս քաշել: Այդ է գլխավոր պատճառը, որ մեր ազգը համեմատում են հրեաների հետ և շատ նման են գտնում: Դեռևս չգիտեն, որ արևելքում, ուր որ հայեր են բնակվում, արհեստը և երկրագործությունը գլխավորապես նրանց ձեռքումն է, չգիտեն, որ այդ աշխատասեր հայերն են, որ ճնշված են, հարստահարված են, և իրանց վաստակով կերակրում են իրանց անհագ նեղիչներին:

Ե

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մյուս օրը մենք անհամբերությամբ սպասում էինք առաջնորդին, որ խոստացել էր փաշան ուղարկել մեզ, քաղաքի մեջ և նրա շրջակայքում գտնված հնությունները ցույց տալու համար: Չգիտեմ ի՞նչ պատճառով վարպետ Փանոսը հակառակ էր այդ արշավանքին: Բայց Ասլանը պնդում էր, թե ինչ էլ որ պատահելու լինի, անպատճառ պիտի գնալ:

Վերջապես հայտնվեցավ առաջնորդը, իր հետ բերելով նախորդ օրվա երկու ղավազներին և երկու ձիաներ, որ փաշայի ախոռատան ամենաընտիր նժույգներից էին, ուղարկել էր մեզ, հեծնելու համար: Վարպետ Փանոսը ճանաչեց առաջնորդին: Դա մի աստիճանավոր էր, որ փաշայի մոտ քարտուղարի պաշտոն էր կատարում, և հայտնի էր, որպես ուսումնական մարդ: Նա դեռ երիտասարդ էր, ուրախ, զվարթ, և, որպես ակնարկեց մեզ վարպետը, թուրք ծառայողների սովորության համեմատ, օղիի կատարյալ սիրահար էր: Գուցե այդ էր պատճառը, որ նախաճաշիկի ժամանակ վարպետ Փանոսը առանձին ուշադրություն էր դարձնում նրա խմելու վրա և

աշխատում էր, որքան կարելի էր, գոհացնել նրան: Օրից մի քանի ժամ անցած էր, երբ մենք ճանապարհ ընկանք:

Հասնելով հսկա քարաժայռի ստորոտը, որի բարձրության վրա նստած էր բերդը, մենք ցած իջանք ձիերից և սկսեցինք քարե մաշված սանդուղքներով դեպի վեր բարձրանալ: Սարսափելի ճնշող տպավորություն էր գործում այդ բերդը իմ վրա: Նրա ահավորության առջև մարդ կարծես մանրանում էր, փոքրանում էր, և կորցնում էր իր բոլոր քաջությունը: Չգիտեմ ի՞նչ էր պատճառը, արդյոք ա՞յն, որ իմ առջև ներկայանում էր մի պատկառելի հնություն, թե ա՞յն, որ այդ լուռ, խորախորհուրդ քարաժայռը պահել էր իր սրտի մեջ խիստ տխուր հիշատակներ մեր պատմական անցյալից:

Ասլանը չկամեցավ իսկույն բերդը մտնել, սկսեց նախ նրա շրջակայքը հետազոտել: Ամեն տեղ երևում էին հնության հետաքրքիր մնացորդներ, ամեն տեղ քարերի ճակատին տեսնում էինք բազմատող բևեռագրեր: Երբ նրանց մասին հարցրի Ասլանից, նա խիստ անփույթ կերպով պատասխանեց — «ինձ չեն հետաքրքրում այդ մեռած տառերը»… Ուրեմն ի՞նչ էր հետաքրքրում նրան, ի՞նչ էր որոնում նա այն ամայի քարափների մեջ այնքան խորին ուշադրությամբ: Նա մի բան որոնում էր, որովհետև ես շատ անգամ նկատում էի, իր հիշողության գրքույկը հանում էր ծոցից և մի բան գրում էր նրա վրա:

Մեր առաջնորդը, որին իբրև զարգացած մարդ, և մանավանդ իբրև հնագետ, փաշան դրել էր մեզ հետ, որ ցույց տար հնությունները, և բացատրեր մեզ նրանց նշանակությունը,— այդ երիտասարդ թուրք գիտնականը անդադար Ասլանի ուշադրությունը դարձնում էր այս և այն առարկայի վրա և իր հոգնեցուցիչ շատախոսությամբ ավելի խանգարում էր նրան, քան թե օգնում էր:— «Նայեցեք այդ ծակին,— նա ցույց էր տալիս մի վիրապի բավական լայն բերանը,— դա իջնում է ցած և ցած մինչև երկրի խորքերը, հետո ստորերկրյա ոլոր-մոլոր ճանապարհներով հասնում է մինչև ծովակի հատակը: Այնտեղ բացվում է մի ոսկյա դուռ և մարդուն ներս է տանում բյուրեղյա հրաշալի ապարանքի մեջ: Այնտեղ մարջանի (բուստի) մշտադալար ծառերի ներքո ճեմում են հավերժական հյուրիներ, փերիներ, ավելի պայծառ, քան նոր ծագող արեգակը իր վարդակարմիր ճառագայթներով: Այնտեղ «հազարան բլբուլը» կերակրվում է մարգարիտներով, և փղոսկրյա վանդակի մեջ, ամեն մի րոպեում փոխում է հազարավոր եղանակներ, հազարավոր նվագներով: Նրա երգի ձայնից անուշահոտ վարդենիները գտնվում են մշտական զմայլմունքի մեջ: Այնտեղ արարածները չեն ծերանում, այլ վայելում են հավերժական սեր և մանկություն: Բայց բյուրեղյա ապարանքի ոսկյա դուռը ամենի առջև չէ բացվում, որովհետև նա կախարդված է և խորհրդավոր թիլիսման ունի: Մի ծերունի դերվիշ, որ աչքով տեսել է այդ բոլորը, խոստացել է տալ ինձ այդ թիլիսմանը»:

Ասլանը ժպտաց թուրք հնագետի միամտության վրա: Նրա ցույց տված հորը ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ այն հին, ստորերկրյա անցքերից մեկը, որ մի ժամանակ ծառայել է կամ որպես փախուստի ճանապարհ, կամ հաղորդակցություն է ունեցել ուրիշ ամրությունների հետ, որոնք շատ հեռու չեն բերդից: Այս տեսակ հորեր շատ էին երևում: Կարծես քարափի մթին խորքերում մի հսկայական մրջնանոց լիներ իր բազմաթիվ խորշերով և իր բազմաթիվ խոռոչներով, ուր մարդիկ երբեմն գործել են: Բայց իմ ուշադրությունը գրավեցին երեսունից ավելի մեծ և փոքր այրեր ու ընդարձակ քարանձավներ, որոնք նույնպես փորված էին քարափի մեջ, որոնց մի քանիսի մեջ մենք կարողացանք ներս մտնել: Նրանց վրա երևում էր ժամանակի արհեստն ու ճարտարությունը, և շատերը նրանցից զարդարած էին սեպաձև արձանագրություններով:

— Ավանդությունը,— ասաց Ասլանը,— այս բերդը և այս այրերը Շամիրամին են ընծայում, որպես թե, նինվեացի թագուհու գանձատունը, մթերանոցները, պահեստի տեղերը և բաղանիքները լինեին: Իսկ այդ բոլորը ավելի հին է, քան թե Շամիրամը, թեև մեր ծերունի Խորենացին հնագիտական միամտությամբ նույնպես նրան է ընծայում:

— Ի՞նչ է ասում Խորենացին,— հարցրի ես խորին հետաքրքրությամբ:

Կարծես Ասլանը Խորենացու գիրքը այնպես սերտած լիներ, որ որպես ես Սաղմոսը, նա անգիր կարդաց պատմությունից այն տեղը, որ այդ բերդին էր վերաբերում, հետո աշխարհաբար թարգմանեց ինձ.

— «Իսկ անձավի արևահայաց կողմը, այնպիսի նյութի կարծրության մեջ, ուր մեկը այժմ և ոչ մի գիծ երկաթով փորել կարող է (Շամիրամը), պես-պես տաճարներ, օթևանների սենյակներ, գանձերի տներ և երկար այրեր հրաշակերտեց, հայտնի չէ ի՛նչ բաների պատրաստության համար: Բայց քարի ամբողջ երեսի վրա, որպես գրիչով մոմը հարթելով, շատ գրեր արձանագրեց, որոնց վրա նայելն միայն զարմանք է բերում»:

Ո՛րքան ուղիղ էր Խորենացու կարծիքը, ես այդ դատել չէի կարող, միայն տեսնում էի, որ նրա ասածները բոլորը կային: Բայց Ասլանը ասում էր, թե այս ամենը այն ամենահին ժամանակներից են մնացել, երբ մարդիկ տուներ չէին շինում, երբ նրանք այրերի մեջ էին բնակվում: Այդ իմ խելքին նստում էր, որովհետև տեսնում էի, այրերից շատերը այնքան ահագին մեծություն ունեին, որ կարող էին ամբողջ ընտանիքների բնակությանը հարմարվել:

Բերդի շրջակայքը ման գալուց հետո, մենք մտանք բուն բերդի մեջ: Այդ անմատչելի ամրոցը, որպես ասեցի, նստած է ժայռոտ քարափի գլխին, որը ուղղաձիգ բարձրությամբ քաշված է դեպի երկինք, և այնտեղից ահռելի կերպով հսկում է ամբողջ քաղաքի վրա: Դեպի ամեն կողմ, ուր և հայացք ես ձգում, դարձյալ երևում են արձանագրություններ, որոնք լուռ և անբարբառ նայում են մարդու երեսին, կարծես ասել են ուզում — «մենք միշտ կմնանք անվերծանելի և երբեք չի պիտի երևան հանենք հնության գաղտնիքը»…

Ասլանը պտտելով բերդի մեջ, որպես նկատում էի ես, արձանագրությունների և այլ հնություններ վրա միայն հարևանցի նայելով էր անցնում, ավելի ցույց տալու համար, թե նրանցով հետաքրքրվում է: Իսկ մեր երիտասարդ առաջնորդը ոգևորված էր առասպելական պատմություններով, ամենևին չէր նկատում, թե իր պատմությունները որքան նշանակություն ունեին նրա համար: Նա անընդհատ խոսում էր: Բայց իմ նկատողությունից չէր կարող վրիպել այն խորին ուշադրությունը, որով Ասլանը քննում էր ամրոցի մթերանոցները, պահեստի տեղերը, որ լցված էին վառոդով և զանազան զենքերով, զինվորների օթևանները, և այն վաղեմի, ժանգոտած թնդանոթները, որոնք իրանց բերանները դարձրած դեպի քաղաքը, պահպանում էին նրան մշտական երկյուղի ներքո: Այդ թնդանոթներով մի ժամանակ ենիչարիները ռմբակոծում էին քաղաքը:

Ես նկատում էի, Ասլանը մի առանձին ուշադրությամբ հետազոտում էր այն ծակերը, այն գաղտնի անցքերը, որոնք քարափի վերևից իջնում էին դեպի նրա խորքերը և ստորերկրյա ճանապարհներով կորչում էին, սատանան գիտե, թե դեպի ո՛ր կողմը: Նա արծվի հայացքով զննում էր նրանց ուղղությունը, տարածությունը, և որպեսզի կասկածանքի առիթ չտա մեր առաջնորդին, ժպտելով հարցրեց նրանից.

— Ի՞նչպես եք կարծում, պարոն քարտուղար, այդ անցքը նույնպես չէ՞ տանում դեպի մի բյուրեղյա ապարանք, ուր հյուրիները և փերիները պառկած են մարջանի ծառերի ներքո և սքանչանում են «հազարան բլբուլի» հազար ու մեկ եղանակներով:

— Դուք ծաղրում եք ինձ, պարոն բժշկապետ,— պատասխանեց երիտասարդը նույնպես ժպտելով,— բայց ես կասեմ ձեզ, որ այդ անցքը դեպի բյուրեղյա ապարանքը չէ տանում, որովհետև դեպի ծովը չէ գնում: Մարջանի ծառերը ծովի հատակի վրա են բուսնում և բյուրեղյա ապարանքն էլ ջրերի խորքումն է լինում: Իսկ այդ անցքը, քարափը կտրելով, իջնում է դեպի ցած, հետո գետնի տակով գնում է դեպի այն ձորը, որի մի մասը երևում է բլուրների հետևից:— Նա ձեռքը մեկնեց դեպի այն կողմը:

— Ներեցեք, խնդրեմ, իմ նկատողությունը դուք, իհարկե, կատակի տեղ կընդունեք: Իսկ ձեր այժմյան պատմածը դարձյալ շատ հետաքրքիր է: Ես շատ բերդեր եմ տեսել, բայց մի այսպիսի անցք առաջին անգամն եմ տեսնում իմ կյանքում, երևի դրա ծայրը, այսինքն այն տեղը, որ դուրս է գալիս ձորի մեջ, անպատճառ ծածկված կլինի:

— Անտարակույս, մանավանդ մի դեպքից հետո, որ պատահեց մի տարի առաջ. պահապան զինվորներից մեկը սովորություն էր ունեցել վառոդ գողանալ և այդ անցքով դուրս տանել, վաճառել հայ խանութպաններին: Զինվորին և խանութպաններին սաստիկ պատժեցին, և անցքի մուտքը այն ժամանակից գոցվեցավ:

— Ո՛րքան զարգացած է եղել հին ժամանակներում արհեստը այդ երկրում,— ասաց Ասլանը, արտահայտելով իր խորին հիացմունքը:— Այդ անցքերը հազարավոր տարիներ գոյություն ունեն, բայց այնքան ճարտարությամբ շինված են, որ մինչև այսօր չեն խանգարվել, պահպանում են իրանց նշանակությունը:

— Դուք ավելի կզարմանաք, պարոն բժշկապետ, երբ կտեսնեք Թոփրակ-Կալեի և Չարխի-Ֆալակի գաղտնի անցքերը,— պատասխանեց առաջնորդը մի առանձին պարծենկոտությամբ, երբ լսեց Ասլանի գովասանքները (կարծես այդ հրաշալիքները նրա պապերն էին ստեղծագործել):— Երբ այստեղ կվերջացնենք, ես կտանեմ ձեզ դեպի հիշյալ հնությունները, որոնք բավական հեռավորության վրա են գտնվում այստեղից: Դուք կտեսնեք այնտեղ ավելի զարմանալի ստորերկրյա անցքեր, որոնք այնքան երկար են տարածվում գետնի տակով, որ շատերը հաղորդակցություն ունեն հենց այդ բերդի հետ:

Ասլանը շնորհակալություն հայտնեց առաջնորդին և, հանելով ծոցից իր ոսկյա ժամացույցը, առաջարկեց նրան՝ ասելով.

— Դուք այնքան բարի եք, որ ես կցանկանայի թողնել ձեզ մոտ այդ փոքրիկ հիշատակը:

Երիտասարդը հրաժարվեցավ կամ ձևացրեց թե հրաժարվում է, պատասխանելով.

— Շնորհակալ եմ ձեր ուշադրության համար, ես երբեք չէի կամենա զրկել մի ճանապարհորդի իր ժամացույցից, որը նրան շատ հարկավոր կլինի:

— Այդ իրավ է, բայց համաձայնվեցեք, որ ճանապարհորդի ոսկյա ժամացույցը շատ հրապուրիչ բան է գողերի համար, ես կցանկանայի ազատվել դրանից: Ընդունեցե՛ք, խնդրեմ, ես ունեմ և մի արծաթյա ժամացույց, այն էլ բավական կլինի ինձ համար:

Առաջնորդը շնորհակալությամբ ընդունեց: Նրան անսովոր չէր՝ իր մատուցած ծառայությունների համար այս տեսակ «փեշքեշներ» ընդունել: Եթե չտայինք, նա

մինչև անգամ պահանջելու անամոթություն կունենար: Մանավանդ փաշայի պատվի համար, որ մեզ հետ դրել էր իր ամենամոտ մարդիկներից մեկին, պետք էր նրան որևէ ընծա տալ: Բայց այդ տեսակ ընծաները տալիս են այն ժամանակ, երբ ծառայությունները վերջացրած են լինում: Չգիտեմ ինչո՞ւ շտապեց Ասլանը: Երևի նրա համար, որ թուրք պաշտոնատարը չմտածեր, թե իր ընծան աննշան բան կլինի, այլ սկզբից ստանալով, ավելի եռանդով կկատարեր իր հանձն առած ծառայությունը: Երիտասարդը հենց նույն րոպեում սկսեց տեղավորել իր բաճկոնի վրա ստացած ընծան. շղթան երբեմն դեպի կուրծքի աջ կողմն էր տանում, երբեմն դեպի ձախ կողմն էր տանում, և մեծ մտածության մեջ էր, թե ո՞ր կողմում ավելի գեղեցիկ կերևա: Նա դիմեց իմ խորհրդին, ես հայտնեցի իմ կարծիքը:

Ասլանը այդ միջոցին բարձրացել էր աշտարակներից մեկի գագաթի վրա և այն աheղ բարձրությունից երկար լուռ և տխուր կերպով նայում էր դեպի իր շրջակայքը: Նրա դեմքը նույն րոպեում գունաթափ էր, աչքերի մեջ վառվում էր խորին տենդային կրակ, շրթունքները դողդողում էին, երևի սիրտը սոսկալի խռովության մեջ էր: Ես բոլորովին ապշած կերպով նայում էի նրա վրա…

Մենք ցած իջանք բերդից միևնույն քարե սանդուղքներով, որոնց մասին Ասլանը ասում էր, թե մի ժամանակ Գագիկ Արծրունին է տաշել տվել, բայց այժմ համարյա թե իսպառ մաշված էին: Բերդի ստորոտում, մեր ձիաները բռնած սպասում էին մեր երկու ղավազները: Մենք հեծանք, սկսեցինք դիմել դեպի Թոփրակ-Կալե և մյուս հնությունները:

Դուրս գալով քաղաքից, երբ փոքր-ինչ հեռացանք, մեր շրջակայքում բացվեցան հիանալի տեսարաններ. մի կողմում երևում էր կանաչազարդ Այգեստանը, երևում էին և Վարագա կանաչազարդ լեռները, որոնց կուրծքի վրա, խորին ջերմեռանդությամբ գրկված, բազմել էր Վարագա գեղեցիկ վանքը… Մյուս կողմում, մանիշակագույն հայելիի նման, փայլում էր Վանա ծովակը: Այդ ձվաձև հայելին դրված էր հիանալի շրջանակի մեջ, որը բոլորում էր նրա գեղագրական եզերքը մեղմ, ալիքավոր բարձրություններով,— դրանք էին՝ Արտոս, Արևոս, Սիփան, Նեբրովթ և Գրգուռ լեռները, որոնց գոտիները չորեք կողմից սեղմել էին իրանց մեջ ջրի այդ մեծ ավազանը:

Կարծես այդ աշխարհում հեթանոսական և քրիստոնեական ժամանակների հիշատակարանները դեռ մինչև այսօր մրցություն էին անում միմյանց հետ: Մի կողմում, բևեռագրերով զարդարված փառավոր շինվածքներ ցույց էին տալիս ամենահին անցյալի վրա, մյուս կողմում, սփռված էինք տեսնում բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ: Այդ վանքերը դեռ շեն էին և լի բազմաթիվ կրոնավորներով: Իսկ նրանց կողքին, մենք գնում էինք տեսնելու մի հին, մոռացված մեհյանի տխուր ավերակները…

Վերջապես, հասանք Թոփրակ-Կալե: Այդ ավերակ բերդը ուրիշ անուններ ևս ունի, նա կոչվում է Ակռփու-քար և Ձըմփ-զըմփ-մաղարա: Բայց այդ երեք անուններից և ոչ մեկը նրա նախնական անունը չէ. դրանք ստացվել են վերջին ժամանակներում: Ի՞նչպես էր կոչվում նա առաջ,— ոչ ոք չգիտե, պատմությունը լռում է այդ մասին: Այդ բերդը մի ամբողջ քաղաք է եղել, որ այժմ ծածկվել է ահագին հողակույտերի ներքո: Հենց այդ է պատճառը, որ նրան թուրքերի բառերով կոչում են Թոփրակ-Կալե (հողաբերդ): Գուցե այդ անհայտացած քաղաքը այն կախարդված «Պղնձե քաղաքը» լիներ, որ մինչև այսօր վանեցոց ավանդությունների մեջ պահպանել է իր դժբախտ, առասպելական պատմությունը: Չար վհուկի դյութելով, ամբողջ քաղաքը իր պարիսպներով, տներով և բնակիչներով անշարժ պղինձ է դառնում: Ասլանը ասում էր ինձ, այդ ավանդությունը ճիշտ է միայն այն կողմից, որ եթե այդ հողակույտերի մեջ փորվածքներ անելու լինեն, մետաղյա բոլոր առարկաները կգտնեն պղնձից

շինված, որովհետև այդ ավերակները պատկանում են պղնձե դարաշրջանին: Եվ իրավ, որպես պատմեց մեզ մեր առաջնորդը, այնտեղ գտել էին զանազան պղնձե զարդեր, պղնձե զենքեր, պղնձե տնային կարասիք և մինչև անգամ պղնձե մարդիկ:

Հնությունների ավերակները և մարդիկների գերեզմանները իմ վրա միշտ միևնույն տպավորություն են գործել: Երկուսի մեջ էս տեսնվում է դադարած կյանքը, երկուսն էլ հիշեցնում են անցյալը, որ մի ժամանակ ապրել են, գործել են և, ժամանակի հետ քսվելով, մաշվել ու մեռել են, թողնելով միայն կենդանի հիշատակներ: Մարդ, նայելով իր նախահարց գերեզմանների վրա, մի առանձին հպարտություն է զգում, երբ մտաբերում է, որ նրանք իրանց ժամանակի ամենալավ մարդիկն են եղել: Գերեզմանի մեջ անգամ նրանց փոշիները պահպանում են վաղեմի վեհութունը: Ավերակների փոշիների մեջ էս ապրում է անցյալ մեծությունը, որ միևնույն հպարտությունը և միևնույն քաջալերությունն է ազդում ապագա սերունդի մեջ: Ավերակների փոշիներից է կազմված այն շաղախը, որ միացնում է ներկա սերունդի սրտերը նախահարց հետ:

Թոփրակ-Կալեի լեռան մեջ նույնպես գտնվում են շատ այրեր, քարանձավներ, ստորերկրյա անցքեր, որպիսիները տեսանք Շամիրամի բերդի մեջ: Դրանցից և ոչ մեկը բնական չէ, բոլորն էլ փորված են ամենամոտ ժայռերի մեջ, և նրանց այժմյան գեղեցկությունը բավական ապացույց է, թե որքան զարգացած է եղել այդ աշխարհում արհեստը: Այրերից միայն մեկի մեջ մտանք մենք, որ կոչվում է Զըմփ-զըմփ-մաղարա, այսինքն զըմփզըմփալով ձայն հանող այր: Ամենաթեթև ձայնը այդ քարանձավի մեջ զըմփզըմփալով արձագանք է տալիս: Ժայռի մեջ բացվում է մի մեծ մուտք, որը հարյուրավոր քարյա սանդուղքներով իջնում է դեպի լեռան խորքը: Քարի մեջ փորված երկու լուսամուտներ վերևից խիստ աղոտ լույս են ձգում այդ ստորերկրյա վիրապի մեջ: Քարյա սանդուղքի վերջին աստիճանի մի կողմում բացվում է մի ընդարձակ, քառակուսի այր,— դա է, որ կոչվում է Զըմփ-զըմփ-մաղարա: Այդ այրի միջից մի առանձին անցք տանում է դեպի երկրի խորքերը. բայց ո՞ւր է գնում, ո՞րտեղ է վերջանում, աստված գիտե: Մեր առաջնորդը դարձյալ խոսում էր ստորերկրյա ապարանքների մասին. ժողովրդի ավանդությունը նույնն էր խոսում: Այդ բոլորը տեսնելով, ես պատրաստ էի հավատալ, որ այստեղ եղել է մի ստորերկրյա աշխարհ, և այդ անցքերը տանում են դեպի այն աշխարհը: Ասլանը այդ մասին ինձ ոչինչ չասաց. նա բոլորովին ուրիշ նպատակներով էր քննում այդ անցքերը: Նա ցանկանում էր ստուգել, թե ո՛րքան ուղիղ է այն կարծիքը, թե այդ ստորերկրյա անցքերը հաղորդակցություն ունեն քաղաքի մեջ գտնվող Շամիրամի բերդի հետ: Այդ էր պատճառը, որ մեզանից ոչ մեկը չհամարձակվեցավ Զըմփ-զըմփ-մաղարայից անցնել և առաջ գնալ, իսկ նա, վառելով իր հետ վերառած մոմապատը, շատ առաջ գնաց և վերադարձավ համարյա մեկ ժամից հետո:

— Նա կկորչի,— ասում էր ինձ մեր առաջնորդը նրա բացակայության ժամանակ:

— Ինչո՞ւ,— հարցրի ես:

— Այնտեղ ջիններ (դևեր) են բնակվում. այնտեղ գնացող ադամորդին այլևս չէ վերադառնում:

Դուրս գալով այրից, մենք սկսեցինք դիմել դեպի լեռան գագաթը: Այնտեղ մեր առաջնորդը կամենում էր ցույց տալ մեզ Չարխի-Ֆալակի մուտքը: Դա նույնպիսի մի անցք էր, որպիսիները տեսել էինք մենք, և ուղիղ լեռան գագաթից իջնում էր դեպի նրա խորքերը: Վանեցի հայերի ավանդությունը այդ անցքի մասին շատ հրաշալիքներ է պատմում, որոնցից մեկը պատմեց մեզ մեր առաջնորդը: Ահա նրա խոսքերը. անցքը իջնում է մինչև Գայլ գետի ափերը, որը հոսում է լեռան ստորերկրայքում: Գետի սքանչելի եզերքը զարդարած են արմավենի ծառերով: Այնտեղ Բախտը արագ ձեռքով պտտեցնում է աշխարհի անիվը՝ Չարխի-Ֆալակը:

Անիվի յուրաքանչյուր թևքի վրա Բախտը փորագրել է մի-մի գրություն: Այդ գրությունների յուրաքանչյուրը բովանդակում է իր մեջ մի գաղտնիք: Օրինակ, մեկը ցույց է տալիս, թե ինչպես պետք է գտնել թաքուցած գանձերը. մյուսը սովորեցնում է, թե ինչպես պետք է պատրաստել էլեքսիրը, որի միավորությամբ ամեն մետաղ ոսկի է դառնում. երրորդը ցույց է տալիս, թե որտեղ են գտնվում գոհարների լեռները, չորրորդը ուսուցանում է, թե ո՛րպես բժշկության մեջ պետք է գտնել անմահության կաթիլը, հինգերորդը տալիս է իշխանություն, թագավորություն, փառք, մի խոսքով, անիվի յուրաքանչյուր թևքի վրա արձանագրված է մի-մի թիլիսման մարդկային բախտավորության համար, որոնց դեռ մարդու հանճարը չէ հասել: Անիվը առանց կանգ առնելու անդադար պտտվում է: Նա կանգ է առնում տարվա մեջ մի անգամ միայն, այն ևս մեկ րոպեով: Այդ լինում է Համբարձման գիշերը, երբ երկինք ու գետինք գրկախառնվում են և համբուրվում են միմյանց հետ: Մարդիկ սպասում են հենց այդ րոպեին: Երբ հաջողվում է նրանց հասնել մինչև Չարխի-Ֆալակը, նրանք պետք է ձեռքում պատրաստ ունենան մոմից շինած թերթեր, որ անիվը կանգնելու րոպեում իսկույն կպցնեն նրա թևքի վրա: Խորհրդավոր թիլիսմաններից մեկը դրոշմվում է մոմի վրա, և մարդը ստանում է այն շնորհներից մեկը, որ Բախտը վիճակում է նրան: Բայց այդ շնորհներին խիստ հազիվ անգամ հասնում են մարդիկ, որովհետև նույն րոպեում, երբ անիվը կանգ է առնում, նրանց տիրում է խորին թմրություն, նրանք քնում են, և անողոք անիվը դարձյալ շարունակում է իր արագ պտույտը…

Մեզ մնում էր մի հնություն ևս տեսնել, և մեր այնօրվա արշավանքը դրանով պետք էր վերջացած համարել,— այդ էր Մըհերի դուռը: Միևնույն ժայռի երկարաձիգ շարունակության վրա, ուր մենք տեսանք Չարխի-Ֆալակը, ժայռի արևմտյան կողմում, քարի ճակատը քառակուսի ձևով տաշված է: Քառակուսին իր ահագին շրջանակի ձևովը՝ դռան ճիշտ նմանություն ունի: Այդ դռան մակերևույթը, որ բավական խորն է ընկած, ամբողջապես ծածկված է բևեռագիրներով: Ժողովուրդը դրան կոչում է Մըհերի դուռ: Այստեղ է Վանա ամենաընդարձակ արձանագրությունը: Այդ քարեղեն դռան ետևում, ժողովրդի ավանդությամբ, իր ձիու հետ բանտարկված է Մըհեր անունով մի անձնավորություն: Այնտեղ ժայռի սրտումը, մի քարայրի մեջ, արգելված է այդ սարսափելի հսկան: Մի օր նա կխորտակե իր շղթաները և, իր ձիու վրա նստած, դուրս կսլանա քարայրից, վրեժխնդիր կլինի իր թշնամիներին, և կմաքրե հայոց աշխարհը չարությունից…

Այսպիսի մի առասպել միայն հայ մարդու երևակայության ծնունդը կարող էր լինել: Նրա դարևոր աննախանձելի վիճակը ստեղծել է նրա համար մի այսպիսի հույս և ակնկալություն: Միհրը կամ ժողովրդի բարբառով Մըհերը, հայոց արեգակն է: Այդ ամենահին աստվածը բանտարկված է, և հայոց աշխարհում տիրում է խավարն ու չարությունը: Մի օր նա դուրս կգա իր արգելարանից և կրկին լույս ու արդարություն կսփռե հայոց աշխարհում: Ժողովուրդը լեգենդական լեզվով ասում է այդ, ասում է և հավատում է իր ասածին, և— սպասում է…

— Արդեն հայտնվել է Մըհերը… Բայց Ժողովուրդը այդ չէ նկատում…— ասաց ինձ Ասլանը, երբ ճանապարհին այդ ավանդության մասին սկսեցի խոսել նրա հետ:

Զ

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ

Վերադառնալով Այգեստան, մենք վարպետ Փանոսին տանը չգտանք. նա մի օրով գնացել էր մերձակա գյուղորայքը: Ասլանը այդ մասին ոչինչ հարցուփորձ չարեց.

երևում էր, որ նրանհայտնի էր, թե նա ուր կամ ինչ նպատակով էր գնացել: Գիշերը ես քնեցի սովորականից ավելի վաղ, որովհետև սաստիկ հոգնած էի: Բայց Ասլանը չքնեց, այլ երկար նստած, մի հաստ թղթի վրա ինչ-որ նկարում էր նա: Առավոտյան ինձ ցույց տվեց մեր տեսած բոլոր տեղերի պլանները, Ես ապշած մնացի: Զարմանալի հիշողություն ուներ այդ մարդը:

Այն առավոտ Ասլանը բավական լավ տրամադրության մեջ էր գտնվում. այդ պատահում էր նրա հետ այն ժամանակ միայն, երբ մի որևէ նպատակի հասնում էր: Նա սկսեց մինչև անգամ ինձ հետ հանաքներ անել: Սպիտակ կատուն, որ սովորաբար առավոտյան բոլոր տանեցիներից առաջ էր մտնում մեր սենյակը և ողջունում էր մեզ, այն առավոտ, հակառակի պես, առաջ ինձ մոտեցավ, քսքսվեցավ, մռմռաց և իր ճապուկ պոչով իմ երեսը շփելուց հետո, մոտեցավ Ասլանին:

— Հիմա նա էլ է քեզ մարդու տեղ դնում, Ֆարհատ,— ասաց նա ժպտելով:

— Ոչ միայն նա,— պատասխանեցի ես նույնպես ժպտելով,— այլ վարպետ Փանոսի ախոռատան ծառան ևս, երբ ինձ տեսնում է, ոտքի է կանգնում: Երեկ նա ինձ ասաց «աղա»:

Ասլանը նոր էր լվացվել և սանդրվում էր, նա սանդրը ձեռին կանգնեց իմ առաջ և ասաց.

— Գիտե՞ս այսօր ուր պիտի գնանք:

— Երևի դարձյալ պիտի գնանք ծակերի մեջը մտնելու…

— Ոչ, պետք է գնանք նորին սրբազնության՝ առաջնորդի մոտ:

— Նրա մասին շատ վատ են խոսում:

— Այդ ես գիտեմ, և հենց այդ պատճառով պետք է տեսնել նրան:

— Ասում են նա կատարյալ չարագործ է:

— Երբեմն չարագործները շատ զորեղ գործիք են դառնում լավ մարդկանց ձեռքում: Պողոսը նույնպես մի չարագործ էր, բայց վերջը քրիստոնեությունը տարածողների մեջ ամենանշանավորը եղավ:

— Իսկ Վասա՞կը:

— Վասակը իր ժամանակի նույնպես ամենանշանավոր մարդն էր: Եթե բոլոր հայ նախարարների գլուխները թափ տալու լինեիր, նրա կեսի չափ խելք չէր դուրս գա:

— Բայց նա չարագործ էր, նա մեծ վնասներ տվեց իր հայրենիքին:

— Այդպես երևում է, որովհետև նրա պատմությունը գրողները նրա հակառակ կուսակցությանն էին պատկանում: Իսկ եթե նրա խորհուրդներին հետևելու լինեին, նա մեծ օգուտներ կարող էր հասցնել իր հայրենիքին:

Ես զարմացա Ասլանի դատողության վրա: Թեև հայոց պատմությունը չէի կարդացել, բայց Վասակի մասին շատ վատ բաներ էի լսել:

— Ի՞նչ օգուտ պիտի հասցներ նա,— պատասխանեցի ես փոքր-ինչ բարկացած կերպով:— Սատանան երբեք հրեշտակ չի դառնա:

— Ինչու չի դառնա,— ասաց նա, ծիծաղելով իմ խռովության վրա։— Սատանան հենց առաջուց հրեշտակ էր, բայց հանգամանքները նրան սատանա շինեցին: Վասակին պետք է հասկանալ, իսկ նրան հասկանալու համար պետք է լավ ուսումնասիրել հայոց պատմությունը: Դու մի վիճիր ինձ հետ, սիրելի Ֆարհատ, քեզ պետք է կարդալ, շատ կարդալ…

Նա մոտեցավ ինձ, և ձեռքը դրեց իմ ուսի վրա:

Այդ միջոցին ներս մտավ վարպետ Փանոսի գործարանի աշակերտներից մեկը, հայտնեց, թե մի քանի մարդիկ ցանկանում էին տեսնվել Ասլանի հետ:

— Նայեցեք ի՞նչ մարդիկ են,— խնդրեց ինձ Ասլանը,— միայն մի փոքր սպասել տվեցեք, մինչև ես բոլորովին հագնվիմ:

— Նրանք կսպասե՛ն…— ասաց գործարանի աշակերտը խորամանկ ժպիտով,— մինչև երեկո էլ կսպասեն… դեռ արևը չծագած եկել, նստել են բակի դռան մոտ և սպասում են…

Պետք է ասած, երբ քաղաքի հայ վաճառականները լսեցին, որ Ասլանը հնություններով հետաքրքրվում է, այլևս մեզ հանգստություն չէին տալիս: Ում տանը մի կոտրած խեցի կամ երկաթի կտոր կար, բերում էր, ցույց էր տալիս, և աշխատում էր մի քանի ոսկիներ կորզել: Դուրս գալով փողոցը, տեսա, որ հայ վաճառականներ էին, երեք հոգի, և կարգով նստած էին բակի դռան մոտ շինված հողեթումբի վրա, «տեր-ողորմյա» էին քաշում ու խոսում էին միմյանց հետ երկրի գործերի վրա: Տեսնելով ինձ, բոլորը ոտքի կանգնեցին, որպես մի նշանավոր մարդու առջև և սկսեցին բարևել ինձ հետ, իմ առողջությունը հարցնել, կարծես թե վաղեմի բարեկամներ լինեին: Մեկը նրանցից ինձ կոչեց մինչև անգամ «աղա»: Վարպետ Փանոսի ախոռատան ծառայից հետո, այդ երկրորդ անձն էր, որ այդպիսի տիտղոսով էր ինձ դիմում:

— Ի՞նչ եք կամենում,— հարցրի ես:

Նրանք փոխանակ պատասխանելու, սկսեցին դուրս հանել իրանց ծոցերից, գրպաններից զանազան իրեղեններ, որ փաթաթել էին շորի կտորների մեջ:

— Ինձ ո՞ւր եք ցույց տալիս, ես խո գնողը չեմ:

— Դու էլ որ տեսնես մե՞ղք կլինի, աղա,— ասաց նրանցից մեկը, որի ձեռքերի վրա երևում էին Երուսաղեմի ուխտավորի կապույտ նշաններ:— Քո հոգուն մատաղ, աղա, մենք լսել ենք, որ քո մեկ խոսքը պարոն բժշկի մոտ երկու չի լինի…

Կամենում էր ասել, որ ես այն աստիճան մտերիմ եմ պարոն բժշկապետին, որ նա իմ մի անգամ ասածը կամ խնդրածը երբեք կրկնել չի տա: Բայց ինչո՞վ ես կարող էի օգտավետ լինել մահտեսուն, այդ էր գլխավոր խնդիրը: Նա հասկացրեց ինձ, ասելով.

— Լսել ենք, պարոն բժշկապետը անթիքա բաներ է հավաքում. մենք բերել ենք պարոն բժշկապետի համար ա՛յնպիսի անթիքաներ, որ ողջ աշխարհում չի գտնվի, երբ որ կգնե, մենք քո լավությունն էլ չենք մոռանա… քեզ համար էլ մի բան դուրս կգա…

— Իհարկե, դուրս կգա,— կրկնեցին մյուս երկուսը համարյա թե միաձայն:

— Ի՞նչ պետք է դուրս գա,— հարցրի ես փոքր-ինչ վրդովված կերպով:

— Չես իմանում…— ասաց մահտեսին, ձեռքով կամաց իմ մեջքին բախելով, որ նրա փաղաքշանքի նշանն էր:— Ի՞նչ պետք է դուրս դա, օրհնած, ահա դրանից…

Նա գլուխը խորհրդավոր կերպով շարժեց, մի խորամանկ ժպիտ երևաց բոլորովին սափրած երեսի վրա, ձախ աչքի կոպերը տըփտըփացրեց, ինձ աչքով արեց և, աջ ձեռքը մեկնելով, մի քանի անգամ ցուցամատի և բթամատի պտղուցները քսքսեց միմյանց հետ:

Անպիտանը աշխատում էր կաշառել ինձ, փող էր խոստանում: Նա ինձ ծառայի տեղ էր ընդունում և, սովորած լինելով ծառաների ձեռքով շատ բաներ շինել, կարծում էր, թե ես էլ կարող եմ նրան օգտավետ լինել: Եթե ես փոքր-ինչ հաճություն ցույց տայի, իհարկե, նրանք կտային ինձ մի ամբողջ ծրագիր, թե ինչ պիտի անեի, կամ ի՛նչ պիտի խոսեի պարոն բժշկապետի մոտ: Երբ անփորձ եվրոպացին հայտնվում է արևելքում և իր մոտ ունենում է տեղացիներից մի թարգման կամ ծառա, վաճառականները շատ լավ գիտեն, թե ինչպես պետք էր այդ ծառայի միջնորդությամբ կողոպտել եվրոպացուն:

Նրանց անպիտանությունը ինձ այն աստիճան զայրացրեց, որ կամենում էի բոլորովին էլ հեռացնել, պատասխանելով, որ պարոն բժշկապետը «անթիքաներ» չէ գնում: Բայց զգուշացա, չիցե թե իմ վարմունքը Ասլանին անհաճո լիներ: Երեքին էլ ներս տարա:

Մտնելով Ասլանի սենյակը, երեքն էլ լռությամբ գլուխ տվեցին և ոտքի վրա կարգով շարվեցան դռան մոտ: Ասլանը այդ միջոցին բոլորովին հագնված, նստել էր և ղահվե էր խմում: Նա իր սովորական քաղցրությամբ նայեց այցելուների վրա, ասելով.

— Նստեցեք, խնդրեմ,— և տեղ ցույց տվեց իրան շատ մոտ:

Նրանք անշարժ մնացին և սկսեցին անվճռական կերպով նայել միմյանց երեսին:

— Նստեցեք, խնդրեմ,— կրկնեց Ասլանը:— Ինչո՞ւ եք կանգնած:

— Ձեր սպասում, հարգելի բժշկապետ, ի՞նչպես կհամարձակվենք մենք նստել,— պատասխանեց մահտեսին ողորմելի ձայնով և ամբողջ հասակով ավելի պինդ սեղմվեցավ պատի հետ: Մյուսներն էլ հետևեցին նրա օրինակին:

— Ես խո փաշա չեմ, որ ինձ մոտ չհամարձակվեք նստել,— ասաց Ասլանը ծիծաղելով:

— Այդ ինչո՞ւ ես ասում, հարգելի բժշկապետ,— այժմ պատասխանեց մահտեսու մոտ կանգնած կարճահասակ ծերունին:— Դու մեզ համար փաշայից էլ մեծ ես, խոնթքարից էլ մեծ ես, դու մեր աչքի լույսն ես. աստված քեզ հազար տարի կյանք տա: Փաշան մեր հավատից չէ, իսկ դու թեև ֆրանկ ես, բայց մեր հավատիցն ես. մենք ամենքս միևնույն խաչն ենք պաշտում, միևնույն սրբերին ենք երկրպագում:

Եթե մի ուրիշը Ասլանի տեղ լիներ, կամ նրանց համեստությանը և կամ միամտությանը կվերաբերեր այդ բոլոր շողոքորթությունները: Բայց Ասլանը իսկույն հասկացավ, թե ինչ տեսակ մարդկանց հետ գործ ունի, և ոչինչ չցույց տալով, դարձյալ խնդրեց, որ նստեն:

— Վերջապես խնայեցեք իմ երիտասարդությանը,— ասաց նա,— արժան չէ, որ դուք ձեր ճերմակ ալիքներով կանգնած մնաք իմ առջև. ես հարգում եմ ծերությունը:

— Օրհնյա՛լ լինիս,— բացականչեցին երեքն էլ միաձայն և նստեցին ոչ թե Ասլանի ցույց տված տեղում, այլ հեռու, դռան մոտ:

Հարցնելով, թե ինչ նպատակով են եկել, Ասլանը խնդրեց, որ ցույց տան իրանց բերած իրեղենները: Մեկը քաղաքավարության համար երեսը շուռ տվեց դեպի պատը և երկու անգամ հազաց: Եթե այդ հազը նրանց մեջ մի պայմանական նշանախոսություն չլիներ, պետք էր իրավ, վերին աստիճանի քաղաքավարություն համարել, որովհետև հազալու միջոցին նրա դեմքը խիստ ծիծաղելի և, միևնույն ժամանակ, զզվելի արտահայտություն ընդունեց: Իսկ մահտեսին պատասխանեց առաջին հազալուն երկու անգամ փռթկալով: Նա էլ քաղաքավարության համար իր անթարիի (հագուստի) դրոշակը բարձրացրեց և բերանը սրբեց: Երրորդը, երեսը խաչակնքելով, աստծուն փառք տվեց, ասելով, որ «խեր է»:

— Մեր աշխարհում այսպիսի սովորություն կա, հարգելի բժշկապետ,— դարձավ նա դեպի Ասլանը,— երբ մեկը երկու անգամ փռշտում է, դա լավ նշան է: Հույս ունենք, որ ձեր օջախից խեր կտանենք:

Ի՞նչ օջախ, մտածում էի ես, կարծես վարպետ Փանոսի տունը մեր տունը լիներ:

— Ես էլ հույս ունեմ…— պատասխանեց Ասլանը ծիծաղելով:

Նրա ծիծաղը բավական քաջալերեց նրանց, և հերթով մոտեցան, չոքեցին Ասլանի առջև, սկսեցին ցույց տալ իրանց «անթիքաները»: Նրանց մեջ կային զանազան իրեղեններ. հին դրամներ, կանանց տեսակ-տեսակ զարդեր, որպիսի են՝ ապարանջաններ, ականջի օղեր պղնձից շինված, հուլունքներ թափանցիկ, գունավոր քարերից շինված, զենքերի կտորներ, որպիսի են նիզակի և սլաքների ծայրեր, ահագին վահանի մի մասը, բոլորը պղնձից, և մի պղնձե ցուլի ամբողջ գլուխ, այլև կավից շինած փոքրիկ և մեծ անոթներ,— այդ բոլորը նրանք տեղավորել էին իրանց ծոցերում, գրպաններում և մինչև անգամ ֆեսերի վրա փաթաթած յազմաների մեջ: Բայց ամենահետաքրքրականը նրանց ցույց տալու ձևի մեջն էր: Սկզբից ցույց էին տալիս մի շատ չնչին բան և սկսում էին գովաբանել, երբ այդ չէր անցկենում, դուրս էին հանում նրանից լավը, երբ այդ էլ հավանություն չէր գտնում, դուրս էին բերում ավելի լավը, հավատացնելով, որ այլևս ոչինչ չունեն, երբ այդ էլ հավանություն չէր գտնում, այս անգամ ամենայն դժվարությամբ դուրս էին բերում, հագուստի մի տեղում թաքցրած մի այլ բան, և սկսում էին երդվել, որ ուրիշ ոչինչ չունեն: Իհարկե, նրանից հետո դուրս էին բերում շատ ուրիշ բաներ:

Ես կանգնած նայում էի և զարմանում էի Ասլանի համբերության վրա: Եթե ես նրա տեղը լինեի, երեքին էլ դուրս կվռնդեի, բայց նա ամենևին ցույց չէր տալիս, որ այդ խաբեբայությունները իր համար շատ զզվելի են: Վերջապես նա ընտրեց մի քանի իրեղեններ և խնդրեց, որ գնահատեն:

— Մենք քեզանից մի՞թե փող պիտի առնենք, հարգելի բժշկապետ,— պատասխանեցին նրանք զարմացած կերպով:— Եթե փողի վրա խոսելու լինենք, դրանք գին չունեն:

— Ապա ի՞նչպես պետք է տաք,— հարցրեց Ասլանը ոչ սակավ զարմանալով:

— Այնպես, համեցեք, վեր առեք, հարգելի բժշկապետ: Մեզանից ի՞նչ կպակսի, եթե ձեզ այդ բոլորը փեշքեշ անենք, և դուք մեր երկրից մի լավ հիշատակ տանեք ձեզ հետ:

— Շնորհակալ եմ, ես էլ գիտեմ, որ ձեզ ոչինչ չի պակասի, երևում է, որ դուք շատ հարուստ եք, բայց ես փեշքեշներ ընդունելու սովորություն չունեմ:

Ասիական վաճառականների սովորությունն է այդ, երբ մի բան գնելու լինես, նախ կասե— «տար, փող մի տուր, թող քեզ ընծա լինի»: Իսկ երբ փող առաջարկես, սարսափելի գներ կպահանջեն: Նույնպես վարվեցան և մեր հայ վաճառականները:

— Չե՞ք հավատում, հարգելի բժշկապետ,— ասում էր մահտեսի Թորոսը,— եթե չեք հավատում, հարցրեք խնամի Մկոյից, նա իր աչքով տեսավ, որ մի ընկլիս այդ ցուլի գլխին հիսուն կարմիր ոսկի տվեց, բայց ես չտվեցի: Այդպես չէ՞, խնամի Մկո:

— Հոգիս վկա, ճշմարիտ է ասում,— պատասխանեց խնամի Մկոն, ձեռքը տանելով դեպի կուրծքը և դնելով իր հոգու վրա:

Բայց որքան պետք էր հավատալ խնամի Մկոյի հոգուն, որը այդպիսի երդումների մեջ այնքան շատ էր գործածվել, որ բոլորովին մաշվել էր: Միայն ծիծաղելին այն էր, երբ Ասլանը վեր առեց մի քանի իրեղեններ, որոնք խնամի Մկոյին էին պատկանում, դա էլ իր կողմից վկա կանչեց մահտեսի Թորոսին, որ նա իր աչքով տեսել էր և իր ականջով լսել էր, որ մի ֆրանկ ահագին գումարներ էր առաջարկել, բայց նա չէր ընդունել:

— Թող Երուսաղեմի սուրբ տաճարի մեջ իմ տեսած լույսը աչքերս կուրացնե, թող ես Քրիստոսի մեխ խփողներից մեկը լինեմ,— եթե սուտ լինեմ ասում,— պատասխանեց մահտեսի Թորոսը,— ֆրանկը ահագին գումարներ առաջարկեց, բայց նա չընդունեց:

— Ես մի հասարակ բժիշկ եմ, ես մեծ գումարներ չունեմ,— ասաց Ասլանը, իր ընտրած իրեղենները նրանց ետ տալով:

— Ինչո՞ւ եք նեղանում, հարգելի բժշկապետ,— ձայն տվեցին երեք կողմից,— խնդրում ենք, եթե կամենում եք, վեր առեք, ձեզանից ո՞վ է փող ուզում:

Ասլանը այս անգամ այլևս չկարողացավ զսպել իր անհամբերությունը և ասաց.

— Չգիտեմ ի՛նչ անել ձեզ հետ, երբ կամենում եմ մի բան վեր առնել, ահագին փողեր եք պահանջում, իսկ երբ ցած եմ դնում, առաջարկում եք ձրի ընդունել:

Այժմ սկսեցին նրանք այլ լեզու բանեցնել, սկսեցին խեղճ ձևանալ, որ պարոն բժշկապետի կարեկցությունը դարձնեն իրանց վրա, ասելով— աղքատ ենք, ընտանիքի տեր ենք, «անօրենի» ձեռքում գերի ենք, մեր հույսը դրել ենք այդ իրեղենների վրա, այդ պատճառով ստիպված ենք այդպես էժան, շա՛տ էժան վաճառել:— Նրանք մինչև անգամ ակնարկեցին, եթե գնող լիներ, ավելի մեծ ուրախությամբ պատրաստ կլինեին իրանց զավակները վաճառել, և չզրկվել այնպիսի հազվագյուտ իրեղեններից, որոնց համար, եթե լավ «մուշտարի» պատահի, կարող են ահագին գումարներ ստանալ, միայն կարիքը և չքավորությունը ստիպում է նրանց վաճառել:

Ասլանը, այդ բոշաներից ազատվելու համար, ընտրեց մի քանի իրեղեններ և ձգեց նրանց մի քանի ոսկիներ, ասելով թե մյուսները իրան հարկավոր չեն: Նրանք վեր կացան և դարձյալ կարգով շարվեցան դռան մոտ, և երկար շնորհակալություններ և օրհնություններ թափելուց հետո, փորձում էին հեռանալ, բայց մտածեցին, և դարձյալ մեխված մնացին իրանց տեղերում, ընդունելով մի այնպիսի կիսածիծաղ դեմք, որ ավելի լացի նախերգանքին էր նմանում:

— Այլևս ի՞նչ ունեք ասելու,— հարցրեց Ասլանը:

— Ձեր ողջությունը… ի՛նչ պիտի ունենանք ասելու,— պատասխանեցին և դարձյալ կանգնած մնացին իրանց տեղում:

Ես մի կերպով հասկացրի, թե չէ կարելի այդքան ձանձրացնել պարոն բժշկապետին: Մահտեսի Թորոսը փոխանակ հեռանալու, ձեռքը գաղտուկ կերպով մեկնեց դեպի ինձ և դարձյալ ցուցամատի ու բթամատի պտղուցները սկսեց քսքսել միմյանց հետ: Վերջապես նրանցից մեկը հայտնեց, թե տանը ուրիշ շատ և ավելի լավ բաներ ունեն, կցանկանա՞ր պարոն բժշկապետը, որ բերեին, ցույց տային:

— Դուք հավատացնում էիք, որ ուրիշ բաներ չունեք,— նկատեց Ասլանը ծիծաղելով:

— Է՜հ, հարգելի բժշկապետ,— պատասխանեց մահտեսի Թորոսը գլուխը շարժելով և տակից աղվեսի նման նայելով Ասլանի երեսին,— գիտե՞ք ինչ է ասում թուրքի առածը:

— Չգիտեմ:

— «Գայլի բույնից ոսկորը պակաս չի լինի»…

— Այդ ես հասկանում եմ…

— Կհրամայե՞ք պարոն բժշկապետ, որ բերենք:

— Բերեցեք:

Նրանք խորին կերպով գլուխ տվեցին և միմյանց բոթբոթելով դուրս եկան սենյակից: Ես գնացի նրանց ճանապարհ դնելու: Դրսում մահտեսի Թորոսը դրեց իմ ափի մեջ մի հատ հինգ ղուրուշանոց: Ես ահագին պղնձե դրամը խփեցի ուղիղ նրա ճակատին:

— Օրհնա՜ծ, այդպիսի հանաքներ խո չեն անում,— ժպտելով ասաց մահտեսի Թորոսը, և կռանալով, վեր առեց հինգ ղուրուշանոցը, դրեց իր գրպանում, ավելացնելով,— շատ չա՜րն ես եղել…

Այդ մարդիկը ամեն մի վիրավորանք կատակի տեղ են ընդունում, որովհետև վիրավորանքին վիրավորանքով պատասխանելու ո՛չ քաջություն և ո՛չ անձնասիրություն ունեն: Բակում հեռվից տեսավ նրանց վարպետ Փանոսի մայրը և ձայն տվեց.

— Համեցե՜ք, մահտեսի Թորոս, համեցե՜ք, խոջա Մկո, համեցե՜ք խոջա Հակո, ո՞ւր եք այդպես գնում, առանց մի բան ուտելու, առանց մի բան խմելու:

Մահտեսի Թորոսը, խոջա Մկոն, խոջա Հակոն նախ շնորհակալությամբ մերժեցին պառավի հրավերքը, հայտնելով, որ շտապում են, բազարի ժամանակ է, շուկայում շատ գործեր ունեն, հետո, պառավի սիրտը չկոտրելու համար ընդունեցին նրա հրավերքը և մտան նրա հետ գինիների մառանը:

Ես զարմացա. ովքե՞ր էին այդ մարդիկը, որ տանտիկինը այնպես հարգանքով էր վերաբերվում նրանց: Երբ հարցրի սպասավորից, որ ձեռքում նախաճաշիկ էր տանում մառանը, նա պատասխանեց:

— Չե՞ք ճանաչում, մեր քաղաքի ամենահարուստ վաճառականներից են: Խոզն այնքան ճարպ չունի, որքան դրանք ոսկիներ ունեն:

Վերադառնալով սենյակը, Ասլանին սաստիկ վրդովված դրության մեջ գտա: «Ո՜րքան ցածություն… ո՜րքան ստորություն»… ասում էր նա, և զայրացած կերպով անցուդարձ էր անում սենյակի մեջ:

— Գիտե՞ս, այդ մարդիկը Վանի ամենահարուստ վաճառականներից էին,— ասացի նրան:

— Ես տարակույս չունեմ, որ ճշմարիտ է: Ասացեք խնդրեմ,— դարձավ նա դեպի ինձ,— ի՞նչ գաղափար կկազմեի ես հայերի մասին, եթե իսկապես եվրոպացի լինեի: Ահա այդ գարշելի արարածներն են, որ խայտառակում են ամբողջ ազգը, ահա դրանց հանդիպելով եվրոպացին հայոց ամբողջ ժողովրդի վրա վատ կարծիք է կազմում:

Նրա աչքը ընկավ իրեղենների վրա, որ գնել էր վաճառականներից, վեր առեց մի կողմը նետեց ասելով.

— Տարեք այդ դրամները մի տեղում կորցրեք:

— Ինչո՞ւ:

— Բոլորը կեղծ է:

— Եվ դու չճանաչեցի՞ր սկզբում:

— Ճանաչեցի, բայց դարձյալ գնեցի: Ես դիտմամբ ընտրեցի կեղծերը:

— Դու թույլ տվեցիր, որ խաբե՞ն քեզ:

— Այո, ես թույլ տվեցի, որ խաբեն ինձ:

— Ինչո՞ւ, այդ ի՞նչ խելք է:

— Որ նրանք կարծեն, թե ես հետաքրքրվում եմ միայն հնություններով, որ նրանք կարծեն, թե ես միամիտ եվրոպացի եմ, թեև վատ հնագետ եմ:

— Ի՞նչ երկյուղ ունեիր նրանցից:

— Եթե հասկանային, որ ես հայ եմ, իսկույն կգնային և որտեղ հարկն է, կմատնեին ինձ:

— Նրանք խոստացան նոր իրեղեններ ևս բերել, և դու կրկին պիտի ընդունե՞ս նրանց:

— Կընդունեմ և դարձյալ կգնեմ:

Ես զարմանում էի, նա ո՞րտեղից այդքան փող ուներ:

Նա իր ոսկիները այնպիսի առատաձեռնությամբ էր շպրտում, որպես սոխի կեղևներ:

Է

ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Մենք պատրաստվեցանք գնալ հայոց առաջնորդի մոտ:

— Սրբազանի մոտ դատարկաձեռն չի կարելի գնալ,— ասաց Ասլանը իր արկղներից մեկը բաց անելով,— նրան պետք է մի որևիցե ընծա տանել:

Նա դուրս բերեց քթախոտի մի գեղեցիկ տուփ, ասելով.

— Արևելքում պաշտոնական անձինք ընծաներ շատ են սիրում…

— Բայց դու փաշային առանց ընծայի ներկայացար:

— Դրա փոխարեն ես բժշկում եմ նրա որդուն:

Մենք նստեցինք վարպետ Փանոսի ձիերի վրա և սկսեցինք դիմել դեպի քաղաքը: Այսօր մեզ հետ ղավազներ չկային, ես և Ասլանը միայնակ էինք: Ճանապարհին նա կրկին զգուշացրեց ինձ, որ չմոռանամ իմ դերը…

Հայոց առաջնորդարանը կից էր Սուրբ Նշան եկեղեցուն:

Հոգևոր առաջնորդի բնակարանը. թեև փաշայի ապարանքի շքեղությունը չուներ, բայց իր բնավորության կողմից շատ նման էր նրան: Զանազանությունը նրանումն էր միայն, որ այստեղ չկային ներքինիներ, սևամորթ ստրուկներ, չկար և հարեմ: Բայց այստեղ ևս կար բանտ, այստեղ ևս մարդիկ տուգանքի էին ենթարկվում, այստեղ ևս կաշառակերությունը խեղդում էր, սպանում էր ամեն արդարություն:

Երևում էր, որ նորին սրբազնությունը գիտեր պահպանել իր դիրքի բարձր նշանակությունը: Մի խումբ ծառաներ դուրս թափվեցան, մեր ձիաները բռնեցին, մեզ տարան առանձին ընդունարանում, բայց տասն րոպեից ավել սպասել տվին, մինչև պատիվ ունեցանք ներկայանալու:

Ասլանը մոտեցավ համբուրելու սրբազանի աջը, բայց նա թույլ չտվեց, միայն սիրալիր կերպով սեղմեց իր այցելվի ձեռքը, հետո շատ քաղցրությամբ տեղ ցույց տվեց իր աջ կողմում, բոլորովին իր մոտ:

Ասլանը նստեց, իսկ ես նրա աջը համբուրելուց և օրհնությունը առնելուց հետո, կանգնած մնացի ոտքի վրա:

Սենյակի հատակը ամբողջապես ծածկված էր գեղեցիկ գորգերով: Եվրոպական կարասիք, որպես ամեն տեղ այդ քաղաքում, նույնպես և այստեղ չկային, միայն սենյակի պատվավոր մասում, այսինքն մուտքի հանդեպ, գորգերի վրա տարածված էր մի փափուկ մինդար, որ պատած էր սև թավիշով. նրա վրա նստած էր սրբազանը, նրա վրա նստացրեց նաև իր հյուրին: Հիսուն տարեկան հազիվ կլիներ սրբազանը, միջահասակ մարդ էր փառավոր սև մորուքով, որ դեռ նոր էր սկսել ճերմակել, և ծանր, լուրջ նայվածքով, որը խիստ հարմարվում էր նրա աստիճանին: Գլուխը սովորաբար փոքր-ինչ կորացրած էր բռնում, և տակից նայելու համեստությունն ուներ: Հագել էր երկար, ընդարձակ փարաջա սև ատլասից, որի մետաքսյա կարմիր աստառով պատած լայն թևքերը երևան էին հանում նրա գեղեցիկ թևնոցները, որ պատրաստված էին վարդագույն թավիշից և կապված էին արծաթյա կոճակներով: Աջ ձեռքում բռնած ուներ երկար «տեր-ողորմյա» դեղին սաթից. խոշոր հատիկներով, որի մի մասը փաթաթել էր բազուկի վրա: Ճկույթի վրա փայլում էր եպիսկոպոսական ոսկի մատանին, ահագին վարդագույն քարով: Այդ պատկառելի անձնավորությունը միացնում էր իր մեջ կրոնավորի անձնավորությունը և իշխանավորի փառահեղությունը:

— Ի՞նչ լեզվով կարող եմ ձեզ հետ խոսել, պարոն բժշկապետ,— հարցրեց սրբազանը,— ես դժբախտաբար եվրոպական ոչ մի լեզու չգիտեմ:

— Ես արևելյան համարյա բոլոր լեզուներով խոսում եմ, բացի հայերենից,— պատասխանեց Ասլանը տաճկերեն լեզվով:

— Այդ շատ լավ է, որ եվրոպացիք, երբ գալիս են դեպի մեր կողմերը, գիտեն տեղային լեզուներ. դա միջոց կտար նրանց ավելի լավ ծանոթանալ երկրի հետ: Բայց դուք, պարոն բժշկապետ, որպես ինձ ասեցին, եկած եք մեր քաղաքը գլխավորապես բևեռագիրները քննելու նպատակով. առանց հայերեն գիտենալու, իմ կարծիքով, դժվար կլիներ ձեզ որևիցե գաղափար կազմել մեր բևեռագրերի մասին:

— Ձեր նկատողությունը բոլորովին ճիշտ է, սրբազան հայր, բայց ինձ անծանոթ է հայոց միայն կենդանի բարբառը, որով այժմ խոսում են, իսկ հին լեզուն ես բավականաչափ ուսումնասիրել եմ:

— Ներեցեք, խնդրեմ, իմ անտեղի հետաքրքրությանը, ո՞րտեղ սովորեցիք այդ լեզուները:

— Ես բավական ժամանակ եղել եմ Հնդկաստանում, այնտեղ սովորեցի պարսկերենը և հայոց հին լեզուն. հետո ապրում էի Եգիպտոսում, այնտեղ սովորեցի արաբերեն և տաճկերեն:

– Դա մի մեծ հարստություն է– այդքան լեզուներ գիտենալ,– ասաց սրբազանը մի առանձին բավականությամբ:– Դուք, պարոն բժշկապետ, սովորած լինելով արևելյան լեզուներ, իհարկե, ընտելացած կլինեք և արևելյան սովորություններին:

– Այդ դուք տեսնում եք, սրբազան հայր,– պատասխանեց Ասլանը ծիծաղելով,– տեսնում եք՝ ինչպես ծալապատիկ նստած եմ մինդարի վրա:

Սրբազանը նույնպես ծիծաղեց:

Մի մանկահասակ պատանի, լավ հագնված, բավական գրավիչ դեմքով, ներս մտավ, մի ձեռքում բռնած արծաթյա փոքրիկ սրճամանը, մյուս ձեռքում՝ արծաթյա փոքրիկ մատուցարան, որի վրա դրած էին երկու չինական ֆինջաններ, նույնպես արծաթյա տակերի մեջ: Այդ բոլոր հրապուրիչ անոթները, անուշահոտ ըմպելիքով, չափազանց մաքրությունից փայլում էին: Պատանին ծանրությամբ մոտեցավ, ածեց սև հեղուկը, նախ տվեց հյուրին և ապա սրբազանին: Սուրճից հետո մի այլ պատանի ներս բերեց արծաթյա նարգիլեն: Այդ բոլորը, եթե կարելի է այդպես ասել, բավական փաշայական էր, բավական նման էր փաշայի տան հյուրասիրության ձևերին:

– Հիմա ես բոլորովին համոզվեցա, պարոն բժշկապետ,– ասաց սրբազանը,– որ դուք բավական ընտելացած եք մեր սովորություններին:

– Ես մինչև անգամ սիրում եմ արևելյան սովորությունները,– պատասխանեց Ասլանը, նկատելով, որ սրբազանի հարցմունքները քննական ձև են ստանում:– Երբ ես վերադառնում եմ իմ հայրենիքը, իմ ամենալավ ընծաները իմ ընտանիքին լինում են արևելյան գորգեր, շալեր, արևելյան կարասիք: Մի սենյակ իմ տան մեջ, ուր ես պարապում եմ, զարդարված է բոլորովին արևելյան ճաշակով: Արևելքը հրապուրիչ է, սրբազան հայր, նա անփառասեր կրոնավորների վրա անգամ ունենում է իր ազդեցությունը:

– Ինչպես ինձ վրա, պարոն բժշկապետ,– պատասխանեց սրբազանը, հասկանալով իր խոսակցի խուլ ակնարկությունը:– Ես, պարոն բժշկապետ, հետևում եմ մեր նշանավոր պատրիարքներից մեկի օրինակին, որը հագնում էր ամենաթանկագին զգեստներ, օծվում էր անուշահոտ յուղերով, մորուքի և գլխի մազերի վրա սփռում էր ոսկու փոշի և իրան շրջապատում էր ամեն տեսակ շքեղություններով: Մի անգամ,

սուլթանի հետ սեղան նստած ժամանակ, թագավորը նկատողություն արեց նրան, թե կրոնավորին վայել չէ այդ աստիճան պճնասիրությունը: Նա, փոխանակ պատասխանելու, բաց արեց իր օձիքը և ցույց տվեց. փառավոր մետաքսյա զգեստի ներքո, մերկ մարմնի վրա, նա հագած ուներ այծի մազից գործված, կոշտ, ծակռտող խարազն, որ մի ժամանակ հագցնում էին հանցավորներին, երբ կամենում էին ավելի տանջել նրանց, հետո սովորություն եղավ հագնել ճգնավորներին, որոնք իրանց անձը ենթարկում էին ամեն տիպի փորձությունների:

Ասլանը շատ լավ գիտեր, որ նորին սրբազնությունը իր սև ատլասի փարաջայի տակից այս տեսակ խարազն հագած չունի, բայց դարձյալ համաձայնվեցավ նրա հետ, ասելով.

– Արևելքում արտաքին փայլը մեծ նշանակություն ունի:

– Մինչև անգամ հարկավոր է,– ավելացրեց սրբազանը,– այստեղ մարդկանց խելքը աչքերումն է և ոչ գլխումը: Իմ նախորդը, երբ որ գնում էր փաշայի մոտ, նրան ժամերով սպասել էին տալիս, մինչև թույլտվություն էր ստանում ներկայանալու, որովհետև ոտքով էր գնում և աբեղայական հասարակ հագուստով: Բայց ինձ հետ այնպես չեն վարվում…

– Ձեր փաշան բավական քաղաքավարի մարդ է,– խոսքը փոխեց Ասլանը:

– Ամենապատվական մարդ է, բարի, առաքինի, ժողովրդասեր, աշխարհաշեն, մի խոսքով, թե՛ իբրև մարդ և թե՛ իբրև երկրի կառավարիչ, անգնահատելի է, իր նմանը չունի: Նա բոլորովին հիացած է ձեզանով, պարոն բժշկապետ, նա ձեզ Լողմանի հետ է համեմատում. ձեր սակավաժամանակյա բժշկությունը թե՛ փաշայի վրա և թե՛ նրա որդու վրա մեծ օգուտ է բերել: Քանի օր նրա մոտ էի, միշտ ձեզ վրա էր խոսում, և միշտ այն էր հարցնում, թե ի՞նչով կարող է երախտամատույց լինել ձեզ:

– Ես նրան մի մեծ ծառայություն չեմ արել,– պատասխանեց Ասլանը,– բայց պատրաստ կլինեի, եթե իմ ժամանակը ներեր, ավելի մեծ ծառայություններ անել, որովհետև նա արժանավոր մարդ է, և մանավանդ որ դուք այդքան գովում եք:

– Ճշմարիտ է, արժանավոր մարդ է և գովության արժանի է,– կրկնեց սրբազանը:

– Ուրեմն ժողովուրդը պետք է շատ գոհ լինի մի այդպիսի լավ կառավարչից:

– Ժողովուրդը չափազանց գոհ է, մանավանդ քրիստոնյաները: Բայց…

Վերջին բառը արտասանելու միջոցին սրբազանի աչքը ընկավ իմ երեսին, և նա ընդհատեց իր խոսքը: Ասլանը, այդ նկատելով, ինձ նշան արեց, որ հեռանամ: Ես դուրս եկա նախասենյակը և նստեցի դռան մոտ: Նրանց խոսակցությունը պարզ լսելի էր և այնտեղ:

– Դուք մի բան էիք ուզում ասել, սրբազան:

– Այո, այն էի ուզում ասել, որ ժողովուրդը չափազանց գոհ է, մանավանդ քրիստոնյաները: Բայց մեր մեջ այժմ դուրս են եկել մի տեսակ խենթ ու խելառ նորելուկներ, որոնք, ամենահիմար ցնորքներով ոգևորված, ազատության հրապույրներով հուզմունքներ են հարուցանում ժողովրդի մեջ և միամիտներին մոլորեցնում են: Եվ այդ՝ երիտասարդություն կոչված, ցնորամիտ փոքրամասնությունն է, որ դժգոհ է տիրող կառավարությունից: Ցավալին այն է, որ նրանց դժգոհությունը արտահայտվում է այնպիսի ապօրինի և հանցավոր

եղանակներով, որ, ոչինչ լավ արդյունք չունենալուց հետո, մեծամեծ վնասների և կորուստների պատճառ է դառնում:

– Ո՛րպիսի վնասներ,– հարցրեց Ասլանը:

– Այդքանն էլ մեծ վնաս և մեծ կորուստ պետք է համարել, պարոն բժշկապետ, որ մենք կորցնում ենք մեր բարեխնամ կառավարության աչքում մեր հավատարմությունը, որ ստացել ենք կարևոր, անձնանվեր ծառայությամբ: Մեր ժողովուրդը մի քանի խելագարների պատճառով կասկածավոր է դառնում կառավարության աչքում:

– Մի՞թե կա հայերի մեջ այդ տեսակ երիտասարդություն,– հարցրեց Ասլանը զարմացած կերպով:

– Դժբախտաբար կա, բայց դեռ նոր է ծնվում, դեռ նոր է կազմակերպվում: Բայց թե՛ ես, որ իմ սուրբ պարտավորությունն եմ համարում, և թե՛ փաշան, որ նույնքան նախանձախնդիր է այդ գործում, ամեն ջանք պետք է գործ դնենք, որպեսզի այդ չարիքը քանդենք հենց իր ծնունդի մեջ:

Ասլանը ոչինչ չպատասխանեց և ինձ ներս կանչեց:

– Ասացեք խնդրեմ, սրբազան հայր,– խոսքը փոխեց նա,– ձեր վանքերում չե՞ն գտնվում հին բժշկարաններ, դա ինձ համար, որպես բժշկի, շատ հետաքրքիր է: Հայոց բժշկարանները, ըստ մեծի մասին թարգմանված լինելով արաբականից, այժմ արաբերենի մեջ շատերի բնագիրը կորած է. ես մեծ հույս ունեմ հայերեն թարգմանությունների մեջ գտնել այն կորած գրքերը:

– Գրչագիր բժշկարաններ կարելի է գտնել մեր վանքերում,– պատասխանեց սրբազանը,– ինձ ևս շատ անգամ պատահել է տեսնել: Կարելի է գտնել նաև մասնավոր տներում:

– Իհարկե, ձեզ պետք է հայտնի լինեն այն վանքերը, որոնց մեջ ավելի մեծ թվով գրչագրեր են պահպանվել:

– Ինչպես չէ, բոլորը հայտնի են, օրինակ, Վարագա վանքը, ծովի մեջ գտնված երեք կղզիները, որոնց յուրաքանչյուրի մեջ մի-մի անապատ կա, և ուրիշ շատ վանքեր, որոնք գտնվում են իմ վիճակի մեջ:

– Դուք ինձ շատ կպարտավորեիք, սրբազան հայր, եթե կշնորհեիք ինձ մի թուղթ, որ ձեր թեմի մեջ գտնված վանքերում, որտեղ կպատահեր ինձ լինել, ցույց տային ինձ գրչագիրները: Ես նրանց չէի շարժի իրանց տեղից, բայց եթե իմ նպատակներին հարմար բան գտնեի, կխնդրեի, որ արտագրեն ինձ համար:

– Մեծ ուրախությամբ: Ես կհրամայեմ հենց այսօր պատրաստեն այդ թուղթը: Նրա մեջ նշանակված կլինեն բոլոր վանքերի անունները, որոնց մեջ գտնվում են գրչագիրները:

– Շատ շնորհակալ եմ, ձեր թուղթը ինձ համար միևնույն ժամանակ մի տեսակ ուղեցույց կլինի:

Սրբազանը հրամայեց երկրորդ անգամ սուրճ տան և կանչեց իր քարտուղարին:

– Մինչև դուք մի անգամ ևս նարգիլե կծխեք, թուղթը պատրաստ կլինի:

Քարտուղարը հարկավոր պատվերը ստանալուց հետո, գլուխ տվեց և հեռացավ: Ասլանը դարձյալ շարունակեց խոսել բժշկության վրա:

– Եվրոպան արևելքից սովորելով բժշկությունը, սկսեց բոլորովին մոռանալ իր վարժապետին: Հառաջադեմ աշակերտը, իրավ է, կարող է ավելի զարգանալ և իր սովորածը ավելի կատարելագործել, բայց հին վարժապետի մոտ դարձյալ շատ բան մնում է: Ես, օրինակ, հիացած եմ հայոց ժողովրդական բժշկությամբ: Ճանապարհորդությանս ժամանակ ըստ մեծի մասին խույս էի տալիս քաղաքներից, անցնում էի հայոց գյուղերով, ժողովրդի բժշկության եղանակները ուսումնասիրելու համար: Ինձ հաջողվեց մի քանի նշանավոր գյուտեր անել, որ մեր բժշկության մեջ բոլորովին անծանոթ են:

Ասլանը սուտ չէր խոսում. նա, իրավ, հետաքրքրվում էր ժողովրդական բժշկությամբ և նրա գրքերով, բայց այդ չէր նրա ճանապարհորդության իսկական նպատակը: Հանգամանքներից օգուտ քաղելու զարմանալի ընդունակություն ուներ այդ մարդը, և ավելի զարմանալի էր նրա մեջ այն ճարպկությունը, որ իր ցանկացած նպատակը հենց իր հակառակորդի ձեռքով կատարել կտար: Օրինակ, նա պետք է գնար Վարագա վանքը, և ինձ լավ հայտնի էր, թե ինչ նպատակով: Նրա այցելությունը այդ վանքին՝ կարող էր մեծ կասկած հարուցանել սրբազանի սրտում, որովհետև, ինչպես հետո կտեսնենք, նա Վարագա վրա շատ վատ աչքով էր նայում: Այժմ Ասլանը այնպես պտտացրեց գործը, որ ինքը սրբազանը նրան թուղթ տվեց Վարագ գնալու, թեև ես հավատացած էի, որ Վարագա գրադարանը նրան շատ չէր հետաքրքրում:

– Ես կցանկանայի տեսնել նաև մի տեսակ աղ, որ պատրաստվում է Վանում,– ասաց նա:

– Այդ աղը պատրաստվում է Ավան գյուղում,– պատասխանեց սրբազանը,– այստեղից շատ հեռու չէ գյուղը, ընդամենը մի քանի ժամվա ճանապարհ է: Պատրաստում են ծովի ջրից, «բորակ» է կոչվում, այստեղ գործ են ածում լվացքի մեջ, մաքրելու զարմանալի զորություն ունի:

– Նա բորակ չէ,– ասաց Ասլանը,– անկասկած մի այլ բաղադրություն պետք է լինի: Եթե իմ կարծած աղից լինի, որի մեջ տարակույս չունեմ, կարելի է հուսալ, որ այդ աղը ժամանակով կդառնա վանեցոց հարստության գլխավոր աղբյուրներից մեկը:

– Հարստություններ շատ կան մեր երկրում, պարոն բժշկապետ,– ասաց սրբազանը ցավակցական եղանակով,– մեր հանքերը լի են արծաթով, զառիկով, պղինձով, մենք ունենք նավթի աղբյուրներ, առատ քարածուխ ևս գտնվում է մեր լեռներում, ուրիշ ի՛նչեր չունենք մենք, բայց օգուտ քաղողներ չկան: Եթե ձեզ նման ճանապարհորդներ հաճախ այցելեին մեր կողմերում և ուսումնասիրեին երկիրը, մենք բախտավոր կլինեինք:

– Այդ իրավ է,– ասաց Ասլանը և, նայելով ժամացույցին, ավելացրեց,– ներեցեք, սրբազան հայր, ես բավական ժամանակ խլեցի ձեզանից: Ճանապարհորդները առհասարակ սաստիկ շատախոս են լինում, բայց ես չափը անցա: Ձեր հաղորդած տեղեկությունները այն աստիճան թանկագին էին ինձ համար և գրավիչ, որ ես չէի կարող օգուտ չքաղել:

— Շատ ուրախ եմ, պարոն բժշկապետ,— ասաց սրբազանը մի առանձին բարեսրտությամբ,— դուք ինձ մեծ բավականություն կպատճառեիք, եթե որքան ժամանակ այստեղ կմնայիք, շուտ-շուտ տեսնվեինք, գուցե ես կարող կլինեի ուրիշ ծառայություններով ևս պիտանի լինեք ձեզ:

— Շատ շնորհակալ եմ, սրբազան հայր:

Այդ միջոցին սրբազանը վեր կացավ, մտավ կից սենյակը, մի քանի րոպեից հետո վերադարձավ, ձեռքում բերելով մի օտարոտի բան, որը առաջարկեց Ասլանին, ասելով.

— Դուք ինձ հարգած կլինեիք, եթե հիշատակի համար այդ չնչին նվերը ընդունեիք ինձանից և դասեիք ձեր հավաքած հնությունների կարգում:

Դա փոքրիկ թիակի ձևով մի գործիք էր փղոսկրից շինված: Նրա կոթը զարդարած էր ամենանուրբ քանդակներով, իսկ գլուխը կնոջ քնքուշ ձեռքի նմանություն ուներ, որի ափի մեջ երևում էին խարտոցի ատամների պես փափուկ խազեր: Ասլանը ձեռքում բռնած, երկար նայում էր նրա վրա, հետո երեխայի պես ուրախանալով, ասաց.

— Ես այն աստիճան սիրահարված եմ հնությունների վրա, սրբազան հայր, որ եթե դուք չտայիք այդ գեղեցիկ ընծան, ես պատրաստ կլինեի մինչև անգամ գողանալ ձեզանից:

— Իսկ ես ձեր այդ փոքրիկ մեղքը կներեի, որպես հոգևորական,— պատասխանեց սրբազանը նույնպես ուրախանալով:

Ուղիղն ասած, ես էլ չկարողացա զսպել ինձ, սկսեցի ծիծաղել այդ հանաքների վրա:

— Ձեր ընծան որքան հիանալի է, սրբազան հայր,— ասաց Ասլանը,— բայց խոստովանում եմ, որ նույնքան ես վատ հնագետ եմ նրա նշանակությունը հասկանալու համար: Բացատրեցե՛ք, խնդրեմ, դա ի՞նչ բանի է ծառայում:

— Դա մեր վանական աբեղաների հնարած մի գործիք է կոչվում է «տիրուհի», հենց այդ անվան մեջն է նրա նշանակությունը, որովհետև կատարում է նույն ծառայությունը, ինչ որ տան տիրուհին կատարում է ընտանիքի մեջ: Հայոց ընտանիքներում դեռ պահպանվել է վաղեմի սովորությունը, որ տան տիրուհին քորում է իր սկեսուրի, սկեսրայրի և մինչև անգամ հարգելի հյուրերի մեջքը, մաժում է նրանց ոտները և հանգստացնում է նրանց քնելու ժամանակ: Որովհետև աբեղաները զրկված են տիրուհիներից, հնարել են մի այսպիսի գործիք իրանց մեջքը քորելու:

— Շատ սուր կատակ է աբեղաների կողմից,— խոսեց Ասլանը ժպտելով:— Ասացեք խնդրեմ, ո՞ր դարու գործ է այդ «տիրուհին»:

— Պետք է տասներկուերորդ դարու գործ լինի, որովհետև այն կաթողիկոսը, որին ընծայված է եղել այդ «տիրուհին», ապրում էր տասներկուերորդ դարում— դա Դավիթն էր, որ Աղթամարա կաթողիկոսության սկիզբը դրեց:

Ասլանը փոքր-ինչ դժվարություն ցույց տալով, կարդաց հետևյալ մակագրությունը:

«Ի վայելումն Դաւթի Աղթամարայ սրբազնասուրբ կաթողիկոսի»: «Ի Հնդիկս»:— Ուրեմն Հնդկաստանի գործ է, երևում է, հայերը դեռ տասներկուերորդ դարում Հնդկաստանում գաղթականություն են ունեցել:

— Այդ չգիտեմ,— պատասխանեց սրբազանը:

— Ասացեք խնդրեմ, այս տեսակ «տիրուհիներ» մինչև այսօր գո՞րծ են ածվում ձեր վանքերում:

— Այո՛, գործ են ածվում, մանավանդ այն վանքերում, ուր բոլորովին փակված կյանք են վարում:

— Հիանալի գեղարվեստ կա դրա մեջ,— ասաց Ասլանը իսկապես հրճվելով,— այդ «տիրուհին» կարող է Եվրոպայի ամենանշանավոր մուզեումներից մեկի զարդը լինել, բայց ես ինձ մոտ կպահեմ, իբրև թանկագին հիշատակ: Ուրեմն թույլ տվեցեք, սրբազան հայր, իմ կողմից ևս ձեզ մոտ մի փոքրիկ հիշատակ թողնել:

Ասլանը նայեց իմ երեսին, ես մոտեցա և քթախոտի փղոսկրյա տուփը, որ պահված էր գեղեցիկ պատյանի մեջ, դրեցի նրա առջև: Նա վեր առեց և տվեց սրբազանին, որը շնորհակալությամբ ընդունելով, ասաց.

— Որքան անգամ այդ տուփը ձեռքս առնելու լինեմ, ձեր անունը օրհնությամբ կհիշվի իմ բերանում, պարոն բժշկապետ:

Ասլանը այլևս երկար չնստեց, երբ քարտուղարը պատրաստած թուղթը ներս բերեց: Սրբազանը կնիքը դրեց և ստորագրեց թուղթը, հետո իր ձեռքով տվեց Ասլանին: Նա շնորհակալությամբ ընդունեց թուղթը, և «տիրուհին» առնելով, վեր կացավ: Երբ սրբազանի աջը սեղմելով կամենում էր հեռանալ, նա կանգնեցրեց, ասելով.

— Կիրակի գիշեր ինձ մոտ հյուրեր կլինեն, որոնց թվում կլինի և փաշան, և մեր քաղաքի մի քանի նշանավոր անձինք: Խնդրեմ, դուք ևս հարգեք մեր սեղանը:

— Մեծ ուրախությամբ,— ասաց Ասլանը և մենք դուրս եկանք:

Բակի դռան մոտ տեսանք քարտուղարին, որ դարան մտած կատվի պես սպասում էր մեզ:

— Դրան պետք է մի բան տալ,— ասեցի Ասլանին:

— Գիտեմ,— ասաց նա, և կանչելով քարտուղարին, դրեց նրա ափի մեջ մի հատ ոսկի:

Քարտուղարը, ի նշան իր շնորհակալության, բռնեց Ասլանի ձիու ասպանդակը, որ նա հեծնե: Ասլանը մերժեց այդ ցած ծառայությունը, որ վայել չէր նրա աստիճանին:

ճանապարհին ես ասեցի Ասլանին:

— Բավական քաղաքավարի մարդ երևաց ինձ սրբազանը:

— Եվ հիմար մարդ չէ:

Ը

ՆԱՎԱՀԱՆԳՍՏԻ ԴՈՒՌԸ

Առաջնորդարանից դուրս գալուց հետո, մենք այլևս չվերադարձանք Այգեստան, որովհետև Ասլանը կամենում էր Ավանց գյուղը գնալ, ծովային աղերի պատրաստությունը տեսնելու համար: Նա ինձ ասաց, որ ճանապարհը գիտե և առաջնորդի ամենևին կարոտություն չկա:

Մինչև կեսօր դեռ բավական ժամանակ կար: Մենք դուրս եկանք Իսքալե-Կափուսի կոչված քաղաքադռնից, որ տանում է դեպի նավահանգիստը: Այդ պատճառով ևս

նա կոչվում է Իսքալե-Կափուսի, որ նշանակում է նավահանգստի դուռ: Այստեղից մինչև Ավանց գյուղը, որի մոտ գտնվում էր և նավահանգիստը, կես ժամու ճանապարհ է, բայց մենք զանազան հետազոտությունների պատճառով բավական ուշ հասանք, ճանապարհը ձգվում էր մշակված դաշտերի, ագարակների, այգիների և կանաչազարդ մարգագետինների միջով: Դա բանուկ ճանապարհներից մեկն էր, որ, քաղաքից տանում էր դեպի նավահանգիստը: Խիստ հաճախ պատահում էինք խումբերով ուղևորների, որոնք զարմացած կերպով նայում էին եվրոպացու վրա և, գլուխ տալով, անցնում էին: Ճանապարհի եզերքին շատ անգամ տեսնում էինք մենավոր մարդիկ,որ անշարժ նստած գետնի վրա, անխորհուրդ կերպով նայում էին անցուդարձ անողների վրա: Նրանց մոտ ուրիշ ոչինչ չկար, բացի անբաժան չիբուխից, որ դրած էր նրանց կշտին: Այդ անգործ, ծույլ, աննպատակ մարդիկը ժամերով այդպես անշարժ կնստեն և կնայեն, ինչի՞ համար, իրանք ևս չգիտեն: Եվրոպացու երևույթը խռովում էր և նրանց հանգստությունը. նրանք ևս ոտքի էին կանգնում, խոնարհությամբ գլուխ էին տալիս, և երբ մենք անցնում էինք, դարձյալ նստում էին ու նայում:

Մեզ պատահեց քուրդի քարավան: Դա հիշեցնում էր հովիվ ժողովրդի այն խորին, նախնական դրությունը, երբ բոլոր չորքոտանիներից ընտանիացրել էր նա կովին ու եզին միայն: Քարավանի ամբողջ գրաստները եզներ էին: Քուրդը նրանց վրա բարձել էր այն մթերքները, որ գնել էր քաղաքից, նրանց վրա նստացրել էր և իր կնոջը, մի երեխա գրկումը, մեկն էլ ետևում, մոր մեջքին կապած: Քարավանը դիմում էր դեպի նավահանգիստը: Առանց սանձի, առանց համետի, իլու և հնազանդ անասունները, դանդաղկոտ քայլերով, տանում էին իրանց ծանրությունները: Մտրակի կարոտ չէին նրանք, նրանց կառավարում էր տիրոջ ձայնը: Ճանապարհի ամբողջ լայնությունը, երկար տարածության վրա, լցված էր այդ խառնիճաղանջ բազմությամբ: Բայց երբ մենք մոտեցանք, քարավանը իսկույն երկու մասն բաժանվեցավ, մեզ ճանապարհ տվին, մենք մեջտեղից անցանք: Եվրոպացուն հանդիպելը գռեհիկ քուրդի մեջ անգամ մեծարանք էր ազդում:

Իսքալե-Կափուսից անցնելով, շուտով մենք հասանք այն նշանավոր տեղը, ուր ճանապարհի մի կողմում, մենք տեսանք ահագին մեծահատոր քարեր, որ կարծես հսկաների ձեռքով շարված լինեին միմյանց վրա: Քարերի ծերպերից վազում էին պարզ, սառն աղբյուրներ, և մամուռը իր կանաչ թավիշով պատել էր հին արհեստագործության հրեշավոր կերպարանքը:

Վանեցի հայերի ավանդությունը հիշյալ քարերի մասին հրաշքներ է պատմում. դրանց վերաբերում է այն ժամանակներին, երբ մարդիկ այժմյան նման փոքրիկներ չէին, այլ հսկաներ էին: Նրանք պատերազմում էին դևերի և վիշապների հետ, և ահագին քարաժայռը, թեթև գնդակի նման, նետում էին դեպի թշնամին: Հիշյալ քարերի կառուցումը և նրանց շինվածքը տղամարդի գործ չէ, ասում է վանեցին, այլ այն ժամանակի տկար կնոջ ձեռքի գործն է: Մայրը տվել է այն ահագին քարերը աղջկան, և աղջիկը մոր ձեռքից առնելով, շարել է միմյանց վրա:

Երբ այդ ավանդության մասին հարցրի Ասլանից, նա պատասխանեց.

— Երևում է, որ ամենահին ժամանակներում մի կին թագավոր Վանի մեջ և կամ նրա շրջակայքում մեծ գործեր է կատարել: Այդ միմյանց վրա շարած քարերը, որ տեսանք, ուրիշ ոչինչ չեն, եթե ոչ փշրանքները այն հսկայական ամբարտակի կամ պատնեշի, որ մի ժամանակ կառուցվել է ծովի ջրերի աճելու առաջն առնելու համար, որ չմոտենան քաղաքին: Խորենացին այս ամբարտակի կառուցումը վերաբերում է Շամիրամին, որ գործ է դրել նրա շինության վրա 12 հազար բանվորներ և 6 հազար արհեստավորներ: Բայց Խորենացու նկարագրություններից երևում է, որ նա Վանը կամ ամենևին չէ տեսել, կամ մի ժամանակ տեսել է, բայց իր պատմությունը գրելու

միջոցին շատ բան մոռացել է: Եթե Խորենացին հետևած լիներ ժողովրդի մեջ պահպանված ավանդություններին, նա ամենևին այդ բոլոր մեծագործությունները Շամիրամին չէր վերաբերի, այլ մի թագուհու, որ տեղային ժողովրդից էր: Այսօր ժողովուրդը մոռացել է այդ թագուհու անունը, բայց նրա գործը դեռ հիշում է: Նա ասում է. այդ քարերը մի աղջիկ է շարել միմյանց վրա: Բայց Խորենացու ժամանակ, եթե նա դիմած լիներ ժողովրդին, նրան կասեին, թե ով էր այդ աղջիկը:

Ծովը մեր առջևն էր: Միջօրեի պայծառ արեգակի լուսավորության ներքո, սքանչելի տեսարան էր ներկայացնում նա: Նրա բարձր նկարչական եզերքը, պատած թուփերով և կանաչազարդ խոտերով, կամաց-կամաց ցած էին իջնում, միախառնվում էին ջրերի պարզ-կապուտակության հետ և, կազմելով մի հրաշալի պատկեր, կարծես ձգտում էին մրցել երկնքի ֆերուզայի գույն հստակության հետ: Սիփանը, ծովը շրջապատող լեռներից ամենաբարձրը, երևում էր իր վեհափառ գագաթով: «Վարդապետիկների» (կյո՛ւ-կյո՛ւների) ուրախ երամը, սուր վեղարները գլխներին, աղմկում էին օդի խաղաղությունը իրանց զիլ ձայներով: Ջրերի խորքերից, կիսալուսնաձև թևիկներով, թռչում էին նրանք դեպի ափերը: Այդ ուրախ, մշտազվարճ թռչունները կարծես այն աբեղաների ոգիները լինեին, որոնք, ձանձրացած իրանց մռայլ խուցերի տխրությունից, թողել էին Կտուց անապատի կղզին և սլանում էին դեպի աշխարհ, դեպի կյանքը, դեպի մարդկություն…

Իսքալե-Կափուսիից մենք անցանք Ավանց գյուղը: Այդ գյուղը գտնվում է քաղաքի արևմտյան կողմում, ծովի ափի մոտ, և նրա նավահանգիստն է: Այստեղից քաղաքը ջրային հաղորդակցություն ունի Մուշի, Բաղեշի և այլ ծովեզրյա գավառների հետ: Ավանց գյուղը երկու մղոնով միայն հեռու է քաղաքից: Նա ամբողջապես հայաբնակ է և ունի մոտ 300 տուն հայ բնակիչներ, որոնց գլխավոր պարապմունքն է նավարկություն և ծովի ջրերից «բորակ» կոչված աղը գոյացնելը: Յոթանասուն ընտանիքից ավելի տներ ունեին իրենց սեփական նավակները ջրերի վրա: Ավանցիք պարապում էին և երկրագործությամբ. այդ գյուղի այգիները ամենագեղեցիկներն են Վանի շրջակայքում:

Մտնելով գյուղը, հենց առաջին փողոցում հանդիպեցինք վարպետ Փանոսին, որ մի խումբ գյուղացիներով շրջապատված, ինչ-որ խոսում էր նրանց հետ: Նա երևի այնտեղ սպասում էր մեզ:

— Ի՞նչ եք շինում այստեղ,— հարցրեց Ասլանը:

— Եկել եմ «նիսիաներ» հավաքելու,— պատասխանեց նա:— Չգիտեմ ի՞նչ պետք է անել այդ գյուղացիների հետ, բերում են իրանց գործվածները, ներկել են տալիս, իսկ փողը չեն վճարում: Լավ է, որ պատահեցիք, պարոն բժշկապետ,— խոսքը փոխեց նա,— դուք երևի եկել եք այստեղի աղերը հետազոտելու, ուրեմն այսօր այստեղ կմնաք, և եթե գնալու ցանկություն ևս ունենաք, մենք ձեզ չենք թողնի, կպահենք այստեղ: Գյուղում մի քանի վտանգավոր հիվանդներ կան, պետք է նրանց օգնություն հասցնել: Առայժմ ձեզ հարկավոր է մի տեղ հանգստանալու համար:

Երևում էր, որ վարպետ Փանոսը այդ գյուղում մեծ ծանոթություններ ուներ, ամեն կողմից նրան խնդրում էին, որ մեզ իրանց մոտ տանե, բայց նա տարավ մեզ մի տուն, ուր նրա ասելով հիվանդներից մեկը հենց այնտեղ էր:

Այդ տունը իր ընդարձակ բակով և ծառախիտ պարտեզով ամառվա համար ամենահարմար իջևանը կարելի էր համարել: Նա բոլորովին մոտ էր ծովեզրին և առատությամբ ընդունում էր ծովային հովասուն օդը: Քառակուսի բակը շրջապատված էր մեկ ու կես կանգունաչափ քարյա պարսպով, որը այնքան ցած էր, որ վրայից հեշտությամբ կարելի էր թռչել: Երևում էր, որ տան տերը երկյուղ չուներ

գողերի գիշերային արշավանքից: Բակի մի կողմում, չորս սյուների վրա կանգնած էր, չորս կողմից էլ բաց մի ծածկոց, որին կոչում էին «չարդախ»: Նրա տակին ածած էին զանազան մեծությամբ հին ու նոր տախտակներ, դեռ չսղոցած գերանների կտորներ և հյուսնի զանազան ատաղձներ: Այդ բոլորը տեսնելով, առաջին անգամից, այդ տունը հյուսնի արհեստանոցի տպավորություն էր գործում: Չարդախից մի դուռ բացվում էր դեպի փոքրիկ խրճիթը, այնտեղից ուրագի ձայն էր լսվում: Այնտեղ գործում էր ալևոր արհեստավորը, բայց նա տան տերը չէր, նա մի օտարական էր, որին ժամանակավոր բնակարան էին տվել աշխատելու:

Տան տերը չէր երևում. չէր երևում և ոչ ոք տանեցիներից, միայն մի քանի սագեր, որ դեռ նոր էին վերադարձել ծովեզրից, որոնում էին մի հովանավոր տեղ, արևի կիզող ճառագայթներից պատսպարվելու համար: Նրանցից մեկը դիմեց դեպի ուռիների տարածած ստվերը, և կչկչալով, համեցեք անելով, իր ընկերներին ու ընկերուհիներին հրավիրեց այնտեղ: Ամբողջ երամը հանգստացավ սառն ստվերի ներքո, ուր արևի կրակից և ոչ մի նշույլ չէր թափանցում: Մենք դեռ բակումը ման էինք գալիս, սպասում էինք տան տիրոջը:

Վերջապես հայտնվեցավ նա: Դա մի հաստաբազուկ, թիկնավետ, բարձրահասակ տղամարդ էր, արևակեզ դեմքով, որի սուր, թափանցող հայացքը կարծես նետի նման մեխվում էր մարդու սրտի մեջ: Գլխին դրած ուներ կապույտ և կարմիր թելերով նախշած արախչին, հագել էր միայն հաստ, սպիտակ կտավից շապիկ, որի նույնպես կապույտ և կարմիր թելերով ասեղնագործած օձիքից երևում էր թավամազ, հզոր կուրծքը: Օրվա ջերմությունը ստիպել էր նրան փոքր-ինչ զովություն տալ իր թոքերին: Մեջքը պնդած էր մետաքսյա գոտիով, որից քարշ էր ընկած մի մեծ դանակ: Կապտագույն շալվարը, վերևից բավական լայն, իսկ հետզհետե սաստիկ նեղանալով, իջնում էր մինչև նրա ծնկները: Սրունքները մնացել էին բոլորովին մերկ, մերկ էին և ոտները: Հոլանի բազուկները ծալած էին մինչև արմունկները, երևում էր, որ ծովեզրից էր գալիս և այնտեղ ջրերի հետ գործ էր ունեցել: Եվ իրավ, այդ ամենատաղանդավոր արձանագործի քերիչին արժանի տղամարդը պարապմունքով նավավար էր, և նավահանգստում կապած էր նրա սիրուն նավակը:

Վարպետ Փանոսի հետ նա նախածանոթ էր երևում, մոտեցավ նրան, և ինչ-որ խոսեց, բայց իմ և Ասլանի վրա առանձին ուշադրություն չդարձրեց: Եվրոպացին նրան չէր զարմացնում, կարելի էր կարծել, որ նա եվրոպացիք շատ էր տեսել:

Վարպետի հետ իր խոսքը վերջացնելուց հետո, նա անփույթ կերպով մոտեցավ մեզ և, առանց բարևելու, ասաց.

— Այստեղ ինչո՞ւ եք կանգնած:

Նրա անքաղաքավարությունը, որ կոպտության էր հասնում, սաստիկ վիրավորեց ինձ: Ասլանը ոչինչ չպատասխանեց: Պատասխանեց վարպետ Փանոսը իր սովորական ծիծաղով:

— Օրհնա՛ծ, ո՞ւր գնանք, ամբողջ ժամ սպասում էինք այստեղ, ոչ տան տեր էր երևում և ոչ տան տիրուհի, որ մեզ մի տեղ ցույց տար:

— Այդ մարդիկը, ասենք թե, օտարներ են, դու խո իմ տան բոլոր ծակուծուկը գիտես, ինչո՞ւ չէիր տեղ ցույց տալիս:— Նա դարձավ դեպի մեզ ասելով,— եկեք:

Նա տարավ մեզ մի երեսը բաց սրահ (էյվան), որ նայում էր դեպի պարտեզը: Սրահի բաց կողմը բաժանված էր պարտեզից փայտյա վանդակապատով, իսկ նրա միջից բացվում էր մի դուռ դեպի մյուս սենյակները: Սրահը տան ամառային կեցության համար էր:

— Աղջի, Ծովինար, ո՞ւր ես,— ձայն տվեց նա:

Սենյակի դուռը բացվեցավ և ներսից հայտնվեցավ մի գեղեցիկ աղջիկ, տասնչորս տարեկան, որի արախչինը ամբողջապես ծածկված էր արծաթյա և ոսկյա դրամներով, և թասի ձև էր ստացել: Արախչինի տակից սփռված էին նրա թիկունքի վրա, առանց հյուսերի, արծակ ծամերը և կիսով չափ սքողում էին նրա թուխ դեմքը: Աղջիկը ավելի քաղաքավարի գտնվեցավ, քան թե հայրը. երբ որ տեսավ մեզ, հեռվից գլուխ տվեց և լուռ կանգնեց, սպասելով հոր հրամանին:

— Բեր այստեղ մի շոր քցիր, որ այդ մարդիկը նստեն,— ասաց հայրը:

Աղջիկը շուտով ջուր բերեց, ճարպիկ մատներով սրսկեց սրահի կավով ծեփած հատակի վրա, հետո տարածեց եղեգներից հյուսած ընդարձակ հասիրը, իսկ նրա վրա մի քանի նախշուն կապերտներ: Մենք կանգնած սպասում էինք, մինչև նա իր գործը վերջացնե:

— Մի մինդար էլ բեր այդ պարոնի համար,— նա ցույց տվեց Ասլանի վրա,— այդ պարոնը ֆրանկ է, նրա տեղը պետք է փափուկ լինի, իսկ մենք չոր գետնի վրա էլ սովոր ենք նստել:

Աղջիկը ներս վազեց, բերեց մինդարը, տարածեց իր պատշաճավոր տեղում: Ասլանը նստեց, իսկ ես ոտքի վրա կանգնած մնացի:

— Դու ինչո՞ւ այդպես ցցված մնացիր, կարծես փայտ է կուլ տվել, նստել չէ կարող,— ասաց մեր հյուրընկալը, և տեսնելով, որ ես փոքր-ինչ ծանր շարժվեցա, բռնեց իմ ուսից և իր ձեռքի երկաթի ծանրությամբ համարյա թե ինձ թխեց կապերտի վրա:

Ես չգիտեի ինչպես ընդունել այդ վայրենի փաղաքշանքը: Ես սաստիկ բարկացա, մանավանդ երբ տեսա, որ սիրուն, աղջիկը ձեռքով աչքերը բռնեց և ծիծաղելով փախավ մյուս սենյակը: Ես իմ մտքում արդեն սկսել էի տրտնջալ վարպետ Փանոսի վրա: Ինչո՞ւ այստեղ բերեց մեզ, մի՞թե ամբողջ գյուղում մի օրինավոր տուն չկար: Բայց Ասլանի դեմքի վրա դժգոհության նշաններ չէին երևում:

— Աղջի՛,— դարձյալ ձայն տվեց նա,— մի բան պատրաստեցեք դրանք ուտեն, ճանապարհից են գալիս, քաղցած կլինեն:

Նրա ձայնը ավելի որոտում էր, քան թե խոսում էր:

— Ճանապարհից եկած հյուրերի նախ ձիերին են կերակրում,— նկատեց վարպետ Փանոսը:

— Այդ որ իմանում ես, դե՛ վեր կաց, ահա՛ այնտեղ խոտ է դրած, տար ածիր ձիերի առջևը,— պատասխանեց նա խոտի դեզը ցույց տալով: Տեսնում ես, որ ծառաները տանը չեն:

Վարպետ Փանոսը գնաց ձիերին ճարակ տալու: Նա դարձավ դեպի Ասլանը.

— Զարմանալի մարդիկ են այդ քաղաքացի կոչվածները, սովորել են միշտ գյուղացուն բանեցնել, իսկ իրանք հանգիստ նստել:

Մեր հյուրընկալին կոչում էին Բերզեն-Օղլի, որ նշանակում է հույնի որդի: Նա ազգով հայ էր և նույն գյուղացի, բայց երկար ժամանակ Հունաստանում ապրելով, և Բալկանյան թերակղզու վրա թափառելով, այդպիսի անուն էր ստացել: Տեսնելով նրան, ես մտաբերում էի «Գժին», բայց բարեսիրտ, սրտաբաց և ուղղախոս

քահանայի և կոպիտ նավավարի մեջ այն զանազանությունը միայն կար, որ վերջինս սաստիկ մաղձոտ և դառնացած էր երևում ինձ: Գուցե աստանդական կյանքը, անհաջողությունները և ինձ անհայտ հանգամանքներ՝ նրա բնավորությանը տվել էին այդպիսի կոշտ, կոպիտ և մթին հատկություններ: Մի՞թե ծովի, գեղաձիծաղ ալիքների, լուսնկա գիշերների հետ միշտ գործ ունեցող մարդը, կարող էր այդպես մաղձոտ լինել…

— Դուք եղա՞ք Մոնտենեգրոյում,— հարցրեց Ասլանը:

— Եղա և՛ Մոնտենեգրոյում, և՛ Սերբիայում, և՛ Բոլգարիայում… ամեն տեղ եղա…— պատասխանեց նա տխուր կերպով:

Ասլանը ժպտաց:

— Ինչո՞ւ եք զարմանում, վանեցին ո՞ւր չէ գնում. աշխարհքի բոլոր անկյուններում կարելի է տեսնել նրան: Մեկը Հնդկաստանում տեսել էր մի կաղ վանեցի և ծիծաղելով ասել էր. «Եթե վանեցու կաղը մինչև Հնդկաստան է հասել, ոտներ ունեցողը Չինաստանից էլ կանցնի»:— Այդպես է մեր վիճակը:

Վաղ առավոտյան դուրս գալով Այգեստանից, մենք մի թեթև նախաճաշիկ էինք արել: Ասլանը թեև ուտելու ցանկություն չուներ, բայց ես մի առանձին ախորժակով էի նայում սեղանի վրա, որ մանկահասակ աղջիկը սկսել էր պատրաստել: Դա, որպես երևում էր, մեր հյուրընկալի դուստրն էր. բայց ո՞ւր էր նրա մայրը: Այդ կողմի շինական կանայք սովորություն չունեին՝ քաղաքացոց նման ծածկվել տղամարդերից, այլ երևում էին և մինչև անգամ խոսում էին օտարների հետ: Գյուղացոց մեջ մնացել էր այդ պարզությունը: Բայց ինչո՞ւ չէր երևում մեր տանտիկինը: Այդ մասին հյուրերից ոչ ոք չհարցրեց և ոչ ինքը, տան տերը, մի բան ասաց: Սեղանը գյուղական պարզ սեղանից ավելի համադամ և ճոխ էր, տարակույս չկար, որ վարպետ Փանոսը այդ մասին նախապես առանձին հոգ էր տարել:

ճաշից հետո անմիջապես գնացինք ծովեզրը: Այնտեղ Ասլանը ցանկանում էր տեսնել, թե ինչպես են պատրաստում ծովային աղերը: Պատրաստելու եղանակը շատ պարզ էր. ափերի մոտ փորած էին փոքրիկ ածուներ, ջուրը ծովից բաց էին թողնում ածուների մեջ, այնչափով, որ բոլորովին լցվում էին, հետո թողնում էին նրանց այնքան ժամանակ, մինչև արևի ջերմության ներքո ջուրը բոլորովին գոլորշիանում էր, իսկ հատակի վրա մնում էին աղի փայլուն բյուրեղները: Այդ բոլորը տեսավ Ասլանը և իր հետ վեր առեց պատրաստած աղերից: Գյուղացիները, որ այդ գործով էին զբաղված, հետաքրքրությամբ հարցնում էին, թե ի՞նչ պետք է անե: Նա բացատրեց, թե այդ աղերը, որ դուք միայն օճառ պատրաստելու համար եք գործածում, ուրիշ շատ բաների մեջ կարող էին գործածվել և մեծ օգուտներ բերել: Նրանք զարմացան և ուրախացան: Ես իսկույն նկատեցի, թե ինչպես այդ բարի մարդիկը սկսեցին դրանից հետո մի առանձին հարգանքով վերաբերվել դեպի Ասլանը: Երբ գյուղացուն մի բան ես սովորեցնում, որի մեջ տեսնում է իր շահը, նա այնուհետև դառնում է քո ամենալավ բարեկամը:

Հետո գնացինք նավահանգիստը: Ոչ մի առագաստավոր նավ չկար այնտեղ, բոլորը նավակներ էին, թե հին և թե նոր տեսակներից: Հները, որոնց թիվը ավելի շատ էր և որոնց տեղացիք կոչում էին լաստ կամ սանդալ, դեռ կրում էին այն նախնական ձևը, երբ մարդ առաջին անգամ սկսեց ճանապարհորդել ջրի վրա: Մի քանի գերաններ, հավասար երկարությամբ և հավասար հաստությամբ, կցել էին միմյանց հետ, այնպես, որ բոլորը միասին քառակուսի ձև էին ստացել: Այդ քառակուսու մակերևույթը պատել էին տախտակամածով, իսկ եզերքը՝ մի կանգունաչափ վանդակապատով: Քառակուսիի տակից, չորս անկյուններում, կապած էին չորս

եզան կամ գոմեշի տիկեր, փչած — օդով լիքը: Նայելով նրանց վրա, Ասլանը ժպտալով ասաց.

— Այդ սանդալները հիշեցնում են այն կաշուց կազմած հայկական նավակները, որ նկարագրում է Հերոդոտոսը իր պատմության մեջ, և որ գործ էին ածում հայերը մի քանի հազար տարի առաջ:

Հերոդոտոսի նկարագրած նավակները, ինչպես ասաց Ասլանը, բոլորակ ձև ունեին և զամբյուղի նման ամբողջապես հյուսած էին ուռենիի ճյուղերից: Ներսից այդ նավակները պատած էին մորթիներով, և ջուրը դժվարությամբ կարող էր անցնել նրանց մեջ: Նրանք այնքան թեթև էին և ընդարձակ, որ կարող էին տանել բավական ծանրություններ: Հայոց վաճառականները տեղավորում էին նրանց մեջ իրանց վաճառքները, նստում էին և վեր էին առնում իրանց հետ մի քանի ավանակներ կամ ջորիներ: Եփրատ գետի ընթացքով լողում էին նրանք մինչև Բաբելոն: Հասնելով այնտեղ, վաճառում էին տարած մթերքը, հետո նավակները քանդում էին, մորթիներն էին միայն վեր առնում, իսկ բոլոր հյուսվածքը մի կողմ էին ձգում: Երբ պատրաստվում էին վերադառնալ դեպի Հայաստան, մորթիները բառնում էին ջորիների վրա և ցամաքով ճանապարհ էին ընկնում: Ամեն տեղ նրանք կարող էին պատրաստել նույն տեսակ նավակներ, որովհետև գլխավոր նյութը, մորթիները, իրանց հետ ունեին, իսկ ուռենի ճյուղեր բոլոր գետերի եզերքի մոտ կարելի էր գտնել:

— Ինչո՞ւ եք հեռու գնում մինչև Հերոդոտոսի ժամանակները,— մեջ մտավ Բերզեն-Օղլին,— այս տեսակ նավակներ գործ են ածում մինչև այսօր հայերը Եփրատի և Տիգրիսի ջրերի վրա, այն զանազանությամբ միայն, որ մորթիների փոխարեն իրանց զամբյուղաձև նավակները պատում են կաշիով, որովհետև հիմա սովորել են կաշու պատրաստությունը:

Նավահանգստում կային մի քանի նավակներ ևս նոր ձևով, որոնց մեջ իր գեղեցկությամբ և հարմարությամբ առաջին տեղը բռնում էր Բերզեն-Օղլու նավակը: Նա ցույց տվեց իր նավակը, ասելով.

— Այդ այն արհեստավորի գործն է, որ այժմ բանում է իմ տանը: Նա ընդունակ է մինչև անգամ թեթև առագաստավոր նավեր կառուցանելու: Այդ արհեստով նա երկար ժամանակ աշխատել է Կ. Պոլսի նավահանգիստներում:— Սաստիկ դյուրաշարժ է այդ նավակը. նրան կարելի է կառավարել ինչպես մի լավ վարժված նժույգ ձի:

Բերզեն-Օղլին մնաց նավահանգստում, իսկ մենք վերադարձանք գյուղը: Ասլանը վարպետ Փանոսի հետ գնացին մի քանի հիվանդներ տեսնելու (գոնե այդպես ասացին ինձ), բայց ես գնացի մեր հյուրընկալի տունը:

Չգիտեի ինչպես անցկացնել ժամանակը: Նավաստիի տունը դարձյալ դատարկ էր, դարձյալ ոչ ոք չէր երևում: Բակում տիրում էր ընդհանուր լռություն, մի տերև անգամ չէր շարժվում ծառերի վրա: Օրվա տոթը անտանելի էր: Սագերը, գլուխները թևերի տակ թաքցրած, քնել էին ուռիների ստվերի ներքո: Նրանցից մեկը միայն, իմ ոտնաձայնը լսելով, գլուխը վեր բարձրացրեց և ծույլ կերպով մի քանի անգամ կչկչաց: Մյուսները զարթեցան: Բայց հյուսնի արհեստանոցում, ինչպես երևում էր, հանգստություն չկար. այնտեղից դեռ ուրագի ձայն էր լսվում: Պարապությունից հետաքրքրվեցի այնտեղ մտնել և սպասել մինչև Ասլանի վերադարձը: Ամբողջ արհեստանոցը լցված էր տախտակներով և զանազան ատաղձներով: Այնտեղ և կարկատում էին նավակները, և նորերն էին շինում: Ծերունի վարպետն աշխատում էր իր մի քանի աշակերտների և օգնականների հետ: Տեսնելով ինձ, բոլորը նայեցին իմ վրա և շարունակեցին իրանց գործը: Միայն վարպետը մի կողմ դրեց կարկինը,

որով տախտակի վրա ինչ-որ չափումներ էր անում. գլուխը վեր բարձրացրեց և ակնոցները ուղղելով՝ հարցրեց.

— Դուք երևի այն ֆրանկի հե՞տ եք եկել:

— Այո՛, նրա հետ եմ եկել:

— Նստեցեք, խնդրեմ:

Ես չգիտեի որտեղ նստել, նստելու տեղ չկար: Իսկ վարպետը այդ մասին չհոգաց, նա դարձյալ վեր առեց կարկինը, սկսեց իր չափումները անել: Ես նստեցի շեմքի վրա:

— Հովի առաջը կտրում ես,— նկատեց ինձ աշակերտներից մեկը, ճակատի քրտինքը սրբելով,— առանց դրան էլ շատ շոգ է:

Նրա նկատողությունը թեև բավական հանդուգն էր, բայց իրավացի էր: Ամբողջ գործարանը լույս և օդ էր ընկնում միայն դռնից, ուրիշ լուսամուտ չկար. առաստաղից թեև երդիկ էր բացված, բայց այնտեղից հով չէր փչում: Ես վեր կացա և ոտքի վրա կանգնած մնացի: Լռությամբ նայում էի: Գործիքների ձայնը մի այնպիսի աղմուկ էր բարձրացրել, որ անկարելի էր մի բան խոսել: Մի կողմում սղոցում էին, մյուս կողմում տաշում էին, մեկը ռանդա էր տալիս, մյուսը շաղափով ծակում էր, մի խոսքով ոչ ոք անգործ չէր: Անգործը միայն ես էի: Իմ դրությունը շատ հիմար էր: Նայեցի, նայեցի, և վերջապես ձանձրացա և դուրս եկա:

Գալով սրահը, որտեղ ճաշեցինք մենք, ոչ ոքի չգտա: Ասլանը և վարպետ Փանոսը դեռ չէին վերադարձել: Միայն հատակի սփռոցները, առաջվա կարգով, դեռ իրանց տեղում էին: Ես մոտեցա, պառկեցի նույն միևդարի վրա, ուր ճաշի ժամանակ նստած էր Ասլանը:

Սրահի միջով ես նայում էի դեպի ընդարձակ պարտեզը: Նա բաժանված էր սրահից փայտյա ցած վանդակապատով միայն: Ծառերը այն աստիճան սերտ կերպով գրկված էին միմյանց հետ, որ ես շատ հեռու չէի տեսնում: Ավելի քան տերևները, նրանց ճյուղերը ծանրաբեռնված էին հասունացած պտուղներով: Արեգակը կրակ էր թափում: Նրա ջերմությունից ամեն մի ծառ, ամեն մի թուփ, ամեն մի պտուղ, ամեն մի խոտ և ծաղիկ լցել էր օդը ախորժելի անուշահոտությամբ: Ես սիրում էի այդ մեղմ, քնաբեր անուշահոտությունը, որ բուրում է ծառաստանը, ոգևորված միջօրեի ջերմությունից: Բայց իմ քունը չէր տանում: ճնճղուկները, թաքնված տերևների խտության մեջ, լուռ մրափում էին: Ծիծեռնակը, որ սրահի ձեղունի գերաններից մեկի կողքին կպցրել էր իր բաժակաձև բույնը, նա էլ, իր ճտերի մոտ թառած, քաղցր թմրության մեջ նիրհում էր: Իսկ ես քնել չէի կարողանում:

Ինձ տանջում էին զանազան մտածություններ: Մինչև այն օր տեսած, լսած, հասկացած, չհասկացած առարկաների կատարյալ խառնաշփոթությունը ամբարված էր իմ գլխում: Այդ մռայլ քաոսից ոչինչ ելք գտնել չէի կարողանում: Ո՞րտեղից էի գալիս, ո՞ւր էի գնում, ի՞նչ նպատակների էի ձգտում, ո՞ւր կտանեին ինձ այդ թափառումները,— ինձ բացատրել չէի կարողանում: Ես խարխափում էի անստուգության և անգիտակցության և խավարի մեջ: «Լավ է, մտածում էի ես, ամենևին չհավատալ, քան թե կիսով չափ հավատալ»… Բայց մի զգացմունք միայն ինձ հաշտեցնում էր իմ անորոշ վիճակի հետ,— դա էր այն ջերմ սերը, որ ես ունեի դեպի Ասլանը: Այդ սերը լրացնում էր իմ թերահավատությունը: Սիրում էի այդ եռանդոտ երիտասարդին: Նրա մեջ կար մի բան, որ շատ սիրելի էր: Բայց ի՞նչ էր այդ բանը, ես ոչինչ կերպով ըմբռնել չէի կարողանում…

Ամեն տեղ, ուր գնում էինք, ես հանդիպում էի նորանոր պատրանքների, նորանոր կեղծիքների: Կարծես իմ աչքերը պատած լինեին թանձր մշուշով, հեռուն չտեսնելու համար: Եվ ինչո՞ւ համար տեսնեի: Գուցե նա այնքան սարսափելի էր, որ հենց այդ պատճառով Ասլանը չէր կամենում խլել իմ աչքերից կախարդական քողը և իմ առջև բաց անել ապագայի սոսկալի պատկերը: Գուցե նա չէր կամենում միանգամից վախեցնել ինձ: Գուցե նա այնքան հրապուրիչ և այնքան գեղեցիկ էր, որ և՛ չէր կամենում ինձ միանգամից հափշտակությունների մեջ ձգեր: Եվ մի՞թե ես ունեի այնքան պատրաստականություն ամեն ինչ հասկանալու համար: Ես ինքս զգում էի իմ դատարկությունը, իմ մտավոր աղքատությունը: Եվ նա շատ անգամ նկատում էր ինձ, թե «քեզ պետք է դեռ շատ բան սովորել»…

Ինձանից շատ հեռու չէր խնձորենին, որի տերևների սոսափյունը ընդհատեց իմ մտածությունները: Ես նայեցի դեպի այն կողմը: Ծառերի վրա նկատեցի նույն աղջկան, որ ճաշի ժամանակ մեզ համար սեղան էր պատրաստում: Դա Ծովիկն էր, նավավարի աղջիկը: Ահա մի էակ ևս, որ ինձ նման արթուն էր, որի վրա օրվա ջերմությունը չէր ազդում: Բայց ի՞նչ էր շինում այդ մանկահասակ արարածը այն ծառի վրա: Կապիկը միայն կարող էր այնպես համարձակ մի ոստից մյուսը թռչել: Պտուղներ չէր քաղում նա. խնձորները դեռ ոչ բոլորովին հասած էին: Նա ընտրում էր նրանցից խոշորները, իրանց ձևով կանոնավորները, և ինչ-որ կպցնում էր նրանց վրա: Ես իսկույն հասկացա այդ գործողության նպատակը: Խնձորները այն տեսակից էին, որ հասունացած ժամանակ ստանում էին սաստիկ մուգ-կարմիր գույն, իսկ այժմ դեռ բաց-կապտագույն էին: Նա կպցնում էր նրանց վրա զանազան ձևով մանր և գեղեցիկ տերևներ: Խնձորները հասունացած ժամանակ, շատ հասկանալի է, որ նրանց մակերևույթի բաց մնացած տեղերը արևից կստանան կարմիր գույն, իսկ տերևներով ծածկված տեղերը կմնան սպիտակ գույնով, և այսպիսով նրանց վրա կձևանան զանազան նկարներ: Այդ տեսակ նախշուն, հոտավետ խնձորները կոչվում են «սիրականի խնձոր»: Առհասարակ խնձորը հայոց մեջ սիրո նշան է: Հարսանիքների ժամանակ, ումը որ կամենում են հրավիրել, մի հատ կարմիր խնձոր են ուղարկում նրան: Իսկ այդ տեսակ նախշուն խնձորները մեծ աղջիկները ծածուկ ուղարկում են սիրած պատանիներին: Բայց ո՞ւմ համար էր պատրաստում այդ փոքրիկ աղջիկը իր խնձորները: Նա անտարակույս, դեռ չգիտեր, թե ի՞նչ էր սերը: Երևի նա տեսել է, թե ինչ են անում մեծ աղջիկները, ինքն էլ հետևում էր նրանց օրինակին, առանց հասկանալու իր պատրաստության նշանակությունը: «Ահա մի անգիտակցություն ևս, մտածեցի ես, նա դեռ չսիրած, սիրո համար նվերներ է պատրաստում»… Մի՞թե ես էլ նույնը չէի անում… մի՞թե ես էլ սիրո համար զոհեր չէի պատրաստում, առանց իմ սիրո առարկայի հետ ծանոթ լինելու… Բայց Ծովիկը ինձանից խելացի էր. նա գոնե ընտրում էր խնձորներից այն միայն, որը ավելի գեղեցիկ էր, որը փտած կամ որդնակեր չէր: Իսկ ես այդ ընտրությունը չունեի, ես չգիտեի, թե իմ զոհաբերությունները որ աստիճան նպատակահարմար են… Ես հետևում էի միայն ինձանից մեծերի օրինակին, որպես Ծովիկը հետևում էր իրանից մեծերի օրինակին…

Հանկարծ սրահի մեջ բացվող դռնից դուրս վազեց մի փոքրիկ երեխա: Դա երևի մեր հյուրընկալի արու զավակն էր, որովհետև սաստիկ նման էր հորը: Նա այնպիսի մի ուժգին թափով սենյակից դուրս նետվեցավ, որ գնդակի նման իմ մոտից անցնելով ինձ չտեսավ, նա նույն արագությամբ վազեց մինչև պարտեզի դուռը, մի քանի անգամ շարժեց, երբ տեսավ, որ փակ է, բարկացավ, և կրկին նետվեցավ դեպի սրահը: Այժմ միայն տեսավ ինձ, և որպես վաղեմի ծանոթ, մոտեցավ, գրկեց իմ պարանոցը:

— Եթե գնայի պարտեզը, քեզ համար ծիրան կբերեի,— ասաց ինձ:

— Ինչո՞ւ չգնացիր,— հարցրի ես, փայփայելով նրա սիրուն գլուխը:

Նա իր խոշոր, խաժ աչքերը դարձրեց դեպի ինձ և գանգատվելու եղանակով պատասխանեց.

— Դուռը փակ էր: Դու չես իմանում ինչ սատանա է այդ Ծովիկը. երբ որ նա պարտեզն է գնում, դուռը միշտ փակում է, ես չմտնեմ: Ասում է, դու ծաղիկները փչացնում ես: Դու խո գիտես, որ ես չեմ փչացնում:

Փոքրիկի գանգատը իր քրոջ մասին էր: Բայց ի՞նչ առիթով այդ չարաճճի գլխին փչեց՝ ինձ վկա բռնել, որ նա չէ փչացնում:

— Ի՞նչպես է քո անունը,— հարցրի ես:

— Քոթոթ,— պատասխանեց նա, ինքն էլ ծիծաղելով իր օտարոտի անվան վրա:

— Քոթո՞թ, ի՞նչ լավ անուն է:

— Ես էլ լավ տղա եմ,— ասաց նա մի առանձին պարծանքով:— Հայրիկը ինձ ասում է՝ դու քոթոթ ես, արջի քոթոթ,— դու խո տեսնում ես, որ ես քոթոթ չեմ:

— Դու քոթոթ տեսե՞լ ես:

— Տեսել եմ, մի անգամ մեր բակում պար էին ածում: Ո՛ւհ, ինչպես մազոտ թաթիկներ ուներ: Մտիկ տո՛ւր իմ ձեռքերին, իմ ձեռքերը խո այնպես մազոտ չեն:

Նա իր սիրուն ձեռքերը դրեց իմ ափի մեջ:

— Քո ձեռքերը այնպես չեն:

— Էլ ինչո՞ւ են ասում ինձ քոթոթ:

— Ես կասեմ հայրիկին, որ էլ չասե:

Նա փոխանակ շնորհակալության, դարձյալ գրկեց իմ պարանոցը և ջերմ կերպով համբուրեց ինձ:

— Ասա՛ հայրիկին, որ Ծովիկը սուտ է ասում. դու խո իմանո՞ւմ ես, որ ես ծաղիկները չեմ փչացնում:

— Իմանում եմ: Բայց ի՞նչ է անում հայրիկը, երբ Ծովիկը այդպիսի սուտեր է հնարում:

— Բարկանում է, պատվիրում է, որ ինձ պարտեզը չթողնեն, որ միրգ ուտեմ:

— Հայրիկին կասեմ, որ չբարկանա. դու խելացի տղա ես, կասեմ, որ պարտեզի դուռը քո առջև չփակեն:

Նա իմ խոստումներից բավական գոհ մնալուց հետո, մի այլ խնդիրք ևս առաջարկեց:

— Ասա, որ մայրիկն էլ խելացի է, նրա առջև էլ դուռը չփակեն:

— Ո՞ր դուռը.

— Սենյակի դուռը: Հիմա այնտեղ է, դուռը փակած է: Ես այսօր ուզեցի, որ գնամ տեսնեմ, չկարողացա…

Վերջին խոսքերը այնպիսի զգացմունքով արտասանեց փոքրիկ երեխան, որ ինձ վրա խիստ տխուր ազդեցություն գործեցին:

— Ինչո՞ւ են կողպում մայրիկին սենյակի մեջ:

— Չեմ իմանում: Մայրիկը այնտեղ աղաղակում է, լաց է լինում… ես էլ լաց եմ լինում, երբ մայրիկը լաց է լինում…

Երեխայի աչքերում արտասուք երևաց:

— Հիմա այնտե՞ղ է մայրիկը:

— Այնտեղ է, ներսում, շատ, ներսում… Հայրիկը չէ թողնում, որ դուրս գա:

Այդ միջոցին երկու աղավնիներ իջան, նստեցին սրահի վանդակապատի վրա: Տեսնելով նրանց, փոքրիկը իսկույն մոռացավ այն ցավը, որ զգում էր իր սիրելի մոր մասին: Նա խորամանկ կերպով նայեց իմ երեսին, աչքերը ծռմռեց, և նշաններով հասկացրեց ինձ, որ սուս կենամ: Իսկ ինքը կուզեկուզ սկսեց մոտենալ թռչուններին: Նրանք ավելի զգույշ գտնվեցան, և նկատելով փոքրիկ դարանակալին, թռան, բայց շատ հեռու չգնացին, նստեցին բակի մեջ, մի կտրած ծառի բունի վրա: Մանուկը շարունակեց հետամուտ լինել, և մի քանի րոպեից հետո, թե աղավնիները և թե նա այլևս չերևացին: Ես խիստ սակավ անգամ տեսել էի մի այնպիսի աշխույժ և կայտառ երեխա:

«Տան գաղտնիքը երեխայից հարցրու», ասում է հայտնի առածը: Հիմա ես աղոտ կերպով հասկանում էի, թե ինչու չէր երևում մեր տանտիկինը: Անտարակույս մի պատճառ պետք է լիներ, որ նրան թաքստի մեջ էին պահում:

Երևում էր, որ Ծովիկը խնձորի ծառից տեսել էր ինձ: Վերադառնալով պարտեզից, մի զամբյուղի մեջ բերեց ինձ համար մրգերի ամենաընտիր տեսակներից և, ամբողջ զամբյուղը դնելով իմ մոտ, ասաց.

— Որից որ սիրում ես, նրանից կե՛ր:

— Բոլորը լավ է, քո քաղածը վատ չի լինի,— պատասխանեցի ես, նայելով ուղիղ նրա արևի ջերմությունից շառագունած երեսին:

Նա ժպտաց, և հեռացավ, երբ նկատեց, որ Ասլանը վերադարձավ իր հոր հետ: Տեսնելով իմ մոտ դրած զամբյուղը, նրա հայրը ասաց ինձ.

— Դուք, փոքրիկներդ, ավելի բախտավոր եք մեզանից, որ աշխարհի դարդերը չեք հասկանում…

Հետո նա դարձավ դեպի Ասլանը:

— Տեսնո՞ւմ եք ինչպես ջահելները միմյանց հարգել իմանում են. այդ պտուղները անպատճառ Ծովիկի քաղածը պետք է լինի:

Նրանք մտան սրահի մեջ բացվող դռնից և երկար ժամանակ մնացին ներսի սենյակներում: Երբ Ասլանը դուրս եկավ, նրանից հարցրի.

— Ի՞նչ կար այնտեղ:

— Մի հիվանդ կար…— պատասխանեց նա, էլ չխոսեց:

Թ

ԳԻՇԵՐԸ ԱՎԱՆՑ ԳՅՈՒՂՈՒՄ

Երեկոյան դարձյալ բոլորը հավաքվեցան սրահի մեջ: Ասլանը նստած էր իր մինդարի վրա, վարպետ Փանոսը նրա մոտ, ես մի տեղում, իսկ տան տերը երբեմն նստում էր, երբեմն կանգնում էր, երբեմն գնում էր իր մարդիկներին զանազան պատվերներ տալու:

Փայտյա բարձր աշտարակի վրա դրած էր մի խեցեղեն ճրագ, որը աղավնու նմանություն ուներ. նրա միջում կտավատի ձեթ էր լցրած, իսկ կտուցից դուրս ընկած պատրույգը հանդարտ վառվելով, տարածում էր աղոտ, կանաչագույն լույս իր շրջակայքում: Ձեթից և մուխից բոլորովին սև գույն էր ստացել այդ աղավնին:

Խոսակցությունը գլխավորապես ծովակի մասին էր: Խոսում էին նրա բնավորության վրա, արդյոք նա խաղա՞ղ է, թե անհանգիստ, տարվա ո՞ր ամիսներում սովորաբար պատահում են ալեկոծություններ. խոսում էին նավահանգիստների մասին, թե ո՞ր կողմերը կամ ո՞ր եզերքի մոտ են գտնվում, կամ ինչ տեղերի հետ հաղորդակցություն ունեն. խոսում էին նավակների թվի և նրանց փոխադրած ծանրությունների քանակության մասին, թե տարվա ընթացքում, ո՛րքան մթերքներ կարող են փոխադրել,— այդ բոլորի մասին, իհարկե, հաշիվ ու համար տալիս էր գլխավորապես Բերզեն-Օղլին: Նա այնպես լավ ուսումնասիրել էր ծովակը և նրա շրջակայքը, որպես մի լավ վարժապետ ուսումնասիրում է իր դասագիրքը: Նրան ծանոթ էին ծովակի բոլոր խորշերը, բոլոր եզերքը և այն բոլոր դիրքերը, որտեղից կարելի էր ցամաքի հետ հարաբերություն ունենալ: Ասլանը իր լսածներից այն եզրակացությունն էր դուրս բերում, թե երկու առագաստավոր նավեր բավական կլինեն կատարելու այն գործը, ինչ որ կատարում են բազմաթիվ նավակներն ու սանդալները:

Նրանք խոսում էին, դատում էին, վիճում էին, իսկ ես համարյա չէի լսում: Ես չէի կարողանում մոռանալ քոթոթի տված տեղեկությունները իր մոր մասին, և նրա վրա էի մտածում: Ասլանը այնօր տան ներսի սենյակներից դուրս գալու ժամանակ ինձ ասաց, թե այնտեղ մի հիվանդ կա, դա անտարակույս, նավավարի կինը պետք է լիներ, բայց քոթոթի տված տեղեկությունները այդ հիվանդի դրության մասին՝ բավական կասկածավոր էին դարձնում նրան: Այստեղ անպատճառ մի բան պետք է լինի, մտածում էի ես:

Մեզ ընթրիք տալուց հետո, տանեցիք, այսինքն Ծովիկը և Քոթոթը, գնացին կտուրի վրա քնելու: Գյուղացի երեխաները քնում են արևի հետ և զարթնում են նրանից առաջ: Սրահի մեջ մեզ համար ևս քնելու անկողիններ պատրաստեցին: Սրահը, որ պատշգամբի նախնական ձևն է, շատ հարմարություն ունի ամառնային կեցության համար. այնտեղ և՛ հով է, և՛ մաքուր օդ կա, և՛ անքուն գիշերներում մարդ չէ տաղտկանում, նայում է աստղազարդ երկնքի վրա, զվարճանում է անթիվ լուսավորներով: Իսկ այն գիշերը ինձ ավելի գրավում էր այն խուլ, խորհրդավոր ձայնը, որ լսվում էր օդի մեջ,— դա ծովակի ալիքների ձայնն էր, որ գալիս էր հեռվից:

Հյուսնի արհեստանոցում գործը դադարել էր, այնտեղից ձայն չէր լսվում: Բայց արհեստանոցի բաց դռնից ճրագի լույս էր երևում: Ծերունի արհեստավորը, երևի, դեռ չէր քնած: Նավավարը Ասլանին և վարպետ Փանոսին տարավ այնտեղ մի քանի բաներ ցույց տալու համար: Ես չգնացի. ես արդեն ցերեկով տեսել էի այն տախտակների և փայտերի մթերանոցը, և դրանք ինձ համար մի առանձին

նշանակություն չունեին: Ես պառկած մնացի իմ անկողնի վրա և իսկույն քունս տարավ:

Մի օտարոտի ձայն զարթեցրեց ինձ: Ո՞րքան ժամանակ անցել էր գիշերից, չգիտեմ, բայց աքաղաղները խոսում էին: Գլուխս վեր բարձրացրի, նայեցի իմ շուրջը, ճրագի ձեթը արդեն սպառվել էր և պատրույգը երբեմն աղոտ կերպով պլպլում էր, երբեմն հանգչում էր: Բայց սրահի մեջ բավական լույս կար. կիսալուսինը դեռ ոչ բոլորովին անհետացել էր հորիզոնից: Նայեցի Ասլանի և վարպետ Փանոսի անկողինների վրա, նրանք դատարկ էին: Երևում էր, որ դեռ չէին վերադարձել: Նայեցի դեպի հյուսնի արհեստանոցը, այնտեղ դեռ ճրագի լույս էր երևում:

Օտարոտի ձայնը, որ զարթեցրեց ինձ, որքան հիշում եմ, դռան սաստիկ բախման ձայնի էր նմանում. նայեցի դեպի սրահի մեջ բացվող դուռը, նա բոլորովին բաց էր. իսկ երեկոյան, մեր քնելու ժամանակ, ես նրան փակած էի տեսել: Գլուխս դարձյալ դրեցի բարձի վրա, բայց քնել չկարողացա: Քանի րոպեից հետո մի մեղմ սոսափյուն, որ հագուստի խշխշոցի էր նմանում գրավեց իմ ուշադրությունը: Գլուխս կրկին վեր բարձրացրի և ստվերի մեջ նկատեցի մի ինչ-որ անորոշ կերպարանք: Նա սկզբում անշարժ էր, հետո շարժվեցավ և հանդարտ կերպով անցավ, առանց ամենաթեթև ձայն անգամ հանելու: Կարծես նա օդի միջով էր գնում և նրա ոտները գետնին չէին դիպչում: Նա ցած իջավ սրահի սանդուղքներից, դիմեց դեպի բակը: Այնտեղ, լուսնի լուսավորության առջև, նա ավելի որոշ կերպարանքով նկարվեցավ իմ առջև, կարմիր շիլայի շապիկը իջնում էր մինչև նրա մերկ ոտները. գլխի հյուսերը արձակ էին, նրանք կիսով չափ ծածանվում էին ճակատի վրա, իսկ մնացյալ մասը խիտ գանգուրներով ծածկել էր նրա մեջքը: Երբ նա կանգ առեց բակի մեջ, ետ նայելով դեպի սրահը, ես տեսա նրա դեմքը. դա կնոջ գունաթափ դեմք էր, որը լուսնի բաց-կապտագույն լուսավորության առջև ավելի թախծալի արտահայտություն էր ստացել: Նա կրկին շարժվեցավ և սկսեց դիմել դեպի պարտեզը:

Չգիտեմ սնահավատությունից, թե մի այլ զգացմունքից, իմ ամբողջ մարմնով անցավ մի սոսկալի սարսուռ: Ինձ այնպես էր թվում, թե մեռելներից մեկը գերեզմանից հարություն էր առել և շրջում էր գիշերային լռության մեջ: Քունը բոլորովին փախավ իմ աչքերից: Երբեմն վերմակը քաշում էի գլխիս, աչքերս խփում էի, վախենալով, միգուցե կրկին տեսնեմ նրան, իսկ երբեմն աչքերս երկյուղածությամբ բաց էի անում, նայում էի: Նա դարձյալ երևում էր: Սկսեցի աղոթք կարդալ. աղոթքը փոքր-ինչ հանգստացրեց ինձ:

Նա, առանց որևիցե շշուկ հանելու, հանդարտ քայլերով անցավ բակի միջով, մոտեցավ պարտեզի դռանը: Ձեռքը տարավ դեպի փականքը և իսկույն հեռացավ, երբ նկատեց, որ դուռը փակ էր: Հետո բակի պատի մոտով սկսեց կամաց-կամաց դիմել դեպի փողոցի դուռը, և մի քանի րոպե չանցած, բոլորովին անհետացավ: Ո՞ւր գնաց,— ես չտեսա, որովհետև երկյուղը այն աստիճան տիրել էր ինձ, որ վախենում էի վեր կենալ և նրա ետևից նայել, թե ո՞ւր է գնում: Ի՞նչ էր այդ, երա՞զ էր, տեսի՞լք էր, թե գրգռված երևակայության ցնորք: Ես մնացի անշարժ դրության մեջ: Կարծես ինձ ամուր կապերով կաշկանդել էին իմ անկողնի մեջ և շարժվել չէի կարողանում: Կարծես «ղարան» անցավ իմ վրայով և իր բոլոր ծանրությամբ ճնշեց ինձ:

Կես ժամ հազիվ անցած կլիներ, երբ կրկին հայտնվեցավ ուրվականը: Նա կամաց-կամաց մոտեցավ, վեր բարձրացավ սրահի սանդուղքներից, նախ մի շրջան գործեց նրա պատերի մոտով, այս կողմ ու այն կողմ նայելով, որպես թե մի բան որոնում էր, հետո կանգ առեց, սկսեց նայել անկողինների վրա: Նրա աչքերը վառվում էին, դեմքը նույնպես գունաթափ էր, որպես առաջ:

— Դուք պարոն բժշկապետ,— ասաց նա, մոտենալով և կանգնելով իմ բարձի մոտ,— չհասկացաք իմ հիվանդությունը, և հասկանալ չէիք կարող, որովհետև ես բոլորը չպատմեցի ձեզ…

Իմ երկյուղը փոքր-ինչ փարատվեցավ. դա նավավարի կինն էր և ինձ Ասլանի տեղն էր ընդունում:

— Ես բոլորովին հիվանդ չեմ, պարոն բժշկապետ,— շարունակեց նա ավելի տխուր ձայնով,— ես շատ առողջ եմ, պարոն բժշկապետ, լավ ուտում եմ, լավ խմում եմ, կարող եմ լավ ման գալ, եթե ինձ թույլ տան տանից դուրս գալ…

Նա ակնարկում էր իր ամուսնու վրա, որ նրան արգելարանի մեջ էր պահում: Ես հիշեցի Քոթոթի խոսքերը: Նա նստեց իմ բարձի մոտ, գլուխը խոնարհեցրեց ծնկների վրա, ձեռքով բռնեց աչքերը և մի քանի վայրկյան լուռ մնաց: Գլխի ծամերը խառն հոսանքով ծածկեցին նրա դեմքը: Այդ միջոցին նմանվում էր նա մի սգավորի, որ իր սիրելիի գերեզմանի մոտ ծունկ իջած, լուռ ողբում էր նրա ցավալի կորուստը: Հետո նա գլուխը վեր բարձրացրեց, սոսկալով նայեց դեպի սենյակի դուռը, և բացականչեց հեկեկանքով.

— Դուք նրան օգնեցեք, պարոն բժշկապետ, նրան… դեռ ուշ չէ, դեռ կարելի է օգնել…

Ես կրկին սկսեցի դողալ:

— Դուք չե՞ք հավատում, պարոն բժշկապետ,— շարունակեց նա,— շտապեցե՛ք, կարելի է օգնել… դեռ մարմինը տաք է… ձեռքերը շարժում է… դեռ արյունը չէ դադարել հոսելուց…

Նա դարձյալ գլուխը ցած թողեց ծնկների վրա և երկու ձեռքով բռնեց աչքերը, կարծես զարհուրում էր մի սոսկալի տեսարանից և չէր կամենում նայել նրա վրա: Նա այլևս չէր խոսում, ես լսում էի նրա խուլ հեկեկանքը միայն:

— Օգնեցե՛ք, պարոն բժշկապետ…— դարձյալ կրկնեց նա,— դեռ ուշ չէ… կարելի է օգնել… ինչո՞ւ չեք վեր կենում… ահա այնտեղ է… շատ հեռու չէ…

Ես մտածեցի, թե իրավ, դրսում մի որևիցե դժբախտություն պետք է պատահած լինի, և շտապեցի օգնության հասնել: Բայց նա պինդ բռնեց իմ թևքից, և, սրահի հատակը ցույց տալով.

— Նայեցե՛ք, պարոն բժշկապետ, ահա՛ արյան շիթերը… դեռ չեն ցամաքել… Տեսնո՞ւմ եք, պարոն բժշկապետ, ես տեսնում եմ, ահա՛, նայեցեք…

Այժմ միայն հասկացա, որ խեղճ կինը ցնորքների մեջ էր գտնվում: Ինձ նորից տիրեց մի անբացատրելի սարսափ, մանավանդ երբ նա կանգնեց և, ձեռքը դեպի սենյակի դուռը մեկնելով ասաց.

— Այդ արյան շիթերը, այդ դռնից սկսվելով, գնում են մինչև ծովեզրը… Գիշեր էր, երբ գազանը այդ դռնից դուրս բերեց արյունաշաղախ մարմինը, որ դրած էր մազե խարարի մեջ… Արյունը կաթկթում էր խարարից… Ես վազեցի նրա ետևից, բայց նա շտապեց և շուտով հասավ ծովեզրը… դրեց խարարը իր նավակի մեջ և սկսեց թիավարել…

Այդ միջոցին անբախտ կնոջ ձայնը խեղդվեցավ և չկարողացավ շարունակել: Նա ձեռքը տարավ դեպի աչքերը, որ արտասուքը սրբե, բայց աչքերում արտասուք չկար: Ես ապշած կերպով նայում էի նրա վրա: Երևում էր, որ այդ տան մեջ կատարվել էր

մի սարսափելի եղեռնագործություն, որի հետ կապված է եղել խեղճ կնոջ դժբախտությունը: Նա կրկին մոտեցավ և նստեց իմ կշտին: Այժմ ավելի սրտաշարժ ձայնով ասաց ինձ.

— Ես կպատմեմ ձեզ բոլորը… դուք պետք է գիտենաք բոլորը, պարոն բժշկապետ… մինչև չգիտենաք, չեք կարող բժշկել ինձ… Լսո՞ւմ եք, պարոն բժշկապետ…

— Լսում եմ,— պատասխանեցի ես մեքենաբար:

Նա շարունակեց.

— Այն օրից անցել են շատ տարիներ… ես շատ անգամ գիշերը գնում եմ ծովեզրը, կանգնում եմ այնտեղ, կանչում եմ, երկար կանչում եմ, նա իմ ձայնը լսում է և հանկարծ հայտնվում է ալիքների միջից… Հիմա, այս րոպեիս, այնտեղից եմ գալիս, դարձյալ տեսա նրան, դարձյալ համբուրեցի նրան… Նա ամենևին չէր փոխվել, էլի այնպես էր, որպես վերջին անգամ, երբ այդ տանից խավարի մեջ դուրս տարավ նրան գազանը… վերքից տաք արյունը դեռ հոսում էր… նվաղած աչքերով նայում էր իմ երեսին…

Նա լռեց, որպես մի եռացող հրաբուխ, իր ուժերը հավաքելու համար, որ ավելի սաստկությամբ դուրս հոսե ներսի կրակը:

— Նա մեղավոր չէր, պարոն բժշկապետ,— ասաց նա ցավալի ձայնով,— նա սիրում էր ինձ, ես էլ սիրում էի նրան… Մենք ամենափոքր հասակից սիրում էինք միմյանց… Ես դեռ աղջիկ էի իմ հոր տանը, նա դեռ պատանի էր, դեռ նոր էր սկսել թիավարել: Լինում էր, որ ես ամբողջ գիշերը չէի քնում, նստած կտուրի վրա, սպասում էի նրան: Նա գալիս էր, տանում էր ինձ ծովեզրը, դնում էր իր նավակի մեջ, և մենք ամառնային ամբողջ գիշերը. լողում էինք ջրերի վրա… Ես գլուխս դնում էի նրա գրկում, նա թիակը մի կողմ էր դնում, և խելացի նավակը ինքն իրան գնում էր, և երբեք չէր խանգարում մեզ…

Վերջին խոսքերի միջոցին նա թուլացավ, գլուխը տատանվեցավ, և ձեռքերը ընկան ծնկների վրա:

— Մեր ծնողները գիտեին այդ բոլորը, բայց ներում էին մեզ, որովհետև մենք արդեն նշանված էինք և հարսանիքի պատրաստություններ էին լինում… Այդ միջոցներում հեռու աշխարհից վերադարձավ գազա՛նը… Նրա մասին խոսում էին թե մի բեռն ոսկի է բերել… այդ գրավեց իմ ծնողների ագահությունը… Նրանք ինձ բաժանեցին իմ սիրածից և տվեցին գազանին… ես դրան էլ սկսեցի սիրել, բայց իմ սրտի մեծ մասը պատկանում էր առաջինին… Երբ ամուսինս տանից բացակա էր լինում, երբ նա Մուշի կամ Բաղեշի կողմերը բեռ էր տանում, նա գալիս էր մեր տունը… Դրացիները սկսեցին փսփսալ միմյանց հետ, և բամբասանքը հասավ ամուսնիս ականջին… Մի երեկո նա ինձ ասաց, թե գնում է Դատվանից ցորյան բերելու, ես նրա համար ճանապարհի պաշար պատրաստեցի, իմ ձեռքով տարա և տեղավորեցի նավակի մեջ: Նա ինձ համբուրեց, նստեց նավակի մեջ և հեռացավ: Ես ուրախ-ուրախ վերադարձա տուն: Բայց դու մի ասա, անիրավը խաբեց ինձ… Գիշերի կեսից դեռ նոր էր անցել, նա բախեց սենյակի դուռը… ես սրասափեցա… իմ սիրելին իմ մոտ էր… Երբ մենք ուշացանք բաց անելու, գազանը ոտքի մի հարվածով ջախջախեց դուռը և ներս մտավ… Իմ արտասուքը, իմ աղաչանքը չկարողացան ամոքել անգութի բարկությունը… Նա իր դանակը իսկույն ցցեց «նրա» կուրծքի մեջ… տաք արյունը դուրս ցայտեց վերքից… Նա տատանվեցավ և ընկավ հատակի վրա… Հետո դրեց նրա դիակը խարարի մեջ և շտապեց տանել դեպի ծովեզրը… Գնանք, պարոն բժշկապետ, նա դեռ չէ մեռած, դեռ կարելի է նրան օգնել…

Վերջին խոսքերը արտասանեց նա բավական բարձր ձայնով, բռնեց իմ ձեռքից և համարյա ուժով աշխատում էր տանել ինձ իր հետ:

Այդ միջոցին բակում հայտնվեցավ մի այլ ստվեր, նա ցած իջավ կտուրից, ես լսեցի նրա ոտնաձայնը: Արագ քայլերով մտավ նա սրահը: Ես իսկույն ճանաչեցի Ծովիկին: Տեսնելով մորը ինձ մոտ, բացականչեց նա.

— Ախ, աստված, այդ ո՞վ բաց արավ դուռը:

Երևում էր, որ նա կտուրից լսել էր մոր ձայնը և ցած էր իջել նրան օգնելու: Նա բռնեց գիշերաշրջիկ լուսնոտի ձեռքից և, առանց մի խոսք ասելու, տարավ դեպի իր սենյակը: Մայրը առանց ընդդիմության հետևեց նրան: Մի ուրիշը նրա տեղ կարող էր վախենալ, կարող էր աղաղակել, բայց մանկահասակ աղջիկը, որպես տեսնում էի, բոլորովին ընտելացած էր մոր հիվանդությանը և գիտեր, թե ինչպես պետք էր վարվել նրա հետ: Երբ նա տարավ, հանգստացրեց մորը, և դուռը կողպելով եկավ ինձ մոտ՝ ես նրանից հարցրի.

— Քո մոր հետ ամե՞ն գիշեր այդպես է պատահում:

— Երբեմն միայն,— պատասխանեց նա տխուր ձայնով,— ավելի լուսնկա գիշերներում: Այդ ժամանակ հայրս միշտ նրա մոտ է լինում, հսկում է նրան: Ա՛խ, ո՞ւր է գնացել այս գիշեր, չէ երևում:

— Նա, կարծեմ, հյուսնի արհեստանոցումն է:

Ծովիկը դիմեց դեպի արհեստանոցը՝ հորը կանչելու համար:

— Սպասի՛ր, միասին գնանք:

Նա կանգնեց: Ճանապարհին հարցրի նրանից.

— Քո մայրը ինչ-որ արյան վրա էր խոսում: Այդ ի՞նչ արյուն է:

— Չեմ իմանում, նա միշտ այդ է ասում, երբ նրա հետ պատահում են այսպիսի բաներ… Հայրս չէ թողնում, որ մենք լսենք, նա մեզ հեռացնում է…

— Դու և Քոթոթը չե՞ք վախենում, երբ նա այդպես բաներ է խոսում:

— Ինչո՞ւ պետք է վախենանք: Նա մեր մայրն է: Բայց հարևանները վախենում են, ասում են, թե դևերը ման են ածում նրան:

— Նա մի՞շտ այդպես խոսում է:

— Շատ անգամ ոչինչ չէ խոսում, լուռ դուրս է գալիս սենյակից, պտտվում է բակի մեջ, մտնում է պարտեզը, հետո գնում ծովեզրը: Այնտեղ ժամերով կանգնում է և երկար, անխոս նայում է ծովին:

Խե՜ղճ աղջիկ, եթե նա գիտենար, թե որպիսի ցավեր են թաքնված դժբախտ մոր սրտում: Ես ոչինչ չասեցի: Մենք մոտեցանք հյուսնի արհեստանոցին: Ասլանը նստած էր ճրագի մոտ, իսկ նրա հանդեպ ծերունի արհեստավորը: Երկուսի մեջտեղում դրած էր մի լայն տախտակ, որ ծառայում էր սեղանի փոխարեն: Տախտակի վրա դրած էին զանազան նկարներ, որոնք պատկերացնում էին, որքան ես կարողացա հասկանալ, նավի այս և այն մասների առանձին-առանձին գծագրությունները: Ասլանը ծերունի արհեստավորին ցույց էր տալիս այդ նկարները, բացատրում էր նրանց

համեմատական չափը, տարածությունը, կազմվածքը և այլն: Արհեստավորը ուշադրությամբ լսում էր նրան: Մի կողմում նստած էր վարպետ Փանոսը, մյուս կողմում Բերզեն-Օղլին: Նրանք ևս երբեմն հայտնում էին իրանց կարծիքները:

Երբ Ծովիկը ներս մտավ, բոլորը, գիշերային այն տարաժամ պահուն տեսնելով նրան, զարմացած մնացին: Նա մոտեցավ հորը, ինչ-որ փսփսաց նրա ականջին: Հայրը անմիջապես դուրս եկավ արհեստանոցից:

Երևում էր, որ Ասլանը վերջացրել էր իր գործը. նա նույնպես երկար չմնաց այնտեղ, նկարները հանձնեց հյուսնին և դուրս եկավ: Մինչև սրահը հասնելը՝ նա հարցրեց վարպետ Փանոսից.

— Դուք կարծում եք, որ նա կարո՞ղ կլինի պատրաստել…

— Սատանայի համար սոլ կկարե թշվառականը,— պատասխանեց վարպետ Փանոսը ծիծաղելով,— ես համոզված եմ, որ կարող կլինի պատրաստել: Տասն տարուց ավելի, որպես աքսորյալ, Անգլիայի թիարաններում աշխատել է: Վերին աստիճանի շնորհալի մարդ է, բացի իրանից, նա հասցրել է և մի քանի լավ աշակերտներ…

Ժ

ՓՈԹՈՐԻԿ

Ջերմ, տոթային գիշերը անցավ անհանգիստ կերպով. ինձ վիճակված էր լսել դժբախտ կնոջ աղետավոր պատմությանը: Ասլանը զբաղված էր հյուսնի արհեստանոցում, նավաստին և վարպետ Փանոսը նույնպես անքուն մնացին,— չնայելով այդ բոլորին, առավոտյան ստիպված էինք խիստ վաղ վեր կենալ որովհետև Ասլանը դիտավորություն ուներ նավակով Կտուց անապատը գնալ:

Աղոթարանը դեռ նոր էր սկսել պարզվիլ, դեռ առաջին անգամ լսելի եղավ գյուղական ժամատան կոչնակի անհամբեր հրավերը, երբ նավաստիի որոտալից ձայնը զարթեցրեց ինձ: Նրա ձայնը զարթեցրեց և Ասլանին: Վարպետ Փանոսը դեռ խռմփում էր:

Նավաստիի կոպտությունը բավական վրդովեցրեց ինձ, տրտնջալով հագնվեցա, և գյուղական սովորությամբ դուրս եկա փողոցը, այնտեղ բակի դռան առջևից հոսող առվակի մեջ երեսս լվանալու: Բայց իմ տրտունջը իսկույն անտեղի երևաց, երբ տեսա, որ ամբողջ գյուղը ոտքի վրա էր: Ծերերը, պառավները դիմում էին եկեղեցին աղոթելու, իսկ երիտասարդները դեպի իրանց դաշտային աշխատությունները: Ես տեսա և Ծովիկին, որ սափորը ուսին՝ վերադառնում էր աղբյուրից:

— Ես կարծեցի, որ դու գնացել ես, և շտապեցի…—ասաց նա, կանգնելով իմ մոտ:

— Առանց քեզ մնաք բարով ասելու չէի գնալ,—պատասխանեցի ես, ինքս ավելի կարմրելով ամոթխածությունից, քան թե նա:

Նա ծիծաղեց:

— Այդ ջուրը ո՞րտեղից ես բերում,—փոխեցի խոսքս:

— Հեռվից, շատ հեռվից, տե՛ս, այն բլուրի մոտից:

Նա ձեռքը մեկնեց դեպի բլուրը, որ մռայլի միջից ամենևին չէր երևում:

— Այս տարի, ասում են շոգերի պատճառով, աղբյուրի ջուրը շատ պակասել է, — շարունակեց նա դատող մարդու եղանակով,—այնքան պակասել է, համարյա թե կաթկաթում է: Պետք է սափորը դնել լուլայի տակին և սպասել, երկար սպասել, մինչև լցվի: Այդ անզգամ աղջիկները մեկմեկու ծամեր փետում են, չեն էլ սպասում մինչև հերթը իրանց հասնի: Այսօր քիչ էր մնում, որ մեկի հետ կռվեինք:

Ավանց գյուղի և առհասարակ Վանա շրջակա տափարակների հողը, տոգորված լինելով ծովային ջրով, պարունակում է իր մեջ շատ աղեր, որոնց պատճառով աղբյուրների ջրերը անախորժ համ ունեն, թեև ժողովուրդը գործ է ածում: Բայց լեռներից և բլուրներից բխող աղբյուրները սքանչելի են: Այդ էր պատճառը Ծովիկի այնքան հեռու գնալուն, որ մաքուր ջուր բերե, մանավանդ, որ տանը հյուրեր կային:

Ծովիկը, որպես նկատում էի, դժվարանում էր իմ մոտից հեռանալ, ծանր սափորը ուսին, կանգնած էր և խոսում էր ու խոսում, հարցնում էր, թե որտեղից ենք գալիս, ուր ենք գնում, հարցնում էր, թե ես քանի քույր ունեմ, քանի եղբայր ունեմ, հարցնում էր, թե ես տուն վերադառնալու ժամանակ ինչ ընծաներ պիտի տանեմ քույրերիս համար և այլն: Տեսնելով հետաքրքիր աղջկա հարցերը վերջ չունեն, ասացի նրան.

— Դու շատ հեռվիցն ես գալիս, Ծովիկ, բավական հոգնած կլինես, գնա տուն:

— Հոգնա՞ծ,— կրկնեց նա վիրավորվածի նման,— ես պետք է նորից վերադառնամ, այդ մեկ սափորը բավական չէ:— Նա իր շալակը ցած դրեց:

Ես երեսս լվացել, վերջացրել էի, այժմ սանդրվում էի:

— Տեսնեմ այդ սանդրը,— ասաց նա, ձեռքը մեկնելով:

Այդ սանդրը ընծայել էր ինձ ընկերներիցս մեկը, կիսալուսնի ձև ուներ, և շինված էր գոմեշի սև եղջյուրից: Ծովիկը հիացմունքով նայում էր նրա վրա և անդադար շրջշրջում էր իր մանրիկ ձեռքերի մեջ:

— Հավանո՞ւմ ես:

— Շա՛տ սիրուն է:

— Ա՛ռ, թող քեզ լինի:

— Բայց դու առանց սանդրի կմնաս:

— Քաղաքումը մի ուրիշը կգնեմ:

— Չէ, լավ կլինի, որ փոխենք իմ սանդրի հետ:

— Շատ լավ կլինի:

— Բայց իմը կոտրած է, անշնորհք է:

— Թող կոտրած լինի, բայց քո սանդրը ինձ համար շատ…

Նա թույլ չտվեց ինձ խոսքս վերջացնել, տվեց ինձ իր սանդրը, գլուխը բարեկամաբար շարժելով ժպտաց, վեր առեց սափորը և վազեց դեպի տուն:

Պատանու և աղջկա մեջ այսպիսի փոխարինությունը կարող էր բոլորովին այլ նշանակություն ունենալ, բայց պարզամիտ Ծովիկը չհասկացավ. նա միայն ուրախ էր, որ գոհացրեց ինձ և ինքը գոհ մնաց:

Ծովիկը մի զարմանալի աղջիկ էր երևում ինձ, Որքան արդյունավոր կարող էր լիներ, եթե գյուղական աղջկա այդքան աշխույժը, այդքան կենդանությունը գործ դրվեր ուրիշ, ավելի օգտավետ կրթությունների մեջ: Մի այդպիսի խելացի աղջիկը կարող էր հրաշքներ գործել:

Երբ ես վերադարձա սրահը, բոլորը պատրաստ էին ճանապարհ ընկնելու: Ասլանը մի քանի րոպեով մտավ այն սենյակը, որտեղ գտնվում էր հիվանդը և մեզ սպասել տվեց:

Մենք եկանք նավահանգիստը այն ժամանակ, երբ բավական լուսացել էր, և աղոթարանը սկսել էր շառագունել: Նավաստին մոտեցավ ցցին, որից կապված էր նրա նավակը և, բռնելով պարանից՝ կոչեց.

– Դե՛, մոտ եկ:

Նա այնպես էր կանչում իր նավակին, որպես ձիապանը իր սնուցած նժույգին: Նավակը մոտեցավ եզրին: Նա մի ոստյունով ցատկեց նավակի մեջ, որը բավական հեռու էր կանգնած: Հետո ձայն տվեց Ծովիկին.

– Դե՛, դու էլ:

Մանկահասակ աղջիկը, հոր օրինակին հետևելով, նույնպես ցատկեց նավակի մեջ և տեղավորեց այնտեղ մեր նախաճաշիկի համար պատրաստած պաշարը. տապակած հավեր, պանիր, սպիտակ լավաշներ և մի շիշ գինի: Ասլանը նույնպես անցավ, բայց ես փայտի նման կանգնած մնացի ափի վրա: Ինձ համար տախտակ դրեցին, վրայից անցա: Կարո՞ղ եք երևակայել իմ ամոթը, իմ քրտինքը Ծովիկի առջև:

Վարպետ Փանոսը, եզրից բարի ճանապարհ մաղթելով, Ծովիկի հետ վերադարձավ դեպի գյուղը: Նավակը սկսեց լողալ: Նրա մեջ տարածված էր մի փոքրիկ գորգ, որի վրա նստեցինք ես ու Ասլանը:

Ծովը հանդարտ էր: Նավակը լողում էր առանց օրորվելու: Առաջին անգամն էր, որ ես ծովային ճանապարհորդություն էի անում, և իմ ուրախությանը չափ չկար: Ասլանը նույնպես լավ տրամադրության մեջ էր երևում, բայց լուռ էր: Նա գտնվում էր մի տեսակ հափշտակության մեջ: Անտարակույս, ծովային սքանչելի առավոտը չէր, որ իր գեղեցիկ տեսարաններով նրա ուշադրությունը գրավեր: Ո՞վ գիտե, ի՛նչ բանի վրա էր մտածում նա: Մտածո՞ւմ էր արդյոք այն բանի վրա, որ նրա մշտական ցնորքն էր, որի մասին շատ անգամ խոսացել էր ինձ հետ, թե պետք է արդյունավոր կացուցանել ջրային այդ մեծ ավազանը և, զարգացնելով նրա վրա կանոնավոր նավագնացությունը, պետք է ավելի սերտ կապերով միացնել շրջակա գավառների հարաբերությունները: Մտածո՞ւմ էր արդյոք այն բանի վրա, որը ինձ բոլորովին անկարելի էր թվում, թե պետք է մի ջրանցք բաց անել և, սկսելով այդ ծովի արևմտյան ափերից, հասցնել մինչև Եփրատ (Արածանի) գետը, որը ճեղքելով անցնում է Մուշի ամբողջ դաշտի երկարությամբ և, վերջը խառնվելով Տիգրիսի հետ, թափվում է Պարսից ծոցը: Այսպիսով մի ճանապարհ կբացվեր Հայաստանի սրտից, որը Արաբական ծովի և Հնդկական օվկիանոսի միջնորդությամբ կկապեր այդ սիրտը Հնդկաստանի հարուստ հայ գաղթականության հետ: Ի՞նչ էր մտածում նա,— ես չգիտեմ և անկարող էի գիտենալ: Այսքանը միայն ինձ հայտնի էր, որ նա մանր բաների վրա մտածելու սովորություն չուներ: Ինձ հայտնի էր և այն, որպես նախընթաց օրը խոսեց սրբազնության առաջնորդի հետ և նրանից հանձնարարական թուղթ ստացավ, նա գնում էր Կտուց անապատը՝ այդ կղզու մեջ

պահված մագաղաթները հետազոտելու համար: Արդյո՞ք այդ ևս մի պատրվակ չէր, որի մեջ թաքնված էին այլ նպատակներ…

Ես էլ լուռ էի, բայց ես ջրանցքի, նավագնացության և ծովի վրա չէի մտածում. իմ մտածությունները շատ անմեղ էին, ես մտածում էի միայն Ծովիկի վրա: Մտաբերում էի, թե ինչպես նա միջօրեի սաստիկ տոթի ժամանակ, ծառերի ճյուղերի վրա բարձրացած, նախշում էր խնձորները, մտաբերում էի, թե ինչպես գիշերային լռության ժամանակ, լսելով մոր ձայնը, նա ցած իջավ կտուրից, տարավ, հանգստացրեց դժբախտ մորը, մտաբերում էի, թե ինչպես առավոտյան, երբ մարդիկ դեռ նոր էին զարթել, իսկ նա վերադառնում էր հեռավոր աղբյուրից, մտաբերում էի նրա սրտագին խոսակցությունը, և վերջապես՝ կոտրած սանդրը… և ամաչում էի Ասլանից, հանել այդ թանկագին հիշատակը, նայել, երկա՛ր նայել նրա վրա… Այդ բոլոր հիշողությունները, որոնց մեջ փայլում էր կայտառ աղջկա սիրտն ու հոգին, պատկերացնում էի իմ մտքի մեջ, և համեմատություն էի անում նրա, Մարոյի և Սոնայի մեջ…

Այդ համեմատությունը երկար զբաղեցրեց ինձ, մինչև հեռվից, նուրբ մշուշի մեջ նշմարեցի Կտուց կղզին: Սկսյալ երեխայությունից, այնքան զարմանալի պատմություններ էի լսել այդ կղզու անապատականների մասին, որ ցանկանում էի շուտ տեսնել նրանց, համբուրել նրանց սուրբ աջը և առնել նրանց փրկարար օրհնությունը: Լսել էի, թե ինչպես նրանք իրանց փիլոնները տարածում էին այդ ծովի ալիքների վրա, կատաղած ալիքները իսկույն հանդարտվում էին, և նրանք նստում էին փիլոնի վրա, որը որպես մի ամրակազմ լաստափայտ, լողում էր ջրի երեսին և տանում էր սուրբ հայրերին, որտեղ որ նրանք ցանկանում էին: Լսել էի, թե ինչպես նրանք մոտենում էին իրանց կղզու ափերին, կանչում էին և ձկները նրանց ձայնը լսելով, ուրախ-ուրախ վազում էին դեպի եզրը, և նրանք ձեռքերը մեկնում, բռնում էին ձկներին, նայում էին նրանց վրա, զվարճանում էին և կրկին թողնում էին ջրերի մեջ ազատ ու անհոգ ապրելու: Վերջապես, ի՛նչ հրաշալիք ասես չէի լսել նրանց մասին, և այդ բոլորը մտաբերելով, իմ սիրտը լցվում էր սրբազան ջերմեռանդությամբ, և ես ինձ անչափ երջանիկ էի համարում, որ պիտի տեսնեմ սուրբ հայրերին:

Նավաստին, երևի, ոչ մի բանի վրա չէր մտածում, նա նիրհում էր: Թիկն տված նավակի կողքին, պառկել էր նա և երբեմն, քնի միջից, մեքենաբար շարժում էր թիակը, որ ձեռքից բաց չէր թողել: Հնազանդ նավակը գիտեր իր գործը, գնում էր նույն ուղղությամբ, որ սկզբից նրա տերը նախագծել էր նրա համար: Ծովը խաղաղ էր:

Բայց խաղաղությունը երկար չտևեց: Հարավային քամին, որ սկսեց փչել արևի ծագելուց հետո, սկզբում մեղմ էր, հետզհետե սաստկացավ: Ծովի հանդարտ մակերևույթը սկսեց հուզվել: Նավաստին չէր նկատում այդ փոփոխությունը, նա, դեռ աչքերը խփած, շարժում էր ձեռքերը, որպես հոգնած, քնով ծանրացած մայրը, կեսգիշերին, մեքենաբար շարժում է անհանգիստ երեխայի օրորոցը: Ասլանը առեց թիակը նրանից և հմուտ ձեռքով սկսեց ինքը թիավարել: Նավաստին ոչինչ չզգաց:

Ալիքները այն աստիճան բարձրացան, որ ջուրը այժմ սկսել էր ցայտել նավակի մեջ: Նավաստին զարթնեց: Նա հորանջելով գլուխը վեր բարձրացրեց, ձեռքով շփեց ճակատը, կարծես աշխատում էր բռնի կերպով քունը փարատել իր աչքերից: Նա զարմացած նայեց իր շուրջը: Նեբրովթ և Գրգուռ լեռների գագաթների վրա երևում էին մոխրագույն ամպեր: Մշուշը պատել էր այն կողմը, որը հետզհետե մռայլվելով, թանձր մառախուղի կերպարանք էր ստանում: Այդ տեսնելով, նավաստիի հաստ, շագանակի գույնով շրթունքները հեգնաբար ետ քաշվեցան և երևան հանեցին նրա խոշոր, սպիտակ ատամները:

— Օ՜-հո՜,— բացականչեց նա,— շուտով մի լավ փոթորիկ կունենանք…

Մառախուղը հարավային կողմից սկսեց ավելի և ավելի տարածվել և բռնեց հորիզոնի մեծ մասը: Բայց աղոթարանի կողմից նոր ծագող արեգակը ծիծաղում էր: Երբեմն կաթկթում էին անձրևի խոշոր կաթիլներ, թեև մեր վրայի երկինքը դեռ պարզ էր: Ջերմ և հեղձուցիչ գիշերից հետո, այդ երևույթը այդ կողմերում անսովոր բան չէր:

Ասլանը դեռ ուժեղ կերպով թիավարում էր: Նավաստին կանգնած նայում էր նրա վրա և, կարծես, չէր ուզում զրկել նրան այդ փոքրիկ զվարճությունից:

— Շուռ տո՛ւր դեպի աջ,— նկատեց նա,— աշխատիր մոտենալ եզերքին, եթե ոչ, հորձանքների մեջ կընկնենք:

Հետո դառնալով ինձ՝ հարցրեց.

— Դու լողալ իմանո՞ւմ ես:

— Ոչ,— պատասխանեցի ես

— Երբ մի քանի րոպեից հետո այդ նավակը ջրի տակը կգնա, դու բռնիր այստեղից:— Նա սառնասրտությամբ ցույց տվեց իր գոտին:

Ես սոսկացի:

Նավաստին անվրդով կանգնած էր և ոտքը դրել էր նավակի կողքի վրա, կարծես նրա զորավոր ճնշումով աշխատում էր պահպանել նավակի հավասարակշռությունը, որը այդ միջոցին, մի փայտյա կոտրած շերեփի նման, ծփում էր զայրացած կոհակների մեջ: Հարավային տաք քամին, որը անցնելով Միջագետքի արևմտյան անապատներից, և փոքր-ինչ զովանալով Տավրոսի լեռների վրա, հասնում էր մինչև այստեղ,— այդ բոթաբեր քամին, ավելի և ավելի սաստկանալով, փոքր էր մնում, որ փշրեր բարակ ձողը, որի գլխին, աղմուկ բարձրացնելով, ծածանվում էր Բերզեն-Օղլու կարմիր և սև գույնով դրոշակը:

— Տուր ինձ թիակը, դու հոգնեցար,— ասաց նա Ասլանին, առնելով նրա ձեռքից թիակը:— Իսկ դու, իմ գառնուկ, անգործ մի մնա, վեր առ այդ գոտը և ջուրը դուրս ածիր:

Ես վեր առի փայտյա գոտը, սկսեցի դուրս ածել ջուրը, որ այդ ժամանակ ավելի առատությամբ թափվում էր նավակի մեջ:

Արեգակը այժմ բոլորովին ծածկվեցավ: Մառախուղը, հետզհետե աճելով, ընդարձակվելով, բռնել էր ամբողջ հորիզոնը: Մի քանի քայլ հեռու ոչինչ չէր երևում, կղզին անհետացավ մեր աչքերից: Անձրևը սկսեց սաստկանալ: Վերևից հեղեղ, ներքևից ալեկոծություն:

Երբեմն լսվում էր զանգահարության մեղմ ձայն, որը խլանում էր քամու կատաղի մռնչյունի մեջ: Զանգակի այդ տխուր հնչյունները լսելի են լինում միայն հանդիսավոր թաղումների ժամանակ: Այդ ձայնը ինձ վրա խիստ սոսկալի ազդեցություն գործեց: Մի՞թե շուտով պիտի կատարվեր մեր թաղումը, մի՞թե շուտով պիտի պատռվեր ջրային անդունդը և մեզ տաներ սառն գերեզմանի մեջ:

Ասլանը մտահույզ էր: Նավաստին եռանդով մաքառում էր փրփրած ալիքների հետ: Իմ մեջ սիրտ չէր մնացել:

— Այդ ի՞նչ զանգակի ձայն է,— հարցրեց Ասլանը:

— Այնտեղ, կղզու մեջ, աղոթում են,— պատասխանեց նավաստին։— Աբեղաները սովորություն ունեն սաստիկ ալեկոծությունների ժամանակ մոտենալ ափերին և խմբով թափոր կատարել։

— Ուրեմն մո՞տ ենք կղզուն։

— Շատ հեռու չենք։

Ես փոքր-ինչ հանգստացա։

Պետք էր նավակի մեջ գտնված բոլոր ծանրությունները ածել ծովը։ Նավաստին նետեց կողովը, որի մեջ զանազան մրգեր էր տանում աբեղաների համար։ Տանձերը, խնձորները մի քանի վայրկյան ծփացին կոհակների վրա, հետո անհետացան։ Նետեց հացի պաշարը, որ Ծովիկը դրել էր մեզ համար։ Ասլանը նետեց նորին սրբազնությունից իրեն հիշատակ ստացած փղոսկրյա «տիրուհին»։ Ես էլ հիմարացա, նետեցի ձեռքիս փայտյա գոտը։

— Խելացի բան տեսար,— նկատեց ինձ նավաստին ժպտելով։

Ամեն րոպե սպասում էին խորասույզ լինելու։ Երբ մոտեցանք մի կողմից կղզուն, մյուս կողմից ծովափին, նավաստին ասաց.

— Վտանգը պետք է անցած համարել։

— Ընդհակառակը, հենց այժմ է գլխավոր տագնապը,— նկատեց նրան Ասլանը։

— Ինչո՞ւ։

— Այժմ քամին փչում է արևմուտքից, և ալիքները մղում են դեպի արևելք, այսինքն՝ դեպի մերձակա ծովեզրը. շուտով մեզ կհեռացնեն կղզուց և, նավակը զարկելով ցամաքի ժայռերին, կփշրեն։

— Ես պիտի թողնեմ, որ տանեն և փշրեն։

Նա առաջարկեց թողնել նավակը և լողալով անցնել կղզին, որը ավելի մոտ էր, քան թե ցամաքը։

— Ես նպատակ չունեմ թրջված կատվի նման վանքը մտնել,— պատասխանեց Ասլանը։

— Ուրիշ հնար չկա։

— Կա։

— Նավակը շուտով մեզ հետ կփշրվի ժայռերի վրա։

— Եթե այդ ուղղությամբ տանենք, չի փշրվի։

— Այնտեղ ուժգին հորձանք կա։

— Հենց այդ հորձանքը կազատե մեզ։

— Դուք համոզվա՞ծ եք։

— Ինչպես երկու անգամ երկու…

— Տեսնենք…

Գիտությունը և փորձը վիճում էին միմյանց հետ: Ասլանը, նայելով ալիքների ուղղությանը, քամու ընթացքին, այդ համոզմունքն էր կազմել: Իսկ նավաստին, հիմնվելով իր փորձերի վրա, բոլորովին հակառակ կարծիք էր հայտնում. նա դարձյալ առաջարկում էր թողնել նավակը և լողալով ընկնել կղզին: Թե՛ այսպես, թե՛ այնպես, տագնապը մեծ էր:

Նավաստին դադարեց վիճել, նա թեորիայի մարդ չէր: Հանկարծ այն տեսանք, որ նա, նավակից կապած երկայն պարանի ծայրը ձեռքին բռնած, նետվեցավ ջրի մեջ: Սկզբում բոլորովին խորասույզ եղավ նա, մի ծանր խարսխի նման, որը դեպի հատակը գնալով, կանգնեցնում է մրրկածուփ նավը: Ես սաստիկ վախեցա, կարծում էի, թե կորավ նա: Բայց քանի րոպեից հետո կրկին հայտնվեցավ նա, և սկսեց լողալ դեպի կղզին, իր ետևից, քարշ տալով նավակը:

Ասլանը շվարած մնաց:

Կղզին այժմ պարզ երևում էր: Մառախուղի միջից ես նշմարում էի աբեղաների մռայլ կերպարանքները, որոնք, ափի մոտ կանգնած, իրանց ջերմեռանդ, աղերսավոր ձեռքերը տարածել էին դեպի երկինքը:

Մի քանի անգամ ալիքները այնպես սաստկությամբ անցան նավակի վրայից, որ փոքր էր մնում, մի թեթև փետուրի նման, մեզ ողողեին և իրանց հետ տանեին: Ես բնազդմամբ բռնեցի դրոշակի թույլ ձողից: Ասլանը ծիծաղեց:

— Մի վախիր,— ասաց նա,— կղզին մոտ է:

— Բերզեն-Օղլու ջանքերն իզուր անցան,— հանկարծ խոսքը փոխեց նա, և մի անսովոր անհանգստություն երևաց նրա դեմքի վրա:— Պարանը կտրվեցավ…

Այնուհետև ի՞նչ պատահեց, ի՞նչ կատարվեցավ մեզ հետ, ես մինչև այսօր էլ չեմ կարողացել ճիշտ կերպով պատկերացնել իմ մտքում: Այսքանը միայն աղոտ կերպով հիշում եմ, որ կոհակները կրկին բարձրացան, և ես, ինչպես երազի մեջ, զգացի որ նավակը այլևս իմ ոտների տակին չէր. ես ընկղմված էի ջրի մեջ, մրրկածուփ ալիքները խաղացնում էին ինձ, երբեմն դեպի հատակը տանելով, երբեմն դեպի վեր բարձրացնելով, և այդ ժամանակ կարծես մի աներևույթ զորություն ինձ պինդ բռնած ուներ: Երկար մենք տարուբերվում էինք ջրային տարերքի մեջ, բայց զորությունը ինձանից չէր բաժանվում:

Այդ զորությունը ինձ դուրս հանեց կղզու վրա, բոլորովին անզգայացած և կիսաշունչ դրության մեջ: Եվ դա ուրիշ ոչ ոք չէր, բայց միայն իմ ազատիչը, իմ բարեկամը — Ասլանը: Երբ աչքերս բաց արի, երբ փոքր-ինչ ուշքի եկա, ինձ մի խումբ աբեղաներից շրջապատված գտա: Նրանք անդադար փառք էին տալիս աստծուն, որ ազատվեցանք:

ԺԱ

ԿՏՈՒՑ ԱՆԱՊԱՏ

Աբեղաները մեզ տարան իրանց վանքը և հանգստացրին: Խուցերից ամենահարմարը պատրաստեցին մեզ համար, իսկույն կրակ վառեցին, տաքացանք և սկսեցինք բուխարու առջև մեր հագուստները չորացնել: Բերզեն-Օղլին չեկավ մեզ

հետ, նա մնաց կղզու ափերի մոտ՝ տեսնելու թե ի՞նչ եղավ իր նավակը: Ասլանը նրան ոչինչ չասաց, գոնե իբրև բժիշկ չարգելեց նրան, որ այնպես թրջված հագուստով կարող էր հիվանդանալ, մանավանդ որ մրրիկը դեռ չէր դադարել և սաստիկ ցուրտ քամի էր փչում: Եվ եթե մի բան ասելու լիներ, նա հազիվ թե կլսեր բժշկի խորհուրդը: Նրա սիրելին, նրա նավակը չկար:

Ոչ մի անգամ կրակը ինձ այնքան ախորժելի չէր երևացել, որպես այնօր, չնայելով որ քամին բուխարու երդիկից փչում էր, և փոքրիկ խուցը լցված էր ծխով: Ես ամբողջ մարմնով դողում էի, բայց ջերմությունը ինձ նորից կյանք տվեց:

Երբ ես բավական զգաստացած էի զգում ինձ, իմ առաջին հոգսը եղավ տեսնել, արդյոք Ծովիկի տված կոտրած սանդրը ինձ մո՞տ էր, թե մնացել էր ծովի մեջ: Ո՜րքան մեծ եղավ իմ ուրախությունը, երբ ձեռքս տարա ծոցս, տեսա սանդրը իր տեղումն էր: Այդ ժամանակ Ասլանն էլ ձեռքը տարավ իր ծոցը, բայց դուրս հանեց մի այլ բան: Դա նորին սրբազնության առաջնորդի, հանձնարարական թուղթն էր, որի գրությունը թրջվելով, համարյա թե եղծվել էր: Նա տվեց այդ թուղթը աբեղաներից մեկին, որ մնացել էր մեզ մոտ սպասավորելու և ասաց.

— Խնդրեմ այդ թուղթը ցույց տվեցեք ձեր վանահորը, դա նորին սրբազնության առաջնորդի, ինձ տված թուղթն է թեև դժվարությամբ է կարդացվում, բայց դարձյալ կարելի է որոշել, թե ի՜նչ նպատակով ես եկել եմ ձեր վանքը:

Աբեղան, նորին սրբազնության անունը լսելով, մի առանձին պատկառանքով առեց թուղթը, նայեց նրա վրա, երևի աշխատեց մի բան կարդալ, այս կողմ ու այն կողմ շուռ տվեց, և մի երևելի գյուտ արածի նման, վերջապես ասաց.

— Այդ սրբազանի կնիքն է:

Աբեղան հեռանալուց հետո, ես և Ասլանը մնացինք խուցի մեջ միայնակ:

— Պետք է մի տաք բան խմել,— ասաց Ասլանը,— գոնե մի փոքր գինի լիներ:

— Մի՞թե այստեղ գինի չի լինի,— հարցրի ես:

— Հազիվ թե:

Ասլանի ասածը ուղիղ դուրս եկավ: Երբ աբեղան վերադարձավ և հայտնեց վանահոր կողմից կատարյալ պատրաստակամություն կատարելու մեր փափագները, մենք հարցրինք գինու մասին: Նա շփոթված մնաց, և երկար մտածելուց հետո, պատասխանեց.

— Կարծեմ պետք է, որ մի քիչ գտնվի. վանահայրը կես շիշ պահած ուներ «բաժակի» համար:

Հետո նա նստեց մեզ մոտ, սկսեց մի առանձին հոգածությամբ պատմել, թե շատ անգամ մեծ դժվարություններ են կրում, երբ «բաժակի» գինին սպառվում է, և վանահայրը համարյա միշտ մի հրաշքով է ձեռք բերում, որ սուրբ խորհուրդը կատարվի: Եվ ավելացրեց, թե ինքը չէ իմանում ե՞րբ կամ ի՞նչ ժամանակ է պատահել, բայց լսել է, որ Վան քաղաքի մոտ մի վանք կա, որ կոչվում է «Կռունկի վանք». մի անգամ սուրբ խորհուրդը կատարելու միջոցին պատարագիչ հայր սուրբը տեսնում է, որ գինի չկա և, չկամենալով ընդհատել պատարագը, մինչև գնային, գտնեին և բերեին, նա սկսում է աղոթել: Հանկարծ, աստուծո հրամանով, մի կռունկ թռչելով ներս է մտնում տաճարի լուսամուտից, և իր կտցի մեջ բռնած, երևում է խաղողի մի ողկույզ: Նա ուղիղ մոտենում է սուրբ խորհրդի սեղանին, պատարագիչը առնում է

նրա կտուցից ողկույզը և քամում է սկիհի մեջ: Այն օրից այգ վանքը կոչվեցավ «Կռունկի վանք»:

Աբեղայի պատմությունը բավական էր, որ թե՛ ես և թե՛ Ասլանը հրաժարվեինք մեր բաղձանքից, և նրանց այնպիսի մի դժվար դրության մեջ չդնեինք, որ ստիպված լինեին թռչունների միջոցով գինի ստանալ, թեև նրա պատմությունը այդ նպատակով ասված չէ, այլ ավելի այն նպատակով, որ երիտասարդ աբեղան ցույց տա, թե ինքն էլ մի բան գիտե:

— Մեր վանքումը,— ասաց նա,— ոչ մի ըմպելիք չէ գործածվում, բացի ջրից: Ուխտավորներին անգամ արգելված է իրանց հետ ըմպելիքներ բերել:

Այդ միջոցին լսելի եղավ ճաշվա ժամի կոչնակի ձայնը: Թեև այդ անապատը եկողը պետք է հետևեր վանական բոլոր կանոններին, բայց աբեղան, խնայելով մեզ, մեր հետ պատահած դժբախտության պատճառով, չպահանջեց մեզանից իսկույն եկեղեցի գնալ, այլ, ներողություն խնդրելով, ինքը հեռացավ, խոստանալով, որ պատարագը վերջացնելուց հետո դարձյալ կգա և մեզ կտանե սեղանատունը ճաշելու:

Խուցը, որ պատրաստել էին մեզ համար, իհարկե, վանքում գտնված ամենամաքուր, ամենահարմարավոր օթևաններից մեկն էր: Բայց դա ևս ուրիշ ոչնչի նման չէր, եթե ոչ մի մթին հավաբույնի նման: Հատակը ծեփած էր կավով, որի վրա, իբրև սփռոց, տարածել էին պրտուներից և ճահճային բույսերից գործած մի հասիր (փսիաթ): Բայց մեզ պատվելու համար՝ ավելացրել էին նրա վրա մի հին կապերտի կտոր: Պատերը շինված էին անտաշ քարերից, որոնց միացնող շաղախը, դարերի ընթացքում, խոնավությունից փտելով, հողմահարվելով, ցած էր թափվել, և քարերի մեջտեղում բացվել էին այլանդակ ճեղքեր ու խոռոչներ: Այդ մթին խոռոչները խիստ հարմար պատսպարան էին ամեն տեսակ միջատների և սողունների համար: Բայց ես վախենում էի միայն կարիճներից և օձերից: Նրանց փոխարեն հայտնվեցավ մի մոխրագույն մողես, որը, ինչպես երևում էր, այնքան ընտելացած էր այդ խուցի նախկին բնակչի հետ, որ ամենևին չէր խորշում մարդկանց ներկայությունից: Նա դուրս եկավ, մի արագ շրջան կատարեց նեղ խուցի մեջ, անցավ իմ և Ասլանի մեջտեղից, հետո կանգ առեց, սրածայր գլուխը վեր բարձրացրեց, ուշադրությամբ նայեց մեզ վրա և, կարծես ճանաչելով, որ իր սիրելի հայր սուրբը չենք, մի առանձին տհաճությամբ հեռացավ և կրկին մտավ իր խոռոչի մեջ: Մկները ազատ կերպով թագավորում էին այստեղ, որովհետև վանքում կատու չէին պահում: Չէին պահում և ոչ մի անասուն, մինչև անգամ հավեր, որոնք գոնե կոչնչացնեին միջատներին:

Խուցը մութն էր: Եթե բուխարու մեջ վառվող կրակը չլիներ, մենք գուցե ճրագի կարոտություն կզգայինք: Երկու նեղ լուսամուտներ, որոնց բարձրությունը երկու թզաչափ և լայնությունը մեկ թզաչափ հազիվ կլիներ, բացված էին միմյանց մոտ, սենյակի այն գծի ներքև, որտեղ առաստաղը միանում էր պատի հետ: Այդ բարձր ծակերից ստացվող լույսը հատակին չէր հասնում: Այդ տեսակ լուսամուտներ կարելի էր տեսնել բանտերում միայն: Բայց այնտեղ հասկանալի է նրանց նշանակությունը, թե ինչու լուսամուտները մի քանի անգամ բարձր, քան թե մարդու հասակը, վերևից են բաց անում: Որպեսզի բանտարկյալները հնար չգտնեին փախչելու: Իսկ այստեղ ի՞նչ նշանակություն ունեին:

– Չե՞ս իմանում,– բացատրեց Ասլանը,– այդ նրա համար են լուսամուտները այդքան նեղ և բարձրից բացված, որպեսզի այդ խուցերի մեջ բնակվող աբեղաները չհրապուրվեն դրսի տեսարաններով, այլ կենտրոնանան իրանց հոգևոր մտածությունների մեջ:

Դա մի սոսկալի անձնուրացություն պետք էր համարել, որ մարդիկ կամավ զրկում են իրանց աստծու գեղեցիկ աշխարհի վրա նայելուց, մանավանդ մի այնպիսի գեղեցկության, որպես էր շրջապատող ծովը իր սքանչելի տեսարաններով:

Բոլոր խուցերը, որոնց թիվը հարյուրից ավելի կլիներ, այդ ձևով էին շինված: Նրանց դռներն անգամ չէին բացվում դեպի դուրսը, որտեղից կարելի կլիներ մի բան տեսնել: Դռները բացվում էին մթին լաբիրինթոսի նման ոլոր-մոլոր նրբանցքների մեջ, ուր ցերեկով ևս պետք էր ճրագով ման գալ, գլուխը չկոտրելու համար: Այստեղ էին բնակվում աշխարհից անջատված ճգնավորները: Բայց զարմանալին այն էր, որ շատերը նրանցից, այդ գերեզմանի պես խավար խղիկները ավելի փափուկ, ավելի վայելչական համարելով, թողել, հեռացել էին և կղզու ժայռերի մեջ իրանց ձեռքով այրեր էին փորել, նրանց մեջ էին բնակվում, բոլորովին զրկելով իրանց մարդիկների հետ հաղորդակցությունից: Դրանց թվումն էր և վանահայրը, որը խիստ հազիվ անգամ էր հայտնվում միաբանության մեջ և որի մասին զանազան հրաշքներ էին պատմում: Իսկ այնօր մեր պատճառով ցած էր իջել իր քարայրից:

Գալով այդ անապատը, ես բոլորովին ուրիշ բան էի սպասում տեսնել. գեղեցիկ, մաքուր խուցեր՝ լի օդով և լույսով, ծովահայաց սրահակներ՝ զովաբեր պատշգամբներով, խուցերի մեջ ամեն հարմարություններ՝ գրելու և կարդալու համար, պահարաններ լի սրբազան գրքերով, պատերը զարդարված սուրբ հարց պատկերներով, որոնք գործել են եկեղեցու և հայրենիքի համար, մի խոսքով, ես սպասում էի տեսնել խաղաղ և վայելուչ կյանքը կրոնավորի, որ, հեռացած աշխարհի աղմուկից, իր լռին առանձնության մեջ ևս իրան շրջապատում է այն առարկաներով, որ զարթեցնում են նրա մեջ սուրբ, հոգևոր զգացմունքներ, որ զարգացնում են նրա միտքը երկնային վսեմ գաղափարներով, որ ազնվացնում են նրա սիրտը մարդասիրական բարձր առաքինություններով: Դրանց փոխարեն ի՞նչ էի տեսնում. մերկ, մռայլ խղիկներ, զուրկ օդից և լույսից, ողորմելի օթևաններ, բոլորովին զուրկ կարասիներից: Երևում էր, որ թուղթը, գրիչը, գիրքը երբեք այդ կացարաններում մուտք չէին գործել:

Մեզ համար պատրաստած խուցի մեջ պատուհանում դրած էր միայն մի ցեցակեր փոշեթաղ սաղմոս, փայտյա կազմով, որ պատած էր սև կաշիով: Ո՞վ գիտե, որ ժամանակի տպագրության գործ էր այդ գիրքը: Դա էր միակ առարկան, որ իր վրա ուշադրություն էր դարձնում: Ոչ մի պահարան չկար, երևի նրա համար, որ սեփականությունից զուրկ աբեղաները չմոլորվեին սատանայից, իրանց համար պահեստի տեղեր ունենալով:

– Այն տեսակ կրոնավորներ,– ասաց Ասլանը,– որ անապատների առանձնության մեջ զբաղվեին մտավոր կյանքով, ուսումնասիրեին կրոնի վարդապետությունը, պարապեին գրավոր աշխատություններով, այդ տեսակ կրոնավորներ, մեր պատմության ամբողջ ընթացքում, միշտ բացառություններ են կազմել: Եվ ցավալին այն է, որ դրանք ըստ մեծի մասին հալածվել են իրանց դասակիցներից, համարվելով իրանց ուխտին անհարազատ անդամներ: Ահա որպես է բողոքում հինգերորդ դարու ամենալավ աբեղաներից մեկը, Եզնիկը, իր ժամանակի կրոնական ուղղության դեմ: «Մեր բերանները հոտել են պաս պահելուց, և մեր լեզուները բթացել են սաղմոսներ երգելուց, իսկ այն, որ պահանջում է մեզանից աստված, սեր և խոնարհություն, այն մենք չունենք. միայն մեր շրթունքներով ենք սիրում աստծուն, և այդ աշխատանքը իզուր է: Անասունների միս չեն ուտում (աբեղաները), բայց իրանց եղբորը անհագ կերպով կեղեքում են, գինի չեն խմում, բայց իրանց հոգին արյունով շաղախում են, ամուսնացածներին ատում են, բայց իրանք իրանց պիղծ խորհուրդներով միշտ պոռնկություն են գործում. հագուստների վատն են հագնում, բայց ագահությունից այրվում են. այդպիսիներից պետք է փախչել և ոչ թե նրանց հետ հաղորդակցություն ունենալ»…

— Դրանք,— առաջ տարավ Ասլանը,— որոնց նկարագրում է Եզնիկը, իհարկե, պետք է նրա ժամանակի կեղծավորները և փարիսեցիները համարել, որոնք բարեպաշտական դիմակի ներքո սնուցանում էին ամենաանբարոյական կրքեր, թեև այդ կեղծավորները ամեն ժամանակ մեծամասնություն են ներկայացրել: Բայց ամենավնասակարը միշտ այն է եղել, երբ այդ աբեղաները անկեղծությամբ են վերաբերվել իրանց ուխտին: Որովհետև սպանել, ամեն զորությունից զրկել մարմինը մշտական պահով, ծոմով և խիստ ճգնություններով, որ նա անընդունակ լինի որևիցե ցանկության,— դա ոչ այլ ինչ է, եթե ոչ, մի տեսակ հոգևոր բարբարոսություն: Ամեն օր, ամեն ժամ, անդադար միևնույն աղոթքների կրկնությամբ բթացնել միտքը, և զգայուն, մտածող էակից դարձնել մի տեսակ անգիտակցական մեքենա,— դա կատարյալ հոգեսպանություն է: Այդ բոլորը միշտ կատարվել է մեր անապատներում, նույնը կտեսնեք և այստեղ: Այդ բոլորը կատարվել է մարմնի, հոգու և սրտի վատ ցանկությունները սպանելու նպատակով: Բայց երբ մարմինը, հոգին և սիրտը բռնի միջոցներով անընդունակ են դարձնում վատ ցանկությունները, շատ բնական է, որ նրանք, միևնույն ժամանակ, կկորցնեն և լավ ցանկությունների ընդունակությունը: Մարդը այդ դեպքում կդառնա մարմնով կենդանի դիակ, իսկ հոգով՝ ապուշ, եթե չասենք խելագար:

Ասլանի դատողությունները շատ գեղեցիկ էին, բայց ես քաղց էի զգում: Ծովային սառն բաղանիքը, որ ալեկոծության շնորհիվ վայելեցինք մենք, սաստիկ բաց էր արել իմ ախորժակը: Ես այժմ ոչինչ բանի մասին չէի ափսոսում, որ կորցրինք ծովի մեջ, այլ ափսոսում էի միայն այն տապակած վառյակների և սպիտակ լավաշների մասին, որ Ծովիկը թաշկինակի մեջ կապեց և յուր ձեռքով տեղավորեց մեր նավակի մեջ: Անհամբերությամբ սպասում էի աբեղային, որ գար և մեզ հրավիրեր սեղանատունը: Բայց ե՞րբ պիտի գար նա: Ճաշի ժամից հետո: Արդյո՞ք կվերջանար այդ ճաշվա ժամը, թեև կեսօրից շատ էր անցել, և մենք սկսյալ առավոտից ոչինչ կերած չէինք:

Դրսում մրրիկը դեռ չէր դադարել: Կատաղի քամին տակավին մռնչում էր: Ներս մտավ նավաստին, անապատումը իր ուղտը կորցրած արաբի նման, տխուր և հուսահատ դեմքով: Երբ ես սկսեցի մխիթարել, նա պատասխանեց.

— Ես այնքան չեմ ցավում, որ նավակս կորցրի, այլ մտածում եմ, թե ի՞նչպես պետք է գիշերը անցկացնեմ այստեղ:

— Ինչո՞ւ:

— Կտեսնեք, թե որպես պիտի տանջեն մեզ…

Նա չբացատրեց, թե այդ տանջանքը ի՛նչում պետք է լիներ, բայց նա էլ ինձ նման սկսեց գանգատվել իր քաղցածության մասին:

— Ինչո՞ւ դուք Ծովիկի դրած հավերը նետեցիք ծովը,— սկսեցի ես հանդիմանել նրան:

— Դու կարծում ես, եթե մնացած լինեին, կարո՞ղ էիր ուտել,— ասաց նա, ուղիղ իմ աչքերի մեջ նայելով:— Այստեղ, եղբայր, միս չեն ուտում, և ուխտավորներին արգելված է իրանց հետ միս բերել, որ վարդապետների ախորժակը չգայթակղեցնեն:

Ինչ բանի դեմ բողոքում էր Եզնիկը հինգերորդ դարում, նույն բանի դեմ բողոքում էր անկիրթ նավաստին այժմ:

— Ուրեմն մատաղներ չե՞ն մորթում այստեղ,— հարցրի նրանից:

— Այդ կղզու վրա անկարելի է արյուն թափել: Մատաղները մորթում են «դրսի տանը», այնտեղ պատրաստում են և այստեղ ուտում են: Այդ լինում է տարին մի անգամ միայն, երբ բազմաթիվ ուխտավորներ են գալիս:

«Դրսի տուն» կոչում էր նավաստին կղզու հանդեպ՝ ցամաքի վրա գտնվող տունը, որ պատկանում էր անապատին: Այդ տունը ջրային ճանապարհով կղզուց մեկ ժամու կամ ավելի պակաս հեռավորություն ուներ: Այնտեղ էր զետեղված վանքային բոլոր տնտեսությունը: Անապատում ուրիշ ոչինչ չէին շինում, միայն աղոթում էին ու ճգնում: Իսկ այնտեղ գործ կար, որի մասին պիտի խոսեմ, երբ դուրս կգանք «դրսի տունը»:

Վերջապես ներս մտավ աբեղան և հրավիրեց մեզ սեղանատունը: Դա մի ընդարձակ սենյակ էր, որի երկարությունը չորս անգամ ավելի կլիներ, քան թե լայնությունը: Սենյակի երկարության չափով, մեջտեղում շինված էր քարյա անշարժ սեղանը, որի երկու կողմից զուգահեռաբար ձգվում էին նույնպես քարյա նստարանների վրա: Ավելի քան հարյուր հոգի կարող էր տեղավորվել այդ նստարանների վրա: Հարուստ վանքերում այդ տեսակ սեղանները շինված են լինում մարմարիոնից, իսկ այստեղ շինված էր հասարակ, մոխրագույն քարից: Սեղանի գլխում մի առանձին տեղ հատկացրած էր վանահորը: Մենք նրան իր տեղում նստած գտանք, և մոտենալով աջը համբուրեցինք: Նա վաղօրոք ծերացած, միջին հասակով մի կրոնավոր էր, մեղմ աչքերով, հեզ դեմքով և նվաղած ձայնով: Ամեն ինչ նրա մեջ մաշվել, թուլացել և իր ուժը կորցրել էր, որպես էր և նրա հնամաշ հագուստը: Նա խիստ բարեսրտությամբ հրավիրեց Ասլանին նստել իր աջ կողմում, ինձ իր ձախ կողմում, իսկ նավաստին տեղավորվեցավ իմ մոտ, հետո ցավակցություն հայտնեց մեզ հետ պատահած դժբախտության մասին և գոհություն ամենակալին, որ ազատեց մեզ վտանգից: Դրանով վերջացավ նրա խոսակցությունը, որովհետև այդ միջոցին, մինը մյուսի ետևից, որպես գիշերային ուրվականներ, լուռ հանդարտությամբ ներս մտան աբեղաները և կարգով շարվեցան սեղանի երկու կողմում: Աղոթքից հետո յուրաքանչյուրը նստեց իր տեղում:

Տիրում էր ընդհանուր լռություն: Մենք ևս, սովորական կանոնին հետևելով, լուռ էինք: Յուրաքանչյուրի առջև դրած էր մի կտոր հաց, պատրաստած գարու և ցորյանի խառն ալյուրից, մի պղնձե պնակ, կլայեկով պատած, և մի փայտյա գդալ: Սեղանի այլ պարագայք չկային, բացի փայտյա մեծ աղամաններից, որ մի-մի հատ դրած էր յուրաքանչյուր հինգ հոգու առջև: Կանաչեղենները առատ էին. դալար սոխ, պռաս, բողկի տերևներ և այլն: Այդ կանաչեղենները այնպես ագահությամբ ուտվում էին, ինչպես սոված անասունները խոտ են ճարակում: Ոտքի վրա սպասավորություն էին անում նույնպես աբեղաներ: Պղնձյա մեծ ափսեների մեջ նրանք ներս բերեցին պատրաստած միակ կերակուրը և հավասար կերպով բաժանեցին բոլորին: Մենք ևս մեր բաժինը ստացանք: Դա ձավարից պատրաստած մի տեսակ փլավ էր, որի վրա ածել էին փոքր-ինչ կտավիատի ձեթ: Չնայելով որ ես շատ քաղցած էի, բայց ուտել չկարողացա: Հացը անկարելի էր ուտել: Ցորյանի ալյուրի խառնուրդը նրա մեջ ամենափոքր մասն էր միայն կազմում, իսկ գարին իր խոշոր թեփուկներով խեղդելու չափ անկլանելի էր: Արևելքում այս տեսակ հացեր պատրաստում են ուղտերի համար: Նավաստին մեծ ախորժակով ուտում էր: Սեղանի վրա ուրիշ ըմպելիք չկար, բացի ջրից, և ուրիշ համեմ չկար, բացի աղից: Բոլորը ուտում էին մի առանձին ծուլությամբ, ոչ թե այն պատճառով, որ սեղանը նրանց համար բավարար չէր, այլ, ընդհակառակը, շատ ճոխ էր: Ձավարի փլավը, կտավիատի ձեթով, ամբողջ տարվա մեջ գուցե մի երկու կամ երեք անգամ նրանք բախտ կունենային ստանալու: Իսկ այսօր պատրաստել էին ի պատիվ մեր: Իսկ նրանց ծուլության և դանդաղկոտության պատճառը պետք էր որոնել բոլորովին այլ հակումների մեջ: Ես նրանց անշարժ դեմքերի վրա կարդում էի այդ հակումները, թե «ինչո՞ւ մարդ պետք է կարոտ լիներ ուտելու, միթե ավելի լավ չէ՞ր, որ նա ազատ լիներ այդ հոգսից, որ ավելի ժամանակ

ունենար անձնատուր լինելու աղոթքների և աստուծո փառաբանությանը»: Եվ իրավ, նրանք ուտում էին օրը մի անգամ միայն, այն ևս պահոց կերակուրներ, իսկ տոն օրերում ուտյաց կերակուրներ, բայց միս — երբեք:

Մեզ հետո ասացին, որ սեղանատան մեջ մեր այնօր տեսածը՝ ամբողջ միաբանությունը չէր: Նրանցից շատերը չէին եկել ճաշելու. ոմանք գալիս են սեղանատուն ճաշելու երկու օրը մի անգամ, ոմանք երեք օրը մի անգամ, ոմանք շաբաթը մի անգամ, ոմանք ամենևին չեն գալիս և իրանց բացակա ճգնարաններում կերակրվում են միայն բույսերով: Այդ հալող, մաշող ծոմապահությունն էր պատճառը, որ այդ թշվառ հասարակության մեջ ես չէի տեսնում ոչ մի առողջ մարդ. բոլորը հիվանդոտ, նիհար, ցամաքած, գունաթափ էակներ էին: Նրանց մեջ չկար ոչ կաթոլիկ աբեղայի հաստ փորը և ոչ նրա պարարտ երեսի անբնական կարմրությունը:

Սեղանատան մեջ ուրիշ ձայն չէր լսվում, բացի աբեղաներից մեկի ընթերցանության ձայնը, որ վերևում, պատի վրա շինված վանդակապատի մեջ բարձրացած, նստել էր և, ճաշի բոլոր տևողության ժամանակ, կարդում էր սուրբերի վարքից զանազան պատմություններ: Բոլորի ուշադրությունը դարձրած էր դեպի այն կողմը: Բայց ես չէի լսում, որովհետև գրաբար ընթերցանությունից ոչինչ չէի հասկանում: Իմ ուշադրությունը գրավել էին սեղանի պղնձյա անոթները: Դրանք միատեսակ և միաձև չէին, մեկը մեծ էր, մեկը փոքր էր, և բոլորի վրա կային հայոց տառերով արձանագրություններ: Երևում էր, որ ժամանակների ընթացքում, այդ անոթները զանազան երկրներից ուխտավորները բերել էին իրանց հետ և, իբրև հիշատակ, իրանց մեղքերի թողության համար ընծայել էին վանքին: Յուրաքանչյուրի վրա քանդակած էին նվիրողի, նրա ծնողաց, նրա որդիների անունները: Նրանցից մի քանիսը շատ գեղեցիկ էին և մի քանի դարերի հնություն ունեին:

— Այդ զանազան երկրների հին արհեստի արդյունքը,— ասաց ինձ հետո Ասլանը,— կարող է մի լավ թանգարանի զարդը լինել:

Բոլորի զգեստը միաձև էր և միագույն և պատրաստված էր միևնույն նյութերից: Մի թել անգամ բամբակից կամ մետաքսից չկար նրանց հագուստների մեջ, ամբողջապես կարված էին մազե կոշտ գործվածքներից: Նրանց հագուստը, որպես երևում էր, ոչ այնքան մարմինը պահպանելու նպատակով էր պատրաստած, որքան նրան տանջելու նպատակով: Շապիկներն անգամ կարված էին թանձր մազեղենից, որ հագած ունեին մերկ մարմնի վրա և խարտոցի նման մաշում էին նրան: Առհասարակ բոված ղահվեի մուգ գույնը տիրում էր բոլոր հագուստների վրա: Գլխներին դրած ունեին արախչինի նման բրդյա թասակ, որի վրա փաթաթել էին սև թաշկինակ: Այդ տեսակ գլխարկները անապատականների լեզվով կոչվում էին «քուսիթա», որի ասորական նշանակությունը ցույց է տալիս, որ ամենահին ժամանակներում գլխարկի այդ ձևն առնված էր ասորիներից, երբ նրանց կղերը մեծ դեր էր խաղում մեր եկեղեցական կյանքում: Վանահոր զգեստը թե՛ իր գույնով և թե՛ ձևով չէր որոշվում մյուսներից: Բոլորը հագած ունեին ծանր հողաթափներ, երեք մատնաչափ հաստ փայտյա տակերով:

Բայց ինչ որ ավելի աչքի էր զարկում, այդ էր չափազանց կեղտոտությունը, որը տիրում էր բոլորի վրա: Երևում էր, որ այդ մարդիկը այն աստիճան արհամարհում էին մարմինը, որ բոլորովին անփույթ էին՝ նրանք փոքր ի շատե մաքուր դրության մեջ պահելու: Եվ ես հավատացած էի, որ դրանք երբեք չէին լվացվում, երբեք չէին սանդրվում: Բոլորի մազերը անկարգ կերպով խճճված էին երեսների և գլխների վրա, և այդ՝ խելագարների տպավորություն էր գործում:

Ճաշը վերջացավ նույնպես աղոթքով, որպես սկսվեցավ: Բոլորը վեր կացան, խոնարհությամբ գլուխ տվին վանահորը և լուռ, դանդաղ քայլերով դուրս եկան սեղանատնից, դիմեցին դեպի իրանց խուցերը: Այնտեղ նրանք ուրիշ հանգստություն չունեին, պետք է մխիթարություն գտնեին «սաղմոս քաղելու» մեջ և սպասեին երեկոյան ժամերգությանը: Ձբոսանքներ արգելված էին նրանց:

Երբ մենք վանահոր հետ միայնակ մնացինք, նա դարձավ դեպի Ասլանը այդ խոսքերով.

— Ես կարդացի նորին սրբազնության թուղթը, պարոն բժշկապետ, ձեր նպատակը շատ գովելի է, և ես ամենայն հոժարությամբ պատրաստ կլինեի ձեր փափագներին բավականություն տալ, եթե մեր վանքում գտնվեին ձեր ցանկացած ձեռագրերը:

— Շատ շնորհակալ եմ, հայր սուրբ, ձեր բարեսրտության համար,- պատասխանեց Ասլանը,— դուք ինձ շատ կպարտավորեիք, եթե տայիք ինձ կարդալու գրքերի ցուցակը. ես հայերեն կարդալ իմանում եմ:

— Ցուցակ չունենք, պարոն բժշկապետ, քանի անգամ մտածել ենք այդ մասին, բայց ժամանակ չենք գտել կազմելու:

Փոքր էր մնում, որ ես հարցնեի, թե ուրիշ ինչ գործով եք զբաղված դուք, որ մի ցուցակ կազմելու ժամանակ չեք կարողացել գտնել:

— Այսուամենայնիվ, հայր սուրբ, շատ հետաքրքիր էր ինձ տեսնել գրքերը,— ասաց Ասլանը:

— Մի ժամանակ այդ վանքում եղել են բազմահատոր գրքեր,— պատասխանեց հայր սուրբը, կարծես ինքն իր հետ խոսելով,— բայց քանի՜-քանի՜ անգամ թալանվել է այդ վանքը… ինչ էլ որ մնացել էր, անիծյալ Լանգթեմուրը տարավ…

— Ուրեմն ոչինչ չէ՞ մնացել,— հարցրեց Ասլանը զարմանալով:

— Մի քանի հատոր մնացել են:

— Դուք շատ բարի կլինեիք, հայր սուրբ, եթե այդ մի քանի հատորը ինձ ցույց տայիք:

— Մեծ ուրախությամբ, գնանք, պարոն բժշկապետ:

Մենք դուրս եկանք սեղանատնից: Հայր սուրբը հրամայեց, որ բերեն ժամատան բանալիները, որտեղ դրած էին գրքերը:

— Բայց նախ քան ժամատուն մտնելը, ես կխնդրեի ձեզանից, հայր սուրբ, որ դուք ցույց տայիք ինձ ձեր վանքը: Ինձ, որպես մի եվրոպացու, մեծ հաճություն կպատճառե՝ տեսնել մի հայկական վանքի կազմակերպությունը:

Եթե մի ուրիշը լիներ վանահոր տեղ, կամաչեր ցույց տալու իր վանքը, ուր ամեն ինչ կրում էր իր վրա մեռելության, անշարժության և ավերման տխուր կնիքը: Բայց նա մի առանձին պարծանքով էր ցույց տալիս այդ բոլորը, որովհետև նրա վանքի կյանքը հենց նրա մեռելության մեջն էր,— անապա՛տ բառի բուն նշանակությամբ…

Նա ներս տարավ մեզ մի քանի աբեղաների խուցեր, որոնց մեջ գտանք միևնույն գերեզմանական մերկությունը, միևնույն սպանիչ մռայլը և խոնավությունը, ինչ որ տեսել էինք մեզ համար պատրաստած խուցում: Տարբերությունը աննշան էր: Դրանց մեջ ևս տեսնում էինք պատուհանում դրած հին սաղմոսը, հատակի վրա փռած

հասիրը և իբրև բազմոց՝ մի կապերտի կտոր: Այդ բազմոցի վրա նստած էինք գտնում խուցի աբեղային, որը մեզ տեսնելով, կանգնում էր, և ինչպես մի հանցավոր, գլուխը քարշ գցած, նայում էր հատակին: Նրա քարացած դեմքի վրա մի մկնակ անգամ չէր շարժվում, իսկ աչքերը կարծես սառել էին իրանց բույնի մեջ: Առանց խղճալու չէր կարելի նայել այդ թշվառների վրա: Զարմանալին այն էր, որ խուցերից շատերի մեջ վառարան չկար, իսկ անկողին ոչ մի տեղ չտեսանք: Հենց այդ կետի վրա շեշտելով, վանահայրը արտահայտեց իր միաբանության բարձր առանձնահատկությունները՝ ասելով.

— Ձմեռվա ամենասաստիկ ցրտերի ժամանակ անգամ դրանք վառելու սովորություն չունեն, իսկ դրանց անկողինները իրանց զգեստն է լինում: Իմ օրերում դրանք ավելի սովորեցին «գետնախշտի» կյանքին:

Վերջին խոսքերի մեջ նշմարվում էր վանահոր անմեղ պարծենկոտությունը, որ բխում էր նրա վերին աստիճանի խստակեցության զգացմունքից:

— Դրանք չե՞ն հիվանդանում,— հարցրեց Ասլանը:

— Խիստ հազիվ է պատահում, որ իմ միաբանները հիվանդանային կամ հիվանդությունից մեռնեին: Մահը հասնում է նրանց այն ժամանակ, երբ իրանք խնդրում են և երբ պատրաստ են նրան ընդունելու:

Բայց մենք խուցերից մեկի մեջ գտանք մի հիվանդ: Միայնակ, անխնամ պառկած էր նա սառն հատակի վրա և ծածկվել էր իր վերարկվի մեջ, խորին կերպով հառաչանքներ էր արձակում: Ասլանը առաջարկեց բժշկական օգնություն մատուցանել: Բայց վանահայրը արգելեց ասելով.

— Թող այդ տանջանքը ապաշխարություն լինի նրան…

Ի՞նչ հանցանք էր գործել, ինչո՞վ էր մեղավոր ողորմելին,- այդ մասին վանահայրը ոչինչ չասաց:

Վանքի զանազան շինվածքները տեսնելուց հետո, մտանք ժամատունը: Այստեղ, տաճարի աջակողմյան խորանում, պահվում էին հին ձեռագիրները: Խորանը այնքան մութ էր, որ վանահայրը իսկույն մոմ վառեց: Մի պատուհանի մեջ, խառնաշփոթ կերպով միմյանց վրա ածած, փոշու և բորբոսի թանձրության տակ ծածկված գտանք մեր նախնյաց գրավոր վաստակները: Այդ վայրենի անհոգությունը տեսնելով, Ասլանը այլևս չկարողացավ զսպել իր վրդովմունքը, ասաց.

_ Ես չեմ կարծում, որ Լանգթեմուրը այսպես անփույթ կերպով վարված լիներ հայոց գրքերի հետ: Եթե ճիշտ է ավանդությունը, թե նա տարավ հայոց գրքերը, պետք է ճիշտ համարել և այն, որ Սամարկանդում մի առանձին աշտարակ շինել տվեց և նրա մեջ մեծ խնամքով էր պահում այդ գրքերը:

Ասլանի նկատողությունը ամենևին չվիրավորեց վանահորը. նա բավական սառնասրտությամբ պատասխանեց.

– Անձրևի և ձյունի ժամանակ այնտեղից կաթում է, պարոն բժշկապետ,– նա ձեռքով ցույց տվեց քայքայված խորանի առաստաղը,– այդ խոնավությունը նրանից է: Մենք տեսանք, որ գրքերը փչանում են, այդ պատճառով պիտանիները ջոկեցինք դրանց միջից և մի ապահով տեղում ենք պահում:

– Ձեր ջոկածները անպատճառ սուրբ գրքեր կլինեին:

– Իհարկե, սուրբ գրքեր:

– Իսկ այդ անսուրբ գրքերը թողեցիք, որ այստեղ փտե՞ն…

Նա ոչինչ չպատասխանեց, երևի իր մտքում զարմանում էր պարոն բժշկապետի անտեղի բարկության մասին: Ես օգնեցի Ասլանին՝ քննելու գրքերը: Վանահայրը, մոմը ձեռքին, տհաճությամբ լուսավորում էր մեր աշխատությունը: Որո՞նք էին, հայր սուրբի կարծիքով, անսուրբ գրքերը,– հայտնվեցան Խորենացու, Ղազար Փարպեցու, Եղիշեի, Դավիթ Անհաղթի և մեր նշանավոր մատենագիրների ընտիր օրինակները, բայց բոլորը քրքրված, բոլորը կիսով չափ կամ մեծ մասամբ փտած: Մի Խորենացի միայն մնացել էր ամբողջ, բայց նրանից և՛ս առաջին և վերջին թերթերը պակաս էին:

– Բժշկարան կա՛,– հարցրեց վանահայրը:

– Չէ երևում,– պատասխանեց Ասլանը:

– Մի հատ պետք է որ լիներ,– ասաց հայր սուրբը, աշխատելով մտաբերել,– բայց չեմ հիշում ով տարավ…

– Ով տարել է, վատ չի արել, եթե մնացած լիներ, այն և՛ս պետք է այդ գրքերի վիճակին ենթարկվեր,– ասաց Ասլանը:

Խորին ցավակցությամբ մենք դուրս եկանք խորանից, ուր կատարվել էր այդ բարբարոսությանը: Վանա ծովակի կղզիները, ապահով տեղեր համարվելով, նրանց մեջ գտնված անապատները միշտ եղել են հայոց գրքերի մի-մի շտեմարաններ. իսկ այդ շտեմարանները տգետ աբեղաների անհոգությունից դարձել են նույն գրքերի գերեզմանները…

– Հիմա, հայր սուրբ, խնդրեմ ցույց տվեցեք ձեր սուրբ գրքերը,– ասաց Ասլանը:– Անսուրբները տեսանք…

Վանահայրը շփոթված կերպով կանգ առավ և մտատանջության մեջ ընկավ: Ասլանը, երևի, հասկացավ նրա անվճռականության պատճառը և հանգստացրեց՝ ասելով.

— Ես միայն հեռվից կնայեմ…

— Աստված օրհնե քո հավատը,— ասաց հայր սուրբը, և կակազելով ավելացրեց,— իհարկե, պարոն բժշկապետ, աշխարհական մարդուն փոքր-ինչ ան…

— Հասկանում եմ, հայր սուրբ,— նրա խոսքը լրացրեց Ասլանը:— Աշխարհական մարդուն անվայել է սուրբ գրքերը ձեռքով շոշափել…

Տաճարի պահարաններից մեկում, որ այլ անունով կոչվում էր ավանդատուն, դրած էր մի մեծ և ծանր արկղ սև փայտից: Ո՞ր ժամանակի գործ էր այդ արկղը, ո՞րտեղից էր բերված,— հայտնի չէր: Նրա մեջ պահվում էին վանքի սրբությունները. խաչեր, սուրբ նշաններ, պատած ոսկով և արծաթով, թանկագին անոթներ, որոնց թվում և պահվում էին սուրբ գրքերը: Վանահայրը ցույց տվեց մեզ այդ գրքերից մեկը միայն, որ կոչվում էր «Կարմիր Ավետարան», երևի նրա համար, որ կարմիր ներկը նրա նկարների մեջ ավելի պայծառությամբ աչքի էր զարկում և ավելի շատ էր գործ ածվել, քան թե մյուս ներկերը:

Երբ մտանք ավանդատունը, վանահայրը վառեց երկու մոմեր, մեկը տվեց իմ ձեռքը, մյուսը՝ Ասլանի ձեռքը, և երեսը խաչակնքելով, մոտեցավ սև արկղին: Լուռ աղոթքներ կարդալով, բաց արեց նա արկղը և նրա միջից վեր առեց մի մեծ կապոց: Ես և

Ասլանը մեր մոմերով առաջնորդեցինք նրան, մինչև նա դուրս եկավ ավանդատնից, բերեց կապոցը և դրեց տաճարի սեղանի վրա: Այժմ լսելի ձայնով մի շարական երգելով, սկսեց մեկ-մեկ բաց անել բազմաթիվ թաշկինակները, որոնց մեջ փաթաթված էր «Կարմիր Ավետարանը»: Թաշկինակները գույնզգույն էին, բոլորը մետաքսից: Նրանցից մի քանիսի վրա երևում էր կնոջ ձեռքի շնորհքը. նուրբ ասեղնագործությամբ հորինած զանազան նկարներ կամ սուրբ գրքերից խորհրդավոր պատկերներ: Վանա հարուստ «խոջաները», որ մի ժամանակ տարածվել էին աշխարհի ամեն կողմերը, արևելքից և արևմուտքից բերել էին այդ թանկագին ընծաները և նվիրել սուրբ Ավետարանին: Երբ վանահայրը բաց արեց գիրքը, թե ես և թե Ասլանը հիացած մնացինք, մագաղաթը այնքան բարակ էր և հարթ, ինչպես ամենաընտիր թուղթ. նկարները սքանչելի էին, իսկ գրիչը վերին աստիճանի կանոնավոր և գեղեցիկ: Յուրաքանչյուրի գլուխը զարդարած էր մի-մի պատկերով, որի միտքը առնված էր նույն գլխի բովանդակությունից: Կազմը ամբողջապես արծաթից էր, թանկագին ակներով և հիանալի քանդակներով զարդարած: Մենք խորին ջերմեռանդությամբ մոտեցանք և համբուրեցինք սուրբ գիրքը:

Ինձ ամենևին հաճելի չթվեց այն խոսքը, որ ժամատնից դուրս գալու միջոցին Ասլանը ասաց ինձ.

— Իբրև հայոց գրչության և արհեստի մի գեղեցիկ օրինակ, այդ գիրքը անգնահատելի է:

Մի՞թե այդպես կարելի է վերաբերվել դեպի մի սրբություն, մտածում էի ես: Նա դատում էր գրքի մասին միայն արհեստի կետից:

Երբ դուրս եկանք ժամատան բակը, վանահայրը հրավիրեց մեզ իր խուցը: Ասլանը գնաց, բայց ես չգնացի:

Այդ միջոցին պատահեց Բերզեն-Օղլին, որ ինձ տարավ և բավական ման ածեց կղզու մեջ:

Ճաշից հետո փոթորիկը համարյա թե դադարել էր. կատաղի ծովը ավելի հանդարտ էր, կուտակված ամպերը ցրիվ էին եկած և արեգակը դարձյալ լուսավորում էր իր պայծառ ճառագայթներով: Ես և նավաստին երկար շրջում էինք ապառաժոտ կղզու վրա, և նա ինձ ցույց էր տալիս այս և այն տեղերը, որոնց հետ կապված էին ամբողջ ավանդություններ: Կղզին բոլորովին մերկ էր և ցամաք. բացի դեղին և նարնջագույն անթառամ ծաղիկներից և անտերև ավելուկներից, մի այլ դալար բույս չէինք տեսնում: Նրա բնակիչները հոգ չէին տարել մի քանի ծառեր անգամ տնկել այստեղ: Այդ կղզին կատարյալ դրախտ կարելի էր դարձնել, որովհետև ջրի աղբյուրներ կային: Գոնե իրանց համար հոգ տանեին ճգնավորները, չէ՞ որ նրանցից շատերը կերակրվում էին միայն բույսերով, իսկ այդ անապատը բոլորովին զուրկ էր բուսականությունից:

Ոչ ոք չէր երևում: Կարծես թռչուններն անգամ փախել էին այստեղից: Միայն հեռվից նշմարեցինք մի կիսամերկ անձնավորություն, խառնված մորուքով և գլխի մազերով: Նա երկչոտ կերպով նայեց մեզ վրա, հետո երկու ձեռքով աչքերը պինդ բռնելով, սկսեց փախչել, և շուտով անհայտացավ ժայռերի մեջ:

— Ո՞վ էր նա,— հարցրի նավաստիից:

— Ճգնավոր էր,— պատասխանեց նա մի առանձին ջերմեռանդությամբ:

Մենք այլևս հեռու չգնացինք, չկամենալով խանգարել նրանց հանգստությունը:

— Ինչո՞ւ փախավ նա, երբ որ մեզ տեսավ,— դարձյալ հարցրի ես նավաստիից:

— Մեղավոր մարդու երեսը նրանք չեն ուզում տեսնել,— պատասխանեց նավաստին:

Ես, ուղիղն ասած, եթե ոչ երկյուղ, բայց մի անբացատրելի թախիծ ու տրտմություն էի զգում այդ մարդկանց հանդիպելիս,— այդ էր պատճառը, որ կամեցա շուտով վերադառնալ մեր խուցը: Նավաստին դարձյալ գնաց կղզու ափերի մոտ թափառելու:

Ասլանին չգտա մեր իջևանում. նա դեռ չէր վերադարձել վանահոր խուցից: Ի՞նչ կար, որ այդքան ուշացավ նա: Ես չեմ կարծում, որ հայր սուրբը որևիցե բանով նրան հյուրասիրած լիներ: Մի ամբողջ ժամ ևս անցավ, երբ նա եկավ: Ի՞նչ էր խոսացել այնտեղ, կամ ինչո՞ւ այդքան ուշացավ,— այդ մասին նա ինձ ոչինչ չպատմեց, բայց ես նկատեցի, որ նա բավական դժգոհ էր: Գլխարկը բարկությամբ մի կողմ նետեց և պառկեց կապերտի կտորի վրա, ինքն իրան խոսելով. «Այդ ապուշներից ոչինչ չէ կարելի սպասել»…

Նա աչքերը խփեց և լուռ կացավ: Ես կարծեցի, որ քնեց: Չկամենալով խանգարել նրան, դուրս եկա խուցից, նստեցի պատի մոտ մի քարի վրա և սկսեցի նայել դեպի ծովը: Այդ միջոցին ինձ մոտ եկավ աբեղան, որին հանձնված էր հոգ տանել մեր մասին: Նա դեռ երիտասարդ էր, և այդ հասակում նրա մազերը մեծ մասամբ սպիտակել էին:

— Դուք, երևի, այդ ծովի շրջակայքիցն եք,— հարցրի նրանից:

— Ոչ, հեռվից եմ, շատ հեռվից,— պատասխանեց նա մի առանձին տխրությամբ:

— Ո՞րտեղից:

— Հին-Նախիջևանի կողմերից:

— Ձեր ծնողներից նամակ ստանո՞ւմ եք:

— Իմ ծնողները չգիտեն, որ ես այստեղ եմ:

— Ի՞նչպես չգիտեն:

— Ես ծածուկ փախա մեր տանից, որ ծնողներս չարգելեն:

— Ի՞նչպես ծագեց ձեր մեջ այդ միտքը:

— Մեր տան քահանան, երբ հորս մոտ էր գալիս, շատ անգամ պատմում էր անապատների մասին, ճգնավորների մասին, ես լսում էի, և այնքան գրավվեցա, որ մտածեցի թողնել մեղավոր աշխարհը և մտնել անապատը:

Ես իսկույն մտաբերեցի իմ վարժապետ տեր Թոդիկին, նա ևս մի ժամանակ ինձ խելքից հանել էր, ճգնավորների մասին զանազան հրաշքներ պատմելով:

— Դուք չե՞ք մտածում մի անգամ գոնե գնալ ձեր ծնողներին տեսնելու:

— Այդ անապատը մտնողը այլևս իրավունք չունի դուրս գալու կղզուց, այստեղ մնում է, ծերանում է և այստեղ էլ մեռնում է…

Վերջին խոսքերը արտասանեց աբեղան մի առանձին զգացմունքով, որի մեջ նշմարվում էր կարոտյալ սրտի թախիծը: Ես փոխեցի իմ խոսքը.

— Ասացեք, խնդրեմ, հիմա այդ կղզում կա՞ն այնպիսի ճգնավորներ, որ հրաշքներ գործեին:

— Առաջ եղել են:

— Ինչո՞ւ հիմա չկան:

— Հիմա էլ կան, բայց ցույց չեն տալիս… Մարդիկ պետք է առանց հրաշքներ տեսնելու ևս հավատան, այն ժամանակ միայն նրանց հավատը կատարյալ կլինի:— Նա սկսեց երկար խոսել այդ մասին:

Ես համարյա չէի լսում: Իմ ուշադրությունը գրավել էր գեղեցիկ երեկոն: Փոթորկային օրից հետո երեկոյան վերջալույսը սքանչելի էր: Արեգակի վերջին ճառագայթները, կարծես կատաղի մրրիկից վրեժխնդիր լինելու համար, որ այնօր խանգարեց նրանց տվնջյան խաղաղությունը, այժմ լուսավորել էին ծովակի եզերքը պայծառ, ծիրանեգույն լուսավորությամբ: Ես նայում էի դեպի հեռուն, շատ հեռուն: Ինձ երևում էին հին Աղիովտի գեղագրական ծովեզերքը: Այդ զվարճալի վայրերը, այդ գեղեցիկ բլուրներն ու հովիտները մի ժամանակ սեփականություն էին հայոց Արշակունի արքայազունների: Ժառանգը մնում էր թագավորի մոտ Այրարատ գավառում, իսկ մնացյալ արքայազունները ուղարկվում էին այստեղ, որպեսզի գահի վերաբերությամբ որդիների մեջ հակառակություն չծագեր: Այդ բլուրների, այդ մթին ձորերի մեջ, արքայազն երիտասարդները, իրանց որսորդական բարակներով և բազեներով, խռովեցնում էին սորամուտ երեների հանգստությունը: Իսկ այժմ նրանց փոխարեն քուրդ բեկզադեն, նիզակը ձեռին, իր վեհապանծ նժույգի վրա, հետամուտ էր լինում փախչող եղջերվին… Տեսնում էի Քաջբերունյաց հզոր քաղաքը՝ Արճեշը: Ո՛րքան գեղեցիկ օրեր, ո՛րքան դառն աղետներ կապված էին այդ դժբախտ քաղաքի պատմության հետ… Պարսիկը, հագարացին, հույնը դարերի ընթացքում թափեցին նրա վրա իրանց բարբարոսությունը, և ինչ էլ որ պակաս էր մնացել, լրացրեց անսիրտ ծովը: Նա ողողեց քաղաքի շրջակայքը, կտրեց նրան ցամաքից և, բոլորովին կղզիացնելով, առեց իր ալիքների մեջ: Սարսափած բնակիչները իրանց շքեղ բնակարանների հետ մեծ մասամբ ջրասույզ եղան… Այժմ արևի երեկոյան ճառագայթները լուսավորում էին նրա միջնաբերդի գագաթը միայն, որը մի սեպաձև կղզու նման դուրս էր ցցվել ջրերի մակերևույթից: Իսկ ծովը օրեցօր սպառնում էր կլանել Քաջբերունյաց քաղաքի այդ վերջին մնացորդն ևս, և բոլորովին անհետացնել նրա տխուր հիշատակը…

Երեկոյան ժամը զարկեցին, աբեղան վեր կացավ, ինձ ևս հրավիրելով իր հետ ժամ գնալ: Ես մեծ հոժարությամբ կգնայի, եթե Ասլանը ներսից չկանչեր ինձ: Ես նրան նույնպես պառկած գտա, որպես թողել էի:

— Ի՞նչ է պատահել քեզ,— զարմանալով հարցրի ես:

— Ոչինչ, փոքր-ինչ վատ եմ զգում ինձ…- պատասխանեց և շուռ եկավ մյուս կողքի վրա:

— Երևի ծովից դուրս գալուց հետո, այնքան երկար մնացիք թրջված հագուստով, որ մրսեցիր:

Նա ոչինչ չպատասխանեց, միայն խնդրեց, որ բաց անեմ լուսամուտները: Խուցի մեջ օդը խեղդելու չափ ծանր էր: Բայց ի՞նչպես պետք է բաց անեի լուսամուտները, որոնք իմ հասակից շատ բարձր էին: Այս կողմ ու այն կողմ ընկա, որոնեցի, վերջապես մի բան գտա, դրեցի ոտներիս տակը և վեր բարձրացա: Լուսամուտները փեղկեր չունեին. մի-մի փայտյա շրջանակ միայն ագուցած էր յուրքանչյուրի մեջ, և նրանց

վրա, ապակիի փոխարեն, մեխած էին հաստ, մուգ-դեղնագույն թերթեր, որոնց վրա երևում էին գունատված գրության հետքեր: Ես պոկեցի երկու լուսամուտների թերթերն ևս: Երբ Ասլանը այդ թերթերին նայեց, ասաց.

— Մագաղա՞թ է: Դրանք այն Խորենացու պակաս թերթերիցն են, որ մենք ժամատան խորանում տեսանք:

Գիշերը Ասլանը իրան ավելի վատ էր զգում: Գլուխը սաստիկ ցավում էր և գանգատվում էր սաստիկ ծարավից: Բայց մաքուր ջուր անկարելի էր գտնել այստեղ: Ծովի ջուրը խիստ դառն էր, հորերի ջրերը նույնպես դառնահամ էին: Մաքուր ջուր ստանում էին հալած ձյունից, որը ձմեռը հավաքելով առանձին ստորերկրյա սառցատներում, ամառը գործ էին ածում: Իսկ այս տարի այդ մասին ևս հոգ չէին տարել: Կար և ջրամբար, որի մեջ առանձին ճանապարհներով հավաքվում էր անձրևի ջուրը: Բայց ջրամբարը քայքայված լինելով, այլևս ջուր չէր պահում:

Այդ բոլորը տանելի կլիներ, եթե մեզ թույլ տային փոքր-ինչ քնելու: Ամբողջ գիշերը հանգստություն չտվին մեզ: Ամեն րոպե հայտնվում էր ժամկոչը, փայտյա ծանր օթակը ձեռին, և բոլոր խուցերի դռները հերթով ծեծելով, հասնում էր մերին և նրա վրա ևս երեք անգամ զարկելով գոչում էր «ժամ համեցեք»:

Դրանք այն «մշտապաշտոն» կոչված անապատականների կարգիցն էին, որոնք, բացի օրվա սովորական ժամերգությունները, որ կատարում էր ամբողջ միաբանությունը միասին, կատարում էին նաև մշտական աղոթքներ, և դրա համար միաբանությունը մի քանի դասերի էր բաժանված, որոնք հերթով փոխվում էին: Եվ այդպես, աղոթքն ու պաշտամունքը եկեղեցում օր ու գիշեր մնում էր անխզելի և երբեք չէր ընդհատվում: Իսկ այն գիշերը շաբաթվա գիշեր լինելով, ամբողջ միաբանությունը «հսկում» էր կատարում, այսինքն անքուն պիտի աղոթեր մինչև լույս: Այդ կարգի աբեղաներին հին ժամանակներում հունական անունով կոչում էին «սպուդե» (անխոնջ), իսկ նրանց վանքը «անհանգստից» վանք: Ի՞նչ հանգստություն էինք որոնում մենք «անհանգիստների» վանքում…

Առավոտյան ժամը վերջանալուց հետո, ես և Ասլանը գնացինք վանահոր աջը համբուրելու և նրան հրաժարական ողջույն տալու: Նրան միայնակ գտանք իր անշուք խուցի մեջ նստած, և ինչ-որ գրում էր: Նա թեև խիստ բարեսրտությամբ ընդունեց մեզ, բայց մենք կարճ կտրեցինք, և ոտքի վրա շնորհակալություն հայտնելով դուրս եկանք:

Ուրիշ վանքերում միաբանները, իրանց այցելուներից նյութական ակնկալություններ ունենալով, վերին աստիճանի քաղաքավարի և մինչև, անգամ շողոքորթող են լինում: Բայց այդ, աշխարհից անջատված, անընչասեր անապատականները ոչ միայն սառն էին վարվում, այլ խորշում էին մեղքի աշխարհի մարդիկներից: Այդ խորշանքը հասնում էր նրանց մեջ մինչև մարդատեցության: Իգական սեռին բոլորովին արգելված էր այդ կղզին մտնել, իսկ արական սեռից մուտք են գործում հասակավորները միայն:

Մենք վերջին անգամ հայացք ձգեցինք «անհանգստից» վանքի վրա և հեռացանք:

— Ի՞նչպես երևաց քեզ այդ վանքը,— հարցրի Ասլանից:

— Անապատական մոլեռանդությունը, ճգնավորական կյանքը,— ասաց նա,— այլանդակեց մեր վանական կարգերը, որոնք, իրավ, իրանց ժամանակին ունեցել են իրանց մեջ շատ մարդասիրական սկզբունքներ: Անապատականների շնորհիվ ինչպես մեր վանական կյանքը այլանդակվեցավ, այնպես էլ այլանդակվեցավ և հայկական գեղեցիկ ճարտարապետությունը, որ պահպանված էր գլխավորապես

վանքերի շինվածքների մեջ: Աղքատություն և անշքություն սիրելով, անապատականները բավականացան անշուք խցիկներով, և խստակեցությամբ սպանելով իրանց մարմինը, սպանեցին միևնույն ժամանակ և արհեստը: Նայեցեք ինչ բանի են նման այդ ողորմելի շինվածքները, այդ տխուր անապատը…

Բերզեն-Օղլուն՝ մեր հյուրընկալ աբեղայի հետ՝ գտանք ծովի ափի մոտ: Այնտեղ պատրաստ էր վանքի նավակը, որ մեզ պիտի տաներ դեպի ցամաքը: Մենք նստեցինք, նահապետական նավակը երկու ժամից հետո մեզ հանեց «դրսի տունը», որ գտնվում է կղզու հանդեպ, նրա հյուսիս-արևելյան ցամաքի վրա: Վանա ծովակի մեջ գտնվող մյուս կղզիները ևս՝ Լիմ և Աղթամար, որոնց մեջ ճգնավորների անապատներ կան, այսպիսի «դրսի տներ» ունեն: Այստեղ է կենտրոնացած վանքի ամբողջ տնտեսությունը: Այստեղ են բնակվում մշակները, որ մշակում են վանքապատկան ընդարձակ հողերը: Այստեղ են պահվում վանքի բազմաթիվ անասունները իրանց հովիվներով և նախրապաններով: Այստեղ է վանքի գլխավոր հարստությունը: Այստեղ աբեղաները կանանցից չեն խորշում. նրանք են թխում հացը, նրանք են պատրաստում կերակուրներ վանքի բազմաթիվ բանվորների համար, նրանք են կթում ոչխարները, պանիր են մակարդում, յուղ են պատրաստում, նրանք են մանում բուրդը և նրանից հայր սուրբերի համար հագուստ պատրաստում: Այստեղ կյանք կա: Այստեղ, «դրսի տան» մեջ, գործում են, իսկ այնտեղ, ներսի տան մեջ,— անապատում,— միայն աղոթում են:

Մեզ ընդունեց «դրսի տան» տնտես-մատակարար աբեղան, մի բավական ուրախ, զվարճախոս անձն, և հրավիրելով իր սենյակը, ասաց.

— Գնանք, գիտեմ, այնտեղ ձեզ քաղցած պահած կլինեն, գնանք մի բան ուտենք:

Այդ կրոնավորը հենց առաջին րոպեից այնքան համակրական երևաց մեզ, որ մենք չկարողացանք մերժել նրա հրավերը: Նա տարավ մեզ իր սենյակը, որ անապատի մեջ մեր տեսած խուցերի հետ համեմատելով, բավական օրինավոր պետք էր համարել: Ո՜րքան մեծ զանազանություն աշխարհին մոտ կրոնավորի և աշխարհից կտրված կրոնավորի մեջ: Շուտով պատրաստել տվեց մեզ համար պատվական նախաճաշիկ, որ բաղկացած էր սերից, կարագից, մածունից, մեղրից և սպիտակ հացից: Նրա սենյակում գտնվեցավ մինչև անգամ օղի. նա առաջարկեց մեզ մի-մի բաժակ, թեև ինքը չխմեց:

Բայց, ինչ որ ավելի գրավեց մեր ուշադրությունը, դրանք էին մի խումբ դեռահաս պատանիներ, որոնք մի առանձին խոժոռադեմ, մռայլ աբեղայի հսկողության ներքո, պարապվում էին մի այլ սենյակում: Այստեղ դպրոց չէր, այստեղ մի տեսակ նախակրթարան էր, որի մեջ այդ պատանիները պետք է նախապատրաստվեին անապատը մտնելու համար: Նրանք պետք է անցնեին այն բոլոր փորձությունների միջով, ինչ որ պահանջում է անապատական կյանքը: Պահ, ծոմ, անքուն գիշերներ, մշտական աղոթք, խոնավ և մութ խղիկներում գետնախշտի կյանք, անպայման հնազանդություն, հրաժարումն բոլոր բավականություններից, մի խոսքով, կատարյալ անձնուրացություն,— այդ պետք է լիներ այն փորձությունը, որի միջով, տարիների ընթացքում պետք է անցնեին նրանք, մինչև արժանավորություն ստանային անապատը մտնելու: Գլխավոր պայմաններից մեկն էլ այն էր, որ նրանք պետք է կատարյալ հասակի հասնեին, մորուքները աճեր, որովհետև անմազ երեսով պատանիներին արգելված էր անապատը մտնել:

Տեսնելով այդ գունաթափ, հալումաշ եղած թշվառներին, ևս սաստիկ ցավ զգացի: «Անմե՛ղ զոհեր, մտածում էի ես, ո՞ր սատանան մոլորեցրեց ձեզ այստեղ գալ. մի՞թե աշխարհը այնքան վատ էր, որ դուք վճռեցիք փախչել նրանից»:

Վարպետ Փանոսը, որպես պատվիրել էինք, նախապես հոգացել էր մեր մասին և մեր ձիաները ուղարկել էր այստեղ: Մենք շատ չուշացանք, պատվիրեցինք, որ ձիաները շուտով պատրաստեն:

Այստեղ Բերզեն-Օղլին տեղեկացավ, որ իր նավակը, ցամաքի ժայռերին զարկվելով, խորտակվել էր: Նա այնքան տխրեց, որպես իր սիրուհին կորցրած մի սիրահար:

— Դուք ձեր վնասը կստանաք ինձանից,— ասաց նրան Ասլանը, երբ մենք բաժանվեցանք միմյանցից:

Բերզեն-Օղլին մնաց այնտեղ, պետք է ոտքով գնար Ավանց գյուղը: Իսկ ես և Ասլանը մեր ձիաներով սկսեցինք դիմել դեպի Այգեստան:

Ճանապարհին միայն ես առիթ ունեցա հայտնելու Ասլանին այն անցքը, որ գիշերը պատահեց Ավանց գյուղում, նավաստիի տանը: Մի ըստ միոջե պատմեցի, թե ինչպես դուրս եկավ նրա կինը, ինչպես ման եկավ բակի մեջ, ինչպես գնաց մինչև ծովեզրը, և վերադառնալուց հետո՝ ինչպես մոտեցավ, նստեց իմ մոտ և սկսեց պատմել իր ամուսնի եղեռնագործությունը:

Ասլանը մի առանձին հետաքրքրությամբ այդ բոլորը լսելուց հետո, ասաց ինձ.

— Այդ մարդը մի ժամանակ ծովային ավազակ է եղել… Բայց ազնիվ մարդ է…

ԺԲ

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ճանապարհին Ասլանը մի քանի հետաքրքիր տեղեկություններ հաղորդեց Կտուց անապատի անցյալի մասին, որոնք ինձ այնքան գրավեցին, որ ես խորին ափսոսանքով սկսեցի իմ մտքում դատապարտել ինձ, թե ո՛րքան ապարդյուն կերպով ես վատնել էի իմ պատանեկության ամենաթանկագին ժամանակը, երբ կարող էի շատ բան սովորել և շրջապատող երևույթները կարող էի միշտ ինքս հասկանալ, ինքս քննադատել: Նա ասում էր, որ այդ անապատը առաջ կպած էր ցամաքին, հետո ծովի ջրերը բաժանեցին նրան և կղզիացրին: Նա ցույց էր տալիս այն նեղ հրվանդանը, որ արագիլի կորաձև պարանոցի նման երկարացել էր ծովի մեջ: Այդ հրվանդանը կոչվում է «Կռապաշտանոց»: Մի ժամանակ նրա վրա եղել է կռապաշտների մեհյան: Հրվանդանի ուղիղ գլխի հանդեպ գտնվում է կղզին, և այդ պատճառով էլ կոչվում է նա «կտուց», որովհետև արագիլի գլխից կտրված կտուցի նմանություն ունի: Ես հարցրի Ասլանից, թե ինչպես է պատահել, որ նակտրվել է: Նա բացատրեց, թե ծովակի ջուրը դարերի ընթացքում հետզհետե բարձրացել է և ողողել է իր եզերքը. շատ նշանավոր տեղեր և շինվածքներ, որ պատմության մեջ հայտնի էին, այժմ կամ իսպառ ծածկվել են ջրի տակը, կամ ցամաքից կտրվելով, կղզիացել են: Նա օրինակ բերեց Արճեշ բերդաքաղաքը, որ այժմ չորս կողմից առնված է ջրով և նրա ամենափոքրիկ մասն է միայն երևում, և խոստացավ ցույց տալ ինձ Աղթամար կղզու վրա գտնված Արծրունի թագավորների պալատները, որ այժմ կորած են ջրի տակ: Ես շնորհակալություն հայտնեցի, խնդրելով, որ բացատրե ինձ, թե ի՞նչպես զարգացավ հայերի մեջ անապատական կյանքը, ինչու մարդիկ թողեցին աշխարհը և առանձնացան անապատների ամայության մեջ:

Ասլանը այդ մասին թե՛ այնօր ճանապարհին, և թե՛ ուրիշ ժամանակ, շատ բան էր խոսացել ինձ, եթե բոլորը գրելու լինեմ, մի ամբողջ գիրք կդառնա. ես կդնեմ այստեղ

այնքանը միայն, որքան վերաբերում է մեր տեսած Կտուց անապատին և Վանա ծովակի մեջ գտնված մյուս երկու անապատներին, որ կոչվում են Լիմ և Աղթամար:

Պետք է որոշենք միմյանցից, ի՞նչ է վանքը, ի՞նչ է անապատը:

Մեր հայրենիքում վանքերը եղել են սկզբում մի տեսակ հոգևոր-բարեգործական հիմնարկություններ: Նրանք ծառայել են իբրև դպրոց, ծառայել են իբրև հիվանդանոց կամ ուրկանոց, ծառայել են իբրև աղքատանոց, ծառայել են իբրև իջևան ճանապարհորդների համար և մեր լեռնային երկրի ամենադժվարին տեղերում, ձմեռնային ամեն սաստիկ ցրտերի ժամանակ, պատսպարան են դարձել օտարներին ու պանդուխտներին, մի խոսքով, վանքերը ունեցել են իրանց մարդասիրական նպատակները, որոնք, դարերի ընթացքում կերպարանափոխվելով, հետզհետե շեղվել են նրանց իսկական նշանակությունից և, վերջապես անօգտավետ են դարձել:

Վերոհիշյալ նպատակների համաձայն, վանքերը կառուցվում էին այնպիսի տեղերում, որ ավելի հեշտ հաղորդակցություն ունենան մարդիկների և աշխարհի հետ, որ կարողանան ծառայել իրանց նշանակությանը:

Բայց այդպես չէ եղել անապատը: Նա անջատվել է կյանքից և խզել է իր բոլոր հարաբերությունները աշխարհի հետ և այդ իսկ նպատակով, իր գոյությունը պահպանելու համար, ընտրել է երկրի ամենաթաքթաքուր տեղերը: Նա՝ առանձնացել է անտառների մթին խորքերում, ապառաժների անմատչելի անձավներում, ձորերի խորին փապարներում և լճակների անբնակ կղզիներում:

Անապատը այլ խոսքով կոչվում է *մենաստան*, իսկ վանքը՝ իջևան, այդ երկու անունների նշանակության մեջ մեծ զանազանություն կա:

Անապատը կենդանի մահացություն է. նրա նպատակն է՝ սպանել արտաքին մարդը — մարմինը, որպեսզի կենդանանա ներքին մարդը - հոգին:

Բայց ինչի՞ց առաջ եկավ այդ կատարյալ անձնուրացությունը, այդ հոժարակամ ինքնամերժումը կյանքից ու աշխարհից:

Անապատը երկրի ողբալի դրության հետևանքն է: Երբ կյանքը ապահով չէ, երբ կյանքը մշտական վտանգների ենթակա է, նա այն աստիճան անտանելի է դառնում, որ մարդիկ հուսահատվում են և, հեռանալով աշխարհից, աշխատում են անապատների առանձնության մեջ եթե ոչ մարմնավոր, գոնե հոգևոր մխիթարություն որոնել: Հանապազօրյա դժբախտությունները մարդուն ձգում են գերբնական ցնորքների մեջ. նա չկարողանալով ըմբռնել իրան շրջապատող դառն երևույթների բնական պատճառները, և մանավանդ, չկարողանալով մաքառել նրանց դեմ և հաղթել նրանց, վերջապես վհատվում է, ընկճվում է, հեռանում է աշխարհից, և իր փրկությունը ու սրտի խաղաղությունը որոնում է անապատական կյանքի լռության մեջ:

Այդ ներգործությունն են ունենում աշխարհի դժբախտ հանգամանքները ոչ միայն թույլ բնավորությունների վրա, այլ մինչև անգամ ամենազորեղ բնավորությունները շատ անգամ ենթարկվում են նրանց վհատեցուցիչ ազդեցությանը:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, չկարողանալով իսպառ ի կատար ածել իր սկսած մեծ պատերազմը հեթանոսական խավարի և տգիտության դեմ, և երկար մաքառելով նախարարների ու ժողովրդի բարքի և վարքի կոպտության դեմ, և զանազան դառն հալածանքների ենթարկվելով, վերջապես հուսահատվում է, թողնում է հայրապետական աթոռը, հեռանում է աշխարհից և, առանձնանալով Սեպուհ լեռան

այրերի մեջ, անձնատուր է լինում ճգնավորական կյանքի, և այնտեղ էլ անհայտության մեջ վախճանվում է: Նրա հզոր գործակիցը, Տրդատ թագավորը, նույն հանգամանքների պատճառով, նույն վիճակին է ենթարկվում. նա ևս, թողնելով արքայական գահ ու գավազանը, թողնելով իր երկրի կառավարությունը, սկսում է լեռներում ճգնավորական կյանք վարել: Հայաստանի երկրորդ լուսավորիչները, Սահակ Պարթևը և Մեսրոպը, երկար մաքառելով ամենադժվարին արգելքների դեմ, եռանդով առաջ են տանում իրանց սկսած մեծ գործը: Բայց երբ դժբախտ հանգամանքները ծանրանում են և նրանց վրա, նրանք ևս թողնում են աշխարհը և հեռանում են դեպի անապատը…

Ես կարող էի մեր պատմությունից շատ օրինակներ բերել, բայց այդքանն էլ բավական է: Այդ երևույթը նկատվում է մեր պատմության մեջ ոչ միայն անհատների վերաբերությամբ, այլև ամբողջ անապատական ուխտերի և միաբանությունների վերաբերությամբ, որոնք ժամանակի հալածանքներից խուսափելով, որոնք այնքան ուժ չունենալով մաքառելու ժամանակի հարվածների դեմ, որոնք անկարող լինելով փոխել, հեղաշրջել երկրի անբավարար կարգերը, հուսահատությունից անձնատուր են լինում անապատական կյանքի: Եվ դրա մեջ պետք է որոնել այդ պատմական երևույթների իսկական պատճառը, որ անապատների կառուցումները ըստ մեծի մասին և ավելի հաճախ տեղի են ունեցել նախընթաց պատահած մի շարք դժբախտություններից հետո:

Այդ երևույթը ավելի պարզ կերպով ցույց տալու համար, ես կվերառնեմ մեր ամենամոտ ժամանակներից մի դարաշրջան և հենց այն դարաշրջանը, որի մեջ կատարվել է իմ նկարագրած Կտուց անապատի հիմնարկությունը:

Տասնևվեցերորդ դարու վերջերում հայտնվում է Շահ-Աբաս մեծը, իսկ տասնևյոթերորդ դարու սկզբում (1603 թ.) կատարվում է նրա առաջին կորստաբեր արշավանքը դեպի Հայաստան: Մեր աշխարհը դառնում է արյան և կոտորածի մի սոսկալի հանդիսարան: Օսմանցիք մեկ կողմից, պարսիկները մյուս կողմից, երկիրը բոլորովին ավերակ են դարձնում: Շահ-Աբասը սրի և մտրակի ուժով Արարատյան նահանգից բազմաթիվ գերիներ վարում է դեպի Սպահան: Այդ բազմամարդ նահանգը իսպառ դատարկվում է բնակիչներից: Պարսիկների և օսմանցիների թերի թողած բարբարոսությունները լրացնում են հալալի կոչված ելուզակները: Այդ ժամանակ հայտնվում են Քյոր-Օղլին և Գզիր-Օղլին: Հետո անմիջապես մինը մյուսին հաղորդում են մարախը, սովը և ժանտախտը: Պարսիկների և օսմանցոց սրից ու գերությունից ազատ մնացած բնակիչները մեռնում են սովից և ժանտախտից: Երկիրը ծածկվում է դիակներով: Մեռելոտիների ընտելացած գազանները համարձակ մտնում են մարդկանց տները և մոր գրկից հափշտակում են երեխային…

Հիշյալ դժբախտություններից հետո՝ վրա են հասնում բնության սասանությունները: 1641 թվին պատահում է Ատրպատականի մեծ երկրաշարժը: Թավրիզը, այդ մեծափարթամ քաղաքը, իր փառավոր շինվածքներով ծածկվում է ավերակների կույտի ներքո: Կործանվում է պարսից արքաների հրաշալի պալատը՝ Շամկազանը:

Ատրպատականի երկրաշարժից ուղիղ հինգ տարի հետո (1646 թ.) պատահում է Վասպուրականի մեծ երկրաշարժը, որ տևում է յոթն օր: Լեռներն անգամ կործանվում են նրա սոսկալի հարվածներից: Հոգվոց վանքի մոտ Աբեղներ կոչված սարը փուլ է գալիս, լցնում է ահագին ձորը և խափանում է նույն ձորի միջով անցնող գետի ընթացքը: Վան քաղաքը իսպառ ավերակ է դառնում, տապալվում են և Շամիրամի բերդի հզոր աշտարակները: Վանա մեջ և նրա շրջակայքում, կա՛մ բոլորովին կա՛մ կիսով չափ, կործանվում են հետևյալ վանքերն ու եկեղեցիները. Վերին Վարագը, Ներքին Վարագը, Թոդիկ ճգնավորի եկեղեցին, Սալնապատի վանքը, Շուշանից վանքը, Ղուռուբաշի վանքը, Հոգվոց վանքը, Էրեմիրա վանքը,

Սրխու վանքը, Բերդակու վանքը, Կենդանանից վանքը, Կռնկու վանքը, Անգուսներու վանքը, Ալերու վանքը, Արշակա վանքը, և Վան քաղաքի մեջ գտնված ս. Խաչ, ս. Աստվածածին, ս. Սիոն, ս. Նշան եկեղեցիները:

Բնության սասանմունքները մի կողմից, բռնակալների գազանությունը մյուս կողմից, և ավելանալով դրանց վրա սովը, ժանտախտը,— այդ բոլոր աղետավոր թշվառությունները, որոնց դեմ մաքառելու անզոր է գտնվում մարդը,— բնականապես ձգում են նրան հուսահատ և շվարյալ դրության մեջ Կյանքը և աշխարհը դառնում է նրա համար ցավերի և դառնության մի ծով, և այդ ցավերից ազատվելու համար նա ձգում է իրան աստծու գիրկը, և հանգստություն է որոնում հետգերեզմանյան խաղաղության մեջ: Նա մտածում է, թե աշխարհի վերջը հասել է, և շտապում է թողնել նրան: Այստեղից ծագում է խորին անձնուրացության զգացմունքը և հակումն դեպի անապատ, դեպի ամայություն:

Եվ իրավ, միևնույն տառապանքների ընթացքում, երբ թշնամին, սովը, ժանտախտը, երկրաշարժը միացած, ավերակ էին դարձնում երկիրը, հենց այդ ժամանակ զանազան տեղերում կառուցվում էին մեծ թվով անապատներ և լցվում էին բազմաթիվ աշխարհից հրաժարված աբեղաներով:

Իսկ և իսկ այն ժամանակ, երբ պարսիկներից և օսմանցիներից ավերակ դարձած Հայաստանի խրճիթները դեռ մխում էին կրակի մեջ, և երբ լեռներում ու ձորերում փախստական եղած շինականները մի անկյուն չունեին պատսպարվելու, երբ քաղաքացիք, թշնամու գերությունից ազատվելու համար, իրանց տները թողել էին անբնակ և թաքչել էին անմատչելի ժայռերի խոռոչներում, այդ սարսափի ու տագնապի ժամանակ, Որոտն գետի ձախ ափի մոտ, Հալիձոր գյուղի հանդեպ, հիմնվում է Սյունյանց մեծ անապատը, Տաթևի վանքից երեք ժամ հեռավորության վրա: Այդ վանքը այլ անունով կոչում է Հարանց անապատ:

Սյունյաց մեծ անապատի հիմնադիրը եղավ (1610 թ.) Սաղմոսավանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսը, որը, թողնելով իր վանքը և վանական կյանքը, ուխտեց անապատական լինել, այն դեպքերից հետո, երբ նա Արագած լեռան այրերից մեկի մեջ գտավ մի ճգնավոր, ծունր իջած դրության մեջ, աչքերը դեպի երկինք ամբարձած, բայց անշարժ, ինչպես քարե արձան: Ճգնավորը մեռած էր, բայց ո՛վ գիտե, ինչ ժամանակից, նա նույն դրության մեջ, այնպես անապական մարմնով մնացել էր այն քարանձավում: Այդ տեսարանը այն աստիճան ազդեց Սարգիս եպիսկոպոսի վրա, որ նա ուխտեց թողնել աշխարհը և անձնատուր լինել ճգնավորական կյանքի: Նրան գործակից եղավ տեր-Սարգիս Տրապիզոնցին, մի հմուտ և ուսյալ քահանա, որը կնոջ վախճանվելուց հետո իր բոլոր հարստությունը վաճառել և բաժանել էր աղքատներին և սկսել էր այնուհետև անապատական կյանք վարել:

Սյունյանց մեծ անապատը կոչվեցավ Թանահատի վանք, այն հռչակավոր Թանահատի վանքի անունով, որ մի ժամանակ իր սոսկալի խստակեցությամբ հայտնի էր Վայոց ձորում: Հենց այդ անվան մեջն էր նրա նշանակությունը: Այդ վանքի միաբանները ատում էին, խորշում էին ամեն տեսակ թանից, այսինքն՝ տաք, ջրալի ապուրից, և այդ պատճառով կոչվեցան «թանատյացներ»: Ամբողջ տարին կերակրվում էին միայն ցամաք հացով և ջրով, այն ևս օրը մի անգամ, իսկ տոն օրերում գործ էին ածում փոքր-ինչ բուսեղեն յուղ, բայց միս կամ գինի՝ ոչ երբեք:

Սյունյաց մեծ անապատը կրկին վերականգնեց այն վաղեմի կրոնական կարգերն ու կանոնները, որոնք զանազան քաղաքական դժբախտ հանգամանքների պատճառով, խանգարված էին մեր անապատներում: Իսկ վտանգավորը այն էր, որ նա մտցրեց մի նոր և, հայոց եկեղեցու հոգուն հակառակ, բոլորովին այլ կղերական ուղղություն, այն

է՝ զրկել իրան կամքից և անպայման հնազանդությամբ հպատակել միայն առաջնորդի կամքին, ամեն օր առավոտյան և երեկոյան խոստովանվիլ առաջնորդի առջև օրվա հանցանքներն ու մտածությունները, ոչինչ ստացվածք չունենալ, ամեն ինչ հասարակաց լինել և այլն: Ես այլևս չեմ խոսում այն կանոնների մասին, որոնք վերաբերում էին զանազան պաշտմունքների և ճգնությունների, և ոչ պիտի նկարագրեմ այն անտանելի հագուստը և խստակեցությունը, որով այդ անապատի միաբանները տանջում ու մաշում էին իրանց անձերը: Միայն այն կասեմ, որ այդ անապատը ամենափոքր ժամանակում այնքան զորավոր կազմակերպություն ունեցավ, և այնքան հռչակ ստացավ, որ ամեն կողմից ամենանշանավոր կրոնավորներ սկսեցին խմբվել այնտեղ: Նա դարձավ մի մեծ կենտրոն, մի դպրոց, որի մեջ կրթվելով աբեղաները, հետո այնտեղից դուրս եկան և, սփռելով մեր աշխարհի զանազան կողմերը, սկսեցին նույն կարգերով, նույն կանոններով նոր անապատներ հիմնել: Ես կհիշեմ նրանցից մի քանիսի անունները միայն:

Սյունյաց մեծ անապատի միաբաններիցն էր մոկացի Պողոս վարդապետ հրաշագործը, որ իր աշակերտների հետ, որպես մի նոր առաքյալ, ոտքով շրջում էր զանազան տեղեր, քարոզում էր, հորդորում էր, որ վանքեր, անապատներ, եկեղեցիներ շինեն, և ամեն տեղ հաստատում էր կրոնական միաբանություններ: Դեռ օսմանցիների և պարսիկների ձեռքով թափած արյունը բոլորովին չէր ցամաքել հայոց հողի վրա, դեռ Շահ-Աբասի բանակը գտնվում էր Արցախի (Ղարաբաղի) Քոթուկլու կոչված տեղում, երբ այդ մոլեռանդը հայտնվեցավ շահի բանակում, ներկայացավ թագավորին, և ճակատը գետնին քսելով, խնդրեց, որ իրան թույլ տա վանքեր և անապատներ կառուցանել: Շահ-Աբասը սիրով ընդունեց նրա խնդիրքը և հրամայեց իսկույն, իր ներկայությամբ, հրովարտակը գրել: Նա գիտեր հայի թույլ կողմերը. նրա եկեղեցուն և վանքին մի դիպչիր, իսկ նա պատրաստ կլինի իր երկիրը, իր անձը և ամեն ինչ տալ թշնամու ձեռքը: Թագավորական հրովարտակով զինված, նա սկսեց թափառել դեպի ամեն կողմ: Գնաց Պարսկաստան, այնտեղ նորոգեց Թավրիզի եկեղեցին: Այնտեղից անցավ Գողթնյաց գավառը, մի հրաշքով բաց արեց Թովմա առաքյալի վանքի վաղուց փակյալ, անշարժ դռները և այնտեղ կրոնական միաբանություն հաստատեց: Այստեղից անցավ Աստապատ, հիմնեց ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը և այլ եկեղեցիներ: Նրա եռանդը և սնահավատ ժողովրդից ստացած համակրությունը այն աստիճան գրգռեցին ժամանակի Մելիքսեթ կաթողիկոսի նախանձը, որ նա բողոքեց թագավորի Ամիրգունա անունով կուսակալին, որ նստում էր Երևան քաղաքում, որպեսզի արգելեն նրան սրբավայրեր հիմնելուց: Երկար տարաձայնություններից հետո, հազիվ թե կարողացան սանձահարել հրաշագործի մոլեռանդությունը:

Սյունյաց մեծ անապատի միաբաններիցն էր Արիստակես վարդապետ բարգուշատցին, որ հիմնեց Տանձափարախի անապատը:

Սյունյաց մեծ անապատի միաբաններիցն էր Շամքորի ձորեցի Դավիթ եպիսկոպոսը, որ հիմնեց նույն ձորի մեջ Չարեքագետի անապատը, ուր կազմվեցավ «անստացված» կոչված ճգնավորների միաբանությունը:

Սյունյաց մեծ անապատի միաբաններիցն էր Կարապետ եպիսկոպոս վաղարշապատցին, որ հիմնեց Սևանա կղզու անապատը:

Սյունյաց մեծ անապատի միաբաններիցն էին Թովմաս եպիսկոպոս տաթևացին և տեր-Կիրակոս տրապիզոնցին, որ հիմնեցին Քշտաղի Հոչանց գյուղի անապատը:

Սյունյաց մեծ անապատի միաբաններիցն էր երևելի Մովսես վարդապետ Սյունեցին, որ հիմնեց Անանիա Առաքելո անապատը Երևան քաղաքում, իսկ հետո կաթողիկոս ընտրվելով, նորոգեց ավերակ դարձած Էջմիածինը:

Սյունյաց մեծ անապատի աշակերտ էր Փիլիպոս վարդապետ Աղբակեցին, որ Մովսեսից հետո հայոց կաթողիկոս ընտրվեցավ: Դա իր նախորդի նման շատ նորոգություններ արեց Էջմիածնում, կառուցեց գեղեցիկ զանգակատունը, նորոգեց ս. Գայանեի և Հռիփսիմեի վանքերը, նորոգեց Օշական գյուղի ս. Տաճարը, որը էր հանգստարան սրբույն Մեսրոպի, նորոգեց և Բջնի գյուղի ս. Աստվածածնի տաճարը:

Հիշյալ երկու կաթողիկոսների՝ Մովսեսի և մանավանդ Փիլիպոսի օրերում հիմնվեցան և նորոգվեցան ուրիշ շատ վանքեր ու եկեղեցիներ: Ջուղայեցի Հակովբ վարդապետը, որը Փիլիպոսից հետո կաթողիկոս դարձավ, նորոգեց Դարաշամբի ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը: Մեղրեցի Եսայի վարդապետը (Մովսես կաթողիկոսի աշակերտը) նորոգեց Երնջակա ս. Կարապետի վանքը: Վաղարշապատցի Զաքարիա վարդապետը (դարձյալ Մովսես կաթողիկոսի աշակերտը) նորոգեց Հովհաննա վանքը Արագածի ստորոտներում Մկրտիչ եպիսկոպոսը նորոգեց Թադեոս առաքելո վանքը Արտազ գավառում: Մարտիրոս եպիսկոպոսը նորոգեց ս. Գևորգի վանքը Մուղնի գյուղում, Կարբիի մոտ, Արագածի ստորոտներում: Ոսկան վարդապետ Երևանցին նորոգեց ս. Սարգիս զորավարի վանքը Ուշի գյուղում, Կարբիի մոտ, նույնպես Արագածի ստորոտներում: Այլևս չեմ խոսում ուրիշ շատ վանքերի մասին, որոնք կամ նորից շինվեցան, կա՛մ բոլորովին ավերակ լինելով, նորոգվեցան զանազան տեղերում: Եվ այդ բոլորը կատարվեցավ Շահ-Աբասի արշավանքների ժամանակ կամ անմիջապես նրա արշավանքներից հետո:

Հիշյալ երկու կաթողիկոսները, Մովսես և Փիլիպոս, խիստ պայծառ տեղ են բռնում հայոց եկեղեցական պատմության մեջ, այն խառնաշփոթ, կորստաբեր և աղետավոր անցքերից հետո, որ կատարվեցան նրանց հինգ նախորդների միմյանց հետ ունեցած անընդհատ հակառակություններից: Առաքել կաթողիկոսը դեռ կենդանի էր, երբ Դավիթը կաթողիկոս ձեռնադրվեցավ, հետո Մելիքսեդեկը, հետո Սրապիոնը, հետո Մելիքսեդեկի եղբորորդի Սահակը,— և այդպես, միաժամանակ Էջմիածնի հայրապետական աթոռը դարձել էր հինգ կաթողիկոսների հակառակության առարկա: Կաշառքով փոփոխակի մինը մյուսի ձեռքից խլում էր իշխանությունը, և Էջմիածինը ընկած էր ծանր պարտքերի ներքո, նրա բոլոր սրբությունները գրավ էին մահմեդականների մոտ: Իսկ այդ ցավալի ժամանակը փոքր չտևեց. նա տևեց ամբողջ քառասուներեք տարի: Դա այն ժամանակն էր, երբ Հայաստանը լողում էր արյան ծովի մեջ, երբ Շահ-Աբասը հայոց գերիները վարում էր դեպի Սպահան…

Հիմա դառնանք դեպի Լիմ և Կտուց անապատների հիմնարկությունը:

Սյունյաց մեծ անապատի միաբաններիցն էր նաև Ներսես վարդապետ մոկացին: 1622 թվին, այսինքն Շահ-Աբասի գերությունից 16 տարի հետո, Ներսեսը եկավ Վասպուրականի կողմերը և մտնելով Լիմ կղզին, նորոգեց այնտեղի ավերակ ու ամայի վանքը, և կազմեց անապատականների մի նոր միաբանություն, միևնույն կարգերով ու կանոններով, որպես նա տեսել էր Սյունյաց մեծ անապատում: Մի քանի տարվա ընթացքում կրոնավորների թիվը այնքան բազմացավ, որ Լիմ կղզին նրանց համար շատ փոքր երևցավ, այդ պատճառով նրանց մի մասը տեղափոխվեց Կտուց կղզին և հիմնեց այնտեղ մի նոր անապատ, իհարկե, չփոխելով իրանց ուխտին և միաբանությանը հատուկ կանոնները: Ահա այդ անապատն էր, որ մենք տեսանք, և այդ անապատի պատմական ծագումն էր, որ ես խոստացա անել:

Սյունյաց մեծ անապատը թեև տվեց երկու նշանավոր անձնավորություններ, որպիսիք էին Մովսես և Փիլիպոս կաթողիկոսները, բայց նրա նեղ, սահմանափակ, կղերական ուղղությունը կարող էր ավելի վնասակար լինել, եթե ինքը բնությունը վերջ չդներ այդ անապատի մոլեռանդությանը: 1658 թվի սաստիկ երկրաշարժը ճեղքեց, պատառեց այն սարավանդի մի մեծ մասը, որի վրա կանգնած էր

անապատը: Ահագին ապառաժը խորտակվելով, բաժան-բաժան լինելով, վերևից թափվեցավ իր հանդեպ գտնված խոր ձորի մեջ, որտեղից հոսում էր Որոտն գետը: Գետի ընթացքը արգելվեցավ, և ձորի մեջ մի ընդարձակ լճակ կազմվեցավ, հետո ջուրը իր համար ուրիշ ճանապարհ բաց արեց: Բայց զարմանալին այն էր, որ քարաժայռի այն մասը, որի վրա կառուցված էր անապատը, ահագին բարձրությունից մինչև գետի ափը սողալու ժամանակ, մնաց ամբողջ և իր վրա ամբողջությամբ պահպանեց անապատը: Նույն դրության մեջ մնում է մինչև այսօր: Այդ դեպքը թեև համարվեցավ մի մեծ հրաշք, այնուամենայնիվ, անապատի միաբանները այլևս չկարողացան այնտեղ բնակվել և ցրիվ եկան դեպի զանազան կողմեր: Եվ այդպես, Սյունյաց մեծ անապատը իր գոյությունը պահպանեց 45 տարուց փոքր-ինչ ավելի, իսկ այդ սուղ ժամանակում նրա կատարած գործը մեծ եղավ: Ինչպես վերևում մի առ մի ցույց տվեցինք, նրանից ծնունդ առին ուրիշ շատ վանքեր և անապատներ միևնույն կազմակերպությամբ, միևնույն կարգերով ու կանոններով…

Կարծեմ, իմ այդ համառոտ տեսության մեջ բավական պարզվեցավ, որ անապատը երկրի անապահով դրության և նույն անապահովությունից առաջացած ժողովրդի հուսահատական վիճակի արդյունքն է: Աշխարհից բավականություն չգտնելով, դժգոհ լինելով, մարդը սկսում է ատել աշխարհը: Եվ որովհետև նա ինքը նույնպես աշխարհի մի մասն է կազմում, հետևապես սկսում է ատել և իր անձը: Այստեղից է առաջ գալիս այն հոգևոր անձնասպանությունը, որ կրոնավորների լեզվով կոչվում է ճգնավորություն, խստակեցություն և մարմնամաշություն: Անապատականը դրսից, նույնիսկ աշխարհից է ստանում անձնասպանության այդ զգացմունքը և, իր մթին խուցի մեջ զարգացնելով, կրկին վերադարձնում է աշխարհին: Նրանց հարաբերությունները փոխադարձ են: Եվ այդ պատճառով, անկարել է չնկատել այն սպանիչ, վիատեցուցիչ ազդեցությունը, որ գործում է անապատը իր շրջապատող ժողովրդի վրա, մանավանդ երբ այդ ժողովուրդը գտնվում է մտավորապես ստոր զարգացման մեջ: Գործունեությունը, եռանդը, աշխատանքը, սերը դեպի կյանքը՝ դադարում է այնտեղ, տիրում է ընդհանուր մեռելություն, և վանքը իր շրջակա բնակիչներով ներկայացնում է մի ընդարձակ անապատ… Այդ կետից նայելով, անապատների թվից կարելի է իմանալ մի ժողովրդի թե՛ զարգացման աստիճանի և թե՛ գործունեության չափը: Եվ որովհետև իմ պատմությունը ամփոփվում է միայն մի նեղ շրջանակի մեջ,— այն է՝ Հայաստանի նշանավոր նահանգներից մեկը՝ Վասպուրականը,— ես ցույց կտամ, թե այդ նահանգում մի ժամանակ որքան վանքեր ու անապատներ կային, և նրանց թվից կարելի է եզրակացնեք այն մահացու և ծանր հիվանդությունը, որ այդ նահանգի անկման պատճառ դարձավ:

Վասպուրականը Արծրունի նախարարների սեփականությունն էր: Տասներորդ դարու սկզբում Արծրունի իշխանները այն աստիճան զորացան, որ նրանցից մեկը, Գագիկը, ապստամբվեցավ Բագրատունյանց թագավորության դեմ, և դավաճանությամբ ստացավ արաբական ոստիկան Յուսուֆից արքայական թագ: Նրա հիմնած դժբախտ թագավորությունը տևեց հարյուր տարուց մի փոքր ավելի և ունեցավ վեց թագավորներ միայն: Դրանցից վերջինը, Սենեքերիմը, սաստիկ հարվածներ կրելով նույնիսկ արաբացիներից և ապա թուրքերից, չկարողացավ երկար դիմանալ և 1021 թվին, իր հաճությամբ, իր տերությունը հանձնեց հունաց Վասիլ կայսրին, և նրա փոխարեն ստացավ կայսրից Սեբաստիա քաղաքը իր գավառներով: 14.000 ձիավորներով գահազուրկ թագավորը տեղափոխվեցավ իր ստացած նոր երկիրը բնակության համար: Վասպուրականը դարձավ հունական նահանգ:

Այն բոլորը, ինչ որ Սենեքերիմը ցուցակով հանձնեց հույներին, հետևյալն էր. 10 քաղաք, 72 բերդ և 4.400 գյուղ: Նա չհանձնեց հույներին միայն վանքերն ու անապատները, որովհետև դրանք աստծո և ժողովրդի սեփականությունն էին:

Վանքերի թիվը հասնում էր 900–ի, որոնցից 115–ը մեծամեծ մենաստաններ էին: Համեմատեցե՛ք, թագավորությունն իր երկրի պահպանության համար ուներ միայն 72 բերդ, իսկ աղոթելու համար՝ 900 վանքեր, լի բազմաթիվ կրոնավորներով, որ միշտ քարոզում էին աշխարհի *ունայնությունը*…

Վասպուրականը հույների ձեռքումն մնաց միայն 107 տարի, վերջը տիրեց Միրան անունով ամիրան և իրան կոչեց Շահ–Արմեն, այսինքն թագավոր հայոց:

ԺԳ

ԴՅՈՒԹԱԿԱՆ ԳԱՎԱԶԱՆԸ

Կեսօրից բավական անցել էր, երբ մենք հասանք Այգեստան. մարդիկ չէին երևում, փողոցները համարյա թե դատարկ էին: Դեռ շարունակվող տոթը քշել էր նրանց այգիների ու պարտեզների հովասուն ստվերների ներքո:

Անցնելով կարգով տնկած հովանավոր ուռիների և բարդի ծառերի տակից, մենք մտանք այն փողոցը, որտեղ գտնվում էր վարպետ Փանոսի տունը: Այստեղ ինչ–որ աղմուկ էր լսվում: Հեռվից նշմարեցինք, փոշու ամպերի մեջ կորած, աղաղակելով, ճիչ բարձրացնելով վազվզում էին մի խումբ երեխաներ: Երբ մոտեցանք, տեսարանը ավելի պարզվեցան: Երեխաները հալածում էին մի պառավ կնոջ, որը նրանց առջևից փախչելով, երբեմն կանգ էր առնում, սպառնալիքներ էր կարդում, և երեխաները այդ լսելով, նույնպես կանգ էին առնում, փոքր—ինչ հանգստանում էին, իսկ երբ պառավը շարունակում էր գնալ, փոքրիկ չարաճճիները կրկին աղաղակ էին բարձրացնում, շրջապատում էին նրան և նրա վրա խճի կտորներ էին նետում: Պառավի հետ կար և մի փոքրիկ աղջիկ: Ես իսկույն ճանաչեցի Հյուբբիին:

Կարծես երազ լիներ այդ, կամ տոթն ու հոգնածությունը այն աստիճան գրգռել էին իմ երևակայությունը, որ իմ աչքի առջև երևում էին խաբուսիկ պատկերներ: Ո՞րտեղից հայտնվեցավ Հյուբբին: Իսկ նրանից անբաժան պառավը անպատճառ Սուսանը պետք է լիներ: Այո՛, հենց նա էր:

— Հյուբբի՛ն… Սուսա՛նը…— բացականչեցի ես զարմացած կերպով և դարձա դեպի Ասլանը:

— Նրանք են…— պատասխանեց նա մի այնպիսի ձայնով, որի մեջ լսվում էր և՛ ուրախություն, և՛ խորին մտատանջություն:

Երևում էր, որ Ասլանին ևս ոչ սակավ զարմացում պատճառեց նրանց անակնկալ հայտնվելը Այգեստանում: Դա առանց մի կարևոր պատճառի չէր լինի:

Մենք շտապեցրինք մեր ձիաներին: Երեխաները, որոնց թվում կային և մի քանի հասակավոր պատանիներ ևս, դեռ չէին դադարել նրանց չարչարելուց: Ես իսկույն հասկացա այդ ստահակների զվարճության նպատակը: Ես էլ նրանց նման շատ անգամ բոշա կանանց ետևից ընկած եմ եղել, երբ նրանք անց էին կենում մեր գյուղի միջով: Գաղտագողի կերպով մոտենում էի և կժմտում էի նրանց մարմնի միսը: Թե՛ ես և թե՛ իմ ընկերները հավատացած էինք, որ բոշա կնոջ մարմինը կախարդական զորություն ունի, և եթե նրա մարմինը մատներով կժմտենք, նույն զորությունը կհաղորդվի մեր ձեռքին, և մեր ձեռքը այնուհետև անխոցելի կլինի ամեն տեսակ զենքի առջև, որի հարվածները երբեք չեն ներգործի նրա վրա, և նա միշտ հաջողակ կլինի կռվի ժամանակ:

Մեր մոտենալը ամենևին չզսպեց անպատկառ ստահակների հիմարությունները: Երբ մեզ տեսան նրանք, կարծես մի տեսակ խրախուսս ստացան, և հավաքվելով միասին, փորձեցին խմբով հարձակում գործել: Այդ միջոցին տեղի ունեցավ մի շատ սրտաշարժ տեսարան: Փոքրիկ Հյուբբին կանգ առեց, իր սպառնալից դեմքը դարձրեց դեպի խումբը և, ձեռքի թեթև գավազանը բարձրացնելով, ասաց.

— Կանիծե՛մ, և դուք ամենքդ քար կդառնաք…

Ես չկարողացա առանց սոսկալու նայել նրա հրաբորբոք աչքերի բարկությանը: Փոքրիկ կախարդի սպառնալիքը այն աստիճան ահարկու էր, որ թեև երեխաները քար չդարձան, բայց բոլորովին անշարժ մնացին, աղմուկը դադարեց և մի քանի րոպեից հետո բոլորը ցրիվ եկան և հեռացան: Տեսնելով մեզ, պառավը և Հյուբբին ինչ—որ անծանոթ լեզվով խոսեցին միմյանց հետ: Հետո Հյուբբին իր սովորական նազելի ժպիտը երեսին, մոտեցավ Ասլանին և իր ձեռքի փոքրիկ գավազանը բարձրացնելով ասաց.

— Գնի՛ր, պարոն, այդ գավազանը, դա դյութական զորություն ունի:

— Ես քեզ կզրկեմ քո զենքից, փոքրիկ վհուկս,— ասաց Ասլանը նույնպես ժպտալով:

— Ես մի ուրիշը կշինեմ: Այդ ևս իմ շինածն է:

Ասլանը առեց նրա ձեռքից գավազանը և ընծայեց մի ոսկի: Փոքրիկ վհուկը գլուխ տվեց և շնորհակալությամբ հեռացավ: Մենք անցանք, առանց ցույց տալու, որ ճանաչում ենք նրանց, և որպես նրանք ևս ցույց չտվին, թե ճանաչում են մեզ:

Հասնելով մեր իջևանը, վարպետ Փանոսին գտանք իր տան դռանը կանգնած: Նա մեզանից մի քանի ժամ առաջ էր վերադարձել Ավանց գյուղից: Երևում էր, որ նավաստին պատմել էր նրան մեզ հետ պատահած արկածները թե՛ ալեկոծության ժամանակ և թև՛ անապատում:

— Լսեցի, լավ թրջվեցա՛ք,— ասաց նա ծիծաղելով:

— Վարդապետները ցամաքացրին մեզ,— պատասխանեց Ասլանը նույնպես ժպտալով:

Նա կանչեց իր աշակերտներին, հրամայեց, որ տեղավորեն մեր ձիաները: Մենք ներս մտանք:

Ասլանը և վարպետ Փանոսը խոսում էին վանքի մասին: Վարպետը հարցնում էր, թե ինչ տպավորություն գործեցին նրա վրա աբեղաները, նրանց կյանքը, նրանց սովորությունները և այլն: Իսկ ես նրանց չէի լսում: Իմ մտքից չէին դուրս գալիս Սուսանը և Հյուբբին: Երևում էր, որ Ասլանի վրա ևս նրանց անակնկալ հայտնվիլը խիստ ծանր տպավորություն գործեց: Այդ պատճառով խիստ կարճ պատասխաններ էր տալիս վարպետին և չէր ուզում խոսակցությունը երկարացնել, որպեսզի ինքը ժամանակ ունենա մտածելու Հյուբբիի և Սուսանի մասին: Անպատճառ մի բան պատահած պետք է լիներ, կամ շատ վատ, կամ շատ լավ: Բայց մինչև ստուգելը, այդ գաղտնիքը բավական պիտի տանջեր թե՛ ինձ և թե՛ Ասլանին: Սուսանը ոչինչ չասաց Ասլանին: Գուցե նա ասաց, բայց ես չհասկացա: Ես զբաղված էի Հյուբբիով, այդ պատճառով նկատել չկարողացա, թե ինչ ակնարկություններ արին միմյանց հետ պառավը և Ասլանը: Ես տարակույս չունեի, որ նրանք շուտով չէին հեռանա մեր բնակարանի շրջակայքից, և մենք գուցե մի քանի անգամ կհանդիպեինք նրանց: Բայց հիմա ո՞ւր գնացին նրանք: Խորհրդավոր գավազանը Ասլանին հանձնելուց հետո, նրանք շտապով հեռացան և մի քանի րոպեում անհայտացան մյուս նեղ

փողոցի մեջ, որ տանում էր դեպի գերեզմանատունը: Երևի, այնտեղ էր նրանց օթևանը, մեռելների մոտ: Կենդանի մարդիկ այդ թշվառներին իրանց բնակարաններում տեղ չեն տալիս: Խորշում են բոշաներից…

Բայց ո՞րքան ուրախացավ Հյուբբին, երբ տեսավ մեզ: Ես չէի կարողանում մոռանալ այն սիրուն ժպիտը, որ երևաց նրա արևակեզ, սևացած դեմքի վրա: Բայց ինչո՞ւ էր այժմ նա այնպես վատ հագնված: Նա այլևս գույնզգույն, խայտաճամուկ հագուստը չուներ, որ տեսել էի նրա վրա ս. Տիրամոր տոնախմբության ժամանակ: Խե՛ղճ աղջիկ, թափառական կյանքը նրա վրա ևս արել էր իր դժբախտ ազդեցությունը: Հագուստը բոլորովին մաշված էր. մաշված էին և փոքրիկ տրեխները, որ կապել էր իր առանց գուլպայի ոտներին: Երևում էր. որ շատ հեռու տեղից էին եկել:

Պառավը ավելի խոժոռադեմ և զայրացած երևաց ինձ: Երեխաների միամիտ վարմունքը չէր կարող այնպես վրդովեցնել նրան: Ուրեմն, այլևս ի՞նչ պատճառ կարող էր ունենալ: Ես այդ պառավին միշտ տխրադեմ և թախծալի էի տեսել, բայց զայրացած, ոչ երբեք: Նրա սրտի վրա ծանրացած էր մի ցավ, մի դառն կսկիծ, որ միշտ տանջում էր նրան: Սկսյալ այն օրից, որ ես առաջին անգամ տեսա այդ պառավին արաբական մինարեթի մոտ, ամայի ավերակների մեջ, այդ թշվառ կինը խիստ տխուր տպավորություն էր թողել իմ վրա, որ ավելի նման էր կարեկցության և ցավակցության, և ես պատրաստ կլինեի բաժանել նրա ցավերը, եթե նա իր սրտի գաղտնիքը հայտնելու լիներ ինձ: Բայց ի՞նչ կար նրա սրտում, ի՞նչ էր պատճառը, որ նա այդպես թափառում էր երկրե երկիր, և որպես ստվեր, չէր բաժանվում Ասլանից ու նրա ընկերների ետևից…

Մենք ման էինք գալիս պարտեզում, վարպետ Փանոսը դեռ շարունակում էր իր հարցուփորձը վանքի և անապատականների մասին: Ասլանի ուշադրությունը դարձած էր դեպի իր ձեռքի դյութական գավազանը, որը, ինչպես հավատացրեց Հյուբբին, նրա արհեստի արդյունքն էր: Բայց հազիվ թե նա կարող կլիներ մի այնպիսի գեղեցիկ բան շինել: Գավազանը սև օձի նմանություն ուներ, և սև ներկի տակից խիստ ճիշտ կերպով նկարվում էին այդ սողունի բոլոր թեփուկները, գլուխը, աչքերը, բերանը, լեզուն և այլն:

— Այդ ի՞նչ բան է,— հարցրեց վարպետը, ինքն ևս ուշադրություն դարձնելով:— Կարծես Մովսես մարգարեի գավազանը լինի, երևի վարդապետներից ընծա ստացաք:

— Ոչ, մի բոշա աղջիկից գնեցի,— ասաց Ասլանը:

— Այն փոքրիկ աղջիկի՞ց, որ մի պառավի հետ ման է գալիս:

— Հենց նրանից:

— Զարմանալի՛ աղջիկ է: Կես ժամ առաջ մեր բակումն էր: Հարևան կանայքը հավաքվել էին նրա շուրջը, և նրանց համար գուշակություններ էր անում: Ես բոլորովին հիացած մնացի նրա սրամտության վրա:

— Ձեր մասին գուշակել չտվեցի՞ք:

— Տվեցի, բայց նա նայեց իմ երեսին ու ասաց. «Դուք թերահավատությամբ եք դիմում ոգիների դստերը. նա ձեզ համար գուշակել չէ կարող»:— Նա իրան ոգիների դուստր էր կոչում:

— Եվ իրավ, դուք չե՞ք հավատում:

— Չեմ հավատում: Բայց զարմանալին այն է, թե ի՞նչպես նա հասկացավ, որ ես չեմ հավատում:

— Այդ շատ հեշտ էր հասկանալ:

Այդ միջոցին վարպետ Փանոսին կանչեցին իր գործարանը, մենք բաժանվեցանք նրանից, գնացինք մեզ համար պատրաստած սենյակը: Ասլանը իսկույն դուռը ներսից կողպեց, մոտեցավ լուսամուտին, մի քանի րոպե հետաքրքրությամբ նայում էր դյութական գավազանի վրա: Հետո նա կամաց սեղմեց օձի գլուխը, որ հեշտությամբ բաժանվեցավ մարմնից: Այդ միջոցին նա դուրս քաշեց օձի փորից մի երկար թղթի փաթոթ, որի վրա համարյա սպիտակ տեղ չկար, ամբողջապես ծածկված էր գրություններով: Այդ գրությունները նմանում էին այն թիլիսմանական ծածկագրություններին, որ պատրաստում են ջադուկները, և կանայք դնելով նրանցից, ամփոփում են արծաթյա փոքրիկ խողովակների մեջ, և քարշ են տալիս իրանց պարանոցից: Իսկ տղամարդիկ իրանց գավազանի փողի մեջ են դնում, հաջող ճանապարհորդություն ունենալու համար:

Բայց Հյուբբիի դյութական գավազանի փողի մեջ գործ դրած թուղթը ոչինչ հաջողություն չէր խոստանում, որովհետև ես իսկույն նկատեցի, որ նրա կարդալու միջոցին Ասլանը բոլորովին գունաթափվեցավ: Կարդալուց հետո նա այրեց թուղթը: Երբ որ այրում էր, դա արդեն պարզ նշան էր, որ բովանդակությունը կասկածավոր է:

— Մենք մատնված ենք…— ասաց նա բավական վրդովված ձայնով: Ես սարսափեցա: Նա ինձ հանգստացրեց, ավելացնելով.

— Այդ ոչինչ… ես այդ սպասում էի…

— Մենք պետք է շտապենք իսկույն հեռանալ այստեղից,— ասեցի ես:

— Երբե՛ք,— պատասխանեց նա վճռական ձայնով:— Մեր փախուստը ավելի կասկածավոր կդարձնե մեզ:

— Մեզ կարող են կալանավորել:

— Հազիվ թե: Միայն ինձ հարկավոր է այսօր անպատճառ տեսնվիլ մեկի հետ…

Այդ առաջին անգամն էր, որ Ասլանը հայտնեց ինձ մի գաղտնիք, գուցե նրա համար, որ զգույշ լինեմ: Բայց վարպետ Փանոսին այդ մասին ոչինչ չասաց: Այդ ինձ շատ զարմացնում էր: Երևում էր, որ այդ մարդիկ իրանց ծանոթներին և մինչև անգամ մտերիմներին ամեն ինչ հայտնում էին մի որոշ չափով, որքան հարկավոր էր, որ նա գիտենար, իսկ ավելին իրանց մոտ էին պահում:

Այնօր Ասլանը դուրս չեկավ տանից, այլ առանձնացած իր սենյակում, զբաղված էր ինչ-որ գրություններով: Ես էլ նրան չխանգարելու համար, բոլորովին միայնակ թողեցի, գնացի պարտեզը և քնեցի կանաչ խոտերի վրա, շլորենու ստվերի ներքո: Երբ զարթնեցի, իսկույն գնացի նրա մոտ: Նա դեռ նոր էր վերջացրել իր գործը:

Երեկոյան պահուն նա հարցրեց վարպետ Փանոսից.

— Կարծեմ ձեր քաղաքում պետք է լինի մի մուսուլցի հայ վաճառական:

— Երևի խոջա Թորոսի մասին եք հարցնում, որ թումաջի (սաֆիանի) վաճառականություն է անում:

— Այո՛, խոջա Թորոսի մասին: Ո՞րտեղ կարելի է տեսնել նրան:

— Թեոս ախպոր սրճարանը: Նա համարյա ամեն երեկո այնտեղ է լինում: Ի՞նչ կա:

— Ոչինչ: Նրա անունով հանձնարարական նամակ ունեմ, պետք է խնդրել, որ մի ապահով քարավանի հետ ինձ ճանապարհ դնե դեպի Մուսուլ:

— Այդպես շուտ գնո՞ւմ եք:

— Գուցե մի քանի օրից հետո: Բայց պետք է նա առաջուց գիտենա, որ ինձ համար գրաստներ վարձե:

Թեոս ախպոր սրճատունը գտնվում էր ոչ թե Այգեստանում, այլ քաղաքում: Վարպետ Փանոսը ցույց տվեց բոլոր նշանները, թե ո՛ր կողմում, ո՛ր փողոցում, ո՛ր տան մոտ է սրճատունը, և ավելացրեց, եթե մուսուլցի կաշեվաճառը այնտեղ չլինի, բավական է միայն հայտնել սրճանոցի տիրոջը, նա շատ լավ մարդ է, և իսկույն կանչել կտա, որովհետև մուսուլցին նույն սրճատանը կից պանդոկումն է կենում:

— Կկամենայի՞ք, որ ձիաները պատրաստեին:

— Ոչ, ես ոտով կգնամ,— ասաց Ասլանը:

Ավելի լավ չէ՞ լինի, որ թողնեիք առավոտյան: Գիշերով ով գիտե, ինչ կարող է պատահել:

— Ավելի հարմար է գիշերը: Միայն ինձ հարկավոր է փոխել հագուստս, որովհետև ես չէի ցանկանա, որ այնպիսի տեղերում, ինչպես են ձեր քաղաքի սրճատները, ինձ ճանաչեին:

Ասլանը փոխեց հագուստը, գլխին ֆես դրեց, ծածկվեցավ Վանա լայն աբայով: Ես նույնպես հագուստս փոխեցի, հետո ճանապարհ ընկանք:

— Գիշերը չե՞ք վերադառնալու,— հարցրեց վարպետ Փանոսը:

— Շատ կարելի է,— պատասխանեց Ասլանը:

Արևը մտել էր, մութը բոլորովին պատել էր Այգեստանի մռայլ փողոցները: Ճանապարհին Ասլանը հարցրեց:

— Դու որևիցե զենք առեցի՞ր քեզ հետ:

— Առեցի:

Բավական հեռացել էինք վարպետ Փանոսի տնից, երբ Ասլանը թողեց գլխավոր փողոցը, որ տանում էր դեպի քաղաքը, շեղվեցավ ճանապարհից և մտավ մի անծանոթ նեղ փողոց: Այստեղ տներ չկային, որովհետև ոչ շների ձայն էր լսվում և ոչ ճրագի լույս էր երևում: Երկու կողմից ևս ձգվում էին այգիների անվերջանալի պատերը: Երկար գնում էինք, և ես չգիտեի, թե ուր ենք գնում: Վերջապես դուրս եկանք այգիների լաբիրինթոսից, այժմ մեր առջև տարածվում էին ընդարձակ, մշակված դաշտեր: Ետ ընկած լուսինը նոր երևաց հորիզոնի վրա:

Հեռվից լսվում էր հնձվորի տխուր, թախծալի երգը և մանգաղի ներդաշնակ հնչյունը: Այնտեղ մշակները աշխատում էին: Ցերեկվա տոթը այն աստիճան տոչորում է, ցամաքեցնում է հասունացած արտերը, որ հնձելու միջոցին հասկերից հատիկները թափվում են: Այդ պատճառով հնձում էին այժմ, որովհետև գիշերային

խոնավությունից արտերը ավելի տամկանում են և հասկերից հատիկները վայր չեն թափվում:

Այն ժամանակ միայն ես հասկացա, թե ո՛րտեղ ենք գտնվում, երբ հեռվից նշմարվեցան գերեզմանատան բարձր խաչ-քարերը: Լուսնկայի աղոտ լույսով այդ լուռ, անբարբառ արձանները նկարվում էին, որպես մի-մի հսկաներ, որոնք հետզհետե աճելով և ընկղմվելով գիշերային խավարի մեջ, ներկայացնում էին ուրվականների մի խառն բազմություն, որոնք, կարծես հենց նոր էին դուրս եկել իրանց մթին հանգստարաններից:

Ամեն ինչ լուռ էր. ամենուրեք տիրում էր լուսնային գիշերի մոխրագույն խավարը: Միայն գերեզմանատան մի հեռու անկյունում երևում էր ծիրանեգույն լույս: Անահավատներից ոչ ոք չէր համարձակվի մոտենալ այդ լույսին, որը այնպիսի տպավորություն էր գործում, կարծես թե դուրս էր ցոլանում մի որևիցե նահատակի գերեզմանից: Բայց Ասլանը ուղիղ դիմում էր դեպի այդ լույսը: Ես տհաճությամբ գնում էի նրա ետևից: Բայց իմ տհաճությունը իսկույն փարատվեցավ, երբ մոտեցանք, և բոցերի միջից, որպես մի երկայն Քերովբեի դեմք, երևաց Հյուբբիի սիրուն դեմքը: Պառավը, նստած գետնի վրա, թիկն տված մի տապանաքարի, գլուխը տխրությամբ խոնարհեցրած, խորին մտահոգության մեջ՝ նայում էր կրակի վրա: Հյուբբին իր հավաքած մացառներով բորբոքում էր կրակը: Երբ պառավը լսեց մեր ոտնաձայնը, գլուխը վեր բարձրացրեց, նայեց շուրջը: Իսկ Հյուբբին կանգնեց, և նույն րոպեում լսելի եղավ նրա սուր, մետալական ձայնը.

— Մի մոտենա՛ք…

Ասլանը հեռվից ինչ-որ պատասխանեց:

Հյուբբին առաջ վազեց, ընկավ նրա գիրկը:

— Ես կրկին ետ բերեցի քո դյութական գավազանը, Հյուբբի,— ասաց Ասլանը՝ համբուրելով նրան:

— Ես էլ այդ պայմանով էի տվել քեզ,— ասաց Հյուբբին, մի առանձին ուրախությամբ նրա ձեռքից առնելով իր ավանդը:

Պառավը լռությամբ կանգնեց, վեր առեց իր ճանապարհորդական պարկը, որ դրած էր տապանաքարի վրա, կապեց մեջքին, վեր առեց իր ցուպը և մոտեցավ Ասլանին:

Նրանք, մի կողմ առանձնացած, երկար խոսում էին միմյանց հետ: Այդ միջոցին Հյուբբին մոտեցավ ինձ: Ես հարցրի.

— Ճանաչո՞ւմ ես ինձ:

— Ճանաչում եմ, ինչպես չեմ ճանաչում:

— Այս գիշեր այստե՞ղ պիտի մնաք:

— Ոչ, մենք սպասում էինք Ասլանին, հիմա պիտի գնանք:

— Ո՞ւր պիտի գնաք:

— Այդ մայրիկը գիտե…

Խորամանկը չուզեց ինձ հետ անկեղծ լինել: Իմ կատարած դերը իմ ընկերների գործողությունների մեջ՝ սաստիկ ծիծաղելի էր: Ինձ վիճակված էր միշտ գործ ունենալ մանրների հետ, իսկ այդ մանրիկներն անգամ ինձանից, շատ բան թաքցնում էին:

Հյուբբին իր փոքրիկ մատիկներով զննում էր գավազանի գլուխը, փորձելու համար, արդյոք լավ էր ամրացրած, թե ոչ:

— Ի՞նչ կա դրա մեջ,— հարցրի նրանից:

— Ի՞նչ պետք է լինի, ոչինչ չկա,— պատասխանեց նա:

Ես հավատացած էի, որ այդ սև օձը կրում էր իր փորում պատասխանը այն թղթի, որ այսօր Ասլանը իմ աչքի առջև դուրս հանեց նրա փորից, կարդաց, այրեց, Ես հավատացած էի, որ Հյուբբին գիտեր այդ, բայց նա ինձ ոչինչ չասաց:

– Ի՞նչ կանեիր, եթե այդ գավազանը ճանապարհին խլեին քո ձեռքից,– հարցրի նրանից:

– Ո՞վ կարող է խլել,– պատասխանեց նա ինքնավստահ ժպիտով,– ես նրան իսկույն կթունավորեի: Չե՞ս իմանում – ախար դա կծում է, նայի՛ր:

Նա մատներով հուպ տվեց օձի պարանոցը և, իրավ, նա սկսեց իր լայն բերանը բացուխուփ անել և սլաքի նման լեզուն շարժել: Եթե ես չգիտենայի, թե դա արհեստական է, ինձ վրա ևս սոսկալի տպավորություն կգործեր, ուր մնաց միամիտ անձանց, որոնք մի առանձին սնահավատությամբ են վերաբերվում դեպի օձերի և թովիչների գործողությունները:

Ասլանը, վերջացնելով իր խոսակցությունը պառավի հետ, մոտեցավ Հյուբբիին, դարձյալ գրկեց նրան, համբուրեց և խիստ զգացված ձայնով ասաց.

– Գնացե՛ք բարյավ… Տեր ընդ ձեզ…

– Մնա՛ք բարյավ…– ասաց Հյուբբին և միացավ պառավի հետ:

Մենք բաժանվեցանք: Բայց այդ բաժանումը այնքան սրտաշարժ էր և զգալի, որ ես չկարողացա զսպել իմ արտասուքը: Ասլանը նույնպես շատ հուզված էր: Կրակի մոտ կանգնած, երկար նայում էինք այդ գիշերային ուղևորների ետևից, մինչև նրանք բոլորովին անհետացան խավարի մեջ: Խե՜ղճ աղջիկ… Խե՜ղճ պառավ, ինչի՞ համար էր այդ անձնազոհությունը… ո՞րպիսի ճակատագրական մռայլ խորհուրդ ստիպում էր հանձն առնել մի այդպիսի մռայլ գործ, որ թաքնված էր մթության մեջ… Այն ի՞նչ գերբնական զորություն էր, որ առաջնորդում էր մի զառամյալ կնոջ և մի դեռահաս աղջկա՝ անցնել ամեն փորձանքների, ամեն դժվարությունների միջից և կուրորեն դիմել դեպի մի անհայտ նպատակ…

ԺԴ

ԹԵՈՍ ԱԽՊՈՐ ՍՐՃԱՏՈՒՆԸ

Վանա սրճատները բացվում են արևի լույսի հետ և փակվում են արևը մայր մտնելու հետ: Գիշերը ամեն կյանք, ամեն գործողություն դադարում է այստեղ: Մարդիկ տնից դուրս չեն գալիս, որ չհանդիպեն ոստիկանության կամայականությանը: Դատարկ փողոցներում թափառում են միայն գողերը ու նրանց ընկեր գիշերապահները:

Անհնարին կլիներ մի ուրիշ ժամանակ, գիշերվա այն ժամին, մեր որոնած սրճատունը բաց գտնել, եթե ռամազանի ամիսը չլիներ: Այդ ամսում մահմեդականների համար ցերեկը գիշեր է դառնում, իսկ գիշերը ցերեկ: Ամբողջ օրը օրուջ (ծոմ) պահելով, նրանք օրվա մեծ մասը քնով են անցկացնում, իսկ գիշերը արթուն են մնում ուտելու և աղոթելու համար: Երբ մտանք քաղաքը, հացթուխների, խոհարարների և նպարավաճառների խանութներից շատերը դեռ բաց էին: Փողոցներից նրանք միայն փոքր ի շատե լուսավորված էին, որտեղ այս տեսակ խանութներ կային: Կրպակների ճրագի լույսը տարածվում էր և փողոցի մեջ: Մարդիկ դեռ անցուդարձ էին անում: Ոմանք դիմում էին դեպի մեչիդները, իսկ ոմանք հարևանների մոտ, գիշերը անցկացնելու համար ուտելով և հոգևոր զրույցներով: Հարուստները այդ գիշերներում իրանց սեղանի շուրջը հավաքում են աղքատ դրացիներին: Տարվա մեջ մի ամբողջ ամիս մահմեդականը ողորմած և ջերմեռանդ է դառնում:

Երևում էր, որ Ասլանին անծանոթ չէր Թեոս ախպոր սրճատունը. նա առանց հարցուփորձ անելու ուղիղ դիմում էր դեպի այն կողմը: Երբ հասանք, նա անցավ սրճատան ետևի կողմը և սկսեց բախել մի փոքրիկ դուռ, որ շուտով բաց արին: Մենք ներս մտանք:

— Կարելի՞ է տեսնել Թեոս ախպորը,— հարցրեց Ասլանը դուռը բաց անող ծառայից:

— Նա սրճատանն է,— պատասխանեց ծառան:

— Կանչեցեք այստեղ: Ասացեք, մի պարոն ձեզ հետ գործ ունի:

— Իսկ ձեր անո՞ւնը:

— Իմ անունը ձեզ հարկավոր չէ, դուք միայն կանչեցեք, նա կգա:

Ծառան մրթմրթալով հեռացավ: Մենք փոքրիկ բակում սպասում էինք: Քանի րոպեից հետո ճրագը ձեռին հայտնվեցավ Թեոս ախպերը, որ նախ մի քննողական հայացք ձգեց Ասլանի երեսին, մի քանի վայրկյան նայեց նրա վրա, հետո ասաց.

— Խնդրեմ, ներս համեցեք:

Նա տարավ մեզ մի մաքուր սենյակ, որը կահավորած էր կիսաարևելյան և կիսաեվրոպական ճաշակով: Պատերի մոտ դրած էին երկար թախտեր, պատած գեղեցիկ գորգերով ու բարձերով, իսկ մեջտեղում մի բոլորակ սեղան, որի վրա նա դրեց իր ձեռքի ճրագը:

— Ի՞նչ կկամենայիք,— հարցրեց նա մի այնպիսի եղանակով, որպես հյուրանոցի տերը դիմում էր իր այցելվին:

— Տվեցեք խմելու մի բան,— ասաց Ասլանը:

Նա դուրս եկավ և մի քանի րոպեից հետո վերադարձավ, բերելով երկու շիշ գինի և երկու բաժակներ, որ գլխարկի նման անց էր կացրել շիշերի գլխին, դրեց սեղանի վրա ասելով.

— Բաղեշու գինի է, մնաց մեկ շիշ միայն, այն էլ, եթե հանգուցյալ հայրս գերեզմանից դուրս գա, խնդրե, չեմ տա, ինձ համար եմ պահել:

— Դուք ամեն լավ բան ձեզ համար եք պահում, Թեոս ախպեր,— ասաց Ասլանը ծիծաղելով:

— Ապա ի՞նչ անեմ, «մարգարեն առաջ իր հոգու համար է աղոթում»,— պատասխանեց նա թուրքի առածով, հետո բաժակները առանձին-առանձին վեր առեց և, նրանց մաքրությունը փորձելու համար, բռնեց ճրագի լույսի առջև, նայեց, և գոհ չմնալով, առեց իր ուսի վրայից անձեռոցիկը, սկսեց նորից սրբել:

Թեոս ախպոր վարվողությունը Ասլանի հետ՝ ոչ պանդոկատիրոջ հաճոյամոլության էր նմանում, որ աշխատում է գոհացնել իր այցելվին, նրա գրպանները դատարկելու համար, և ոչ տանտիրոջ վարվողություն էր, որ աշխատում է պատվել իր պատահական հյուրին, որ նա շնորհակալությամբ հեռանա: Նրանց մեջ երևում էր ինչ-որ մտերմություն, թեև սրճանոց պահողները առհասարակ քաղաքավարի են լինում իրանց հաճախորդների հետ, որպես քահանան իր ժամասեր ծուխի հետ:

Ասլանը ածեց բաժակները. գինին Թեոսի գովածից ավելի ազնիվ էր: Երբ նա նկատեց, որ մենք գոհ մնացինք, դրեց սեղանի վրա և մի կտոր ապխտած միս, խորհուրդ տալով միասին ճաշակել, ասելով, թե այնպես ավելի համով է լինում գինին:

Թեոս ախպերը փոքրիկ մարդ էր, կարճահասակ, գորշ և մելամաղձոտ դեմքով, սուր և թափանցող աչքերով: Նրա մեջքի հազիվ նշմարելի սապատը ամենևին չէր խանգարի կազմվածքի բարեձևությունը, եթե գլուխը չափազանց խորն ընկած չլիներ ուսերի մեջ: Բայց այդ ահագին գլուխը իր լայն ճակատով և ալեխառն, գանգուր մազերով, եթե դրված լիներ մի բարձր հասակի վրա, անտարակույս, Թեոս ախպերը աշխարհի գեղեցիկ տղամարդերից մեկը կլիներ: Ինչպես վանեցի, նա դեռ իր պատանեկության հասակում գնաց Կ. Պոլիս իր բախտը փորձելու: (Հազիվ կարելի է գտնել մի վանեցի, որ իր կյանքում մի քանի անգամ Պոլիս գնացած չլինի): Նա շատ գործերի ձեռք զարկեց, բայց ոչինչ բանում չհաջողվեց նրան: Եթե նրա մարմինը բնական պակասություններ չունենար, եթե նա ուժեղ մարդ լիներ, կարող էր իր հայրենակիցների և այլ հայաստանցիների նման Պոլսում **համալություն** (բեռնակրություն) անել, **ղայըղջի** (նավաստի) լինել, **թուլումբաջիների** (հրդեհաշեջների) մեջ մտնել և, վերջապես, **էյվազ** (տան սպասավոր) լինել: Իսկ այդ վերջին ծառայության համար հարկավոր էր վայելչահասակ լինել, և պարոններին ու տիկիններին դուր գալու համար, սիրուն դեմք ունենալ, որոնցից զուրկ էր Թեոս ախպերը: Միակ գործը, որի մեջ նա փոքր ի շատե հաջողություն գտավ, էր մի սրճատան մեջ ղահվե եփողի օգնականի պաշտոն գտնել: Այստեղ նա հազիվ կարողացավ այնքան փող վաստակել, որ ճանապարհի ծախք ունեցավ իր հայրենիքը վերադառնալու: Թեև նա վերադարձավ դատարկ քսակով, բայց պանդխտության դառն փորձերի մեջ խրատված, շատ բան տեսած, շատ բան սովորած և շատ բաներից ևս հրաժարված վերադարձավ…

Թեոս ախպերը երկար մնաց մեզ մոտ, շտապեց սրճատունը իր մյուս հաճախորդներին ևս գոհացնելու համար: Այդ միջոցին սենյակի մեջ բացվեցավ մի դուռ և այնտեղից ներս վազեց մի երեխա, որը, մեզ տեսնելով, մի քանի քայլ հեռավորության վրա կանգնեց և մի քանի վայրկյան զարմացած կերպով նայելով մեզ վրա, կրկին նույն դռնով դուրս փախավ, ճչալով.

— Ես հիմա լավ եմ, պարոն բժշկապետ, և դեղ չեմ խմի:

Ես հասկացա, որ Ասլանը այդ տան մեջ օտար չէր:

— Դու ճանաչվեցար,— ասեցի նրան,— փոքրիկը ճանաչեց քեզ:

— Վնաս չունի, նա խելացի երեխա է, նա ինձ չի մատնի,— պատասխանեց նա իր շուրջը նայելով: Երևի մեկին սպասում էր:

Ես Ասլանին միայնակ թողեցի և մտա սրճատունը, որը կից էր Թեոս ախպոր բնակարանին: Տան ետևի կողմում բնակվում էր նրա ընտանիքը, իսկ առջևի կողմում, որի դուռը բացվում էր փողոցի վրա, զետեղված էր սրճատունը: Դա մի ընդարձակ դահլիճ էր, լուսավորված յուղային ճրագներով: Եվրոպական կարասիք չկային այնտեղ: Դահլիճի բոլոր չորս կողմը, պատերի տակին, հատակից փոքր-ինչ բարձր, շինված էին փայտյա երկար բազմոցներ, որոնց վրա ծալապատիկ նստած էին հաճախորդները: Նրանց մեջ կարելի էր գտնել ամեն տեսակ մարդիկ, սկսյալ քաղաքի դատարկամոլ սրիկաներից, մինչև վաճառականներ, արհեստավորներ, կառավարության պաշտոնյաներ, և ոչինչ պաշտոն ու պարապմունք չունեցող թափառականներ: Բոլորը նարգիլե էին ծխում, ղահվե էին խմում կամ զբաղված էին մի որևիցե խաղով, որպիսին էր՝ նարդի և այլն: Թամբաքվի թանձր ծուխի միջից հազիվ կարելի էր լինում որոշել այդ խառնիճաղանջ բազմության դեմքերը: Ես մի կողմում միայնակ նստեցի և հեռվից նայում էի, թե որպես այդ մարդիկը, ճնշված, խորտակված օրական հոգսերի ծանրության ներքո, այժմ ծուխի և դառն ղահվեի թմրության մեջ, անձնատուր էին եղած մի տեսակ արբեցուցիչ ինքնամոռացության:

Թեոս ախպոր սրճատունը քաղաքի առաջնակարգ սրճատներից մեկն էր: Նրա պահողը, երկար տարիներ Կ. Պոլսում մնալով, մտցրել էր իր սրճատան մեջ մի քանի մայրաքաղաքյան կարգեր, բայց այնուամենայնիվ, նրա սրճատունը պահպանել էր իր գավառական բնավորությունը: Այստեղ ամեն ինչ պատրաստվում էր, ամեն ինչ կատարվում էր այցելվի աչքի առջև: Նրա աչքի առջև եփում էին ղահվեն, և շերեփի նման երկար սրճամանի պոչից բռնած, բերում էին և հենց պահանջողի մոտ լցնում էին փոքրիկ ֆինջանի մեջ և մատուցանում էին նրան: Այդ երկար, պոչավոր սրճամանները զանազան մեծություն ունեին: Նրանցից ամենափոքրիկը մի մատնոցի չափ հազիվ կլիներ, իսկ նրա համեմատ ֆինջանը իր մեծությամբ շատ չէր տարբերվում սրճամանից, այնպես որ, միանգամից եփածը նա կարող էր ամբողջությամբ իր մեջ առնել և մի մարդու պահանջին բավականություն տալ: Բայց այդ պահանջները կրկնվում էին ամեն րոպեում մի քանի անգամ: «Ղահվե մը»,— գոչում էր պահանջողը»:— «Շաքարո՞վ, թե անշաքա՞ր» — հարցնում էր պատրաստողը, և երբ հյուրի կամքը իմանում էր, իսկույն մի քանի կաթիլ ջուր էր ածում մատնոցի՝ այսինքն սրճամանի մեջ բռնում էր մանղալի վրա, հետո սղկած ղահվեն ածում էր նրա մեջ, սև հեղուկը արդեն պատրաստ էր, մատուցանում էր պահանջողին, իսկ հաշիվը պահելու համար՝ ածուխով մի սև գիծ էր քաշում պատի վրա: Այդ գծերից՝ ամեն մեկի անունով՝ կարելի էր համարել հարյուրներով, այն ևս մի քանի ժամվա մեջ: Նարգիլեն ծխում էին և անդադար ձայն էին տալիս «ղահվե մը»…

Թեոս ախպոր սրճատունը բավականություն էր տալիս իր հաճախորդների և այլ պահանջներին: Ահա այնտեղ, մի կողմում, շատախոս սափրիչը զերծել, վերջացրել է մի թուրք էֆենդիի գլուխը և երեսը, այժմ, նրա առջևը չոքած, սկսել է իր փոքրիկ մաղաշով ականջի մազերը դուրս տալ, և այդ ձանձրալի աշխատությունը հեշտացնելու համար, պատմում է նրան օրվա զանազան նորություններ, պատմում է նրան զանազան սիրային արկածներ «չոջուխների» կյանքից:

Սափրիչի օգնականը այդ միջոցին զբաղված էր մի այլ, ավելի կոպիտ գործողությամբ. նա պատրաստվում էր դուրս քաշել մեկի ատամը. հիվանդին, մի դատապարտյալի նման, չոքեցրել էին նրա առջև, մի մարդ ետևից կանգնած, բռնել էր հիվանդի գլուխը, մի այլ մարդ բռնել էր նրա ձեռքերը, սափրիչի օգնականը, ահագին աքցանը ձեռքին, մի կառափնահատ դահճի նման, մոտեցավ իր զոհին և աքցանի գլուխը տարավ նրա բերանը, մի քանի զորեղ ցնցումներ, մի քանի խուլ հառաչանքներ,— գործողությունը վերջացավ, աքցանը երկու արյունաթաթախ ատամներ ուներ բռնած իր բերանում…

— Կեցցե՛ս,— ձայն տվին նայողները,— մեկի փոխարեն երկուսը հանեցիր…

— Քո տունը քանդվի՛,— ձայն տվեց հիվանդը,— ցավեցած ատամը մնաց իր տեղում…

Բոլորը ծիծաղեցին:

Ուր և նայում էի, մի նոր տեսարան գրավում էր ինձ. ահա այնտեղ ժողովրդի երաժիշտները խումբով հատակի վրա նստած, ածում են իրանց նահապետական նվագարանները, մի աշուղ ոգևորությամբ պատմում է իր երգախառն վեպը, շրջապատողները խորին հիացմունքով լսում են նրան:

Փոքր-ինչ հեռու, ջերմեռանդ մահմեդականը, իր լվացման ծեսը վերջացնելով, նույնիսկ քարյա փոքրիկ ավազանի մեջ, որտեղ նարգիլեների ջուրն էին փոխում, այժմ բարձրացել էր տախտակյա բազմոցի վրա, և բոլոր բազմության առջև, չոքելով, կանգնելով, և զանազան ձևով կուզուպարզ անելով, կատարում էր իր նամազը:

Այստեղ ավելի ուշադրություն էին գրավում մի տեսակ անձինք, որոնց կոչում էին «թիրիաքիներ». դրանց իսկույն կարելի է ճանաչել. ծալապատիկ նստած են ավելի խուլ և մթին անկյուններում, և ծուլանում են նայել, թե ինչ է կատարվում իրանց շուրջը: Գլուխները քարշ ձգած, նարգիլեի ծխաքարշը ատամների մեջ պինդ բռնած, աչքերը կիսախուփ, կարծես թե նիրհում են նրանք: Ծխի ներկայությունը միայն, որ երբեմն դուրս է հոսում նրանց շրթունքների միջից, ցույց է տալիս, որ այդ թմրած, անշարժ էակները արթուն են: Դրանք վաղ առավոտյան, իրանց տներից դուրս եկածին պես, իսկույն դիմում են սրճատունը. այստեղ լվացվում, այստեղ սանդրվում, այստեղ կատարում են իրանց առավոտյան աղոթքը և այստեղ դուրս են բերում իրանց նախորդ օրվա «խումարությունից»: Սրճատան սպասավորները ծանոթ են նրանց յուրաքանչյուրի սովորություններին, և մեծ պատրաստակամությամբ կատարում են նրանց բոլոր քմահաճությունները: Ամբողջ օրը, իրանց տեղում անշարժ նստած, այդ ողորմելի մարդիկը գրգռում են իրանց ուղեղը դառն ղահվեով, թամբաքուի ծուխով և ափիոնի փոքրիկ դեղահատներով: Այդ մարդիկը ապուշի դեմք ունեն, ապակու նման սառն և անշարժ աչքեր և դողդոջուն ձեռքեր:

Հենց նույն ապուշների մոտ Ավետարանի լույսը ծավալող միսիոնարի գործակալը բաց է արել Աստվածաշունչը և զբաղված է կրոնական վիճաբանություններով: Մի քանի հարցասերներ շրջապատել են նրան, լսում են, վիճում են և հայհոյում են:

Իսկ իմ ուշադրությունը գրավեցին երեք հոգի, որ հեռու նստած էին մի բոլորակ սեղանի շուրջը, որի վրա դրած էր մի շիշ օղի: Նրանցից մեկը միջահասակ երիտասարդ էր և իր հագուստի ձևերով ավելի նման էր Մուսուլի կամ Բաղդադի կողմերի հայերին: Նա փաթաթված էր սև և սպիտակ զոլերով երկար աբայի (վերարկվի) մեջ, որի նմանը կրում են Հիջազի ուխտավորները: Գլխի արաբական ապարոշը իր ծոպավոր վերջավորություններով ծածկում էր նրա ուսերը, իսկ ճակատը, հոնքերը և մինչև անգամ աչքերը հազիվ էին երևում մետաքսյա գույնզգույն փաթոթի տակից, որը կապել էր իր գլխին: Ես իսկույն մտածեցի, թե դա այն մուսուլցի վաճառականը պետք է լիներ, որի հետ տեսնվելու համար եկած էր Ասլանը: Իսկ մուսուլցու երկու խոսակիցները ինձ ավելի օտարոտի մարդիկ էին երևում. այդ ցույց էր տալիս նրանց հնամաշ կիսաեվրոպական և կիսաասիական հագուստը, որ սաստիկ աչքի էր զարկում: Շատ հավանական էր, որ այդ մարդիկ երկար թափառել էին այն երկրներում, որտեղ նեղ վարտիք, լայնեզրյա գլխարկ և սերթուկ են հագնում, իսկ հետո, վերադառնալով Ասիա, եվրոպական հագուստի միայն կտորտանքներ էր մնացել նրանց վրա:

— Ո՞վ է այն երիտասարդը,— հարցրի ես Թեոս ախպորից, ցույց տալով մուսուլցուն:

— Նա խոջա Թորոսն է, մուսուլցի է, այստեղ թումաջի վաճառականություն է անում,— հանգամանորեն պատասխանեց Թեոս ախպերը:

— Իսկ այս մյուս երկո՞ւսը, որ մուսուլցու մոտ նստած են:

— Նրանց չեմ ճանաչում, նոր մարդիկ են:

Թեոս ախպերը հեռացավ: Ես այժմ ավելի ուշադրությամբ սկսեցի հեռվից զննել թումաջի վաճառականին: Սրճատան անտանելի տաքության պատճառով, երեսից ետ էր քաշել գլխի արաբական ծոպավոր ծածկոցը, և ճակատը մինչև կեսը մնացել էր բաց: Նրա դեմքը, կաշու գույնը, երեսի գծագրությունը ամենևին չէր նմանում Միջագետքի արևակեզ բնակչի կերպարանքին, իսկ շիլ, արագաշարժ աչքերը ինձ շատ ծանոթ էին երևում: Նա այն աստիճան զբաղված էր իր խոսակիցներով, որ ամենևին ուշադրություն չէր դարձնում իմ վրա, կամ եթե տեսնում էր ինձ, այնպես էր ձևացնում, որ չէ նկատում: Ես մոտեցա և ետևից ձեռքս կամաց դրեցի նրա ուսի վրա: Նա ետ նայեց և աչքերի արագ շարժումով այնպիսի մի նշան արեց, որ ես շփոթվեցա և ակամա լռեցի: Նա իսկույն դուրս բերեց ինձ իմ շփոթությունից, իր մոտ տեղ ցույց տալով:

— Խնդրեմ, նստեցեք, պարոն, երևում է, որ դուք ևս մեզ նման օտարական եք: Պանդուխտները ավելի հեշտությամբ են մոտենում միմյանց: Մեր շիշի մեջ դեռ մնացել է մի քանի ֆինջան օղի,— նա ձեռքը տարավ, վեր առեց շիշը, շարժեց, տեսնելու, ճշմարի՞տ է իր ասածը, թե ոչ:

Ո՞վ կարող էր երևակայել, որ ես այստեղ, այս խառնաշփոթ բազմության մեջ, մուսուլցի կաշեվաճառի կերպարանքով կգտնեի մեր ընկեր Սագոյին:— Խոջա Թորոսը,— այսպես էին այժմ կոչում նրան: Ո՛րքան հարմարվում էր նրան այդ անունը, այդ արաբական զգեստը, այդ լիահնչուն, կոկորդային ձայնը, այդ լուրջ խոսակցությունը երկու անծանոթների հետ:

Ես այնքան սովորած էի Սագոյի ծաղրածուներին, նրա կծու հեգնությանը, նրա թեթև ստախոսություններին, որ առանց նրանից մի բառ անգամ լսելու, բավական էր նրա երեսին նայել միայն, ես այլևս չէի կարող զսպել իմ ծիծաղը: Իսկ նրա այժմյան կերպարանափոխությունը, իր օտարոտի ձևերով, ավելի շատ առիթներ ուներ իմ ծիծաղը շարժելու. բայց ես, չգիտեմ ինչո՞ւ, այնպես լռվեցա, ինչո՞ւ այնպես համեստ գտնվեցա նրա առջև:

Նա մի քանի խոսքով հարցրեց իմ ով և ո՛րտեղից լինելը և ինչ գործով Վան քաղաքը գալը, հետո լցրեց մի ֆինջան օղի և դրեց իմ առջև:

— Ես օղի խմելու սովորություն չունեմ,— ասեցի նրան:

— Ձեզ համար գինի կպատվիրեմ,— ասաց նա, հրամայեց սպասավորին մի շիշ գինի բերել:

Հետո ծանոթացրեց ինձ իր երկու խոսակիցների հետ: Երևաց, որ այդ աղքատ երիտասարդները, իրանց նման՝ նյութապես աղքատ, բայց բարոյապես հարուստ մի ընկերության գործակատարներ էին, որ ուղարկված էին Խարբերդի, Սղերդի և Դերսիմի կողմերը, տեղային քրդախոս հայերի մեջ մայրենի լեզու տարածելու և հայոց տառերով գրել-կարդալ սովորեցնելու: Ընկերությունը կազմված էր Կ. Պոլսում և միմիայն գրագիտություն տարածելու նպատակ ուներ: Չնայելով այդ համեստ և անմեղ նպատակին, ընկերության գործակատարները տեղային բողոքական քարոզիչներից ամբաստանվում են, և կառավարության կողմից հալածվում են, իբրև ժողովրդի մեջ վնասակար մտքեր տարածող խռովարարներ: Թողնելու իրանց

գործունեության տեղը, նրանք եկել էին Վան, և այստեղից Կ. Պոլիս վերադառնալու նպատակ ունեին, առանց գրպանում մի փարա անգամ ստակ ունենալու:

— Նայեցե՛ք այդ մարդուն,— շարունակեց երկու երիտասարդներից մեկը ընդհատված խոսակցությունը, ձեռքը մեկնելով դեպի Ավետարանի լույսը ծավալող օտարազգի քարոզչի գործակատարը, որ Աստվածաշունչը առջևը դրած, դեռ զբաղված էր կրոնական վիճաբանություններով:— Ես հավաստի եմ, որ այդ անպիտանը ոչինչ զարգացում, ոչինչ կրթություն չունի, և իբրև մարդ անգամ, նա այնքան ստոր գնահատել գիտե իր աշխատանքը, որ ամսական հարյուր ղուրուշի (6 ռուբլի) վարձկան է: Այդ չնչին փողի համար նա ամեն օր կմտնե սրճատները, կմտնե սափրիչների խանութները, կմտնե բաղնիքների նախագավիթները, մի խոսքով ամեն տեղ, որտեղ մարդիկ ավելի գործ չունեն, և կսկսե նրանց հետ վիճել: Նա սեփական համոզմունք և հավատ չունի. նա մի տեսակ փաստաբան է, որ պաշտպանում է այն գործը, որի համար նրան վճարում են: Ազգային իդեալ, ազգային պատմություն, հայրենիք, ժողովրդի դժբախտ դրություն,— այդ բաները նրա համար չկան, և նրան չեն հետաքրքրում: Նա գիտե միայն, որ պաս պահելը, տերտերին խոստովանվելը, պատկերներին երկրպագություն տալը՝ չի փրկի մարդու հոգին մեղքերից և կսկսե դրանց և այսպիսի եկեղեցական կանոնների դեմ վիճել: Անցիր ամբողջ Փոքր Ասիա, ամեն տեղ, ամեն փողոցներում կհանդիպես այս տեսակ շաղակրատների: Իհարկե, ավելորդ կլիներ խոսել նրանց ժողովարանների, դպրոցների և քարոզիչների մասին, որոնք իրանց բնավորությամբ շատ չեն տարբերվում այդ գռեհիկ, տգետ, հարյուր ղուրուշանոց լույս ծավալողներից:

Սագոն լռությամբ լսում էր. ինձ ևս հետաքրքրում էր դառնացած երիտասարդը, որը, ինչպես երևում էր, սաստիկ վշտացած էր ոչ այնքան օտարազգի քարոզիչներից, որքան նրանց ձեռքում գործիք դարձած, կույր, մոլեռանդ և դատարկամիտ հայ գործակատարներից:

— Ես կրոնի և ազգային եկեղեցու պաշտպան չեմ,— առաջ տարավ երիտասարդը,— բայց դարձյալ կասեմ, որ այդ մարդիկ ավելի վնասակար են, քան թե քուրդը կամ տաճիկը: Քուրդը և տաճիկը հափշտակում են հայերից նրանց ձեռքի վաստակը, իսկ այդ կորուստը կարելի է աշխատանքով կրկին լրացնել: Բայց քարոզիչները, այդ հոգևոր հարստահարիչները, Ավետարանի ճշմարտության անունով սպանում են *ազգայնությունը*. դա անփոխարինելի է:

— Ի՞նչպես,— հարցրեց Սագոն, լցնելով իմ բաժակը գինիով, իսկ իր երկու խոսակիցների ֆինջանները՝ օղիով:

— Այնպես,— պատասխանեց երիտասարդը, վառելով իր կարճ ճանապարհորդական ծխաքարշը և թողնելով մուխի թեթև կույտեր իր դողդոջուն շրթունքների միջից, որ դեռ նոր էին սևանում նորաբույս մազերով:— Օրինակի համար, վեր առնենք հենց այն երկրները, ուր մենք գործում էինք և որտեղից մեզ հալածեցին. այդ կողմերում հայերը կորցրել են իրանց մայրենի լեզուն և խոսում են քրդերեն, կորցրել են իրանց ազգային այլ առանձնահատկությունները և ապրում են քրդական սովորություններով, մի խոսքով, ոչնչով չեն տարբերվում քրդերից: Մնում է մի հոդ միայն, որ նրանց կապում է ազգային ամբողջության հետ և նրանց հիշեցնում է, թե իրանք հայեր են,— այդ հոդը Հայաստանյաց եկեղեցին է: Իսկ եթե եկեղեցիից ևս կտրվեցան, այլևս ի՞նչ կապ կմնա նրանց և հայության մեջ:

— Ոչինչ կապ չի մնա,— պատասխանեց Սագոն այնպիսի մի եղանակով, որ կարծես շտապում էր լսել երիտասարդի վերջին խոսքը:

— Ահա այդ վնասն են հասցնում բողոքական քարոզիչները, ահա դրանով են սպանում նրանք ազգայնությունը,— շարունակեց նա փոքր-ինչ տաքացած կերպով,— հային խլելով իր ազգային եկեղեցու գրկից, դարձնում են նրան բողոքական քուրդ, և ավելի ոչինչ:

— Դրանում ի՞նչ զարմանալի բան կա,— հարցրեց Սագոն, գլուխը վեր բարձրացնելով և ուղիղ երիտասարդի երեսին նայելով:— Դուք մի րոպե առաջ ասեցիք, թե տեղային հայերը կորցրել են իրանց մայրենի լեզուն, խոսում են քրդերեն, կորցրել են իրանց ազգային առանձնահատկությունները և ապրում են քրդական սովորություններով,— այլևս ի՞նչ իրավունքով դուք նրանց հայեր եք կոչում: Նրա համա՞ր միայն, որ պատկանում են լուսավորչական եկեղեցուն: Հենց դրա մեջն է սխալը, որ ձեզ սխալ եզրակացության է հասցնում: Այն օրից, որ նրանք դադարեցին հայերեն խոսելուց, դադարեցին և հայ լինելուց: Նրանք դարձան լուսավորչական քրդեր: Շատ հասկանալի է, որ լուսավորչական եկեղեցիից դուրս գալով և մտնելով բողոքական եկեղեցին, կդառնան բողոքական քրդեր, և եթե բողոքական եկեղեցին նույնպես թողնեն և մտնեն, օրինակ, բուդդայական եկեղեցին, կդառնան բուդդայական քրդեր:

Երկու երիտասարդները զարմացած կերպով նայեցին միմյանց երեսին: Սագոն շարունակեց.

— Նույն բանը պատահեց և հարավային Միջագետքի այսինքն Մերդինի, Մուսուլի և Բաղդադի կողմերի արաբախոս հայերի հետ: Նրանք ևս կորցրել էին մայրենի լեզուն, ապրում էին արաբական սովորություններով, խոսում էին արաբերեն և իրանց հայ էին համարում նրանով միայն, որ պատկանում էին լուսավորչական եկեղեցուն: Երբ կաթոլիկությունը նրանց մեջ մտավ, դադարեցին իրանց հայ կոչել և դարձան կաթոլիկ արաբներ: Ոմանք նրանցից քիլդաներեն էին խոսում, կաթոլիկությունը ընդունելուց հետո, խառնվեցան քիլդանի կաթոլիկների հետ:

Խոսակցությունը տևեց բավական երկար. առարկան շատ մոտ էր որպես երկու երիտասարդների սրտին, նույնպես և Սագոյի համար: Բացի դրանից, կրոնափոխությունը դարձել էր հայերի համար մի ընդհանուր, հասարակական հարց: Օտարազգի քարոզիչները, կաթոլիկ, բողոքական, եզվիտ, ամեն կողմից մուտք էին գործել հայերի մեջ, տարածվել էին զանազան քաղաքներում և գյուղերում: Դպրոցներ և ժողովարաններ էին հիմնում: Ժողովուրդը ընդհանուր խմորման մեջ էր: Ոմանք դրամի համար, որ քարոզիչները բաշխում էին իրանց նոր հավատացյալներին, ոմանք մահմեդականների հարստահարության դեմ պաշտպանություն գտնելու համար, որ խոստանում էին քարոզիչները, ոմանք զզված լինելով հայ քահանաների, հայ կղերի ագահությունից, իսկ խիստ սակավները, ճշմարիտ համոզմունքով, թողնում էին հայոց եկեղեցին և մտնում բողոքական և կաթոլիկ եկեղեցու գիրկը: Հայ ժողովուրդը բաժան-բաժան էր լինում, ամեն տեղ պատահում էին կռիվներ, խռովություններ և մշտական երկպառակություն: Գործերի այդ դրության մեջ, անկարելի էր լինում, որ մտածող անձինքերի ուշադրությունը չգրավեր այդ աղետավոր երևույթը, որ սպառնում էր հայոց ամբողջության քայքայմանը, մանավանդ մի այնպիսի ժամանակում, երբ օտարների բռնության դեմ մաքառելու համար հարկավոր էր ընդհանուր միաբանություն, հարկավոր էր միություն և սեր: Բայց Ավետարանի սերը և եղբայրությունը քարոզող միսիոներները ատելություն և թշնամություն էին սերմանում երկու հայ եղբայրների մեջ:

— Միսիոները ազգ չէ ճանաչում,— շարունակեց Սագոն,— նա մտնում է մի ժողովրդի մեջ, տեսնում է՝ ինչ լեզվով որ խոսում է ժողովուրդը, և ինչ լեզվով որ նրան ավելի հասկանալի է, սկսում է նույն լեզվով քարոզել նրան, նույն լեզվով կարդացնում է նրա զավակներին իր դպրոցների մեջ: Եթե մի տեղ հայը քրդերեն է խոսում, նա կսկսե նրան քրդերեն քարոզել, եթե թուրքերեն է խոսում, կսկսե թուրքերեն քարոզել:

Նրան ի՞նչ փույթ, որ այդ լեզուները հայոց մայրենի լեզուն չեն: Նա երբեք հանձն չի առնի մի այդպիսի դժվարություն, որ նախ հային իր կորցրած մայրենի լեզուն սովորացնե, և հետո սկսե նույն լեզվով քարոզել նրան: Եվ ձեր ընկերության աշխատությունը այդ կողմից շատ օգտակար պետք է համարել, որ հանձն է առել մայրենի լեզուն տարածել քրդախոս հայերի մեջ: Դա ավելի ուղիղ ճանապարհ է նրանց հայացնելու և հայության մեջ պահելու համար: Լեզվի հետ կապված է ազգի գրականությունը, նրա անցյալը, նրա պատմական կյանքը, նրա բոլոր մտավոր և հոգեկան արտահայտությունները դարերի ընթացքում,— նրա ամբողջ գոյությունը,— այդ է, որ կապում է մի անհատին իր ազգային ամբողջության հետ: Իսկ եկեղեցին, ինչպես տեսաք իմ բերած օրինակներից հարավային Միջագետքի հայերի վերաբերությամբ, շատ թույլ կապ է հային իր ազգության հետ կապելու համար, եթե նա կորցրել է մյուս ավելի հաստատուն հիմունքները ազգայնության:

Ես Սագոյի մեջ այժմ ուրիշ մարդ, ուրիշ լեզու էի տեսնում. նա այն չէր, որ առաջին անգամ հանդիպեց ինձ արաբական մինարեթում և ոչ այն զվարճասեր խեղկատակն էր, որ ձանձրացնում էր ինձ որսորդի տան մեջ: Նրա մեջ խոսում էր Ասլանի լեզուն: Ես զարմանում էի, որքան նման էին այդ երիտասարդները միմյանց թե՛ իրանց ձգտումներով և թե՛ գաղափարներով:

– Ես համաձայն եմ ձեզ հետ,– ասաց մյուս երիտասարդը, որ բոլոր ժամանակ լուռ էր:– Բայց օտարազգի քարոզիչները այդ բոլոր վնասները չէին կարող տալ մեզ, եթե մենք ունենայինք օրինավոր եկեղեցականներ: Եթե գայլը հոտից ոչխարներ է գողանում, դա ապացույց է, որ հովիվներն ու շները անպիտան են: Մեր քահանաները տգետ են և անկիրթ, իսկ մեր վարդապետները, իրանց վանքերի մեջ առանձնացած, ճգնում են, աղոթում են, կարծելով թե դրանով մեծ ծառայություն են անում ազգին:

Այդ միջոցին մեր սեղանի մոտից անցավ մի մարդ, և խոսակցությունը իսկույն դադարեց: Նույն ներգործությունն էր անում նա, ինչ խմբի որ մոտենում էր: Եվ եթե նստում էր այս և այն սեղանի մոտ, մարդիկ սկսում էին աննկատելի կերպով հետզհետե հեռանալ նրանից:

– Այդ մարդը մի հայտնի լրտես է,– ասաց Սագոն, ցույց տալով նրան:

– Ի՞նչ ազգից է,– հարցրի ես:

– Հայ է և, բացի հայ լինելը, «էֆենդի» է, բազմաթիվ տիտղոսներ ունի:

– Եվ մատնում է հայերի՞ն:

– Էլ ո՞ւմը պետք է մատնե…

«Էֆենդին» գնաց, նստեց մի խումբ երիտասարդների մոտ, որովհետև ինքն ևս նրանց հասակակից էր: Հրամայեց իր հաշվով գինի տան:

– Ես պատրաստ եմ գրավ բռնել,– ասաց Սագոն,– որ այդ անպիտանը հիմա կսկսե ազգասիրական ճառեր կարդալ և գուցե կսկսե երգել իր հորինած ոտանավորներից մեկը, որի մեջ անդադար կրկնվում է «ո՛հ, Հայաստան» բառերը:

Բայց դրանցից և ոչ մեկը չկատարվեցավ, որովհետև գիշերից շատ անցել էր, սրճատան հաճախորդները սկսել էին հետզհետե հեռանալ, և Թեոս ախպերը պատրաստվում էր ճրագները հանգցնել: Աղմկալի դահլիճը մի քանի րոպեի մեջ դատարկվեցավ: Երբ Թեոս ախպերը վերջին երկու ճրագը հանգցնելու վրա էր, երկու երիտասարդները վեր կացան, բարի գիշեր ասացին ինձ և Սագոյին, և հեռացան

դեպի սրճատան մթին մի անկյունը: Այնտեղ այնպես բաց, առանց ծածկոցի, պառկեցին նրանք տախտակյա մերկ նստարանների վրա, իրանց ուղևորության պարկերը բարձի փոխարեն գլխների տակը դնելով: Թեոս ախպերը այնքան բարի գտնվեցավ, որ դուրս չվռնդեց նրանց փողոցը, ասելով թե իր սրճատունը գիշերելու տեղ չէ: Ես խիստ տխուր տրամադրության մեջ բաժանվեցա նրանցից: «Խեղճ երիտասարդներ, մտածում էի ես, այդպես անտուն, անտեր, աղքատ, որպես մի ողորմելի մուրացկան, թափառում եք երկրե-երկիր, մի ընկած ժողովրդի օգնելու անձնվիրությամբ… Դուք պետք է մրցություն անեք օտարազգի միսիոնարի հետ, որ հայտնվում է կառքերով, ապրում է շքեղ պալատներում, և ոսկին սփռում է, ինչպես փոշի, որ բոլորի աչքերը կուրացնում է… Բայց մի բան կա ձեր մեջ, որ բարձր և հզոր է, քան այն բոլոր փառքը և զորությունը, որ վայելում է օտարազգին,— դա այն մեծ սերն է, որ ունեք դուք դեպի ձեր հանձն առած գործը»:

Երբ ես մտա այն սենյակը, որտեղ թողեցի Ասլանին, Սագոյին նրա մոտ գտա: Երևում էր, որ Սագոն սրճատնից դուրս գալուց հետո, երևի դռնից մտել էր նրա մոտ: Բայց ո՞վ ասաց նրան, որ Ասլանը այնտեղ է…

ԺԵ

ՎԱՐԱԳ

Մեզ մնում էր տեսնել Վարագա վանքը, այնուհետև մեր հետազոտությունները Վանա շրջակայքում պետք էր վերջացած համարել:

Գեղեցիկ պայծառ առավոտ էր, երբ ես և Ասլանը ձի նստած, դուրս եկանք Այգեստանի ծառազարդ փողոցներից և ողևորվեցանք դեպի վանքը: Մեր առջևն էր Վարագա սարը իր սքանչելի տեսարաններով: Արևը դեռ նոր էր սկսել ծագել, նա կամաց-կամաց վեր էր համբառնում Վարագա լեռնագագաթի ճիշտ այն ամենաբարձր կետից, որ կոչվում է Գալիլիա: Ես առաջին անգամն էի տեսնում արևի մի այնպիսի հրաշալի ծագումը: Ինձ այնպես էր թվում, որ տվնջյան լուսատուն գիշերը հանգչել էր Գալիլիայի գագաթի վրա, միևնույն նվիրական այրերի մեջ, որտեղ մի ժամանակ պատսպարված էր Հռիփսիմեն իր ընկերուհիների հետ, իսկ այժմ լուսաճաճանչ պայծառությամբ դուրս էր գալիս իր հանգստարանից՝ լուսավորելու հայոց աշխարհը: Նույն այրերի մեջ ճգնում էր երանելի կույսը, նույն այրերից դուրս եկավ և նա և, որպես մի պայծառ լույս, ուղևորվեցավ դեպի Արարատ, կատարելու այն մեծ բարոյական պատերազմը հայոց հեթանոս թագավորի և հեթանոսական խավարի հետ, որի արդյունքը եղավ քրիստոնեության մուտքը Հայաստանում: Նույն այրերի մեջ թաքցրեց նա կենսատու փայտի ս. Նշանը, որ ամփոփված էր մի փոքրիկ խաչի մեջ և որը նրա կուրծքի ու պարանոցի աստվածային զարդն էր կազմում: Ամբողջ չորս դար հրաշալի սուրբ նշանը մնաց այնտեղ անհայտության մեջ, մինչև Թոդիկ ճգնավորի մշտական աղոթքով հայտնվեցավ նա և, արեգակի լուսափայլ պայծառությամբ, Վարագա լեռնագագաթի բարձրությունից թռչելով, իջավ նրա լանջաց վրա, և որպես մի ժամանակ զարդարում էր Հռիփսիմեի կուրծքը, այնուհետև դարձավ Վարագա լեռան կրծքի երկնային զարդը: Միևնույն տեղում հիմնվեցան տաճարներ, որ սուրբ նշանի անունով կոչվեցան Ս. Խաչ:— Այդ տաճարներն էին, որ բոլորը միասին ներկայացնում էին Վարագա վանքը, ուր այն առավոտ ես և Ասլանը գնում էինք:

Արևը բարձրացավ: Նրա ճառագայթները հրեղեն շառավիղների նման տարածվեցան Վանա շրջակայքը, տարածվեցան ծովակի մանիշակագույն մակերևույթի վրա և լուսավորեցին առավոտյան մռայլի մեջ ծածկված հեռավոր լեռները: Ինձ տիրում էր

խորին հոգեզմայլություն: Արևի ծագումը զարթեցնում էր իմ սրտում այդ նվիրական վայրերի և այդ սրբազան լեռների վաղեմի հիշատակները: Կարծես դարերը ետ-ետ էին գնում, և հին ավանդությունը կենդանանում էր, կերպարանք էր ստանում իմ աչքի առջև: Կարծես կրկին երևում էր ինձ Թոդիկ ճգնավորի սքանչելի տեսիլքը: Կենսատու ս. Նշանը թռչելով ցած է իջնում Վարագա լեռնագագաթի բարձրությունից, և նրանից ցոլանում են տասներկու լուսեղեն սյուներ, որոնք հանգչում են տասներկու տեղերի վրա: Հրեղեն սյուները այնքան ժամանակ մնում են այնպես կանգնած, մինչև երկրի իշխանները և ժողովուրդը տեսնում են նրանց: Հետո բարեպաշտ ժողովուրդը, միացած իր իշխանների հետ, կառուցանում են տասներկու տաճարներ միևնույն տեղերի վրա, ուր իջել էին լուսեղեն սյուները: Նրանցից երկուսը իջել էին այն տեղում, ուր շինվեցան Ս. Գրիգոր և Կարմրավոր վանքերը: Երեքը իջել էին Վերին Վարագում, որ և կոչվում է Գալիլիա: Իսկ յոթը՝ Ներքին Վարագում: Այդ յոթն տաճարներից բաղկացած եկեղեցիների խումբը, որոնց յուրաքանչյուրը առանձին-առանձին անուններ ունի, բոլորը միասին սարի անունով կոչվում են Վարագա վանք:

Այն օրից, որ հայտնվեցավ ս. Նշանը, հայոց եկեղեցին նրա համար տոն սահմանեց, որ կատարվում է մինչև մեր օրերը: Այն օրից, որ հայտնվեցավ ս. Նշանը, Վարագը դարձավ հայոց լեռների սուրբ Սիոնը: Նրա գագաթը, նրա կուրծքը, նրա ստորոտները ծածկվեցան վանքերով, և կրոնավորների բազմությունը լցրեց այդ վանքերը: Երկար տարիներ հիշյալ սուրբ Նշանը պահվում էր Վարագա վանքում, և ամեն կողմից ուխտավորների բազմությունը դիմում էր այնտեղ երկրպագության համար: Երկրի թե՛ հարուստը, թե՛ աղքատը թափում էր այնտեղ իր արծաթն ու ոսկին, նվիրում էր իր կյանքն ու կալվածքները ս. Նշանի սպասավորներին, որպեսզի Վասպուրականի այդ հռչակավոր սրբավայրը միշտ շեն ու պայծառ մնա: Աբեղաները այնտեղ վայելում էին ժողովրդի բարեպաշտության պտուղները և աղոթում էին աշխարհի համար:

Գագիկ Արծրունին ծախսեց իր գանձերից ահագին գումար և շինել տվեց հիշյալ ս. Նշանի համար մի ոսկյա տուփ և պահարան: Իսկ Աշոտ արքայորդին ծախսեց երեսուն հազար ոսկի և զարդարեց նրա պահարանը մարգարիտներով և թանկագին քարերով: Երբ Արծրունիների վերջին թագավոր Սենեքերիմը, իր ամբողջ պետությունը տալով հունաց կայսրին, ինքը տեղափոխվեցավ Սեբաստիա, նա իր թագավորությունից հոժարվեցավ զրկվել, բայց ս. Նշանը տարավ իր հետ: Իսկ հետո դժբախտ թագավորի մարմնի հետ կրկին փոխադրվեցավ Վարագ: Այնուհետև այդ թանկագին սրբությունը դարձավ զանազան բռնակալների ագահության առարկա: 1651 թվին Խոշաբ բերդին տիրող քուրդ Սուլեյման բեկը՝ Չոմար կոչված ավազակապետի առաջնորդությամբ եկավ, կողոպտեց Վարագա վանքի հարստությունները և ս. Նշանը գերի տարավ իր բերդը: Բարեպաշտ ժողովրդի առատաձեռնության դարևոր արդյունքները մի քանի օրվա մեջ ոչնչացան: Չորս տարի ս. Նշանը մնաց գերության մեջ: Իսկ Վանա հասարակությունը այդ չորս տարվա ընթացքում սուգ էր կատարում: Քանիցս անգամ պատգամավորներ ուղարկվեցան և մեծ փրկանքներ առաջարկվեցան, մինչև, վերջապես, կարողացան գերությունից ազատել իրանց աշխարհի սրբությունը:

Մենք այժմ բարձրանում էինք Վարագա լեռան զառիվերը: Մինչև մի որոշ գիծ՝ այդ սարը կանաչազարդ էր. տեղ-տեղ երևում են թուփեր ու պուրակներ, տեղ-տեղ պատած է խոտավետ մարգերով, շատ տեղերում ևս լեռան կողքերը ծածկված են հասունացած գարիի կամ ցորյանի ոսկեգույն արտերով: Հնձվորը գործում է, մանգաղը փայլում է, և աշխատասեր մշակի թախծալի երգը հնչեցնում է հսկա լեռան սրբազան վայրերը:

Արևը սկսել է այրել, չնայելով, որ դեռ առավոտ է: Հովիվը իր թաղիքյա վերարկուն (քափանակ) ձգելով ցուպի գլխին, նրան ամպահովանիի ձև է տվել և արևի կիզող ճառագայթներից պատսպարվելու համար նստել է նրա ստվերի ներքո: Նրա շուրջը, սփռված խոտավետ արոտամարգերի մեջ, արածում են ոչխարները, մի ժայռից դեպի մյուսը թռչկոտում են այծերը, իսկ աչալուրջ շները հեռվից հսկում են այդ միամիտ անասունների անհոգ զվարճությունների վրա, որ կարող է մի ակնթարթում սուգի փոխվել…

Կանաչազարդ գծից դեպի վեր, մինչև գագաթը, Վարագա լեռը մերկ է և բաղկացած է անմատչելի, թխագույն-կարմիր ժայռերից: Այդ բարձրությունների վրա խիստ հազիվ անգամ դիպել է մարդու ոտքը: Երբեմն սրաթռիչ կաքավները միայն խմբովին թռչում են մի ապառաժից դեպի մյուսը, կամ սևափետուր արծիվը, որպես մի սգավոր և սևազգեստ ոգի, միայնակ նստած Գալիլիայի ժայռերից մեկի վրա, վերևից տխրությամբ նայում է դեպի ցած, դեպի Արծրունիների ավերակ պալատների բեկորները, այն Արծրունիների, որոնք այնքան շատ դարեր խնամել ու փայփայել էին նրան…

Վարագա լեռը Վանա հովտի շտեմարանն է. այստեղից են վազում ջրերի այն բազմաթիվ վտակները, որոնք ոռոգում են Այգեստանի ընդարձակ այգիները և ջուր են մատակարարում շատ գյուղերի, որոնք սփռված են լեռան ստորոտներում:

Վանքին դեռ ոչ բոլորովին մոտեցած, ճանապարհի մի կողմում տեսանք մի խումբ մարդիկ: Այստեղ, որպես երևում էր, երկրագործական մի նոր փորձ էին անում, վարում էին մի գութան, որը թե՛ իր ձևով և թե՛ տեսակով ամենևին նման չէր տեղական ծանր, անշարժ գութաններին: Գութանի մաճը բռնած՝ կառավարում էր մի բարձրահասակ անձնավորություն, որի հագուստից երևում էր, որ աշխարհական չէ: Նա ցույց էր տալիս վանքի անփորձ մաճկալներին նորաձև գութանի բանեցնելու եղանակը: Մյուսները հետաքրքրությամբ նայում էին: Մենք, երկրի սովորության համեմատ, «բարի աջողումն» ասելով անցանք: Տեսնելով, որ մենք դեպի վանքն ենք գնում, նրանցից մեկը խումբից բաժանվեցավ, եկավ մեզ հետ: Դա մի երիտասարդ աբեղա էր, որ առաջարկեց առաջնորդել մեզ մինչև վանքը: Երբ բավական մոտեցանք վանքին, Ասլանը հարցրեց նրանից.

– Մենք կարո՞ղ ենք գտնել Հայրիկին վանքումը:

Այդ անունով կոչում էին վանահորը:

– Դուք չճանաչեցի՞ք նրան,– զարմանալով հարցրեց աբեղան,– Հայրիկը հենց նա էր, որ վարում էր գութանը:

– Այդ ի՞նչ գութան էր:

– Հայրիկը նոր բերել տվեց Եվրոպայից. այսօր առաջին փորձն էին անում: Սպասում ենք ուրիշ երկրագործական անոթներ ևս շուտով ստանալ:

– Վանքը երկրագործությա՞մբ է պարապում:

– Այո, իր կալվածները ինքն է մշակում: Բայց մենք ունենք վանքում և երկրագործական դպրոց:

– Երկա՞ր կմնա Հայրիկը այնտեղ:

– Երկար չի մնա: Նա տեսավ, որ դուք վանքն եք գնում, ինձ պատվիրեց, որ ձեզ տանեմ, այնտեղ հանգստացնեմ, մինչև իր վերադարձը:

Երբ հասանք վանքը, երբ շրջապատի գլխավոր դռնից ներս մտանք, երբ հետզհետե երևան եղան այդ հինավուրց սրբավայրի պատկառելի շինվածքները, նրանց արտաքին տեսքը միայն իմ վրա այն տպավորությունը գործեց, որ ես ակամայից սկսեցի մտածել, թե այստեղ անպատճառ տեսնելու եմ Կտուց անապատի հակապատկերը: Եվ իրավ, այստեղ շնչում էր մի այլ կյանք, երևում էր մի այլ աշխարհ, այստեղի մթնոլորտը ներշնչված չէր անապատական մշտավառ խունկի թուլացնող և վհատեցնող ծխով, այստեղ միացրել էին հոգևորը և երկրայինը աշխարհայինի հետ:

Վանքը թե՛ արտաքուստ և թե՛ ներքուստ հովանավորված էր ծառերով ու պարտեզներով. վազում էին սառն, հստակ աղբյուրներ, և ջրերի վտակները հավաքվելով, մեծ աղմուկով դարձնում էին վանական ջրաղացի ծանր աղորիքը:

– Այդ ծառերը Հայրիկի տնկածն է,– ասաց մեր առաջնորդը,– այն ջրաղացը երկար ժամանակ խանգարված էր, չէր բանում, Հայրիկը նորոգեց:

Երիտասարդ աբեղան տարավ մեզ մի բավական մաքուր և ճաշակով կահավորված սենյակ, և իսկույն սկսեց մեզ հետ խիստ մտերմական խոսակցություն, թե ո՞րտեղից ենք գալիս, ո՞ւր պիտի գնանք, արդյոք պարոն բժշկապետը երկա՞ր պիտի մնա Վանում, ի՞նչ ազգից է պարոն բժշկապետը, քանի՞ լեզու գիտե և այլն: Այդ բոլոր հարցմունքները այն աստիճան անկեղծ էին, որ Ասլանը առանց ձանձրանալու պատասխանում էր նրան:

– Շա՞տ ժամանակ է, որ Հայրիկը այդ վանքի վանահայրն է,– հարցրեց Ասլանը:

– Շատ ժամանակ չէ,– պատասխանեց աբեղան,– բայց այդ փոքր ժամանակում նա այնքան գործ կատարեց, որ մի ուրիշը որքան և մեծ ջանք ու եռանդ ունենար, հազիվ թե տասն, քսան տարիների ընթացքում կարող կլիներ կատարել:

Երիտասարդ աբեղան Հայրիկի աշակերտներից էր: Ես իսկույն նկատեցի, և այնուհետև ինձ շատ անգամ էր պատահել նկատել, որ նրա աշակերտները նրա մասին խոսելիս՝ նրանց տիրում էր խորին ոգևորություն, և նրանք մի առանձին պարծանքով էին հիշում այն մարդու անունը, որին այնքան սիրում էին, որին այնքան պատվում էին:

– Հայրիկից առաջ,– շարունակեց նա,– այդ վանքը համարյա թե ավերակ էր. ոչ դպրոց կար, ոչ՝ աշակերտ և ոչ՝ կանոնավոր տնտեսություն: Նրա եկամուտները կողոպտվում էին թե՛ ներքին և թե՛ արտաքին ավազակներից: Վանքը պարտքերի ներքո խեղդվում էր: Մինչև անգամ ս. Նշանը գրավ էր դրված թուրք վաշխառուների մոտ: Բայց Հայրիկը կյանք տվեց այդ վանքին: Բոլորը, ինչ որ տեսաք և ինչ որ պիտի տեսնեք, նրա աշխատության պտուղն է: Բայց փոխարենը, ինչ որ ստացավ նա և ինչ որ ստանում է,– միշտ եղել է ատելություն, հալածանք և դավադրություն իր խավարասեր թշնամիների կողմից…

Վերջին խոսքը արտասանելու միջոցին երիտասարդի ձայնը դողաց: Նա պատմեց մի ցավալի անցք, որ պատահել էր հենց նույն օրերում: Հայրիկը Վարագա վանքից, որպես նրա սովորությունն էր, միայնակ, ոտքով Վան քաղաքը գնալու ժամանակ, ճանապարհին հանդիպում է նրան մի քուրդ: Երբ Հայրիկը իր արծվի հայացքով նայում է նրա երեսին, ավազակը շփոթվում է, նրա ձեռքերը սկսում են դողալ:

– Ինչո՞ւ շփոթվեցար, բարեկամ,– հարցնում է Հայրիկը իր սովորական մեղմ ժպիտով:

– Ուզում էի քեզ սպանել,– պատասխանում է ավազակը և, չոքելով նրա առջև, գրկում է նրա ոտները:

– Ինչո՞ւ չսպանեցիր,– հարցնում է Հայրիկը վեր բարձրացնելով նրան:

– Աստված իմ ձեռքը բռնեց,– ասում է քուրդը և սկսում է պատմել, թե որպես Հայրիկի թշնամիները կաշառեցին նրան, և որպես ինքը խոստացավ կատարել այդ եղեռնագործությունը, բայց խղճի ձայնը ասաց նրան, թե պետք չէ սուր բարձրացնել աստուծո օրհնյալի վրա:

– Դու էլ օրհնյալ լինիս, որդի,– ասում է նրան Հայրիկը:– Գնա խաղաղությամբ, բայց այդ բոլորը, ինչ որ պատմեցիր ինձ, ուրիշ ոչ ոքի չպիտի հայտնես:

– Դու խնայո՞ւմ ես քո թշնամիներին,– հարցնում է ավազակը զարմանալով:

– Աստված այդպես է պատվիրում,– պատասխանում է Հայրիկը:

Բայց, չնայելով Հայրիկի պատվերին, քուրդը ամեն տեղ պատմում է նրա կյանքի դեմ դավադրություն սարքող անձինքների անունները, և այդ լսում է ամբողջ քաղաքը:

– Ո՞վքեր են այդ դավաճանները,– հարցրեց Ասլանը:

– Մի քանի եկեղեցականներ, միացած մի քանի աղաների հետ, որոնց պարագլուխն է մեր քաղաքի սրբազան առաջնորդը,– պատասխանեց աբեղան:

– Ի՞նչն էր առիթ տվել նրանց՝ մինչ այդ աստիճան անիրավության դիմել, թափել տալով մի անմեղ արյուն,– հարցրեց Ասլանը փոքր-ինչ զայրացած ձայնով:– Մի՞թե դպրոցը, լույսը, կրթությունը այդքան ատելի է նրանց:

– Ես չեմ կարծում,– ասաց աբեղան,– որ նրանք լուսավորության թշնամի են և այդ պատճառով զինվորվում են նրա տարածողների դեմ: Նրանք չեն կարող թշնամի լինել լուսավորության, որի մասին ամենևին հասկացողություն չունեն, որի վրա երբեք չեն մտածել: Խնդիրը բոլորովին տնտեսական է: Մի ժամանակ, որպես քանի րոպե առաջ ասեցի, այդ վանքում կանոնավոր տնտեսություն չկար. նրա եկամուտները վատնում էին միաբանները, և ինչ էլ որ մնում էր, առաջնորդի կոկորդովն էր անցնում: Բայց երբ Հայրիկը վանահայր դարձավ, նախ վանքը մաքրեց անպիտան միաբաններից, նրանց փոխարեն խմբեց այստեղ ավելի արժանավոր անձինք, և այնուհետև վանական արդյունքները սեփականացրեց իր նոր կառուցած հիմնարկությունների պահպանության համար: Այդ բոլորից հետո, շատ բնական է, որ այն անձինքը, որոնք առաջ վատնում էին վանքի եկամուտները, կթշնամանային Հայրիկի հետ:

– Բայց մի՞թե Հայրիկը բարեկամներ չունի:

– Ունի, բայց Հայրիկի բարեկամները այնպիսի կարող, այնպիսի հզոր մարդիկ չեն, որպես նրա թշնամիները: Հայրիկի բարեկամները ժողովրդի հալածված, հարստահարված և ամեն իրավունքներից զրկված դասակարգն է: Հայրիկի բարեկամները աղքատ շինականներն են, քաղաքի արհեստավորներն են, և անտուն, անտեղ, անհող, անջուր սարակներն ու բանվորներն են, և մի քանի երիտասարդներ, որոնք ազնիվ սիրտ և բարի ցանկություններ ունեն, բայց իրանց ցանկությունները կատարելու համար ոչինչ միջոցներ չունեն:

Հայրիկը եկեղեցական աստիճանով դեռ վարդապետ էր, բայց նրա կատարած գործերը, ստացած հռչակը, վայելած ժողովրդական մեծ համարումը, այդ բոլորը չէին

կարող չգրգռել մյուս եկեղեցականների նախանձը, որոնք թե՛ աստիճանով և թե՛ դիրքով ավելի բարձր էին քան թե նա, թեև երիտասարդ աբեղան նրանց թշնամությունը բացատրում էր միայն տնտեսական պատճառներով: Նրա կառուցած նոր հիմնարկությունները՝ իրանց նորությամբ անգամ՝ կարող էին օտարոտի և վնասակար թվել մյուս եկեղեցականներին: Նա հիմնել էր իր վանքում մի գիշերօթիկ դպրոց, որը մի տեսակ վարժապետանոց կարելի էր համարել, ուր հավաքել էր նա զանազան տեղերից մանուկներ, այն նպատակով, որ վարժապետացուք կամ կրթյալ քահանայացուք պատրաստվեն և, վերադառնալով իրանց հայրենիքը, գյուղական քահանաներ կամ վարժապետներ դառնան: Դպրոցը ուներ և երկրագործական բաժին: Գյուղական վարժապետը կամ գյուղի քահանան, Հայրիկի կարծիքով, բավական չէ, որ պետք է սովորեցնեին գրել, կարդալ, հաշվել, կամ կատարեին գյուղացու հոգևոր, եկեղեցական պետքերը, այլ, միևնույն ժամանակ, նրանք պետք է ցույց տային, թե որպես պետք է գյուղացին վարեր իր հողը և որպես պետք է դարմաներ իր անասունները, որ ավելի արդյունք ստանար: Բացի դպրոցից, Հայրիկը զանց չէր արել հիմնել կրթության երկրորդ գործիչը՝ տպագրական մամուլը: Նրա տպարանից լույս էին տեսնում զանազան դասագրքեր և, ժողովրդի մեջ ընթերցանություն տարածելու համար, փոքրիկ դյուրիմաստ գրքույկներ աշխարհիկ լեզվով, այլև մի ամսագիր, որ խմբագրվում էր գլխավորապես նրա միաբանության աշխատությամբ: Այդ բոլորի ի կատար ածելը՝ արժել էր այնքան մեծ ջանքերի և այնքան անտանելի տառապանքների, որոնց դեմ միայն Հայրիկի նման մարդու երկաթյա հաստատամտությունը կարող էր պատերազմել: Քանի՛-քանի՛ անգամ նա ոտքով Պոլիս էր գնացել, հարուստ ամիրաների դռները բախելու և իր հիմնարկությունների համար օժանդակություն խնդրելու: Նա միայնակ ստեղծեց այն բոլորը. նա առաջին օրինակը եղավ, որ դատարկամոլ և ձրիակեր կրոնավորների անկելանոց դարձած վանքին տվեց մի այնպիսի կազմակերպություն, որ նա սկսեց այնուհետև ծառայել իբրև մի բարձր հիմնարկություն ժողովրդի հոգևոր, բարոյական և մտավոր կրթության համար:

Որքա՜ն մեծ անհամբերությամբ ցանկանում էի տեսնել այդ մարդուն, լսել նրա ձայնը և խոսել նրա հետ: Նա մեզ երկար սպասել չտվեց, շուտով վերադարձավ գութանի մոտից, քրտնած, փոշիների մեջ թաթախված: Նախ վազեց իր սենյակը, երևի լվացվելու համար, հետո եկավ մեզ մոտ: Նա ուրախ էր, որովհետև նորաձև գութանի առաջին փորձը հաջողություն էր խոստանում:

Նա դեռ երիտասարդ էր, երեսուն և վեց տարեկան հազիվ կլիներ. այդ հասակի համեմատ՝ «Հայրիկ» մականունը շատ օտարոտի կարող էր լինել, եթե նա չունենար մի սիրող հոր խնամքը, հոգածությունը և բոլոր բարեմասնությունները՝ թե դեպի իր վանքն ու միաբանությունը և թե դեպի ժողովուրդը: Բարձրահասակ էր նա և ամուր կազմվածքով, երևում էր, որ ծոմը, մշտական աղոթքը և խիստ ճգնությունները,— որոնք մեր անապատականների բարեպաշտության գլխավոր արդյունքն են համարվում,— չէին մաշել նրա մարմինը: Գլխին վեղար չուներ, շագանակի գույն խիտ մազերը կիսով չափ ծածկում էին նրա լայն ճակատը և, դեպի ետ սփռվելով, անփույթ կերպով թափվում էին հզոր ուսերի վրա: Մորուքը թավամազ էր, որպես անապատական առյուծի բաշը: Ինչ որ ավելի նշանավոր էր նրա հեզ, միևնույն ժամանակ այրական դեմքի վրա՝ դրանք էին արծվի խոշոր աչքերը և արծվի կտցաձև քիթը, որոնք թռչունների այդ վեհափառ արքայի բնավորության հատկանիշներն էին արտահայտում — թե՛ նրա հեռատեսությունը և թե՛ նուրբ հոտառությունը: Գուցե այդ էր պատճառը, որ նա ստացել էր մի երկրորդ մականուն ևս — «Վասպուրականի արծիվ»: Հագուստը պարզ էր և վայելուչ, իսկ վարվողության ձևերի մեջ խիստ հասարակ էր նա և անկեղծ: Նայելով այդ կրոնավորի վրա, ի նկատի առնելով նրա անցյալը և ներկան, իսկույն երևում էր՝ մինչև շինականի աղքատ խրճիթը խոնարհված մարդու, ռամկասիրություն, ռամկի բոլոր առաքինություններով, ռամկի բոլոր անփառասիրությամբ,— և մարդասիրական բարձր գաղափարներով

ոգևորված մի եկեղեցականի անձնազոհություն, որ իր աշխատության հոգևոր մխիթարությունը որոնում է նույնիսկ ռամկի, դարերով թշվառացած ռամկի, հանգստության և բարօրության մեջ: Նա ժողովրդի մարդ էր և ժողովրդի համար ծնված:

Ես առաջին անգամն էի տեսնում մի այսպիսի սիրելի անձնավորություն: Նա այն տեսակ աբեղաներիցն էր, որի բերանում Հիսուսի, Մովսեսի և Պողոսի անունների հետ ստեպ հիշվում էին իր ազգի նահապետների անունները, ոչ միայն հասարակ խոսակցության մեջ — այլև սուրբ տաճարի բեմից: Նա չէր խոսում բիբլիական Պաղեստինի և «Վերին Երուսաղեմի» երանությունների մասին. նրա ուխտյալ երկիրը Վասպուրականն էր: Հայրենասիրությունը հասնում էր նրա մեջ մինչև մոլեռանդության, իսկ կրոնասիրությունը մինչև բարձր առաքինության:

Նրան տեսնելիս, ես մտաբերում էի մեր հինգերորդ դարերի աբեղաներից մեկին, որ, կարծես, նոր էր վերադարձել Աթենքից, և ցուլը ձեռին, մի թափառական դերվիշի նման, շրջում էր հայրենի երկրի զանազան կողմերը և տարածում էր այն լույսն ու գիտությունը, որ իր հետ բերել էր Սոկրատի և Արիստոտելի մայրաքաղաքից: Հայրենիքը չէ ընդունում իր մեջ կրթության նոր առաքյալին, իսկ խավարասեր կղերը ատելությամբ կատաղած է նրա դեմ: Բայց նա արհամարհում է խավարասերների հալածանքը և հաստատ, անվեհեր կամքով առաջ է տանում սուրբ գործը: Մի տեղից հալածվում է նա, մյուս օրը հայտնվում է մի այլ տեղում և սկսում է ցանել իր հայրենակիցների անապատ դարձած մտավոր անդաստանում այն բարի սերմերը, որ ինքը բերել էր հեռավոր երկրներից: Այդպես էր վարվել և Հայրիկը. ամբողջ Վասպուրականը նրա ընդարձակ ագարակն էր, իսկ ինքը — մի անձնվեր մշակ:

Այդ մարդը կատարելապես սիրահարված էր իր հայրենիքի՝ Վասպուրականի վրա: Իսկ Վարագը, Վանը և Վանա ծովակը իր շրջակա գավառներով — նրա մտածության գեղեցիկ առարկաներն էին: Բայց նա իր հայրենիքում նույն դրության մեջն էր, որպես մի ժամանակ Խորենացին Տարոնում: Կղերը նրա դեմ ևս լարում էր զանազան որոգայթներ: Այդ էր պատճառը, որ Ասլանը, հիշելով քանի օր առաջ պատահած աղետավոր անցքը, և հայտնելով իր խնդակցությունը նրա ազատության մասին, ասաց.

— Մի՛ վհատեցեք, Հայրիկ, նահատակությունը առաքելության հետ միշտ լծորդաբար է ընթանում:

Հայրիկը պատասխանեց իր սովորական ժպիտով:

— Այդպիսի դեպքեր ինձ չեն կարող վհատեցնել, ես մահից չեմ վախենում: Բայց չէի կամենա և մեռնել, պարոն բժշկապետ, որովհետև, ով որ նպատակներ ունի, ով որ գործ ունի կատարելու, կյանքը նրան պետք է:

Երկար խոսակցություններից հետո, որ մի առ մի չեմ ուզում հիշել, Ասլանը խնդրեց Հայրիկից, որ ցույց տա իր վանքի հիմնարկությունները:

— Մենք ամեն ինչ դեռ նոր ենք սկսում, պարոն բժշկապետ,— ասաց հայրիկը,— այդ պատճառով մեր հյուրերին ցույց տալու դեռ մի արժանավոր բան չունենք: Մեզ մոտ ամեն ինչ դեռ իր տղայության մեջն է:

— Հենց այդ հասակից կերևա ապագա էակը, գոնե ֆիզիկական կողմից, թե որքան առողջ է և որքան լավ է կազմված:

— Այդ ճշմարիտ է, բայց շատ անգամ ամենաառողջ տղան ևս ջլատվում է, այլանդակվում է վատ դայակների և խորթ մայրերի ձեռքում:

Մենք դուրս եկանք սենյակից: Վանքի բակում ոչ ոք չէր երևում, մի զույգ աղավնիներ միայն, ճեմում էին պարտեզի կանաչազարդ ածուների շուրջը, նրանք ևս, երբ մեզ տեսան, թռան նստեցին բարձր զանգակատան գերանի վրա: Ոչ մի վանքում զանգակները այնպես հանգիստ չէին, որպես այստեղ: Կտուց անապատում նրանք հնչում էին ամեն ժամ, ամեն րոպե, և հրավիրում էին «մշտապաշտոն» միաբաններին շարունակելու անընդհատ ժամերգությունը: Իսկ այստեղ մերթ ընդ մերթ լսվում էր դպրոցի զանգակի ձայնը, որ որոշում էր դասամիջոցները: Աշակերտները խմբով դուրս էին թափվում, և վանական լուռ, խաղաղ պարիսպների մեջ տիրում էր մի կենդանի աղմուկ: Ոչինչ այնպես ախորժելի չէր կարող լինել, քան թե այդ աղմուկը, մանուկ սերնդի սրտի և հոգու ձայնը, որի արձագանքը լսելի է լինում ապագայում…

Հայրիկը տարավ մեզ նախ գրատունը, որ բաղկացած էր երեք սենյակներից, որոնց դռները բացվում էին միմյանց մեջ: Երբ մտանք առաջին սենյակը, նա ասաց.

— Այստեղ հավաքված են բոլոր տպագրված գրքերը, թե՛ հայոց և թե՛ օտար լեզուներով: Մեր միաբաններից յուրաքանչյուրը կարող է որոշյալ ժամերում մտնել այստեղ և օգուտ քաղել գրքերից:

Սենյակում բավական լույս կար, մեջտեղում դրած էր երկար գրասեղան, ծածկած կանաչագույն մահուդով, իսկ նրա վրա դարսած էին մի քանի լրագիրներ և ամսագիրներ, որ նոր էին ստացվել: Սենյակի շուրջը, փայտյա մեծ պահարանների մեջ, կարգով դասավորած էին զանազան գրքեր, որ երևում էին ապակիների ետևից: Դեպի որ կողմը և նայում էի, աչքի էր ընկնում կարգ, ճաշակ, մաքրություն և պարզություն: Այս սենյակը թե՛ գրատուն և թե՛ ընթերցարան էր. այստեղից մտանք մի այլ սենյակ, որը ցույց տալով, ասաց Հայրիկը.

— Այստեղ հավաքված են բոլոր գրչագրերը:

Կահավորությունը նույնն էր, ինչպես առաջին սենյակում. մեջտեղում կանաչ մահուդով ծածկած սեղան, շուրջանակի՝ փայտյա մեծ պահարաններ, և ապակիների ետևից երևում էին մեր բազմաշխատ նախնյաց մագաղաթյա վաստակները: Սենյակի ճակատին, ոսկյա շրջանակի մեջ, քարշ էին ընկած Սահակ Պարթևի և Մեսրոպի պատկերները, որոնք տվեցին հայերին գիր ու դպրություն մայրենի լեզվով:

Ես ցավելով մտաբերեցի Կտուց անապատի եկեղեցու մթին և խոնավ ավանդատունը, որի մեջ փոշու տակ ծածկված և մի անկյունում հատակի վրա թափված գտանք ամենահազվագյուտ օրինակները նախնի մատենագրության:

Ի՞նչ համեմատություն այնտեղ և այստեղ…

— Գրքերի ցուցակ ունե՞ք, հայրիկ,— հարցրեց Ասլանը:

— Ունենք,— պատասխանեց նա, դուրս բերելով մի գիրք, որ պահված էր պահարաններից մեկում:— Մենք դեռ չենք տպում այդ ցուցակը, որովհետև աշխատում ենք հետզհետե ավելացնել գրչագրերի թիվը:

Ասլանը նստեց գրասեղանի մոտ, սկսեց թերթել ցուցակը:

— Դարձյալ բավական գրչագրեր ունեք,— ասաց նա:— Դուք մեծ բարերարություն արած կլինեք, Հայրիկ, եթե կաշխատեք այս կողմերի բոլոր վանքերից ազատել գրչագրերը և այստեղ հավաքել:— Եվ նա պատմեց, թե իր այցելության ժամանակ Կտուց անապատը ինչ ցավալի գրության մեջ գտավ այդ վանքի գրքերը:

— Բոլոր վանքերում միևնույնը կտեսնեք,— պատասխանեց Հայրիկը։— Բայց եթե գիտենայիք, թե ո՛րքան դժվարությունների, ո՛րքան անախորժությունների եմ հանդիպել, մինչև կարողացել եմ հավաքել այդ գրքերը։ Մեր վանահայրերը ավելի շուտով հոժարվում են, որ իրանց վանքերում գտնված գրքերը անխնամ դրության մեջ փտեն, ոչնչանան, քան թե տան, որ մի ապահով տեղում պահվեն։ Իսկ ռամիկ ժողովուրդը բոլորովին այլ կերպով է վարվում, նա իր ձեռքն ընկած գրչագիրը տանում է և մեծ երկյուղածությամբ թաղում է հողի տակ, ինչպես թաղում է նա իր սիրելի որդուն։

Ասլանը շարունակում էր թերթել ցուցակը։

— Այդ անում են և եկեղեցականները,— ասաց նա,— ես լսել եմ, թե ինչպես մի վանքում կատարել էին մի հանդիսավոր թաղում բոլոր ցեցակեր գրքերի։

— Ես գիտեմ մի այլ, ավելի ցավալի կորուստ,— ասաց Հայրիկը տխուր ձայնով և պատմեց հետևյալ անցքը.

Մի անապատում, որ հայոց ծովակներից մեկի կղզում է գտնվում, հանկարծ միաբանությունը լսում է, որ կաթողիկոսը գալիս է վանքը և, որպեսզի նորին վեհափառությունը վանքի գրքերը իրանց ողորմելի դրության մեջ չտեսնե, հավաքում են բոլորը, լցնում են կթոցների մեջ և թափում են ծովը։ Երբ նորին վեհափառության նավակը մոտենում է կղզուն, նա նկատում է, որ մագաղաթի թերթիկները ջրի երեսին լողում են։ Ալիքները նրանցից մեկը բերում են և խփում են վեհափառի նավակի կողքին։ Նա ձեռքը մեկնում է և վեր է առնում դժբախտ թերթը։ Պատահմամբ դա լինում է Խորենացու գրքի հենց այն կտորը, որտեղ գրված է լինում նրա սգավոր ողբը, որի մեջ նա այնքան դառն կերպով նկարագրում է իր ժամանակի եկեղեցականների անպիտանությունները։ Վեհափառի հանդեպ, նավակի մեջ, նստած է լինում կղզու վանահայրը, որ դուրս էր եկել ցամաքը նրան ընդունելու։ Վեհափառը տալիս է նրան կարդալու սգավոր ողբի հետևյալ տողերը — «վարդապետք տխմարք» և այլն։

— Այդ պատմությունը որքան հետաքրքիր, այնքան և տխուր է,— ասաց Ասլանը։— Բայց ես լսել եմ, որ ձեր կաթողիկոսներից մեկը նույնպես ազատ չէ եղել մի այդ տեսակ մեղքից. նա իր նախորդների հիշատակները ոչնչացնելու համար, այրել է տվել նրանց գործերի բոլոր ատենական թղթերը։ Բայց ես շատ ուրախ եղա, որ ձեր ցուցակի մեջ գտա, բացի գրքերի անուններից, և մի ամբողջ շարք զանազան կոնդակների, զանազան հրովարտակների, պարսից և տաճկաց թագավորներից ստացված, զանազան պայմանագրերի և հին կալվածագրերի,— այդ բոլորը կարող է առատ նյութ տալ պատմության։

Մատենադարանի մի առանձին պահարանում հավաքված էին հայոց ամենահին տպագրությունները, որոնք եղել են մի քանի դարեր առաջ Վենետիկում, Հռոմում, Միլանում, Նոր-Ջուղայում, Ամստերդամում և այլ տեղերում։

Գրչագրերը քննելուց հետո, մտանք երրորդ սենյակը, որ ավելի ընդարձակ էր, քան առաջինները։

— Այդ մեր թանգարանն է,— ասաց Հայրիկը,— բայց դեռ աղքատ թանգարան, որովհետև շատ ժամանակ չէ, որ գոյություն ունի։

Չնայելով, որ Հայրիկը խիստ համեստությամբ էր վերաբերվում դեպի թանգարանը, բայց այդ սենյակը ավելի քան մյուսները, գրավեց իմ ուշադրությունը։ Ինչե՞ր ասեք այնտեղ չկային։ Ինչ որ մի անգամ գտնվել էին Վանա շրջակայքում կամ նրա

ավերակների մեջ, հավաքել էին այնտեղ: Մի տեղ, փոքրիկ գզրոցներում, որոնց վերևի երեսները ծածկված էր ապակիով, դասավորած էին զանազան հին դրամներ: Մի տեղ, նույնպիսի գզրոցներում, կային զանազան կանացի զարդեր, որպիսիք են՝ ականջի օղեր, ապարանջաններ, հուլունքներ և այլն: Մի այլ տեղ կային հնադարյան զենքեր, պղնձյա ծանր վահաններ, սեպաձև արձանագրություններով և առասպելական դրոշմվածներով զարդարած, նիզակների և նետերի ծայրեր, տապարներ, սաղավարտների և զրահների կտորներ,— բոլորը պղնձից: Այդ բոլոր հնություններից իմ ուշադրությունը գրավեցին երկու փոքրիկ արձաններ միայն, որոնցից մեկը պատած էր ոսկով և ներկայացնում էր մի դեռահաս կնոջ: Նա այնքան գեղեցիկ էր, որ ես պատրաստ էի ծունկ իջնել և երկրպագել նրան: Երբ իմ հոգեզմայլությունը հայտնեցի: Հայրիկը ծիծաղելով ասաց.

— Մեզ ևս մի ժամանակ մեղադրում էին այդ մեղքի մեջ:

— Ի՞նչպես,— հարցրեց Ասլանը:

Հայրիկը պատմեց մի քանի հետաքրքիր անցքեր, թե ո՛րքան անախորժությունների է պատահել թանգարանի պատճառով: Թանգարանը շինվում է գլխավորապես այն նպատակով, որ այնտեղ հետզհետե հավաքվեն բոլոր հնությունները, որոնք խիստ հաճախ գտնվում են Վանա շրջակայքում, և ժողովուրդը նրանց նշանակությունը չհասկանալով՝ ոչնչացնում է: Օրինակ, պատահել էին այսպիսի դեպքեր. մի գյուղացի գտել էր մի մեհյանի երկաթյա զոհարանի մի մասը, տարել էր դարբնի մոտ, կոտրել էր տվել և իր համար արորի խոփ էր պատվիրել: Մի այլ գյուղացի գտել էր Սենեքերիմ թագավորի փղոսկրյա գահի առաջին ոտները, խիստ չնչին արժեքով վաճառել էր մի զինագործի, որը գնել էր խենջարի կոթեր շինելու համար: Մի քանի տարի առաջ միանգամից գտնվում են այն երկու արձանները, որ մենք տեսանք թանգարանում: Հայրիկը մեծ դժվարությամբ կարողանում է ազատել այդ գեղեցիկ հնությունները ռամկի մոլեռանդությունից. «կուռքե՛ր են» ասելով, ամեն կողմից հավաքվում են և կամենում են փշրել: նրանցից մեկը հայտնի չէր, թե ի՞նչ աստվածություն էր ներկայացնում, իսկ մյուսը այն դեռահաս դիցուհին, որի գիսակների մեջ փայլում էր մի ճաճանչավոր աստղ,— դա կարծվում էր, թե պետք է Վասպուրականի տիկինը՝ Աստղիկը լինի: Արձանները տեղավորում են թանգարանի այն մասնում, ուր ավելի լույս կար և որտեղ դրած էր մի հին աստվածամոր պատկեր: Անցնում են մի քանի օրեր, հանկարծ զայրացած խուժանը հարձակվում է վանքի վրա, փոքր է մնում, որ կործանե թանգարանը և ոչնչացնե ամեն ինչ: Հայրիկի երկար աղաչանքները հազիվ կարողանում են մեղմացնել խառնիճաղանջի կատաղությունը: Նրա հուզմունքի պատճառը այն է լինում, որ թանգարանը համարում է մի կռքատուն, ուր աստվածամոր պատկերը դրած է կուռքերի մոտ և նրանց հետ հավասար պաշտվում է:

— Միամիտ խուժանը կարող էր այդպես մտածել,— ասաց Հայրիկը իր պատմությունը վերջացնելուց հետո,— բայց ցավալին այն է, որ նրան գրգռել էին մեր դեմ իմ թշնամի եկեղեցականները: Ես հավատացած եմ, որ նրանք այդ արել էին ոչ թե չարամտությամբ, ոչ թե մեր վանքին վնասելու նպատակով, այլ իրանք ևս համոզված էին, որ մենք վանքումը կուռքեր ենք պաշտում, եթե ոչ, նրանց կարծիքով, ի՞նչ նպատակ կարող էր ունենալ, որ մենք կուռքերի արձանները վանքն էինք տարել և դրել էինք աստվածամոր պատկերի մոտ:

— Իսկ եթե նրանց պատահում է կուռքերի արձաններ գտնել, ի՞նչ են անում,— հարցրեց Ասլանը, աչքերը չհեռացնելով աստվածամոր պատկերից, որի մասին էր խոսքը:

— Փշրում են, ոչնչացնում են:

— Իսկ այդ աստվածամայրը հրաշալի բան է,— ասաց Ասլանը, շարունակելով նայել պատկերի վրա։— Դա, որպես երևում է, 15-րդ դարու իտալացի երևելի նկարիչներից մեկի գործն է: Բայց ինձ զարմացնում է այն, թե ինչպես է պատահել, որ այդ պատկերը հայտնվել է այստեղ:

— Շատ հավանական է,— ասաց Հայրիկը,— որ բերված լինի այն ժամանակներում, երբ վանեցի վաճառականները Վենետիկի և Իտալիայի հետ հարաբերություններ ունեին: Բայց գիտե՞ք որտեղից եմ դուրս բերել այդ պատկերը:

— Ո՞րտեղից:

— Մի կիսավեր գյուղական եկեղեցիից, որի հայ բնակիչները բոլորովին սպառվել էին և նրանց տեղը քրդեր էին բնակվում: Այդ վերջինները, գուցե իրանք ևս հայկական ծագումից լինելով, դեռ պահպանել էին իրանց հավատը թե՛ դեպի եկեղեցին և թե՛ դեպի նրա սրբությունները:

Աստվածամոր պատկերը, որի մասին այնքան հիացած խոսում էին թե՛ Ասլանը և թե՛ Հայրիկը, ինձ ամենևին չէր գրավում, գուցե այն պատճառով, որ ես գեղարվեստի մասին ամենևին գաղափար չունեի: Ներկերը, որ առաջուց ևս խիստ մռայլ գույն էին ունեցել, ժամանակների ընթացքում ավելի և ավելի սևացել էին խունկի և մոմի ծուխից: Մի տեղում մոմը, ինչպես երևում էր, լուսարարի անհոգությունից ընկած է եղել և այրել է աստվածամոր գրկում մանուկ Հիսուսի ոտները, մի այլ տեղում կտավը պատռած էր:

Հայրիկը ցույց տվեց մեզ մի այլ հնություն, որը, որպես ասում էր նա, Արծրունյաց իշխանուհի օրիորդներից մեկի ձեռագործն էր, որ նվիրված էր Վարագա վանքին: Սեղանի ծածկոց էր այդ գեղեցիկ աշխատությունը, որի վրա օրիորդի ճարտար մատները ստեղծագործել էին զանազան պատկերներ ս. Գրիգոր Լուսավորչի չարչարանքներից:

— Շատ անգամ մեր վանքերում կամ եկեղեցիներում պատահում են այնպիսի անոթներ, զգեստներ կամ այլ իրեղեններ, որոնք մաշված, հնացած և գործածությունից ընկած լինելով, այնպես, իբրև մի անպետք բան, ձգած են լինում եկեղեցիների խորաններում կամ պահարաններում, և այնտեղ փտում են: Երբեմն նրանց մեջ գտնվում են այնպիսի հազվագյուտ իրեղեններ, որոնք, իբրև հնություն, արհեստի համար մեծ նշանակություն ունեն,— ասաց հայրիկը,— մենք հոգ ենք տանում հավաքելու այդպիսիները:— Եվ նա ցույց տվեց մեզ զանազան սաղավարտներ, վահաններ, շուրջառներ, եպիսկոպոսական կամ վարդապետական գավազաններ, հնամաշ գորգերի կտորներ, կաթողիկոսական հողաթափեր և այլ իրեղեններ, որոնք ամենահին ժամանակներում բերվել էին Հնդկաստանից, Չինաստանից, Սպահանից կամ այլ հեռավոր երկրներից, որտեղ եղել են հայոց վաճառականներ:

Հետո Հայրիկը ցույց տվեց իր դպրոցը, որ գտնվում էր վանքի շինվածքների մի առանձին բաժնում: Ես մինչև այսօր տեսած էի երկու դպրոցներ միայն, մեկը տեր Թոդիկի դպրոցը, այն սարսափելի դժոխքը, որի աշակերտը լինելու դժբախտությունն էի ունեցել, մյուսը՝ Սիմոն պատվելիի դպրոցը, որ տեսա Վանա մեջ, և որը իր կազմակերպությամբ շատ չէր զանազանվում առաջինից: Այդ երկու հիմնարկություններից մեկը Պարսկաստանի, մյուսը Տաճկաստանի հայոց մանկավարժության կատարելատիպն էր, և գրեթե երկուսն էլ սահմանված էին մանուկներին բթացնելու, և թե՛ բարոյապես, թե՛ մտավորապես սպանելու համար: Այդ դպրոցներից հետո, Հայրիկի դպրոցը, տարակույս չկա, որ աշխարհի յոթն հրաշալիքներից մեկն էր երևում ինձ: Եվ իրավ, նա իր տեսակի մեջ առաջին

օրինակն էր այդ երկրում, և գուցե այդ էր պատճառը, որ իբրև նորություն, ենթարկվել էր այնքան հալածանքների: Ես, իհարկե, չէի կարող քննել նրա ներքին, ուսումնական կազմակերպությունը, նրա ծրագիրը,— ինձ գրավում էր նրա արտաքինը միայն: Այստեղ առաջին անգամ տեսա, որ աշակերտները դասավորած էին կարգով նստարանների վրա, և ոչ թե, որպես տեր Թոդիկի դպրոցում, խառնիխուռն նստած էին հատակի վրա, իրանց տակին փռած ունենալով մի կտոր հասիր կամ այծի մորթի, որ բերում էին իրանց տներից: Այստեղ առաջին անգամ տեսա, որ աշակերտները դասավորած էին զանազան դասատներում, և յուրաքանչյուր դասատան մեջ վարժապետը պարապում էր բոլորի հետ միասին: Բայց տեր Թոդիկի դպրոցում, առանց ուշադրություն դարձնելու նրանց հասակի և ուսման աստիճանի վրա, բոլոր աշակերտներին անխտիր ածել էին մեկ սենյակում, ինչպես ոչխարներին ածում են մեկ գոմի մեջ, և վարժապետը պարապում էր յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին,— մեկը վայելչագրությամբ էր զբաղված, մյուսը ընթերցանությամբ, երրորդը վարժապետի կոշիկներն էր մաքրում, մի խոսքով, որքան աշակերտներ կային, նույն թվով և բաժանմունքներ կային նույն դասատան մեջ: Այստեղ առաջին անգամ տեսա սև գրատախտակը, որի վրա կավիճով էին գրում: Առաջին անգամ տեսա, որ աշակերտներին սովորեցնում էին առանց փայտի ու ծեծի: Այստեղ ֆալախկա, ճիպոտներ, խրատելու քանոն և դրանց նման պատժական գործիքներ չկային:

Բոլոր դասատները այցելելուց հետո, Հայրիկը մեզ տարավ մի դահլիճ, որտեղ ես տեսա զանազան հանքային վեմեր, չորացած միջատներ, գույնզգույն թիթեռներ և ամենամանր պողոճներ: Միևնույն դահլիճում կային զանազան բույսեր ու ծաղիկներ, այնպես լավ չորացած, որ բնավ չէին կորցրել իրանց ձևը կամ գեղեցկությունը: Կային և մի քանի թռչունների պաճուճապատաններ, որոնք ինձ այնպես էին թվում, որ կարծես թե կենդանի լինեին:

— Այդ բոլորը մեր աշակերտների հավաքածուն է, պարոն բժշկապետ,— ասաց Հայրիկը այնպիսի հրճվանքով, որ կարծես ինքն ևս ուրախանում էր իր սաների առաջին երեխայրիքի վրա:— Նրանք երբեմն իրանց վարժապետների հետ փոքրիկ արշավանքներ են կատարում մեր շրջակա լեռների վրա, և բնության մեջ ծանոթանում են բնության հետ:

— Դա հառաջադիմության մի մեծ քայլ պետք է համարել, Հայրիկ,— ասաց Ասլանը,— որ այստեղ, փոխանակ աշակերտներին զբաղեցնելու աստվածաբանական մթին խնդիրներով, սովորեցնում են բնական գիտություններ:

— Իմ համոզմունքն այն է, պարոն բժշկապետ,— ասաց Հայրիկը,— որ մեր մանուկների կրթության հետ պետք է կապված լինի և այն նպատակը, որ նրանք, բացի լավ քրիստոնյա լինելուց, դառնան և արհեստավորներ և լավ հողագործներ: Մեր ժողովուրդը աղքատ է և սոված, նա հաց է պահանջում, պետք է ուսումը միջոց տա նրան իր ապրուստը հայթայթելու: Եվ հենց այդ նպատակով՝ ես միացրի այդ դպրոցի հետ և երկրագործական բաժին, իսկ եթե կհաջողվի ինձ, ժամանակով կավելացնեմ և մի արհեստանոց: Իմ վանքի սուրբերը խիստ բարի են և ներողամիտ, նրանք չեն ձանձրանա սղոցի, խարտոցի և մուրճի ձայնից:— Այդ ասելով, ավելացրեց նա,— իմ նպատակն այն չէ թե պետք է բոլորովին զանց առնել հոգևոր կրթությունը, այլ, ընդհակառակը, պետք է ավելի մեծ հոգ տանել նրա մասին:— Եվ այդ խնդրի վրա երկար խոսելով, նա իր միտքը բացատրում էր նրանով, թե գաղթականությունը դեպի օտար երկրներ, բացի բազմաթիվ կորստաբեր հետևանքներից, տվեց և մի անբուժելի բարոյական հարված Վասպուրականի ժողովրդին. հայոց պանդուխտները, օտար երկրներում թափառելով, օտար երկրներից տեղափոխեցին իրանց դեռ կուսական դրության մեջ մնացած հայրենիքը՝ բազմատեսակ մոլություններ: Նախնական բարք ու վարքի սրբությունը կորավ, և մարդիկ ընկան

ապականության մեջ: Ժողովուրդը այժմ կարոտ է բարոյական մաքրության: Դա, իհարկե, գլխավորապես կրոնի և հոգևոր կրթության գործը պետք է լինի: Ճշմարիտ կրոնը և նպատակահարմար հոգևոր դաստիարակությունը թե՛ եկեղեցու, թե՛ դպրոցի և թե՛ ընտանիքի մեջ կարող է այդ նպատակին հասցնել, կարող է մեր մանուկներին բարոյական ուղղություն տալ:

Վանքի բոլոր ուշադրության արժանի հիմնարկությունները ցույց տալուց հետո, Հայրիկը մեզ տարավ իր սենյակը: Այստեղ պատրաստված գտանք մի պարզ նախաճաշիկ: Սեղանի վրա նա դեռ շարունակում էր խոսել վանական կրթության մասին:

— Շատերը,— ասում էր նա,— հակառակ են վանական կրթության, և կարծում են, թե վանքի խուլ և առանձնական կամարների տակ, հին նահատակների ու ճգնավորների պատկերների ազդեցության ներքո, չեն կարող պատրաստվել աշխարհի համար պիտանի մարդիկ: Այդ կարծիքը կարելի էր իրավացի համարել, եթե հայոց վանքը լիներ այնպիսի մի հիմնարկություն, որպես առհասարակ լինում են վանքերը:— Եվ նա բացատրում էր հայոց վանքի նշանակությունը թե՛ անցյալում և թե՛ ներկայում, ցույց էր տալիս, որ նա երբեք անջատված չէ եղել ժողովրդից, երբեք չէ ունեցել իր առանձին շահերը, այլ նրա շահերը միշտ կապված են եղել ժողովրդի շահերի հետ: Թեպետ եղել են բացառություններ, որ հիմնվել են կղերական ուղղությամբ վանքեր, բայց դրանք, խորթ և օտար լինելով հայոց ժողովրդի հատկություններին, չեն կարողացել պահպանել իրանց գոյությունը:

— Ինչո՞ւ օգուտ չքաղել վանքերից,— ասում էր նա,— մեր հայրերը թափեցին այնտեղ իրանց արծաթը, նվիրեցին նրանց ընդարձակ անշարժ կալվածքներ, և այդ հարստությունների մեծ մասը դեռ մնացել է: Առաջ նրանց արդյունքը ծախսվում էին ուրիշ բարեգործական նպատակների համար, իսկ այժմ կծախսենք մեր ժողովրդի զավակների կրթության համար: Ժողովրդից ստացածը կրկին կվերադարձնենք ժողովրդին:

— Դուք կարծում եք, Հայրիկ, միայն կրթությունը բավակա՞ն կլինի,— Հարցրեց Ասլանը:

— Բավական չի լինի,— պատասխանեց Հայրիկը:— Ժողովրդի զավակներին ուսում տալով և նրանց միջոցներ չտալով իրանց համար ապրուստ գտնելու, մենք միայն կպատրաստենք ուսումնական թշվառներ: Աղքատությունը այդ ժամանակ ավելի զգալի է լինում, որովհետև որքան ավելանում է մարդու մտավոր զարգացումը, այնքան ավելանում են և նրա կենսական պահանջները: Ռամիկը մի կտոր ցամաք հացով գոհ է մնում, բայց երբ այբ ու բենը մտցրիր նրա գլխում, նա կհասկանա, որ միսը ավելի սնունդ է տալիս: Եվ սև կլինի նրա օրը, եթե միս գտնել չկարողանա:

Ես զարմանում էի այդ եկեղեցականի դատողությունների վրա. նա բոլորովին հակառակն էր ասում, ինչ որ խոսում էին մյուս եկեղեցականները. նա չէր քարոզում աշխարհի ունայնությունը, նա չէր պախարակում կյանքի վայելչությունները, պնդելով, թե մարմինը զրկելով, մարդիկ ավելի մոտենում են երկնքին, ուր պետք է սպասել իսկական երջանկությունը:

— Այո՛,— ավելացրեց Ասլանը,— ուսումը պետք է լինի միջոց կյանքի իրական պահանջները հայթայթելու համար: Ասացեք, խնդրեմ, Հայրիկ, ո՞րն է ձեր կարծիքով ժողովրդի այժմյան ամենաանհրաժեշտ պահանջը, կամ, այլ խոսքով, ինչո՞ւմն է նրա գլխավոր հիվանդությունը, որը շուտափույթ բժշկության կարոտ է:

Կարծես տխրության մի ամպ անցավ Հայրիկի պայծառ դեմքի վրա և նրա գույնը մռայլվեցավ:

— Մեր ժողովրդի հիվանդությունը,— ասաց նա,— այնքան բազմատեսակ է և բաղադրյալ, որ անկարելի է մի քանի խոսքով բացատրել, պարոն բժշկապետ: Բայց ձեզ, որպես բժշկի, ավելի հասկանալի պետք է լինի, երբ հիվանդությունները բաղադրյալ են, այդ դեպքում, գտնում են ամենագլխավորը, որ մահ է սպառնում հիվանդի կյանքին, և նրանից են սկսում բժշկությունը:

— Այդ իրավ է: Բայց ո՞րն է գլխավոր հիվանդությունը:

— Իմ կարծիքով գաղթականությունը:

Եվ նա սկսեց երկար խոսել այդ առարկայի վրա, բացատրելով այն միտքը, թե հային պետք է հնար տալ, որ կարողանա ապահովել իր ապրուստը հայրենի հողի վրա, և ստիպված չլինի օտար երկրներում հաց որոնել:

— Ես հասկանում եմ, երբ եվրոպացին գաղթում է,— ասաց նա:— Նրա երկիրը այնքան նեղ է, մարդիկը այնքան բազմացել են, որ հողը չէ բավականանում: Իսկ մեզ մոտ՝ հողը ընդարձակ է, բայց մարդիկ նրանից օգուտ քաղել չեն կարողանում:

— Ուրեմն ինչի՞ց է հառաջ գալիս գաղթականությունը:

— Շատ և շատ պատճառներից. նրանից, որ երկրագործությունը դեռ իր նահապետական դրության մեջն է, նրանից, որ ժողովրդի արդյունաբերող մասը, մշակը, կողոպտվում է զանազան հարստահարողներից, նրանից, որ ճանապարհների հաղորդակցությունները վատ են և երկրի բերքը չէ արտահանվում, նրանից, որ մենք չունենք ոչ մի ընկերություն, ոչ մի հիմնարկություն, որ նպաստեր երկրի տնտեսական դրությունը բարվոքելու…— Ո՞ր մեկը ասեմ:

— Դուք կարծում եք, այժմյան հանգամանքների մեջ հնար կա՞ բարվոքելու…

Խոսակցությունը անցավ այն առարկայի վրա, թե արդյոք կարելի՞ է մի այնպիսի երկրում, ուր տիրող կառավարությունը, փոխանակ նպաստելու, ինքն է արգելք դնում ամեն հառաջադիմության, ուր մահմեդական ցեղերի կամայականությունը չափ և սահման չունի, ուր մարդու կյանքը, կայքը ամեն րոպե վտանգի ենթակա էր,— մի այդպիսի երկրում կարո՞ղ է հայը անձնատուր լինի խաղաղ աշխատության և տնօրինել իր կյանքի բարին: Հայրիկը ասաց.

— Մեր շրջապատող աննպաստ հանգամանքների մեջ, իրավ է, մեր ժողովուրդը չէ կարող իրան նվիրել խաղաղ աշխատության, և այդ պետք է գլխավոր պատճառներից մեկը համարել, որ շատերը դուրս են փախչում հայրենիքից, գնում են օտար երկրներում բախտ որոնելու: Բայց խո բոլոր հանցանքը չէ՞ կարելի դնել միայն չարագործի վրա, որ կողոպտում է, հափշտակում է ուրիշի աշխատության արդյունքը: Նույնքան հանցավոր պետք է համարել և նրան, որ թույլ է տալիս իրան կողոպտել: Ես հավատացած եմ, որ քուրդ ավազակը երբեք չի մոտենա հայի ոչխարների հոտին, եթե գիտենա, որ կիանդիպի տիրոջը՝ հրացանը ձեռին:

— Ես էլ այդպես եմ կարծում,— ասաց Ասլանը:— Բայց ինչո՞ւ հոգևորականությունը, որ կարող էր ավելի ազդել, չէ քարոզում հայերին փոքր ի շատե անձնապաշտպանության սովորել: Արևելքում կրոնը և հոգևորականությունը միշտ դեր են խաղացել ամեն մի հասարակական շարժումների ժամանակ և պիտի խաղան:

Հայրիկի դեմքը դարձյալ մռայլվեցավ:

— Ես իմ պաշտոնակիցներից ա՛յդ չեմ սպասում,— ասաց նա,— որ նրանք քարոզեին ժողովրդին անձնապաշտպանության սովորել. ես նրանցից շատ գոհ կլինեի, եթե ստրկության չսովորեցնեին: Նրանք ամեն հոգսեր կառավարության վրա են դնում: Կառավարության գործն է, ասում են, հսկել կարգի և ժողովրդի հանգստության վրա: Իսկ երբ ինքը՝ կառավարությունը թույլ է, անկարգ է, այլևս ի՞նչպես կարող է կարգ պահպանել: Նրանք այդ չեն մտածում, և միշտ սպասում են, որ մի օր ամեն բան ինքնիրան կլավանա…

Հետո Հայրիկը մեծ ցավակցությամբ սկսեց խոսել այն երկպառակության վրա, որի պատճառով ամբողջ տասնյակ տարիներ Վանա հայ հասարակությունը ալեկոծության մեջ էր գտնվում, և որը այնքան աղետավոր չարիքների առիթ եղավ: Ժողովուրդը երկու կուսակցության էր բաժանված. մեկի պարագլուխն էր տեղային հոգևոր առաջնորդը մի քանի հարուստ աղաների և դավաճան էֆենդիների հետ, որոնք կառավարության պաշտոնների մեջ էին գտնվում,— իսկ մյուս կուսակցության պարագլուխը նորահաս երիտասարդության մի խումբ էր, որոնց թվին պատկանում էր և Հայրիկը: Մի կողմում ուժ, հարստություն և իշխանություն, մյուս կողմում՝ եռանդ, բարի ցանկություններ և տկարություն: Մեկը անկարգ կառավարության կողմն էր, իսկ մյուսը՝ նեղված, հարստահարված ժողովրդի: Մեկը պահանջում էր կուրություն և անպայման հնազանդություն, իսկ մյուսը բողոքում էր կատարվող անիրավությունների դեմ:— Այդ բոլորը լսելուց հետո, ես այն ժամանակ միայն ավելի պարզ հասկացա, թե ի՞նչն էր դրդել հոգևոր առաջնորդին և նրա կուսակից էֆենդիներին դավադրություն գործ դնել Հայրիկի կյանքի դեմ: Եվ այդ բոլորը պատմում էր նա հանդարտ և հանգիստ կերպով, առանց վրդովվելու և առանց բարկության: Ատելության մի նշույլ անգամ չէր նկատվում նրա խաղաղ դեմքի վրա: Բայց նրա սառնասրտությունը առաջ էր գալիս ոչ թե անտարբերությունից, այլ նրա մեծահոգությունից և բարձր առաքինությունից, որով ներողամտությամբ էր վերաբերվում դեպի իր թշնամիների չարությունները: Բայց, միևնույն ժամանակ, չէր կարելի չնկատել նրա խոսքերի ու ձայնի մեջ մի ցավ, մի դառն և խորին ցավ, որ թաքնված էր նրա սրտում. թե ինչո՞ւ այդպես պետք է լիներ, թե այդ անհամաձայնությունը, այդ երկպառակությունները, այդ ներքին կռիվը ո՞րքան ջլատում էին նրանց ուժերը, որքան ժամանակ էին խլում նրանցից, երբ կարող էին ավելի օգտավետ, ավելի նպատակահարմար գործերով զբաղված լինել:

— Ահա՛ այդպես է լինում,— շարունակեց նա,— երբ հոգևորականությունը չէ հասկանում, կամ չէ ցանկանում հասկանալ իր իսկական կոչումը, թե ինքը Քրիստոսի եկեղեցու, այսինքն հավատացյալ ժողովրդի սպասավորն է և նրանից ընտրված մի պաշտոնյա, թե իր բոլոր գործունեությունը պետք է նվիրված լինի նույն եկեղեցու սպասավորությանը և բարեկարգությանը,— այդ դեպքում, նա շեղվում է ուղիղ ճանապարհից և ընկնում է մոլորությունների մեջ: Նա ծառայից դառնում է տեր, սկսում է իշխել և ծառայեցնել, իհարկե, ծառայեցնել իր շահերի համար: Այդ ժամանակ նա միանում է մարմնավոր իշխանության հետ, որ իրան նույնպես տեր է համարում, և նրա կողմն է բռնում: Որքան և անկարգ լիներ այդ իշխանությունը, այնքան ավելի նպաստավոր է նրա համար:— Ուրեմն, այլևս ինչո՞ւ ենք զարմանում, որ մեր քաղաքի հոգևոր առաջնորդը միացած է նահանգապետ փաշայի հետ, և ինքն էլ մի կողմից է կեղեքում խեղճ ժողովրդին…

— Ես փաշայի հետ տեսնվեցա,— ասաց Ասլանը,— նա չափազանց խորամանկ մարդ երևաց ինձ:

— Եվ խաբեբա մարդ,— ավելացրեց Հայրիկը:— Ինչպես ամեն թուրք պաշտոնակալ:

Երեկոյան պահուն, երբ օդը փոքր-ինչ զովացավ, Հայրիկը մեզ տարավ և երկար ման էր ածում իր վանքի շրջակայքում: Մեծ բավականությամբ ցույց էր տալիս նա այն բոլորը, ինչ որ արել էր և ինչ որ դիտավորություն ուներ անելու: Այդ եռանդոտ մարդը այն տպավորությունն էր գործում ինձ վրա, որպես մի լավ հողագործ, որին ծանոթ են իր ագարակի բոլոր բույսերը, բոլոր տունկերը, և որը գիտե նրանց բնավորությունը, ուսումնասիրել է նրանց կյանքը, և որը այնքան սիրում է նրանց, որպես մի քնքուշ տիկին սիրում է իր ձեռքով ցանած և իր ձեռքով հասցրած ծաղիկները: Նա ցույց էր տալիս այս և այն դաշտերը, ասելով, ահա՛ այնտեղ սկսել են տորոնի մշակությունը, այդ առաջին փորձն է մեր կողմերում, որը մեծ արդյունք է խոստանում,— ահա՛ այնտեղ թթենիներ են տնկած, դիտավորություն ունենք շերամապահությունը փորձել: Խոսում էր գետնախնձորի մշակության մասին, ասելով.

— Գիտե՞ք, պարոն բժշկապետ, մի քանի տարի առաջ գետնախնձորը այստեղ բոլորովին անծանոթ էր. մեր վանքը առաջինը եղավ, որ սկսեց մշակել, և մինչև այսօր մեծ դժվարություններ է կրում գյուղերում տարածելու: Մեր տերտերները դեռևս չեն լուծել այն հարցը, թե արդյոք գետնախնձորը կարելի՞ է ուտել պահոց օրերում:

Ասլանը ժպտաց:

— Շատերը ինձ մեղադրում են,— շարունակեց նա,— թե ինչո՞ւ վանքում ես հիմնեցի երկրագործական դպրոց, թե մի այդպիսի հիմնարկություն բոլորովին հակառակ է վանքի նշանակությանը և այլն: Ասեցեք խնդրեմ, պարոն բժշկապետ, ո՞վ արդյոք, ավելի քան վանականը, պետք է ծանոթ լինի երկրի ու նրա մշակության գործի հետ: Վանքը լոկ աղոթատեղի չէ, նա ունի ընդարձակ տնտեսություն, որը կանոնավոր կերպով կառավարելու համար, պետք է երկրագործական մեծ հմտություններ ունենալ: Կարդացեք մեր վանքերի պատերի վրա քանդակած արձանագրությունները և դուք կտեսնեք, որ սկսյալ մեր հին թագավորներից, իշխաններից և իշխանուհիներից, մինչև մեր ժամանակների բարեպաշտները, ընծայել են մեր վանքերին ամբողջ գյուղեր, ագարակներ, ընդարձակ անտառներ, այգիներ և այլն,— այնպես որ, վանքերը մեր կողմերում, և առհասարակ Հայաստանի մեջ ամենահարուստ կալվածատերերն են:— Վանականները ի՞նչպես կարող են կառավարել այդ կալվածները, եթե ծանոթ չեն գյուղատնտեսության հետ: Ամենաբարեխիղճ կապալառուն անգամ կարող է խաբել նրանց: Բացի դրանից, իրանց անընդունակությամբ միշտ կարող են վատնել կալվածները, ինչպես շատ վանքերինը վատնված է:

Ասլանը, որ բոլոր ժամանակը ուշադրությամբ լսում էր, հարցրեց.

— Դուք որևիցե վտանգ չե՞ք նախատեսում, Հայրիկ, երբ վանականները իրանց կալվածական հարստության հետ կստանան և՛ կրթություն, և՛ ուսում:

— Ի՞նչ վտանգ կարելի է սպասել կրթությունից,— հարցրեց Հայրիկը ոչ սակավ զարմանալով:

— Այն վտանգը, որ կոչվում է «կղերականություն»: Մինչև այսօր ձեր վանականները անզոր և անվնաս էին որովհետև անկիրթ էին, բայց կրթվելով, նրանք ուժ կստանան, կաշխատեն իշխել ժողովրդի վրա և հարստահարել նրան:

— Այդ հազիվ կարող է պատահել մեր մեջ,— պատասխանեց Հայրիկը:— «Կղերականությունը» հակառակ է մեր եկեղեցու ոգուն, որը կատարյալ ժողովրդական բնավորություն ունի: Եվ եթե վանականները կրթվելով կարող են բռնանալ ժողովրդի վրա և հարստահարել նրան,— չէ՞ որ, որքան կրթվեն վանականները, նույն չափով և գուցե ավելի կկրթվի ժողովուրդը, և այսպիսով

ուժերի հավասարություն կպահպանվի, և մեկը մյուսին չէ կարող ճնշել: Հոգևորականությունը այն ժամանակ միայն սկսում է վտանգավոր դառնալ, երբ իր զարգացման աստիճանով շատ բարձր է լինում ժողովրդից:

Ասլանը չկամեցավ այդ հարցի մասին երկար խոսել, որովհետև շատ վիճելի էր: Արեգակը արդեն սկսել էր խոնարհվել դեպի իր մուտքը: Հայրիկը չէր շտապում վերադառնալ զբոսանքից, և ինչպես երևում էր, նա դիտավորություն ուներ այն գիշեր պահել մեզ վանքում: Բայց Ասլանը շնորհակալությամբ հրաժարվեցավ, ասելով, որ քաղաքում հարկավոր գործ ունի, և չէ կարող մնալ: Երբ վերադարձանք վանքը, Ասլանը ինձ պատվիրեց, որ իսկույն ձիաները պատրաստել տամ: Ես գնացի դեպի ախոռատունը, իսկ նրան թողեցի Հայրիկի հետ միայնակ:

ԺԶ

ՄԱՏՆՈՒԹՅՈՒՆ

Արևը մտել էր և երեկոյան մութը բավական թանձրացել էր, երբ մենք, մեր ձիաները հեծնելով, մեծ գոհունակությամբ մնաք բարյավ ասեցինք Հայրիկին և, դուրս գալով վանքից, սկսեցինք իջնել Վարագա լեռան զառիվայրը: Ճանապարհը հայրիկի շնորհիվ հարթած էր, և մենք մեծ դժվարություն չէինք կրում իջնելու ժամանակ: Մեզ հետ ուղեկցում էր մի քահանա, որին կոչում էին տեր Եղիշե: Թե ի՞նչ գործ ուներ նա վանքում կամ ինչո՞ւ եկավ նա մեզ հետ և կամ ի՞նչ էր խոսում նա ճանապարհին Ասլանի հետ,— այդ ես չգիտեմ, որովհետև նրանք հիսուն քայլով ինձանից առաջ էին գնում, իսկ ես իմ ձիու դանդաղ ընթացքով գնում էի նրանց ետևից: Միայն այդ մարդու անցյալ և ներկա կյանքը բովանդակում էր իր մեջ մի քանի այնպիսի գծեր, որ անկարելի էր չհետաքրքրվել նրանով: Նա ոչ մի տեղում կանոնավոր ուսում չէր ստացել. սկսյալ իր պատանեկության հասակից, նա եղել էր այն ըղձախնդիր ուսումնասերներից մեկը, որ հին դարերի փիլիսոփաների նման, երկար թափառել էր զանազան երկրներում գիտություն մուրալու նպատակով: Նա դիմել էր այս և այն նշանավոր քերականին, ճարտասանին, տրամաբանին, աստվածաբանին, նա մտել էր նաև անապատական աբեղաների միաբանության մեջ, բայց ոչ մի տեղում իր ուսումնասիրությանը չէր կարողացել հագուրդ տալ: Նա մտել էր մինչև անգամ մի եզվիտական դպրոց և շուտով թողել էր: Նա կենակցություն էր ունեցել Դամասկոսի շեյխերի և Լիբանանի ռաբբիների հետ: Նրա մոլաշրջիկ կյանքը և ամեն տեղ իր որոնածը չգտնելը ծնեցրին նրա մեջ մի տեսակ թերահավատություն դեպի ամեն ինչ: Եվ այլ կերպ լինել կարող չէր: Նրան չհաջողվեցավ հասնել այն աղբյուրներին, որտեղից մաքուր ու պարզ բխում է ճշմարտությունը: Նրա ժամանակում կանոնավոր դպրոցներ չկային, այլ կային միայն անհատներ, որոնք իրանց չքավոր գիտությանը այնքան մեծ նշանակություն էին տալիս և այնքան թանկ գնով էին վաճառում, որպես մի քուրմ իր սրբությունը: Դրանց մոտ պետք էր շատ տարիներ սպասավորել և նրանց բոլոր հաճույքը կատարել, մինչև նրանք արժան կհամարեին մի փոքր մասն տալ իրանց գիտությունից:

Բայց տեր Եղիշեն առողջ դատողության տեր մարդ էր: Երկարամյա փորձերը, ամեն տեսակ անձանց հետ շփվիլը՝ առաջ էին բերել նրա մեջ բոլորովին ինքնուրույն համոզմունքներ, և նրա բոլոր գաղափարները, թեև ըստ մեծի մասին անճիշտ, բայց իր սեփական մտածության արդյունք էին: Վերադառնալով իր հայրենիքը, Վան, նա հանդիպեց Հայրիկին, որի հետ իսկույն բարեկամացավ և որի ազդեցության ներքո բոլորովին ուրիշ ուղղություն ստացավ: Այստեղ նա վճռեց իրան նվիրել մանուկների կրթության գործին, և մտածելով, որ իբրև կրոնավոր, ավելի հեշտ կլինի իրան գործել ժողովրդի մեջ, ձեռնադրվեցավ քահանա: Որպես քահանա, նա հրաժարվեցավ

ծուխից, հրաժարվեցավ և այն արդյունքներից, որ յուրաքանչյուր քահանա ստանում է իր ծուխից: Այդ արեց նա այն մտքով, որ փոքր-ինչ անկախ դիրք ստանա, և մանավանդ, որ ընդհարումներ չունենա մյուս եկեղեցականների հետ, որը անխուսափելի է դառնում, երբ մեջտեղում շահերի խնդիր կա: Նա բավականացավ մի փոքրիկ օրիորդական դպրոցով, որ պահում էր իր տան մեջ: Այս առաջին օրիորդական դպրոցն էր, որ բացվեցավ Վանա մեջ, բայց որպես առաջինը և որպես մի նոր և անսովոր հիմնարկություն, նրա կյանքը կարճատև եղավ: Սկզբում նույնիսկ քահանաներն եղան, որ գրգռեցին հասարակության տգիտությունը նրա դեմ, ցույց տալով ուսումը աղջկանց համար՝ մի անբարոյականացնող ձեռնարկություն: Քաղաքի սրբազան առաջնորդը, որ կարող էր խաղաղացնել հասարակության հուզմունքը, ինքը ավելի բորբոքեց, և դպրոցը երեք տարի գոյություն ունենալուց հետո փակվեցավ: Այդ անցքը խիստ դառն կերպով ազդեց տեր հոր սրտին, երբ իր գործունեության հենց առաջին քայլում հանդիպեց այդ տեսակ անհաջողության: Բայց նա համբերող և երկայնամիտ մարդ էր, նա վշտացավ, բայց չհուսահատվեցավ:

Գիշեր էր, երբ մենք հասանք Այգեստան: Տեր հայրը հրավիրեց մեզ իր տունը ընթրիք ուտելու: Ասլանը, որ սովորություն չուներ այդ տեսակ հրավերքներ ընդունելու, սիրով հանձն առեց նրա առաջարկությունը: Ընթրիքն անցավ բավականին զվարճալի կերպով. տեր հայրը պատմում էր զանազան արկածներ իր ճանապարհորդություններից, պատմում էր, թե ինչ էր տեսել և ինչ էր արել զանազան երկրներում, խոսում էր Հայրիկի մասին, նրա աշխատությունների մասին, խոսում էր տեղային քահանաների տգիտության մասին, և նրա խոսակցությունները այնքան հետաքրքիր էին, որ բոլորը ես մեծ ուրախությամբ լսում էի:

— Դուք կարծում եք տիկինը կարո՞ղ է գալ,— հարցրեց Ասլանը քահանայից, ընթրիքի սեղանը հավաքվելուց հետո:

— Կարող է, և անպատճառ այս գիշեր այստեղ կլինի,— պատասխանեց քահանան վստահությամբ:

— Բավական դժվար կլինի նրա համար… ի՞նչպես կարող է…— կրկնեց Ասլանը թերահավատությամբ:

— Նա իր բանը գիտե… նա այդ տեսակ գործերի համար բավական խելք ունի…— ասաց քահանան:

Ասլանը մեծ անհամբերությամբ սպասում էր մի տիկնոջ, այդ տիկինը տեր հոր քույրն էր: Տեր հայրը իր հայրենիքից բացակա գտնված ժամանակ, նրա տանը պատահել էր երկու անփոխարինելի կորուստ. մայրը վախճանվել էր, իսկ միակ քույրը, անտեր մնալով, բռնությամբ հափշտակվել էր, և մի տաճկի ամուսին էր դարձել: Այդ հափշտակությունը, որովհետև երկրի սովորական դեպքերից մեկն էր, անցել էր խիստ ներողամտությամբ հայ հասարակության կողմից, իսկ տեր հայրը, որ անչափ սիրում էր իր քրոջը, որպես երևում էր, չէր կարող մոռանալ այդ դժբախտությունը: Մահմեդականությունը շատ պայմաններ ունի, ոչ միայն օտարազգիներին ամենայն դրությամբ որսալու, այլև նրանց թե՛ կրոնապես և թե՛ ազգայնապես իր հետ միացնելու: Այդ էր, որ ավելի ցավեցնում էր տեր հորը: Մի հայ աղջիկ կամ տղա, կամավ, թե ակամա, երբ մահմեդականի հետ է ամուսնանում, այնուհետև կտրվում են նրա բոլոր հարաբերությունները իր ազգակիցների հետ և այլևս իրան հայ կոչել չէ կարող: Մի հայի պատահելիս՝ նա իրավունք չունի հայերեն խոսել. նա զրկվում է մինչև անգամ իր ծնողների տունը գնալուց. և «հայ» անունը նրա բերանում այնուհետև փոխվում է «գավուր» անունով, որից պետք է խորշիլ, որին պետք է պիղծ համարել: Բայց տեր հոր քույրը այդ մասին մի գեղեցիկ բացառություն էր կազմում. նա մնացել էր հավատարիմ թե՛ իր ազգին և թե՛ կրոնին, թեև ամենայն զգուշությամբ

մահմեդականներից թաքցնում էր իր զգացմունքները: Նա սիրում էր իր եղբորը և երբեմն գաղտնի կերպով գալիս էր նրա տունը, ուրախանում էր նրա երեխաներով, և փառք էր տալիս աստծուն, որ իր հոր տան օջախը իսպառ մարած չէր:

Թելլի-խաթունը,— այդպես էին կոչում այժմ նրան,— քաղաքի ոստիկանության գլխավորի կինն էր: Նրա ամուսինը կոչվում էր Լաթիֆ-բեկ: Դա այն չարագործների տեսակիցն էր, որոնց ոստիկանի պաշտոնը բավական ընդարձակ հարմարություններ է ընծայում, իրանց անբարոյական ցանկությունները կատարելու: Գողերի գաղտնի ընկեր էր նա, ավազակների պաշտպան, սպանությունների մասնակից, մի խոսքով, հազիվ թե քաղաքում մի որևիցե անիրավություն գործվեր և նրա մատը խառն չլիներ: Բայց միևնույն ժամանակ նահանգապետ փաշայի սիրելին էր նա:

Իսկ տիկինը այնքան բարոյական ուժ ուներ, որ իր քաղցր բնավորությամբ, խելքով ու շնորհքով, եթե ոչ բոլորովին կարողացել էր զսպել այդ գազանին, բայց շատ անգամ հաջողվում էր նրան՝ մեղմացնել իր ամուսնու բարբարոսությունները: Նա միևնույն ժամանակ սիրելի էր իր ամուսնուն: «Ի՞նչ անեմ… սովորել եմ… եթե այն հացը, որ ուտում եմ, **հառամ** չլինի, չեմ կարող մարսել»,— այդ էր լինում ոստիկանի պատասխանը, երբ տիկինը խրատում էր նրան: Նրա տան մեջ շատ անգամ կատարվում էին եղեռնական խորհուրդներ մեկին սպանելու, մյուսին կողոպտելու, երրորդի տանը կրակ տալու և այդ տեսակ խորհուրդներ ըստ մեծի մասին վերաբերում էին քրիստոնյաներին: Եթե տիկինը չէր կարողանում խափանել չարությունը, այն ժամանակ նա, իրան բոլորովին անհայտության մեջ պահելով, զգուշացնում էր, որտեղ որ հարկն էր, և չարիքի առաջն առնում էր: Այդպես, երբ որ նա հայտնի կերպով անկարող էր ներգործել, դիմում էր գաղտնի միջոցների:

Նա թշվառ էր, նա անբախտ ամուսին էր: Բռնությամբ հափշտակեցին նրան հայրենի տնակից, բռնությամբ ստիպեցին նրան ուրանալ իր կրոնը, իր ազգը,— նա սովորեց ատել բռնությունը, և նրա վշտացած սրտում զարգացավ մի խուլ բողոք դեպի ամեն չարություն: Իր թշվառության գիտակցությունը ծնեց նրա մեջ կարեկցություն և դեպի օտարի թշվառությունը: Մասնավոր, անձնական զգացմունքը ընդարձակ կերպարանք ստացավ և տարածվեցավ իր ազգայինների վրա, որոնք միևնույն տառապանքների մեջն էին: Այն եղեռնական տեսարանները, որոնք շատ անգամ հանդիսանում էին նրա տան մեջ, այն անիրավությունները, որոնք համարյա ամեն օր կատարվում էին իր շուրջը, ավելի և ավելի բորբոքում էին նրա դառն ատելությունը դեպի այն ազգը և դեպի այն կառավարությունը, որ այդ բոլորը մեքենայում էր: Ես վաղուց կթողնեի այդ տունը, ես շուտով կհեռանայի այդ գազանների որջից,— երբեմն ասում էր նա իր եղբորը,— բայց համբերեցի և մնացի, որ որքան կարող եմ, օգնեմ թշվառներին»… Նա իրան զոհել էր, ուրիշ զոհեր պաշտպանելու համար:— Այդ էր միայն մխիթարում նրան:

Ես հետո ավելի մոտ ծանոթություն ունեցա այդ տիկնոջ հետ, այն ժամանակ միայն նկատեցի, որ նրա աշխատությունները՝ դարման տանելու իր ազգայինների թշվառություններին՝ չէին սահմանափակվում միայն այսպիսի մասնավոր օգնություններով, նրա նպատակները շատ ընդարձակ էին, նա ուներ բավականին հիմնավոր գաղափարներ՝ տիրող չարիքը բառնալու համար: Այդ գաղափարները զարգացել էին նրա մեջ մասամբ իր անբախտ և ճնշյալ դրությունից, իսկ առավելապես եղբոր ազդեցությունից: Նրա հարաբերությունները Ասլանի հետ, որպես երևում էր, նոր չէր: Այդ ես նկատեցի իսկույն, երբ նա եղբոր հետ ներս մտավ մեր սենյակը: Նա մոտեցավ և մի տարապայման համարձակությամբ, որ խիստ օտարոտի էր հարեմի կնոջ համար, նստեց Ասլանի մոտ և, նրա աջը առնելով իր ձեռքերի մեջ, ժպտալով ասաց.

— Ախ, որքան ցանկանում էի քեզ տեսնել… ո՞ւր էիր, ինչ ես այդքան թափառում այդ վանքերում…

— Վանքերն էլ պետք է տեսնել,— ասաց Ասլանը նույնպես ժպտալով,— մեր ժողովուրդը դեռ չէ ազատվել վանքերից…

— Բայց քո դեմ որոգայթներ են լարվում, գիտե՞ս:

— Գիտեմ… և հենց դրա համար ուզում էի տեսնել քեզ:

— Դու մատնված ես…

— Այդ ես վաղուց սպասում էի:

Տիկինը տվեց Ասլանին մի նամակ, որի կարդալու միջոցին, դեմքը բոլորովին այլայլվեցավ, հետո իր սովորական սառնասրտությամբ հարցրեց.

— Այդ նամակը ի՞նչպես ընկավ քո ձեռքը:

Տիկինը պատմեց, թե մի քանի օր առաջ փաշայի քարտուղարը բերեց իր ամուսնի մոտ այդ նամակը և հանձնեց նրան, փաշայի կողմից պատվիրելով, որ ամեն հնարներ պետք է գործ դնել, որպեսզի գտնվի նամակի մեջ նկարագրված անձը: Իսկ տիկինը՝ գաղտնի լսում էր նրանց խոսակցությունը, և իսկույն հասկացավ, թե գործն ումն էր վերաբերում, և ամուսնու բացակայության ժամանակ նրա թղթերի միջից վեր առեց նամակը:

Նամակը գրած էր տաճկերեն լեզվով, նրա բովանդակությունը մոտավորապես այս էր, թե սուրբ տիրամոր տոնախմբության ժամանակ հայտնվեցավ մի աբեղա, որ լեռնային ճգնավորի կերպարանքով թափառում էր ուխտավորների մեջ: Հետո կեղծ ճգնավորը, վանեցի վաճառականի ձևի մեջ մտած, գնաց եզիդիների ցեղապետի վրանը, նրա մոտ մնաց մի ամբողջ օր (եզիդիների ցեղապետը հայտնի թշնամի է կառավարության): Այնտեղից դուրս գալուց հետո, նա անհայտացավ, բայց նամակագիրը շատ հավանական էր համարում, որ անպատճառ Վան եկած պետք է լինի: «Խաբեբան դավադիրների մի մեծ խմբի գլխավոր անդամներից մեկն է, որոնք ամեն տեղ խռովություն են սերմանում: Այդ անիրավները չափազանց հանդուգն և ճարպիկ մարդիկ են, որոնց անձնանվիրությունը իրանց գաղափարին հասնում է վերին աստիճանի մոլեռանդության, և այդ պատճառով, ավելի վտանգավոր են: Եթե Վան եկած լինի, նա անպատճառ մի որևիցե նոր կերպարանքի մեջ մտած պետք է լինի»: Հետո ավելացրած էր:

«Իմ այս տեղեկություններով ես գլխավորապես պարտական եմ սուրբ Տիրամոր վանքի վանահայր Կարապետ վարդապետին, որը մեր հավատարիմն է և անձամբ ձերդ վսեմության ծանոթ: Դա միևնույն անձնավորությունն է, որին անցյալ տարի դուք պատվեցիք, պարգևելով մի թանկագին մուշտակ: Նա ինքը մի բարեբախտ դիպվածով կարողացել էր երևան հանել գաղտնիքը, երբ խաբեբան արդեն այստեղից հեռացել էր: Ես անմիջապես մարդիկ ուղարկեցի նրան կալանավորելու, բայց իմ մարդիկ դժբախտաբար նրա հետքը կորցրել էին»:

Նամակը ուղղված էր Վանի նահանգապետ փաշային և ստորագրված էր միևնույն քուրդ Շարիֆ-բեկի անունով, որին մենք տեսանք սուրբ Տիրամոր վանքի տաճարում, ուր եկած էր նա իր բաժին գանձանակադրամը ստանալու: Բեկի ստորագրության ներքև դրոշմված էին Կարապետ հայր սուրբի, տեր Թոդիկի և իմ քեռի Պետրոսի կնիքները այսպիսի մակագրությամբ.

«Մենք հաստատ գիտենք և վկայում ենք, որ բոլորը, ինչ որ գրել է բեկը, ճշմարիտ է և ուղիղ»:

— Մեկը վարդապետ, մյուսը քահանա, իսկ երրորդը ժողովրդի ներկայացուցիչ, իրավ, լա՞վ զույգեր են…— ասաց Ասլանը ծիծաղելով և նամակը մի կողմ դնելով:

Հետո նա դարձավ դեպի տիկինը այս խոսքերով.

— Դու ինձ ասում ես, նազելի տիկին, թե ինչո՞ւ եմ ես թափառում վանքերում: Ախար ես աշխատում եմ, եթե նրանցից մի բարիք գտնել չեմ կարող, գոնե նրանց չարը մեզանից հեռացնեմ:— Տեսնո՞ւմ ես, ովքեր են մեր մատնիչները…

Կարծես տխրության մի ամպ անցավ տիկնոջ համակրական դեմքի վրա:

— Դու այդ նամակը գողացել ես, պետք է տանես դարձյալ իր տեղը դնես,— խոսքը փոխեց Ասլանը:

— Կարծեմ աստված իմ այդ գողությունը մեղք չի համարի,— ասաց տիկինը ժպտալով:

— Ես էլ կարծում եմ, որ մեղք չի համարի, բայց քո ամուսինը կասկածանքի մեջ կընկնի, երբ կտեսնե, որ նամակը իր տեղումը չէ:— Դու այն ասա՛, հիշո՞ւմ ես, թե ուրիշ ի՞նչ խոսեց փաշայի քարտուղարը, երբ նամակը հանձնեց քո ամուսնուն:

— Բոլորը հիշում եմ:

— Ո՞ւմ վրա կասկած ունեին:

— Քո վրա: Իմ ամուսինը ասաց քարտուղարին. «Այդ եվրոպացի բժիշկը իմ աչքում մի բարի պտուղ չէ երևում»… Իսկ քարտուղարը պատասխանեց, թե բժիշկը հայոց առաջնորդի մոտ հյուր է կանչված, փաշան նույնպես հրավիրված է, այնտեղ պետք է փորձել նրան:— Իրա՞վ դու հրավիրված ես առաջնորդի մոտ:

— Այո՛:

— Ես խորհուրդ կտայի չգնալ, փորձանքի մեջ կընկնես:

— Հենց դրա համար, որ նրանք պետք է ինձ «փորձեն», հարկավոր է գնալ:

— Իմ ամուսինը նույնպես այնտեղ կլինի: Նա շատ վտանգավոր մարդ է:

— «Աղվեսը հավանոցի մեջ առյուծ կդառնա»:— Նա վտանգավոր է, այո՛, բայց այստեղի ողորմելի հայերի համար:

— Այնուամենայնիվ, զգուշանալ պետք է:

— Դու առաջ միշտ քաջալերում էիր ինձ, տիկին, իսկ այժմ վհատեցնում ես: «Ծովը մտնողը թրջվելուց չի վախենա»: Ես այդ տեսակ փորձանքներ շատ եմ տեսել: Խրախուսեցեք, ոգի և շունչ տվեցեք մեզ տիկին: Մարդկային հասարակության մեջ բարի գործերը ավելի հաջողությամբ կկատարվեն, երբ գործիչների թվում կմասնակցեն և կանայք: Մեսիան առաջինն եղավ, որ հասկացավ այդ կարևորությունը, և նրա մարիամները և մարթաները, քրիստոնեության սկզբում, ավելի գործ կատարեցին, քան թե պողոսները: Հինգերորդ դարու հայ կանայք վառեցին այն կրակը, որ բորբոքեց Ավարայրի դաշտի հերոսների սրտերը: Եվ այժմյան հայի կյանքում գործերը այն ժամանակ միայն շատ լավ առաջ կգնան, երբ

կինը և տղամարդը կբաժանեն աշխատանքը: Դուք այն առաքինի կանանցից մեկն եք, որ պետք է օրինակ տաք ձեր քույրերին: Հանգամանքները ձգեցին ձեզ բոլորովին օտար շրջանում, դուք ընկաք թշնամի բանակի մեջ: Մի ուրիշը ձեր տեղ կարող էր բոլորովին կորած լինել: Բայց դուք ապացուցեցիք, որ մարդ կարող է պիտանի լինել իր ազգին, որտեղ և լիներ նա: Մի ժամանակ հայ տիկինները զարդարում էին պարսից թագավորների և մինչև անգամ մոնղոլների խաների կանանոցները: Եվ այդ տիկինները ավելի օգուտ էին բերում իրանց հայրենիքին, քան ժամանակի թուլասիրտ հայ իշխանները: Նրանք շատ անգամ հեռացնում էին իրանց արյունարբու ամուսինների գազանային բարբարոսությունները խղճուկ Հայաստանից, կամ նրանց շնորհիվ Հայաստանը վայելում էր այս և այն իրավունքները: Դուք, տիկին, նրանցից մեկն եք:

Տիկնոջ գեղեցիկ աչքերի մեջ փայլեց ամոթխածության կրակը: Ասլանի խոսքերը բավական փաղաքշական երևացին նրան: Նա ոչինչ չպատասխանեց, բայց եղբայրը, որ բոլոր ժամանակ լուռ էր, հարցրեց.

— Ինձ շատ զարմացնում է մի բան, թե ո՞րպես Կարապետ հայր սուրբին կամ նրա համախոհներին կարող էր հայտնի լինել գաղտնիքը:

— Շատ հասարակ կերպով,— պատասխանեց Ասլանը, և պատմեց անցյալ դեպքերից մեկը, որը հատկապես ինձ համար թե՛ շատ հետաքրքրական էր և թե՛ շատ ամոթալի…

Դու հիշում ես, ընթերցող, տիրամոր վանքի տոնախմբության ժամանակ, այն խաղաղ խորհրդավոր գիշերը, երբ ես և գեղեցիկ Մարոն, նստած նրանց վրանի մուտքի հանդեպ, քաղցր խոսակցության մեջ էինք: Ուխտավորների ընդարձակ բանակի մեջ տիրում էր խորին լռություն: Հանկարծ հեռվից լսելի եղավ երգեցողության մի հիանալի ձայն: «Այդ ճգնավորի ձայնն է», ասաց Մարոն: Ես «ճգնավորին» ցերեկով տեսել էի Կաթնաղբյուրի ձորում, իսկ նույն գիշերը, փոքր-ինչ առաջ, ես տեսա նրան իմ քեռի Պետրոսի վրանում, նրա և տեր Թոդիկի հետ խոսելիս: Ի՞նչ խորհուրդ ունեին, ես չգիտեմ, որովհետև ես շուտով թողի և հեռացա նրանց մոտից: Երբ Մարոն ասաց ինձ՝ «ճգնավորի ձայնն է», ես հետաքրքրվեցա այդ խորհրդավոր ճգնավորով, և ավելի մեծ եղավ իմ զարմանքը, երբ Մարոն հայտնեց ինձ, որ նա Ասլանն է: Հետո մենք սկսեցինք երկար խոսել ծպտյալ Ասլանի վրա, որ լեռնային ճգնավորի կերպարանքով թափառում էր վանքի շրջակայքում և ուխտավորների բանակի մեջ: Բայց մենք այնքան անզգույշ էինք, որ ամենևին չէինք մտածում, որ վրանի միջից երկու սուր ականջներ լսում էին մեր խոսակցությունը: Դա պառավ Խաթունն էր, որին քնած էինք կարծում: Դու հիշո՞ւմ ես, ընթերցող, այն սոսկալի սպառնալիքները, որ զայրացած Մարոն կարգում էր իմ քեռի Պետրոսի, տեր Թոդիկի և նրանց համախոհների մասին: Դու և այն մոռացած չես լինի, որ հետո ես և Մարոն գիշերով գնացինք ծպտյալ ճգնավորի — Ասլանի մոտ, գտանք նրան ծովեզերքում մի այրի մեջ, և մինչև առավոտ մնացինք այնտեղ: Այդ բոլորը լցնում են պառավ Խաթունի միամիտ գլուխը զանազան կասկածներով, որը, առանց դրանց էլ, իմ և Մարոյի հարաբերությունների վրա միշտ ծուռն աչքով էր նայում: Խաթունը մոլեռանդ է. դա այն հավատավոր կանանցից մեկն է, որ կարծում են թե ամեն բան պետք է ասել տերտերին: Իսկ այդ դեպքում, նա ավելի պատճառներ ուներ հայտնելու տեր Թոդիկին բոլորը, ինչ որ լսել էր նա մեր այն գիշերվա խոսակցությունից: Ասում եմ, պատճառներ ուներ, որովհետև Մարոյի անխոհեմ սպառնալիքները վերաբերում էին ըստ մեծի մասին տեր Թոդիկին, և հավատավոր պառավը պարտք էր համարել զգուշացնել քահանային: Տեր Թոդիկը, ինչպես հայտնի է, այն տեսակ անձինքներից է, որ «սև ջրից սեր կքաղեն», այսինքն, ամենաչնչին բանից օգուտ քաղել գիտե: Իսկ պառավը հայտնել էր նրան շատ բան: Նա թափ էր տվել պառավի միամիտ գլխից բոլորը, ինչ որ հայտնի էր որսորդի տան և նրա այցելուների մասին: Այնուհետև տեր

Թոդիկը, ոչ այնքան անձնապաշտպանության զգացմունքից դրդված, որքան վրեժխնդրության ախտով կատաղած, վճռում է պատժել Ասլանին, մանավանդ, որ Ասլանի և նրա ընկերների գործունեությունը ամենևին համակրելի չէր թե՛ տեր հորը և թե՛ նրա համախոհներին: Նա անմիջապես հայտնում է իմ քեռի Պետրոսին և Կարապետ հայր սուրբին իր ստացած տեղեկությունները, հետո իմացում են տալիս Շարիֆ-բեկին, որ այդ ժամանակ գտնվում էր Ս. Տիրամոր վանքում, և չորսը միասին գրում են նահանգապետ փաշային այն նամակը, որ քանի րոպե առաջ Ասլանը կարդաց մեզ:

– Հիմա հասկացա՞ք, թե որտեղից Կարապետ հայր սուրբին և նրա համախոհներին կարող էր հայտնի լինել գաղտնիքը,– հարցրեց Ասլանը, երբ վերջացրեց իր պատմությունը:

Ես հալվեցա ամոթից: Գլխավորապես իմ և Մարոյի հիմարությունիցն էր առաջ եկել այդ բոլորը: Իսկապես մենք էինք մեր անզգուշությամբ մատնել Ասլանին: Նա նկատեց իմ շփոթությունը և դառնալով դեպի ինձ՝ ասաց.

– Դու ուրախ կաց, բոլորը կանցնի…

Բայց տիկնոջը ավելի հետաքրքրում էր այն, թե ո՞րտեղից և ի՞նչ եղանակով հասել էին Ասլանին այդ տեղեկությունները:

– Ես մի օր առաջ նամակ ստացա,– ասաց Ասլանը:

Ես իսկույն հիշեցի պառավ Սուսանի մի օր առաջ հայտնվիլը Այգեստանի փողոցներում և Հյուբբիի կախարդական գավազանի մեջ թաքցրած խորհրդավոր թուղթը:

– Ուրեմն դու ինձանից առաջ գիտեիր, որ մատնված ես,– ասաց տիկինը,– ուրեմն ես մի մեծ ծառայություն չարեցի քեզ, ցույց տալով փաշայի ստացած նամակը:

– Դու ինձ շատ պարտավորեցրիր,– պատասխանեց Ասլանը:

Տիկինը ժպտաց:

– Բայց ինձ զարմացնում է,– հարցրեց նա,– թե ի՞նչպես կարող էին քո նամակագրին հայտնի լինել այդ բոլոր մանրամասնությունները, որպես պատմեցիր,– թե՛ Ֆարհատի և Մարոյի գիշերային խոսակցությունը իրանց վրանի հանդեպ, թե՛ Խաթունի լսելը և նրա խոստովանությունը տեր Թոդիկին, թե՛ այդ քահանայի և նրա համախոհների արած մատնությունը քուրդ բեկին, և այլն:

– Այդ բոլորը հայտնել էր իմ նամակագրին Մարոն,– պատասխանեց Ասլանը:– Երբ տեր Թոդիկը իր մոտ խորհուրդ է կազմում՝ Կարապետ հայր սուրբի, տանուտեր Պետրոսի և քուրդ բեկի հետ, նրանց բոլոր խոսակցությունը լսում է քահանայի դուստրը, Սոնան, որը մի պատվական աղջիկ է: Նա շտապում է և շուտով իմացում է տալիս Մարոյին, իսկ Մարոն՝ իմ թղթակցին:– Տեսնո՞ւմ ես, տիկին, դարձյալ կանայք են շինում բանը:

– Իսկ պառավ Խաթունի խոստովանությունը քահանայի՞ն:

– Նա ինքն է պատմում Մարոյին, երբ Մարոն հարցնում է նրանից: Ինձ գրել էին, թե խեղճ պառավը միշտ լաց է լինում, որ իր խոստովանությունը այդպիսի վատ հետևանք ունեցավ:

– Մարո՛ և Սոնա,– կրկնեց տիկինը մի առանձին ոգևորությամբ,– երկու նորընծա օրիորդներ, որ պատրաստվում են ծառայել բարի գործին: Ա՛խ, որքան ցանկանում եմ գոնե մի անգամ տեսնել նրանց:

– Երկուսն էլ շատ սիրուն և հարուստ ձիրքերով աղջիկներ են,– ասաց Ասլանը:– Ժամանակով նրանցից լավ բան կդուրս գա…

Ա՛խ, ո՛րքան քաղցր էր ինձ լսել այսպիսի գովասանքներ թե՛ Մարոյի և թե՛ Սոնայի մասին, երկուսն էլ անմոռանալի հիշատակներով կապված էին իմ սրտի հետ…

Խոսակցությունը կրկին դարձավ մատնության վրա: Տիկինը հարցրեց.

– Ես զարմանում եմ, թե ինչի՞ց են հառաջ գալիս այդ մատնությունները:

Տեր հայրը, որ մինչև այդ ժամանակ լուռ էր, պատասխանեց.

– Եթե դու կարդացած լինեիր մեր ազգի պատմությունը, չէիր զարմանա, սիրելի քույր: Տխո՛ւր է մեր անցյալը, և մեր ներկա կյանքը անցյալի շարունակությունն է: Ես շատ տեղեր եմ ման եկել, շատ երկրներ եմ տեսել, բայց ոչ մի ազգ չեմ տեսել, որ հայի նման լինի: Մի ազգ, որի հետ կարելի է համեմատել հային, են հրեաները: Բայց հրեան ևս շատ բաների մեջ բարձր է հայից: Մի ժողովրդի ճնշված, ստրկացած, հալածված դրությունը ավելի սեղմում է նրանց և ավելի ամրապնդում է նրանց մեջ միության կապերը: Եվ հրեաները այդ միությունը ունեն, բայց հայերը չունեն: Ես մինչև այսօր չեմ կարողացել հասկանալ, թե ինչո՞ւ նույն շարժառիթները, այսինքն հալածանքը և ճնշումն, հառաջ չեն բերել հայերի մեջ այն միությունը, որ կա հրեաների մեջ, քանի որ այդ երկու ազգերի դրությունը շատ նման է միմյանց: Տեսնում ես, Աղվանիստանի, Բելուջիստանի կամ Բուխարայի խորքերում մի քանի տուն հրեաներ, նրանք դարերով ապրում են այնտեղ և օր ըստ օրե աճում են, բազմանում են, որովհետև շատ սերտ կերպով միացած են միմյանց հետ: Բայց հայ գաղթականները, մինը մյուսին ոչնչացնելով, վերջապես սպառվում են: Որտեղ երկու տուն հայեր կան, նրանց մեջ չորս կուսակցություն կա: Անմիաբանությունը վաղեմի ժամանակներից մեր ազգի կյանքի մեջ այն ուտող, մաշող ցեցն է եղել, որ ժառանգաբար անցել է մեզ, և որ սպառել է ազգային մարմինը: Մեր պատմության մեջ կարող եք տեսնել հազարավոր օրինակներ, մանավանդ այն դարերում, երբ պարսիկները, հույները, արաբացիները, սելջուկները և մոնղոլական զանազան ցեղեր կրակով և արյունով ոչնչացնում էին Հայաստանը: Նրանց առաջնորդները միշտ եղել են իրանք հայերը, և միշտ հայերից միացած են եղել թշնամու հետ: Այժմ հասկացա՞ր, սիրելի քույր, թե ինչի՞ց են հառաջ գալիս այս մատնությունները, որ քեզ այսպես խռովեցնում են:

– Բայց մի՞թե օտարի լուծը ավելի քաղցր է,– հարցրեց տիկինը վշտացած ձայնով:

– Այո՛, հայը սիրում է օտարի լուծը: Մեր պապերը չէի՞ն, որ դիմեցին պարսից Վռամ արքային և նրանից խնդրում էին, որ հայ թագավորը վեր առնե և նրա տեղը պարսից մարզպան դնե, և այսպիսով կործանեցին Արշակունյաց հզոր պետությունը: Դարձյալ մեր պապերը չէի՞ն, որ Անիի բանալիները ուղարկեցին հունաց կայսրին և իրանց ձեռքով Բագրատունյաց թագավորության հիմքը փորեցին: Եվ մեր Վասպուրականը, որ մի ժամանակ հայոց առանձին թագավորություն էր, Արծրունի Սենեքերիմ թագավորն իր հաճությամբ հանձնեց հույներին և Սեբաստիայում սկսեց խաղաղ կյանք վարել: Եվ այդ բոլորը գործողը ո՞վքեր էին, ժողովրդի իշխանները և նրա հոգևոր գլուխը՝ կաթողիկոսը: Այժմ շատ զարմանալի չէ, որ մի անպիտան վարդապետ և մի քանի շահամոլ իշխաններ դավ են դնում մի քանի

երիտասարդների դեմ, որոնց նպատակը շատ բարի է և համեստ, որոնք, բացի ժողովրդի հանգստությունը, ուրիշ բանի չեն ձգտում:

– Բոլորովին ուղիղ է,– պատասխանեց տիկինը,– ես մեր պատմությունը չեմ կարդացել, բայց իմ աչքով տեսել եմ, թե ինչպես շատ անգամ հայերն իրանք եկել են իմ ամուսնու մոտ և միմյանց վրա մատնություններ են արել: Շատ անգամ նույնը նկատել եմ և փաշայի տան մեջ: Թուրքերի մեջ արդեն առած է դարձել ասել՝ թե «գավուրների գլուխները չեն միանա», որ կնշանակե, թե հայերի մեջ միաբանություն չէ կարող կազմվել: Ցավալի է մի այսպիսի կարծիքը, և ավելի ցավալի է, որ նա ուղիղ է…

Տեր հայրը մի առանձին ուշադրությամբ լսում էր քրոջ խոսքերը և կարծես ուրախանում էր նրա դատողությունների վրա:

– Ես շատ հետաքրքիր եմ եղել ուսումնասիրել մեր ժողովրդի բնավորությունը,– ասաց նա,– բայց մինչև այսօր շատ բաներ մնացել են ինձ անհասկանալի: Օրինակ, հայը ոխերիմ է, մատնիչ է, վրեժխնդիր է այն անարգանքի դեմ, որ նա կրում է մի այլ հայից: Բայց եթե նույն անարգանքը նա ստանում է տաճիկից, քուրդից, մի խոսքով՝ օտարից, նա ամենայն խոնարհությամբ համբերում է: Դա, իմ կարծիքով, հառաջ չէ՛ գալիս այն հանգամանքներից, թե հայը տաճկի և քուրդի առջև թույլ է և չէ կարող նրանցից պատիվ պահանջել: Այլ ավելի հառաջ է գալիս այն օտարամոլ նախապաշարմունքից, որ հայը տաճկի և քուրդի մեջ մի առանձին իրավունք է ճանաչում՝ իր հետ ամեն կերպ վարվելու: Եվ այսպես, ոչ միայն պատվի զգացմունքը, այլ հայի բոլոր պահանջումները՝ օտարի և իր ազգակցի վերաբերությամբ՝ միատեսակ չեն:

Տեր հոր խոսելու միջոցին ես նկատեցի նրա քրոջ երեսի վրա խիստ տխուր արտահայտություններ:

– Ես կբերեմ մի ուրիշ օրինակ,– հառաջ տարավ նա,– հայ ծառայողը իր պարտավորությանց մեջ խարդախ է, երբ նա հայի մոտ է ծառայում: Բայց երբ նա ծառայում է թուրքի մոտ, իր պաշտոնը կատարում է ամենայն հավատարմությամբ: Նա հավատարիմ է մնում ոչ միայն արդար աշխատությունների մեջ, այլ որքան ցած, որքան խղճի և ազնվության ընդդեմ ևս լինեին իր տիրոջ պահանջները, բոլորը նա ճշտությամբ կատարում է: Կ. Պոլսի համարյա բոլոր նշանավոր մահմեդական տների սպասավորները հայեր են. նրանք մինչև անգամ խառն են լինում հարեմական գաղտնիքների մեջ, և խաթունների հավատարիմ խորհրդապահներն են դառնում: Փաշաների գանձապետները հայեր են, և նրանց կաշառակերության խիստ վարպետ հայթհայթողներն են լինում: Թողնենք մասնավորը, անցնենք ընդհանուրին. մի գյուղ, որ բնակեցրած է ամբողջապես հայերով, ավելի բարձր գին ունի, քան թե նույն տարածությամբ և նույն բազմամարդությամբ մի ուրիշ գյուղ, որ մահմեդականներով էր բնակեցրած: Ինչո՞ւ: Որովհետև հայը հլու և արդյունավոր հպատակ է: Նա հլու է, երբ տերն օտարազգի է, բայց ես գիտեմ գյուղացիներ, որ վատ են վարվում իրանց տիրոջ հետ, որովհետև նա հայ էր: Դա ինչի՞ց է:

Ասլանը, որ բոլոր ժամանակը ուշադրությամբ լսում էր, պատասխանեց.

– Պատճառը շատ պարզ է: Մեր ներկան, դուք ինքներդ ասացիք, որ մեր անցյալի շարունակությունն է: Այդ տխուր երևույթների պատճառները պետք է որոնենք մեր տխուր պատմության մեջ…

Համարյա առավոտյան լուսաբացի մոտ էր, երբ մենք դուրս եկանք տեր հոր տնից և գնացինք մեր բնակարանը, վարպետ Փանոսի տունը: Դուրս գալու միջոցին Ասլանը խորին շնորհակալությամբ բռնեց տիկնոջ ձեռքը և ասաց.

– Մենք, հույս ունեմ, դարձյալ կտեսնվենք:

– Անպատճառ,– ասաց տիկինը:

– Ո՞րտեղ:

– Ես կգամ քեզ մոտ:

– Դա անհարմար չէ՞ր լինի:

– Ամենևին:

ԺԷ

ՊԱՆԴՈՒԽՏ ՎԱՆԵՑԻՆ

Օրը շաբաթ էր, այն սպասված օրը, որի գիշերը ես ու Ասլանը հրավիրված էինք սրբազան առաջնորդի մոտ: Ասլանը զբաղված էր ինչ-որ պատրաստություններով, իսկ ես, անգործությունից ձանձրացած, չգիտեի ինչ անել: Առաջնորդի հրավերքը ինձ խիստ հրապուրում էր, բայց մինչև երեկո սպասե՞լ,— այդ շատ և շատ ծանր էր ինձ համար: Դուրս եկա փողոցը, նստեցի մի հաստաբուն ուռենիի հովանու ներքո, հոսող առվակի ափի մոտ: Այդ ուռիները ամառնային տոթերի ժամանակ խիստ զով պատսպարան են բնակիչների համար, մանավանդ նրանց, որոնք իրանց բակերում պարտեզներ չունեն: Ուռենիի ներքո միայնակ նստելը նույնպես ձանձրացրեց ինձ: Վեր կացա և սկսեցի փողոցի երկարությամբ գնալ դեպի Այգեստանի զանազան կողմերը:

Զարմանալի ինքնուրույնություն է ներկայացնում այստեղկյանքը: Տարվա այդ եղանակում մարդիկ համարյա ապրում են և գործում փողոցի վրա: Ահա հյուսնը իր տան դռան հանդեպ արոր է շինում: Նրա փոքրիկ երեխաները մեծ փութով հավաքում են տաշեղները և մրջիմի նման կրում են դեպի տուն վառելիքի համար: Մի խումբ մարդիկ, մերկ գետնի վրա նստած, նայում են, թե ինչպես է բանում հյուսնը: Մեկը աշխատում է, շատերը անգործ մտիկ են անում նրա վրա: Փոքր-ինչ հեռու, հարթ գետնի վրա, ածուխով ինչ-որ աղյուսակներ են գծել, քառանկյունիների վրա շարած են փոքրիկ գույնզգույն խիճեր. երկու մարդիկ այդ խիճերով «գայլ ու ոչխար» կոչված խաղն են խաղում, մի քանիսը նայում են նրանց խաղի վրա: Ահա այնտեղ, փողոցի մի անկյունում, մի ծառի տակ, նույնպես գետնի վրա, թափառական ոսկերիչը սարքել է իր շարժական քուրան և փուքսերը: Բազմաթիվ կանայք ու աղջիկներ շրջապատել են հայ արհեստավորին: Մեկը ինչ-որ զարդ է շինել տալիս, իսկ մյուսները մեծ կարոտությամբ նայում են: Փոքր-ինչ հեռու, նույնպես մի ծառի տակ, մանրավաճառ չարչին բաց է արել իր խայտաճամուկ վաճառքները: Նա ևս գլխավորապես գործ ունի կանանց հետ, որոնք տալիս են իրանց ձեռագործները և փոխարենը գնում են զանազան իրեղեններ: Նա չէ մերժում, երբ տան երեխան գողանում է իրանց հավերից մեկը, բերում է նրա մոտ և մի պատառ մաստաք է առնում: Առևտուրը կատարյալ նահապետական է. մի նյութ փոխվում է ուրիշ նյութի հետ: Անցնելով այդ բոլորից, փողոցի երկարությամբ ես շարունակում էի գնալ: Կանանցից շատերը, չդիմանալով ներսի տոթին, դուրս էին բերել իրանց մանուկների օրորոցները, դրել էին ուռենիների ներքո, հոսող առվակի ափի մոտ, և իրանք նստած

օրորոցների մոտ, ոտքով օրորում էին և ձեռքով կար էին կարում: Դրանցից երբեմն լսվում էին երգի խուլ ձայներ, որ նման էին թախծալի հառաչանքների: Դրանցից շատերն այն դժբախտ մայրերն էին, որոնց ամուսինները մաշվում էին պանդխտության մեջ: Մի քանի դռների հանդեպ, ծառերի տակ, պառկեցրել էին հիվանդներ, որոնց գլուխը և կուրծքը պատած էին ուռենու տերևներով, զովացնելու համար: Հիվանդների մոտ նստած էին դեռահաս աղջիկներ և դալար, սաղարթախիտ ոստերով զով էին տալիս նրանց երեսներին և քշում էին ճանճերին: Տարվա եղանակը ազդել էր և Սիմոն պատվելիի վրա, նա ևս իր շարժական դպրոցը դրա համար դուրս էր բերել փողոցը և աշակերտներին շարքերով նստացրել էր ծառերի տակ, մերկ գետնի վրա: Փոքրիկ ուսանողները ավելի նայում էին փողոցի անցուդարձ անողների վրա, քան մի բան էին սովորում: Բայց Սիմոն պատվելիի հոգեառ ճիպոտը ստիպում էր նրանց՝ աչքերը չհեռացնել գրքից: Այսօր նա զբաղված էր ինչ-որ նախապատրաստությամբ. մի խումբ աշակերտների երգել էր տալիս, իսկ ինքը, նրանց մոտ կանգնած, հանգով շարժում էր ձեռքի ճիպոտը և իր անախորժ ձայնով ուղղում էր եղանակը: Փողոցի անցուդարձ անողներից շատերը, այնտեղ կանգնած, լսում էին: Ես էլ հետաքրքրվեցա և կանգնեցի նրանց մոտ: Պատվելին ճանաչեց ինձ, և մի առանձին պարծենկոտությամբ, դառնալով դեպի ինձ, ասաց.

– Տեսնո՞ւմ ես, ինչպես բլբուլի նման երգում են:

Ես ոչինչ չպատասխանեցի: Նա դարձավ դեպի խմբված մարդիկը.

– Վանեցիք իմ հարգը չեն հասկանում. մինչև այսօր ո՞վ էր տեսել այսպիսի դպրոց: Այնտեղ, Վարագում էլ դպրոց կա, բայց սատանայական բաներ են սովորեցնում և ձեր որդիներին հավատքից հանում են: Այստեղ մի ուրիշ դպրոց էլ բացվեցավ. աղջիկներին էին սովորեցնում. տեսա՞ծ բան է, աղջիկը ո՛ւր, կարդալը ո՛ւր: Աստված հաջողեց, որ շուտով փակվեցավ, թե չէ, ձեր աղջիկները գլխներին ֆես կդնեին և ձեզ կասեին՝ մենք տղամարդ ենք, իսկ դուք մեր կնիկները, գնացեք թոնիր վառեք, հաց թխեք, կերակուր եփեք, որ մենք ուտենք:– Այդպես չէ՞, ուղիղ չե՞մ ասում:

Շատերը բաժանեցին պատվելիի կարծիքը: Նրա խոսքը տեր Եղիշեի դժբախտ օրիորդական դպրոցի մասին էր, որի կյանքը այնքան կարճատև եղավ: Պատվելին շարունակեց.

– Ախար նա ինքն ի՞նչ էր իմանում, որ ինչ սովորեցներ: Մի անգամ մի բան հարցրի, Զաքարիայի նման պապանձվեցավ, չկարողացավ պատասխան տալ: Ասացի՝ դե գնա, տերտեր, այսուհետև ինձ ճանաչիր:

Ունկնդիրներից ոմանք սկսեցին թախանձել պատվելիին, թե ի՞նչ էր հարցրել: Նա նրանց հետաքրքրությունը երկար տանջելուց հետո վերջապես ասաց.

– Հարցրի, թե այն ո՞ւմ էշի ծնոտն էր, որով Սամսոնը երեք հարյուր մարդ կոտորեց:

– Այդ շատ դժվար հարց է,– լսելի եղավ ամեն կողմից:– Դուք մեզ չե՞ք ասի:

— Ինչպե՞ս կասեմ: Պոլսում մի կարմիր ոսկի եմ տվել մի վարժապետի, որ այդ ինձ սովորեցրել է, և որքան այդպիսի բաներ գիտեմ, որ Սողոմոն իմաստունն էլ չէ իմացել: Եթե ես լավ վարժապետ չլինեի, սրբազան առաջնորդը, նորին վսեմությունը, փաշան, ինձ այնքան պատիվ չէին տա: Տեսնո՞ւմ եք այդ աշակերտներին, որ հիմա երգում էին, այս գիշեր պետք է տանեմ առաջնորդարանը, որ այնտեղ երգեն: Սրբազանը խնջույք ունի, փաշան էլ այնտեղ կլինի:

Բոլորը զարմացան: Բայց նրա զզվելի պարծենկոտությունը ինձ բոլորովին վրդովեցրեց, ես հեռացա: Նա դեռ շարունակում էր խոսել բազմության հետ:

Պատվելիի շարժական դպրոցից մի քանի քայլ հեռու, իր տան դռան հանդեպ, արաղի կաթսան սարքած, այգետերը արաղ էր քաշում: Այդ կաթսաները պատկանում են առանձին մարդիկների, որոնք վարձով են տալիս և ստանում են քաշած արաղի մի մասը: Մեծ այգետերերը միայն ունեն սեփական կաթսաներ: Սիմոն պատվելին երբեմն մոտենում էր այդ կաթսային և, արաղը տաք-տաք իր կոկորդը ածելով, ասում էր.— «Հիմա ավելի թունդ է»: Կարծես նա մի չափ լիներ, որով այգետերը անդադար փորձում էր արաղի թնդության աստիճանը: Իմ բռնած փողոցով ավելի ու ավելի առաջ գնալով, ես աննկատելի կերպով դուրս եկա բնակություններից և հայտնվեցա մի արհեստական լճակի մոտ, որի մեջ հավաքվում է աղբյուրների ջուրը և հերթով բաժանվում է այգիները ոռոգելու: Ամբողջ լճակը, մի հսկայական կաթսայի նման, եփ էր գալիս, փրփրում էր: Բազմաթիվ գլուխներ հայտնվում էին և դարձյալ սկսում ջրի տակ: Գյուղացի մանկտին լողանում էր: Մի քանիսը նրանցից, հոգնած, թուլացած, իրանց մարմինը կիսով չափ թաղել էին ափերի խոնավ և սառն ավազների մեջ, որ արեգակը չայրե: Տղա և աղջիկ լողանում էին միասին: Դրանք այն պարզ, միամիտ, նահապետական ժողովրդի զավակներն էին, որ միմյանցից չէին ամաչում: Երբ ես մոտեցա, կարծես մի հորդ անձրև տեղաց իմ վրա: Չարաճճիները սկսեցին ամեն կողմից ջուր սրսկել, մեկը բերանով, մյուսը ափերով, երրորդը ջրի երեսին լողացող ձմերուկի կեղևներով: Ես իսկույն հեռացա, բայց կույր հավի նման, ոտքից ցգլուխ թրջված: Այնպես չէի ուզում տուն վերադառնալ, որ վարպետ Փանոսի աշակերտներն իմ վրա չծիծաղեցնեմ: Նստեցի մի ծառի տակ, որ հագուստս փոքր-ինչ չորանա:

Իմ շուրջը տարածվում էին մշակված դաշտեր. բոստանների մեջ հասունացած սեխը, խարբուզակը աչք էին շլացնում. արտերն արդեն շատ տեղերում քաղված էին և ահագին դեզերով կիտած, գյուղացի երկրագործը մեծ փութով բարձում էր ծանր խուրձերը իր սայլակի վրա, կապում էր կաշյա հաստ ճոպաններով և կրում էր դեպի կալը կալսելու համար: Նրա երգը նույնքան մելամաղձոտ էր, որքան նրա սայլակի տխուր ճռնչոցը: Երկուսն էլ կարծես հառաչանքներ էին արձակում…

Մյուս կողմից լսելի էր լինում զբոսնող քաղաքացու ուրախ-անհոգ երգը:

Կեսօրից բավական անցել էր: Ծովից փչում էր սառն քամի և զովացնում էր տոթից տոչորված բուսականությունը: Ծառերի թառամած տերևները զվարթանում էին, խոտերի կորացած ծղոտները վեր էին բարձրացնում իրանց նվաղած գլուխները, ծաղիկները սկսում էին ժպտալ: Շրջակայքը ավելի և ավելի կենդանանում էր, զբոսնող բազմությունը զվարճանում էր ամեն կողմում: Դա օրվա այն ժամն էր, երբ վանեցիք կողպում են իրանց խանութները, խումբ-խումբ դիմում են դեպի դաշտերը, դեպի այգիները և դեպի առվակների եզերքը հովանավորող ծառերը: Ոմանք միրգ են ուտում: Շատ տեղերում բացօթյա խարույկները վառվում են, կրակը շիկանում է, խորովածի շամփուրները մխում են, օդը լցվում է ճենճերային անուշահոտությամբ: Կանաչ խոտերի վրա փռվում են սպիտակ լավաշները, և այդ պարզ սեղանի շուրջը բոլորում է երիտասարդ խումբը, գինու կամ արաղի բաժակները շրջան են առնում, օդի մեռելային լռությունը աղմկում է ուրախաձայն աղաղակներով: Ինձանից փոքր-ինչ հեռու, խոտերի վրա, նստած էին մի քանի մարդիկ: Տեսնելով, որ ես մենակ եմ նստած և օտարական եմ, ինձ կանչեցին իրանց մոտ: Նրանք եկել էին բոստաններում սեխ և խարբուզակ ուտելու: Վանեցիք սիրում են ամեն պտուղ իր տեղումն ուտել:

Բոստանների մեջ երևում էին փոքրիկ աշտարակաձև շինվածքներ. դրանք բոստանչիների գիշերային պատսպարաններն էին: Նրանք միշտ գործ ունեին գողերի հետ և նրանց պետք էր մի ամրություն: Աշտարակի մոտ մխում էր փոքրիկ վառարանը և նրա վրա դրած էր խեցեղեն սև պտույկը: Նրա մեջ եփվում էր բոստանչու ընթրիքը: Ա՛խ, որքան քաղցր հիշողություններ էր զարթեցնում իմ մեջ այդ փոքրիկ վառարանը, այդ խեցեղեն պտույկը: Շատ անգամ էր պատահել ինձ՝

բարի բոստանչու հետ միասին բաժանել նրա համեստ ընթրիքը, շատ անգամ գնել էի ես նույն տեսակ խեցեղեն պտույկ և խնդրել էի մորս, որ պատրաստե ինձ համար նույն կերակուրը, բայց երբեք այն համը և այն ճաշակը չէր ունեցել:

Բոստանչին, հեռվից նկատելով մեզ, առանց մեր խնդրելու, բերեց մի քանի հատ լավ սեխեր և խարբուզակներ, և գլուխ տալով, դրեց մեր առջև: Ես տվեցի նրան մի քանի ղուրուշ, որը մեծ դժվարությամբ ընդունեց: Նրա հեռանալուց հետո, իմ մոտ նստողներից մեկն ասաց.

— Իզուր տվեցիք, նրանք սովորություն չունեն փող վեր առնել. մենք, որ նրա բոստանի մոտ նստած ենք, նրա հյուրն ենք:

— Նա խո մեզ չէ հրավիրել,— պատասխանեցի ես:

— Միևնույն է, այստեղի սովորությունն այդպես է:

Մյուսը ասաց.

— Երբ պետք էր փող վճարել, այդ մեր պարտքն էր տալ, որովհետև մենք հրավիրեցինք ձեզ մեզ մոտ:

Երրորդը նկատեց.

— Դուք չափազանց շատ տվեցիք, պարոն, բերածը մի քանի փարա հազիվ կարժե. այդ պտուղները մեր երկրում խիստ չնչին գին ունեն:

— Ես նրան ընծայեցի,— եղավ իմ պատասխանը:

Նրանք զարմացած նայեցին իմ վրա, թեև իմ ընծայածը նույնպես չնչին բան էր: Իմ խոսակիցները երեք հոգի էին, որոնցից մեկը մի եկեղեցու երեցփոխան էր, երկրորդը թաղական խորհրդի անդամ էր, իսկ երրորդը մի արհեստավոր: Երբ ես գնացի նրանց մոտ նստեցի, նրանց խոսակցության առարկան մի անցք էր, որ այնօր կատարվել էր առաջնորդարանում: Մի գյուղացի կին չէր կամենում իր ամուսնու հետ ապրել և շատ անգամ փախչում էր ծնողների տունը: Գյուղացին գնում էր, ծեծելով բերում էր, բայց ամեն անգամ նույնն էր պատահում. կինը նրա մոտ մնալ չէր ուզում (պատճառները չպատմեցին ինձ): Վերջապես, գյուղացին, անճար մնալով, գալիս է քաղաք, դիմում է առաջնորդարան և գանգատվում է: Առաջնորդը բերել է տալիս թե՛ կնոջը և թե՛ ամուսնուն: Դատը վերջանում է այդ կերպով. կնոջը դնում են ամուսնու շալակը, կապում են, հետո, ծառաներին հրամայում են՝ դալար վարոցներով հիսուն զարկ տալ կնոջը: Երբ ծեծը վերջանում է, ամուսնուն հրամայում են, որ կնոջն այնպես շալակն առած, տանե և հասցնե իր տունը: Ինձ ասացին, որ մինչև տուն հասցնելը, որը բավական հեռու էր քաղաքից, խեղճ կինը գտնվում էր բոլորովին ուշաթափ դրության մեջ, սաստիկ գանահարությունից:

— Աստված վկա, լավ դատաստան է,— ասացի ես հեգնաբար,— ծեծը անհնազանդ կնոջ պատիժը, իսկ ծեծված կնոջը իր կռնակն առած տուն տանելը՝ անշնորհք ամուսնու պատիժը, որ չէ կարողացել կնոջը զսպել:

Նրանք իմ խոսքերը ճշմարտի տեղ ընդունելով պատասխանեցին.

— Իհարկե, լավ դատաստան է: Ո՞վ է տեսել, որ կինը բերան բաց անե իր մարդու դեմ, մեկին երկու, երեք պատասխան տա, կամ փախչե իր հոր տունը: Եթե քո էշը ախոռից փախչե, ի՞նչ կանես: Իհարկե, կգնաս, ծեծելով կբերես և իր մսուրքի վրա

կկանգնեցնես: Փառավորվի՛ մեր առաջնորդը, նա այդպիսի անզգամների պատիժը լավ գիտե:

— Ուրեմն լավ առաջնորդ է,— ասացի ես:

Եկեղեցու երեցփոխանը, որ մի հաստափոր և հաստագլուխ մարդ էր, և խոսելու ժամանակ աջ կողմի աչքը միշտ խփում էր, պատասխանեց.

— Վանա երկիրը մինչև այսօր այդպիսի առաջնորդ չէ տեսել. փաշայի հետ՝ փաշա է, խանի հետ՝ խան է, իսկ բեկի հետ՝ բեկ է, մի խոսքով, այնպիսի *սալթանաթ* ունի, որ սուլթանն էլ չունի: Ամեն անգամ, երբ փաշայի դուռն է գնում, կարծես մի մեծ սարդար լինի, մի խումբ ձիավոր ետևից, մի խումբ ձիավոր առջևից, փողոցներում տեղ չէ մնում, որ անցնեն: Թուրքերը նայում են, և զարմացած ասում են միմյանց. «տեսնում եք ինչ *ջալալ* ունի հայերի *խալիֆան*»: Երբ հասնում են փաշայի դուռը, ծառաները խումբով առաջն են դուրս գալիս, մեկը ձիու սանձն է բռնում, մյուսը ասպանդակն է բռնում, ձեռքերի վրա ձիուց վայր են բերում, և այնպես առոք-փառոք ներս են տանում: Փաշան ոտքի է կանգնում, ձեռքը բռնում է և նստացնում է նրան իրանից վերև:— Ո՞վ է տեսել այդպիսի փառք, այդպիսի պատիվ:

— Այդ բոլորը շատ գեղեցիկ կլիներ,— ասացի ես,— եթե առաջնորդը իր վայելած պատվից օգուտ քաղեր և դեպի իր ժողովրդի բարին գործ դներ: Բայց նրա համար ասում են…

— Ի՞նչ են ասում,— պինդ ձայնով հարցրեց երեցփոխանը:

Ես ոչինչ չպատասխանեցի: Թաղական խորհրդի անդամը, որ բոլոր ժամանակը լուռ էր, խոսեց.

— Մեզ համար այդքանն էլ բավական է, պարոն, որ նա մեծ պատիվ է վայելում, նրա պատիվը մեր պատիվն է, նրա փառքը մեր փառքն է: Թող նա ոչինչ էլ չանե ժողովրդի համար, բայց մենք նրա անունով պարծենում ենք թուրքերի առջև:

— Ասում են, որ նա թուրքերին ավելի շատ է սիրում, քան թե հայերին:

— Այդպես էլ պետք է,— մեջ մտավ երեցփոխանը,— հարկավոր է, որ նրանց «խաթրն» էլ առնե, նրանց էլ հաճոյանա:

— Իսկ Հայրիկը ի՞նչ տեսակ մարդ է:

— Նա մի դերվիշ մարդ է,— պատասխանեց երիտասարդը,— նրանից ոչ ոք չէ վախենում:

— Իսկ առաջնորդից վախենո՞ւմ են:

— Իհարկե, վախենում են:

Երեցփոխանը «իհարկե» բառը շատ էր գործ ածում և նրա հետ աջ կողմի աչքը միշտ խորհրդավոր կերպով խփում էր խոսելու ժամանակ: Ես պատասխանեցի.

— Առաջնորդից, այո՛, վախենում են, բայց Հայրիկին սիրում են:

— Ո՞վ է սիրում,— ասաց նա վրդովված ձայնով,— ցույց տվեցեք մի հայ էֆենդի, մի հայ բեկ, վերջապես, մի փոքր ի շատե նշանակություն ունեցող մարդ, որ նրան սիրելի լիներ: Ժողովրդի գլխավորները դրանք են: Նրան սիրում են գռեհիկ գյուղացիները կամ քաղաքի աղքատ-ուղքատ արհեստավորները, որոնց տները

մտնում է և բոլորի քեֆը հարցնում է: Նրան ի՞նչ կվայելե այդ տեսակ մարդկանց դուռը բաց անել: Նա մի մեծ վանքի վանահայր է, պետք է իր հավասար մարդկանց հետ նիստ ու կաց անե:

— Հենց Հիսուս Քրիստոսն էլ մեզ նման աղքատ արհեստավորների դուռն էր բաց անում և իրան միշտ բեկերից, էֆենդիներից հեռու էր պահում,— պատասխանեց այնտեղ նստած արհեստավորը, որին, ինչպես երևում էր, զայրացրին երեցփոխանի վերջին խոսքերը:

— Բայց նրանից ո՛վ էր վախենում,— հարցրեց երեցփոխանը, ինքն ևս բարկանալով, և այս անգամ սխալմամբ ձախ կողմի աչքը խփելով:— Եթե նա մեծ մարդկանց հետ նիստ ու կաց աներ, նրանից էլ կվախենային:

Ես չկարողացա համբերել և կտրեցի նրա խոսքը.

— Այստեղ ի՞նչ վախենալու կամ չվախենալու հարկավորություն կա: Հայրիկը հոգևոր հայր է, մի՞թե հորից պետք է վախենան որդիքը:

— Իհարկե, պետք է վախենան: Եթե քո որդիքը քեզանից չվախենան, կարո՞ղ ես նրանց կարգի ու կանոնի մեջ պահել:

Ինչպես ընտանեկան կյանքի մեջ բռնակալ հայրը երկաթի գավազանով էր իշխում, նույն կառավարության ձևը դրանք սիրում էին տեսնել և հասարակական կյանքի մեջ: Այդ էր պատճառը, որ երեցփոխանը իր բերած օրինակը՝ հոր և որդիների հարաբերության վերաբերությամբ՝ բավական հաջող գտնելով, և դեպի ինձ դառնալով, ավելացրեց.

— Դուք չեք ճանաչում, թե ինչ տեսակ մարդ է Հայրիկը, պարոն, լսեցեք, այդ տեսակ մարդից ո՞վ կվախենա, կամ ո՞վ բանի տեղ կդնի: Երբ պատահում է նրան փաշայի դուռը գնալ, միշտ մենակ է գնում, առանց ծառաների, առանց սպասավորների և միշտ ոտով: Շատերը նրան չեն ճանաչում, և փողոցներից անցնելու ժամանակ՝ ընդհարվում են նրան: Փաշայի ծառաներից ոչ ոք նրա առջև ոտքի չէ կանգնում, իսկ փաշան խիստ սառն է ընդունում:

— Նրա համար, որ նա միշտ փաշայի կամքին հակառակ է գնում,— ընդմիջեց արհեստավորը:

Փաշայի անունը անդադար հիշվելով, ես ստիպվեցա հարցնել.

— Փաշան ի՞նչ տեսակ մարդ է:

Թաղական խորհրդի անդամը, որպես ավելի պաշտոնական մարդ, պատասխանեց.

— Աստված նրան երկար կյանք տա, երբեք նրա նման լավ փաշա չենք ունեցել: Այն օրից, որ եկել է, գիտե՞ք, ո՛րքան մարդիկների կախել է տվել, ո՛րքանի ձեռքը, ականջը, քիթը կտրել է տվել, որքանի տունը, տեղը այրել է տվել և ունեցածը գրավել է: Թրի ծայրից արյուն է կաթում: Բոլորը սարսափում են, բոլորը դողում են նրանից:

Դարձյա՛լ սարսափ, դարձյա՛լ երկյուղ: Զարմանալի էակներ են մարդիկ, նրանք սիրում են տեսնել ուժ, մինչև անգամ կոպիտ, անգութ, բարբարոսական ուժ, որի առջև խոնարհվեին, որին պաշտեին: Ես հավատացած եմ, որ թե՛ թաղական խորհրդի անդամի և թե՛ եկեղեցու երեցփոխանի հայացքները բոլորովին անկեղծ էին: Նրանք այդպես համոզված էին, թե այլ կերպ լինել կարող չէր, թե մարդիկ պետք է վախենան իրանց իշխանավորից, որ նրան հնազանդվին, լիներ նրա մեջ հոգևոր

առաջնորդ կամ մի երկրի կառավարիչ: Մինչև անգամ աշխատավոր արհեստավորը, որ մի շատ համակրական մարդ է երևում, լռեց, ոչինչ չպատասխանեց թաղական խորհրդի անդամի վերջին խոսքերին: Չգիտեմ, գուցե նա զգուշացավ փաշայի դեմ որևիցե աննպաստ կարծիք հայտնել: Այսուամենայնիվ, ես ավելի հավատացի, որ նրանք խորին համոզմունքից էին խոսում, երբ հարցրի.

— Փաշան մարդկանց խեղդել է տալիս, փաշան մարդկանց տները այրել է տալիս և ունեցածը հափշտակում է,— դրա համար էլ լա՞վ փաշա է:

— Ի՞նչ ասել կուզե,— պատասխանեց այժմ երեցփոխանը:— Եթե այդպես չանե, նրանից ո՞վ կվախենա, ամենքը գազան կդառնան և միմյանց միսը կուտեն:

— Միևնույն է,— ասացի ես:— Եթե նա ուրիշ գազանների թիվը փոքրացնում է, բայց նրանց կերածը ինքն է ուտում:

Նա ինձ պատասխանեց.

— Լավ է, հարյուր մանր գազանների տեղ մի մեծ գազան կերակրել:

— Եվ նրա փշրանքներից ևս ուտել…

Երեցփոխանը ուղիղ նայեց աչքերիս մեջ: Չգիտեմ, զարմանում էր նա, թե բարկանում, ի՜նչպես համարձակվեցա մի այդպիսի նկատողություն անել: Համոզված լինելով, որ դրանք ուժի առջև խոնարհվող մարդիկ են, մտածեցի ինձ ևս ցույց տալ, ասելով.

— Այս գիշեր կտեսնեմ թե՛ ձեր փաշային և թե՛ ձեր առաջնորդին:

— Ներեցեք համարձակությանս, դուք ո՞վ եք,— հարցրեց թաղական խորհրդի անդամը, իսկ երեցփոխանը շվարած մնաց:

— Ես ձեր քաղաքում գտնվող եվրոպացի բժշկի թարգմանն եմ: Այս գիշեր թե՛ ես և թե՛ իմ պարոնը հրավիրված ենք առաջնորդի մոտ ընթրիքի: Փաշան էլ այնտեղ կլինի:

Նրանք սկսեցին մի առանձին հարգանքով վերաբերվել դեպի ինձ: Մեր վիճաբանությունը ընդհատվեցավ, որովհետև մեր մոտով անցավ Սիմոն պատվելին, իր գեղեցիկ խմբի հետ: Նա մյուս աշակերտներին արձակել էր, իր հետ միայն վեր էր առել երգիչներին: Դաշտային կրկնություններ էր անում: Այն գիշեր իր երգիչների հետ պատվելին հրավիրված էր առաջնորդի մոտ, այդ պետք էր հասկացնել ամբողջ քաղաքին: Իսկ այստեղ կար քաղաքից բավական մեծ բազմություն:

Մեր մոտով անցնելու միջոցին նա գլուխը խորհրդավոր կերպով շարժեց և դիմելով երեցփոխանին՝ ասաց.

— «Այնտեղի» համար եմ պատրաստում…

— Շատ ապրես, Սիմոն պատվելի,— պատասխանեց երեցփոխանը:— Ձայնդ անսպառ լինի:

Պատվելին նշան տվեց, աշակերտները եղանակեցին.

Կա՛հ-կա՛հ կկանչե կաքավն վրր քարին.

Վա՛րդ-վա՛րդ կկանչե բլբուլն վըր թփին.

Կաքավի ձայնեն՝ եկավ վարուժանն,
Բուլբուլի ձայնեն՝ եկավ սիրականն:

Սիրե՛, կաքավիկ, քո սիրուն քարիկ,
Սիրե՛ բլբուլիկ, քո վարդն անուշիկ:

— Ի՛նչ գեղեցիկ երգ է, ի՛նչպես լավ երգում են,— նկատեց երեցփոխանը:— Առաջնորդը շատ է սիրում այդ երգը:

Չգիտեմ ի՞նչ սիրելու բան կար այդ անկապ, անմիտ երգի մեջ, որը երգում էին չափազանց անախորժ և անճոռնի եղանակով,— այդ իհարկե, չբացատրեց ինձ երեցփոխանը,— բայց ինձ զարմացրեց նրա մի այլ նկատողությունը, երբ պատվելին հեռանալուց հետո ասաց.

— Իր կշեռքով ոսկի արժե այդ մարդը: Այն օրից, որ ուսումնարան է բաց արել, մեր որդիքը շենք ու շնորհք են ստացել: Առաջ կապելու գժեր էին, հիմա գառնուկի նման խեղճացել են, ձայն չեն հանում, կարծես բերաններում լեզու չկա:

— Ճշմարի՞տ եք ասում,— հարցրի ես:

— Սուտ ասելու ի՞նչ շահ ունեմ,— պատասխանեց նա վիրավորվածի նման:— Հենց որ երեխան տանը մի ծպտուն է հանում, բավական է, որ մայրն ասե՝ վարժապետիդ կհայտնեմ, նա իսկույն սկսում է դողալ և լեզուն քաշել:

Դարձյա՛լ սարսափ, դարձյա՛լ երկյուղ: Ես մտաբերեցի իմ մորը և տեր Թոդիկի դպրոցը:— Փաշայից, առաջնորդից պետք է վախենան, որ նրանց հնազանդ լինեն, որ վատ գործ չգործեն: Վարժապետից պետք է վախենան, որ բան սովորեն և իրանց լավ պահեն…

Մեր խոսակցությունը դարձյալ ընդհատվեցավ: Մեր մոտովն անցավ մի այլ խումբ: Մի բավական լավ հագնված մարդու շրջապատել էին մի խումբ երիտասարդներ. առջևից գնում էին սազ և սանթուր ածողները, ամբողջ խումբը խառնաձայն երգում էր: Այդ սրիկաները, դեռ իրանց ուրախության սեղանը չկազմած, արդեն արբած էին: Արաղի շշերը իրանց հետ էին տանում և ճանապարհին խմելով էին գնում:

Իմ մոտ նստողները երեքն էլ ոտքի ելան և հեռվից ձայն տվին.

— Բարո՛վ, Մինաս աղա, միշտ այդպիսի ուրախության մեջ լինես:

Մինաս աղան, որը այն լավ հագնված մարդն էր, գլխով շնորհակալություն հայտնեց, խումբը հեռացավ:

— Ո՞վ է այդ Մինաս աղան,— հարցրի ես:

Թաղական խորհրդի անդամը, փոխանակ իմ հարցին ուղղակի պատասխանելու, ասաց.

— Պոլսից նոր է եկել, շատ փող է բերել:

— Եվ հիմա շռայլում է:

— Ի՞նչ պետք է անե, օրհնած: Մարդս մի անգամ է աշխարհ եկել, մի անգամ էլ պետք է մեռնի, էլ մյուս անգամ աշխարհ հո չէ գալու: Ուրեմն, քանի կենդանի է, պետք է ուտե, խմե, զվարճանա, որովհետև իր դատածը գերեզման չէ տանելու:

Թաղական խորհրդի անդամի փիլիսոփայությանը պատասխանեց իմ մոտ նստող արհեստավորը:

— Թող զահրումար ուտե, դրանից ավելի լավ է: Այդ անպիտանը տասն տարուց ավելի, ջրի տիկն ուսից քարշ գցած, բոբիկ ոտներով թափառում էր Պոլսի փողոցներում և բաժակներով ջուր էր ծախում: Ընտանիքը տանը ուտելու հաց չուներ: Հիմա մի քանի փարա է բերել այդպես վատնում է: Մի քանի օրից հետո բերածը կհատնի, դարձյալ պարտք կանե, դարձյալ կգնա Պոլիս, և կրկին ջրի տիկը քարշ կտա ուսից: Իսկ ընտանիքը այստեղ կթողնե քաղցած:

— Պոլսի փողոցներում բաժակներով ջուր ծախողը մի՞թե այստեղ աղա է դառնում,— հարցրի ես զարմանալով:

— Այո, պարոն,— պատասխանեց դարձյալ արհեստավորը:— Մեր քաղաքում ով որ գրպանում մի քանի ղուրուշ ունի, նա աղա է, չնայելով, թե այդ չնչին ղուրուշները նա ինչ ցածությամբ է վաստակել:

Անցավ մի այլ խումբ: Առողջամիտ արհեստավորը, ձեռքը մեկնելով դեպի մի վայելչակազմ երիտասարդ, ասաց.

— Ահա մի ուրիշ աղա էլ. դա էլ նոր է եկել. Պոլսում *քիսաջի* էր, այսինքն բաղանիքներում ծառայող: Պետք է Պոլսի անբարոյական բաղանիքները տեսած լինել, պետք է նրանց գաղտնիքներին տեղյակ լինել, որ կարելի լինի հասկանալ, թե ո՞րքան ստոր և անամոթ ծառայություն է կատարում քիսաջին: Այստեղ մի լավ ընտանիքից աղջիկ են տալիս այդ քիսաջուն, այդ աղային: Շուտով հարսանիք պիտի անե: Պոլսից բերած փողերը կծախսե, կրկին պարտքերի տակ կընկնի, և մի քանի ամսից հետո, խեղճ կնոջը անտեր թողնելով, կրկին կգնա Պոլիս, կրկին կմտնե բաղանիքը:

Հեռվից երևաց տեր Եղիշեն:

— «Ֆարմասոնը» գալիս է,— ասացին միմյանց երեցփոխանը և թաղական խորհրդի անդամը:

— Ի՞նչ է «ֆարմասոն»,— հարցրի ես:

— Անհավատ մարդ է,— պատասխանեց երեցփոխանը:— Դա մեր թաղում աղջիկների դպրոց էր բաց արել, հավաքվեցանք, քանդեցինք:

Արհեստավորը ոչինչ չխոսեց: Տեր հայրը մոտեցավ, և ինձ տեսնելով, ամենևին ծանոթություն չտվեց, չնայելով, որ անցյալ գիշերը Ասլանի հետ նրա տանն էինք: Նա ողջունեց և նստեց մեզ մոտ: Երեցփոխանը և թաղական խորհրդի անդամը իսկույն վեր կացան և հեռացան, որպես ժանտախտից: Արհեստավորը մնաց: Տեր հայրը նրա առողջությունը հարցնելուց հետո դարձավ դեպի ինձ:

— Դուք, երևի, օտար երկրից եք, պարոն:

— Այո՛, այն եվրոպացի բժշկի թարգմանն եմ,— պատասխանեցի ես:— Տանը ձանձրացա, եկա այստեղ մի փոքր զովանալու:

— Լավ եք արել, որդի, մեր վանեցոց զվարճությունները կտեսնեք և նրանց կյանքի հետ կծանոթանաք:

Արհեստավորը իր ընդհատված նկատողությունները շարունակեց:

— Պետք է Պոլսում տեսնել այդ մարդկանց և այնտեղ ծանոթանալ վանեցու կյանքի հետ: Տեսնո՞ւմ եք, այստեղ այսպես զուգված, զարդարված, անհոգ ման են գալիս, զվարճանում են, կարծես բախտից այլևս ոչինչ պահանջելիք չունեն, ամեն բարիքներով լի են: Բայց Պոլսում կտեսնեք դրանց կեղտի մեջ կորած, պատառոտած հագուստներով, քաղցած, անգործ թափառում են, շատ անգամ մուրացկանություն են անում: Հենց որ մի պարապմունք կգտնեն և այնքան փող կվաստակեն, որ նրանով կարող լինեն ծովը անցնել և մի քանի ամիս իրանց տներում ապրել,— տեսար, իսկույն մի ձեռք նոր հագուստ կգնեն և ճանապարհ կընկնեն: Տանը նրանք անձնատուր են լինում վերին աստիճանի շռայլության, բոլորովին մոռանալով, թե որքան դժվարությամբ են վաստակել բերած փողերը: Շատերը տարիներով Պոլսում ընկած են, որովհետև ծովը անցնելու փող չեն գտնում: Պետք է շնորհակալ լինել, որ այդ օրհնյալ ծովը մեծ ծառայություն է անում մեզ: Եթե նա մեջտեղում չլիներ բոլոր վանեցիք Պոլսում կլինեին: Ցամաքը նրանք կարող են ոտքով անցնել, բայց ծովը անցնելու համար պետք է փող վճարել, իսկ այդ փողը գտնելը՝ հեշտ չէ վանեցու համար: Նա պետք է ամեն ինչ գրավ դնե, որ իրան պետք եղած փողը տան:

— Մի՞թե Պոլսում այդ շռայլությունները չեն անում,— նկատեց տեր հայրը:— Այնտեղ էլ այդպես են:

— Այո՛, այդպես են: Շատերը մոռանում են հայրենական տուն, տեղ, ընտանիք, և մինչև մահ մնում են այնտեղ: Այդ թշվառների կյանքը ավելի ցավակցության արժանի է: Օրերով, ամիսներով կաշխատեն, հենց որ մի քանի ղուրուշ ձեռք ձգեցին, բոլորը մի օրվա մեջ կվատնեն: Այդ օրերում անկարելի է նրանց տեսնել կամ նրանց հետ խոսել: Բոլոր անասնական կրքերը զարթած են լինում նրանց մեջ: Նրանք սթափվում են այդ մոլեկան դրությունից այն ժամանակ միայն, երբ ղահվեջին նրանց լավ կողոպտում է և իր անբարոյական հիմնարկությունից դուրս է անում, որ ավելորդ տեղ չբռնեն:

— Ի՞նչ միջոցով են փող աշխատում,— հարցրի ես:

— Ամենաստոր միջոցներով: Ես հասկանում եմ, երբ հսկա մշեցին կամ ուժեղ շատախցին գնում է Պոլիս: Նրանք ընտրում են տղամարդի վայել աշխատություններ: Խաներում, մաքսատներում, նավահանգստներում համալություն են անում և ահագին հակեր են տեղափոխում շոգենավերից, թուլումբաջի (հրդեհաշեջ) են դառնում և կրակի մեջ են մտնում. նավաստի են դառնում և ալիքների հետ են պատերազմում, մի խոսքով, ընտրում են այնպիսի պարապմունքներ, որի համար պետք էր մարմնի և սրտի ամրություն և ծայրահեղ անձնավստահություն: Բայց երբ թուլամորթ, կանացաբարո վանեցին է գնում Պոլիս, ընտրում է պարապմունքների ամենամեղկը: Դրանք ըստ մեծի մասին գնում են մանուկ հասակներում, բերբերների (սափրիչների) աշակերտ են դառնում, սրճատներում սպասավոր են դառնում կամ, որպես Մինաս և Կարապետ «աղաների» օրինակներով ցույց տվի, բաղանիքներում քիսաջի և փողոցներում բաժակներով ջուր ծախող են դառնում: Բայց ավելի փչացնում է վանեցիներին *էյվազությունը*: Գիտե՞ք ի՛նչ բան է էյվազությունը,— մասնավոր տներում սպասավորություն, և առավելապես հարուստ մահմեդականների կամ ծառայող փաշաների տներում: Պետք է մահմեդականների ընտանեկան կազմակերպության հետ ծանոթ լինել, որ հասկանալի լինի, թե որքան գարշելի ծառայություն է կատարում էյվազը: Այնտեղ սովորում է թեքվել, ստորանալ,

ընտելանում է հարեմական կյանքի բոլոր մեղկությունների հետ,— այնտեղ սպանում է իր այրականությունը: Եվ դուք կտեսնեք, որ նույն փառավոր հագնվածք վայելչադեմ էյվազը, որ բոլորին ապշեցնում է իր գեղեցկությամբ, հետո, իր ծերության հասակում, պատառոտած հագուստով, մի կթոց ուսի վրա առած, թափառում է փողոցներում, տներից աղբ է հավաքում, և մի քանի փարայի վարձատրությամբ, տանում է ծովն է ածում: Երկու դեպքում ևս նա ստորանում է, թեքվում է,— թեքվում է աղբի ծանրության ներքո…

Վերջին խոսքերը արտասանեց արհեստավորը սարսափելի դառնությամբ: Նա շարունակեց.

— Նայեցեք այդ բազմությանը, որ մեր շուրջը զբոսնում են և այդպես անձնատուր են եղած անհոգ զվարճությունների,— դրանք պարտքերի մեջ խեղդված մարդիկ են: Դրանց մեջ մեկը չեք գտնի, որ իր կյանքում տասնյակ անգամներով Պոլիս գնացած չլիներ և այնտեղ տարիներով մնացած չլիներ: Այդ ծուլությունը, այդ անհոգությունը, այդ շռայլությունը դրանք բերել են Պոլսից: Ես մտաբերեցի Ասլանի խոսքերը, որ մի օր ասում էր ինձ.— «Պոլիսը փչացրել է դրանց, ա՛խ ո՛րքան ժամանակ, ո՛րքան աշխատություն է հարկավոր մի այդպիսի հասարակություն ուղղելու համար»…

Երբ արհեստավորը վերջացրեց իր հետաքրքիր նկարագիրը վանեցոց պանդխտության մասին, տեր հայրը ասաց.

— Ցավալին այն է, որ այդ ախտը քաղաքից հետզհետե ավելի և ավելի տարածվում է և աշխատասեր գյուղացիների մեջ: Նրանք էլ վարակվել են: Նրանք էլ թողնում են իրանց վարը, ցանքը, գնում են Պոլիս: Եվ այդպես մեր ամենալավ ուժերը մաշվում են, ոչնչանում են պանդխտության մեջ:

Արևը մտնելու մոտ էր: Ես շտապում էի տուն վերադառնալ, գիտեի, որ Ասլանը սպասելիս կլիներ ինձ: Ես վեր կացա, տեր հայրը նույնպես եկավ ինձ հետ: Բայց արհեստավորը, մնաք-բարյավ ասելով, բաժանվեցավ մեզանից: Ճանապարհին հարցրի տեր հորից.

— Ո՞վ է այդ մարդը:

— Հասարակ դարբին է,— պատասխանեց տեր հայրը:

— Բայց ինչ լավ խոսում է:

— Նա բավական զարգացած մարդ է:

— Ես սաստիկ համակրեցի նրան:

Տեր հայրը իր շուրջը նայելով, որպեսզի ոչ ոք չլսե, հազիվ լսելի ձայնով ասաց.

— Նա «մերոնցից» է…

— Ասլանը ճանաչո՞ւմ է նրան:

— Ճանաչում է:

— Իսկ նա՞ Ասլանին:

— Չէ ճանաչում:

Արևը մտավ: Երեկոյան զովը ավելի ախորժելի դարձավ: Զբոսնող բազմությունը հետզհետե ստվարանում էր, և ամեն կողմից լսելի էին լինում երգի, ուրախության ձայներ: Ես դարձյալ մտաբերեցի Ասլանի խոսքերը, թե «այդ ժողովուրդը ծիծաղում է արտասուքի միջից»…

ԺԸ

ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ

Երեկոյան մութը պատել էր արդեն, երբ ես և Ասլանը ձի նստելով դիմեցինք դեպի առաջնորդարանը: Ճանապարհին հարցրի Ասլանից.

— Ի՞նչ ես կարծում, առաջնորդին հայտնի՞ կլինի մատնությունը:

— Անտարակույս,— պատասխանեց նա:— Անկարելի է, որ փաշան այդ մասին նրա հետ խորհուրդ արած չլինի:

— Ուրեմն տիկնոջ զգուշացնելը իզուր չէր:

— Բոլորովին իզուր էր:

— Ինչո՞ւ: Առաջնորդը մեծ հոժարությամբ իր սեղանի վրա կալանավորել կտա քեզ, եթե ստուգե, որ դու ես նկարագրված անձը:

— Նա այդ կանե, բայց ստուգելը դժվար է:

Տեսնելով Ասլանի անձնավստահությունը, ես լռեցի: Նա ինձ պատվիրեց.

— Դու այստեղի սովորության համեմատ, կկանգնես դռան մոտ, ներսի կողմից. աշխատիր ոչ մի բառ չփախցնել քո լսողությունից, ինչ որ կխոսվի այնտեղ:

Մի խումբ ծառաներ կանգնած էին առաջնորդարանի դռանը՝ հյուրերին ընդունելու և նրանց ձիաները բռնելու համար: Մեզ էս ամեն քաղաքավարությամբ ներս տարան: Մենք սպասում էինք հանդիպել մի համեստ ընթրիքի, որպիսին վայել էր մի կրոնավորի, բայց գտանք ընդհակառակը: Դահլիճներից մեկը փառավոր կերպով զարդարված էր. լուսավորությունը աչք էր շլացնում. ես առաջին անգամն էի տեսնում այսպիսի ճոխություն: Դահլիճի պատվավոր ճակատում, թանկագին թավշյա օթոցի վրա, որ տարածել էին պարսկական գեղեցիկ գորգի երեսին, բազմած էր նորին սրբազնությունը: Նրա աջ կողմը բռնել էր փաշան, իսկ ձախ կողմը մի նշանավոր քուրդ բեկ: Նա այն գիշեր հագած ուներ ծիրանագույն փարաջա, իսկ կուրծքի վրա շողշողում էր ալմաստներով զարդարված օսմանյան շքանշանը: Ինձ հայտնի էր, ես Պարսկաստանում շատ անգամ էի տեսել, երբ երկրի կառավարիչը մարդիկ է մորթել տալիս, նա այնօր սովորաբար հագնում է արյունագույն զգեստ: Այդ ինձ մտածել տվեց, թե նորին սրբազնությունը գուցե նրա համար է հագել ծիրանագույն փարաջան, որովհետև առաջնորդարանում այնօր կատարվել էր գյուղացի կնոջ նշանավոր դատաստանը: Բայց այդ պետք էր մի պատահական հակադիպություն համարել:

Նա ընդունում էր իր հյուրերին առանց տեղից շարժվելու, միայն ձեռքը մեկնում էր համբուրել տալու համար: Բայց երբ Ասլանը ներս մտավ, նա կիսով չափ տեղից բարձրացավ, և փոխանակ աջը համբուրել տալու, բռնեց Ասլանի ձեռքը, բարեկամաբար սեղմեց և փաշայի մոտ նստելու տեղ ցույց տվեց: Աթոռներ չկային, բոլորը նստած էին գորգերի վրա: Ես կանգնած մնացի դռան ձախ կողմում, իսկ աջ

կողմը բռնած էր փաշայի թիկնապահը: Երկուսս էլ զինված էինք, երկուսս էլ ձեռքներս դրած ունեինք մեր սրերի վրա: Դա մի առանձին պատիվ է, երբ թիկնապահը կանգնում է նույն սենյակում, որտեղ ընդունված էր նրա տերը: Հասարակ անձանց թիկնապահները կամ նրանց ծառաները սպասում են նախասենյակում, որպես քուրդ բեկի ծառան:

Սովորական ողջագուրանքից հետո, որի միջոցին յուրաքանչյուրը անդադար ձեռքը խոնարհեցնում էր և հետո դնում ճակատին ի նշան խորին հարգանաց, փաշան մի առանձին ժպիտով, որ խիստ կոշտ էր թվում նրա կոշտ դեմքի վրա, դարձավ դեպի Ասլանը այդ խոսքերով.

— Ես դիտավորություն ունեի անձամբ ձեզ մոտ գալ, պարոն բժշկապետ, իմ խորին շնորհակալությունը հայտնելու ձեր հրաշալի բժշկության մասին: Ես այժմ կատարելապես առողջ եմ:

— Դուք ինձ ամաչեցնում եք, վսեմաշուք տեր, մի՞թե իմ չնչին ծառայությունը այնքան մեծ արժեք ուներ,— պատասխանեց Ասլանը:

— Ավելի և ավելի մեծ արժեք ուներ,— կրկնեց նա գլուխը շարժելով:— Հավատացնում եմ ձեզ, պարոն բժշկապետ, եթե ես չգիտենայի, որ Մուհամմեդը մարգարեների վերջինն է և կատարածը, թե նրանից հետո այլ մարգարե չէ գալու, անշուշտ պիտի համարեի ձեզ աստծո մարգարեներից մեկը, որ աշխարհ գալով, հրաշքներ է գործում:

Փաշայի այդ երկդիմի շողոքորթությանը Ասլանը պատասխանեց.

— Հրաշքների դարը անցել է, վսեմաշուք տեր, այժմ գիտության և արհեստի դարումն ենք ապրում, որոնք ավելի մեծ գործեր են կատարում, քան գերբնական հրաշքները:

Փաշան դարձյալ իր ասածն էր պնդում:

— Հրաշքների դարը ինձ համար չէ անցել, պարոն բժշկապետ, ես հավատավոր մարդ եմ: Ստամբոլում ամբողջ հինգ տարի տանջվեցա, հասկանում եք, ամբողջ հինգ տարի, սուլթանի ամենանշանավոր բժիշկները աշխատում էին իմ վրա, բայց ոչինչ օգուտ չտեսա. իսկ ձեր մի քանի դեղերով բոլորովին փրկվեցա ես:

Ասլանը ինձ հետո ասաց, թե այդ մարդը ամենևին հիվանդություն չուներ, թե իր տված մի քանի դեղերը միայն նրա երևակայությունը գոհացնելու համար էին գործ դրված: Բայց ավելի հավանականն այն էր, որ խորամանկ փաշան իր հիվանդությունը իբրև մի պատրվակ էր ընտրել բժշկին մի քանի օր ավելի Վանում պահելու համար, որպեսզի իր նրա վերաբերությամբ ունեցած կասկածները ստուգե: Թե այսպես, թե այնպես, այդ տեսակ բացարձակ շողոքորթություններ արևելքում ոչ միայն սովորության, այլև քաղաքավարության կարգն են անցել, և Ասլանը, հետևելով տեղային սովորությանը, դարձավ դեպի առաջնորդը այդ խոսքերով.

— Չգիտեմ, որպես շնորհակալ լինեմ ձեզանից, սրբազան հայր, ձեր հանձնարարական թուղթը ինձ շատ և շատ օգնեց, ես համարյա մեծ մասամբ հասա նպատակիս:

— Այդ մեր պարտավորությունն է, պարոն բժշկապետ, մեր կարյաց չափ բավականություն տալ մեր կողմերը եկած ճանապարհորդների հետաքրքրությանը, օգնել նրանց երկիրը, ժողովուրդը ուսումնասիրելու, և աշխատել ամեն կերպով դյուրություններ մատուցանել նրանց՝ իրանց նպատակներին հասնելու: Բայց ցավում

եմ, շատ ցավում եմ, որ ես չկարողացա նախատեսել Կտուց անապատը գնալու վտանգը: Մեր ծովը փոքրիկ է, բայց բավական կատաղի է: Միայն ուրախ եմ, շատ ուրախ, որ ձեզ հաջողվել է քաջությամբ ազատվել:

Առաջնորդը հիշեցնում էր մեր Կտուց անապատը գնալու ժամանակ կրած ալեկոծությունը: Երևում էր, որ նրան արդեն հայտնի էին մեզ հետ պատահած անցքերը: նա ավելացրեց.

— Դուք, պարոն բժշկապետ, տեսնում եմ, որպես լավ բժիշկ եք, նույնպես և լավ նավավար ու ճարպիկ լողորդ եք: Ես մեծ հիացմամբ լսեցի ձեր կատարած քաջությունը ալեկոծության ժամանակ:

Ասլանը պատասխանեց.

— Մեր երկրում, սրբազան հայր, վաղուց արդեն կրթության և դաստիարակության կարգն է անցել, սկսյալ մանկությունից, պատրաստեք մարդուն այնպես, որ նա կյանքի մեջ ընդունակ լինի ամեն վտանգների հետ պատերազմելու: Երբ ծովի հետ գործ ունես, պետք է կանխապես սովորած լինես, թե ինչպես պետք է վարվել նրա ալիքների հետ…

Այդ բոլոր խոսակցությունը, որպես նկատում էի, մի տեսակ խուլ հակաճառություն էր զանազան նուրբ ակնարկություններով և զանազան երկդիմի ասացվածներով: Ասլանի նույն տեսակ պատասխանները ստիպեցին սրբազանին փոխել իր խոսակցության ձևը:

— Դուք և Վարագ այցելեցիք, այնպես չէ՞, պարոն բժշկապետ,— հարցրեց նա,— ի՞նչպես գտաք այդ վանքը և այնտեղի նոր հիմնարկությունները. տեսնվեցա՞ք արդյոք Հայրիկի հետ:

— Տեսնվեցա և շատ բավական մնացի,— ասաց Ասլանը:— Նրա վանքը մի գեղեցիկ օրինակ պետք է համարել, որ եթե կղերը կմասնակցե ժողովրդի դաստիարակության գործին, ահա այդ ձևով պետք է մասնակցե:

— Այդ իմ փափագելի ցանկությունն է, պարոն բժշկապետ: Իմ ջանքերը դեռ բոլորովին չեն սպառվել Վարագի վրա: Ես աշխատում եմ և պիտի շարունակեմ աշխատել, եթե միջոցները ինձ թույլ տան, իմ վիճակի մեջ գտնված բոլոր վանքերին նույն ձևը տալ: Մեր վանքերը, ժամանակների դժբախտ հանգամանքներից, այժմ շատ և շատ թշվառ դրության մեջ են: Իմ բոլոր ջանքը այն է՝ բարձրացնել նրանց իրանց անկյալ դրությունից:

Պետք է վերին աստիճանի ցած կեղծավորություն համարել, որ Հայրիկի, և նրա վանքի ամենամեծ թշնամին այդպես էր խոսում: Նա, որ ամեն գաղտնի և հայտնի միջոցներ գործ էր դնում ոչնչացնելու Վարագա բոլոր հիմնարկությունները,— այժմ նրա փառքը և նախաձեռնությունը իրան էր վերաբերում: Բայց սրբազանը այդ մասին կարճ կտրեց, խոսքը փոխելով.

— Ես ձեզանով և ձեր ճանապարհորդության արկածներով այնքան գրավվեցա, որ բոլորովին մոռացա իմ հյուրերին ծանոթացնել ձեզ:— Ահա՝ դա,— նա ցույց տվեց այնտեղ նստած քուրդ բեկին,— քրդերի մի մեծ և քաջ ցեղի գլխավորն է, Շարիֆ-բեկը:

— Շատ ուրախ եմ ծանոթանալ,— ասաց Ասլանը ձեռքը մեկնելով քուրդ բեկին:

— Ամենապատվական մարդ է և իմ ամենալավ բարեկամը,— առաջ տարավ առաջնորդը։— Դրա շնորհիվ մեր և Պարսկաստանի սահմանագլուխները կատարյալ ապահովություն և հանգստություն են վայելում: Տեղային քրիստոնյա բնակիչների բարեխնամ պաշտպանն է և հովանավորողը:

Ես իսկույն ճանաչեցի քուրդ բեկին, երևի Ասլանը ինձանից առաջ ճանաչել էր: Դա նույն անձնավորությունն էր, որին տեսանք սուրբ Տիրամոր վանքում, որտեղ եկել էր նա ուխտավորներից գոյացած արդյունքը բաժանելու Կարապետ հայր սուրբի հետ: Դա նույն անձնավորությունն էր, որի՝ Ասլանի մասին գրած մատնության նամակը անցյալ գիշեր կարդացինք տեր Եղիշեի տանը: Այժմ, ինչպես երևում էր, անձամբ եկել էր խորհրդակցել փաշայի հետ, կամ, գուցե այդ նպատակով կանչված էր նրանից:

— Դա մեր քաղաքի ոստիկանության պետն է, Լաթիֆ-բեկը,— առաջ տարավ առաջնորդը։— Ամենապատվական մարդ և, դրա շնորհիվ մեր քաղաքը կատարյալ հանգստություն է վայելում:

Ասլանը ձեռքը մեկնեց և դեպի այդ «ամենապատվական» մարդը, որ տեր Եղիշեի քրոջ՝ տիկին Թելլիի ամուսինն էր, և որին հանձնված էր որոնել մատնված Ասլանին: Նա բոլոր ժամանակ իր թավ, խոժոռ հոնքերի տակից լուռ նայում էր Ասլանի վրա: Թե՛ քուրդ բեկը և թե՛ ոստիկանության պետը՝ երկուսն էլ զենքերով էին նստած: Նայելով վերջինի վրա, ես մտածում էի, որ այնպիսի բարի և ազնիվ կինը, որպիսին էր Թելլի-խաթունը, մի կատարյալ զոհ պետք էր համարել այդ տեսակ գազանի ձեռքում:

Բացի քուրդ բեկից և ոստիկանության պետից, մյուս հյուրերի թիվը շատ փոքր էր, նրանք երեք հոգի էին միայն, ազգով հայ: Առաջինի վրա ցույց տալով, առաջնորդը ասաց.

— Դա մեր հայ հասարակության առաջնակարգ անձինքներից մեկն է, Շարման-բեկը: Բոլոր արքունական շինվածքների կառուցման կապալառությունը դրա ձեռքումն է, որ ապացույց է իր մեծ հավատարմության: Շատ ժամանակ չէ, որ արժանացավ օգոստափառ սուլթանի շնորհած շքանշանին:

Եվ իրավ, նրա կուրծքի վրա փայլում էր մի շքանշան: Շարման-բեկի անունը լսելով, ես իսկույն հիշեցի վարպետ Փանոսի մի հետաքրքիր պատմությունը արքունի զինվորանոցների կառուցման մասին: Այդ Շարման-բեկն էր, որ շինությունների բոլոր ծախքը հայ հասարակության տուժել տալով, միևնույն ժամանակ, նույն ծախքը ամբողջապես ստացավ կառավարության գանձարանից և բաժանեց փաշայի կամ այլ պաշտոնական անձանց հետ: Այդ պատմությունը ես պիտի կրկնեմ, որ դու լավ մտաբերես, ընթերցող:

Վանի շրջակայքում, կամ Պարսկաստանի սահմանի գծի վրա, տաճկաց սահմանապահ զինվորները, զորանոցներ չունենալով, սովորաբար միշտ բաժանված էին լինում հայերի տներում օթևանելու համար: Յուրաքանչյուր ընտանիք պարտավորված էր պահել մի քանի հոգի այդ հյուրերից: Ինքնակոչ հյուրը դառնում էր, միևնույն ժամանակ, ընտանիքի տերը և նրա գլխավորը: Տան հարսը, աղջիկը, կինը ծառայում էին նրան, որպես աղախիններ, տան տղամարդը հոգ էր տանում նրա ձիուն, որպես ծառա: Թուլամորթ, որկրամոլ տաճիկ զինվորը չափազանց նուրբ ճաշակ է ստանում և խիստ պահանջող է լինում, երբ հայի տանը ձրի կերակրվում է: Իսկ երբ նրա պահանջները իր ցանկության համեմատ չեն կատարվում, այն ժամանակ նրա մտրակը սարսափելի գործ է տեսնում: Գերդաստանի պատիվն անգամ զոհվում է նրա մոլի կրքերին: Երևակայեցեք մի գյուղական մարդ,

նահապետական ընտանիք, որ բոլորը, մի հարկի տակ են ապրում, և նրանց մեջ խառն է անբարոյական տաճիկ զինվորը: Հայը ամեն հարստահարության սովոր է համբերել, բայց երբ դիպչում են նրա ընտանեկան պատվին, նա այդ ժամանակ կորցնում է իր համբերությունը: Այդ էր, որ գրգռեց հասարակությանը՝ բողոքել բարձր կառավարության, որ զինվորները հեռացվեն իրանց տներից: Կառավարությունը ի նկատի առեց նրանց բողոքը և հրամայեց ամեն տեղ իր ծախքով զորանոցներ կառուցանել: Արքունի շինվածքների կապալառվի, Շարման-բեկի համար մի մեծ գործ բացվեցավ: Նա դիմեց միամիտ գյուղացիներին ասելով,— «եթե ցանկանում եք, որ զինվորները ձեր տներից հեռանան, պետք է զորանոցները ձեր ծախքով շինել տաք, որովհետև այդպես է հրամայված»: Խեղճ գյուղացիները հոժարվում են ամեն ինչ զոհել, գեթ ազատվեն անտանելի հյուրերից: Ով որ փող ուներ փող էր տալիս, ով որ փող չուներ, ինքն էր աշխատում իր անասունների հետ, քար, փայտ և կիր կրելով: Այդպիսով զորանոցները կառուցվում են: Այդ մեծ ծառայությունը վարձատրվում է այն մեծ շքանշանով, որ Շարման-բեկը կրում էր կուրծքի վրա, թեև զորանոցների ծախքը մի կողմից խեղճ հասարակությունն էր տուժում, մյուս կողմից՝ արքունի գանձարանը:

— Շատ բարեպաշտ և ազգասեր անձն է, պարոն բժշկապետ,— ավելացրեց առաջնորդը:— Եթե գիտենայիք որքան բարիքներ է գործել դա մեր հասարակությանը: Շատ ժամանակ չէ, որ իր ծախքով նորոգել տվեց մի վանքի խարխուլ տաճարը:

Վերջին խոսքը ճշմարիտ էր: Բայց ժողովուրդը կողոպտել և տաճարներ կառուցանել,— այդ հազիվ թե կարելի էր բարեպաշտություն համարել: Ասլանը ոչինչ չպատասխանեց: Բայց Շարման-բեկը, լսելով սրբազանի գովասանքը, ինքնաբավական կերպով իր տեղում շարժվեցավ, նրա աղյուսի գույնով անշարժ դեմքի վրա երևաց ժպիտի նման մի բան, և ձեռքը տարավ դեպի կուրծքը, կարծես տեսնելու համար արդյոք շքանշանը իր տեղո՞ւմն է:

Առաջնորդը շարանուկեց ծանոթացնել մյուսներին.

— Դա մահտեսի Թորոսն է, մի քանի անգամ Երուսաղեմ ուխտ է գնացել. մեր քաղաքի հարուստ և նշանավոր վաճառականներից մեկն է, միևնույն ժամանակ մեր մայր եկեղեցու երեցփոխանն է: Մեծ ծառայություններ է արել եկեղեցուն, շատ ապրի, չափազանց բարեպաշտ և ազգասեր մի անձն է:

Ասլանը մինչև անգամ չնայեց նրա վրա. ես երեսս մի կողմ շուռ տվի, որ ծիծաղս չտեսնեն: Գիտե՞ք ով էր այդ «հարուստ», «չափազանց բարեպաշտ և ազգասեր վաճառականը»: Դա միևնույն խաբեբան էր, որ Այգեստանում հայտնվեցավ մեզ մոտ, վարպետ Փանոսի տանը, և իբրև թանկագին հնություններ, կեղծ դրամներ վաճառեց Ասլանին: Այն ժամանակ նա, մի հրեա մանրավաճառի նման, հագած ուներ հին ցնցոտիներ, որ կարեկցություն գրավե դեպի իր ողորմելի վիճակը: Իսկ այժմ, չնայելով որ ամառն էր, հագած ուներ մի թանկագին մուշտակ աղվեսի ոսկեգույն մորթիից, և մեջքին փաթաթած ուներ թանձր գոտի պարսկական շալից: Ասլանը նրան չամաչացնելու համար այնպես ձևացրեց, իբր թե չէ ճանաչում նրան: Եվ իրավ, այժմ հազիվ կարելի էր ճանաչել նրան. գլխին դրած ուներ ֆես, որի վրա փաթաթել էր *յազմա* կոչված թաշկինակ. կնճիռներով պատած երեսը խնամքով ածիլած էր, իսկ քիթը, ուղտի համետի ձև ուներ, ինձ երևում էր այժմ ավելի երկարացած և բոլորովին ծածկել էր վերին շրթունքը: Առաջնորդի՝ նրա մասին շռայլած գովասանքների այն մասը միայն ճշմարիտ էր, որ, իրավ, նա շատ հարուստ մարդ էր և փաշայի սեղանավորն էր: Հարկավորված ժամանակ փաշային ծանր տոկոսներով փող էր տալիս, իսկ փոխարենը ընդունում էր գյուղերից ստացվելիք տուրքը: Իսկ ինքը

ո՛րքան և ի՛նչպես էր ստանում գյուղացիներից,— այդ կախված էր իր խղճից, եթե կար նրա մեջ խիղճ:

Երրորդ անձը, որին ծանոթացրեց սրբազանը, մի կծկված ծերունի էր, փոքրիկ սապատը դուրս էր ցցվել մեջքի վրա: Նա ևս մի քանի անգամ Երուսաղեմ էր գնացել, նա ևս չափազանց «բարեպաշտ և ազգասեր» մարդ էր: Նրան կոչում էին մահտեսի Հարո: Եթե ես եզվիտ տեսած չլինեի, բավական էր այդ մարդու դեմքը հետազոտել, նրա խոսակցությունը լսել և եզվիտի մասին կատարյալ գաղափար կազմել: Նա քաղաքի գլխավոր ոսկերիչն էր և գոհարավաճառը: Փաշայի կանանոցի զարդերը նա էր մատակարարում և նրա դռան հետ սերտ հարաբերություն ուներ: Չգիտեմ ինչո՞ւ սրբազանը մոռացավ նրա մասին «չափազանց բարեպաշտ և ազգասեր» ածականները և միայն ասաց, թե շատ «երևելի» մարդ է: Այդ ինձ չէր զարմացնում, որովհետև գոհարավաճառ և ոսկերիչ հայերը շատ անգամ սուլթանների և շահերի արքունիքում երևելի են դարձել, ստեպ գործ ունենալով ազդեցություն ունեցող ներքինիների և կանանոցի հետ:

— Դրանք երեքն էլ քաղաքիս դատաստանական մեջլիսում բազմոց ունեն,— վերջացրեց սրբազանը:

Սրբազանի վերջացնելուց հետո, փաշան սկսեց զբաղեցնել Ասլանին: Նա զանազան սրախոսություններով անդադար դառնում էր դեպի Ասլանը, հանաքներ էր անում, ծիծաղում էր, թեև նրա սրախոսությունների մեջ ծիծաղելու ոչինչ չկար:

— Ես հույս ունեմ, որ մեր քաղաքի հնությունները բավական գրաված պետք է լինեն ձեզ, պարոն բժշկապետ,— հարցրեց նա:

— Հնությունները, այո՛, գրավեցին,— պատասխանեց Ասլանը,— բայց ինչ որ նոր է այստեղ, շատ տխուր տպավորություն է գործում:

Փաշան կամ չհասկացավ Ասլանի ակնարկությունը, կամ զանցառության տվեց: Նրա փոխարեն պատասխանեց սրբազանը.

— Եթե դուք տեսնեիք մեր քաղաքը տասն տարի առաջ, պարոն բժշկապետ, նա բոլորովին ավերակ էր: Այժմ բավական շենք ու շնորհք է ստացել: Բնակիչները կատարյալ հանգստություն են վայելում, ավերակները հետզհետե նորոգվում են: Այդ ամենով մենք պարտական ենք մեր վսեմաշուք փաշային, որի կառավարությունը բերեց իր հետ բարօրություն և կյանք:

— Բոլորովին ճշմարիտ է, աստված երկար կյանք տա մեր վսեմաշուք փաշա էֆենդիին,— ասացին երեք հայ երևելիները միաձայն:

— Ինձ շատ հաճելի է լսել այդ բոլորը,— պատասխանեց Ասլանը,— անշուշտ վսեմաշուք էֆենդին իմ ուղևորության հիշատակարանի մեջ իր արժանավոր տեղը կբռնե:

Ի՞նչպես պետք էր հասկանալ այդ «արժանավորը», փաշան, իհարկե, դեպի լավը բացատրելով, մի առանձին քնքշությամբ, որ բնավ չէր պատշաճում նրա խիստ դեմքին, սեղմեց Ասլանի ձեռքը, ասելով.

— Շնորհակալ եմ, պարոն բժշկապետ, ձեր բարի ուշադրության համար: Հարկավ, ձեր ուղևորության հիշատակարանը մի օր տպագրությամբ լո՞ւյս կտեսնի:

— Անպատճառ, գուցե մի քանի լեզուներով ևս կթարգմանվի:

Երեք հայ երևելիներից մեկը, մահտեսի Հարոն, որ ավելի մոտ էր նստած Ասլանին, կռացավ դեպի նրա ականջը, իբր թե մի ծածուկ բան է ասում, բայց այնքան լսելի ձայնով խոսեց, որ ամենքը իմացան:

— Ամենայն հարգանաց արժանի է այդ մարդը,— նա իր նեղ, խորամանկ աչքերը, որոնք բոլորովին զրկված էին թերթերունքներից և շրջապատված էին միայն կարմիր, թանձր կոպերով, դարձրեց դեպի փաշան:— Ես ութսուն տարեկան մարդ եմ, պարոն բժշկապետ, ես շատ բան եմ տեսել: Առաջ խիստ վատ էին ժամանակները, իսկ հիմա գայլն ու գառը միասին են ապրում, մարդիկ իրանց դռները գիշեր ու ցերեկ բաց են թողնում, փակելու պետք չունեն, որովհետև էլ գողեր չկան: Կարող ես գլխիդ ոսկի դնել և աներկյուղ ուր որ ուզում ես գնալ: Ամեն տեղ ապահովություն է տիրում: Թե՛ աղքատի խրճիթից, թե՛ հարստի տնից միայն աղոթք ու գոհություն է լսվում: Ոչինչ դժգոհություն չկա:

Միշտ միևնույն զզվելի շողոքորթությունները, միշտ միևնույն անվերջ կեղծավորությունները չափ չունեին: Եվ այդ շողոքորթությունների մեջ պետք էր որոնել երկրի գլխավոր թշվառությունը: Ես այժմ կատարելապես հասկանում էի այն ճառի ճշմարտությունը, որ Ասլանը կարդաց ինձ և Մարոյին ս. Տիրամոր տոնախմբության ժամանակ, թե որպիսի վնասակար դեր են խաղում ժողովրդի ներկայացուցիչները նրա անբախտ վիճակի մեջ: Այն ժամանակ ես լսում էի միայն խոսքեր, թե ի՞նչ է անում կղերը, կառավարության պաշտոնյան, դրամատերը, և դրանց նմանները,— իսկ այժմ տեսնում էի նրանց կենդանի տիպարները: Դեցուք թե, Ասլանը լիներ մի կոնսուլ, մի պաշտոնական անձ, որ ուղարկված էր երկրի դրությունը քննելու: Նա խո չէր մտնի գյուղացու խրճիթը, նա խո չէր դիմի սոված քաղաքացուն: Նա ամեն տեղ կհանդիպեր այդ տեսակ շողոքորթների, և ի՞նչ գաղափար կարող էր կազմել երկրի դրության մասին: Իհարկե, լավ: Նույնիսկ երկրի բարձր կառավարության առջև՝ այդ մարդիկը վնասակար դեր են խաղում: Երբ հարստահարվածների բողոքը հասնում է մինչև Բարձրագույն Դուռը, երբ գանգատվում են փաշայի, մուդուրի, գայմագամի կամ այս և այն անիրավ զեղծումների մասին,— տեսար, ահա հավաքվեցան շողոքորթները, և հակառակ բողոքագրին, մի շնորհակալության հանրագիր կազմեցին և ուղարկեցին Պոլիս: Ամեն բան քանդվում է: Հարստահարվածների ձայնը խեղդվում է, որովհետև շողոքորթներին ավելի են հավատում, որովհետև նրանք են ժողովրդի ներկայացուցիչները, նրա «երևելիները»: Դրանց ջահերը կապված են երկրի կեղեքիչների շահերի հետ, շատ հասկանալի է, որ նրանց անիրավությունները կպաշտպանեն:

Ասլանը, երևի, չկարողացավ իրան զսպել, ասաց.

— Անկարգություններ, այսուամենայնիվ, պատահում են: Իմ անցնելու միջոցին, Պարսկաստանի սահմանագծի վրա, սարսափելի բարբարոսություններ էին կատարվել: Քրդերի ջալալի կոչված ցեղը անցել էր սահմանը և պարսից հողի վրա այրել էր տասնից ավելի հայոց գյուղորայք: Նրանց անասունները ավարի էին առնված, հովիվներին կոտորել էին: Այդ ավազակությունները այն աստիճան երկյուղ էին տարածել շրջակայքում, որ քարավանների երթևեկությունը բոլորովին դադարած էր. հունձերը մնացել էին անխնամ, երկրագործները չէին համարձակվում դաշտ դուրս գալ:

Անցքը ճշմարիտ էր, հենց այդպես պատահել էր: Բայց Ասլանը, չգիտեմ ինչո՞ւ հիշեցրեց այդ, որ փոքր-ինչ անքաղաքավարի երևաց: Որովհետև այնտեղ ներկա գտնվող քուրդ Շարիֆ-բեկը ջալալիների ցեղապետն էր, որոնք գործել էին հիշյալ անկարգությունները: Ասլանը այնպես ձևացրեց, որ իբր թե չգիտե, և, երևի, նրան ավելի խոր խոցելու համար, ավելացրեց.

— Ես այդ բոլոր տեղեկությունները հավաքել եմ, անպատճառ պետք է հաղորդեմ ուր որ հարկն է:

Վերջին խոսքերը ես բոլորովին անքաղաքագիտական համարեցի. ի՞նչ հարկ կար այդ ասելու և քուրդ բեկին գրգռելու իր դեմ. նա մի՞թե կթողներ, որ նրա թղթերը տեղ հասնեին, կուղարկեր իր մարդիկը, թե՛ թղթատարին և թե՛ թղթերի հեղինակին կոտորել կտար ճանապարհների վրա: Ասլանը մտածում էր մի տեսակ վրեժխնդիր լինել քրդին, որը բավական չէր, որ նրա մասին մատնության նամակ էր գրել փաշային, այլ ինքն ևս անձամբ եկել էր Վան փաշային օգնելու համար, որպեսզի գտնեն կասկածավոր անձը:

Ասլանի անակնկալ նկատողություններից հետո, երեք հայ «երևելիները» շվարած կերպով միմյանց երեսին նայեցին, երևի խոսք էին որոնում քուրդ բեկին արդարացնելու համար: Առաջնորդը նույնպես մտատանջության մեջ ընկավ, իսկ փաշան չգիտեր, թե որպես պաշտպաներ իր հզոր աջակցին:

Բայց քուրդ բեկը, որպես քաջ ավազակ էր իր ասպատակությունների ժամանակ, նույնպես վարպետ կռվող էր երևում և խոսքի բանակռվի մեջ: Նա բավական սառն կերպով հարցրեց:

— Պարոն բժշկապետ, դուք ո՞ր ճանապարհով անցաք: Լավ է, որ հիշյալ անկարգությունների միջոցին ձեզ որևիցե վտանգ չէ պատահել:

Փորձությունն սկսվեցավ, մտածեցի ես: Հարցը բավական խորամանկությամբ էր դրված. մեծ երկյուղով սպասում էի, թե Ասլանը որպես պետք է դուրս գար դրա միջից: Նա խիստ անփույթ կերպով պատասխանեց.

— Ինձ հետ վտանգ պատահել չէր կարող, որովհետև ես դեռ Արզրում գտնված ժամանակ, տեղային ֆրանսիական հյուպատոսը ինձ զգուշացրեց քրդերի այդ ժամանակվա հուզմունքի մասին, և նահանգապետից մի բաց հրամանագիր առեց, որ ամեն տեղ ինձ պահապան ձիավորներ տան, որքան թվով և պահանջելու լինեի ես: Եվ ես ճանապարհներին միշտ խումբերով ձիավորներ ունեի ինձ հետ:

— Այդ լավ եք արել, պարոն բժշկապետ, այդպիսի զգուշություններ միշտ պետք են,— ասաց քուրդը, որպես մի վրդովված որսորդ, որի գնդակը շեղվում է նպատակից, թեև նա իր վրդովմունքը ցույց չտվեց:— Դուք, երևի, Թիմարա կողմերո՞վ անցաք:

— Ոչ: Ես Արզրումի քարավանի ճանապարհով ուղղակի եկա Բայազետ, այնտեղից անցա Մակու, որտեղ պատահել էին հիշյալ անկարգությունները, այնտեղից Խոյ, հետո Թավրիզ, հետո Ուրմիո ծովակի արևելյան ափերով գնացի Ուրմի, այնտեղից եկա Բաշ-Կալե, որտեղից Խոշաբա ձորով Վան հասա:

Քուրդը ավելի շվարեցավ: Ասլանի ցույց տված ուղևորության գիծը բոլորովին շեղվում էր այն տեղերից, որ կողմով անցել էր նրա որոնած կասկածավոր անձնավորությունը: Այսուամենայնիվ, նա վերջին փորձը ևս գործ դրեց ասելով.

— Եթե դուք Խոշաբա ձորը թողնեիք և բռնեիք Չոլ-Չիմանի ճանապարհը, անպատճառ կհանդիպեիք հայոց մի նշանավոր վանքի տոնախմբության, որ շատ հետաքրքիր կարող էր լինել մի եվրոպացի ճանապարհորդի համար:

Քուրդի խոսքը ս. Տիրամոր վանքի մասին էր, որտեղ հայտնվել էր կասկածավոր անձնավորությունը: Ասլանը պատասխանեց.

— Ես անցնելու միջոցին, որպես լսեցի, տոնախմբությունն արդեն վերջացած էր՝ ուխտավորները սկսել էին վերադառնալ դեպի իրանց տները:

Քուրդը այլևս ոչինչ չգտավ իր խուլ քննությունը առաջ տանելու: Ոստիկանության պետը, Լաթիֆ-բեկը, որ բոլոր ժամանակ լուռ էր, դիմեց փաշային այդ խոսքերով.

— Լավ կլիներ, որպես Արզրումի նահանգապետը նախապես հոգացել է, մենք ևս ապահովեինք պարոն բժշկապետի ճանապարհորդությունը մեր թղթերով: Մեր նահանգում նա մեր հյուրն է:

Հետո դարձավ դեպի Ասլանը, հարցրեց.

— Եթե չեմ սխալվում, դուք մի օրից հետո թողնելու եք մեր քաղաքը, ուրեմն թղթերը շուտով պետք է պատրաստել: Միայն հարկավոր կլիներ, որ դուք վաղը ձեր ձեռքում ունեցածները ուղարկեիք մեզ, որպեսզի մենք ևս նրանց համեմատ պատրաստեինք մերը:

Ասլանը իր խոսքերով բռնվեցավ, մտածեցի ես: Ոստիկանության պետը այդ քաղաքավարի ձևով նրանից պաշտոնական թղթեր էր պահանջում: Նա չէր բավականանում Ասլանի լոկ խոսքերով, թե նա Արզրումի նահանգապետից բաց հրամանագիր է ստացել իր ուղևորության համար, անցել է այս կամ այն ճանապարհով և այլն: Փաշան հասկացավ ոստիկանության պետի միտքը, ինքն ևս խորամանկությամբ հաստատեց նրա ասածը.

— Այո, այո, պարոն բժշկապետը մեր նահանգում մեր պատվելի հյուրն է: Մենք պետք է ամեն հնարներ գործ դնենք՝ դյուրացնելու նրա ուղևորությունը և ամեն վտանգից ապահովելու, թեև այդ մեր նահանգում պատահել չէ կարող:

— Շնորհակալ եմ ձեր ուշադրության համար, վսեմաշուք տեր,— ասաց Ասլանը հեռվից գլուխ տալով:— Դուք այնքան բարի եք և այնքան ողորմած գտնվեցաք դեպի ինձ, որ ես մինչև անգամ պետք չունեցա Արզրումի նահանգապետի հանձնարարական նամակը առաջուց ներկայացնել ձեզ, տեսնելով, որ դուք, առանց հանձնարարականի ևս, ցույց եք տալիս ամեն պատրաստականություն օգնելու ինձ:

Փաշայի մսուտ երեսի վրա երևաց ապշության նման մի բան: Նա, ծածկելով իր խռովությունը և կեղծ ուրախություն ցույց տալով, բացականչեց.

— Մի՞թե: Ա՛խ, պարոն բժշկապետ, դուք չափազանց համեստ եք գտնվել, դուք զրկել եք ինձ իմ բարեկամի նամակից. Արզրումի նահանգապետը իմ ամենալավ բարեկամս է:

— Այդ նամակը ես պահել էի, որ այստեղից մեկնելու միջոցին հանձնեմ ձեզ,— ասաց Ասլանը իր թղթապահի միջից մի փոքրիկ նամակ դուրս բերելով:— Բայց որովհետև խոսք եղավ, ես այս րոպեում կհանձնեմ ձեզ:

— Խնդրեմ, խնդրեմ,— բացականչեց փաշան և առեց նամակը:

Փաշան լսելի ձայնով կարդաց հետևյալ տողերը.—

«Այս նամակը Ձեզ ներկայացնող ֆրանսիացի երևելի բնագետ և բժշկապետ պարոն Քարլ Ռիսմանը, իր ուսումնական հետազոտությունների համար անցնելու է Վան քաղաքով դեպի Բաղդադ, իսկ այնտեղից Հնդկաստան: Հուսով եմ, որ կատարելով իմ խնդիրքը, Դուք այնքան բարի կլինեք, ողորմած տեր, որ նրա ուղևորության համար կտնօրինեք բոլոր պարտ ու պատշաճ կարգադրությունները, որպեսզի գիտնական

ճանապարհորդը դյուրություններ ունենա թե՛ իր նպատակին հասնելու և թե՛ իր ուղևորության ժամանակ հանգիստ ու ապահով լինելու: Որի համար կմնամ Ձեզ միշտ շնորհապարտ» և այլն:

— Բարեկամս հենց իր ձեռքովն է գրել,— ասաց փաշան նամակը կարդալուց հետո:— Ես պատրաստ եմ ամեն կերպով դյուրացնել ձեր ուղևորությունը, պարոն բժշկապետ:

Ես սկսեցի ազատ շունչ քաշել: Ասլանը լավ դուրս պրծավ, մտածում էի ես: Այժմ նա դարձավ դեպի ոստիկանության պետը՝ նրա հետաքրքրությունը ևս գոհացնելու համար:

— Դուք, պարոն Լաթիֆ-բեկ, լավ է, որ հիշեցրիք ինձ, որ ես հանձնեմ ձեզ իմ թղթերը, որպեսզի դուք ևս նրանց համեմատ պատրաստեք ձերը: Խնդրեմ, հենց այժմյանից ընդունեցեք, որովհետև ես էգուց այնքան զբաղված կլինեմ իմ պատրաստություններով, որ գուցե կմոռանամ:

— Մեծ ուրախությամբ,— ասաց ոստիկանության պետը:

— Ես հենց այդ նպատակով էի առել ինձ հետ: Ահա այդ իմ անցագիրն է, իսկ այդ այն բաց հրամանագիրն է, որ Արզրումի նահանգապետը շնորհել էր ինձ: Կարծեմ այդ երկուսը բավական է:

— Բավական է,— ասաց փաշան:— Էգուց թե՛ ձեր թղթերը, և թե՛ մերը կեսօրից մի ժամ առաջ կհանձնվեն ձեզ:

Քուրդ բեկը սառած մնաց: Առաջնորդին ևս տիրեց ոչ սակավ ապշություն: Բայց իմ զարմացքը ավելի մեծ եղավ, թե ո՞րտեղից հայտնվեցան Ասլանի մոտ այդ թղթերը: Նա բոլորովին ուղիղ էր ասում, որ անցել էր իր նկարագրած ճանապարհների գծով, ուղիղ էր և այն, որ ամեն տեղ մեծ պատրաստականություն էին ցույց տվել նրան ընդունելու և շատ ձիավորներով ճանապարհ դնելու: Նա ծածկեց միայն ս. Տիրամոր վանքը գնալը և լեռնային ճգնավորի կերպարանքի մեջ մտնելը: Մինչև այս տեղը նրա ասածները բոլորը ուղիղ էին:

Այո, Ասլանը լավ դուրս պրծավ: Բայց քուրդ բեկը մնաց դատապարտության ներքո. պետք էր մի կերպով արդարացնել նրան: Նա ջալալիների ցեղապետն էր. ջալալիները մոտ ժամանակներում ասպատակություններ էին արել. Ասլանը գիտեր այդ. Ասլանը ասաց, թե ինքը այդ մասին կհայտնե ուր որ հարկն է,— ուրեմն ի՞նչպես թողնել այդ բոլորը առանց ուշադրության և չարդարացնել քրդին:

Երեք հայ երևելիներից մեկը, Շարման-բեկը, փաստաբանեց.

— Պետք է ի նկատի ունենալ, պարոն բժշկապետ, որ ջալալիների վերջին անգամի ասպատակությունները Տաճկաստանի հայերին չեն վերաբերում, այլ Պարսկաստանի հայերին:

— Այդ ես գիտեմ,— նրա խոսքը կտրեց Ասլանը:— Բայց հայը ամեն տեղ հայ է, թե՛ Պարսկաստանում լիներ, թե՛ Տաճկաստանում: Երբ նա կողոպտվում է, ավազակը պետք է անպատճառ պատժվի: Այստեղ հարցը անկարգության մասին է և ոչ թե հպատակության կամ ազգության: Եթե կողոպտվածները հրեաներ կամ բոշաներ ևս լինեին, ես գուցե ավելի խստությամբ կբողոքեի:

Շարման-բեկի պաշտպանությունը խիստ թույլ գտնվեցավ. այժմ առաջնորդը սկսեց փաստաբանել.

— Բոլորովին ճշմարիտ է ձեր ասածը, պարոն բժշկապետ, բայց պետք է տեղային սովորությունները և հանգամանքները ևս ի նկատի ունենալ: Պատահում է, շատ անգամ Պարսկաստանից անցնում են մեր կողմերը, ասպատակություններ են անում, ոչխարներ, ձիեր և այլ անասուններ են ավարի առնում: Կորուստը վերադարձնելու համար ուրիշ հնար չէ մնում, քան թե հարձակում գործել և պարսից հպատակներից հափշտակել փոխարենը:

— Այստեղ ինչո՞վ են մեղավոր խաղաղ հպատակները,— պատասխանեց Ասլանը, փոքր ինչ զայրացած կերպով:— Այդ ավազակները թե՛ Պարսից կողմից և թե՛ Տաճկաց կողմից բոլորը քրդեր են, թող միմյանց միս ուտեն, եթե տեղային կառավարությունները անկարող են զսպել նրանց դաժանությունները: Բայց ինչո՞ւ նրանց միմյանց հետ ունեցած թշնամությունների պատճառով մեջտեղում պետք է ոտնակոխ լինի, կողոպտվի խեղճ գյուղացին, թշվառ երկրագործը, որ բացի մի քանի անասուններից ուրիշ ոչինչ չունի իր ապրուստը հոգալու համար:

Քուրդ բեկի թուխ դեմքի վրա երևացին քրտինքի կաթիլներ, որ սրբեց նա իր շապկի քառանկյունի ձևով քարշ ընկած թևքով: Սխալ կլիներ մտածել, թե ամոթից լինեին այդ կաթիլները: Այլ նրա սրտում բորբոքվում էր բարկության կրակը, թե ի՛նչպես մի գավուր համարձակվում է նրա երեսին անարգել նրան, իսկ ինքը չի կարող ձեռքը տանել դեպի իր սուրը և պատժել եվրոպացի գավուրի հանդգնությունը: Բայց նա զսպեց իր կարողությունը և բավական հանդարտ կերպով ասաց.

— Դուք, պարոն բժշկապետ, այնքան վատ մի համարեք ջալալիներին, որոնց ցեղապետը լինելու պատիվն ունեմ ես: Եթե դուք լսած լինեիք այն օգնությունները, որ մենք մատուցանում ենք այս կողմերի քրիստոնյաներին, հավատացած եմ, որ ձեր կարծիքը կփոխեիք մեր մասին:

— Մեծ ուրախությամբ,— պատասխանեց Ասլանը ժպտալով:

— Ես անպատշաճ եմ համարում գովել ինքս ինձ: Թող հայր խալիֆան (առաջնորդը), որին հայտնի են մեր ծառայությունները, թող նա վկայություն տա:

Սրբազան հայրը սկսեց զանազան մանրամասնություններով պատմել, թե շատ հանգամանքներում քրդերը մեծ օգուտ են հասցնում երկրին և մանավանդ տեղային քրիստոնյաներին: Եվ մասնավորապես իր պաշտպանության ճառը ջալալիների վրա, իբրև փաստ, հիշեց և այն, թե մի քանի շաբաթ առաջ ս. Տիրամոր վանքի տոնախմբությունն էր, և ինքը բեկը (այնտեղ ներկա գտնվողը) անձամբ գնացած էր այնտեղ ուխտավորների մեջ կարգ պահպանելու համար: Տոնախմբությունը վերջանալուց հետո, դարձյալ բեկի մարդիկն էին, որ առաջնորդում էին ուխտավորներին դեպի իրանց երկրները, որպեսզի պահպանեն նրանց ճանապարհների վտանգներից:

Ես բոլորովին զարմացած մնացի: Կարծես, մի ներքին սև թել կապում էր այդ բոլոր մարդկանց սրտերը միմյանց հետ: Դրանք ամենահայտնի չարագործությունները բարի ձևի մեջ ամփոփելու վարպետությունն ունեին: Եթե ես և Ասլանը ս. Տիրամոր վանքի տոնախմբության ժամանակ մեր աչքով տեսած չլինեինք, որ քուրդ բեկը ընկել էր այնտեղ հափշտակելու տոնախմբությունից գոյացած եկամտի մի մասը, եթե մենք հայտնի լինեինք, որ նրա մարդիկը մեծ վճարներ էին ստանում ուխտավորներից ճանապարհների վտանգներից պահպանելու համար, բայց միևնույն ժամանակ, նրանց անհայտ ընկերները, նույնիսկ պահապանների գիտությամբ, համարձակվում էին և կողոպտում էին նրանց,— եթե այդ բոլորը մեզ հայտնի չլիներ, գուցե սրբազանի վկայությանը մեծ նշանակություն տայինք: Բայց Ասլանը լռեց և, հայտնի պատճառներից ստիպված, ոչինչ չպատասխանեց:

Հետաքրքիրն այն էր, թե ի՞նչն էր առիթ տալիս սրբազանին քրդի բարբարոսություններին պաշտպան հանդիսանալ: Նա բարեկամական մեծ կապեր ուներ համարյա բոլոր քուրդ ցեղապետների հետ: Այդ հարաբերությունները պահպանում էր իր ազդեցությունը բարձրացնելու համար: Իր ձեռքում ունենալով երկրի խոշոր գազաններին, նա այն աստիճան նշանակություն էր ստացել, որ ոչ միայն հասարակ մարդիկ, այլ մինչև անգամ փաշան նրանից ակնածում էր: Բայց մի՞թե այդ ազդեցությունը ավելի բարձր նպատակների համար չէր կարելի գործ դնել: Ասլանը մի անգամ ինձ ասում էր. «Այդ մարդը շատ պիտանի կարող էր լինել, եթե իր ուժերը դեպի չարը գործ չդներ»: Օրինակներ շատ էին պատահել, երբ քուրդ բեկերից մեկը որևիցե հանցանքի համար կալանավորվում էր, կամ աքսորվում էր, նա իր գրպանից մեծ գումարներ էր ծախսում և ազատում էր չարագործին: Ինչի՞ համար:— Ոպեսզի նրան իր ձեռքում մի լավ գործիք ունենա:

Կրկին խոսք եղավ Ասլանի մյուս օր ճանապարհ ընկնելու մասին և առաջնորդը, օգուտ քաղելով դրանից, փոխեց խոսակցության առարկան, ասելով.

— Թեև մեր վսեմաշուք փաշան կտա ձեզ հարկավորված թղթերը և դուք, պարոն բժշկապետ, ամեն տեղ կգտնեք մեծ պատրաստականություն ձեր ճանապարհորդությունը անվտանգ կացուցանելու համար, բայց այսուամենայնիվ, ես խորհուրդ կտայի ձեզ քարավանի հետ գնալ:

— Ես այդպիսի նպատակ էլ ունեմ,— պատասխանեց Ասլանը,— ինձ ասացին, որ էգուց երեկոյան մի քարավան է դուրս գալու:

— Այդ ո՞ւմ քարավանն է,— հարցրեց փաշան:

— Չգիտեմ,— պատասխանեց Ասլանը:

— Թոխմախ-Արթինի քարավանն է,— մեջ մտավ ոստիկանապետը:

— Հա, Թոխմախ-Արթինը շատ քաջ մարդ է, նրա քարավանը ամենաապահովն է ճանապարհորդության համար: Բայց չգիտեմ, պարոն բժշկապետ, դուք չէի՞ք ձանձրանա քարավանի հետ գնալով, որովհետև քարավանը սաստիկ դանդաղ է գնում,— հարցրեց փաշան:

— Այդ իրավ է,— պատասխանեց Ասլանը,— բայց որքան էլ ցանկանայի, չէի կարող շտապով անցնել, որովհետև ինձ հետ տանում եմ բավական ծանրություններ, որոնք մի քանի բեռներ կլինեն,— իմ շարժական դեղարանը, իմ գործիքները և այն բոլոր հնությունները, որ հավաքել եմ: Բացի դրանցից, ինձ հարկավոր է մի քանի նշանավոր տեղեր հետազոտել. քարավանի դանդաղ ընթացքը կնպաստեր ինձ՝ ցանկացած ժամանակ շեղվել ճանապարհից՝ այդ տեղերը տեսնելու համար:

— Միայն, երբ քարավանից բաժանվելու լինեք, անպատճառ հարկավոր է, որ ձեզ հետ ձիավորներ վերառնեք,— խորհուրդ տվեց առաջնորդը:

— Այդ ես գիտեմ, սրբազան հայր, ես բավական փորձված եմ Ասիական ճանապարհորդությունների մեջ: Թեև այս կողմերում չեմ եղել, բայց Միջին Ասիայում շատ եմ թափառել:

Վերջապես ընթրիքը տվեցին: Գորգերի վրա տարածվեցավ սեղանի գունավոր սփռոցը, և կերակուրները, որքան պատրաստված էին, պղնձյա բոլորակ սինիների վրա դասավորած, միանգամից ներս բերվեցան: Նրանք բազմատեսակ էին: Բազմատեսակ էին և քաղցր շերբեթները, զանազան համեմներով և զանազան գույներով: Ոգելից ըմպելիքները, գինի, արաղ, դրվեցան միայն առաջնորդի, Ասլանի

և երեք հայ երևելիների մոտ: Մյուսները շերբեթ էին խմում: Չինական գեղեցիկ ամանները մի առանձին ախորժակ էին բաց անում: Նախկին վիճաբանությունները դադարարեցան, որովհետև այստեղ, ինչպես առհասարակ արևելքում, սեղանի վրա շատ չեն խոսում: Տիրում էր կատարյալ լռություն, որովհետև դանակ և պատառաքաղ չկար, որ աղմուկ բարձրացներ: Ամենքը մատներով էին ուտում: Խոսում էր միայն առաջնորդը: Նա գովում էր իր խոհարարին, թե նա Պոլսում այսինչ և այնինչ նշանավոր փաշաների տներումն է ծառայել և հազիվ թե ամբողջ Վանի մեջ նրա հատը կգտնվի: Վերջին խոսքը բավական վիրավորական լինելով փաշայի հարուստ խոհանոցի պատվին, նա էլ սկսեց գովաբանել իր խոհարարին, մի զարմանալի օրինակ բերելով նրա արհեստից, թե նա հավը այնպես է պատրաստում, որ բոլոր ոսկորտիքը միջից դուրս է հանում, իսկ հավը դարձյալ մնում է ամբողջ: Գուցե այդ վիճաբանությունը երկուսի մեջ երկար տևեր, եթե Սիմոն պատվելին իր երգեցիկ խումբի հետ ներս չմտներ: Նա այս գիշեր բավական զարդարված էր: Իր սովորության հակառակ, նա հագած ուներ մի բոլորովին նոր լվացված շապիկ: Սիմոն պատվելիի այդ նշանավոր շապկի պատմությունը ինձ համար ավելի հետաքրքրական լինելով, ես թողնում եմ առաջնորդի ճոխ սեղանի նկարագրությունը: Պետք չէ մոռանալ, որ պատվելին ուներ մի հատ շապիկ միայն և այդ լվացվում էր տարվա ընթացքում մի կամ երկու անգամ, այն ևս մեծ տոների ժամանակ, թեև լվացքը նրան ոչինչ չարժեր, որովհետև տալիս էր իր աշակերտներից մեկին, և նա իր մորը լվանալ էր տալիս: Բայց Սիմոն պատվելիի կարծիքով, երբ շապիկը հաճախ էր լվացվում, նա խիստ շուտով էր մաշվում: Արդյոք ա՞յդ էր, որ նրան առիթ էր տվել զանց առնել մաքրության գլխավոր պայմանը, թե նա առհասարակ մաքրասեր չէր,— այդ դժվար է լուծել: Միայն նրա տնտեսագիտությունը այդ կետից պետք էր սխալ համարել. իրավ է, շապիկը հաճախ լվացվելով շուտով է մաշվում, բայց կեղտի մեջ մնալով, բոլորովին փտում է: Այդ էր պատճառը, որ Սիմոն պատվելիի շապիկը լվացվելուց հետո, միշտ կարոտ էր կարկատանների: Երբ մոտենում էր մեծ տոնը, երբ անբախտ շապիկը տարվում էր աշակերտի մոր տունը, մինչև նրա վերադարձը, որ երբեմն երկար էր տևում, Սիմոն պատվելին իր կուրծքը սովորաբար ծածկում էր քթի գունավոր թաշկինակով, որի ճոթերը կապած էին լինում վզի ետևից, ծոծրակի վրա: Այդ տեսնում էին աշակերտները, տեսնում էին և աշակերտների ծնողները: Գուցե դրանից ծագեց այն հանգամանքը, որ Սիմոն պատվելիի շապկի լվացումը դպրոցի ժամանակագրության մեջ մի առանձին տեղ էր բռնում: Նրա աշակերտների լեզվում կազմվել էր մի այդպիսի սրախոսություն՝ ամեն մի վաղաժամանակյա դեպքի մասին ասել — «այդ անցքը շատ հին է և այնքան հին, որ Սիմոն պատվելին իր շապիկը դեռ նոր էր լվանալ տվել»: Այժմ, կարծեմ, հասկանալի է, թե Սիմոն պատվելին որքան մեծ հարգանք ուներ դեպի առաջնորդի դահլիճը, որ ներկայացրել էր այնտեղ լվացված շապիկով: Երեսը խնամքով ածիլած էր և, երևի շտապելուց մի քանի տեղ ածելին կտրել էր: Կտրած տեղերի վրա բամբակ էր կպցրած: Սիմոն պատվելիի ածիլվելը նույնպես մի նորություն էր: Նա մորուք չէր սիրում, բայց երեսը խիստ հազիվ անգամ էր ածիլում: Այդ էր պատճառը, որ ածիլվելուց հետո, նրա դեմքը ստանում էր երկու գույն՝ մազերից ազատ տեղերը՝ մուգ-աղյուսագույն, իսկ մազերով պատած տեղերը՝ բաց-աղյուսագույն: Նայելով օրվա ժամանակին, եղանակին, նայելով թե նա խմած էր, թե զգաստ էր, Սիմոն պատվելիի դեմքը, հնդկահավի դեմքի նման, զանազան գույներ էր ստանում: Այս երեկո լերդագույն էր, որովհետև Այգեստանի փողոցում արաղի կաթսայի հետ խիստ մտերմական հարաբերություններ էր ունեցել: Իր հանրածանոթ մուգ—դեղնագույն սերթուկի փոխարեն հագած ուներ կինամոնի գույնով մի կարճ պալտո, որի վրա փաթաթել էր շալե հաստ գոտին: Ֆեսը նույնպես նոր էր և փունջի ծայրը երևում էր գլխի փաթեթի տակից: Անփոփոխ մնացել էր միայն նրա երևելի վարտիքը, որը իր սովորական տեղից, այսինքն սրունքներից՝ մի թիզ բարձրության վրա էր կանգնած: Ոտքի թաթերից սկսած մինչև վարտիքի ծայրը,— այդ ընդարձակ տարածությունը,— մնացել էր մերկ, որովհետև Սիմոն պատվելին սովորություն

չուներ ամառը գուլպա հագնելու: Մերկ սրունքները երևում էին: Բայց կեղտը այնպիսի թանձր խավ էր դրել նրանց վրա, որ այդքանն էլ բավական էր իբրև ծածկոց ծառայելու:

Ահա այդ գարշելի մարդն էր, որ հանդիսավոր կերպով ներս մտավ, լուռ գլուխ տվեց, կանգնեց պատի մոտ: Նրա աջ և ձախ կողմերում շարվեցավ երգեցիկ խումբը: Նայելով այդ անմեղ արարածների վրա, իմ սիրտը դողում էր: Ո՛րպիսի ճիվաղի ձեռքում էր հանձնված նրանց դաստիարակությունը… Տիրացուների նման նրանք հագած ունեին ժամի շապիկներ, և յուրաքանչյուրը ձեռքում բռնած ուներ փոքրիկ, կոթավոր զանգակներ, որ հայոց եկեղեցիներում, երգեցողության ժամանակ, ածում են երկաթյա ձողերով, և գործադրվում է իբրև նվագարան: Փաշան բարեհաճեց հարցնել պատվելիի առողջությունը և, դառնալով դեպի Ասլանը, ասաց.

— Դա մեր հայոց վարժապետն է, իմ առանձին խնամակալության ներքո եմ ընդունել նրա դպրոցը:

Առաջնորդը ավելացրեց.

— Շատ իմաստուն մարդ է:

— Ճանաչում եմ,— ասաց Ասլանը սառն կերպով:

Սիմոն պատվելին, ոգևորված իր երկու մեծ բարերարների գովասանքներից, նշան տվեց, աշակերտները միաձայն եղանակեցին առաջնորդի սիրելի երգը.

Կա՛հ-կա՛հ կկանչե՝ կաքավն վըր քարին.

Վա՛րդ-վա՛րդ կկանչե՝ բուլբուլն վըր թփին…

Ընթրիքի բոլոր ժամանակը, որ տևեց բավական երկար, խեղճ աշակերտները, ոտքի վրա կանգնած, ահռելի ձայնով երգում էին: Նրանք սպառեցին Հայոց հին տաղարաններից քաղած բոլոր հայտնի երգերը և մի քանիսը նորից կրկնեցին:

Ընթրիքից հետո, երբ մատուցին վերջին սուրճը և վերջին նարգիլեն, Ասլանը, ներողություն խնդրելով, հայտնեց՝ որովհետև առավոտյան ճանապարհի պատրաստություններ պիտի տեսնե, այդ պատճառով չի կարող երկար մնալ, և ինձ հրամայեց, որ ասեմ ծառաներին՝ մեր ձիաները պատրաստեն:

Հետո, կանգնելով, նա բռնեց նախ առաջնորդի ձեռքը, և ապա փաշայի ձեռքը, հայտնեց իր խորին շնորհակալությունը նրանց հյուրասիրության մասին, ավելացնելով, թե կտանե իր հետ անմոռաց հիշատակներ այն բոլոր շնորհների համար, որ ցույց տվին նրան, նպաստելով և դյուրացնելով իր հետազոտությունները, և խոստացավ, որ գուցե մի օր ինքը առիթ կունենա իր երախտագիտության զգացմունքները գործով արտահայտելու և այլն:

— Մենք ոչինչ չենք արել, պարոն բժշկապետ,— պատասխանեցին փաշան և առաջնորդը միաձայն,— ինչ որ արել ենք, այդ մեր պարտքն էր:

Ուրիշ զանազան ողջագուրանքներից հետո, նա կրկին և կրկին անգամ սեղմեց սրբազանի ու փաշայի ձեռքը, հեռվից գլուխ տվեց ոստիկանության պետին, քուրդ բեկին և հայոց երեք երևելիներին, և մնաք-բարով ասելով, դուրս եկավ դահլիճից: Մինչև սանդուղքները Փաշան և սրբազանը եկան նրա հետ: Այստեղ փաշան հայտնեց իր սրտի ցավը, որ այդպես շուտ զրկվեցավ իր թանկագին հյուրից, որի

այցելությունը այնքան մեծ բավականություն պատճառեց իրան, և խոստացավ, որ առավոտյան ճանապարհի համար ամեն ինչ պատրաստ կլինի:

Այդ բոլոր ցույցերից հետո, ես այլևս տարակույս չունեի, որ նրանց կասկածները Ասլանի վերաբերությամբ բոլորովին փարատվեցան, և նրանք հեռու էին այն մտքից, թե դոքտոր Ռիսմանի դիմակի ներքո թաքնված էր ս. Տիրամոր վանքի լեռնային ճգնավորը:

Երբ դուրս եկանք առաջնորդարանից, փողոցում նորից լսելի եղավ սիրված երգը.

Սիրե՛, կաքավիկ, քո սիրուն քարիկ.
Սիրե՛, բուլբուլիկ, քո վարդն անուշիկ…

— Երևի, նրանք կշարունակեն դեռևս նստել,— հարցրի ես:

— Նրանք ամբողջ գիշերը կլուսացնեն,— պատասխանեց Ասլանը:

ԺԹ

ՆՎԵՐ

Հետևյալ օրը, առավոտյան, ամեն ինչ պատրաստ էր: Մնում էր միայն փաշայի խոստացած թղթերը ստանալ և ճանապար ընկնել: Ասլանը կապկապում էր իր չեմոդանը:

— Մի՞թե այդքան կարևորություն ունեն այդ թղթերը, որ արժեր նրանց սպասել,— հարցրի ես:

— Մի առանձին կարևորություն չունեն,— պատասխանեց նա,— փաշայի երկչոտ զափթիաները չեն կարող մեզ ավազակներից ազատել, բայց մի ուրիշ կողմից, մենք պետք ունենք այդ թղթերի մեջ…

Ես հասկացա Ասլանի միտքը. ես գիշերը առաջնորդարանում արդեն ականատես էի եղած, թե ինչ ազդեցություն ունեցան Արզրումի փաշայի թղթերը ամեն կասկածները փարատելու համար:

Կեսօրին մոտ էր, երբ հայտնվեցավ փաշայի քարտուղարը: Դա միևնույն երիտասարդն էր, որ մեզ առաջնորդում էր քաղաքի հնությունները հետազոտելու: Նա բերել էր իր հետ ոչ միայն փաշայի խոստացած թղթերը, այլև մի թանկագին նվեր նրանից: Դա մի գեղեցիկ արաբական նժույգ էր իր բոլոր փառավոր ասպազենքով. գլուխը և պարանոցը զարդարած էր մետաքսյա սև փունջերով, որ բռնված էին արծաթյա, զանգակաձև կոհակների մեջ. թամբի ծածկոցը պատրաստած էր վագրի մորթից, որի եզերքը զարդարած էր ոսկեթել ծոպերով. երկու սևամորթ ստրուկներ, կարմիր մահուդի զգեստներով և գույնզգույն չալմաներով, աջ և ձախ կողմից բռնել էին աշխույժ նժույգի սանձը, որը, կարծես ինքն էլ էր զգում իր գերազանցությունը, և բակը մտնելուն պես, սկսեց խրխնջալ և մի առանձին հպարտությամբ առջևի սմբակները դոփել գետնին:

Ասլանը, հասկանալով բանի էությունը, սանդուղքներից ցած իջավ, դիմավորեց թե քարտուղարին և թե նորին վսեմության ուղարկած նժույգին: Քարտուղարը, սեղմելով Ասլանի ձեռքը, ասաց ճառական եղանակով.

— Ես ինձ շատ բախտավոր եմ համարում, պարոն բժշկապետ, որ ինձ վիճակվեցավ թարգման լինել իմ տիրոջ նորին վսեմության փաշայի՝ առ ձեզ ունեցած հարգանքի և սիրալիր զգացմունքների: Իմ տերը, բարեմաղթելով ձեզ բարի ճանապարհ և անդորրություն, իրան շատ երջանիկ կհամարե, եթե դուք կհարգեք նրան, ընդունելով այդ նվերը, որ նորին վսեմության ախոռատան ընտրյալներիցն է:

Ասլանը նույնպիսի փքած խոսքերով հայտնեց իր շնորհակալությունը և, բռնելով քարտուղարի ձեռքից, սանդուղքներով տարավ վերև, իր սենյակը: Երբ նստեցին, քարտուղարը ծոցից հանեց թղթերը և, առանձին-առանձին տալով Ասլանին, ասաց.

— Այդ ձեր անցագիրն է, որ մենք ևս վավերացրինք, այդ նորին վսեմության փաշայի նամակն է Մուշի գայմագամին գրած, այդ մի բաց հրաման է, որ ամեն տեղ կառավարության պաշտոնակալները մատուցանեն ձեզ պարտ ու պատշաճ ընդունելություն և ցույց տան ձեզ ամեն տեսակ պատրաստականություն ձեր ճանապարհորդությունը դյուրացնելու:

— Շնորհակալ եմ,— ասաց Ասլանը, ընդունելով թղթերը:— Նորին վսեմությունը չափազանց ողորմած է գտնվել դեպի ինձ:

Իսկույն սուրճ և նարգիլե ներս բերեցին: Քարտուղարը անլռելի կերպով խոսում էր, արդյոք գո՞հ մնաց պարոն բժշկապետը իր այցելություններից Վան քաղաքում, արդյոք նա ի՞նչ տպավորություններ կտանե իր հետ, հետո հայտնեց իր խորին փափագը, թե որքան կցանկանար գոնե մի անգամ Եվրոպայում լինել, տեսնել ֆրանկների երկիրը, ասում են, այնտեղ կանայք բաց երեսներով են ման գալիս, ազատ, համարձակ ամենի հետ խոսում են, գիշերները հավաքվում են, տղամարդիկ և աղջիկները միասին պար են գալիս և այլն,— այդ բոլորը այնքան հրապուրում էր երիտասարդ քարտուղարին, որ նա բոլորովին մոռացավ, թե մեզանից ժամանակ է խլում, թե մենք ճանապարհորդ ենք:

Նրա շատախոսությանը վերջ տվեց Ասլանը, դնելով նրա առջև հարյուր ոսկի, փաթաթած թղթի մեջ:

— Թեև ձեր ծառայությունը ավելի մեծ գնահատության արժանի է,— ասաց նա,— բայց կխնդրեմ, ընդունեցեք այդ փոքրիկ նվերը իմ կողմից:

— Խնայեցեք ինձ, պարոն բժշկապետ,— ասաց քարտուղարը հրաժարվելով,— դուք այդ երկրորդ անգամն է, որ ինձ ամաչեցնում եք. ես հավիտյան չեմ մոռանա այն գեղեցիկ ժամացույցը, որ դուք ընծայեցիք ինձ բերդի հնությունները տեսնելու ժամանակ. ամբողջ քաղաքում իրա նմանը չկա, ամեն մարդ, ով որ տեսնում է, հիանում է:

Քարտուղարը հազար ու մեկ շողոքորթություններից հետո, վերջապես ընդունեց ոսկիները և, զգալով, որ երկար նստեց, վեր կացավ և, բարի ճանապարհ մաղթելով, դուրս եկավ սենյակից: Ասլանը նրան տարավ մինչև բակի դուռը: Այստեղ կանգնած էին երկու սևամորթ ստրուկները, որոնք փաշայի ախոռատան ծառաներիցն էին: Նրանք ևս ստացան Ասլանից մի-մի ոսկի և, մինչև գետին խոնարհվելով, մի քանի անգամ գլուխ տվին:

Ինձ այնքան չէր զարմացնում փաշայի գեղեցիկ նվերը, որքան այն միտքը, թե ո՞րտեղից և ի՞նչ գումարից Ասլանը առատորեն շաղ էր տալիս այդ ոսկիները: Երբ վերադարձանք մեր սենյակը, ես նրան հեգնորեն նկատեցի:

— Փաշայի ընծան շատ էժան չնստեց:

— Ընդհակառակն, բավական էժան նստեց,— պատասխանեց նա ծիծաղելով:

Հետո նա բացատրեց, թե արևելքում ընծաները,— լինեին նրանք սուլթանից, շահից կամ նրանց բարձր պաշտոնակալներից,— մի տեսակ արդյունքի աղբյուրներ են: Օրինակ, թագավորը սովորաբար տարին մի անգամ *խալաթներ* է ուղարկում իր նահանգապետներին կամ զանազան նշանավոր աստիճանավորներին: Այդ խալաթները լինում են՝ կա՛մ մի վերարկու, կա՛մ մուշտակ, կա՛մ թանկագին շալեր և կա՛մ այլ հագուստներ: Նրանք ավելի բարձր նշանակություն ունեն, երբ առնված են արքայական անձից, այսինքն երբ թագավորը նրանց մի անգամ հագել էր: Խալաթները բերում են թագավորի արքունիքի սպասավորները, ըստ մեծի մասին նրա սենեկապետները: Նահանգապետը իր բոլոր աստիճանավորներով և քաղաքացիների խուռն բազմությամբ ընդառաջ է գնում ընդունելու արքայական ընծան: Եվ որովհետև այդ տեսակ ընծաներ ստացվում են համարյա ամեն տարի, այդ պատճառով նահանգական մեծ քաղաքների մոտ, մի քանի մղոն հեռավորությամբ, դեպի մայրաքաղաքը տանող ճանապարհի վրա, շինված են առանձին պալատներ, որ կոչվում են *խալաթ-փուշան*, որ նշանակում է խալաթ հագնելու տեղ: Այդ պալատների մեջն է կատարվում ընդունելության մեծ հանդեսը. բոլոր բազմությունը լիանում է անուշահոտ շերբեթներով և քաղցրավենիքով: Հետո նահանգապետը հագնում է խալաթը, և բազմության առջևն ընկած, մտնում է քաղաքը: Ամեն կողմից ողջունում են նրան, ամեն կողմից օրհնում են ողորմած թագավորին: Բերողը ստանում է նահանգապետից մեծ գումար, և այդ գումարը ծանրանում է գյուղացիների վրա, որպես մի բացառիկ, արտակարգ հարկ, որ կոչվում է *խալաթ-փուլի*, այսինքն խալաթի փող:

— Տեսնո՞ւմ ես,— ավելացրեց նա,— թագավորը իր հին հագուստները ուղարկում է նահանգապետներին, նահանգապետները փառք են վայելում, իսկ ծախքերը խեղճ գյուղացին է տուժում…

Հետո Ասլանը բացատրեց և այն, թե ո՛րքան նշանակություն ունեն մեծ մարդկանց հագուստները: Գանահարությունը սովորական պատիժներից մեկն է արևելքում: Երբ մի երևելի պաշտոնակալին պետք էր գանահարության ենթարկել, փոխանակ նրա անձը գանելու, տանում են նրա վերարկուն և հրապարակի վրա ծեծում են:

— Երևի, եթե այդ վերարկուն թագավորից ստացված լիներ, չէին համարձակվի այնպես վարվել նրա հետ:

— Անտարակույս: Բայց և այն պետք է ի նկատի ունենալ, որ եթե նահանգապետը մի տարի խալաթ չստացավ, նա կկորցնե իր բոլոր նշանակությունը. այդ արդեն նշան կլինի թագավորի դեպի նա ունեցած սառնության, և ժողովուրդը այլևս նրանից չի վախենա: Դու տեսար գիշերը այստեղի փաշային. չնայելով առաջնորդարանի սաստիկ տոթին, նա մեծ բավականությամբ հագած ուներ այն թանձր մուշտակը, որը այս տարի սուլթանից է ստացել:

Ասլանը բացատրեց ինձ, թե որքան ուրիշ շահեր ևս կապված են խալաթների բաշխման հետ: Խալաթ բերողները, ըստ մեծի մասին, լինում են արքունիքի սպասավորները և սենեկապետները: Այդ մարդիկը ամենևին ռոճիկ չեն ստանում: Բավական էր նրանց մի այսպիսի ծառայություն կատարել, մեկի համար խալաթ

տանել, և նրանց մի քանի տարվա ռոճիկը կարելի էր միանգամից ստացված համարել:

— Ինչպես փաշայի քարտուղարինը,— ընդմիջեցի ես:

— Այո՛, նա ևս ռոճիկ չունի, կամ թե ունի, անպատճառ շատ չնչին բան կլինի: Նրա եկամուտները բխում են գլխավորապես այդ տեսակ հանձնարարություններ կատարելուց, երբ փաշայից մեկի համար ընծա է տանում:

Սկսյալ սուլթանի պալատից մինչև վերջին մուդիրի գրասենյակը, ամեն տեղ նույն կարգերն են տիրում, մեծերը ընծաներ են տալիս փոքրերին և նրանցից փող են ստանում, և այսպես կաշառակերությունն աստիճանաբար վերևից իջնում է ցած: Հարցրեք այս և այն պաշտոնակալին, թե ո՞րքան ռոճիկ եք ստանում: Նա ռոճիկի մասին կամաչե խոսել, որովհետև շատ չնչին է, բայց առանց ամաչելու և մինչև անգամ պարծենալով կասե ձեզ, թե տարին այդքան «եկամուտ» ունեմ: Բոլոր եկամուտները բխում են մթին աղբյուրներից, և այնքան սովորական են դարձել, որ ամեն մի մեծավոր, երբ պաշտոն է հանձնում իր ստորադրյալին, նրան կամ բոլորովին ռոճիկ չէ նշանակում, կամ եթե նշանակում է մի չնչին բան, բացարձակ ասում է նրան. «այդքանն ինձանից կստանաս, այդքան էլ եկամուտ կունենաս»:

— Ապա ո՞ւր են գնում պետության գանձարանից դուրս եկած ռոճիկները,— հարցրի ես:

— Խոշոր պաշտոնակալների գրպանը,— պատասխանեց Ասլանը,— իսկ մանր պաշտոնակալները բավականանում են միայն «եկամուտներով»:

— Դու կարծո՞ւմ ես, փաշան այդ ձին ուղարկելով շահի նպատակ է ունեցել:

— Ես այդ չեմ կարծում: Եվրոպացիների հետ նրանք բոլորովին այլ կերպ են վարվում: Նա այդ ձին ուղարկելով, կամեցել է կաշառել ինձ: Եթե ես նրա քարտուղարին այն ոսկիները չտայի, նա ավելի ուրախ կլիներ: Բայց ես չկամեցա նրան պարտական մնալ: Այստեղ մի տարի առաջ կար մի անգլիական գործակատար. փաշայից հաճախ ընծաներ էր ստանում, քուրդ ավազակապետները նրա կնոջ և երեխաների համար եղջերվի ձագեր և կենդանի կաքավներ էին ուղարկում, և նա քրդերի մասին շատ նպաստավոր գաղափար կազմեց, համարելով նրանց բարի և ազնիվ մարդիկ, և այնպես էլ հաղորդեց իր կառավարությանը: Իսկ հայերը նրան կաքավներ չտարան և համարվեցան ագահ, ժլատ, հարստահարիչ հրեաներ:

Մեր խոսակցությունը ընդհատեց վարպետ Փանոսը, որ վերադարձավ քաղաքից: Նա տարել էր մեր բեռները հանձնելու քարավանին:

— Շնորհավորում եմ,— ասաց նա ծիծաղելով,— գեղեցիկ ընծա եք ստացել: Երևի, փաշան չէ կամեցել, որ դուք չարվադարի անշնորհք ձիով ճանապարհորդեիք:

— Փաշան այդ մասին շատ քաղաքավարի է,— պատասխանեց Ասլանը:— Ասացեք, ե՞րբ է դուրս գալիս քարավանը:

— Երեկոյան, արևը մտնելուց մի ժամ առաջ:

ՔԱՐԱՎԱՆ

Քարավանների պատմությունը միշտ իմ վրա կախարդիչ տպավորություն էր թողել. նրանց մասին լսել էի շատ և շատ հետաքրքիր զրույցներ: Այժմ դուք կարող եք երևակայել իմ ուրախությունը, որ առաջին անգամ ես բախտ ունեի ճանապարհորդել մի մեծ քարավանի հետ: Նա պետք է դուրս գար երեկոյան պահուն. ցերեկվա տոթի պատճառով որոշել էին գնալ գիշերով:

Վարպետ Փանոսը, նրա մայրը, կինը, երեխաները հավաքվել էին բակում մեզ ճանապարհ դնելու: Ծառաները, աղախինները և գործարանի աշակերտները, խումբով կանգնած, հեռվից նայում էին: Բոլորի դեմքի վրա երևում էր մի տեսակ տխրություն, կարծես Ասլանը այդ տան սիրելի անդամներից մեկը լիներ, որ գնում էր հեռու, շատ հեռու, և գուցե մյուս անգամ չէին տեսնի նրան: Նա ցած իջավ սանդուղքներից, մոտեցավ վարպետի մորը, կնոջը, սեղմեց նրանց ձեռքը, գրկեց նրա երեխաներին և բոլորին մնաք բարով ասելով, դուրս եկանք: Փողոցում սպասում էին մեզ երկու ձիաներ՝ փաշայի ընծայած ձին Ասլանի համար և մի բավական լավ ձի ինձ համար, որ բերել էին քարավանից: Ասլանը համբուրվեցավ վարպետ Փանոսի հետ և կրկին անգամ սեղմեց նրա ձեռքը: Ես նկատեցի վարպետի աչքերում արտասուքի կաթիլներ: Նստեցինք ձիաները: Բակում հավաքված բազմությունը այժմ խմբված էր բակի դռանը:

— Մնաք բարյա՛վ, բարեկամներ,— ասաց Ասլանը:

— Բարի ճանապա՛րհ և հաջողությո՛ւն,— ասաց վարպետ Փանոսը:

— Բարի ճանապա՛րհ,— կրկնեցին նրա մայրը, կինը և փոքրիկ երեխաները:

Մենք մեծ շնորհակալությամբ թողեցինք այն տունը, որտեղ վայելել էինք այնքան հյուրասիրություն, այնքան հարգանք և այնքան անկեղծ բարեկամական սեր:

Արևի երեկոյան ճառագայթները դեռ շողշողում էին մինարեթների բարձր կիսալուսինների վրա, դեռ մոլլան «ազան» չէր տվել, երբ քարավանը ճանապարհ ընկավ քաղաքի պարիսպների մոտ գտնված «Չայիր» կոչված մարգադաշտից, ուր բանակ էր դրել նա, մինչև կհավաքվեին բոլոր ճանապարհորդները:

Այստեղ մենք վերջին անգամ հանդիպեցինք մուսուլցի թումաջի վաճառական խոջա Թորոսին, որ մի կողմում կանգնած, խոսում էր քարավանի պետի հետ: Տեսնելով մեզ, նա մոտեցավ:

— Բարո՛վ, պարոն բժշկապետ, դուք արդեն գնո՞ւմ եք,— հարցրեց նա, ձեռք տալով:

— Գնում եմ, խոջա Թորոս,— պատասխանեց Ասլանը:— Դուք այստեղ ի՞նչ եք շինում:

— Վաճառականի գործը ի՞նչ կլինի. բամբակի բեռներ ունեի Բաղեշ ճանապարհ դնելու, եկա, հանձնեցի քարավանին:— Դուք Բաղեշ կհանդիպե՞ք, պարոն բժշկապետ:

— Անպատճառ:

— Իսկ Մո՞ւշ:

— Նույնպես

— Ուրեմն, եթե չեք մերժի իմ փոքրիկ ծառայությունը, ես կտամ ձեզ երկու հանձնարարական նամակներ, մեկը Բաղեշ, մյուսը Մուշ, այդ քաղաքներում ես երկու լավ բարեկամներ ունեմ, նրանք կարող են պիտանի լինել ձեզ: Դուք, կարծեմ, հետաքրքրվում եք հնություններով, պարոն բժշկապետ:

— Այո՛, շնորհակալ եմ, խոջա Թորոս,— ասաց Ասլանը, ընդունելով նամակները և սեղմելով մուսուլցու ձեռքը:— Մնաք բարյավ, խոջա Թորոս:

— Հաջողությո՛ւն և բարի ճանապարհ, պարոն բժշկապետ,— ասաց նա և պինդ սեղմեց Ասլանի ձեռքը:

Մենք բաժանվեցանք: Ընթերցող, դու խո չես մոռացել, թե ով էր այդ մուսուլցին իր արաբական ապարոշով և իր շիլ վարվռուն աչքերով…

Քարավա՛ն,— դա արևելքի շարժական կյանքն է. քարավան տեսնելով, կարելի է արևելքի կենդանի, գործունյա և եռանդոտ մասը տեսած լինել:

Նեղ ու անձուկ ճանապարհի երկարությամբ բռնել էր նա մի քանի փարսախ տարածություն: Մինը մյուսի ետևից շարված էին բեռնակիր գրաստները: Այդ երկար, կենդանի շղթան, որի ծայրը չէր երևում, դանդաղ կերպով շարժվում էր, առաջ էր ընթանում և, ճանապարհի խոտորնակի ուղղությամբ, օձի նման պտույտներ էր գործում, գալարվում էր և դարձյալ ուղիղ ընթացք էր ստանում, երբ ճանապարհը փոքր-ինչ հարթ էր և ուղղաձիգ: Բեռնակիր գրաստները բաղկացած էին ջորիներից: Նրանք ղաթար-ղաթար, այսինքն խումբ-խումբ, դասավորված էին միմյանց ետևից: Յուրաքանչյուր խումբը բաղկացած էր տասն ջորիից, բոլորը միագույն: Մի խումբը սպիտակներ էին, մյուսը՝ սևեր, երրորդը՝ մուգ-մոխրագույն և այլն: Բոլորից առաջ գնում էր սպիտակների խումբը: Յուրաքանչյուր խումբ կազում էր մի միություն: Մեկ ջորին կապած էր մյուսի համետի ետևից երասանակի շղթայով: Ամեն մի խումբի հետ գնում էին երկու ծառաներ, որ եթե բեռները ծռվելու լինեն, ուղղեն, կամ եթե անասուններից մեկը սայթաքելու և ընկնելու լինի, կանգնեցնեն: Բոլոր ջորիների գուխը, պարանոցը և գավակը զարդարած էին գույնզգույն հուլունքներով, գույնզգույն խխունջներով, գույնզգույն փնջիկներով և փոքրիկ, ընկուզաձև զանգակներով: Ամեն մի քարավանապետ մի առանձին պարծանքով է զարդարում իր գրաստները, մանավանդ, երբ քարավանը մոտենում է մի նոր քաղաքի, կամ դուրս է գալիս քաղաքից: Եվ այդ պճնասեր անասունները այն աստիճան սովորած են իրանց զարդարանքներին ու զանգակներին, որ եթե զանգակներ չունենան, լավ չեն գնա:

Երբ հարյուրավոր անասուններ շարժվում են, շրջակա լեռները, բլուրները դղրդում են զանգակների խլացնող ձայնից: Նրանց քայլերի չափով՝ հնչյունները պահպանում են մի առանձին ներդաշնակություն, որ խիստ կախարդիչ տպավորություն է գործում, մանավանդ գիշերային լռության պահուն, երբ քարավանը գնում է ամայի ձորերի միջով:

Բոլորի առջևը ընկած, միայնակ գնում էր «փիշանգը» — քարավանի առաջնորդը: Դա մի սպիտակ, ամեհի ջորի էր, հզոր կուրծքով և գեղեցիկ գլխով: Իր հետևողներից որոշվում էր նա իր ավելի շքեղ զարդարանքներով, որ կազմված էին թանկագին իրեղեններից: Նա ջորիների արքան էր. նա ազատ էր բեռնից. նա միայն առաջնորդում էր: Նայելով այդ խելացի անասունի վրա, ես մտածում էի. ո՛րքան լավ կլիներ, եթե այդ երկրի առաջնորդները կամ նրա կառավարիչները այդպես բարեխիղճ կերպով կատարեին իրանց պաշտոնը, որպես այդ սպիտակ ջորին…

«Փիշանգը» արժանի է նկարագրության: Լինում է ձմեռ, թանձր ձյունը ծածկում է ճանապարհների բոլոր շավիղները, բոլոր հետքերը: Դարուփոսեր հավասարվում են, և առջևում դրած է ձյունային ընդարձակ, հարթ տարածություն: Նեղ հորիզոնը միախառնվում է մառախլապատ երկնքի հետ: Դեպի ամեն կողմ նայում ես, ոչինչ չես տեսնում: Ճանապարհը նշաններ չունի. ո՞ւր պետք է գնալ: Ցուրտը սառեցնում է և կատաղի քամին ձյունային թանձր փոշին պտտեցնում է օդի մեջ: Սարսափելով մտածում ես՝ ահա ամբողջ քարավանը կկորչի: Կանհետանա սպիտակ թանձրության ներքո:— Անապատի միջով գնալիս, քամին, մրրիկը, նույն գործողությունն են կատարում ավազի հետ, որպես ձմեռը ձյունի հետ: Բոլոր ճանապարհները ծածկվում են ավազի ներքո: Դեպի երկինք նայում ես՝ ավազ, դեպի գետին՝ ավազ, ավազային մոխրագույն փոշին լցրել է ամեն տեղ:— Տագնապի և ճգնաժամի միջոցներում օգնության է հասնում «փիշանգը»: Նա, որպես մարմնացած բնազդում, գիտե ուղիղ ճանապարհը, որքան էլ ծածկված լիներ ձյունի կամ ավազի ներքո: Իր հզոր կուրծքով պատառում է նա ձյունը և քարավանը առաջ է տանում: Ամեն ինչ սառել է, մարդկանց աչքերի թերթերունքից անգամ կախ են ընկած սառցային լուլաներ: Բայց նրա մարմինը պատած է սպիտակ փրփուրով և ջերմ գոլորշին թանձր սյուներով դուրս է հոսում լայն պնչածակերից: Երբ մի տեղ ճանապարհը նրան երկբայական է թվում, նա զգուշությամբ կանգ է առնում: Ամբողջ քարավանը նույնպես, նրա ետևում, դադարեցնում է իր ընթացքը: Նա խորին ուշադրությամբ գլուխը այս կողմ ու այն կողմ է դարձնում, ականջները ցցում է, կարծես հողմերի ընթացքն է ուզում հետազոտել: Նայում է դեպի երկինք, կարծես աստղերի ուղին է ուզում դիտել: Դունչը տանում է դեպի գետին և հոտ է քաշում, ստուգելու արդյոք անցե՞լ էր այնտեղից մի որևիցե արարած: Մի մեղմ խրխինջ արտահայտում է նրա սրտի ուրախությունը: Նույն ուրախությունը անցնում է անասունների ամբողջ շղթայով. բոլորը ընդհանուր ձայնով խրխնջում են: Նրանց առաջնորդը գտավ ուղին, փոխեց քայլերը: Եվ ամբողջ շղթան շարժվում է նրա ետևից:— Գիշերային խավարը նրա համար չէ: Նրա երկու լուսափայլ աչքերը՝ երկու լապտերներ են, որ առաջնորդում են նրան: Երբեմն նա սարերի, ձորերի միջով է գնում կամ խորին անդունդների եզերքով է ընթանում: Մի սխալ քայլ կարող է գլորել նրան անհատակ վիհը և նրա հետ ամբողջ քարավանը կորստյան մատնել: Բայց նա երբեք այդպիսի սխալներ չէ անում, կարծես նրա ամուր սմբակներն ևս աչքեր ունեն:— Երբ մոտենում են իջևանին, որքան էլ մութ ու խավար լիներ, նա մի քանի մղոն հեռավորությունից իմանում է այդ և դարձյալ ուրախաձայն խրխնջում է: Նրա հետևողները ձայնակից են լինում նրան և շտապեցնում են իրանց քայլերը, որ շուտ տեղ հասնեն և հանգստանան:

Բեռնակիր ջորիները առաջ էին ընկած, իսկ նրանց ետևից գնում էին ճանապարհորդները, ոմանք ձիաների վրա նստած, ոմանք ավանակների վրա: Այդ խեղճ անասունների բեռը ավելի ծանր էր: Յուրաքանչյուրի վրա բարձած էին երկու մեծ ջվալներ, լցրած զանազան իրեղեններով, որ անհրաժեշտ են ասիական ճանապարհորդության համար: Ջվալների մեջ տեղավորված էին զանազան կարասիք, ինչպես՝ կաթսա, պղնձե ամաններ, ջրի աֆթաֆա, սուրճ պատրաստելու ղավանոց, նարգիլե իր բոլոր պարագաներով և այլն: նրանց թվում կար և ամբողջ պաշար ուտեստի համար, ինչպես՝ հաց, յուղ, բրինձ, պանիր, աղ, սոխ, քամած մածուն և այլն: Յուրաքանչյուրը իր խոհանոցը իր հետ էր ման ածում. ինքը իր խոհանոցի և՛ խոհարարն էր, և՛ վայելողը: Առանց այդ պատրաստությունների, կարելի էր քաղցած մնալ, որովհետև ամառը քարավանը սովորաբար իջևանում է բնակություններից հեռու, բացօթյա տեղերում, անասուններին ճարակ գտնելու համար: Բնակությունների մոտ՝ գյուղացիք թույլ էին տալիս, որ անասուններն արածեն: Ջվալների վերևից կապած է ճանապարհորդի անկողինը և այդ փափուկ տեղի վրա նստած է նա: Ձին այդ բոլոր ծանրությունների տակին հազիվ է երևում: Ավելի ունևոր ճանապարհորդները նստած էին թեթև, թամքած ձիաների վրա:

Նրանց ծանրությունները տանում էին առանձին ձիաներ, որոնց վրա նստած էին ծառաները: Այդ հարուստները ման էին ածում իրանց հետ և վրաններ: Քարավանի մեջ կային և կանայք, որոնք փաթաթված իրանց չադրաների մեջ, աչք ու երես կապած, մի շորեղեն գունդի նման, դրված են գրաստների վրա: Հարուստների կանայք նստած էին ծածկված պատգարակների մեջ. յուրաքանչյուր պատգարակը տանում էին երկու ջորիներ:

Մահմեդական ունևորը իր բավականությունների ոչ մեկից ետ չէ մնում և ճանապարհորդության ժամանակ: Նա սովորել է ամեն րոպե նարգիլե ծխել, ամեն րոպե մի ֆինջան դառը ղահվե խմել, որը մի մեծ մատնոցի չափ հազիվ կլինի: Այդ երկուսի պատրաստությունը բավական հոգսերի է կարոտ, կրակ է հարկավոր, ջուր է հարկավոր և, վերջապես, զանազան անոթներ են հարկավոր: Նրա ծառան այդ բոլորը իր հետ ունի: Նրա նստած ջորիի մի կողքից, երկաթյա շղթայից քարշ է ընկած մի թաղարաձև մանղալ, որի մեջ որմզդական հուրի նման, պահվում է մշտավառ ածուխը: Ջորիի մյուս կողքից, հաստ կաշյա տիկի մեջ, քարշ է ընկած ջուրը: Ջուրը մահմեդականի ամենաանհրաժեշտ պիտույքն է, որ միշտ պետք է իր հետ ունենա: Գուցե այդ է առիթ տվել, որ այդ տիկերի պատրաստությունը զարմանալի կերպով կատարելագործված է արևելքում: Նրանք ջուրը և՛ սառն են պահում, և՛ ամենասաստիկ տոթերի ժամանակ երբեք չէ հոտում: Կաշին արհեստավորի շնորհիվ դարձել է մի տեսակ խեցեղեն աման, որ ազատ թույլ է տալիս օդի հաղորդակցությունը ջրի հետ: Նույն ջորիի վրա, զանազան անոթների մեջ կա և թրջած թամբաքու և սուրճի բոլոր պարագայքը: Բավական է, որ ծառան լսում է իր տիրոջ հրամանը — «ղահվե՛, նարգիլե՛»: Ծառան իսկույն պատրաստում է նախ ղահվեն, ապա նարգիլեն, մատուցանում է իր տիրոջը: Հետաքրքիր է նայել այդ տեսարանի վրա: Ծառան նարգիլեն բռնած ունի իր ձեռքում, իսկ երկար օձի նման գալարվող, կաշյա ծխաքարշի ծայրը գտնվում է տիրոջ բերանում: Ջորիները գնում են, իսկ տերը մեծ բավականությամբ ծխում է, կարծես իր տանը լինի:

Քարավանի մեջ կային և մի խումբ չինգանաներ (ցիգաններ) իրանց կապիկներով և պար եկող տղաներով ու աղջիկներով: Տղաների, աղջիկների և կապիկների վրա հավասար կերպով խնամք էին տանում: Այդ թռչկոտող արարածները նստած էին ավանակների վրա, իսկ նրանց տերերը գնում էին ոտով: Այդ ուրախ, թափառական խումբը, որ ճանապարհի բոլոր ընթացքում միշտ երգում էր, ծիծաղում էր, կատակներ էր անում, իր վրա էր դարձրել ամբողջ քարավանի ուշադրությունը:

Կային և մեկ խումբ վանեցի մշակներ, որոնք մերձակա գյուղորայքից էին: Դրանք պանդխտությունից էին վերադառնում: Ո՛րքան հեռու տեղից էին գալիս և ո՛րքան ժամանակ բացակա էին հայրենիքից,— այդ երևում էր նրանց թախծալի դեմքերից: Բայց որքան մոտենում էին հայրենի տնակին, այնքան նրանց դեմքերը հետզհետե զվարթանում էին: Նրանցից և ոչ մեկը գրաստ չուներ: Մի-մի պարկ ուսներին կապած, ուղևորի երկար ցուպը ձեռներին, այրված, սևացած արևի բոցերից, գնում էին ոտով:

Թափառական չինգանե՛, թափառական վանեցի՛: Երկուսի մեջ սերտ համեմատություն կա: Զանազանությունը նրանումն է միայն, որ մեկը հայրենիք, տուն ու տեղ չունի, այլ, որպես աշխարհաքաղաքացի, թափառում է ամբողջ աշխարհում: Իսկ մյուսը ամեն ինչ ունի՝ և հայրենիք, և՛ ընտանիք, և՛ հայրենական տուն ու տեղ, բայց դարձյալ թափառում է և օտար երկրներում հաց է որոնում:

Քարավան-բաշին (քարավանի պետը) ազգով հայ էր, հայտնի Թոխմախ-Արթինը, որը, բնիկ արզրումցի լինելով, սովորություն ուներ ամեն խոսքի մեջ կրկնել այդ առածը՝ «մինչև չպղտորվի, չի պարզվի»: Նա առանց պատճառի չէր ստացել իր *թոխմախ* մականունը, որ նշանակում է երկաթյա մեծ կռան, որով դարբինները

երկաթ են կռում ու կոփում: Միջին հասակով մարդ էր Արթինը, ամրակազմ, որպես ծառի բուն: Նրա խոշոր դեմքի վրա մազերից ազատ մնացել էր միայն քիթը և ճակատի մի փոքրիկ մասը: Մինչև անգամ ականջները ծածկված էին խիտ ու կոշտ մազերով: Նա սովորություն ուներ ինքն իրան ծաղրել, ասելով, թե մայրը իրան գողացել է արջերի որջից: Բայց երբ խոսում էիր այդ կոշտ ու կոպիտ մարդու հետ, նրա դեմքի խոշոր գծերը մեղմանում էին և կարծես հետզհետե գեղեցկանում էր նա: Այն խիստ և կարծր կեղևի մեջ կար ազնիվ սիրտ, կային և ազնիվ զգացմունքներ: Նստած մի սև նժույգի վրա, հրացանը ուսին, ատրճանակները թամքի ղաշին կապած, թուրը գոտիից քարշ ընկած, նա կայծակի արագությամբ մի րոպե քարավանի առջևումն էր, մյուս րոպե՝ նրա ետևումը: Ճանապարհների և անցքերի բոլոր վտանգավոր տեղերը գիտեր նա: Երբ այսպիսի տեղերի էր հասնում, բաժանվում էր քարավանից, հեռանում էր, բարձրանում էր բլուրների վրա, դիտելու՝ արդյոք ճանապարհը ազա՞տ էր ավազակներից, թե փակել էին անցքը:

Թոխմախ-Արթինը մոտ հիսուն տարեկան կլիներ, բայց դեռ պահպանել էր իր երիտասարդական աշխույժն ու կայտառությունը: Քսան տարիից ավելի նա ջորեպան էր: Ամբողջ Փոքր Ասիան, Արաբիան, Միջագետքը մինչև Եգիպտոս նրա քարավանի ընդարձակ ասպարեզն էր: Շատ անգամ բեռներ էր վերառնում դեպի Կովկաս, Պարսկաստան և հասցնում էր մինչև Սպահան, Շիրազ և Բանդար-Բուշեր: Նրա հավատարմությունը օրինակելի էր: Վաճառականները ոսկիների տոպրակները առանց համբարելու էին հանձնում նրան: Ամեն մի քաղաքում, երբ գիտեին, որ Թոխմախ-Արթինի քարավանը մի կամ երկու ամսից հետո պետք է հայտնվի, վաճառականները, որքան էլ շտապելիս լինեին, դարձյալ սպասում էին, մինչև նա գա, որ իրանց բեռները կամ արծաթը նրան հանձնեն: Ամենքին հայտնի էր այն անցքը, որ մի անգամ Լորիստանի անապատներով անցնելիս դեպի Պարսից ծոցը, Բախտիարի (հին բակտրիացիք) կոչված ելուզակները մի քանի հարյուր հոգով հարձակվեցան նրա քարավանի վրա և ամեն ինչ կողոպտեցին: Ինքը Արթինը կռվի ժամանակ սաստիկ վերքեր ստացավ: Նրա ծառաներից շատերը սպանվեցան: Այդպիսի դեպքերում վաճառականները շատ ներողամիտ են լինում. եթե քարավանի մեջ փող ունեն, գիտեն, որ կողոպտված պետք է լինի, իսկ եթե մնացած ևս լինի, գիտեն, որ քարավան-բաշին իրավացի պատճառներ ունի ասելու, թե կողոպտել են: Մի համադանցի պարսիկ վաճառական հանձնել էր Արթինին հինգ հազար ոսկի՝ Բաղդադ տանելու, երբ պատահեց հիշյալ անցքը: Համադանցին իր ոսկիները բոլորովին կորած էր համարում: Բայց մի տարուց հետո հայտնվեցավ Արթինը և դրեց նրա առջև ոսկիների պարկը:

– Այդ ի՞նչ է, Արթին,– հարցրեց վաճառականը:

– Ձեր ոսկիները,– պատասխանեց Արթինը:

– Մի՞թե նրանք մնացել են,– հարցրեց վաճառականը, չհավատալով իր աչքերին:

Արթինը պատմեց, թե ելուզակների հարձակման ժամանակ նա այդ պարկը ձգեց մի փոսի մեջ, ծածկեց հողով ու քարերով: Ամիսներից հետո, երբ ինքը առողջացավ, վերքերը լավացան, գնաց, որոնեց և պարկը իր տեղումը գտավ, և եթե այդքան ժամանակ ուշացրեց վերադարձնել, պատճառը իր հիվանդությունն էր:

– Շատ ապրե՛ս, Արթին,– ասաց պարսիկը:– Եթե դու քրիստոնյա չլինեիր, քո այդքան հավատարմության համար քո տեղը մյուս կյանքում Մուհամմեդի դրախտի ամենափառավոր բաժնումը կլիներ: Ե՛կ դու մահմեդական դարձի՛ր: Իմ աղջիկը և իմ հարստության կեսը քեզ կտամ:

Արթինը այդ ժամանակ երիտասարդ էր, դեռ չէր ամուսնացած: Նա, իհարկե, ծիծաղում է մոլեռանդ մահմեդականի առաջարկության վրա, որը, մահմեդականների սովորությամբ, իրան պարտավորություն էր համարում, ամեն մի բարեխիղճ քրիստոնյա տեսնելիս, ասել նրան. «ամեն ինչ քո մեջ լավ է, միայն մի բան պակաս է, որ մահմեդական չես»:

Պարսիկը բաժանում է ոսկիների մի մասը և առաջարկում է Արթինին, բայց նա շնորհակալությամբ մերժում է, ասելով.

– Ինչո՞ւ եք տալիս ինձ այդ ոսկիները. իմ պարտքն է ձեր ավանդը ամբողջությամբ կա՛մ տեղ հասցնել, կա՛մ ձեզ վերադարձնել: Եվ եթե ելուզակները չտարան, այդ ձեր բախտից էր:

Արթինը իր կյանքում դժբախտություններ, աղքատություններ շատ էր կրել, բայց երբեք նրա մեծահոգությունը թուլացած չէր: Վերջին անգամի դժբախտությունը ավելի ծանր եղավ: Վարակիչ հիվանդությամբ նրա ջորիները համարյա բոլորը կոտորվեցան: Նա մնաց առանց մի փարայի, և բացի դրանից մասնավոր պարտքեր ևս ուներ: Բոլորը կատարելապես սնանկացած էին համարում նրան: Շատ չանցավ, կարծես մի հրաշքով կրկին կազմակերպեց նա իր քարավանը և հարյուրից ավելի ջորիներով դղրդեցնում էր Արզրումի լեռները: Այդ հաջողությունը նրա բոլոր ծանոթներին զարմացրեց. մտածում էին, թե նա ո՞րտեղից ձեռք բերեց այդքան փողեր: Մարդկանց երևակայությունը զանազան կարծիքներ ստեղծեց նրա մասին. ոմանք ասում էին, թե նա մի մեծ գանձ է գտել, ոմանք ասում էին, թե նրա բարեկամ վաճառականները մի բավական նշանավոր գումար հավաքեցին և տվեցին նրան, որ կրկին կազմակերպե իր քարավանը, ոմանք ավելի հեռու էին գնում, ասելով, թե նա մի «անհայտ ձեռքից» փող է ստացել և այլն: Թե այդ կարծիքներից ո՞րն էր ուղիղ, ո՞րն էր սխալ, այդ ավելորդ է քննել. այդքանը միայն ճշմարիտ էր, որ այժմ նրա ջորիներն ամենաընտիրներն էին, և նա Արզրումի հայ ջորեպանների մեջ առաջինն էր համարվում:

Երեկոյան մութը դեռ բոլորովին չէր պատել, դեռ բավական լույս կար, երբ մեր քարավանը անցնում էր Արտամեդի միջով: Արտամեդը առաջ մի փառավոր քաղաք էր, իսկ այժմ՝ մի փառավոր ավան: Նա ուներ մոտ հինգ հարյուր տուն բնակիչ, որոնց կեսից ավելին մահմեդականներ էին: Այդ ավանը Վանից երկու ու կես ժամ հեռավորություն ունի, գտնվում է լայնանիստ, եռանկյունաձև բարձրության վրա, որը, հետզհետե խոնարհվելով, իջնում է մինչև ծովեզրը:

Գեղեցիկ է Արտամեդը իր ընդարձակ այգիներով, գեղեցիկ է նա իր բարձր, սքանչելի, ծովահայաց դիրքով: Տասնևութ դար առաջ այդ բարձրությունների վրա կանգնած էին Արտաշես Բ-ի հրաշալի ապարանքները, նրա ամրոցները՝ հզոր աշտարակներով ու պարիսպներով: Իսկ այժմ նրանց տեղում կանգնած է թուրք բեյի անշուք տնակը: Տասնևութ դար առաջ Արտամեդի բուրաստաններում, իր նաժիշտների նազելի խումբով ճեմում էր Սաթենիկ տիկինը, ալանաց գեղեցկուհին, Արտաշեսի սիրելին: Իսկ այժմ, ծառերի հովանիի ներքո թրքուհի խաթունն է իր թուլամորթ ամուսնին փայփայում: Տասնևութ դար առաջ Աստղկա հոյակապ տաճարն էր կանգնած բլուրի գագաթի վրա և իր մարմարյա սյունազարդ ճակատով նայում էր դեպի լայնածավալ, կապուտակ ծովը: Հայոց դեռահաս աղջիկները ամեն առավոտ զարդարում էին սիրո դիցուհու տաճարը թարմ ծաղիկներով և նրանից բախտ խնդրում:

Ասլանը մի քանի հետաքրքիր հնություններ ևս ցույց տվեց ինձ այստեղ:

Նա ցույց տվեց մի վիմափոր աղբյուր, որ գտնվում էր հայոց թաղի մոտ, ուղիղ ճանապարհի եզրի վրա, որը տանում է դեպի Ոստան, Բաղեշ, Մուշ և այլն: Մարդու

հասակի բարձրության չափով և բավական լայն փորված է ժայռը և ներս տարած: Այդ վիմափոր խորությունից դուրս է հոսում մի ջրաղաց բանեցնելու չափ մաքուր և սառն ջուր: Այդ հորդաբուխ աղբյուրը պահպանել էր մինչև այսօր մի ավանդություն, որ խիստ բնահայտիչ է Արտամեդի հեգնասեր աղջիկներին, որոնք, սկսյալ Աստղկա օրերից, պահպանել են ուրախ, մշտածիծաղ բնավորություն և սիրող, մշտաբորբոք սիրտ: Տասնևվեց դար առաջ այդ աղբյուրի մոտով անցնում էր Հակոբ Մծբնա հայրապետը, Գրիգոր Լուսավորչի հոր քեռորդին: Նա վերադառնում էր Արարատից, ուր ջերմ փափագով գնացել էր Մասիսի գագաթը բարձրանալու և Նոյի տապանը տեսնելու: Նա բարձրացավ մինչև կեսը. այնտեղ մի խորին քուն տիրեց նրան: Աստծո հրեշտակը, խնայելով նրա ծերությանը, տվեց տապանի տախտակներից մեկը, ասելով, որ անհնարին կլինի նրան մինչև գագաթը բարձրանալ: Տապանի այդ փոքրիկ մասը գոհացրեց հայրապետի բաղձանքը, և նա մեծ ուրախությամբ հեռացավ Արարատից, իր հետ բերելով թանկագին ավանդը: Անցնելով Արտամեդից, նա մոտեցավ հիշյալ աղբյուրին իր ծարավը զովացնելու: Արտամեդի կատակասեր աղջիկները այդ միջոցին ջուր էին լցնում աղբյուրից: Տեսնելով ծերունուն, սկսեցին ծաղրել նրան: Հայրապետը անիծեց անպարկեշտներին, և բոլորի սև ծամերը սպիտակացան: Այն օրից, իբրև նշան, Արտամեդի աղջիկների մազերից մի փունջ հենց ծնած օրից, մնաց ճերմակ…

Երբ ես և Ասլանը մոտեցանք աղբյուրին, հայոց աղջիկները դարձյալ սափորներով ջուր էին տանում այնտեղից: Ես մեծ հետաքրքրությամբ նայում էի նրանց ծամերին, որ երկայն, հաստ հյուսերով թափվել էին թիկունքի վրա, գլխներին դրած արախչիների տակից: Բայց այժմ այնքան մութ էր, որ ստուգել չկարողացա, արդյոք դեռևս կայի՞ն նրանց սև գիսակների մեջ ճերմակ մազեր: Արախչիների վրա այնքան խիտ և միմյանց մոտ դրամներ էին կարած, որ արծաթյա թասի ձև էին ստացել:

Ասլանը ցույց տվեց և Շամիրամա հռչակավոր գետը, որի ամրակառույց և վիթխարի ամբարտակների մասին խոսում է Խորենացին: Թե հին ժամանակներում ի՞նչպես էր կոչվում, ես չգիտեմ, իսկ այժմ Սար-Բուլախ (աղբյուրի ակն կամ գլուխ) կոչված մեծ լեռան ստորոտի ժայռերը մինչև տասն տեղ պատառելով, այնտեղից դուրս բերեց մեծագործ թագուհին լեռան սրտումը ամբարված ջուրը և, արհեստական առվակով, որի երկարությունը մինչև տասնևհինգ մղոն տարածություն ունի: Հայոց-Ձորի միջով բերեց գետը և հասցրեց մինչև Արտամեդ: Այստեղ ճյուղավորվում է նա և ոռոգում է Արտամեդի լայնատարած այգիներն ու անդաստանները, և դարձյալ միանալով, ամրակուռ քարակերտ ամբարտակների վրայով, ահագին գոռում-գոչումով անցնում է և գնում է դեպի Վան քաղաքը՝ ոռոգելու Այգեստանի այգիները:

Արտաշես Բ-ից քսան և երկու դար առաջ Արտամեդը եղել է Շամիրամի զբոսավայրը: Արայի հետ ունեցած սիրային անհաջող կռվից հետո հեշտասեր թագուհին, այստեղ, Արտամեդի հովանոցներում ու բուրաստաններում, հայոց իշխանազուն երիտասարդների հետ էր լրացնում այն սերը, որ նա սպասում էր Արայից: Նա հրապուրում էր երիտասարդներին այն հուլունքներով, որոնց շարքը, իբրև մանյակ, կրում էր պարանոցին, և որոնք ունեին կախարդական զորություն: Հայոց ծերունի նահապետներից մեկը մտածեց ազատել թեթևամիտ երիտասարդներին թագուհու մոլորություններից և, միևնույն ժամանակ, թագուհուն զինաթափ անել երիտասարդներին դյութելու հնարքներից: Մի անգամ թագուհին լողանում էր իր բուրաստանի մարմարոնյա ավազանում, և մարգարտացող ջուրը բարձր շատրվաններից ցողում էր նրա ախտաբորբոք մարմինը: Նրա հագուստը, նրա զարդարանքները, որոնց թվում և կախարդական հուլունքները՝ դրած էին ավազանի մոտ, վարդենիների հովանիի տակ, կանաչ խոտերի վրա: Թագուհին, գիսակների երկար հյուսերը արձակած, սանրվում էր: Այդ միջոցին գաղտագողի կերպով մոտեցավ ծերունի նահապետը և, իմանալով, որ թագուհու հրապուրանքների բոլոր գաղտնիքը հուլունքների մեջն է, խլեց մանյակը, սկսեց

փախչել դեպի ծովը: Զայրացած թագուհին, այնպես հերարձակ, վազեց ծերունու ետևից: Երբ չկարողացավ հասնել, իր անհնարին կատաղության մեջ, խլեց մի ահագին քարաժայռ և, գլխի երկար մազերին պարսատիկի ձև տալով, ժայռը դրեց նրա մեջ և նետեց ծերունու ետևից: Ժայռը չդիպավ և, անցնելով ընդարձակ տարածություն, ընկավ Արտամեդի մոտ, մի փոսի մեջ: Իսկ ծերունին վազելով հասավ մինչև Դատվանի ծովեզերքը, ձգեց ծովի մեջ կախարդական հուլունքները և երկիրը ազատեց հեշտասեր թագուհու խարդավանանքից: Արտամեդի երգիչները երգ հորինեցին և այն երգի խոսքերից իր գրքի մեջ ժլատ Խորենացին հիշում է երեք բառ միայն — «Ուլունք Շամիրամա ի ծով»:

Ասլանը, ցույց տալով ինձ հիշյալ քարաժայռը, ասաց.

– Դիմեցեք յուրաքանչյուր արտամեդցուն, նա այդ բոլորը կպատմե ձեզ: Զվարճալի Արտամեդը ստեղծել է երգիչներ, բանաստեղծներ, ինչպես զվարճալի Գողթնիքը: Բայց ո՞ւր են նրանց վաստակները: Ժողովրդի բերանում մնացել է միայն հին ավանդությունը: Ավելի քան չորս հազար տարվա ավանդությունը դեռ պահպանել է նա: Մի այդպիսի ավանդապահ ժողովուրդ երբեք չի մեռնի, և ա՛յդ է, որ նրան պահպանել է ժամանակների ամենածանր հարվածներից: Ով որ իր անցյալը չէ մոռանում, ներկայի մասին նա կարող է հոգալ: Նայեցեք մեր շուրջը, ամեն մի ժայռ, ամեն մի ավերակ, ամեն մի բլուր, ամեն մի աղբյուր և առվակ ձեզ մի բան կպատմե ամենահին անցյալից: Եվ այդ պատմությունների մեջ դուք կտեսնեք երկրի ու ժողովրդի անցյալ մեծությունը…

Հայրենի երկրի հիշատակները տեսնելիս, հայրենի երկրի ավանդությունների վրա խոսելիս, Ասլանին տիրում էր մի առանձին ոգևորություն, և նրա զգայուն սիրտը լցվում էր անսահման հոգեզմայլությամբ: Հնությունները և շրջակա տեսարանները նրան բոլորովին մոռանալ տվին, որ քարավանը անցել էր, և մենք բավական ետ էինք մնացել: Երբ հիշեցրի այդ, նա պատասխանեց.

– Կգնանք, կհասնենք, բայց քեզ հարկավոր է այդ բոլորը իմանալ:

Հայոց եկեղեցիների, մատուռների և զանազան սրբավայրերի ավերակներով լի է Արտամեդը: Նրանց խաչերով զարդարած քարերը, սրբապիղծ մահմեդականների տների շինվածքներին երկար տարիներ ծառայելուց հետո, տակավին մեծ մասը տխուր, սրտատոչոր կույտերով, մնում են իրանց տեղում: Բայց ինձ այնքան չէին գրավում այդ քրիստոնեական ժամանակների ավերակները. նրանցից շատ էի տեսած: Ինձ գրավում էին այն վիմափոր սենյակները, մեծ-մեծ այրերը, որ գտնվում էին ժայռերի մեջ: Նրանք իմ վրա մի անբացատրելի, խորհրդավոր ազդեցություն էին գործում: Ինձ գրավում էին երկու ահագին ժայռեր, որոնց ճակատը պատած էր բևեռագիր արձանագրություններով: Ո՛րքան դարեր էին սահել այդ հնությունների վրա, որքա՞ն ազգեր եկել, անհետացել էին, իսկ նրանք տակավին մնում էին:

Արտամեդում լինել և Արտամեդի հոտավետ, անուշահամ խնձորը չուտել, դա մի հանցանք է: Երբ պատրաստվեցանք ճանապարհ ընկնելու, նկատեցի, որ մի փոքրիկ աղջիկ, ճանապարհի եզրում նստած, իր առջև դրել էր մի մաղ լի խնձորներով: Ես մոտեցա:

– Ծախո՞ւմ ես:

Նա գանգրահեր գլուխը շարժեց և, նստած տեղից չշարժվելով, նայեց իմ երեսին: Նրա թշերը կարմրեցան, ինչպես իր առջև դրած խնձորները:

– Ո՞րքան արժե:

– Հինգ փարա:

– Մաղն էլ հե՞տը:

– ՉԷ՛, ես էլ հետը:

Արտամեդուհին ցույց տվեց իր սրախոսությունը:

Հինգ փարա, գիտե՞ք որքան է, երկու կոպեկ: Մի ամբողջ մաղ լի խնձորներով՝ երկու կոպեկ: Իմ թաշկինակը հազիվ կարողացավ վեր առնել քառորդ մասը, մնացածը թողեցի:

– Տո՛ւր նրան մի բան ավելի,– ասաց Ասլանը,– երևում է, որ շատ աղքատ է այդ սիրուն աղջիկը:

Երբ ստացավ ինձանից մի արծաթյա հինգ ղուրուշանոց, մոտեցավ Ասլանին, խնդրում էր նրա ձեռքը համբուրել:

– Մեր կողմերում տղամարդիկ են համբուրում աղջկա ձեռքը,– ասաց Ասլանը և նրա ձեռքը սեղմեց իր շրթունքների վրա:

Աղջիկը ժպտաց և շնորհակալությամբ հեռացավ: Նրա գեղեցիկ մարմինը երևում էր քրքրված ցնցոտիների ճեղքերից:

Ես նայեցի Ասլանի տխրամած երեսին, և այդ երկրորդ անգամն էր, որ տեսնում էի նրա աչքերում արտասուք: Ես հավատացած էի, որ ամենագեղեցիկ իշխանուհիների ձեռքը չէր համբուրի նա, իսկ այդ աղքատ աղջիկը նրա սիրտը շարժեց:

Մենք նստեցինք մեր ձիաները և ճանապարհ ընկանք, խիստ տխուր հիշողություններ տանելով մեզ հետ Արտամեդից:

Արտամեդը համարյա մի դուռն է, որտեղից պետք է մտնել Հայոց Ձորը՝ մեր Հայկ նահապետի սխրագործության վայրը:

Ձով գիշերը նպաստել էր քարավանին բավական ճանապարհ կտրել: Մեր ձիաների սրարշավ ընթացքով մենք հազիվ կարողացանք հասնել նրան այն ժամանակ, երբ նա արդեն հասել էր Անգղ գետի ափի մոտ և այնտեղ, կանաչազարդ մարգադաշտի վրա, պատրաստվում էր իջևանել:

Քարավանապետի ծառաները շտապով ցած էին բերում ջորիների կռնակից բեռները և կարգով դարսում էին միմյանց վրա: Նրանց շարքերը բարձր ամբարտակների ձև էին ստանում: Հետո, երբ բոլոր գրաստների բեռները ցած էին դրած, վեր առին նրանց համետները, քորոցներով քորեցին, թիմարեցին, քրտինքը ցամաքեցրին և ապա, հրացաններով զինված, տարան ջորիները իջևանից հեռու մերձակա տեղերում արածացնելու: Ճանապարհորդները, յուրաքանչյուրը իր ընկերի հետ, խումբ-խումբ տեղավորվեցան գետի ափերի մոտ, իրանց շուրջը հավաքելով իրանց իրեղենները: Կապերտները և գորգերը տարածեցին փափուկ խոտերի վրա, անկողինները բաց արին, մութաքաները դրեցին և մի առանձին բավականությամբ նստեցին: Ոմանք գետի ափի մոտ լվացման ծեսն էին կատարում, որ հետո նամազ անեն: Ոմանք այդ ծեսը կատարել, վերջացրել էին և, բաց երկնքի ներքո, կանաչ խոտերի վրա չոքած, նամազ էին անում: Ոմանք նամազը վերջացրել էին իրանց տեղերում նստած, «տերողորմյայի» հատիկները դարձնելով, նրանց թվի համեմատ, լռությամբ ավելորդ աղոթքներ էին կարդում, մինչև ծառաները ընթրիք կպատրաստեին: Մահմեդականը ճիշտ է իր կրոնական պահանջների մեջ և

ճանապարհորդության ժամանակ: Այդ ի նկատի առնելով, քարավանի պետը, թեև քրիստոնյա էր, բայց ճանապարհորդության ընթացքը այնպես էր հարմարեցրել, որ նրանց միջոց տա իրանց պարտավորությունները իրանց ժամանակին կատարելու, և այդ շատ հաճոյական էր մահմեդականներին, որոնք միշտ քարավանի մեծամասնությունն էին կազմում:

Ծալովի երկար լապտերները, որ քարշ էին ընկած երկաթյա ցցերից, լուսավորում էին ճանապարհորդների ընթրիքի սեղանը և նրանց ուրախ դեմքերը, որոնց վրա հոգնություն ամենևին չէր նշմարվում: Արդեն զանազան տեղերում խարույկներ էին վառվում, մեծ և փոքր կաթսաները եփ էին գալիս, և փլավի, յուղի, տապակած մսի հոտը բուրում էր օդի մեջ՝ ախորժակ բաց անող անուշահոտությամբ:

Ոմանք ընթրիքը վերջացրել էին և, թիկն տված բարձերին, թեք էին ընկած և խորին գոհունակությամբ ծխում էին նարգիլե: Սևամորթ ստրուկը կրակի վրա պատրաստում էր փրփրացող ղահվեն: Այդ բոլորը իմ վրա այն տպավորությունն էր գործում, կարծես թե այդ ամբողջ քարավանը ուխտավորների մի մեծ բանակ լիներ, որ խմբված է լինում մի վանքի շուրջը, և ամենքը վառված են լինում կրոնական ջերմեռանդությամբ, ամենքի սրտերը փափկանում են, և ամենքի մեջ զարթնում է ընդհանուր կարեկցական ոգին, մինը մյուսին օգնելու, մինը մյուսին բարիք գործելու: Այստեղ ևս ես նկատում էի մի տեսակ միություն, մի տեսակ եղբայրություն, մի տեսակ հավասարություն բոլորի մեջ: Ավելի ունևորները հրավիրում էին իրանց սեղանի մոտ աղքատ ուղեկիցներին: Նրանք խղճի դեմ էին համարում միայնակ վայելել այն բարիքը, երբ մի ուրիշը հեռվից կարոտությամբ նայում է: Քարավանը միացրել էր բոլորին և տարբեր, այլասեռ տարրերից կազմել էր մի մեծ ընտանիք:

Քարավանի մեջ կազմվեցան և կանանոցներ: Կանայք առանձին մի կողմն էին մեկուսացած և նրանց հասարակությունը բաժանված էր տղամարդերից: Քարավանի պետը սկզբից այդ մասին հոգացել էր և կարգի էր դրել հարեմի բոլոր պարտ ու պատշաճ պահանջները: Նա միմյանց վրա դարսած հակերից կազմել էր մի շրջապատ, որի մեջ զետեղված էին կանայք և ամենևին չէին երևում: Հարուստները իրանց հետ վրաններ ունեին, որոնք այնպես էին պատրաստված, որ թե տղամարդերի համար և թե կանանց համար առանձին բաժիններ կային:

Քարավանի մեջ կային երգիչներ, մոլլաներ, դերվիշներ, մի աշուղ և ցիգաններ, որոնք գնում էին զանազան քաղաքներ: Այստեղ, քարավանի սովորությամբ, նրանք, առանց որևիցե նյութական ակնկալության, զվարճացնում էին իրանց ուղեկիցներին: Յուրաքանչյուրը գտել էր իր սիրող հասարակությունը: Մի տեղ կրոնասեր, ծանրաբարո էֆենդին լսում էր մոլլայի զրույցները նախկին խալիֆաների և իմամների հրաշքների ու գործերի մասին: Մի տեղ դերվիշը, արևելքի փիլիսոփան, նստած իրանից անբաժան ընծու մորթիի վրա, զբաղեցնում էր իր ունկնդիրներին զանազան իմաստասիրական հարցերով: Մի տեղ աշուղը դեռ նոր էր սկսել մի վեպ, ոգևորված պատմում էր և պիտի շարունակեր պատմել ամեն իջևաններում, մինչև կվերջացներ: Ավելի երիտասարդները, քարավանի բանակից դուրս առանձնացած, լսում էին ցիգանների երգը ու նրանց նվագածությունները: Իսկ հեռու, ամենից հեռու, լսելի էր լինում արածացող ջորիների զանգակների հնչյունը և նրանց վրա հսկող ծառաների երգը: Բայց մոտից, շատ մոտից, երգում էր Անգղ գետը իր մեղմ, քաղցրաձայն խոխոջմունքով: Գիշերային լռության մեջ այդ բոլորը, միախառնվելով, կազմում էին խիստ ախորժ, սրտաշարժ ներդաշնակություն:

Ինքը, Արթինը, ոտքի վրա, անդադար պտտվում էր քարավանի մեջ, յուրաքանչյուրի առողջությունը հարցնում էր, յուրաքանչյուրի դրության մասին տեղեկանում էր, արդյոք նրան պետք չէ՞ր մի որևիցե բան, և յուրաքանչյուրին մի հաճոյական խոսք

ասելով, հեռանում էր: Ամեն կողմից նրան հրավիրում էին, բայց նա շնորհակալությամբ հրաժարվում էր, ասելով, որ կատարելու դեռ շատ գործեր ունի:

Ես և Ասլանը, գետի ափի մոտ նստած, հեռվից լսում և դիտում էինք՝ ինչ որ կատարվում էր: Այդ միջոցին մոտեցավ մեզ Արթինը և իր սովորական զվարճախոսությամբ ասաց.

— Պարոն բժշկապետ, եթե չեք կամենում քաղցած մնալ, շնորհ բերեք իմ վրանը, ինչպես երևում է, դուք ուտելու ոչինչ չեք վերառել ձեզ հետ:

Եվ իրավ, մենք այդ մասին ամենևին չէինք մտածել, կարծելով, թե քարավանը բնակությունների մեջ կիջևանե և այնտեղ ամեն ինչ կարելի կլինի գտնել, թեև այդ կողմերի գյուղերում, բացի գարիի ալյուրից պատրաստած հացից և ձվաներից, ուտելու ուրիշ ոչինչ բան չէ կարելի գտնել:

Ասլանը կարծես Արթինի հրավերքին էր սպասում, շնորհակալություն հայտնելով, հետևեց նրան: Ջորեպանի սպիտակ վրանը այնքան ընդարձակ էր, որ նրա մեջ կարող էին տեղավորվել մի քանի ընտանիքներ: Նա զուրկ չէր և շքեղությունից: Երևում էր, որ այդ «անապատի մարդը», ինչպես ինքն իրան կոչելու սովորություն ուներ Արթինը, սիրում էր փոքրիկ վայելչություններ: Երբ կատակի համար այդ մասին նկատեցի, նա պատասխանեց.

— Օրհնած, երեսուն տարի է, որ տան ծածկի տակ չեմ մտել, իմ անասունների հետ միշտ ձորերում, լեռներում , անապատների մեջ եմ կյանք վարել և իմ մխիթարությունը միայն այդ վրանի մեջ եմ գտել:

Արթինը դժբախտ էր և որպես ամուսին. կնոջը անհավատարմության համար արձակեց, իսկ նրանից ծնած միակ որդին մեռավ ծաղիկ հիվանդությունից: Այնուհետև նա վճռեց չամուսնանալ, միշտ ատելով կանանց, թե «նրանք մի դառն պատիժ են տղամարդի համար», և իր բոլոր սերը դարձրեց իր ջորիների վրա:

— Բայց պետք է գիտենաք,— ասաց նա, շարունակելով իր առաջին խոսակցությունը,— որ այդ վրանը ոչ այնքան ինձ համար է, որքան իմ ուղևորների համար: Տոթի և անձրևի ժամանակ շատերը այստեղ պաստպարան են գտնում:

— Ինչպես մենք,— ընդմիջեցի ես:— Եվ դուք ամենին կերակրո՞ւմ եք:

— Պատահում է, երբ աղքատ են լինում և ուտելու ոչինչ չեն ունենում: Շատ անգամ ևս հիվանդներ եմ ունենում,— նրանց խնամք է հարկավոր, հանգստություն է հարկավոր, մինչև տեղ հասցնեմ,— այսպիսիների համար իմ վրանը միշտ պատրաստ է:

Ընթրիքից հետո Ասլանը հարցրեց.

— Ի՞նչպես են ճանապարհները:

— Ճանապարհները միշտ վատ են,— ասաց նա,— ե՞րբ է եղել մի ժամանակ, որ ճանապարհները լավ լինեին: Ահա հենց այստեղ, ինչպես տեսնում եք, բնակություններից շատ հեռու չենք: Անգղ գյուղը կես ժամի ճանապարհով միայն հեռու է մեզանից, բայց դարձյալ ամենավտանգավոր տեղերից մեկն է: Եթե դուրս գաք, կտեսնեք, որ ամեն մի ժայռի ետևում, ամեն մի փոսի մեջ, ամեն մի թուփի տակ մի-մի ավազակ է թաքնված: Մի քանի րոպե առաջ բռնեցին մեկին, և ի՞նչ եք կարծում, կին էր, քրդի կին:

— Դա շատ հետաքրքիր է:

— Այդ անիրավները ավելի վտանգավոր են, քան թե իրանց ամուսինները, մութի մեջ, գետնի վրայից սողալով, մոտենում են քարավանին, ինչպես աղվեսը մոտենում է հավաբունին, հետո սատանայի նման կուչ են գալիս մի հակի տակ, սուր դանակով կտրում են հակը և մեջի եղածը տանում են: Անկարելի է տեսնել նրանց:

— Իսկ դուք ի՞նչ արեցիք ձեր բռնած գողին,— հարցրի ես:

— Ի՞նչ պետք է անեի, մազերից փոքր-ինչ ձիգ տվի, հետո բաց թողեցի:

— Իսկ եթե տղամա՞րդ լիներ:

— Ուրիշ կերպ կվարվեի:

— Չե՞ք վախենում:

— Ինչի՞ց պետք է վախենամ. նրանց մարմինը խո երկաթից չէ՞, իմը մսից. նրանք էլ ինձ նման մարդիկ են:

— Բայց գազան մարդիկ են:

— Վախլուկ գազաններ, հավատացեք, շատ վախլուկ: Բոլորովին սխալ է, որ ասում են, թե քուրդը քաջություն ունի: Նա քաջ է, երբ անզեն, անպաշտպան մարդկանց վրա է հարձակվում: Իսկ երբ փոքր-ինչ ընդդիմադրություն է տեսնում, իսկույն երեսը դարձնում է ու փախչում: Բոլոր վայրենիները այդպես են. ես տեսել եմ նրանց, շատերի հետ գործ եմ ունեցել: Ի՞նչ քաջություն կարող է լինել բարբարոսի մեջ, որ առաջնորդվում է միայն հափշտակասիրության գաղափարով:

— Բոլորովին ճիշտ է,— ընդմիջեց Ասլանը, որ լուռ լսում էր:— Բարձր քաջությունը անձնազոհություն է պահանջում, իսկ անձնազոհությունը առանց բարձր իդեալների չէ կարող լինել:

Նա դարձյալ լռեց և կարծես այլևս չէր լսում մեզ: Ես հարցրի.

— Ուրեմն ձեզնից վախենո՞ւմ են:

— Ասած է՝ «թուրքին ծեծիր, հետը բարեկամացի՛ր»,— պատասխանեց Արթինը:— Ախար այդ առածը խո այսօր չէ կազմվել. դա հարյուրավոր, գուցե հազարավոր տարիների փորձերի վերջին խոսքն է: Եվ ես ինքս փորձել եմ այդ: Այդ գառան խորովածը, որ հիմա կերանք, գիտե՞ք ով էր ուղարկել,— մի քուրդ ավազակապետ, որի ոչխարները արածում են մեզանից փոքր-ինչ հեռու ձորի մեջ: Իմանալով, որ իմ քարավանը իջևանել է իր չադրների մերձակայքում, իր որդու ձեռքով ուղարկել էր երկու գառ և պատվիրել էր հարցնել իմ առողջությունը:

— Իսկ դուք գառների փոխարեն ի՞նչ ուղարկեցիք նրան:

— Իմ ողջույնը և մի թոփ Շամի ալաջա նրա կանանց հագուստի համար:

— Երևի այդ քուրդը մի ժամանակ գործ է ունեցել ձեզ հետ:

— Այո՛, մի անգամ սաստիկ ջարդվեցավ, և այնուհետև բարեկամացանք:— Ինձ ներեցեք,— ասաց նա վեր կենալով,— ես երկար նստեցի և շատ խոսեցի: Ես պետք է տեսնեմ, թե ի՞նչ են շինում տղերքը, իսկ դուք կարող եք այստեղ հանգստանալ: Ձեզ համար ամեն ինչ պատրաստել են:

— Առավոտյան հարկավոր են երկու լավ ձիավորներ,— ասաց Ասլանը։— Ես պետք է քարավանից առաջ ընկնեմ, մի քանի տեղեր տեսնելու համար:

— Ես կտամ քեզ իմ մարդիկներից երկու այնպիսի ձիավորներ, որոնց մեկը հարյուրի պատասխան կտա,— խոստացավ նա և, բարի գիշեր ասելով, հեռացավ:

Ասլանը այս գիշեր սովորականից վաղ քնեց. Վանի մեջ կատարած ծանր աշխատություններից հետո, այդ առաջին գիշերն էր, որ նա հանգստանում էր: Տեր աստված, ի՞նչ էր նրա դրությունը, մի տենդային դրություն, մի սաստիկ լարված մեքենայի դրություն, որ հանգիստ և դադարում չունի:

Ես դեռ պառկած էի իմ անկողնի մեջ, քունս չէր տանում. իմ աչքերի առջև դեռ նկարված էր Թոխմախ-Արթինի թավամազ դեմքը իր մռայլ կերպարանքով և սև, վարվռուն աչքերով: Այդ մարդը պարծենկոտ չէր. ինչ որ խոսում էր նա, ինչ որ պատմում էր, բոլորը ճշմարիտ էր: Նա, իրավ, քաջ մարդ էր: Ես հետո առիթ ունեցա շատ բաներ լսել նրա մասին, որոնց բոլորի մեջ փայլում էր նրա անհամեմատ արիությունը: Քարավանի պետը չէ կարող երկչոտ լինել, երբ միշտ վտանգների հետ կռիվ ունի: Բայց նա ավելի քան արիասիրտ էր: Նա ընդունակ էր մի ամբողջ զորագունդ կառավարելու: Նա զուրկ չէր և մարդասիրական զգացմունքներից. ամեն դեպքում ես նկատում էի նրա ունեցած մեծ հակումը դեպի բարին և դեպի լավը: Այդ պարապմունքի մեջ, որպիսին նա ուներ, պահպանել այնպիսի մաքուր բնավորություն,— դա ինձ զարմացնում էր: Բեռնակիր ձիապանները, ջորեպանները անդադար գործ ունենալով անասունների հետ, այնքան կոպտանում են, որ մի աստիճան միայն բարձր են լինում անասուններից: Բայց նա ջորեպանությունից համարյա մի արհեստ էր շինել և այնքան կատարելագործել էր, որ ես մեծ զարմանքով էի տեսնում այն կարգը, այն կանոնները, որ տիրում էին նրա քարավանի մեջ:

Լապտերները հետզհետե մարում էին, ուղևորների շարժողությունը դադարում էր և քարավանի մեջ տիրում էր խորին լռություն: Միայն գետի մելամաղձոտ ձայնն էր լսվում և այն ձայնի մեջ կարծես ես կարդում էի քառասունհինգ դար առաջ այստեղ կատարված անցքերի պատմությունը…

ԻԱ

ՀԱՅԿԱ ԲԵՐԴԸ

Դեռ արեգակը չէր ծագել, դեռ նոր թարթած թռչունները սկսել էին իրանց առավոտյան ճլվլոցը, երբ ես աչքերս բաց արի, տեսա՝ վրանի մուտքի առջև սպասում էին մեր թամքած ձիաները: Ասլանը ինձանից վաղ էր վեր կացել, պատրաստվել էր, ինձ ևս ասաց, որ շուտով հագնվիմ: Արթինը վրանում չէր: Ջորիները վաղուց արդեն բերել էին արոտից, համետում էին, գարի էին տալիս, որ, դեռ լույսը չծագած, ճանապարհ ընկնեն:

Քարավանը այդ րոպեում ներկայացնում էր մի վանք, որ կանխում էր հանդիպել տվնջյան լուսատվին: Ամեն կողմից լսելի էին լինում աղոթքի և հոգևոր երգերի ձայն: Ես միշտ ախորժանոք էի լսում, երբ մահմեդականը Ղորանից այաթներ էր կարդում. նրա ընթերցանության մրմունջը ինձ հիշեցնում էր ջերմ, հրաբորբոք Արաբիայի անապատները և այդ անապատների կրակի միջից հայտնված կրակոտ մարգարեին: Ո՜րքան մեծ զորություն ունի գիրքը: Մի գիրք, մի լավ երգված գիրք, իր բարձր բանաստեղծությամբ, իր հրաշալի լեզվով, կարողացել էր երկրագնդի մի նշանավոր մասը կապել մի կրոնի հետ: Ես նախանձով էի նայում այդ մահմեդականների վրա:

Քարավանի մեջ կային և հայեր, բայց նրանք չէին աղոթում: Հայը աղոթում է միայն այն ժամանակ, երբ տերտերը նույնպես աղոթում է: Եկեղեցու պատերից դուրս՝ նա աստծուն չէ մտաբերում:

Շտապելուց ես մոռացա մինչև անգամ կոճակներս կցել: Ասլանը խոստացել էր այն օրը ցույց տալ ինձ մեր Հայկ Նահապետի բերդը: Իմ սիրտը տրոփում էր անհամբերությունից, թե երբ պետք է տեսնեի Հայաստանի առաջին ամրոցը, որ մնացել էր այն օրից, երբ հայության սկիզբը դրվեցավ:

Երբ ձի նստեցինք, ճանապարհ ընկանք, Արթինի խոստացած երկու ձիավորները, բոլորովին զինված, մեր առջևով գնում էին, թե որպես առաջնորդ և թե որպես զինակից: Նրանք սկզբից մեզ զգուշացրին, թե վտանգավոր տեղերից պետք է անցնենք: Ես կատարյալ զինավառության մեջ էի, Ասլանը նույնպես ուներ իր հետ մի զույգ ատրճանակ: Չգիտեմ ինչո՞ւ սաստիկ փափագում էի ես, որ ավազակների հանդիպեինք: Այնքան խոսվել էր դրանց մասին, այնքան բաներ էի լսել, բայց երբեք ավազակ չէի տեսել:

Գիշերով եկած լինելով, ես դեռ բոլորովին չէի դիտել Հայոց-Ձորը: Երբ լույսը ծագեց, երբ արևի առաջին ճառագայթները սկսեցին ոսկեզօծել լեռների մառախլապատ կատարները, այդ ժամանակ միայն հանդիպեցավ իմ առջև գեղեցիկ հովիտը իր շքեղ տեսարաններով: Ես հիացած էի, և իմ հիացմունքը մեծանում էր այն չափով, որքան բնության գեղեցկությունները միախառնվում էին անցյալի, ամենահին անցյալի հիշատակների հետ: Ի՜նչեր չէր տեսել այդ հովիտը, ի՜նչ սխրագործությունների վկա չէր եղել նա: Այստեղ մեր Հայկ Նահապետը պատերազմեց Բելի բռնակալության դեմ և խորտակեց ամբարտավան հսկայի զորությունը: Այստեղ, Հազկերտի կրոնական հալածանքների ժամանակ, հայ կինը մահակը ձեռին, հայ շինականը զինված իր մանգաղով, առաջին բողոքը բարձրացրին խղճի բռնաբարության դեմ և, հարձակվելով պարսից մոգերի վրա, ջարդեցին նրանց, և կրակ տալով նոր հիմնված բոլոր ատրուշաններին և մոխիրը ածելով ծովի մեջ, մաքրեցին իրանց հայրենիքը այդ պղծությունից: Ասլանը ինձ ցույց տվեց հին Մոխրաբերդը ծովի մոտ, որ այժմ մի գյուղ էր. այստեղից ածեցին ծովի ալիքների մեջ հրդեհված ատրուշանների և որմզդական մշտավառ կրակի մոխիրը և այդ պատճառով կոչվեցավ Մոխրաբերդ:

Հայոց-Ձորում դրվեցավ քրիստոնեության սկիզբը՝ մեր Աբգար թագավորի օրով: Ասլանը այդ մասին շատ բաներ էր պատմել ինձ, ինչ որ գրված էր գրքերի մեջ: Բայց ես սիրում էի ժողովրդի պատմածը, կենդանի ժողովրդի պատմածը, որ նա ավանդաբար լսել էր իր նախորդներից: Ես կդնեմ այստեղ այդ ավանդությունը, ավելի այն պատճառով, որ նրանով բացատրվում է Անգղ գետի անվան ծագումը: Այսպես է պատմում ժողովուրդը:

Այն խոստման համեմատ, որ փրկիչը արել էր մեր Աբգար թագավորին, նրա համբառնալուց հետո, Բարդուղիմեոս և Թադեոս առաքյալներին վիճակվեցավ գալ Հայաստանը լուսավորելու: Բարդուղիմեոս առաքյալը եկավ Աղբակա կողմերը, իսկ Թադեոս առաքյալը՝ Հայոց-Ձորը, բերելով իր հետ աստվածամուխ գեղարդը, ս. Աստվածածնի քողը և անուշահոտ յուղի շիշը, որով փրկչի գլուխը օծեցին: Նա սկսեց քարոզել և իր բերած սրբություններով հրաշքներ գործել: Անգղ գետի ափի մոտ, ճիշտ այնտեղում, ուր այժմ Սուրբ Աստվածածնի վանքն է կանգնած, կար մի մեհյան: (Այստեղից փոքր-ինչ հեռու իջևանել էր մեր քարավանը:) Աստվածամայրը երազում երևում է փրկչի առաքյալին և ասում է, որ այդ մեհյանի տեղում իր համար մի տաճար կանգնեցնե: Առաքյալը մի հրաշքով կործանում է մեհյանն ու կուռքերը և սկսում է տաճարը կառուցանել: Այդ ժամանակ սկսվում է մի խուլ, աներևույթ կռիվ առաքյալի և կուռքերի մեջ: Ինչ որ առաքյալը ցերեկով շինել էր տալիս, դևերը գիշերով քանդում էին և քարերը ձգում էին Անգղ գետի մեջ: Այդ քարերի

կուտակությունից կազմվեցավ այս բարձրությունը, որի վրայից գետը ջրվեժի նման ցած է թափվում և կոչվում է Սաչան: Հետո առաքյալը, Աստվածամոր խորհրդով, իր հետ բերած հրաշագործ յուղով օծում է մի խաչքար և կանգնեցնում է շինվելիք տաճարի տեղում: Այնուհետև դևերը այլևս չէին համարձակվում մոտենալ շինվածքին, բացի դրանից, նրանք սև ագռավների կերպարանք էին ստանում և աչքի էին երևում: Բայց որովհետև նրանք օդի մեջ աղմուկ էին բարձրացնում և վերևից անհանգստացնում էին բանվորներին, այդ պատճառով անգղների կերպարանքով հայտնվում են աստծո հրեշտակները և սկսում են պատերազմել ագռավների հետ: Անգղները հաղթում են, բոլոր ագռավներին կոտորում են և նրանց դիակները նետում են գետի մեջ, միևնույն տեղում, ուր նրանք ձգել էին տաճարի քարերը: Ի հիշատակ այդ հաղթության, գետը կոչվեցավ Անգղա գետ, իսկ գյուղը, որտեղ կառուցվեցավ ս. Աստվածամոր տաճարը, կոչվեցավ Անգղ գյուղ: Առաքյալի հրաշագործ յուղով օծած խաչքարը մինչև այսօր էլ մնում է տաճարի մեջ, և նույն քարից անընդհատ կերպով ծորում է հրաշագործ ձեթ, որը ուխտավորները տանում են իրանց հետ և գործ են դնում զանազան ախտերի բժշկության համար: Պատմում էին, թե առաջ այդ ձեթը այնքան շատ և առատությամբ էր բխում, որ բավականացնում էր վանքի բոլոր կանթեղների լուսավորությունը: Բայց մի վարդապետի ագահության պատճառով ձեթը նվազեցավ, երբ նա սկսեց վաճառել:

Մենք երկար չէինք բաժանվում Անգղ գետից, գնում էինք նրա հակառակ ուղղությամբ: Ձկնորսները, նրա ընթացքի ուղղությամբ, շտապում էին դեպի այն տեղը, ուր գետը թափվում է ծովը: Այստեղ սարքել էին նրանք իրանց ձկնորսության սապաթները, որ ամեն առավոտ դուրս էին բերում լի անուշահամ տառեխներով:

Անգղ գետի վերին մասը կոչվում է Խոշ-աբ՝ քանի որ Խոշաբ կամ Անձևացյաց կոչված գավառի միջովն է հոսում: Իսկ երբ մտնում է Հայոց-Ձորը, նա իր ամբողջ երկարությամբ բաժանում է այդ հովիտը երկու մասերի՝ հյուսիսային և հարավային: Իսկ Շամիրամի առուն, հյուսիսից գալով, կտրում է Անգղին և, արհեստական կամուրջի վրայից անցնելով, գնում է դեպի Արտամեդ, իսկ այնտեղից՝ Վան: Այդ վերջինը ավելի օգուտ է տալիս Հայոց-Ձորին, քան թե առատաջուր Անգղը: Իր հոսման ընթացքում Շամիրամի առուն ոռոգում է շատ գյուղերի անդաստանները, արտորայքը: Երբեմն ագուգայների ու խողովակների միջով, երբեմն բաց առվակով հոսում է նա, իսկ երբ խրամատների, փոսերի վրայով պետք է անցնի, այսպիսի տեղերում նրա համար բարձր ամբարտակներ են կառուցված, որոնց վրայով, կարծես օդի միջից, թռչում է ջուրը, առանց նեղություն կրելու, առանց շեղվելու իր ճանապարհից: Այդ բոլորը այնքան ճարտար կերպով է կառուցված, այնքան մեծագործ է, որ եթե հռչակավոր նինվեացի թագուհու գործը չհամարենք, անշուշտ մեր Արտաշես Երկրորդի գործը համարելու է, որ արհեստական ջրանցքով այդ գետը տարավ Արտամեդի բուրաստանները զարդարելու և կոչեց այն ավանը Ձարդ: Եվ իրավ, նա մի ժամանակ Վասպուրականի զարդն էր:

Արևը բարձրացավ: Այժմ շրջակայքը ավելի պայծառությամբ էին երևում: Ասլանը խորասուզված էր, ո՛վ գիտե, ինչ մտածությունների մեջ, և ամենևին չէր խոսում: Ես հիացած էի շրջակա տեսարաններով, որոնք և՛ ուրախություն էին ազդում ինձ, և՛ տրտմություն: Ո՛րքան խիտ ազգաբնակություն է եղել այստեղ, ո՛րքան երջանիկ ապրելիս են եղել այստեղ մարդիկ: Իսկ ա՛յժմ: Այժմ ավերակ, բոլորովին անմարդաբնակ գյուղերի թիվը ավելի շատ էր, քան թե շեն գյուղերը: Ամենուրեք հանդիպում էինք կիսակործան եկեղեցիների, ամայի վանքերի և լայնատարած գերեզմանատների, որոնց շուրջը մի ժամանակ մարդիկ են բնակվել: Իսկ այժմ այդ նվիրական վայրերը ծառայում էին որպես որջ վայրենի գազանների, կամ նրանցից չտարբերվող քուրդ ավազակների: Կարծես մի կործանիչ ձեռք անցել էր այդ հովիտով և բոլորը՝ ինչ որ լավ էր, ինչ որ բարի էր՝ ոչնչացրել էր:

– Մեր նախնիքը ծույլ մարդիկ չեն եղել,– ասաց Ասլանը,– նրանք հոգ են տարել երկրի շինության համար, և դրա ապացույցը կարող է լինել այդ հսկայական ջրանցքը, որ անց են կացրել այդ հովտի միջով: Բայց այն օրից, որ տիրեց թուրքը, ամեն աշխատություն, ամեն կենդանություն մեռավ:

– Իսկ այդ շեն գյուղորայքը հայաբնա՞կ են:

– Հայաբնակ են, բայց յուրաքանչյուրի մեջ կգտնեք մի քանի տուն քուրդ բնակիչներ: Այդ մի քանի տունը ամբողջ գյուղի ցեցը պետք է համարել:

Նա դարձյալ լռեց:

Ճանապարհը հարթ էր. բնությունը և մարդու ոտն էր հարթել: Անգղ գետի հորդությունից տեղ-տեղ գոյացել էին ճահիճներ, որոնց միջից դեղին, փայլուն ջրածաղիկը զավիկի նման փողփողում էր արևի ճառագայթներից: Տեղ-տեղ գոյացել էին շամբուտներ: Կրիաները, որ դուրս էին եկել ցամաքը՝ արևի տաքությունը վայելելու, մեր ձիաների ոտնաձայնը լսելով, խմբովին ներս էին սահում և թաքչում էին եղեգների մեջ: Ձյունի նման սպիտակ արագիլը իր երկար, կարմիր կտցով և նույնպես երկար, կարմիր ոտներով հանդարտ շրջում էր ճահճի մեջ և իր սիրած որսն էր որոնում: Մենք համարյա թե նրա մոտովն անցանք: Ծանրաբարո թռչունը ամենևին չվրդովվեցավ, ուշիմ կերպով նայեց մեզ վրա և կրկին շարունակեց իր որսորդությունը: Ուրուրը վերևում շրջաններ էր գործում օդի մեջ լայն թևերը բաց արած, որոնց երբեմն թեթև կերպով շարժում էր, կարծես թիավարելիս լիներ օդը: Ահա նա նետի նման սլացավ դեպի ցած, մի քանի վայրկյան անհետացավ եղեգների մեջ և կրկին վեր բարձրացավ, մագիլների մեջ բռնած ունենալով մի ինչ-որ բան: Նա տարավ իր ավարը: Արեգակը ավելի և ավելի այրում էր: Եթե ծովի կողմից փչող մեղմ քամին չլիներ, տոթը կարող էր խեղդել: Ամեն ինչ անշարժ էր, ամեն ինչ լուռ էր: Միայն լսելի էր լինում անհանգիստ արտույտի ճռնչող երգը: Միջօրեի տապի ժամանակ, երբ բոլոր թռչունները թուլացած, շնչասպառ, մի զով տեղ են որոնում հանգստանալու, նա այդ պահուն ավելի ոգևորվում է, տաքանում է, սկսում է երգել: Բայց ո՞րտեղ էր թաքնված այդ հողագույն թռչունը: Որտեղ էլ որ լիներ, մենք նրան չէինք կարող նշմարել: Հնձած արտերի մոխրագույն ծղոտները, տոթի ազդեցությունից ցամաքած և դալկացած մացառների տերևները՝ ամենևին չեն որոշվում նրա փետուրների գույնից: Խելացի թռչունը ընտրում է այսպիսի տեղեր: Նրա գույնը միախառնվում է իր թաքստի տեղի գունավորության հետ, և նա անտեսանելի է դառնում թշնամու աչքից: Գոնե դրա խելքն ունենային այստեղի հայերը…

Մենք անցանք մարգադաշտերից, անցանք ճահիճներից, անցանք հնձած արտորայքից: Այժմ մեր ճանապարհի աջ և ձախ կողմերում բարձրանում էին ժայռոտ բլուրներ: Կանաչ բուսականության մի նշույլ անգամ չէր մնացել նրանց վրա. ամեն ինչ այրել էր տոթը: Միայն օշինդրը բուրում էր իր սուր, կծու հոտով:

Ահա, ճանապարհը խաչաձև կտրելով, անցավ չարագուշակ նապաստակը: Նա պպզեց մի քարի վրա և, ականջները ցցած, հեռվից նայում էր մեզ վրա: Երբ մոտեցանք, անհայտացավ մացառների մեջ: Գոնե մի աղվես անցներ, դա կուրախացներ ինձ, դա արդեն նշան կլիներ, որ մեր ճանապարհորդությունը, ինչ նպատակով էլ և լիներ, բարեհաջող վախճան կունենար: Բայց նապաստակը չար է գուշակում: Այդ նախապաշարմունքը, սկսյալ մանկությունից, իմ մեջ այն աստիճան արմատացած էր, որ ես սկսեցի կասկածել, որ անպատճառ մի որևիցե անհաջողության կհանդիպենք: Այդ մասին, իհարկե, ամաչեցի Ասլանին մի բան ասել, վախենալով նրա հանդիմանությունից:

Մենք անցանք մի հայոց գյուղի մոտով: Գետնափոր խրճիթները հազիվ բարձրանում էին գետի մակերևույթից: Տափակ կտուրների վրա կալ էին կալսում: Որպես ծանրություն, երեխաներին խմբով ածել էին կամնասայլի վրա, մի զույգ եզներ քաշում էին և պտտեցնում էին դեռ չմանրացած հողի վրա: Մայրը, հեծանոցը ձեռին, խառնում էր հարդը: Ջառջառի սուր ատամները, որ կազմված էին կայծաքարի կտորներից, կտրատում էին հարդի խոշոր մասները: Տղամարդիկ չէին երևում: Նրանց մի մասը դաշտերում ուրիշ աշխատանքներով էին զբաղված, իսկ շատերը գնացել էին օտար երկրներ, պանդխտության մեջ էին ապրում: Մի քանի ծերունիներ նստած էին կալի մոտ, դիզած խուրձերի հովանիի ներքո, ծխում էին: Մեզ տեսնելով, ամենքը կանգնեցին և խորին կերպով գլուխ տվին: Մեր առաջնորդներից մեկը մոտեցավ նրանց և կրակ խնդրեց, որ իր չիբուխը վառե: Մենք անցանք: Երբ նա կրկին եկավ և հասավ մեզ, ես հարցրի.

– Ի՞նչ էին խոսում այդ ծերունիները:

– Հարցնում էին, թե ո՞վ է այդ մարդը:

– Դուք ի՞նչ ասացիք:

– Ասացի՝ եվրոպացի ճանապարհորդ է:

– Նրանք ի՞նչ ասացին:

– Հարցնում էին, թե ինչ նպատակով է ճանապարհորդում:

– Էլ ուրիշ ոչինչ չհարցրի՞ն:

– Հարցրին, թե ո՞ւր է գնում: Ես ասացի՝ գնում է Հայկա բերդը տեսնելու: Նրանք երանի տվեցին եվրոպացու աչքերին, որ կտեսնե Հայկա բերդը:

— Մի՞թե նրանք չեն տեսել:

— Չեն տեսել. այդքան մոտիկ են ապրում և չեն տեսել:

— Դա շատ զարմանալի է:

— Զարմանալու ոչինչ չկա. ես ավելի զարմանալին կասեմ ձեզ. ինձ պատահել է տեսնել գյուղացիներ, որոնք մի քանի մղոնով միայն հեռու են ապրում մի վանքից, երբ օտար երկրներից եկած ուխտավորների քարավանը նրանց գյուղի մոտով անցնում է, նրանք խորին բաղձանքով ասում են ուխտավորներին. «երանի՛ ձեր աչքերին, որ կգնաք, կտեսնեք մեր վանքը»…

Այդ խոսակցության միջոցին՝ մեր առաջնորդի մյուս ընկերն էլ մոտեցավ մեզ: Ես այժմ միայն սկսեցի ուշադրությամբ քննել նրանց դեմքերը: Այդ դեմքերը ինձ շատ ծանոթ էին երևում: Ինձ թվում էր, թե մի տեղում պետք է տեսած լինեի նրանց: Բայց ե՞րբ և ի՞նչ տեղում, մտաբերել չէի կարողանում: Այդ տարակուսանքը երկար տանջում էր ինձ: Մի՞թե կարելի էր մոռանալ այդ տեսակ մարդկանց: Երկուսն էլ բարեկազմ երիտասարդներ էին, կարծես մի զույգ Այաքսներ լինեին: Ես անիծում էի իմ բթամտությունը: Եթե տեսել էի, անպատճառ պետք է ուրիշ հագուստով, ուրիշ կերպարանքով տեսած լինեի, և ոչ որպես այժմ, լազի հագուստով, ինչպես հագնված էին Արթինի բոլոր ծառաները:

Ես տատանվում էի անստուգության մեջ: Մտածում էի հարցնել: Մի՞թե նրանք կասեին, թե ովքեր են, կամ մենք մի ժամանակ տեսնվել ենք: Եթե ասելու լինեին, հենց առաջին անգամից կասեին: Բայց նրանք ոչինչ կերպով չէին ցույց տալիս, որ

ինձ ճանաչում են, կամ որևիցե ժամանակ հանդիպել ենք միմյանց: Իմ հիշողության մեջ այդքանը միայն պարզ էր, որ այդ երկուսին միասին, միաժամանակ մի տեղում էի տեսել: Եվ այդ շատ զարմացնում էր ինձ: Ես թողեցի, որ հանգամանքները պարզեն այդ մթությունը, այժմ դարձա դեպի մյուս ընկերը, հարցնելով.

— Դեռ երկա՞ր ճանապարհ է մնում մինչև Հայկա բերդը:

— Եթե այդպես արագ գնալու լինենք, կեսօրից փոքր-ինչ անցած կհասնենք,— պատասխանեց նա:

Իմ հետաքրքրությունն այնքան անզուսպ էր դարձել, որ ցանկանում էի՝ նախքան բերդը տեսնելը՝ նրա մասին տեղեկություններ ստանալ:

— Դուք տեսե՞լ եք Հայկա բերդը, հարցրի նրանից:

— Տեսել եմ:

— Երևի շատ ամուր բերդ է, բարձր աշտարակներ և ահագին պարիսպներ ունի:

— Անտարակույս, մի ժամանակ ունեցել է: Բայց մինչև այժմ ի՞նչպես կմնային այդ ամրությունները: Գիտե՞ք, երբ էր Հայկը:

Նա սկսեց ժպտալ իմ միամտության վրա: Ջորեպանի կոպիտ ծառան Հայկի մասին ևս տեղեկություն ուներ: Այդ ավելի գրգռեց իմ կասկածը: Ես դարձյալ ընկա առաջին մտածությունների մեջ, որ այդ անձինքը ծանոթ էին ինձ:

Հայոց-Ձորը, մեր Հայկ նահապետի բնագավառը, լի է բազմաթիվ հիշատակներով, որ հիշեցնում են մեր Դյուցազնի պատերազմը Բաբելոնի հսկայի հետ: Ասլանը ինձ բացատրեց, թե որպես այժմյան հիշատակարաններով և Ժողովրդի մեջ պահպանված առասպելներով ստուգվում է պատմությունը:

— Հայրենագիտությունը,— ասաց նա,— գլխավոր ուսմունքներից մեկը պետք է լինի, որ պարտավոր է սովորել ամեն մի հայի որդին: Ով որ չէ ճանաչում իր հայրենիքը, չէ կարող ճշմարտապես սիրել նրան:

Հետո նա ցույց տվեց այն տեղերը, որոնք նվիրական էին դարձել Հայկի և Բելի հիշատակներով: Նա ցույց տվեց այն բլուրը, որի վրա տապալվեցավ մեր հսկայի հզոր բազկից նետահար եղած Բելը, որ և մինչև այսօր նրա դրած անունով կոչվում է Գերեզմանք, որովհետև այնտեղ ընկան Բելի քաջերից շատերը, և այն բլուրը, որի վրա պաշտպանված էին նրանք, եղավ նրանց գերեզմանը: Նա ցույց տվեց ճակատամարտի տեղը, ուր առաջին անգամ հանդիպեցան միմյանց երկու հսկաները: Այդ տեղը կոչվեցավ Հայք, որ այժմ ժողովրդի լեզվում աղճատվելով, ասվում է Խեք: Նա ինձ ցույց տվեց, թե դեպի ո՛ր կողմն է ընկնում Բելուն, որը Բելի անունն է կրում: Նա հեռվից ինձ ցույց տվեց Աստվածաշենը,— մեր Դյուցազնի և նահապետի հիմնած առաջին ավանը, որ մինչև այսօր մնացել էր շեն, որ մինչև այսօր պահպանել էր իր անունը:— Աստվածաշենի բնակիչը միշտ պարծանքով է հիշում, որ դա մեր նախահոր՝ Հայկ դյուցազնի անունն է կրում, որովհետև հսկաների հայրը, որ աստվածների հետ էր պատերազմում, ինքն ևս պաշտվում էր իբրև աստված: Այդ ավանի մոտ էր և նրա ամրոցը, ուր մենք գնում էինք:

Վերջապես մենք հասանք մեր բաղձանքի տեղը:

Աստվածաշեն գյուղի մոտ, արևելյան կողմում, ընդարձակ դաշտի միջից բարձրանում է մի երկարաձև լեռ, որ իր ահավոր գագաթից իշխում է շրջակա

տափարակների վրա: Ահա այդ սարի բարձրության վրա մինչև այսօր մնում են հայոց հսկաների մեծագործ շինվածքների փշրանքները, որ ժողովրդի մեջ հայտնի են Հայկա բերդ անունով:

— Ի՞նչպես է այդ սարի անունը,— հարցրի Ասլանից:

— Բոզ-դաղ, որ նշանակում է մոխրագույն սար, թուրքաց անուն է,— պատասխանեց նա, հետո ավելացրեց.— թուրքերը տիրելով մեր երկրին, աշխատեցին բոլորը, ինչ որ մեզ համար սուրբ էր և նվիրական, ջնջել և ոչնչացնել: Աշխատեցին, ա՛յն բոլորը, որ հային հատուկ էր, որ ազգային էր, օտարացնել, խորթացնել: Նրանք փոխեցին մեր լեռների, մեր գետերի, մեր հովիտների ու մեր գյուղերի անունները: Այդ երկիրը, որ մեր ազգի նախկին օրորոցն է եղել և մինչև այսօր բնակեցրած է հայերով, նրանք Քուրդիստան կոչեցին:

— Բայց ի՞նչպես էր այդ սարի հին անունը:

— Դժբախտաբար չգիտեմ: Այդ մասին գրքերի մեջ ինձ ոչինչ չէ պատահել կարդալ, իսկ ժողովուրդը մոռացել է:

Ձիաներով անհնար էր բարձրանալ սարը: Ցած իջանք, երկու երիտասարդները ներքևում պահեցին ձիաները, ես և Ասլանը սկսեցինք վեր բարձրանալ: Ժամանակը մաշել ու եղծել էր բոլոր շավիղները, որ տանում էին դեպի վեր: Մենք համարյա մագլցելով էինք անցնում սարսափելի առապարները, ուղղաձիգ ժայռերը, նեղ կիրճերը և աճած, միմյանց հետ հյուսված թուփերն ու մացառները, որ հանդիպում էին մեր ճանապարհի վրա: Բայց այդ ահագին դժվարությունները հեշտանում, բոլորովին անզգալի էին դառնում այն մեծ բաղձանքի ուժգնության ներքո, որ տիրում էր իմ մեջ՝ տեսնելու մեր նախահոր նվիրական ամրոցը, որտեղ ապրել էր նա, որտեղից պատերազմել էր իր ժամանակի խոլ և վիթխարի տիտանների հետ, պաշտպանելով իր գերդաստանը, որ երեք հարյուր հոգուց էր բաղկանում: Այդ երեք հարյուր հոգին կազմում էր այդ ժամանակ հայոց ամբողջ ազգը: Այդ երեք հարյուր հոգով տիրեց նա Հայաստանը: Դարերի, մի քանի տասնյակ դարերի սասանմունքից ու ավերմունքից հետո, դեռ շատ բան էր մնացել, որ հիշե գնում էր հսկա ձեռքի հսկայական գործը: Հանդիպում էինք արհեստական այրերի, որոնց ծայրը կորչում էր լեռան խորքերում, և որոնք ծառայելիս են եղել որպես գաղտնի հաղորդակցության անցքեր: Հանդիպում էինք վիմափոր ջրամբարների, որոնց մեջ զանազան կողմերից խողովակներով հավաքվում էր անձրևի ջուրը և պահվում էր պաշարման ժամանակի համար, որովհետև լեռան վրա աղբյուր չկար: Հանդիպում էինք զանազան մթերանոցների, որոնց մեջ պահվում էր թե պաշար և թե զենքեր: Երկայնաձիգ լեռը, որ ներքևից դանակի նման սուր էր երևում, վերևում հետզհետե ընդարձակվում էր և տափարակ ձև էր ստանում: Այդ տափարակի վրա երևում էին բազմաթիվ բնակությունների հետքեր: Վտանգի ժամանակ այստեղ էին պատսպարվում ստորոտի բնակիչները: Բոլորովին գագաթի վրա շինված էր միջնաբերդը: Պարիսպները, աշտարակները, այլևայլ ամրությունները, իրանց կանգուն ժամանակ այն աստիճանի վիթխարի ձև են ունեցել, որ նրանցից ցած թափված քարերը իրանց կուտակության ներքո ծածկում էին ընդարձակ տարածություն և հասնում էին մինչև ստորոտի դաշտավայրը: Հմուտ մուրճի ու կարկինի գործը և անջնջելի կրային ծեփը միայն՝ որոշում էին այդ ահագին քարերը լեռան մեծամեծ ժայռերից, որոնց հետ խառնված էին: Հսկաների ձեռքը միայն կարող էր այդ ահագին մեծահատոր քարերը միմյանց վրա շարել և լեռնային բուրգեր կառուցանել:

Ասլանը կանգնած էր այդ դիցական ավերակների բեկորների վրա, և մի առանձին ոգևորությամբ նայում էր դեպի շրջակայքը, նայում էր դեպի ընդարձակ հեռաստանը

և կարծես իր սրատես աչքերով չափում էր կանաչազարդ հովտի տարածությունը, մինչև հեռավոր լեռները, մինչև կապուտակ ծովը…

ԻԲ

ԳՈՒՇԱԿՈՂԸ

Երբ ցած իջանք բերդից, Ասլանը իսկույն նստեց իր ձին և, առանց մի բան ասելու, քշեց դեպի Հայոց-Ձորի հարավային կողմը՝ Ռշտունյաց լեռները: Երկու երիտասարդները, երևի գիտեին, թե նա ուր է գնում, իրանց ձիաների գլուխը դարձրին դեպի այն կողմը: Ես և‌ս հետևեցի նրանց:

Երկար գնում էինք առանց խոսելու: Մեզանից յուրաքանչյուրը, այն տպավորություններից հետո, որ թողեց մեզ վրա Հայկա քայքայված բերդը, խորասուզված էր իր մեջ:

Տո՛թ էր, հետկեսօրյան այն խեղդող տոթը, երբ սար ու քար տաքանում է, կրակ է կտրում, երբ օդը սաստիկ բորբոքվում է, կարծում ես, թե հնոցի մեջ տապակվում ես: Քրտինքը հոսում է մարմնից և թողնում է երեսի վրա թանձր, աղային կեղև: Շրթունքներդ ճաքճքում են և աչքերդ սկսում են այրվել: Որպես մանր, հազիվ նշմարելի փոշի, գլխիդ շուրջը վըժվըժում են միլիոնավոր միջատներ: Շունչ ես քաշում, բերանդ, քիթդ լցվում է այդ չարաճճիկ արարածներով, աչքերդ բաց ես անում, լցվում են աչքերիդ մեջ, իսկ ականջներիդ մեջ իրանց ուրախ երաժշտությունն են կատարում: Հնար չկա ազատվելու նրանց խայթոցից: Մարմնիդ վրա որքան բաց տեղեր են մնացել,— երեսդ, պարանոցդ, ձեռքերդ,— կարծես ծակծկում են մանր ասեղներով: Ծակած տեղերը իսկույն բորբոքվելով, սկսում են այրվել: Նրանք ծծում են քո արյունը և փոխարենը թույն են թողնում: Մտածում ես, երևի այդ երկրի ճակատագիրն է՝ ծծել բոլոր հյութը, կշտանալ, իսկ տեղումը թույն թողնել…

Բորբոքված օդը բորբոքում է և մարդու երևակայությունը: Նայում էի դեպի երկինք, տեր աստված, ի՜նչեր չէի տեսնում, մի ամբողջ վանք կախված էր օդի մեջ. ես նշմարում էի՝ մինչև անգամ գմբեթները, զանգակատները և վանքը շրջապատող ծառերը: Դեպի հեռուն, շատ հեռուն էի նայում, դեպի ծովի կողմը, ինձ թվում էր, թե երկնային հրեշտակները, զինվորված, ձի նստած, շրջում են օդի մեջ: Ես տեսնում էի և ոչխարների մի ամբողջ հոտ, իրանց արոտամարգերով և լեռներով, այնտեղ վերևում արածում էին: Այդ ի՞նչ էր: Ինձ թվում էր, թե անրջական տեսիլքներ հրապուրում են ինձ և այսպիսի պատկերներ են երևան հանում: Մտածում էի մեր առաջնորդներին հայտնել տեսածս, երկրի հետ ծանոթ լինելով, գուցե նրանք կբացատրեին, թե ինչ էր այդ: Բայց նրանք ինձ խելագարի տեղ կդնեին և կսկսեին ծիծաղել: Իսկ վերջը, երբ Ասլանին ասացի, նա բացատրեց այդ օդերևույթների բնական պատճառները, և ես բոլորովին զարմացա: Ի՜նչ լավ բան է եղել գիտությունը, ո՛րքան նախապաշարմունքներ, ո՛րքան սնահավատություններ փարատում է նա:

Օրվա այն ժամն էր, երբ ճանապարհները բոլորովին դատարկվում են երթևեկներից: Երբեմն պատահում էին մենավոր ձիավորներ, երբեմն մի քանիսը միասին: Փոքրիկ, կրակոտ նժույգների վրա նստած, երկայն, եղեգնյա նիզակը ձեռին, երկաթապատ վահանը ուսին, ատրճանակները գոտիի մեջ խրած, աղեղնաձև կեռ թուրը կշտից քարշ ընկած, մի խոսքով, կատարյալ զինավառության մեջ, այդ ձիավորները, իմ վրա այն տպավորությունն էին գործում, որ կա՛մ կռվելու են գնում, կա՛մ վերադառնում են

կռվից. նրանք կասկածավոր կերպով նայում էին մեզ վրա, ողջունում էին ու անցնում:

— Դրանք ավազակնե՞ր են,— հարցրի մեր առաջնորդներից մեկին:

— Ի՞նչ է նշանակում ավազակներ,— ժպտալով պատասխանեց նա,— ամեն մի քուրդ ավազակ է, որովհետև դա նրա արհեստն է: Դրանք, որ անցան և որոնց նորից կհանդիպենք, հասարակ ճանապարհորդներ են: Եթե ճանապարհին իրանց ատամի համեմատ մի որս կպատահի, կկողոպտեն և կանցնեն, իսկ եթե նկատեն, որ որսը հեշտությամբ կեղեքել չեն կարող, կողջունեն ու այնպես կանցնեն:

— Ուրեմն դրանք մեզ կկողոպտեին, եթե մենք զենքեր չունենայինք:

— Անպատճառ:

— Առաջնորդի խոսքերը ինձ բոլորովին հանգստացնել չկարողացան, երբ հանկարծ մտաբերեցի նապաստակը, այն չարագուշակ նապաստակը, որ մեր ճանապարհը խաչաձև կտրելով անցավ: Ես մտածում էի, որ անպատճառ մի դժբախտություն կպատահի: Երբեմն պատահում էին քրդուհիներ, որոնք խմբով, կամ միայնակ դիմում էին դեպի մերձակա լեռների ստորոտները, ուր գտնվում էին նրանց չադրները: Ցավալի է նայել այդ թշվառների վրա: Պատառոտած հագուստով, բոբիկ ոտներով գնում էին նրանք տատասկներով պատած ճանապարհով, որը հաճախ երթևեկության ուղի չլինելով, ավելի մի նեղ շավիղի էր նմանում: Նրանցից յուրաքանչյուրը ծանրաբեռնված էր չորացած թուփերի ու արմատների շալակներով, որ քաղել էր մերձակա բլուրներից, տանում էր վառելու համար: Ամուսինները այնպես փառավոր նժույգների վրա նստած, իսկ կանայք այդպես ողորմելի, հեծում էին ծանր բեռների ներքո: Ես կրկին դարձա դեպի մեր առաջնորդը:

— Դրանք ո՞րտեղացի են:

— Քրդի համար կարելի՞ է ասել որտեղացի է: Խաշնարածներ են, այսօր այստեղ են, էգուց կտեսնեք նրանց՝ տասն սարերի այն կողմում:

Չնայելով, որ արևը բավական թեքվել էր և երեկոյան ժամը մոտենում էր, բայց օդը դեռ բոլորովին չէր զովացել: Ծարավը այրում էր ինձ. մի կաթիլ ջրի համար հոգիս կտայի, բայց դեռ շատ հեռու պիտի գնայինք, մինչև ջրի կհասնեինք:

— Ես հետս Արտամեդի խնձոր ունեմ վերառած,— ասաց մեր առաջնորդը,— դա կզովացնե:

Նա կանգնեցրեց իր ձին, ցած իջավ և խուրջինի միջից հանեց մի քանի հյութալի, թթվաշ խնձորներ, տվեց ինձ: Այդ միջոցին քրդուհիները հասան մեզ: Ես դանակով կեղևը կճպում էի և մեծ ախորժակով ուտում: Իսկ խեղճ կանայք գետնից հավաքում էին հողի վրա թափված կեղևները և նույն ախորժակով ուտում էին: Նրանց համար այդ անուշեղենը այնքան հրապուրիչ էր, որ չնայելով իրանց շալակների ծանրությանը, վազ էին տալիս մեր ձիաների ետևից: Այդ տեսնելով, երիտասարդը տվեց նրանց մի-մի խնձոր: Անկարելի է նկարագրել նրանց ուրախությունը:

— Դու քանի՞ սիրող ունես,— հարցրեց մեկից:

— Ես ամուսին ունեմ,— ծիծաղելով պատասխանեց քրդուհին,— բայց սիրողներ դա՛ շատ ունի, հողե՛մ դրա գլուխը: Վերջին խոսքերի հետ նա ձեռքով խփեց իր ընկերուհիներից մեկի գլխին, որ դեռ ամուսնացած չէր:

— Իսկ ուրիշի սերը երբեք չե՞ս գողանում:

— Գողանում եմ, երբ ամուսինս ինձ ծեծում է:

— Քանի՞ ոչխար ունեք:

— Հինգ հարյուր:

— Հինգ հարյուր ոչխար ունեք և դու այդպես շալակով ցա՞խ ես կրում:

— Ի՞նչ անեմ, եթե չկրեմ, ամուսինս ինձ դուրս կանե և մի ուրիշին կբերե:

Մենք անցանք:

— Մի՞թե քրդուհիները այդպես թեթև բարք ու վարքի տեր են,— հարցրի երիտասարդից:

— Չի կարելի ասել բոլոր ցեղերի համար: Բայց այդ ցեղը ինչ-որ բոշաների խառնուրդ է: Ընդհանրապես խոսելով, օրիորդը ավելի ազատ է քրդերի մեջ, քան թե ամուսնացած կինը, որ տեր ունի և մեկի սեփականությունն է համարվում:

Հեռվից, Արտոս լեռան ստորոտում, սև բծերի նման երևում էին մի խումբ վրաններ: Արևի երեկոյան ճառագայթները թափել էին այդ վրանների վրա շեկ- ծիրանագույն լույս: Ինձ թվում էր, որ հրդեհի մեջ այրվում էին նրանք: Արևը մտավ, երբ հետզհետե պատեց խավարը, ամեն ինչ կորավ, և գեղեցիկ երևույթը ընկղմեցավ անվերջ մթության մեջ: Այժմ այնտեղից նշմարվում էին կրակի նշույլներ, որոնք փարոսի նման ձգում էին մեզ դեպի իրանց կողմը:

Ասլանը ինձ պատմեց, որ այնտեղ բնակվում է քրդերի մի նշանավոր շեյխ, որ մեծ ազդեցություն ունի բոլոր ցեղերի վրա, որին համարյա պաշտում են և մարգարեի հավասար հարգանք են մատուցանում: Բոլոր քրդերը նրա գլխովն են երդվում. «շեյխի գլուխը վկա» - դա ամենամեծ երդումն է նրանց մեջ: Այն օրը, որ նա բաղանիք է մտնում, բաղանիքի ջուրը քրդերը բաժանում են իրանց մեջ և սրսկում են մորուքների վրա, որպես օրհնած ջուր: Ամուլ կանայք նրա ոտքերի հետքերից փոշին հավաքում են ինչ-որ կախարդական արարողություններ են կատարում, որ զավակ ունենան:

– Բայց նա չափազանց մոլեռանդ է և քրիստոնյաների թշնամի,– ավելացրեց Ասլանը:– Նրա ատելությունը դեպի քրիստոնյաները այն աստիճանի է հասնում, որ իր վրանից դուրս գալու ժամանակ, երբ կամենում է մի տեղ գնալ, դեմքը քողարկում է, որ «գավուրները» նրա սրբազան երեսը չտեսնեն: Ո՛րքան վանքեր է քանդել տվել, ո՛րքան հայոց գյուղորայք է այրել. քրիստոնյաներին ոչնչացնելը նրա ամենասիրելի բաղձանքն է:

– Այստեղ ի՞նչ է շինում:

– Պարսից հետ ինչ-որ ընդհարումներ է ունեցել, այդ պատճառով հեռացել է սահմանից, եկել է այստեղ:

– Ո՞րպիսի ընդհարումներ:

– Մի քանի ամիս առաջ նա մի արշավանք կատարեց դեպի Ուրմիո լճակի հարավ-արևմտյան կողմերը և ասպատակեց մի քանի գավառներ:

– Մի՞թե այդքան ուժ ունի:

– Մի օրվա մեջ կարող է տասն կամ քսան հազար ձիավորներ զենքի կոչել:

– Նրա իսկական բնակության տեղը ո՞րտեղ է:

– Ձաբ գետի հովիտը, որ այլ անունով կոչվում է Նեհրի, Աղբակից և Ջուլամերկից փոքր-ինչ հեռու: Այնտեղ ընդարձակ կալվածքներ և շատ գյուղեր ունի. բավական հարուստ մարդ է:

– Երևի այդ հարստությունը բոլորը հափշտակությամբ է դիզել:

– Անտարակույս:

– Եվ դու գնում ես մի այդպիսի չարագործի մո՞տ:

– Ես նրա մոտ չեմ գնում, ես մի ուրիշին պետք է տեսնեմ:

— Դու շեյխի հետ ծանո՞թ ես:

— Ծանոթ եմ, բայց եթե այժմ եվրոպական հագուստով տեսնելու լինի ինձ, երևի չի ճանաչի:

Գիշերից բավական անցել էր, երբ հասանք շեյխի վրաններին: Խարույկները մարել էին և ամբողջ բանակի վրա տիրում էր մթին խավար: Վրանների շրջակայքում հավաքված ձիաների երամակները, ոչխարների հանգրվանները, կովերի և եզների նախիրները ցույց էին տալիս, որ այդ բանակը ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ խաշնարածների մի ընդարձակ իջևան, որը, հարկավորած ժամանակ, կարող էր և պատերազմական բանակի փոխվել: Բոլոր դիրքերի վրա հսկում էին զինված գիշերապահները: Մուտք գործելու հնար չկար: Շները խոլ վագրերի նման թռչում էին մեր ձիաների գլխի վրա: Նրանց ձայնից մոտեցան մեզ մի քանի գիշերապահներ, հարցնելով.

— Ո՞վքեր եք, ի՞նչ եք կամենում:

— «Գուշակողի» մոտ ենք գնում,— պատասխանեց մեր առաջնորդներից մեկը:

— «Գուշակողը» ահա այնտեղ է կենում:— Նա ցույց տվեց մի առանձնացած վրան, որի մեջ դեռ լույս էր երևում, և որը բավական հեռու էր բանակից:

«Գուշակողը» այնքան անհրաժեշտ մարդ էր, որ գիշեր ու ցերեկ այցելուներ միշտ անպակաս էին լինում նրա վրանից, այդ պատճառով մեր տարաժամ այցելությունը չզարմացրեք գիշերապահներին: Խավարի միջից նրանք չնկատեցին, թե մենք ինչ տեսակ մարդիկ ենք:

Մենք գտանք «գուշակողին» միայնակ իր վրանում. նա դեռ չէր քնած, լապտերի առջև նստած, գիրք էր կարդում: Երբ լսեց մեր ձիաների ոտնաձայնը, գիրքը ցած դրեց և դուրս եկավ:

— Բարի՛ լինի,— հարցրեց նա:

— Ամենակարողի ողորմությամբ բարի է,— ասաց Ասլանը,— ձեր գուշակությունները լսելու ենք եկել:

Նա կանգնած էր վրանի մուտքի առջև, լապտերից դուրս ցոլացած լույսի մեջ՝ նկարվում էր որպես մի սպիտակ արձան: Ձյունի պես ճերմակ մազերը թափվել էին ուսերի վրա և, միախառնվելով նույնպես ճերմակ մորուքի հետ, կազմում էին մի սպիտակ շրջանակ, որի խտության միջից դուրս էր նայում նրա ազդու դեմքը: Երեսի կաշին, երևի մշտական պահեցողությունից, դեղնել, դալկացել, մագաղաթի գույն էր ստացել: Նրա հագուստը բաղկացած էր մեկ կտորից միայն. դա մի սպիտակ շապիկ էր, որ հայոց ժամի շապիկների նման իջնում էր մինչև նրա բոբիկ ոտները: Ինքը լույսի կողմում կանգնած լինելով, իսկ մենք խավարի կողմում, ամենևին ճանաչել չկարողացավ, թե մենք ինչ երկրի մարդիկ ենք, կամ ի՛նչ ազգից, և այդ պետք էլ չէր նրան գիտենալ, նրա վրանի մուտքը բոլորի համար բաց էր:

— Համեցեք, ցած իջեք,— ասաց նա ճգնավորի ձայնով,— բայց ձեր ձիաների հոգսը ինքերդ պետք է տանեք, ես այստեղ բոլորովին միայնակ եմ, ոչ ոք չունեմ:

Մեր առաջնորդները ամեն պատրաստություններ ունեին իրանց հետ: Երբ ցած իջանք, իսկույն խուրջիններից հանեցին երկաթյա բըխովները (ոտնակապ), նրանցով կապեցին ձիաների ոտները, բըխովները կողպեցին բանալիներով, հետո նույնպես երկաթյա երկար մեխերը ցցելով գետնի մեջ, նրանց գլխին ամրացրած օղակներից կապեցին ձիաների երասանակները, որ վրանի մոտից հեռու չգնան: Ես և Ասլանը մտանք վրանը, իսկ երկու երիտասարդները մնացին դրսում, որ ձիաներին հոգ տանեն:

Հենց առաջին անգամից այդ վրանը իմ վրա այն տպավորությունը գործեց, կարծես թե ճգնավորի խուց լիներ, կամ մի ղալանգերի (դերվիշի) տաղավար, որ ժամանակավոր կերպով կազմում է մի մեծատան դռան մոտ, նրանից իր պահանջը ստանալու համար:

Արևելքում այդ սովորությունը այնքան հատկանիշ կողմեր ունի, որ ավելորդ չեմ համարում փակագծի մեջ դնել նրա համառոտ նկարագրությունը: Դերվիշը դիմում է այս և այն մեծատանը: Պահանջում է կա՛մ մի մեծ գումար և կա՛մ մի այլ շնորհ: Նա ընտրում է ըստ մեծի մասին այնպիսի անձանց, որոնք իրանց հարստությունը միայն իրանք են վայելում: Ժլատ մեծատունը, իհարկե, մերժում է նրա պահանջը: Դերվիշը իր տաղավարը կազմում է մեծատան գլխավոր մուտքի հանդեպ, և հանգիստ կերպով սկսում է ապրել այնտեղ: Նա իր տաղավարի շուրջը գարի է ցանում, որը արդեն նշան է, որ մինչև գարին չբուսնի, չաճի և չհասունանա, նա չի հեռանա իր բռնած տեղից: Ամեն առավոտ, ամեն երեկո, կեսգիշերին, փչում է նա իր եղջերափողը, նրա անախորժ ձայնով մեծատանը անհանգստացնելու համար: Իսկ երբ մեծատունը տանից դուրս է գալիս, նա սկսում է պարսավներ երգել: Երկրի մեջ ընդունված սովորությամբ՝ մեծատունը իրավունք չունի այդ արտոնավոր մուրացկանին իր դռնից քշելու: Եթե վիրավորե նրան, բոլոր դերվիշները կհավաքվեն և մեծ խայատռակություն կսարքեն: Կշրջապատեն ժլատի տունը, կսկսեն իրանց եղջերափողերը փչել, բազմությունը կհավաքվի, իսկ նրանք կշարունակեն իրանց խառնաձայն նվագածությունը: Մեծատունը մեկ դերվիշի փոխարեն կունենա մի քանի տասնյակներ, և ստիպված կլինի բոլորին բավականություն տալ: Որպեսզի այդպիսի անախորժություններ չպատահեն, մեծատունը շտապում է կատարել դերվիշի պահանջը, իսկ նա իր ստացած գումարը բաժանում է աղքատներին և հեռանում է:

Մեր մտած վրանը, իրավ է, դերվիշի տաղավարի նման էր, բայց նրա մեջ բնակվողը դերվիշ չէր: Նա մի հոգևոր անձն էր, որին ալլահը շնորհել էր գուշակության ոգի:

Նա նստեց վրանի այն կողմը, որտեղ դրած էր նրա գիրքը. ես և Ասլանը տեղավորվեցանք նրա աջ և ձախ կողմերում:

— Դուք կարդում էիք,— ասաց Ասլանը,— մենք ձեզ խանգարեցինք:

— Կարդալու ժամանակ շատ կունենամ,— պատասխանեց նա նվաղած ձայնով,— իսկ այժմ աստծո հյուրերի հոգսը ամենակարևորն է ինձ համար:

«Գուշակողը» մեծ հռչակ էր ստացել քրդերի մեջ, ամենահեռավոր տեղերից գալիս էին նրա մոտ, ընծաներ էին բերում և զանազան հարցմունքներ էին անում: Իր ստացած ընծաները նա բաժանում էր աղքատներին, իսկ ինքը ապրում էր չքավորության մեջ: Կերակրվում էր միայն ցամաք հացով ու պարզ ջրով: Միս ամենևին չէր ուտում: Նրա մասին կազմվել էին քրդերի մեջ շատ առասպելներ, որոնք վերաբերում էին նրան զանազան հրաշագործություններ: Շեյխը չափազանց հարգում էր նրան, և համարյա իր բոլոր գործերի մեջ դիմում էր նրա խորհուրդներին: Տարին մի անգամ ամբողջ քառասուն օր անհայտանում էր նա. ասում էին, որ «չիլլա» է մտնում, այսինքն իջնում է մի խոր վիրապի մեջ և այնտեղ, առանց ուտելու և առանց խմելու, խորհրդակցում է ոգիների հետ կամ երկնային տեսիլքներ է տեսնում:

Վրանի մեջ, լապտերի լույսով, ես նորից ուշադրությամբ սկսեցի քննել նրա դեմքը: Այդ դեմքը, ինչպես երևում էր, ծերունու առույգ հասակում խիստ դաժան արտահայտություն է ունեցել, բայց նրա նշույլն անգամ չէր մնացել այժմյան մեղմ և հեզ գծերի մեջ: Ժամանակը, ծերությունը և հոգևոր կոչումը, որպես մեղմացրել էին նրա սիրտը, այնպես էլ դեմքին տվել էին խիստ բարի և առաքինական արտահայտություն: Բայց երբ նա ետ էր քաշում լայն ճակատի վրա թափված մազերը, նրա դեմքը կրկին ահռելի էր դառնում: Կարծես այդ ճակատի վրա դրված լիներ մի սև դրոշմ, որ պահում էր իր մեջ մի մռայլ գաղտնիք: Ճակատի մեջտեղը շիկացած երկաթով այրել ու խարել էին. տեղը մուգ-շագանակի գույն էր ստացել: Հանցավորների, մահապարտների ճակատները միայն կրում են այս տեսակ նշաններ: Բայց նրա մասին խոսվում էր, թե մի անգամ անհավատների ձեռքը գերի է ընկել և նրանք են այդպես արել:

Ասլանը խոսակցությունը դարձրեց նրա մոտ դրած գրքի վրա, հարցնելով թե ի՞նչ գիրք է:

— Արաբերեն մի աստվածաբանական գիրք է,— պատասխաննեց նա:— Գրագիտությունը քրդերի մեջ դեռ չէ տարածվել, հոգևորականներին անգամ կարելի է անգրագետ համարել: Արաբական լեզու իմացողները այնքան սակավ են, որ մատով են ցույց տալիս: Բոլոր ցեղերի մեջ գիտե այդ լեզուն մեր շեյխը միայն, և բացի նրանից՝ մի քանի հոգի:

— Իսկ դո՞ւք:

— Ես այժմ կատարելապես տիրապետում եմ այդ լեզվին և կարդացել եմ շատ գրքեր: Մեծ աշխատություն էր պետք, մինչև սովորեցի: Ես սկսեցի ծերության հասակում, բայց այդ դժվարին լեզուն լավ սովորելու համար՝ ամբողջ կյանք է հարկավոր: Շեյխը մեծ համարում ունի դեպի իմ դպրությունը. հանդիսավոր օրերում, երբ ինքը պետք է քարոզ կարդա, շատ անգամ ինձ է առաջարկում ամբիոն բարձրանալ:

— Ուրեմն դուք նրան օգնականի պաշտո՞ն եք կատարում:

— Քրդերը ինձ ընդունում են, որպես նրա երկրորդականը, որպես նրա փոխանորդը: Բայց ես այդ մասին շատ համեստ եմ: Ինձ համար չէ ոչ փառքը, ոչ աստիճանը. ինձ բավական է այդ անշուք տաղավարը, որի մեջ հոգևոր մխիթարություն եմ գտնում: Ես աչք ածեցի նրա տաղավարի շուրջը. ամեն կողմում երևում էր սաստիկ

չքավորություն: Այդ մարդը, որ այնքան համարում ուներ, որին այնքան հավատում էին, կարող էր շրջապատել իրան ամեն տեսակ բավականություններով, կարող էր հարստություն դիզել, բայց նա, որպես վերևում հիշեցի, իր ստացածը բաժանում էր աղքատներին և ինքը ապրում էր կատարյալ անձնուրացության մեջ: Նրա տաղավարի միակ կարասին էր մի դդմասրվակ, որ գործ էր ածում որպես ջրի աման: Այլևս ոչինչ չկար, բացի գրքերից: Հատակը ծածկված էր հասիրով, որի վրա և՛ նստում էր, և՛ քնում էր նա: Բայց ասում էին, որ նա խիստ հազիվ անգամ էր քնում:

Ներս մտավ մեր առաջնորդներից մեկը, հարցրեց Ասլանից, թե չէ՞ր կամենա ուտելու մի բան պատվիրել: Այդ միջոցին տեղի ունեցավ մի սրտաշարժ տեսարան. երբ երիտասարդի և ծերունու աչքերը հանդիպեցան միմյանց, երբ մի քանի վայրկյան ապշած, զարմացած նայեցին միմյանց վրա,— երկուսն էլ որպես հայր և որդի, որոնք երկար ժամանակ միմյանց կորցրած են եղել, միմյանցից անջատված են եղել,— վազեցին, գրկեցին միմյանց և, մի քանի անհասկանալի հառաչանքներ արձակելով, մարեցան միմյանց կուրծքի վրա:

— Քավոր Պետրոս…— ձայն տվեց երիտասարդը:

— Ա՛խ, Մուրադ… սիրելի Մուրադ…— լսելի եղավ ծերունու դողդոջուն ձայնը:

Ես մնացել էի շվարած, չգիտեի ինչո՞վ բացատրել այդ հոգեզմայլությունը: Ինձ զարմացրեց առավել այն, որ երկուսն էլ խոսեցին հայերեն լեզվով, քանի որ, մինչև երիտասարդի ներս մտնելը, «գուշակողը», քրդերի աբեղան, խոսում էր Ասլանի հետ քրդերեն լեզվով:

Ասլանը մնաց սառն և անխռով: Նա բժշկի հոգածությամբ, միգուցե ծերունուն հարվածք պատահի, բաժանեց նրանց միմյանցից և օգնեց ծերունուն նստել իր տեղը:

Երիտասարդը դարձյալ բաց չէր թողնում ծերունուն, համբուրում էր նրա ալևոր գլուխն ու ձեռքերը, համբուրում էր նրա այրած, խարած ճակատը, անդադար կրկնելով.

— Տե՛ր աստված… ո՛վ կսպասեր…

— Մուրադ, սիրելի զավակս,— խոսեց ծերունին, երբ փոքր-ինչ հանգստացավ,— դու դարձյալ գտնում ես ինձ մի պախարակելի դերի մեջ և իրավունք ունես մտածելու, որ հին *խաչագողը*, հին չարագործը, տակավին չէ ուղղվել… Ա՛խ, եթե գիտենայիր թե ի՞նչ հանգամանքներ հարկադրեցին ինձ այդ ամոթալի խարդավանքը հանձն առնել, դու կներեիր ինձ, դու բարի ես, Մուրադ, դու կներեիր ինձ…

— Եվ կսիրեր ձեզ…— ավելացրեց Ասլանը:

Երիտասարդը կրկին առեց ծերունու աջը և, իր շրթունքներին սեղմելով, ասաց.

— Այո՛, կսիրեի ձեզ… և սիրում եմ… Ես այժմ հասկանում եմ բոլորը… ամեն ինչ պարզ է ինձ համար… Ոչինչ բարեգործություն չէր կարող մոռանալ տալ քո տխուր անցյալը… Ոչինչ ապաշխարություն չէր կարող քավել քո հին մեղքերը… Իսկ այժմ բոլորը պետք է սրբված համարել… Այդ անձնազոհությունը, որ դու հանձն ես առել մի մեծ նպատակի համար, կմաքրե քո հին հանցանքները:

— Իմ հին հանցանքնե՛րը…— կրկնեց ծերունին արտասուքը սրբելով:— Մի՞թե երկինքը կարող էր բովանդակել իր մեջ այնքան գթություն, այնքան ողորմածություն, որ բավական լիներ ներելու ինձ նման եղեռնագործին… Ես վաղուց զղջացել եմ…

Բայց առանց թողություն սպասելու… Այն մխիթարական հույսը, որ ամեն մի բարի քրիստոնյա ունի ապագա կյանքի համար, իմ մեջ մեռած է… Թո՛ղ դժո՛խքը լինի իմ տեղը… Թո՛ղ դևերի և սատանաների հետ լինի իմ հավիտենական կենակցությունը… Թո՛ղ մի նոր հանցանք ևս բարդվի իմ բազմաթիվ մեղքերի հետ… Բայց ես կկատարեմ… անպատճառ կկատարեմ, ինչ որ ուխտել եմ…

Ասլանը բռնեց նրա ձեռքը և գոհունակությամբ սեղմեց: Նրա օրինակին հետևեց և երիտասարդը:

Երևում էր, որ ծերունու և երիտասարդի մեջ հին կապեր կային — և բոլորովին մթին ու մռայլ կապեր… Ես առաջ երիտասարդին նրա որդու տեղ ընդունեցի, բայց որդին չէր, նա ծերունուն «քավոր» կոչեց: Իսկ այդ անունները՝ քավոր Պետրոս և Մուրադ՝ երկուսն էլ ծանոթ էին ինձ… Երիտասարդը խոսեց.

— Ես և դու մեր բոլոր լավ ընդունակությունները, մեր բոլոր մտավոր և հոգեկան ընդարձակ ուժերը գործ դրինք, այո՛, դեպի չարը, դեպի անազնիվը… Բայց ո՞վքեր էինք «մենք»:— Մենք մի հասարակություն էինք: Մեր մեջ կերպարանագործված էր մի ամբողջ ժողովուրդ իր անբարոյական ախտերով: Մենք նրա տիպարն էինք: Մենք գործում էինք միայն մեր նեղ, անձնական շահերի համար: Իսկ այդ շահերը բխում էին ոչ մաքուր աղբյուրներից: Մենք մոռացել էինք, որ բացի մեր շահերից, կան ավելի սուրբ, ավելի անբռնաբարելի շահեր — հասարակության շահերը: Մենք կատարում էինք մեր պարտականությունը դեպի մեր անձը միայն, այն ևս ոչ օրինավոր ճանապարհով: Մենք մոռացել էինք, որ ավելի մեծ պարտականություններ ունենք դեպի մեր ազգը, դեպի մեր հայրենիքը և, վերջապես, դեպի մարդկությունը: Փոխանակ ազգի, հայրենիքի, մարդկության լավ անդամ լինելու, մենք դարձել էինք նրանց ուտիչ, ապականիչ ցեցը: Մեր գործերի համեմատ մենք ժառանգեցինք *«խաչագող»* անունը: Դա մի ամոթալի՛ անուն է: Գո՛ղ,— և սրբության գող: Այո, մենք գողանում էինք ինչ որ մարդկանց համար սուրբ էր, ինչ որ նրանց համար թանկագին էր: Մենք գողանում էինք նրանց կյանքը, նրանց կայքը, նրանց պատիվը: Ոչինչ չէր գոհացնում մեր ագահությունը: Ոչնչով չէր խայթվում մեր խիղճը: Ամեն չարիք հաջողվում էր մեզ,— և այդ ավելի խրախուսում էր մեր անբարոյական ձգտումները:— Իսկ այժմ հասավ ժամանակը մերկանալ *հին մարդը* և իբրև նոր մարդ, նոր հոգով և նոր եռանդով գործել՝ դեպի ազնիվը և դեպի լավը: Մեր բոլոր ընդունակությունները, որ զարգացած էին միայն չարիք գործելու համար, թող այսուհետև գործ դրվին դեպի հասարակաց բարին…

Ծերունին գրկեց նրա գլուխը, ճակատը համբուրեց:

Այդ բոլորը խոսում էր ջորեպանի ծառան, որին ես անկիրթ, անզարգացած մարդու տեղ էի դնում: Այդ ի՞նչ խաղ էր, այդ ի՞նչ հանելուկ էր: Նա վեր կացավ, Ասլանը ինձ ևս աչքով արավ, որ հեռանամ: Մենք դուրս եկանք տաղավարից, Ասլանը և ծերունին մնացին այնտեղ: Թե ի՞նչ խոսեցին և ի՞նչ խորհեցին,— ես չգիտեմ, միայն նրանց խոսակցությունը երկար, շատ երկար տևեց: Մենք բավական հեռու էինք նստած, ձիաների մոտ և ոչինչ չէինք լսում: Հետո նրանք ցած թողեցին տաղավարի մուտքի վարագույրը, ես կարծեցի, որ քնեցին: Բայց լապտերը մինչև լույս վառվում էր:

Ձով գիշերը մոռանալ տվեց մեզ ցերեկվա տոթից կրած տանջանքը: Ծովի կողմից փչում էր մեղմ քամի և բերում էր իր հետ ծաղկավետ Արտոսի սքանչելի անուշահոտությունը: Երկինքը ամպամած էր, ոչ մի աստղ չէր երևում: Երբեմն մաղվում էին անձրևի խոշոր կաթիլներ: Հայկա բերդի կողմում փայլատակում էր, լսելի էին լինում որոտման խուլ ձայներ: Ինձ թվում էր, որ հայոց և բաբելացոց հսկաները պատերազմում էին այնտեղ և իրանց ահագին լախտերով խորտակում էին լեռները:

Մուրադը և իր ընկերը զբաղված էին ձիաներով, ծածկում էին նրանց չուլերով, զգուշանալով, միգուցե հորդ անձրև գալու լինի և ձիաներին թրջե: Ես պառկած էի խոտերի վրա, նայում էի անթափանցիկ խավարի մեջ: Մու՛թ էր, մու՛թ, ոչինչ չէր երևում: Ամեն ինչ ընկղմված էր մթության մեջ, որպես այդ երկրի մթին ապագան…

Իմ աչքերի առջևն էր մի պատկեր միայն՝ ալևոր «գուշակողը»: Իմ գլխում, մռայլ առեղծվածների նման, պտտվում էին այդ խորհրդավոր ծերունու խոսքերը: Այդ խոսքերը առանձին բացատրության էին կարոտ, ես անկարող էի լուծել: Բայց ես այժմ գիտեի երկու անուններ, որոնք շատ բան էին պարզում:— Մուրա՛դ և քավոր Պետրո՛ս,— երկուսն էլ երևելի *խաչագողեր* էին: Որպես երկու հերոսներ այդ մթին արհեստի մեջ, Սալմաստում մեծ հռչակ էին ստացել նրանք: Նրանց մասին ես լսել էի շատ և շատ զարմանալի պատմություններ…

Իմ տարակուսանքները մասամբ փարատվեցան: Ճանապարհին գալու ժամանակ, ինձ երկար տանջում էր այն միտքը, որ ես մի ժամանակ պետք է տեսած լինեի Մուրադին, նրա դեմքը ինձ ծանոթ էր երևում: Իմ հիշողությունը չխաբեց ինձ, այժմ գիտեի, թե որտեղ էի տեսել:

Հիշո՞ւմ ես, ընթերցող, այն տխուր, փոթորկալի գիշերը, երբ ես տեր Թոդիկի դպրոցից փախստական եղած, թափառում էի Հին-քաղաքի շուրջը և անհնարին հուսահատության մեջ մոլորված, չգիտեի ուր գնալ: Այն ժամանակ հանդիպեց Կարոն, տարավ ինձ արաբական միևարեթը, այն հին ավերակների մեջ: Այնտեղ առաջին անգամ ես տեսա Կարոյի մյուս ընկերներին՝ Ասլանին և Սագոյին: Այդ խումբի մեջն էր և Մուրադը իր այժմյան ընկերի հետ, որին Ջալլադ էին կոչում: Երբ գիշերը լուսացավ, առավոտյան Մուրադը և Ջալլադը անհայտացած էին, միևարեթում մնացել էին մյուսները: Ի՞նչ եղան, ո՞ւր գնացին,— այդ մասին ինձ ոչինչ չասացին: Ամիսներ անցան, այժմ կրկին հանդիպում էի այդ երկու երիտասարդներին, բայց մի այլ շրջանում և բոլորովին տարբեր պարապմունքի մեջ: Կարոյի և Ասլանի այդ երկու ընկերները արզրումցի Արթինի քարավանում ջորեպանի պաշտոն էին կատարում,— դա շատ զարմացնում էր ինձ: Ի՞նչ նպատակ ունեին այդ կերպարանափոխությունները, ի՞նչ կապ կար Արթինի, Ասլանի կամ մյուսների մեջ, և վերջապես, ո՞ւմն էին պատկանում ջորիները,— այդ բոլոր խաբուսիկ պատրանքները զբաղեցնում, շվարեցնում էին իմ միտքը, և զանազան անորոշ ենթադրությունների մեջ էին նետում…

Մուրադ և քավոր Պետրոս,— երկու անունները սարսափեցնում էին ինձ: Այո՛, երկուսն էլ երևելի *խաչագող* էին: Մի՞թե բարոյապես փչացած խաչագողը կարող էր ընդունակ լինել մի լավ գործի: Մի՞թե կարելի էր հավատալ նրանց: Մի՞թե կարելի էր հուսալ նրանց մեջ անկեղծություն, որ իրանց ամբողջ կյանքում միշտ կեղծել են, միշտ խաբել են և միշտ իրանց հեռու են պահել ճշմարտությունից: Գարշելի՛ արարածներ: Ես զարմանում էի Ասլանի միամտության վրա, որ այդ տեսակ մարդկանց հետ գործ ուներ: Ի՞նչ մի լավ բան կարելի էր սպասել նրանցից:

Բայց երբ կրկին անգամ ներկայանում էր ինձ այն սրտաշարժ տեսարանը, որ մի քանի րոպե առաջ տեղի ունեցավ տաղավարի մեջ, երբ մտաբերում էի այն խոսքերը, որ այնքան խորին զգացմունքով արտասանեց Մուրադը,— այդ միջոցին մթությունները հետզհետե փարատվում էին և իմ առջև բացվում էր մի նոր, լուսափայլ հորիզոն: Ես տեսնում էի, որ գարշելի խաչագողն անգամ կարող է ուղղվել, կարող է մաքրվել հին կեղտերից և ծառայել մի բարի գործի: «Ո՞վքեր էինք մենք»,— ասում էր ոգելից Մուրադը:— «Մենք մի հասարակություն էինք: Մեր մեջ կերպարանագործված էր մի ամբողջ ժողովուրդ իր անբարոյական ախտերով»… Դրանք խորհրդավոր, շատ խորհրդավոր խոսքեր էին: Մի՞թե սալամաստեցին կամ սավրեցին է միայն խաչագողը: Խաչագող կարող է լինել և՛ մի քահանա, և՛ մի

արհեստավոր, և՛ մի վաճառական, և՛ մի վարժապետ, և՛ մի աստիճանավոր, մի խոսքով, ամեն մարդ, որ խաչագողի հատկություններ ունի։— Խաչագող կարող է լինել և մի ամբողջ ազգ, որ բարոյապես փչացած է, որը խաչագողի նման հարուստ ընդունակություններ ունի, բայց իր ընդունակությունները գործ է դնում դեպի վատը, դեպի անազնիվը և դեպի անբարոյականը։— «Հասավ ժամանակը մերկանալ *հին մարդը* և, իբրև նոր մարդ, նոր հոգով և նոր եռանդով գործել՝ դեպի ազնիվը և դեպի լավը»։— Այդ խոսքերով վերջացրեց երիտասարդը իր փոքրիկ ճառը. «Մեր բոլոր ընդունակությունները, որ զարգացած էին միայն չարիք գործելու համար, թող այսուհետև գործ դրվին դեպի հասարակաց բարին»։

Երբ Մուրադը վերջացնելով իր գործը եկավ նստեց իմ մոտ, ես չհիշեցի, որ մի ժամանակ տեսել եմ նրան արաբական միևարեթում։ Ես տարակույս չունեի, որ նա ճանաչում է ինձ։ Բայց, երևի, մտածում էր, որ ես այժմ չէի կարող ճանաչել նրան իր նոր կեպարանափոխության մեջ, իր լազի հագուստով, որովհետև սկզբում, երբ առաջին անգամ տեսա նրան արաբական միևարեթում, նա զեյթունցու հագուստ ուներ և զեյթունցու բարբառով էր խոսում։ Ինչպես էլ որ լիներ, ես անպատշաճ համարեցի մերկացնել այն, ինչ որ նա ինձանից ծածուկ էր պահում։ Բայց հավատացած էի, որ նա ինձանից չէր թաքցնի իր հին հարաբերությունները քավոր Պետրոսի հետ, որոնց վերջին սրտաշարժ գրկախառնությանը և հոգեկան հուզմունքներին ես ականատես եղա։

— Դուք այդ ծերունուն, երևի, վաղուց ճանաչում էիք,— հարցրի նրանից։

— Ոչ միայն ճանաչում էի, այլ նա իմ դաստիարակն է եղել,— պատասխանեց երիտասարդը։

— Այդ խաչագո՞ղը։

— Այո՛, այդ խաչագողը։

— Ի՞նչպես եղավ, որ դուք ընկաք նրա ձեռքը։

— Դա շատ եկար պատմություն է, եթե պատմելու լինեմ, մինչև լույս չի վերջանա։

— Պատմեցեք, խնդրեմ։ Ես քավոր Պետրոսի մասին շատ բաներ էի լսել, բայց իրան չէի տեսել։

— Երևի, իմ մասին ևս լսած կլինեիք։

— Այո, որովհետև ձեր անունը անբաժան է նրա անունից։

— Իրավ, անբաժան է…— կրկնեց նա տխուր ձայնով։

Նա պատմեց, թե ի՛նչպես պատանեկության հասակում ինքը դարբինի աշակերտ է եղել, պատմեց, թե ինչ փորձանք պատահեց իր վարպետին, որի պատճառով ինքն ևս, իբրև հանցավոր, կասկածի ենթարկվեցավ և ստիպվեցավ փախստական լինել, որ ոստիկանության ձեռքը չընկնի։ Այդ միջոցին պատահեց նա իր նման փախստական պատանիների մի խմբի, որոնք թողել էին տեր Թոդիկի դպրոցը և ծածկվել էին Սավրայի անտառներում։ Այդ պատանիները, ասաց նա, Կարոն, Ասլանը և Սագոն էին, որոնց մոտ մնաց մի քանի շաբաթ։ Իրանց մոտ հայտնվում էր երբեմն մի ալևոր որսորդ, որին Ավո էին կոչում, և նա լավ-լավ խրատներ էր տալիս իր մոլորյալ սանիկներին։ Բայց ինքը, Մուրադը, նրանց հասարակության քաղցրությունը երկար վայելել չկարողացավ, մի դիպվածով անջատվեցավ այդ խումբից և քավոր Պետրոսի ձեռքն ընկավ։ Այդ վերջինը առեց նրան իր

հոգաբարձության ներքո, տարավ օտար աշխարհներ, և վարժեցրեց խաչագողության մեջ: Իսկ Կարոն, Ասլանը և Սագոն հետևեցին որսորդի խորհրդին, թեև, նույնպես օտար աշխարհներ գնացին, բայց իր նման չփչացան, այլ կրթություն ստանալով, լավ մարդիկ դարձան:

Զարմանալի՛ պատմություն էր այդ. դա թափառաշրջիկ, բախտախնդիր ժողովրդի տխուր պատմությունն էր, որի մեջ այդ ժողովրդի յուրաքանչյուր անհատը կարող էր գտնել իր մռայլ պատկերը…

— Ուրեմն դուք ձեր պատանեկության հասակից ծանո՞թ եք եղել Ասլանի ու նրա ընկերների հետ,— հարցրի ես, երբ նա վերջացրեց իր պատմությունը:

— Այո՛, իմ պատանեկության հասակից,— պատասխանեց նա:— Բայց որպես պատմեցի ձեզ, մենք անջատվեցանք միմյանցից, մեր ճանապարհները բաժանվեցան, որսորդ Ավոն առաջնորդեց նրանց դեպի լավը, իսկ քավոր Պետրոսը առաջնորդեց ինձ դեպի վատը: Երկար թափառումներից հետո, դարձյալ մեր ճանապարհների ծայրերը միացան միմյանց, և դարձյալ մենք ձեռք մեկնեցինք միմյանց…

— Բայց ի՞նչպես եղավ, որ դուք ուղղվեցաք և ետ դարձաք վատ ճանապարհից:

— Ես անցա այն բոլոր մթին, ոլոր-մոլոր շավիղները, որոնց մեջ պտտվում է խաչագողը. ես անցա այն բոլոր շրջանները, որոնց մեջ լայնանում է, զարգանում է խաչագողի ընդունակությունը. հետո բռնվեցա իմ հանցանքների մեջ և աքսորվեցա: Այնտեղ, իմ հեռավոր աքսորավայրում, ես ծանոթացա մի լավ մարդու հետ, որ նույնպես աքսորված էր: Այդ մարդը իմ վրա խիստ բարերար աղդեցություն ունեցավ և ուղղեց ինձ:

— Ո՞վ էր այդ մարդը, ի՞նչպես էր նրա անունը:

— Նա մի շատ խորհրդավոր անձնավորություն էր. ես մինչև այսօր էլ չգիտեմ նրա իսկական անունը. բայց բոլոր դատապարտյալները նրան կոչում էին «Համր», որովհետև խիստ սակավ էր խոսում:

— Գիտե՞ք հիմա որտեղ է նա:

— Չգիտեմ…

Այժմ ես բոլորովին համոզվեցա, որ խաչագողը լավ մարդկանց ազդեցության ներքո, լավ հասարակության մեջ, կարող է կրթվել և լավ մարդ դառնալ: Բայց ես դեռ կասկած ունեի քավոր Պետրոսի մասին, երբ հարցրի, Մուրադը պատասխանեց ինձ.

— Նա չափազանց բարի մարդ է, նրան մինչև անգամ կարելի է առաքինի կոչել: Միայն նրա անցյալ մեղքերը այն աստիճան ծանրացած են նրա սրտի վրա, որ ամեն հույս նրա մեջ մեռել է: Նա չէ կարողանում հավատացնել իրան, որ աստծո անսահման գթությունը ներումն է շնորհում ամեն մի զղջացողին, և այդ պատճառով, թշվառ ալևորը գտնվում է խղճի մշտական տանջանքի մեջ:

Այդ միջոցին մոտեցավ մեզ Մուրադի մյուս ընկերը, որը գնացել էր հեռավոր դեզերից ձիաների համար խոտ բերելու: Ես խնդրեցի Մուրադից, որ ծանոթացնե իր ընկերի հետ:

— Դուք, կարծեմ ծանոթ եք,— ասաց նա խորհրդավոր ձայնով:— Դուք մի անգամ տեսել եք նրան արաբական միևարեթում… Հիշո՞ւմ եք:

— Հիշում եմ։— Եվ ձեզ…— ավելացրի ես։

— Այո՛, և ինձ…— խոստովանեցավ նա։— Ես և նա միասին էինք…

— Նրան կոչում են Ջալլադ, այդպես չէ՞։

— Այդպես է։

Այժմ մեր մեջ ոչինչ տարակուսանք չմնաց, մենք ճանաչում ենք միմյանց, մենք հին ընկերներ և բարեկամներ էինք։

Տաղավարից լսելի եղավ Ասլանի ձայնը, որ պատվիրեց ձիաները պատրաստել։ Առավոտը դեռ նոր էր բացվում, երբ ճանապարհ ընկանք։ Ալևոր «գուշակողը» տվեց մեզ իր օրհնությունը և բարեմաղթեց «հաջողություն»։ Այդ բարեմաղթությունը լսում էի ամեն անգամ, երբ բաժանվում էինք մեր բարեկամներից։ Շեյխի բանակում դեռ քնած էին. ոչինչ շարժում չէր երևում։ Միայն անքուն գիշերապահները հեռվից ձայն էին տալիս միմյանց։

ԻԳ

ՈՍՏԱՆ

— Այսուհետև երկյուղալի տեղերով պետք է անցնենք,— զգուշացրեց Մուրադը, խորհուրդ տալով, որ մեր զենքերը պատրաստ պահենք։

Նա առաջ ընկավ, իսկ նրա ընկերը, Ջալլադը, գալիս էր մեր ետևից։ Ես ու Ասլանը պատսպարված էինք երկուսի մեջտեղում։ Լսելով Մուրադի խոսքերը, ես իսկույն հիշեցի նապաստակին, չէ՞ որ պետք է մի բան պատահի, մտածում էի ես, և անպատճառ — վատ բան։

Ճանապարհը սարսափելի էր։ Անցնում էինք Արտոսի ոլորապտույտ ձորերով, նեղ փապարներով և մթին կիրճերով։ Մարդ կարող էր բոլորովին կորչել, անհետանալ այդ խորին անդունդների մեջ։ Բայց մեր առաջնորդին այնքան ծանոթ էին բոլոր անցքերը, բոլոր շավիղները, որքան ծանոթ էին նրան իր ձեռքի հինգ մատները։ Արտոսը և Կապուտ-Կողը, իրանց ոլոր-մոլոր շղթաներով հյուսվելով միմյանց հետ, կազմում են Ռշտունյաց գավառի Լեռնային ցանցը։ Այդ հսկայական ցանցը մի մեծ ծուղակ է, որ, կարծես, այդ քմահաճ լեռները պատրաստել են մարդիկ որսալու համար։ Մենք խարխափում էինք այդ ծուղակի մեջ։

Երբեմն հանդիպում էին մթին անտառներ։ Երբեմն հանդիպում էին ուղևորների խումբեր, որ գնում էին մերձակա արոտատեղիները, իրանց անասունների մոտ։ Նայելով այդ անտառներին, նայելով այդ մարդիկներին, ինձ թվում էր, որ այդ վայրենի, լեռնային երկրում ամեն ինչ նույնպես խոշոր էր, նույնպես խիստ էր, որպես շրջակա բնությունը։ Վաղեմի դյուցազունների փոխարեն՝ ապրում էր մի խոշոր ժողովուրդ։ Վաղեմի հսկա անտառների փոխարեն՝ ամեհի ծառատունկ։ Անցյալ փառքն ու մեծությունը մաշել, տրորել էր ժամանակը… Միայն իր վեհության մեջ մնացել էր անխորտակելի Արտոսը։

Անհամբերությունը խեղդում էր ինձ, մտածում էի, ե՞րբ պետք է դուրս գանք այդ մթին վիհերից ու վիրապներից։ Գոնե լույս լիներ։ Հորիզոնը ամեն կողմից փակված էր բարձր լեռներով։ Հեռուն չէր երևում։ Նայում էի դեպի երկինք, ձյունագույն ամպերը լողում էին օդի մեջ։ Նրանց մի կողմը ոսկու գույն էր ստացել։ Երևի, արևը ծագել էր։

Բայց մեր գտնված ձորերի մեջ դեռ տիրում էր գիշերային խավարը: Բոլորովին պայծառ օրերում անգամ՝ այդ ձորերի մեջ լույսը պակաս է լինում: Իսկ այն գիշեր անձրև էր եկել և վաղորդյան մառախուղը լցրել էր ձորերը:

Չարագուշակ նապաստակի հանդիպումը այս անգամ ևս մնաց առանց որևիցե չար հետևանքի: Մենք անցանք բոլոր վտանգավոր տեղերը առանց փորձանքի, միայն սաստիկ ջարդված, սաստիկ հոգնած: Բայց իմ հոգնածությունը բոլորովին փարատվեցավ, երբ բարձրացանք մի սարավանդի վրա, երբ կրկին մեր առջև բացվեցավ կապուտակ ծովը և երբ Ասլանը, ձեռքը մեկնելով դեպի մի հին քաղաքի ավերակները, ասաց.

— Ահա՛ Ոստանը:

Ոստա՛ն,— այդ անունը ծանոթ էր ինձ երեխայությունից: Գրքերի մեջ նրա մասին ոչինչ չէի կարդացել: Բայց շատ անգամ լսել էի, որ մայրերը ձեռքի վրա օրորում են, վեր-վեր են թռցնում իրանց փոքրիկ մանուկներին, երգելով մի երգ, որի մեջ զանազան խոստմունքներ են անում, երեխային, թե երբ նա կմեծանա, ինչ կբերեն նրա համար,— խոստանում են արծաթապատ զենքեր, ոսկենկար հագուստներ, հրեղեն ձի և այլն, և մայրական ջերմ բաղձանքներով լի երգի յուրաքանչյուր տունը վերջանում է հետևյալ հարց ու պատասխանով.—

«Դո՞ր բերեմ, դո՞ր բերեմ,—

«Ի Վանա, Ոստանա բերեմ»:

(Որտեղից կբերեմ, ո՞րտեղից կբերեմ,— խոստացած առարկան,— Վանից, Ոստանից կբերեմ):

Այդ երգը գոյություն է ունեցել Ոստանի փառավոր անցյալի հետ, այդ երգը լսելով, ես միշտ երևակայում էի Ոստանը մի մեծ վաճառաշահ քաղաք, որ լի էր աշխարհի բոլոր բարիքներով: Բայց երբ հասանք, երբ իմ առջև ներկայացավ ավերակների մի տխուր տեսարան, ես բոլորովին հիասթափ եղա իմ մանկական փայլուն երագներից: Ոստանում ոչինչ չէր մնացել: Մի քանի ողորմելի խրճիթներ միայն երևում էին ձորի մեջ, որոնց մեջ բնակվում էին նույնքան ողորմելի քրդեր:

Ի՞նչ նպատակով բերեց մեզ այստեղ Ասլանը,— մտածում էի ես, մի՞թե միշտ պետք է ավերակներ տեսնենք, մի՞թե այդ երկրում չկար մի բան, որ փոքր ի շատե մխիթարական լիներ:

Սարավանդի բոլորովին սպառվածքի վրա, որի ստորոտում ծփում էր ծովը, մենք ցած իջանք ձիաներից: Այդ գագաթը իր բարձր դիրքով իշխում էր բոլոր շրջակայքի վրա: Այստեղ էին թափված հին ամրոցի բեկորները, որոնց քարակույտը իմ վրա այն տպավորությունն էր գործում, կարծես դարերի կործանիչ սասանմունքից հետո, այժմ մի հսկայական քարեղեն կմախք իր վիթխարի գլուխը վեր էր բարձրացրել, տեսնելու, թե ի՞նչ էր կատարվել իր չորեքկողմում…

Ոստան կոչվում էին այն քաղաքները, որոնց մեջ կա՛մ թագավորի արքունիք կար, կա՛մ բարձր դիվան, ինչպես ոստանիկ կոչվում էին արքունիքում ծառայող ազնվականները: Այդ անունը ծագել է *ասթան* բառից, որ նշանակում է դուռն կամ շեմք:

Ոստանը Ռշտունյաց հզոր նախարարության մայրաքաղաքն էր: Բայց իր անմատչելի դիրքի պատճառով, որ մի կողմից պատսպարված էր ծովով, իսկ մյուս կողմից լեռներով,— Ոստանը, միևնույն ժամանակ, ծառայում էր և որպես ամուր բերդ:

Ռշտունյաց լեռնային աշխարհը մի ժամանակ սնուցանում էր իր մեջ իր ժայռերի նման ամուր և անխորտակելի մի ժողովուրդ: Նրա նախարարները Հայաստանի հարավային սահմանապահ զորքերի սպարապետի պաշտոնն էին վարում: Այդ պաշտոնը միայն Ռշտունյաց նախարարների արտոնությունն էր:

Ռշտունյաց աշխարհը տվել է մեզ երևելի հերոսներ, որոնք հայոց հին պատմության մեջ փայլուն անուն են թողել: Այստեղից էր Բարզափրան սպարապետը, որ Տիգրան երկրորդի օրերում մի արշավանք գործեց դեպի Պաղեստին և, հռոմայեցոց հետ պատերազմելով, ջարդեց, հալածեց նրանց, հետո տիրեց Երուսաղեմին: Այնտեղ Անտիգոնոսին թագավոր կարգեց Հյուրկանոս քահանայապետի և, միևնույն ժամանակ, արքայի փոխարեն: Այդ ձեռնտվության համար Բարզափրանը ստացավ Անտիգոնոսից, իբրև ընծա, հինգ հարյուր գեղեցիկ կին և հազար քանքար ոսկի: Իսկ Հյուրկանոս քահանայապետին հրեից բազմաթիվ գերիների հետ բերեց Հայաստան, բնակեցրեց Վան քաղաքում:

Այստեղից էր Մանաճիհր (Մանուչահր) քաջ նահապետը, որ Տրդատի և նրա որդի Խոսրովի ժամանակ հարավային զորքերի սպարապետ էր: Այդ նահապետի օրերում ավելի սաստկացել էր այն խուլ կռիվը, որ սկսվեցավ Լուսավորչի ժամանակից և տևեց մինչև նրա վերջին ժառանգի՝ Սահակ Պարթևի օրերը:— Դա նոր հաստատվող քահանայապետական և նախարարական իշխանության կռիվն էր: Դա հոգևոր իշխանության կռիվն էր, մի կողմից, և մարմնավոր իշխանության կռիվն էր, մյուս կողմից: Հոգևոր իշխանությունը, հոգևոր ագահությամբ, աշխատում էր իրավունքներ, արտոնություններ, կալվածքներ ձեռք բերել, և սահմանափակել թե՛ թագավորի, թե՛ նրա նախարարների իշխանությունը: Այստեղից ծագեց կռիվը: Նրա սկիզբը դրեց Լուսավորիչը: Եվ այդ կռվի մեջ զոհ գնացին՝ թե՛ ինքը Լուսավորիչը և թե՛ նրա բոլոր ժառանգները՝ Արիստակեսը, Վրթանեսը, Հուսիկը, Ներսես Մեծը և Սահակը: Իմ խոսքը Մանաճիհր Ռշտունու մասին էր: Դա մի արշավանք է գործում դեպի Ասորեստան և սուրբ Հակոբ Մծբնա հայրապետի վիճակից բազմաթիվ գերիներ է բերում, նրա ութն սարկավագների հետ: Ծերունի հայրապետը անձամբ գալիս է Մանաճիհրի մոտ, խնդրելու, որ արձակե գերիներին: Բայց խստասիրտ Մանաճիհրը, փոխանակ նրա աղաչանքը լսելու, նրան ավելի վշտացնելու համար, հրամայում է գերիներից ութն հարյուր հոգի՝ հայրապետի ութն սարկավագների հետ՝ նետել ծովը: Ասլանը ինձ ցույց տվեց այն տեղը, ուր կատարվել էր այդ եղեռնագործությունը: Դա Ոստանից ոչ այնքան հեռու մի ապառաժ հրվանդան էր, որի բարձրության վրա գտնվում էր Մանաճիհրի Մանակերտ անունով բերդը: Այդ բարձրությունից թափեցին ծովը խեղճ գերիներին:

Այստեղից էր Թեոդորոս Ռշտունին՝ յոթներորդ դարու հերոսը, որը արաբացոց անընդհատ արշավանքների ժամանակ, կայծակի նման Հայաստանի մի կողմից դեպի մյուսն էր թռչում, և հայոց արյան ծարավի արաբացոց հրոսակներին ջարդում էր, և երբեմն իր սուրը նենգավոր հունաց դեմ էր դարձնում:

Այստեղից էր հիշյալ Թեոդորոս իշխանի որդի Վարդ պատրիկը՝ հունաց ոխերիմ թշնամին, որը հունաց զորքերի Գայլ գետի շարժական կամուրջից անցնելու ժամանակ, կտրեց կամուրջի ծայրը, ամենքը հոսվեցան գետի մեջ, և մնացածներին կոտորել տվեց: Հույները այն աստիճան բարկացած էին այդ քաջի դեմ, որ կենդանության ժամանակ չկարողանալով վնասել նրան, մեռնելուց հետո որոնում էին հանգուցյալի գերեզմանը, որպեսզի ոսկորներից վրեժխնդիր լինեն: Բայց Հայոց-Ձորի երախտագետ ժողովուրդը, զգուշանալով հունաց չարությունից, Խորգոմ գյուղում, ծովի ափի մոտ, մի եկեղեցի կառուցին և քաջի մարմինը նրանում հանգուցին: Այդ եկեղեցին ծածկեցին հողով և կազմվեցավ մի բարձր բլուր, որի վրա կառուցին մի այլ եկեղեցի: Ոստանից փոքր-ինչ հեռու, Մահռաշտ բարձրադիր և զվարճալի գյուղում, մինչև այսօր նկատվում են Վարդ պատրիկի շքեղ

ապարանքների ավերակները: Այդ ծովեզրյա գյուղը քաջի ամառանոցն էր, իսկ Աղթամար կղզում գտնվում էր նրա հոր բերդը, որ հետո ժառանգեց որդին:

Գագիկ Արծրունին ավելի գեղեցկացրեց Ոստանը, նորոգելով և ամրացնելով հին բերդը, և իր համար փառավոր պալատներ կառուցանելով: Այդ բոլորը մի առանձին հիացմունքով նկարագրում է Վասպուրականի ոգելից պատմագիրը՝ Թոմա Արծրունին: Իմ նկարագրությունը շատ անգույն կլիներ նրա գեղարվեստական գրչի առջև: Ես թողնում եմ այդ, միայն մի բան չէ կարելի չհիշեցնել, որ Ոստանը Ռշտունյաց գավառի ամուր բերդ լինելուց հետո էր միևնույն ժամանակ նրա վաճառաշահ քաղաքը: Նա մի կողմից մոտ էր Դատվանի նավահանգստին, մյուս կողմից, այն մեծ քարավանի ճանապարհին, որ տանում է Վանից դեպի Մուշ և Բաղեշ: Այդ էր պատճառը, որ Ոստանի հովիտը մի ժամանակ ուներ մինչև հարյուր հազար հայ բնակիչ: Բայց տասնևհինգերորդ դարում Սկանդեր-բեկը, որ Հայաստանի մի մասին տիրելով, իրան կոչեց Շահարմեն (թագավոր հայոց) — այդ բարբարոսը, Վան քաղաքը ավերակ դարձնելուց հետո, Ոստանն էլ բոլորովին անմարդաբնակ դարձրեց: Նա կործանեց հին բերդը, կործանեց բոլոր ամրությունները,— նա կործանեց Գագիկի կառուցած պալատների մնացորդները: Այժմ Ոստանի փառքից, նրա հազարավոր հայ բնակիչներից, մնացել էին մի քանի քրդական խրճիթներ միայն: Այդ գետնափոր խրճիթների երդիկներից մուխ էր բարձրանում: Շների ձայնից մի խումբ երեխաներ, կանայք և աղջիկներ դուրս սողացին նեղ դռներից, և կտուրների վրայից սկսեցին նայել մեզ վրա: Մեկը բաժանվեցավ նրանցից, և հենված երկու թևքերի տակին առած երկու ցուպերի վրա, սկսեց կաղալով մոտենալ մեզ: Երբ հասավ, նա մի երկբայական հայացք ձգեց մեզ վրա, մի քանի րոպե կանգ առեց և ապա լուռ նստեց: Քուրդը առհասարակ քաղաքավարի է լինում, երբ հանդիպում է օտար մարդու, բայց նա մինչև անգամ չողջունեց մեզ: Երևի նա տատանվում էր, թե ինչ ձևով ողջունե, որ չվիրավորե մեզ, որովհետև մահմեդականը զանազան ձևերով ողջույններ ունի իր լեզվում, նայելով մարդու աստիճանին, ազգությանը, կրոնին և այլն: Նրան անհայտ էր, թե մենք ինչ մարդիկ ենք, այդ պատճառով բարվոք համարեց լուռ մնալ:

Սկզբում մենք նրան մուրացկանի տեղ ընդունեցինք, և նրա հնոտի հագուստը վկայում էր այդ: Բայց այդ հնոտիքի մեջ նշմարվում էր մի աչքի զարկող հպարտություն: Շալե գոտիի մեջ, կուրծքի վրա, խրած ուներ մի փոքրիկ խենջար, որի աբենոսյա սև կոթը զարդարած էր արծաթով և գունավոր քարերով: Այդ զենքը արդեն նշան էր նրա ազնվական ծագման:

Գետնափոր խրճիթից հայտնված ազնվականը, վերջապես խզեց իր լռությունը, հարցնելով.

— Ծխախոտ ունե՞ք:

— Ունենք,— պատասխանեց Մուրադը, որ լավ քրդերեն գիտեր:

— Հեռվից տեսա ձեզ, եկա մի փոքր ծխախոտ խնդրելու:

Մուրադը տվեց նրան բավականաչափ ծխախոտ, որը մեծ շնորհակալությամբ ընդունեց: Նա իսկույն վառեց ծխաքարշը, սկսեց ծխել: Երևում էր, որ երկար ժամանակ չէր ծխել:

Նա, դարձյալ հենված իր թևերի տակ առած ցուպերի վրա, սկսեց կաղալով դիմել նույն խրճիթը, որտեղից դուրս էր եկել: Բայց քառորդ ժամ չանցած, նա կրկին վերադարձավ իր հետ ունենալով մի այլ մարդ: Այդ վերջինը դրեց մեր առջև մի մաղ լի նոր թխած հացերով, որոնց մոտ դրած էր պանիր, որ մակարդված էր զանազան

անուշահամ բույսերով և սեր, որ երկու մատի հաստությամբ լավաշի ձև ուներ: Հպարտ ազնվականը չկամեցավ պարտավոր մնալ մեզ և բերեց մեզ համար մի լավ նախաճաշիկ: Մենք սկսեցինք ուտել:

— Դու ո՞ր ցեղից ես, քիրվա՛,— հարցրեց Մուրադը:

(Չգիտեմ ինչո՞ւ հայերը սովորություն ունեն քրդերին դիմել *քիրվա* բառով, որ նշանակում է կնքավոր:)

— Վըռշիկների,— պատասխանեց քուրդը մի առանձին բավականությամբ:

— Վըռշիկների՞,— կրկնեց Մուրադը մի մեծ գյուտ արածի նման,— դու գիտե՞ս, քիրվա, որ քո նախնիքը հայեր են եղել:

— Ես այդ չգիտեմ,— պատասխանեց քուրդը վիրավորված եղանակով,— ես այդքանը միայն գիտեմ, որ իմ նախնիքը այդ բերդի տերերն էին:

— Հենց այդ բերդի տերերը հայեր էին:

Քուրդը դարձյալ չհամոզվեցավ և ցույց տվեց մեզնից հեռու մի քանի փառավոր մահարձաններ, որ ծածկված էին մատռաձև գմբեթների ներքո և ավելացրեց.

— Դրանք իմ նախնյաց շիրիմներն են:

— Այդ շիրիմներից շատ առաջ էին քո հայ նախնիքը,— ասաց Մուրադը, պնդելով իր խոսքը:— Նրանք կոչվում էին Ռշտունիք և այդ երկիրը կոչվում էր Ռշտունյաց աշխարհ: Այդ Ռշտունյաց նախարարներից առաջ եկավ վռըշիկների քրդական ցեղը, ինչպես մեր Մամգունյան նախարարներից առաջ եկավ քրդերի մամըկանի ցեղը: Եվ ուրիշ շատ քրդական ցեղեր կան, որոնք հայոց ծագումից են:

— Կարելի է,— պատասխանեց քուրդը կիսահամոզական եղանակով:— Մենք առաջ մի հոր որդի էինք և եղբայրներ էինք, բայց սատանան մեջ մտավ, երկպառակություն ձգեց, խառնեց նրանց լեզուները և միմյանց չհասկանալով, բաժանվեցան:

— Դու հայր Ադամի և Նոյի ժամանակների բանն ես խոսում,— ընդհատեց Մուրադը:

— Ես գիտեմ և մոտ ժամանակների գործը, ինչ որ իմ աչքով եմ տեսել, ինչ որ իմ ականջով եմ լսել,— խոսեց քուրդը, ցույց տայով իր հմտությունը:— Այդ բերդը, ճշմարիտ է, մի ժամանակ պատկանում էր հայ իշխանների. այստեղ տիրում էր Ղարա-Մելիքների տոհմը: Նրանք շատ բարեկամ էին մեզ հետ. մի մորից ծնված եղբայրները այնքան սիրով չէին լինի, ինչպես մենք էինք: Մենք միասին էինք գնում թշնամու դեմ պատերազմելու, մենք միասին էինք բաժանում թշնամուց բերած ավարը: Բայց սատանան լցրեց իմ հորեղբոր սիրտը չար խորհուրդներով, նա խաբեությամբ Մելիքին իր մոտ հյուր կանչեց և ընթրիքի ժամանակ հրամայեց սպանել: Հետո եկավ Մելիքի ամբողջ ընտանիքը սրից անցկացրեց և տիրեց այդ բերդին:

Կարծես ես լսում էի մի ծանոթ պատմություն. անհամբերությամբ ընդհատեցի քրդի խոսքը, հարցնելով.

— Ի՞նչպես էր կոչվում ձեր հորեղբայրը:

— Խան-Մահմուդ:

— Իսկ այն Մելի՞քը, որին խաբեությամբ սպանել տվեց ձեր հորեղբայրը:

— Միր-Մարտո: Նա իմ լավ բարեկամս էր, նրա յոթը որդիներից ամենակրտսերին, Կարոյին, ես եմ եկեղեցի տարել մկրտության ժամանակ: Բայց բոլորին կոտորեցին, ոչ մեկը չմնաց…

Կարոյի անունը տալու ժամանակ ես նայեցի Ասլանի երեսին: Նա աչքով արեց, որ լռեմ: Քուրդը շարունակեց.

— Այո՛, նա իմ լավ բարեկամս էր, շատ անգամ միմյանց հետ «հաց ենք կտրել», շատ անգամ միմյանց հետ որսի ենք գնացել: Նա աննման մարդ էր: Նրա պես քաջ, նրա պես մեծահոգի չկար ոչ միայն հայ ազնվականների մեջ, այլ բոլոր քուրդ բեկերի մեջ:

Երևի, ազնիվ քուրդը շատ կուրախանար, եթե ասեի, որ նրա լավ բարեկամի որդին, իր կնքել տված Կարոն, ազատվել էր սարսափելի կոտորածից և այժմ կենդանի էր: Ես այդ կոտորածի պատմությունը լսել էի շատ առաջ, Կարոյի տատ Զումրուդից, երբ նա մահվան անկողնի մեջ պատմում էր անբախտ որդու հոր ցավալի արկածը:

— Բայց աստված պատժեց իմ հորեղբորը,— առաջ տարավ քուրդը,— իր բարեկամի և դաշնակցի հետ այդպես վատությամբ վարվելուց հետո և խաբեությամբ այդ բերդին տիրելուց հետո երկար վայելել չկարողացավ…

— Ի՞նչպես,— հարցրեց Մուրադը:

— Նա միացավ այնուհետև Ջեզիրեին տիրող անգութ Բեդիր-խան-բեկի հետ, և երկուսը միասին սկսեցին անխնա կերպով ասպատակել, ավերակ դարձնել Վանի, Մուշի, մինչև Դիարբեքիրի նահանգները, և ամեն տեղ, որտեղ հայ կար, սրից անցկացնել: Այդ լսելով Ստամբուլի հայոց խալիֆան (Մատթեոս պատրիարքը) բողոքեց սուլթանին և սուլթանը բազմաթիվ զորքերով ուղարկեց Օսման փաշային՝ պատժելու ապստամբներին: Օսման փաշան եկավ, նա ոչինչ անել չէր կարող, եթե հայերը չօգնեին նրան:

— Հայերը ինչո՞վ օգնեցին,— հարցրեց Մուրադը:

— Ստամբուլի հայոց խալիֆան թուղթ էր գրել Վանի, Մուշի, Դիարբեքիրի և մյուս նահանգների հայոց բոլոր հոգևոր առաջնորդներին, որ իրանց ժողովրդի հետ օգնեն սուլթանի զորքերին: Այդ ժամանակ հայտնվեցավ Մելիք-Միսաքը և հայոց կամավոր զորքերի գլուխն անցավ: Քաջությամբ պատերազմելով թե՛ Բեդիր-խան-բեկի և թե՛ իմ հորեղբոր՝ Խան-Մահմուդի հետ, նա երկուսին էլ հաղթեց, երկուսին էլ ձերբակալեց, և հետո հանձնեց Օսման փաշայի ձեռքը: Երկուսին էլ իրանց ընտանիքների հետ տարան Ստամբուլ, այնտեղ բանտարկեցին. հետո Բեդիր-խան-բեկին աքսորեցին Կրետե կղզին, իսկ իմ հորեղբորը՝ Խան-Մահմուդին, իր ընտանիքի հետ աքսորեցին Սիլիստրե: Եվ այսպես Մելիք-Միսաքը առեց իր վրեժը:

Վերջին խոսքերը արտասանեց ծերունի քուրդը մի առանձին դառնությամբ: Մենք ամենքս միմյանց երեսին նայեցինք. մենք դարձյալ լսում էինք մի ծանոթ անուն, բայց ինձ գոնե անծանոթ պատմություն:

— Այդ կռիվների մեջ,— ավելացրեց նա,— ես ստացա այն վերքերը, որ բոլորովին անդամալուծեցին ինձ, և այն օրից այս երկու փայտերի վրա եմ ման գալիս: Հետո եկավ օսմանցին, այդ բերդը քարուքանդ արեց և մեր տոհմի բոլոր նշանավոր քաջերին մաշեց բանտերի մեջ: Ինձ խնայեցին, որպես արդեն անպետք և կիսամեռ մարդու…

Խան-Մահմուդին և Բեդիր-խան-բեկին նվաճելուց և նրանց աքսորելուց հետո, իրավ է, քրդական բռնապետությանը վերջ տրվեցավ արևելյան Հայաստանում և մանավանդ Տարոնի և Վասպուրականի նահանգներում, և օսմանցոց իշխանությունը այդ ժամանակից ավելի հաստատվեցավ այդ կողմերում: Բայց ինձ ուրախացնում էր այդ պատմության այն մասը, որ հիշյալ երկու գազանների անկումը կատարվել էր մի հայ հերոսի ձեռքով, այն հայի, որ մեր ամենի դաստիարակը և սիրելին էր:— Դա էր Պարսկաստանում հասարակ որսորդի անվան տակ ծածկված խորհրդավոր մարդը — Ավոն, որի իսկական անունը Մելիք-Միսաք էր, որը բոլորից թաքցրած ուներ, թե՛ իր գործերը, թե՛ իր անցյալ մեծությունը և թե՛ իր ո՛վ կամ ի՛նչ մարդ լինելը:

Ես չեմ մոռացել, ընթերցող, բայց դու ևս հիշո՞ւմ ես այն ցավալի պատմությունը, որ ս. Տիրամոր տոնախնբության ժամանակ, իր վրանում, իմ քեռի Պետրոսը պատմում էր Որսորդի կյանքից: Նա ասում էր, որ Որսորդը հասարակ մարդ չէ, թե նա Սասունի և Մոգաց երկրի զորավոր մելիքն է եղել, թե այնտեղ ունեցել է իր սեփական բերդը,— պատմում էր, թե ինչպես հայ տանուտերերը, միացած իրանց հոգևոր առաջնորդի հետ, դավաճանում են նրան, մատնելով մի «քուրդ իշխանի» ձեռքը,— պատմում էր, որ դավադրության ժամանակ նշանակվում է Զատկի ավագ շաբաթ գիշերը, և երբ Մելիքը իր ընտանիքով բոլորել էր ճրագալույցի սեղանի շուրջը, հանկարծ նրա ամրոցը պաշարվում է բազմաթիվ թշնամիներով: Նրա ամրոցը հրդեհում են, ընտանիքը կոտորում են, այդ միջոցին կրակի և արյան միջից հափշտակում է հավատարիմ Մըհեն իր վիրավորված տիրոջը և, իր հզոր ուսերի վրա բարձած, տեղափոխում է նրան Պարսկաստան, ուր ապրում է նա անհայտության մեջ, Որսորդի անվան ներքո: Իմ քեռի Պետրոսը ծպտյալ Որսորդի պատմությունը հասցրեց մինչև այստեղը, էլ ուրիշ ոչինչ չասաց: Բայց այժմ ծերունի քրդի պատմությունից երևաց, որ նա կրկին հայտնվել է իր իսկական Մելիք-Միսաք անունով, և հայոց կամավոր զորքերի գլուխն անցած, կռվել է երկու քուրդ բռնապետների հետ, երկուսին էլ հաղթել է, և կալանավորելով, հանձնել է Օսման փաշայի ձեռքը, և իր «վրեժը» առել է: Ի՞նչ վրեժ: Երբ այդ մասին հարցրի, ծերունի քուրդը պատասխանեց.

— Բեդիր-խան-բեկը նույն դավաճանությամբ վարվեցավ իր բարեկամ Մելիք-Միսաքի հետ, որպես իր հորեղբայր Խան-Մահմուդը՝ Միր-Մարտոյի հետ: Երկուսն էլ խաբեությամբ ոչնչացրին իրանց լավ դաշնակիցներին և տիրեցին նրանց բերդերին: Մելիք-Միսաքը Սասունի և Մոգաց երկրի իշխանն էր և լավ բարեկամ Բեդիր-խան-բեկի հետ: Բայց այդ վերջինը այնքան ցած, այնքան վատ գտնվեցավ, որ մի գիշեր անակնկալ կերպով հարձակվեցավ նրա տան վրա և բոլորին սրից անցկացրեց: Մելիքին նույնպես սպանված էին համարում, բայց տարիներից հետո, կարծես գերեզմանից վերադարձավ նա և իր վրեժը առեց…

Երկու հայ իշխաններ, մեկը՝ Ոստանի տերը, մյուսը՝ Սասունի տերը, միևնույն ճակատագրական հարվածքի տակ խորտակվել էին,— երկուսն էլ ստոր դավաճանության զոհ էին դարձել: Ասլանը, երևի, գիտեր այդ բոլորը. նա ոչինչ չէր խոսում, միայն լռությամբ լսում էր ծերունի քրդի խոստովանությունը, որը, դառն փորձերից խրատված, խոսում էր մեզ դառն ճշմարտություններ…

— Տեսնո՞ւմ ես, քիրվա,— վերջապես խոսեց Ասլանը,— դուք ձեր բարեկամներին ու դաշնակիցներին այդպես վատությամբ ոչնչացնելով, ինքներդ միայնակ ու անզոր մնացիք, և դուք էլ ոչնչացաք: Դուք խաբեությամբ տիրեցիք ձեր բարեկամների ամրոցներին, բայց ձեր ձեռքումն էլ չմնացին նրանք, եկավ օսմանցին և խլեց ձեզանից: Եթե դուք հաշտ մնայիք, դրանցից և ոչ մեկը չէր պատահի:

Ասլանը ծերունի քրդի,— այդ անբախտացած ազնվականի,— սրտիցն էր խոսում: Նրա վշտահար դեմքն ավելի մռայլվեցավ, ավելի թախծալի կերպարանք ստացավ:

— Ճշմարի՛տ է, շատ ճշմարի՛տ,— պատասխանեց նա տխուր ձայնով:— Մենք մեր ձեռքով մեր տունը քանդեցինք… Բայց ո՞վ կռվացրեց մեզ, ո՞վ բարեկամների ու դաշնակիցների մեջ երկպառակություն սերմանեց:— Նույնիսկ օսմանցին: Ես բոլորը չպատմեցի ձեզ, պարոն, թե ինչպես օսմանցի գործակատարները գաղտնի կերպով գրգռում էին մեզ հայերի դեմ… Բայց մենք այնքան միամիտ եղանք, որ չհասկացանք, որ դրանով մեր կործանումն են նախապատրաստում…

— Հիմա նույնը չե՞ն անում, հիմա ձեզ չե՞ն գրգռում հայերի դեմ…

— Գրգռում են և ավելի վատ կերպով… բայց մեր հիմար ազնվականները չեն հասկանում: Չեն հասկանում և մեր հոգևորականները: Օրինակի համար, կարելի է լսած լինեք, որ մեզանից ոչ այնքան հեռու, Արտոսի ստորոտներում, կենում է մեծ շեյխը: Նա աստծո սուրբ մարդն է,— ես շատ մեղք արած կլինեմ, եթե այդ մասին ամենափոքր կասկած ունենամ,— բայց կրքոտ մարդ է: Գիտե՞ք, ո՛րքան անգամ նրան գրգռել են հայերի դեմ… Որքա՞ն անգամ նա ոչնչացրել է հայոց ամբողջ գավառներ… Եվ բոլոր քրդերը լսում են նրա ձայնը և խոնարհվում են նրա հրամանին: Բավական է նրան՝ մի առավոտ վեր կենալ ու ասել, թե մարգարեն երազում հրամայեց բոլոր գավուրներին կոտորել: Իսկույն քրդերը կառնեն իրանց զենքերը և կհետևեն նրան: Եթե «Գուշակողը» չլիներ, նա շատ վատ բաներ կաներ…

— Ո՞վ է այդ «Գուշակողը»,— հարցրեց Ասլանը, որպես թե չէ ճանաչում:

— Ասում են՝ Արաբիայի կողմերիցն է, մարգարեի հայրենիքից: Բոլորովին սուրբ մարդ է. ամեն բան գիտե. ինչ որ հարցնեք, նա կասե ձեզ: Մինչև անգամ շեյխը, որ մեծ իմաստություն ունի, շատ բաներ նրանից է հարցնում:

— Ուրեմն, դուք գոհ չե՞ք օսմանցիներից:

— Ի՞նչ ունենք գոհ լինելու: Նրանք եկան, մեր տան մեջ երկպառակություն ձգեցին. մեզ թշնամացրին ոչ միայն մեր դրացի հայերի հետ, այլ թշնամացրին քուրդը քրդի հետ: Այժմ չեք գտնի մի ցեղ, որ մի այլ ցեղի հետ հաշտ լինի: Եղբայրը եղբոր միսն է ուտում: Բայց այդպես չէր առաջ. սեր կար, միաբանություն կար, ամեն մարդ իր չափը ճանաչում էր, փոքրը գիտեր մեծի պատիվը, իսկ մեծը գիտեր փոքրին հոգ տանել: Այժմ ամեն բան փոխվել է: Այն մարդը, որ երեկ իմ ախոռատան մեջ ծառա էր, իմ ձիաների աղբն էր մաքրում, այսօր իրան *մուդիր*, *գայմագամ*, *փաշա* է կոչում, և ես պետք է գնամ նրան գլուխ վեր բերեմ: Ավելի լավ չէ՞ր լինի, որ ես այդ գլուխը գերեզման տանեի, քան թե անպատվեի…

Բայց մի բան չպետք է ուրանալ, որ օսմանցին գալուց հետո, երկիրը բավական խաղաղացավ:

— Ի՞նչպես խաղաղացավ. ավելի վատթարացավ: Առաջ մենք մեր երկրի տերն էինք և գիտեինք մեր տան բանը,— ճանաչում էինք՝ ո՞վ է լավը, ո՞վ է վատը և եթե մեկը մի չար գործ էր կատարում, իսկույն իմանում էինք, և հանցավորը իր արժանի պատիժն էր ստանում: Բայց հիմա գողը մնում է իր համար ազատ, և բոլորովին անմեղ մարդկանց տանում են դնում ծակը, և այն էլ գիտե՞ք ինչի համար, որ փող առնեն հետո բաց թողնեն: Դատավորը երկու կողմից ևս շահվում է. նախ, գողի հետ ընկեր լինելով, բաժանում է նրա հետ կողոպուտը և նրան չի դիպչում, երկրորդ, անմեղ մարդկանց չարչարում է՝ նրանց կողոպտելու համար: Այստեղ արդարությո՞ւն կա: Երկրի համարյա բոլոր կառավարիչները ամեն գործերի մեջ այդպես են վարվում:

Նա կրկին լցրեց իր ծխաքարշը, սկսեց ծխել: Կարծես, դառն ծխի հետ աշխատում էր նա թափել իր սրտի մաղձը:

— Լավ էր առաջ,— շարունակեց նա,— շատ լա՛վ… Մեր անասունները ազատ-համարձակ մեր սարերի վրա արածում էին. մեր վրանները, որտեղ ցանկանում էինք, այնտեղ էինք կազմում: Երկիրը դեպի ամեն կողմ բաց էր մեր առջև: Հիմա ամեն տեղի վրա սահման դրվեցավ. այստեղը, ասում են թագավորական է, այնտեղը, չգիտեմ, ումն է պատկանում,— և բոլորից վատթարն այն է, որ ամեն բանի վրա հարկ է դրվել. մի ամսական փոքրիկ գառն անգամ, աստծո խոտը արածելու համար, պետք է հարկ վճարե: Ո՞վ է տեսել մի այդպիսի բան:

Նա նայեց իր շուրջը, տեսնելու՝ արդյոք ուշադրությամբ լսում են իրան, թե ոչ: Այդ միջոցին նա ինձ ներկայանում էր, որպես մի քարոզիչ, որը և՛ խոսում էր, և՛ դիտում էր իր ունկնդիրների դեմքի արտահայտությունները, թե ի՛նչ ազդեցություն է գործում նրանց վրա իր քարոզը:

— Ամեն ինչ, որ լավ էր, բարի էր, խլեցին մեզանից,— առաջ տարավ նա,— փոխարենը տվեցին զեխություն, շռայլություն, անբարոյականություն միայն: Մենք ապրում էինք մեր նախահարց պարզ կյանքով, կերակրվում էինք մեր անասունների յուղով ու պանրով, խմում էինք մեր լեռների մաքուր ջուրը: Մեզ սովորացրին փլավ ուտել, շերբեթ ու ղահվե խմել, և որ ավելի չարն է՝ արաղ խմել: Մեր կանայք մեր անասունների բուրդից իրանց ձեռքով էին պատրաստում մեր հագուստը, թե՛ ազնվականի կինը և թե՛ գռեհկի կինը երբեք չէին խորշում թելից ու ասեղից. իլիկն ու ջահրեն երկուսի ձեռքում ևս ամբողջ օրը պտտվում էր: Հիմա մեր կանայք օսմանցու հարեմի ծույլ և փափուկ խաթուններ են դարձել, իսկ մեզ սովորեցրին մետաքս հագնել, կարմիր մահուդ հագնել, ոսկի թելերով զարդարել մեր հագուստը: Մեր կանայք այժմ սովորել են իրանց երեսները ներկել զանազան դեղերով, սովորել են աստծո շնորհած գեղեցկությունը կեղծել, խարդախել: Մեր տղամարդիկ չեն ամաչում կանանց նման իրանց մազերին գույն տալ հինայով և իրանց աչքերը սևացնել սուրմայով: Երբ որ զուգված, զարդարված մի երիտասարդ է անցնում, նստած գեղեցիկ նժույգի վրա,— ինքը փայլում է ոսկու մեջ, ձին արծաթապատ ասպազենքով, զենքերը վառվում են թանկագին ակներով,— ամեն կողմից մատով ցույց են տալիս նրան, ընկերն ընկերին ասում է. «տե՛ս, ի՛նչ քաջ երիտասարդ է»… Բայց ո՞ր կռվի մեջ է մտել այդ կնամարդը, վերք տվել ու վերք ստացել,— այդ ոչ ոք չէ հարցնում: Առաջ մի երիտասարդ մինչև մի քանի տասնյակ մարդիկ սպանած չլիներ, մինչև իր մարմնի վրա մի քանի վերքեր ստացած չլիներ, նրան աղջիկ չէին տալ. և մեր աղջիկները անպատվություն կհամարեին երկչոտին ու անարիին իրանց փեսա ընտրել: Հիմա դրանց նայող չկա. հիմա երիտասարդի քսակն են շոշափում, որ տեսնեն՝ քանի ղուրուշ ունի: Ճշմարիտ քաջությունը կորել է, և նրան փոխարինել է օսմանցու թուլամորթությունը: Այժմ առաջվա քուրդը չէ մնացել, և եթե մարդիկ կան, այն ևս կարելի է գտնել հին սերունդի մեջ, նորը բոլորովին փչացած է: Մեր վաղեմի երիտասարդները իրանց մարմնի վրա կրած սպիները իրանց զարդն էին համարում և այդ նշաններով պարծենում էին: Բայց այժմյանները հոգի են տալիս օսմանլվի շքանշանի համար, և գժվածի նման վազ են տալիս պաշտոնների ու աստիճանների ետևից: Եվ օսմանցիք, օգուտ քաղելով մեր փառասերների այդ մոլորություններից, վատերին առաջ են քաշում, իսկ լավերին ետ են մղում…

Ոստանի ավերակների վրա, ծերունի քրդի բերանով խոսում էր նահապետական ժողովրդի խաբված ոգին: Մեկի ներկայացուցիչը բողոքում էր, մյուսի ներկայացուցիչը՝ Ասլանը, լռությամբ լսում էր…

Վերջինը հեգնությամբ հարցրեց.

— Լավ է, որ դու չհրապուրվեցար օսմանլվի փայլուն շքանշաններով:

— Ես ավելի պատվավոր համարեցի այսպես աղքատ, այսպես չքավոր ապրել այն գետնափոր խրճիթի մեջ, իմ քաջ նախահարց շիրիմների մոտ, քան թե իմ կուրծքը զարդարել օսմանլվի շքանշանով, որ ստանում են շողոքորթները, կեղծավորները, խաբեբաները միայն, վաճառելով իրանց խիղճն ու պատիվը: Ես այժմ ունեմ հինգ այծ և դրանով բախտավոր եմ: Այդ հինգ այծը փոխարինում է այն հարյուրավոր անասուններին, որ խլեց ինձանից օսմանցին: Այդ բոլորից հետո՝ գնա՛լ և օսմանլվի ոտները լիզե՛լ,— քա՛վ լիցի,— քաղցածությունից կմեռնի ծերունի Օմար-Աղան և իրան չի ստորացնի…

Նա կրկին անգամ շնորհակալություն հայտնեց ստացած ծխախոտի համար, վեր կացավ և, իր երկու ցուպերի վրա կաղալով, սկսեց ընթանալ դեպի իր խրճիթը:

— Ահա՛ քրդական բռնապետության ճյուղակտուր եղած կոճղը…— ասաց Ասլանը, ծերունու ետևից նայելով: Հետո դարձավ դեպի մեզ այդ խոսքերով.

— Ես իսկապես հակառակ եմ ազնվականության գաղափարին, բայց կցանկանայի, որ հայերը ազնվականներ ունենային: Երբ ժողովուրդը զարգացած չէ, երբ նա դեռ մի ուրիշ գիտակցության չէ հասած, ազնվականությունը միշտ հարմար միջնորդ է դառնում նրա բողոքը արտահայտելու, երբ ինքը՝ ազնվականությունը, նույն ժողովրդի հետ ճնշված դրության մեջ է գտնվում և նրա տառապանքներին մասնակից է լինում: Նայեցե՛ք այդ ծերունի քրդին, այդ ոտքից և ձեռքից զրկված անդամալույծին հազարավոր քրդեր չեն կարող այն մտածել, ինչ որ դա է մտածում, հազարավոր քրդեր չեն կարող այն զգալ, ինչ որ դա է զգում: Իր խրճիթի մարած օջախի նման մխում է նրա սիրտը, երբ իր ցեղի ազատությունը կորած է տեսնում: Երբ մենք ազնվականություն ունեինք, երբ տակավին բնաջինջ եղած չէին նախարարական տները, ամեն անգամ, երբ ժողովրդի կողմից բռնության դեմ բողոք էր հայտնվում, նրա նախաձեռնությունը տալիս էր նախարարությունը: Եվ մեր հայրենիքի թշնամիները,— հույները, պարսիկները, արաբացիք, վերջը թաթարները,— լավ հասկանալով ազնվականության նշանակությունը, սկսեցին հետզհետե ոչնչացնել նախարարական տները, որպեսզի կատարելապես տիրել կարողանան մեր հայրենիքին:

Ինձ համար այժմ շատ բան պարզ էր: Ծերունի քրդի պատմությունից ես լիակատար տեղեկություն ստացա Որսորդի անձնավորության մասին, գիտեի նրա փառավոր անցյալը, գիտեի նրա աղետավոր անկումը, գիտեի նրա խորհրդավոր ներկան: Ինձ համար պարզ էր և Ղարա-Մելիքների հեղհեղուկ պատմությունը. ես ճանաչում էի այդ ազնվական տոհմի վերջին ժառանգին — Կարոյին,— ես գտնվում էի նրա հոր դժբախտ ամրոցի փլատակների մոտ, այն ամրոցի, որ սկսյալ Ռշտունի նախարարներից, քսան և մեկ դարերի ընթացքում, մի ձեռքից մյուս ձեռք անցնելով, վերջը հասել էր նրա հորը և որից դավաճանությամբ հափշտակել էին քրդերը: Կարոն նույնպես գիտեր այդ բոլորը, գիտեր իր ծագումը, գիտեր թե ինչ էին կորցրել իր հայրերը: Բայց ես հավատացած էի, որ նա նույն եռանդով կգործեր և նույն անձնվիրությամբ կաշխատեր սրբելու նեղյալների արտասուքը, եթե գիտենար, որ ինքը մի անհայտ գռեհկի որդի է: Երբ այդ միտքը հայտնեցի Ասլանին,— երբ Կարոյին օրինակ բերելով, ասացի, որ տոհմային ազնվականությունը միակ պայմանը չէ, որ մարդ ձգտե դեպի ազատությունը,— նա պատասխանեց.

— Այո՛, այդ հեշտ կլիներ, եթե ամեն մարդ Կարոյի սիրտը և զարգացումը կունենար:

Բայց ո՞րտեղից ստացավ նա այդ զարգացումը,— ես այդ մասին ոչինչ չգիտեի: Չգիտեի նաև նրա մյուս ընկերների՝ Ասլանի և Սագոյի կրթության գաղտնիքը: Այդ

երիտասարդները իմ աշակերտակիցներն էին, առանց մի բան սովորելու, թողեցին տեր Թոդիկի դպրոցը և անհայտացան, բայց տարիներից հետո հայտնվեցան, բոլորովին փոխված, բոլորովին այլ մարդ դարձած: Մինչև այսօր մի առիթ չէր ներկայացել, որ հարցնեի Ասլանից, թե ի՞նչ հրաշք էր այդ: Երբ այժմ խնդրեցի նրանից պատմել, նա պատասխանեց.

— Ես մի օր բոլորը կպատմեմ քեզ, բայց դեռ ժամանակը չէ…

Ոստանա հովիտը մի երկայնաձև ձորադաշտ է, որ սեղմված է Արտոս լեռան գրկում: Ամեն տեղ սփռված են պատմական հին հիշատակարաններ: Իշխանական բերդերի, ամրոցների փշրանքներն են մնացել: Պահպանվել են միայն սրբության տաճարները: Կրոնասեր ժողովուրդը առաջինը զոհեց՝ երկրորդը չկորցնելու համար:

Մենք երկար չմնացինք Ոստանա բերդի ավերակների մոտ: Երբ ձիաները բավական հանգստացած էին, երբ մենք և‌ս բավական կազդուրված էինք ճանապարհի հոգնածությունից, Ասլանը շտապեցրեց, թե պետք է ուղի ընկնել: Ես վերջին անգամ հայացք ձգեցի ավերակների վրա, վերջին անգամ նայեցի դեպի ծովը: Ինձ թվում էր, թե հենց այդ րոպեում, նրա պարզ հայելիի մեջ, ես տեսնում էի այն գույնզգույն ցոլացմունքները, որ արտափայլում էին, անդրադարձնելով Գագիկի շքեղ դահլիճների գույնզգույն ապակիների շողքերը և նրա օդաբեր հովանոցների ոսկեզօծ նկարները: Ինձ թվում էր, որ ալիքների մեղմ մեղեդիի մեջ ես լսում էի արձագանքը մի քաղցր նվագածության, որով Ռշտունյաց գուսանները զվարճացնում էին Վասպուրականի հզոր իշխանի ուրախության ժամերը: Սահում են դարեր, անցնում են ժամանակներ: Տեսարանը փոխվում է: Վարդագույն ապակիների վարդագույն շողքերի փոխարեն՝ հոսում են արյան վարդագույն վտակներ: Այլևս ոսկեզօծ նկարների փայլը չէ, որ վառվում է արևի ճառագայթների առջև,— այդ հրդեհի բոցն է, որ լափում է փառքի և իշխանության բոլոր վայելչությունները: Լաց ու կոծ էր լսվում… աղմուկը սաստկանում է… կրակի լուսավորության առջև նշմարվում է դաշույնների փայլը… մարդիկ անորոշ ուրվականների նման խլրտում են… ոմանք ընկնում են, ոմանք կանգնում են… դահլիճների կործանվող կամարները ծածկում են դիակները…Կրակն ու կոտորածը ոչնչացնում է Ղարա-Մելիքների հիշատակը… բայց մի կին, մի երեխա կուրծքին սեղմած, դուրս է սողում կրակի միջից և թաքչում է մերձակա անտառում… Հետո թանձր ծուխը ցած է թողնում իր սև վարագույրը և եղերական տեսարանը անհետանում է մթության մեջ…

— Դու շատ զգայուն սիրտ ունես,— ասաց Ասլանը, երբ նշմարեց իմ արտասուքը:— Նստիր ձիդ, գնանք, հեռանանք, դեռ այդպիսի ավերակներ շատ կտեսնես…

Երբ ճանապարհ ընկանք, հեռվից տեսանք այդ կրակի ու կոտորածի հեղինակներից մեկին — ծերունի Օմար-Աղային:— Նա դեռ նստած էր իր խրճիթի կտուրի վրա և արևի ճառագայթներով տաքացնում էր սառած մարմինը: Նա էլ նկատեց մեզ և, հեռվից գլուխն ու ձեռները շարժելով, բարի ճանապարհ մաղթեց:

Այնօր մենք անցանք Ոստանա ամբողջ հովիտը: Ուր և գնում էինք, մեզ հանդիպում էին ամայի վանքեր, ամայի եկեղեցիներ և մենավոր մատուռներ: Լեռները, ձորերը, անտառների խուլ, անմարդաբնակ խորքերը լի էին այդ սրբավայրերով: Ի՞նչ էր որոնում նրանց մեջ Ասլանը,— ես չգիտեմ, միայն ինձ հայտնի էր, որ նա վանքերի շատ սիրահար չէր: Իլի գյուղում մենք տեսանք աստվածածնի «Քառասուն խորան» կոչված վանքը: Գագիկ Արծրունին հիմնեց այդ մեծաշեն վանքը իր քառասուն հոյակապ տաճարներով: Նրանցից միայն մի քանիսն էին մնացել, մյուսները կործանվել էին: Այստեղ դիմում էին հայոց ապաշխարողները և իրանց մեղքերի քավության համար «քառասունք» էին կատարում, այսինքն՝ քառասուն տաճարների յուրաքանչյուրի մեջ մի-մի պատարագ էին մատուցանել տալիս, իհարկե, լավ վճարելով վարդապետներին: Բայց ես հավատացած էի, որ եթե այդ վանքի

քառասուն տաճարների յուրաքանչյուրի մեջ ամեն օր քառասուն անգամ պատարագ մատուցանեին, հազիվ կարող էին քավել նրա հիմնողին այն մեծ մեղքից, որ նա կատարեց, ապստամբվելով Բագրատունիների դեմ և Վասպուրականում իր համար մի նոր, հակաթոռ թագավորություն հիմնելով: Դրանով անհնազանդ Արծրունին, արաբացոց տագնապի ժամանակ, երբ Հայաստանը ավելի մեծ զորության պետք ուներ, Բագրատունիների ուժը ջլատեց, իսկ իր հիմնած թագավորությունը միայն մեկ դար կյանք ունեցավ…

Ոստանա հովտի մեջ, Արտոսի կողքի վրա, կանգնած է մի այլ վանք, և իր գեղեցկադիր, բարձրահայաց դիրքով գրավում էր ճանապարհորդի ուշադրությունը: Նա «Քառասուն-խորանի» նման մեծաշեն, փարթամ և փառահեղ չէ, նա համեստ է և փոքրիկ: Բայց ամեն մի հայ չէ կարող՝ առանց նրա փոշիները համբուրելու՝ անցնել նրա մոտից, երբ գիտենա, թե ում գերեզմանն է դրած նրա անշուք տաճարում: Նրան կոչում են Չաղար (Չարահան) ս. Նշանի վանք, որ շինված է ս. Աստվածածնի անունով: Մեծ ջերմեռանդությամբ մենք մտանք այդ վանքը և համբույր մատուցինք մի մոռացված գերեզմանի: Նրա մեջ հանգչում էր Ավարայրի հերոսների երգիչը — Եղիշեն:

Ոստանա լեռնահովտի մեջ կա մի այլ սրբավայր, որը նույնքան սիրելի է ամեն մի հայի սրտին, որպես վերոհիշյալ վանքը: Ծովեզերքից կես մղոն հեռավորությամբ, կանաչազարդ, հարթ դաշտի մեջտեղում, բարձրանում է մի գեղեցիկ բլուր: Բարդի և ուռենի ծառերը իրանց վարսավոր ճյուղերի ներքո հովանավորում են շինականների խրճիթները, որ գտնվում են այդ բլուրի վրա: Դա Նարեկ (Նոր-եկք) գյուղն է: Նա փոքրիկ է, բայց ամեն հայի համար նվիրական է, որովհետև ծննդավայրն է մի պաշտելի մարդու: Գյուղի մեջտեղում, բլուրի ուղիղ գագաթի վրա, կանգնած է մի հոյակապ վանք: Բավական հեռավորությունից երևում է այդ վանքը, և նրան տեսնելիս, ճանապարհորդի սիրտը սկսում է բաբախել: Խորին, սրբազան ջերմեռանդությամբ խաչակնքում է նա իր դեմքը և ծունր է խոնարհեցնում: Այդ վանքի մեջ դրած է հայոց ոգելից սաղմոսերգուի՝ ս. Գրիգոր Նարեկացու մարմարյա գերեզմանը:

Այդ դաշտը և նրա շրջակայքը լի են այն բոլոր նվիրական տեղերով, որ կապված են Նարեկացու հիշատակի հետ: Խարզիթ գյուղի մոտ, ծովափնյա ճանապարհի եզրում, մեզ ցույց տվին մի գոգավորված ժայռ: Այդ գոգավորությունը մարդու մարմնի նմանություն ուներ: Նրա մասին պատմում էին, թե Նարեկացին այստեղ հովիվ եղած ժամանակը՝ մի անգամ ավազակները հարձակվեցան նրա վրա. նա փախավ և դիմեց դեպի հիշյալ ժայռը, նրա մոտ պատսպարան գտնելու համար: Ժայռը բաց արեց իր քարեղեն գիրկը և ընդունեց սուրբին:

Բայց բոլորից հետաքրքիր են այն քարանձավները, որոնք մի ժամանակ Նարեկացու ճգնարանն են եղել: Նարեկ գյուղից մի ժամ հեռավորությամբ, ծովեզրի մոտ, բարձրանում է մի այլ քարաժայռ: Նրա մեջ կան մի քանի մեծ և փոքր բնական այրեր: Բացի այդ բնական այրերից, նույն բարձրադիր ապառաժի մեջ փորված են թվով ինը սենյակներ: Այդ վիմափոր սենյակները անհիշելի ժամանակների գործ է: Նրանք երկու հարկերի են բաժանված, որոնցից հինգը ներքին հարկն է կազմում, իսկ չորսը վերին հարկը: Հայոց հին սորամուտների (տրոգլոդիտների) այդ քարեղեն բնակարանը այնքան անմատչելի, այնքան բարձր է գետնի մակերևույթից, որ Նարեկացու նման հրաշագործ անձը միայն կարող էր մուտք գործել այնտեղ: Գլխավոր դուռը բացվում է ներքնահարկի առաջին սենյակի մեջ, հետո մեջե-մեջ դռներով տանում է դեպի մյուս սենյակները և հանում է մինչև վերին հարկը: Յուրաքանչյուր սենյակ պատուհանաձև լուսամուտ ունի, որ նայում է դեպի ծովը: Վերնահարկի սենյակներից մեկը ձևացնում է մի փոքրիկ մատուռ, քարեղեն սեղանով: Այստեղ էր բնակվում Նարեկացին, այստեղ էր գրում իր սքանչելի գիրքը:

Այստեղից տեսավ նա ս. Աստվածամորը, աստվածորդի մանուկը գրկում, որի տեսությանը այնքան մեծ տենչանքով փափագում էր նա: Փոքրիկ Առ-Տեր կղզու վրա կանգնած էր նրա տենչալին, և ամբողջ ծովը վառվում էր հրեղեն ճառագայթներով: Իր քարայրից ցած իջավ Նարեկացին, մոտեցավ ծովեզրին և, որպես ցամաքի վրա, նա ջրի վրայով ընթանալով, ոտքով անցավ ծովը և հասավ կղզուն: Աստվածամայրը տվեց երանելի սուրբի գիրքը աստվածորդի մանուկին, ասելով — «Առ տեր»,— այսինքն՝ առ քո տիրոջը: Եվ այն օրից այդ փոքրիկ կղզին կոչվեցավ Առ-Տեր:

Հին Ռշտունիքը այժմ երկու գավառների է բաժանված՝ Գավաշ և Կարճկան, երկուսն էլ կոչվում են իրենց համանուն ավանների անունով, որոնց մեջ գավառապետներ են նստած: Սկսյալ Հայոց-Ձորից, որը Գավաշի հյուսիս-արևելյան սահմանն է, հիշյալ երկու գավառները՝ Վանա ծովակի հարավային եզերքով՝ տարածվում են մինչև Մոգաց և Բզնունյաց աշխարհները: Ճանապարհը նույնպես ոլորվում է ծովակի եզերքով, երբեմն բոլորովին մոտենում է, երբեմն փոքր-ինչ հեռանում է, բայց երբեք ծովեզերքից չէ բաժանվում: Նա այնքան նեղ է, այնքան դժվարին ելևէջներ ունի և այնքան սարսափելի են նրա անցքերը, որ իզուր չստացավ իր Կապան անունը: Հայոց երկրի բազմաթիվ կապանների թվում՝ Ռշտունյաց կապանը դժվարանցանելիներից մեկը պետք է համարել: Ամեն մի քայլում, բավական են մի քանի հրացանավորներ, որ փակեն մի ամբողջ քարավանի անցքը և, վանդակի մեջ բռնված թռչունի նման, չթողնեն, որ տեղից շարժվի: Ճանապարհը պտտվում է նեղ ձորերի միջով, որոնց երկու կողմերից ևս բարձրանում են անհնարին ապառաժներ: Եվ այդ սատանայական լաբիրինթոսը քարավանի միակ ուղին է, որ տանում է դեպի Բաղեշ և Մուշ: Մարդ խեղդվում է անձկության մեջ: Իսկ երբ դուրս ենք գալիս նեղ կիրճերից և Մուշի ընդարձակ դաշտին ենք հասնում, այն ժամանակ միայն հորիզոնը բացվում է մեր առջև, սկսում ենք ազատ շունչ առնել:

Ռշտունիք, այդ *ռաշիդների* (քաջերի) աշխարհը, սնուցել է՝ իր խիստ և վայրենի բնության համեմատ՝ մի ինքնուրույն ժողովուրդ: Նրա բնակիչները՝ իր մթին անտառների և ահարկու լեռների նման՝ կոշտ, կոպիտ և անխորտակելի են: Հսկա բնությունը ծնել է և հսկա ժողովուրդ: Այստեղ միայն կարելի է տեսնել սահմանակից Հայոց-Ձորի վաղեմի տիտանների վիթխարի սերունդը, որ իր քաջությամբ բնավ ետ չի մնում դրացի սասունցիներից: Չէ կարելի տեսնել և չհիանալ այդ առողջ, կենդանի, մշտազվարթ ժողովրդով: Նա երբեք չէ թառամում, որպես իր ծմակների մշտականաչ կիպարիսը: Նա երբեք չէ ծերանում, որպես իր թավուտների դարևոր եղևնին: Հզոր կուրծքը մերկ, զորավոր բազուկները հոլանի, գլխին թաղիքյա կոնաձև *քոլոզը* դրած, և նրա վրա գույնզգույն թաշկինակներ փաթաթած, որոնց ծայրերը՝ ոսկեգույն մազերի երկայն գիսակների հետ՝ թափվում են լայն թիկունքի վրա, հագին մի կարճ *քազախա* (կուրտիկ) հագած, որի ամրությունը, երկաթյա զրահի նման, կարող է դիմանալ ամենասուր դաշույնի առջև, ներքին հագուստը մազեղեն զոլ-զոլ շալվարի մեջ հավաքած,— դուք կտեսնեք Ռշտունյաց լեռների այդ զավակին, երկար նիզակը ձեռին, թեթև վագրի նման, անցնում է մի ապառաժից դեպի մյուսը: Նրա նիզակը, որ երկու ծայրերում ևս սուր երկաթներ ունի, ծառայում է և՛ իբրև զենք, և՛ իբրև նեցուկ, որ գետնի մեջ ցցելով, հենվում է նրա վրա և ոստումներ է գործում սարսափելի վիհերի վրայից: Այդ բոլորը այնքան արագ է կատարվում, որ դու կարծում ես, թե նա թռչունի նման թևքեր ունի և օդի մեջ սլանում է: Նրա թաղիքյա փափուկ տրեխների տակերը ամբողջապես գամած են սրածայր բևեռներով, որ չսահին, որ չսայթաքին ժայռերի վրա ման գալու ժամանակ: Գոտիի մեջ խրած ունի մի կեռ խենջար, որի կոթը դերձանով կապած է պատյանին. այդ կապանքը նրա համար է, որ մինչև արձակելը՝ նրա բարկությունը անցնի, իսկ երբ մերկացրեց սուրը՝ գործողությունը արդեն վճռված է, մինչև արյան մեջ շզովացնե, իր տեղը չի դնի: Թշնամու հետ անգութ է, իբրև գազան, բարեկամի հետ բարի է, իբրև հրեշտակ: Իր հովիտների բարձրահասակ սոսիների նման գեղեցիկ է նա: Երբ նայում է քո երեսին, դու զմայլվում ես: Նրա կապուտակ աչքերը այնքան լուսափայլ, այնքան ընդարձակ և

այնքան խորն են, որպես այն կապուտակ ծովը, որ ծփում է նրա աշխարհի մոտ: Նրա այրական դեմքը այնքան արձակ և այնքան պայծառ է, որպես Ռշտունյաց պարզ երկինքը: Ռշտունյաց պարզ երկնքի նման, այդ խաղաղ դեմքը հանկարծ մռայլվում է, մթնում է, շանթեր է արձակում, երբ խաղաղ եղանակը փոխվում է, և տեղի է ունենում վերահաս փոթորիկը… Այդ միջոցին նա չէ խոսում, այլ որոտում է, և այդ որոտման ձայնի մեջ դու լսում ես նախկին հայի ուժեղ բարբառը իր բոլոր կոպիտ և անտաշ ձևերով: Բայց այդ կոշտ հնչյունները քո հոգուն այնքան ազդու են, քո սրտին այնքան կախարդիչ են, որ որքան էլ և ընկած լինեիր դու հոգով, հանկարծ ներշնչվում ես մի անբացատրելի ոգևորությամբ… Եվ երբ դու տեսնում ես, թե ինչպես նա իր միակ զենքով՝ նիզակով, կռվում է մթին ծմակից դուրս պրծած ամեհի վարազի հետ, իսկույն հին առասպելը կենդանանում է քո մտքում, և դու հիշում ես «վիշապաքաղ» Վահագնին, հայոց անպարտելի Հերքուլեսին, հիշում ես, և սքանչանում ես նրա արժանի ժառանգների քաջության վրա, որոնք, գազանների հետ բնակվելով, սովորեցին գազանների հետ մարտնչել…

ԻԴ

ՄԻ ԳՅՈՒՂ ՌՇՏՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԻՑ

Օրը երեկոյանում էր: Նախորդ գիշերը, «Գուշակողի» տաղավարի մոտ, բոլորովին անքուն էինք մնացել, իսկ այսօր անդադար ճանապարհորդում էինք: Մեր ձիաները հոգնածությունից դժվարությամբ էին շարժվում. մենք ևս հանգստանալու սաստիկ պետք էինք զգում:

— Իմ ձին ընկնելու վրա է,— ասացի Մուրադին, որ իմ կողքով գնում էր:

— Մինչև հիմա նրանք էին մեզ տանում, շուտով կսկսենք մենք նրանց տանել,— պատասխանեց նա ծիծաղելով:

Ես նրա կատակը չհասկացա, բայց երբ մի փոքր առաջ գնացինք, նա դարձավ դեպի մեզ այդ խոսքերով.

— Ցած իջե՛ք, այսուհետև անկարելի է ձիով գնալ, եթե ոչ, մենք և թե՛ մեր ձիաները կգլորվենք անդունդի մեջ և կկորչենք:

Մենք հնազանդվեցանք մեր առաջնորդի խորհրդին: Եվ իրավ, մի նեղ շավիղ իջնում էր դեպի անդնդային ձորը, և նրա խորքից կրկին բարձրանալով, ոլորվում էր լեռան առապարներով, հետո կորչում էր անտառի մթության մեջ: Այդ ընդարձակ վիհից պետք է անցնեինք մենք, որի հատակը նայելիս՝ մարդու գլուխը պտտվում էր, աչքերը սևանում էին:

Մեզանից յուրաքանչյուրը, իր ձիու սանձից բռնած, խարխափելով իջնում էր դեպի ձորը: Ձին նրա ետևից՝ ամբողջ մարմնով դողդողալով, գլուխը ցած խոնարհեցրած, փռնչալով դեպի ամեն կողմն էր նայում, թե ոտը ո՛ր քարի վրա դնե, որ ցած չգլորվի: Մի քանի ժամ այսպես մաքառում էինք ժայռերի, մացառների և միմյանց մեջ հյուսված թուփերի հետ, մինչև ձորի խորքից դուրս եկանք մի բարձր սարավանդի վրա: Մեր առջև բացվեցավ մի սքանչելի հորիզոն:

Հազար անգամ ավելի տաժանական տանջանքներ ես պատրաստ կլինեի հանձն առնել, եթե առաջուց գիտենայի, թե դեպի ուր է տանում մեզ այն ոլորապտույտ շավիղը, որ ընտրեցինք մենք, խոտորվելով երթևեկության մեծ ճանապարհից: Մեր դուրս եկած սարավանդը, կարծես, մի բարձր դիտանոց լիներ, որտեղից երևում էին

գեղեցիկ տեսարաններ: Ստորոտում ծփում էր լայնածավալ ծովակը, որի եզերքը, կանաչազարդ շրջանակի նման, պատած էին շքեղ բուսականությամբ: Մեղմ հովիկը շնչում էր մետաքսանման փափուկ խոտերի վրա, և երեկոյան ճառագայթներից լուսավորված, փայլուն ծղոտները հանդարտ կերպով տատանվում էին, ծածանվում էին, և իրանց բաց-կանաչագույն ալիքներով միախառնվում էին ծովակի արծաթյա ալիքների հետ, որ զգուշությամբ զարկվում էին եզերքին, կարծես վախենալով, միգուցե խանգարեն ծաղիկների խորհրդավոր խաղաղությունը:

Վերևում, լեռան լանջաց վրա, սփռված էին ոչխարների հոտերը, իսկ ներքևում, հարթ մարգագետնի վրա,— որը ծովի ափերով, կանաչագույն լայն ժապավենի նման, ձգվում էր հեռու և հեռու,— արածում էին ձիաների երամակները և արջառների նախիրները: Մի փոքրիկ գետակ շտապելով դուրս էր վազում ձորի միջից և մի բան որոնողի նման, մի քանի պտույտներ գործելով արոտամարգերի վրա, քմահաճ երեխայի պես կարկաչում էր, տրտնջում էր, պատահած քարերի կուրծքին էր խփում, պատահած թուփերի արմատներն էր քանդում և, բավական աղմուկ բարձրացնելուց հետո, մի առանձին գոհունակությամբ մտնում էր ծովը, այնտեղ ձայնը կտրում էր, կարծես մի մեծ գործ էր կատարել: Նրա պարզ, թափանցիկ հատակի գույնզգույն խիճերը ժպտում էին, ծիծաղում էին նրա միամիտ չարության վրա: Տեղ-տեղ երևում էին փոքրիկ լճակներ: Ինձ թվում էր, որ այդ ապստամբները, որևիցե դժգոհության պատճառով, բաժանվել էին ծովից և նրա ափերի մոտ իրանց համար անկախ, փոքրիկ ավազաններ էին հիմնել: Բայց գոնե միանային նրանք, այն ժամանակ դարձյալ մի միտք կունենար: Այդ դրության մեջ, բավական էր արևի մի քանի օրվա տապն ու կրակը, որ լափեր, ցամաքացներ նրանց ունեցած ջուրը: Եղեգնաբույսերը այնքան առատությամբ աճել, բազմացել էին նրանց եզերքի վրա, որ փոքր էր մնում բոլորովին ճնշեին, բոլորովին խեղդեին այդ լճակները իրանց խտության մեջ: Նրանք ծծում էին բոլոր կենսական հյութը, նրանք արգելում էին մաքուր օդի անցուդարձը, և այդ պատճառով, այդ ողորմելի լճակները, անշարժության մեջ մնալով, ճահիճների ձև էին ստացել:

Չնայելով, որ ամառվա սաստիկ տոթերի ժամանակն էր, բայց այստեղ գարունը կարծես դեռ նոր էր սկսվում: Կեռասի ահագին ծառերը, որ վայրենի դրության մեջ աճելով, ձգվել էին մինչև երկինքը, դեռ նոր էին հասցնում իրանց վարդագույն պտուղները: Ընկուզենիները, որոնք իրանց բարձր լայնատարած ճյուղավորությամբ լցրել էին ձորերի խորքերը,— այդ հսկա ընկուզենիները դեռ պտուղ չէին ցույց տալիս: Վայրենի կակաչը, պուտը, ամանկոտրուկը, գարնան այդ առաջին ավետաբերները, դեռ նոր էին իրանց կարմիր գլխիկները բարձրացրել խոտերի ճոխ խտության միջից: Կարմիր կակաչների նման պտտվում էին կարմիր հարսներ ու աղջիկներ: Նրանց «լե՛-լե՛ի» ձայնը, միախառնվելով թռչունների երեկոյան երգեցողության հետ, մի առանձին կենդանություն էին տալիս շրջակայքին: Նրանք զանազան բանջարներ էին քաղում, այն բանջարները, որ մեր կողմերում վաղուց արդեն քաղել ու չորացրել էին ձմեռվա համար:

Մեր հանդեպ՝ սարի կուրծքի վրա՝ կպած էր մի գյուղ, որ իր գեղեցկադիր բարձրությունից նայում էր դեպի ծովը: Այդ գյուղը, կարծես, կտրված լիներ Ռշտունյաց աշխարհից, ապրում էր իր լռիկ, մնջիկ առանձնության մեջ, հրճվում էր ծովի ալիքներով, շնչում էր իր լեռների թարմ, հովասուն օդը և վայելում էր իր շրջակայքի բարիքները, որ այնքան շռայլությամբ պարգևել էր առատաձեռն բնությունը: Մենք դիմում էինք դեպի այդ գյուղը:

Արևը մտնելու վրա էր: Նրա պայծառ ճառագայթները մի առանձին փայլ էին ստանում, շողշողալով ծառերի լայն, հյութալի տերևների վրա: Ինձ թվում էր, որ ամբողջ շրջակայքը ծփում էր, թրթռում էր մի սքանչելի ոսկեզօծության մեջ: Ոսկեզօծ էին երևում կարմիր հարսներն ու աղջիկները, որ պտտվում էին մարգերի մեջ,

ոսկեզօծ էին երևում ձիերն ու կովերը, որ ներքևում արածում էին արոտների մեջ, ոսկեզօծ էին երևում այծերն ու ոչխարները, որ վերևում թռչկոտում էին մի ժայռից դեպի մյուսը, ոսկեզօծ էին երևում շինականները, որ երկար գերանդիները ուսերին դրած, վերադառնում էին խոտհունձից. ոսկեզօծ էր երևում գյուղական փոքրիկ եկեղեցու գմբեթը, որ իշխում էր մյուս շենքերի վրա, ոսկեզօծ էր երևում և ծիրանի ծովը, որ ծավալվում էր հեռու ու հեռու, և ապա միախառնվում էր նույնպես ոսկեզօծ երկնքի հետ: Ես առաջին անգամն էի տեսնում, թե ո՛րպիսի հրաշալի պատկեր է նկարում արևի երեկոյան վերջալույսը, երբ նա իր արարչագործ վրձինի տակ ունի ընդարձակ ջուր, պարզ երկինք, կանաչազարդ դաշտավայր և գեղեցիկ լեռներ՝ ալիքավոր, գեղագրական բարձրություններով:

Արևը մտավ, և կախարդական պատկերը սկսեց փոքր առ փոքր անհետանալ մեր աչքերից: Մի քանի պատառ ձյունագույն ամպեր միայն պահպանել էին իրանց վրա սքանչելի ոսկեզօծությունը՝ այն ևս եղծվեցավ, և մոխրագույն մռայլը տիրեց ամեն տեղ:

Ես նայեցի Ասլանի երեսին. նրա դեմքը նույնպես մռայլված էր: Ի՞նչ էր մտածում նա,— ես չգիտեմ: Բայց ես մտածում էի, ինչո՞ւ այդ բոլորը, որ այդքան գեղեցիկ է, որ այդքան հիանալի է, ուր ամեն արարած այդքան ուրախ է, այդքան զվարթ է, ուր ամեն ինչ ժպտում է, ծիծաղում է, միայն մա՛րդը — բոլորի տերն ու իշխանը — չէ կարող վայելել մշտաձև ուրախություն, չէ կարող կատարելապես երջանիկ լինել:

Երբ հասանք գյուղը, Մուրադը խնդրեց ցույց տալ ռեսի (տանուտերի) տունը: Մի քանի երեխաներ, մրցելով միմյանց հետ, թե որը շուտով կկատարե այդ ծառայությունը, առաջ վազեցին:

Մենք գտանք ռեսին, Դավիթ մարգարե-թագավորի նման, նստած էր իր տան կտուրի վրա: Նրա մոտ էր և շինական քահանան: Մի խումբ այլ մարդիկ ևս շրջապատել էին նրանց. ալևորները նստած էին, երիտասարդները հարգանքով կանգնած էին ոտքի վրա: Խոսում էին շինական զանազան հարցերի մասին: Ինչպես երևում էր, այդ կտուրը ռեսի բացօթյա դատարանն էր, որտեղ քահանայի և գյուղի ալևորների խորհրդով վճռվում էին զանազան վեճեր: Դատը կատարվում էր հրապարակավ: Մասնակցում էին և հասարակության ներկայացուցիչները: Երկու ծայրեր շոշափում էին միմյանց՝ պարզ նահապետական դատավարության և կատարելագործված ռամկապետական դատավարության ծայրերը:

Երբ մեզ տեսան, խոսակցությունը դադարեցրին: Ռեսը ոտքի ելավ և ողջունելով մեզ, խնդրեց նստել: Բայց երբ նկատեց, որ մենք անշարժ մնացինք, կարծես մի բան մտաբերելով, դարձավ դեպի իր մոտ եղողներից մեկը, ասելով.

— Ինչպես երևում է, այդ մարդիկ մեզ նման գետնի վրա նստելու սովոր չեն, գնա ասա, որ մի շոր բերեն, ձգեն այստեղ:

Եվ իրավ, նրանք մերկ կտուրի վրա էին նստած, բայց այդ կտուրը ռեսի ժրաջան հարսների շնորհիվ այնքան մաքուր էր, որ փոշու մի հյուլե անգամ անկարելի էր գտնել այնտեղ:

Շուտով մի խումբ կանայք մեզ մոտ վազեցին. մեկը շտապով սկսեց ջրով սրսկել կտուրը, մյուսը ավելում էր, երրորդը տարածում էր ծանր օթոցները, իսկ չորրորդը, երևի, նոր էր մտածում, թե ինքը ինչո՞ւ համար եկավ, և կանգնած, շփոթված նայում էր իր շուրջը: Հետո էլ իր համար գործ գտավ, լուռ մոտեցավ Ասլանին, ձեռքով հասկացրեց, որ թույլ տա կոշիկները հանել:

— Նեղություն մի կրեք,— հրաժարվեցավ Ասլանը,— իմ կոշիկները դժվարությամբ են հանվում:

Պատասխանը կարծես վիրավորեց կնոջ ինքնասիրությունը, մի հեգնական ժպիտ երևաց նրա կարմիր թշերի վրա, և առանց Ասլանի թույլտվությանը սպասելու, բռնեց նրա երկարավիզ կոշիկներից, և ուժեղ ձեռքով այնպես դուրս քաշեց, փոքր էր մնում, որ ոտքն էլ հետը տանե:

Այն գեղեցիկ օթոցները, որ տարածեցին, իրավ, շատ մեղք կլիներ՝ նրանց վրա ճանապարհի փոշեպատ կոշիկներով նստել, բացի դրանից, այդ մի անքաղաքավարություն էր, որ տեղացիների աչքում շատ խորթ պիտի երևար:

Այնտեղ գտնված երիտասարդները, որ դրացիներ էին և բոլորովին ուրիշ գործով էին եկած ռեսի մոտ, որպես իրանց տան գործը համարելով, սկսեցին մեր ձիաների խուրջինները և թամքերը ցած բերել, և տարան հանգստացնելու նրանց: Շուտով հավաքվեցավ մեր շուրջը մի հարցասեր բազմություն, ամեն սեռի և ամեն հասակի, որոնք հեռվից հետաքրքրությամբ նայում էին մեզ վրա, մատով ցույց էին տալիս միմյանց և զանազան սրամիտ նկատողություններ էին անում իրանց բարբառով:

— Այդ մարդու քոլոզը սունկի նման չէ՞, Մկո,— հարցնում էր մի տղա, ցույց տալով Ասլանի եվրոպական լայնեզրյա գլխարկը:

— Ուղիղ սունկի նման է,— պատասխանում էր Մկոն, որպես իր չարաճճիկ ընկերների մեջ մի մեծ հեղինակություն:— Բայց դու շալվարին նայի՛ր, կասես փայտի վրա հագցրած կեղև լինի:

Կտուրը, որի վրա նստած էինք մենք, իր բարձրությամբ հազիվ որոշվում էր գետնի մակերևույթից, որովհետև տունը գետնափոր էր և մտել էր լեռան կողքի մեջ, որը զառիվայր դիրք ուներ: Գյուղի բոլոր տները այդ դիրքով էին շինված. մեկի կտուրը մյուսի բակն էր կազմում, և այսպես աստիճանաբար իջնում էին ցած, մինչև ձորի խորքը: Եթե ներքևից մարդ նայելու լիներ դեպի լեռան զառիվերը, կտեսներ, որ տները, միմյանց վրա շարված լինելով, ներկայացնում են մի մեծ սանդուղք, որ նույնպես աստիճանաբար բարձրանում է մինչև սարի կատարը: Ինձ շատ անգամ էր պատահել տեսնել, որ լեռնային երկրներում համարյա բոլոր գյուղերի համար ընտրել էին այսպիսի անհարմար և անմատչելի տեղեր: Երևի, մշտական երկյուղը ստիպել էր խույս տալ հարթ դաշտերից և հովիտներից: Ինչ հիանալի գյուղի տեղ կարող էր լինել այն ծովեզրյա գեղեցիկ մարգադաշտը, որ երևում էր մեր առջև: Երբ այդ մասին նկատեցին ռեսին, նա պատասխանեց.

— Մեր ծովը գժություններ շատ ունի, նա սովորել է լափել, կլանել իր եզերքի մոտ գտնված բնակությունները:— Հետո նա պատմեց հենց իր հասակում պատահած անցքերը, որ ծովը բարձրանալով, որքան գյուղեր, անդաստաններ ծածկել էր ջրի տակ:— Իսկ հին ժամանակներում,— ավելացրեց նա,— ամբողջ քաղաքներ, բերդեր ու վանքեր են ջրասույզ եղել:

Ռեսը ծեր մարդ չէր. նա քառասուն տարեկան հազիվ կլիներ. թե՛ մորուքի և թե գլխի մազերի մեջ ոչ մի հատ ճերմակ չէր նշմարվում: Հաղթանդամ տղամարդ էր նա, որպես սովորաբար լինում են այդ երկրի լեռնցիքը, բավական համակրական և բարի դեմքով: Հագնված էր ճոխ և փառավոր կերպով, որից երևում էր, որ նյութապես ևս շատ հարուստ էր նա: Գոտիի մեջ խրած ուներ մի խենջար, փղոսկրյա կոթով, որի վրա քանդակած էին զանազան նկարներ՝ մի առյուծ, որ կռվում էր փղի հետ և մի կապիկ, որ երկյուղից փախել և ծառի վրա էր բարձրացել, և այնտեղից երկչոտ կերպով նայում էր կռվի հանդեսի վրա: Մեծ եղավ իմ զարմանքը, տեսնելով, որ ռեսի

մոտ նստած ալևոր քահանան ևս իր գոտիի մեջ խենջար ուներ խրած: Քահանա և զե՛նք,— դա ինձ շատ տարօրինակ երևաց: Մյուս բոլոր գյուղացոց մեջ ևս, որ շրջապատել էին մեզ, չէր կարելի գտնել մեկին, որ այդ զենքը չունենար:

Հենց առաջին անգամից իմ աչքին զարկեց և այն, որ ռեսը բնավ ստրկական ողջագուրանքով և անթիվ «բարով եք եկել»-ներով չձանձրացրեց մեզ, որպես սովորություն է տեսել արևելքում: Նա բավական սառնությամբ ընդունեց մեզ: Մեկ ուրիշը այդ սառնությունը կարող էր վերաբերել կա՛մ նրա հպարտությանը և կա՛մ նրա անքաղաքավարի կոպտությանը: Բայց ո՛չ այս, ո՛չ այն: Նա պարզ մարդ էր, սովոր չէր սեթևեթի, բացի դրանից, մեր անակնկալ հայտնվիլը նրան կասկածանք պատճառեց, մանավանդ, որ մենք մեր մասին ծանոթություն չտվեցինք նրան: Նա ինքն ստիպված եղավ Ասլանի մասին հարցնել.

— Այդ պարոնը, երևի ֆրանկ է:

— Ֆրանկ է,— պատասխանեց Մուրադը:

— Հայերեն իմանո՞ւմ է:

— Չէ իմանում:

— Ապա ի՞նչ լեզվով է խոսում:

— Թուրքերեն գիտե:

— Լավ է, մենք էլ շատ ու քիչ իմանում ենք այդ լեզուն, լուռ չենք մնա:— Հետո նա դարձավ դեպի Ասլանը, հարցնելով.

— Դուք երևի, ընկուզենու կոճղ կամ մազեր գնելու համա՞ր եք եկած մեր կողմերը:

Ասլանը շփոթված մնաց այդ խոսքերից, թե ի՞նչը ստիպեց նրան այդ տեսակ հարց առաջարկել: Վերջը հասկացվեցավ, որ նրանք սովոր էին ֆրանկներ տեսնել միայն այն ժամանակ, երբ գալիս են ընկուզենու կոճղ կամ կանանց մազեր գնելու: Այստեղ ֆրանկների՝ այսինքն ֆրանսիացիների անունով էին ընդունում ամեն մի եվրոպական հագուստ հագած բախտախնդիր մարդու, որ օտար երկրներից գալով, մուտք են գործում այսպիսի աշխարհից անջատված և խուլ տեղերում, գյուղացիներին խաբելու համար:

— Ոչխարի և այծի ընտիր բուրդ է գտնվում մեր գյուղում,— ավելացրեց ռեսը:

— Ես վաճառական չեմ,— պատասխանեց Ասլանը,— ես բժիշկ եմ:

Բժշկի անունը մի ուրիշ տեղ կարող է ընդհանուր ուրախություն պատճառել, բայց այստեղ ոչինչ ազդեցություն չունեցավ: Երևում էր, որ իրանց մաքուր օդի և ջրի շնորհիվ բժշկի կարոտություն չունեին:

— Իմ ընկերը վաճառական է,— ասաց Ասլանը, ցույց տալով Մուրադի վրա:— Նա ձեր ունեցած բաները կգնե:

— Այո, կոճղ և ոչխարի բուրդ կգնեմ ես,— ասաց Մուրադը,— բայց կանանց մազեր ինձ պետք չեն:

Ֆրանկները, բաղեշցի հայերն ու հրեաները սովորացրել էին դրանց այդ անաբարոյականությանը՝ միօրինակ կերպով խուզել թե՛ իրանց ոչխարների բուրդը և թե՛ իրանց կանանց գլխի մազերը, և վաճառքի նյութ դարձնել:

— Ինչո՞ւ մազեր չեք գնում,— հարցրեց այնտեղ նստողներից մեկը,— այստեղ շատ «աղվոր» մազեր կան, ճիշտ այնպիսի մազեր, որպիսին սիրում են ֆրանկները:

— Աղջի, մոտ ե՛կ,— ձայն տվեց նա կանանց շարքում կանգնած մի օրիորդի, որոնք հեռվից լսում էին մեր խոսակցությունը:

Ամոթխածությունից աղջիկը տեղից չշարժվեցավ. նրա մոտ եղող կանայք սկսեցին ծիծաղելով առաջ հրել նրան: Վերջապես, գլուխը քարշ գցած, ժպտալով, կարմրելով մոտեցավ նա: Չէր կարելի առանց հիացմունքի նայել նրա ոսկեգույն երկայն գիսակների վրա, որոնք հաստ հյուսերով իջնում էին մինչև կրունկները: Այս տեսակ խիստ և խարտյաշ մազեր ես տեսնում էի միայն այդ կողմերի լեռնցիների մեջ: Զարմանալի էր այդ մազերի բնական փայլը: Եթե լվացվեին նրանք, եթե սանրվեին, եթե նրանց վրա խնամք տարվեր որպես վայել էր,— այն ժամանակ այդ տեսակ մազերը կարող էին կնոջ գեղեցկության ամենաթանկագին զարդը լինել:

— Ո՞րքան արժեն այդ տեսակ մազերը,— հարցրեց Մուրադը:

— Երկու ղուրուշ, միշտ այդ գնով ենք վաճառել,— պատասխանեց մազերի նմուշը մեզ ցույց տվողը:

Երկու ղուրո՛ւշ, գիտե՞ք որքան է,— մոտավորապես տասն կոպեկ: Ասլանը վրդովվեցավ:

— Ամոթ չէ՞, որ այդքան չնչին վճարների համար դուք այլանդակում եք ձեր կանանց գլուխները:

Հանդիմանությունը ազդեցություն չունեցավ:

Նմուշը ցույց տվող գյուղացին բավական սառնասրտությամբ պատասխանեց.

— Այստեղ մազերը շատ շուտով են աճում, պարոն, այդ աղջկա մազերը երկու տարի չի լինի, որ կտրել են, այժմ նայեք, ո՛րքան աճել են:

Մազերի հարցը դեռևս երկար կարող էր զբաղեցնել մեզ, եթե գյուղացիներից մեկը երեխայի նման ձեռքը չտաներ դեպի Ասլանի ժամացույցի շղթան, հարցնելով.

— Այդ ի՞նչ բան է:

Ասլանը դուրս բերեց ժամացույցը և ցույց տվեց նրան:

— Մասնատուփ է,— շտապեց իր կարծիքը հայտնել քահանան, առանց մտածելու, որ այդ մարդը ո՛չ վարդապետ է և ո՛չ տերտեր, որ իր հետ սուրբ հաղորդության մասնատուփ ման ածե:

— Ոչ, ժամացույց է,— նրա սխալը ուղղեց ռեսը, ավելացնելով, որ մի այդպիսի ժամացույց նա մի ժամանակ տեսել է Աղթամարի հոգևոր տերի մոտ:

Ռեսի վերջին խոսքը մի մեծ առհավատչյա էր Ասլանի անձնավորության նշանակությունը բարձրացնելու գյուղացիների աչքում, որովհետև այն իրը, որ կրում էր նա, իրանց երկրում ուներ միայն Աղթամարի կաթողիկոսը:

Ասլանը բաց արեց ժամացույցը, սկսեց բացատրել նրանց, թե ինչպես նրանով իմանում են ժամերը: Ամենքը հավաքվեցան նրա շուրջը և զարմացած նայում էին: Ավելի զարմացնում էր նրանց ժամացույցի ձայնը: Վերջը մի հանդուգն երիտասարդ խլեց Ասլանի ձեռքից, վազեց դեպի կանանց խումբը, որ նրանց էլ ցույց տա: Ես չկարողացա իմ ծիծաղը զսպել, տեսնելով, թե նրանք ինչպես խլխլում էին միմյանց ձեռքից, տանում էին դեպի իրանց ականջը և լսում էին ձայնը, տանում էին դեպի իրանց քիթը և հոտ էին քաշում: Բոլորովին հրաշք պետք էր համարել, որ ժամացույցը նրանց հետաքրքիր ձեռքերից ազատվելով, կրկին անվնաս իր տեղը հասավ:

Գյուղի նախիրը սկսել էր վերադառնալ արոտից: Շրջակայքը մի առանձին կենդանություն ստացավ բազմաթիվ անասունների բառաչմունքից, կովերը ծանրաբեռնված ստինքներով, հազիվ կարողանում էին շարժվել, գեր ու պարարտ ոչխարները, ահագին դմակների ծանրության պատճառով, նույնպես կորցրել էին իրանց կայտառությունը: Ես լսել էի, բայց այժմ միայն աչքով տեսա, որ այդ կողմերի ոչխարներից շատերի դմակները այնքան մեծ էին, որ կապել էին փոքրիկ սայլակների վրա, և այդ խեղճ անասունները, իբրև իրենց պարարտության մեղքը, անհնարին դժվարությամբ քարշ էին տալիս իրանց ետևից: Վազվզում էին միայն թեթև այծերը: Ես առաջին անգամն էի տեսնում այդ տեսակ գեղեցիկ այծեր, երկայն, փափուկ և գանգուր մազերով: Այդ այծերի մազն է, որ տալիս է այն ընտիր շալեղեն գործվածները, որ արդյունաբերում է Ռշտունյաց աշխարհը: Մատակ ձիաները, իրանց սիրուն քուռակների հետ, կարծես ծովից դուրս եկած «հրեղեն նժույգներ» լինեին: Սիգալով, խրխնջալով, փոշի բարձրացնելով, այդ ուրախ մշտազվարճ անասունների երամակը, փոթորկի նման անցնում էր փողոցներից:

Ռեսը, ինչպես ճանաչում էր իր գյուղի բոլոր բնակիչներին, այնպես էլ ճանաչում էր համարյա բոլոր անասուններին: Առանց որևիցե նկատողության չէին անցնում նրա մոտից այդ անասունները: Ահա անցավ Ներսոյի մատակը.

— Ներսոյի մատակի երկրորդ ծնունդն է, այդպես չէ՞,— հարցրեց նա իր մոտ նստողներից:

— Պետք է երկրորդը լինի,— պատասխանում են նրան:— Աստված չար աչքից պահե, հիմիկվա քուռակը շատ լավ ձի կդառնա:

— Իհարկե կդառնա,— նրանց կարծիքը հաստատում է ռեսը ավելի փաստական կերպով,— այդ քուռակի մայրը հինգ հարյուր տարվա ազնվության վկայագիր ունի, իսկ հայրը Ոստանի Խան-Մահմուդի նժույգն էր. կռվի ժամանակ այնտեղից ավար բերեց Ներսոն:

Ազնիվ արյուն ունեցող նժույգները, ազնվական մարդկանց նման, տոհմային վկայականներ ունեն այդ կողմերում, բայց մեզ համար այնքան հետաքրքրական չէր Ներսոյի մատակի ցեղագրությունը, որքան Խան-Մահմուդի անունը, որ պատահմամբ հիշվեցավ:

— Ձեր գյուղացիք էլ մասնակցո՞ւմ էին այդ կռիվներին,— հարցրեց Ասլանը:

— Ինչպես չէ,— պատասխանեց ռեսը մի առանձին բավականությամբ,— բոլորը մասնակցում էին, մեծից մինչև փոքրը. մեր տերտերը իր մատները այն կռվի մեջ կտրեց:— Նա ցույց տվեց մեզ մոտ նստած ալևոր քահանայի վրա:

Անցավ Օհոյի եզը: Խան-Մահմուդի կռվի պատմությունը ընդհատվեցավ:

— Օհոյի եզը ինչո՞ւ այդպես լղար է, հիվա՞նդ է, ի՞նչ է,— հարցրեց ռեսը:

— Հիվանդ է,— պատասխանեցին նրան:

— Խեղճ մարդ, աստծո փորձանքից չէ ազատվում այդ մարդը,— ասաց ռեսը դառնալով դեպի մեզ:— Այս տարի նրա եզներից երկուսը բարձր ժայռից գլորվեցան և ոչ մեկը կենդանի չմնաց. այդ մեկն էլ հիվանդ է, հիմա նրա արորը բոլորովին անգործ մնացած կլինի:

Այդ ցավակցական խոսքերից հետո ռեսը հրամայեց, որ առավոտյան իր եզներից երկուսը տան Օհոյին, առ ժամանակ բանացնե, մինչև նրա եզը առողջանա, որպեսզի նրա արորը անգործ չմնա: Գյուղացու ոչխարների հոտերին և նրա անասունների նախիրը նայելով, կարելի է նրա տնտեսական ապահովության մասին գաղափար կազմել, կարելի է նրա հարստության չափը իմանալ: Մի ամբողջ ժամ անասունները գալիս էին ու գալիս, բայց դեռ վերջ չկար: Ես ավելի համոզվեցա, որ այդ գյուղացիք նյութապես ապահովված մարդիկ են, երբ ռեսը ասաց.

— Այդ դեռ մեր անասունների մի մասն է միայն, իսկ մեծ մասը պահվում է հեռավոր արոտատեղերում. նրանց գյուղը կբերեն ձմեռը միայն:

Անասուններից հետո խումբ-խումբ վերադառնում էին բանվորները դաշտային մշակություններից. վերադառնում էր հնձավորը խոտհունձից, երկար գերանդին ուսին դրած, վերադառնում էր հերկավարը, իր արորը, կամ գութանը առջևը ձգած, վերադառնում էր սայլավորը, լծած եզները կամ գոմեշները քշելով: Ամենքը ուրախ էին, ամենքի դեմքի վրա նշմարվում էր անսահման գոհունակություն: Ամենքը երգում էին, որպես զինվորներ, որ վերադառնում են հաղթության դաշտից և մի նոր քաղաք են մտնում: Բայց դրանք արյան հետ գործ չունեին, դրանք բնության և մայր երկրի հետ մաքառող զինվորներ էին: Որքան մոտենում էին գյուղին, երգերի ձայնը այնքան անուշ էր հնչվում: Ո՞վ է իմանում սրտերի գաղտնիքը, գուցե երգողը մի պաշտելի ուներ, որ այդ րոպեում, աղբյուրի մոտ կանգնած, ջրի սափորը մի կողմը դրած, խորին զմայլմունքով լսում էր ծանոթ ձայնը: Թո՛ղ այդ լսողը նրա կինը լիներ, նրա նշանածը լիներ, կամ նրա սիրուհին լիներ, այդ միևնույն է, բավական է, որ երգողը գիտեր, մի սիրող սիրտ անհամբերությամբ սպասում է նրա վերադարձին, որի կուրծքի վրա նա կարող էր հանգչել օրվա աշխատություններից հետո,— և այդ ավելի ոգևորում էր նրան, ավելի ուժ և կյանք էր տալիս նրա ձայնին:

Ես առաջին անգամ տեսնում էի մի այդպիսի ուրախ հասարակություն: Ինձ թվում էր, որ սպանիչ հոգսը, վիշտը, տառապանքը, որ այդ կողմերում ամեն մի գյուղացու ճակատագիրն էր,— երբեք այդ գյուղին չէր մոտեցել: Ինչո՞վ ձեռք բերեցին նրանք այդ ուրախությունը: Ինչո՞վ հեռացրին իրանցից ավանդական լացը, կոծը ու արտասուքը: Ես այդ քննությունների մեջ չէի մտնում, ես միմիթարվում էի միայն, որ ամեն տեղ միշտ թշվառություններ տեսնելուց հետո, վերջապես տեսնում էի մարդիկ, որ աշխատում են, գործում են, և իրանց աշխատության արդյունքը ամենայն բավականությամբ վայելում են: Անգութ հարկահանը ծախել չէր տալիս նրա արորի եզները, իսկ քուրդ ելուզակը չէր հափշտակում նրա անասունների հոտերը:

Ռեսը և նրա մոտ նստողները, որ մինչև այժմ նկատողություններ էին անում անասունների վրա, այժմ սկսեցին նկատողություններ անել դաշտից վերադարձող մշակների վրա:

— Այդ Հակոյի տղան, ասում են, գժություններ շատ է անում, նրա ականջները պետք է փոքր-ինչ ոլորել,— ասաց ռեսը, ցույց տալով մի սրիկայադեմ պատանի, որը, իր գլխի քոլոզի վրա փաթաթած գույնզգույն թաշկինակների մեջ զանազան ծաղիկներ խրած, մեր մոտից հպարտությամբ անցնում էր:

— Մեզանից ո՞ր մեկը նրա հասակում գժություններ չէ արել,— ներողամտությամբ պատասխանեց քահանան։— Դեռ ջահիլ է, արյունը նոր է եփ գալիս, կմեծանա, խելքը գլուխը կգա։

— Այդ Վանեսի տղան, ասում են, գործի չէ գնում, այս առավոտ հայրը զոռով է դաշտը ուղարկել,— դարձյալ նկատեց ռեսը։

— Նա փոքր-ինչ ծույլ է,— վկայեցին ամենքը։

— Նա գոնե թող օրինակ առնե Մաթոսի տղայից, որ տասը հոգու հավասար է. մի օրվա մեջ, որքան ասեք, հնձում է։ Նայեցեք, ամբողջ օրն աշխատել է, հիմա մի մեծ շալակ խոտ է բերում հորթերի համար։

— Թող աստծո աչքը վրան լինի, շատ աշխատասեր տղա է,— ձայն տվեցին ամենքը։

Այսպես, մեկի արժանավորությունները գովելով, մյուսի թերությունները պախարակելով, բարոյականության այդ վերահսկողները իրանց կարծիքը հայտնում էին յուրաքանչյուրի մասին։ Իհարկե, մյուս օրը նրանք կլսեին, լավերը ավելի կխրախուսվեին, իսկ վատերը կուղղեին իրանց վարքը։ Հարգանքը դեպի ծերը և նրա խրատները՝ այդ հասարակության մեջ՝ սրբագործված կանոններից մեկն էր։

Ռեսի տան դռան առջև մի ոչխար էին քերթում մեզ համար ընթրիք պատրաստելու։ Բազմությունը հավաքված էր այնտեղ։ Անկարելի էր որոշել, թե ո՛րն էր ռեսի ընտանիքին պատկանում և ո՛րն էր դրացին։ Ամենքը առանց խտրության զանազան ծառայություններ էին կատարում։

Ամբողջ գյուղում արդեն տարածվել էր, որ օտար մարդիկ են եկել։ Այդ նրանց համար մի մեծ նորություն էր, որովհետև օտար մարդկանց խիստ հազիվ անգամ էին տեսնում։ Այդ պատճառով մեկ-մեկ գալիս էին, հեռվից ուշադրությամբ նայում էին մեզ վրա և, իրանց հետաքրքրությունը գոհացնելով, դարձյալ գնում էին։ Ոմանք մոտենում էին և լուռ նստում էին մեզ մոտ։ Եվ այսպես, մեզ շրջապատողների թիվը հետզհետե ավելանում էր։ Ի՞նչ տպավորություն էինք գործում մենք այդ կղզիացած, ամեն հարաբերություններից կտրված գյուղացիների վրա,— այդ դժվար էր որոշել, միայն նրանց առաջին հարցը լինում էր «հայե՞ր են», և երբ դրական պատասխան էին ստանում, այն ժամանակ միայն սկսում էին ավելի մտերմաբար նայել մեզ վրա։

Արևը մտնելուց հետո՝ երեկոյան զովը ցրտի փոխվեցավ։ Այդ ցուրտը մեզ համար միայն զգալի էր, բայց գյուղացիք նրան այնքան սովորած էին, որ ամենքը դրսում էին ընթրիք անում, ամենքը դրսում էին պառկում, բաց օդի մեջ, և առավոտյան ցողը զովացնում էր նրանց թեթև անկողինները։

Գեղեցի՛կ էր գյուղական երեկոն այդ ծովեզրյա սարավանդի վրա։ Խավարի մեջ անգամ նա սքանչելի տեսարան էր ներկայացնում։ Բոլոր խրճիթների ճրագները վառվում էին։ Գյուղի զառիվեր դիրքի համեմատ, այդ ճրագալույցը այնպիսի տպավորություն էր գործում, կարծես թե նրանք օդի մեջ էին վառվում և, աստիճանաբար դեպի վեր բարձրանալով, միախառնվում էին աստղերի հետ։ Երկնքի լուսատուները չէին որոշվում գյուղական խրճիթի լուսատուներից։

Ցուրտը հետզհետե ավելի զգալի էր դառնում։ Մենք խնդրեցինք ռեսից, որ ընթրիքը ներսում տան և մեզ համար այնտեղ քնելու տեղ պատրաստեն։ Երբ կտուրից ցած իջանք, երբ մտանք տունը, մեր առջև ներկայացավ մի ստորերկրյա ընդարձակ բնակարան, զանազան բաժանմունքներով և զանազան սենյակներով, որոնց դռները բացվում էին միմյանց մեջ։ Դա մի գետնափոր աշխարհ էր, որի մռայլ խորշերում կարող էին բնակվել բազմաթիվ ընտանիքներ։ Եվ ռեսի ընտանիքը փոքր չէր։ Դրսից,

երբ դեռ մենք կտուրի վրա էինք գտնվում, ոչինչ չէր երևում,— երևում էին միայն գմբեթաձև փոքրիկ բարձրություններ, որոնց յուրաքանչյուրի գագաթի վրա մի-մի երդիկ էր բացված, թե լույս ընդունելու և թե վառելու ժամանակ ներսից ծուխ դուրս տալու համար: Բայց երբ ներս մտանք, առաջին սենյակը, որ բացվեցավ մեր առջև, իր մեծությամբ կարելի էր այդ ստորերկրյա բնակարանի դահլիճը համարել: Երկու կարգ փայտյա հաստ սյուներ, վեցանկյունի տաշվածքով, զուգահեռաբար շարված էին միմյանց մոտ, մինչև դահլիճի վերջը, որ կորչում էր մթության մեջ: Սյուների յուրաքանյուրի գլխին հագցրել էին նույնպես փայտյա մեծ խոյակներ, որոնք կրում էին իրանց վրա առաստաղի ահագին գերանները: Խոյակները զարդարած էին զանազան քանդակներով, որոնց մեջ երևում էր տեղային ատաղձագործի ճարտարությունը: Սյուները կանգնած էին քարե պատվադանների վրա, որոնց հմուտ քարտաշը խիստ գեղեցիկ ձև էր տվել: Բոլոր սյուների կողքին ամրացրած էր մի-մի տախտակ, որ ձեռքի նմանություն ուներ, և նրանց վրա ճրագներ էին դրված: Ճրագները շինված էին կավից և աղավնու նմանություն ունեին, այդ թռչունների կտուցներից դուրս ընկած պատրույգները վառվում էին կտավատի ձեթով: Սենյակի այն մասը, որտեղ մեզ համար նստելու տեղ էին պատրաստել, բոլորովին լուսավորված էր: Բացի ճրագներից, սյուների վրա ամրացրած փայտյա կախաններից քարշ էին ընկած զանազան զենքեր և հրացանի պարագայք,— քարշ էին ընկած նաև փոքրիկ զամբյուղներ, որոնց մեջ տեսակ-տեսակ իրեղեններ էին լցրած: Սյուների այդ բոլոր զարդարանքները լրացնում էին դեղին և ծիրանեգույն «անթառամ ծաղիկները», որ մեծ փունջերով կապած էին նրանց վրա: Այդ դահլիճից բացվում էին զանազան դռներ դեպի մյուս սենյակները, որոնք նույն ձևով էին շինված և ծառայում էին որպես մթերանոց, որպես ամբար, որպես մառան, և որոնք լի էին ամեն տեսակ բարիքներով: Տանտիրոջ բոլոր հարստությունը ակնրև էր: Միևնույն բնակարանից մի առանձին դուռն տանում էր դեպի խոշոր, եղջերավոր անասունների ախոռատունը և դեպի ձիաների փարախը: Անասունները և իրանց տերերը սերտ դրացիության մեջ էին ապրում:

Գետնափոր խրճիթ ասելով, ես սովոր էի երևակայել գետնափոր խորշեր, որոնք գազանների որջից այնքանով են միայն զանազանվում, որքանով զանազանվում է կիսավայրենի մարդը գազանից: Բայց գետնափոր խրճիթը ևս ունի իր կատարելագործված ձևը, որի մեջ արհեստը և ճարտարությունը մեծ հառաջադիմություն են գործել: Մեր մտած խրճիթը այդ տեսակներիցն էր: Շինության ամբողջ կազմվածքի մեջ երևում էր մեծություն, զորություն և ահեղ ձեռքի ահեղ գործ: Շինության բոլոր պատերը կառուցել էին քարերից, բայց այդ քարերը ավելի ժայռեր էին, քան թե քարի մանր կտորներ: Հսկա կիկղոպները միայն կարող էին այդ ժայռերը միմյանց վրա շարել և իրանց համար բնակարան կառուցանել: Բայց կիկղոպները իրանց ամբարտակի ժայռերը չէին միացնում որևիցե շաղախով, իսկ այստեղ կրային շաղախը այնպես կապել էր ժայռերը միմյանց հետ, որ ահագին պատերը ձևացնում էին քարեղեն ամուր, միապաղաղ զանգված: Եվ այդ բոլորը կատարվել էր գետնի տակ, ուր արևի ճառագայթները երբեք չէին թափանցում, ուր մշտական մռայլի մեջ ապրում էր մի մռայլ ժողովուրդ և երկնքի լույսը տեսնում էր իր ստորերկրյա վիրապի նեղ երդիկից միայն:

Մռա՛յլ էր, մռա՛յլ… և այդ մռայլ մթությունը խիստ ճնշող, սարսափեցնող տպավորություն էր գործում: Մռայլ գույն էին ստացել ահագին պատերը, մռայլ գույն էին ստացել առաստաղի հաստ գերանները, մռայլ գույն էին ստացել փայտյա մեծ սյուները, մռայլ գույն էին ստացել և նրանց վրա կապված «անթառամ ծաղիկների» խոշոր փունջերը: Եվ այդ ներկը տվել էր բոլոր առարկաներին մշտական ծուխը, որ վեր էր բարձրանում մշտավառ կրակից:— Դա տնային անհանգչելի օջախն էր, այն սրբությունը, որի անունով մինչև այսօր էլ երդվում է հայ գյուղացին: Այդ օջախը կազմված էր սենյակի կենտրոնում, որտեղ մխում էին մի քանի կտոր փայտեր,— մխում էին, երբեմն աղոտ բոցեր և երբեմն մեղմ կայծեր արձակելով: Այդ օջախի

շուրջը ձմեռային գիշերներում հավաքվում էր նահապետական գերդաստանը և տան ծերունին պատմում էր երեխաներին հայրերի գործը: Այդ օջախը փոխարինում էր երկնքի արեգակին, այդ օջախը լույս և ջերմություն էր սփռում մռայլ բնակարանին: Այդ օջախը վառվում էր միշտ, նրա կրակը երբեք չէր հանգչում: Այդ օջախը հիշեցնում էր ինձ Էտնայի մշտավառ կրակը, որտեղ կիկղոպները Արամազդի համար շանթեր էին դարբնում: Բայց ես այստեղ շանթեր չէի տեսնում,— այդ կրակից միայն մեղմ կայծեր էին ցայտում… թեև այդ հրաբուխի մեջ նույնպես կիկղոպներ էին բնակվում…

Ռեսի ընտանիքը մեծ էր, մեծ էր, որպես նրա ընդարձակ բնակարանը: Այստեղ ապրում էին մի քանի սերունդ միասին՝ մեծ պապը, նրա որդիները, նրա թոռները և նրա թոռնյայքը: Տան սրահում քսանից ավելի օրորոցներ էին ճոճվում: Հարսներով, աղջիկներով, երիտասարդներով ու պատանիներով լի էր տունը: Երեխաները թիվ ու համար չունեին: Ռեսը իր տասն և մեկ եղբայրների միջնակն էր: Նույն թվի կեսի չափ քույրեր ուներ նա: Նրա մայրը դեռ կենդանի էր, իսկ հայրը երկու տարի առաջ վախճանվել էր հարյուր և հինգ տարեկան հասակում: Մեծ պապին ես չտեսա. նա գնացել էր մերձակա գյուղը իր աղջկան տեսնելու: Բոլոր եղբայրները ապրում էին անբաժան, միասին և նույն հարկի տակ, կրտսերը խոնարհվում էր ավազին: Իսկ բոլորի վրա իշխում էր մեծ պապը — գերդաստանի հայրապետը: Նայելով այդ ընտանիքին, ես մտաբերում էի մեր Հայկ նահապետի գերդաստանը, որ բաղկացած էր երեք հարյուր հոգուց: Այստեղ թեև այն թիվը չկար, բայց իր սպասավորներով, աղախիններով և ընդոծիններով նրա երրորդ մասը անպատճառ կլիներ:

Առանց հրավիրելու, մեզ հետ ընթրիք ուտելու եկան այն բոլոր անձինքը, որ կտուրի վրա ռեսի մոտ նստած էին: Դա մի առանձին պատիվ էր՝ թե՛ դեպի մեզ և թե՛ դեպի ռեսը, որ նրա հյուրերին միայնակ չէին թողնում: Սեղանը ճոխ էր և համադամ: Յուղը առատությամբ ծփում էր կերակուրների երեսին: Եթե կերակուրների բազմատեսակությունը և նրանց լավ պատրաստությունը կարելի է կրթության և ճաշակի մի որոշ չափ համարել, այդ կետից, զարմանալի էր տեսնել այդ ստորերկրյա բնակարանում այն տեսակ կերակուրներ: Ամենքը սպասում էին քահանային, որ սեղանը օրհնե և ապա սկսեին ուտել: Մեզ շրջապատող խոշոր երևույթների համեմատ, սեղանի վրա ևս նշմարվում էր խոշորություն և մեծություն.— պղնձյա խոշոր պնակների մեջ ածած էին կերակուրները, փայտյա խոշոր գդալներով ուտում էին խոշոր ժայռերի սրտում բնակվող խոշոր մարդիկը: Թե՛ կերակուրները և թե՛ հացը այնքան առատությամբ դրված էին սեղանի վրա, որ, ինչպես ասում են, ասեղ գցելու տեղ չէր մնացել: Այդ նրա համար էր, որ հյուրերը չամաչեին, չքաշվեին, որ ուտեին, որքան կամենում են, և դարձյալ մեծ մասը մնար սեղանի վրա: Այդ ամոթը ոչ այնքան շատակեր հյուրին, որքան տան տիրոջը կվերաբերեր, եթե նրա սեղանի մի փոքրիկ մասն անգամ բացվեր: Սեղանը միշտ պետք է ծածկված մնար ուտելիքների տակ: Ոտքի վրա՝ մեզ պատվելու համար՝ ծառայում էին տան հարսները, աղջիկները և պատանիները: Կատարյալ իրարանցում էր տիրում, երբ որևիցե պատվեր էին տալիս այդ ընտանեկան սպասավորներին. նրանցից յուրաքանչյուրը շտապում էր, որ ինքը կատարե հրամանը: Կանայք թեև մեզ հետ չէին խոսում, բայց, ուրիշ տեղերի հայ կանանց նման, երեսները չէին ծածկում: Աղջիկները և՛ խոսում էին, և՛ ծիծաղում էին: Ռեսի ընտանիքից, բացի նրա ավագ եղբայրներից, ոչ ոք սեղանի վրա նստած չէր: Կրտսեր եղբայրները, ձեռքները կուրծքի վրա խաչաձև դրած, անշարժ կանգնած էին և հրամանի էին սպասում: Կանանցից ոչ ոք սեղանակից չէր: Այդ սովորությունը պահպանվում է ոչ միայն այն ժամանակ, երբ սեղանի վրա օտար հյուրեր կան, այլև իրանց ընտանեկան շրջանում կինը տղամարդի հետ միասին չէ ճաշում: Նախ ուտում են տղամարդիկ և ապա կանայք: Չնայելով, որ հյուրերի թիվը այնքան շատ էր, որ դահլիճի մի ծայրից մինչև մյուսը բռնել էր, բայց դարձյալ նոր և նոր հյուրեր էին գալիս, ողջունում էին և լուռ նստում: Այդ ինքնակոչ հյուրերի համար նոր կերակուր էին բերում: Մուշից բերել տված գինին առատ էր. խմում էին մեծ

գավաթներով, և այնքան ախորժակով, որ ինձ հիշեցնում էին Հոմերոսի հերոսներին: Խոսում էին մեծերը և հասակավորները միայն, և ավելի միջոց էին տալիս, որ մենք խոսենք: Ասլանը հարցրեց.

— Ի՞նչպես են ձեր հարաբերությունները քրդերի հետ:

— Վատ չեն,— պատասխանեց ռեսը:— Առաջ միմյանց հետ այնպես էինք, ինչպես շուն ու կատու, բայց հիմա այնպես ենք, ինչպես լավ դրացիներ: Մենք նրանց տունն ենք գնում, նրանք մեր տունն են գալիս, և մեր անասունները միասին միևնույն արոտատեղիներում են արածում: Երբեմն մեր գյուղացիներից ոմանք «զոմա» չեն գնում, իրանց ոչխարները հանձնում են նրանց, տանում են լեռների վրա, ամբողջ ամառը պահում են և աշնան վերջերում բերում, ողջ ու առողջ հաձնում իրանց տիրոջը: Ոչինչ վարձ էլ չեն ընդունում, երբ տերը առաջարկում է նրանց, ասում են՝ «հարևանություն է, այսօր ես եմ քեզ պետք գալիս, էգուց դու ինձ պետք կգաս»: Եվ այդպես էլ լինում է, երբեմն ձմեռը երկարում է, նրանց անասունների ճարակը սպառվում է, մեր գյուղացիք բերում են նրանց անասունները, իրանց փարախներում պահում են, մինչև գարնան խոտը բուսնում է, հետո գալիս են, տանում են:

— Միշտ այդպե՞ս են եղել ձեզ հետ քրդերը:

— Առաջ այդպես չեն եղել: Առաջ մեր գյուղացին իր ունեցածի տերը չէր: Ինչ լավ բան որ տեսնում էին նրա մոտ կամ հայտնի կերպով հափշտակում էին, կամ գաղտնի կերպով գողանում էին: Ոչ միայն մեր անասունների, այլև մեր կանանց ու աղջիկների տերը չէինք…

— Ի՞նչպես եղավ, որ այժմ այդպես բարի դարձան քրդերը:

— Մենք ստիպեցինք նրանց բարի լինելու,— ժպտալով պատասխանեց քահանան:— Առաջ ինչ որ անում էին, ձայն չէինք հանում, համբերում էինք, կարծում էինք, որ այդպես լավ է, գուցե մեր խոնարհությամբ նրանց չարությունը խափանենք: Բայց որքան համբերեցինք, նրանք ավելի կատաղեցան: Սկսեցինք մենք էլ նույն կերպով վարվել նրանց հետ: Նրանք մեր մի ոչխարն էին գողանում, մենք փոխարենը տասն էինք գողանում: Նրանք մեր մարդու մի մատն էին կտրում, մենք մեր ձեռքն ընկած քրդի գլուխն էինք կտրում: Եվ ինչո՞ւ պետք է մեր մեղքը ծածկեմ, շատ անգամ բոլորովին անմեղ քրդեր, երբ մեր լեռների մեջ պատահում էին, բռնում էինք, և հանգստացնելով, թաղում էինք քարերի տակ: Այդ որ տեսան, քրդերը ավելի կատաղեցան: Մի քանի անգամ խումբերով հարձակվեցան մեր գյուղի վրա, բայց երբ փորձեցին, որ մենք հեշտ կուլ տալու պատառ չենք, այն ժամանակ իրանց չափը ճանաչեցին: Հիմա երկյուղից մեր գյուղի մոտովն էլ չեն համարձակվում անցնել, շատերը բարեկամացել են մեզ հետ, շատերն էլ մեր բարեկամությունն են որոնում…

— Եվ դուք հավատո՞ւմ եք նրանց:

— Հավատալու պետք չունենք, «սոխը որտեղ էլ տնկես, իր համն ու հոտը չի կորցնի», այդպես էլ քուրդը միշտ քուրդ կմնա: Բայց երբ նա տեսնում է, որ եթե ինձ մի վնաս հասցնելու լինի՝ անպատիժ չի մնա, սկսում է իր վարմունքների մեջ զգույշ լինել ինձ հետ:

— Տեղային կառավարությունը ի՞նչպես էր նայում ձեր վարմունքների վրա, երբ դուք սկսեցիք քրդերին քրդի ձևով պատասխանել, այսինքն ուզում եմ ասել, երբ սկսեցիք նույնը անել, ինչ որ նրանք ձեզ հետ անում էին:

— Կառավարությունը եթե խելք ունենար՝ պետք է խրախուսեր մեզ, որովհետև մենք նրա գործը հեշտացնում էինք, անկարգներին պատժելով և խաղաղությունը

վերականգնելով: Բայց նա սկզբում հալածեց մեզ, իր հին նախապաշարմունքով, թե «գավուրը» իրավունք չի պիտի ունենա մահմեդականին այն անել, ինչ որ մահմեդականը նրան անում է: Եվ եթե նա այնքան անզոր չլիներ, որպես է մեր կողմերում, կարող էր վնասել մեզ:

Քահանայի պատասխանը ավելի պարզեց ռեսը, ավելացնելով.

— Գիտե՞ք, պարոն բժշկապետ, մեր կառավարությունը փափուկ տեղերի փորփրողն է, երբ պինդ տեղը հասավ, բրիչը մի կողմ կդնե: Ինչո՞ւ մուդիրը, գայմագամը և դրանց նման այլ պաշտոնակալներ՝ քուրդ ավազակի, քուրդ մարդասպանի ետևից չեն ընկնում, որովհետև գիտեն, որ եթե նրանց նեղացնելու լինեն, մի օր էլ իրանց տունը կողոպտված կտեսնեն, և իրանց գլուխն էլ իր տեղումը չի մնա:

— Քրդից, իրավ է, նրանք այդ երկյուղը կարող են ունենալ, բայց հայի՞ց…

— Հայից, ճշմարիտ է, չեն ունենա, բայց ոչ ամեն հայից…— պատասխանեց ռեսը վիրավորված եղանակով:— Ինչո՞վ ենք մենք պակաս քրդից: Այս րոպեում, եթե ձայն տալու լինեմ, ամբողջ գյուղը ոտքի կկանգնե, ուր որ ասելու լինեմ, կգնան, ինչ որ հրամայելու լինեմ, կկատարեն:

— Բայց մի գյո՛ւղ, լավ մտածեցեք, ի՞նչ բան է մի գյուղը…

Ասլանը կարծես աշխատում էր բարկացնել ռեսին, որ նա ավելի ասեր, ինչ որ չէր ցանկանա ասել:

— Միայն մի գյուղ չէ, պարոն բժշկապետ,— խոսեց նա դարձյալ զայրացած եղանակով,— մեր ամբողջ ծովեզերքի բնակիչները նույն հոգին և նույն սիրտն ունեն: Իհարկե, մենք այժմ այն չենք անում, ինչ որ առաջ անում էինք, մենք այժմ իզուր տեղը ոչ ոքին վնաս չենք տալիս: Եթե առաջ շատ անգամ բոլորովին անմեղ մարդկանց բռնում և մորթում էինք, այդ նրա համար էր, որ մեր թշնամիներին ցույց տանք, թե տեսե՛ք, եթե դուք չարություն կանեք, մենք էլ ընդունակ ենք նույնն անելու, լավն այն է, որ ո՛չ դուք անեք և ո՛չ մենք, այլ ապրենք միասին, որպես բարի դրացիներ: Եվ այդպես էլ եղավ, մեր ցույցերից հետո՝ քրդերը բարեկամացան մեզ հետ, որովհետև նրանք գիտեն հարգել քաջությունը: Այժմ շատ դեպքերում, երբ նրանք կռիվ ունեն միմյանց հետ, մեր օգնությանն են դիմում:

— Իսկ եթե ձե՞զ հարկավոր լինի նրանց օգնությունը:

— Չեն խնայի:

Ես մտաբերեցի Թոխմախ-Արթինի առածը. «թուրքին ծեծի՛ր, հետը բարեկամացի՛ր»:

Ասլանը հարցրեց.

— Ինձ շատ զարմացնում է այն, թե ի՞նչ հրաշքով կատարվեցավ ձեր կյանքում այդ մեծ փոփոխությունը, որ դուք ձեր վաղեմի ստրկությունից (որը այլ բառերով սովորել էիք հնազանդություն և համբերություն կոչել) հանկարծ դուրս եկաք և սկսեցիք անձնապաշտպանության դիմել: Ո՞վ մտցրեց ձեր մեջ այդ միտքը և այդ հոգին: Ո՞վ սովորեցրեց ձեզ ընտրել զենքը որպես գլխավոր միջոց և գրավական՝ թե՛ թշնամու և թե՛ բարեկամի հետ խաղաղություն պահպանելու:

— Մենք այդ բոլոր փոփոխություններով պարտական ենք մեր սիրելի վարժապետին,— պատասխանեց ռեսը:— Նա բաց արեց թե՛ մեր աչքերը և թե՛ մեր կապված, կաշկանդված ձեռքերը: Նա մտցրեց մեր մեջ անձնապաշտպանության

ոգին, սովորեցրեց բարեկամի հետ բարեկամ լինել, թշնամու հետ թշնամի, եթե չհաճի բարեկամանալ: Նա մեզ հետ քաջությամբ մասնակցում էր այն բոլոր գործերում, որ կատարվեցավ վերջին տարիներում: Բայց ո՛րքան գործեր կատարվեցան այդ ժամանակներում… Ո՛րքան զոհեր տվեցինք մենք, մինչև կարողացանք փոքր ի շատե ապահովել մեր դրությունը… Աղետալի՛, շատ աղետալի՛ էին այդ ժամանակները… մենք միշտ արյունոտ ձեռքով էինք ուտում մեր հացը, եթե մի րոպե միջոց էինք գտնում ուտելու…

Վերջին խոսքերի ժամանակ ռեսի ձայնը դողդողաց, նրա այրական դեմքը ընդունեց խիստ տխուր արտահայտություն: Ասլանը իր հարցերով զարթեցրեց նրա մեջ անցած ժամանակների մոռացված հիշողությունները, որոնք որքան ցավալի էին, նույնքան և ուրախացուցիչ էին…

Ընթրիքը բավական երկար տևեց, նրանք սպասում էին «սիրելի» վարժապետին, որ գնացել էր մերձակա լեռան հովիվների մոտ և պիտի վերադառնար երեկոյան: Երբ տեսան, որ ուշացավ, քահանան օրհնեց սեղանը: Վերջին օրհնությունը լի էր մի շարք բարեմաղթություններով: Նա օրհնեց կերողներին, կերակրողներին, սեղանը պատրաստողներին, ոտքի վրա ծառայողներին, նրանց կենդանիներին և ննջեցյալներին: Նա օրհնեց և նրանց, որ ուտելու հաց չունեն, որ քաղցած են, և բարեմաղթում էր նրանց համար նախախնամողի ողորմածությունը: Նա օրհնեց բոլոր նեղյալներին և կարոտյալներին, և ամենի համար լիություն ու անդորրություն էր խնդրում:

Երբ մեր սեղանը հավաքեցին, դրսում սրահի մեջ, երկու առանձին սեղաններ պատրաստվեցան. մեկի շուրջը հավաքվեցան կանայք իրանց երեխաների հետ, իսկ մյուսի շուրջը հավաքվեցան ոտքի վրա ծառայող տղամարդիկ: Կանայք նստած էին մութի կողմում, իսկ տղամարդիկ լույսի կողմում, կանայք լուռ էին, իսկ տղամարդիկ խոսում էին, ծիծաղում էին, հանաքներ էին անում, մի քանիսը մինչև անգամ սկսեցին երգել: Ես առաջին անգամն էի լսում լեռնցի հայի երգը, որ իր սարերի մելամաղձոտ արձագանքի նման՝ կոտրատվում էր, կոտրատվում էր երկարաձիգ լե՜-ե՜-ներով, և ապա աստիճանաբար խլանում էր, և վերջին տխուր հնչյունները հանգչում էին երգողի սրտի խորքում:

Մեզ մոտ եղած հյուրերը քաշվեցան սենյակի պատերի տակը, վառեցին երկար չիբուխները, սկսեցին ծխել: Ճոխ ընթրիքից հետո հանգստություն էին վայելում: Խիստ օտարոտի էր նրանց նստելու ձևը այդ միջոցին, նրանք ավելի պառկած էին, քան նստած: Յուրաքանչյուրը ուսով պատին կռթնած, թևքի մի արմունկով հատակին հենված, ոտները կամ մեկնել էր, և կամ ծնկները վեր բարձրացնելով, ոտներով մի տեսակ կամուրջ էր կազմել: Միայն ռեսը և քահանան ծալապատիկ նստած էին մեզ մոտ: Մյուսները կատարյալ ազատություն էին վայելում, և իրանց նստվածքին ինչ ձև որ ուզում էին, տալիս էին: Անկարելի էր այդ միջոցին մոտենալ նրանց չիբուխներին և կրակ վառել, մի այսպիսի հանդգնության համար պատրաստ կլինեին արյուն թափել:

Մի քանի անգամ ևս հիշվեցավ «սիրելի» վարժապետի անունը. ամենքը զարմանում էին, թե ինչու այդքան ուշացավ նա, և ոմանք կասկածում էին՝ միգուցե որևիցե վտանգ պատահած լիներ նրան:

— Նրա հետ ի՞նչ կարող է պատահել,— նկատեց հյուրերից մեկը,— նա այնպիսի մարդ է, որ ծովը կմտնե և ցամաք դուրս կգա:

Տեսնելով, որ այդքան անհանգիստ են վարժապետի մասին, Ասլանը հարցրեց, արդյոք գո՞հ են նրանից:

— Ինչպես գոհ չլինել, պարոն բժշկապետ,— պատասխանեց քահանան,— նա ոչ միայն մեր երեխաների վարժապետն է, այլ մեր ամենի վարժապետն է: Մենք շատ բան սովորեցանք նրանից, այո՛, շատ բան… ոչ այնքանը միայն, որ մի քանի րոպե առաջ պատմեց ձեզ մեր հարգելի ռեսը:

Հայոց գյուղերում վարժապետը և շինական քահանան միշտ անհաշտ և հակառակ դիրքի մեջ են լինում միմյանց հետ, այժմ զարմանալի էր լսել քահանայից վարժապետի մասին գոհունակություն:

— Ի՞նչ սովորեցաք նրանից,— հարցրեց Ասլանը հետաքրքրությամբ:

— Շատ բան սովորեցանք,— կրկնեց քահանան համոզիչ եղանակով,— օրինակ, այսօր, գիտե՞ք ինչի համար է նա գնացել սարը, մեր հովիվների մոտ.— այնտեղ պանիր են մակարդում, գնացել է տեսնելու, արդյոք իր պատվերների համեմատ են մակարդում, թե ոչ: Նա սովորեցրեց մեզ բոլորիս նոր ձևով պանիր շինել:— Այդ պանիրը, որ հիմա կերաք, ի՞նչպես էր:

— Շատ պատվական պանիր էր:

— Այդ նրա սովորեցրած ձևովն է պատրաստված: Նա բժշկություն էլ է իմանում. երբ գյուղերում հիվանդներ են պատահում, նրան կանչում են, բոլորի մոտ գնում, ոչ միայն հայերի, այլ մինչև անգամ քրդերի մոտ: Երբ փող են առաջարկում, նա վիրավորվում է:

— Բժի՞շկ է:

— Ո՛չ, այնպես, գրքեր կարդալով, սովորել է, բայց մի լավ բժշկից ավելի է իմանում: Նա մեր երեխաների դաստիարության համար էլ ոչինչ վարձ չէ ընդունում, ասում է՝ ինձ փող հարկավոր չէ, ինձ մի կտոր հաց տվեք ուտեմ և մի տեղ տվեք պառկեմ, այդքանն էլ բավական է: Մի խոսքով, զարմանալի անշահասեր մարդ է:

— Ուրեմն գյուղացիք սիրո՞ւմ են նրան:

— Իրանց հոգու պես: Նա մեր երկրագործական մշակությունների մասին ևս շատ օգտավետ խորհուրդներ է տալիս. ինչ որ նրա խորհրդի համեմատ ենք անում, տեսնում ենք, որ ավելի լավ է լինում, քան թե այն ձևով, որ մենք առաջ սովորել էինք մշակել: Անասունների հիվանդության դարմանն էլ է իմանում, անասունների ցեղը ազնվացնելու եղանակն էլ է իմանում: Տեսա՞ք մեր անասունները, ոչ մի տեղ մեր շրջակայքում մեր գյուղի անասունների նմանը չկա: Անդադար նոր և նոր գրքեր է բերել տալիս, կարդում է, ինքը սովորում է, և մեզ էլ նոր բաներ է սովորեցնում:

— Ի՞նչ լեզվով են լինում այդ գրքերը:

— Չգիտեմ, այդքանը միայն գիտեմ, որ հայերեն չեն:

Ուրախալի էր լսել այդ բոլորը քահանայի բերանից: Որքա՜ն սխալ պետք է համարել այն կարծիքը, որ կազմվել է մեր գյուղացիների մասին, թե նրանք մոլեռանդ են, նախապաշարված են ուսման դեմ, կամ մինչև անգամ թշնամի են ուսման և հալածում են ուսուցիչներին: Ո՞վքեր են այդ հալածյալները, ովքե՞ր են գնում գյուղերը, ովքե՞ր են մտնում ժողովրդի մեջ:— Ոչ մի օրինավոր կերպով պատրաստված մարդ, որ գյուղացուն պիտանի լիներ, և ոչ մի բարոյական մարդ, որ գյուղացու աչքում բարի օրինակ դառնար: Քաղաքի ուսյալների մրուրը թափվում է գյուղերի մեջ: Քաղաքի անպիտանը՝ գյուղում իրան պիտանի է համարում և հանձն է առնում գյուղացու կրթության գործը: Նա իր անբարոյական բարք ու վարքով զզվանք է հարուցանում ոչ

միայն դեպի իր անձը, այլև դեպի ուսումը, որ նա տալիս է: Անձնավորության մուրը քսվում է և գործի վրա: Գյուղացին սկսում է խիստ լոգիկապես դատել. «Եթե ուսումը այդ է, եթե ուսում առած մարդը այդպես կլինի, լավ է, որ որդիքս չփչացնեմ»… Ցույց տվեցե՛ք նրան բարի օրինակ, ցույց տվեցեք ուսման շոշափելի օգուտները և կտեսնեք նա կսկսե սիրել թե՛ ուսումը, և թե ուսում տվողին: Ես ուրախ էի, որ այդպիսի մի անգնահատելի անձն մեր խոսակցության առարկան էր:

Ռեսը բոլորովին այլ կետից սկսեց գնահատել վարժապետի արժանավորությունները, ասելով.

— Նա որքան շատ ուսում ունի, որքան շատ բան գիտե, միևնույն ժամանակ շատ քաջ մարդ է: Նա իմանում է լավ հրացան արձակել, և մեր երեխաներին ևս սովորեցնում է նշան խփել: Նա իմանում է ծովում լավ լող տալ, և մեր երեխաներին ևս սովորեցնում է ջրի հետ այնպես խաղալ, ինչպես ցամաքում: Ուրիշ ինչե՞ր չէ սովորեցնում նա. վազել, լայն փոսերի վրայից թռչել, սարերում պատի նման հարթ ժայռերից վեր բարձրանալ, քարի կամ երկաթի ծանր կտորներ ձեռքի վրա շարժել, գերանների կամ պարանների վրա ճախարակի նման զանազան պտույտներ գործել, թռիչքներ անել և այլն: Դրանք շատ հարկավոր բաներ են, մանավանդ մեր լեռների մեջ և մեր դրության մեջ: Մենք հրեշտակների հետ չենք ապրում, մենք գազանների հետ ենք ապրում. պետք է մարդ վազել գիտենա, երբ պատահում է փախչել, և արագաշարժ ոտներ ունենա, երբ կամենում է բռնել:

Միայն սպարտական կյանքով ապրող մի հասարակության ներկայացուցիչը կարող էր ռեսի նման գնահատել մարմնամարզության առողջարար, կենդանացուցիչ, և հոգին, միտքն ու մարմինը կազդուրիչ նշանակությունը,— կարող էր հասկանալ և նրա նշանակությունը կյանքի պատահարների դեմ մաքառելու մեջ:

Թե՛ ռեսի, թե՛ քահանայի հայացքների մեջ, և թե առհասարակ նրանց դատողության բոլոր ձևերի մեջ՝ խիստ ակներև կերպով երևում էր իրանց սիրած վարժապետի ազդեցությունը: Այդ մարդիկը բոլորովին այլապես էին վերաբերվում կյանքին և նրա պահանջներին, քան թե՝ որքան պատահել էր ինձ լսել՝ հայ շինականի դատողությունը:

Զարմանալին այն էր, որ մեզ մոտ գտնված մյուս գյուղացիներն ևս բաժանում էին ռեսի հայացքները: Կյանքի անհրաժեշտությունները, կարծես, ամենի համար պարզ էր: Յուրաքանչյուրը ցանկանում էր զավակին այնպես պատրաստված տեսնել, որ նա աշխարհի մարդ լիներ և նրա հարվածների տակ չընկճվեր, չխորտակվեր:

Սրահում լսելի եղավ ուրախաձայն աղաղակ.

— Բարո՛վ, Աբգար ախպար, բարո՛վ…

— Եկավ վարժապետը,— ասաց ռեսը, նույնպես ուրախանալով:

Մեր ամենքի աչքերը դարձան դեպի դռները: Ծիծաղելով ներս մտավ մի բարձրահասակ, հաղթանդամ, ուրախադեմ երիտասարդ, անփույթ կերպով անցավ սենյակի միջով, ձեռքի երկար նիզակը դրեց մի անկյունում, և ապա մոտեցավ մեզ: Իր հագուստով չէր որոշվում նա մյուս լեռնաբնակներից. նույնպես կուրծքը կիսաբաց, բազուկները հոլանի, թաղիքյա երկաթագամ տրեխները հագին, գլխի *քոլոզը* փաթաթած գույնզգույն թաշկինակներով, և նրանց տակից արձակ թողած երկայն մազերը ծածանվում էին մերկ պարանոցի վրա: Որքա՜ն աշխատել էր նա նմանվել այն հասարակությանը, որի հետ գործ ուներ:

Նա նայեց մեզ վրա և նրան տիրեց մի տեսակ շփոթություն…

Ոչ սակավ շփոթվեցանք և մենք… Բայց իսկույն զսպելով իրան, ձեռքը մեկնեց նա Ասլանին, ասելով.

— Այս գյուղի վարժապետը՝ Աբգար Ոստանիկ:

— Բժշկապետ Քարլ Ռիսման,— ներկայացրեց իրան Ասլանը, հետո ծանոթացրեց մեզանից ամեն մեկին:

Նա նստեց քահանայի մոտ և, դառնալով դեպի ռեսը, ասաց.

— Լավ հյուրեր եք ունեցել: Ցավում եմ, որ չհասա ընթրիքին:

— Շատ սպասեցինք ձեզ, Աբգար ախպար,— պատասխանեց ռեսը,— ինչո՞ւ այդքան ուշացաք:

— Գիտեք, էլի՛… Երբ ես հովիվների մոտ եմ գնում, ամեն բան մոռանում եմ… Նրանք էլ ինձ համար մի գառն էին մորթել,— պատասխանեց նա, աշխատելով սառնասիրտ ձևանալ, թեև նրա ձայնը զգալի կերպով կոտրատվում էր սրտի հուզմունքից…

Նա դարձավ դեպի Ասլանը.

— Ներեցեք, պարոն բժշկապետ, իմ անտեղի հարցասիրությանը, դուք ի՞նչ դեպքով անցաք մեր լեռների այդ խորքերը: Մենք խիստ հազիվ անգամ ենք պատահում այստեղ եվրոպացիների:

Ասլանը պատասխանեց, որ զանազան ուսումնական նպատակներով ճանապարհորդություն է անում, նրան հետաքրքրում է այդ կողմերի հնությունները, բացի դրանից, ցանկություն ունի ծանոթանալ այդ երկրի լեռնակաների կյանքի ու սովորությունների հետ, և շատ շնորհակալ կլիներ, եթե պարոն վարժապետը կարելույն չափ կօգներ իրան:

— Մեծ ուրախությամբ,— պատասխանեց վարժապետը,— ես բավական ուսումնասիրել եմ թե այդ երկիրը և թե նրա բնակիչներին: Ես պատրաստ եմ իմ նկատողությունների տետրակը ամրողջապես ձեզ ընծայել, դուք կարող եք նրանից օգուտ քաղել:

— Շատ շնորհակալ կլինեմ,— պատասխանեց Ասլանը,— ի՞նչ լեզվով է գրված:

— Հայերեն:

— Այդ ոչինչ, ես թարգմանել կտամ: Բայց ինձ համար ավելի թանկագին կարող էին լինել ձեր բերանացի տեղեկությունները:

— Այդ մասին կխոսենք, շատ կխոսենք, ես, որքան կարող եմ, բավականություն կտամ ձեր հարցասիրությանը: Դուք դեռ երկար կմնաք մեզ մոտ, պարոն բժշկապետ, մեր գյուղացիների ձեռքում երբ մի օտար հյուր է ընկնում, շուտով բաց չեն թողնում:

— Շնորհակալ եմ: Բայց շատ ցավում եմ, որ երկար մնալ չեմ կարող, ես առավոտյան պետք է ճանապարհ ընկնեմ:

— Այստեղից ո՞ւր պիտի գնաք:

— Աղթամարա վանքը, այնտեղի քանդակները տեսնելու համար:

— Հիանալի քանդակներ են, արժե տեսնել:

Վարժապետը խոստացավ, որ հենց այդ գիշեր կտա պարոն բժշկապետին նրա ցանկացած տեղեկությունները, քանի որ նա այդպես շտապում է:

Գյուղացիները, ինչպես երևում էր, իրանց վարժապետի վերաբերությամբ մի փոքրիկ փառասիրություն ունեին. նրանք ուրախանում էին որ իրանց վարժապետը այնքան հմտություններ ունի, որ եվրոպացին անգամ կարոտում է նրա տեղեկություններին: Բայց նրանք մի այլ բան ևս սպասում էին վարժապետից, որ նա կսկսե եվրոպացու հետ մի ուսումնական վիճաբանություն, և իր գիտությամբ բոլորովին կշվարեցնե և կկաշկանդե նրան: Այդ հաղթությունը ամբողջ գյուղին պատիվ կբերե: Այդ դեպքում, գյուղացին նայում է իր վարժապետի կամ իր քահանայի վրա, որպես իր գյուղի քաջամարտիկ գոմեշի վրա. երբ նա կռվի մեջ հաղթում է հարևան գյուղի գոմեշին, ամբողջ գյուղը տոն է կատարում: Բայց այդ վարժապետը խիստ համեստ էր. նա վիճաբանությունների մեջ չմտավ, և չէր էլ ձգտում իրան ուսումնական ներկայացնելու: Նրա խոսակցությունը այնքան պարզ էր, այնքան ռամկական էր, որ կարծես երեխայությունից ծնվել, սնվել էր այդ լեռնականների մեջ: Բայց նույն ռամկական պարզության մեջ երևում էր մտքի և դատողության ուժ: Նա գյուղացիների փառասիրությանը բավականություն տվեց նրանով միայն, որ հետո սկսեց եվրոպացի բժշկապետի հետ նրա երկրի լեզվով խոսել: Թեև Նրանցից ոչ ոք չհասկացավ, թե ինչ խոսեց, բայց ամենքն էլ շատ ուրախացան, որ նա օտար լեզուներ ևս իմանում է: Նրանք միշտ սովորություն ունեին մյուս գյուղացիների մոտ իրանց վարժապետի մասին չափազանցություններ անելով պարծենալ, թե «մեր վարժապետը տասն լեզու է իմանում»:

Ո՞րտեղացի էր նա, ո՞րտեղից էր եկել,— ոչ ոք չգիտեր: Նրանք այդքանը միայն գիտեին, որ առաջին անգամ, երբ հայտնվեցավ, նա եվրոպական հագուստ ուներ: Հետո ամեն ինչ փոխեց, մինչև անգամ լեզուն ևս փոխեց, սկսեց նմանվել գյուղացիներին:

— Շա՞տ ժամանակ է, պարոն Ոստանիկ, որ այստեղ եք,— հարցրեց Ասլանը:

— Մի քանի տարի կլինի,— պատասխանեց նա:

— Եվ այդքան ժամանակ ձեր հայրենիքը չե՞ք գնացել:

— Երբեմն, ամառային արաձակուրդների ժամանակ, գյուղացիները ինձ թույլ են տալիս գնալ՝ ազգականներիս տեսնելու: Տարվա մեջ երեք ամիս բոլորովին ազատ եմ ես: Մանավանդ, որ ուսումը այստեղ գլխավորապես ձմեռն է լինում, որովհետև տարվա մյուս եղանակներում երեխաները օգնում են իրանց ծնողներին նրանց տնտեսական աշխատությունների մեջ: Այդ ես թույլ եմ տալիս գլխավորապես այն նպատակով, որ իմ աշակերտները գործնականապես վարժվեն երկրագործական մշակությունների մեջ:

— Ձեր բացակայության ժամանակ ո՞ւմն եք հանձնում ձեր պաշտոնը:

— Ես մի օգնական ևս ունեմ, որը իմ հասցրած աշակերտներիցն է:

Գիշերից բավական անցել էր: Ժամանակ էր հյուրերին հեռանալ: Գյուղացին զարթնում է արևից առաջ, հանգստանում է արևի հետ: Նա սովոր չէ անքնության մեջ վատնել գիշերային հանգստությունը: Թեև ռեսի ճոխ և ընդարձակ տունը՝ թվով մեզանից մի քանի անգամ ավելի հյուրերի համար՝ թե՛ քնելու տեղ և թե՛ մաքուր անկողիններ ուներ, բայց, շինական սովորության համեմատ, մեզ հետ սեղանակից եղող գյուղացիները պետք է մեզ իրանց մեջ բաժանեին, որպեսզի տան տիրոջ համար ծանրություն չլիներ: Բավական երկար տևեց վիճաբանությունը մեր

ընտրության մասին, յուրաքանչյուրը ցանկանում էր իր տունը տանել մեզանից ամեն մեկին, թեև մեր թիվը այնքան փոքր էր, որ ամենքին բավականություն չէր կարող տալ: Մտածում էին վիճակ ձգել: Այդ միջոցին վարժապետը մեջ մտավ, ասելով.

— Բարեկամներ, մեր բախտից մեր հյուրերը այնքան փոքր են թվով, որ ամենքիս բաժին չի հասնի. պարոն բժշկապետին ես նվեր առնեմ, իսկ մյուսներին թող տեր հայրը բաժանե, ինչպես որ կկամենա:

Մենք թվով չորս հոգի էինք՝ ես, Ասլանը, Մուրադը և Ջալլադը: Ամենքը համաձայնվեցան, որ Ասլանին, այսինքն պարոն բժշկապետին, վարժապետը տանե իր մոտ, որովհետև նրա լեզուն իմանում է, բացի դրանից, եվրոպական ձևով կահավորված սենյակ ունի: Ինձ վեր առեց տեր հայրը. Մուրադը մնաց ռեսի տանը, իսկ Ջալլադին տարավ մի այլ գյուղացի, որը տեղային եկեղեցու երեսփոխանն էր:

ԻԵ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ

Երբ գյուղացին հարևանի մոտ հյուր է կանչված, և նրա տնեցիք գիտեն, որ այնտեղ օտար տեղից եկած հյուրեր կան, իրանք ևս պատրաստություն են տեսնում, մտածելով, կարելի է իրանց տղամարդը նրանցից մեկին բերե իր հետ: Երևի այդ էր պատճառը, որ երբ մտանք տեր հոր խրճիթը, այնտեղ գտանք մի պատրաստի սեղան: Նա հրավիրեց նստել սեղանի մոտ: Ռեսի ճոխ ընթրիքից հետո, այժմ ո՞վ ախորժակ ուներ ուտելու: Բայց ուզես, չուզես, պետք է մի քանի պատառ ուտես, եթե ոչ, տանտիկնոջը սաստիկ վիրավորած կլինես:

Տեր հոր խրճիթը թեև ռեսի տան մեծությունն ու վայելչությունը չուներ, բայց բավական կոկիկ և սիրուն էր. ամեն տեղ երևում էր կարգ, ամեն տեղ երևում էր մաքրություն: Բոլոր տանեցիք քնած էին միևնույն հարկի տակ, ուր մտանք մենք: Միայն երեցկինը և նրա հարսը սպասում էին մեզ: Սյունի վրա դրած միակ ճրագը աղոտ լույս էր սփռում փոքրիկ սենյակում, և մեր շուրջը լսվում էր քնած ընտանիքի խաղաղ շնչառությունը:

Տեր հայրը իր լեզվի բոլոր ճարտարությունը գործ էր դնում,որ զբաղեցնե ինձ: Բայց ոչ նրա համեստ սեղանը, ոչ նրա պարզ, սրտից բխած, հայրական խոսակցությունը, և ոչ երեցկնոջ միամիտ գուրգուրանքը,— ոչինչ չէր գրավում ինձ: Ինձ չէր գրավում և մի գեղեցիկ դեմք, որ քնի մեջ, մոռանալով գեղջկուհու ամաչկոտությունը, վերմակը կիսով չափ մի կողմ էր ձգել և երևան էր հանել մի հրաշալի կուրծք: Այո, ոչինչ չէր գրավում ինձ: Իմ բոլոր ուշքը, միտքը գրավել էր երիտասարդ վարժապետը: Նրա մասին էի մտածում, նրա այրական սիրելի պատկերն էր իմ աչքի առջև:

Երբ տեր հայրը սկսեց նրա մասին խոսել, ես մեծ ուրախությամբ լսում էի:

— Եկեղեցու բակումն է բնակվում,— ասաց նա,— այնտեղ դպրոցին կից, իրա համար երկու սենյակ է շինել տված: Այդ սենյակները մեր խրճիթների նման գետնափոր չեն, դուք, իհարկե, առավոտյան կտեսնեք, թե որքան հարմարություններով են շինված: Նա միշտ խորհուրդ է տալիս, հորդորում է գյուղացիներին, որ դուրս գան գետնի տակից և այն ձևով բնակարաններ շինեն: Ասում է, որ գետնափոր խրճիթը շատ վնասակար է առողջության, այնտեղ չէ թափանցում ո՛չ արևի լույսը և ո՛չ օդի մաքրությունը:

— Գյուղացիք հետևո՞ւմ են նրա խորհուրդներին,— հարցրի ես:

— Շատերը հետևում են, ով որ նոր տուն է շինել տալիս, այնպես է շինում, որպես նա ցույց է տալիս: Նա մեզ բացատրում է, թե տան ձևը ոչ միայն մեծ նշանակություն ունի մարդու առողջության վերաբերությամբ, այլ սաստիկ ազդում է նրա բնավորության, մտքի և հոգեկան տրամադրության վրա: Եթե հայ գյուղացին, ասում է նա, այդպես ծածկամիտ, նենգավոր և միևնույն ժամանակ՝ այդքան մռայլոտ է,— եթե նա կորցրել է երգելու և ուրախ լինելու ընդունակությունը,— գլխավոր պատճառներից մեկը այն է, որ ապրում է գետնի տակ, խուլ մթության մեջ:

— Ձեր գյուղացիք նույնպես գետնի տակ են ապրում,— նկատեցի ես,— բայց բավական ուրախ են, բավական պարզ սիրտ և լուսավոր միտք ունեն:

— Այդ նկատողությունը ես էլ մի անգամ արեցի նրան: Նա պատասխանեց. դրսի կյանքը՝ ազատ և արձակ օդի մեջ՝ մեղմացնում է գետնափորի ազդեցությունը: Դուք, ասաց, տարվա մեծ մասը անց եք կացնում դաշտերում, լեռների վրա, և ձեր վրաններով՝ ձեր անասունների հետ՝ բնակվում եք ձեր արոտատեղիներում: Ազատ բնությունը ներշնչում է ձեր մեջ ազատ սիրտ և ազատ հոգի: Ձեր գետնափոր խրճիթները ձեզ համար ժամանակավոր ձմեռանոցներ են միայն:

Անհամբերությունը ինձ այնքան տանջում էր, որ չսպասելով մինչև առավոտ, որ գնայի և անձամբ տեսնեի բոլորը,— ես ցանկանում էի վարժապետի սենյակների, նրա նիստ ու կացի, և առհասարակ նրա կենցաղավարության մասին՝ կանխապես տեղեկություն ստանալ քահանայից: Ցանկանում էի խոսել, մինչև լույս խոսել իմ սրտի շատ մոտ երիտասարդի մասին և բնավ չքնել:

— Լա՞վ են սարքված նրա սենյակները:

— Շատ լավ են սարքված. ամեն պատրաստություններ ունի նա. մահճակալ, անկողին, աթոռներ, գրասեղան և զանազան կարասիք: Պատերը գարդարած են պատկերներով, պատուհանները լի են գրքերով: Բայց մահճակալ ունի, նրա վրա չի պառկում, մահիճ ունի, գործ չէ ածում: Պառկում է մերկ հատակի վրա, առանց անկողնի: Զարմանալին այն է, որ շատ անգամ կողքերի տակին մանր խիճեր է ածում, որ ավելի ցավեցնի: Երբ հարցնում ես, վարժապետ, ինչո՞ւ ես մարմինդ տանջում, նա քեզ պատասխանում է. «Ես այդ տանջանքով մարմինս ամրացնում եմ. դիցուք թե, այնպես պատահի, որ ստիպված լինեմ մի քանի գիշեր սարերի մեջ մնալ, այնտեղ ով կտա ինձ մահիճ ու մահճակալ, պետք է նախապես սովորել առանց անկողնի, մերկ քարերի վրա պառկելը»:

— Ապա ինչո՞ւ համար է պատրաստել իր մահիճն ու մահճակալը, քանի որ գործ չէ ածում:

— Հյուրերի համար:

— Հյուրեր ունենո՞ւմ է:

— Երբեմն բոլորովին անծանոթ մարդիկ հայտնվում են նրա մոտ, մի օր, երկու օր մնում են և դարձյալ անհայտանում են:— Դուք մահճակալի վրա ինչո՞ւ եք զարմանում, որդի,— խոսքը փոխեց տեր հայրը,— իր սենյակներում գեղեցիկ վառարաններ ունի, բայց երբեք կրակի երես չեն տեսնում: Դուք չգիտեք, մեր կողմերում ձմեռը որքան սաստիկ է լինում. մարդու թուքը բերանի մեջ սառչում է: Բայց նա իր անվառ սենյակի լուսամուտները բաց թողած, այնպես է քնում: Շատ անգամ մի քանի օրով քաղցած է մնում, ոչ ուտում է և ոչ խմում միայն ծխում է: Բայց երբեք իր ուժերը չէ կորցնում: Իսկ երբ սկսում է ուտել, հինգ մարդու չափ ուտում է: Նա հում միս էլ է ուտում, և ոչխարի արյունը այնպես է խմում, ինչպես ոչխարի կաթը: Սկզբում այդ բաները գյուղացիների աչքում խիստ օտարոտի էին թվում, բայց

հետո ընտելացան: Միս, ասում է նա, ամեն տեղ կարող եմ գտնել, կամ մի թռչուն կորսամ, կամ մի վայրենի ոչխար կգնդակահարեմ, բայց եփելու համար կրակ ամեն տեղ դժվար է գտնել, այդ պատճառով պետք է սովորել, առանց եփելու ևս ուտել միսը:

— Բայց ինչո՞ւ նա օրերով քաղցած է մնում:

— Առաջ ես այնպես էի կարծում, որ հոգու համար է անում, մեր հին ճգնավորների նման ծոմ է պահում: Մի անգամ հարցրի, նա բոլորովին այլ կերպ բացատրեց իր ծոմապահության պատճառը: Տեր հայր, ասաց նա, կարող է պատահել, որ ես ստիպված կլինեմ մի որևէ լեռան խորքերում պատսպարված լինել, որտեղ ոչ բնակություն կա և ոչ հաց,— կարող էր պատահել, որ հանգամանքների պատճառով ես ստիպված կլինեմ մի քանի օր այնտեղ քաղցած մնալ, չէ՞ որ այժմյանից պետք է սովորեցնեմ ինձ համբերել քաղցածության: Եվ այդպես նա միշտ երևակայում է մի անապատական լեռնային կյանք, հեռու մարդկային բնակությունից, ամայության մեջ խուլ, մթին քարանձավներում, և մի այդպիսի կյանքի համար վաղօրոք աշխատում է պատրաստվել: Բայց ինչո՞ւ համար,— ոչ ոք չգիտե:

— Այդպիսի մի տարօրինակ մարդ է նա,— շարունակեց տեր հայրը,— եթե մոտենաք նրա բնակարանին, այնտեղ կտեսնեք զանազան մեծությամբ, զանազան ծանրությամբ քարեր: Համարյա ամեն օր որոշյալ ժամերում, նա այդ քարերը բարձրացնում է և ձեռքով զանազան շարժումներ է գործում: «Ուժս փորձում եմ,— ասում է նա,— որ տեսնեմ, եթե մի օր պետք լինի այսպիսի քարեր միմյանց վրա դարսել, արդյոք կարո՞ղ կլինեմ»:— «Քարերով տո՞ւն պիտի շինեք»:— «Ոչ, մի ուրիշ բան»… Եվ այսպես, փոքրը ցած է դնում և ավելի մեծն է վեր առնում, և անդադար շարում է միմյանց վրա: Չափազանց հոգ է տանում թե իր մարմինը ամրացնելու և թե իր ուժի վրա: Մեր գյուղում հազիվ մի տղամարդ կգրանցվի, որ նրա չափ ուժեղ լինի: Եթե մեկը նրանից ուժեղ ևս լինի, բայց նա այնպիսի սատանայական ֆանդեր գիտե, որ ձեռքը ընկած մարդին կկաշկանդե և հավի նման իր ոտների տակը կդնե: Այդպիսի դեպքեր շատ են պատահել: Նրանցից օրինակ առնելով, մեր երեխաները ևս սկսել են հետևել նրան:— «Առողջ և զորավոր մարմնի մեջ է բնակվում զորեղ հոգին»,— ասում է նա,— «պետք է աշխատել զորացնել մարմինը»:

Ես խորին ուշադրությամբ լսում էի: Տեր հայրը շարունակեց.

— Ես երբեք չեմ տեսել մի այդպիսի անհանգիստ մարդ, ոչ մի րոպե դադարում չունի: Երբ դասերը կվերջացնե, ոտքի վրա մի բան կուտե և իսկույն վազ կտա դեպի դաշտը: Այնտեղ հնձավորի հետ հունձ կանե, որ ցույց տա, թե ինչպես պետք է հնձել, այնտեղ հերկավորի հետ կհերկե, որ ցույց տա, թե ինչպես պետք է հերկել, և շատ անգամ բահը առած, բանջարանոցներում ածուներ կփորե: Բանջարների մշակությունը մեր գյուղում բոլորովին անծանոթ էր, նա օրինակ տվեց մեզ, իր դպրոցի մոտ մշակելով մի գեղեցիկ պարտեզ: Երբ նրան ասում ես. վարժապետ, այդպես չէ կարելի, մի փոքր հանգստացիր: Նա սովորաբար պատասխանում է. «Հանգստությունը մեզ համար չէ, մենք շատ ետ ենք մնացել, և այդ պատճառով շատ բան ունենք սովորելու և անելու… Մեզ պետք է շտապել»…

— Միայն ձե՞ր գյուղով զբաղված է նա:

— Ոչ միայն մեր գյուղով, այլ մեր շրջակայքի բոլոր գյուղերը գնում է նա: Ձիուց ավելի արագ է ուղեգնացության ժամանակ, և երբեք ձի չէ նստում, այլ սովորություն ունի միշտ ոտքով շրջել: Ամեն գյուղում ճանաչում են նրան, ամեն տեղ հարգում են, և ամենքը աշխատում են նրա խորհուրդներից օգուտ քաղել: Մինչև անգամ քուրդ գյուղացիների համար նա չէ խնայում իր աշխատությունները: Երբ նրանից

հարցնում են, թե դրանց հետ ի՞նչ գործ ունես, դրանք խո մեզանից չեն, նա պատասխանում է. «Դրանք մեր հարևաններն են, եթե դրանք քաղցած մնան, մեր հացը կխլեն մեր ձեռքից: Եթե ցանկանում ենք, որ քուրդը գողություն չանե, պետք է աշխատենք սովորեցնել նրան, որ իր վաստակով ապրուստ հայթայթե»: Նա քրդերի ուսման մասին էլ է հոգ տանում: Նրա դպրոցում մի քանի քուրդ երեխաներ կան, և նրանց ավելի շատ է սիրում, քան թե մեր երեխաներին: Մի անգամ այդ երեխաներից մեկը հիվանդացավ, նա կատարյալ գժվածի նման էր այդ միջոցում. ամբողջ գիշերներ նստում էր նրա անկողնի մոտ, խորին տխրությամբ նայում էր նրա վրա, կարծես շնչառության ամեն մի վայրկյանը համբարելիս լիներ: Այնքան հոգ տարավ, մինչև առողջացրեց:

— Քրդերը նույնպես սիրո՞ւմ են նրան:

— Ոչ միայն սիրում են, այլև սաստիկ հարգում են: Չէ՞ որ սերը սերից առաջ կգա: Քուրդն էլ մարդ է, զգացմունք ունի, խո գազան չէ: Եթե գազան ևս լինի, սե՛րը, անկեղծ սերը, նրան մարդ կդարձնի: Երբ դու գազանին սկսում ես սիրել, փայփայել, երբ սկսում ես նրա քաղցած փորը կերակրել, նա փոքր առ փոքր մոռանում է իր գազանությունը, մտերմանում է քեզ հետ և սկսում է սիրել քեզ: Դրա համար մեր տեր Հիսուս Քրիստոսը ասում էր՝ «սիրեցեք միմյանց» — Շատ անգամ նա ինձ ասում է. «Այդ ձեր գործն է, տեր հայր, տարածել սերը. դուք չպիտի զբաղվեք միայն մկրտություն, պսակ, թաղում կատարելով»: Ճշմարիտ է, բոլորովին ճշմարիտ է, այդ մեր գործն է սիրո տարածելը: Բայց մենք ոչինչ չսովորեցինք. մենք քահանա դարձանք, առանց քահանայի սրբազան պաշտոնի արժանավորություններ ունենալու: Եվ մեզանից չպահանջեցին այդ արժանավորությունները: Մեզանից պահանջեցին միայն վարձը, որով ամեն մի տգետ քահանա է դառնում: Երբեմն նա ինձ գիրք է տալիս, կարդում եմ. իմ աչքերը նոր են բացվում և ես նոր եմ հասկանում, թե որքան անպատրաստ եմ եղել: Ի՜նչեր չէր կարող անել քահանան, մանավանդ շինական քահանան: Այն բոլոր գործերը, որ նա է կատարում, հենց քահանայի գործն է: Մի՞թե քահանան չէր կարող կրթել գյուղացի մանուկներին. մի՞թե քահանան չէր կարող ծանոթացնել գյուղացուն երկրագործական նոր ձևերի հետ. մի՞թե քահանան չէր կարող այցելել հիվանդներին և նրանց ցավերին դարման տանել: Մի՞թե առաքյալները նույնպես հիվանդների մոտ չէին գնում և բժշկություն չէին անում: Ո՞րքան գործեր կան, որ կարող էր կատարել լավ պատրաստված քահանան: Բայց մենք ոչինչ չսովորեցինք և քահանայի ծանր պաշտոնը հանձն առինք:

Լսելի եղավ մի խուլ շաչյուն, շառաչյուն: Տեր հոր խոսակցությունը ընդհատվեցավ: Ես սոսկացի:

— Այդ շղթայի ձայնն է,— հանգստացրեց ինձ տեր հայրը, ժպտալով:

— Ի՞նչ շղթա:

— Նայեցե՛ք:

Ես նայեցի դեպի տեր հոր ցույց տված կողմը: Այնտեղ պառկած էր նրա որդին, և մի տարօրինակ դատապարտյալի նման, նրա ոտքերից մեկը կապած էր բավական հաստ շղթայի ծայրին, որի մյուս ծայրը անց էր կացրած պատի միջով, ո՞ւր էր տարած, չէր երևում: Քնի մեջ նա շարժեց ոտը և շղթայի շաչյունը աղմուկ բարձրացրեց:

— Այդ ի՞նչ բան է,— հարցրի զարմանալով:

Տեր հայրը բացատրեց այդ խորհրդավոր ոտնակապի նշանակությունը: Պատի մյուս կողմում, ասաց նա, ախոռատունն է, որտեղ կապած է նրա որդու նժույգը. շղթայի մյուս ծայրը պատի միջով տարած է ախոռատունը և կցած է ձիու երկաթյա ոտնակապի հետ, որ ամրացրած է նույնպես երկաթյա փականքներով: — Ինչի՞ համար:

— Նրա համար, որ եթե տանելու լինեն, շղթան կծգվի և տերը կզարթնե:

— Բայց գողը կարող է այնպես զգուշությամբ կոտրել ձիու ոտնակապը, որ ձեր որդին ոչինչ չի զգա:

— Այդ դժվար է, շատ դժվար է:

— Մի՞թե դեռևս գողություններ են լինում:

— Լավ ձիու գողությունը՝ տակավին հին սովորությամբ՝ մեր կողքերում հանցանք չէ համարվում, այլ համարվում է մի տեսակ քաջություն, ճարպկություն, և ամոթը վերաբերում է ոչ այնքան գողին, որքան ձիու տիրոջը,որ գողանալ է տալիս: Այդ խայտառակությունից ազատ մնալու համար՝ որդիս իր ոտը կապել է ձիու ոտին:

Չնայելով մեր այն օրվա դժվարին ճանապարհորդությանը, չնայելով իմ սաստիկ հոգնածությանը և չնայելով, որ գիշերի կեսից անցած էր, բայց քնելու և հանգստանալու կարիք չէի զգում: Պատրաստ էի ամբողջ գիշերը անցկացնել մինչև անգամ ամենադատարկ խոսակցություններով, միայն թե կարելի լիներ սպանել ժամանակը, մինչև կլուսանա, մինչև կտեսնեի նրան… Բայց տեր հայրը իմ հանգստանալու մասին էր մտածում, իմ անկողինը արդեն պատրաստ էր. հանվեցա, մտա տեղերիս մեջ: Բարձերի մոտ դրած էր երկու անոթ, մեկը լի ջրով, մյուսը լի գինով, որ եթե գիշերը ծարավեի, որից որ կամենայի՝ նրանով ծարավս կոտրեի, իմ կշտին անկողին մտավ տեր հայրը: Նա էլ ինձ նման երկար անքուն մնաց: Բայց նրա անքնության պատճառը բոլորովին այլ էր, նա անկողնի մեջ աղոթում էր. ամբողջ «եկեսցեն» պետք է վերջացներ, հետո քներ:

Ես մտքով հափշտակված էի դեպի դպրոցը և դեպի նրան կից երկու սենյակները: Այնտեղ ևս երկու անձինք անպատճառ անքուն կլինեին.— Ասլանը և վարժապետը: Նրանք կնստեին, նրանք կխոսեին մինչև լույս: Ա՛խ, որքան ախորժելի կլիներ ինձ լսել նրանց խոսակցությունը, նայել նրանց վրա և հիանալ: Նա դիտմամբ ընտրեց Ասլանին. նա կամեցավ առանձնանալ նրա հետ: Ինչո՞ւ ինձ ևս իր հետ չտարավ: Մի՞թե տակավին նա ինձ անարժան էր համարում իրանց հասարակությանը: Մի՞թե դեռևս այնքան անփորձ էի, որ չէի կարող մասնակցել նրանց խորհուրդներին: Ինչ էլ որ լիներ նրա կարծիքը իմ մասին, այնուամենայնիվ, ես ռեսի տանը պարզ նկատում էի, որ նա տակավին սիրում էր ինձ: Ո՛րքան կարոտով նայում էր իմ վրա, ո՛րքան դժվարությամբ զսպում էր իրան, միգուցե դեմքի մի անզգույշ ցնցումը մատներ իրան… Ո՞վ կմտածեր հանդիպել նրան այդ լեռնային խլության մեջ: Ինչո՞ւ Ասլանը առաջուց ոչինչ չասաց ինձ, չնախապատրաստեց, այդ ուրախալի տեսակցության համար: Գուցե ես այնքան անխոհեմ լինեի, գուցե իմ զգացմունքները զսպել չկարողանայի, և երբ նիզակը ձեռին՝ վեհանձնաբար ներս մտավ նա ռեսի սենյակը, ես նետվեի նրա գիրկը և սեղմեի կուրծքիս վրա թանկագին բարեկամիս: Ես խո դրանով շատ բան կփչացնեի… ես խո կմերկացնեի նրան…

Ո՛րքան փոխվել էր նա, ո՛րքան այլակերպվել էր… Ես հազիվ կարողացա ճանաչել: Փոխվել էր ամեն ինչ, որ արտաքին էր. հագուստը, մազերը, սանրվածքի ձևը, մինչև անգամ ձայնը, բարբառը: Անփոփոխ պահպանվել էր նրա մեջ նախկին ջերմ, սիրող սիրտը, որի մեջ ամեն մի թշվառի համար անսահման սեր, անսահման

կարեկցություն կար: Ո՛րքան զորեղ և կախարդիչ էր նրա ազդեցությունը գյուղացիների վրա, ո՛րքան հարգանքով էին վերաբերվում դեպի նա: Նա ինձ վրա այն տպավորությունն էր գործում, ինչ տպավորություն գործում է գազանների ահարկու զսպողը. ամեհի առյուծը լիզում է նրա ձեռքերը, կատաղի վագրը թավալվում է նրա ոտների տակ… Ո՛րքան ուժ և կամքի զորություն կար նրա մեջ, որ կարողացել էր մեղմացնել, հեզացնել և մինչև անգամ ազնվացնել այդ մարդակերպ գազանների բնավորությունը… Նա այժմ իր սիրած մթնոլորտի մեջն էր. այստեղ կար լեռ, անտառ, ծով և կենդանի աշխուժով լի ժողովուրդ: Նրա երազների ցնորքն էր՝ մի այդպիսի ժողովրդի մեջ լինել, մի այդպիսի աշխարհում գործել: Հմուտ բրուտը իր ձեռքի տակ ուներ խիստ ընտիր կավ. նրան ինչ ձև որ կամենար՝ կտար:

Նրանից շատ հեռու չէին Ոստանի ավերակները, որտեղ մի ժամանակ կանգնած էր նրա հոր հոյակապ ամրոցը, որտեղ կատարվել էին այնքան սոսկալի արկածներ… Նրանից շատ հեռու չէր Ռազմիրան գյուղը, որտեղ դրած էին նրա նախահարց պատկառելի շիրիմները: Հայրը այդ երկրի տերն ու իշխանն էր: Որդին դարձել էր նրա աշխատասեր մշակը, նրա բնակիչների դաստիարակը: Ո՛րպիսի խաղ անագորույն բախտի, որպիսի մեծ փոփոխություն…

Բայց ես համոզված էի, որ նախահարց մոռացված շիրիմները և հայկական ամրոցի տխուր փլատակները այնքան ցավ չէին կակարող ազդել նրա զգայուն սրտին, որքան վերջին գյուղացու խարխուլ խրճիթի թշվառությունը, որ տառապյալ մայրը, սովատանջ երեխաների լացն ու տրտունջը հանգստացնելու համար, միայն պարզ ջրով լցրած պտույկը դնում է օջախի վրա, շերեփով խառնում է, որպես թե կերակուր է պատրաստում երեխաների համար:

Ա՛խ, որքան երկար էր այդ գիշերը: Տեր հայրը դեռ չէր վերջացրել իր «եկեսցեն». նրա շրթունքները դեռ լուռ շշնջում էին: Ե՞րբ պիտի քներ նա: Այնտեղ պլպլում էր մի այլ անքուն արարած — ճրագը: Ես պատրաստ էի մի շունչի հարվածով սպանել նրան: Թո՛ղ մութ լիներ, թո՛ղ ամեն ինչ ծածկվեր խավարի մեջ: Ես կվերկենայի, կհագնվեի ու կգնայի… Ի՞նչ կմտածեին տանեցիք, եթե նկատեին: Ինչ կուզե թո՛ղ մտածեին, բայց ես կգնայի… Գուցե կմոլորվեի, կկորչեի խրճիթների լաբիրինթոսի մեջ, գուցե գայլանման շները պատառ-պատառ կանեին ինձ, բայց կգնայի… Կգնայի դեպի դպրոցը և նրան կից երկու սենյակները…

Գոնե շուտ լուսանար: Տեր հոր աղոթքի շշունջը այլևս չէր լսվում. նա քնեց: Խրճիթում արթուն ոչ ոք չմնաց: Ես ուրախացա: Պետք էր միայն ճրագը հանգցնել: Բայց ահա աքաղաղը սկսեց կանչել: Նրա ձայնից զարթեց օրորոցի մեջ քնած մանուկը և զարթեցրեց քնած մորը: Մի հսկող ևս ավելացավ: Ի՞նչ պետք էր արած: Մայրը ծիծը դրեց երեխայի բերանը և, գլուխը դնելով օրորոցի դաստակի վրա, նստած տեղում դարձյալ քնեց: Այդ լավ եղավ: Ամբողջ օրը աշխատած գեղջկուհու անդամները կարոտ էին հանգստության: Բայց երեխան այդ չգիտեր: Նա կրկին սկսեց լաց լինել, կրկին զարթեցրեց մորը: Երևի, ծիծը դուրս պրծավ նրա բերանից: Ես պատրաստ էի խեղդել նրան, որ ձայնը կտրե: Մայրը դարձյալ ծիծը դրեց բերանը, դարձյալ գլուխը դրեց օրորոցի դաստակի վրա, իսկույն քունը տարավ: Այդ ուրախացրեց ինձ: Բայց ահա մի նոր անհաջողություն: Կրկին լսելի եղավ շղթայի շաչյունը: Այս անգամ ձին ձիգ տվեց շղթան: Երևի նա շարժեց ոտները: Տերը զարթեց, գլուխը վեր բարձրացրեց և ականջները լարեց դեպի ախոռատան պատը: Ոչինչ չկար, ձին հանդարտվեց: Տերը կրկին գլուխը դրեց բարձի վրա: Ի՜նչ երջանիկ մարդիկ են դրանք, գոնե կարող են քնել,— քնե՛լ, որ մարդու գլխավոր մխիթարություններից մեկն է: Ինձ համար չէր այդ մխիթարությունը: Գոնե շուտ լուսանար: Մտածեցի զբաղեցնել ինձ, որ ժամանակը անցնի: Տասն անգամ համբարեցի առաստաղի գերանները, տասն անգամ համբարեցի գերանների վրա շարած փարդուկները: Այդ ևս, վերջապես, ձանձրացրեց ինձ: Աչք ածեցի դեպի խրճթի շուրջը: Նայում էի, թե ինչ

բան ինչ տեղ է դրած: Իր տեղումն էր ավելը, իր տեղումն էր անթրոցը, իր տեղումն էր լվացքի տաշտը: Ամեն ինչ անշարժ էր: Մի արարած միայն շարժվեցավ տեղից: Թառի վրա թառած էր աքաղաղը, իր հարեմը շուրջը հավաքած: Մարիներից մեկը կամաց անցավ աքաղաղի ետևից և, խորամանկությամբ մի կողմ հրելով նրա կշտին կանգնած առաջին մարիին, ինքը բռնեց նրա տեղը: Այդ հաճոյամոլությունը գրգռեց առաջինի խանդը, նա սկսեց տրտնջալ: Աքաղաղը, կարգ պահպանելու համար, կտցահարեց նորեկի գլխին և, նրան իր հափշտակած տեղից հեռացնելով, դարձյալ առաջինին կանգնեցրեց իր կշտին: Առաջինը գեղեցիկ էր, իսկ վերջինը տգեղ… թռչունները ևս զուրկ չեն գեղասեր ճաշակից: Այդ կարգադրությունից հետո, աքաղաղի երկրորդ ձայնը աղմկեց փոքրիկ խրճթի լռությունը: Նրա ձայնից այժմ զարթնեց պառավ երեցկինը: Դա էր պակաս: Նա քնած էր առանց հանվելու: Վեր կացավ, խարխափելով մոտեցավ օջախին: Այնտեղ, կրակի վրա, ինչ-որ եփ էր գալիս, թըժթըժում էր: Պտույկի խուփը բարձրացրեց և նայեց՝ արդյոք ջուրը քաշել չէ՞ր: Նրա մեջ անպատճառ կամ հարիսա, կամ խաշ և կամ քեշկեկ պիտի լիներ, որ ամբողջ գիշերը ստիպված է եփվել, որ վաղ առավոտյան պատրաստ լինի ուտելու համար: Այդ երեք սննդարար կերակուրները ուտվում են արեգակից առաջ, որ ամբողջ օրը կարելի լինի մարսել: Վերջացնելով իր գործը օջախի մոտ, երբ պառավը մի ինչ-որ բան որոնում էր խրճիթի մեջ, նրա աչքին ընկավ օրորոցի դաստակի վրա քնած հարսը: Նա մոտեցավ և, ոտքով բոթելով նրան մրթմրթաց.— «Դու մի օր այդ երեխային կխեղդես. քանի անգամ ասել եմ քեզ, որ ծիծ տալու ժամանակ քնելու չէ»: Նկատողությունը ծանր էր: Հարսը ուղղեց իր դիրքը և, տեսնելով, երեխան վաղուց արդեն քնած էր, օրորոցի քողը ցած թողեց, իր տեղում նստած մնաց: Պառավը այլևս չմտավ իր անկողինը, խրճթի դուռը կամաց բաց արավ, դուրս եկավ սրահը, նայեց դեպի երկինքը, տեսնելու, թե գիշերի որ ժամն է: Աստղերը նրա ժամացույցն էին: Նա վերադարձավ և, թել մանելու ճախարակը իր ետևից քարշ տալով, կրկին դուրս եկավ սրահը: Այնտեղ մնաց, և մի քանի րոպեից հետո լսելի եղավ ճախարակի բարակ ճլվլոցը: Այժմ ամեն հույս կորած էր. նա կերբերոսի նման դուռը բռնեց: Ես այլևս չէի կարող դուրս գալ: Պառավը այնտեղ կմնար և մինչև լույս կմաներ: Սկեսուրը վեր կենալուց հետո, հարսին արդեն անպատշաճ էր քնել. դա էլ վեր առեց իր կարը, նստեց սյունի մոտ, ճրագի հանդեպ: Սկեսուրը մանում էր, հարսը կարում էր: Իսկ ինձ տանջում էր մի կողմից անքնությունը, մյուս կողմից նրան տեսնելու, նրա հետ խոսելու սաստիկ փափագը: Գոնե շուտ լուսանար. ո՛րքան երկար էր այդ գիշերը: Ես կրկին սկսեցի համբարել առաստաղի գերանները: Առաստաղից ցած իջա, սկսեցի համբարել խրճթի սյուները: Այդ ևս վերջացավ, սկսեցի համբարել, թե դեռ քանի հոգի քնած են մնացել: Իմ աչքերը կանգ առին գեղեցիկ պատկերի վրա: Ես տեսնում էի այժմ նրա կիսամերկ թիկունքը միայն, երեսը շուռ էր տված դեպի հակառակ կողմը: Նայում էի, երկար նայում էի այդ լիքը թիկունքի վրա, որ սքանչելի կերպով լուսավորված էր ճրագի լուսով: Երկու ուրիշ աչքեր ևս դարձան դեպի այդ կողմը, և ուշադրությամբ նայեցին: Դրանք հարսի աչքերն էին: Նա ցած դրեց կարը, մոտեցավ և ձեռքով բզեց օրիորդի կողքը: Նա զարթնեց: «Այդ ի՜նչպես ես քնած»,— լսելի եղավ հարսի հանդիմանությունը: Օրիորդը ոչինչ չպատասխանեց, որովհետև նա չգիտեր, թե ինչպես էր քնած: Նա վերառեց իր մոտ դրած կարմիր շապիկը և շտապով հագավ: Գեղեցիկ թիկունքը անհետացավ իմ աչքից:— «Ես քեզ չասեցի, որ ինձ շուտ զարթեցնես»,— ասաց օրիորդը:— «Հիմա էլ ուշ չէ»:— պատասխանեց հարսը, կրկին գնալով և իր տեղը նստելով: Օրիորդը հագնվեցավ և դուրս եկավ սրահը: Խրճթի կիսաբաց դռնից ես տեսնում էի, թե ինչպես լվացվեցավ նա, թե ինչպես շապիկի լայն դրոշակով սրբեց երեսը, և թե ինչպես մատներով սանրեց, ուղղեց գլխի մազերը: Իր պչրանքը վերջացնելուց հետո, նա վեր առեց հարթ կտրած մի կոճղ, աթոռի նման դրեց տակին և նստեց իր ոստայնի առջև: Ճարտար մատները սկսեցին արագությամբ խաղալ գույնզգույն թելերի հետ: Ես հիացած նայում էի. սրահում վառվող ճրագը լուսավորում էր նրա աշխատությունը: Նա մի գեղեցիկ գորգ էր հյուսում, մի ամբողջ տարի սկսել էր և մոտ ժամանակում վերջացնելու վրա էր:

Ո՜րպիսի մեծ եռանդով աշխատում էր նա, ո՜րքան ոգևորությամբ շարժվում էին նրա ճարպիկ մատները: Կարծես յուրաքանչյուր նկարը, յուրաքանչյուր գույնը տպավորում էին նրա սրտի մեջ նույնպիսի գեղեցիկ նկարներ ապագայի,— ջերմ փափագով սպասվող ապագայի մասին… նա գործում էր և մեղմ ձայնով երգում էր: Նա նշանված էր. նա այդ գորգը իր օժիտի համար էր պատրաստում: Այնտեղ, հարսանիքի ժամանակ, փեսայի տանը, բաց կանեին այդ գորգը և բոլոր գյուղացիք կզարմանային նորահարսի շնորհքի և ճարտարության վրա: Աքաղաղը երրորդ ան գամ սկսեց խոսել: Այդ անգամ զարթնեց տեր հոր որդին — օրիորդի հայրը: Նա շղթան բաց արեց ոտից և, հենց իր անկողնի մեջ նստած տեղում, հագնվեցավ: Երբ վեր կացավ, նա մի փոքր ջուր քսեց երեսին, որպես թե լվացվեցավ: Հետո կանեփի երկար ձողը, մոմի նման վառելով, ձեռին բռնած, դիմեց դեպի ախոռատունը՝ իր նժույգին և մյուս անասուններին նայելու: Նրա կինը, որ ճրագի առջև կար էր կարում, ամենևին իր տեղից չշարժվեցավ ամուսնու վեր կենալու ժամանակ: Կարծես նրան չէր ճանաչում: Գյուղացու ընտանեկան կարգերին անծանոթ մեկը, նրանց միմյանց հետ կռված կհամարեր: Բայց ինձ հայտնի էր, որ կինը իր ամուսնուն ոչ մի ծառայություն չէ ցույց տալիս, երբ նրա հայրը կամ մայրը ներկա էին: Նրանք գաղտնի են վայելում թե իրանց սերը և թե փոխադարձ հարգանքը: Սրահում հայրը տեսավ իր աղջկան, որ նստած գործում էր: Մոտեցավ, ձեռքը գգվանքով քսեց նրա մազերին և անցավ: Լսելի եղավ եկեղեցու կոչնակի ձայնը: Կարծես մի մարդ խթեց տեր հոր կողքին, նա իսկույն զարթնեց: Նրա երեք անգամ հազալու ձայնը արդեն նշան էր իր զարթնելուն: Հարսը շուտով տեղից վեր կացավ, մոտեցավ, սկսեց օգնել նրան հագնվելու: Աչքերի բացվելու հետ, բացվեցավ և տեր հոր բերանը, սկսեց ինչ-որ սաղմոս մրթմրթալ: Մրթմրթում էր նա հագնվելու ժամանակ, մրթմրթում էր նա լվացվելու ժամանակ, մրթմրթում նա երեսը սրբելու ժամանակ, և այդ անվերջ սաղմոսը շարունակվեցավ, մինչև մորուքը և գլխի մազերը սանրեց: Հարսը ամենայն կամակատարությամբ ցույց էր տալիս իր ծառայությունները: Այժմ համարյա ընտանիքի մեծ մասը ոտքի վրա էր: Մնացել էին մի քանի երեխաներ, որոնք բոլորը մի վերմակի տակ քնած էին: Դրանք էլ սատանայի նման դուրս վազեցին իրանց անկողնից, և միայն կարճ շապիկները հագներին, պզեցին օջախի շուրջը: Խիստ ծիծաղելի էր տեսնել, թե ո՜րպիսի ախորժակով ականջ էին դնում մեծ պտույկի մեջ եփվող կերակուրի ձայնին: Նրանք առանց գիտենալու, թե ի՜նչ է եփվում, արդեն սկսեցին միմյանց հետ վիճել: Մեկը ասում էր՝ հավի ջնաղը իմն է, կարծելով, թե հարիսա է, մյուսը ասում էր՝ ոչխարի ճանը իմն է, կարծելով, թե խաշ է. երրորդը ծաղրում էր նրանց, թե ոչ ջնաղ կա և ոչ ճան, որովհետև եփվողը քեշկեկ է: Երեխաների վեճը դեռ շարունակվում էր, երբ տեր հայրը առեց գավազանը, պատրաստվում էր դուրս գալ: Այդ միջոցին ես ձայն տվեցի.

— Ես էլ կգամ:

— Ո՞ւր:

— Եկեղեցի:

— Օրհնյալ լինիս, գնանք միասին:

Նա մի փոքր համբերեց, մինչև ես պատրաստվեցա:

Դուրս գալով սրահը, ես վերջին անգամ նայեցի օրիորդի գեղեցիկ գորգի վրա, վերջին անգամ նայեցի և նրա գեղեցիկ երեսին: Նա կարմրեց, ինչպես այն վարդագույն ծաղիկը, որ այդ րոպեում կազմում էր գորգի վրա:

Աղոթարանը (արևելքը) դեռ չէր լուսավորվել. գիշերային խավարը դեռ ամեն ինչ ծածկել էր իր սև թևքերի տակ: Գյուղի մեջ տիրում էր խորին լռություն, միայն հեռվից լսելի էր լինում նիրհող ծովի խուլ շնչառությունը: Մենք անցնում էինք ոլոր-մոլոր

փողոցներով, ավելի ճիշտ կլիներ ասել, կտուրների վրայով: Տեր հայրը դեռ շարունակում էր մրթմրթալ իր անվերջ սաղմոսը: Տեղ-տեղ խրճիթների դռների առջև դուրս էին բերել եզները, լծում էին արորը, որ տանեն արտերը հերկելու: Տեղ-տեղ հանդիպում էինք մշակների, որ մանգաղները թևքի տակ դրած, դիմում էին դեպի դաշտը: Գործը և աշխատասեր գործավորը զարթել էին միասին:

Եկեղեցու դռանը մենք գտանք մի խումբ ծերունիներ, որոնք նստած էին գերեզմանաքարերի վրա, ջերմեռանդությամբ սպասում էին, մինչև դռները բաց անեն:

— Ես պետք է գնամ պարոն բժշկապետի մոտ,— ասացի տեր հորը,— հետո կգամ ժամ:

— Գնացեք, որդի,— ասաց նա, ցույց տալով վարժապետի սենյակները:

Լուսամուտների թանձր վարագույրները ցած էին թողած, ես կարծեցի, քնած կլինեն, բայց ներսից աղոտ լույս էր երևում: Ես մոտեցա նախասենյակի դռանը, սկսեցի բախել: Ավելի սաստիկ, քան դռան տախտակները, բաբախում էր իմ սիրտը: Ինչպես պետք է հանդիպեի նրան, ինչե՛ր պետք է ասեի նրան: Ճանապարհին, տեր հոր հետ գալու ժամանակ, իմ գլխում արդեն պատրաստել էի մի ամբողջ ճառ, բոլորը պետք է կարդայի նրան, որ տեսներ, որ ես այլևս առաջվա տգետ Ֆարհատը չեմ, որ ես բավական զարգացել եմ: Այդ կուրախացներ նրան: Դուռը բացվեցավ, ես դողդողալով ներս մտա, որպես դասը լավ չսերտած աշակերտը մտնում է դասատունը: Նախասենյակում նա գրկեց ինձ: Ես մի բառ անգամ չգտա նրան ասելու, բոլորը, ինչ որ կազմվել էր իմ գլխում, շփոթվեցավ, մոռացվեցավ սրտիս սաստիկ հուզմունքից: Ես միայն փաթաթվեցա նրա պարանոցին:

Երբ մտանք սենյակը, Ասլանը լուռ նստած էր գրասեղանի մոտ, որի վրա վառվում էին երկու մոմեր և լուսավորում էին այնտեղ թափված թղթերը: Երևում էր, որ դրանք ևս, ինձ նման, ամբողջ գիշերը չէին քնել: Ես պատմեցի, թե ինչպես անցկացրի իմ գիշերը:

— Այդ ես երևակայում եմ,— ասաց վարժապետը ծիծաղելով,— տեր հայրը իր աղոթքներով հանգստություն չէր տա քեզ: Նա թեև մոլեռանդ է, բայց շատ լավ մարդ է:

Նա բռնեց իմ ձեռքից, նստեցրեց իր մոտ, մի փոքրիկ հայկական թախտի վրա, որ ծածկված էր գեղեցիկ գորգով, որը տեղային ձեռագործության արդյունք էր: Նայում էր իմ երեսին, նայում էր իմ հասակին և երկար մի ձեռքը բաց չէր թողնում իր ափի միջից: Կարծես նոր էր տեսնում ինձ, և աշխատում էր միանգամից լրացնել երկար ժամանակների կարոտությունը:

— Ես ամենևին չէի սպասում, որ այդ գյուղում կտեսնեմ քեզ,— ընդհատեցի ես մեր մեջ տիրող լռությունը:

— Իսկ ես սպասում էի, — պատասխանեց նա, ձեռքը դնելով իմ ուսի վրա:

— Ուրեմն դու գիտեի՞ր, որ մենք գալու ենք այստեղ:

— Ինչպես չգիտեի… Ասա,— խոսքը փոխեց նա,— հավանո՞ւմ ես այդ գյուղը:

— Շատ գեղեցիկ տեղ է, հիանալի տեսարաններ ունի:

— Եվ լավ բնակիչներ,— ավելացրեց նա:

Ասլանը մեզանից հեռու, գրասեղանի մոտ, պարապում էր: Նրան չխանգարելու համար մենք կամաց էինք խոսում: Նա ինչ-որ թվաբանական հաշիվներ էր անում և խորասուզված էր խնդրի լուծման մեջ: Վերջը մատիտը մի կողմ դրեց, ինքն իրան ասելով,— Է՛հ, սատանան տանե… չէ դուրս գալիս…

Վարժապետը թողեց ինձ, մոտեցավ գրասեղանին և, մատը թղթի վրա դնելով, ասաց.

— Այդ թվանշանները պետք է միացնել մյուսների հետ…

— Այդ ես փորձել եմ…

— Բայց դու մի սխալ ես արել… ահա այստեղ…

Ասլանը կրկին վեր առեց մատիտը: Վարժապետը կրկին վերադարձավ ինձ մոտ:

— Հիմա պատմիր,— ասաց նա, այժմ իսկապես վարժապետի եղանակով,— ո՞ր երկրներում եղար, ի՞նչ մարդկանց հետ տեսնվեցար, ի՞նչ տպավորություններ գործեցին քո վրա տեսածներդ:

— Կարծեմ դու այդ բոլորը գիտես, թե որտեղերում եղել եմ և ի՛նչ մարդկանց հետ տեսնվել եմ,— պատասխանեցի ես ժպտալով:

— Այո՛, գիտեմ, բոլորը գիտեմ…

— Էլ ո՞ւր ես հարցնում:

— Ինձ հետաքրքրում են քո տպավորությունները և քո կարծիքները:

Ես համառոտ կերպով պատմեցի իմ ճանապարհորդական տպավորությունները, պատմեցի, թե որպիսի մտքեր էին զարթեցնում իմ հայրենի աշխարհի ավերակները, պատմեցի և իմ կրած հոգեկան տանջանքները ժողովրդի թշվառության մասին: Նա ուշադրությամբ լսում էր, իսկ ես նրա դեմքի վրա նշմարում էի ճշմարիտ վարժապետի ուրախությունը, երբ սիրած աշակերտի մեջ մի փոքրիկ հառաջադիմություն է նկատում: Նա դարձյալ գրկեց ինձ, ասելով.

— Քո մեջ միտք կա, Ֆարհատ: Դու բավական զարգացել ես:

— Այդ մարդուն եմ պարտական:— Ես ցույց տվեցի Ասլանի վրա:

Նա գրասեղանի վրայից գլուխը բարձրացրեց և գոհունակությամբ ժպտաց, չգիտեմ, իմ հայտնած շնորհակալության համար, թե նրա համար, որ դժվարին խնդիրը լուծվեցավ: Վերջինը պետք է հավանական լիներ, որովհետև նա մատիտը դարձյալ ցած դրեց և ինքն իրան ասաց.— «Հիմա դուրս եկավ»…

Որպես հետո իմացա, Ասլանը հաշվում էր, թե ո՞րքան ծախս է հարկավոր, եթե մինչև Դատվանի նավահանգիստը սայլակի հարթ ճանապարհ շինվի, և ո՞րքան ժամանակ է հարկավոր մի այդպիսի ճանապարհ պատրաստելու համար:

Ես տեր հոր նկարագրություններից առաջուց այնքան շատ տեղեկություններ էի ստացել վարժապետի դպրոցի, սենյակների, կացության, սովորությունների և առհասարակ նրա կյանքի մասին, որ այժմ ինձ մնում էր միայն ստուգել, թե որքան ճշմարիտ էին նրանք: Մի հայացք բավական էր բոլորը ստուգելու համար: Ամեն ինչ ակներև էր: Բայց նրա դպրոցը, կացարանը, նրա տարօրինակ սովորությունները և նրա ամբողջ գործունեությունը, որ տեր հոր զարմացք էին պատճառում և մինչև

անգամ օտարոտի էին թվում, ընդհակառակն, ինձ վրա բոլորովին այլ տպավորություն էին գործում: Ես այդ բոլորի մեջ տեսնում էի մի անձնազոհ միսիոնարի առաքելություն՝ անկիրթ ժողվրդի մեջ: Այդ առաքելությունը՝ իր ինքնուրույն ձևերով՝ ամենևին միակողմանի նպատակ չուներ. նա այնքան բազմակողմանի էր, որքան բազմակողմանի էին ժողովրդի պետքերը, որի կրթությանը, որի բարօրությանը նվիրել էր անխոնջ գործիչը իր անձը և իր գործունեությունը:

Բայց ինձ զբաղեցնում էր մի միտք. այն բոլորը, որ ես տեսա, որ ես լսեցի, այն բոլորը, որ կատարվել էր այստեղ, չէր կարող փոքր ժամանակի աշխատության արդյունք լինել: Այն օրից, որ ես վերջին անգամ բաժանվեցա նրանից Որսորդի տանը, շատ ժամանակ չէր անցել: Մի՞թե այդքան կարճ միջոցում կարելի էր այդքան շատ գործ կատարել: Անտարակույս, նա շատ վաղուց հարաբերություններ ուներ այդ գյուղացիների հետ: Ռեսի տան խոսակցություններից երևաց, որ նա գլխավորապես ձմեռն է պարապում երեխաների հետ, իսկ տարվա մյուս եղանակներում ազատ է: Այդ ազատ ժամանակներում նա կամ պարապում էր գյուղացիների հետ, կամ գնում է իր հայրենիքը բարեկամներին տեսնելու: Ո՞վքեր էին նրա բարեկամները, որտե՞ղ էր նրա հայրենիքը,— այդ ես լավ գիտեի… Երևի, հենց այդ արձակուրդների ժամանակ նա գալիս էր մեզ մոտ և ես առիթ էի ունենում տեսնելու նրան: Իսկ երբ բաժանվում էր մեզանից, կամ վերադառնում էր այդ գյուղը, սկսում էր իր աշխատանքը կամ ուրիշ տեղերում ճանապարհորդություններ էր անում: Անկասկած, այդ պետք է լիներ պատճառը, որ նա երբեմն հայտնվում էր մեզ մոտ և դարձյալ շուտով անհայտանում էր…

— Գիտե՞ք, դուք այս առավոտ խանգարեցիք ինձ եկեղեցի գնալ,— բավական լուրջ կերպով ասաց նա, դառնալով դեպի Ասլանը և դեպի ինձ:— Ես ամեն երեկո և ամեն առավոտ եկեղեցուց երբեք ետ չեմ մնում:

— Դարձյալ կարող ես գնալ,— պատասխանեց Ասլանը հեգնական եղանակով:

— Այժմ ուշ է, ժամասացությունը վերջացել է, ժամավորները ահա դուրս են գալիս:

Նա մոտեցավ, բարձրացրեց լուսամուտի վարագույրը, նայեց դեպի եկեղեցու բակը: Ժամասացությունը վերջացել էր այն ժամանակ, երբ արեգակը դեռ չէր ծագել: Նրա այժմյան ժամասիրությունը զարմացրեց ինձ, ավելի այն պատճառով, որ ինձ վաղուց հայտնի էին նրա կրոնական հայացքները:

— Երևի, վանքերի մոտ ապրելով, դու սովորեցիր ժամասեր լինել,— նկատեցի ես ծիծաղելով:

— Այո՛…— պատասխանեց նա դրական կերպով գլուխը շարժելով:— Բայց ի՞նչ մի առանձին օգուտ կա գայթակղության պատճառ տալ ջերմեռանդ գյուղացուն: Երբ վարժապետը ժամ չէ գնում, երբ վարժապետը պաս չէ պահում, նա ոչինչ ազդեցություն չէ կարող ունենալ գյուղացու վրա:

— Ուրեմն դու պա՞ս էլ ես պահում:

— Ոչ միայն պաս եմ պահում, այլ օրերով ծոմ էլ եմ պահում:

Նրա ծոմ պահելու նպատակը ես գիտեի, տեր հայրը բացատրել էր ինձ: Բայց երբ Ասլանը լսեց վերջին խոսքը, ասաց.

— Այդ բոլորը շատ լավ է, այո՛, պետք չէ գյուղացուն գայթակղության պատճառ տալ, բայց մի առանձին օգուտ էլ չունի՝ քաջալերել ռամկի ավելորդապաշտությունները: Ինչ որ ավելորդ է, ինչ որ հին է, պետք է ոչնչանա:

— Թո՛ղ ոչնչանա,— պատասխանեց նա, Ասլանի նկատողությունը վաղաժամանակ համարելով:— Բայց ինչո՞ւ շտապել կտրելու հին տերևը, քանի որ, նորը դուրս գալուց հետո, նա ինքն իրան կթառամի և ցած կթափվի:

— Նրա համար պետք է շտապել, որ հինը կտրելով, նորը ավելի շուտ է աճում:

Նրանց վիճաբանությունը ընդհատվեցավ: Լսելի եղավ դռան ձայնը:

— Անպատճառ տեր հայրը կլինի,— ասաց վարժապետը:— նա սովորություն ունի ամեն առավոտ, ժամից դուրս գալուց հետո, իմ սենյակը մտնել և սուրճ խմել:

Նա գնաց դուռը բաց անելու: Այդ միջոցին Ասլանը հավաքեց գրասեղանի վրա թափված թղթերը և կողպեց արկղիկի մեջ: Եվ իրավ, ներս մտավ տեր հայրը, ռեսին իր հետ բերելով: «Բարի ողջույն» և «ողորմյա աստված» ասելով, նրանք նստեցին վարժապետի մահճակալի վրա: Հարցնում էին, թե ի՞նչպես անցկացրեց պարոն բժշկապետը գիշերը, արդյոք հանգիստ էր, լա՞վ քնեց, թե անհանգիստ եղավ: Ասլանը հայտնեց իր շնորհակալությունը: Հետո սկսեցին խոսել այն բանի վրա, թե եկեղեցում այս առավոտ այսինչ տիրացուն՝ այնինչ շարականը շատ լավ երգեց, թե նրա ձայնը օրըստօրե ախորժելի է դառնում և, ընդհակառակն, մյուս տիրացվի ձայնը փչանում է, երևի, շատ խմելուցն է, և վերջ ի վերջո այն եզրակացությանը հասան, որ նրան պետք է արգելել, որ չխմե:

Վարժապետը ոչ ծառա ուներ և ոչ աղախին. նա ինքն էր մաքրում իր սենյակները, ինքն էր պատրաստում իր կերակուրը, ինքն ևս սկսեց թե իր հյուրերի և թե մեզ համար սուրճ պատրաստել: Ծառա չպահելը բացատրում էին նրա չափազանց համեստ անփափակսեր կացությամբ: Գուցե գլխավոր պատճառն այն էր, որ նա չէր ցանկանում իր մոտ երկրորդ աչքեր ունենալ: Նրան երբեմն օգնում էր եկեղեցու ծերունի ժամկոչը, որ երկու ականջներից ևս խուլ էր և աչքերը վատ էին տեսնում: Այս առավոտ նա չհայտնվեցավ, որովհետև եկեղեցում իր գործը դեռ չէր վերջացրել: Միևնույն սենյակի վառարանի մեջ կրակ կար: Այնտեղ վաղուց արդեն եփ էր գալիս սուրճը. մի այլ ամանում տաքացրած էր կաթը: Երբ նա լիքը բաժակները դրեց մեր առջև, հետո բաց արեց իր սենյակի պահարաններից մեկը, այնտեղից դուրս բերեց սպիտակ հաց, սեր և կարագ նախաճաշիկի համար: Սերը և կարագը ընծայել էին նրան հովիվները, որոնց մոտ էր գնացել նախընթաց օրը, բայց տեր հայրը արգելեց այդ վերջիններն սեղանի վրա դնել ասելով.

— Իզուր ախորժակներդ մի փչացրեք, ես եկել եմ ձեզ հրավիրելու մեր տունը:

— Երևի երեցկինը մի լավ բան պատրաստած կլինի նախաճաշիկի համար,— ժպտալով հարցրեց վարժապետը:

— Եթե լավ չլինի, վատ էլ չի լինի,— պատասխանեց քահանան նույնպես ժպտալով:

— Անպատճառ լավը կլինի. ես հրաժարվում եմ իմ ունեցածը սեղանի վրա դնել, թող մնա. այսօր իմ ճաշը դրանցով արդեն կարելի է պատրաստ համարել:

Ո՛րքան փոխվել էր նա, ո՛րքան մեղմացել էր նրա բնավորությունը, ո՛րքան քաղցրությամբ էր վարվում այդ մարդկանց հետ: Ես միշտ համարում էի նրան խստասիրտ, անհամբեր, կամակոր և բռնասեր մի անձնավորություն: Բայց այժմ

ներկայանում էր նա՝ որպես գյուղացու սրտի, հոգու, զգացմունքների մարմնացած մի արտահայտություն, որ նրանից ծագելով, գիտեր նրան սիրելի լինել:

Սուրճից հետո մենք ամենքս դիմեցինք տեր հոր տունը: Արևը նոր էր սկսել ծագել, նրա արշալույսը ավելի գեղեցիկ էր, քան երեկոյան վերջալույսը: Փոշիանման նուրբ մառախուղը վեր էր բարձրանում ցողազարդ բուսականության վրայից և ամբողջ շրջակայքը եփ էր գալիս, գոլորշիանում էր: Աղջիկները, ջրի սափորները ուսներին, վերադառնում էին մերձակա աղբյուրից: Վաղորդյան թեթև ցուրտը տվել էր նրանց թշերին թեթև կարմրություն: Ծերունիները, նստած կտուրների վրա, տաքանում էին առաջին ճառագայթներով և նայում էին դեպի ծովը, որ այդ րոպեում մի արծաթյա մեծ ափսեի նմանություն էր ստացել: Ուշացած, ետ ընկած երիտասարդները շտապում էին լծել արորը կամ գութանը: Հնձավորի մանգաղի փայլը շողշողում էր հեռվից: Տավարների նախիրը, ձիաների երամակը վաղուց էին դուրս քշել, իսկ ոչխարների հոտերը դեռ նոր քաղում էին թարմ ծաղիկները կանաչ խոտերի հետ: Գեղեցի՛կ էր գյուղական առավոտը, խաղաղ, երջանիկ գյուղացու առավոտը, որի քրտինքը վաղորդյան ցողի հետ ոռոգում էր դաշտերը, որի վաստակը չէր հարստահարվում, որի զավակները ամբողջ տարի ուտելու հաց ունեին և տաք բնակարան:

Որ կողմից և անց էինք կենում, կտուրների վրա նստած մարդիկ խմբով ոտքի էին կանգնում և գլուխ էին տալիս: Այդ պատիվը վերաբերում էր, իհարկե, գլխավորապես տեր հորը, ռեսին և վարդապետին, որոնք գյուղացիներից հավասար հարգանք էին վայելում: Խրճիթների երդիկներից ծուխը թանձր սյուներով վեր էր բարձրանում և միախառնվում էր բարակ, թափանցիկ մառախուղի հետ: Թոնիրները վառվում էին:

Երբ մտանք տեր հոր տան բակը, նրա որդին իր նժույգը ախոռատնից դուրս բերելով, այնտեղ կապել էր և իր ձեռքով թիմարում էր: Մենք ամենքս կանգնեցինք, նայում էինք սիրուն նժույգի վրա: Վարժապետը մտածեց նրա հետ մի կատակ խաղալ.

— Ի՞նչ ես այդքան փայփայում,— ասաց նրան,— մի գիշեր կգողանան այդ ձին:

— Ով կարող է գողանալ,— ինքնավստահ կերպով պատասխանեց նա և շարունակեց իր գործը:

— Օրինակ, ես:

— Չես կարող:

— Կարող եմ:

Տեր հայրը պատմեց այն բոլոր զգուշությունները, որ որդին գիշերը գործ է դնում իր ձիու պահպանության համար, հիշեց և շղթայի մասին, թե ինչպես նա կապում է ոտին:

— Շղթան շատ հեշտությամբ կարելի է կտրել,— սառնությամբ ասաց վարժապետը,— այդ չի փրկի ձիուն:

— Հեշտությա՞մբ,— ձայն տվեց տեր հոր որդին, սաստիկ վրդովվելով,— ապա փորձեցե՛ք:

Վերջին խոսքերի հետ նա ներս վազեց ախոռատունը և, դուրս բերելով այնտեղից ծանր շղթան, ձգեց վարժապետի առջև: Նա ամբողջ մարմնով դողում էր բարկությունից: Վարժապետը արհամարհանքով ժպտում էր: Այդ ավելի սաստակացրեց նրա վրդովմունքը:

— Ո՞ր ծայրն ես կապում ձիու ոտին,— հարցրեց վարժապետը:

Նա ցույց տվեց:

— Այդ ծայրը կապիր ձիու ոտին, ինչպես միշտ կապում ես, իսկ մյուս ծայրը քո ոտին:

Նա կատարեց պատվերը:

Մենք անհամբերությամբ նայում էինք թե ինչով կվերջանա այդ վեճը: Վարժապետը դուրս հանեց գրպանից դանակի նման մի ծալովի սղոց և, բռնելով շղթայի մեջտեղից, սկսեց սղոցել: Երբ շղթան կիսով չափ կտրվեցավ, նա մնացած մասը հուպ տվեց և ձեռքով կոտրեց: Ամենքը զարմացան, ոչ այնքան երկաթ կտրող սղոցի վրա, որ առաջին անգամն էին տեսնում, որքան վարժապետի ուժի վրա, որ կոտրեց երկաթը:

— Հիմա տեսա՞ր,— հարցրեց նա, դառնալով դեպի տեր հոր ապշած որդին,— կարելի՞ է գողանալ, թե ոչ:

— Կարելի է,— պատասխանեց նա մեղմացած ձայնով,— եթե ամեն գող քո սղոցը և քո ուժը կունենա:

Նա իր սղոցը առանց ոչ ոքի ցույց տալու, ծալեց, կրկին գրպանը դրեց: Ո՜րքան մեծ նշանակություն է ստանում մարդ, երբ ռամկի մոտ կատարում է մի գործ, որ նրան զարմացք է պատճառում: Վարժապետի հնարագործությունը արագությամբ տարածվեցավ և ամեն կողմից հարևանները թափվեցան նայելու նրա վրա: Բայց նա այնքան համեստ էր, որ իրան ցույց չտալու համար շուտով մտավ տեր հոր խրճիթը:

Այստեղ մենք գտանք նախաճաշիկի սեղանը պատրաստ: Երեցկինը ածեց ամանների մեջ մեզ ծանոթ մեծ պտույկի մեջ եփված կերակուրը, որի երեսի վրա լճացած յուղը առատությամբ ծփում էր: Դա հարիսայի նման մի կերակուր էր, որին քեշկեկ էին կոչում:

Նախաճաշիկից հետո մենք դարձյալ հավաքվեցանք ռեսի տանը: Այնտեղ սկզբում իջևանել էինք, այնտեղից ևս պիտի ճանապարհ ընկնեինք: Եթե այլ կերպ վարվեինք, տան տիրոջը վիրավորած կլինեինք: Մի գիշերվա մեջ այդ մարդիկը այն աստիճան ընտելացան մեզ հետ, որ կարծես տարիներով դրանց մոտ կացած և դրանց հետ ապրած լինեինք: Մեծ դժվարությամբ Ասլանը կարողացավ համոզել, որ մեզ բաց թողնեն: Մեր ձիաները տարել, թաքցրել էին, որ մեր ուղևորությանը արգելք դնեն: Յուրաքանչյուր գյուղացի տրտնջալով ասում էր. «Ապա իմ հացից չի պիտի՞ կտրեք»: Եթե ամիսներով մնայինք, նրանք մեզ տունից տուն ման կածեին և ամեն տեղ կգտնեինք տան տիրոջ սեղանը ու սիրտը բաց մեր առջև:

Մեծ շնորհակալությամբ մենք բաժանվեցանք այդ բարի և հյուրասեր գյուղացիներից: Ասլանը բոլորին ձեռք տվեց և նստեց իր ձին: Մուրադին,— ընկուզենու կոճղ գնողին,— թողեցինք այնտեղ: Նրա համար կարգադրեցին եկեղեցու բակում մի սենյակ, որտեղ պիտի բնակվեր նա, մինչև իր գործը վերջացներ: Ես Ասլանը և Ջալլադը ճանապարհ ընկանք:

Մեզ ճանապարհ դնելու համար ուղեկից եղավ և վարժապետը: Նրա համար պատրաստել էին սեփական ձին: Նա ոտքից գլուխ սպառազինված էր, ձեռքում կրում էր երկար նիզակը: Գյուղական աղջիկները մի առանձին հրճվանքով էին նայում այդ գեղեցիկ, վայելչակազմ ձիավորի վրա: Ուղիղն ասած, իմ հիացմունքը նույնպես չափ չուներ: Ես առաջին անգամն էի տեսնում նրան այդ հագուստով, այդ զենքերով, ձիու վրա նստած: Ամեհի նժույգը փռընչալով խաղում էր նրա տակին, ինչպես մի սիրուն կաքավ: Կարծես նա էլ էր զգում, նա էլ էր հպարտանում, որ իրան կառավարում է

ամենաընտիրը գյուղի երիտասարդներից: Դեռ մի քանի րոպե չէր անցած, որ աշխույժից և ուրախությունից նրա բերանը և պարանոցը սկսեցին փրփրել:

Բավական հեռու եկավ նա մեզ հետ, մինչև գյուղը ծածկվեցավ մեր աչքից և մենք կրկին մտանք լեռների մեջ: Ասլանը մի քանի անգամ խնդրեց, որ ետ դառնա: Բայց նրան ծանր, խիստ ծանր էր բաժանվել մեզանից: Ճանապարհը այնքան նեղ էր, որ երկու ձիավոր հազիվ մոտեմոտ կարող էին գնալ: Նա և Ասլանը գնում էին մեր առջևից, իսկ ես և Ջալլադը հետևում էինք նրանց: Ետևից ես նկատում էի, որ նա լուռ էր և խիստ հազիվ անգամ էր խոսում: Ո՞վ գիտե, ի՞նչեր էին անցնում այդ րոպեում նրա մտքով. ո՞վ գիտե, ի՞նչ զգացմունքներ այնպես թախծալի էին դարձրել նրա միշտ ուրախ դեմքը: Նրա նժույգը նույնպես հանդարտվել էր և կարեկից էր եղած իր տիրոջ տխրությանը: Երկու բարեկամներ,— հոգով, սրտով և իրանց բոլոր մտքերով միացած բարեկամներ,— այժմ պետք է անջատվեին միմյանցից: Մեկը գնում էր հեռու, շատ հեռու, ծովերի և օվկիանոսների այն կողմը… Իսկ մյուսը մնում էր Ռշտունյաց լեռների մեջ: Արդյոք ճակատագիրը մի անգամ ևս կհանդիպեցնե՞ր նրանց միմյանց հետ, թե այդ անջատումը կլիներ վերջինը և հավիտենականը… Երևի այդ միտքն էր այնպես հուզում և ալեկոծում ոգելից երիտասարդի սիրտը:

Հասանք մի փոքրիկ ձորակի, որ գոգավորված էր լեռան գրկում: Բարձր ժայռից թափվում էր բյուրեղանման պարզ ջուր և, մի քանի քայլ հեռանալով, թաքչում էր ճոխ խոտաբույսերի մեջ: Այդ ժայռից ավելի բարձր կանգնած էր մի մամռապատ խաչքար և լռությամբ նայում էր դեպի ձորի խորքը: Ի՞նչ մի անցքի հիշատակարան էր այդ խաչքարը, ոչ ոք չգիտեր, միայն երբեմն հայտնվում էին նրա մոտ գյուղացի կանայք, խունկ էին ծխում և հեռանում էին: Մի մթին ավանդություն դեռ մնացել էր, թե այնտեղ թափվել էր մի նահատակի արյուն, և այդ աղբյուրը գոյացել էր նրա մոր արտասուքից: Այդ խաչքարի ներքո նրանք ցած իջան ձիաներից: Ես և Ջալլադը նույնպես ցած իջանք, բայց չմոտեցանք նրանց: Չկամեցանք խանգարել նրանց հոգեկան հուզմունքը, չկամեցանք ականատես լինել նրանց բարեկամական արտասուքին, չկամեցանք լսել նրանց փոխադարձ խոստումները: Այդ բոլորը այնքան անմերձանալի, այնքան սուրբ, այնքան նվիրական էին, որպես այն մամռապատ խաչքարը, որ վերևից, իբրև լուռ վկա, նայում էր նրանց վրա: նրանք գրկախառնվեցան, կրկին և կրկին անգամ համբուրվեցան: Հետո նա մոտեցավ մեզ: Նախ համբուրվեցան Ջալլադի հետ և ապա ինձ հետ: Ես մինչև այսօր չեմ մոռացել այն խրատը, որ վերջին անգամ տվեց ինձ. «Հետևի՛ր Ֆարհատ, այդ մարդու խորհուրդներին, նա ուղիղ ճանապարհի վրա կդնե քեզ»… նա ցույց տվեց Ասլանի վրա:

Խորին, ջերմեռանդ զգացմունքներով բաժանվեցանք մենք, մեզ հետ տանելով խիստ անմոռաց հիշատակներ այդ անձնուրաց, անձնազոհ երիտասարդի գործունեությունից, որ իրան նվիրել էր գյուղացու կրթությանը, գյուղացու բարօրությանը:

Ընթերցող, դու արդեն վաղուց պետք է գուշակած լինես, թե ո՞վ էր այդ երիտասարդը:

Դա Կարոն էր:

ԻՉ

ԱՂԹԱՄԱՐԱ ՎԱՆՔԸ

Աղթամար կղզին գտնվում է Վանա ծովակի հարավ-արևելյան ափերի մոտ, մեկ ժամի ջրային ճանապարհով միայն հեռու է ցամաքից: Ամենահին ժամանակներում

այս կղզին Ռշտունյաց հզոր նախարարության գլխավոր ամրոցներից մեկն էր: Ծովը և կղզու բարձր, ապառաժոտ դիրքը անմատչելի էին կացուցանում նրան թշնամու հարձակմունքներից: Ռշտունյաց նահապետներից առաջինն եղավ Ռաշամ, որ նրա վրա ամրություններ հիմնեց: Իսկ հետո, Տիգրան մեծի օրերում, Բարզափրան Ռշտունին ավելի ամրացրեց Աղթամարը նոր շինություններով և, բնակեցնելով այնտեղ Պաղեստինից բերած հրեա գերիների մի մասը, կղզուն ավանի ձև տվեց: Թեոդորոս Ռշտունին, յոթերորդ դարու հերոսը, ընտրեց Աղթամարը իր համար պաշտպանության մի ամուր դիրք: Այստեղ էր պատսպարվում նա, երբ պատահում էր նրան խույս տալ թշնամիներից:

Գագիկը, Արծրունյաց առաջին թագավորը, ավելի քան Ռշտունի նախարարները, հասկացավ Աղթամարա ռազմագիտական բարձր նշանակությունը, իհարկե, իր ժամանակի պայմանների համեմատ: Իր հոյակապ շինություններով նա Աղթամարին նոր կյանք տվեց: Նախ, կղզին փոքր գտնելով իր ընդարձակ նպատակների համար, մտածեց լայնացնել նրան: Կղզու չորեքկողմից շրջանակաձև կտրեց ծովի մի մասը և կամեցավ նրան ցամաք դարձնել: Այդ մեծագործ ամբարտակի հիմքը դրեց ծովի հատակի վրա և սկսեց նրա ահագին խորությունը լցնել մեծամեծ քարերով: Երկրի բոլոր արհեստավորները և բանվորների ստվար բազմությունը, զբաղված էին այդ հսկա գործով: Բոլորին հրահանգ և ուղղություն էր տալիս ինքը թագավորը: Նա իր անձնավստահ ձեռնարկության և՛ հիմնադիրն էր, և՛ ճարտարապետը: Երկար մաքառելով ջրի հետ, վերջապես հաղթեց նրան: Ամբարտակը վեր բարձրացավ մակերևույթից, ավելի քան հինգ կանգուն:

Ժամանակի ականատես պատմաբանը, Թոմա Արծրունին, այդ շենքը աշխարհի հրաշալիքներից մեկն է համարում և, համեմատելով նրան Շամիրամի ամբարտակի հետ, ավելի ահեղ, ավելի գերազանց է գտնում: Բաբելոնի մեծագործ թագուհին հիմնեց իր ամբարտակը ցամաքի վրա և մի մեծ գետի ընթացքը դարձրեց դեպի Վանա հովիտը: Իսկ Արծրունի թագավորը իր ամբարտակի հիմքը դրեց ջրի հատակի վրա և ծովի մի մասը ցամաք դարձրեց:

Հիշյալ ամբարտակի վրա բարձրացրեց նա կղզու շրջապարիսպը, որը հինգ ձիարշավի տարածությամբ շրջապատ ուներ: Այդ շրջապարիսպը, պատմաբանի խոսքերով, էր հրաշակերտ, ահեղակերտ, ամրացրած բարձր, լայնանիստ բուրգերով և զարդարած նույնպես բարձր, գեղեցիկ աշտարակներով: Աշտարակները անկյունավոր էին, խորանանման ձև ունեին, հարթ իբրև տախտակ: Նրանց մեջ կային սենյակներ, դահլիճներ, ուր երբեմն իր որդիների և ազատագունդ դրանիկների հետ ուրախություն էր վայելում արքան:

Հարկավոր էր կղզուն մի նավահանգիստ: Այդ անհրաժեշտության մեջ ևս թագավորի անզուսպ եռանդը անճար չմնաց: Նա կտրեց ծովի մի մասը և, ահագին պատնեշներ բարձրացնելով ջրի միջից, հիմնեց մի ընդարձակ, արհեստական նավահանգիստ: Ալեքսանդր մեծի արհեստական նավահանգիստը Մակեդոնիայում շատ նվաստ է գտնում պատմաբանը, հիշյալ նավահանգստի հետ համեմատելով: Դեպի այդ նավահանգիստն էին բացվում կղզու շրջապարիսպի ծանր, երկաթյա դռները:

Այդպես, կղզին չորեքկողմից բուրգերով, աշտարակներով և թանձր շրջապատով ամրացնելուց հետո, նրան մի ահռելի բերդի ձև տվեց: Արհեստի հետ զուգապատշաճ էին և բնական ամրությունները: Կղզու միջնավայրից բարձրանում էր մի ապառաժ, որ նրա գագաթն էր կազմում: Այդ ապառաժի կողքերի վրա հիմնեց արքան իր բարձրադիր պալատները, որ նայում էին դեպի ընդարձակ ծովը: Պալատների մոտ կանգնած էին նրա գանձերի շտեմարանները, զենքերի մթերանոցները և պաշարների մեծամեծ ամբարանոցները:

Երբ բոլոր շինությունները վերջացած էին, թագավորը հրատարակեց այդ կղզին իբրև *ապաստանի քաղաք*: Թշնամիների կողմից եկած ամեն հեն և ապստամբ կարող էր այնտեղ պատսպարան գտնել: Հինգ տարվա ընթացքում քաղաքը լցվեցավ բազմաթիվ բնակիչներով:

Հայոց թագավորներից երկուսը ապաստանի քաղաքներ հիմնեցին. մեկը՝ Արշակ երկրորդը, Մասիս լեռան ստորոտում, մյուսը Գագիկ Արծրունին՝ Աղթամարա կղզու վրա: Երկուսի ձեռնարկությունն ևս միանման էր, բայց նպատակները տարբեր էին: Առաջինը, Արշակ երկրորդը, մտածում էր ջնջել նախարարությունները և առհասարակ ավատականությունը, և Հայաստանի բաժանված, մաս-մաս եղած իշխանությունները միացնելով, դարձնել նրանցից մի ինքնակալ, միահեծան պետություն: Այդ մտքով հիմնեց նա ապաստանի քաղաքը: Նախարարների հետ պատերազմելու համար հարկավոր էր նրան մի հզոր կուսակցություն, և այդ կուսակցությունը մտածում էր կազմել երկրի դժգոհներից: Բոլոր այն անձինք, որոնք նախարարների դեմ որևիցե հանցանք էին գործել, բոլոր պարտականները, որ անկարող էին իրանց պարտքը վճարել, և մինչև անգամ բոլոր մարդասպանները, գողերը, ավազակները, որոնք կյանքի և ապրուստի անհրաժեշտություններից ստիպված, եղեռնագործության էին դիմել, մի խոսքով, բոլոր հանցավորներն ու դատապարտյալները կարող էին նրա քաղաքում ապաստան գտնել և ազատ մնալ թե օրենքից և թե դատաստանից: Նախարարների իշխանությունը խորտակելու համար, մտածում էր նա ընտրել իբրև գործիք նախարարներից նեղված, հարստահարված թշվառներին:— Բոլորովին տարբեր մտքով Գագիկ Արծրունին հիմնեց Աղթամարա ապաստանի քաղաքը: Նրա նպատակը այնպես ընդարձակ, այնպես հայրենասիրական չէր, որպես Արշակինը: Նրա նպատակը շատ նեղ և անձնական էր: Նա ինքը մի նախարար էր՝ Բագրատունի թագավորների գերիշխանության ներքո: Ապստամբվելով նրանց դեմ, հիմնեց նա Վասպուրականում մի նոր, հակաթոռ թագավորություն: Եվ Աղթամարը եղավ նրա ընդդիմադրության գլխավոր կռվանը:

Այն բոլոր շենքերից, որ կառուցվեցան, կատարվեցան կղզու վրա, ավելի հրաշափառը, ավելի գեղեցիկ էր այն տաճարը, որ թագավորը հիմնեց սուրբ խաչի անունով: Բազմաթիվ նավեր կրում էին ցամաքից վեմերի ամենաընտիրները տաճարի շինվածքի համար: Մինչև անգամ թագավորը կործանեց Բաղեշ գավառի Կոտոմ գյուղի հոյակապ բերդը, որ պատկանում էր Զուրարիկ անունով մի կռապաշտ ցեղի, և քարերը Աղթամար բերեց: Բացի քարերից, տաճարի շինվածքի մեջ գործ դրվեցավ ավելի քան երկու հարյուր հազար լիտր երկաթ:

Մանվել ճարտարապետը սպառեց իր բոլոր արարչագործ տաղանդը այդ տաճարը ավելի մեծաշուք, ավելի փառավոր կառուցանելու համար, քան մինչև այսօր եղածները Ռշտունյաց աշխարհում: Տաճարի բարձր գմբեթը պատած էր ոսկյա թիթեղներով, որոնք հեռվից վառվում էին, ճաճանչներ էին արձակում արեգակի ճառագայթների առջև: Տաճարի պատերը, թե ներսից և թե դրսից զարդարած էին գեղեցիկ բարձրաքանդակ պատկերներով, որոնց իմաստը առնված էր հին և նոր կտակարաններից: Սկսյալ Աբրահամից, Դավթից մինչև Փրկչի կատարած տնօրինությունները,— բոլոր նշանավոր անցքերի պատկերները ճշգրտած էին քարերի վրա: Իբրև շրջանակ այդ պատկերների, դրված խաղողի որթերի և զանազան բույսերի հյուսվածքներ, սքանչելի քանդակագործությամբ: Կային և այլ զանազան նկարներ, որոնք ներկայացնում էին մենամարտության հանդեսներ, առյուծների կռիվ, կամ թագավորը նստած գահի վրա, և շրջապատած մանկահասակ սենեկապետներով, պար եկող աղջիկներով, երաժիշտների ու գուսանների խումբով:

Բոլորից հրաշալի էր փրկչական պատկերը, որ քանդակված էր արևմտյան խորանի բարձր կամարի վրա, իսկ նրա հանդեպ, արևելյան կամարի վրա, Գագիկ թագավորի պատկերը, գլուխը հեզությամբ դեպի ցած խոնարհեցրած, որպես թե թողություն էր

խնդրում, և իր հզոր բազուկների վրա բարձած ուներ իր հիմնած տաճարը, որ նվիրում էր փրկչին:

Ահագին գանձեր սպառվեցան տաճարի սրբություն-սրբությանցը զարդարելու համար: Ոսկիապատ և արծաթապատ դռները սքանչելի էին: Սրբոց պատկերները դրած էին մարգարտահյուս, ականակուռ շրջանակների մեջ: Պայծառ, թանկագին անոթները և զանազան սպասները աչք էին շլացնում:

Արծրունյաց առաջին թագավորի բոլոր մեծագործություններից մնացել էր հիշյալ տաճարը միայն, այն ևս դարերի ընթացքում շատ փոփոխությունների ենթարկվելով, շատ հարվածներ կրելով, կորցրել էր իր վաղեմի փառքն ու շքեղությունը: Մյուս շենքերի հետքերն էին միայն մնացել: Բացի ժամանակների աղետալի արհավիրքներից, բացի թշնամու կործանիչ ձեռքից, ինքը բնությունը ապստամբվեցավ մեծ մարդու մեծ գործի դեմ: Ծովը, կարծես, կամեցավ առնել իր հին վրեժը և, հետզհետե բարձրանալով, կրկին ետ խլեց այն, ինչ որ բռնությամբ կտրել էին իրանից: Մեծակառույց ամբարտակը, վիթխարի շրջապարիսպը, բարձր աշտարակներն ու բուրգերը, բոլորը կորան ջրի տակ: Մեր տեսած ժամանակում հին ամրոցից մնացել էր միայն մի փոքրիկ բեկոր, որ մի մատուռի ծայրի հետ տխուր կերպով դուրս էին նայում ջրի տակից, և կոծվելով ալիքների հետ, կարծես ողբում էին, լաց էին լինում կորցրած մեծությունը… Երկու դար անցել էր Արծրունյաց թագավորության հիմնվելուց հետո, մեկ դար անցել էր Արծրունյաց թագավորության վերջանալուց հետո, երբ Աղթամարը մի հակաթոռ արքունիքից դարձավ մի արքեպիսկոպոսի հակաթոռ կաթողիկոսարան: Պատերազմների համար զինվորված կղզին աբեղայի սքեմ զգեցավ: Գագիկը, ապստամբելով Բագրատունիների դեմ, այստեղ թագավորություն հիմնեց, իսկ Դավիթը ապստամբելով Կիլիկիայի վեհարանի դեմ, այստեղ կաթողիկոսություն հիմնեց: Առաջինը ոչնչացավ, իսկ երկրորդը մնաց:

Աղթամարը տրամադրում է դեպի ապստամբություն: Նրա ծովը, շրջակա լեռները և անտառները ազատություն են սիրում:

Աղթամարա տաճարի մեջն էին պահվում ս. Գրիգոր Լուսավորչի սրբության սեղանը, նրա հայրապետական քողն ու գավազանը և նրա մաշկեղեն գոտին: Աղթամարա տաճարի մեջն էր պահվում և նրա սուրբ աջը: Այստեղ էր գտնվում նաև ս. Հռիփսիմե կույսի հողաթափների մի հատը և նրա գլխի շղարշը:

Այն աղետալի ժամանակներում, երբ հայոց կաթողիկոսարանները, թե Կիլիկիայում և թե Արարատյան նահանգում, օտարազգի իշխանների ձեռքում վաճառքի նյութ էին դարձել, Աղթամարա արքեպիսկոպոս Դավիթը, իր կողմը գրավելով տեղային իշխանին և հինգ եպիսկոպոսներ, նրանց ձեռքով կաթողիկոս ձեռնադրվեցավ: Նա գրավեց և իր թեմի ժողովրդի մոլեռանդությունը, այն առարկությամբ, թե վերոհիշյալ սրբությունները նրա վանքումն են գտնվում, և այդ պատճառով նրան է վայելում կաթողիկոսությունը: Թեև Կիլիկիայի այդ ժամանակվա մանկահասակ, բայց շնորհալի կաթողիկոսը, քսանամյա Գրիգոր Պահլավունին, կազմեց Սյավ լեռան ժողովը, որ բաղկացած էր երկու հազար և հինգ հարյուր հոգևորականներից, որոնք միաձայն Աղթամարա կաթողիկոսությունը նզովքի տակ դրին և նրան ապստամբ հրատարակեցին,— բայց Աղթամարա կղզին և այնտեղ պահված սրբությունները օգնեցին Դավթին մնալ իբրև կաթողիկոս, և նրա հիմնած կաթողիկոսությունը տևեց մինչև մեր օրերը:

Ոչ մի հնարքով չկարողացան ոչնչացնել այդ կաթողիկոսությունը: Մինչև անգամ ս. Գրիգոր Լուսավորչի աջը, նրա գավազանը, նրա հայրապետական քողը Աղթամարա

վանքից գողանալ տվին և Կիլիկիա տարան, որ թուլացնեն տեղային կաթողիկոսի զորությունը, բայց այդ ևս չօգնեց:

Ես բոլորովին այլ կարծիք ունեի Աղթամարա մասին: Այդ վանքը գալու ժամանակ՝ ես միշտ երևակայում էի, թե պիտի տեսնեմ Կտուց անապատի երկրորդ օրինակը,— մի վանք, որտեղ աշխարհից անջատված աբեղաները անձնատուր են եղած միմիայն ճգնության և աղոթքի: Այդ էր պատճառը, երբ ճանապարհ ընկանք դեպի Աղթամար, ես խորին տհաճությամբ էի գնում, թեև իմ դժկամության մասին Ասլանին ոչինչ չհայտնեցի:

Առավոտից բավական անցել էր, երբ հասանք Աղթամարա «դրսի տունը», դա ևս Կտուց անապատի «դրսի տան» նման գտնվում էր ցամաքի վրա և բովանդակում էր իր մեջ վանքի ամբողջ տնտեսությունը: Զանազանությունը միայն նրանումն էր, որ Կտուց անապատի «դրսի տան» մեջ կար և մի կրթարան, ուր նորընծա աբեղաները պետք է տարիներով նախապատրաստվեին, փորձվեին, և ապա վանքում ներս ընդունվեին ու միաբանության կարգը մտնեին — իսկ այստեղ մի այդպիսի նախակրթարան չկար: Դա արդեն նշան էր, որ վանական կարգերը այստեղ այնքան խիստ չէին: Այստեղ «դրսի տունը» ծառայում էր միայն վանքի տնտեսության համար: Այստեղ բացի ամբարներից, ախոռատներից, մշակների ու հովիվների բնակարաններից, կային և մի քանի սենյակներ, հատկապես կաթողիկոսի համար պատրաստված, ուր, երբեմն կղզուց դուրս գալով, նստում էր նա, ժողովրդի գործերին նայելու:

«Դրսի տան» մեջ մեզ ասացին, որ կաթողիկոսը հազիվ թե ժամանակ կունենա մեզ ընդունելու, որովհետև նա պետք է գնա վանական մի կալվածքի վիճելի սահմանները որոշելու, որտեղ ներկա կլինի և տեղային գայմագամը: Մենք դիմեցինք դեպի կղզին նույն փառավոր նավակով, որ պատրաստված էր կաթողիկոսին դուրս հանելու համար:

Ծովը հանդարտ էր: Կղզին երևում էր հեռվից, կարծես թե ներկված լիներ բոսորային կարմրությամբ: Արյո՜ւն էր հոսում այդ կղզին, արյո՜ւն… Արյունով էին ներկված նրա ապառաժները, սկսյալ այն օրից, երբ խստասիրտ Տիրանի դահիճները կոտորում էին Ռշտունյաց Զորա նահապետի ազգատոհմը, չխնայելով թե կանանց, թե մանկանը… Արյան գույն էին ստացել արեգակի ճառագայթները, որ շողշողում էին կարմրագույն ժայռերի վրա… Արյունով էր ներկված և հայրապետական աթոռը, որի վրա բազմած էր և ներկա կաթողիկոսը… նրա նախորդը զոհ գնաց մի անհայտ եղեռնագործության…

Ես շատ բան էի լսել Ջոլամերիկի Մար-Շիմոնի մասին, հետո առիթ ունեցա տեսնելու նրան: Կորդվաց լեռների այդ պատրիարք—դյուցազնը թողել էր իմ վրա խորին տպավորություն: Ես առաջին անգամ տեսա մի կրոնական անձնավորություն, որ միացրել էր իր մեջ հոգևոր հայրապետի և մարմնավոր իշխանի կոչումը,— որ մի ձեռքում խաչ, առաջնորդում էր իր ժողովրդին դեպի երկնայինը, դեպի հոգևորը, իսկ մյուս ձեռքում սուր, պաշտպանում իր ժողովրդին երբ որևէ վտանգ էր սպառնում նրան երկրային թշնամիներից: Այդ բոլորը տեսել էի ես: Իսկ երբ տեսա Աղթամարա կաթողիկոսին, իսկույն իմ մտքում ծագեց մի այդպիսի համեմատություն՝ — ահա մի երկրորդ Մար—Շիմոն:

Մենք գտանք նրան ոտքի վրա, շրջապատված մի խումբ աբեղաներով, ծովեզրում սպասում էր նավակին:

— Հույս ունեմ, որ չեք մեղադրի ինձ, պարոն բժշկապետ,— ասաց նա, երբ մենք ոտք դրեցինք ցամաքի վրա և մոտեցանք աջը համբուրելու.— ես երեկ անհամբեր

սպասում էին ձեզ… վարժապետը ինձ այդպես էր լուր տվել… Դուք երեկ պետք է շնորհ բերեիք:

Խոսքը Կարոյի մասին էր, երևում էր, որ նա սկզբից հայտնել էր նորին վեհափառությանը, որ նրա վանքում պետք է այցելություն գործի մի եվրոպացի ճանապարհորդ:

— Վարժապետը չէ սխալվել, մեղավորը ես եմ,— պատասխանեց Ասլանը, նույնպես ներողություն խնդրելով:— Իրավ է, ես երեկ պետք է գայի, բայց ինձանից շատ ժամանակ խլեցին Ոստանի ավերակները, և ես ստիպված եղա գիշերել վարժապետի եղած գյուղում, ձերդ վեհափառությանը այդպես անհանգստություն պատճառելով:

Կաթողիկոսի դեմքի վրա նշմարվեց մի տեսակ անվճռականություն: Ասլանը այդ նկատելով, ասաց նրան.

— Ես ձեզ արգելք չեմ լինի, վեհափառ տեր, ինձ ասացին, որ գործով ուրիշ տեղ եք գնալու:

— Այո՛, այդ գործը երեկվա համար նշանակված էր, բայց ես հետաձգեցի ձեր պատճառով, պարոն բժշկապետ, որովհետև սպասում էի ձեզ ընդունելու: Դա մի հին վեճ է, պետք է մի կերպով վերջացնել: Ես կվերադառնամ երեկոյան, և մինչև իմ վերադարձը իմ միաբանները ամեն պատրաստականություն ցույց կտան ձեզ՝ հետազոտելու թե իմ վանքը և թե իմ կղզին:

— Դուք շատ ողորմած եք, վեհափառ տեր, ցավում եմ, որ այդպես պատահեց, ես մինչև ձեր վերադարձը իմ հետազոտությունները կվերջացնեմ:

Նա հաջողություն բարեմաղթելով, բաժանվեցավ մեզանից, մտավ նավակի մեջ: Երկու աբեղաներ սկսեցին թիավարել:

Չնայելով իր տարիքին, բոլորովին առույգ և աշխույժ մարդ էր երևում կաթողիկոսը: Նա այնպես ցատկեց նավակի մեջ, ինչպես մի քսան ու հինգամյա երիտասարդ: Հենց առաջին անգամից մեծ տպավորություն գործեց իմ վրա այդ բարձր հոգևորականը իր պատկառելի, փառահեղ դեմքով: Իր պարզ, շալեղեն հագուստով բնավ չէր որոշվում նա մյուս միաբաններից: Անապատի հալող, մաշող, թմրեցնող ազդեցությունը չէր սպանել նրա կենդանությունը, և գուցե Աղթամարա անապատը ազատ էր այդ ազդեցությունից: Ես նույնը նկատում էի և նրա միաբանների մեջ: Դրանք, Կտուց անապատի աբեղաների նման, մշտական աղոթքից և ճգնությունից բթացած, ապուշ դարձած, դանդաղկոտ մարդիկ չէին. դրանց մեջ երևում էին կյանքի և առողջության նշույլներ: Ռշտունյաց աշխարհը, երկրի բնության համեմատ, առաջ էր բերել մի ինքնուրույն հոգևորականություն: Այստեղ քահանան կրքեր ուներ, գիտեր վրեժխնդիր լինել: Երբ իր սիրած սուրբը չէր կատարում նրա խնդիրքը, նա դադարում էր նրա առջև խունկ ծխել և մոմ վառել:

Աղթամարա միաբանները, Կտուց անապատի աբեղաների նման, աշխարհից անջատված չէին, դրանք իբրև միաբանություն մի կաթողիկոսի, ավելի կառավարչական անձանց նշանակություն ունեին, շատ անգամ դուրս էին գալիս կղզուց, շրջում էին վիճակներում, իրանց աթոռին պատկանյալ հոգևոր պտուղը հավաքելու: Թեև Աղթամարա կաթողիկոսության թեմը ավելի փոքր, ավելի սահմանափակ էր, քան Վանա առաջնորդությունը, բայց նա մեծ ուժ ուներ, որովհետև ժողովուրդը խիստ սերտ կերպով կապված էր իր աթոռի հետ: Երբ նրա կաթողիկոսին մի որևէ վտանգ էր սպառնում, իսկույն շատախցին, սասունցին ձեռքը տանում էր դեպի իր խենջարը…

Կաթողիկոսից բաժանվելուց հետո, Ասլանը, մի քանի աբեղաներ հետը առած, սկսեց պտտել կղզու մեջ, դիմեց դեպի հին բերդի ավերակները: Մեր ընկեր Ջալլադը խնդրեց բաց անել վանքի տաճարի դուռը, մտավ այնտեղ ինչ—որ բաներ քննելու: Իսկ ես շրջում էի տաճարի շուրջը և՛ հիացած, և՛ խորին տխրությամբ նայում էի պատերի բարձրաքանդակ նկարների վրա:

Ահա այնտեղ Աբրահամը զոհում է իր անդրանիկին. սիրելի որդու պարանոցի վրա դրած է ուխտադիր հոր դանակը: Եհովայի հրեշտակը, երկնքից իջնելով, բռնել է հոր ձեռքը և մատով ցույց է տալիս խոյի վրա: Ամբողջ պատկերը շնչում է բիբլիական ջերմեռանդությամբ, երբ նա փրկությունը ու քավությունը արյան մեջ էր որոնում: Բայց հրեշտակի մի թևքը, Աբրահամի այն ձեռքը, որով բռնած ուներ դանակը և Իսահակի սիրուն գանգրահեր գլուխը ջարդված էին: Գեղեցիկ նկարը այլանդակվել էր…

Ահա այնտեղ Հովսեփի եղբայրները ծախում են նրան եգիպտացի վաճառականներին, լուռ և տխուր դեմքով կանգնած էր հոր սիրելին և եղբայրների ատելին մարդավաճառների խումբի մեջ: Հովսեփի գեղեցիկ աչքերը փորած էին, եգիպտացի վաճառականին զրկել էին մի ոտից,— և այնտեղ չոքած ուղտերի մեկի պարանոցը, մյուսի ծնկները փշրել էին: Հրաշալի պատկերի աղետալի կոտորածն էր միայն մնացել:

Ահա այնտեղ կաշառված Հուդան համբուրվում է փրկչի հետ, մատնիչը զրկել է համաշխարհային զոհին, քահանայապետի ծառաները, ջահերը բռնած, շրջապատել են նրան, մեծ վարդապետի թշվառ աշակերտները հեռվից երկչոտ դեմքերով նայում են: Սիրո և եղբայրության քարոզչին դատի են կանչում: Այդ պատկերի տխուր փշրանքներն էին միայն մնացել:

Ես մյուս պատկերներին նայել չկարողացա, աչքերս լցվեցան արտասուքով:

— Ո՞վ է կատարել այդ բարբարոսությունները,— հարցրի իմ մոտ կանգնած աբեղայից, որ ցույց էր տալիս ինձ նկարները:

— Եվ դուք հարցնո՞ւմ եք, պարոն,— պատասխանեց նա խորին վրդովմունքով,— մի՞թե չգիտեք, թե ի՞նչ տառապանքներ են անցել այդ տաճարի գլխով…

Մարդը, որքան էլ անզգա լիներ, չէ կարող սառնասիրտ մնալ, երբ տեսնում է այսպիսի անգթություններ, արհեստի, ճարտարության գեղեցիկ արդյունքը, աստծո տան սրբությունները զոհ են գնում կոպիտ վայրենության: Թշնամին իր բարբարոսությունները կենդանի մարդկանց վրա գործ դնելուց հետո, չէ խնայում և անմեղ քարերին… Տխո՛ւր է քո պատկերը, հայրենի աշխարք, տխո՛ւր… կա՞ արդյոք քո մեջ մի տեղ, մի փոքրիկ տեղ, որ կրած չլիներ թշնամու դառն հարվածները…

Թախծալի զգացմունքներով մտա ես տաճարը: Ներսի խոնավ սառնությունը փոքր-ինչ զովացրեց իմ բորբոքված գլուխը: Այստեղ ևս անիրավ ձեռքը նույն բարբարոսություններն էր կատարել: Դեպի որ կողմը և նայում էի, երևում էր խորտակում և ավերած: Մանվել ճարտարապետի հրաշալի գործը աղավաղված էր: Լուսամուտների եզերքի գեղեցիկ հյուսվածքը, դռների կամարների սքանչելի դրվագները, սյուների, պատուհանների և խոյակների հիանալի քանդակները ըստ մեծի մասին ջարդել ու փշրել էին:

Իմ աչքերը որոնում էին Ջալլադին: Ես գտա նրան մի մռայլ խորանում, ուր խրված էր մագաղաթների և փոշիների մեջ: Այդ ինձ շատ զարմացրեց: Ես այդ լուռումունջ երիտասարդին մինչև անգամ գրագետ չէի համարում, այժմ նա մագաղաթներ էր

քրքրում: Ես գտա նրան ուրախ տրամադրության մեջ, նայում էր մի հին Այսմավուրքի հաստ կազմի վրա:

Մեր հին գրչագրերի կազմերը առհասարակ շինված են լինում փայտից և պատած մաշկով: Իսկ այդ Այսմավուրքի կազմի մեջ, փայտի փոխարեն, դրել էին միմյանց կպցրած մագաղաթի թերթեր: Այդ թերթերն էր զգուշությամբ միմյանցից պոկում Ջալլադը, անդադար կրկնելով. «Դուք անհոգ կացեք, հայր սուրբ, ես ոչինչ չեմ փչացնի»: Հայր սուրբը մոմը ձեռին կանգնած էր նրա մոտ և լուսավորում էր նրա աշխատությունը: Հետո դարձավ նա դեպի հայր սուրբը այդ խոսքերով:

— Տեսնո՞ւմ եք, հայր սուրբ, այդ մագաղաթները տախտակի տեղ են բանեցրել կազմի մեջ:

— Տեսնում եմ,— պատասխանեց աբեղան:

— Ավելի լավ չէ՞ր լինի, որ չփչացնեին այդ մագաղաթները:

— Երևի ուրիշ բանի պետք չեն եղել: Բայց դրանց վրա տառեր են երևում: Այդ ի՞նչ տառեր են: Ջհուդի տառերի նման են:

— Ջհուդի տառեր չեն,— պատասխանեց Ջալլադը և շարունակեց իր գործը:

— Դուք ջհուդերեն իմանո՞ւմ եք:

— Իմանում եմ:

Հայր սուրբը զարմացավ: Ես նույնպես զարմացա:

— Եվ կարդո՞ւմ եք:

— Կարդում եմ: Եթե թույլ կտայիք, ես այդ Այսմավուրքի կազմը կփոխեի:

— Օրհնած, ի՞նչ հարկ կա փոխելու,— ծիծաղելով պատասխանեց հայր սուրբը:— Մի քանի հարյուր տարի այդ կազմով «յոլա է գնացել», հիմա էլ թող «յոլա գնա»:

Ջալլադը իր միտքը ավելի պարզեց, ասելով, թե շատ շնորհակալ կլիներ, եթե հայր սուրբը թույլ կտար նրան վերառնել կազմի «անպետք» մագաղաթները, այդ կլիներ նրա համար մի թանկագին ընծա վանքի կողմից, և եթե հայր սուրբի իրավունքից դուրս է այդ թույլտվությունը, նա կխնդրե այդ մասին նորին վեհափառությունից:

— Այդ ինչ բան է, որի համար հարկավոր լիներ նորին վեհափառությունից խնդրել,— ընդմիջեց մյուս աբեղան, որ ինձ հետ մտավ խորանը:

— Այո՛… բայց գուցե ես կասկածանքի պատճառներ կտայի… Որպեսզի որևէ տարակուսանք չպատահի, ես հետո կասեմ ձեզ, թե ի՛նչ նշանակություն ունեն ինձ համար այդ մագաղաթները:

Նա այն աստիճան հափշտակված էր իր գյուտով, որ բոլորովին մոռացել էր իր իսկական դերը: Նա վեր առեց ահագին Այսմավուրքը իր գիրկը, և մենք դուրս եկանք խորանից: Վարդապետները մեզ տարան այն խուցը, որ հատկապես պատրաստված էր մեզ համար: Ասլանը դեռ չէր վերադարձել: Մեզ իսկույն շրջապատեցին մի խումբ աբեղաներ, սկսեցին հարցուփորձ անել բժշկապետի մասին, թե որտեղացի է նա, ուր է գնում, քանի լեզու գիտե և այլն: Այդ հարցերի պատասխանը, որ ավելի ինձ էր

պատկանում տալ, տալիս էր մեր ընկեր Ջալլադը: Ո՞ր տեղից նա այնքան տեղեկություններ ուներ բժշկապետի մասին,— այդ ինձ շատ անհասկանալի էր:

Երեկոյան կաթողիկոսը վերադարձավ շատ ուշ. նա հրամայեց Ասլանին իր մոտ կանչել: Ես և Ջալլադը մնացինք մեր խուցի մեջ միայնակ: Ասլանը երկար մնաց վեհափառի մոտ, մինչև ճրագները վառեցին, մինչև գիշերից բավական անցավ: Ես պառկած էի մահճակալի վրա, և այնօր տաճարում տեսած բարբարոսությունների տխուր տպավորության ներքո, մտածում էի՝ եթե անշունչ քարերի հետ այսպես են վարվել, ապա ո՛րքան աղետներ, ո՛րքան տառապանքներ պետք է կրած լինեն մեր նախնիքը հայրենիքի թշնամիներից… Ջալլադը լուռ նստած էր ճրագի մոտ և թերթում էր իր գտած մագաղաթները: Նա այն աստիճան խորասուզված էր իր գործի մեջ, որ, կարծես, իմ ներկայությունը չէր նկատում: Թերթերը դասավորում էր, համեմատում էր միմյանց հետ և երբեմն երկար, աչքերը հառած, նայում էր միևնույն տողերի վրա, որ ժամանակը և հնությունը եղծել էին:

— Ի՞նչ ազգի գրվածք են,— հարցրի նրանից:

— Տառերը հունարեն են, իսկ լեզուն հայերեն,— պատասխանեց նա, աչքերը չհեռացնելով իր ձեռքի թերթից:

— Ինչո՞ւ են հունարեն տառերով գրել:

— Կար մի ժամանակ, որ մենք սեփական տառեր չունեինք, գրում էինք հունաց, ասորոց և պարսից տառերով, մինչև Մեսրոպը մեզ համար տառեր հնարեց:

— Ուրեմն այդ ձեռագրերը այնքան հի՞ն են, որ մեր տառերի գյուտից էլ առաջ են:

— Այո՛, և այդ պատճառով էլ թանկագին են:

— Ի՞նչ է գրած:

— Դեռևս դժվար է որոշել, թերթերը խառնվել են միմյանց: Բայց ինչպես երևում է, այդ թերթերը երկու զանազան գրքերից են առնված, մի մասը նոր կտակարանի թարգմանություն է, մյուս մասը մի պատմական գրվածք է:

— Դուք հունարեն կարդո՞ւմ եք:

— Կարդում եմ:

— Լեզուն գիտե՞ք:

— Գիտեմ:

— Դուք ասացիք, որ հրեից լեզուն նույնպես իմանում եք:

— Իմանում եմ:

— Ի՞նչ պետք էին ձեզ այդ լեզուները:

— Իմ ընտրած առարկան չէր կարելի՝ առանց այդ լեզուների գրականության հետ լավ ծանոթ լինելու՝ հիմնավոր կերպով ուսումնասիրել:

Նրա դեմքը փայլում էր, ինչպես փայլում է դեմքը մի աղքատի, երբ գանձ է գտնում: Ես այժմ մի առանձին հարգանքով էի նայում նրա վրա, որին առաջ մի մեծ բանի տեղ չէի դնում: Նա հին լեզուներ գիտեր, նա հին, գործածությունից ընկած, տառերի

վերծանությունն էր իմ անում: Նա սովորել էր և մի առարկա, մի գիտություն, որի մասին ինձ ոչինչ, չհայտնեց:— Դարձյալ մի գաղտնիք, դարձյալ մի հանելուկ, որ մնում էր ինձ լուծել…

Զարմանալի բան է, թե ինչպես մարդ մի նոր կերպարանք է ստանում մեր աչքում, երբ փոխում ենք մեր նախապաշարմունքը, մեր կարծիքները նրա մասին: Առաջ, երբ ես համարում էի նրան մի հասարակ գործիչ,— թեև լավ ձիավոր և քաջ երիտասարդ,— նա բոլորովին այլ տպավորություն էր գործում իմ վրա: Իսկ այժմ, երբ նայում էի նրա վրա, որպես մի ուսումնական անձի վրա, ամեն ինչ նրա մեջ փոխված էի տեսնում: Նրա դեմքի արտահայտությունն անգամ փոխվել էր իմ աչքում: Վաղեմի խստությունը մեղմացել էր, և ես նշմարում էի այնպիսի խորին, անբացատրելի գծեր, որպիսիները կարդում էր նա այն խորհրդավոր մագաղաթների վրա, որ բռնած էր իր ձեռքում: Այժմ նրա ձայնն անգամ այլապես էր հնչում, քան թե առաջ,— մի անուշ, սրտի խորքը թափանցող ձայն, որ ջերմ համակրանք էր ազդում: Այժմ նրա խելացի աչքերի խորության մեջ նկատում էի ես անսահման հեզություն, անսահման առաքինություն, ներշնչված բարձր, աստվածային գաղափարներով:

Նա այնպես երկյուղով և զգուշությամբ էր շոշափում մագաղաթի ցեցակեր թերթերը, որ, կարծես թե, դիպչում էր իր սրտի ամենանուրբ թելերին: Մի փոքրիկ կտոր նրանցից պատռվելիս, նրա սրտից մի բան պատռվում էր և ամբողջ մարմնով դողում էր նա: Ինձ թվում էր, որ միանգամից նա փափագում էր իմանալ, թե ի՛նչեր էին թաքնված այն հին, մոռացված թերթերի մեջ:

Ես ընդհատեցի նրա պարապմունքը, հարցնելով.

— Ասլանը շա՞տ ուշացավ:

— Ի՞նչ զարմանալու բան կա,— պատասխանեց նա ժպտալով,— բժիշկ և կաթողիկոս, իհարկե, միշտ նյութ կգտնեն խոսելու: Ձեզ հետ դանակ ունե՞ք,— փոխեց նա խոսքը:

Ես տվեցի նրան իմ դանակը: Նա աշխատում էր բաժանել երկու միմյանց կպցրած թերթերը: «Այդպես կարելի է փչացնել: Պետք է մի հեղանյութով լուծել սոսինձը»,— խոսում էր ինքն իրան: Դանակը մի կողմ դրեց, վեր կացավ իր խուրջինի մեջ մի բան որոնելու:

Թե ի՞նչ ժամանակ վերադարձել էր Ասլանը կաթողիկոսի մոտից, կամ մինչև գիշերվա ո՞ր ժամը Ջալլադը զբաղված էր իր մագաղաթներով,— ես տեսնել չկարողացա, որովհետև անգործությունից քունս տարավ, և աչքերս բաց արի այն ժամանակ միայն, երբ առավոտյան արեգակի ճառագայթները ներս էին շողացել մեր խուցի նեղ լուսամուտներից: Անապատում լինել և այնպես հանգիստ քնել,— դա աներևակայելի բան է: Գիշերը ո՞րքան տանջեցին մեզ Կտուց անապատում: Բայց այստեղ ոչ ոք չբախեց մեր դուռը, ոչ ոք չարթնացրեց մեզ, ժամ հրավիրելով, թեև այստեղ ևս միաբանները սովորություն ունեին գիշերային ժամերգություններ կատարելու:

Ասլանը սովորականից ավելի ուրախ էր. ուրախ էր և Ջալլադը: Նրանք շտապեցրին ինձ շուտով հավաքել մեր իրեղենները, որ ճանապարհ ընկնեինք: Կղզու ափում սպասում էր մեզ վանքի նավակը: Մենք նախ գնացինք կաթողիկոսի մոտ, նրա աջը համբուրեցինք և առինք նրա օրհնությունը: Բարի ծերունին արտասուքը աչքերում ճանապարհ դրեց մեզ, որպես մի գթառատ հայր, որ ուղարկում է իր որդիներին դեպի հեռու աշխարհներ, մարգարիտներ որոնելու: Մի քանի աբեղաներ բերեցին մեզ մինչև կղզու ափը: Մեծ շնորհակալությամբ բաժանվեցանք մենք այդ առաքինի կրոնավորներից, որոնք այնքան անմոռանալի հիշատակներ թողեցին իմ մեջ…

Մոտավորապես մեկ ժամից հետո, նավակը մեզ հանեց ցամաքը: Այստեղ, «դրսի տան» մեջ, պահված էին մեր ձիաները: Նստեցինք և շարունակեցինք մեր ճանապարհը…

ԻԷ

ՎԱՆՔԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Երեկոյան մենք անցնում էինք Կապուտ-Կող կոչված լեռան կապտագույն ձորերի միջով: Այդ լեռան պատմական անունը, մեր հին գրիչներից հետզհետե աղավաղվելով, կոչվեցավ Ընձաքիարս, որ Ընձակա-քար բառի փոփոխությունն է: Մինչև այսօր այդ լեռան կողքին կպած է Ընձակ անունով գյուղը, որ հայկազանց նահապետներից մեկի, Ընձակի անունն է կրում: Նույն նահապետի անունով և լեռը կոչվեցավ Ընձակա-քար: Քար բառը մեր հին լեզվում երբեմն սար կամ լեռ բառերի տեղ էր գործածվում:

Հիշյալ լայնանիստ լեռան գագաթը մի կողմից նայում է դեպի Վանա ծովը, մյուս կողմից՝ դեպի Ռշտունյաց աշխարհը: Այդ գագաթի վրա բարձրացավ ս. Հակոբ Մծբնա հայրապետը, այն աղետավոր անցքից հետո, երբ խստասիրտ Մանաճիհրը նրա սարկավագներին ածեց ծովի մեջ: Վշտացած հայրապետը լեռան բարձրությունից նայեց նախ դեպի ծովը, որ կլանել էր նրա սարկավագներին, և ապա դեպի Ռշտունյաց աշխարհը, որ այնքան անգութ գտնվեցավ դեպի նրա սանիկները: Նա անիծեց թե ծովը և թե աշխարհը… Ծովը կատաղեց, գոռաց, փրփրեց և իր ափերից իսկույն դուրս վազեց: Շեն ու շինություն, արտ ու անդաստան, բոլորը կորան, ջրասույզ եղան: Երկինքը պղնձացավ, անձրև չտվեց, երկիրը ամլացավ, էլ ջուր չբխեց: Ծառն ու ծաղիկը, խոտն ու բուտը, ճախն ու ճարակը, անխոնջ մշակի վրան ու վաստակը,— բոլորը երաշտից այրվեց, ցամաքեց: Նրանից հետո սովը մեջ մտավ և իր ետևից ժանտախտը բերավ: Անգութ հնձավորը հնձեց, տապալեց և դիակներով երկիրը ծածկեց: Գայլն ու բորենին, անգղն ու արծվին ազատ, աներկյուղ, թափառում էին մի գյուղից մյուս գյուղ և լափում էին անթաղ դիակներ…

Արտամեդի անպատկառ աղջիկներին անիծելուց հետո ս. Հակոբ հայրապետը՝ այդ երկրորդ սարսափելի անեծքն էր, որ կատարեց Ռշտունյաց աշխարհում: Հետո նա անիծեց Փշավանս գյուղը, ուր մինչև այսօր փուշից ավելի ոչինչ չէ բուսնում… Բայց Ժողովուրդը, ներողամիտ ժողովուրդը, այդ անիծասեր հայրապետի հիշատակը հավերժացնելու համար նույն Կապուտ-Կող լեռան կապտագույն կողքի վրա, նրա անունով հիմնեց մի վանք, որ մինչև այսօր պաշտվում է ամենայն ջերմեռանդությամբ: Մենք անցանք այդ վանքի մոտից, բայց նրա մեջը չմտանք:

Սկսյալ Նոր-Գյուղ կոչված ավանից, որը այժմյան Գավաշ գավառակի գայմագամանիստ գյուղաքաղաքն է, մինչև Դատվանի նավահանգիստը հասնելը, ծովի եզերքով սփռված են զանազան ամայի և շեն վանքեր, որոնք իրանց ծովահայաց դիրքով սքանչելի տեսարաններ են ներկայացնում: Ամենագեղեցիկ տեղերը լեռների բարձրավանդակների վրա ընտրել են վանքերի համար: Ես կհիշեմ այդ վանքերի անունները միայն. *Կարմրուկ սուրբ Աստվածածին*, Գագիկ թագավորից շինված, որը մի ժամանակ երեք հարյուր միաբան ուներ, իսկ այժմ համարյա ամայի է. *Լուսապտուղ սուրբ Սահակ*, Գանձակ գյուղի մոտ, որը ամեն աչացավ ունեցողների բժշկողն է. *ս. Թոմայի վանք*, որը գտնվում է Կապուտ-Կող լեռան ծովահայաց բարձրության վրա և պահում է իր մեջ Թովմա առաքյալի ահյակ բազուկը. *ս. Գևորգա վանք*, Գոմս գյուղի մոտ, որի մեջ պահվում է ս. Գևորգա գլուխը, *ս. Կարապետի վանք*, Սոռփ գյուղի մոտ, և ս. Հիզդիբուզդի վանքը, Թուխ գյուղի մոտ:

Ի՞նչ ազդեցություն ունեն այդ վանքերը իրանց շրջակայքի վրա:

Անցնում էինք մի հայաբնակ մեծ գյուղի մոտով: Գյուղից շատ չէինք հեռացել, մեր ուշադրությունը գրավեց մի խառնաձայն աղմուկ, աղաղակ: Բլուրների միջից միմյանց ձայն էին տալիս, գոչում էին՝ «անցա՛վ… բռնեցե՛ք»… և աղաղակները հետզհետե սաստկանում էին: Ձայները ավելի մանուկ հասակի ձայներ էին: Մենք կարծեցինք, թե գայլ է մոտեցել բլուրների վրա արածող ոչխարներին: Երբ մոտեցանք և տեսանք, թեև գայլ չէր, բայց նրա նման մի բան էր:

Մի մարդ ձորի միջով փախչում էր, իսկ գյուղի փոքրիկ գառնարածները ամեն կողմից քարեր էին նետում նրա վրա: Հալածականը ոչ մի տեղ չէր գտնում ապաստանելու, և փրկության բոլոր հույսը դրել էր արագ ոտների վրա: Կարծեցինք, թե այդ մարդը գառն է գողացել և, գողության մեջ բռնվելով, փոքրիկ հովիվները հալածում են նրան: Ձալլադը իր ձին առաջ քշեց, տեղեկանալու եղելությունը: Նրա ձայնից երեխաները հանդարտվեցան, փախստականը կանգ առեց: Կարծես, աստծուց նրան օգնություն հասավ:

Դա մի փոքրիկ, կարճահասակ մարդ էր, կիսաեվրոպական և կիսաասիական աղտոտ հագուստով, և ձեռքում բռնած ուներ իր հասակից ավելի երկար մի ցուպ, իսկ կողքից քարշ էր ընկած մի մեծ պայուսակ սև կաշուց: Թուխ դեմքը, նեղ, փայլուն աչքերը և ծնոտի վրա կծիկ դարձած սև, գանգրամազ մորուքը՝ առաջին անգամից այն կարծիքն էին արտահայտում, որ դա կամ հրեա մանրավաճառ պետք է լիներ, կամ թափառական բժիշկ և կամ մի բոշա, որ պարապվում էր ֆալջիությամբ (կախարդությամբ):

Երբ մենք կանգնած նայում էինք այդ օտարոտի թափառականի վրա, փոքրիկ հովիվները նույնպես ցած իջան բլուրների բարձրություններից և, իրանց երկար ցուպերի վրա հենված, շրջապատեցին նրան: Նրանք քարեր ունեին բռնած, բայց չէին խփում: Թափառականը տակից մի առանձին ներողամտությամբ նայում էր նրանց վրա և խուլ մրթմրթում էր: Չգիտեմ, նահատակի սառնասրտություն էր այդ, թե վշտացած մարդու ապշություն: Նոր Ստեփաննոսը գտնվում էր իր քարկոծողների շրջանի մեջ:

— Այդ մարդը անհավատ է,— ասաց երեխաներից մեկը:

— Պաս է ուտում,— ավելացրեց երկրորդը:

— Սատանայական գրքեր է ծախում,— վրա բերեց երրորդը:

— Մեր տերտերի ձեռքը չէ համբուրում,— նկատեց չորրորդը:

— Մեր ժամը չէ գնում,— պարզաբանեց հինգերորդը:

— Երեսին խաչ չէ հանում,— հաստատեց վեցերորդը:

Այսպես, յուրաքանչյուրը կարդում էր դատապարտյալի հանցանքները:

— Լավ, դուք ի՞նչ գործ ունեք, չարաճճիներ,— ծիծաղելով ընդհատեց Ասլանը:

— Անհավա՛տ է,— կրկնեցին կրոնի փոքրիկ պաշտպանները միաձայն:

— Մի շաբաթ առաջ մեր գյուղում մի լավ շնաթակ կերավ,— ասաց նրանցից մեկը.— գյուղացիք այնքան ծեծեցին, որ ողջ տեղը ականջը մնաց. հիմա էլի եկել է, չէ ամաչում:

Փոքրիկ հովիվներից մեկը երկար ցուպի ծայրը մոտեցրեց նրա քթին և, սաստիկ շփելով, հարցրեց.

— Ինչո՞ւ ես լեզուդ պահել, դե խոսիր, սո՞ւտ ենք ասում:

Նա ոչինչ չպատասխանեց և նայեց դեպի երկինքը:

Հալածականին մեր պաշտպանության տակ առնելով, մենք մեծ դժվարությամբ կարողացանք համոզել նրա հալածիչներին, որ այդ «անհավատը» մյուս անգամ նրանց գյուղին չի մոտենա և «սատանայական» գրքեր չի ծախի: Նրանք ցրվեցան, ասելով.

— Եթե կգաս, կտեսնե՛ս…— և յուրաքանչյուրը ցույց տվեց ձեռքի ցուպը:

Մենք հեռացանք, նրան մեզ հետ տանելով: Հետո երևաց, որ այդ մարդը սուրբ գրքերի տարածող մի գրավաճառ էր:

Բոլորովին մութն էր, երբ հասանք մի այլ գյուղ: Նա ասաց մեզ, որ այնտեղ կարող ենք հարմար իջևան գտնել, և ինքը առաջնորդեց մեզ դեպի մի տուն:

— Դա «եղբայր» Թաթոսի տունն է,— ասաց մեզ նախքան դռների բացվիլը:

Շեմքի վրա երևաց տան տերը:

— Եղբայր Թաթոս, քեզ համար հյուրեր եմ բերել,— ավետեց նրան սուրբ գրքերի տարածողը:

— Իմ աչքերի վրա տեղ ունեն,— պատասխանեց եղբայր Թաթոսը, մոտեցավ և մեզ ձեռք տվեց:

Սրահում մեզ համար նստելու տեղ պատրաստեցին, իսկ ձիաները կապեցին սրահի առջև: Մենք տեղավորվեցանք թանձր թաղիքի վրա: Սուրբ գրքերի տարածողը իր գրքերով լի պայուսակը դրեց մի անկյունում, նստեց մեզ մոտ և սկսեց իր պատառոտած տրեխները բաց անել:

Նրան կոչում էին «ջին»-Դավիթ, որ նշանակում է՝ դև կամ սատանա Դավիթ: Արդյոք իր դեմքի՞ համար, թե մի այլ պատճառով էր ստացել այդ մականունը,— ինձ մնաց անհայտ: Բայց այդքանը պարզ էր, որ նրա կերպարանքը բավական համապատասխան էր իր ստացած կոչմանը:

Մեր հյուրընկալը, «եղբայր» Թաթոսը, մի երկար, նիհար, կորաքամակ մարդ էր, ալեխառն մորուքով: Նրա իրանի աղեղնաձև դիրքը, երևի, առաջ էր եկել իր արհեստից, որ ստիպում էր նրան միշտ թեքված մնալ: Նա բուրդ գզող էր: Նրա իրանը իր բուրդ գզելու աղեղի ձևն էր ստացել: Գյուղացի կնիկները բերում էին նրա մոտ իրանց ոչխարների բուրդը, նա գզում էր, հետո նրանք տանում էին, թել էին մանում շալեղեն գործվածքների համար: Իբրև վարձ, եղբայր Թաթոսը ստանում էր բուրդի մի մասը: Վերջին ժամանկներում նրա եկամուտը պակասեց, որովհետև նրա մասին լուր տարածվեցավ, թե նա նույնպես «անհավատ» է: Գյուղացիք նրա մոտ այլևս շատ չէին հաճախում:

Եղբայր Թաթոսը ամեն ինչ մեզ համար կարգադրելուց հետո, եկավ, նստեց մեզ մոտ: Նա, կրկին անգամ բարևելով, սկսեց սովորական հարցմունքները՝ թե ո՞րտեղացի ենք, ո՞րտեղից ենք գալիս, ո՞ւր ենք գնում և այլն: Նա խոսելու ժամանակ երկու աչքերն ևս խփում էր, ձայնը հազիվ էր լսվում, և երկու ձեռքերը ջերմեռանդությամբ փակում էր: Այդ սովորությունը մնացել էր նրա մեջ՝ իրանց ժողովարանում աղոթելու

եղանակից: Երբ իմացավ, որ մենք Աղթամարա վանքիցն ենք գալիս, նրա դեմքի արտահայտությունը ցավակցական ձև ստացավ: Նա ոչինչ չխոսեց, բայց նրա լուռ շրթունքները կարծես աղոթելիս լինեին՝ «տե՛ր, ողորմի՛ր այդ մոլորյալներին»…

Սուրբ գրքերի տարածողը սկսեց պատմել Թաթոս եղբորը ճանապարհին իր հետ պատահած անցքը: Նա ավելի վշտացավ և խորին կերպով հոգվոց հանելով, ասաց.

— Տիրոջ խոսքը առանց հալածանքի չի տարածվի…

Արդեն հայտնի էր, որ մենք գտնվում էինք մի հայ բողոքականի ընտանիքում:

Ջալլադը, որ խիստ հազիվ անգամ խոսակցության մեջ մտնելու սովորություն ուներ, դարձավ դեպի հալածյալը, հարցնելով.

— Դուք միայն գրքե՞ր եք տարածում:

— Ոչ, հարմար տեղերում նաև քարոզում եմ տիրոջ խոսքը, կամ ինքս կարդում եմ ավետարանը, իսկ գյուղացիք լսում են,— պատասխանեց նա հեզությամբ:

— Շա՞տ լսողներ ունեք:

— Այդ կողմերում չէ կարելի ասել՝ թե շատ, քահանաները գրգռում են ժողովրդին մեր դեմ: Դուք ձեր աչքով տեսաք, եթե երեխաները այդպես են վարվում, նրանց հայրերը ի՛նչ կլինեն:

— Բայց, որքան ինձ հայտնի է, դուք էլ ձեր կողմից ոչ սակավ առիթներ եք տալիս ձեզ հետ այդպես վարվելու:

— Ի՞նչ առիթներ:

— Լուսավորչականներին հեթանոս եք կոչում, նրանց սրբությունները անարգում եք, մեծ պահոց օրերում բավական չէ, որ դուք պաս եք ուտում, այլ կերած մածունի մի մասն էլ ձեր մորուքների ու բեխերի վրա եք քսում, և այնպես դուրս եք գալիս լուսավորչականների մոտ, որ նրանց բարկացնեք: Չէ՞ որ ձեր տարածած ավետարանը արգելում է այս տեսակ ցույցեր, պատվիրում է չվշտացնել եղբորը:

— Նրանք մեր եղբայրները չեն:

— Եթե դուք նրանց ձեր եղբայրները չեք համարի, դրանով ավելի պատճառ կտաք ձեզ հալածելու: Եվ մի՞թե դուք և նրանք մի հոր որդի, մի ազգի զավակներ չեք:

Մեջ մտավ Թաթոս եղբայրը, դարձյալ աչքերը խփելով, և աջ ձեռքը դեպի սուրբ գրքերի տարածողը մեկնելով, որ թույլ տա իրեն խոսելու:

— Մենք եղբայրներ կոչում ենք միայն ավետարանով մեզ հետ միացողներին, ինչ ազգից որ լինեին նրանք, իսկ հեթանոսները մեր եղբայրները չեն, թեև մեկ մորից ծնված լինեինք: Ասլանը լուռ վեր կացավ, ցած իջավ սրահից և դիմեց դեպի պարտեզի առջևից հոսող առվակը: Այնտեղ նստեց նա խոտերի վրա: Ես գնացի նրա մոտ:

— Խնդրեմ իմ վերարկուն այստեղ բեր,- ասաց նա վշտացած ձայնով:

Երբ վերարկուն տարան, նա փաթաթվեցավ, պառկեց խոտերի վրա:

— Կամենում ես քնե՞լ,— հարցրի նրանից:

— Ես զզվում եմ այդ մարդիկներից. եթե գիտենայի, որ բողոքականներ են, ես բնավ նրանց շեմքի վրա ոտք չէի դնի: Չէ կարելի նրանց հանդիպեի առանց կրոնական վիճաբանություններ լսելու:

Նա գլուխը դրեց իր թևքի վրա և լռեց:

Ես հավատացած էի, որ նա հանգստանալ չէր կարող, ես հավատացած էի, որ նրան երկար պիտի տանջեր այն միտքը, որ եղբայրը զլանում է իր հարազատին եղբայր կոչել: Ես վերադարձա սրահը. վիճաբանությունը դեռ շարունակվում էր. ես երբեք չէի տեսել Ջալլադին այնպես տաքացած:

Մեկը մեզ մոտ հասիրի վրա պառկած խռմփում էր: Վիճաբանության ձայնից զարթնեց, գլուխը վեր բարձրացրեց և քնաթաթախ նայեց մեզ վրա:

— Պողոս եղբայր, զարթնեցի՞ր,— կարեկցությամբ հարցրեց նրանից Թաթոս եղբայրը:

Պողոս եղբայրը, փոխանակ պատասխանելու, սկսեց հորանջել, աչքերը ճմբռել, որ լավ տեսնե, թե մենք ինչ մարդիկ ենք: Նա նույնպես մեզ նման ճանապարհից էր եկած, և հոգնած պառկել էր: Մինչև նա կվերկենար, կլվացվեր, որ քունը փախցնե, նրա բացակայության ժամանակ, Թաթոս եղբայրը ծանոթացրեց մեզ նրա անձնավորության հետ, թե նա Բաղեշից է եկած, այնտեղի եղբայրներից է, ձմեռը տեղային դպրոցներում վարժապետություն է անում, իսկ ամառը շրջում է գյուղերում, քարոզ է տալիս, մխիթարում է եղբայրներին տիրոջ խոսքերով և այլն:

— Նա ընկլիզի լեզու էլ է իմանում,— ավելացրեց սուրբ գրքերի տարածողը:

— Ուրեմն միսիոնարների աշակերտ կլինի,— նկատեց Ջալլադը:

— Նա նրանց մոտ է սովորել, և նրանցից այժմ լավ ռոճիկ է ստանում:

— Ո՞րքան:

— Ամսական երկու ոսկի:

— Ա՞յդ է «լավ ռոճիկը»:

Պողոս եղբայրը մի գնդաձև մարդ էր, մի աչքից կույր, որ ծածկելու համար մուգ-ծխագույն ակնոցներ էր գործածում: Նրա մարմնի բոլոր անդամները միատեսակ կոլորված էին, կարծես թե ծայրեր չկային: Մեր հյուրընկալի կինը, աղջիկը մի առանձին հոգ տարան նրա լվացվելու և երեսը սրբելու մասին, որը վերջացնելուց հետո, եկավ նստեց մեզ մոտ:

— Հրամանքնիդ ո՞րտեղացի եք,— եղավ նրա առաջին խոսքը:

Մեր փոխարեն պատասխանեց մեր հյուրընկալը, ասելով, որ Աղթամարա վանքիցն են գալիս:

— Ուրեմն ուխտավորնե՞ր եք,— հարցրեց նա:

— Այո՛, ուխտավորներ ենք,— պատասխաննց Ջալլադը, հետազոտելով նրա դեմքի թթու արտահայտությունները:

Առանց մեր հարցնելու, նա ասաց, թե ինքը Բաղեշի դպրոցների վարժապետն է, և տասն տարուց ավելի կլինի, որ այնտեղ ուսուցչության պաշտոն է վարում, և ուրիշ շատ գործեր է կատարում:

— Ի՞նչ եք սովորեցնում,— հարցրեց Ջալլադը:

— Ծանոթացնում ենք սուրբ գրքերի հետ,— պատասխանեց նա:

— Այդքա՞նը միայն:

— Մի փոքր ևս աշխարհագրություն և թվաբանություն ենք սովորեցնում:

— Շա՞տ է այնտեղի բողոքականների թիվը:

— Այնքան շատ չէ: Իսկ գյուղերում տիրոջ գործը աճելու վրա է:

— Գյուղերում դպրոցներ չունե՞ք:

— Դեռևս ոչ: Այժմ մենք բավականանում ենք միայն կիրակնօրյա կրթարաններով:

— Ո՞վքեր են ձեր գլխավորները:

— Ամերիկացի միսիոնարներ:

— Շա՞տ են թվով:

— Մի քանի ընտանիքներ միայն:

— Իսկ նրանց հասցրած աշակերտների թի՞վը:

— Այժմ բավական կլինին:

— Ի՞նչ գործով են զբաղված:

— Տիրոջ խոսքը տարածելու գործով. կամ քարոզություններ են անում, կամ վարժապետություն են անում և կամ թարգմանություններով են զբաղված:

— Դուք էլ իհարկե, նրանց աշակերտներից եք:

— Եվ առաջին աշակերտներից: Երբ միսիոնարները դեռ նոր էին եկած, իմ հայրը նրանց մոտ խոհարար էր, ինձ վերառին ու սովորեցրին:

Թորոս եղբայրը մոտեցավ յուղային ճրագին, նրա պատրույգը ուղղեց, նրա կինը և աղջիկը, մեզանից հեռու նստած, ուշադրությամբ լսում էին: Սուրբ գրքերի տարածողը մի առանձին հիացմունքով նայում էր միսիոնարների առաջին աշակերտի վրա: Նրա նեղ, փոքրիկ աչքերը, որ կապիկի աչքերի նման արագ թարթափում էին, կարծես մեզ ասելիս լինեին՝ «դե՛, եթե քաջություն ունեք, խոսեցեք մեր վարպետի հետ, նա ձեր պատասխանը ըստ կարգին կտա»:

— Ասացեք, խնդրեմ, ձեր նպատակը միայն կրոն տարածե՞լն է,— հարցրեց Ջալլադը:

— Միայն այդ է,— պատասխանեց միսիոնարների առաջին աշակերտը:

— Դուք երբեք չե՞ք մտածում, որ ժողովուրդը, բացի տիրոջ խոսքից, այլ պետքերի ևս կարոտ է, օրինակ, ձեր կարեկցությունը չէ՞ գրավում նրա թշվառությունը, աղքատությունը, իր նեղիչներից հարստահարվիլը և այլն:

Նա փոխանակ պատասխանելու, ձեռքը տարավ դեպի իր ծոցը, հանեց այնտեղից մի փոքրիկ ավետարան, որը մի մեծ օրացույցի չափ հազիվ կլիներ և կարդաց Մատթեոսի Ձ-րդ Գլ. 33-րդ համարը. «Խնդրեցէ՛ք նախ զարքայութիւն աստուծոյ և զարդարութիւն նորա. և այդ ամենայն հաւելցի ձեզ: Մի այսուհետև հոգայցէք վասն վաղուին՝ զի վաղիւն վասն իւր հոգասցի»:

— Այդ ես գիտեմ…— ասաց Ջալլադը, խնդրելով, որ գոցե ավետարանը:— Եթե աստուծո արքայությունը այնպես գալու լիներ, ինչպես ցանկանում էր մեր Փրկիչը, իրավ է, մենք երբեք աղքատ ու թշվառ չէինք լինի, բայց այնպես չեղավ… Հարուստը մնաց հարուստ, աղքատը մնաց աղքատ…

Հետո խոսքը փոխելով հարցրեց նա.

— Ձեր միսիոնարները, երևի, լավ են ապրում, այնպես չէ՞. կառքեր ունեն, ձիաներ ունեն, ծառաներ ունեն, և միշտ փառավոր սեղան ունեն: Ինչո՞ւ նրանք չեն փորձում իրանց անձի վրա Ձ-րդ Գլ. 33-րդ համարի ասացվածքը, որ իրանք ևս աղքատ կյանք վարեն, և իրանց օրինակով մխիթարեն ժողովրդի աղքատությունը:

— Բայց նրանք մեծ փողեր են ստանում,— պատասխանեք միսիոնարների առաջին աշակերտը, ավետարանը ձեռքից ցած չդնելով:— Նրանք մեզ նման չեն, նրանք այնպես լավ կյանքի սովորած են:

— Դուք կարծում եք՝ վա՞տ է լավ կյանքը…

— Սատանայի փորձությունը ավելի շուտով հաջողվում է լավ կյանքի հետամուտ եղողների վերաբերությամբ:

— Ինչո՞ւ ձեր միսիոնարների վերաբերությամբ չէ հաջողվում:

— Ասացի, որ նրանք մեզ նման չեն:

Նա շուտ-շուտ ուղղում էր իր ակնոցները. ես սաստիկ ատում էի այդ գունավոր ակնոցները, որոնք ծածկել էին նրա աչքերը, և ինձ այնպես էր թվում, որ նա թանձր վարագույրի ետևից էր խոսում. ոչինչ չէր երևում. անկարելի էր նրա աչքերի խորքից թափանցել նրա սրտի խորքը, որը անտարակույս, դատարկ պետք է լիներ:

— Վերջապես, այն ասացեք,— հարցրեց Ջալլադը,— դուք ի՞նչ ազգային իդեալներ ունեք:

— Մենք ազգ չենք ճանաչում, մենք միայն տիրոջ եկեղեցին ենք ճանաչում,— պատասխանեց նա:

— Դուք ուրեմն և հայրենի՞ք չեք ճանաչում:

— Այո՛: Քրիստոնյայի հայրենիքը երկինքն է: Իսկ այդ երկիրը միայն մի ժամանակավոր իջևան է, այստեղից այնտեղ տեղափոխվելու համար:

— Չէ՞ որ այդ ժամանակավոր իջևանը նույնպես բարեկարգելու և մեր երջանկությանը հարմար կացուցանելու շատ պետքեր ունի:

— Այդ բոլորը աստծո ձեռքումն է, մեզանից ոչինչ կախված չէ: Մենք ի՞նչ կարող ենք անել:

— Եթե մենք աշխատենք, աստված ևս մեզ կօգնե: Աստված ծույլերի համար չէ:

— Ամենից առաջ հոգու համար աշխատելու: Ի՞նչ օգուտ, եթե աշխարհայինը կշահենք, իսկ հոգևորը կտուժենք:

Ես մտաբերեցի մեր տեր Թոդիկի խրատները: Ի՞նչ զանազանություն կար նրա ասածների և այդ ապուշի համոզմունքների մեջ: Տեր Թոդիկը նույնպես ամեն հոգս աստծո վրա էր ձգում: Քարոզում էր կյանքի պետքերի մասին հոգ չտանել և միայն հոգու համար մտածել:

— Եթե դուք լինեիք միսիոնարների երկրում,— ասաց Ջալլադը,— եթե տեսնեիք, մարդիկ այնտեղ ինչպես են ապրում, ինչպես են գործում, երբեք այդպես չէիք խոսի: Բայց միսիոնարները այստեղ գալով, ձեր երկրային ստրկության վրա ավելացնում են և հոգևոր ստրկությունը, ձեզ անջատում են աշխարհից, անջատում են համազգի եղբայրներից և դարձնում են ավետարանի գերիներ, թեև սուրբ ավետարանը ազատության և եղբայրության կտակարանն է:

Նա ոչինչ չպատասխանեց: Մեր հյուրընկալը հարցրեց.

— Դուք, պարոն, եղե՞լ եք միսիոնարների երկրում:

— Եղել եմ,— ասաց Ջալլադը, և կրկին դարձավ դեպի միսիոնարների առաջին աշակերտը.

— Ի՞նչպես կարելի է այդ աստիճան միակողմանի, սահմանափակ և մոլեռանդ լինել: Դուք հերքում եք ազգը, հայրենիքը, հասարակական բարօրությունը,— դուք հերքում եք մարդու ինքնագործունեությունը, որի վրա է հիմնված նրա երջանկությունը, և միմիայն վերացական, հոգևոր սնունդով եք մտածում կերակրել մարդիկներին: Այդ նրանից է, որ ձեզ, բացի սուրբ գրքերի սքոլաստիկայից, ուրիշ ոչինչ չեն սովորեցրել: Դուք չգիտեք, որ միսիոնարի քարոզած բողոքականությունը բոլորովին այլ ոգի, այլ ուղղություն և այլ ձգտում ունի, քան թե այն բողոքականությունը, որ արդեն ընդհանրացել և կազմակերպվել է մի բողոքական ժողովրդի մեջ, թե Եվրպայում լիներ նա, թե Ամերիկայում: Դուք չգիտեք, որ միսիոնարին հարկավոր են հավատացյալներ միայն. նա կազմում է իր եկեղեցին, հոգ է տանում նրա հոգևոր պետքերի մասին, իսկ նրա աշխարհային պետքերը զանց է առնում: Եվ ստիպված է զանց առնել, որովհետև այդ վերջինը կթուլացներ առաջինի ազդեցությունը: Նա պետք է աշխատեր կտրատել ձեր բոլոր հին կապերը, որ կապում են ձեր անցյալի, ձեր պատմության, մի խոսքով, ձեր ազգային կյանքի հետ, որպեսզի, առանձնացնելով ձեզ, կարողանա կենտրոնացնել իր նոր հիմնած եկեղեցում: Այդ պահանջում է միսիոնարի կոչումը, նրա պաշտոնը, որին նա արհեստի ձև է տվել: Բայց նույն միսիոնարը իր հայրենիքում այդպես չէ վարվում. նա սիրում է իր ազգը, նրա պատմությունը, նրա բանաստեղծությունը և նրա մինչև անգամ հեթանոսական դարերի ավանդություններն ու առասպելները: Նա մասնակցում է և իր հայրենիքի հասարակական գործերի մեջ. մտածում է, թե ինչո՞ւ մեկը հարուստ է, մյուսը աղքատ է. աշխատում է, որ աղքատն էլ իր տանը ուտելու հաց ունենա և գոհ լինի իր վիճակից: Բայց ի՞նչ տվեց ձեզ այդ նոր կրոնը:— Նա սերմանեց ձեր մեջ երկպառակություն, ատելություն դեպի ձեր այլադավան ազգայինները: Դուք նրանց «հեթանոսներ» եք կոչում, նրանք ձեզ՝ անհավատներ: Դուք ավելի բարվոք եք համարում թուրքին, քուրդին մոտենալ, քան թե նրանց: Ա՛յդ է ավետարանական եղբայրությունը:

Ինչպես երևում էր Ջալլադի այդ երկար ճառից միսիոնարների առաջին աշակերտի գլուխը ոչինչ չմտավ: Նա դարձյալ բաց արեց իր օրացույցի չափ ծոցի ավետարանը և նրանում ինչ-որ կարդաց: Ջալլադը զայրացավ:

— Դուք վնասակար մոլեռանդներ եք, և ավելի ոչինչ,— ասաց նա փոքր-ինչ զգացված ձայնով:— Այդ աստվածային գրքի թյուր ու սխալ մեկնությունները փչացրել են ձեզ: Եթե դուք լինեիք փոքր-ինչ զարգացած մարդ, ես ձեզ կապացուցանեի, որ դուք այդ գրքից ոչինչ չեք հասկացել: Բայց տգետների հետ խոսելը՝ շատ դժվարին է: Ցավալին այն է, որ ձեր նմանները քարոզիչներ և վարժապետներ են…

Նա վեր կացավ և գնաց Ասլանի մոտ:

— Այդ մարդը խելագար է,— ասաց միսիոնարների առաջին աշակերտը նրա գնալուց հետո:

— Լո՛ւռ, անպիտան,— գոչեցի ես,— եթե ոչ, ողջ տեղդ այդ հիմար գլուխդ կթողնեմ:

Նա լռեց, մյուսները նույնպես ոչինչ չխոսեցին:

Ես սկսեցի մի առանձին զզվանք զգալ դեպի այդ մարդիկ, որոնք ավելի խղճալու կարոտ էին, քան թե կարելի էր նրանց վրա բարկանալ: Ողորմելի մարդիկ, մի գերությունից ընկել էին մյուս գերության մեջ,— թուրքի, քուրդի ստրկությունից դարձել էին միսիոնարի ստրուկ…

Ես գնացի Ասլանի մոտ, բայց Ջալլադին այնտեղ չգտա: Նա գնացել էր, երևի, թափառելու գիշերային մթության մեջ, իր բորբոքված սիրտը զովացնելու համար: Ասլանը քնած չէր: Ես պատմեցի նրան Ջալլադի վիճաբանությունը բողոքականների հետ: Նա խիստ սառնությամբ պատասխանեց.

— Իզուր է այդպես դատապարտել նրանց, այդ ողորմելիները ինչո՞վ են մեղավոր. նրանք արդյունք են մեր եկեղեցու անկարգության:— Թե մենք ունենայինք օրինավոր հոգևորականություն, իհարկե, նրանք չէին լինի: Մեր ճանապարհորդության ժամանակ այնքան բազմաթիվ վանքեր տեսանք, այնքան բազմաթիվ վարդապետներ տեսանք: Ի՞նչ են շինում այդ տխմարները, ինչո՞վ են զբաղված:— Դու քո աչքով տեսար, դու այդ լավ գիտես հայտնի բան է, նրանց վանքերի շուրջը կկազմվի մի այդպիսի փչացած հասարակություն, որ ոչ ճշմարիտ բողոքական է և ոչ ավանդապահ լուսավորչական:

Նա լռեց և մի քանի րոպեից հետո դարձյալ շարունակեց.

— Ոչինչ այնպես, մանավանդ արևելքում, չէ կտրատում մի ազգի միության կապերը և չէ թուլացնում նրա ուժերը, որպես կրոնական հերձվածն ու երկպառակությունը: Եվ մեր երկրին տիրող կառավարությունը շատ լավ է հասկացել այդ: Իր քրիստոնյա ժողովուրդներին մշտական կռվի ու անհամաձայնության մեջ պահելու համար, նա թույլ է տալիս օտարազգի միսիոնարներին գործելու նրանց մեջ: Ֆրանսիան եզվիտներին, որպես վնասակար տարր, արտաքսում է իր միջից, իսկ Թուրքիան այդ հրեշներին ասպնջակություն է տալիս իր երկրում: Բողոքական քարոզիչները մեծ պաշտպանություն են վայելում թուրք կառավարության կողմից: Ինչո՞ւ: Որովհետև այդ մարդիկ շատ լավ գործիքներ են նրա ձեռքում, ինչպես ասացի, քրիստոնյաների ազգային կապերը կտրատելու համար: Հայ—կաթոլիկը, հայ—բողոքականը իրան հայ չէ համարում: Հայ լուսավորչականը նույնպես նրանց հայ չէ անվանում: Յուրաքանչյուրը իր ազգությունը ճանաչում է իր եկեղեցու անունով: Ուրեմն, որքան շատ կլինի տարբեր եկեղեցիների թիվը, այնքան շատ կմասնատվի ազգային ամբողջությունը և, հետևապես, կթուլանա նրա քաղաքական նշանակությունը:— Այդ շատ նպաստավոր է տիրող կառավարության համար, մանավանդ, որ քրիստոնյաների հարցը ամեն անգամ մեծ դժվարությունների մեջ է դնում նրան:

Նրա խոսքը ընդհատեց մեր հյուրընկալ Թաթոս եղբայրը, որ մոտենալով, ներողություն խնդրեց տեղի ունեցած անախորժության մասին և հրավիրեց մեզ սրահը ընթրիք ուտելու:

— Ես պետք է ներողություն խնդրեմ,— պատասխանեց Ասլանը,— իմ ընկերը թեև փոքր-ինչ դյուրագրգիռ մարդ է, բայց շատ բարի սիրտ ունի:

Ջալլադին գտնել չկարողացան: Ընթրիքից հետո խնդրեցինք մեզ համար քնելու տեղ պատրաստել նույն առվակի մոտ, ծառերի ներքո, որովհետև սրահում օդը սաստիկ խեղդող էր, և մանավանդ զանազան միջատներ գիշերը կարող էին անհանգիստ անել մեզ: Ջալլադը դեռ չէր վերադարձել, երբ ես և Ասլանը պատրաստվեցանք քնելու:

— Ո՞ւր գնաց նա,— հարցրի ես:

— Երևի կգա,— պատասխանեց Ասլանը:

— Բայց ո՜րքան լավ խոսում էր նա, որքա՜ն հմուտ է սուրբ գրքերի գիտության մեջ: Ես երբեք չէի կարծում, որ Ջալլադը այդ աստիճան զարգացած մարդ լիներ:

Ասլանը ծիծաղելով ասաց.

— Նա ինքը բողոքական է:

— Բողոքակա՞ն է, ի՞նչ եք խոսում:

— Եվ բողոքականի քահանա է:

Ես շվարած մնացի:

Ես իսկույն գնացի նրան որոնելու: Պարտեզի մի հեռավոր անկյունում գտա նրան, ծունր դրած գետնի վրա, լուռ աղոթում էր: Ո՞ւմ համար էր այնպես հափշտակված աղոթում նա:— Երևի, իր մոլորյալ «եղբայրների» համար…

ԻԸ

ԵՐԵՎԵԼԻ ՔԻԹԸ

Վերջապես հասանք Բաղեշ, որ այլ անունով կոչվում է Բիթլիս: Իջևանելու համար ընտրեցինք քաղաքի պանդոկներից (խան) մեկը: Երբ կանչեցինք օդաբաշուն, որ մեզ մի սենյակ ցույց տա,հայտնվեցավ մի այլանդակ մարդ, բանալիների փունջը գոտիից քարշ ընկած: Ետ ծալած բազուկները մինչև արմունքները դրոշմված էին Երուսաղեմի նշաններով: Այդ արդեն ապացույց էր, որ նա մահտեսի էր և մենք մի բարեպաշտ ուխտավորի հետ գործ ունեինք: Եվ այդ էր պատճառը, որ նրան կոչում էին հաջի Իսաղ: Մինը մյուսի ետևից շտապով բաց արեց սենյակների դռները և առաջարկեց ամենահարմարը ընտրել: Իսկ սենյակների արժանավորությունը ցույց տալու համար, նա մի առ մի հիշեցնում էր մեզ, թե որ տարում և որ ժամանակ ինչ նշանավոր մարդիկ են բնակվել նրանց մեջ: Իբրև ապացույց, նա ցույց տվեց մեզ և մի քանի արձանագրություններ, որ ածուխով գրած էին պատերի վրա, թեև այդ արձանագրությունները լավ վկայություն չէին տալիս հաջիի բարոյականության մասին: Մի պատի վրա գրած էր. «Եթե հաջի Իսաղին շուկան ուղարկես մի բան գնելու, դու էլ հետը գնա»: Մի այլ տեղ. «Հաջի Իսաղի ասածներից եթե հազարից

մեկը ճշմարիտ լինի, ջորին կծնի»: Եվ այսպես, համարյա բոլոր արձանագրությունների մեջ հաջիի անունը մեծ դեր էր խաղում: Իհարկե, եթե հաջին գրագետ լիներ, նրանցից և ոչ մեկը չէր թողնի, բայց, երևի, նրան ասել էին, որ լավ բան են գրել:

Մենք շատ խստապահանջ չեղանք, ընտրեցինք սենյակներից մեկը և մտանք քարե տուփի մեջ: Իրավ որ, քարե տուփ: Ամբողջ պանդոկը շինված էր կոփածո քարերից: Սենյակները նույնպես թե դրսից, թե ներսից, տաշած քարերից էին շինված: Լույս ընդունում էին միայն բաց թողած դռնից, և այդ պատճառով վանքերի նեղ խուցերի նմանություն ունեին: Պանդոկը երկու հարկանի էր. վերին հարկում բնակվում էին ճանապարհորդներ, իսկ ներքին հարկում, քառանկյունի բակի շուրջը, շարքով զետեղված էին զանազան վաճառքների կրպակներ:

Ոչ մի կարասիք չկար մեր ընտրած սենյակում. մերկ պատերը, մերկ հատակը, տիրող մռայլը ծանր տպավորություն էին գործում: Ասիական այլ ճանապարհորդների համար, որոնք ամեն պատրաստություններ իրանց հետ ման են ածում, գուցե այդպիսի իջևաններ հարմար կլինեին, բայց մենք մի կապերտի կամ գորգի կտոր անգամ չունեինք մեզ հետ, որ ձգեինք հատակի վրա և նստեինք:

Մեր բախտից Հաջի Իսաղը խուլ հայտնվեցավ, բայց մի զարմանալի խուլ՝ եթե վատ բան ասեիր, նա չէր լսի, իսկ եթե լավ բան ասեիր, իսկույն կլսեր: Օրինակ, եթե նրան հայհոյանք տայիր, չէր լսի, իսկ եթե ասեիր. «Հաջի, համեցեք, մի ֆինջան ղահվե անուշ արեք»,— իսկույն վազ կտար:

— Հաջի, մի շոր ձգիր այստեղ, որ վրան նստենք,— եղավ մեր առաջին պահանջը:

Նա չլսեց: Ես բռնեցի նրա ձեռքից և, հատակը ցույց տալով ցածր ձայնով ասացի.

— Շո՛ր, շո՛ր բեր:

Նա մրթմրթալով հեռացավ, բայց շորի փոխարեն մի ավել բերեց և սկսեց հատակը ավլել: Այդ ավելի հարկավոր էր, մենք այդ մասին չէինք մտածել, որովհետև հաջիի նշանավոր հաճախորդներից՝ ով որ եկել էր, ով որ գնացել էր, իր հետքերը թողել էր հատակի վրա: Այստեղ ընկած էին ձմերուկի բորբոսած կեղևներ, խաղողի չանչեր, մսի ոսկորներ, չոր հացի կտորներ, կիսավառ մոմի պատառներ, որ աշտանակի փոխարեն կպցրած էին աղյուսի վրա,— և եթե ավելացնենք նրանց հետ հաջիի կեղտոտ ֆեսը, որ կռանալու և ավլելու միջոցին ընկավ հատակի վրա, կարելի էր այդ սենյակը կատարյալ աղբանոց համարել:

Երբ հաջին վերջացրեց իր աշխատանքը, մենք հայտնեցինք նրան մեր երկրորդ պահանջը, ասելով, որ լվացվելու ջուր բերե: Նա դարձյալ չլսեց: Ինձ մնում էր երկրորդ անգամ բռնել նրա ձեռքից և աղաղակել.— «ջո՛ւր, ջո՛ւր»: Նա իբր ոչինչ չհասկացավ: Հարկավոր է նշաններով հասկացնել, թե ինչի համար էր ջուրը: Ես ձեռքս տարա դեպի երեսս և լվացվելու ձևեր ցույց տվի: Նա էլ ձեռքը տարավ դեպի պանդոկի բակը և ցույց տվեց ջրի ավազանը, որի մեջ պղնձե ծորակից ցած էր վազում ջուրը:

Դժվար է որոշել, մե՞նք ավելի ծիծաղելի էինք երևում հաջիի աչքում, թե նա՞ մեզ: Կարծեմ, մենք ավելի ծիծաղելի էինք երևում: Երևի, նա մտածում էր, այդ ինչ տեսակ ճանապարհորդներ են, որ ոչ ջրի աման ունեն և ոչ մի կապերտի կտոր:

Ես համբերությունս կորցրի, նրա դանդաղկոտությունը ավելի վրդովեցրեց ինձ. բռնեցի երկար ականջներից և, սաստիկ թափ տալով, գոչեցի.

— Գնա ջուր և մի օթոց բե՛ր, լսո՞ւմ ես:

Հաջին զգաստացավ և շտապելով դեպի ցած վազեց: Բայց իմ վարմունքը դուր չեկավ Ասլանին:

— Ի՞նչ պետք է արած,— պատասխանեցի ես,— այդ մարդիկ խնդրելու չեն սովորած, նրանց պետք է հրամայել և մտրակով հրամայել…

— Մենք բողոքում ենք մտրակի դեմ, և նույնը մե՞նք պետք է գործ դնենք,— ասաց նա:

Ես ոչինչ չպատասխանեցի:

Քանի րոպեից հետո վերադարձավ հաջին, բերելով իր հետ թե ջուր և թե մի օթոց:

— Օրհնած,— ասաց նա կիսածիծաղ և կիսավշտացած կերպով,— դե ասա ջուր եմ ուզում, էլ ուր ես չարչարում ինձ:

— Կարծես նոր էր հասկանում, որ ես ջուր էի ուզում:

— Էլ ուրիշ ի՞նչ եք հրամայում,— դարձավ նա դեպի Ասլանը,— շուկայից գնելու ոչինչ չունե՞ք:

— Դեռևս ոչ, երբ հարկավոր կլինի մի բան պատվիրել, կկանչենք ձեզ,— ասաց Ասլանը:

Հաջիի դեմքի վրա երևաց դժգոհության նման մի բան: Նա այն բարի սովորությունն ուներ, որ պատրաստ էր իր սենյակները բոլորովին ձրի տալ իր հաճախորդներին, միայն թե ամեն ինչ նրա ձեռքով գնեին: Բայց, միևնույն ժամանակ, նա ուներ մի այլ սովորություն, որ ամենահասարակ ուտեստներ, որոնցմով լի էր բազարը, երբ պահանջեիր նրանից, նա միշտ դժվարություններ կհարուցաներ: Օրինակ, նրան ասում ես. «Հաջի, կարո՞ղ ես մի փոքր հաց ու պանիր գնել բազարից»:— Նա ուղղակի չի պատասխանի, թե կարող եմ, այլ կասե քեզ. «Տեսնեմ, կարող եմ գտնել»: Նրա այդ անվճռականությունը այն նպատակն ուներ, որ ցույց տա, թե մի անկարելի գործ է կատարում և հաճախորդին մեծ ծառայություն է անում:

Հաջին մի ցամաք մարդ էր, նիհար ծնոտները խնամքով ածիլած, և կոշտ մացառի նման ընչացքների ծայրերը կտրած, որոնք մի չար սովորություն ունեին միշտ բերանը մտնելու: Նրա դեմքի վրա նշանավոր էր երևելի քիթը, որ կրում էր իր վրա երկու բարձրություններ, որոնք, երկու գագաթների նման, միախառնվելով վերին շրթունքի հետ, կազմում էին մի երկար լեռնաշղթա: Սխալ չէր լինի, եթե ասեի, որ նրա երեսը բաղկացած էր ամբողջապես քթից: Հաջիի կազմվածքի մեջ նշանավոր էին և ոտքերը: Թեև բոլոր տաճկաստանցիք՝ ծալապատիկ նստելուց՝ ծուռ ոտքեր ունեն, բայց հաջիի ոտքերը այդ մասնում մի առանձին բացառություն էին կազմում: Նրանք, դեպի կողքերի կողմը անկանոն կերպով դուրս ընկնելով, և հետզհետե թեքվելով, ձևացնում էին երկու աղեղնաձև կիսաբոլորակներ, որոնց ծայրերը, ներքևից և վերևից միանալով, մեջտեղում թողնում էին մի ձվաձև տարածություն: Այդ էր պատճառը որ նա կրիայի նման էր շարժվում: Թե ի՞նչ գույն և ի՞նչ ձև էր ունեցել նրա հագուստը առաջ,— այդ դժվար էր որոշել, որովհետև կեղտը, սկսյալ հին ժամանակներից, այնպիսի թանձր խավ էր դրել նրա հագուստի վրա, որ բոլոր գույները ծածկվել և անհետացել էին նրա շերտերի տակ, իսկ հաճախակի կարկատանները տարիների ընթացքում աղավաղել էին նրա հագուստի իսկական ձևը: Հաջին մեզ համար ավելի հետաքրքիր դարձավ այն ժամանակ, երբ իմացանք, որ այդ փնթի մարդը այն մեծ, քարաշեն պանդոկի տերն է և քաղաքի հարուստ հայերից մեկը: Մեր սենյակը կարգի դնելուց հետո, նա մոտեցավ Ասլանին հարցրեց.

— Էնֆիա ունե՞ս:

Ասլանը զարմացած նայեց նրա երեսին: Հետո մեզ ասացին, որ նա սովորություն ունի իր պանդոկի բոլոր այցելուներին այդ հարցը առաջարկել: Երբ մեկի մոտ հայտնվում է էնֆիա (քթափոշի) և նրան «թավազա է անում», նախ լի բռնով լցնում է իր պնչածակերը, հետո սկսում է գովել նրա արժանավորությունները այնքան, մինչև «թավազա անողը» ամաչելուց ստիպված է լինում իր ունեցածի մի մասը, «բարեկամական հիշատակի համար», ընծայել նրան: Եվ այսպես, հաջին միշտ ձրի էր ստանում այդ մեծ կարիքը, եթե ոչ, իր ահագին քիթը գրգռելու համար բավական ծախքերի կարոտ պիտի լիներ:

— Մենք մի բան չորոշեցինք ձեզ հետ, հաջի,— ասաց նրան Ասլանը,— որքա՞ն է սենյակի վարձը:

— Օրական քսան ղուրուշ, իսկ ձիաների համար՝ յուրաքանչյուրին մի-մի ղուրուշ,— պատասխանեց նա, ավելացնելով, որ մեր «խաթրե» համար է այդքան փոքր վերառնում, որովհետև «պատվական» մարդիկ ենք և այլն:

— Շատ չէ՞:

— Դուք, պարոն, պետք է գիտենաք, որ *«մենք»* սուտ խոսելու սովորություն չունենք,— ասաց նա մի անբացատրելի ժպիտ ձևացնելով դեմքի վրա:

Այդ կողմերում այդքան վարձ պահանջել կացարանի համար, աներևակայելի բան էր, այնուամենայնիվ, Ասլանը ընդունեց, ասելով:

— Լավ, գնա:

Նրա հեռանալուց հետո Ջալլադը նկատեց.

— Այդ մարդը անպատճառ հայ-բողոքական պետք է լինի: Պատրաստ եմ գրավ բռնել:

— Ինչի՞ց գիտես,— ծիծաղելով հարցրեց Ասլանը:

— Հայ-բողոքականները միայն գիտեն իրանց հասարակության անունով խոսել և ամեն դեպքում կրկնել. «մենք սուտ խոսելու սովորություն չունենք», թեև ամենից շատ սուտ խոսողները իրանք են:

Եվ իրավ, նա հայ-բողոքական էր:

Իր այրական հասակում նա թողել էր լուսավորչական եկեղեցին և ընդունել էր բողոքականություն: Նրա Երուսաղեմի ուխտագնացությունը կատարվել էր այն ժամանակ, երբ ինքը դեռ հավատում էր սուրբերի բարեխոսությանը: Իսկ այժմ հաջի Իսաղը շատ անգամ մի առանձին զղջումով ասելու սովորություն ուներ, որ եթե հնար լիներ, մեծ ուրախությամբ իր բազուկների կաշին կպոկեր, որ այն ավելորդապաշտության նշանները չմնային նրա մարմնի վրա:

Այնօր մենք պետք է թողնեինք Բաղեշը, այդ պատճառով մեզանից յուրաքանչյուրը շտապում էր իր գործերը վերջացնել: Սենյակի դուռը կողպեցինք, երեքս էլ դուրս եկանք: Ասլանը Ջալլագի հետ գնացին մի քանի այցելություններ անելու, իսկ ես գնացի շուկա մի քանի իրեղեններ գնելու:

Քաղաքի գեղեցկությունը ինձ մոռանալ տվեց հաջի Իսաղի թողած անախորժ տպավորությունը: Հազիվ թե կարելի է գտնել մի քաղաք, որ Բաղեշի նման

ինքնուրույն ձև ունենա, և հազիվ թե մի որևէ այլ տեղ բնությունը ստեղծագործել է այնպիսի դիրքեր, որ քաղաքին տվել են այն ինքնուրույն ձևը:

Պատմական Սալնո-Ձորը իր բարձր, ալիքավոր լեռներով ու բլուրներով սեղմել է իր գրկի մեջ այդ քարեղեն քաղաքը: Ասում եմ քարեղեն, որովհետև բոլոր տները, թե հարուստի, թե աղքատի, շինված են մաքուր, հարթ տաշված թխագույն քարից: Երեք գետեր, զանազան կողմերից գալով և քաղաքի մոտակայքում միանալով, անցնում են ձորի անդնդային խորության միջով և իրանց ահեղ ձայնով թնդեցնում են տիրող լռությունը: Սկսյալ ձորի հատակից, սկսյալ գետի աջ և ձախ ափերից, շրջակա լեռները սանդղտաձև թումբերով (տերրասներով) աստիճանաբար վեր են բարձրանում: Այդ թումբերի վրա շինված են տներ, այդ թումբերի վրա տնկած են և տները շրջապատող պարտեզները: Երբ ցածից դեպի վեր ես նայում, քեզ թվում է, թե տեսնում ես Շամիրամի օդային պալատները իր կախաղանավոր պարտեզներով:

Լեռների կուրծքի վրա, սկսյալ ամենաբարձր կետերից, վազում են բազմաթիվ աղբյուրները, հստակ, իբրև բյուրեղ: Նրանց վտակները անցնում են բարձրադիր պարտեզների միջով, անցնում են տների կտուրների վրայով և, առաջինից դեպի երկրորդը թափվելով, կազմում են հիանալի ջրվեժներ: Մի տան կտուրը մյուս տան համար բակի տեղ է ծառայում, և այսպես, լեռների կուրծքին կպած տները աստիճանաբար վեր են բարձրանում և հասնում են մինչև ամենաբարձր գագաթները: Իսկ վտակները վերևից հոսելով, ջրվեժների տեսարաններ են ներկայացնում: Ամեն կողմից ջուր է վազում, թե աղքատներին և թե հարուստներին բարիք է պարգևում: Ջուրը անցնում է ս. Սարգիս եկեղցու ավագ խորանից և թափվում է նրա գավիթը:

Գնում ես փողոցներով, հատակը քար, պատերը քար, ման ես գալիս պարտեզների մեջ, ցանկապատը քար, դռները քար,— և այդ քարեղեն աշխարհը, արհեստի և բնության հրաշալիքների հետ միացած, սքանչացնում են քեզ: Դեպի որ կողմ և նայում ես, երևում են ահավորություն, վսեմություն, գեղեցիկ տեսարաններ: Նայում ես դեպի ցած, դեպի ձորի անդնդային խորությունը: Մի տուն մյուս տան վրա, մի պարտեզ մյուս պարտեզի վրա, աստիճանաբար իջնում են մինչև գետի ափերը, որ հոսում է ձորի խորության միջով: Իսկ այնտեղ, գետեզերքի բոլոր երկարությամբ, տարածվում են քաղաքացիների այգիները և լցնում են ձորը հիանալի կանաչազարդությամբ:

Նայելով այդ բոլորի վրա, քո սիրտը բաբախում է մի վսեմ հպարտությամբ, երբ տեսնում ես, թե ի՛նչպես հայ մարդը գիտե մաքառել վայրենի բնության հետ, գիտե լեռների ապառաժոտ անձկության մեջ իր համար մի դրախտ ստեղծել:

Ավելի հետաքրքիր էր շուկան: Հրապարակը գտնվում էր կտուրների վրա, իսկ կտուրների տակում՝ ծածկված բազարը իր կրպակներով ու խանութներով: Չսովորած մարդու աչքում կարող էր այդ շատ օտարոտի երևալ, եթե չմտածեր, որ խնայող բաղեշցին, իր տեղի սղության պատճառով, աշխատել, է նրա ամեն մի թիզից օգուտ քաղել: Ես ման էի գալիս կտուրների վրա, այլ խոսքով, հրապարակում: Անցնելու տեղ չկար, մարդ, անասուն և թռչուն խառնված էին միմյանց: Այնտեղ գյուղացի կանայք, խումբերով նստած, ձու, հավ, սեր ու կարագ էին ծախում. այնտեղ կապած էին գյուղացիների ավանակները, որոնց վրա բարձած, զանազան ուտեստներ էին բերել ծախելու. այնտեղ շարքով չոքած էր ուղտերի քարավանը, որ գյուղերից ցորյան էր բերել. նրանց մոտ կիտած էր ցորյանի շեղջը: Այնտեղ ջուլիակը իր գործած կտավն էր ծախում, իսկ ներկարարը իր ներկած կարմիր շիլան. այնտեղ չիթսասը, իր պատրաստած չիթերը փոխում էր քուրդի հետ և նրանից յուղ, պանիր ու բուրդ էր առնում, այնտեղ թափառական չինգանան պար էր ածում իր կապիկը և փարաներ էր հավաքում, իսկ քահանան մոտենում էր այս և այն ուտեստը ծախողին,

մի պատառ վեր էր առնում, իր բերանն էր դնում, «համը տեսնելու» համար, և մի կտոր իր թաշկինակի մեջ էր դնում, տուն տանելու «նմուշի» համար։— Այդ բոլորը կատարվում էր կտուրների վրա, այդ օդային հրապարակում։

Ես ցած իջա կտուրներից, մտա նրանց տակ, ծածկված չարշին։ Դա մի ամբողջ լաբիրինթոս էր, որ տարածվում էր դեպի զանազան կողմեր։ Չարշիների աջ և ձախ կողմում, մինը մյուսի մոտ, շարքով ձգվում էին զանազան վաճառքներով լի կրպակներ, խանութներ, որոնք շինված էին քարից և փոքրիկ մատուռների նմանություն ունեին։ Ծալապատիկ նստած էին վաճառականները մինդարների վրա և գնողներին, հաճոյական ձայներով ու խոսքերով, դեպի իրանց խանութն էին հրավիրում։ Առևտուրը իր ջերմ կենդանության մեջ էր։ Բաղեշը իր շրջակա գավառների վաճառականական կենտրոնն է։ Նա հարաբերություն ունի Վանի, Կարինի, Բալվի, Բուլանխի, Տարոնի, Սղերդի, Ամիդի, մինչև անգամ Մուսուլի և Բաղդադի հետ։ Բամբակը ստանում է Պարսկաստանից, և իր մեջ արդյունագործելով,— չիթեր, կտավներ, շիլաներ պատրաստելով, լիացնում է իր շրջակա գավառները։ Եվրոպական ապրանքներ նա ստանում է Կ. Պոլսից։ Վաճառականությունը գլխավորապես հայերի ձեռքումն է և նրանց նյութական վիճակը կարելի է բարվոք դրության մեջ համարել։ Բայց իմ ուշադրությունը գրավեցին մի քանի այլ երևույթներ։ Մի տեղ փոքրիկ աշակերտը, չոքած իր «ուստայի» առջև և գոց ժամագիրքը ձեռքում բռնած, իր «համարն» էր տալիս։ «Ուստան» երկաթյա արշինը ձեռքում, մի կողմից չափում էր կտավը և խոսում էր քրդի հետ, մյուս կողմից, նույն երկաթյա արշինով խփում էր փոքրիկ ուսանողի գլխին, որ իր սխալը ուղղե։ Մի այլ տեղ, խանութպանը դրել էր իր առջև Նյու-Յորքում տպած աշխարհաբար աստվածաշունչը, մի կողմից սակարկություններ էր անում իր գնողների հետ, մյուս կողմից վիճում էր մի քանի անձանց հետ, թե պահեցողությունը չէ կարող քավել մարդու մեղքերը։ Ես մոտեցա այդ վերջիններին։ Չգիտեմ, ո՞րտեղից հայտնվեցավ այնտեղ և հաջի Իսաղը։ Լսելով, թե վեճը ինչումն է, նա ասաց.

— Պահեցողությունը պետք է հոգևոր լինի, դու հեռու պահիր քեզ սուտ խոսելուց, սուտ երդվելուց, գողանալուց, զրպարտելուց, ագահությունից, ժլատությունից և այլ մեղքերից, այն ժամանակ տիրոջ թողությունը կվայելես, եթե ոչ, թե միս կերար, թե լոբիա կերար, բոլորը միևնույն է։

Եվ այդ ասում էր ո՞վ,— հաջի Իսա՛ղը…

Ես հեռացա։

Ծածկված չարշիները լույս ընդունում էին առաստաղից։ Բայց լույսը այնքան նվազ էր, որ մարդ մարդու հազիվ կարողանում էր տեսնել։ Խանութպանները եթե կամենային, կարող էին ավելի լույս տալ իրանց կրպակներին։ Բայց այդ շահավետ չէր լինի նրանց համար, որովհետև խավարի ու մթության մեջ ավելի հեշտ էր խաբել, ավելի հեշտ էր վատ ապրանքը լավի տեղ վաճառել։

Իմ գլխում ծագեց մի համեմատություն։ Մի՞թե ավետարանի լույսն ու ճշմարտությունը քարոզող միսիոնարները նույնպիսի վաճառականներ չէին։ Մի՞թե նրանք ևս իրանց դպրոցները խավարի մեջ չէին պահում, ինչպես բաղեշցի վաճառականը իր կրպակը։ Մի՞թե նրանք ևս իրանց առևտուրը մթության մեջ չէին կատարում, որ ավելի հեշտ լինի խաբել։ Մի՞թե, եթե ցանկանային նրանք, չէին կարող ավելի լույս տալ իրանց դպրոցներին, այն աստվածային կենսատու լույսը, որի տարածման համար առաքված էին։

Ամեն տեղ ես լսում էի նույն վիճաբանությունները, կարծես, ամբողջ քաղաքը վարակված լիներ այդ ախտով։ Խարդախ վաճառականության հե՝ կատարվում էր և

կրոնական խարդախ պրոպագանդա: Իսկ հայ քահանան վերևում, կտուրների վրա, զանազան ուտեստների «նմուշներ» էր հավաքում իր թաշկինակի մեջ…

Ես զզվանքով դուրս եկա չարշիներից:

Բաղեշը գտնվում է չորս վանքերի հոգևոր պաշտպանության ներքո: Նրանցից մեկը քաղաքի միջումն է, իսկ երեքը նրա շրջակայքում: Ամլորդու վանքը գտնվում է նույնանուն թաղի մեջ: Նրանից կես ժամ հեռավորության վրա կանգնած է Գոմաց ս. Աստվածածնի վանքը, հետո Ավեխու ս. Աստվածածնի վանքը և խնդրակատար Ս. Աստվածածնի վանքը: Թադեոս առաքյալը ուխտել էր Հայաստանում հազար վանքեր հիմնել ս. Աստվածածնի անունով, հիշյալ երեքը միայն Բաղեշի մոտակայքում հիմնեց:

Բացի չորս վանքերից, չորս հոյակապ եկեղեցիներ քաղաքի մեջ հոգևոր սնունդ են մատակարարում բնակիչներին: Կարմրակ կոչված եկեղեցին պահում էր իր մեջ Հիսուս Քրիստոսի արյան շիթը. նա այն աստիճան պաշտելի է, որ նրա անունով երդվում են մինչև անգամ մահմեդականները: Այդքան հոգևոր հիմնարկություններից հետո, հաջի Իսաղը դարձյալ փողոցներում կրոնափոխություն է քարոզում: Ի՞նչ է դրա պատճառը…

Փողոցներում շրջում էին հայ կանայք: Ամենքը, թե պառավ և թե մանկահասակ, իրանց գեղեցիկ և նուրբ կերպասներից կարված զգեստների վրա, հագած ունեին մի տգեղ, մինչև ոտները իջած շիլա շապիկ: Այդ արտաքին ծածկոցը նրա համար էր, որ նրանց նազելիությունը չգրավե մուսուլմանի վավաշոտ հայացքը: Տղամարդիկ նույնպես վատ էին հագնված: Այստեղ, ինչպես միևնույնը Վանում ևս նկատեցի, հարուստները սովորություն ունեին իրանց հարստությունը ծածկել աղքատության կեղևի տակ: Ավելի թշվառ գտա ես երեխաներին. ոչ մեկի ոտներին ոտնամաններ չտեսա, թեև ոտնամանների ավելի պետք ունեին այդ ապառաժոտ, քարեղեն քաղաքում:

Ահա անցավ մի ամբողջ ասպախումբ: Ամերիկացի կանայք, ձիաների վրա կողմնակի նստած, քարշ էին տալիս գետնից իրանց երկար զգեստները: Նրանց տղամարդերի գլխարկների վրա քամուց ծածանվում էին շղարշյա սպիտակ փաթոթի բաց թողած ծայրերը: Ասպախումբը անցավ, որպես մի սրընթաց մրրիկ: Մի քանի ձիավորներ, տեղային հագուստով, առջևից արշավելով, ետ էին մղում բազարի խառնված բազմությունը, որ առանց ստիպմունքի ևս երկյուղածությամբ ետ էր քաշվում և ճանապարհ էր բաց անում: Սկզբում ես կարծեցի, թե այդ ասպախումբը եվրոպական մի որևէ պետության հյուպատոս պետք է լինի իր ընտանիքով և իր բազմաթիվ համհարզներով, որպես սովորություն ունեն նրան արևելքում իրանց, որքան կարելի է, շքեղ և մեծափառ ցույց տալ:

— Ովքե՞ր են դրանք,— հարցրի մի հայից, որ խորին կերպով, գլուխ տվեց նրանց անցնելու միջոցին և, դեռ անշարժ կանգնած, հիացմունքով նայում էր նրանց ետևից:

— Մեր «սահաբներն» են,— պատասխանեց նա մի առանձին պարծենկոտությամբ:

Ես իսկույն հասկացա, թե ովքեր էին: Պարսկաստանում ևս «սահաբ» անունով էին կոչում միսիոնարներին, որ նշանակում է տեր, պարոն: Ահա՛, ոտնաշրջիկ առաքյալների հաջորդները, որոնք բացի մի ցուպից և մի մախաղից ավելի ոչինչ չէին կրում իրանց հետ:

— Ո՞րտեղից են գալիս,— հարցրի իմ խոսակցից, որ դեռ շարունակում էր նայել նրանց ետևից:

— Ամառանոցից,— ասաց նա, դառնալով դեպի ինձ։— Էգուց կիրակի է, քարոզ պետք է տան։

— Հետո դարձյալ կգնա՞ն ամառանոց։

— Իհարկե։ Այդ տոթերում քաղաքի մեջ «սահաբները» չեն կարող մնալ։

— Իսկ դուք կարո՞ղ եք մնալ։

— Մենք սովորել ենք։ Նրանք խո մեզ նման չեն։ Դուք կգա՞ք քարոզ լսելու,— խոսքը փոխեց նա,— ասում են լավ քարոզ կլինի։ Ծ… «սահաբը» պետք է խոսի գոյափոխության վրա, և պետք է ապացուցանե, որ հեթանոս հայերը իզուր են հավատում, որ գինին ու հացը Հիսուս Քրիստոսի մարմինն ու արյունն են դառնում։

Ես ոչինչ չպատասխանեցի ու հեռացա։ Նա մինչև անգամ վիրավորվեց իմ անտարբերությունից, թե ինչու ես չկանգնեցի բազարի մեջտեղում և ամբողջ ժամերով չվիճեցի նրա հետ գոյափոխության վրա։

Ես գնեցի ինչ որ պետք էր ինձ և վերադարձա պանդոկը։

Ասլանը և Ջալլադը ամբողջ օրը չերևացին։ Երեկոյան, մեր սենյակում միայնակ նստած, սպասում էի նրանց։ Մի կողմում վառվում էր աղյուսի վրա կպցրած ճրագվի մոմը և տարածում էր մռայլ լուսավորություն։ Պանդոկում բոլոր վաճառականների կրպակները կողպված էին, և ամեն գործողություն դադարած էր։ Տիրում էր խորին, թախծալի լռություն։ Մի քանի ճանապարհորդներ, մեր կից սենյակների դռների առջև նստած, ընթրիք էին անում։ Ոմանք դռների առջև քնած էին։ Ներսում տոթը հեղձուցիչ էր։ Ես նայում էի վառվող մոմի վրա։ Անթիվ միջատները, փոքրիկ, նախշուն թիթեռները, սուլելով, սավառնելով, պտտում էին մոմի շուրջը։ Լույսը հրապուրում էր նրանց, լույսը ուրախացնում էր նրանց։ Լույսի հետ խաղ էին անում և լույսի մոտ ընկնում էին… Լուսավորության խեղճ զոհեր…

Ասլանը և Ջալլադը վերադարձան խիստ ուշ։ Մեծ եղավ իմ ապշությունը, երբ տեսա Ջալլադին՝ ոտից գլուխ կերպարանափոխված։ Նա այժմ եվրոպական հագուստ էր հագած։ Ո՛րքան պատկառելի էր երևում նա այդ հագուստի մեջ, ո՛րքան պատշաճավոր էր նրան այդ հագուստը։ Երևում էր, որ նա մանկությունից սնվել, մեծացել էր այդ հագուստով։

Նա ժպտալով ողջունեց ինձ և հարցրեց.

— Չե՞ս զարմանում։

— Զարմանում եմ,— պատասխանեցի ես, վեր կացա իմ նստած տեղից, բռնեցի նրա ձեռքը։

Ասլանը գլխարկը մի կողմ ձգեց և լուռ նստեց օթոցի վրա։ Իսկ Ջալլադը սկսեց շտապով հավաքել իր իրեղենները։ Սենյակի դռանը սպասում էր մի ծառա։ Նա ներս մտավ, վեր առեց նրա խուրջինը և հեռացավ։

— Դու գնո՞ւմ ես,— անհագիստ կերպով հարցրի նրանից։

— Ոչ, ես չեմ գնում,— քաղցրությամբ պատասխանեց նա և, մոտենալով, ձեռքը դրեց իմ ուսի վրա։— Ես այդ քաղաքում պետք է մնամ։ Եվ այդ պատճառով, հարկավոր եղավ իմ իրեղենները տեղափոխել իմ նոր վարձած կացարանը։

— Այսուամենայնիվ, մենք պետք է բաժանվենք միմյանցից։

— Այո՛, պետք է բաժանվենք…

Նրա ձայնը դողաց:

Վերջին օրերում ես այն աստիճան սկսել էի սիրել և հարգել այդ ազնիվ երիտասարդին, որ, կարծես, մի բան կտրվեցավ իմ սրտից, երբ լսեցի, որ բաժանվելու ենք միմյանցից, և, գուցե այլևս չէինք տեսնի միմյանց: Ես սկսեցի աղաչել նրան.

— Գոնե այս գիշեր մնացեք մեզ մոտ:

— Մեծ ուրախությամբ կմնայի, եթե կարելի լիներ…

Հետո խոսքը փոխեց.

— Բայց դուք էլ երկար չեք մնալու այստեղ:

Ասլանը, որ լուռ դիտում էր մեր սրտերի զեղմունքը, ավելի տխրացրեց ինձ, ասելով.

— Մի քանի ժամից հետո մենք պետք է թողնենք այդ քաղաքը:

— Գիշերո՞վ:

— Այո՛, գիշերով:

Ի՞նչ էր պատահել, ի՞նչ հարկ կար այդպես շտապելու: Նրանք ինձ ոչինչ չասացին: Միայն նկատում էի, որ Ասլանը նույնպես մի առանձին թախծության մեջ էր գտնվում: Երևի, սիրելի ընկերից բաժանվելը նրան ևս տանջում էր:

Հասավ բաժանման ծանր րոպեն: Ջալլադը մոտեցավ նախ Ասլանին, գրկեց նրան: Ոչինչ չխոսեցին, ոչինչ չասացին միմյանց: Երկար, լուռ գրկախառնության մեջ էին գտնվում նրանք: Մեկի գլուխը դրած էր մյուսի ուսի վրա: Մեկի ձեռքերը փաթաթված էին մյուսի պարանոցին: Չէին խոսում, բայց լռության մեջ շատ բան էին ասում միմյանց:

Ա՛խ, ո՛րքան վսեմ, ո՛րքան բարձր բան է ճշմարիտ բարեկամությունը: Ո՛րքան հոգու և զգացմունքների սրբություն կա նրա մեջ: Այդ բոլորը տեսնելով, իմ սիրտը նույնպես լցվում էր մի սրբազան ջերմությամբ, իմ զգացմունքները նույնպես ազնվանում էին:

Նա թողեց Ասլանին և մոտեցավ ինձ: Կարոյից բաժանվելու ժամանակ ես լաց չեղա, բայց երբ նրա դողդոջուն ձեռքերը փաթաթվեցան իմ պարանոցին, ես չկարողացա զսպել իմ արտասուքը: Նա նույնպես հուզված էր, նրա հեզ, հրեշտակային աչքերը նույնպես ծփում էին:

— Մի՛ տխրիր, Ֆարհատ,— ասաց նա ինձ.— դու մի լավ և բարի առաջնորդ ունես, որ կկանգնեցնե քեզ ուղիղ ճանապարհի վրա…

Համարյա նույն խոսքերը ասաց ինձ Կարոն, երբ վերջին անգամ բաժանվեցա նրանից: Ի՞նչ էին նշանակում այդ խոսքերը:

Ես և Ասլանը դուրս եկանք սենյակից՝ նրան ճանապարհ դնելու: Մինչև սանդուղքները գնացինք նրա հետ: Այստեղ նա կանգնեցրեց մեզ, կրկին և կրկին անգամ սեղմելով մեր ձեռքը, ցած իջավ սանդուղքներից: Ներքևից մի անգամ ևս ետ նայեց, գլխով մնաք բարյավ ասաց և դուրս եկավ պանդոկից: Մենք երկար անշարժ

կանգնած էինք սանդուղքների գլխին, և մեր աչքերը հառած էին դեպի այն դուռը, որտեղից դուրս եկավ ազնիվ երիտասարդը և անհայտացավ փողոցի մթության մեջ:

Վերադառնալով մեր սենյակը, թե՛ ես և թե՛ Ասլանը, սիրելի բարեկամից անջատվելու ծանր տպավորության ներքո, տխուր էինք, ոչինչ չէինք գտնում խոսելու: Ասլանը հոգնածի նման ընկողմանեցավ օթոցի վրա, իսկ ես նստեցի մոմի հանդեպ: Երևում էր, որ ամբողջ օրը թափառել էր նա: Նրա աչքերը շուտով խփվեցան, սկսեց նիրհել: Ես նայում էի մոմի վրա: Լուսավորության զոհերը այժմ շատացել էին, և ճրագի շուրջը ծածկված էր լուսո այդ անձնանվեր սիրահարների դիակներով…

Երբեմն իմ աչքերը հածում էին սենյակի շուրջը: Կարծես, որոնում էին Ջալլադի հետքեր: Նրա զենքերը մնացել էին իրանց տեղում: Չլինի՞ թե մոռացել էր նա: Կամ նրան այլևս պետք չէին այդ մահվան և կենաց գործիքները: Նա վերառեց իր փոքրիկ խուրջինը միայն, որի մեջ, որպես սրբություն, պահված էին այն մագաղաթները, որ նա գտավ Աղթամարա վանքում:

Պանդոկի բակից երբեմն լսելի էր լինում նրա նժույգի խուլ խրխնջոցը: Խե՛ղճ անասուն, նա էլ տխուր էր երևի, նա էլ զգում էր, որ իր սիրելի տերը այլևս չի նստի նրա վրա:

Ասլանը բաց արեց աչքերը, ասաց.

— Եթե մի մարդ հարցնելու լինի ինձ, շուտով զարթեցրու:

— Դու քնո՞ւմ ես:

— Ոչ, այնպես նիրհում եմ:

Պանդոկում ամեն ինչ լուռ էր. ճրագները հանգցրել էին, և ամեն ոք հանգստանում էր խորին քնի մեջ: Միայն երբեմն լսելի էր լինում գիշերապահ հասասների ձայնը, որ ման էին գալիս պանդոկի կտուրի վրա, և նրանց ձայնին պատասխանում էին մյուս պանդոկների կտուրներից:

Ասլանը կրկին բաց արեց աչքերը: Այժմ ես թույլ չտվի, որ նա դարձյալ խփե աչքերը և փոքր-ինչ հանգստանա: Իմ անհամբերությունը այնքան անզուսպ էր, որ ցանկանում էի տեղեկանալ, թե ինչո՞ւ Ջալլադը այդպես հանկարծ բաժանվեցավ մեզանից, կամ ի՞նչ գործով պետք է զբաղվեր նա, այդ քաղաքում մնալով:

— Դու արդեն գիտես, որ նա քահանա է և բողոքական քահանա,— իմ հարցին պատասխանեց Ասլանը, գլուխը բարձրացնելով,— իսկ այդ քաղաքում բողոքական հասարակություն կա:

— Այդ ես գիտեմ: Բայց նա նրանց չէ համակրում, և որքան նկատեցի ես, մինչև անգամ զզվում է նրանցից:

— Հենց դրա համար էլ նա վճռել է գործել նրանց մեջ, որ ուղղվին, որ մոլորության մեջ չմնան:

— Ի՞նչպես մոլորության մեջ չմնան:

— Որ հասկանան, կրոնը և խղճի ազատությունը այլ բան է, իսկ ազգությունը այլ բան է: Որ իրանց հայ ճանաչեն, և իրանց լուսավորչական ու կաթոլիկ եղբայրներին սիրեն:

— Լավ չէ՞ր լինի, որ նրանք ամենևին բաժանված չլինեին մեզանից:

— Լավ կլիներ: Բայց քանի որ զանազան տխուր հանգամանքների պատճառով բաժանվել են, քանի որ իրողությունը արդեն կատարված է, պետք է հաշտվել փաստի հետ: Այժմ ի՞նչ է մնում մեզ անել, հալածե՞լ նրանց,— այդ ոչինչ օգտավետ հետևանքի չի հասցնի: Մեզ մնում է՝ աշխատել, կրկին կապել նրանց մեզ հետ, եթե ոչ կրոնքով, գոնե ազգայնական կապերով, որ ավելի ամուր է և հաստատուն:

— Այդ կարելի՞ է:

— Ինչո՞ւ չէ կարելի:

Ես խլեցի նրա քունը և հանգստությունը: Մեր խոսակցության առարկան այնքան մոտ էր նրա սրտին, որ նա պառկած տեղից բարձրացավ և նստեց: Մոմի լույսը ուղիղ ընկած էր նրա գունաթափ երեսի վրա: Այդ դեմքի յուրաքանչյուր փոփոխությունը այնքան ծանոթ էր ինձ, որ երբ ես նկատում էի նրա վրա այժմյան թախծալի դալկությունը, արդեն գիտեի, որ նա հոգեկան սաստիկ տանջանքի մեջ էր գտնվում: Ի՞նչ էր պատահել այնօր նրա հետ:

— Կարելի է,— կրկնեց նա:— Հայերը, սկսյալ ամենահին ժամանակներից, մի զարմանալի ընդունակություն ունեն, եթե ոչ նոր կրոնքներ ստեղծելու, բայց գոնե օտարներից ընդունած կրոնքներին ազգային գույն ու ձև տալու: Հայերը, ընդունելով օտար կրոնքը, նրա վրա դնում են իրանց ազգային դրոշմը,— նրան հարմարեցնում են իրանց պատմության, ավանդությունների, սովորությունների և ցեղական հատկությունների հետ: Այդ ազգային մի մեծ ձիրք է, որից զուրկ են շատ ազգեր: Գերի բերելով հունաց աստվածներին, մեր նախնիքը հայացրին նրանց, մինչև անգամ նրանց անունները փոխեցին: Հրավիրելով պարսից աստվածներին, նույնպես վարվեցան նրանց հետ: Քրիստոնեական եկեղեցին, որ առաքյալների ձեռքով հիմնվեցավ Հայաստանում, բայց լուսավորչի ձեռքով բոլորովին կերպարանափոխվեցավ: Հայերը չմիացան ոչ Հռոմի և ոչ Բյուզանդիայի եկեղեցիների հետ: Վերջին ժամանակներում մտավ հայերի մի մասի մեջ կաթոլիկությունը և բողոքականությունը: Առաջինը, կաթոլիկությունը, նույնպես ազգային կերպարանք ստացավ և դարձավ իսկապես հայ կաթոլիկություն: Հայերը պահպանեցին իրանց եկեղեցական վաղեմի ծեսերը, արարողությունները, պաշտամունքը և, որ ամենագլխավորն է,— լեզուն: Իսկ բողոքականությունը դեռ հայերի մեջ ազգային գույն չէ ստացել: Այն, որ Ջալլադը նկարագրեց, միսիոնարի բողոքականություն է:

— Ի՞նչ պետք է անել Ջալլադի կարծիքով:

— Նրա կարծիքով, պետք է աշխատել հեռացնելու միսիոնարների թե՛ ազդեցությունը և թե՛ ներգործությունը, և կազմել ինքնուրույն հայ-բողոքական եկեղեցի: Եվ այդ կլինի նրա գործունեության բուն նպատակը:

— Կհաջողվի՞ նրան:

— Ես հավատացած եմ, որ կհաջողվի: Նա չափազանց եռանդոտ և հաստատ կամքի տեր մարդ է:

Սենյակի դուռը կամաց բացվեցավ, պանդոկի սպասավորներից մեկը գլուխը ներս բերեց, ասելով.

— Մի մարդ հարցնում է ձեզ:

Ասլանը հրամայեց, որ ներս թողնեն: Քանի րոպեից հետո ներս մտավ մի անծանոթ երիտասարդ, նուրբ կազմվածքով և բավական մաքուր հագնված եվրոպական հագուստով: Նա քաղաքավարությամբ գլուխ տվեց, մոտեցավ Ասլանին, սեղմեց նրա ձեռքը և տվեց մի փոքրիկ նամակ: Ասլանը շտապով բաց արեց նամակը, կարդաց և, վերջացնելուց հետո, ասաց երիտասարդին.

— Մենք իսկույն պատրաստ կլինենք, հարգելի Արփիար, դուք էս պատրաստվեցեք, որ շուտով ճանապարհ ընկնենք: Ահա ձեզ զենքեր, իսկ պանդոկի բակում կապած է ձեզ համար մի գեղեցիկ ձի:

Երիտասարդը ուրախ դեմքով մոտեցավ, վեր առեց Ջալլադի զենքերը և թեթև քայլերով դուրս գնաց՝ իր ձին պատրաստել տալու համար:

— Ո՞վ է այդ գեղեցիկ երիտասարդը,— հարցրի Ասլանից, նրա բացակայության միջոցին:

— Հետո կասեմ…— պատասխանեց նա:— Դա Թոխմախ-Արթինի քարավանի հետ է եկել:

— Մի՞թե Թոխմախ-Արթինի քարավանը այստեղ է:

— Ոչ, մի քանի օր առաջ անցել է այստեղից, իսկ այդ երիտասարդին թողել էր այստեղ, որ ուղեկցե մեզ հետ մինչև Մուշ:

— Ո՞րքան գեղեցիկ երիտասարդ է,— կրկնեցի ես,— և այդ հասակում ճանապարհորդություններ է անում:

Ասլանը ուշադրություն չդարձրեց իմ ոգևորության վրա, որ պատճառեց իմ մեջ քնքուշ երիտասարդը, որի ամբողջ կազմվածքը, կարծես, սպիտակ մոմից շինված լիներ: Նա խնդրեց, որ կանչեմ պանդոկի սպասավորներից մեկին, հաշիվը ստանա:

Սպասավորի փոխարեն հայտնվեցավ ինքը Հաջի-Իսաղը: Նա, երևի, քնած էր. այնքան շտապեց, որ մոռացավ իր հագուստը հագնել, և այնպես շապիկով ու տակի ոտաշորով վազեց մեզ մոտ: Տեսնելով նրան, Ասլանը պատվիրեց ինձ, որ, որքան և պահանջելու լինի, վճարեմ և ձայնը կտրեմ, իսկ ինքը դուրս եկավ սենյակից: Նա չկամեցավ նայել այդ գարշելի մարդու վրա, որի մեջ բարքի մաքրության հետ՝ պակասում էր և ամենահասարակ քաղաքավարությունը:

Ես վճարեցի նրան սենյակի վարձը, ձիաների կացարանի վարձը, մի խոսքով, ինչ որ սկզբից խոստացել էինք նրան և հետո հարցրի.

— Էլ ուրիշ ոչինչ չկա՞:

— Ինչպես չկա, պատվելի պարոն,— պատասխանեց նա ժպտալով, և այդ միջոցին նրա ահագին քթի ծակերը ավելի լայնացան:— Ինչպես չկա,— կրկնեց նա և տվեց ինձ մի պատառ կեղտոտ թղթի կտոր, ավելացնելով, թե բոլորը մի ըստ միոջե գրել է տվել այդ թղթի վրա:

Ես այժմ նրա համար «պատվելի պարոն» էի դարձել: Նա մի ամբողջ հաշիվ էր շինել, որի ճշտությունը և անճշտությունը քննելու համար ոչ ժամանակ կար և ոչ հաճություն: Բայց ինձ բարկացրեց մի բան:

— Այդ ջրի ամանը ինչո՞ւ եք գրել այստեղ,— հարցրի նրանից:

— Ինչու չգրել, պատվելի պարոն,— պատասխանեց նա զարմացած կերպով:

— Նրա համար, որ այդ ամանով դուք մեզ ջուր տվեցիք, մենք ջուրը գործածեցինք, եթե ջուրը մի առանձին արժեք ունի, կտանք, բայց ամանը այստեղ պետք է թողնենք ու գնանք:

— Ինչո՞ւ եք թողնում, պատվելի պարոն, կարող եք ամանն էլ ձեզ հետ տանել, չէ՞ որ ձեզ համար է գնված:

Անպիտանը հավաստի էր, որ մենք այն մեծ խեցեղեն կուժը մեզ հետ չէինք տանի, այդ պատճառով այսպիսի առաջարկություն էր անում, որ մեզ դժվարության մեջ դնե:

— Դուք ձեր բոլոր այցելուների հետ այդպե՞ս եք վարվում,— հարցրի նրանից:

— Դուք գիտեք, պատվելի պարոն, որ մենք սուտ խոսելու սովորություն չունենք,— կրկնեց նա հայ-բողոքականի սովորական պարծենկոտությամբ:

Ես վճարեցի բոլորը, ինչ որ նրա թղթի վրա գրած էր: Բայց այդ միջոցին իմ մեջ խաղաց իմ մանկական չարություններից մեկը:

— Ուրեմն այդ կուժը այժմ մեզ է պատկանում: Այսպես չէ՞:

— Իհարկե, ձեզ է պատկանում, սիրելի եղբայր…— ասաց նա, բայց հետո ուշի գալով, որ հային «եղբայր» ասելը մեղք է, իսկույն ուղղեց իր սխալը:

— Իհարկե, ձեզ է պատկանում, պատվելի պարոն: Կարող եք ձեզ հետ տանել:

— Ես նրան կթողնեմ այստեղ:

Ժլատի դեմքը փայլեց: Բայց ես կուժը զարկեցի սենյակի քարե հատակի վրա, փշրվեցավ: Հաջին ամբողջ մարմնով սոսկաց: Կարծես կուժը նրա գլխին կոտրեցին: Նա երևակայել անգամ չէր կարող, որ իր առաջարկությունն այդպիսի հետևանք կունենար: Երկար, սառածի նման, նայում էր խեցիների կտորների վրա, որոնք կարծես յուր սրտի կտորները լինեին: Այդ միջոցին ներս մտավ Ասլանը և հասկանալով եղելությունը հանդիմանեց ինձ:

— Այդ ի՞նչ երեխայություն է:

Հաջիի լեզուն բացվեցավ: Նա իրան պաշտպան գտավ:

— Այդ ասացեք, պարոն բժշկապետ, իհարկե, երեխայություն է, ապա ինչ է,— մրթմրթաց նա խորին դժգոհությամբ:

Ասլանը նայեց նրա ներկայացրած հաշվի վրա և, ձեռքը մեկնելով դեպի նա, ասաց.

— Այդ կուժին դուք հինգ ղուրուշ գին եք նշանակել, ստացեք և մի նորը գնեցեք:

Նա մեծ շնորհակալությամբ ընդունեց:

— Տիրոջ օրհնությունը ձեզ հետ լինի,— ասաց նա խղճալի ձայնով:— Ախար ես էլ գերդաստանի տեր եմ, իմ օգուտը այդպիսի բաներից է…

Ներքևում ձիաները պատրաստ էին: Հաջի-Իսաղը, իր ստացած լիաձեռն բավականության համար, այժմ ավելի քաղաքավարի դարձավ. նա ինքը վեր առեց մոմը և, մեր առջևից տանելով, առաջնորդեց մինչև պանդոկի բակը: Ծիծաղելի էր նայել այդ կիսամերկ ծերուկի վրա, որը, միևնույն ժամանակ, թե պանդոկի հարուստ տերն էր և թե նրա ստոր սպասավորը:

Երբ վերջին մնաք—բարյավն ասացինք, Ասլանը հարցրեց.

— Ես մոռացա ձեզանից հարցնել, դուք հա՞յ եք:

— Ոչ, պարոն բժշկապետ, ես բողոքական եմ:

ԻԹ
ՏԱՐՈՆ

Ամբողջ գիշերը ճանապարհ գնալով, առավոտյան լույսի հետ բացվեցավ մեր առջև Մուշի գեղեցիկ դաշտը,— պատմական Տարոնը: Իմ սիրտը թնդաց ուրախությունից: Ո՜րքան բաներ էր պատմել այդ դաշտի մասին Ասլանը, ո՜րքան ջերմ զգացմունքներովկապված էր նա իմ հոգու հետ: Մեր առջևը դրած էր մի հարթ, լայնածավալ հովիտ, շրջապատած բարձր լեռներով: Սկսյալ ամենահին ժամանակներից, այդ հովիտը եղել է հանդիսարան ամենամեծ անցքերի, որ կատարվել է հայկական կյանքում:

Տարո՜ն, ի՜նչպես քաղցր հնչում ես դու իմ ականջին, որքան սիրելի է ինձ քո անունը: Դու Հայաստանի հարավային սահմանների վահանն էիր. քո վրա զարկվելով փշրվում էին Ասորեստանի զորությունները, քո վրա զարկվելով, խորտակվում էր արաբացու կատաղությունը, և քո դաշտերը ողողվում էին թե՛ քո զավակների և թե՛ քո թշնամու արյունով:

Ես աչքերս դարձրի դեպի իմ ուղեկից Արփիարը: Ոգելից երիտասարդը խորին հափշտակությամբ ինձ նման, նայում էր Մուշի գեղեցիկ դաշտի վրա, կարծես թե, սիրահարված լիներ: Նրա խոշոր, խաժ աչքերը ձգտում էին միանգամից ամփոփել, միանգամից տեսության առնել լայնածավալ տարածությունը: Նա դեռ երիտասարդ էր, թարմ երիտասարդ: Գուցե դպրոցի նստարանից դեռ նոր էր բաժանվել: Գլխի մուգ-շիկագույն մազերը հիանալի գանգուրներով դուրս էին նայում մոխրագույն գլխարկի տակից, որ ծածկում էր նրա սիրուն գլուխը: Նա ավելի կանացի դեմք ուներ, բայց գունաթափ, թախծալի դեմք: Գուցե հայրենի աշխարհի տպավորությունները խլեցին նրա երեսի գույնը: Լուռ էր նա, չէր խոսում: Ինձ թվում էր, թե նրան տիրում էր մի տեսակ ապշություն, մի տեսակ ինքնամոռացություն: Եթե իր երկար կոշիկների խթաններով երբեմն մեքենաբար չխփեր իր ձիու կողքը, նրա ձին կկանգներ, որովհետև սանձը թուլացել էր նրա ձեռքում, իսկ մտրակը ընկել էր ձեռքից: Խեղճ տղա, ինչեր էին անցնում նրա սրտից. ինչ բանի վրա էր մտածում նա: Ասլանը խոստացավ ասել ինձ, թե ո՜վ էր նա, և այդ հետաքրքրությունը տանջում էր ինձ:

Մենք անցանք Հացիկ գյուղը, որ այժմ կոչվում է Խաս-Գյուղ: Նա դարձավ դեպի ինձ այդ խոսքերով.

— Մեր պատմաբաններից մեկը, Փավստոսը, այդ գյուղի չորրորդ դարու բնակիչներին *«կարճազատք»* ածականը տվեց, որ նշանակում է կարիճների զավակներ: Մեր այժմյան լեզվում *կարճազատը* չարաճճի բառի իմաստն ունի: Հին դարերում Հացիկի բնակիչները հայտնի էին իրանց անբարոյական բարք ու վարքով, մանավանդ կանայք: Մեր Հուսիկ կաթողիկոսի որդի Պապը մի հարճ ուներ, որը այդ գյուղիցն էր: Այն օրից անցել է տասն և վեց դար, բայց Հացիկի բնակիչները դեռ իրանց վարք ու բարքը չեն փոխել: Այսուամենայնիվ, Հացիկը անմոռանալի կմնա ամեն մի հայի համար, որովհետև նա Մեսրոպի ծննդավայրն է:

Երբ գյուղից դուրս եկանք, հեռվից նկատեցինք, որ մեր առջևով գնում էին երկու ձիավորներ: Ինչպես երևում էր, նրանք այդ գյուղումն էին իջևանել, որովհետև մի քանի գյուղացիներ նրանց ճանապարհ էին դնում: Տեսնում էինք, թե ինչպես գյուղացիները մոտեցան երկու ձիավորներից մեկին, նրա աջը համբուրեցին և, օրհնությունը առնելով, վերադարձան դեպի իրանց տները: Արդեն հայտնի էր, որ նա պետք է հոգևորական լիներ:

Երկար մենք և նրանք, միևնույն հեռավորության վրա, գնում էինք միևնույն ճանապարհով: Հետո նկատեցինք, որ նրանք սկսեցին իրանց ձիաները կամաց քշել, որ մենք հասնենք:

Մեր ենթադրությունը ուղիղ դուրս եկավ. երկու ձիավորներից մեկը հոգևորական էր, բայց եվրոպացի հոգևորական: Իսկ մյուսը, ինչպես երևում էր, կամ նրա ծառան պետք է լիներ, կամ առաջնորդը: Ես առաջին անգամ տեսնում էի մի եվրոպացի կրոնավոր: Նա քառասուն տարեկան հազիվ կլիներ, բայց սև մորուքը արդեն սկսել էր ճերմակել: Դեմքը ինձ շատ դուր եկավ, մի ուրախ, մշտածիծաղ դեմք, որ, կարծես, ասում լիներ. «ես վաղուց ձեզ հետ բարեկամ եմ»: Գլխին դրած ուներ լայնեզրյա փափուկ գլխարկ սև գույնով, և հագել էր կրոնավորի երկար զգեստ, կուրծքից մինչև ոտները կոճկած, նույնպես սև գույնով:

Երբ նայեց դեպի մեզ, նրա երեսի վրա նշմարվեցավ մի տեսակ շփոթություն, որ շուտով անցավ: Նրան տեսնելով, Ասլանի գույնը նույնպես փոխվեցավ: Ի՞նչ էր նշանակում այդ: Հեռավոր Ասիայում, Մուշի դաշտի մեջ, երկու եվրոպացիներ հանդիպում են միմյանց, մինը կրոնավոր, մյուսը բժիշկ, և երկուսն էլ, փոխանակ ուրախությամբ միմյանց գրկելու, շփոթվում են, սոսկում են, ինչպես մի մարդ, որ անակնկալ կերպով օձի կամ կարիճի է հանդիպում: Թե ի՞նչ անցավ Ասլանի սրտից,— այդ ես կարող էի հասկանալ, բայց կրոնավորի այլայլվելու պատճառը ինձ մնաց անբացատրելի: Չի՞ցե թե նրա համար ծանր էր, որ մի եվրոպացի մարդ տեսնում էր նրան այդպիսի խուլ տեղերում: Անշուշտ նա Ասլանին եվրոպացու տեղ կընդուներ և ուրիշ կարծիք տանել չէր կարող:

— Դուք, պարոն, երևի, Մո՞ւշ եք գնում,— հարցրեց նա կոտրատած թուրքերեն լեզվով:

— Այո՛,— պատասխանեց Ասլանը:

— Ուրեմն մենք բավական տեղ ուղեկից կլինենք. ես էլ այդ գյուղն եմ գնում:— Նա ցույց տվեց մի հեռավոր գյուղ:

Ասլանը սկսեց ֆրանսերեն խոսել նրա հետ: Ես չէի հասկանում, թե ինչ էին խոսում, միայն նկատում էի, որ կրոնավորը սաստիկ զվարթացավ, ուրախ էր, անդադար ժպտում էր և ավելի ծիծաղում էր, քան թե խոսում էր: Նա իսկույն սկսեց մտերմանալ մեզ հետ. իր ծառային կանգնեցրեց, նրա խուրջինից հանել տվեց մի շիշ կոնյակ, նախ ինքը խմեց, հետո մի-մի ֆինջան առաջարկեց մեզ: Նրա ծառան, երևի, գիտեր իր հայր սուրբի սովորությունը, հանեց խուրջինից և մի-մի վարունգ տվեց մեզ, ասելով.

— Դա զովացնում է:

Այդ միջոցին մեր ընկեր Արփիարը ոչինչ չէր խոսում. նա միայն ուշադրությամբ նայում էր կրոնավորի վրա: Երևում էր, որ նա հասկանում էր կրոնավորի լեզուն, որովհետև ես ստեպ տեսնում էի նրա սառն դեմքի վրա մի տեսակ ցնցումներ, որ խորին զզվանք էին արտահայտում: Զարմանում էի, որ մի այդպիսի հրեշտակը բարկանալ գիտեր: Ես կրկին սկսեցի նայել դեպի Մուշի գեղեցիկ դաշտը: Մի թիզ

անմշակ տեղ չէր երևում: Դեպի ամեն կողմ հասունացած հունձքը ոսկյա ալիքներով ծածկում էր, ծավալվում էր և խորին բերկրանք էր պատճառում: Նայում էի դեպի աջ. երևում էին՝ Գրգուռ, Նեմրութի (Նեբրովթ) լեռները, երևում էին Նեմրութի ուղտերի քարացած շարքերը, որ տեղացիների լեզվով կոչվում էին «Ըղտու քարեր»: Այդ բոլորը հիշեցնում էին ինձ այն վաղեմի հերոսական արկածները, որ կատարվել էին Բաբելացոց աստծու — Բելի և մեր նախահոր՝ Հայկ-դյուցազնի մեջ: Նայում էի դեպի ձախ. երևում էր Տավրոսի շղթան՝ Խութա բարձր լեռներով, որոնց մյուս կողմում՝ շատախցիք գազանների հետ են պատերազմում: Իսկ մեր առջևում Մեղրի գետի շամբուտների մեջ թաքնված էին Օձ քաղաքի առասպելապատում ավերակները: Դեպի ո՛ր կողմ և նայում էի, երևում էին հայրենյաց անմոռանալի հիշատակները: Բոլորը իմ սրտին շատ մոտ էին, բոլորը լցնում էին իմ սիրտը մի սրբազան հպարտությամբ, երբ մտաբերում էի փառավոր անցյալը,— և, միևնույն ժամանակ, բոլորը լցնում էին իմ սիրտը մի թախծալի տխրությամբ, երբ տեսնում էի թշվառ ներկան…

Խոսակցությունը հասարակաց լինելու համար, կրոնավորը այժմ խոսում էր թուրքերեն: Նա Ասլանին՝ երկրի և նրա պատմության հետ անծանոթ մի եվրոպացու տեղ դնելով, պատմում էր նրան զանազան անցքեր Տարոնի մասին, իհարկե, կրոնական կողմից միայն, այն ևս ծուռ ու սխալ կերպով:

— Այդ երկիրը,— ասում էր նա,— լի է այն բոլոր հիշատակարաններով, որտեղ կատարվել են մեր ս. Լուսավորիչ հոր հրաշագործությունները: Երբ գնաց նա Կեսարիա և Ղևոնդես հայրապետից հայոց քահանայապետ ձեռնադրվեցավ, վերադարձին Ղևոնդեսը ընծայեց նրան սրբոց շատ մասունքներ, որ տանե Հայաստան և, կռատները քանդելով, նրանց տեղը քրիստոնեական տաճարներ հիմնել: Այդ մասունքների թվում էին ս. Հովհաննես Կարապետի և ս. Աթանագինես հայրապետի նշխարները: Մի զույգ սպիտակ ջորիներ տանում էին այն կառքը, որի մեջ դրած էին սրբոց մասունքները: Երբ եկան Տարոն, անցան Եփրատ (Արածանի) գետը և մոտեցան Քարքե լեռան բարձրություններին, այդ միջոցին աստծու հրամանով ջորիները կանգ առին, այլևս առաջ չգնացին: Ս. Լուսավորիչը հասկացավ, որ այնտեղ պետք էր հիմնել տաճարները: Բայց այդ լեռան գլխին շատ կռատներ կային, որոնց մեջ դևեր էին բնակվում: Ս. Լուսավորիչը խաչակնքեց, կռատները կործանվեցան և դևերը հալածվեցան: Այնտեղ հիմնեց ս. Լուսավորիչը ս. Կարապետի վանքը և ամփոփեց նրա մեջ իր բերած սուրբ մասունքների մի մասը: Այն դևերից մեկը մնաց միայն, որ մինչև այսօր ծառայում է վանքի մեջ:

— Ի՞նչ է շինում,— ընդհատեց Ասլանը նրա պատմությունը:

— Վանքի թոնիրների մոխիրը առնում է և ստորերկրյա աներևույթ ճանապարհով տանում է, ածում է Եփրատ գետի մեջ: Նրան կոչում են «Կաղ դև», որովհետև կռատները կործանվելու միջոցին քարերից մեկն ընկավ, ոտքը կոտրեց: Լուսավորիչը ներեց նրան, որովհետև զղջաց, մեղա եկավ:

— Ս. Լուսավորիչը ի՞նչ ազգից է եղել:

— Կաթոլիկ է եղել, այո, ուղղափառ բարեպաշտ կաթոլիկ: Նա, քահանայապետ ձեռնադրվելուց հետո, հայոց Տրդատ թագավորի հետ գնաց Հռոմ՝ ի տեսություն Կոստանդիանոս կայսեր և Սեղբեստրոս պապի: Հռոմում արքայավայել ընդունելություն գտավ: Այնտեղ կնքեց պապի հետ «դաշանց թուղթը», խոստացավ հավիտյան հավատարիմ մնալ Հռոմի սուրբ աթոռին: Վերադարձին կայսրը շնորհեց թագավորական պարգևներ Տրդատին, իսկ պապը շնորհեց հայրապետական պարգևներ ս. Լուսավորչին, որոնց թվում էր Պետրոս և Պողոս առաքյալների

նշխարների մի մասը և Անդրեաս առաքյալի ահյակ ձեռքը: Այդ սրբությունները ամփոփեց Լուսավորիչը Առաքելոց վանքում, որը ինքը հիմնեց:

Նա ցույց տվեց, թե որ կողմումն է Առաքելոց վանքը, և ավելացրեց.

— Այդ գավառի բոլոր վանքերը ս. Լուսավորչի հիմնածներն են, կամենում եմ ասել՝ կաթոլիկաց վանքեր են:

— Ուրեմն դուք հարգո՞ւմ եք ս. Լուսավորչին:

— Ինչպես չհարգել մի այնպիսի պաշտելի անձնավորություն, որ մի ամբողջ աշխարհ հեթանոսությունից ի քրիստոնեություն ածեց: Մենք մեր այստեղի բոլոր եկեղեցիներում դրած ունենք ս. Լուսավորչի պատկերը և դիտավորություն ունենք Մուշի մեջ նրա անունով մի առանձին եկեղեցի կառուցանել: Ս. Լուսավորիչը, իսկապես, մեզ է պատկանում և ոչ թե հայերին, որոնք հետո խոտորվեցան նրա ուղղած ճանապարհից…

Այդ բոլոր պատմության ժամանակ կրոնավորի մեղմ դեմքը փայլում էր: Նրա հեզ աչքերը վառվում էին, և նրա փափուկ ձայնը ավելի և ավելի կենդանանում էր: Ասլանը ոչինչ չպատասխանեց: Երևի, նրան ծանր էր շարունակել այդ սրտաբեկ խոսակցությունը…

Թեև մինչև կեսօր դեռ մի քանի ժամ կար, բայց արեգակը սկսել էր արդեն այրել: Կրոնավորը բաց արեց իր սև հովանին, բռնեց գլխի վրա և, չգիտեմ ինչո՞ւ, նա էլ ընկղմվեցավ մի տեսակ լռիկ թախծության մեջ:

Ճանապարհի մոտ արտերը հնձում էին: «Հոնածը» — հնձավորների առաջնորդը — առաջ ընկած, մի երգ երգելով, յուր մանգաղով բաց էր անում «հոնը»: Հնձավորների ամբողջ խումբը, ձայնակցելով նրա երգին, հետևում էին նրան: Փայլուն մանգաղների հնչյունը, միախառնվելով տխուր երգի հետ, կազմում էին խիստ տրտում, մելամաղձոտ ներդաշնակություն: Ինչո՞ւ շինականի երգը այնպես տխուր էր այստեղ: Ո՞վ էր խլել նրա ուրախությունը: Ո՞վ էր կոտրել նրա սիրտը, որից լսվում էին այն ցավալի հնչյունները…

Երբ մոտեցանք, «հոնածը» իր մանգաղի ծայրը ցցեց մի կապած խուրձի մեջ և, վեր բարձրացնելով, բերեց և հասկերն ի վեր դրեց մեր առջև, ճանապարհի վրա: Իսկ ինքը, արևից այրված դեմքը դեպի մեզ դարձնելով, լուռ կանգնեց յուր նվերի մոտ: Կրոնավորը հանեց քսակից մի արծաթե դրամ, ընծայեց նրան: «Հոնածը» շնորհակալությամբ ընդունեց և այնքան կանգնեց, մինչև մենք անցանք:

— Եթե դուք գիտենայիք, պարոն բժշկապետ,— դարձավ նա դեպի Ասլանը,— թե ո՛րքան բարի է այդ ժողովուրդը, ո՛րքան առաքինություններ, ո՛րքան նահապետական գեղեցիկ սովորություններ կան նրա մեջ: Ես կատարելապես սիրահարված եմ այդ ժողովրդի վրա:

Հետո սկսեց մեզ բացատրել, թե ինչ նշանակություն ուներ հնձավորի այն խուրձը մեր առջև դնելը: Ասաց, դա մի սրբազան նվեր էր, որ մատուցանում էր նա իր մշակության բերքից: Օրինակ, այդ գյուղը,— առաջ տարավ նա,— որ մի քանի ժամ առաջ անցանք, ես կատարելապես հիացած եմ այդ գյուղացոց բարք ու վարքով: Ամեն անգամ, որ պատահում է այնտեղ գնալ, հավաքվում են իմ շուրջը, ես հոգևորապես մխիթարում եմ նրանց, և նրանք ուրախությունից չգիտեն՝ թե ինչ անեն. իմ ձեռքերն են համբուրում, և մինչև անգամ իմ հագուստի դրոշակներն են համբուրում: Տեսնո՞ւմ եք, պարոն բժշկապետ, ո՞րքան պարզություն, ո՞րքան անմեղություն…

Խոսքը Հացիկի «կարճազատների» մասին էր:

Ասլանը հարցրեց.

— Շա՞տ հետևողներ ունեք այնտեղ:

— Այժմ մի քանի ընտանիք միայն: Բայց մեծ հույս ունեմ, որ շուտով իմ հետևողների թիվը կավելանա:

— Իսկ մյուս գյուղերո՞ւմ:

— Երեք գյուղ — Նորաշեն, Օղունք, Առինչ,— ամբողջապես կաթոլիկ են: Իսկ մյուս գյուղերում դեռ նոր է մուտք գործում կաթոլիկությունը: Մենք շատ ժամանակ չէ, որ այդ կողմերը եկած ենք, պարոն բժշկապետ: Մեզանից առաջ գործում էին այստեղ բոլորովին այլ ուխտի կրոնավորներ:

Մոտենալով Մեղրի գետի եզերքին, տեսարանը փոխվեցավ: Ոսկեգույն արտերի փոխարեն սկսվեցան կանաչազարդ մարգագետիններ, որ գետի ընթացքով տարածվում էին հեռու, և հեռու, մինչև այդ գետը խառնվում էր Եփրատի հետ: Տեղ-տեղ երևում էին խիտ, ճոխ կերպով աճած, շամբուտներ: Այդ շամբուտների մեջ Տարոնի հին տերերը, Սլկունի նախարարների իշխանազն որդիները, մի ժամանակ վարազներ էին որսում: Այդ որսորդ նախարարությունը Արշակունյաց առաջին թագավոր Վաղարշակից կարգվեցավ որպես պետ թագավորական որսերի: Տրդատի օրերում Սլկունիները ապստամբվեցան Արշակունիների դեմ, և ճենացի Մամգունի դավաճանությամբ բնաջինջ եղան: Տրդատը Տարոնը պարգևեց Մամգունին, որը Մամիկոնյան մեծ նախարարության սկիզբը դրեց:— Այդ բոլորը երազի նման անցնում էր իմ աչքի առջևից: Կարծես, հենց այդ րոպեում զարկում էր իմ ականջներին իշխանազն երիտասարդների որսորդական փողի ձայնը, կարծես, հենց այդ րոպեում տեսնում էի, թե ինչպես նրանք, նիզակները ձեռքում, սրարշավ ձիաներով, սլանում էին Մեղրի գետի խիտ շամբուտների մեջ: Բայց երբ աչքերս դարձնում էի, իմ առջևում, համրընթաց ձիու վրա նստած, լուռ գնում էր կաթոլիկ կրոնավորը…

Այդ կանաչազարդ տարածության վրա, որ հասնում էր մինչև Եփրատի ափերը, արածում էին շրջակա գյուղերի անասունները: Գյուղերը մոտ առ մոտ երևում էին հեռվից:

Մի տեղ, ճանապարհից ոչ այնքան հեռու, մի խումբ երեխաներ նստած, ինչ-որ խաղ էին խաղում: Այդ փոքրիկ հովիվների շուրջը արածում էին նրանց գառները: Երևում էր, որ նրանցից յուրաքանչյուրը իրանց տան գառները բերել էր, և այնպես կազմվել էր մի ամբողջ հոտ: Շները, գլուխները առջևի թաթերի վրա դրած, պառկել էին նրանց մոտ և ուշադրությամբ նայում էին ոչ այնքան գառներին, որքան նրանց խաղին: Երբ փոքրիկ հովիվները հեռվից տեսան մեզ, նրանցից մեկը, ավելի ճարպիկը, շտապեց և գրկելով գառներից մեկին, վազեց դեպի մեզ: Եվ ինչպես հնձավորը յուր հասկերի խուրձը նվիրեց մեզ, նա էլ իր գառը պահեց մեր առջև, ճանապարհի վրա, և ծիծաղկոտ դեմքը ուղղեց դեպի մեզ: Կրոնավորը սրտի հուզմունքից զգացվեցավ, թաշկինակը տարավ դեպի աչքերը:

— Մոտեցի՛ր, մանկիկս,— ասաց նա, տալով երեխային մի արծաթե դրամ և լի բուռնով այլ մետաղներ, որ հանեց գրպանից:— Այդ փողը քեզ,— ավելացրեց նա,— իսկ այդ մյուսները բաժանիր քո ընկերներին:

Մանուկը համբուրեց կրոնավորի աջը և ուրախ-ուրախ վազեց դեպի ընկերները: Նրա ստացածը ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ, պղնձե փոքրիկ խաչեր ս. Աստվածածնի պատկերներով:

Ես ետ նայեցի, փոքրիկ հովիվների մեջ արդեն սկսվել է կռիվը խաչերի բաժանման մասին:

Ի՜նչ մեծ զանազանություն այդ փոքրիկ հովիվների և այն փոքրիկ հովիվների մեջ, որ քարկոծում էին սուրբ գրքերի տարածողին: Դրանք խաչեր բաժանողի աջն էին համբուրում, իսկ նրանք սուրբ գրքեր բաժանողի վրա քար էին ձգում: Կրոնավորը դարձյալ սկսեց Ասլանի հետ ֆրանսերեն խոսել: Երբ նրանք փոքր-ինչ հեռացան, ես հարցրի կրոնավորի ծառայից:

— Ո՞վ է այդ մարդը:

— Մեր «գերապայծառն» է,— պատասխանեց նա մի առանձին հպարտությամբ:

Ես իսկույն հասկացա, որ այդ կողմերում նոր հայտնված եզվիտ կրոնավորներից մեկը պետք է լինի, որոնց մասին շատ բաներ էի լսել: Բայց ինչո՞ւ պարծենկոտ ծառան իր տիրոջը «գերապայծառ» տիտղոսը տվեց, որը հայ-կաթոլիկները տալիս են իրանց եպիսկոպոսին միայն:

— Իսկ դու հա՞յ ես,— հարցրի նրանից:

— Աստված մի արասցե,— պատասխանեց նա երեսը խաչակնքելով,— ես «փրանգ» եմ:

— Փրանգի լեզուն իմանո՞ւմ ես:

— Փրանգը ո՞րն է, լեզուն ո՞րն է,— կոպիտ կերպով հարցրեց նա.— ես փրանգի հավատիցն եմ:

Նա չգիտեր, որ փրանգները (ֆրանսիացիք) առանձին ազգ են, առանձին լեզու ունեն, կամ կարծում էր, որ փրանգը կրոնի անուն է: Արփիարը տհաճությամբ լսում էր մեր խոսակցությունը:

— Ո՞րտեղացի ես:

— Այն գյուղից, որ հիմա դուրս եկանք:— Նա ցույց տվեց «կարճազատների» գյուղը, որի մասին այնքան համակրությամբ էր խոսում «գերապայծառը»:

— Քո հայրն ու մայրը նույնպես փրանգնե՞ր էին:

— Ոչ, նրանք «հերձվածողներ» էին:

— Հայեր չէի՞ն:

Նա վրդովվեցավ:

— Ա՛յ մարդ,— ասաց ինձ, երեսը շուռ տալով,— դու ոչինչ չես հասկանում. հերձվածողն էլ հայ է, հայն էլ հերձվածող է, ուրիշ ի՞նչ զանազանություն կա այդ խոսքերի մեջ:

— Շատ զանազանություն կա,— պատասխանեցի ես, և զանազանությունը կամենում էի ցույց տալ ձեռքի մտրակով, բայց Արփիարը աչքով արեց, և ես զսպեցի իմ բարկությունը:

Նա իմ բարկությունը նկատելով, վշտացած կերպով հեռացավ մեզանից:

Արփիարը նկատեց.

— Այդ անպիտանները իրանց կաթոլիկ էլ չեն կոչում: Ուրիշ տեղերում, եթե

հայ-կաթոլիկները ուրանում են իրանց հայությունը, գոնե իրանց «փրանգ» չեն կոչում: Ահա դրա մեջն է եզվիտների գլխավոր վնասը՝ լատինացնել և ազգայնությունը, ազգային զգացմունքը ոչնչացնել…

Երբ փոքր—ինչ առաջ գնացինք, կրոնավորը իր ձին պահեց և, ձեռք տալով Ասլանին, բաժանվեցավ մեզանից, ասելով.

— Շատ ցավում եմ, որ իմ ուղեկցությունը այդպես կարճատև եղավ ձեզ հետ, պարոն բժշկապետ, ես այդ գյուղը պետք է գնամ մի հիվանդի այցելության:

— Այդ ավելի կարևոր է,— պատասխանեց Ասլանը ժպտալով:— Մնաք բարյավ, տեր հայր:

Մենք շարունակեցինք մեր ճանապարհը դեպի Մուշ: Ասլանը, տխուր մտածությունների մեջ առաջ էր քշում իր ձին: Ես և Արփիարը դեռ շարունակում էինք խոսել կրոնավորի և հայ-կաթոլիկների մասին:

— Զարմանալի կոպիտ մարդիկ են այդ հայ—կաթոլիկները,— ասացի ես, չմոռանալով կրոնավորի ծառայի իմ վրա թողած անախորժ տպավորությունը:

— Նրանք հայերի հետ միայն այդպես են,— պատասխանեց Արփիարը, իր ձիու ընթացքը հավասարեցնելով իմին, որպեսզի ես լավ լսեմ նրա խոսքերը:— Բայց երբ պատահում է նրանց մի օտարազգիի հետ խոսել, այդ դեպքում ստրուկի պես խոնարհ են դառնում: Ատելությունը դեպի իրանց ազգայինները այն աստիճան զարգացել է նրանց մեջ, որ մի հայի պատահելիս, այլևս իրանց պահել չեն կարողանում, մոռանում են քաղաքավարությունը: Ամեն օտարազգի աղանդավորներին նրանք կներեն, բայց հայի երեսին անամոթությամբ կնետեն «հերձվածող, չարափառ, հերետիկոս» և այլ անուններ: Այդ կաթոլիկ կղերի դաստիարակության արդյունքն է:

— Ատելություն սերմանել եղբայրների մեջ:

— Այո՛, ատելություն սերմանել: Բայց մի այլ պատճառ ևս պետք է ի նկատի առնել: Այդ մարդիկը հենց սկզբանե անկիրթ են եղել և ոչինչ բարոյական մաքրություն չեն ունեցել: Վեր առեք յուրաքանչյուր նոր կրոնափոխ եղած հայ—կաթոլիկին առանձին, քննեցեք նրա անցյալը, քննեցեք նրա վարած կյանքը, անպատճառ կգտնեք նրա մեջ մի հին կեղտ: Այդպիսի մարդիկ միայն մոտենում են եզվիտներին և այդպիսի մարդկանց մոտենում են իրանք եզվիտները: Ամեն մի հայտնի սրիկան նրանցից պաշտպանություն է գտնում: Ինչո՞ւ:— Որովհետև նրանց միջոցով ավելի հեշտ է խաղաղ ժողովրդի մեջ երկպառակություն ձգել, միմյանց հետ կռվացնել, որդին իր ծնողաց դեմ ապստամբացնել և այլն: Իսկ երկպառակությունից նրանք միշտ օգուտ են քաղում: Այդ մարդը, որ ձեզ հետ վիճում էր, մի քանի անգամ սևանկացած, իր պարտատերերի ձեռքից փախած, գինեվաճառ է: Հիմա եզվիտի մոտ ծառա է դարձել նրա և՛ խոհարարն է և գործակիցը: Դուք կտեսնեք նրան, խոհանոցի ղենջակը

առջևը կապած, փողոցում կանգնած, անցնողների հետ քավարանի կամ պապի Հիսուս Քրիստոսի հաջորդ լինելու մասին կվիճե, թեև ինքը բոլորովին տգետ և գռեհիկ մարդ է:

— Միևնույնը ես նկատեցի Բաղեշում, այդպես էին վարվում և հայ-բողոքականները:

— Բոլորը միևնույն տեսակից են: Այդ օտարազգի քարոզիչները հավաքում են հասարակության մրուրը, հասարակության կեղտը: Երանի՛ թե, մաքրելու նպատակով լիներ… Նրանք փոխում են իրանց հետևողների անունը միայն, իսկ կեղտը մնում է… Մի՞թե լոկ անունը կարող է փոխել մարդու բարոյական կազմակերպությունը: Մեկը երեկ հայ—լուսավորչական էր, այսօր նրան կոչում են հայ—բողոքական, կամ հայ—կաթոլիկ,— դարձյալ նույն մարդն է…

Այդ խոսակցության միջոցին երիտասարդի շրթունքները դողում էին, նրա ձայնը փոփոխվում էր, երևում էր, որ նա զգացել էր այդ բոլորը, երևում էր, որ նրա մտածության մշտական առարկան էին դարձել հայ հասարակության այդ անբուժելի վերքերը: Բայց զարմանալին այն էր, որ ես այդ անծանոթ երիտասարդի և Ջալլադի դատողությունների մեջ գտնում էի շատ նմանություններ, կարծես երկուսն էլ միևնույն նպատակին էին ձգտում, երկուսն էլ միևնույն վնասակար երևույթների դեմ էին բողոքում: Ջալլադը, որպես վերջը հայտնվեցավ, բողոքական քահանա էր: Բայց ո՞վ էր այդ երիտասարդը, որ Բաղեշում անսպասելի կերպով միացավ մեզ հետ: Ասլանը այդ մասին դեռ ոչինչ չէր ասել ինձ: Երբ նա խոսում էր, ես կարմրում էի նրա առջև: Նա այն հասակում այնքան շատ բաներ գիտեր, այնքան շատ բաներ ուսումնասիրել էր: Իսկ ե՞ս… Ես դեռ ոչինչ չգիտեի…

Ճանապարհը զարմանալի կերպով տրամադրում է մարդուն խոսել, մանավանդ երկար, ձանձրալի ճանապարհը: Իսկ մեր խոսակցության առարկան այնքան առատ էր նյութերով, որ եթե տարիներով խոսեինք, դարձյալ չէր սպառվի: Աշխարհի սկզբից մարդիկ խոսում են, վիճում են կրոնի վրա, և պիտի շարունակեն խոսել, մինչև աշխարհի վերջը:

Մենք կրկին վերադարձանք դեպի օտարազգի քարոզիչներ:

— Նրանք,— նկատեցի ես,— այնպես չեն, որպես իրանց հետևողները, այլ բավական բարի, քաղաքավարի և բարեկիրթ մարդիկ են:

— Այդ այդպես երևում է միայն,— պատասխանեց նա ժպտալով,— բայց երբ շատ կմոտենաք նրանց, կտեսնեք, թե ի՛նչ հրեշներ են: Տեսա՞ք այդ կրոնավորին, ո՛րքան հեզ էր, ո՛րքան քաղցր էր խոսում, կարծես բերանից մեղր էր հոսում: Բայց միևնույն անձը իր հետևողների սրտում թույն կկաթեցնե, և այնքան անզգալի կերպով, որ նա չի զգա, թե վարակվում է:

— Այսուամենայնիվ, մեծ զանազանություն կա դրանց և բողոքական միսիոնարների մեջ: Այն զանազանությունը միայն կա, որ բողոքական միսիոնարները մեծամիտ են, իրանց միշտ բարձր են պահում ժողովրդի մակերևույթից և ավետարանի առաքելության մեջ անգամ՝ պահպանում են անգլիական կոպիտ հպարտությունը: Այդ է պատճառը, որ խիստ նվազ հաջողություն են գտնում: Բայց այդպես չեն եզվիտները. դրանք ամեն ծակ ու ծուկ կմտնեն, ամեն վիճակի հետ կհարմարվեն, և այդ պատճառով ավելի վտանգավոր են: Բողոքական միսիոնարը իր գործի մեջ *աղայություն* է սիրում և ավելի ուրիշների ձեռքով է գործ կատարում: Բայց եզվիտը ինքը իր գործի և՛ տերն է, և՛ մշակը:

— Դուք կարծում եք այստեղ կարո՞ղ են նրանք վնասակար լինել:

— Եթե նրանք կարողանում են վնասակար լինել ավելի քաղաքակիրթ հասարակությունների մեջ, որոնք ճանաչում են նրանց, որոնք գիտեն պաշտպանվել նրանց դեմ,— իսկ այստեղ, մի այդպիսի խեղճ, միամիտ, անպաշտպան ժողովրդի մեջ, ինչո՞ւ չեն կարող վնասակար լինել: Բոլոր այն հրոսակները, որ դարերի ընթացքում արշավանք են գործել Տարոնում, իրանց բարբարոսությամբ այնքան վնասներ չեն տվել, որքան կարող է տալ այդ հեզ, խոնարհ կրոնավորը, որ մի հասարակ ձիու վրա նստած, միայնակ, քրիստոնեական առաքինությամբ ահա՛ այժմ այցելության է գնում այն գյուղը, մի հիվանդի մոտ…

Զբաղված լինելով խոսակցությամբ, մենք բավական ետ էինք մնացել: Ասլանը շատ առաջ էր գնացել: Ես խնդրեցի իմ խոսակցին, որ փոքր-ինչ շտապեցնե իր ձին: Բայց նա, երևի, չլսեց իմ խնդիրքը, թեև քանիցս կրկնեցի: Նրա բոցավառ աչքերը թափառում էին Տարոնի ընդարձակ դաշտավայրի վրա, կարծես մի բան որոնում էին այնտեղ: Նրա դեմքը սաստիկ գունատված էր և շրթունքները պինդ սեղմված էին միմյանց վրա: Նա մինչև անգամ մոռացավ իմ ներկայությունը և սկսեց ինքն իրան խոսել:

«Տարո՛ն, սիրելի աշխարհ, ո՛րքան ազգեր եկել, անցել են քո վրայով, ո՛րքանին հյուրասիրել ես դու և քո ամրությունների մեջ պատսպարան ես շնորհել: Քո մեջ ապաստան գտան ասորոց Սենեքերիմ թագավորի երկու որդիքը — Ադրամելեք և Սանասար — հայրասպան որդիքը բերեցին իրանց հետ և՛ իրանց աստվածներին, և՛ իրանց ծառաներին: Բայց դու օտար հյուրերին սիրեցիր, բայց օտար աստվածներին համբերել չկարողացար: Հայության դրոշմը դրեցիր քո հյուրերի վրա և նրանցից սկսվեցավ Արծրունյաց հզոր նախարարությունը: Քո մեջ ապաստան գտավ ճենացի իշխանազն Մամգունը: Իր թագավորի սրտմտությունից փախստական լինելով, դիմեց քո պաշտպանությանը: Նա էլ բերեց իր հետ իր կրոնը, իր պաշտամունքը, իր սովորությունները: Բայց դու նրան ևս հայացրիր, և նրանից սկսվեցավ Մամիկոնյան մեծ նախարարությունը: Քո մեջ ապաստան գտան հնդկացի իշխանազն եղբայրները — Դեմետր և Գիսանե: Նրանք ևս, իրանց թագավորի բարկությունից ազատվելու համար, դիմեցին քո մեծահոգությանը, իրանց հետ բերելով և մի ստվար գաղթականություն: Դու նրանց բնակության տեղ շնորհեցիր, հիմնեցին Վիշապ քաղաքը և Քարքե լեռան բարձրությունների վրա կանգնեցրին իրանց տաճարները: Այդ տաճարներից, Լուսավորչի հետ պատերազմելու ժամանակ, դուրս եկան 6946 մարդիկ, որոնց մեծ մասը քուրմեր էին: Բայց դու բոլորին հայացրիր, և սևամորթ հնդիկը կլանվեցավ քո բնիկ ժողովրդի մեջ: Այդպես, դարերի ընթացքում, ոտք կոխեցին քո նվիրական հողի վրա մեծ մարդիկ — մեծ ուժերով: Բայց ամենքը լուծվեցան, ամենքը միախառնվեցան քո հարազատ զավակների հետ: Այժմ, սիրելի՛ Տարոն, քո դաշտերի վրա թափառում է մի մարդ, սև հագուստով և սև սրտով: Նա նույնպես փախստական է եղել իր երկրից, նա նույնպես արտաքսվել է իր երկրից, և քո գրկում հյուրասիրություն է որոնում: Նրա հայրենիքը չկարողացավ մարսել նրան, և իր միջից դուրս վիժեց: Նա դիմեց անծանոթ երկիր, որ անծանոթ ժողովրդի մեջ ծածկվիլ կարողանա: Նա չէ բերել իր հետ զենք, չէ բերել և մեծ ուժեր: Նրա գլխավոր զենքը, իր գրպանում լցրած, փոքրիկ պղնձե խաչերն են և իր խորամանկությունը:— Ես այդ մարդից սարսափո՛ւմ եմ, սիրելի Տարոն…»:

Լ

ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿԸ

Դեռ արևը չէ մտել, դեռ բավական լույս կար, երբ մոտեցանք Տավրոսի ստորոտներին, որ առանձին անունով կոչվում է Սիմ լյառ: Հեռվից, համանուն

դաշտավայրի հարավային կողմում, երևում էր Մուշ քաղաքը: Նա կանգնած էր բավական բարձր, լայնանիստ բլուրի վրա և թախծալի կերպով նայում էր դեպի իր առջևը տարածված ընդարձակ դաշտավայրը: Նրա թախծությանը փոքր ի շատե ուրախ կերպարանք էին տալիս խաղողի այգիները, որոնք, տների հետ միախառնված, բլուրի բարձրությունից իջնում էին մինչև ստորոտը: Դեպի ամեն կողմ տիրում էր երեկոյան լռությունը,— գործադուլի և հանգստի լռությունը: Լսվում էր միայն աղմկալի գետակի ձայնը, որ, քաղաքի առջևից ոլորվելով, փրփրալով գնում էր ու խառնվում Մեղրի գետին: Լսվում էր և ջրաղացների խուլ դղրդյունը, որոնք երկար շարքով բանում էին այդ գետակի վրա:

Գեղեցիկ էր տեսարանը: Գեղասեր Տավրոսը, մոտենալով Մուշի դաշտավայրին, կարծես վախեցել էր չխանգարել նրա չքնաղությունը և, զգուշությամբ դեպի ետ քաշվելով, գոգավորվել էր, թողնելով այն լայնանիստ բլուրը միայն, քաղաքի շինվածքի համար: Այդ բլուրի դեպի վերը նայելիս, երևում էր քաղաքը իր մզկիթներով ու եկեղեցիներով: Բոլորովին գագաթի վրա կանգնած էր հին, կիսավեր ամրոցը: Բլուրի ստորոտից, հարթ տարածության վրա, անմիջապես սկսում էին ծխախոտի մշակության ընդարձակ արտորայքը, որոնք քաղաքացիների գլխավոր հարստությունն էին կազմում:

Չգիտեմ ինչո՞ւ ես տխուր էի այդ քաղաքին մոտենալու ժամանակ: Արդյոք նրա՞ համար, որ Տարոնի մարդաշատ, մեծահարուստ քաղաքներից մնացել էր այդ մեկը միայն, և այն ևս ավելի մի մեծ ավանի տպավորություն էր գործում, քան թե քաղաքի:

Չկար Կավ-Կավ կոչված ամրաշեն քաղաքը, իր անառիկ Ողականբերդով: Չկար Ձյունակերտ քաղաքը, որ Վախթանգ զորավարը նորոգելով, իր կնոջ անունով կոչեց Պորպես: Չկար Օձ քաղաքը, որի ահարկու բերդը շինեց Աշոտ Մսակերի որդի Դավիթ Բագրատունին: Չկար Վիշապ քաղաքը, որ Վաղարշակի օրերում հիմնեցին հնդկացի գաղթականները, որը այլ անունով կոչվում էր Տիրակատար քաղաք: Չկար և Մծուրք քաղաքը, որ հիմնեց Սանատրուկ արքան:— Բոլորը կորավ, բոլորը անհետացավ, մնաց որբացած: Մուշը միայն, որ այժմ մռայլ դեմքով նայում էր բարձրադիր բլուրի գագաթից, և իմ մեջ զարթեցնում էր տխուր հիշողություններ: Բնության վսեմությունը տեսարանների գեղեցկությունը, մասամբ փարատում էին այդ հիշողությունները:

Երբ սկսեցինք բարձրանալ բլուրի զառիվերը, երբ բավական մոտեցանք քաղաքին, Արփիարը մեզ խորհուրդ տվեց չիջևանել պանդոկներում, այլ ընտրել մի հարմար կացարան: Բաղեշում հաջի-Իսաղի պանդոկում լավ խրատված լինելով, մենք հոժարությամբ ընդունեցինք Արփիարի առաջարկությունը:

— Բայց ուրիշ ի՞նչ հարմար կացարան կարող էինք գտնել,— հարցրեց Ասլանը:

— Քաղաքի եկեղեցիները ավելորդ սենյակներ ունեն պանդուխտների համար, կարելի է նրանցից մեկը ընտրել,— պատասխանեց Արփիարը:

— Դուք կարծում եք, որ դրանք պանդոկներից լա՞վ կլինեն:

— Եթե լավ չլինեն, վատ էլ չեն լինի: Միայն այն զանազանությունը կա, որ եկեղեցիների բակերում առանձնացած կլինենք, իսկ պանդոկներում կգտնենք մի խառնիճաղանջ բազմություն, որոնց մեջ շատ հաճելի չէր լինի մեզ երևնալ:

Ճանապարհը ոլոր-մոլոր պտույտներով բարձրանում էր դեպի վեր: Դաշտերից վերադառնում էին մշակները, բահերը ուսի վրա դրած, այգիներից վերադառնում էին այգեպանները բարձած ավանակներով: Փոշին մարդ էր խեղդում: Ավելի անտանելի

էին ավանակները: Երբեմն այդ կամակոր անասուններից մեկը կամ խրտչում էր, և համառելով կանգ էր առնում, ճանապարհ էր կտրում, կամ կողքե-կողք շեղվելով, իր վրա բարձած խաղողի կթոցը զարկում էր մեր ոտներին:

Վերջապես, մտանք քաղաքի նեղ փողոցների մեջ: Անցնելու տեղ չկար: Մարդ և անասուն խառնվել էին միմյանց: Մենք, կարծես թե, սանդուղքներից էինք բարձրանում, որովհետև փողոցները բլուրի զառիվեր դիրքն ունեին: Հայոց թաղերը բաժանված էին մահմեդականների թաղերից: Այդ արդեն նշան էր, որ այդ տարբեր ազգերը հաշտ դրացիներ չեն եղել: Մենք դիմում էինք դեպի հայոց թաղը:

Երեկոյան ժամերգությունը դեռ նոր էր ավարտված, դեռ նոր ժամավորները դուրս էին գալիս, երբ մտանք հայոց եկեղեցիներից մեկի բակը: Մեզ տեսնելով, ժամավորները կանգ առին և խմբվեցան մեր շուրջը: Բավական ժամանակ տևեց, մինչև եկեղեցու երեցփոխանը հայտնվեցավ: Դա մի կարճահասակ մարդ էր, որի ընդարձակ, ալեխառն մորուքը ծածկում էր ամբողջ կուրծքը, հետո, երկու կողմից տարածվելով, հասնում էր ուսերին, և ապա բարձրանում էր դեպի ականջները և վերջը անհետանում էր մի կեղտոտ, լրջագույն ֆեսի տակ: Նրա մորուքը հնդկահավի բացված պոչի տպավորություն էր գործում, որի միջնավայրում երևում էր մի փոքրիկ, ողորմելի երես, նեղ, անհանգիստ աչքերով.

Մեր հարցին, թե կա՞ն արդյոք սենյակներ գիշերելու համար, նա պատասխանեց՝ «տեսնեմ»… և անհայտացավ ժամավորների մեջ: Կարծես թե ինքը չգիտեր, և նոր պետք է տեղեկանար, արդյոք սենյակներ կային, թե ոչ:

Երկար սպասելուց հետո, վերջապես տեսանք, որ մորուքը բակի մյուս ծայրում խոսում էր տերտերի հետ, որը այդ գաղտնի խորհրդակցությունից հետո, բարեհաճեց մոտենալ մեզ: Եթե ճշմարիտ է ժողովրդական կարծիքը, թե ձրի հացը մարդուն գերցնում է, պարարտացնում է,— այդ կետից նայելով, պետք էր ընդունել, որ տեր հոր վրա շատ բարերար ազդեցություն էր գործել: Նրա երկու ձեռքերի ծայրերը հազիվ հասնում էին միմյանց, և ահագին փորի վրա դարձնում էին «տեր-ողորմյայի» սև հատիկները, որոնց մեջ տեր-հայրը, երևի, վայելչության համար, կարմիրներ ևս խառնել էր: Հակառակ իր երեցփոխանին, նա կրում էր խիստ թեթև մորուք, և ծնոտների բաց մնացած կաշին պարարտությունից փայլում էր մուգ-աղյուսի գույնով: Արյունով լի աչքերը, կարծես ուզում էին դուրս թռչել իրանց բույներից: Նա մոտենում էր մեզ դանդաղ քայլերով, և միևնույն ժամանակ ծանր շունչ էր առնում: Մեր զարմացքը մեծ եղավ, երբ այդ ահագին մարմնի միջից լսվեցավ մի երեխայի հազիվ լսելի ձայն:

— Բարեողջույն ձեր հրամանոցը… առակն անխոտելի է… կասեն՝ հազարից մեկ անգամ զատիկ կլինի… և այն օրն էլ ձյուն կգա… Մեր եկեղեցին, շատ տարի է, որ հյուր չէ ունեցել… այսօր հյուր եկավ, սենյակ չկա… Ապրի մեր ժողովուրդը… փառք աստծո, ի՞նչ էր պակաս… սենյակներ կային… բայց անցյալ տարի մեր մեղքից շատ անձրևներ եկան… կտուրները փլան… դեռ այնպես մնում են ու կմնան…

Պետք է շատ երկար սպասել, մինչև տեր հայրը, շունչ առնելով, փսփսալով, երբեմն դեպի մեզ և երբեմն դեպի իր ժամավորները նայելով, կվերջացներ իր երկար բացատրությունները: Բայց նրա խոսքը ընդհատեց մի մարդ, որ մոտեցավ մեզ և առաջարկեց իր հյուրասիրությունը, ասելով.

— Նվաստիս տունը շատ հեռու չէ եկեղեցուց, եթե կբարեհաճեիք, ինձ մեծ պատիվ արած կլինեիք, եթե այդ գիշերը իմ ծածկի տակ կանցկացնեիք:

Մենք հոժարությամբ ընդունեցինք: Նա ընկավ մեր առջևը, սկսեց տանել դեպի իր տունը:

Մեր ետևից բարձրացավ խառնաձայն աղմուկ, լսվում էին այդպիսի հանդիմանական խոսքեր. «ինչո՞ւ խաբեցիր… ինչո՞ւ սուտ խոսեցիր… ինչո՞ւ մեզ ամաչացրիր այդ օտարականների մոտ. սենյակներում գարի ես լցրել, և ասում ես, թե փլած են…»:

Երևում էր, որ տերտերին գզգզում էին:

Ես մեր հյուրընկալին նկատեցի.

— Ձեր տերտերը ժամասացությո՞ւնն էլ այդպես ձգձգում է, ինչպես սենյակների բացատրությունը:

— Շատ բառեր կուլ է տալիս,— պատասխանեց նա ժպտալով,— եթե ամեն խոսք կարդալու լիներ, մենք բոլորովին կորած էինք:

Մենք մտանք մի բավական կոկիկ տուն, փոքրիկ պարտեզով:

Մաքուր, արևելյան ճաշակով կահավորված մի սենյակ էր, ուր ներս տարավ մեզ մեր հյուրընկալը, և խնդրեց նստել, ասելով.

— Այնպես համարեցեք, որ ձեր տանն եք, ես իսկույն կպատվիրեմ, որ մեզ ուտելու մի բան տան:

Այստեղ ինչպես այդ կողմերի բոլոր քաղաքներում, սովորություն ունեին կեսօրին՝ ճաշի ժամանակ՝ նախաճաշիկ ուտել, իսկ երեկոյան՝ ընթրիքի ժամանակ՝ ճաշ ուտել: Որովհետև մարդիկ, ամբողջ օրը քաղաքում զբաղված լինելով, վերադառնում էին տուն երեկոյան միայն, ուր սպասում էր նրանց պատրաստի սեղանը:

Ընթրիքից հետո մեզ սուրճ տվեցին: Հայտնվեցավ, որ մեր հյուրընկալը քաղաքի ունևոր կալվածատերերից մեկն էր, և ծխախոտի ընդարձակ մշակություն ուներ:

Արփիարը, մի կողմ քաշված, պառկել էր մինդարի վրա և լուռ ծխում էր: Փափուկ երիտասարդը հոգնած էր երևում: Մի ամբողջ օր ու գիշեր շարունակ ճանապարհ էր եկել, դա հեշտ չէր նրա համար: Ասլանը ինչ-որ նամակ էր որոնում իր թղթապահի մեջ: Իսկ ես դեռ չէի մոռացել մորուքին, չէի մոռացել և հաստափոր տերտերին, այդ պատճառով հարցրի մեր հյուրընկալից, թե այն ի՞նչ աղմուկ էր, որ մեր հեռանալուց հետո բարձրացավ եկեղեցու բակում:

— Արժե՞ միթե դրա վրա խոսել,— պատասխանեց նա, ուսերը արհամարհական կերպով շարժելով.— մեր տերտերները խո գիտեք ի՛նչ են…

Մեր հյուրընկալը երևաց և բավական ծանր, լրջահայաց մարդ:

Ասլանը խոսում էր նրա հետ քաղաքի մասին, հարցնում էր, թե որքան բնակիչ ունի, որքանը մահմեդական է, որքանը հայեր են, քանի եկեղեցի ունեն, քանի դպրոց ունեն:— Նա բոլոր հարցերին բավական ճիշտ տեղեկություններ էր տալիս:

— Մահմեդականների հետ ձեր հարաբերությունները ի՞նչպես են:

— Ի՛նչպես պետք է լինի,— պատասխանեց նա տխուր ձայնով.— կողոպտում են, չենք բողոքում, հայհոյում են, ձայն չենք հանում, թքում են մեր երեսին, համբերում

ենք, և այդպես կառավարվում ենք միմյանց հետ: Եվ ասում են, թե հայն ու տաճիկը լավ են «յոլա գնում»…

Այդ միջոցին Արփիարը գլուխը վեր բարձրացրեց իր պառկած տեղից և, դառնալով դեպի տան տերը, ասաց.

— Ձեր հայտնած թվանշանները ինձ համար շատ հետաքրքիր են. մոտավորապես քանի՞ տուն են հաշվում այդ քաղաքում:

— Մոտավորապես 2500 տուն, որոնցից հազար տունը հայեր են, մնացածը քուրդ և տաճիկ:

— Ո՞րքան գյուղ կա Մուշի ամբողջ դաշտում:

— Հայաբնակ գյուղերը 100 կարելի է հաշվել, իսկ մի 8 կամ 10 գյուղ քրդաբնակ են:

— Հայաբնակ գյուղերի յուրաքանչյուրը միջին թվով քանի՞ տուն կունենա:

— Յուրաքանչյուրը միջին թվով կունենա 70 տուն:

— Ուրեմն 100 գյուղը 7000 տուն:— Իսկ յուրաքանչյուր տունը ո՞րքան հոգի կարելի է հաշվել:

— Յուրաքանչյուր տունը 10 հոգի կարելի է հաշվել:

— Դա շատ չի՞ լինի:

— Ոչ, շատ չի լինի, որովհետև մեր գյուղերում այնպիսի ընտանիքներ կան, որ 20, 30 կամ ավելի անդամներից են բաղկացած:

— Այսուամենայնիվ 10 հոգի մեծ թիվ է: Ընդունենք այդպես, և կստանանք հետևյալ թվանշանները: Ամբողջ Մուշի դաշտի մեջ 100 հայաբնակ գյուղ, 7000 տուն և 70000 բնակիչ: Եվ եթե դրա վրա ավելացնենք քաղաքի 1000 տան բնակիչները, ընդամենը կլինի 80000 բնակիչ:

— Բայց դուք այն հարցրեք,— նկատեց մեր հյուրընկալը.— թե այդքան բնակիչներից ո՞րքանն է իր հայրենի հողի վրա բնակվում: Կարելի է ասել, որ կես մասը պանդխտության մեջ է ապրում:

— Պանդխտության մեջ ի՞նչ են շինում:

— Համալություն են անում:

— Անբա՛խտ Տարոն,— բացականչեց վշտացած երիտասարդը տխուր ձայնով,— քո գյուղացին առաջ գնում էր օտար երկրում կայսր էր դառնում, իսկ հիմա գնում է համալ է դառնում…

Մեր հյուրընկալի բարի աչքերը զարմացքից լայնացան: Զարմացա և ես:

— Ինչո՞ւ եք զարմանում,— դարձավ նա դեպի մեզ,— հունաց երևելի Վասիլ կայսրը, որ Կ. Պոլսում գահ նստավ 867 թվին, Տարոնի Թիլ ավանից էր: Նրա թոռ Կոստանդին Պերփեռուժեն կայսրը նույնպես նշանավոր եղավ, որպես իր պապը, և գրեց նրա պատմությունը, որ լի է բազմաթիվ մեծագործություններով: Հայաստանը շատ կայսրներ ու մեծ զորապետներ է տվել, թե՛ Հռոմին և թե՛ Բյուզանդիային, ուր նրա որդիները այժմ գնում են, համալություն են անում:

Ճրագի լույսը լուսավորում էր նրա գունաթափ դեմքը, որի վրա հայտնվեցավ մի թեթև կարմրություն: Նա հանեց ծոցի գրպանից մի փոքրիկ գրքույկ, ինչպես բողոքականի քարոզիչը ամեն դեպքում դուրս է բերում ծոցի ավետարանը: Նրա ձեռքերը զգալի կերպով դողում էին: Երևում էր, որ մեր հյուրընկալի հաղորդած թվանշանները ավելի գրգռեցին նրա տխուր զգացմունքները: Մենք ամենքս նայում էինք նրա երեսին: Նա թերթում էր փոքրիկ գրքույկը և մատիտով մի պատառ թղթի վրա նշանակում էր իր դիտողությունները: Երբ վերջացրեց, գլուխը վեր բարձրացրեց, ասելով.

— Ի՜նչ մեծ տարբերություն… այդ սարսափելի՜ է:

Ասլանը այնպիսի հիացմունքով նայում էր նրա վրա, ինչպես մի մեծ եղբայր, որ ուրախանում է կրտսերի առաջադիմությամբ:

Երիտասարդը դարձավ դեպի մեր հյուրընկալը:

— Մեր հին պատմաբաններից մեկը, Ձենոբ Գլակը, թողել է մեզ մի քանի հետաքրքիր թվանշաններ, որոնցից կարելի է եզրակացնել, թե որքան մեծ բազմամարդություն է ունեցել Տարոնը առաջ և որքան փոքրացել է նրա բնակիչների թիվը այժմ: Պետք է գիտենաք, որ Ձենոբ Գլակը Լուսավորչի ժամանակակից էր և նրա նշանավոր եպիսկոպոսներից մեկը, որին Լուսավորիչը Տարոնի Կարապետ վանքի առաջին վանահայր կարգեց: Եվ որովհետև Ձենոբ Գլակը գործակից եղավ Լուսավորչին այդ վանքի կառուցանելու ժամանակ, այդ պատճառով վանքը կոչվեցավ և Գլակա վանք: Այդ վանքը այսօր էլ կա և ոչ միայն Տարոնի, այլ ամբողջ Հայաստանի ամենանշանավոր վանքերից մեկն է: Էջմիածնից հետո նրան կարելի է դնել: Գուցե ձեզ հայտնի է, որ Ս. Կարապետի վանքը առաջ մի կռատուն էր, հնդկացի գաղթականներից ամենահին ժամանակներում հիմնված: Լուսավորիչը այդ կռատունը քանդեց և նրա տեղում՝ ս. Կարապետի վանքը հիմնեց:— Այդ բոլորը ասում եմ ձեզ, որ այդ վանքի մասին փոքր-ինչ պատմական գաղափար ունենաք, բայց բանը դրանում չէ: Ս. Կարապետի վանքը, դեռ կռատուն եղած ժամանակ, ուներ իր շրջակայքում տասն և երկու գյուղեր, իբրև վանական սեփականություն: Երբ կռատունը քրիստոնեական տաճարի փոխվեցավ, Լուսավորիչը նույն գյուղերը դարձյալ թողեց, որպես նույն վանքի ժառանգություն: Դժբախտաբար Ձենոբը իր գրքի մեջ հիշյալ տասներկու գյուղերից միայն յոթնի անուններն է հիշում, բայց այդքանը ևս շատ բան է ապացուցանում այն ժամանակի վիճակագրության համար: Ես կկարդամ ձեզ նրանց անունները, թե յուրաքանչյուրը քանի երդ, այսինքն ծուխ ուներ, և ո՜րքան զորք կարող էր դուրս բերել պատերազմի ժամանակ:

Նա սկսեց փոքրիկ թղթի պատառի վրա կարդալ յոթն գյուղերի անունները, որ դուրս էր բերել Ձենոբի գրքից:

1. *Կուառս* ուներ 3012 երդ կամ ծուխ, 1500 հեծյալ, 2200 հետևակ զորք: 2. *Մեղդի*՝ 2080 երդ, 800 հեծյալ, 1030 հետևակ: 3. *Խորտում*՝ 900 երդ, 400 հետևակ: 4 *Խորնիի*՝ մեր Մովսես Խորենացու ծննդավայրը — 1906 երդ, 700 հեծյալ, 1008 հետևակ: 5. *Կեղք*՝ 600 երդ, 800 հեծյալ, 600 հետևակ: 6. Պարեխ՝ 1680 երդ, 1030 հեծյալ, 600 հետևակ: 7. Բազում՝ 3200 երդ, 1040 հեծյալ, 8040 աղեղնավոր, 6000 տեգավոր, 280 պարսավոր:

— Ուրեմն 7 գյուղը ունեցել է 14378 երդ կամ ծուխ: Եթե յուրաքանչյուր ծուխը հաշվելու լինենք 10 հոգի, ինչպես հաշվեցինք Մուշի գյուղորայքի այժմյան ծուխերը, կստանանք 143780 հոգի: Կնշանակե՝ Հին Տարոնի միայն յոթն գյուղը ունեցել է 63780 բնակիչ ավելի, քան թե ունի այժմյան ամբողջ Տարոնը իր բոլոր գյուղերով և Մուշ քաղաքով:— Դա սարսափելի՜ տարբերություն է,— կրկնեց նա,— դա մինչև անգամ անհավատալի է թվում: Բայց ես բոլորովին հավատում եմ Ձենոբի

թվանշաններին, նա չափազանց ճշմարտասեր մարդ էր: Բայց ո՛րքան ուրիշ շատ գյուղեր, ավաններ և քաղաքներ կային այն ժամանակ Տարոնում…

Նա լռեց, թախծալի մռայլը կրկին պատեց նրա պայծառ դեմքը:

— Հիշյալ յոթն քրմական ավանդագյուղերը ունեին 20708 հետևակ և հեծելազոր զինվորներ: Բավական մեծ ուժ է մի մեհյանի համար: Մի կռվի մեջ միայն քուրմերը դուրս բերեցին Լուսավորչի դեմ 6946 զինված մարդիկ: Եվ այդ էր պատճառը, որ առանց արյունահեղության չկատարվեցավ կրոնական մեծ հեղափոխությունը Տարոնում:

Մեր հյուրընկալը խորին ուշադրությամբ լսում էր ոգելից երիտասարդի խոսքերը: Ինձ համար ևս շատ հետաքրքիր էին նրա հաղորդած նոր տեղեկությունները Տարոնի մասին, թեև շատ բան առաջուց ինձ պատմել էր նույնպես և Ասլանը:

Ասլանը այդ միջոցին գտավ այն նամակը, որ որոնում էր, և դառնալով դեպի մեր հյուրընկալը, հարցրեց.

— Դուք ճանաչո՞ւմ եք այդ մարդուն,— նա կարդաց նամակի հասցեն:

Մեր հյուրընկալի լուրջ դեմքի վրա խաղաց մի թեթև ժպիտ և, նամակը նրա ձեռքից առնելով, ասաց.

— Այդ մարդը ես եմ: Անշուշտ Վանում հանձնած կլինեն ձեզ այդ նամակը:

— Այո՛, մուսուլցի թումաջի վաճառական խոջա Թորոսի նամակն է:

Մեր հյուրընկալը նամակը մոտեցրեց ճրագին, կարդաց, և վերջացնելուց հետո, ասաց.

— Այդ նամակը, ինչպես երևում է, ուշացրել եք: Բայց ես դրանից առաջ մի այլ նամակ ևս ստացել եմ խոջա Թորոսից, համարյա միևնույն այդ բովանդակությամբ:

— Ուրեմն դուք ճանաչեցի՞ք մեզ եկեղեցու բակում:

— Ճանաչեցի: Ես ձեզ սպասում էի:

— Ուրեմն պատրաստե՞լ եք, ինչ որ գրել են ձեզ:

— Ամեն ինչ պատրաստ է:

— Շատ շնորհակալ եմ,— ասաց Ասլանը, ձեռքը մեկնելով նրան:— Ես առավոտյան պետք է գնամ Աստղաբերդը տեսնելու: Այնտեղից կգնամ Առաքելոց վանքը: Հետո կվերադառնամ ձեզ մոտ և այստեղից ճանապարհ կընկնեմ…

— Մինչև ձեր վերադարձը ամեն ինչ պատրաստ կգտնեք ճանապարհի համար,— կրկնեց մեր հյուրընկալը:

ԼԱ

ԱՍՏՂԱԲԵՐԴ

Մյուս օրը, վաղ առավոտյան, ես և Ասլանը, մեր հյուրընկալի ծառաներից մեկին մեզ հետ առնելով, ճանապարհ ընկանք դեպի Աստղաբերդ: Արփիարը ինչ-որ գործերի համար մնաց նրա տանը:

Չգիտեմ ինչո՞ւ, ես միշտ ուրախություն էի զգում, երբ Ասլանը տանում էր ինձ մի հին ամրոց կամ բերդ ցույց տալու: Նրանց ավերակները միշտ իմ վրա ազդու տպավորություն էին թողնում: Արդյոք նրա՞ համար, որ նրանց մեջ ես տեսնում էի անցյալ փառքի և զորության խորտակված հիշատակները, թե նրա՞ համար, որ նրանց մեջ երևում էր ժողովրդի իշխանների կյանքը, սովորությունները և նրանց հարաբերությունները՝ թե յուրայնոց և թե օտարների հետ:

Այդ բերդի անունն անգամ ինձ համար հրապուրիչ էր. Աստղաբե՛րդ գեղեցիկ անուն է: Ասլանը ասում էր, Աստղկա-բերդ անվան փոփոխությունը պետք է լինի:

Ճանապարհը ոլորվում էր հարթ դաշտավայրի միջով: Ես և Ասլանը նստած էինք ձիաների վրա, իսկ մեր առջևից ոտքով գնում էր մեր առաջնորդը:

Ես այժմ միայն առիթ ունեցա Ասլանի հետ խոսել Արփիարի մասին: Այդ երիտասարդը ինձ խելքից հանել էր: Բայց դեռ չգիտեի՝ ո՞վ էր նա, ո՞րտեղից հայտնվեցավ, ի՞նչ նպատակով էր եկել Մուշ և այլն: Ասլանը ինձ շատ բան չասաց նրա մասին, բայց որքան էլ ասաց, այն էլ բավական էր իմ հարցասիրությունը գոհացնելու համար: Ես տեղեկացա, որ նա բնիկ տրապիզոնցի էր, սովորել էր Վենետիկի Մխիթարյանների վանքում, ուսումնասիրել էր պատմություն, գլխավորապես հայոց պատմություն և հայոցլեզու, գիտեր և մի քանի հին ու նոր լեզուներ: Բայց ինչ որ ավելի զարմացրեց ինձ,— նա կրոնով հայ-կաթոլիկ էր, և այնպես դառնացած կերպով խոսում էր հայ—կաթոլիկների մասին:

«Ահա՛ մի երկրորդ Ջալլադ,— մտածում էի ես,— նա կրոնով հայ բողոքական, բողոքում էր հայ-բողոքականների հակաազգային հակումների դեմ, իսկ դա կրոնով հայ կաթոլիկ, բողոքում էր հայ կաթոլիկների հակաազգային հակումների դեմ: Բայց Ջալլադը քահանա էր, չլինի՞ թե դա ևս մի նորընծա աբեղա լիներ»:

— Ո՛չ,— ասաց Ասլանը,— սկզբում թեև ուխտած է եղել կրոնավորական կարգը մտնել, բայց հետո թողել է:

— Նա կմնա՞ այստեղ:

— Կմնա:

— Ի՞նչ պիտի շինե:

— Պիտի գործե այստեղի հայ—կաթոլիկների մեջ:

— Նա Վենետիկի վանքի կողմի՞ց է ուղարկված:

— Ո՛չ, նա ազատ մարդ է, կգործե իր սեփական միջոցներով: Նա հորից բավական ժառանգություն է ստացել:

— Եզվիտները չե՞ն հալածի նրան:

— Կհալածեն: Բայց եթե հալածանքից մարդիկ վախենալու լինեին, պետք է ոչինչ չշինեին: Իսկ նա բավական քաջություն ունի իր գործի համար:

Քաղաքից մոտավորապես երկու ժամ ճանապարհի տևողությամբ գնում էինք դեպի արևելք, անցնելով մշակված դաշտերի և գեղեցիկ, կանաչազարդ հովիտների միջով: Հեռվից երևաց Աստղաբերդը: Նա կանգնած էր Տավրոսի թևքերից մեկի վրա և, կարծես, զայրացած դեմքով նայում էր դեպի իր առջևը դրված խորին ձորերը ու լայնածավալ հովիտները: Իմ սիրտը սկսեց դողալ: Մենք մոտենում էինք հայոց դիցուհու ամրոցին: Այստեղ էր հյուրասիրում Տարոնի աստվածուհին մեր անպարտելի հսկաներից մեկին — Վահագնին: Այստեղ, գեղեցիկ աստվածուհու գրկի մեջ, հանգիստ էր առնում հսկան՝ իր ահռելի կռիվներից հետո վիշապների հետ: Սերը, գգվանքը, հեշտությունը ամոքում էին վաստակած քաջի խոնջությունը:

Երբ հասանք լեռան ստորոտին, մեր առաջնորդը ներքևում պահեց ձիաները, իսկ ես և Ասլանը սկսեցինք վեր բարձրանալ: Ամրոցի վիթխարի աշտարակներից մի քանիսը, բարձր պարիսպների մեծ մասը, դեռ կանգուն էին մնացել: Ներսի շինությունները փլատակների մի տխուր տեսարան էին ներկայացնում: Երևում էին զանազան վիմափոր սենյակներ, քարանձավներ, որոնք կիսով չափ կամ բոլորովին հողով լցված էին: Պարզ երևում էր, որ ոչ թե ժամանակը պարբերաբար մաշել, տրորել էր այդ գեղեցիկ ամրոցը, այլ նա միանգամից մի սոսկալի կործանման զոհ էր դարձել: Տեղ-տեղ հողի և քարակույտի տակից դուրս էին նայում այրված, ածուխ դարձած գերանների ծայրերը: Ակներև էր, որ մի ժամանակ կրակը այստեղ սարսափելի գործ էր կատարել:

Ասլանը նստեց մի քարի վրա, ուր մամուռը սփռել էր իր թավիշյա կանաչագույն գորգը: Նա հրավիրեց ինձ նստել իր մոտ: Վաղորդյան արեգակը լուսավորում էր նրա մտախոհ դեմքը: Ես երբեք չէի տեսել նրան այնպես ընկղմված մտածությունների մեջ: Մի քանի րոպե լուռ նայում էր նա փշոտ դժնիկի վրա, որ բուսել էր մի սյունի խորտակված պատվանդանի ճեղքից և իր մանր տերևներով ծածկում էր նրա հրաշալի քանդակները: Հետո դարձավ դեպի ինձ այդ խոսքերով:

— Ես բերեցի քեզ, Ֆարհատ, այստեղ ոչ թե ամրոցը ցույց տալու համար, այլ բոլորովին այլ նպատակով: Մենք ամրոցներ, բերդեր, ավերակներ շատ տեսանք մեր ճանապարհորդության ժամանակ: Այնքանն էլ բավական էր քեզ՝ քո հայրենիքի մասին գաղափար տալու: Բայց ես քեզ բերեցի այստեղ, որ հենց կատարված տեղի վրա պատմեմ քեզ այն, ինչ որ մինչև այսօր ծածուկ է պահվել քեզանից, ինչ որ գուցե շատ անգամ զբաղեցրել է քո հարցասիրությունը: Այդ պետք է գիտենաս դու, որովհետև մենք շուտով բաժանվելու ենք միմյանցից…

Վերջին խոսքը նետի պես ծակեց իմ սիրտը: Ես ամբողջ մարմնով սոսկացի: Բաժանվել այն մարդից, որին այնքան սիրել էի, որին այնքան հարգում էի, որը այնքան մեծ ազդեցություն էր գործել թե իմ բնավորության և թե իմ զարգացման վրա,— այդ անտանելի էր: Նա ժամանակ չտվեց ինձ մի բան ասելու և շարունակեց.

— Ես թողնում եմ այդ բերդի հին պատմական ավանդությունները, թողնում եմ և դրա վրա պատմված ժողովրդական զրույցները, այդքանը միայն կասեմ, որ այդ բերդը պատկանում էր Տարոնի հայ իշխաններին, հետո կործանվեցավ Մահմեդի քեռորդի Աբդուռահիմից, երբ նա արշավեց դեպի Հայաստան: Այնուհետև ի՞նչ վիճակների է ենթարկվել,— ինձ հայտնի չէ, միայն վերջին ժամանակներում նորոգեց այդ բերդը և բնակվում էր դրա մեջ քո և մեր ամենի բարերարը — որսորդ Ավոն:

Լսելով Որսորդի անունը, ինձ զսպել չկարողացա: Ես նստած էի այն ազնիվ, առաքինի մարդու ավերակների վրա:

— Այդ նրա՞ ամրոցն է,- բացականչեցի ես,- այստե՞ղ կատարվեցավ այն սարսափելի կոտորածը, որով բնաջինջ եղավ նրա տունը, այստե՞ղ հայերի դավաճանությամբ

ընկավ նա թշնամու սրերի տակ, -այդ բոլորը տեսնում եմ, տեսնում եմ և հրդեհի հետքերը… բոլորը տեսնում եմ…

— Այո՛, այստեղ…— կրկնեց Ասլանը նույնպես զգացված ձայնով։— Բայց որսորդի բնակության տեղերը նույնքան փոփոխական են եղել, որքան փոփոխվել է նրա անողորմ բախտը։ Մի ժամանակ բնակվում էր նա Սասունի լեռների մեջ, մի ժամանակ Մոգաց երկրում, իսկ վերջը - այստեղ։ Ամեն տեղ շուտ հաջողվում էր նրան, բայց և ամեն տեղ աղետալի արկածներ պակաս չէին լինում նրանից։ Կարծես այդ մարդը ծնված էր իր ամբողջ կյանքում ծանր պատահարների հետ պատերազմելու համար… Դու գիտես, Ֆարհատ, թե ի՛նչ անցյալ է ունեցել նա, դու գիտես, թե ո՛վ է նա և ո՛րպիսի տխուր հանգամանքներից ստիպված, ընկավ նա Պարսկաստան։ Կրկնել քեզ այդ ամենը ավելորդ է։ Դու գիտես և այն, թե Պարսկաստանում որպիսի աղքատ կյանք էր վարում Աստղաբերդի տերն ու իշխանը, պահելով իրան բոլորովին անհայտության մեջ, մի հասարակ որսորդի անվան տակ։ Բայց մի բան չգիտես դու, և այդ է, որ ա՛յժմ ես պետք է պատմեմ քեզ։

Ես բոլոր ուշադրությունս լարեցի. նա շարունակեց.

— Դու, իհարկե, հիշում ես, Ֆարհատ, որ ես, Կարոն և Սագոն՝ երեքս միասին թողեցինք տեր Թոդիկի դպրոցը և անհայտացանք։ Անցան տարիներ, մեր հայրենիքում ոչ ոք տեղեկություն չուներ մեր մասին։ Ամենքը մեզ կորած էին համարում։ Բայց թե ո՞րտեղ էինք այդ ժամանակ, ի՞նչ էինք շինում,- այդ դու չգիտես,- ահա ա՛յդ է, որ պետք է պատմեմ քեզ, որովհետև դրա հետ կապ ունի այդ ամրոցի տիրոջ, Որսորդի առաքինության մի այլ կողմը, որ քեզ հայտնի չէ։

Նա մի քանի րոպե լուռ կացավ իր հիշողությունները ամփոփելու համար։

— Այո՛… հենց նույն օրերում, երբ մենք թողեցինք տեր Թոդիկի դպրոցը Սալմաստով անցավ մի ամերիկացի ճանապարհորդ, մի ծերունի գիտնական, որ զանազան ուսումնական նպատակներով ուղևորություններ էր անում Պարսկաստանում։ Հիվանդության պատճառով նա մի քանի շաբաթ մնաց Սալմաստում։ Մի դիպվածով նա ծանոթացավ Որսորդի հետ։ Որսորդը լսելով, որ ծերունի ճանապարհորդը հետաքրքրվում է նաև հնություններով, ցույց տվեց նրան մի թուր, որ Բաղդադի հին խալիֆաներից մեկի անունն էր կրում իր վրա։ Ամերիկացին բավական նշանավոր գումար առաջարկեց այդ հազվագյուտ զենքը գնելու համար։ Որսորդը մերժեց նրա արծաթը, հայտնելով, թե ինքը մեծ հաճությամբ կընծայե նրան այդ զենքը, եթե նա կընդունե կատարել իր մի խնդիրքը։ Այդ խնդիրքը կայանում էր նրանում, որ ամերիկացին հանձն առներ ինձ, Կարոյին և Սագոյին տանել իր հայրենիքը, և այնտեղ տալ մի որևէ դպրոցում ուսում առնելու։ Ճանապարհի ծախքը և բոլոր ծախքերը՝ մինչև մեր ուսման ավարտելը՝ իր վրա էր առնում Որսորդը։

— Փող նա ո՞րտեղից ուներ,- ընդհատեցի ես Ասլանի պատմությունը։

— Ուներ։ Այդ բերդի կործանման միջոցին նրա գանձը մնաց ծածկված իր տեղում, թշնամու ձեռքը չընկավ։ Տարիներից հետո, երբ նրա մասին ամեն ինչ մոռացվեցավ, երբ նրան ամենքը սպանված էին համարում, նա ուղարկեց Մըհեին այստեղ և, իր գանձը դուրս բերելով, փոխադրեց Պարսկաստան։— Այդ թող մնա, նա փող ուներ… Ծերունի ամերիկացին սիրով ընդունեց Որսորդի առաջարկությունը, որովհետև նրա համար խավար, եվրոպական լուսավորությունից զուրկ Ասիայից երեխաներ տանել և ուսում տալ,— այդ մի շատ մեծ բավականություն էր։ Ես դեռ չեմ մոռացել այն խոսքերը, որ նա մեզ ընդունելու միջոցին ասաց Որսորդին. «Ես այդ սիրուն պատանիներին կտանեմ ինձ հետ, և դրանք ավելի մեծ հետաքրքրություն

կպատճառեն իմ հայրենակիցներին, քան թե Ասիայից տարած իմ բոլոր հազվագյուտ իրեղենները»: Որսորդը համբուրեց մեզ, օրհնեց և ճանապարհ դրեց:

Իմ սիրտը դողում էր բարի նախանձից. ինչո՞ւ ինձ էլ չուղարկեց նրանց հետ, ինչո՞ւ ես էլ չգնացի լույսի և արհեստի աշխարհը, ինչո՞ւ ինձ թողեց բթանալու տեր Թոդիկի դպրոցում: Ասլանը շարունակեց.

— Այդ պարոնին, որ տարավ մեզ, կոչում էին մստեր Ֆիշեր. նա ազգով անգլիացի էր և Նյու-Յորքի մի գիտնական ընկերության անդամ: Ամիսներ անցան, մինչև մենք անցանք Պարսկաստանը, Ավղանստանը, Հնդկաստանը և այնտեղից ծովային ճանապարհով հասանք Ամերիկա: Ավելորդ է ասել, թե ո՛րպիսի հայրական խնամք էր տանում մեզ վրա բարեսիրտ ծերունին այդ երկար, տաժանական ճանապարհորդության միջոցին,— այդքանը միայն կասեմ, երբ հասանք Նյու-Յորք, մենք ամենքս շատ առողջ էինք: Իրավ, մեծ հետաքրքրություն շարժեցինք մենք այդ ամերիկական բազմամարդ քաղաքում մեր հագուստներով, մեր տիպերով, մեր սովորություններով: Գիտնական ճանապարհորդը իր հավաքած իրեղենների թվում դրեց և մեզ: Նա կազմել էր մի շարք դասախոսություններ իր ճանապարհորդությունների մասին, և նրա առաջին դասախոսության առարկան ներկայացնում էինք — մենք: Դահլիճը լցված էր ունկնդիրների բազմությամբ, և դասախոսի ամբիոնի մի կողմում նստած էինք ես և Կարոն, իսկ մյուս կողմում՝ Սագոն և մի հնդկացի հայ տղա, որ նա վեր էր առել Ջավա կղզուց: Մեզ վրա նայում էին, որպես մի անհայտ երկրից բերված վայրենիների վրա: Պերճախոս ճանապարհորդը խոսում էր և ձեռքով ցույց էր տալիս մեզ վրա: Նախ ընդհանուր գծերով նկարագրեց Ասիայի մտավոր խավարը, անկրթությունը և ժողովրդի թշվառությունը ուսման պակասության պատճառով: Հետո, մասնավորելով իր նկատողությունները, խոսեց հայոց ազգի վրա, թե ի՞նչ պատմական անցյալ է ունեցել նա, ի՛նչ նշանակություն է ունեցել Հռոմի և Բյուզանդիայի կայսրների ժամանակ, ինչ դեր է խաղացել խաչակրաց արշավանքների ժամանակ, ո՛րքան պատերազմել է մահմեդականների դեմ և ինչ հասարակական պետք ունի ներկայումս: Իր դատողությունները առաջ տանելով, գիտնական դասախոսը այն եզրակացության հասավ, թե հայերը ընդունակ են լինելու մի հաջողակ միջնորդ՝ լուսավոր աշխարհների կրթությունը Ասիայում տարածելու: «Մենք մոտեցանք Ասիային մեր միսիոնարներով ու ավետարանով,— ասաց նա,— և դրանով ավելի զայրացրինք նրանց, որովհետև կրոնական ավանդապահությունը, դարերի ընթացքում, խիստ խորին արմատներ է ձգել նրանց մեջ: Մենք դիպանք նրանց հոգու և զգացմունքների ամենափափուկ լարերին, և դրանով զզվանք հարուցինք նրանց մեջ՝ թե դեպի մեզ, և թե դեպի այն լույսը, որ տարածել էինք ուզում: Մենք մեր միսիոնարների ձեռքով կատարեցինք մի վատ ծառայություն — ուրիշի տան մեջ երկպառակություն ձգեցինք: Փորձենք՝ ձեռք մեկնել Ասիային ճշմարիտ գիտության և լուսավորության առաքյալներով, այլև ժամանակ, ես հավատացած եմ, որ նրանք կսիրեն մեզ: Թո՛ղ տանք կրոնի գործը իրանց: Ասիան, կրոնքների հեղինակը, գիտե իր համար նոր կրոնքներ ստեղծել, եթե այդ պետք է նրան»:— Նա վերջացրեց իր դասախոսությունը այդ խոսքերով. «Ասիան տվեց մեզ գիտության նախագիտելիքները և ինքը ծերացավ անշարժության մեջ: Մենք նրա հառաջադեմ աշակերտներն ենք: Երախտագիտությունը պահանջում է, որ մենք տոկոսներով վերադարձնենք մեր ծերունի վարժապետին մեր ստացածը, որպեսզի նա դարձյալ մանկանա նոր աշխույժով և նոր կյանքով: Եվ ես այդ նպատակով բերեցի խորին Ասիայից այդ մանուկներին, որ այժմ զարդարում են իմ ամբիոնի շուրջը»… Խուռն ծափահարություն թնդացրեց ընդարձակ դահլիճը: Այդ միջոցին հանդիսականներից չորս հոգի մոտեցան դասախոսին, սեղմեցին նրա ձեռքը, առաջարկելով, թե իրանցից յուրաքանչյուրը կցանկանար մեզանից մեկին որդեգրել և իր հաշվով ուսում տալ: Ինձ վեր առեց մի այրի կին: Կարոյին վեր առեց մի կալվածատեր. Սագոյին վեր առեց մի

գործարանատեր, իսկ Ռափայելին — այդպես էր հնդկացի պատանիի անունը — վերառեց մի արհեստավոր:

— Մենք բաժանվեցանք, բայց կիրակի և տոն օրերում տեսնվում էինք միմյանց հետ: Իմ բարերարուհին հայտնվեցավ մի շատ բարեպաշտ և առաքինի կին: Նա ամուսնից բավական մեծ ժառանգություն էր ստացել և այդ ժառանգությունը պետք է մնար նրա երկու աղջիկներին, որոնցից մեկը տասնևվեց տարեկան էր, իսկ մյուսը տասևութ տարեկան: Նրա աղջիկները մոր քնքուշ սիրտն էին կրում: Բարեպաշտ կինը ամեն հնար գործ էր դնում, որ ես հայրենիքի կարոտություն չզգամ, որ միշտ ուրախ լինեմ: Նրա գութը ավելի եղավ դեպի ինձ, երբ իմացավ, որ ես մի որբ տղա եմ, երեխայությունից զրկված եմ եղել իմ ծնողներից: Մի օր ամբողջ քաղաքը որոնել էր նա, և վերջապես գտել էր մի զմյուռնացի հայ ընտանիք: Այդ ընտանիքի հետ ծանոթացավ նա, խնդրում էր միշտ իր տունը հաճախել, միայն ինձ հաճեցնելու համար, որպեսզի ես հայեր տեսնեմ և ինձ միայնակ չզգամ: Համարյա ամեն կիրակի Կարոն, Սագոն, Ռափայելը և այդ հայ ընտանիքը բոլորում էին նրա սեղանի շուրջը, և նա ուրախությունից չգիտեր, թե որպես գոհացներ իր հյուրերին: Նա խնդրում էր մեզ հայերեն խոսել և ինքը մեծ բավականությամբ լսում էր, ասելով, թե մեր լեզվի մեջ գտնում է շատ ախորժելի հնչյուններ: Նա սիրում էր լսել և հայոց երգեր, և շատ անգամ մեզ երգել էր տալիս հայ պանդուխտի երգը.

Կռունկ, ո՞ւստի կուգաս.
Ձայնիկդ ի հոգիս,
Կռո՛ւնկ, մեր աշխարհեն
Խաբրիկ մը չունի՞ս…

— Այդ երգի անգղիերեն թարգմանությունը գիտեր տիկինը: Նրա մեծ աղջիկը շուտով հորինեց երաժշտական խաղեր այդ երգի եղանակով, նա ածում էր դաշնամուրի վրա, և մենք խումբով երգում էինք: Բարեսիրտ կինը նայում էր մեզ վրա և թաշկինակը սեղմում էր աչքերին:

Այդ միջոցին Ասլանը նույնպես զգացվեցավ և նրա ձայնը սկսեց դողալ:

— Սկզբում,— շարունակեց նա,— մենք սովորում էինք զանազան տարրական դպրոցներում, որոնց մեջ մեզ տեղավորեց ինքը մստեր Ֆիշերը: Նա միշտ իր հոգաբարձության տակ էր պահում և չէր դադարում ամեն կերպով հսկել մեզ վրա: Նրա տունը մեզ համար հայրական տուն էր, ուր գնում էինք ամենայն սիրով: Մի անգամ ես հիվանդ էի, բարեսիրտ ծերունին ամբողջ գիշերներ ոտքի մատների վրա ման էր գալիս իմ մահճակալի շուրջը, ուղղում էր իմ անկողինը և փոխում էր իմ սպիտակեղենները: Երբ բավական սովորեցինք, մեզանից յուրաքանչյուրը ընտրեց մի մասնագիտական առարկա: Ես ընտրեցի բժշկություն և շարունակեցի մինչև վերջը: Ռափայելը սիրում էր արհեստներ, մեքենայագործություն, ճարտարություն, նա ընտրեց այդ մասը: Բայց Կարոն և Սագոն անդադար մի առարկայից դեպի մյուսն էին անցնում, մեկը ընտրում էին. մի քանի ամիս սովորում էին, հետո ձանձրանալով թողնում էին և մի այլն էին սկսում: Դրանց փոփոխամտությունը ոչ սակավ հոգսեր պատճառեց թե՛ մստեր Ֆիշերին և թե՛ իրանց բարերարներին, որոնց ծախքով սովորում էին: Մեր շրջանում առակ էր դարձել ասել՝ թե «Կարոն իր մասնագիտությունը այնպես շուտ է փոխում, որպես իր շապիկը»: Սագոն իր փոփոխամտության մեջ ավելի չափավոր էր: Իսկ Կարոն այն ծայրահեղության հասավ, որ մի անգամ թողեց մաթեմատիկան և մտավ զինվորական դպրոց: Հետո այնտեղից ևս դուրս գալով, մի ագարակում, ուր գործնական կերպով գյուղատնտեսություն էին սովորեցնում, սկսեց երկրագործությամբ պարապել: Երբ

նրան հարցնում էին, թե ինչո՞ւ ես այդպես անում, նա սովորաբար պատասխանում էր. «ախար այդ բոլորն էլ մեր երկրին պետք են»… Եվ այդպես, Կարոն շատ բան սովորեց, բայց ամեն առարկա թերի կերպով սովորեց: Նրա անհագ եռանդը միշտ ձգտում էր միանգամից կլանել բոլոր ուսմունքները: Բայց Սագոն վերջը մտավ մի վաճառականական դպրոց և այնտեղ ավարտեց:

— Ջալլադի հետ մենք ծանոթացանք շատ ուշ. նա սովորում էր մի հոգևոր դպրոցում և ուղարկված էր այնտեղ Զեյթունի բողոքական միսիոնարների ձեռքով: Նա բնիկ զեյթունցի էր: Սկզբում նա խույս էր տալիս մեզանից, հետո այնքան ընտելացավ, որ սկսեց շուտ—շուտ հաճախել մեզ մոտ: Նա իր դպրոցի հառաջադեմ աշակերտներից մեկն էր, և դեռ չավարտած, նրան ուղարկում էին Նյու—Յորքի շրջակա գյուղերը, փորձնական քարոզներ կարդալու: Կարոն չէր սիրում նրան, իսկ մենք ամենքս հարգում էինք: «Ին՛չ էլ որ լինի, տերտերի հոտ է գալիս դրանից»,— միշտ այդ էր կրկնում Կարոն և հեռանում էր նրանից: Մստեր Ֆիշերը խորհուրդ էր տալիս նրան՝ թողնել աստվածաբանությունը և մի այլ առարկա ընտրել, բայց նա չէր ընդունում:

— Եվ շատ լավ էր անում,— ընդհատեցի ես Ասլանի պատմությունը,— հիմա նրա աստվածաբանությունը մեզ պետք է գալիս, թեև միսիոնարների օգտին չէ ծառայում:

— Բայց նա հետո փոխվեցավ,— պատասխանեց Ասլանը,— երբ վերադարձավ իր հայրենիքը և տեսավ միսիոնարների անպիտանությունները: Սկզբում նա, նույն հոգվով կրթված, մի մոլեռանդ միսիոնար էր:— Այդ թողնենք, անցնենք դեպի մեր պատմությունը:

— Մի անգամ արտասուքը աչքերում մտավ ինձ մոտ Կարոյի բարերարի քույրը: Դա մի պառավ աղջիկ էր, որ ուխտել էր ամուսնական մխիթարությունը փոխարինել բարեգործական մխիթարությամբ, և մի որբանոցի հոգաբարձուհի էր դարձել:— «Նա չկա»,— բացականչեց գունաթափ օրիորդը և թուլացած կերպով ընկավ իմ բազկաթոռի մեջ.— «երեք օր է, որ տուն չի վերադարձել, ոչ մի նամակ չի թողել և անհայտացել է»… Օրիորդը սկսեց դառն կերպով հեկեկալ: Ինձ անհնար եղավ մխիթարել նրան, մինչև ներս մտան իմ տան տիկինը և նրա աղջիկները:— «Նրա բոլոր ծանոթների մոտ գնացի,— կրկնում էր խեղճ օրիորդը արտասվալի ձայնով,— «ոչ ոք նրա մասին ոչինչ չգիտե… ես նրան ճանաչում եմ… նա մի արկածախնդիր տղա է… անպատճառ նրա հետ մի բան պատահած կլինի»… Ես օրիորդին թողեցի իմ սենյակում և իսկույն վազեցի մստեր Ֆիշերի մոտ: Սկզբում մտածում էի, թե ո՞վ է իմանում, Կարոն է, տեսնես ինչ քամի է փչել քթին, թողել է մեզ, և մի որևէ ծակուծուկ մտել է: Բայց հետո անցքը ինձ շատ ծանր երևաց: Կարոն այնքան անխոհեմ չէր, որ առանց իմացում տալու, հեռանար քաղաքից: Մստեր Ֆիշերը զարմանքով լսեց, երբ բոլորը պատմեցի նրան: Հետո աջ ձեռքը թափ տվեց, զարկեց սեղանին, ասելով.— «Մի բան կա… գրազ կբռնեմ, եթե այնպես չլինի»…— «Ի՞նչ բան, ասացեք խնդրեմ, ես նրա մասին շատ անհանգիստ եմ»: Ծերունին այդքանը միայն ասաց, թե վերջին ժամանակներում նկատում էր, որ նա մտնում էր զանազան շրջաններ,— ի՞նչ շրջաններ,— այդ մասին նա ոչինչ չխոսեց, միայն ավելացրեց.— «Թեև ցավալի է, բայց նրա ձգտումներն ազնիվ են»… Այդ մթին խոսքերով ծերունին ավելի սաստկացրեց իմ անհանգստությունը, ես թողեցի նրան և վազեցի Սագոյի մոտ: Նա շվարած մնաց, երբ լսեց այդ անցքը: Նա նույնպես ոչինչ չգիտեր, միայն այդքանը ասաց, թե վերջին ժամանակներում խիստ սակավ էր տեսնում Կարոյին, և միշտ ինչ-որ մտատանջության մեջ էր գտնում: Ես սկսեցի զանազան տարակուսանքների մեջ ընկնել: Անցավ մի ամիս, երկու ամիս և մի ամբողջ տարի, նրանից ոչինչ լուր չունեինք: Մենք ամենքս նրան կորած էինք համարում: Հանգիստ էր միայն մստեր Ֆիշերը: Հանկարծ նրանից մի նամակ եմ ստանում: Ի՞նչ եք կարծում, ո՞րտեղից,— Հարավային Ամերիկայից: Նա անթիվ ներողություններ էր խնդրում, որ առանց մեզ հայտնելու, հեռացավ մեզանից: Այդ նամակը խիստ ուրախալի տպավորություն

գործեց իմ վրա: Բանից դուրս եկավ, որ նա գնացել էր այնտեղ տեղային ագարակները ուսումնասիրելու և տեղային բանվորների դրությունը հետազոտելու: Ո՞րքան ուրախ էր նա իր նամակի մեջ. գրում էր, թե մի հարուստ կալվածատիրոջ դաստակերտում կառավարչի պաշտոն էր ստացել, իր ձեռքի տակ աշխատում էին մի քանի հարյուր բանվորներ: Երբ այդ մասին հայտնեցի մստեր Ֆիշերին, նա իր սովորական բարի ժպիտը երեսին ասաց.— «Կարոն ուզում էր ամեն բան սովորել, ամեն բան փորձել, ասելով, թե իր հայրենիքին պետք են»:

— Չգիտեմ, Սագոն նամակ ստացե՞լ էր Կարոյից, թե ոչ, բայց ես նրան ոչինչ չասացի իմ ստացած նամակի մասին: Միայն նկատում էի, որ նա էլ, ինչպես ասում են, իր խելքումը չէր: Անդադար ճանապարհորդություններ էր անում. շատ անգամ շաբաթներով բացակա էր գտնվում Նյու—Յորքից:— «Այդ ո՞րտեղ ես թափառում»,— մի անգամ հարցրի նրանից:— «Ես Ամերիկայի գաղթականների կյանքն եմ ուսումնասիրում»,— պատասխանեց նա:— «Այդ մասին հարյուրավոր գրքեր կան, կարող ես կարդալ»,— նկատեցի ես:— «Գրքի մեջ գրածի և աչքով տեսածի մեջ մեծ զանազանություն կա»,— ասաց նա:— «Վերջապես ի՞նչ նպատակ կա դրանում»,— հարցրի ես, փոքր-ինչ վիրավորվելով նրա ծածկամտությունից: Նա բավական սառն կերպով պատասխանեց. «Մի՞թե չգիտես, որ հայերը սիրում են գաղթականություն, մի՞թե չգիտես, որ գաղթականությունը մեր ազգի կյանքում մի պատմական երևույթ է, որ կրկնվել է ամեն դարերում և շարունակվում է մինչև այսօր: Ուրեմն, մեզ պետք չէ՞ ուսումնասիրել գաղթականության պայմանները, նրա հետևանքները, մի խոսքով, նրա բոլոր լավ և վատ կողմերը: Եվ ո՞րտեղ կարող ենք ավելի հիմնավոր կերպով ուսումնասիրել, եթե ոչ այստեղ, որ գաղթականների մի ընդարձակ աշխարհ է»:

— Ես Կարոյի նամակի պատասխանը գրեցի, հայտնելով գլխավորապես այն միտքը, թե նա մեր երկու բարերաների — որսորդ Ավոյի և մստեր Ֆիշերի — հույսերը արդարացրած չի լինի, եթե չի վերադառնա իր հայրենիքը, և իր ստացած ուսումը իր հայրենակիցների օգտին չի ծառայեցնի և այլն: Ինչպես երևում է, իմ նամակը ազդել էր նրա վրա: Ամիս չանցավ, նա կրկին հայտնվեցավ Նյու—Յորքում և իր բարեկամներին մեծ ուրախություն պատճառեց: Բայց նա այլևս առաջվա Կարոն չէր: Հաճախ տեսնում էի նրան լուռ, մտախոհ և վրդովված տրամադրության մեջ: Ի՞նչ էր պատահել նրա հետ: Այդ մասին ոչինչ չէր ասում: Ինձ թվում էր, որ նա մինչև անգամ աշխատում էր խույս տալ ինձանից, և ավելի տեսակցում էր Ռափայելի ու Սագոյի հետ: Մի անգամ երեքն էլ եկան ինձ մոտ: Իսկույն հասկացա, որ մի բան կա: Մի քանի րոպե լուռ մնացին, հետո Կարոն ասաց.— «Մենք գնում ենք»:— «Ո՞ւր»,— հարցրի ես զարմանալով:— «Բավական է որքան մնացինք այստեղ, գնում ենք մեր հայրենիքը»: Ես մտածեցի, որ դրանք որքան կարող էին սովորել, սովորեցին, և եթե ավելի ևս մնալու լինեին, գուցե մի ուրիշ հոսանքի մեջ կնկնեին, այդ պատճառով ես էլ բարվոք համարեցի, որ գնան:— «Մստեր Ֆիշերը իմանո՞ւմ է»,— հարցրի ես:— «Իմանում է»,— պատասխանեց Կարոն:— «Իսկ դու մեզ հետ չե՞ս գալու»: Ես բացատրեցի, որ ինձ անկարելի է նրանց հետ ուղեկից լինել, որովհետև դեռ մի տարի մնում է, մինչև մասնագիտությունս կվերջացնեի: «Ո՞ր ճանապարհով եք գնում»,— հարցրի ես:— «Այն ճանապարհով, որ բերեց մեզ այստեղ»,— պատասխանեց Կարոն խորհրդավոր ձայնով:— «Ուրեմն Հնդկաստանո՞վ, Ավղանստանո՞վ»,— կրկնեցի իմ հարցը:— «Այո՛»,— ասաց Կարոն:

— Այդ խոսակցությունից մի շաբաթ հետո, Նյու-Յորքի հյուրանոցներից մեկում ճաշ էր պատրաստված: Սեղանի շուրջը բոլորել էին այն ընտանիքները, որ որդեգրել էին մեզ և որոնց բարերարությամբ մենք ուսում ստացանք: Նրանց թվումն էր և մստեր Ֆիշերը: Անկարելի էր նկարագրել ազնիվ ծերունու ուրախությունը: Նա այսօր պետք է ճանապարհ դներ իր սրտին շատ մոտ գաղափարի արդյունքը դեպի հեռավոր Ասիա: Սեղանի մի կողմում շարքով նստած էին ճանապարհորդները՝ Կարոն, Սագոն և Ռափայելը: Ես, իբրև մնացող, նստած էի մստեր Ֆիշերի մոտ: Կարոյի բարերարի

քույրը շաքարից և զանազան քաղցրավենիքից շինել էր տվել մի բիբլիական նշանաբան, որ դրած էր սեղանի վրա: Մենք ամենքս ուտում էինք, խմում էինք, նայում էինք այդ շաքարեղեն լեռան վրա: Կենացները, բարեմաղթությունները չափ ու սահման չունեին: Այստեղ վերջին անգամ մեզ երգել տվեցին հայ պանդուխտի երգը: Ճաշը վերջացավ մստեր Ֆիշերի ճառով, որի մեջ բացատրեց նա գիտության բարձր նշանակությունը, և դառնալով դեպի ճանապարհորդները, խոսեց նրանց, թե որքան մեծ պարտականություններ ունեն նրանք կատարելու թե՛ դեպի գիտությունը և թե՛ դեպի այն ժողովուրդը, որի մեջ գնում են նրանք և որը կարոտ է գիտության: Կարոն իր ընկերների կողմից պատասխանեց նրա ճառին, և հանդիսավոր կերպով ուխտեց, որ թե՛ ինքը և թե՛ իր ընկերները միշտ հավատարիմ կմնան գիտության և կարդարացնեն իրանց բարերարների ցանկությունները: Ճաշից հետո մենք ամենքս կառքերով գնացինք մինչև երկաթուղու կայարանը, և այնտեղ, համբուրվելով, բաժանվեցանք միմյանցից: Վագոնները շարժվեցան, նրանք դեռ նայում էին լուսամուտներից, ճոճում էին իրանց գլխարկները, իսկ ամերիկացի աղջիկները, երկար կանգնած, իրանց թաշկինակներով ողջույններ էին ուղարկում նրանց ետևից:

— Պետք է ասած, որ մեր երիտասարդները լավ անուն թողեցին: Նրանք սիրված էին բոլոր ընտանիքների մեջ, ուր ծանոթություններ ունեին. երկար չէին մոռանում նրանց, հիշում էին նրանց խոսքերը, հիշում էին հայ պանդուխտի երգը և միշտ հարցնում էին ինձանից, արդյոք նամակ չունե՞մ նրանցից: Բայց անցան ամիսներ, անցավ ավելի քան մի տարի, ես ոչինչ լուր չունեի: Ես արդեն վերջացրել էի ուսումս, պատրաստվում էի հայրենիք վերադառնալ, երբ Բաթավիայից ստացա մի նամակ, որը ավելի մի փոքրիկ գրքույկ կարելի էր կոչել, քան թե նամակ: Գրում էր Ռափայելը: Անկարելի է նկարագրել, թե ո՛րքան տխրությամբ կարդացի ես այդ նամակը, որի մեջ իմ ընկերների ամբողջ ապագան փչացած էի տեսնում: Բայց նախ քան նամակի բովանդակության մասին խոսելը, ես, իբրև միջանկյալ, պետք է հիշեցնեմ քեզ մի փոքրիկ մանրավեպ,— որով ավելի հասկանալի կլինի քեզ նամակի բովանդակությունը: Դու, իհարկե, չես մոռացել, որ իմ պատմության սկզբում ասացի, թե մստեր Ֆիշերի հետ Ամերիկա գնալու ժամանակ՝ Պարսկաստանից անցանք Ավղանիստան, այնտեղից Հնդկաստան, հետո Ամերիկա: Լավ լսիր: Ավղանիստանից անցնելու միջոցին, Քաբուլի մոտակայքում, անապատի մեջ, մեզ պատահեց տեսնել հայ-բոշաների մի բանակ, որ բաղկացած էր մի քանի հարյուր ընտանիքներից: Նրանք բնակվում էին եղեգնյա շարժական տաղավարների մեջ, որ չվելու ժամանակ ման էին ածում իրանց գրաստների վրա: Այդ թափառականները այնքան հետաքրքրեցին մեզ, մանավանդ մստեր Ֆիշերին, որ մնացինք նրանց բանակում մի ամբողջ շաբաթ: Չափազանց հյուրասեր, ուրախ, անհոգ և պարզ մարդիկ էին: Մի հալածանքի պատճառով նրանք գաղթել էին Սպահանի կողմերից և անցել էին դեպի Ավղանիստանի անապատները: Խոսում էին պարզ հայերեն, պահպանել էին լուսավորչական կրոնը, ման էին ածում իրանց հետ շարժական եկեղեցի և քահանաներ: Թե ի՞նչ պատմական հանգամանքներից ստիպված, կամ ո՞ր ժամանակներից սկսել էին նրանք թափառական կյանք վարել,— այդ դժվար էր ստուգել, միայն այդքանը պարզ էր, որ նրանք դարերի ընթացքում այնքան էին փոխվել, որ բոլորովին սեփականել էին իրանց բոշաների սովորությունները: Սագոն համարյա սիրահարվեցավ նրանց վրա. մենք դժվարությամբ կարողացանք բաժանել նրան այդ թափառականներից:— Ահա այդ հայ-բոշաներն էին գլխավորապես Ռափայելի նամակի առարկան:

Ես անհամբերությամբ լսում էի. Ասլանը նայեց իր ժամացույցին և շարունակեց.

— Կարոն իր ընկերների հետ՝ երբ հասնում են Հնդկաստան, մոռանում են այն ուխտը, որ հանդիսավոր կերպով հայտնեցին՝ Նյու-Յորքից մեկնելու միջոցին, վերջին ճաշի ժամանակ, իրանց բարեկամների շրջանում,— այո՛, մոռանում են և հրապուրվում են բոլորովին այլ մտքերով: Նրանք նախ մտնում են Ջավա կղզու

Բաթավիա քաղաքը, որտեղ բնակվում էր Ռափայելի մայրը և նրա ազգականները: Այդ քաղաքում կային նշանավոր հայ վաճառականներ և հարուստ հայ կալվածատերներ, որոնք իրանց սեփական դաստակերտներում շաքարի և լեղակի գործարաններ ունեին: Դրանք Շահ-Աբասի Սպահան տարած գաղթականներիցն էին, որոնք ԺԸ-րդ դարու սկզբում թողեցին Սպահանը և գաղթեցին Ջավա կղզու վրա: Բացի Բաթավիայից, որ կղզու մայրաքաղաքն է, Ջավայի մյուս փոքրիկ քաղաքներում ևս, ինչպես են՝ Սուրբայիա, Չրիբոն, Թըգալ, Բանիումաս, Ջըպարա, Սըմարանգ և այլն, կային նույնպես հայ գաղթականներ, որ ապրում էին հոլանդացոց իշխանության ներքո և պարապում էին հողային արդյունագործությամբ: Անջատված լինելով Հայաստանից, այդ հեռավոր կղզու վրա դեռ նրանց մեջ վառ էր պահված սերը՝ թե՛ դեպի իրանց ազգը և թե դեպի իրանց հայրենիքը: Եթե հեռվից այլ կերպով չէին կարողանում օգնել իրանց ազգին, բայց փող չէին խնայում: Կարոն ծանոթանում է կղզու հարուստներից մի քանիսի հետ: Այստեղից երեքը միասին անցնում են Հնդկաստանի մյուս քաղաքները, և ամեն տեղ, ուր հայ գաղթականներ էին բնակվում: Լինում են Կալկաթայում, Սինգապուրում, Դաքայում, Չիչրայում, Մադրասում, Բասրայում, Սուրաթում, Բոմբայում և ուրիշ շատ տեղերում: Տարածվելով Հնդկաստանի ընդարձակ թերակղզու վրա, հայ գաղթականները իրանց ձեռքն էին առել երկրի վաճառականությունը ու հարստությունը: Փողի հարստության հետ, նրանք պահպանել էին և ազգային զգացմունքների հարստությունը, որի ապացույցը կարող են լինել այն նշանավոր բարեգործությունը, որ զանազան ժամանակներում կատարել են Հնդկաստանի հայերը: Գուալիերում մեր երիտասարդները ծանոթանում են հայազգի զորապետ Կոռնել Հակոբի հետ, որ մեծ դեր էր խաղում:— Կարոն դեռ Ամերիկայում եղած ժամանակ, երբ խոսվում էր Հնդկաստանի հայերի մասին, նա միշտ այն միտքն էր հայտնում, թե Հնդկաստանի հայերին, չնայելով նրանց հարստությանը, պետք է կորած համարել: Նա ասում էր, թե հայ գաղթականները, փոքրիկ խումբերով, ցրված լինելով թերակղզու զանազան տեղերում, միմյանցից հեռու, միմյանցից անջատված, առանց որևէ կապի, այսպես կարող են մի ժամանակ կլանվել, անհետանալ ուրիշ ավելի զորեղ տարրերի մեջ: Եվ որպեսզի այդ վտանգի առաջն առնվի, անհրաժեշտ է, նրանց բոլորին ի մի խմբել և կազմել մի ազատ, անկախ գաղթաշենք: «Ինչո՞ւ,— ասում էր նա,— եվրոպացի մի սափրիչ մի խումբ սրիկաներով կգա Հնդկաստան, մի տեղ կգրավի և իր համար ազատ գաղթաշենք կհիմնե, իսկ հայերը իրանց հարուստ խելքով ու հարուստ քսակով մի այդպիսի բան չե՞ն կարող անել»:— Այդ Կարոյի մտածության վաղեմի ցնորքն էր: Եվ այս նպատակով նա իր ընկերների հետ թափառում էր Հնդկաստանի թերակղզու վրա, և անցավ մինչև Բիրմանիայի պետությունը: Բայց այդ նպատակին հասնելու համար, հարկավոր էր, որ մի այսպիսի գաղթաշենքի հիմքը իրանք դնեին, որտեղ, իբրև կենտրոն, հետզհետե հավաքվեին զանազան տեղերում սփռված մյուս գաղթականները: Իսկ մի ազատ գաղթաշենք հիմնելու համար, նախ հարկավոր էր մի երկիր գրավել, և այդ գուցե առանց արյան չէր կարող հաջողվիլ: Բայց Կարոն և նրա ընկերները կարողացել էին մի բան հաջողացնել: Պետք է ասած, որ այդ ժամանակներում անգլիացոց իշխանությունը դեռ շատ չէր տարածված Հնդկաստանի թերակղզու վրա, դեռ կային զանազան մանր հնդկական իշխանություններ, կային և բոլորովին ամայի, անտեր և անբնակ երկրներ: Այդ անբնակ երկրներից մի ամենահարմարը ընտրում են նրանք, պայման են կապում մի հարևան հնդիկ ռաջայի հետ և խոստանում են միմյանց փոխադարձ օգնականություն: Արդեն երկիր կա, իսկ այդ երկիրը լցնելու համար պետք էր ունենալ բնակիչներ, Կարոն մտաբերում է Ավղանիստում տեսած հայ-բոշաներին: Այդ հալածական, տոկուն, ամեն կլիմայի դիմացող մոլաշրջիկների մեջ գտնում է նա մի ամենահարմար հասարակություն՝ մի ազատ գաղթաշենք հիմնելու համար, ընտելացնելով նրանց հաստատաբնակության և աշխատասեր կյանքի: Այդ նպատակով թողնում են նրանք Հնդկաստանը և գնում են Ավղանիստան: Հայ-բոշաներին գտնում են միևնույն անապատներում, որ առաջ տեսել էին: Նրանց

առաջին ջանքը լինում է՝ համոզել բոշաներին, որ հանձն առնեին մի այնպիսի հեռավոր գաղթականություն, հետո սկսում են նախապատրաստել ու վարժեցնել նրանց անձնապաշտպանության, որ եթե հարկ լիներ զենքի դիմել, բոլորովին անզոր չգտնվեին: Այդ պատճառով նրանք բավական ժամանակ մնում են բոշաների մեջ: Երևում էր, որ Կարոյին հաջողվել էր Հնդկաստանի հայերից նպաստներ ընդունել, եթե ոչ, մի այնքան բազմություն շարժել իր տեղից առանց ծախքերի չէր կարող լինել: Ամեն ինչ խոստանում էր հաջողություն, միայն բոշաները դեռևս տատանվում էին գաղթել մի հեռավոր աշխարհ, որ բոլորովին անծանոթ էր նրանց: Այդ էր պատճառը, որ Կարոն ստիպված էր կրկին վերադառնալ Հնդկաստան, տանելով իր հետ բոշաների մի քանի գլխավորներին, որ նրանք աչքով տեսնեին իրանց համար պատրաստված «ավետյաց երկիրը» և հավատային, որ այնտեղ ավելի լավ կանցներ նրանց կյանքը:— Այստեղ դու պետք է լսես մի սիրավեպ, Ֆարհատ, այդ հարկավոր է քեզ գիտենալ: Ինչպես ասացի, Կարոն իր ընկերների հետ բավական ժամանակ մնում է բոշաների մեջ: Մի այդպիսի ուրախ, մշտազվարթ և ջերմ կրքերով լի հասարակության մեջ, շատ բնական է, որ մեր երիտասարդների տնտեսական մեծ գաղափարները չէին կարող անցնել առանց սիրահարական մանր արկածների: Մի սևաչյա աղջիկ գրավում է Կարոյի զգայուն սիրտը: Կարոն խոստանում է նրան իր սերը և իր ձեռքը, խոստանում է փութով վերադարձ, և բոշաների ներկայացուցիչների հետ ճանապարհ է ընկնում: Ռափայելը և Սագոն մնում են բոշաների բանակի մեջ: Բայց մինչև Կարոյի վերադառնալը, պատահում է մի մեծ դժբախտություն: Սկսվում է ավղանների և պարսից պատերազմը: Պարսիկները հաղթում են, անցնում են ավղանների երկիրը, կողոպտում են, և միևնույն ասպատակության ժամանակ, հանդիպելով բոշաների բանակին, թալանում են նրանց, գերի տանելով բազմաթիվ կանայք և աղջիկներ, որոնց թվում գտնվում է և Կարոյի նշանածը: Եվ երբ Կարոն, ուրախ, լի մեծամեծ հույսերով վերադառնում է Հնդկաստանից, գտնում է բոշաների բանակը ցրիվ եկած, և անապատում նրանց հետքն անգամ չէ տեսնում: Կարող ես երևակայել Կարոյի դրությունը: Մի ավղանցի, որ անապատում ուղտեր էր արածացնում, պատմում է նրան ցավալի եղելությունը: Կարոյի նման մի ամուր բնավորություն միայն կարող էր դիմանալ մի այդպիսի ծանր հարվածի: Նա միանգամից ունենում է երկու մեծ կորուստ, որ այնքան մոտ էին նրա սրտին, որ այնքան գրավել էին նրա մտածությունները,— մեկը՝ անկախ, ազատ գաղթականությունը Հնդկաստանում, մյուսը՝ իր սիրած աղջիկը… Երկար որոնումներից հետո, Քաբուլի հայոց եկեղեցու բակում գտնում է Ռափայելին և Սագոյին, հիվանդության մահճի մեջ դրված: նրանց վերքերը դեռ չէին բժշկվել, որ ստացել էին պարսից սարվազների հարձակման ժամանակ: Նրանցից տեղեկանում է Կարոն աղետալի անցքի մանրամասնությունները: Նրանք պատմում են, թե հարձակումը տեղի ունեցավ գիշերով, իրանք խառնված լինելով կռվի մեջ, չկարողացան նկատել, թե ո՛վ հափշտակեց, կամ ո՛ր կողմը տարան նրա նշանածին: Բայց երբ առավոտյան լույսը բացվեցավ, նրանք գտան իրանց վիրավոր ընկած, որոնց թշնամին սպանված համարելով, թողել, հեռացել էր: Իսկ բոշաների մասին դեռ չգիտեին, թե ի՞նչ եղան, կամ ո՞ւր գնացին: Կարոն մնում է վիրավորների մոտ, մինչև առողջանում են: Հետո Սաքգոյին իր հետ առնելով, գնում է Պարսկաստան, իսկ Ռափայելը վերադառնում է Ջավա կղզին:— Ահա՛ այդ էր Ռափայելի նամակի բովանդակությունը որ ես ստացա Բաթավիայից, այդ էր, որ ստիպեց ինձ շտապել և շուտով իմ հայրենիքը վերադառնալ: Ես ավարտել էի իմ ուսումը: Ջալլադը նույնպես ավարտել էր: Երկուսս միասին թողեցինք սիրելի Ամերիկան, տանելով մեզ հետ շա՛տ և շա՛տ անմոռանալի հիշատակներ…

Ասլանը իր պատմությունը հասցրեց մինչև այստեղ, իսկ նրա շարունակությունը ես արդեն գիտեի… Այո՛, ես գիտեի, ես դեռ չէի մոռացել այն խոսքերը, որ մի օր անզգուշությամբ թռցրեց իր լեզվից պառավ Սուսանը, երբ առաջին անգամ հանդիպեցի նրան, արաբական մինարեթի մոտ: «Երբ Դինբուլի խանը կողոպտեց,

կոտորեց մեր ցեղը, Սուսանը կապեց իր քամակին *Կարոյի երեխան* և մենակ անցավ Հերաթի անապատներից»… Արդյոք Հյուբբին Կարոյի երեխան չէ՞ր, որին պառավ բոշան ման էր ածում իր հետ: Արդյոք Դինբուլիների ամրոցում փակված կինը Կարոյի կորցրած նշանածը չէ՞, որ Սուսանի միջոցով աղաչում էր Կարոյին ազատել իրան գերությունից: Արդյոք այդ պառավ բոշան, Սուսանը, Կարոյի նշանածի մայրը չէ՞ր, որ կախարդի անունով մտնում էր Դինբուլիների ամրոցը, իբր թե կանանց համար գուշակություններ անելու և, այդ առիթից օգուտ քաղելով, տեսնում էր իր աղջկան: Ես դեռ չէի մոռացել այն խոսքերը, որ մի անգամ, ավերակ մատուռի մոտ, այն նվիրական ծառերի տակ Հյուբբին միամտաբար ասաց ինձ. «Հյուբբին Սուսանի թոռն է, Հյուբբին անբախտ աղջիկ է, նրա մայրը կորած է, Հյուբբին պտրում է իր մորը»…: Այդ բոլորը ինձ համար պարզ էր: Բայց մի բան դեռ մթության մեջ էր մնում, թե ի՞նչ եղավ հնդկացի Ռափայելը, որի մասին այնքան համակրությամբ էր խոսում Ասլանը: Ես Ասլանի կամ Կարոյի բոլոր ընկերներին ճանաչում էի, բայց այդ երիտասարդին դեռ չէի տեսել: Ես ստիպված եղա հարցնել.

— Իսկ Ռափայե՛լը, ի՞նչ եղավ Ռափայե՛լը, նա մնա՞ց Հնդկաստանում, թե եկավ Պարսկաստան:

— Եկավ,— պատասխանեց Ասլանը:

— Ի՞նչպես է, որ ես չեմ տեսել նրան:

— Դու նրան տեսնել չէիր կարող, նա զոհ եղավ մի անտեղի կասկածանքի…

— Սպանեցի՞ն նրան: Ո՞վ սպանեց:

— Այդ մի հարցրու,— ասաց Ասլանը տխուր ձայնով և երեսը շուռ տվեց:

«Նա զոհ եղավ մի անտեղի կասկածանքի…»: Համարյա միևնույն խոսքերը, որ մի անգամ ասաց ինձ Մարոն, երբ արտասուքը աչքերում զգուշացնում էր ինձ՝ չբարկացնել Կարոյին, և օրինակ էր բերում, թե ինչպես նա մի «կասկածանքի» համար սպանեց իր ամենալավ ընկերներից մեկին, մի հնդկացի երիտասարդի:— Այդ ևս պարզվեցավ: Բայց ես դարձյալ հարցրի Ասլանից, թե ի՞նչ կասկածանքի համար սպանվեցավ նա:

— Ինչ որ հարկավոր էր քեզ գիտենալ, ես բոլորը պատմեցի քեզ, Ֆարհատ,— ասաց նա ծանր կերպով,— պատմեցի, գլխավորապես այն նպատակով, որ դու հասկանաս, որ եթե մեր բարեկամները իրանց գործունեության մեջ որևէ սխալ են գործել,— այդ առաջ է եկել նրանց մեջ՝ եռանդի չափազանցությունից և գիտության պակասությունից: Թե չէ, իբրև լավ մարդիկ, նրանց նմանները խիստ սակավ են գտնվում: Նրանց անձնանվիրությունը, բաղձանքները և բոլոր ձգտումները անկեղծ են եղել: Իսկ իրանց ձգտումներին հասնելու չափ՝ գիտություն չեն ունեցել: Լսի՛ր, Ֆարհատ, առանց հիմնավոր գիտության մարդ չէ կարող օգուտ բերել ոչ իր ազգին, ոչ իր հայրենիքին և ոչ մարդկությանը: Ես բերեցի քեզ այստեղ, որ այդ բոլորը պատմեմ քեզ, որովհետև մենք շուտով բաժանվելու ենք միմյանցից:

Դարձյալ իմ սիրտը խոցվեցավ, դարձյալ, իմ աչքերը լցվեցան արտասուքով: Ամեն անգամ, երբ լսում էի այդ խոսքը, թե բաժանվելու ենք միմյանցից, կարծես բոլոր աշխարհը մթնում էր ինձ համար:

— Գիտությունը գլխավոր ուժն է, Ֆարհատ, որ տնօրինում է մարդկային բարին, նրա երջանկությունը, նրա խաղաղությունը: Բայց դու ոչինչ գիտություն չունես, Ֆարհատ, քո մեջ պակաս է ամենահասարակ զարգացումն անգամ: Քո մեջ կա միայն լավ սիրտ, կան և լավ հակումներ: Եթե դու զարգանաս, կարող ես օգտավետ մարդ

լինել: Այսօր տանելու եմ քեզ մի վանք, այնտեղ կենում է մի մարդ, մի ճշմարիտ գիտնական մարդ, քեզ հանձնելու եմ այդ մարդուն: Դու կմնաս նրա մոտ, նա այնքան բարի է, որ սիրով կհոժարի պարապել քեզ հետ: Նրա մոտ եթե դու մեծ գիտություն ևս սովորելու չլինես, բայց զարգանալ կարող ես: Դու այժմ ունես այնքան պաշար, թեև հում և անմշակ պաշար, որ կարող է շատ նպաստել քո զարգացմանը: Դու անցար մեր հայրենիքի եթե ոչ բոլորը, գոնե նրա նշանավոր մասը: Դու քո աչքով տեսար և տեղի վրա ծանոթացար մեր ժողովրդի դրության հետ, նրա անցյալի և ներկայի հետ: Հայրենագիտությունը գլխավոր ուսմունքն է այն անձանց համար, որոնք նվիրվում են ծառայելու հայրենիքին: Ով որ հայրենիք չի տեսել, չի ճանաչել, և կամենում է նրա համար մի ծառայություն անել, նման է այն դերձակին, որ մարդուն չտեսած, նրա չափսը չառած, նրա համար հագուստ է ձևում: Եթե դերձակը լավ արհեստավոր ևս լինի, բայց հագուստը կամ նեղ կդուրս գա՝ կամ լայն, կամ կարճ կդուրս գա՝ կամ երկար: Մի խոսքով, այլանդակ բան կլինի: Մի այդպիսի սխալի մեջ չընկնելու համար, ես ցույց տվի քեզ մեր հայրենիքը. շատ երևույթների պատճառները բացատրեցի քեզ, շատ տեղերի և շատ ցեղերի հետ ծանոթացար դու: Ես ձգեցի քո մեջ ապագա հառաջադիմության սերմերը միայն: Իսկ գիտության լույսը կծլեցնե, կաճեցնե և պտղաբեր կկացուցանե նրանց:— Այդքանը բավական է, այժմ գնանք:

Մենք սկսեցինք ցած իջնել Աստղաբերդից:

— Ո՞ւր պիտի գնաս,— հարցրի նրանից:

— Հնդկաստան,— պատասխանեց նա:

— Ե՞րբ կվերադառնաս:

— Այդ ես էլ չգիտեմ:

— Գոնե ասա ինձ, թե ինչի՞ համար ես գնում:

— Այժմ հարկավոր չէ քեզ գիտենալ… Դու միայն կարող ես համոզված լինել, որ վատ բանի համար չեմ գնում:

ԼԲ

«ՀԱՄՐԸ»

Աստղաբերդից ցած իջնելով, շարունակեցինք մեր ուղին դեպի Առաքելոց վանքը, որ մոտավորապես երեք ժամի ճանապարհով հեռու է Մուշ քաղաքից, ընկնում է նրա արևելահարավային կողմը, Տավրոսի գեղեցիկ լեռնահովիտներից մեկի մեջ, բարձր դիրքի վրա: ճանապարհին անցանք Մոգունք գյուղը, որի մերձակա մորուտների մեջ մի ժամանակ ձգեցին հինգ հարյուր մոգերի գլուխներ, այդ պատճառով և կոչվեցավ Մոգունք կամ «Մոգաց գերեզման»:

Երեկոյան կիսամռայլի միջից վանքի թանձր, ամրոցաձև շրջապարիսպը խիստ ճնշող տպավորություն էր գործում: Ես պետք է մնայի փակված այդ պարիսպների մեջ: Այդ միտքը ավելի ճընշող էր, ավելի ծանր էր…

Նայում էի դեպի տասնևվեց դարերի պատկառելի սրբավայրը, նայում էի դեպի սքանչելի բարձրավանդակը, որի վրա կանգնած էր նա, նայում էի դեպի շրջապատող լեռները, որ գրկել էին նրան, նայում էի դեպի կանաչազարդ հովիտը, որ սփռված էր

նրա առջև,— նայում էի և մտածում էի, թե հայկական գեղարվեստը, ճարտարությունը զարգացավ վանքերի շինության մեջ, իսկ հայկական գեղասեր ճաշակը զարգացավ տեղերի և տեսարանների ընտրության մեջ, որ վայելուչ էին նրանց կառուցման համար:

Երբեմն մի ամենահասարակ հակադիպություն փարատում է մեր սրտից ամենածանր տարակուսանքներ: Ասլանը հայտնեց, որ ինձ պետք է թողնե այդ վանքում, իսկ ես լռեցի, չհայտնեցի նրան իմ դժկամությունը: Բայց երբ, դեռ վանքը չհասած, ճանապարհին պատմեց ինձ դեռ չմոռացված ավանդությունը, թե այդ վանքում աշխատել են հայկական դպրության Ոսկեդարի ականավոր մարդիկը, թե այդ վանքի խլության մեջ են կատարվել նրանց մտավոր վաստակները, թե այդ վանքում են դրված և նրանց պաշտելի շիրիմները,— այդ բոլորը լսելով, իմ մտատանջությունը ամոքվեցավ, իմ կասկածները փարատվեցան, և ես խոնարհվեցա անցյալ ժամանակների սրբազան հիշողությունների առջև՝ աշխատել և սովորել այն հարկի տակ, որտեղ աշխատել են մեր բազմավաստակ հայրերը, ոգևորվել նրանց անմոռանալի շիրիմներով, և սրտով ու հոգով նվիրվել ուսման ճգնությանը:

Առաջինը, որ հեռվից գրավեց իմ ուշադրությունը, դա էր վանքի շրջապարիսպի արևելյան կողմում սյուների մի շարք, որ բարձր կոթողների նման կանգնած էին միմյանց մոտ: Ասլանը ինձ տարավ նրանց մոտ: Դրանք թվով տասն գեղաքանդակ խաչքարինք էին, որ դրված էին քարե պատվանդանների վրա: Ավանդությունը «Թարգմանչաց գերեզման» է կոչում այդ լուռ հիշատակարանները: Նրանցից մեկի վրա ես կարդացի հայոց անպարտելի փիլիսոփայի՝ Դավիթ Անհաղթի անունը: Այդ խաչքարերի խումբի առջև, փոքր-ինչ հեռու, դրված էին երկու անշուք գերեզմաններ. մացառների միջից հազիվ երևում էին նրանք: Քարացած մամուռը դրել էր այդ տապանների վրա իր գորշ-կանաչագույն խավերը, ոչ գիր և ոչ թվական չեն երևում. նրանց թվականը, նրանց տապանագիրը դրոշմված են ամեն մի զգայուն հայ մարդու սրտի մեջ: Ժամանակները քարը մաշեցին, գիրը ջնջեցին, բայց սրտերի մեջ անեղծ մնաց նա: Այդ երկու փոքրիկ տապանների մեջ հանգչում են երկու հոյակապ անձինք — Մովսես Խորենացին և նրա ընկեր Մամբրե Վերծանողը: Հայաստանը հույն և հրեա սուրբերի անունով տաճարներ կանգնեց: Բայց այն մարդը, որ իր գրքով ազատեց Հայաստանը պատմության մահից, որ կյանք և անմահություն տվեց նրան, ինքը մի փոքրիկ մատուռ անգամ չստացավ հայրենի աշխարհի գրկում… Այդ տապաններից փոքր-ինչ հեռու, մեկուսացած է մի այլ տապան, ավելի անխնամ, ավելի տխուր, քան թե առաջինները: Լեռնային Հայաստանը իր լեռների ընտիր քարերից մեկն անգամ խնայեց դնել նրա վրա: Անտաշ ապառաժների մի քանի բեկորներ ծածկում են պաշտելի մարդու սրտակոտոր դամբարանը: Անբա՛խտ վիճակի անբա՛խտ հակադրություն: Այդ մարդը իր կյանքում իր ժամանակի կղերից հալածվեցավ, քարկոծվեցավ,— և այժմ նրա դամբարանը նույնպես ճնշված է անկարգ քարակույտի ներքո: Բայց ամեն մարդ, երբ կլսե Ղազար Փարպեցու անունը, խոնարհությամբ ծունր կդնե և կհամբուրե նրա դամբարանի փոշիները… Այդ դամբարանի վրա հեռվից տխուր կերպով նայում են Սահակ և Համազասպ իշխանների շիրիմները…

Վանքի շրջակայքի հիշատակարանները այնքան ժամանակ խլեցին մեզանից, որ բոլորովին մութն էր, երբ մտանք վանքը: Վանահայրը չգտնվեցավ. մեզ ասացին, որ նա գնացել է մերձակա գյուղը: Ասլանը ուղղակի դիմեց դեպի խուցերից մեկը, որի նեղ լուսամուտից ճրագի լույս էր երևում: Դուռը բաց էր թողած, օդ ներս տանելու համար: Մի հասարակ, անգույն սեղանի վրա վառվում էր ճրագը և լուսավորում էր դեմքը մի վանականի, որ այդ միջոցին, սեղանի վրա թեքված, ինչ-որ գրում էր: Սեղանի երեսը ծածկված էր գրքերով, որ անկարգ կերպով դիզված էին միմյանց

վրա: Երբ նկատեց նա մեր ներս մտնելը, ամենևին չշարժվեցավ իր տեղից, միայն ձեռքը մեկնելով Ասլանին, սառն կերպով ասաց.

— Ես ձեզ սպասում էի, պարոն բժշկապետ:

Հետո, երբ նկատեց, որ մենք ոտքի վրա մնացինք, ավելացրեց.

— Իմ խուցը այնքան նեղ է և կարասիքը այնքան սակավ, որ չգիտեմ որտեղ հրավիրեմ ձեզ նստելու:

— Դուք հանգիստ եղեք, մենք նստելու տեղ կգտնենք,— ասաց Ասլանը և, նրա մահճակալի վրայից անկողինը մի կողմ հավաքելով, նստեց մերկ տախտակի վրա, ինձ ևս հրավիրեց տեղավորվել իր մոտ:

Եվ իրավ, երբ աչք ածեցի իմ շուրջը, տեսա, որ նրա խուցի մեջ, բացի գրասեղանից և նրա հանդեպ դրած բազկաթոռից, որի վրա նստած էր այդ կրոնավորը, և բացի մահճակալից, որի վրա տեղավորվեցանք մենք, այլևս ուրիշ կարասիք չկային: Համեմատելով մյուսների անշքության հետ, բազկաթոռը մի փառավոր հակապատկեր էր ներկայացնում: Նա շինված էր ծանր, ամուր փայտիք և զարդարած էր գեղեցիկ քանդակներով: Փայտի բնական մուգ գույնը, հնությունից ավելի մթնանալով, խիստ վայելուչ տեսք էր տալիս նրան: Երբ կրոնավորը նկատեց, որ ես հետաքրքրությամբ նայում եմ բազկաթոռի վրա, ժպտալով ասաց ինձ.

— Այս բազկաթոռը ես գտա ամբարանոցում, ուր ձգել էին վանքի կոտրատված երկրագործական անոթների մեջ: Հին եպիսկոպոսներից մեկի բազկաթոռն է. երևի հեռու երկրներից ընծա է ուղարկված:

Այդ կրոնավորի հագուստով երիտասարդը երեսուն և վեց տարեկան հազիվ կլիներ, թեև նրա մորուքը և գլխի խիտ մազերը ձյունի պես ճերմակել էին: Այդ ճերմակության միջից դուրս էր նայում մի գունաթափ, հիվանդոտ դեմք, խորն ընկած աչքերով, որոնք վառվում էին անբնական փայլով: Ի՞նչն էր այնպես վաղ ծերացրել նրան, ի՞նչն էր այնպես մաշել ու տրորել նրան: Ոտքերի սրունքները չէին խոնարհվում նրան և, ջլատված մարդու ոտքերի նման, դողդողում էին: Երևում էր, որ երկար տարիներ այդ սրունքները կրել էին իրանց վրա մի ծանրություն,— երկաթի՛ ծանրություն… Նա խոսում էր, և երկարատև հազը իսկույն ընդհատում էր նրան,— մի խուլ և խռպոտ հազ, որ լսվում էր կուրծքի խորքից: Ինձ այնպես էր թվում, որ կոտրած կարասի միջից էր լսվում այդ ձայնը: Ասլանը խորին ցավակցությամբ նայում էր նրա վրա և չէր կարողանում իր տխրությունը ծածկել: Նայում էր բժշկի աչքով, նայում էր բարեկամի աչքով, և դառն կերպով հոգվոց էր հանում:

— Ես հույս ունեի ձեզ վարդապետ տեսնել,— ասաց նա, դառնալով դեպի նվաղած երիտասարդը:

— Կարծում եք, թե հե՞շտ էր այդ,— հարցրեց նա, փոքր-ինչ զայրացած, բայց դողդոջուն ձայնով:

— Մեզ վարդապետ լինելու համար շատ բան է հարկավոր սովորել… Մեզանից պահանջում են այն բոլորը, ինչ որ մոնթ կամ մի տիրացու՝ սկսյալ մանկությունից մինչև իր ձեռնադրվելը՝ սովորել է…

Հազը արգելեց նրան շարունակել. չարագուշակ հազը տևեց մի քանի րոպե, երբ փոքր-ինչ հանգստացավ, շարունակեց.

— Այո՛, շատ բան է հարկավոր սովորել… և՛ սաղմոսներ պետք է անգիր գիտենալ, և՛ աղոթքներ պետք է անգիր գիտենալ, և շարականներ պետք է անգիր երգել… Դիցուք թե անգիր արեցիր, բայց ձայնը ո՞րտեղից կբերես… Իմ մեջ առաջվա հիշողությունը չէ մնացել. ես դեռ աշակերտ եղած ժամանակ Հոմերոսից և Վիրգիլիոսից ամբողջ գլուխներ անգիր գիտեի, բայց հիմա դժվարանում եմ մի քանի աղոթքներ անգիր սերտել…

Հազը դարձյալ սկսեց: Ասլանը ուշադրությամբ լսում էր: Իմ ուշադրությունը նույնպես գրավեց նրա բողոքը, որի մեջ այնքան մաղձ և դառնություն կար, որքան մեծ հոժարություն՝ նվիրված լինելու եկեղեցու սպասավորությանը: Նա շարունակեց.

— Դատապարտելին այն չէ, որ ձեռնադրող եպիսկոպոսը մեզանից պահանջում է այն, ինչ որ կպահանջեր մի անգրագետ տիրացվից,— դատապարտելին այն է, որ ժողովուրդն էլ հենց այդ է պահանջում: Նրա համար պետք է գիտենալ ամբողջ այսմավուրքը, ամբողջ հարանց վարքը… Նրա համար պետք է գիտենալ, թե ինչպես տեր Հուսկան որդին տեսավ իր առջև արյան ծովը, թե ո՛րտեղ Հովնան մարգարեն դուրս եկավ ձկան փորից, կամ ի՛նչպես զռաց Բաղաամի էշը… Այդ բոլորը պետք է գիտենալ, բայց մենք այդ բաները չենք սովորել…

Նրա սեղանի վրա դրած էր մի բաժակ կաթ, նա վեր առեց և կոկորդը զովացրեց: Ասլանը դիմեց նրան բժշկի հարցով.

— Այժմ ի՞նչպես եք զգում ձեզ:

— Այժմ այնքան վատ չեմ… այստեղ օդը բավական կազդուրեց ինձ…— ասաց նա, կաթի բաժակը ցած դնելով:— Բայց ձեզ, իբրև բժշկի, պետք է ավելի հասկանալի լինի, որ ես կարոտ եմ սնունդի, և լավ սնունդի, որից զրկված եմ այստեղ… Պետք է պաս պահել, պետք է ենթարկվել վանական բոլոր կանոններին,— իսկ դրանք սաստկացնում են իմ հիվանդությունը…

— Չե՞ք մտածում թողնել վանքը: Ես ձեզ խորհուրդ կտայի թողնել:

— Ոչ, մի անգամ որ սկսել եմ, պետք է վերջացնեմ…

— Թույլ տվեք քննել ձեր կուրծքը:

— Ի՞նչ քննել, ես գիտեմ այնտեղ ի՛նչ է կատարվում…

Հազը, որ ավելի սաստկությամբ սկսվեց այժմ, ստուգեց, թե ի՛նչ էր կատարվում այնտեղ…

Ասլանը աշխատում էր չխոսեցնել նրան, որովհետև նկատում էր, թե որքան տանջվում էր նա խոսելու ժամանակ: Բայց նա ցանկանում էր խոսել և միշտ խոսել, կարծես երկար ժամանակ չէր խոսացել:

— Մի քանի անգամ գյուղեր գնացի,— ասաց նա,— փորձեցի խոսել գյուղացիների հետ: Ես, որ մեր ժողովների մեջ, ամբողջ ժամերով կանգնած կխոսեի, և իմ խոսելու նյութը երբեք չէր սպառվի,— հավատացեք, որ գյուղացիների մոտ նյութ չէի գտնում խոսելու: Նրանց լեզուն չգիտեի, նրանց հասկացողության համեմատ բառեր, դարձվածներ պակասում էին ինձ: Շատ անգամ մի առակ, մի առած, մի նահատակի պատմություն շատ բան է սովորեցնում գյուղացուն, քան թե մեր ամբողջ փիլիսոփայությունները: Դրա համար է, որ ինձ բոլորովին անպատրաստ եմ համարում այն կոչմանը, որ մտադիր եմ ընդունել… Պետք է նորից ամեն բան

սովորել… Երբեմն այնպիսի հարցեր են առաջարկում, որ չես, կարողանում պատասխանել,— այդքանը բավական է, որ քեզ տգետի տեղ դնեին…

— Դուք այդ հոգսը ուրիշներին թողեցեք,— ասաց Ասլանը,— դուք զբաղվեցեք ձեր դրական վաստակներով…

— Եթե թո՛ւյլ տային… Այդ վանքի վանահայրը հանգստություն չէ տալիս ինձ…

— Նրան կփոխեն… շուտով կփոխեն…

— Դա մի բարություն կլիներ ինձ համար…

— Նրա տեղ «մերոնցից» մեկին կդնեն…

— Ավելի լավ…— ասաց նա, և նրա դեմքը ուրախությունից փայլեց:

— Դուք մի բան գրո՞ւմ եք այժմ:

— Ոչինչ չեմ գրում: Երբեմն միայն անկապ նկատողություններ եմ անում: Եթե շուտ չեմ մեռնի, գուցե ժամանակով այդ նկատողությունների հավաքածվից մի բան կդուրս գա… Բայց ինձ պակասում են գրքեր, գրքերի սաստիկ կարոտություն եմ զգում այստեղ…

— Շուտով դուք կունենաք մի լավ ծանոթ,— մխիթարեց նրան Ասլանը,— գրքերի կողմից նա կօգնե ձեզ, նրան հնարավոր է ամեն տեսակ գրքեր բերել տալ ձեզ համար:

— Ո՞վ է դա:

— Վենետիկի Մխիթարյանների աշակերտներից մեկը: Շատ պատվական երիտասարդ է:

— Այո՛, հիշեցի… նրա մասին ինձ գրել էին… Նա եկա՞վ:

— Եկավ: Այժմ Մուշի մեջ է գտնվում:

Նա ուշադրություն դարձրեց իմ վրա:

— Ո՞վ է այդ պատանին:

— Ես դրան ձեզ համար աշակերտ եմ բերել,— պատասխանեց Ասլանը ծիծաղելով.— կմնա ձեզ մոտ, կխնամի ձեր հիվանդությունը, կծառայե ձեզ և ձեզանից բան կսովորե:

Նա նույնպես ծիծաղեց:

— Ըստ վանական հին սովորության,— ասաց նա,— ինչպես մեր հայր սուրբերը սպասավոր-աշակերտներ էին պահում: Մի գիժը ունեմ արդեն: Բայց ես կարոտ եմ ընկերի, մի լավ ընկերի. միայնակությունը սպանում է ինձ, այստեղ մարդ անգամ չեմ գտնում, որի հետ կարելի լիներ խոսել, ինձ «համր» էին կոչում: Բայց իմ լեզուն այժմ բացվել է. ուզում եմ խոսել, շատ խոսել, գուցե այն պատճառով, որ շուտով կդադարեմ խոսելուց…

— Եվ ձեր աշակերտը կօգտվի ձեր շատ խոսելուց,— նկատեց Ասլանը հանաքի ձևով:

Նա ոչինչ չպատասխանեց, խնդրեց տեղ տալ իրեն՝ պառկելու մահճակալի վրա: Մենք վեր կացանք: Ասլանը առաջվա կարգով ուղղեց նրա անկողինը և կամենում էր, նրա ձեռքից բռնելով, պառկեցնել մահճակալի վրա: Բայց նա մերժեց, ասելով.

— Դեռ ուժ կա, դեռ այնքան չեմ թուլացել…

Նա թիկն տվեց բարձերին, երեսը դեպի մեզ, հարցնելով ինձանից.

— Ի՞նչպես է քո անունը:

— Ֆարհատ,— պատասխանեցի ես կարմրելով:

— Դե, Ֆարհատ, այժմյանից սկսիր քո ծառայությունը, գնա՛ այդ խուցին կից սենյակը, այնտեղ իմ սպասավորին քնած կգտնես, կողքը պինդ բզիր, նա վեր կկենա, ասա, որ մեզ համար մի լավ սուրճ պատրաստե: Սուրճը ինքդ բեր և շնորհքդ ցույց տո՛ւր մեզ:

Ես հասկացա, որ սուրճը մի առիթ էր հեռացնելու ինձ, իսկույն դուրս եկա, մտա սպասավորի սենյակը:

Սպասավորի սենյակը համեմատաբար ավելի զարդարված էր, քան թե իր տիրոջ խուցը: Ես նրան գտա նույն դրության մեջ, որպես ասաց Համրը: Քնած էր փայտյա մահճակալի վրա և ամբողջ սենյակը դղրդում էր նրա ծանր շնչառությունից: Դա արյունով լի մի առողջ պատանի էր, համարյա իմ հասակակից: Կողքը խթելով զարթեցնել չկարողացա նրան, ստիպված եղա բռնել երկու ձեռքից և մի քանի անգամ սաստիկ ցնցել: Քնաթաթախ, շփոթված, վեր թռավ նա, և, տեսնելով իր սենյակում մի անծանոթ մարդ, կարծեց, թե նրան սպանելու կամ կողոպտելու համար եմ եկել: Նա իսկույն խլեց իր միակ զենքը՝ ծանր մահակը, որ դրած էր կշտին: Անշուշտ մի լավ հարված կստանայի, եթե չշտապեի ասել նրան.

— Քո աղան սուրճ է պահանջում:

Նա բարկացած նայեց իմ երեսին և մրթմրթաց.

— Դե՛ այդպես ասեիր, էլ ո՞ւր ես քնած մարդուն գժվացնում…

Կարծես թե ես կարող էի նրա քնած ժամանակ հասկացնել, թե աղան ինչ է պահանջում: Ես իսկույն ճանաչեցի, թե ում հետ գործ ունես, կամ ով պետք է լինի իմ ապագա ընկերը: Հենց առաջին անգամից մեր մեջ երկպառակություն ծագեց:

Նա, առանց իմ վրա նայելու, մոտեցավ, ճրագի լույսը ավելացրեց, հետո գնաց բուխարու մոտ, սկսեց կրակ վառել: Այնտեղ ածած փայտի կտորտանքը այնպես էր ձեռքով ճղոտում, կարծես մատները երկաթից շինված լինեին:

Ես մտածեցի, որ այդ տեսակ գժերը իրանց թույլ կողմերը կունենան, այդ մտքով վեր առի նրա մահակը և, ճրագի լույսի առջև նայելով, ասացի նրան.

— Ի՛նչ լավ մահակ ունես:

Նա մոռացավ սուրճը, թողեց կրակը և մոտեցավ ինձ: Իմ նկատողությունը հաճոյական երևաց նրան:

— Ի՞նչ փայտից է:

— Հոնի փայտից է, ինքս եմ կտրել մեր անտառներից,— պատասխանեց նա մի առանձին պարծենկոտությամբ։— Մի քուրդ մի ոչխար տվեց, չտվեցի։ Ինքս եմ տաշել, ինքս եմ այսպես կոկել։

— Շատ լավ փայտ է։ Դու ո՞րտեղացի ես։

— Չե՞ս իմանում։ Շատախցի։

Կարծես թե շատախցուն ամեն մարդ պետք է ճանաչեր։ Ես սկսեցի նրա հետ հանաքներ անել։

— Այն աղբյուրի ջրից խմե՞լ ես։

— Ո՞ր աղբյուրի։

— Այն աղբյուրի, որ մարդիկ խմում են ու խելոքանում են։

Նա ծիծաղեց։ Շատախցոց տարօրինակ գժություններ վերաբերում էին իրանց երկրում գտնված մի հայտնի աղբյուրի ջրին։ Մենք արդեն մտերմացանք։

— Ի՞նչպես եղավ, որ եկար այստեղ։

— Իմ աղան առաջ Շատախումն էր կենում, երբ ինքը եկավ, ինձ էլ բերեց իր հետ։

Ես հիշեցրի նրան, որ կրակը պատրաստ է, ժամանակն է սրճամանը դնել կրակի վրա։ Նա աղյուսի երկու կտորներ դրեց կրակի այս և այն կողմերը և, սրճամանը ջրով լցնելով, դրեց նրանց վրա, և դարձյալ մոտեցավ ինձ։

— Քո աղան լա՞վ մարդ է,— հարցրի նրանից։

— Եթե վատ լիներ, մոտը կկենայի՞,— պատասխանեց նա, իմ հարցմունքի վրա զարմանալով։— Եթե հայրս էլ վատ լիներ, մոտը չէի կենալ։

— Քեզ չի՞ նեղացնում։

— Ինչո՞ւ պետք է նեղացնե։ Մի այնպիսի լավ մարդ է, եթե տամ, կուտե, եթե չտամ, ձայն չի հանի։ Հիմա եթե ուզենամ, սուրճը չեմ տանի։ Նա չի բարկանա։

— Բայց դու էլ պետք է այնպես անես, որ նա չբարկանա։ Այդ լավ չէ։

— Գիտեմ, որ այդ լավ չէ։ Ես էլ միշտ այնպես եմ անում, որ նա չբարկանա։ Ամեն բան իմ ձեռքումն է։ Փողը սեղանի վրա դրած է, ինչքան որ կամենամ, կվեր առնեմ. նա չի հարցնի, թե ի՞նչ արեցիր։

— Իհարկե, դու նրա փողը խո քեզ համար չե՞ս վեր առնի։

— Իհարկե չեմ վեր առնի։ Եթե նա չէ հարցնում, աստված խո մի օր կհարցնի։ Երբ որ նա հազում է, իմ սիրտը կրակ է լցվում. շատ է հազում, չեմ իմանում, ինչո՞ւ է այնքան հազում նա…

Վերջին խոսքերի միջոցին նրա ուժեղ ձայնը դողաց և մատներով սրբեց աչքերը։ Երևում էր, որ այդ խենթը սիրում էր իր պարոնին։ Ես նրան հիշեցրի, որ ջուրը եփ է գալիս։ Նա մոտեցավ վառարանին, սրճամանի խուփը վեր առեց և, մի ձեռքով բռնելով նրա կոթից, մյուս ձեռքով սկսեց ծեծած ղահվե ածել եռացող ջրի մեջ, որ

իսկույն փրփրեց: Հետո դրեց սրճամանը կրակից փոքր-ինչ հեռու, որ հանգստանա, և սկսեց ֆինջանները մաքրել:

Ես զարմանում էի, թե ինչպես չէր հետաքրքրվում հարցնել ինձանից, թե ես ո՞վ եմ, ո՞րտեղից եմ եկել, կամ ի՞նչպես հայտնվեցա նրա սենյակում: Նա այնպես էր վարվում ինձ հետ, որպես թե ես նրա վաղեմի ծանոթը լինեի:

— Ես այստեղ պետք է մնամ, քո պարոնի մոտ,— ասացի նրան:

Նա ուրախացավ:

— Ի՞նչ պետք է շինես,— հարցրեց, թողնելով ֆինջանները և մոտենալով ինձ:

— Պետք է կարդալ սովորեմ:

— Հա՛, նա կարդալ շատ է իմանում: Միշտ գրում է, միշտ կարդում է:

Նրա մեջ դարձյալ խաղաց խենթության քամին: Չնայելով, որ իմ և նրա պարապմունքները բոլորովին տարբեր պետք է լինեին նրա պարոնի մոտ, բայց նա, ինչպես երևում էր, գտավ իմ մեջ իր ապագա ախոյանին և, մոտենալով ինձ, բռնեց իմ թևքից, ասելով.

— Եկ, ուժներս փորձենք:

Նա մրցությունը միայն ուժի մեջ էր ճանաչում: Առանց իմ համաձայնությունը առնելու, մի պատրաստված ըմբիշի նման, երկու ձեռքով բռնեց իմ մեջքից, կամենում էր բարձրացնել և գետին խփել: Հակամայից ստիպվեցա ընդդիմանալ: Ուժերի հավասարակշռության պատճառով, երկար մենք միմյանց հրհրում էինք, մինչև երկուսս էլ ընկանք նրա մահճակալի վրա: Տախտակները ճռճռացին, և մահճակալը փշրվեցավ մեր հարվածի ծանրության ներքո: Նա կատաղած վեր կացավ, առաջարկեց նորից սկսել գոտեմարտությունը: Ես հրաժարվեցա, մանավանդ երբ նկատեցի, որ մեր ընկնելու միջոցին դիպանք պատի մոտ դրած մահակին, որը իր տեղից սաստկությամբ դուրս թռավ, և զարկվելով կրակի մոտ դրած սրճամանին, ջուրը վիթվեցավ կրակի վրա, և մոխրախառն գոլորշին լցրեց փոքրիկ սենյակը:

Կարող եք երևակայել իմ ամոթը և իմ քրտինքը: Այդ իմ առաջին շնորհքն էր, որ ցույց տվի: Իհարկե, կից սենյակում թե՛ Ասլանը և թե՛ Համրը կլսեին մեր աղմուկի ձայնը: Ի՞նչ կմտածեր Ասլանը, ի՞նչ կմտածեր Համրը: Դեռ ո՛րքան անկիրթ էի ես, ո՛րքան տհաս էի: Մի հասարակ, կիսավայրենի սպասավորի մոտ ինձ պահել չկարողացա: Այդ անցքը, իմ կյանքում պատահած և վաղուց մոռացված շատ անցքերի թվում, մնաց ինձ համար անմոռանալի, որովհետև դա մի ապացույց էր, թե կրթության որ աստիճանի վրա էի գտնվում ես, երբ Ասլանը ինձ հանձնեց Համրին:

Մեր կատարած անկարգությունից հետո, փոքր էր մնում, որ պիտի տեղի ունենար մի այլ անկարգություն: Համառ շատախոսին չէր ուզում կրակ վառել և նորից սուրճ պատրաստել, և ոչ ինձ թույլ էր տալիս, որ ես պատրաստեմ:— «Աստված չկամեցավ,— ասում էր նա,— եթե աստված կամենար, սրճամանը չէր վիթվի»: Նա մեր հիմարությունը հաշվի մեջ չէր դնում:

Կից սենյակից լսելի եղավ Ասլանի ձայնը, որ կանչում էր ինձ: Երբ մտա նրանց մոտ, փոքր-ինչ հանգստացա: Երևում էր, որ նրանք մեր աղմուկի ձայնը չէին լսել, որովհետև ինձ ոչինչ նկատողություն չարեցին: Մինչև անգամ մոռացել էին, որ սուրճ էին պատվիրել: Ի՞նչն էր այնպես զբաղեցրել նրանց: Սուսուփուս նստեցի իմ տեղում: Համրը դեռ առաջվա պես պառկած էր անկողնի վրա, իսկ Ասլանը նստած էր նրա

հանդեպ: Երկուսն էլ լուռ էին, երկուսն էլ մտածության մեջ էին: Դա, եթե կարելի է այսպես ասել, զինադուլի լռություն էր, որ տեղի է ունենում ջերմ վիճաբանությունից հետո: Համրը գլուխը դրել էր բարձերի վրա և նայում էր առաստաղին: Նրա հազը կրկին սկսեց, նա բարձրացավ, նստեց և հետո մի բան էր որոնում իր մոտ: Ասլանը գտավ, տվեց նրան սպիտակ թաշկինակը, որ իսկույն տարավ դեպի բերանը: Երբ հեռացրեց թաշկինակը, ես նկատեցի նրա վրա մի կարմիր բիծ: Մահվան պես տխուր, հույսի պես խաբուսիկ էր այդ բիծը…

Բայց իմ խիղճը ինձ տանջում էր: Ի՞նչպես ծածկեի նրանից, ի՞նչպես չասեի սպասավորի սենյակում պատահած անցքը: Ես բոլորը պատմեցի:

— Նա այդպիսի խենթություններ շատ ունի,— ժպտալով ասաց Համրը:— Նա իր հայրենիքի հարազատ զավակն է… Իր խենթություններով շատ անգամ զվարճացնում է ինձ:

— Հետո ինչո՞ւ կրկին չպատրաստեց սուրճը,— հարցրեք Ասլանը:

— Ասաց՝ աստված չկամեցավ, եթե աստված կամենար, սրճամանը չէր վիթվի,— պատասխանեցի ես:

— Նա միայն չէ, որ այդպես է մտածում, Ֆարհատ,— խոսեց Համրը, դառնալով դեպի ինձ,— ամբողջ ժողովուրդներ կան, որ այդպես են մտածում. իրանք իրանց տգիտությամբ, վիթում են իրանց բախտի անոթը և պատճառը աստծու վրա են դնում:

Համրի կացարանից փոքր-ինչ հեռու մի այլ խուց պատրաստել էին իմ և Ասլանի համար: Մենք չկամեցանք երկար ձանձրացնել նրան, գնացինք մեր խուցը: Դուրս գալու միջոցին նա հարցրեց Ասլանից:

— Առավոտյան, իհարկե, կրկին կտեսնվենք:

— Կտեսնվենք,— պատասխանեց Ասլանը:

Այդ վերջին գիշերն էր, որ ես և Ասլանը պետք է միասին անցկացնեինք: Առավոտյան նա գնալու էր մի հեռու, շատ հեռու ճանապարհ… Ո՞վ գիտե, մյուս անգամ ես բախտ կունենայի՞ տեսնելու նրան… Ես պատրաստ կլինեի կյանքս տալ, եթե այդ միակ գիշերը երկարեր, շատ երկարեր, տարիներ դառնար, որ նրա մոտ լինեի, նրա վրա նայեի և նրա խոսքերը լսեի: Այդ էր պատճառը, որ ես նրան հանգստություն չտվի և, երբ մտանք մեր խուցը, անդադար նոր և նոր հարցերով ձանձրացնում էի նրան, չնայելով որ համրի սենյակից դուրս գալուց հետո, նա խիստ տխուր տրամադրության մեջ էր գտնվում: Երևում էր, որ սիրելի բարեկամի տկարությունը տանջում էր նրան:

Վանքում ոչինչ ձայն, ոչինչ շշունջ չէր լսվում: Խորին, բարեպաշտական լռության մեջ նիրհում էր ամեն ինչ: Լուռ էին զանգակները, որ քարշ էին ընկած կիսակործան աշտարակների գլխից, լուռ էին վարսավոր ուռենու տերևները, որ հովանավորում էին մի քանի մոռացված շիրիմներ, լուռ էր և լուսինը, որ երբեմն հայտնվում էր և երբեմն թաքնվում էր սպիտակ ամպերի ետևում: Ամեն ինչ լուռ էր, որպես խորին ինքնուրացություն, և այդ ինքնուրացության մեջ ես պետք է ապրեի, ես պետք է շնչեի, մի մարդու մոտ, որին «Համր» էին կոչում, որի մեջ ևս ամեն զգացմունքներ, ամեն մտքեր նույնպես լռում էին… Արթուն էր միայն չարագուշակ հազը, որ լսվում էր խորտակված, վշտահար կուրծքից…

— Նա հիվանդ է,— ասացի ես Ասլանին:

— Այո, հիվանդ է,— պատասխանեց նա տխուր ձայնով:

— Ինչո՞վ է հիվանդ:

— Բարակացավ ունի:

— Ո՞րտեղից է ստացել այդ հիվանդությունը:

— Նա երկար տարիներ տանջվել է բանտերում: Հետո աքսորված է եղել մի ցուրտ երկրում…

— Ասում են, որ բարակացավ ունեցողները շատ չեն ապրում:

Նա իսկույն չպատասխանեց: Րոպեական մտածությունից հետո ասաց.

— Դեռևս մի հայտնի վտանգ չէ նշմարվում: Ես նրա կուրծքը քննեցի:

— Բայց, աստված մի արասցե, եթե նա…

— Դու այն ժամանակ կսովորես Արփիարի մոտ: Ես այդ մասին նրա հետ կխոսեմ:

Արփիարը այնքան սիրելի էր դարձել ինձ, այնքան գրավված էի ես այդ ոգելից երիտասարդով, որ վերջին խոսքերը բոլորովին մխիթարեցին ինձ:

Համրի մոտ երկար մնալով, մենք չժամանեցինք վանքի հասարակաց սեղանատանը ընթրիք ուտելու: Մեզ համար դրել էին մեր խուցի սեղանի վրա մի շիշ գինի, մի մեծ կտոր սառն միս և պանիր: Թե՛ ես և թե՛ Ասլանը մի բան ուտելու ախորժակ չունեինք, բայց ես խմելու սաստիկ ծարավ էի զգում: Լցրեցի բաժակները Մուշի կարմիր, անուշահոտ գինիով, մեկը դրեցի Ասլանի առջև, մյուսը իմ առջև: Նա վեր առեց իր բաժակը և, զարկելով իմին, լուռ տարավ դեպի շրթունքները:

Մեր խոսակցությունը կրկին դարձավ Համրի վրա:

— Առաջ նա ինչո՞վ էր պարապում,— հարցրի ես:

— Առաջ նա պարապում էր գիտությամբ,— պատասխանեց Ասլանը:— Նա լավ բնագետ է և մաթեմատիկոս: Բայց հետո թողեց գիտությունը:

— Ինչու՞ թողեց:

— Նրա կարծիքով, մենք, հայերս, այնքան փոքր թվով պատրաստի մարդիկ ունենք, որ մենք պետք է խնայենք մեր ուժերը ավելի կարևոր պահանջների համար: Եվրոպայում հազարավոր մարդիկ զբաղված են գիտությունով, նոր հետազոտություններ են անում, նոր գյուտեր են անում, և յուրաքանչյուր տարի գիտությունը հարստանում է բազմաթիվ նոր հրատարակություններով: Մենք կարող ենք նրանց պատրաստած գրքերը թարգմանել կամ փոխադրել մեր լեզվով: Գիտությունը ամեն ազգի համար նույնն է մնում: Բայց կա մի բան, որ Եվրոպան չէ կարող մեզ տալ, որը մենք ինքներս պետք է ստեղծենք:

— Ի՞նչ բան է այդ,— հարցրի ես հետաքրքրությամբ:

— Ազգային բանաստեղծությունը, որ ամեն ազգ ինքը պետք է ստեղծե,- պատասխանեց նա, խմելով իր բաժակի մնացած մասը:— Համրը թողեց գիտությունը և սկսեց բանաստեղծությամբ պարապել: Նա բնական տաղանդ ուներ և թեթև, սահուն լեզու: Գրում էր ոտանավորներ, գրում էր զանազան պատկերներ,

գրում էր և վեպեր: Նրա աշխատությունները մի քանիսը տպվեցին, և կարդացվում էին մեծ ախորժանոք: Բայց շատերը անտիպ մնացին և գրավվեցան նրա կալանավորվելու միջոցին:

— Ոչնչացրի՞ն:

— Ո՞վ է իմանում: Բայց մենք զրկվեցանք մի բանաստեղծ-վիպասանի ամենագեղեցիկ վաստակներից: Դա առաջինն էր մեր մեջ, որ թողեց երևակայական աշխարհը և իր բանաստեղծություններին նյութ ընտրեց իրական կյանքը և նրա պետքերը: Դա առաջինն էր մեր մեջ, որ իր վեպերի մեջ սկսեց նկարագրել ճնշված, հարստահարված մարդու թշվառությունները: Դա առաջինն էր մեր մեջ, որ մի կողմ ձգեց վարձկան-բանաստեղծի շողոքորթող բուրվառը, որ դարերով խնկարկում էր մեծատունին և հզորին, և սկսեց երգել շինականի աղքատ խրճիթի տառապանքները:

Ես կրկին ածեցի նրա բաժակը: Նա շարունակեց.

— Ես մասամբ արդարացնում եմ Համրի կարծիքը բանաստեղծության մասին, թեև նա միակողմանի է: Իրավ է, բանաստեղծությունը և առհասարակ բոլոր գեղարվեստական գրվածքները՝ ազգի թե՛ ոգևորողը և թե՛ ղեկավարողը պետք է լինեն: Գիտությունը չոր ու ցամաք սնունդ է տալիս մարդկանց մտքերին, բայց բանաստեղծությունը կենդանացուցիչ սնունդ է տալիս նրանց սրտերին, հոգուն, երևակայությանը: Բանաստեղծը ստեղծում է ժողովրդի համար իդեալներ, բարձր հանրամարդկային իդեալներ: Եթե ներկայի մեջ չէ գտնում իր իդեալների տիպարները, նա մտնում է պատմության խորքը՝ և ժամանակների հնությունից դուրս է կոչում իր ցանկացած հերոսներին, և նրանց պատկերները՝ իրանց վսեմ գործերի նկարագիրներով՝ դնում է ներկա սերունդի առջև, որ նրանցից օրինակ առնեն և նրանց նման լինեն: Նա ստեղծում է այնպիսի տիպարներ, որոնք ներկայի մեջ դեռ ծնված չէին, այլ ապագայում պետք է հայտնվեին: Նրա սուր աչքերը տեսնում են ներկայի մեջ այդ չծնված տիպարների ամենափոքրիկ նշմարները միայն: Նա մարգարեի հոգվով նախատեսում էր, թե տարիներից, գուցե դարերից հետո՝ որպես այդ նշմարները իրանց սաղմնական դրությունից կաճեն, կզարգանան, կկերպարանագործվեն և կատարյալ ձև ու կազմություն կստանան,— և նրանց պատկերները կանխապես նկարում է և դնում իր ժամանակի հասարակության առջև: Ճշմարիտ բանաստեղծը գիտե անցյալը, գիտե ներկան, գիտե և ապագան: Ժամանակները նրա ձեռքումն են: Յուր հերոսներից մեկի թերությունները նա լրացնում է մյուսից առած հատկություններով, և ներկայացնում է իբրև կատարելագործված տիպարներ:

— Մենք ամեն ինչ դպրոցից ենք սպասում,— շարունակեց նա,— բայց ժողովուրդը ինքը մի մեծ դպրոց է, որին պետք է կրթել, որին պետք է ուղղություն տալ, որի մեջ պետք է զարգացնել առողջ մտքեր, բարձր գաղափարներ, որի մոլորությունները և կեղտը պետք է մաքրել: Իսկ դա այլ կերպ չէ կարող լինել, եթե չենք տա նրա ձեռքը ընթերցանության գրքեր: Եվ այդ գրքերից ամենազորեղ կերպով ազդում է նրա վրա վեպը, բանաստեղծությունը: Մի լավ գիրք կարող է փրկել մի ամբողջ ազգ: Այդ կետից, Համրի հայացքները բոլորովին ճիշտ են: Ինչ ազգ բանաստեղծություն չունի, նա հազիվ թե ընդունակ կլինի իր համար մի բարվոք դիրք ստեղծել մարդկային հասարկությունների մեջ:

— Նա ասաց, որ այժմ մի բան է գրում, ի՞նչ է գրում— հարցրի ես:

— Հայոց եկեղեցական պատմություն է գրում, թե ինչ փոփոխության է ենթարկվել հայոց եկեղեցին, սկսյալ Աբգարի օրերից, երբ առաջին անգամ մտավ

քրիստոնեությունը Հայաստանում, մինչև մեր օրերը: Եվ գլխավորապես պետք է բացատրե, թե ի՛նչ կազմակերպություն ուներ Լուսավորչի հիմնած եկեղեցին:

— Ուրեմն այլևս վեպեր չէ՞ գրում:

— Գիտե՞ս, նա իր կյանքում շատ է տանջվել, շատ նեղություններ է կրել: Նրա կյանքը անցել է մի շարք հալածանքների միջից: Այդ բոլորը մի կողմից, ստացած հիվանդությունը մյուս կողմից, նրան ձգեցին մի տեսակ սրտատոչոր մելամաղձության մեջ: Նա սկսեց ինքնամոռացության մեջ հանգստություն որոնել, և հանձն առեց մի այդպիսի դժվարին աշխատություն, որպիսին է եկեղեցական պատմությունը, որ ավելի մտածություն է պահանջում, քան թե երևակայության բանաստեղծական թռիչքը: Նրա վանք մտնելը և հոգևոր կոչման ցանկությունն անգամ մի տեսակ քմահաճություն է, ինչպես եկեղեցական պատմություն գրելը, որ հետևանք է նույն մելամաղձական դրության: Նա կամենում է մոռանալ իրան, և նետվում է ամենադժվարին աշխատությունների մեջ, որ ամբողջովին կլանեն նրա մտածությունները: Բանտի մեջ սկսեց եբրայեցերեն սովորել, Հին Կտակարանի հետ լավ ծանոթանալու համար: Նա իսկապես շատ դժբախտ մարդ է… Նրա մուզան երբեք կյանքի քաղցրություն չէ ճաշակել… Տխո՜ւր և դա՜ռն կերպով անցել են նրա օրերը…

Համարյա ամբողջ գիշերը անցուցինք մենք խոսելով. իմ քունը չէր տանում: Ասլանը նույնպես գտնվում էր մի տեսակ գրգռված դրության մեջ, որ հատուկ է այն րոպեներին, երբ մարդ պետք է բաժանվե իր սիրելիներից և բաժանվե երկար, շատ երկար ժամանակով…

Առավոտյան պետք է նա ճանապարհ ընկներ: Վանքի դռան մոտ սպասում էր նրա ձին: Համրը դուրս չեկավ իր խուցից: Ասլանը ինքը գնաց նրան մնաք բարյավ ասելու: Հետո մենք միասին ոտով գնացինք մինչև Խորենացու գերեզմանը: Այստեղ կանգնեցրեց ինձ նա, այստեղ գրկվեցավ, համբուրվեցավ ինձ հետ, և այստեղից, իր ձին նստելով, ճանապարհ ընկավ: Ես երկար նայում էի նրա ետևից, բայց ոչինչ չէի տեսնում: Հեղեղի նման հոսող արտասուքը նսեմացրել էր իմ տեսությունը…

Նա գնա՜ց, ուր պարտքը և եռանդը մղում էին նրան… Նա գնաց, բայց նրա թանկագին հիշատակը միշտ անմոռաց մնաց իմ սրտում… Որքան աճեցին իմ տարիները, որքան աճեց իմ զարգացումը, այնքան ավելի աճեց և մեծացավ իմ աչքում հարգելի մարդը, որ այնպես ջերմ, անձնազոհ կերպով նվիրված էր իր հայրենիքի բարօրության գործին…

ԼԳ

ԱՄՐՈՑԻ ԱՂՋԻԿԸ

Անցան տարինե՜ր: Քանի՞ տարիներ,— լավ չեմ հիշում:

Տխո՜ւր և ծա՜նր էին ժամանակները: Կարծես, մի բան բոլորի սրտերի վրա ճնշում էր, բոլորին շվարեցնում էր: Մարդիկ դժգոհ էին, բայց չգիտեին թե ի՞նչ բանից են դժգոհ: Տիրում էր ընդհանուր վհատություն, ընդհանուր թախծության հետ: Ոչինչ մխիթարական չկար, ոչինչ չէր զորացնում բեկված սրտերը: Ամեն ոք մի խուլ անբացատրելի տագնապի մեջ էր գտնվում: Կարծես օդի մեջ շարժվում էր մի դիվական շունչ, որ բոլորի վրա սարսափ էր ազդում:

Մի բան սպասվում էր:

Գիշերները մարդիկ տանից դուրս չէին գալիս: Ցերեկը շինականները խումբերով էին գնում իրանց դաշտային մշակությունները անելու: Անասունները գյուղերից շատ հեռու չէին քշում արածացնելու համար: Աղքատը դժգոհ էր, որ ոչինչ չունի, հարուստը դժգոհ էր, թե ի՞նչպես պահե ունեցածը: Ճանապարհները դատարկվել էին, քարավանների երթևեկություն չկար: Լեռների մեջ ամեն քար, ամեն ժայռ ավազակ էր դարձել: Անցնելու հնար չկար:

Ինքը բնությունը զայրացել էր. պատժում էր մարդիկներին: Երեք տարի շարունակ երաշտությունից հետո, սկսվեցավ կատաղի սովը: Քուրդերը իրանց երեխաներին ածել էին բազարներում և անցնողներին ասում էին. «Տարեք, պահեցեք, ձեզ ծառա և ստրուկ դարձրեք, միայն հաց ուտացրեք, որ չմեռնեն»: Շունը,կատուն արժեք ուներ, բայց մարդկանց որդիները արժեք չունեին: Փողոցները ծածկված էին նվաղած, գունատված սովալլուկներով:

Ամեն կողմից վատ լուրեր էին լսվում:

Մուշ քաղաքի մեջ սովատանջները հարձակվել էին արքունի հացի ամբարների վրա, և բոլորը հափշտակել էին: Վանի մեջ հրդեհել էին հազարից ավելի խանութներ և վաճառքները կողոպտել էին: Այն գիշերը հեռու տեղերից եկած գյուղացիներ, քաղաքի պարիսպների մոտ բեռնավորում էին իրանց գրաստները հափշտակած կողոպուտով: Արտոս լեռան ստորոտներում, յուր չադրի մեջ, մի անհայտ չարագործ սպանել էր Նեհրիի նշանավոր շեյխին: Մի քանի գողեր մտել էին Վանի Հայոց առաջնորդի քնարանը և դանակի ծայրը նրա կուրծքի վրա դնելով, սրբազանին բաց անել էին տվել ոսկիների սնդուկը: Վանի ծովակի վրա երևացել էին ջրային ավազակների նավակներ: Շատախի գայմագամի կնոջը, երկու երեխաների հետ, լեռների մեջ պահել էին, հազար ոսկի փրկանք էին պահանջում բաց թողնելու համար: Կառավարությունը տագնապի մեջ էր. նա, ինչպես այլ խոսքով ասում են, գլուխը կորցրել էր, չգիտեր ի՞նչպես առնել չարիքի առաջը: Մինչև մի տեղ հայտնված անկարգությունը խաղաղեցնում էր, նրա փոխարենը ուրիշ տեղերում, հայտնվում էին ավելի վատթար անկարգություններ: Բաղեշում մի կին օր—ցերեկով մտել էր ոստիկանության սենյակը և ատրճանակով սպանել էր ոստիկանության պետին:

Վա՜տ էին ժամանակները, շա՜տ վատ:

Տեղ-տեղ պատահում էին ներքին կռիվներ, ներքին ընդհարումներ: Տեղ-տեղ հայտնվում էին ասպատակների ստվար խումբեր, ոչնչացնում էին ամբողջ գյուղորայք, և դարձյալ ուրվականների նման աներևույթ էին լինում: Մարդ չգիտեր, թե վտանգը որ կողմից է գալու, որ նրա համար պատրաստ լինի: Բանտերը լցվում էին կալանավորներով, բայց անկարգությունը ավելի և ավելի աճում էր: Վանի միջնաբերդի զինարանը, վառոդի մթերանոցները մի գիշեր դեպի օդը ցնդեցին: Նույն գիշերը այրվեցավ փաշայի պալատի մի մասը: Սպանությունները թիվ ու չափ չունեին: Ամեն մարդ գիշերը սարսափելով էր յուր գլուխը դնում բարձի վրա, առանց հույս ունենալու, թե առավոտյան կենդանի կվեր կենա: Կյանքի և կայքի ապահովությունը վտանգի մեջ էր: Ամեն ոք յուր վերարկուի տակ սուր էր ման ածում, սպասելով, որ թշնամին ետևում կանգնած է: Երբեմն ժողովրդի մեջ տարածվում էին զանազան լեզուներով տպված թղթի կտորներ:

Այդ թղթերը այնպես էին ծածկում փողոցները, կարծես կարկուտի նման երկնքից էին թափվում: Ի՞նչ էին ուզում, ի՞նչ էին պահանջում,- ոչ ոք չէր հասկանում: Թե մեչիտներում և թե եկեղեցիներում աղոթում էին, որ մի հանգստություն լինի: Մոլլան և տերտերը խրատում էին սրիկաներին, որ խելքի գան: Բայց Զեյթունից ապստամբության ձայն էր լսվում: Արզրումի մեջ որոնում էին մի ինչ-որ

դավադրություն: Իսկ Կ. Պոլսում այդ միջոցին զբաղված էին երկու հանելուկային թվերով - 16 և 61:

Այդպես անցավ գարունը, այդպես անցավ ամառը, այդպես անցավ և աշունը: Եկավ սաստիկ ձմեռը և թանձր ձյունը փակեց բոլոր ճանապարհները: Մի քանի շաբաթ էր, որ հաղորդակցությունները դեպի ամեն կողմ կտրված էին: Ծերունիները խոսում էին, թե մի այդպիսի ձմեռ իրանց կյանքում չէին տեսել: Գյուղերում փողոցները ձյունով լցված էին: Ձյունը բարձրացել էր մինչև կտուրները: Հարևանները ձյունի տակից էին միմյանց տունը գնում: Սովը այդ ժամանակ ավելի սաստկացավ: Սովը մարդիկներից անցավ և վայրենի անասունների, և վայրենի թռչունների մեջ: Ձյունը այնպես էր լցրել դար ու փոս, սար ու ձոր, որ բաց տեղ չէր մնացել: Վայրենի անասունները, ճարակ չգտնելով, մոտեցել էին մարդկանց բնակարաններին: Աղբյուրները, գետակները սառել էին: Վայրենի բադերը, սագերը, մնացել էին ձյունի երեսին: Մարդիկ հալած սառույցով էին զովացնում իրանց ծարավը: Ամեն ոք մտածում էր, թե աշխարհի վերջը հասել է.— մտածում էր, թե երկինք, երկիր, մարդ, անասուն, բոլորը կսառչին և կկազմեն մի մեծ սառցային զանգված:

Ահա այդ ձմեռվա գիշերներից մեկում, Քոհնաշահարի մոտ, մեզ ծանոթ արաբական մինարեթում քարե հատակի վրա, կրակ էր վառվում: Մի խումբ զինված մարդիկ, բոլորած կրակի շուրջը, տաքանում էին: Իսկ մինարեթի դրսում, դռան մոտ, նրանց ձիաները գարի էին ուտում, գլուխներից քարշ ընկած տոպրակներից:

Գիշերը մթին էր: Ձյունային տարափը այնպես ազատությամբ մաղվում էր երկնքից, որ մտածում էիր, թե մի քանի րոպեում ամբողջ երկիրը կծածկե, կանհետացնե թանձր խավի տակ:

Ձիաների մոտ, մեկը, փաթաթված յուր վերարկուի մեջ, կծկվել էր պատի տակին: Նա անշարժ էր, որպես արձան, միայն շարժվում էր երբ թափ էր տալիս վերարկուն, որ յուր վրա հավաքված ձյունը մի կողմ թափվի, և դարձյալ ընդունում էր յուր անշարժ դիրքը: Անշարժ էին և նրա աչքերը, կարծես, ցուրտը սառեցրած լիներ նրանց: Նրանք նայում էին խավարի մեջ, միշտ միևնույն կետի վրա և ամենևին չէին շեղվում դեպի մի այլ կողմ: Ի՞նչ էր դիտում նա այն մթության մեջ, աստված գիտե, բայց նա շարունակ նայում էր:

Ոչ մի կենդանի արարած այդ միջոցին չկար շրջակա ամայության մեջ, ոչ մի ձայն չէր լսվում, և բամբակի նման փափուկ ձյունային տարափն անգամ ձայն չէր հանում: Մինարեթի ներսում խարույկի շուրջը խմբված մարդիկ նույնպես ձայն չէին հանում, նրանք միայն ծխում էին:

Դրսում մենավոր պահակը դեռ նայում էր:

Հանկարծ այն կողմում, որ կողմ հառած էին նրա անշարժ աչքերը, հեռվից երևաց լույսի փայլփայլող մի նշույլ: Այդ լույսը հրեղեն լեզվի նման կանգնած էր բարձր, շատ բարձր, օդի մեջ: Եթե նրա շառագույն փայլը չլիներ, կարելի էր մի լուսավոր աստղի տեղ ընդունել: Բայց երկինքը այդ գիշեր այնպես ամպամած էր, որ աստղերը բնավ չէին երևում:

Հրեղեն լեզուն կանգնած էր միևնույն կետի վրա, նա երբեմն աճում էր, երբեմն նվազում էր, իսկ երբեմն բոլորովին անհայտանում էր, և մի քանի րոպեից հետո, դարձյալ երևում էր:

Այդ տեսնելով, մենավոր պահակը ցնդվեցավ որպես մի մարդ, որ լարում է յուր ուշադրությունը:

Համարյա միևնույն վայրկյանում, երբ հայտնվեցավ առաջին հրեղեն լեզուն, նրա հորիզոնական ուղղությամբ, մոտ երկու հարյուր քայլ հեռավորության վրա, հայտնվեցավ մի այլ լույս, բոլորովին նման առաջինին, հակառակ կողմից կանգնած էին միմյանց հանդեպ:

Այժմ մենավոր պահակի աչքերը սկսեցին շարժվել: Նա երբեմն նայում էր առաջինի, երբեմն նայում էր երկրորդի վրա:

Շատ չանցավ, երկու հրեղեն լեզուները աճեցին, աճեցին, և երկու ջահերի ձև ստացան: Այդ միջոցին նրանք երևան հանեցին երկու ձեռքեր, որ բռնած ունեին այդ ջահերը, և երկու կանացի գլուխներ, մինչև կուրծքը: Այդ հերարձակ գլուխները երկու ֆուրիաների նմանություն ունեին: Մեկը մանկահասակ էր, մյուսը պառավ: Առաջինի դեմքը ժպտում էր, *երկրորդի վրա երևում էր կատաղություն*: Այնպես էր թվում, որ այդ երկու գլուխները, իրանց բռնած ջահերով, կախված լինեին օդի մեջ: Բայց զորեղ աչքը կարող էր նկատել, որ նրանք երևում էին երկու բարձր աշտարակների կատարից, որոնց վերին մասը լուսավորված էր ջահերի լույսով: Երկու աշտարակները կազմում էին մի ամրոցի ճակատի երկու անկյունները:

Այդ երևույթը այնքան կարճատև եղավ, և այնպես շուտ անցավ, որ տեսնողը կկարծեր, թե երևակայության մի խարդավանք է:

Այդպես չկարծեց մենավոր պահակը: Նա հանդարտ վեր կացավ յուր նստած տեղից, մոտեցավ ձիաներից մեկին և սկսեց սանձը գլուխը դնել: Նրա սուլելու ձայնից՝ մինարեթի մեջ նստած մարդիկ՝ նույնպես ոտքի ելան և յուրաքանչյուրը լուռ մոտեցավ իր ձիուն: Մի քանի րոպեից հետո ամբողջ ասպախումբը անհայտացավ գիշերային խավարի մեջ:

Ձյունը շարունակում էր տեղալ: Այդ միջոցին բարձրացավ մի թեթև քամի, որ սկսեց տարուբերել ձնային հոսանքը: Քամին հետզհետե սաստկանում էր, սպառնալով բուք, բորան: Ցուրտը կարծես ածելիի նման կտրատում էր մարդու երեսը, ականջները, ձեռքերը: Թուքը բերանի մեջ սառեցնելու չափ ցուրտ էր:

Փոթորիկը ավելի սաստկացավ: Քամին մռնչում էր և պտտացնելով ձնային տարափը օդի մեջ, նույն մետաղական ձայնն էր հանում, որպես հնչում էր նա, երբ ուժգին սաստկությամբ անցնում էր արտերի հասունացած հասկերի վրայով:

Անցավ մի կամ երկու ժամ:

Նույն կողմում, որտեղ երևացին երկու ջահերը, այժմ տեղ—տեղ բարձրանում էին հազիվ նշմարելի կապտագույն բոցեր: Երբեմն լսվում էր խուլ դղրդյուն: Կարծես մի շինվածք քանդվում էր, քայքայվում էր: Քամին խլացնում էր բոլոր ձայները, իսկ ձյունային փոթորիկը երբեմն ծածկում էր բոցերի նշույլները: Բայց դարձյալ մերթ ընդ մերթ խավար մթնոլորտը լցվում էր միլիոնավոր հրեղեն կայծերով, որպես թե դրանք դուրս էին վազում մի ահագին հրանոթի բերանից:

Բոցերը, որ սկզբում հայտնվեցան զանազան կետերի վրա, հետզհետե աճելով մի քանիսը միախառնվեցան և կազմեցին լայնածավալ հրեղեն հոսանք: Շրջակայքը լուսավորվեցավ: Այժմ պարզ երևում էին բարձր պարիսպներ և բարձր աշտարակներ: Մի հին ամրոց այրվում էր ծառազարդ շրջապատի մեջ:

Կրակը խանգարեց սպիտակ աղավնիների գիշերային հանգստությունը, որոնք բույն էին դրած աշտարակների վերին դարանների մեջ: Նրանք շփոթված, սարսափած դուրս թռան իրանց բույներից և խելագարի պես ճախրում էին, սավառնում էին աշտարակների կատարների վրա: Այստեղ այրվում էին նրանց ձագուկները…

Ձնային սպիտակ պատառները, խառնվելով այդ սպիտակ թռչունների մրրիկի հետ, հրեղեն լուսավորության մեջ, ներկայացնում էին մի տխուր, սրտաշարժ տեսարան:

Կրակը վրդովեցրեց ախոռատան նժույգների հանգստությունը, որոնք խրտնած, կապակոտոր եղած, դուրս նետվեցան կիսավառ դռներից, և կատաղաբար վազվզում էին ամրոցի շուրջը, ձյունային փոշիների մեջ: Հմուտ ձիապանների ձեռքի տակ սնված, փայփայված անասունների՝ որի գեղեցիկ բաշն էր խանձված, որի թավամազ ագին էր այրված, որը, օրհասական տագնապի մեջ, դողդողում էր, ընկնում էր, թաղվում էր ձնային խորության մեջ:

Կրակը դուրս քշեց որսորդական շների, բարակների բազմությունը, որոնք արծաթյա վզկապներով, նախշուն, մահուդյա ջուլերով, մոլորված, շվարած, չգիտեին, թե որ կողմը փախչեն: Անտեր, անօգնական թափառում էին տիրոջ սիրելիները և իրանց տխուր, մահագուշակ վայուններով հնչեցնում էին ամրոցի շրջակայքը:

Կրակը դուրս քշեց և հարեմի փափկասուն գեղեցկուհիներին, որոնք դուրս թռչելով մետաքսյա անկողիններից, կիսամերկ, հերարձակ, բոբիկ ոտներով վազվզում էին ձյուների մեջ և թաքչելու տեղ էին գտնում: Նրանց լացն ու կոծը, ճիչն ու աղաղակը խլանում էին ամրոցի կործանվող կամարների դղրդյունի մեջ: Սևամորթ ներքինիները, շվարած, շփոթված, չգիտեին՝ իրանց գլուխը ազատեն, թե իրանց խանումների պաշտպանությանը դիմեն:

Այդ բոլորը կատարվում էր հրդեհի լուսավորության մեջ, բոցերի և կայծերի փայլատկության մեջ:

Կրակը մի հսկա վիշապի նման լափում էր ամրոցի զարդարանքները, և ինչ որ չէր կարողանում կլանել, դուրս էր ժայթքում: Դրսում, հուսահաստ անկարգության մեջ, խառնված էին միմյանց հետ ամրոցի շարժական հարստությունները՝ ձիաներ, որսորդական շները, հարեմի գեղեցկուհիները, սևամորթ ներքինիները,— իսկ ներսում, ինչ որ փախչել չէր կարող, այրվում էր… Այրվում էր մետաքսը, այրվում էր շալը, այրվում էին արծաթն ու ոսկին…

Երբեմն լսվում էին խուլ նետումներ, և քամին բերում էր վառոդի անախորժ հոտը… երբեմն հրեղեն լուսավորության մեջ երևում էր սրերի փայլը… մարդիկ կանգնում էին, մարդիկ ընկնում էին… Այնտեղ խոցոտում էին միմյանց…

Հրդեհը ավելի տարածվեցավ: Այժմ այրվում էին ամրոցի շրջապատի դարևոր ծառերը: Լուսավորությունը, ճառագայթելով ձնային սպիտակ հարթադաշտի վրա, աչք էր շլացնում:

Այդ միջոցին միևնույն ձիավորները, որ դուրս եկան արաբական մինարեթից, հայտնվեցան պայծառ, բոսորային լուսավորության մեջ: Ձիավորներից մեկին ետևից գրկած ուներ մի մանկահասակ կին: Ձին արագությամբ վազում էր, պատառելով ձյունի թանձրությունը: Եթե սառցային փոշին արգելք չլիներ, կարելի էր ճանաչել Կարոյի այրական դեմքը: Նրա ետևից ոտքով կաղալով վազ էին տալիս երկու արարածներ — նույն պառավը և նույն մանկահասակ օրիորդը, որ ջահերը ձեռներին, առաջին անգամ հայտնվեցան աշտարակների բարձրության վրա: Դրանցից մեկը Հյուբբին էր, մյուսը՝ պառավ Սուսանը…

Հյուբբին առեց վրեժը… Հյուբբին ազատեց յուր մորը, որ տարիներով փակված էր Դինբուլիների անմատչելի ամրոցի մեջ…

ԼԴ

ԱՆՀԱՅՏ ԱՊԱԳԱ

(16-61)

Ա

Անցան տարիներ, ո՞րքան տարիներ,- հայտնի չէ: Գարնանային արեգակը դեռ նոր սկսել էր քաղել ճոխ բուսականության տերևներից վաղորդյան ցողը, դեռ նոր քնեած թռչունները հնչեցնում էին լեռների, անտառների թավուտները իրանց ուրախ ձայներով: Օդը լցված էր նուրբ, հոգեպարար մառախուղով: Արեգակի առաջին ճառագայթները անցնելով այդ մառախուղի միջով, կարծես անցնում էին սպիտակ շղարշի թափանցիկ տարածության միջով:- Այդ մշուշի միջով նկարվում էին հեռավոր լեռները իրանց սպիտակափառ գագաթներով, այդ մշուշի միջով երևում էր Վանա ծովակը իր գեղագրական եզերքով, այդ մշուշի միջով նշմարվում էր ջրային հսկա լողորդը, որը, իբրև մարմնացած հառաջադիմություն, սլանում էր արագ և արագ, թողնելով ծովի խաղաղ մակերևույթի վրա մի արծաթափայլ շավիղ, իսկ օդի մեջ ծխային երկար ժապավեն:

Ոստանից ոչ այնքան հեռու գտնվում էր Ռազմիրան գյուղը: Այդ գյուղը յուր գեղեցիկ դիրքով ամենահին ժամանակներում Ռշտունի իշխանների զբոսավայրն էր, իսկ հետո Արծրունի իշխանների ամառանոցը դարձավ: Բայց այժմ նրա մի կողմում, կանաչազարդ բարձրավանդակի վրա, կանգնած էր մի սիրուն, քարաշեն տուն: Նրա մի ճակատը նայում էր դեպի կապուտակ ծովը, իսկ մյուս ճակատը՝ դեպի մի գեղեցիկ պարտեզ, որ տան առջևից տարածվում էր դեպի ներքև, և լայն, ծառազարդ թումբերովաստիճան առ աստիճան իջնում էր մինչև ձորը: Պարտեզում, այգեպանի սուր դանակը ձեռին, աշխատում էր մի մարդ: Տարիների ալիքները դեռ նոր էին սկսել արծաթագրել նրա գլխի սև մազերը: Իսկ թուխ դեմքի վրա դեռևս պահպանվել էր երիտասարդական աշխույժը: Նա զգուշությամբ ճեղքում էր մատաղ տունկերի կեղևը, և ճեղքվածքի մեջ անց կացնելով նորաբողբոջ շյուղեր, կապում էր փափուկ թելով: Նրա մոտ կանգնած էր մի փոքրիկ աղջիկ, գարնանային թեթև հագուստով և հարդյա մեծ գլխարկով, որի լայն եզերքը հովանիի նման հասնում էին մինչև ուսերը: Նա ձեռքում բռնած ուներ ջրով լի թիթեղյա մի թաս, որի մեջ լողում էին դալար բողբոջներ: Առավոտյան զով օդը պայծառ—վարդագույն երանգով ներկել էր այդ գեղեցիկ հրեշտակի լիքը թշերը, որ կապած էին սպիտակ թաշկինակով: Բայց այդ չէր արգելում նրան իր անվերջ շատախոսությամբ ավելի խանգարել հորը, քան թե օգնել նրան.

— Դրան ասում են *պատուհա՞ս*, հայրիկ:

— Պատվաստ,— ուղղեց հայրը:— Դու ե՞րբ պետք է սովորես այդ բառը, Աշխեն:

— Սովորեցա, հայրիկ,— *պակուտաս* — այդպես չէ՞:

— Հիմա ավելի փչացրիր:

— Ի՞նչ անեմ, լեզուս չէ բռնում:

— Մինչև այդ բառը ուղիղ չարտասանես, մայրիկին կասեմ, որ նախաճաշիկի ժամանակ քեզ քաղցր չտա:

Աշխենը մի քանի անգամ ևս զանազան ձևերով շուռ տվեց անտանելի բառը, բայց ոչ մեկը պատվաստ չդուրս եկավ: Նա իր դժվար դրությունից ազատվելու համար՝ փոխեց խոսքը:

— Ինչո՞ւ ես կտրատում ճյուղերը, հայրիկ, ափսոս չէ՞:

Հայրը բացատրեց նրան պատվաստի նշանակությունը, ավելացնելով.

— Եթե այդ ավելորդ, անպետք ճյուղերը չկտրատեմ, դու այն քաղցր հոտավետ խնձորները, որ ուտում ես ձմեռը, այլևս չես ուտի:

— Ե՞րբ խնձոր կտա, հայրիկ, ո՞վ է իմանում,— տասն տարուց հետո:

— Ինչու՞ տասը տարուց հետո, կարելի է երեք կամ չորս տարուց հետո, զավակս:

— Բաս թող այդ մեկն էլ ես կապեմ:

— Հանգիստ կաց, Աշխեն, կփչացնես:

— Ինչո՞ւ եմ փչացնում, երեկ այն կեռասենին ես կապեցի, փչացա՞վ:

Նա սկսեց կապել պատվաստի վերքը. փոքրիկ մատիկները արագությամբ գործում էին, իսկ անհանգիստ լեզուն խոսում էր:

— Գիտե՞ս մայրիկը ճաշի համար ինչ է պատրաստում:

— Ի՞նչ է պատրաստում:

— Շատ ու շատ բան է պատրաստում,— տասն տեսակ, ասում է, այսօր Արփիարը ու Հյուբբին պետք է գան Մուշից: Արշակին էլ կբերե՞ն, հայրիկ:

— Կբերեն:

— Ես Արշակին շատ եմ սիրում, Հյուբբիին էլ եմ սիրում, Արփիարին էլ եմ սիրում, բայց Արշակին շատ եմ սիրում:— Հիմա Արշակը մեծացած կլինի, հայրի՛կ, հիմա՛ խոսելիս կլինի… Ա՛խ, որքան ժամանակ է չեմ տեսել Արշակին… տասն ամիս կլինի:

— Տասն ամիս ո՞րտեղից կլինի,— նկատեց հայրը,— զատկին մեր տանը չէի՞ն:

Այդ միջոցին պարտեզի ցանկապատի մոտով անցնում էր մի սիրուն տղա, որ Աշխենից երկու տարով հազիվ մեծ կլիներ: Գրքերը թևքի տակին, գնում էր նա դեպի գյուղական ուսումնարանը: Տեսնելով քրոջը, մոտեցավ և ցանկապատի ետևից ասաց.

— Աշխեն, ինչո՞ւ չես գնացել ուսումնարան:

Աշխենը փոքրիկ ձեռքը տարավ դեպի թշերի վրա կապած սպիտակ թաշկինակը, պատասխանելով.

— Չե՞ս տեսնում, ի՞նչպես գնամ:

— Ծո՛ւյլ,— ծաղրելով նկատեց եղբայրը,— ամեն օր երեսդ կապում ես, թե ատամս է ցավում… քո ատամի ցավը չպրծավ…

Աշխենը չհամբերեց եղբոր կծու նկատողությանը, այլ երկու ձեռքերը բարձրացնելով, և բոլոր մատները բաց անելով, ասաց.

— Դու գնա՛, գիտեմ, որ դասերդ չես սովորել… որքան զրո ես ստանալու, տասն զրո՛, տեսնո՞ւմ ես…

Եղբայրը ետ չնայեց և հեռացավ:

Հայրը սկսեց ժպտալ իր զավակների վրա:

— Արամ,— ձայն տվեց նրա ետևից,— վարժապետիդ ասա, որ ճաշին մեզ մոտ լինի: Ասա, որ Արփիարը այսօր գալու է Մուշից:

Աշխենը սկսեց ինքն իրան մրթմրթալ:

— Տասն օր է, որ ատամս ցավում է… Նա ասում է, որ սուտ եմ երեսս կապել…

— Այդ քո տասնից մենք չազատվեցանք, Աշխեն,— ծիծաղելով նկատեց հայրը,— տասն օր ո՞րտեղից կլինի, երկու օր է, որ քո ատամը ցավում է:

Տասն թիվը մի խորհրդավոր թիվ էր փոքրիկ Աշխենի լեզվում. այդ թվով լրանում էին նրա ամեն հաշիվները:

— Դե՛, զավակս, վազի՛ր ներքև, այգեպանին ասա՛, որ այստեղ գա: Ա՛յ, այնտեղ, թթենիների ծառաստանի մեջ կլինի, տերևներ է կտրատում շերամի համար:

Աշխենը թիթեռնիկի արագությամբ անհայտացավ խիտ ծառաստանների մեջ, որոնք նրան այնքան ծանոթ էին, որքան իր պահարանի խաղալիքները: Բայց մի քանի րոպեից հետո, վազվզելուց շնչասպառ եղած, վերադարձավ, միայն դատարկ լուր բերելով:

— Տասն անգամ կանչեցի, ձայն չտվեց:

— Դարձյալ տասն… տո՛, չարաճճի, ես քո ձայնը միայն մեկ անգամ լսեցի,— ասաց հայրը ծիծաղելով,— սուտեր է՞լ ես իմանում խոսել:

Աշխենը գլուխը քարշ ձգեց և նրա փափուկ թշերը ավելի կարմրեցան: Հայրը բռնեց նրան և սկսեց փայփայել մետաքսի նման գեղածավալ գիսակները, որ սփռվել էին ուսերի վրա:

Այդ սիրող հայրը Կարոն էր: Նա մի ժամանակ դանակով մարդիկ էր մորթում, իսկ այժմ դանակով պատվաստ էր անում: Զարմանալի փոփոխություն դարերի: Պահանջները փոխվելով, նա փոխեց և իր պարապմունքների ձևը: Արյան հետ խաղացող մարդը այժմ զբաղված էր երկրի մշակությունով:

Նա իր տան լուսամուտներից ամեն օր տեսնում էր Ոստանի հին ամրոցի ավերակները, տեսնում էր իր նախահարց — Ղարա-Մելիքների — խորտակված իշխանության բեկորները: Նա այդ փլատակների մոտ հիմնեց ոչ թե ամրոց, այլ մի տուն, որ գյուղատնտեսական բոլոր հարմարություններն ուներ: Նրա նախնիքը ժողովուրդ էին կառավարում, իսկ նա կառավարում էր այժմ մի բարեկարգ, օրինակելի տնտեսություն:

Տան գլխավոր դռան սեմի մոտ, որ նայում էր դեպի պարտեզը, նստած էր մի պառավ կին: Վաղորդյան արեգակի ջերմ ճառագայթները կորչում էին նրա պղնձյա դեմքի խորին կնճիռների մեջ: Ճերմակ հոնքերի երկար մազերը միախառնվելով դեռ իրանց

սև գույնը պահպանած թերթերունքների հետ, մի առանձին վսեմություն էին տալիս նրա խորախորհուրդ աչքերին: Նա նստած էր անշարժ, որպես մտածության արձանը: Նայում էր դեպի գեղեցիկ պարեզը, ուր աշխատում էր Կարոն: Նայում էր դեպի սիրունիկ երեխաները, որ պտտվում էին նրա շուրջը, նայում էր դեպի կանաչ լայնաճավալ անդաստանները, որ Կարոյի մշակության արդյունք էին, նայում էր դեպի բլուրների վրա արածացող անասունները, որ Կարոյի ախոռատնից էին դուրս եկել:— Նայում էր, և պառավի երկար տարիներով վշտացած սիրտը լցվում էր անսահման մխիթարությամբ: Ո՛րքան տանջանք, ո՛րքան հալածանք էր կրել այդ զառամյալ պառավը… ո՛րքան թափառել էր նա… իսկ այսօր տեսնում էր իր դառն աշխատությունների քաղցր պտուղը և ուրախանում էր:

Դա պառավ Սուսանն էր:

Այստեղից երևում էր գյուղը: Առավոտյան կիսամռայլի մեջ նա ավելի գեղեցիկ էր երևում: Այլևս հին, գետնափոր խրճիթները չկային: Այնտեղ ներքևում, մի հովտաձև տափարակի վրա, մինը մյուսի մոտ շարքով բարձրանում էին ծառազարդ տները, ուղիղ և լայն փողոցների վրա: Շինական կոկիկ եկեղեցին, նրա մոտ դպրոցի շենքը, աչք էին շլացնում: Առողջ գյուղացիները մաքուր հագնված, յուրաքանչյուրը գոհ և ուրախ, դիմում էին իրանց գործին: Կարծես, ամեն օր այդ մարդկանց համար տոն էր, կարծես, նրանք երբեք վիշտ ու նեղություն չէին տեսել:

Պառավը շարունակում էր նայել:

Դուրս եկավ մի վայելչահասակ կին, թուխ դեմքով, սևորակ, կրակոտ աչքերով, խոհանոցի ղենջակը գոգնոցի տեղ կապած: Այդ նազելի կինը, թեև վաղուց անցուցել էր երիտասարդական տարիները, բայց դեռևս չէր կարելի առանց հիացմունքի նայել նրա վրա: Նա ներկայացնում էր գեղեցկությունը իր հասունության մեջ: Նա մի ժամանակ Դինբուլիների ամրոցի զարդն էր, հափշտակված Աղվանիստանի անապատներից: Իսկ այսօր մի շինական խաղաղ տան ժրաջան տանտիկինն էր:

Դա պառավի աղջիկն էր, Կարոյի կինը և Հյուբբիի մայրը,— գեղեցիկ Ասլին:

Տեսնելով պառավին, սեմի մոտ նստած, կարեկցաբար դիմեց նրան.

— Մայրիկ, դու դեռ երեկ գանգատվում էիր ոսկրացավից, այժմ դարձյալ նստել ես այդ սառն քարի վրա:

— Իմ ոսկորները սառի և քարի վրա են պնդացել, զավակս,- պատասխանեց պառավը և չշարժվեցավ իր նստած տեղից:

Ասլին չհակառակեց նրա համառությանը, ներս մտավ և իսկույն դուրս բերեց մի փոքրիկ օթոց, խնդրեց նստել նրա վրա, որը դժվարությամբ ընդունեց պառավը:

Ասլին անցավ պարտեզը, ուր աշխատում էր նրա ամուսինը: Անցավ վարդենիների և հասմիկի ծառուղիների միջով: Կշտից քարշ ընկած մկրատը տարավ դեպի մի խոշոր սպիտակ վարդ, կտրեց և խրեց կուրծքի վրա: Հետո քաղեց երկրորդը, երրորդը… զանազան գույներով, և ճաշի սեղանի համար մի գեղեցիկ փունջ պատրաստեց:

— Մայրիկ,— ձայն տվեց հեռվից փոքրիկ Աշխենը:

Մայրը մոտեցավ:

— Տե՛ս, այդ մեկը ես կապեցի:— Նա ցույց տվեց իր կապած պատվաստի ճյուղը:— Տասն տարուց հետո կարմիր խնձոր կտա:

Մայրը գրկեց աղջկան և համբուրեց, հետո դարձավ դեպի ամուսինը, հարցնելով.

— Այլևս ովքե՞ր կլինին ճաշին:

— Մերոնք,— պատասխանեց այրը, մերթ նայելով կնոջ վրա և մերթ նրա փնջած ծաղիկների վրա, կարծես կամենալով ստուգել, թե դրանցից որն ավելի անուշահոտ է:

— Դու ասեցիր, որ ուրիշ հյուրեր ևս կլինին:

— Ուրիշ հյուրեր չեն լինի. միայն մեր վարժապետը և մեկ էլ մեր հարևան քուրդ Աղասի-բեկը:

— Աղասի-բեկը հազիվ թե կարող կլինի գալ,— նկատեց կինը,— նրա որդին սաստիկ հիվանդ է, արդեն մի շաբաթ կլինի, որ դպրոց չէ գնացել:

— Վտանգը անցած պետք է համարել,— պատասխանեց այրը,— երեկ բժիշկն ինձ ասաց, թե այժմ առողջանալու վրա է:

Կինը ուրախացավ:

Աշխենը խնդրեց մորից, որ փունջը իրան տա: Ինքը տուն տանե: Մայրը կատարեց նրա ցանկությունը:

— Օ՛, որքան շատ գույներ կան այստեղ,— տասն գույն,— զարմանալով բացականչեց նա և վազեց դեպի տուն:

Մայրը նույնպես հեռացավ: Կարոն նայում էր նրանց ետևից և կոշտացած ձեռքով սրբում էր ուրախության արտասուքը: Դրանք այն ամուսիններից էին, որոնց վրայով տարիները անցնում էին, մարդը ծերանում է, իսկ սերը մանկանում է:

Կեսօրից առաջ քարաշեն տան դռանը մոտեցավ մի ճանապարհորդական կառք: Ցած իջավ մի ծիծաղադեմ երիտասարդ, թեթև մորուքով, և ցած բերեց մի մանկահասակ կնոջ, նրանցից հետո վեր եկավ աղախինը, որ գրկած ուներ մի կլորիկ երեխա: «Հյուբբի՛»… «Արփիա՛ր»… անունները հնչեցին ուրախաձայն աղաղակներով, և դռներից դուրս թափվեցան ընդունելու թանկագին հյուրերին:

Մեկը Կարոյի փեսան էր, մյուսը նրա դուստրը:

Մի քանի ժամից հետո խաղաղ գերդաստանը բոլորեց ճաշի սեղանի շուրջը: Նա գոհ էր, որովհետև ապրուստի ամեն հարմարություններ ուներ: Նա երջանի՛կ էր, որովհետև վայելում էր ընտանեկան քաղցր, անսպառ բերկրությունը:

Բ

Եթե մի մարդ անցնելու լինի Աղբակ գավառի սուրբ Բարդուղիմեոս առաքելո վանքից դեպի Բաշ-Կալե տանող ճանապարհով, վանքից ոչ այնքան հեռու, իսկույն կնկատե, որ ամեն առավոտ մի ծերունի, ձյունի պես ճերմակ մազերով, հեծած նույնպես ճերմակ ձիու վրա, մի շրջան է կատարում լեռնահովիտների միջով և ապա, երբ միջօրեի տոթը սկսում է այրել, վերադառնում է դեպի մերձակա գյուղը: Սպիտակ ձին նույնպես ծեր է, որպես նրա տերը: Առջևի աջ ոտքից կաղում է նա: Տարիներ, շատ տարիներ առաջ այդ ոտքից նա գնդակ ստացավ մի կռվի մեջ: Բայց այդ չէ արգելում

նրան դեռևս ծառայել իր տիրոջը: Այդ հավատարիմ զինվորական ձին ապրել և գործել է իր տիրոջ հետ: Մի ժամանակ միասին զանազան արշավանքներ էին կատարում: Անցան կռիվները, տիրեց հանգստի և խաղաղության ժամանակը: Այսօր միասին շրջում են մշակության, հունձքի, պտղաբերության դաշտերի վրա: Խելացի ձին այնքան ընտելացած է իր տիրոջ սովորություններին, որ գիտե թե ամեն առավոտ դեպի որ կողմերը պետք է տանել նրան և որ տեղերում պետք է ման ածել: Դանդաղ քայլերով անցնում է նա արտերի մարգերի միջով, այնքան զգույշ կերպով, որ մի հասկ անգամ կոխ չէ տալիս: Եթե մի տեղ ջրանցքը պատռվել էր և ջուրը վազում էր դեպի հասունացած հունձքը, որ ջրելու կարոտ չէր, եթե մի տեղ գյուղացու անասունը մտել էր հարևանի արտը և ոտնակոխ էր արել, եթե մի տեղ մկներ էին հայտնվել, մի խոսքով, եթե մի տեղ որևէ անկարգություն էր նկատում նա, իսկույն կանգ էր առնում: Ծերունու հետախույզ աչքերը տեսնում էին այդ բոլորը, ոչ մի թերություն չէր վրիպում նրա բազմափորձ տեսությունից: Երբ վերադառնում էր գյուղը, կանչում էր գյուղացուն և նրան նկատողություն էր անում: Նրա ամենօրյա զբոսանքը՝ նրա ամենօրյա մեծ բավականության զվարճությունն էր: Նա տեսնում էր իր աշխատության պտուղները և ուրախանում էր:

Այդ ծերունին որսորդ Ավոն էր:

Նա գնեց մի քրդուհի այրի կնոջից այդ անբնակ, ամայի լեռնահովիտը իր շրջակա հողերով, և այնտեղ հիմնեց մի գյուղ: Նրա տունը առաջին բնակարանը եղավ, որի շուրջը հետզհետե շինվեցան այլ տներ: Մի քանի տարվա ընթացքում կազմվեցավ մի մեծ գաղթաշենք:

Որսորդը իր գյուղի բոլոր հողերը դարձրեց համայնական սեփականություն, իսկ ինքը դարձավ նույն համայնքի հասարակ անդամներից մեկը: Թեև գյուղական համայնքին պարտավորեցրեց նա, որ որոշյալ ժամանակի ընթացքում փոքր առ փոքր վճարեն հողերի գինը, բայց այդ վճարը այնքան թեթև էր, որ նրանց համար բոլորովին անզգալի եղավ: Որսորդը այդ գումարը իրան չսեփականացրեց, այլ նրանով հիմնեց մի դպրոց, և մշտապես ապահովացրեց դպրոցի հարատևությունը: Նրա վարմունքը այն աստիճան գրավեց գյուղացիների հարգանքը, որ ամենքը մեծ երախտագիտությամբ վերաբերվում էին դեպի նա, որպես իրանց բարերարին, որպես իրանց հորը: Այն դպրոցում սովորում էին և մերձակա գյուղերի երեխաները: Այդ էր պատճառը, որ նույն հարգանքը վայելում էր նա ամբողջ վիճակի մեջ, և դրա համար աղբակեցիք ընտրեցին նրան իրանց գավառների ներկայացուցիչ, որ «միր» տիտղոսն էր կրում: Ծերության հասակում Որսորդը թողեց այդ պաշտոնը և նրա փոխարեն կատարում էր նրա փեսան — Ֆարհատը:

Որսորդը վերջը որդեգրեց Ֆարհատին և ամուսնացրեց իր դստեր՝ Մարոյի հետ: Ֆարհատի մանկության ընկերուհին այժմ նրա կինն էր:

Այսօր Որսորդի տան դռան հանդեպ, հրապարակի վրա, կանգնեցրած է նրա ձիաների երամակը: Ձիաների ամեն մեկի ետևից ձախ ազդրի վրա դրած է Որսորդի դրոշմը՝ հայոց Ո տառը: Նժույգները խրխնջում են, դափր են հատանում, փոշի են բարձրացնում, և ձիապանները հազիվ կարողանում են զսպել նրանց, Ֆարհատը սակարկություն է անում պարսկաստանցի վաճառականների հետ, որ եկել են նրանից ձիաներ գնելու: Նրա կինը, գեղեցիկ Մարոն, երեխան գրկում, կանգնած է լուսամուտի մոտ, այնտեղից նայում է ամուսնու վրա: Ծերունի Որսորդը, նստած տան դռան մոտ, նույնպես հիացած նայում է, թե ի՛նչպես Ֆարհատը խոսում է վաճառականների հետ, ի՛նչպես բացատրում է նժույգների յուրաքանչյուրի արժանավորությունը: Վիթխարի Մըհեն, Որսորդի տան հին հավատարիմը, այժմ ալևորված մազերով, տակավին չէ կորցրել իր վաղեմի հերքուլեսյան ուժը: Նա բարկացած է անհանգիստ նժույգների վրա: «Ի՞նչ սատանա մտավ ձեր պինչը»…

ասում է նա ձիաներին և պարանը ձգում է մի տրմուզ քուռակի պարանոցը, որ շատ է զայրացնում նրան: Մըհեն այժմ Որսորդի ձիապանների գլխավորն էր, այդ պաշտոնը բավական հպարտացնում էր նրան: Ֆարհատը վերջացրեց սակարկությունը, և ոսկիների քսակը ձեռին, ուրախ և գոհ տուն մտավ:

— Քանի՞ հատ գնեցին,— հարցրեց Որսորդը:

— Հինգ հատ,— պատասխանեց Ֆարհատը:

— Այդքան խոսակցություն հի՞նգ ձիու համար:

— Նրանք մեր ձիաները շատ թանկ են գտնում:

— Լավ բանը լավ գին կունենա,— նկատեց Որսորդը:— Թող գնան ամբողջ գավառը ման գան, եթե մեր ձիաների հատը գտնելու լինեն, ես ձրի կտամ:

Ներս մտավ Մըհեն:

— Առ, Մըհե,— ասաց նրան Ֆարհատը, մեկնելով երկու հատ ոսկի:— Ես խոստացել եմ, որ ամեն անգամ, երբ ձի է վաճառվում, քեզ մի պարգև տամ:

— Սատանան տանե քո ոսկիները,— պատասխանեց նա հրաժարվելով.— թե ուզում ես պարգև տալ, ինձ մի կտոր կաշի տուր, որ տրեխներս կարկատեմ:— Նա ցույց տվեց իր պատառոտած տրեխները:

Ֆարհատը ժպտաց, իսկ Որսորդը ծիծաղեց:

Մըհեն մինչև մահ մնաց պարզամիտ, անշահասեր և բարի: Նա այն կիսախելագարներից էր, որ իրանց գժություններով արտահայտում են մի տեսակ իմաստություն:

Մարոն մոտեցավ, առեց ոսկիների քսակը: Նա ամուսնու և գանձապահն էր, և տնտեսը: Ոչ ոք չէր կարող մտածել, որ մի այնպիսի կրակոտ, անսանձ, կամակոր աղջկանից, որպիսին Մարոն էր իր մանկության հասակում, կարող էր այժմ խելացի լրջամիտ տանտիկինը դառնալ: Նա գրավել էր ամուսնու թե՛ սերը, թե՛ հարգանքը: Մարոյի մանկությունն անցավ առանց կրթության, որովհետև մորից որբ մնալով, մնաց միայն հոր խնամակալության ներքո: Իսկ հայրը այնքան զբաղված էր ուրիշ գործերով, որ աղջկա վրա մտածելու ժամանակ չուներ: Իսկ հետո, երբ Որսորդը փոքր-ինչ թեթևացավ իր գործերից, և երբ Մարոն արդեն հասուն օրիորդ էր, այդ ժամանակ միայն սկսեց հոգ տանել նրա կրթության վրա:

«Ֆարհատը սովորում է, որ քեզ արժանավոր այր դառնա, դու էլ պետք է սովորես, որ նրան արժանավոր կին դառնաս»,— ասում էր նա իր դստերը: Մարոն ոչ այնքան տնային վարժապետների շնորհիվ, որքան իր ջանքերով և ինքնակրթությամբ այնքան զարգացավ, որ կարդում էր հայոց լրագիրներ, կարդում էր նոր լույս տեսած գրքեր, և շատ հարցերի մասին այնքան ճիշտ, ինքնուրույն դատողություններ էր հայտնում, որ շատերին զարմացնում էր: Ոչինչ բանի նա այնքան անհամբերությամբ չէր սպասում, որքան թղթատարին, որ նոր լրագիրներ և գրքեր ստանա: Նա արդեն երկու զավակների մայր էր, մի աղջիկ, որ գրկումն էր և մի տղա, որ սկսել էր ման գալ:

Ֆարհատի մայրը շատ վաղ վախճանվեցավ, նա իր որդու բախտավորությունը չտեսավ: Նրա քույրերը՝ Մարիամը և Մագթաղը՝ մոր մահից հետո մնացին բոլորովին

որբ և անտեր: Որսորդը առեց նրանց իր հոգաբարձության ներքո, պահեց, մեծացրեց և մարդու տվեց:

Որսորդի մյուս որդեգիրը, Հասոն, բնակվում էր Կ… գյուղում, Դուշմանա լեռների մեջ, ուր առաջին անգամ բնակություն հիմնեց Որսորդը, երբ Սալմաստից տեղափոխվեցավ Աղբակ: Հասոն այժմ այնքան մեծ ընտանիք ուներ, որքան մեծ թվով չորքոտանիք,— ինչպես սովորություն ուներ Մըհեն ծաղրել նրան: Ամեն տարի մեծ քանակությամբ ոչխար, յուղ, պանիր և բուրդ էր վաճառում:

Եվ այսպես, Աղբակը, վիշապների արյունոտ երկիրը, ուր այդ գազանները տարիներով լափում կլանում էին, և երբեք չէին հագենում, այժմ դարձել էր խաղաղ, բախտավոր մի երկիր, ուր շինականի թե կայքը, թե կյանքը բոլորովին ապահովվում էր: Վիշապները վաղուց ոչնչացած էին: Նրանց փոխարեն մնացել էին մարերը — օձերը — վերջին ժամանակի քուրդերը: Քաղաքակրթության լույսի առաջ չդիմացան նրանք: Քաղաքակրթությունը իր անողոք պայմաններով լուծեց, մաշեց նրանց, որովհետև իր հետ առաջ գնալ չկարողացան: Նրանց կյանքը զարգացել և կազմակերպվել էր խավարի և անկարգության մեջ: Նրանց ապրուստը հայթայթվել էր կոպիտ ուժի և բռնաբարության մեջ: Կարգը, արդարությունը զրկեցին նրանց թե ապրուստից և թե կյանքից: Ուրիշի վաստակով ապրող հասարակությունը մեռավ, երբ նրան ստիպեցին իր հաշվով ապրել: Եվ այսպես, այն գազանները որոնց բարբարոսությունները ոչ մի զորությամբ հնար չէր լինում զսպել, ընկճվեցան, տրորվեցան քաղաքակրթության երկաթյա պայմանների ներքո: Սրի և արյան մրցության մեջ նրանք դիմացան, բայց կուլտուրական մրցությունը սպանեց նրանց: Նրանց մեծ մասը թողեց այդ երկիրը և գաղթեց որոնելու այնպիսի տեղեր, ուր հնարավոր կլիներ անկարգ անիշխանության մեջ դարձյալ անձնատուր լինել անզուսպ կամայականության: Մնացածներից ավելի ազնիվ և ընդունակ ցեղերը սկսեցին ընտելանալ քաղաքակրթության հետ, իսկ վայրենիները դարձան բանվորներ այն հարևանների, որոնք կուլտուրայով ավելի զորեղ և բարձր էին իրանցից: Որսորդի բոլոր հովիվները, ախոռատան ծառաները, անդաստանների մշակները քուրդեր էին:

Գ

Վան քաղաքի միևնույն առևտրական պանդոկի մեջ, միևնույն կրպակում, ուր մի ժամանակ թումաջի վաճառականություն էր անում մուսուլցի խոջա Թորոսը, այժմ ընդարձակ գրասեղանի ետևում նստած էր մի պարոն: Այդ կրպակը նույնքան կերպարանափոխվել էր, որքան պարոնը, որ նստած էր այնտեղ: Հին, ասիական կրպակը, մի եվրոպական առևտրական տան կատարյալ ձևն էր ստացել. հաշվապահը, գանձապահը, գրագիրները, գործակատարները, յուրաքանչյուրը իր որոշ տեղն ու պաշտոնն ուներ: Վաճառքների տեսակները, քանակությունը, որակությունն անգամ փոխվել էր: Փոխվել էր և պարոնը, որ նստած էր ընդարձակ գրասեղանի ետևում: Երիտասարդական հասակում, նա այնքան խոշոր մարդ չէր, իսկ ծերությունը ավելի փոքրացրել էր նրան: Մեծ, ընդարձակ գրասեղանի ետևից հազիվ երևում էր նրա կուրծքի վերին մասը, փոքրիկ գլխի հետ, որ պատած էր երկար, սպիտակ մազերով: Այդ պատկառելի ալիքների միջից դուրս էր նայում մի մտասույզ դեմք, նեղ, անհանգիստ աչքերով, որ արտահայտում էին մի գործունյա մարդու անվաստակելի եռանդը: Նա գործերի մեջ չէր խառնվում. գործը լարված մեքենայի նման, իր կարգով շրջան էր առնում. միայն երբեմն դիմում էին նրան այս և այն հարցերով: Նա այդ առևտրական տան տերն էր և նրա կառավարիչը:

Նրա մոտ նստած էր մի այլ պարոն, ոտքից ցգլուխ սև հագուստի մեջ, ձեռքում պտտեցնում էր նույնպես սև, լայնեզրյա գլխարկը, որ երբեմն դնում էր գավազանի գլխին, փոքր-ինչ հանգստանալու համար: Այդ պարոնը նույնպես մոտեցել էր ծերության. մորուքի և գլխի մազերի մեջ սև գույները հազիվ էին նշմարվում: Նրա խաղաղ դեմքը, երեխայի դեմքի նման, ամեն րոպե ժպտում էր, երբ փոքր ի շատե ուրախացուցիչ բան էր լսում: Ինչպես երևում էր, նա վաճառականի հին ծանոթն էր, և, Բաղեշից նոր եկած լինելով այդ քաղաքը, եկել էր նրան այցելություն անելու:

— Ներեցե՛ք, բարեկամ,— առաջ տարավ վաճառականը, տեղից վեր կենալով և կրկին խրվելով մեծ բազկաթոռի մեջ,— ահա՛ իմ հագուստը ոտքից ցգլուխ պատրաստված է տեղային գործվածքներից, ասացեք խնդրեմ՝ ինչո՞վ է վատ: Իրավ է, եվրոպական գործվածքների նրբությունը չունին, բայց դրա փոխարեն ավելի դիմացկոտ են և էժան: Եթե մեզանից յուրաքանչյուրը փոքր-ինչ զսպեր իրան պճնասիրությունից և բավականանար տեղային գործվածներով, այլևս մեր փողը Եվրոպան չէր տանի, մեր փողը մեր երկրում կմնար:

— Մի՞թե այնքան չէ ծախվում,— հարցրեց բաղեշցի նորեկը:

— Այժմ պետք է ասած, բավական սպառվում է,— պատասխանեց վաճառականը, ձեռքը դեպի ճակատը տանելով, կարծես նույն րոպեում կամենում էր հաշվել, արդյոք չէ՞ր սխալվում իր պատասխանի մեջ:— Բայց գիտե՞ք, բարեկամ, թե ո՛րքան աշխատություն էր պետք, ո՛րքան զոհողություն էր պետք, մինչև ես կարողացա մեր հասարակությանը ընտելացնել մեր արդյունաբերության գործածության հետ:

Բաղեշցու դեմքի վրա փայլեց մի սրտագին ուրախություն:

— Դուք այն ասացեք,— հարցրեց նա,— արտահանություն դեպի օտար երկրներ լինո՞ւմ է:

— Ինչպես չէ: Մեր գործվածները այժմ տանում են Պարսկաստան, Միջին Ասիայի զանազան կողմերը, այլև Անդրկովկասի զանազան քաղաքները: Ահա, ես հասկանում եմ այսպիսի վաճառականությունը: Մինչև այսօր, մենք իսկապես վաճառականներ չէինք, թեև մեզ վաճառական ազգ էին կոչում: Մենք միայն միջնորդներ էինք, մեկից առնում էինք, մյուսի վրա ծախում էինք, մենք ողորմելի դալալներ էինք: Իսկ այժմ բանն ուրիշ է:

Նա հրամայեց, բերեցին մի քանի տեսակ բրդեղեն գործվածքներ, դրեցին գրասեղանի վրա:

— Նայեցեք այդ չուխաներին,— դարձավ նա դեպի իր խոսակիցը.— դեռ անցյալ տարի, Փարիզի աշխարհահանդիսում, ասիական գործվածների կարգում, առաջին մրցանակը ստացավ:

Բաղեշցին սկսեց մեծ հրճվանքով նայել:

— Հիանալի՛ գործվածներ են,— բացականչեց նա,— շատ հիանալի: Ես այժմ ուղիղն ասեմ ձեզ, ամաչում եմ, որ ձեզ հետ նստած եմ այդ հագուստով:— Նա ձեռքը տարավ դեպի իր սև, անգլիական նուրբ մահուդից կարված հագուստը և հարցրեց:— Մի՞թե այդ բոլորը ձեր գործարանից է:

— Բոլորը,— պատասխանեց վաճառականը մի առանձին բավականությամբ:— Ախար ո՞վ ունի այդ գեղեցիկ բուրդը, որ մեր ոչխարներն ու այծերն են տալիս: Մենք մինչև այժմ դժբախտ էինք, որ չգիտեինք օգտվել մեր երկրի արդյունքներից: Եվրոպացին մեր բուրդն ու բամբակը տանում էր, պատրաստում էր, և գործվածները

տասնապատիկ գնով մեզ վրա վաճառում էր: Իսկ մենք մնում էինք աղքատ, միայն օտարի քսակն էինք լցնում:

— Այո՛, այդպես էր…— կրկնեց տխուր ձայնով բաղեշցին, ապա հարցրեց.— ի՞նչ պայմաններով են աշխատում ձեր գործարանի բանվորները:

— Արդյունքից մի որոշ մասն են ստանում,— պատասխանեց վաճառականը:— Երկար փորձերից հետո, ես այն համոզմունքին հասա, որ նրանց պետք է ընկերացնել: Այդ ավելի զորացրեց նրանց եռանդը, ավելի պինդ կապեց գործի հետ: Նրանք ունեն խնայողական դրամարկղ, որից օգնում են իրանց ընկերներին, երբ մեկը հիվանդանում է, կամ վնասվելով աշխատել չէ կարողանում: Ես ինքս իմ խանութի համար պետք եղած ապրանքները գնում եմ գործարանից, որպես օտար մարդ:

— Այդ շատ մարդասիրական է,— նկատեց բաղեշցին, և նրա ջերմեռանդ աչքերը, կարծես, ասում լինեին. «Օրհնյալ լինի՛ս»…

Նրանց խոսակցությունը ընդհատեց մի ծիծաղադեմ ծերունի, փոքր-ինչ կռացած մեջքով, ներկերի մեջ գունավորված ձեռքերով, որ ներս մտավ և, մոտենալով վաճառականին, մտերմությամբ ձեռք տվեց, հետո զարմացած նայեց բաղեշցու վրա:

— Երևի փողի համար եք եկել,— հարցրեց նրանից վաճառականը:

— Ապա ինչի՞ համար պետք է գայի, հեր օրհնած,— պատասխանեց նա և մոտեցավ գանձապահին:

— Այդ ծերունու դեմքը ինձ ծանոթ երևաց,— ասաց բաղեշցին նրա հեռանալուց հետո:

— Պետք է որ ծանոթ լինի…— պատասխանեց վաճառականը խորհրդավոր ձայնով:— Դա վարպետ Փանոսն է. առաջ ներկարարի մի հասարակ գործարան ուներ, իսկ այժմ այնքան կատարելագործել է, որ իմ գործվածները բոլորը այնտեղ են ներկվում:

Հաճախորդները հանգստություն չեն տալիս, մեկը դուրս էր գալիս, մի քանիսը մտնում էին: Գործողությունները իրանց կենդանի շարժման մեջն էին: Ներս մտավ մի բարձրահասակ, հսկայատիպ պարոն, ալեխառն մորուքով, և հատակի տախտակամածը թնդաց նրա ամուր ոտքերի տակ: Նա, առանց ոչ ոքին ողջունելու, կանգնեց սենյակի կենտրոնումը, աջ ձեռքը մեկնելով դեպի գլխավոր գործակատարը, իսկ թուխ երեսը դարձնելով դեպի կրպակատերը, գոչեց որոտալիք ձայնով:

— Ասացեք այդ պարոնին, եթե մյուս անգամ հակերը իր ժամանակին չհասցնի, ես բոլորը ծովը կնետեմ:

Նա առանց պատասխանի սպասելու, իսկույն դուրս գնաց:

— Ճանաչեցի՞ք դրան,— ասաց վաճառականը՝ դիմելով դեպի բաղեշցին:

— Ճանաչեցի…— պատասխանեց նա:— «Բերզեն-Օղլին» է… Ավանց գյուղի նավաստին… Այդ մարդը մինչև վերջը մնաց անտաշ…

— Բայց շատ օրինավոր մարդ է, գիտեք, այժմ շոգենավի ընկերության գլխավոր նավապետն է:

— Գիտեմ: Ես նրա շոգենավով եկա Բաղեշից:

Վաճառականը խոսքը փոխեց հարցնելով.

— Ինձ այն ասացեք, ի՞նչ կա ձեզ մոտ, այնտեղ, Բաղեշում:

— Հետաքրքիր ոչինչ չկա, միայն խեղճ Հաջի-Իսաղը վախճանվեցավ:

— Մի՞թե, նա պետք է բավականին հարստություն թողած լինի:

— Ո՛չ այնքան, որքան կարծվում էր: Վերջին ժամանակ նա շատ ծախսեց զանազան նպատակների համար… Իսկ ինչ որ մնացել էր, նրա մի մասը կտակել է, որ այն գումարով մի դպրոց հիմնվի, որի մեջ սովորեն հայ երեխաներ, առանց կրոնի խտրության:

Վաճառականի դեմքի վրա երևաց զարմացման նման մի բան:

— Ես այդ երբեք չէի սպասում Հաջի-Իսաղից,- ասաց նա:

— Սպասելի էր…— պատասխանեց բաղեշցին:- Նա բոլորովին փոխվել էր… վերջին աղետավոր կռիվների ու երկպառակությունների ժամանակ նա էր գլխավոր բողոքողներից մինը, որ Ամերիկայի միսիոնարներին արտաքսեցին Բաղեշից: Խեղճ ծերունին միշտ ասում էր. «Այդ անպիտանները, բավական չէր, որ մեզ հեռացրին մեր Լուսավորիչ պապից, այլև մեզ մեր նախապապի՝ Հայկի հետ էլ խորթացրին… մեզ մեր հարազատ եղբայրների հետ թշնամացրին»…

Պատի ժամացույցը զարկեց երկուսը:

Խանութատերը վեր կացավ և հրավիրելով իր խոսակցին, ասաց.

— Հույս ունիմ, որ դուք այնքան բարի կլինիք, որ ճաշը այսօր մեզ մոտ անուշ կանեք:

— Մեծ ուրախությամբ,— պատասխանեց նա, նույնպես կանգնելով:— Ես ձեր կնոջը և երեխաներին վաղուց չեմ տեսել, կցանկանայի նրանց տեսնել:

Նրանք դուրս եկան խանութից:

Անցան բավական ուղիղ, մաքուր փողոցներով: Աջ և ձախ բարձրանում էին երկհարկանի, երեքհարկանի քարաշեն տներ: Այլևս ոչ վաղեմի նեղ, կեղտոտ փողոցները կային, և ոչ հում աղյուսից կամ կավից շինված, կիսավեր խրճիթները: Ամեն ինչ գեղեցիկ էր, ամեն ինչ մաքուր էր: Մաքրվել էր և օդը: Փողոցներում մարդիկ ցնցոտիներով չէին թափառում և, անցորդի օձիքը բռնելով նրանից ողորմություն չէին պահանջում: Կանայք չադրաների մեջ փաթաթված, երեսները ծածկված վախենալով չէին ման գալիս, փողոցային անամոթ սրիկաների հարձակմանը չենթարկվելու համար: «Գավուր» բառը այլևս չէր լսվում: Մահմեդականները քրիստոնյաներին հանդիպելիս մի քանի քայլ հեռվից ողջունում էին: Փաշայի պալատի մեջ նստած էր մի քրիստոնյա նահանգապետ: Օրվա այն ժամն էր, երբ դպրոցում արձակում են աշակերտներին: Տղա և աղջիկ, գրքերի պայուսակները մեջքներին կապած կամ թևքերի տակն առած, լցրել էին փողոցները: Անցնելու տեղ չկար: Դրանց փոխարեն, այդ փողոցներում, մի ժամանակ վխտում էին հարբած ենիչէրիները, մերկ սրերը ձեռքերին, կամ խլրտում էին գազանաբարո «ասքարը»՝ հափշտակելով ամեն պատահած բան: Քաղաքացիք, նրանց տեսնելով, օր ցերեկով մտնում էին իրանց տներ և դռները պինդ փակում էին: Այժմ ոչ այդ բարբարոսները կային և ոչ վաղեմի երկյուղը կար:

Նրանք կանգնեցին մի բավական կոկիկ տան հանդեպ: Դռները բացվեցան, մտան մի հովասուն, ծառազարդ բակ: Ծառերի ներքո նստած էր մի հասակավոր բարեշուք կին և ինչ-որ հյուսում էր ձեռքում: Տեսնելով եկվորներին, դրեց իր ձեռագործը փոքրիկ, բոլորակ սեղանի վրա, վեր կացավ և դիմավորեց նրանց:

— Ա՛խ, պարոն Միսաքյան,— բացականչեց կինը, առաջ վազելով,— ես ամենևին չէի սպասում… Ի՞նչպես եք… այդ ի՞նչ բախտով… այդ ո՞ր քամին բերեց ձեզ…— և շփոթեցրեց հյուրին բազմաթիվ հարցերով:

Պարոն Միսաքյանը երկու ձեռքով բռնեց տիկնոջ աջը և բարեկամաբար սեղմեց:

Այդ ոտքից ցգլուխ սև հագուստով պատած պատվելի անձը Բաղեշի հայ-բողոքականների երեց Ջալլադն էր, որին այժմ իր տոհմանունով պարոն Միսաքյան էին կոչում: Իսկ նրա հյուրընկալը մեր վաղեմի ծանոթ Սագոն էր, որին այժմ կոչում էին Սարգիս Սեպուհյան: Փոխված դրության հետ, փոխվել էին նրա առաջվա թե՛ կեղծ և թե՛ կրճատած անունները: Իսկ նրա տիկինը տեր Թոդիկի դուստր Սոնան էր: Նա ամուսնացավ իր հին վարդապետի աղջկա հետ: Երկու բախտավոր ամուսինները ունեին մի քանի զավակներ, որոնց մեծը սովորում էր Գերմանիայում:

Տեր Թոդիկը վաղուց չկար այդ աշխարհում. նա մեռավ «ախտարքը» ծոցում…

Դ

Սալմաստ գավառի Սավրա գյուղի հայոց թաղում խիստ աչքի էր զարկում մի մաշված տուն, որը ոչ այնքան հնությունից, որքան անխնամությունից կորցրել էր իր վաղեմի շքեղությունը: Գիշեր և ցերեկ այդ խուլ, գերեզմանի պես անմռունչ տան դռները փակ էին: Այնպես էր թվում, որ ոչ ոք այնտեղ չէր բնակվում: Միայն երբեմն ճռնչալով շարժվում էին ժանգոտած ծխնիները, դռները բացվում էին, դուրս էր գալիս մի թախծալի դեմքով կին, նստում էր դռան մոտի թումբի վրա և ամբողջ ժամերով լուռ նայում էր փողոցի միջով անցնող գետակին, կարծես նրա տխուր մրմունջների մեջ կամենում էր թաղել իր սրտի դառն կսկիծները: Նա իր հասակից ավելի վաղ էր ծերացել, որպես այն մաշված տունը, որտեղից դուրս էր գալիս նա: Նրա տխրամած դեմքի թուխ գծերի մեջ, նրա սև աչքերի մթության մեջ նշմարվում էին անմխիթար հոգու խորին վշտերը, որ թաքցրած էին նրա խորտակված վիրավորված կուրծքի մեջ: Նրա սգավոր հայացքը այնպիսի տպավորություն էր գործում, որ այդ խղճալի կինը իր կյանքում երբեք երջանկության քաղցրությունը չէր ճաշակել. բախտը երբեմն ժպտել էր նրան, միայն հրապուրելու համար, որ մի նոր, ավելի դառն դժբախտության մեջ ձգե: Ոչ ոք նրան չէր մոտենում, ոչ ոքի հետ չէր խոսում նա: Այնպես լուռ նստում էր թամբի վրա, լսում էր գետակի մրմունջը, լսում էր ծառերի վրա խոսող թռչունների ձայնը, և խորին կերպով հոգոց էր հանում: Նրան մոտենում էին փողոցի երեխաները միայն: Երբ նա հայտնվում էր թումբի վրա՝ «Նենե՛ն, Նենեն» ձայն էին տալիս երեխաները և, ամեն կողմից վազելով, շրջապատում էին նրան: Նենեն գրկում էր նրանց, խոսում էր նրանց հետ և բաժանում էր սև փողեր, որ տանեն իրանց համար ուտելու բան գնեն: Երեխաները համբուրում էին նրա ոսկրացած ձեռքերը, համբուրում էին նրա նիհար ցամաքած երեսը և ուրախության աղաղակներով հեռանում էին: Այդ դժբախտ կինը վշտացած, շա՛տ վշտացած էր հասակավոր մարդիկներից և իր մխիթարությունը գտնում էր միայն անմեղ երեխաների մեջ…

Ո՞վ էր այդ Նենեն:

Նա մի ամբողջ պատմություն ունի, որ «Խաչագողի հիշատակարանի» մեջ մեր ընթերցողներին հայտնի է: Նա Մուրադի կինն էր: Այդ տունը Մուրադի տունն էր:

Մուրադը գործեց և լավ գործեց, բայց իր բոլոր ընկերների մեջ նա միայն դժբախտ գտնվեցավ: Զավակներ չունեցավ նա: Ազգականները նրա հարստությունը ժառանգելու համար չսպասեցին նրա մահվանը, այլ շտապեցին վաղօրոք թունավորել նրան: Նա մեռավ, անմխիթար սուգի մեջ թողնելով Նենեին, որը չէր դադարում ողբալ սիրելի ամուսնու անմոռանալի հիշատակը:

Այդ թշվառ այրին բոլորովին միայնակ, բոլորովին անջատված հասարակությունից, ապրում էր իր տանը թախծության մեջ: Նա զզված էր կյանքից, զզված էր և մարդիկներից: Նրան կենակցում էր մի զառամյալ ծերունի միայն, որի աչքերը այլևս չէին տեսնում: Նրա կմախքն էր մնացել և մի ողորմելի ձայն, որ երբեմն հառաչում էր. «ա՛խ, ե՞րբ պետք է մեռնեմ»… Ամեն անգամ կարելի էր տեսնել նրան, կծկված բակի մի անկյունում, մի կտոր փալասի վրա, անդադար տրտնջում էր «քաղցած եմ»… Նենեն ամբողջ օրը կերակրում էր նրան, բայց կշտացնելու հնար չէր լինում:

Ծերունին քավոր Պետրոսն էր:

Երկար թափառումներից հետո, վերադառնալով իր հայրենիքը, այդ երևելի խաչագողը գտավ իր ամբողջ ընտանիքը ոչնչացած: Նենեն առեց նրան իր խնամակալության ներքո, հոգ էր տանում նրա ծերությանը: Այդ թշվառի ուղեղն անգամ իր բնական դրության մեջ չէր մնացել: Նա, որ մի ժամանակ երկրների սարսափն էր ու հրեշը, նա, որ մի ժամանակ փափուկ մոմի նման դարձնում էր իր ձեռքում մարդկանց սրտերը, այսօր մի անմիտ երեխայի նման, շատ անգամ ասում էր իր բարերարուհիին.— «Նենե՛, ե՞րբ ինձ համար կարմիր կոշիկներ պիտի առնես»: Խորին ծերությունից նա երեխայացել էր: Եվ իրավ, նրա թափած ատամները մի քանի տարի առաջ նորից սկսեցին բուսնել, և նրա թափած մորուքի տեղը հայտնվեցան փետուրի նման փափուկ, հազիվ նշմարելի մազեր:

Այդ հավիտենական ծերունին հիշեցնում էր Սավրայի — այդ խաչագողների որջի — հավիտենական մեղքը, որը և ծերանում է, և մանկանում է…

Ե

— Այստեղ… այստեղ թաղեցին,— ասում էր մի երիտասարդ վշտահար դեմքով, ցույց տալով մի հողադամբարան, որ հազիվ որոշվում էր գետնի մակերևույթից:— Ռաշիդը ճանաչում է այդ տեղը… Նա այնքան մոռացկոտ չէ…— ավելացրեց նա տխուր ձայնով:— Եթե մի օր ջրհեղեղ գա, բոլոր լեռները ողողե և մի փոքր բարձրություն անգամ չմնա երկրի վրա, Ռաշիդը դարձյալ կգտնե այդ դամբարանը…

Այդ խոսքերը դարձրած էին դեպի մի պարոն, որ կանգնած տխուր դեմքով նայում էր ցույց տված տեղի վրա: Նրա թևքը մտել էր մի նիհար, բարձրահասակ տիկին, որ իր ուսերով վեր էր պարոնից: Նա իր ձեռքում բռնած կանացի ամպհովանիով հովանավորում էր թե՛ իրան և թե՛ պարոնին: Նրանց մոտ կանգնած էին մի քանի մանուկներ զանազան հասակների, և բոլորի ուշադրությունը դարձրած էր ցույց տված տեղի վրա: Նրանց հագուստից երևում էր, որ այդ մարդիկ ճանապարհորդներ էին, որ հենց նոր էին իջել կառքից, որ մի քանի քայլ հեռու, դեռ կանգնած էր ճանապարհի վրա:

Այդ այցելությունը կատարվում էր մեր ընթերցողներին ծանոթ Առաքելոց վանքի արտաքին պարսպի մոտ, այնտեղ, ուր մի անգամ ցույց տվինք Դավիթ Անհաղթի,

Խորենացու, Ղազար Փարպեցու մոռացված շիրիմները: Այդ շիրիմների թվում ավելացել էր մի այլ մոռացված գերեզման…

Այդ առանց տապանաքարի, առանց որևէ հիշատակարանի, լուռ և համր գերեզմանի մեջ հանգչում էր մեր ծանոթ «Համրը»:

Պարոնը վերջին անգամ նայեց գերեզմանի վրա, կամենում էր տիկնոջ հետ հեռանալ դեպի վանքը, բայց մանուկներից մեկը կանգնեցրեց նրան, հարցնելով.

— Հայրիկ, ա՞յդ է քո բարեկամի գերեզմանը, որի մասին ճանապարհին միշտ խոսում էիր մեզ հետ:

— Այդ է…— պատասխանեց հայրը տխուր ձայնով:

— Ախ ինչո՞ւ են այդպես թաղել…— հարցրեց մանուկը արտասվալի ձայնով:— Ո՞վ գիտե, նա երեխաներ չունե…

— Չունե…— ասաց հայրը:

Նրանք խոսում էին անգղիերեն:

Մանուկը դարձավ դեպի իր քույրը և եղբայրները.

— Անուշ, Խորեն, Տիգրան, հայրիկի բարեկամը երեխաներ չունե, գնանք ծաղիկներ հավաքենք նրա գերեզմանի համար:

Մանկահասակ խումբը վազեց դեպի շրջակա վայրերը: Բարձրահասակ տիկինը, մայրական ջերմ գորովը աչքերում, նայում էր նրանց ետևից:

Ամառային այդ ժամանակի տապերը ծաղիկներ չէին թողել, խոտերն անգամ չորացել էին: Միայն այրված քարքարուտների մեջ վառվում էր դեղին գույնով և ծիրանեգույն «անթառամը», ժայռերի ծերպերից աճել էր հոտավետ օշինդրը, սպիտակ թավիշի նման փափուկ տերևներով: Տեղ—տեղ բուրում էր վայրենի կոտեմը իր սուր, կծու հոտով: Մանուկները վրա ընկան քաղելու: Մի քանի րոպեից հետո, երեք եղբայրները և մի քույրը, չորս կողմից բռնած բերեցին մի մեծ, ծանր պսակ, որ հյուսված էր անթառամ ծաղիկներից և զանազան վայրենի բույսերից, և դրեցին հայրիկի բարեկամի գերեզմանի վրա և փոքրիկ ձեռիկները կուրծքի վրա փակած, նրանց ջերմեռանդ երեսիկները խփած աչքերով դարձան դեպի երկինքը… Այդ վսեմ հանդիսավոր րոպեն այնքան սրտաշարժ, այնքան սուրբ էր, որպես երեխայի մաքուր զգացմունքը: Հայրը և մայրը թաշկինակները տարան դեպի իրանց աչքերը: Իր արտասուքը չկարողացավ զսպել և երիտասարդ Ռաշիդը, նա նույնպես սկսեց լալ: Այդ սովորությունը ունեին մանուկները, երբ Նյու-Յորքում ամեն շաբաթ այցելում էին իրանց մեծ քրոջ գերեզմանին, զարդարում էին ծաղիկներով և աղոթում էին այնտեղ:

Պարոնը դարձավ դեպի գերեզմանը ցույց տվող երիտասարդը, խնդրեց, որ իրան առաջնորդե, տանելու հանգուցյալի խուցը:

Հռչակավոր վանքը բոլորովին ամայի էր: Մի ալևոր աբեղա միայն կանգնած էր բակում, կուտ էր ձգում հավերին, որ այդ միջոցին խմբված էին նրա շուրջը:

Տեսնելով նորեկներին մոտեցավ նա:

— Այդ ֆրանկները ինչո՞ւ են եկել,— մի կողմ տանելով, հարցրեց երիտասարդից:

— Ֆրանկներ չեն,— պատասխանեց երիտասարդը,— այդ պարոնը հայ է, ես նրան ճանաչում եմ… Դա այն մարդն է, որի համար մեռնելու ժամանակ լուսահոգին ասաց, թե երբ գալու լինի, իմ իրեղենները նրան հանձնեցեք:

— Ո՞րտեղից են գալիս:

— Ամերիկայից: Նրա տիկինը ամերիկացի է:

Պարոնը նայում էր դեպի իր շուրջը: Շատ տարիներ առաջ տեսած փառավոր վանքը այժմ նրա վրա տխուր տպավորություն էր գործում:

— Ինչո՞ւ այդպես թշվառ դրության մեջ է այդ վանքը,— հարցրեց նա աբեղայից:

— Մի ժամանակ այդ վանքի սեղանատանը հարյուրավոր միաբաններ ճաշի էին նստում: Հիմա ո՞վ է մնացել:— Ես, այդ հավերը, մեկ էլ այդ մարդը:— Նա ցույց տվեց երիտասարդին:— Վանքի բոլոր հողերը խլեցին, մեզ թողեցին առանց կտոր հացի: Նստած, օրերով, ամիսներով նայում ենք դեպի դուռը, գուցե մի մոլորված ուխտավոր ներս կմտնե: Այն էլ չկա: Ուխտ էլ չեն գալիս: Հավատն ու ջերմեռանդությունը պակասել է: Եթե հազարից մի անգամ մեկը ներս է մտնում, տված արդյունքը այնքան էլ չի լինում, որ գոնե ապրել կարողանանք:

Գուցե վշտացած աբեղան դեռևս երկար կշարունակեր իր գանգատները, եթե նորից պարոնը քաղաքավարությամբ չընդհատեր նրան, հայտնելով, թե ինքը շտապում է և ուշանալու շատ ժամանակ չունի:

Նրանք մտան հանգուցյալի խուցը: Նա այնքան փոքրիկ էր, որ բոլորի համար տեղ չկար: Երեխաները մնացին դրսում, ման էին գալիս վանքի բակում:

Ամեն ինչ սովորական տեղումն էր. նույն փայտյա հասարակ մահճակալի վրա դեռ տարածված էր անկողինը, նույն կաղնյա գրասեղանը դրած էր նեղ լուսամուտի հանդեպ, իսկ նրա առջև դեռ կանգնած էր հին, գեղաքանդակ բազկաթոռը, որ միակ զարդն էր այդ տխուր բնակարանի: Գրասեղանի վրա ածած թղթերը, ցամաքած կաղամարը, փետուրյա գրիչները, գրչահատը, մի աշտանակ, նույնպես իրանց տեղումն էին: Մի մազ իր տեղից չէր շարժվել: Այնտեղ դեռ դրած էին մի քանի պղնձե դրամներ, որ ծառան ցույց տալով ասաց, թե վերջին օրերում այնքանն էր մնացել «լուսահոգու» ծախքի համար: Ոչինչ չէր պակասել: Պակաս էր միայն այն անձը, որ խորին աղքատության մեջ այնտեղ աշխատում էր: Գրասեղանի վրա դրած էր և նրա սպիտակ թաշկինակը, որի վրա թողեց նա վերջին արյան բիծը և ավանդեց հոգին…

— Լավ նայեցե՛ք, պարոն,— խոսեց ծառան,— տեսնո՞ւմ եք, ոչինչ պակաս չէ: Ես շան նման ամեն գիշեր պառկում էի այդ խուցի դռանը, մի ճանճ անգամ չէի թողնում, որ ներս մտնե:

Ալևոր աբեղան պատմեց, թե իրավ որ, նա ամառ և ձմեռ, ձյունի և անձրևի տակ, պառկում էր խուցի դռանը, և, իր ծանր մահակը կուրծքին սեղմած, ամբողջ գիշեր անքուն էր մնում: Ամեն առավոտ բաց էր անում խուցի դռները, ավելում էր, մաքրում էր, անկողինն ուղղում էր, գրասեղանի վրա դրած առարկաների փոշին սբրում էր, հետո ամեն ինչ իր սովորական տեղումն էր դնում, որ իր պարոնը մի անկարգություն չնկատե, թեև պարոնը վաղուց մեռած էր:

— Բայց նրա հոգին նայում էր երկնքից,— նկատեց ծառան. ձեռքը դեպի վեր տանելով:— Մեռնելու միջոցին ինձ ասաց լուսահոգին, «Ռաշիդ, այդ ամենը այդպես կպահես, մինչև նա կգա»… Ես ի՞նչպես նրա ասածը չկատարեի:

Արտասուքը թույլ չտվեց բարեսիրտ շատախցուն ավարտել իր խոսքը, որին մենք տեսանք այն ժամանակ, երբ դեռ պատանի էր, և իր պարոնի խոհանոցում մենամարտում էր Ֆարհատի հետ: Այժմ մի հասուն, առողջ երիտասարդ էր դարձել, բայց դեռ վաղեմի պարզությունը մնացել էր նրա մեջ:

Նա ձեռքը տարավ դեպի կուրծքը, սկսեց բաց անել կոճակները: Մերկ կուրծքի վրա երևաց մի շղթա, որ անցուցած էր պարանոցից, իսկ նրա ծայրին երկաթյա օղակից քարշ էր ընկած մի բանալի, նույն ձևով, որպես հավատավոր մարդիկ խաչ են կախ տալիս շապկի տակից:

— Ընդունեցեք այդ բանալին, պարոն,— ձեռքը մեկնեց ծառան:— Լուսահոգին ասաց, Ռաշիդ, այդ բանալին քեզ մոտ կպահես, մինչև նա կգա և միայն նրան կհանձնես: Հիմա, փառք աստծո, եկաք, առեք բանալին:

Պարոնը ընդունեց բանալին:

Երիտասարդը քարշ տվեց մահճակալի տակից մի հին երկարաձև արկղ, ընկույզի փայտից, որի բոլորտիքը գամած էին երկաթյա փաթաթներով և պղնձյա բևեռներով:

— Այդ արկղի բանալին է,— ասաց նա:— Լուսահոգիի մեռնելուց հետո, աստված է վկա, մի անգամ էլ չեմ բաց արել, որ տեսնեմ, թե ի՞նչ կա դրա մեջ:

— Բոլորովին հավատում եմ,— խոսեց պարոնը, մոտեցավ արկղին, բացեց նրան:

Նա լի էր զանազան թղթերով, զանազան հաստ ու բարակ տետրակներով: Այդ ձեռագրերի մեջ կային զանազան սկսված և չավարտած վեպեր, վեպիկներ, պատկերներ, կային զանազան բանաստեղծություններ, կային և բոլորովին վերջացրած աշխատություններ:

Բարձրահասակ տիկինը, որ բոլոր ժամանակը խորին տխրությամբ նայում էր այդ մռայլ խուցի սրտատոչոր պարագայքին, երբ տեսավ արկղի մեջ խառնիխուռն կերպով ածած թղթերը, նրա նեղ, երկնագույն աչքերը լցվեցան արտասուքով: Դրանք հայոց մի անբախտ բանաստեղծի աշխատություններն էին: Նա դողդոջուն ձեռքը տարավ, վեր առեց տետրակներից մեկը, որպես մի սրբություն, և երկար հառած նայում էր նրա վրա, թեև կարդալ չէր իմանում: Այդ միջոցին ներս մտան մանուկները:

— Հայրիկ,— ձայն տվեց փոքրիկ Անուշը,— դու մեզ ասացիր, երբ կգնանք Հայաստան, ձեզ հայերեն կսովորացնեմ. տուր մեզ մի-մի հատ այդ տետրակներից, որ սովորենք:

— Երբ կտպվին, այն ժամանակ կկարդաք, զավակս,— պատասխանեց հայրը:

— Արդյոք կտպվի՞ն…— հարցրեց տիկինը:

— Կտպվին…

Երիտասարդ Ռաշիդը պատմեց, թե վերջին գիշերը, երբ պիտի մեռներ «լուսահոգին», նա հրամայեց վառարանը վառել: «Պետք է մաքրել այդ թղթերը»… ասաց նա:— Ես դրեցի արկղը նրա մոտ, նա ջոկում էր թղթերը և շատերը նետում էր կրակի մեջ: Բայց դեռ այդ գործը չվերջացրած, նա մեռավ: Վերջին գիրքը դեռ բոլորովին չէր այրված, ես դուրս բերեցի կրակից, դրեցի մյուսների հետ և արկղը կողպեցի: Դրանով իմ հոգուն մեղք արեցի, նա կամենում էր այրել, ես չթողեցի: Ո՞վ է

իմանում, կարելի է մի բանի պետք կգա: Լուսահոգին վատ բան չէր գրի: Ա՛խ, ո՛րքան գրում էր… կարծես իմանում էր, որ շատ չի ապրի…

Պարոնը վեր առեց կեսը-այրված գիրքը, թերթեց և դառնալով ծառային, ասաց:

— Այո՛, շատ բանի պետք կգար, եթե կրակը մեծ մասը ոչնչացրած չլիներ:

Դա հայոց եկեղեցական պատմությունն էր, որ վաղուց դիտավորություն ուներ գրելու հանգուցյալը:

Պարոնը գրասեղանի վրա մնացած թղթերն ևս հավաքեց դրեց արկղի մեջ, կողպեց: Իսկ հանգուցյալի թաշկինակը արյան վերջին բծով թաքցրեց իր ծոցում…

Հետո դարձավ նա դեպի ծառան:

— Դու, բարի Ռաշիդ, քո հավատարմության համար չվարձատրվեցար քո պարոնից, բայց կվարձատրվես ինձանից: Դու պահպանեցիր մի գանձ, որ մեր ազգի համար շատ թանկագին պետք է լինի: Այդ գանձը այդ արկղի մեջն է ամփոփված: Վեր առ այդ արկղը, գնանք ինձ հետ:

Հետո դարձավ դեպի վանքի աբեղան:

— Շատ շնորհակալ եմ ձեզանից, հայր սուրբ, որ դուք այնքան բարի եք եղել, որ թույլ եք տվել ձեր վանքում այդ իրեղենները պահպանվին: Որպես տեսանք, ես վեր առի հանգուցյալի թղթերը միայն, իսկ նրա մնացյալ կայքը թողնում եմ ձեր վանքին:

Հայր սուրբի դեմքը փայլեց ուրախությունից:

Պարոնը մեկնեց նրան մի ծրար, ասելով.

— Խնդրեմ, ընդունեք այդ ծրարը. դրա մի մասը կպահեք ձեզ համար, իսկ մնացածից, որքան կծախսվի, մի տապանաքար շինել տվեցեք և գրեցեք հանգուցյալի գերեզմանի վրա:

Աբեղան շնորհակալությամբ ընդունեց ոսկիները, հարցնելով.

— Ի՞նչ գրել տանք տապանաքարի վրա, հանգուցյալը այնքան տարիներ մնաց վանքում, մենք նրա անունը չիմացանք:

— Ոչինչ գիր հարկավոր չէ,— պատասխանեց պարոնը,— միայն մի խաչ փորել տվեք:

— Աստված հոգին լուսավորեցնե՛,— օրհնեց աբեղան:

Ռաշիդը վեր առեց արկղը: Արտասուքը հեղեղի նման թափվում էր խեղճ երիտասարդի աչքերից, երբ նա պետք է թողներ այդ մռայլ խուցը, ուր բնակվել էր նրա տերը, ուր ամեն մի առարկա հիշեցնում էր նրան այն մարդուն, որին նա այնքան սիրում էր, որին նա պաշտում էր: Երբ վանքի դռնից դուրս եկան, նա գրկվեցավ հայր սուրբի հետ, համբուրեց նրա աջը: Երևում էր, որ վանքի բազմաթիվ միաբանությունից մնացած այդ երկու ներկայացուցիչները հաշտ էին ապրում միմյանց հետ:

Արկղը տեղավորեցին կառքի մեջ, ամենքը նստեցին, և կառապանը բռնեց Մուշի ճանապարհը:

Պարոն Ասլանն էր, որ այժմ կոչվում էր բժշկապետ Սասունյան, իսկ բարձրահասակ ամերիկուհին նրա կինն էր: Նա այն հարուստ այրի կնոջ դուստրն էր, որ Նյու-Յորքում որդեգրեց Ասլանին, որի տանը ապրում էր նա իր ամբողջ ուսանողության ժամանակ: Այն ժամանակից սիրահարվեցավ նա և խոսք տվեց պսակվել նրա հետ: Տարիներով միմյանցից անջատվելը չխախտեց նրանց սերը: Օրիորդը ուխտել էր՝ միշտ սպասել նրան, մինչև կվերջացներ իր գործերը և կրկին կվերադառնար Ամերիկա: Երբ վերջին անգամ Ասլանը գնաց Հնդկաստան, այնտեղ իր ընկերներից ստացած հանձնարարությունները կատարելուց հետո անցավ Ամերիկա և պսակվեցավ: Այժմ քաղաքային բժշկի պաշտոնով գնում էր Մուշ:

Մեր հիշատակարանը կատարվեցավ որպես մի նկարագիր, զանազան պատկերներով: Շատ անձնավորություններ հանդիսացան և կրկին ծածկվեցան վարագույրի ետևում: Մենք առեցինք նրանց կյանքից և գործունեությունից հայտնի գծեր միայն: Եթե բոլորի գործերը և նրանց գործունեության վախճանը լրիվ գրեինք, պետք է մի երրորդ հատոր ևս ավելացնեինք: Ասլանով սկսեցինք մեր վերջին գիրքը և դարձյալ Ասլանով իջեցնում ենք վերջին պատկերի վարագույրը: